ՀԱՅ ՀՄԱՅԱԿԱՆ
ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՍՏՈՒԹՔՆԵՐ







FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

САРГИС АРУТЮНЯН

АРМЯНСКИЕ ЗАГОВОРЫ И НАРОДНЫЕ МОЛИТВЫ

SARGIS HARUTYUNYAN

ARMENIAN INCANTATIONS AND FOLK PRAYERS

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
PUBLISHING HOUSE OF THE YEREVAN UNIVERSITY

ЕРЕВАН - 2006 - YEREVAN

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ՀՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

Աշխատությամբ՝
ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2006

ԳՄԴ 398=919.81:391/395=919.81
ՀՏԴ 82.3Հ + 63.5(2Հ)
Հ 241

Աշխատանքը կատարված է ՀՀ ԳԱԱ
հնագիտության և ազգագրության ինստիտուտում
և տպագրվում է ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Հարությունյան Սարգիս

Հ 241 Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ/Աշխատությամբ Ս. Հարությունյանի: Եր.: Երևանի համալս. հրատ., 2006 թ., 504 էջ:

Համահավաքն ընդգրկում է բանավոր, մասամբ նաև գրավոր ավանդված հայ հմայական և ժողովրդական աղոթքների տպագիր և արխիվային ժառանգությունը, համալրված նոր գրառումներով:

Գիրքը բաղկացած է երեք հիմնական մասերից՝ ա) ներածական ուսումնասիրությունից, բ) աղոթքների բնագրերից և գ) ծանոթագրություններից և մեկնաբանումներից, ինչպես նաև բառարանից և տարբեր ցանկերից:

Նախատեսված է բանագետների, ազգագրագետների, մշակույթի պատմաբանների և ժողովրդի հոգևոր մշակույթով հետաքրքրվողների համար:

Հ $\frac{4702080105}{704(02) - 2006}$ 2006

ԳՄԴ 398=919.81:391/395=919.81

ISBN 5-8084-0775-3

© ԵՊՀ հրատարակչություն, 2006 թ.
© Հարությունյան Ս., 2006 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Նախնական հավատալիքներ և հմայություն: Գիտության մեջ արծարծվել ու արդեն հիմնավորվել է այն կարծիքը, որ կրոնը ծագել է նախնադարյան տոհմատիրական կարգերի հիմքի վրա, արտադրողական ուժերի զարգացման ամենավաղ աստիճանում, իբրև հետևանք արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակի և դրանով պայմանավորվող բնության ուժերի ու երևույթների հանդեպ մարդու ունեցած անզորության և դրանց թյուրըմբռնման արգասիք: Հասարակական-արտադրական գործունեության ու փորձի անբավարար զարգացման պատճառով մարդկային իմացությունն ու ճանաչողությունը դեռևս ճիշտ պատկերացում չէին կարողանում կազմել մարդու և իրեն շրջապատող բնության մասին, և նախնադարյան մարդու մեջ առաջ եկող պատկերացումները, բնականաբար, դառնում են իրականությանն անհամապատասխան ու ֆանտաստիկական: Ըստ նախնադարյան առասպելաբանական մտածողության՝ մարդն իրեն դեռևս չի կարողանում անջատել բնությունից, իրեն նույնացնում է բնության ուժերին ու երևույթներին, որի հետևանքով նախնադարյան մարդու գիտակցության մեջ մի կողմից առաջ է գալիս բնության անշունչ առարկաներն ու երևույթները իրեն նման շնչավոր լինելու պատկերացումը, մյուս կողմից՝ այդ երևույթները առաջ բերելու կամ կանխելու հնարավորության իրեն վերագրումը [Косвен 1953, 142]:

Այստեղից էլ սկզբնավորվում են նախնադարյան աշխարհընկալման երկու կարևոր բաղադրիչները՝ հմայությունը, իբրև բնության մեջ գերբնական զորության առկայության հավատք և այն մարդուն ենթարկելու, ցանկացած հետևանքը կանխելու կամ առաջացնելու միջոց, և անիմիզմը, իբրև առարկաների ու երևույթների շնչավորում և ոգիների հավատալիք: Այս երկուսն էլ, ահա, հետագայում դառնում են էական բաղադրիչներ կրոնի բոլոր ձևերի ու տեսակների՝ կազմելով նրանց տեսական ու ծիսական հիմքը[1] [Токарев 1959, 7]:

Հմայական պատկերացումներն ու հավատալիքները, որոշ հետազոտողների կարծիքով, տակավին առկա են եղել քարանձավաբնակ նեանդերթալյան մարդու ժամանակներում, իսկ դրանց առավել որոշակի հետքերը նկատելի են վերին քարեդարյան արվեստի նմուշներում, հատկապես բիզոններ ու ձիեր պատկերող մադլեն-

---

[1] Հմայության (Magie) ծագման ու բնույթի մասին գիտության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Մի խումբ հետազոտողների համոզմամբ՝ հմայությունը կրոնի ծն չէ, այլ նախորդել է կրոնին և բնույթով հակադիր է նրան (Մ. Կաստրեն, Ռ. Սմիթ, Զևոնս, Ջ. Ֆրեյզեր, Վ. Շմիդտ, Կ. Բեք, է. Դյուրկհայմ, Պ. Սեբտիվ, Ա. Հյուբեր, Մ. Մոս և ուրիշներ). մի այլ խումբ, ընդհակառակը, գտել ու գտնում է, որ հմայությունն ու կրոնը միևնույն բանն են (Ս. Ռեյնաք, Լ. Շտերնբերգ) կամ հմայությունը կրոնի արտահայտության նախնական ձևերից մեկն է (Մ. Կոսվեն, Յու. Ֆրանցև, Ս. Տոկարև և ուրիշներ): Ս. Տոկարևը, սակայն, գտնում է, որ «հմայություն» և «անիմիզմ» հասկացությունները իրենց ընդգրկման ծավալով լայն են ու միմյանց համազոր: Ինչպես անիմիզմն է յուրահատուկ բոլոր կրոններին, այնպես էլ մասնակի բացառություններով, հմայությունը. անիմիզմի նման հմայական ծեսերն ու հավատալիքները ևս մեկ ընդհանուր աղբյուրից չեն ծագում, այլ ունեն տարբեր արմատներ, նայած թե մարդկային գործունեության որ կողմերի հետ են աղերսվում: Հետևաբար, կրոնի ծևաբանական դասակարգման ժամանակ Տոկարևը «հմայություն» ընդհանուր անվան տակ կրոնի որոշակի ծև չի դնում, այլ հմայության տարբեր ձևերը՝ համապատասխան անուններով [տե՛ս Токарев 1965, 31]: Մենք ծայրահեղ ու չափազանցված ենք համարում հմայությունը և՛ կրոնին հակադրողների, և՛ կրոն համարողների կարծիքները: Այն, պարզապես, անիմիզմի նման բոլոր կրոնների հիմքն ու բաղադրիչն է կազմում:

յան քարանձավային նկարներում և օրինյակ-սոլյուտրեյան կանանց ու գազանների արձանիկներում [Токарев 1959, 7]:

Այդ վաղնջական աշխարհընմբռնման բնույթն ու էությունը ամբողջ ծավալով ու խորությամբ երևան եկավ Ամերիկայի, Աֆրիկայի, Օվկիանիայի, Ավստրալիայի բնիկների կյանքն ու կենցաղը հետազոտելիս, երբ պարզվեց, որ հմայությունը, իբրև աշխարհընմբռնում ու պրակտիկ գործողություն, վաղնջական հասարակությունների հոգևոր ու արտադրական կյանքում վիթխարի դեր է կատարում: Կարծիքներ են եղել անգամ, թե «կրոնների դարին նախորդել է հմայության դարը», որով անցել են իրենց պատմական զարգացման ընթացքում մարդկային բոլոր ցեղերը [Фрэзер 1928, 82-83]: Հիրավի, Եվրոպայի և Ասիայի բոլոր քաղաքակիրթ հասարակությունների ժողովրդական հավատալիքներում, կենցաղում ու տարբեր կրոնների մեջ մինչև այժմ էլ շարունակում են գոյատևել հմայության վերապրուկները, որոնք իրենց պատկերացումներով ու կիրառման եղանակներով հաճախ նույնանում են վերոհիշյալ թերզարգացած ցեղերի հմայական հավատալիքներին: Եվ ոչ միայն այդ. Հին աշխարհի, մասնավորապես արևելյան և հարավեվրոպական հին քաղաքակրթությունների (Հին Եգիպտոս, Միջագետք, Փոքր Ասիա, Հին Հունաստան և այլն) ուսումնասիրությունը պարզել է հմայության ունեցած կարևոր տեղն ու դերը հին ժողովուրդների կենցաղում ու հավատալիքներում, քաղաքակրթություններ, որոնց անմիջական ժառանգորդն են հանդիսանում արևելյան ու եվրոպական արդի ազգերը: Եվ երբ համեմատվում են Հին աշխարհի հմայական պատկերացումներն ու ծեսերը արդի ժողովուրդների կրոններում, սնահավատքում ու կենցաղում պահպանված հմայության հետ, իսկ այդ երկուսն էլ զուգադրվում ժամանակակից թերզարգացած ցեղերի համանման հավատալիքներին, ապա պարզ են դառնում այն ընդհանրությունները, որոնք զարմանալի նույնությամբ դրսևորվում են ժամանակով, տարածությամբ, ցեղային պատկանելությամբ, լեզվով ու տնտեսամշակութային զարգացման մակարդակով միմյանցից տարբեր ու հակոտնյա ժողովուրդների ու ցեղային խմբերի հմայական ծեսերի ու պատկերացումների միջև: Այդ պարագան էլ իրավացիորեն հիմք է տվել ու տալիս ազգագրագետներին ու մշակույթի պատմաբաններին՝ արդի թերզարգացած ցեղերի արտադրական ու հոգևոր կենցաղում տեսնելու ժամանակակից քաղաքակիրթ ժողովուրդների նախապատմական անցյալի պատկերը, որին արդի գիտությունն այժմ սոսկ ձեռնհաս է մնում հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի մնացուկներով:

Հմայքներն առհասարակ, անկախ իրենց վաղնջականությունից, տիպաբանորեն բաղկացած են երեք գլխավոր բաղադրիչներից.

ա) հմայական պատկերացումներից և հավատալիքներից (= սնահավատք), որոնցից ծագում են հմայական արարողությունները.

բ) հմայական արարողություններից, որոնք այդ հավատալիքների գործնական իրականացումն են.

գ) հմայական արարողություններին ուղեկցող անկախ խոսքերից՝ բանաձևերից, որոնք հանդես են գալիս բանավոր ու գրավոր ձևերով:

Այս երեք օրգանական բաղադրիչներից զատ, հմայությունն ուղեկցվում ու գործադրվում է զանազան հմայական առարկաների ու իրերի միջոցով (հուռութքներ, թալիսմաններ և այլն), որոնք օժտված են սոսկ կիրառական-պահպանական գործառույթներով:

2. Հմայության բնույթն ու էությունը: Հմայության ծագումը հասարակական շատ երևույթների ծագումնաբանության նման ևս գիտության վիճելի ու տակավին

չլուծված խնդիրներից է, թեպետ որոշ հետազոտողներ յուրովսանն այն լուծված են համարում[2]:

Հմայության ծագմանը հարկ է մոտենալ նախնադարյան հասարակությունների նյութական-արտադրական կյանքի հանգամանքներով պայմանավորված մտածողության ու հոգեբանության առանձնահատկությունների հաշվառումով, քանզի հմայությունն ամենից առաջ ենթադրում էր հավատալիքներ, ապա միայն՝ արարողություն – գործողություն, այսինքն՝ սկզբնապես հարկ էր ունենալ հավատալիքների կամ սնոտի ըմբռնումների միագումար, որի հիման վրա միայն հնարավոր լիներ գործնականում «գերբնական ձևով ներգործել այս կամ այն նյութական առարկայի կամ երևույթի վրա» (Տոկարև): Այս իսկ տեսակետից իրավացի էր Ալֆրեդ Լեմանը, որը գտնում էր, թե՝ «սնոտիապաշտությունը տեսություն է, իսկ հմայությունը՝ գործողություն, նման տեսության հետևանք: Հմայությունը առաջանում է սնոտիապաշտությունից ճիշտ այնպես, ինչպես կրոնական որոշ պատկերացումներից ծագում է հայտնի պաշտամունքը, որոշակի ծիսակատարությունը, կամ, ինչպես բնության ուժերը ըմբռնելուն հաջորդում է նրանց կիրառությունը» [**Леманн 1900**, 13]: Ուստի հմայության ծագմանը մոտենալ սոսկ գործողության տեսանկյունից, առանց հաշվի առնելու այդ գործողության տեսական հիմքը՝ սնոտի հավատալիքները, դա կլիներ նույնը, ինչ հետևանքի ծագումը քննելիս՝ նկատի չառնվեր դրա առաջացման պատճառը: Հմայությունը հետազոտելիս, հատկապես նրա ծագումն ու էությունը բացահայտելիս, ուրեմն, հարկ է սնոտիապաշտությունն ու հմայական արարողությունները դիտել իբրև միմյանց պայմանավորող և իմաստավորող մեկ ամբողջություն, քննել նաև՝ հմայական արարողությունների հիմնապատճառ սնոտի հավատալիքների բնույթն ու ծագումը, բացահայտել դրանց առաջացման նյութական ու մտածական շարժառիթները, որոնց շնորհիվ արդեն կբացահայտվեն հմայական արարողությունների, իբրև ածանցյալ երևույթի, բուն հիմքերը:

Մեր նպատակը չէ այստեղ շոշափել այդ կնճռոտ խնդիրն ամբողջությամբ, այլ սոսկ ընդհանուր գծերով ուրվագծել պատմամշակութային այդ երևույթի գլխավոր կողմերը, որոնք սերտորեն աղերսվում են մեր հետազոտվող նյութին:

Ժամանակակից թերզարգացած ցեղերի հոգեկան աշխարհի հանգամանալից հետազոտությունները պարզել են, որ նախնական հավատալիքների ու կրոնական ըմռնումների հոգեբանական հիմքը բնության առարկաների ու երևույթների հանդեպ տածած երկյուղն է՝ պայմանավորված նախնադարյան մարդու՝ բնության ուժերին չտիրապետելու, հետևաբար և՝ չճանաչելու հանգամանքով: Մարդու ամենօրյա շփումը բնության առարկաների ու երևույթների հետ և դրանցից ստացած ներքին հակազդեցությունները, նրա մեջ տարտամ զգացումներ էին առաջացնում դեպի այդ անորոշ ու անբացատրելի ուժերը: Եվ քանի որ ամբողջ շրջապատը լցված էր այդ ու-

[2] Եթե հետազոտողներից ոմանք հմայության ծագումը բացատրում են հիմնականում հոգեբանական տեսանկյունից՝ իբրև արդյունք հոգեբանական զուգադրումների (ասոցիացիա) օրինաչափության (Ֆրեյզեր) կամ կամազգայական դրդումներից եկող բնազդական շարժումների, որոնք հետագայում են միայն իմաստավորվում (Մարետ, Պրայս, Ֆիրկանդտ), ապա, Ս. Տոկարևի կարծիքով, հմայական արարողությունները ծագել են մարդկային բանական պրակտիկ գործողություններից, որոնք սկզբում հենց այդպես էլ գիտակցվել են, բայց հետագայում աստիճանաբար մարդու կողմից ըմբռնվել են «իբրև կախարդություն, այսինքն՝ իբրև երևույթների գերբնական կապակցությունների վրա հիմնված գործողություն», ուր վճռական դերը պատկանում է գերբնականի գաղափարին [**Токарев 1959**, 73]: Տոկարևի կարծիքը, որքան էլ համոզիչ է ու հիմնավոր, այդուամենայնիվ, միակողմանի է, քանզի վերաբերում է միայն հմայական արարողություններին և չի բացահայտում հմայության, իբրև հավատալիքի, բուն դրդապատճառը, այն, թե ինչու է մարդն իր գործողությանը հենց այդպիսի հմայական զորություն վերագրում, պատմահոգեբանական ինչ դրդումների կամ հիմունքների հիման վրա: Այս միակողմանիությունը գալիս է մասամբ առարկայի միակողմանի ըմբռնումից: Տոկարևը «հմայության» տակ հասկանում է սոսկ հմայական արարողությունները՝ «տարբեր սնոտիական մարդկային գործողությունները» [նշդ, 7]:

ժերով, և մարդն անզոր էր դրանք անմիջապես տեսնել կամ տիրապետել, ուստի և մարդու մեջ առաջ էր գալիս գերբնականի ըմբռնում և զգացողություն: Ըստ այդմ էլ, նախնադարյան մարդու գիտակցությամբ բոլոր առարկաներն ու երևույթներն օժտված էին մի անտեսանելի գերբնական զորությամբ: Առարկաների, երևույթների, մարդկանց, բույսերի ու կենդանիների միջև, ըստ այդ հայացքի, գոյություն ունեին խորհրդավոր և միստիկական կապեր ու կապակցություններ, զանազան պատճառներ ու հետևանքներ, որոնք հենվում էին ոչ թե իրական պատճառական կախվածության վրա, այլ՝ թվացական – երևակայական պատկերացումների:

Այս հիմքի վրա էլ ծագում են զանազան սնոտի հավատալիքներ ու պատկերացումներ:

Մարդու արտադրական սահմանափակ փորձի հետևանքով, բնության մեջ և կյանքում կատարված իրողությունները, նախնադարյան մարդու գիտակցության մեջ միմյանց հետ են առնչվում ոչ թե բնական պատճառի ու հետևանքի ներքին տրամաբանությամբ, այլ սոսկ մեխանիկական հաջորդականության սկզբունքով: Դիցուք, օրինակ, եթե մի սպիտակամորթ գալիս է կղզիաբնակների մոտ, և դրան հաջորդում են երաշտ կամ զանազան պատահարներ, ապա այդ երկու երևույթների միջև կապ են տեսնում և դժբախտությունների պատճառը համարում են սպիտակամորթի գալուստը, ճիշտ այնպես, ինչպես մեր մի շարք հավատալիքներով՝ անձի «բարի» կամ «չար» ոտք ունենալով են բացատրում տվյալ անձի գալստյանը հաջորդող հաջողություններն ու անհաջողությունները: Այդպես նաև այն բազմաթիվ սնահավատքները, որոնց մեջ երևույթները կապված են միմյանց սոսկական հաջորդականությամբ, առանց ներքին պատճառական կախվածության: Օրինակ, երբ կատուն երեսը լվանում է, հավատում են, թե հյուր է գալու, երբ տանը աղ է թափվում, հավատում են, թե տանը կռիվ կլինի, երբ հայելի է կոտրվում, հավատում են, թե տվյալ ընտանիքի անդամներից մեկը մեռնելու է, և այլն, այսինքն՝ այնպիսի իրադրություններ, որոնցից մեկը կանխանշում է մյուսը, դառնում յուրօրինակ պատճառ մյուսին:

Այս կարգի ընդհանրացումները տարածվել են ու լայն ընդունելություն գտել այն պատճառով միայն, որ հենվել են մտածողության միևնույն եղանակի վրա՝ տարբեր առարկաների ու երևույթների միջև առկա խորհրդավոր առնչակցությունների հավատքի և իրար անմիջապես հաջորդող երևույթների ներքին պատճառակցական կապի: Մանավանդ որ, ըստ Լևի Բրյուլի հավաստման, նախնադարյան մարդու համար կույր պատահականություն գոյություն չունի. ամեն մի պատահական դիպված, անցք, եղելություն նրա համար անտեսանելի զորության արդյունք է և գալիքը կանխորոշելու նախանշան:

Նման մտածելակերպի պատճառն այն էր, որ նախնադարյան մարդը, չըմբռնելով առարկաների ու երևույթների բուն պատճառակցական կապակցությունը, ընկալում էր սոսկ արտաքին մեխանիկական հաջորդականությունը, և վերջնիս միակ բացատրությունը որոնում երևույթների գերբնական և միստիկական առնչակցությունների մեջ: Նման ըմբռնումներից էլ, ահա, բխում էր այն պատկերացումը, թե որևէ ցանկալի իրադրություն կամ երևույթ կարելի է առաջ բերել՝ դրան նախադրելով մեկ այլ գործողություն կամ իրադրություն: Այստեղից էլ առաջ է գալիս հմայական արարողությունը, իբրև մասամբ արդյունք առարկաների ու երևույթների միջև առկա գերբնական առնչակցությունների հավատքի, և պատճառի ու հետևանքի հարաբերությունը երևույթների մեխանիկական հաջորդականության մեջ տեսնելու մտածելակերպի: Այս երկու սկզբունքը փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով և կազմում են հմայական հավատալիքների մի մասի ելակետային հիմքը: Իսկ հմայության բուն բովանդակությունը կազմում են միևնույն սկզբունքների վրա ծագած

հավատալիքները, որոնց իրագործումն են հմայական արարողությունները:

Այսպես. հայկական հավատալիքներով գորտնուկ ունեցողի բերանից հաց ուտելիս, եթե պատառ վայր ընկնի, և այդ պատառը գորտնուկի տերը խաչածև քսի գորտնուկներին և ուտի, ապա դրանք կվերանան: Կամ. եթե նորալուսնի ժամանակ դրամ ցույց տրվի նորալուսնին, ապա ամբողջ լուսնային ամսի ընթացքում այդ մարդը ապահովված կլինի դրամով: Կամ. եթե մարդ որևէ գործեղ կենդանու սիրտ ուտի, ապա անվախ ու սրտոտ կլինի: Եթե ուրիշ մեկը հիվանդի բաժին կերակրից ուտի՝ հիվանդը կառողջանա: Եթե ատամ հանող երեխայի գլխին «ակռահատիկ» շաղ տան, ապա երեխան ատամները շուտ և հեշտությամբ կհանի և այլն:

Արդ, ի՞նչ են իրենցից ներկայացնում այս հավատալիքները. դրանք երկանդամ ավանդական ասույթներ են՝ տրամաբանորեն կառուցված պայմանի և հետևանքի այն փոխադերսակցությամբ, որ եթե տվյալ պայմանն իրականացվի, ապա կունենա տվյալ որոշակի հետևանքը: Բնույթով պայմանը՝ մարդու հնարավորությունների մեջ մտնող, այսինքն՝ իրականացվող իրադրություն է, մինչդեռ հետևանքը՝ այդ իրադրությանը հաջորդող ցանկություն, որն անմիջապես չի մտնում իրական հնարավորությունների մեջ, այլ սոսկ ածանցվում է հնարավոր պայմաններից: Այլ կերպ ասած, ցանկալի հետևանքը պետք է լինի որոշակի իրադրությունների արդյունք: Հավատալիքների առաջին անդամը՝ պայմանը, իրականացվում է հմայական արարողություններով, երբ պահանջվող պայմանը վերածվում է հմայական գործողության: Հմայական արարողություններն, ուրեմն, հավատալիքների գործարկված պայման-իրադրություններ են[3]:

Այսպես, վերոհիշյալ հավատալիքները գործադրելիս, դրանց առաջին անդամները՝ բերանից վայր ընկնող հացը գորտնուկին խաչածև քսելու, նորալուսնին դրամ ցույց տալու, կենդանու սիրտ ուտելու, հիվանդի ճաշից ուտելու, երեխայի գլխին ակռահատիկ շաղ տալու պայմանները իրագործվում են և հոգեբանորեն հաջորդում իրենց հետևանքին՝ գորտնուկից բուժվելու, հարստանալու, հիվանդին բուժելու և երեխայի ատամները հեշտությամբ դուրս գալու նպատակներին: Հմայական արարողություններն, ուրեմն, հավատալիքների գործարկված պայման-իրադրություններն են, որոնց նախորդում են այդ պայմանների իրագործումից ակնկալվող ցանկությունները, որ և հմայությունների բուն նպատակն է կազմում:

Հմայության մեջ, ուրեմն, բացահայտ տարբերազատվում են երկու սկզբունքներ՝ իրական-ռեալիստական, որ արտահայտվում է մարդու իրական գործունեությամբ, և գերբնական-հայեցողական, որ ակնկալվում է իբրև գործողության արդյունք կամ հետևանք:

Սա բոլոր հմայությունների այն նախնական պարզագույն մոդելն է, որ հետա-

---

3 Սակայն, հավատալիքները հմայական արարողությունների վերածվելիս, դրանց տիպաբանական կառուցվածքը որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Եթե հավատալիքներում ակնկալվող հետևանքը հետևորդում է պայման-իրադրություններին, այսինքն՝ օբյեկտիվ փաստերից վերացարկված հավատալիքն իր կառուցվածքով նույնն է մնում, ինչ հերթականությամբ որ առարկայական իրականության մեջ փաստերն հաջորդել են իրար, ապա հավատալիքի՝ արարողության փոխարկման ժամանակ առաջինի տիպաբանական կառուցվածքը շրջվում է, հետևանքը նախորդում է պայման-իրադրությանը: Այլ կերպ ասած, երբ հմայողը դիմում է ավանդական հավատալիքին, ապա ամենից առաջ նա նկատի է առնում տվյալ հմայական հավատալիքի հետևանքը, այսինքն՝ նպատակը, թե ի՛նչ նպատակի դեպքում պետք է կիրառվի այն: Եվ երբ նա ընտրում է նպատակին անհրաժեշտ հմայական հավատալիքը, ապա հոգեբանորեն արդեն հավատալիքի նպատակ-հետևանքը նախորդում է պայման-իրադրության գործարկմանը: Հմայողը նախ մտովի ունի իր նպատակը, որն իրագործելու համար էլ դիմում է հավատալիքի պայման-իրադրության գործնական կիրառմանը, այսինքն՝ կատարում է հմայական արարողություն: Եվ հմայական արարողությունների ու ցանկությունների տիպահոգեբանական կառուցվածքը բոլոր դեպքերում նույնն է՝ նպատակը նախորդում է արարողությանը:

գայում բարդբարդվում է ու խավավորվում նորանոր հավատալիքներով, վերածվում ծիսահմայական բարդ արարողությունների:

Հավատալիքի և հմայական արարողության հիշյալ փոխհարաբերությունը պարզագույն հմայքներում այնքան որոշակի է դրսևորված, որ կարելի է հավատալիքից անմիջապես վերականգնել արարողությունը և, ընդհակառակը, հմայական արարողությունից վերականգնել հավատալիքը:

Օրինակ, Բրիտանական Նոր Գվինեայում օձ որսացողը որսի դուրս գալուց առաջ բռնում է պատահած իժին, վառում, նրա մոխրով շփում ոտքերն ու գնում որսի՝ հավատացած, որ ոչ մի օձ իրեն այլևս չի դիպչի [**Фрэзер 1928**, 58]:

Հմայական այս արարողությունից անմիջապես կարելի է վերականգնել նրան հիմք հանդիսացած հետևյալ հավատալիքը. եթե օձ վառեն և մոխիրը քսեն օձ որսացողի ոտքերին, ապա նրան ոչ մի օձ չի խայթի:

Կամ՝ Հայաստանի շատ գավառներում, երբ հուղարկաթափորն անցնում է նորածին երեխա ունեցողի տան մոտով, երեխային իսկույն դուրս են հանում մեռելի առաջ, որպեսզի «մեռելակոխ» չլինի:

Սրա հիմք-հավատալիքն այն է, որ եթե մեռել են անցկացնում քնած երեխայի տան մոտով, ապա պետք է երեխային հանել ընդառաջ, որպեսզի մեռելը նրան չկոխի անցնի:

Այսպիսի փոխակերպությունները վկայում են հմայական հավատալիքների և արարողությունների միմյանցով փոխկապակցված լինելու մասին:

Այս է մոտավորապես հմայական հավատալիքների պայման-իրադրության և հմայական արարողությունների միջև եղած հարաբերությունը: Այժմ հարկ է տեսնել, թե ի՛նչ հարաբերություն գոյություն ունի հմայական արարողության և դրանից ակնկալվող հետևանքի միջև, այսինքն՝ իրագործված պայմանի և դրան հաջորդող ցանկության միջև:

Յուրաքանչյուր հմայող, հմայական արարողություն կատարելիս, միշտ ակնկալում է որոշակի ցանկալի հետևանք, այսինքն՝ հմայական արարողության և ակնկալվող ցանկության միջև դրվում է պատճառի և հետևանքի յուրօրինակ կապակցություն, որը տարբերվում է իրական պատճառական հարաբերակցությունից: Նախնական պարզագույն և պրոֆեսիոնալ բարդ հմայություններում միշտ էլ հոգեբանորեն հմայողի ցանկությունը նախորդում է հմայական արարողությանը, դառնում վերջնիս բուն դրդապատճառը: Ցանկությունն ինքը մարդու իրական-առարկայական կյանքում ստեղծված կարիքի բավարարման ձգտումն է, կարիք, որ արտահայտվում է, դիցուք, որևէ անհրաժեշտ գործարքի, բնական որևէ աղետի (երաշտ, հիվանդություն) ձևով, որոնք համապատասխանաբար առաջացնելու կամ կանխելու ձգտումն իրականացնելու համար մարդը դիմում է հմայական արարողությունների: Հետևաբար, ցանկությունը նախորդում է արարողությանը և անհրաժեշտաբար առաջ բերում այն:

Այսպես. երբ Ջավախքում կարկուտ էր գալիս, և տեղացիներն աղ էին վերև նետում, ապա նրանք նախապես ունեին կարկուտը դադարեցնելու ցանկություն, որ առաջ էր եկել այդ բնական աղետի հետևանքով: Իսկ այդ ցանկության իրագործման համար նրանք աղ էին վերև նետում, այսինքն՝ կատարում էին հմայական արարողություն: Կամ՝ երբ նույն Ջավախքում երաշտ էր լինում, կամենալով կանխել այն, կանայք լծվում էին գութանին և գետի կամ առվի հոսանքին հակառակ քաշում: Իսկ երբ կամենում էին կանխել մեկի գլխացավը, նրա գլխարկի մեջ օձի շապիկ էին կարում և այլն: Այնպես որ, կարիքը բավարարելու ցանկության վրա է կառուցվում հմայական արարողությունը. հետևաբար առաջնայինը ցանկությունն է, իսկ արարողու-

թյունը՝ երկրորդային՝ ածանցված այդ ցանկությունից: Սա, սակայն, հմայության բաղադրիչների ծագման հաջորդականությունը ցույց տալու իմաստով միայն: Առհասարակ, արարողությունն ինքը այդ իրական ցանկության հմայական իրագործումն է, նրա հմայական գործադրումը, որն իր հերթին ունենալու է որոշակի ռեալ հետևանք: Այսպես՝ երբ Ջավախքում չաղքատանալու նպատակով պատի երեսին ջուր էին սրսկում (ԱՀԱ, 361), ապա այդ գործողությունը հենց հիշյալ ցանկության հմայական իրագործումն էր, որով, սակայն, դեռ չէր ավարտվում հմայության նպատակը, այլ դրա իրագործման գործողությունից հետո եկող մի իրական հետևանք էր ևս ակնկալվում՝ այսուհետև չաղքատանալու:

Ձեյթունում, երբ մեկը տենդով հիվանդ էր լինում, տան անդամներից մեկը տենդը կրիային փոխանցելու նպատակով գնում, կրիայի ոտը թել էր կապում (ԱՈւ, 105): Հմայական այդ գործողությունից, որ հմայողի նպատակի իրագործումն էր միաժամանակ, հմայողն ակնկալում էր հիվանդի առողջանալու հետևանքը: Երբ Բուլանըխում և այլուրեք երեխային ակնահարվելու վտանգից զերծ պահելու համար վզից կապույտ ուլունք էին կախում, այդ նպատակի հմայական իրագործմանը հաջորդում էր այնուհետև երեխայի չակնահարվելու ակնկալիքը:

Հետևաբար, հմայության հոգեբանական մեխանիզմը բաղկացած է տրամաբանական երեք աստիճանից՝ 1. ցանկությունից կամ նպատակից, 2. այդ ցանկությունն իրագործող հմայական արարողությունից և 3. ակնկալվող հետևանքից:

Նպատակը, կատարումն ու հետևանքը հմայություններում ժամանակի տեսակետից հաջորդում են միմյանց. սկզբում իրական սոցիալ-տնտեսական կամ բարոյաֆիզիկական կարիքներից ծագում է դրանք կանխելու կամ բավարարելու ցանկությունը կամ նպատակը, ապա այդ նպատակն իրագործելու գործողությունը՝ հմայական արարողությունը, որից ակնկալվում է անմիջապես կամ մոտիկ ապագայում ցանկալի հետևանքը:

Այս նույն իրադրությունն է, կարծես թե, առկա նաև սովորական արտադրական օգտակար գործունեության մեջ, որը ևս ծագում է իրական կարիքները կանխելու կամ բավարարելու ցանկությունից, դառնում այդ ցանկության ռեալ իրագործումը: Իսկ գյուղատնտեսական որոշ աշխատանքներում (երկրագործությունն իր բոլոր ճյուղերով) արտադրական գործունեության ցանկալի հետևանքները, այսինքն՝ արդյունքները սպասվում են մոտիկ ապագայում:

Եթե արտադրական և առհասարակ, ամեն մի օգտակար գործունեություն ենթադրում է որոշակի նյութական բարիքների ստեղծում կամ բարեբեր հետևանքներ, ապա նույնը և առկա է հմայություններում, մասնավորապես, արտադրական կյանքի հետ կապված հմայական արարողություններում: Ո՞րն է, ուրեմն, արտադրական-օգտակար գործունեության և հմայական արարողությունների տարբերությունը: Ամենից առաջ այն, որ աշխատանքային սովորական նպատակային գործողություններում աշխատանքի արդյունքը դիտվում է իբրև տվյալ աշխատողի ռեալ զորության ու աշխատանքի շոշափելի արգասիք, մինչդեռ հմայքներում, բացի դրանից, առկա է նաև գերբնական զորության գոյության հավատք, և ակնկալվող արդյունքը ըմբռնվում է իբրև մարդու և միաժամանակ այդ գերբնական ուժերի գործունեության հետևանք: Այդ հանգամանքը դիտելի է մինչև վերջերս էլ նախապաշարված մարդկանց մեջ պահպանված այն սովորություններում, երբ գործ նախաձեռնելուց առաջ, տարբեր ձևերով, ապավինում են նաև գերբնական ուժերին՝ գործի հաջողությունն ակնկալելով դրանց անտեսանելի զորությունից: Իսկ հնում, մասնավորապես, նախնադարյան ցեղերի արտադրական կենցաղում, ինչպես ցույց են տալիս ազգագրական բազմաթիվ վկայությունները, հմայական արարողություններն ուղեկցել են գրե-

թե բոլոր արտադրական, պատերազմական, բուժական, կենցաղային գործողություններին՝ դառնալով երբեմն դրանց յուրատեսակ անդրադարձումը:

Իրավացի պետք է համարել, հարկավ, Տոկարևի կարծիքը, թե հմայական արարողությունները նախապես ծագել են բանական նպատակային գործողություններից. սկզբնապես բանական իրական գործողությունը աստիճանաբար սկսում է մարդու կողմից ըմբռնվել իբրև կախարդություն, «այսինքն՝ այնպիսի գործողություն, որ հիմնված է երևույթների գերբնական կապակցությունների վրա» [Токарев 1959, 73]:

Մարդկային բանական նպատակային գործունեության աստիճանական փոխարկումը հմայական արարողության, կարծում ենք, հետևանք է մարդու նախնական պրակտիկայի միստիֆիկացման, այսինքն՝ իր շոշափելի նյութական արդյունքներ ստեղծող գործողությունների գերագնահատման և, ի վերջո, գերբնականացման: Ուստի և, սկզբնապես ամեն ոք հմայող է, ուզած հմայական արարողությունը կատարող և ցանկացած հետևանքն առաջ բերող:

Ծագումնաբանորեն հմայական արարողություններն, ուրեմն, ածանցվելով իրական բանական գործողություններից և հետագայում դառնալով ավանդական, վերածվում են յուրատեսակ արվեստի: Դրանք այլևս չեն ըմբռնվում իբրև նախկին բանական գործողություններ, այլ իբրև դրանցից անջատ, բայց դրանց ուղեկցող, դրանց հաջողությունն ապահովող կամ ձախորդությունը կանխող պարտադիր արարողություններ: Նոր հմայական արարողությունները, սակայն, այլևս չեն ածանցվում նախորդների հիմքից, այսինքն՝ բանական գործողություններից, այլ նախորդների ավանդական-հմայական արվեստի վերածվելու պատճառով հորինվում են դրանց նմանությամբ, մտածողության միևնույն օրենքներով ու եղանակներով, հարկավ, միշտ պայմանավորված իրենց բուն դրդապատճառներով, իրական ցանկությամբ կամ նպատակով: Հմայական արարողություններն, ուրեմն, մյուս կողմից ծագում են բանական-նպատակային գործողություններից, նրանց միստիֆիկացման, նրանցից աբստրահվելու հիման վրա, երբ տվյալ գործողությունը զրկվում է իր գործնական-պրակտիկ նպատակից՝ աստիճանաբար վերափոխվելով սիմվոլային արարողության:

Արդ, տեսնենք, թե հմայական արարողությունն ու ակնկալվող ցանկալի հետևանքը ինչ կարգի հարաբերություններով են միմյանց աղերսակցվում:

3. Հմայական կապակցությունների բնույթը: Հմայական կապակցությունը, ինչպես ապացուցել է Ջեյմս Ֆրեյզերը, հենվում է իրերի և երևույթների միջև երևակայվող, այսպես կոչված, սիմպատիկ-համակրական հարաբերությունների վրա, նախնադարյան մտածողությանը բնորոշ մի համընդհանուր պատկերացում, ըստ որի տարբեր առարկաներ ու երևույթներ ներգործում են իրար՝ միմյանց փոխանցվող խորհրդավոր համակրական զորությամբ: Հետևաբար, իրագործված պայմանի և ակնկալվող ցանկության միջև ենթադրվող պատճառակցությունը հենվում է ոչ թե իրական տրամաբանական կապակցությունների, այլ «գաղափարների զուգորդումների սխալ ըմբռնման» (Ֆրեյզեր) վրա, այսինքն՝ անիրական գերբնական կապակցությունների: Ֆրեյզերը հմայական արարողության և ակնկալվող ցանկության միջև զանազանում է երկու կարգի հարաբերակցություն. մեկն այն է, երբ արարողությունը կարող է առաջ բերել նման ցանկալի հետևանք, այսինքն՝ ցանկալի հետևանքը նման է իր պատճառ-հմայական արարողությանը: Մտածողության այդ սկզբունքի վրա կառուցված հմայությունը նա անվանում է հոմեոպատիկ կամ նմանողական հմայություն: Իսկ մյուսն այն է, երբ երկար ժամանակ փոխադարձ շփման մեջ եղող առարկաները ներգործում են միմյանց նաև իրարից հեռանալու դեպքում: Մտածողության այս սկզբունքի վրա խարսխված հմայությունը Ֆրեյզերը կոչում է կոնտագիոզային

կամ վարակիչ հմայություն[4] [Фрэзер 1928, 37-38]:

Ֆրեյզերի բացահայտած օրինաչափություններից առաջինը՝ նմանողականությունը, ժողովրդական և, առհասարակ, մարդկային հոգեբանության ու մտածողության այն կարևոր յուրահատկություններից է, որ բնորոշ է բոլոր դարաշրջաններին: Այդ, այսպես ասած, պատկերավոր-զուգաննմանական (ասոցիատիվ) մտածողությունն է, երբ մի առարկա կամ երևույթ իր արտաքին պատկերով հիշեցնում է և երևակայության մեջ վերականգնում է մեկ այլ առարկայի կամ երևույթի մտապատկեր, որով մի յուրատեսակ նմանողական կապ ու հարաբերություն է ստեղծվում հաճախ սեռով ու տեսակով միմյանցից շատ հեռու և տարբեր առարկաների միջև: Դիցուք, լիալուսինը կամ կիսալուսինը դիտելիս մարդ կարող է վերհիշել կլոր հաց, խմորի գունդ կամ կիսատ բոքոն և այդ զուգաննմանությամբ, ասենք, ստեղծվում է հանելուկների մի փունջ լուսնի մասին, ուր լուսինն արտահայտվում է հիշյալ նմանությամբ, իբրև կլոր հաց, խմորի գունդ կամ կիսատ բոքոն: Եվ այստեղ նմանողական կապ է ստեղծվում այդ տարբեր առարկաների միջև:

Պատկերացումների կամ գաղափարների հոգեբանական այս զուգորդումն է, ահա, ընկած գեղարվեստական բոլոր համեմատությունների ու փոխաբերությունների հիմքում, երբ մեկ առարկա համեմատվում կամ արտահայտվում է մեկ ուրիշով:

Մտածողության այդ եղանակը, սակայն, մեզ համար է գեղարվեստական (այսինքն՝ զգայական և ոչ տրամաբանական), մինչդեռ նախնադարյան մարդու համար դա նույնքան իրական էր ու բնական, որչափ իրերի և երևույթների միջև առկա իրական-բնական հարաբերակցությունները: Ուստի և՛ զգայականի, և՛ տրամաբանականի, քվացականի ու իրականի այս փոխադարձ նույնացումը նախնադարյան մարդու մտածողության մեջ առաջ էր բերում տարբեր ու բազմապիսի առարկաների և երևույթների միջև առկա երևակայական կապեր ու հարաբերություններ, որոնք մեր հայացքով գերբնական արժեք ունեն, մինչդեռ նախնադարյան մարդկանց համար բնական էին, բոլոր իրերին ու երևույթներին առանձնահատուկ:

Աշխարհայացքային-մտածական այս հիմքի վրա են, ահա, ծագում նախնական հմայությունները, որոնցից Ֆրեյզերի մատնանշած նմանողական հմայությունը կառուցված է պատկերացումների նմանողական զուգորդումների վրա:

4. Հմայությունն իբրև սիմվոլային փոխաբերություն: Նշվեց, որ նախնական հմայության յուրաքանչյուր արարողություն իրենից ներկայացնում է յուրատեսակ պատճառ, որին պետք է հաջորդի ակնկալվող ցանկալի հետևանքը, և, որ դրանց միջև առկա պատճառական կապակցությունը հենվում է, ըստ Ֆրեյզերի, «գաղափարների զուգորդումների սխալ ըմբռնման վրա»: Իրականում այդպես է, եթե խնդրին մոտենում ենք սոսկ տրամաբանական նկատառումով: Սակայն, երբ հարցը դիտում ենք հոգեբանական, այսինքն՝ հուզազգայական տեսանկյունից, մի հանգամանք, որից, որոշ հետազոտողների (Հյուբեր, Մոս) իրավացի կարծիքով, ծագել է հմայությունը, ապա կտեսնենք, որ ոչ թե գաղափարների զուգորդումների ըմբռնման սխալ կա այստեղ, այլ պարզապես պատկերացումների սոսկական զուգորդումներ են դրանք, որոնց ճշմարիտ ու սխալ լինելու հարցադրումն առհասարակ անիմաստ է:

Հետևաբար, պետք է հմայական արարողությունն ու ակնկալվող ցանկությունը դիտել ոչ թե իբրև սոսկ պատճառի ու հետևանքի հարաբերություն, այլ իբրև պատկերացումների զգայական զուգորդություն, որը, հարկավ, ունի իր ներքին տրամաբանությունը: Այսպես դիտելիս պարզվում է, որ հատկապես նմանողական հմայու-

4 Հետագա ուսումնասիրողները (Ֆիրկանդտ, Վան Գենեպ, Կագարով, Մոշինսկի, Տոկարև և ուրիշներ) Ֆրեյզերի դասակարգումը համալրում են հմայության նոր տիպերով ու տեսակներով, որով համեմատաբար ամբողջական գաղափար է կազմվում հմայության բազմազան ձևերի մասին [հմմտ Токарев 1959, 26-72]:

թյուններում, հմայական արարողություններն իրենցից ակնկալվող ցանկությունների նկատմամբ հարաբերվում են գրեթե նույն կերպ, ինչպես սովորական համեմատությունների մեջ ծայրանդամները, այսինքն՝ համեմատվողն ու համեմատելին:

Այսպես.

1. Նոր Նախիջևանում կանանց երկունքի ժամանակ, տան բոլոր փակված տեղերն ու կահկարասիք (դուռ, պատուհան, երդիկ, պահարաններ, արկղներ, գգրոցներ և այլն) բացում էին, որպեսզի ծննդկանը դյուրին ազատվեր (ԱՀ IX, 47): 2. Նահանջ տարին ամուսնությունը լավ չի համարվել, որովհետև ամուսինը կարող էր մեռնել (ԱՀ IX, 46): 3. Կինը եթե չորեքշաբթի օրը շապիկը փոխեր՝ ամուսինը կմեռներ (անդ): 4. Զեյթունում կարկուտի ժամանակ հավաքում էին կարկտի հատիկները և թիկունքի վրայով ետ նետում, որպեսզի կարկուտը դադարեր (ԱՈՒ, 104): 5. Տղամարդիկ կանանց հետ հաց չէին ուտում, որպեսզի քարծ (քոսա) չլինեին (ԱՈՒ, 105): 6. Ցորենի կալի մեջ քար էին դնում, որպեսզի առատություն լիներ (ԱՈՒ, 106): 7. Օձի բերանից խլած որևէ կենդանու չորացնում էին և պահում ամուլ կնոջ գլխաշորի մեջ, որպեսզի կինը զավակ ունենար (ԱՈՒ, 108): 8. Երեխաները սատկած անասունի վեգերով չէին խաղում, որպեսզի իրենց նույն կարգի անասունները չսատկեին (ԱՈՒ 109): 9. Նոր Բայազետում, երբ ծննդկանը փորացավ էր ունենում, մկրատով ջուրը մկրատում էին, որպեսզի փորացավը կտրվեր (ԱՀ XVI, 48): 10. Քառասունքակոխով հիվանդ երեխային դնում էին մաղի մեջ և փողոցով մաղ ածում, որպեսզի հիվանդությունը մաղվեր, թափվեր վրայից (ԱՀ XVI, 41) և այլն:

Հմայության վերոբերյալ օրինակներում հմայական արարողությունները և ակնկալվող ցանկությունները, եթե որոշակիորեն վերածենք սովորական համեմատությունների, ապա կստացվի մոտավորապես հետևյալ պատկերը.

1) Տան մեջ ամեն ինչ բացվածի նման, թող բացվի ծննդկանի արգանդը:
2) Նահանջ տարվա կենտ օրվա նման՝ կենտ կննա նաև այդ տարին ամուսնացող կինը:
3) Ինչպես չորեքշաբթի կնոջ շապիկն է մարմնից հեռանում, այնպես էլ ամուսինը կհեռանա (կմեռնի):
4) Կարկտահատերը ետ շպրտելու նման ետ կդառնա (այսինքն՝ կդադարի) կարկուտը:
5) Ինչպես կանայք են քարծ (քոսա), այնպես էլ տղամարդիկ կքարծանան՝ նրանց հետ հացի նստելիս:
6) Ինչպես կալի մեջ քարն է իր ծանրությամբ մնում դրված, այդպես էլ առատությունը միշտ կմնա այնտեղ:
7) Ինչպես օձի բերանից գորտն է (կամ թռչունը) ազատվում, այնպես էլ կազատվի հղիացած ամուլ կնոջից զավակը:
8) Ինչպես վեգերի տեր անասուններն են սատկել, այնպես էլ կսատկեն դրանցով խաղացողների անասունները:
9) Ինչպես մկրատն է ջուրը կտրում, այնպես էլ կկտրվի ծննդկանի փորացավը:
10) Ինչպես երեխան է մաղում նստել, այնպես էլ կմաղվի, կթափվի նրա ցավը և այլն:

Այս կարգի համեմատությունները, հարկավ, որոշ չափով արհեստական են և նպատակ ունեն ցույց տալու հմայական արարողության և ակնկալվող ցանկության համեմատական հարաբերությունը միայն, որ երբեմն հմայության մեջ տարբեր մոտիվներով խճողված լինելու պատճառով չի զգացվում: Սակայն էականն այն է, որ նախնական հմայությունների մեջ միշտ էլ համեմատության հանգամանքը առկա է,

անկախ համեմատությանը բնորոշ բանաձևերի մեջ չդրսևորվելուց, ճիշտ այնպես, ինչպես հաճախ սովորական փոխաբերություններում:

Հմայական արարողությունների և ակնկալվող ցանկությունների միջև համեմատական հարաբերությունը դրսևորվում է մեծ մասամբ սիմվոլային եղանակով: Հմայական արարողությունը սիմվոլացնում է ակնկալվող ցանկությունը, դառնում է դրա սիմվոլային պատկերը կամ արտահայտությունը: Դա նշանակում է, որ հմայական արարողությունը ոչ թե նույնությամբ վերարտադրում է ակնկալվող ցանկության պատկերը, այլ միայն պատկերում է դրան նմանվող կամ հիշեցնող կամ դրա հետ որևէ չափով առնչվող գործողություն, որն իր չափերով մեծ մասամբ փոքր է ցանկալի իրադրությունից: Ուրիշ կերպ ասած, հմայական արարողությունն իր պատկերով ամբողջապես չի ծածկում, իր մեջ ամբողջովին չի ներառում ցանկալի իրադրությունը, այլ միայն արտահայտում է նրա գլխավոր իմաստը՝ նույնության կամ նմանության ձևով:

Օրինակ, երբ Նոր Բայազետում տատմայրը նորածնի բերանին ոսկի էր քսում, ակնկալիքն այն էր, որ երեխան հարուստ լիներ (ԱՀ XVI, 42): Այստեղ ոսկին խորհրդանշում է հարստությունը, իսկ այն երեխայի շուրթերին քսելը՝ վերջնիս կողմից հարստությունը վայելելու ցանկությունը:

Երբ Հայաստանի տարբեր գավառներում, ըստ սովորության, նոր ատամ հանող երեխային «ակռահատիկ» կամ «ատամահատիկ» էին անում, այսինքն՝ երեխայի գլխին լցնում էին եփած սիսեռ, ոսպ, ցորեն, կաճեճ և այլն (ԱՀ XVI, 44), ապա հատիկներն այստեղ խորհրդանշում էին ատամներն ու նրանց առատության ցանկությունը, ինչպես, դիցուք, մի հանելուկում, ուր ատամները հատիկների հետ են փոխաբերվել («Փեննճիրեն (պատուհան)՝ բուռ մը հատիկ» (բերան-ատամներ): Երբ Նոր Բայազետում և այլուր ամուլ կանայք անցնում էին ծակ քարերի միջով կամ նրանց պարանով քաշում էին երդիկից հանում տանիքը (ԱՀ XVI, 31), ապա այդ գործողությունը խորհրդանշում էր արգանդից երեխային դուրս քաշելը, որն ակնկալում էին հմայություն կատարողները:

Երբ սկեսրանց տուն առաջին անգամ մտնող նորահարսի գիրկը արու երեխա էին դնում (ԱՀ XVI, 37), ապա այդ խորհրդանշում էր նորահարսի արու զավակ ունենալու սկեսրանց ցանկությունը, և այլն[5]:

Այսպես ուրեմն, հմայական արարողություններն իրենցից ներկայացնում են սիմվոլային փոխաբերություններ, որոնք այլաբանորեն վերարտադրում են հմայողի նպատակն ու ցանկությունը: Եվ այս առումով նախնական հմայություններն ընդհուպ

[5]Նմանական գուգորդությունների վրա են կառուցված հատկապես նախանշանություններով կամ նախանշանային գուշակությունները: Ճիշտ է, սրանք բուն իմաստով հմայություններ չեն, սակայն հենվում են երևույթների հմայական հարաբերակցությունների վրա: Հայկական մի շարք հավատալիքներով, օրինակ, երբ խմոր շաղելիս կամ հաց ուտելիս մի պատառ թռչի և ընկնի մի կողմ՝ հյուր է գալու. երբ երեխաները մի փայտի կտոր ծի շինած մանն են գալիս՝ դարձյալ հավատում են, թե հյուր է գալու. երբ աչքի թերթերուցքներին որևէ շյուղ է նստում, կամ, ինչպես ասում են՝ «բեռ է բարձվում», ենթադրում են, որ բեռով հյուր է գալու. երբ մեկի աչքը հառվում է մի կետի, այսինքն՝ սառում է, հեռավորը կամ պանդուխտը շուտով տուն է դառնալու. երբ մեկի ականջը ծայն է տալիս կամ ինչպես ասում են՝ «կանչում է», հավատում են, որ որևէ մեկն իրեն է հիշել և անգամ անուններ են տալիս, և ու՛մ անվան վրա ականջի ծայնը դադարում է, ենթադրում են, որ նա է հիշողը. երբ մեկի մորթած անասունի սիրտը պայծառ է ու զվարթ, ենթադրում են, թե մորթողի սիրտն էլ այդպես պայծառ ու անխարդախ է. երբ մեկի ոտտակը քոր է գալիս, հավատում են, թե շուտով նա ճամփա է գնալու. երբ աջ ծեռքն է քոր գալիս, ենթադրվում է, թե դրամ է ստանալու, իսկ երբ ձախն է քոր գալիս՝ դրամ է ծախսելու (ԱՀՋ, 54, 55) և այլն:

Հիշյալ օրինակներում գրեթե բոլոր նախանշաններն ինչ-որ տրամաբանությամբ կապված են իրենց ենթադրվող հետևանքներին. և այդ տրամաբանությունը հենվում է նախանշան պատճառի և ենթադրվող հետևանքի հեռավոր կամ մերձավոր նմանության վրա: Երբ միայն ընտանիքի անդամների համար նախատեսված խմորից կամ հացից պատառ է թռչում, ընկնում մի կողմ, ապա նմանական զուգորդությամբ այդ պատառը ենթադրվում է ընտանիքի կազմից դուրս գտնվող օտարի համար հատկացվելիք հացի պատառ,

մոտենում են ժողովրդական հանելուկներին:

Ժողովրդական հանելուկների մեջ, ինչպես հայտնի է, մի առարկա կամ երևույթ արտահայտվում կամ պատկերվում է մեծ մասամբ այլ առարկաների ու երևույթների հատկանիշներով: Հանելուկ հորինողը յուրովսանն նմանություն է գտնում մի առարկայի և ուրիշ տարբեր առարկաների միջև, այսինքն՝ նմանական զուգորդություններով երկու ամենատարբեր առարկաների մտապատկերները մոտեցնում է իրար, մտովի զուգադրում միմյանց և մեկն ասելով՝ հասկանում մյուսը: Այս հանգամանքի շնորհիվ էլ հանելուկը կառուցվածքով երկատվում է հանելուկի բուն իմաստի կամ առարկայի և հանելուկային պատկեր-բանաձևի. վերջինս միջոցով արտահայտվում է հանելուկի առարկան: Օրինակ, ընկույզն իր կորիզով ու երկդիր միջուկով նմանեցվել ու զուգադրվել է մութ պատրհանի և ավետարանի (գրքի) հետ՝

«Մութ պատրհան, մեջն Ավետարան»:

Նույն կերպ էլ հմայքներում. մարդու իրական ցանկությունը մտովի զուգադրվում է որևէ գործողության հետ, որն ինքնին իսկ պատկեր է: Այդ գործողությունը սիմվոլային ձևով արտահայտում է հմայողի ցանկությունը, դառնում նրա պատկերավոր իրագործումը, ճիշտ այնպես, ինչպես հանելուկներում պատկերավոր բանաձևը վերարտադրում է հանելուկի իմաստը կամ գուշակման առարկան:

Եվ այնպես, ինչպես հանելուկների պատկերավոր բանաձևերն ինքնին, առանց գուշակման առարկայի հիշատակման, կարող են մնալ անբացատրելի առեղծվածներ կամ սոսկական ինքնանպատակ պատկերներ, այդպես էլ հմայական արարողություններն ինքնին առած, առանց ցանկության կամ նպատակի հիշատակման, մնում են անմեկնելի կամ աննպատակ արարքներ: Շատ հանելուկներ և շատ հմայական արարողություններ, որոնց գուշակման առարկաներն ու հմայական ցանկությունները մոռացվել են, մնում են տարօրինակ ու անբացատրելի: Օրինակ, Զեյթունում, երբ սաստիկ անձրև էր գալիս, փայտե գդալ էին այրում (ԱՈՒ, 106). ղրիմահայերի կենցաղում նոր պսակվող երիտասարդի գրպանը՝ պսակի գիշերը զանազան տեղերից գողացած կորեկի հատիկներ էին դնում (ՀԺՀ VIII, 144). Նոր Բայազետում տղաբերքի ժամանակ երեխայի ընկերքը թաղում էին տան շեմի մոտ (ԱՀ XVII, 91). երբ երեխան շարունակ աչքերը խաղացնում էր, Ավետարան ունեցողի տան շեմին երկու մեխ էին խփում (անդ.) կարկուտ գալու ժամանակ ճրագ էին վառում կամ խաչերկաթը դուրս էին գցում (ԱՀ XVII, 97) և այլն:

Այս կարգի հմայական արարողությունները մնում են հաճախ անբացատրելի ոչ միայն հիմնական նպատակի մոռացման կամ չհիշատակվելու պատճառով, այլև այն, որ նմանական զուգորդումների համար հիմք են ծառայել այնպիսի նախնական պատկերացումներ ու հավատալիքներ, որոնք այսօր մեզ համար մնում են անհասկանալի կամ անբացատրելի: Այդպես և հանելուկներում: Իսկ հմայությունները պատկանում են հենց այն բնագավառին, որտեղ ամենից շատ դեր են կատարում նախնական պատկերացումներն ու հավատալիքները: Հետևաբար, հմայքներում պատկերավոր զուգորդումները արդյունք են ոչ միայն տարբեր երևույթների սոսկ

որի տերը շուտով հանդես է գալու. երբ երեխան փայտը ծի շինած քշում է, այդ պատկերը ենթադրում է ձիավոր մեկի գալուստը. երբ «աչքը բեռ է բարձում», ենթադրվում է բեռով ցանկալի հյուրի գալուստ. երբ «աչքը սառում է», այդ երևույթը նմանությամբ խորհրդանշում է սպասումը. ականջը ծայնելու երևույթը՝ նմանությամբ ենթադրում է մեկի կանչելը, ծայնելը (= հիշելը). մորթված անասունի սրտի պայծառությունը ենթադրում է մորթողի պայծառ սիրտը. ոտի քոր գալը նմանությամբ խորհրդանշում է ճամփորդելը, այսինքն՝ ոտով քայլելն ու գնալը, ինչպես ձեռքի քոր գալը խորհրդանշում է ձեռքով փող ստանալը կամ ծախսելը: Այսպես և ուրիշ բազմաթիվ նախանշանային գուշակություններում: Այնպես որ՝ որևէ իրադրությունից ենթադրվող հետևանքը, մեծ մասամբ, ինչ-որ չափով նմանեցվում է իր կարծեցյալ պատճառին, մի նմանություն, որ հաճախ արտահայտվում է սիմվոլացումով, ճիշտ նույն կերպ, ինչպես հմայական արարողությունները խորհրդանշում են հմայողի ցանկությունը կամ նպատակը:

արտաքին նմանողության, այլև այն նախնական պատկերացումների նմանության, որ ունեցել են նախնադարյան մարդու համար բնության մեջ արտաքուստ ոչնչով իրար հետ չաղերսվող երևույթները:

Հմայական սիմվոլային արարողությունները, ինչպես առհասարակ սիմվոլային-փոխաբերական բանահյուսության մեջ սիմվոլային պատկերները, իրենց իմաստի նկատմամբ կարող են ծառայել տարբեր նպատակների: Մեկ սիմվոլային արարողությունը տարբեր տեղերում կարող է տարբեր նպատակներով կիրառվել:

Այսպես, օրինակ. գլխարկին օձի շապիկ կարելու կամ գլխարկին օձի շապիկ դնելու հմայական արարողությունը Ջավախքում կիրառվել է գլխացավը կտրելու (ԱՀԱ, 360), Բուլանըխում՝ մազերը երկարեցնելու (ԱՀՋ, 42), իսկ Ջեյթունում էլ՝ չքնող երեխային քնեցնելու նպատակով (ԱՈՒ, 106): Այսինքն՝ տարբեր նպատակների և միևնույն պատկերավոր արարողության միջև տարբեր զուգորդումներ են կատարվել: Եթե Բուլանըխում նմանական զուգորդությամբ օձի սևությունն ու երկարությունը զուգորդվել է երկար ու սև մազեր ունենալու ցանկությանը, Ջավախքում՝ օձի բուժական զորության հավատալիքի և գլխացավի բուժման ցանկությանը, ապա Ջեյթունում, հավանաբար, օձերի՝ ծմռանը երկար քուն մտնելու հանգամանքը զուգորդվել է անքուն երեխայի երկար քնեցնելու ցանկությանը: Ճիշտ այնպես, ինչպես ժողովրդական հանելուկներում միևնույն փոխաբերական պատկերներով արտահայտվում են տարբեր առարկաներ և երևույթներ:

Հմայական արարողությունների սիմվոլային-փոխաբերական բնույթը, ինչպես տեսանք, նմանողական հմայություններում մեծ մասամբ համարժեք են, այսինքն՝ նույն կամ նման են իրենց բուն նպատակին՝ իրական ցանկությանը: Սա նմանական զուգորդությունների ամենապարզ արտահայտությունն է հմայքներում: Սակայն հմայությունները սոսկ նմանողական զուգորդություններով չեն սահմանափակվում:

Հմայությունների ծագման մեջ նշանակալից դեր են խաղացել, ըստ երևույթին, նաև կցական զուգորդությունները, այսինքն՝ այնպիսիք, երբ մի քանի առարկա միասին միաժամանակ ընկալվելուց հետո, երկրորդ անգամ դրանցից որևէ մեկը ընկալելիս կամ վերհիշելիս, առաջ են գալիս նաև մնացած առարկաների մտապատկերները: Օրինակ, երբ լսում ենք մի գրական երկի ասմունք մի ասմունքողի կողմից և դրանից հետո մենք կարդում ենք կամ լսում նույն երկը մի այլ տեղ, ապա իսկույն վերհիշում ենք նաև այդ երկը ասմունքողին, անգամ նրա ձայնի ելևէջները և, ընդհակառակը, ասմունքողին տեսնելիս, իսկույն վերհիշվում է նրա կարդացած երկի բովանդակությունը՝ իր առանձին մանրամասներով:

Ահա, Ֆրեյզերի նշած հմայության երկրորդ տեսակը, այսպես կոչված՝ շփման կամ վարակման հմայությունը և ուրիշներ, խարսխվում են հենց պատկերացումների հոգեբանական այս կարգի զուգորդումների վրա:

Այսպես, Ջեյթունում և մի շարք այլ գավառներում խուզած մազը գետին չէին թափում, որպեսզի մազի տիրոջ գլուխը չցավեր (ԱՈՒ, 102): Այստեղ մազը՝ կցական զուգորդությամբ՝ ենթադրում է գլուխը: Նույն մտածելակերպն է առկա նաև բոլոր այն հմայություններում, երբ հմայական արարողությունը կատարվում է հմայողի մարմնի կամ հագուստի մասերի վրա (մազ, եղունգ, հագուստի ծվենններ և այլն), ուր այդ մասերը կցական զուգորդությամբ ենթադրում են ամբողջը, այսինքն՝ կրողին:

Ջեյթունում, երբ մեկի հիվանդության ժամանակ մեռել էր պատահում, հիվանդի զգեստից մի կտոր կտրելով՝ դնում էին մեռելի պատանքի մեջ, որպեսզի հիվանդությունը դիակին անցներ (ԱՈՒ, 104):

Ղրիմահայերի կենցաղում և այլուր, որպեսզի կովերի կաթը չցամաքեր, կովերը կթում էին արևը չծագած և մայր մտած ժամանակ (ՀԺՀ VIII, 112): Ըստ երևույթին, արևի

ՀԻՄՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

չորացնելու հատկանիշը զուգորդվել է նաև կովերի կաթը չորացնելու գաղափարին:

Այդպես նաև հետևյալներում. Բուլանըխում անասուն ծախելիս, պոչից մի փունջ մազ էին քաշում, պահում, որպեսզի տան առատությունը անասունի հետ չգնար: Երբ դրկցին ալյուր էին փոխ տալիս, մի բուռ ետ էին առնում՝ դարձյալ նույն նպատակով (ԱՀԶ, 52): Ձեյթունում Աստվածածնի ավետման տոնի օրը, երբ անձրև էր գալիս, երեխաները գլխաբաց կանգնում էին անձրևի տակ, որպեսզի առատություն լիներ (ԱՈՒ, 101): Այստեղ, հավանաբար, առատության գաղափարը զուգորդվել է երեխաների, իբրև աճող սերնդի և անձրևի, իբրև աճեցնողի, առատեցնողի գաղափարներին: Գրիգոր Լուսավորչի Խորվիրապ մտնելու տոնի օրը, Ձեյթունում, պատերին ջուր էին ցանում, որպեսզի կարիճը չխայթեր (ԱՈՒ,102): Այստեղ, ըստ ամենայնի, Լուսավորչի Խորվիրապ մտնելու տոնը հիշեցրել է կարիճներով լի Խորվիրապում նրա անվնաս մնալու առասպելը, որին կցվել է կարիճների խայթումից առհասարակ զերծ մնալու գաղափարը, իսկ վերջինս էլ դարձյալ կցումով զուգորդվել է պատերում բնակվող կարիճներին առհասարակ ջրով խեղդելու գաղափարին: Այսինքն՝ առկա է գաղափարների կցումով զուգորդումների մի շղթա:

Ջավախքում, մազերը երկարեցնելու նպատակով, բաղնիքում գողանում էին երկար մազեր ունեցողի ջրից և իրենց գլխին լցնում (ԱՀԱ, 362): Ջուրը, իր բնական հատկության պատճառով, դիտվել է նաև իբրև աճեցնող, բուսեցնող առհասարակ, որից և՝ երկար մազեր աճեցնող: Ուստի, մազեր երկարեցնելու ցանկությունը կցումով զուգորդվել է երկար մազ ունեցողի մազերը լվանալու ջրին, որից և ծագել է հմայական արարողությունը:

5. Հմայության կապը գուշակություններին: Հմայությունների բուն իմաստը ըմբռնելու համար հարկ է նաև դրանք համեմատել նախանշանային գուշակությունների հետ:

Նախանշանային գուշակությունները կամ նախանշանային հավատալիքները տիպաբանորեն ևս երկանդամ կազմություն ունեն. բաղկացած են իրադրությունից կամ գործողությունից և դրանցից սպասվող հետևանքից: Այսպես. Ջավախքում հավատում էին, թե երբ կատուն երեսն է լվանում, հյուր է գալու, երբ մեկի քիթ ու բերանը քոր էր գալիս, հյուր է գալու, երբ աջ աչքը թրթռում էր՝ գործը հաջողվելու է (ԱՀԱ, 361, 363) և այլն:

Այստեղ նախանշանային իրողություններն են՝ կատվի երես լվանալը, քիթ ու բերանի քոր գալը և աջ աչքի թրթռալը: Իսկ իրադրությունների հետևանքները կամ գուշակություններն են հյուր գալը և գործի հաջողությունը:

Նախանշաններով գուշակությունը, որ առհասարակ հենվում է հմայական հավատալիքների վրա և դրանով իսկ, մասամբ հարում հմայության բնագավառին, ունի այն առանձնահատկությունը, որ այստեղ իրադրությունները կամ գործողությունները հանդես են գալիս իբրև առարկայական, գուշակողի կամքից անկախ, սպոնտան-ինքնուրույն պատահական երևույթներ: Դրանք առաջ են գալիս ոչ թե մեկի կամային նպատակասլաց գործունեության հետևանքով, այլ ինքնաբեր պատահականությամբ: Դրանք իրականության մեջ պատահող իրական բնական երևույթներ են: Վերջիններիցս հանված հետևությունները, այսինքն՝ գուշակությունները, դիտվում են իբրև իրերի ու երևույթների բնական որոշակի վիճակների մեջ առկա գերբնական նախադրություններ, որոնք վերջին հաշվով այլ բան չեն, քան սուբյեկտիվ ենթադրություններ: Մինչդեռ նախնական հմայություններում, ուր երևան է գալիս տիպաբանական միևնույն երկանդամ կառուցվածքը, ինչը յուրահատուկ է նաև նախանշանային գուշակություններին, հմայական արարողությունը իրերի բնական ու պատահական վիճակ չի ներկայացնում, այլ սուբյեկտիվ, նպատակամիտված գործողություն,

որ կատարվում է հմայող անձի կողմից՝ ցանկալի որոշակի հետևանք առաջ բերելու համար: Թեպետ հմայողի նպատակի և կատարած գործողության միջև ևս ենթադրվում են գերբնական զորության ազդեցություններ, սակայն այստեղ ակնկալվող արդյունքը ոչ թե հայեցողական է, իրերի բնական ընթացքից մակաբերվող, ինչպես գուշակություններում, այլ ընդհակառակը, անձի սուբյեկտիվ ցանկությամբ կատարվող գործողության որոշակի նպատակ, գործողություն, որ թեպետ ավանդության ուժով ևս ձեռք է բերել որոշակի առարկայացում, սակայն ամեն անգամ, անձի կողմից վերարտադրվելիս, ձեռք է բերում սուբյեկտիվ-նպատակային կնիք: Ապա՝ նախանշանային գուշակությունները, որոնք կենցաղավարում են որպես հավատալիք, չեն գործարկվում, այլ մնում են իբրև իրականության բանավոր հավաստումներ, իբրև ավանդական ճշմարիտ պատգամներ, որոնք հենվում են պատճառի և հետևանքի պատճառակցական կապակցության վրա, ուր գուշակությունը դիտվում է իբրև առարկայական որոշակի իրադրության հետևանք: Այս իմաստով դրանք մասամբ մոտենում են հմայական հավատալիքներին, այն տարբերությամբ, սակայն, որ եթե դրանց մեջ իրադրությունը կատարված բնական փաստ է և ենթակա չէ վերարտադրման, ապա հմայական հավատալիքներում իրադրությունը կատարելիք պայման է, որի գործադրումից հետո միայն հնարավոր կլինի տվյալ հետևանքը: Իսկ երբ հավատալիքը գործարկվում է իբրև արարողություն, ապա, ինչպես արդեն տեսել ենք, ցանկալի հետևանքը վերածվում է կանխանպատակի և տիպաբանորեն նախորդում է հմայական արարողությանը:

Հմայություններն ու նախանշանային գուշակություններն ունեն այն ընդհանուրը, որ երկուսն էլ գրեթե ունեն միևնույն տիպաբանական կառուցվածքը, և երկուսի էլ առարկայական իրադրություններն ունեն սիմվոլային-փոխաբերական բնույթ: Դրանք, ինչպես տեսել ենք արդեն, իրենց նպատակի և հետևանքի հետ աղերսվում են սիմվոլային-փոխաբերական հարաբերություններով: Սակայն հարկ է նկատի առնել մի կարևոր տարբերություն. նախանշանային հավատալիքներում սիմվոլային իրադրություններն այն ելակետերն են, որոնցից պետք է գնալ դեպի գուշակությունները, այսինքն՝ որոնցից պետք է մակաբերել, գուշակել հետևանքը: Օրինակ, երբ շունը ոռնում էր, Վարանդայում կարծում էին, թե տանեցիներից մեկը մեռնելու է. երբ հավը կամ աքաղաղը գիշերվա ընթացքում անժամանակ կանչում էր, ենթադրում էին, թե դժբախտություն պիտի պատահի. երբ կատուն չանգռում էր գետինը, կարծում էին, թե անձրև է գալու. եթե նապաստակ էր մեկին հանդիպում, ենթադրվում էր, թե անհաջողություն է լինելու, իսկ եթե աղվես՝ հաջողություն (ԱՀԲ, 240) և այլն:

Մինչդեռ հմայական արարողություններում հոգեբանական շարժումը գնում է հակառակ ուղղությամբ. այստեղ ելակետը հմայողի որոշակի նպատակն է կամ ցանկությունը, որի իրականացման համար էլ նա կատարում է որոշակի հմայական գործողություն. նա վաղապես ընտրված նպատակից գնում է դեպի սիմվոլային գործողությունը, այլ կերպ ասած՝ արարողությունը սերում է նպատակից:

Դիցուք, նույն Վարանդայում, երբ մեկը հանդիպում էր չար աչք ունեցող մեկին, չակնահարվելու նպատակով թքում էր մի քարի վրա և շրջում այն. երբ մեկը վախեցած էր լինում մեկ ուրիշից, վախն անցկացնելու նպատակով ջուր էր խմում վախեցնողի բռից կամ փեշից. երբ կարկուտ էր գալիս, այն դադարեցնելու նպատակով պղնձե կամ կավե ամաններ էին թակում կամ հրացան արձակում (ԱՀԲ, 241, 244) և այլն:

Հմայքներում, հմայությունների գործարկման հոգեբանական սկզբունքն, այդպիսով, նույնանում է հանելուկներին: Վերջիններիս մեջ ևս հանելուկ հորինողը կամ առաջարկողը նախապես ունի իր նպատակը՝ հանելուկի լուծման առարկան, որի

համապատասխան էլ նա ընտրում է այլ առարկաների հատկանիշներից սիմվոլային-փոխաբերական պատկեր-բանաձևը և այն հրամցնում ունկնդիրներին գուշակելու: Հանելուկ գուշակողը պարտավոր է հանելուկային իրադրությունից գուշակել նրա լուծման առարկան: Այստեղ ուշագրավ է մեկ այլ հանգամանք. հանելուկ հորինողն ու առաջարկողը հոգեբանական գրեթե միևնույն գործողությունն են կատարում, ինչ հմայողը, մինչդեռ հանելուկ գուշակողը գրեթե միևնույն գործողությունը՝ ինչ նախանշանային գուշակության դեպքում գուշակողը. այստեղ սիմվոլային-փոխաբերական պատկերից մակաբերվում կամ գուշակվում է նրա իմաստը: Ուրիշ կերպ ասած՝ հանելուկի հորինման, առաջարկման և լուծման միասնական ընթացքը՝ տարբերություններով հանդերձ, իր մեջ միավորում է հմայական արարողության և նախանշանային գուշակության հոգեբանական կառուցվածքի միևնույն սկզբունքները: Հիմնական տարբերությունն այն է, որ հմայքներում սիմվոլային պատկերները հանդես են գալիս արարողությունների տեսքով, նախանշանային գուշակություններում՝ իրական եղելությունների, իսկ հանելուկային բանաձևերում՝ պատկեր-խոսքի ձևերով: Այդ տարբերությունները, հարկավ, էական նշանակություն չունեն երեքի էլ հոգեբանական մեխանիզմի նմանությունները հավաստելու և բացատրելու տեսակետից:

Այսպիսի նմանությունները վկայում են մի կողմից՝ հանելուկների, հմայքների ու գուշակելի նախանշանների մտածողության միևնույն՝ սիմվոլային-փոխաբերական բնագավառին պատկանելու մասին, մյուս կողմից նաև՝ կիրառական միևնույն նպատակներ ունենալը, այն է՝ հանելուկների երբևէ դյութահմայական նկատառումներով կիրառվելը, որ հավաստված է նաև պատմաազգագրական որոշակի փաստերով [հմմտ. **Томсон 1958**, 500, **Հարությունյան 1960**, 9-12, **Հարությունյան 1965**, Ը-Թ]:

6. Տաբու և հմայություն: Ֆրեյզերը հմայությունը բնույթով բաժանում է երկու տեսակի՝ դրական հմայության, որ են բոլոր հմայական արարողությունները և բացասական հմայության, որ են հմայական տաբուները կամ արգելքները [**Фрэзер 1928**, 45]: Այս տեսակետը վիճարկում է Մարետը՝ գտնելով, թե տաբուն հենվում է ոչ թե հմայության, այլ միստիկական վտանգների երկյուղի վրա [**Токарев 1959**, 25]: Այս հարցին հատկապես անդրադառնում է Ս. Տոկարևը, որը, ընդունելով Ֆրեյզերի այն տեսակետը, թե «հմայությունը ոչ միայն մատնանշում է գործողություն, որ պետք է կատարել, այլև գործողություն, որի կատարումից պետք է խուսափել», միաժամանակ գտնում է, որ դրականն ու բացասականը պետք է համարել «հմայության երկու տարբեր ասպեկտներ», որոնք հաճախ հանդես են գալիս միմյանց հետ զուգորդված [**Токарев 1959**, 26]: Տոկարևի այս վերջին ճշգրտումը տեղին է պրոֆեսիոնալ հմայական բարդ արարողությունների դեպքում, երբ մի արարք կատարելիս, հաճախ պետք է խուսափել մեկ ուրիշից, որով ստացվում է դրականի և բացասականի, այսինքն՝ արարողության և տաբուի զուգակցում:

Սակայն նախնական պարզ հմայություններում նման զուգակցումը քիչ է հանդիպում, դրանց մեջ յուրաքանչյուր հմայություն կա՛մ արարողություն է, կա՛մ որևէ գործողության արգելք:

Ֆրեյզերի այդ իրավացի ստորաբաժանումն ընդունելով հանդերձ՝ կարևոր ենք համարում նախնական հմայության ըստ բնույթի դասակարգումը առաջ տանել հմայությունների և նրանց նպատակների միջև եղած փոխհարաբերությունների տեսակետից ևս:

Նախնական դրական հմայություններում հմայական բոլոր արարողություններն իրենց նպատակի բնույթով բաժանվում են երկու խմբի.

1) երբ հմայության նպատակն ու արարողությունը հաստատական են. դրանք

անվանում ենք հաստատական նպատակով հմայություններ.

2) երբ նպատակը արգելական է, այսինքն՝ որևէ արգելք է, իսկ արարողությունը հաստատական. սրանք անվանում ենք արգելական նպատակով հմայություններ:

Առաջին դեպքում հմայության նպատակն ու արարողությունն ուղիղ համեմատական են և բնույթով հավասարակշռում են միմյանց, իսկ երկրորդ դեպքում հակադիր են իրար: Արգելական նպատակները ոչ թե էությամբ են բացասական, այլ միայն ձևով. դրանք իրական արգելքներ են, որ տարբերվում են հմայական արգելքներից՝ տաբուներից, և այդ երկուսը չպետք է շփոթել իրար:

Հաստատական նպատակով հմայություններից են, օրինակ, հետևյալները.

Բորչալվում հորթի գլխին աղաքար կամ սովորական քար էին քսում, որպեսզի գլուխը քարի պես ամուր լիներ: Որպեսզի պանրի մերանը սուրբ մնար, սարից վերադառնալիս այն թաղում էին: Երեկոները բարձը թափ էին տալիս, որպեսզի չարը միջից դուրս գար: Չամուսնացած աղջիկը կամ տղան կերակուր ուտելիս ամանը լավ մաքրում էին, որպեսզի ապագա ամուսինը գեղեցիկ լիներ (ԱՀ X, 247, 248): Զանգեզուրում, երբ երեխան չէր քնում, օձի շապիկ էին դնում գլխատակը, որպեսզի քներ (ԱՀԴ, 91): Բորչալվում երեխային կոխից բուժելու նպատակով մահմեդականի գերեզմանի վրա էին լողացնում (ԱՀ IX, 260): Նոր Նախիջևանում նորալուսին տեսնողը մկրատով մազերի ծայրից մի փոքր կտրում էր, որպեսզի մազերն աճեին: Տղոցկանի վրա պատերազմի թուր («ջենկի թուր») էին դնում, որպեսզի հեշտությամբ ծննդաբերեր (ԱՀ IX, 47) և այլն:

Արգելական նպատակով հմայություններում արարողության նպատակն է կանխել, արգելել որևէ անցանկալի երևույթ, վտանգավոր դիպված, բացասական իրողություն: Նման հմայություններն ունեն պաշտպանական բնույթ, նպատակ ունեն հմայողին պահպանել չար ու վնասակար ազդեցություններից, փորձություններից ու անցանկալի պատահարներից:

Այսպես. Նոր Նախիջևանում խուզած մազերը կրակի մեջ էին գցում, որպեսզի գլխացավ չունենային (ԱՀ IX, 47): Բորչալվում սև հավը խեղդում էին և դռան շեմին թաղում, որպեսզի չարը ներս չմտներ: Եթե մեկի անասունները սատկում էին, վերջին սատկածի գլուխը թաղում էին գոմի սեմի տակ, որպեսզի այլևս անասուն չսատկեր: Նոր գնած անասունը օջախի մոտ էին տանում և ոտներին ջուր լցնում, որպեսզի չկորչեր: Խնոցին փոխ տալիս որևէ գրավական էին վերցնում, որպեսզի տան «բարաքյաթը» հետը չգնար (ԱՀ X, 246-247): Վարանդայում եզի, եղջերուի կամ այծյամի գանգ էին ցցի վրա տնկում տան, արտի կամ այգու մոտ, որպեսզի չար աչք չդիպչեր: Նույն նպատակով երեխայի օրորոցից կամ շորերից ակնաուլունքներ էին կախում (ԱՀԲ, 241): Համշենում, երբ անասունը գիշերը դուրս էր մնում, դռան սեմին երկու գդալ էին խաչաձև դնում, որպեսզի գայլերը անասունին չմոտենային (ԱՀՋ, 149): Չար աչք ունեցողի կոշիկը ծակում էին, որպեսզի նրանից չակնահարվեին (ԱՀՋ, 150): Գայլի կծած անասունի փորի տակից ու վրայից երեք անգամ էգ շուն էին պտտեցնում, որպեսզի անասունը չսատկեր: Անտառում նստելիս թքում էին նստելու տեղը, որպեսզի չբորոտվեին (ԱՀՋ, 152) և այլն:

Այս միևնույն սկզբունքով էլ դասակարգվում են նախնական բացասական հմայությունները կամ տաբուները:Բացասական հմայության առանձնահատկությունն այն է, որ այստեղ բացառվում է արարողությունը. որոշակի գործողությունը կամ արարքն արգելվում է որոշակի նպատակով, այսինքն՝ որոշակի նպատակի հասնելու համար պետք է որոշակի գործողություններ չկատարել:

Բոլոր բացասական հմայություններում կամ հմայական տաբուներում նպատա-

կը կա արգելք է, որևէ չար դիպվածի, դժբախտության, իրադրության կանխում. այսինքն՝ նպատակն ու հմայական տաբուն ուղիղ համեմատական են և հավասարակշռում են միմյանց:

Այսպես.

Բորչալվում գդալը կրակի մեջ չէին գցում, որպեսզի գայլերը հորթերին չուտեին: Մաղ, մակարդ, խաշ, սերմ փոխ չէին տալիս, որպեսզի «բարաքյաքը» չգնար: Հրացանի վրայով թույլ չէին տալիս անցնել, որպեսզի՝ 1) հրացանի մեղքերն անցնողին չանցնեին, 2) հրացանի գնդակը չվրիպեր, 3) հրացանը «չկոխվեր», չփչանար: Կշեռքի վրայից ևս թույլ չէին տալիս անցնել, որպեսզի անցնողը չմեռներ: Հագուստները թարս չէին ծալում, որպեսզի տերը չմեռներ: Երկուշաբթի օրը դրամ փոխ չէին տալիս, որպեսզի նույն դեպքը ամբողջ շաբաթ չկրկնվեր: Չորեքշաբթի և ուրբաթ օրերին կարուձև չէին անում, որպեսզի չայրվեին (ԱՀՀ, 247-249): Բուլանըխում որևէ մեկի դիմաց վարտիքի խունջանը (կապ) չէին կապում, որպեսզի նրա բախտն էլ չկապվեր (ԱՀՋ, 53): Երեխաներին թույլ չէին տալիս կակաչի թերթիկները բերանին դրած փչել, որպեսզի կովերի կուրծքը չուռչեր (ԱՀՋ, 39): Նոր Նախիջևանում շաբաթ երեկոյան մածուն չէին մերում, որպեսզի չշաղվեր (ԱՀ IX, 45): Ջեյթունում գորտերին քար չէին գցում, որպեսզի կոծիծ (=գորտնուկ) չհանեին (ԱՈՒ,107): Կտրած եղունգները դեն չէին նետում, որպեսզի դատաստանի օրը չփնտրեին (ԱՈՒ, 103): Մայրամուտից հետո աղ փոխ չէին տալիս, որպեսզի իրենց բերանի համը չփչանար (ԱՈՒ, 101) և այլն:

Հմայական այս տաբուները կամ բացասական կոչված հմայությունները ոճաբանական տեսակետից փոխվում են, երբ վերածվում են հմայական հավատալիքի: Ուրիշ կերպ ասած՝ տաբուների հմայական հավատալիքները ոճաբանական այլ կառուցվածք ունեն, քան նրանց կիրառվող տեսակները՝ տաբուները: Այսպես. Բուլանըխում հավատում էին, թե մասրենու փայտով եթե մարդու կամ անասունի հարվածեն՝ արյուն կմիզի (ԱՀՋ, 39): Նոր Նախիջևանում հավատում էին, որ եթե դռան սեմին կանգնած միմյանց ձեռ տալով բարևեն, ապա բարեկամները կքշնամանան (ԱՀ IX, 48): Լոռեցիք հավատում էին, որ եթե նորատի տղան փայծաղ ուտի, ապա նա թագի տակին (այսինքն՝ պսակվելիս) կսևանա (ԱՀ X, 248) և այլն: Ինչպես տեսնում ենք, հավատալիքների հաստատական բնույթի պայման-իրադրություններն ու դրանցից բխող հետևանքները հաստատական բնույթ ունեն: Իսկ երբ դրանք իրագործվում են, այսինքն՝ կիրառվում են իբրև հմայություն, երկու բաղադրիչներն էլ բացասական կերպարանք են ընդունում. հմայական պայման-իրադրությունը վերածվում է հմայական արգելքի՝ անցանկալի հետևանքը կանխելու նպատակով:

Այս բացասական հմայությունների հաստատական կամ դրական բնույթի հավատալիքների դրական կիրառումը որոշ դեպքերում առաջ է բերում «չար կամ սև հմայություն» կոչվածը: Եվ այդ այն պատճառով, որ նման հավատալիքները սովորաբար վնասաբեր երևույթներ են կանխանշում: Եվ երբ հմայողի նպատակը բացասական է, այսինքն՝ պաշտպանողական-պրոֆիլակտիկ, ապա այդ հավատալիքի կիրառումը վերածվում է տաբուի՝ արգելքի: Իսկ երբ նպատակը դրական է, այսինքն՝ հարձակողական-պրոտրեպտիկ, ապա հավատալիքի պայման-իրադրությունը վերածվում է գործողության, դառնում է հմայական արարողություն, որն առաջ է բերելու վնասակար հետևանք:

Վերոհիշյալ օրինակներում, երբ նպատակը պաշտպանողական է, ապա հավատալիքները վերածվում են տաբուի, այսինքն՝ մասրենու փայտով մարդու կամ կենդանու չեն հարվածում, որպեսզի արյուն չմիզի, իսկ երբ հարձակողական է, մեկին վնասելու նպատակ ունեն, ապա միևնույն հավատալիքները վերածվում են հմայա-

կան արարողության: Դիցուք, մասրենու փայտով հարվածում են մարդուն կամ կենդանուն, որպեսզի արյուն միզի, նորատի երիտասարդին փայծաղ են ուտեցնում, որպեսզի պսակվելիս սևանա, տանտիրոջը տան սեմի վրա են ծեռով բարևում, որպեսզի բարեկամների հետ թշնամանա: Այսպես, բոլոր բացասական հմայությունները, եթե հմայողի անձը պաշտպանելու նպատակին չեն ուղղված, կարող են ցանկացած դեպքում կիրառվել իբրև հմայական արարողություն, դառնալ դրական հմայություն՝ վերածվելով չար կամ «սև» հմայության: Հետևաբար, չար հմայությունն ու տաբուն, միևնույն հավատալիքների տարբեր հայեցակարգով (ասպեկտ) կիրառումներն են, և Տոկարևի դիտողությունը միայն այս մասնակի երևույթի նկատմամբ է իրեն արդարացնում, թեպետ հեղինակը բնավ էլ նման ձևով չի ըմբռնում հմայությունների «տարբեր ասպեկտները»:

7. Նախնական հավատալիքներ և բանավոր հմայություն: Տեսանք, որ հմայական արարողությունները ծագում են պատկերացումներից ու հավատալիքներից, որոնք իրենց հերթին մակաբերվում են իրական եղելություններից՝ հոգեբանական զուգորդությունների շնորհիվ: Այժմ տեսնենք, թե հոգեբանական ինչ մղումներով է պայմանավորված հավատալիքի արարողության փոխարկումը, և ինչ ձևով է հավատալիքը վերածվում գործողության:

Հոգեբանական զուգորդություններով իրական դեպքերից, արտադրական կամ նպատակային գործողություններից մակաբերված հմայական պատկերացումներն ու հավատալիքներն իրենց մեջ միավորում են տվյալ պատկերացումներին իրական հիմք հանդիսացող առարկաների ու երևույթների մտապատկերները՝ միաժամանակ կամ մերձավոր հաջորդականությամբ՝ հենված գերբնական պատճառականության վրա, որպիսին դրանք ընկալվել են ու մտել գիտակցության մեջ: Հետագայում այդ նախկին պատկերացումների անդամներից մեկի վերապրման կրկնողությունն առաջ է բերում նաև մնացած անդամների պատկերացումը, թեպետ և դրանց նախապատճառները բացակայելիս լինեն [**Эббингауз 1912**, 183-184]:

Միևնույն պատկերացման մեջ մտնող մտապատկերները, որ երբևէ ընկալվել են միասին, միմյանց հետ այնպիսի ներքին սերտ կապով են շաղկապվում, որ դրանցից մեկը միշտ իր հետ առաջ է բերում մյուսին: Ահա, այս մտածական կապերը կամ զուգորդությունները, երբ մեկընդմիշտ ծագում են, ապա կարող են և վերարտադրվել, ընդ որում, այնքան ավելի լավ են վերարտադրվում, որքան ավելի հաճախ են վերապրվում: Այս հաճախականությունը հատկապես բնորոշ է դառնում ժողովրդական հմայական հավատալիքներին՝ ավանդականության շնորհիվ, և ավանդականության զորությամբ էլ դրանք երկար ժամանակ մնում են և գոյատևում: Հմայական ավանդական պատկերացումների հարատևությունը, ուրեմն, բացատրվում է դրանց մշտական վերապրումով, որ կատարվում է ոչ այլ կերպ, քան դրանց գործարկման շնորհիվ:

Հոգեբանության մեջ հայտնի է, որ որոշ պայմանների առկայության դեպքում «պատկերացումներն առաջ են բերում նաև շարժումներ, և այդ կապերի հետևանքով ասոցիատիվ ձևով և նախկին ապրումների առնչությամբ կարող են առաջ գալ նաև գործողություններ» [**Эббингауз 1912**, 186]: Երբ կոնկրետ իրողությունների և գերբնական հավատալիքի հիմքի վրա ծագում են հմայական պատկերացումները, ապա կյանքում այդ իրողությունների կրկնության դեպքում իսկույն մարդու մտքում զուգորդությամբ առաջ են գալիս դրա հիման վրա ծագած պատկերացումները: Տվյալ իրողությանը նպաստելու կամ այն կանխելու ուժեղ ձգտումը, որ բոլոր հմայությունների իրական հիմքն ու պատճառն է կազմում և երբեմն արտահայտվում է ցնցող էմոցիաներով, մարդուն մղում է այդ պատկերացմանը համապատասխան շարժումներ

կատարել: Մի դեպքում այդ շարժումները կապվում են սոսկ շրթունքների, լեզվի, ձայնալարերի հետ, և առաջ է գալիս **խոսքը**, այսինքն՝ հմայական պատկերացումների զուգորդումները վերարտադրվում են սոսկ խոսքով, և առաջ է գալիս հմայական բանածևը. մյուս դեպքում այդ շարժումներն արտահայտվում են ձեռքերի, ոտքերի կամ մարմնի այլ մասերի միջոցով, և առաջ է գալիս **գործողությունը**: Այս դեպքում հմայական պատկերացումները վերարտադրվում են գործողությամբ, և առաջ է գալիս հմայական արարողությունը: Էբինգհաուսի հավաստիացմամբ՝ «կինեստետիկական պատկերացումները միտում ունեն նորից առաջ բերելու հենց այն շարժումները, որոնց պարտական են դրանք՝ իրենց ծագմամբ» [**Эббингауз 1912,** 265]: Այլ կերպ ասած՝ գործողություններից ծագած պատկերացումները վերարտադրելիս առաջ են գալիս այն շարժումներն ու գործողությունը, որոնցից ծագել են պատկերացումները: Հմայական արարողությունները, ուրեմն, հմայական պատկերացումների ու հավատալիքների միջնորդությամբ վերարտադրում են այն շարժումները, որոնք հիմք են ծառայել տվյալ հավատալիքներին և պատկերացումներին:

Պատկերացումների վերարտադրման վերոհիշյալ գործընթացը, որ հատուկ է մարդկային մտածողությանն առհասարակ, հմայական պատկերացումների դեպքում փոքր-ինչ ա՛յլ երանգ է ընդունում: Հմայական պատկերացումները տարբերվում են սովորականներից այնու, որ հենվում են գերբնական զորության հավատալիքի վրա, և դրանց մեջ առկա մտապատկերների զուգորդումը հենց կատարվում է գերբնական պատճառակցությամբ: Եվ երբ հմայական պատկերացումը վերարտադրվում է խոսքի կամ գործողության մեջ, ապա դրանք էլ իրենց հիմք-պատկերացման նման դարձյալ կրում են գերբնական բնույթ, այսինքն՝ վերարտադրվող խոսքին և գործողությանը վերագրվում է գերբնական-հմայական զորություն, որից և տրամաբանորեն ակնկալվում է ցանկալի հետևանքը: Ուստի և խոսքը վերածվում է հմայական բանածևի, իսկ գործողությունը՝ արարողության: Այդպես, ուրեմն, հմայական պատկերացումներն ու հավատալիքները՝ հոգեբանական զուգորդումների շնորհիվ վերարտադրվելիս, կամազգայական ուժեղ մղումներից դրդված՝ առաջ են բերում խոսք և արարողություն: Ընդ որում, մի դեպքում հմայական պատկերացումների վերարտադրությունը կատարվում է սոսկ խոսքով, մի դեպքում՝ սոսկ արարողությամբ, իսկ հաճախ էլ՝ և՛ խոսքով, և՛ արարողությամբ, և այդ դեպքում հմայական խոսքն ու արարողությունը հանդես են գալիս միասին՝ յուրատեսակ փոխհարաբերություններով:

Հմայական կինեստետիկական պատկերացումները վերարտադրելիս առաջ եկող լեզվի, շրթունքների և ձայնալարերի շարժումները ընդունված է նախապես համարել ձեռքերի կամ մարմնի աֆեկտիվ շարժումներին ուղեկցող զանազան անիմաստ շշունջներն ու բացականչությունները, կամ էլ թովողի ցանկությունն արտահայտող իմաստալից խոսքերն ու բանածևերը [**Арбэджи 1966**, 32, **Токарев 1959**, 74]: Դրանք հմայական խոսքի այն սկզբնական տեսակներն են, որոնց վերապրուկները գոյատևում են ուշ ժամանակների ժողովրդական բանահյուսության մեջ:

Շրթունքների շարժումներն ու բացականչությունները հմայության մեջ երբեք անկախ ձևով հանդես չեն եկել. դրանք միշտ էլ օժանդակ դեր են խաղացել՝ ուղեկցելով հմայական արարողություններին: Իսկ եթե դրանք պահպանվել են էլ, ապա պահպանվել են միմիայն հմայական խոսքերին ու բանածևերին միանալու, հարելու շնորհիվ, որ տեսնում ենք տակավին հմայական մի շարք աղոթքներում[6]:

[6] Այսպես օրինակ. «Թո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, տաշտի ոռքը մաշի, / Սապոնինը չմաշի» (№ 239), կամ՝ «Թյո՛ւ բյո՛ւ, բյո՛ւ, բյո՛ւ, / Մեռել՝ մեռելոցին, /Ետ երթաս՝ առաջ չիգաս, /Տուշմընիս դուռ չի գաս» (№ 121) հմայական բանածևերում քքելու գործողությունը (իբրև չարի սաստման, կանխման արարք) համադրվել է հմայական խոսքին որպես բառահնչյունային միավոր և դարձել խոսքի բաղադրիչ:

Հավանաբար, սկզբնապես այդ անիմաստ շշունջներն ու բացականչությունները աստիճանաբար սկսում են իմաստավորվել՝ վերածվելով իմաստալից խոսքերի. նախնական աֆեկտիվ հոգեկան գրգիռներից առաջ եկող շրթունքների, լեզվի ու ձայնալարերի մեխանիկական շարժումները ենթարկվում են հմայող անձի գիտակցությանը, դառնում են խոսքեր և արտահայտում հմայող անձի ներքին ապրումները:

Սա, հարկավ, չի նշանակում, թե հմայական խոսքերն առհասարակ ծագել են արարողություններին ուղեկցող անիմաստ շշունջներից ու բացականչություններից: Վերջիններից կարող էին ծագել միայն արարողություններին ուղեկցող հմայական բանաձևերը: Մինչդեռ կան հմայական խոսքի այլ տեսակներ, որոնք կենցաղավարում են հմայական արարողություններից անկախ և, հավանաբար, իրենց ծագմամբ ևս արարողությունների հետ չեն աղերսվել: Եվ քանի որ որոշակի կարիքն է առաջ բերում որոշակի նպատակը, որի իրագործման համար դիմում են հմայական միջոցներին, ապա միանգամայն բնական է, որ այդ միևնույն նպատակը կամ ցանկությունը ամենից առաջ արտահայտություն գտներ հմայողի արտաբերած խոսքերի մեջ:

Սկզբնապես այդ խոսքերը պետք է որ արտահայտած լինեն հմայող անձի կամ հասարակության սոսկական նպատակն ու ցանկությունը՝ առանց ավելորդաբանությունների: Իսկ նպատակը լինում է որևէ իրադրության առաջացման կամ կանխման ու արգելակման ցանկություն: Ըստ այսմ էլ, հմայական խոսքերը դառնում են տվյալ նպատակի իրագործմանը նպաստող կամ կանխող բանաձևեր, որոնք արտահայտում են հմայողի կամքն ու ցանկությունը: Այդպիսի ցանկության խոսքեր են առաջին հերթին անեծքներն ու օրհնանքները, ապա երկրորդաբար դրանցից բաղկացած երդումները, հմայական բանաձևերի այն նախնական տարրերը, որոնցից աստիճանաբար գերաճում են հմայական ծավալուն բանաձևերը կամ աղոթքները:

Հմայական նշված բանաձևերից բացի, խոսքի հմայության մեջ կիրառվում են նաև ոճաբանական այլ միավորներ ևս, որպիսիք են սպառնալիքն ու փաղաքշանքը, հրամանն ու կարգադրությունը, որոնք առավելաբար հանդես են գալիս իբրև թովչական բարդ բանաձևերի օժանդակ տարրեր ու բաղադրիչներ:

Բանավոր կամ խոսքի (verbalis) հմայությունը, ինչպես նշել ենք արդեն, հմայության ընդհանուր բնագավառի մեջ առանձին ճյուղ ու առարկա է կազմում: Եվ, հարկավ, իրավացի են այն հետազոտողները, ովքեր հմայական արարողությունները դասակարգելիս՝ դրանց մեջ չեն ներառում բանավոր հմայությունը [**Токарев 1959**, 23]:

Սակայն, մյուս կողմից, ուսումնասիրողներից ոմանք, հաշվի առնելով հմայական արարողությունների հետ հմայական խոսքերի ունեցած կապն ու փոխառնչությունը, հակված են վերջիններս ստորադասելու արարողություններին՝ խոսքերը համարելով սոսկ արարողության վերարտադրություն կամ նկարագրություն [**Познанский 1917**] և կամ էլ ծագումնաբանորեն արարողություններին պարտադիր ուղեկցող «սոսկ բառային նվագակցություն»: Հետագայում միայն, երբ հմայությունը կենտրոնանում է հատուկ մասնագետ անձանց ձեռքին, մարդիկ սկսում են գլխավոր դերը վերագրել հմայական խոսքերին [**Токарев 1959**, 24-25, 74]:

Պետք է նկատել, որ թե՛ հիշյալ տեսակետը պաշտպանողների և թե՛ այդ կարծիքը չկիսող գիտնականների մոտ «հմայական խոսք» անվան տակ ըմբռնվում են, ըստ երևույթին, սոսկ հմայական աղոթքները (դյութասքեր) և երդմնեցուցական բանաձևերը (заговор, заклинание, Zaubersprüche, Beschwörungsformel), այսինքն՝ հմայական խոսքերի կառուցվածքով բարդ տեսակները, որոնք սովորաբար ուղեկցվում են հմայական արարողություններով: Մինչդեռ, «բանավոր կամ խոսքի հմայություն» հասկացությունն առավել լայն է, քան սոսկ հմայական աղոթքներն ու երդմնեցուցա-

կան բանածևերը: Բանավոր հմայության մեջ են մտնում ամենից առաջ անեծքներն ու օրհնանք-բարեմաղթությունները, ապա նաև երդումները, որոնց վրա, իբրև բանահյուսական անկախ ժանրերի, սովորաբար, մինչև այժմ անշրան ուշադրություն են դարձրել թե՛ ընդհանուր բանագիտության և թե՛, մասնավանդ, հմայությանն ու կրոնին նվիրված հետազոտությունների մեջ: Անեծք-օրհնանքներն ու երդումները, ինչպես հետո կտեսնենք, օրգանապես կազմում են հմայական աղոթքների ու երդմնեցուցական բանածևերի էական բաղադրիչները, որոնք, սակայն, մինչև բաղադրյալ միավորների վերածվելը, անկախ կենցաղավարող բանահյուսական ժանրեր են և բանավոր հմայության անհրաժեշտ տեսակներից: Այնպես որ, երբ խոսք է լինում բանավոր կամ խոսքի հմայության մասին, ապա դյուրական աղոթքների և երդմնեցուցական բանածևերի կողքին և ամենից առաջ պետք է հասկանալ անեծքները, օրհնանք-բարեմաղթություններն ու երդումները, որոնց հմայական զորությանը, ինչպես ցույց ենք տվել, մարդիկ ավելի շատ են հավատացել ու հավատում, քան նույնիսկ կապքի հմայական աղոթքներին [տե՛ս **Հարությունյան** 1975]:

Բանավոր հմայության տեսակների այս սահմանափակ ըմբռնումն էլ հիմք է տվել հետազոտողներին պնդելու հմայական արարողությունների նկատմամբ խոսքի հմայության ծագումնաբանորեն ածանցյալ, երկրորդական լինելու մասին: Մինչդեռ իրականում այդպես չէ: Բանավոր հմայության որոշ տեսակներ ի սկզբանե գոյացել ու կենցաղավարել են արարողություններից անկախ:

Հմայական արարողություններից և, առհասարակ, հմայական ըմբռնումներից առաջ նախնադարյան մարդն, անկասկած, ուներ իր առարկայական ցանկությունները և դրանք արտահայտող համապատասխան խոսքեր ու դարձվածներ: Քանի որ կրոնի նախատարրերը՝ հմայությունն ու անիմիզմը, նախնադարյան գիտակցությանը ի սկզբանե առանձնահատուկ չեն եղել, այլ ծագել ու զարգացել են պատմականորեն, աստիճանաբար, հասարակական գոյի ու գիտակցության զարգացման հետ միասին, ապա, բնականաբար, ցանկության նախնական խոսքերը ևս և, առհասարակ, մարդկային խոսքը պետք է որ զուրկ լիներ գերբնական-հմայական զորության հավատալիքից: Եվ երբ տոհմային հասարակարգի ծագման հետ միասին սկիզբ է առնում նախնադարյան մարդու «աշխարհի անգուշակելի գաղտնիքների մասին» պարզունակ պատկերացումների համակարգը, և մարդը, իրեն նույնացնելով շրջապատող բնության ուժերին ու երևույթներին, շնչավորում է դրանք և օժտում մարդկային հատկություններով, միաժամանակ իրեն վերագրում նույն երևույթները առաջ բերելու կամ ստեղծելու հնարավորություն [**Косвен 1953**, 142], ապա առաջ եկող նախնադարյան հմայությունը պետք է որ արտահայտություն գտներ միաժամանակ մարդու բնախոսական երկու գլխավոր ունակությունների՝ խոսքի և գործի մեջ: Արդեն հասարականացած մարդու կողմից բնության և մարդու վրա հմայական ներգործության ծգտումը նախ պետք է դառնար համոզմունք, ինչպես իրավացիորեն նկատում է Կոսվենը, ապա նոր միայն դրանից բխեր, դրան համապատասխաներ գործողությունը [**Косвен 1953**, 145]: Իսկ համոզմունքն ամենից առաջ կարող էր արտահայտվել խոսքով, և խոսքն էլ աստիճանաբար ձեռք բերեր հմայական ներգործության զորության հավատալիք՝ անկախ հմայական գործողությունից: Դրա լավագույն արտահայտություններն են անեծք-օրհնանքները, որոնք հավանաբար սկզբնապես եղել են ցանկության սովորական խոսքեր, բայց հմայական համոզմունքների ծագման ու զարգացման զուգընթաց, երբ նախնադարյան մարդն սկսել է աստիճանաբար հավատալ իր ցանկությունների գերբնական իրականացմանը, նա իր բաղձանքն արտահայտող խոսքին վերագրել է հմայական ներգործության զորություն: Ինչպես առօրյա կյանքում նա խոսքի միջոցով կարող է հարաբերության մեջ մտնել

հասարակության մյուս անդամների հետ և առաջ բերել ցանկալի հետևանքը, այնպես էլ բնության իրերի ու երևույթների վրա խոսքով ներգործելու դեպքում:

Այս իմաստով խիստ բնորոշ է հայերեն **բան** բառն իր իմաստաբանական տարբեր առումներով: Բառը ծագում է **բալ** բայից՝ «խոսել, ասել», որը հանգում է հնդեվրոպական. *bha – «խոսել» արմատին (**Աճառյան** 1971, 383 հտճ.): **Բան**-ը իր երեք հիմնական նշանակություններով՝ միտք (բանականություն), խոսք (լեզու, բառ), գործ, նյութ (իր, առարկա) հանգում է հնդեվրոպական **միտք-խոսք-գործ** բանաձևին [հմմտ. **Елизаренкова, Топоров 1979**, 42]: Բանն, ուրեմն, նախնական իմաստով իր մեջ է համատեղել և՛ խոսքը, մանավանդ բանաստեղծական խոսքը, իբրև սրբազան, աստվածային բան (իմա՝ աղոթքը), և՛ մարդկային միտքը, «որն ինքնին պատկանում է աստվածների աշխարհին (աստվածային խոսք – մարդկային միտք)», և՛ գործը՝ արարումն ու առարկան, իբրև իրագործումն բառի նախորդ երկու առումների՝ մտքի և խոսքի:

Բանաստեղծի (իմա՝ քրմի) գործը խոսքն է, խոսքը (բան) հյուսելը, ստեղծելը, կերտելը, որից բանահյուս, բանաստեղծ, քերթող հասկացությունները (հնդեվրոպական զուգահեռները և քննությունը տե՛ս **Հարությունյան** 1987, 48-49):

Բանաստեղծը այդ կերպ քերելով, տաշելով, հյուսնելով ու հյուսելով խոսքը՝ այն ենթարկում է նաև ճեղքման, բաժանման, ցրման և ապա վերահավաքման ու վերակերտման, որոնց վերջնական արդյունքն է դառնում ոչ բանաստեղծական խոսքից մշակված բանաստեղծական տեքստը՝ բնագիրը, իբրև հայտնություն: Այդ կերպ, հնդեվրոպական ավանդության տվյալներով՝ բանաստեղծը (քուրմ) փոխակերպվում և նմանվում է Արարչին, որն անդեմ Քաոսի տարրերից կամ տիեզերական զոհի մարմնի երկատմամբ, քառատմամբ, մասերի ցրմամբ և ապա վերահավաքմամբ կերտում է Տիեզերքը: Անշուշտ, պատահական չէ, որ բանաստեղծական սրբազան բնագիրը (մասնավորապես աղոթքը) գիտակցվում է որպես զոհ, զոհաբերություն՝ մատուցված աստվածներին կամ աստծոն: Ոչ միայն իր կերտած բնագիրը, այլև հաճախ ինքը՝ բանաստեղծն է դառնում զոհ (հորից զոհված ամպրոպային աստծո կրտսեր որդին), գնում անդրաշխարհ, վերադառնում նոր կերպարանքով, դառնում միաժամանակ իր կերտած բնագրի հերոսը: Այդպես, բանաստեղծն ու նկարագրված անձը (հերոս) նույնանում են բանաստեղծության մեջ և մատուցվում որպես զոհ՝ հանուն անմահության: Աստծո կրտսեր որդու նման բանաստեղծն էլ կապված է երկնքի ու երկրի (ստորերկրյայք, մահվան թագավորություն), գալիքի ու անցյալի, կյանքի ու մահվան հետ, շարժվում այդ երկու հակադիր բևեռների միջև և կատարում միջնորդի դեր (հմմտ. քրիստոնեական ավանդության աստվածային բանի (միտք, խոսք) մարմնավորումը Որդի Աստծո կերպարում. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն... Եւ Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ, և տեսաք զփառս նորա, զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ» [**Յովհաննէ**, Ա, 1-2, 14]: Եվ Բանն անձնավորող Աստծո որդին զոհվում է հանուն մարդկության փրկության և անմահության:

Բանաստեղծական խոսքի աստվածային անձնավորման և նրա անսահման զորության լավագույն վկայությունը հնդեվրոպական ավանդության մեջ պահպանված է Ռիգվեդայի հիմներից մեկում՝ նվիրված անձնավորված խոսքին (հին հնդկական Վաչ), որը հանդես է գալիս որպես դիցուհի [**Ригведа X**, 125]: Անձնավորված խոսքն այստեղ հանդես է գալիս իբրև տիեզերաբանական սկզբունք, որով ներթափանցված է ողջ Տիեզերքը: Խոսքը (Վաչ) օժտված է այնպիսի հատկանիշներով, որ գերազանցում է վեդայական բոլոր աստվածներին: Նա թեպետ այդ աստվածների թվին է պատկանում, բայց տարբերվում է նրանցից: Նախ՝ Վաչը (Խոսք) նախորդում է բոլո-

րին, նրանց կյանքի է կոչում Խոսքի մեջ, նրանց մտցնում հնչյունների աշխարհը: Նա ոչ միայն Տիրուհի է և առաջիններից մեկը, որ արժանի է զոհաբերության ընդունման, նա ինքը հենց կերպավորում է Տիեզերքը, ծնում է հորը, գտնվում է երկնքում, երկրում, ջրերի մեջ (Տիեզերքի երեք գոտիներում), ընդգրկում բոլոր գոյակներին: Նա բոլորի սնունդն է, և նրանով են ապրում բոլորը: Վաչ դիցուհուն են վերագրվում տիեզերական հիմնական գործողությունները՝ «նեցուկ լինել», «տարածությունը լցնել», «ընդգրկել ամբողջ գոյությունը», այսինքն՝ բոլորն էլ բնորոշ Արարչին:

Հիմնում առկա են նաև բաժանման, անդամհատման, բաշխման մոտիվները, որոնք հանդես են գալիս թե՛ Տիեզերքի կերտման «հիմնական» առասպելում և թե՛ բանաստեղծական տեքստի ձևավորման ժամանակ: Բանաստեղծն իր անհատական ներքին տառապանքներով, տարատեսակ քառատումներով իր անձի մեջ է միավորում թե՛ Տիեզերքի Արարչին և թե՛ նրա մասին հորինված տեքստի հեղինակին [մանրամասները տե՛ս **Елизаренкова, Топоров 1979**]:

Բանաստեղծական խոսքի այս հնագույն պաշտամունքը, աստվածացումը, նման համատիեզերական զորության վերագրման հավատալիքը և, մանավանդ, **բան** հասկացության եռիմաստ (միտք, խոսք, գործ) ըմբռնումը վկայում են բանավոր (խոսքի) հմայության կարևորությունն ու առաջնայնությունը վաղնջական մշակույթներում (մասնավորապես վաղ հնդեվրոպականում), երբ ավանդական մտածողությամբ տարբերություն չէր դրվում մտքի (համոզմունք), խոսքի և գործի միջև: Այն, ինչ ներկայացվում էր բանաստեղծական խոսքում (հմայական բանաձև) թե՛ միաժամանակ գործողություն-արարք էր և թե՛ միտք, համոզմունք, հավատալիք: Որ հմայության մեջ խոսքն սկզբնապես ածանցված չի եղել արարողությունից, այդ մենք տեսնում ենք ոչ միայն անեծքների և օրհնանք-բարեմաղթությունների մերօրյա անկախ գործածության մեջ (չհաշված, հարկավ, դրանց երբեմն ուղեկցող գլխի ու ձեռների աֆեկտիվ-զգայական շարժումները, որոնք բնավ էլ արարողություն կամ գործողություն չեն), այլև խոսքի կամ բանավոր հմայության առանձին տերմինի՝ **թովելու** կամ **թովչության** գոյության և, մանավանդ, տարբեր լեզուներում դրա ստուգաբանական նշանակությունների մեջ:

Թովել բառը հայերենում համանիշ է հմայել, կախարդել, դյութել բառերին: **Թովել** նախնական նշանակությամբ եղել է՝ խոսել, շշնջալ, ծայնել (ընդհատ-ընդհատ), որից էլ՝ թոթովել, այսինքն՝ ընդհատ-ընդհատ խոսել: Ըստ այսմ էլ **թովել**՝ բուն իմաստով նշանակում է «խոսքով կախարդել, կարդալով հմայել» (հմմտ. «թովիչ՝ քաղցրագոյն բանիւք հանէ զօձն ի դարանէ իւրմէ» Վարք հրից, իե: «Երգ և բան, է. որ զախտս թովեալ ողջացուցանէ» Փիլ. Բագն. և այլն [ՆՀԲ 1836, **Աճառյան 1973, Մալխասյանց, 1944]:**

Բառը Աճառյանը ծագած է համարում հնդեվրոպական *tou – խոսել, կարդալ, արտասանել արմատից, որից հին հնդկերեն stu – գովել, օրհնաբանել, գովասանքով խոսել, գովեստը երգել. pra – stu = խոսել սկսել. stotra, stoma = գովասանք, գովասանական օրհներգություն. ավեստ. a – stu = հանդիսավորապես խոստանալ, և այլն: Եվ այս բոլոր իմաստները կրոնական նշանակությամբ են գործածվել, ինչպես հայերենում դյութելն ու կախարդելը:

Ուրեմն **թովել** բառը ստուգաբանորեն ևս աղերսվում է խոսքի, հատկապես խոսելու, արտասանելու, կարդալու հետ:

Այլ կերպ ասած, **թովելը**, որից էլ **թովիչ**՝ կախարդ, դյութ, հմայող. **թովչություն** կամ **թովչանք**՝ հմայություն, կախարդություն, դյութություն, սկզբնապես ունեցել է հմայության սոսկ մեկ տեսակի՝ խոսքի կամ բանավոր հմայության, հատկապես օձահմայության իմաստ, հետագայում է միայն իմաստի ընդլայնումով ընդհանրա-

ցել, վերածվել հմայության, կախարդության՝ դառնալով նշված բառերի համանիշ:

Ուշագրավ է այն, սակայն, որ ոչ միայն հայերենում, այլև հնդեվրոպական այլ լեզուներում ևս հմայություն, դյութություն նշանակող բառերի արմատական իմաստը եղել է խոսքը կամ խոսելը: Այսպես. հին հունարեն ἐπωδή, որի արմատն է –ωδή– երգ, սկզբնապես նշանակել է կախարդական երգ, հմայական աղոթք, ապա ընդհանրանալով դարձել է բուժամիջոց: Նույն բառից ծագող ἐπωδή, որ նախապես նշանակել է հմայական բանաձևերով դյութող կամ բուժող, իմաստի ընդլայնումով դարձել է նաև հմայող, կախարդող առհասարակ: Նույնը նաև γοής, որ հավանաբար ծագելով γόος – հեկեկանք, տնքոց, ողբ բառերից [Лехикоυ 1928, 49], նշանակել է՝ սկզբում հմայական աղոթք ասող կախարդ, ապա, առավել ընդհանրանալով γοητεζα, γοητεύω բառերում, դարձել է կախարդություն, հմայություն, կախարդել, հմայել ընդհանրապես [Дворецкий 1958, 329, 654]:

Լատիներենում ևս cantio, որ սկզբնապես նշանակել է երգ առհասարակ և ապա՝ հմայական երգ, աղոթք, որից canto – երգել, նաև՝ հմայական աղոթք ասել, բառաբարդվել է և դարձել excanto – դյութությամբ որևէ բան առաջ բերել, հմայել, incanto – աղոթել (հմայական իմաստով), նաև՝ դյութել, կախարդել, incantatio – կախարդել և այլն [Малинин 1952]:

Տեսնում ենք դարձյալ, որ նախապես բանավոր հմայություն նշանակող բառերը իմաստի ընդլայնումով ձեռք են բերել առհասարակ հմայության, դյութության և կախարդության իմաստ:

Հին անգլերենում spell, որ սկզբում նշանակել է «պատմություն, խոսք, արտասանություն, հեգել», գործածվել է նաև հմայքի, դյութության իմաստով: Հին սլավոներեն gatati – խոսել և բախտ գուշակել, սերբերենում դարձել է՝ gatalac – կախարդ: Դարձյալ հին սլավոներեն obavati – նշանակել է թե՛ խոսել, խոսակցել և թե՛ միաժամանակ՝ հմայել, կախարդել և այլն [տե՛ս Աճառյան, 1973, 199]:

Բառերի այս իմաստային զարգացումը տարբեր լեզուներում ցույց է տալիս, որ վաղապես կախարդությունն ու դյութանքը ընկալվել են ամենից առաջ իբրև խոսքի կամ բանավոր հմայություն, և, հավանաբար, սկզբնապես տիրապետողը եղել է խոսքի հմայությունը: Այդ է ցույց տալիս թեկուզ հայերեն հմայ, որից հմայել, հմայություն, հմայակ և այլն, բառարմատի ծագումը: Այն ծագում է պիվլ. humay ձևից, որի նախնականն առկա է ավեստ. humaya կամ humaya ձևերով, որ նշանակում է օրհնյալ, օրհնությամբ լի: Ըստ Աճառյանի՝ այս բոլոր բառերի արմատն է maya, որ նշանակում է օրհնություն, երջանկություն. դրա վրա ավելացել է hu – «լավ» մասնիկը (հմմտ. հին հնդկերեն su – maya – հրաշալի զորություն, հնարագիտություն, խորամանկություն, խաբեբայություն և այլն [Աճառյան 1977, 103]:

Բառի արմատական իմաստն, այդպիսով, մնում է օրհնությունը և դրանից ակնկալվող երջանկությունը: Ուրիշ խոսքով՝ բառն իր նախնական առումով դարձյալ աղերսվում է խոսքի, մասնավորապես բարեբանող խոսքի՝ օրհնության հետ: Բառիմաստի հետագա զարգացումով բարեբանող խոսքի դյութական նշանակությունը ընդարձակվում է նոր ըմբռնումներով և տարածվում հմայական-կախարդական ամբողջ արվեստի վրա, որի արարողությունների հետ աղերսվող գործնական տեսակներն, ըստ երևույթին, համեմատաբար պատմականորեն առավել ուշ շրջանի արգասիք են, քան խոսքի կամ բանավոր հմայությունը:

8. **Հմայական բանաձևերի հիմնատեսակները:** Հմայական բանահյուսության հիմնական տեսակներն են անեծքները, օրհնանքները, երդումները և աղոթքները: Սրանք իրենց ժանրային նպատակային ընդհանրություններով հանդերձ, տիպաբանական կառուցվածքով որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Անեծքներն ու օր-

հնաևքները կառուցվածքով տարբերվում են թե՛ երդումներից և թե՛ հմայական աղոթքներից. դրանք ունեն պարզագույն կառույց և բաղկացած են մեկ կամ մի քանի համազոր ցանկության խոսքերից: Այսպես. երբ անիծում են, ասելով՝ «Չորնաս», «Գետինն անցնես», կամ՝ «Գոթենաս ու քրքրիս», «Կատղիս, չոլերն ընկնիս», կամ էլ՝ «Շատ դատես՝ քիչ ուտես, սովամահ մեռնես», «Յոթ տարի ճարիս, մուրիս, տոպրըկիդ մեջ հաց չտեսնիս» և այլն, իսկ երբ օրհնում են, ասելով՝ «Ապրի արևդ», «Ցամաքը գնաս՝ ջուր դառնա», «Չորն էրթաս՝ կանանչի, կանանչդ ծլի, ծաղկի» և այլն, ապա ինչպես մեկ բայական գործողությամբ անեծք-օրհնանքները, այնպես էլ մեկից ավելի գործողություն ունեցողները, անկախ գործողությունների քանակից, պարզ կառուցվածքներ են, միևնույն մակարդակի ու որակի ցանկությունների հարակցումներ:

Մինչդեռ երդումները և, մանավանդ, աղոթքները, իրենց տիպաբանական կառուցվածքով հակադրվում են անեծք-օրհնանքներին:

Երդումների կառուցվածքը, սովորաբար, բնորոշվում է տիպաբանական երկու պարտադիր բաղադրիչների՝ երդման պայմանի և իրադրության հարակցումով: Այսպես. *«Խաչած գերեզման չմտնեմ,* թե քեզ խաբեմ», *«Արևս մեռնի,* թե սուտ եմ ասում», *«Մուրազատուր սուփ Սարքիսը գիդենա,* թե ես խաբար եմ էդ բանից», *«Ժամը վկա,* որ դու գողցար կերար» և այլն:

Սրանց շեղատառ բաղադրիչները երդման պայմաններն են, իսկ սովորական տառերովը՝ երդման իրադրությունները, որոնց առիթով վկայակոչվում են երդման պայմանները: Պայմաններն ու իրադրությունները բնույթով ու բովանդակությամբ տարբեր ու հակադիր են միմյանց: Ուստի և երդումները տարբեր մակարդակով ու որակով բաղադրիչների հարակցմամբ կազմված բարդ կառույցներ են: Իսկ հմայական աղոթքները՝ տարբեր որակի բաղադրիչներով զարգացած ու տարբեր մասերից բաղկացած առավել բարդ ստեղծագործություններ են:

Կառուցվածքային այս յուրահատկությունները նկատի առնելով էլ, ահա, հմայական-կիրառական բանահյուսության տեսակները բաժանում ենք երկու խմբի.

1. **հմայական պարզ բանաձևերի,** որոնց տակ են ներառվում անեծքներն ու օրհնանք-բարեմաղթությունները.

2. **հմայական բարդ բանաձևերի**, որոնք ընդգրկում են երդումներն ու հմայական զանազան աղոթքները:

9. Աղոթքներ: *Աղօթք* ծագում է աղաչել, «աղերսել, խնդրել» բառից և նշանակում է «աղերս, աղաչանք» [**Աճառյան 1971,** 121, 138]:

Հայ ավանդության մեջ աղոթք ընդհանուր անունով են կոչվում թե՛ հմայական բանաձևերը[7] և թե՛ եկեղեցական պաշտամունքային ու ժողովրդական պաղատանքի աղոթքները:

---

[7] Հայ միջնադարյան գրավոր, ինչպես նաև ժողովրդական բանավոր ավանդության մեջ հմայական այն բանաձևերը, որոնք գրի հին պաշտամունքի հետևանքով գրվել են թղթի կամ որևէ այլ առարկայի վրա և ուղեկցվել հատուկ հմայագրերով ու սիմվոլային կախարդական նշաններով, կոչվել են **գիր** կամ **թուղթ ու գիր**: Որևէ կոնկրետ նպատակով (հիվանդության բուժման, չար աչքից կամ չար լեզվից պաշտպանվելու, կապված, կախարդված բախտի արձակման, հաջողության ապահովման և այլն) աղոթքը գրվել է թղթի վրա՝ հմայական համապատասխան խորհրդանշաններով, նռանկյունածև ծալվել, կարվել կամ ամրացվել է հմայվող անձի հագուստին, գլխարկին, բարձին, կախվել վզից կամ էլ թաղվել է տան որևէ անկյունում, դռան սեմի տակ, ճամփաների խաչմերուկում, անգամ գցել են ջրի մեջ և ջուրն իբրև հմայական զորությամբ օժտված խմիչք՝ տվել են հմայվողին խմելու: Նման հմայական բանաձևերը միջնադարյան ձեռագրերում, «աղօթք» անվանումից բացի, կոչվել են նաև գիր (հմմտ. «գիր գլխացաւի և աչացաւի», «գիր լեզուակապի և նազարի», «գիր բպղայի և չար դևի», «գիր բախտ արձակելոյ» և այլն): Հմայական աղոթքները թղթի վրա գրանցելու և հուռութք-հմայիլի վերածելու այս սովորույթից էլ պոռաջացել են **գիր անել** կամ **թուղթ ու գիր անել** դարձվածները, որոնք նշանակում են ընդհանրապես «հմայել, կախարդել»,

Թե՛ հայերենի բարբառներում և թե՛ ընդհանուր ժողովրդախոսակցական լեզվում աղոթել նշանակում է «աղոթելով և կախարդությամբ բժշկություն անել», իսկ բուն աղոթել նշանակության համար գործածվում է *աղոթք անել* կապակցությունը [տե՛ս **Աճառյան 1913**, 83]: Այս, ինչպես նաև «աղոթած մարդ», «աղոթած էշ կը նմանի» և համատիպ այլ դարձվածներում, ուր աղոթած ածականն ունի «թմրած, ապշած, հլու» իմաստը, ցույց է տալիս, որ աղոթել բառն ընդհանուր առմամբ նշանակում է «հմայել, կախարդել»: Իսկ աղոթող, աղոթքարար, դարձյալ նույն համաբանությամբ, նշանակում է «աղոթելով հմայող, կախարդանքով բուժող»:

Առաջին դեպքում աղոթել բայն օգտագործվում է ներգործական իմաստով՝ աղոթել, աղոթքի ենթարկել մեկին: Իսկ երկրորդ դեպքում՝ աղոթք անել, գործածվում է կրավորական իմաստով, երբ աղոթքի գործողություն կատարողը՝ աղոթողը, հենց ինքն է՝ տվյալ անձը (սուբյեկտը), որը աղոթքն իր համար է կատարում (ոչ թե մեկ ուրիշի):

Այս երկու տարբեր ըմբռնումները օժանդակ ցուցիչ են ծառայում հմայական և սովորական աղոթքների տարաբաժանման:

Բոլոր կարգի աղոթքներն, անկախ իրենց բնույթի տարբերությունից, ըստ հավատալիքի՝ օժտված են հմայական զորությամբ: Այդ առումով էական տարբերություն չկա հմայական և կրոնապաշտամունքային աղոթքների միջև: Հիմնական տարբերությունն այն է, որ կրոնապաշտամունքային աղոթքները (հեթանոսական թե քրիստոնեական) առաջին հերթին կապված են ծեսի, որոշակի ծիսակատարության, ծիսապաշտամունքային արարողությունների հետ, որոնք ունեն կոլեկտիվ-հաղորդակցական բնույթ, նպատակամիտված են տվյալ հասարակության (հաղորդի) նյութական կամ հոգևոր պահանջմունքները բավարարելուն և կատարվում են կրոնական պաշտոնական կարգավիճակ ունեցող քրմական կամ եկեղեցական դասի ներկայացուցիչների կողմից: Մինչդեռ հմայական աղոթքները կապ չունեն պաշտոնական ծիսակատարությունների հետ, կատարվում են միայն անհատի համար որևէ դիպվածի առիթով (հիվանդություն, գործի ձախողում, փորձանք-պատահար) կամ որևէ կոնկրետ սոցիալ-բարոյական ցանկության իրագործման նպատակով: Այդ կերպ հմայական աղոթքն ունի անհատական և դիպվածային բնույթ, կատարվում է ոչ պաշտոնապես, բացահայտ և այլոց ներկայությամբ, այլ գաղտնի, աղոթողի և աղոթքը պատվիրող անձի իմտիմ, անհատական հարաբերակցությամբ: Արդեն իրավացիորեն նկատված է, որ այդ իմտիմությունը առանձին դեպքերում դրսևորվում է հմայական աղոթքներում, երբ աղոթողն ու աղոթվող անձը երբեմն համընկնում են և երկուստեք մասնակից դառնում բուժման «ինքնաթերապիային» [տե՛ս **Топоров 1993**, 5]:

Այդ համընկնումները մասնավորապես դրսևորվում են այն բուժաղոթքներում, որոնց գործողություններն սկսվում են առաջին դեմքով (գնացի, տեսա, ասացի, արեցի ևն) և գործող անձը փաստորեն իր մեջ է միածուլում թե՛ աղոթող հմայագործին,

---

իսկ գիր անող, բուղթ ու գիր անող՝ «հմայող, կախարդ»:

Բացի այդ, կազմվել են նաև հմայական գրավոր պահպանակներ, որոնք կոչվել են հմայիլներ: Դրանք հատուկ պատվերով գրվել են թղթի երկար փաթեթների վրա, ընդգրկել են հմայակաև ու տերունական տարբեր աղոթքներ, հմայական աղյուսակներ, տարբեր հմայական խորհրդանշաններ, հաճախ պատկերազարդվել, փաթեթավորվել և պահվել են պատվիրատուի տանը, ծոցում կամ գրպանում՝ նպատակ հետապնդելով պահպանել տիրոջը բոլոր կարգի վտանգներից, փորձանք-պատահարներից, հիվանդություններից, չար ազդեցություններից, միաժամանակ ապահովել նրան գործնական հաջողություններով: Այս առումով, ինչպես արդարացիորեն նկատված է, հմայական աղոթքը, թեպետ լինելով բանահյուսական ժանր, բովանդակությամբ, սակայն, կախում ունի գրքային ու գրական աղբյուրներից և հակված է գրավոր տեքստի մեջ կերպավորվելու, որով այն «ձեռք է բերում հատուկ հեղինակություն» [տե՛ս **Топоров 1993**, 3-4]: Հմայական աղոթքի նման գրայնացմամբ առավել է զորանում նրա ազդեցությունը, քանզի խոսքի հմայական զորությանը գումարվում է նաև գրի կախարդական ուժը, որպես արդյունք գրի հնագույն պաշտամունքի:

թե՛ աղոթքին ենթակա անձնավորությանը: Հմայական ակտիվ լիցքով, տեսանելի գործողությունների ներգործուն ուժով հմայվող (բուժվող) անձը տեղափոխվելով հմայական արարքների ակտիվ դաշտ և դառնալով դրանց մասնակից, հոգեբանորեն ներշնչվում է դրանց զորությամբ, և այդ ակտիվ ներշնչումը նպաստում է նրա խարխլված առողջության վերականգնմանը կամ հիվանդության կանխմանը:

Այս տիպի հմայական աղոթքները, որտեղ աղոթող անձը հանդես է գալիս հմայագործի ակտիվ դերով, իրեն վերագրում հրաշագործ բացարձակ զորություն և դրա ու իր արտաբերած աղոթքի շնորհիվ հասնում ցանկալի նպատակին, անվանում ենք **հմայագործի բացարձակ ակտիվության** աղոթքներ:

Աղոթքների այս տիպն ունի նախնական բնավորություն, տիպաբանորեն սերում է նախնական հմայություններից, **բացառում է** գերբնական (աստվածային և դիվային) ոգիների միջամտությունը և ամբողջապես հենվում աղոթողի խոսքի և գործի հմայական ներգործուն զորության վրա:

Հմմտ.

<...>Սև օձն էկավ կրկչալեն.
Կթեցի զկաթ՝ քասա չինին,
Լըցի վըր չար փշին
Ու զարկի մըջ չար աչքին ու ըսեցի.
Չար աչքն՝ ի չար փուշ,
Չար փուշն՝ ի չար կրակ,
Չար կրակն՝ ի ծով,
Ծովն ի յանատակ: *(№ 19)*

Կամ՝ հետևյալը, ոճաբանական այլ դրսևորմամբ, ուր թեպետ աղոթողն անձամբ հանդես չի գալիս, բայց այն ամբողջապես հենված է նրա խոսքի հմայական ուժի ներգործության վրա:

Պատռեց սև լեռը,
Դուրս եկավ սև ծին,
Դուրս եկավ սև մարդը,
Դուրս եկավ սև օձը.
Սև օձի մի աչքը ջուր էր,
Մյուս աչքը կրակ էր:
Թուխ աչքավորի,
Շեկ աչքավորի,
Կանանչ աչքավորի,
Կապուտ աչքավորի,
Չար աչքը տրաքի: *(№ 22)*

Տիպաբանական այլ խումբ են կազմում այն աղոթքները, ուր աղոթող հմայագործը ստիպում է որևէ դիվային կամ աստվածային էակի հասցնել իրեն իր ցանկացածին, կամ էլ իրենից դուրս կանգնած աստվածային սրբություններին ու զորությանն ապավինելով՝ դրանց օժանդակությամբ հասնում է իր նպատակին կամ ապահովում է իր նպատակի իրագործումը:

Այս բնույթի բանաձևերն անվանում ենք **հմայագործի հարաբերական ակտիվության** աղոթքներ, որոնք պատմականորեն թերևս արդյունք են համեմատաբար ուշ ժամանակների և կազմում են հմայական աղոթքների գերակշիռ մասը: Հմմտ. ներքոբերյալ բանաձևերը.

Աստվածամար, ահ արա,
Աճօրեն մարդուն մահ արա,
Լեզուն բերանը բուրդ արա, .
Թաքը կրունգին տեղն արա: (№ 187բ)

Մարիա՛մ, Մարիա՛մ, ո՞ւր գերթաս
Կոռալեն, գոծգըրնալեն.
Ա՛ռ սևգոթ տանագը,
Մդիր Ադամա տրախտը,
Գդրե չար աչքը,
Գդրե չար նազարը,
Պժշկե՝ որին գաղոթիմ ը՛ը: (№ 35ժ)

Սատանա, սատանա,
Վուտիդ տակը իմքին (բան) կա,
Կեսո՝ ինձ, կեսը՝ քեզ: (№ 246ա)

Գիլ անեմ, գիլկապ անեմ,
Աջու բթովս, թուրքի մատովս,
Մարիամ Աստվածածնու մազովը,
Սուրբ Սարգսի գյամովը,
Լուսավորչու աջովը: (№ 183ե)

Բնույթով հմայական աղոթքների այս երկրորդ տիպին են մասամբ հարում նաև հին հեթանոսական պաշտամունքային աղոթքները [տե՛ս **Pauly-Wissowa 1922, 2154-2155**]:

Եվ վերջապես, կա աղոթքների մի երրորդ հիմնատիպ, որ բուն իմաստով հմայական չէ: Այստեղ, ի տարբերություն նախորդ տիպերի, աղոթողն այլևս արհեստավարժ հմայող անձ չէ, որին դիմում է պատվիրատուն, այլ յուրաքանչյուր սովորական անհատ, որ հանդես է գալիս իբրև աղոթարար խիստ պասիվ-հայեցողական վիճակով: Նա իր աղոթքով ամբողջովին ապավինում է աստծո, սրբերի, հրեշտակների զորությանը, նրանցից աղերսելով իր ցանկությունների իրականացումը: Տիպաբանական այս սկզբունքով են կերտված քրիստոնեական տերունական աղոթքների ճնշող մեծամասնությունը և ժողովրդական համաբնույթ **պաղատանքի** աղոթքները:

Տեսնենք ժողովրդական աղոթքների մի քանի բնորոշ նմուշներ, որոնք ասվել են երեկոյան՝ քնելիս և լուսաբացին՝ արթնանալիս:

Գլոխս դնեմ բարձին,
Հոգիս ի տամ Աստըծուն.
Բարի հրըշտակ դուն պըհե,
Չար սատանեն չը խաբե: *(№ 294)*

Օղջում, Մայրամ, դու կուս իս,
Հոգով, սրտով դու լուս իս,
Լուսեղեն կամար իս կապի,
Հոգիս քեզ համար իս պահի.
Տու ինձ իմաստություն,
Գնամ գործիմ բարություն,
Հոգիս տանիս արքայություն: *(№ 329ա)*

Աղոթրանի բարի լուսվան Աստված,
Ամենան փորձանքեն ազատ էնիս
Ջիմ ծժեր, զիմ էրեխեք.
Միամիտ փորձանք չիգա վըր ժողովրդին,
Մայրիկ, մայր Աստվածածին,
Կանանչ մեռոն: *(№ 386)*

Ըստ այսմ՝ ժողովրդական բոլոր աղոթքներն իրենց բնույթով բաժանվում են երկու հիմնախմբի՝ **հմայական** և **պաղատանքի** աղոթքների:

10. Հմայական աղոթքների ժանրային-տիպաբանական հատկանիշները: Հմայական աղոթքներն առհասարակ ցանկության հմայական բանաձևեր են՝ ուղղված հմայվող անձի, առարկայի, որևէ իրական երևույթի տվյալ վիճակի փոփոխման նպատակին և հաճախ ուղեկցվում են հմայական որոշակի արարողություններով: Ըստ այդմ էլ հիշյալ աղոթքների ժանրային բուն իմաստը կոնկրետ ցանկության հմայական իրագործումն է, որն արտահայտվում է ցանկության բանաձևված խոսքով: Այս տիպի աղոթքների բուն նպատակն ամփոփված է հենց դրանց ցանկության բանաձևերում, որոնք աղոթքների համակառույցում դառնում են իմաստակիր միավորներ և իրենց վրա կրում աղոթքների ողջ իմաստաբանությունը:

Ցանկություններն աղոթքներում նախ դրսևորվում են ուղղակի ձևով, ցանկության խոսքի տարբեր ասույթներով՝ անեծքով, օրհնանքով, երդմամբ, սպառնալիքով, հրամա-կարգադրությամբ, երբեմն նաև սոսկական բաղձանքի խոսքերով: Տիպաբանորեն նախնական հմայական բանաձևերը (աղոթքներ) թերևս սահմանափակվել են սոսկ այդ պարզ ասույթներով, քանզի ուշ շրջանի բանավոր ավանդության մեջ առկա են նման պարզ կառուցվածք ունեցող հմայական բանաձևերի բազմաթիվ նմուշներ, որոնք կարող են վերապրուկները լինել նախնադարյան շրջանի հմայական բանահյուսության:

Աղոթքների այդ պարզ տիպերում ցանկության խոսքի ասույթները ենթարկվում են համապատասխան ոճավորման, հատկապես կոչականացման, որով խոսքը դառնում է առավել կենդանի ու նպատակային, ուղղված այն էակին կամ երևույթին, որին վերաբերում է այդ բանաձևը: Ապա, կատարվում է այդ պարզ բանաձևի երիցս կրկնություն, որով հոգեբանորեն ոչ միայն սաստկանում է խոսքի հմայական զորության ներգործությունը, այլև նկատվում է բանաձևի ընդլայնման, ծավալման **ձգտում**, քանզի հմայող աղոթողը չի բավարարվում սոսկ մեկ ասույթի մեկանգամյա արտաբերմամբ, ուստի և իր հոգեկան եռանդին հագուրդ տալու համար կարիք է զգում ոչ միայն կրկնության, այլև հմայական խոսքի նոր մասերի հավելման: Կատարվում է համազոր և համիմաստ նոր ասույթների հավելում կամ հարակցում, նոր մոտիվների մուտք, կապված հմայվող տվյալ երևույթը խորհրդանշող առասպելահավատալիքային պատկերացումներին, որով ոչ միայն ծավալվում է հմայական աղոթք-բանաձևը, այլև սյուժետավորվում և կերպավորվում:

Հմայական աղոթքների տիպաբանական այս աստիճանական զարգացումը հստակ ձևով նկատվում է դասական ավանդական աղոթքների, մասնավորապես չար աչքի աղոթաշարի տարբերակների փոխակերպումներում[8]:

[8] Չար աչքի աղոթքների մի տարբերակախմբում պարզագույն տիպը հետևյալ կոչականացված անեծքն է. «Չա՛ր աչք, չար փուշ մաշիս»: Այլ տարբերակում այն ընդարձակվում է կրկնավոր անեծքի մի նոր անդամով. «Չար աչքը՝ չար փուշ, / Չար նիաթը չար փուշ»: Մեկ ուրիշ տարբերակում ելակետային անեծքն ընդլայնվում է իրադրական նոր մոտիվներով (չար կրակ, ծովի հատակ). «Չար աչք՝ չար փուշ, / Չար փուշ՝ չար կրակ, / Չար կրակ՝ ծովի տակ»: Իսկ ներքևում բերվող տարբերակում հավելվել են չար աչքի անձնավորված կերպարն իր չար միտումով և նրան ուղղված կանխարգելման անեծքների ու ցանկության նոր ասույթներով: «Չար աչքը՝ չար փշին, / Չար փուշը՝ չար կրակին, /Չար աչքը շիտկվել է ծեր դուռը. / Աչքը՝ քոռ, ծեռքը՝ չոլախ, լեզուն՝ բիբառ//, էլ չըգա ծեր դուռը» [տե՛ս N 1ա, բ. 3, 4]:

Հմայական աղոթքների տիպաբանական զարգացման այս հատկանիշները նկատի առնելով՝ դրանք բաժանում ենք կառուցվածքային երկու մեծ հիմնախմբի՝ **պարզ** և **բաղադրյալ** տիպերի, որոնք ունեն իրենց բազմաթիվ ենթատիպերը:

Ա. **Պարզ տիպերը** կազմված են մեկ կամ մի քանի հմայական սոսկական ասույթներից՝ անեծքի, սպառնալիքի, հրաման-կարգադրության, երդման, օրհնանքի կամ էլ ցանկության սովորական խոսքի բանածևերից՝ ոճաբանական տարբեր դրսևորումներով: Պարզ տիպերն էլ իրենց հերթին, ըստ կառուցվածքային միավորների քանակի, կարելի է բաժանել **հակիրճ** և **ընդարձակ** ենթատիպերի:

Հակիրճ ենթատիպերը սովորաբար ունեն երկանդամ կազմություն՝ բաղկացած երկու համազոր կամ հակադիր սոսկական ցանկության ասույթներից: Դրանցից են հետևյալները.

Նոր հագուստ հագնելիս

Իս քի մաշիմ, դուն ինձ չէ: (№ 247)

Լվացք անելիս

Թո՛ւ, բու, բու, տաշտի ոռքը մաշի, սապոնիկը չմաշի: (№ 239)

Ծիածան ծագելիս

Կանաչ ու կարմիրը իմ ախպոր գլխին,
Սևն ու սպիտակը՝ բուրքի գլխին: (№ 252)

Աչքի մեջ շյուղ ընկնելիս

Ծեղ ես՝ ծալվի, / ֆող ես՝ հալվի: (№ 176ա)

Չար աչքի

Չար աչքը ծաքի, / Չար նիյեքը վար հալածի: (№ 2)

«Յամանա» հիվանդության

Որդե մեռել կա՝ սաղանա,
Յամանի տակռին չորանա: (№ 96)

Ընդարձակ ենթատիպերն ունեն եռանդամ, քառանդամ, նույնիսկ ավելի կազմություն, բաղադրված են երկու և ավելի ցանկության համազոր կամ հակադիր ասույթներից և իրենց մեջ երբեմն ներառում են նաև նկարագրական մոտիվներ: Դրսևորվում են ոճաբանական տարբեր ձևերով, որոնց մեջ գերակշռում է դիմում կոչականը:

Կտրած եղունգները թաղելիս

Օղունգ, բաղած կեցիր,
Հա՛յր Աբրահամ, վկա կեցիր,
Անդի աշխարհին հազիր կեցիր: (№ 173ա)

Ընկած ատամը թաղելիս

Մուկիկ, մուկիկ, ա՛յ մուկիկ,
Ա՛ռ քու էրկաթէ ատամը,
Ինձի՝ իմ օսկոռե ատամը: (№ 171ա)

Հինա պատրաստելիս

Արիգա՛կ, չորցուր,
Լուսընկա՛, կարմրցուր,
Ըռքո՛, Սըրգո՛, քրիդ արյունը կաթեցուր: (№ 238)

Գորտնուկի

Նո՛ր, նո՛ր, նորե զիս,
Կոծոծն յելի՝ կուտե զիս,
Դու կի կոծոծին, կոծոծ չուտե զիս: (№ 90ա)

Չար աչքի

Ով աչքը ըչքահարե՝
Աղի պես աղվի,
Հողի պես մաղվի,
Գոմշի պես տռլընգա,
Տավարի պես բռանչե,
Օձի պես սողա,
Ուռի պես դողա: (№ 10բ, տե՛ս նաև
№ 10ա, 11ա և ուրիշներ)

Հարկ է նկատի ունենալ, որ պարզ տիպերի վերոբերյալ հակիրճ և ընդարձակ ենթատիպերի հմայական բանաձևերը ճնշող մեծամասնությամբ ասվել են ոչ թե հատուկ հմայող աղոթարարների, այլ տվյալ երևույթին կամ իրողությանը ենթակա անհատների կողմից: Այս հանգամանքը ևս վկայում է այս պարզ տիպերի նախնական բնույթի մասին, քանզի ըստ նախնական հմայական հավատալիքների՝ յուրաքանչյուր ոք ի զորու է առաջ բերել կամ կանխել ցանկացած երևույթը:

Բ. **Բաղադրյալ տիպերը** ձևավորվում են երկու հիմնական եղանակով. ա) պարզ տիպերի նորանոր մոտիվների **աճումով**, ընդարձակմամբ և վիպականացմամբ, որ տեսանք վերևում չար աչքի տարբերակախմբի օրինակներով. բ) կրոնաառասպելաբանական հին ու նոր զրույցների մոտիվների, հավատալիքների, պատկերացումների հիման վրա հյուսված **վիպական իրադրության** և ցանկության խոսքի տարբեր ասույթ-բանաձևերի **բաղարկումով**:

Բուն իմաստով հմայական աղոթքներ են կոչվում վիպական իրադրություն (ըստ Աբեղյանի՝ վիպական նախաբան, տե՛ս **Աբեղյան 1966**, 33) ունեցող բաղադրյալ տիպերը, որոնք իբրև հմայական բանաձևի բարդ տեսակներ, իրենց նախահիմքում ընկած հմայական հավատալիքների նման, ինչպես արդեն նշել ենք (§ 2), ունեն **երկանդամ** կազմություն՝ բաղադրված առարկայական իրադրությունից և դրանից մակաբերվող կամ դրան առնչվող **ցանկությունից**:

Հմայական աղոթքների վիպական այդ հատվածները աղոթքների բնագրերին հաղորդում են որոշակի բանաստեղծականություն, դառնում գեղարվեստական իրադրություն (առարկայական վիճակ կամ գործողություն), երբեմն՝ դեպքերի սկիզբ, ընթացք և ավարտ, հետևաբար և վերածվում վիպական մոտիվների ու փոքրիկ սյուժեների, որոնք ունեն հաճախ գործող անձինք՝ օժտված մենախոսությամբ կամ երկխոսությամբ:

Գեղարվեստական այս հատկանիշները կրելու պատճառով էլ հմայական աղոթքների վիպական այդ իրադրությունները դրսևորվում են ոճաբանական տարբեր ձևերով. 1. առարկաների և արարքների վիպական նկարագրությամբ, 2. դիմում կոչականով, 3. երկխոսությամբ, 4. նկարագրությամբ և երկխոսությամբ, 5. նկարագրությամբ և հարցերով, 6. ժխտում-արգելումներով և հաստատում-հերքումներով: Ոճաբանական այդ տարբեր դրսևորումները համապատասխան օրինակներով տե՛ս ստորև:

Վիպական իրադրությամբ օժտված այս բաղադրյալ տիպերի երկրորդ բաղադրիչները՝ ցանկության խոսքերի բանաձևերը, սովորաբար, հաջորդում են վիպական իրադրությանը, հաճախ եզրափակում աղոթքները և դառնում դրանց ավարտման վերջադաս անդամներ:

Նման կառուցվածքը բնորոշ է հմայական աղոթքների դասական տիպերին (մասնավորապես չար աչքի աղոթքներին) և միանգամայն համախոս հմայական նախնական հավատալիքների կառուցվածքին և արտահայտվում է հետևյալ պարզ սխեմայով՝ վիպական իրադրություն + ցանկություն:

Սակայն հմայական աղոթքների ազգային ողջ համալիրը քննելիս՝ դասական այս կառուցվածքից նկատվում են որոշակի շեղումներ: Դրանք առաջին հերթին պայմանավորված են աղոթքների կառույցում ցանկության խոսքերի դիրքի փոփոխմամբ: Ըստ այդմ՝ ցանկության խոսքերն հմայական աղոթքների բաղադրյալ տիպերում լինում են նաև՝ ա) **նախադաս** (նախորդում են իրադրությանը), բ) **միջադաս** (միջարկում են իրադրությունը), գ) **կրկնադաս** (դրվում են իրադրության և՛ սկզբում, և՛ վերջում), դ) **բազմադաս** (դրվում և կրկնվում են իրադրության տարբեր մասերում):

Արդ տեսնենք բաղադրյալ տիպերի իրադրությունների ոճաբանական տարբեր դրսևորումները, դրանց առնչվող ցանկության խոսքերի տարբեր դիրքերն ու փոխհարաբերությունները՝ որոշակի օրինակներով[9]:

1. Առարկաների կամ արարքների վիպական նկարագրությամբ

Ա.
Սև օձն էկավ կչկչալով,
Սև ամպն էկավ որոտալով,
Կթեցինք ու մերեցինք,
Խարկած կժեր լցրեցինք,
Անատակ ծովեր գցեցինք,
Չար աչքի տիրոջ կերցուցինք.
Թե էգեն, թե ործեն,
Թե ազգեն, թե տակեն,
Թե չար, թե բարի սրտով՝
Չար աչքին՝ չար փուշ: (№ 20)

Բ.
Մեր տան ետի կողմը մի ծով կա,
Ծովի ետի կողմը մի կալ կա,
Կալի միջին մի դեզ կա,
Դեզի միջին յոթ խուրձ կա,
Յոթ խրձան միջին յոթ հասկ կա,
Յոթ հասկի միջին յոթ հատիկ կա.
Հատիկ, հատին, վեր ընկի,
Աչքի հատիկ, վեր ընկի: (№ 61գ)

---

[9] Այստեղ և այլուրեք հմայական աղոթքների տիպակառուցվածքային հատկանիշները քննելիս՝ նկատի են առնվել դրանց սոսկ պարզ ու հաստատուն նմուշները և զանց են առնվել տարբեր աղոթքների հատվածներից բաղարկված ու բարդված հարակցումները:

Աղոթքների բերված օրինակներում սովորական շարվածքով նշվում են առարկայական իրադրությունները, իսկ բավ տառերով՝ ցանկության խոսքի բանաձևերը: Յուրաքանչյուր օրինակի տակ նշված է ներկա համահավաքում նրա հերթական համարը:

Գ.
Սև եզը՝ սև սարը,
Սև սամոտա վրա ուսին,
Օխտը հանգույց վրա մեջքը:
Չար աչքը՝ չար փուշ,
Չար նիաք, չար խրատ,
Ծառա եմ աստու նախախնամությանը,
Առ ծառայիս աչք տվողին,
Աչքը խավրի, արևը մարի.
Չար աչքը՝ չար փուշը,
Չար նիաք, չար խրատ.
Սև սարը շրջեցին,
Սև կթոցը կթեցին.
Վեվ տեսավ՝ զարմացավ,
Վեվ կերավ՝ տրաքավ:
Սև օձին գանգին վրա
Չար աչքը՝ չար փուշ,
Չար նիաք, չար խրատ <...> (№ 34բ)

Դ.
Աչկը ըչկհարին
Քարը՝ մատին,
Քարը՝ վետին,
Քար ու քացախը բերնին:
Սև օցը կթեմ, մերեմ,
Ուտըցնեմ աչկը տվողին՝
Օցի պես մըկըկա,
Վըչխարի պես ծըկըկա,
Հիսուս Քրիստոս: (№ 11դ)

Ե.
Տունմ՝ ունիմ երկաթե,
Պատերը սուրբ պողպատե,
Քրիստոս մեջն օթևան է,
Դուռը դռան գոց է,
Խալխան էրթկին ամրոց է.
Դռան գալող՝ ետ դառնա,
Երթիկ գալող՝ քար դառնա: (№266ա)

Բերված Ա, Բ, Ե աղոթքներում ցանկության խոսքերը վերջադաս են, արտահայտված անեծքի (Ա, Ե) և հրաման-կարգադրության (Բ) բանաձևերով, բոլորն էլ իբրև հետևանք վիպական իրադրություններում նկարագրվածի: Դ աղոթքում ցանկության խոսքերը վիպական երկտող իրադրության նկատմամբ սկզբնադաս են և վերջադաս, արտահայտված անեծքներով: Ընդ որում սկզբնադաս անեծքն անկախ միավոր է, իսկ վերջադասը հետևանքն է վիպական իրադրության: Իսկ Գ աղոթքում անեծքի միևնույն բանաձևը (2-րդ դեպքում համալրված նոր անեծքով) բազմադաս է և կրկնվում է վիպական իրադրության տարբեր մասերում՝ կատարելով յուրատեսակ

կրկնակի դեր և սաստկացնում հմայական աղոթքի չարաբանական տպավորությունը:

Հարկ է միաժամանակ նշել, որ վիպական նկարագիր ունեցող ոչ բոլոր հմայական աղոթքներում է ցանկությունն արտահայտվում հատուկ բանաձևած ասույթներով: Կան համատիպ առանձին աղոթքներ, որտեղ բացակայում են ցանկության խոսքի բանաձևերը, և աղոթողի ցանկությունն արտահայտված է աղոթքի իմաստային ենթատեքստում:

Այսպես. կերակուրից զզվածի համար ասվող սույն բուժաղոթքում թեպետ չկա ցանկության խոսքի հատուկ բանաձև, բայց վիպական իրադրությունն ու գործողությունը ինքնին ենթադրել են տալիս աղոթքի հմայական նպատակադրումը՝ զզված ուտելիքը մարսեցնելու ցանկությունը:

Սիպտակ հլեվորը
Սիպտակ ծեռը տարավ,
Սիպտակ ծուկը հանեց,
Անդանակ մորթեց,
Անկրակ խորովեց,
Անիշտահ մարսեց: (№ 114բ)

Կան նաև վիպական իրադրությամբ հմայական այնպիսի բանաձևեր, որոնք ոչ միայն չունեն ցանկության ասույթներ, այլև ամբողջ իրադրությունը քողարկված է այլաբանական այնպիսի թանձր շղարշով, որ թողնում է անգուշակելի հանելուկային պատկերի տպավորություն: Դրանցից է, օրինակ, միզկապության բուժմանն ուղղված հետևյալ աղոթքը.

Մի տանն մի կրակ կա՝ / Կեսը կա, կեսը չկա.
Վրեն մի կասկարենք կա՝ / Կեսը կա, կեսը չկա.
Վրեն մի պղինձ կա՝ / Կեսը կա, կեսը չկա.
Վրեն մի խուփ կա՝ / Կեսը կա, կեսը չկա.
Վերնուց մի հավք է անցկենում՝ / Կեսը կա, կեսը չկա: (№ 110)

2. Դիմում կոչականներով

Ա.
Երեքիկ, երեքիկ, բարի լուս քի,
Արտ մի կորեկ իմ ցանի,
Շկլոր բկլոր է դարձի,
Իմ Տեր վրավովն է յընցի.
Չոր՜իս ու չորանաս,
Փու՛, փու՛, փու՛: (№ 83Ե)

Բ.
Ադամ, Ադա՛մ, հայր Ադամ,
Գուգար գելի պես,
Կայներ գառի պես.
Սուրբ Սարգսա ծիուն ծարովը,
Մայր Աստվածածնա քաղցր կաթովը,
Ուքը մատով ու երկու բթովը՝
Կալիս ու կապ մնաս: (№ 188)

Գ.
Աքա՛, Կատառասա՛ք, Դիա՛ս,
Փութացուցէք և արձակեցէք ի կապած ծառայիս Աստուծոյ,
Զի բացցեն և արձակեն
Եւ առաջ եկեսցեն է պատկերն Աստուծոյ:
Կենդամա՛ծ, Մաթէ,
Որ եք զսպասաւորս Աստուծոյ,
Դուք օգնական լերուք
Եւ արձակեցէք կապած ծառայիս Աստուծոյ, ամէն:
Անուն Աստուծոյ գթածին և ողորմածին,
Գաթայ, Հանա՛յ, Լաքա՛թ, Քաթհանէ՛, Շազա՛ղշ,
Արձակեցէք ծառայիս Աստուծոյ, ամէն: (№ 4(162))

Դ.
Ուրուճասմե՛ր, Մարմարասմե՛ր,
Հաղաղիյի՛ս, Քուրա՛մ,
Որ սարն եք կամ ծոր եք,
Դուք հասուցէք ծառայիս Աստուծոյ
Եւ ազատեցէք գողէ, հարամէ,
Ի սրէ, ի թրէ, ի խանչարէ
Ի մզրախէ, ի թանկէ
Եւ յամենայն պատուհասէ, ամէն: (№ 3(221)ա)

Ա և Բ աղոթքներում ցանկության խոսքերը վերջադաս են և անեծքներ: Ա-ում անեծքն արդյունք է աղոթքի վիպական իրադրության, ուր երեթիկ վերքը համեմատվել է մեջ ու դուրս բուսած կորեկի արտի հետ, որին զուգորդվել է անեծքը՝ արտը չորացած տեսնելու (իմա՝ վերքը բուժելու) ցանկությամբ: Բ աղոթքում անեծքը հետևանքն է վիպական իրադրության մեջ հալածող ու խորամանկող գայլին կապելու և կախարդելու ցանկության, որ աղերսվում է նախահայր Ադամից: Գ աղոթքում երիցս դիմում է արվում տարբեր դասերի պատկանող սուրբ անձանց՝ սեռական անզորությամբ տառապող հիվանդին արձակելու հմայական կապանք գիտակցվող այդ արատից: Իսկ Դ աղոթքում դարձյալ դիմում է կատարվում սուրբ անձանց՝ աղոթքին ենթակա մարդուն պահպանելու և ազատելու տարբեր չարիքներից ու պատուհասներից:

Դիմում կոչականով հորինված հմայական բանաձևերն առհասարակ, ուղղակի ու անմիջական խոսքով, բանաստեղծորեն առավել ազդեցիկ ու տպավորիչ են դարձնում իրենց զորությունը: Նույնը առավել ընդգծված ձևով դրսևորվում է հաջորդ ոճաբանական խմբում՝ երկխոսական աղոթքներում:

3. Երկխոսությամբ

Ա.
Ելնէր երթայր չար ակն.
Տէր մեր Քրիստոս ի դեմ դիպաւ և ասէ.
- Ու՞ր երթաս, չա՛ր ակն:
Պատասխանի ետ և ասէ.
-Երթամ յազգս մարդկան,
Զանմեռ մեռուցանեմ,
Զմիսն ուտեմ,
Զարիւնն ծծեմ
Եւ զոսկերքն խռիւ դարծուցանեմ:
Ասէ ցնա Յիսուս.
-Դարձի՛ր յետ.
Չար ակն ի քար թող պատառի,
Չունիս հրաման, որ մերձենաս
ի ծառայիս Աստուծոյ: (№ 37ա)

Բ.
- Ա պողտ:
-Ես ըմ:
-Չար աչքը, չար սհաք,
Հո՞ւր ըս ուրթում:
-Ուրթում ըմ ծառը:
-Ծառուն ծողնը չկան,
Ճողնուն տերիվ չկան:
-Իլլիմ մարդու գլոխ,
Ծուծում լեղե:
-Նու ընես ադ տոնդ,
Վեզդ մանդի,
Մաչքդ կոտրի,
Քիցիմ խորոնդում ծավը,
Քրիստոսա հարի մերավը,
Մեյրամում աղոթքավը,
Քրիստոսա հրամանքավը.
Հիսուս Քրիստուս աստյուծ: (№ 36ա)

Գ.
-Բեդո՛,
Բեդնիերո՛,
Քու դեղն ի՞նչ ա.
-Անհալ մեղրը,
Գոգրու ծաղիկը,
Սառը շաքարը:
Կը գովեմ, կը գովասանքեմ,
Ալամ աշխարհքի գլխին կը պահեմ: (№ 99ա)

Դ.
-Կարիճ, կարիճ,
Կապավորիչ,
Ագոռ, ագոռ,
Ագնի ծակին,
Աբեշ կտամ
Իման, իման.
Իրեստ ի՞նչ ա:
-Դեղին զըֆրան:
-Կալած էլնես,
Կապած էլնես,
Օխտը մատով,
Օխտը բթով,
Տասներկու հայրապետով,
Քրիստոսա գերեզմընով,
Այ ջանավար,
Թի՞շ, քի՞շ, քի՞շ: (№ 198)

Ե.
-Ո՛վ գել գազան,
Քեզի ո՞վ կապեց:
-Սուրբ հայր Օսեփ:
-Քանի՞ մատով:
-Ութը մատով, էրկու բթով,
Մայրամ Աստվածածնա ծիու ծծի կաթով:
(№185գ)

Երկխոսությամբ աղոթքները, երբ նկատի ենք ունենում նաև նկարագրությամբ և երկխոսությամբ ասվող հաջորդ ոճաբանական տիպը, զգալի տեղ է բռնում հայ հմայական աղոթաշարում: Դրանց մի մասը թեպետ հորինված է չափածոյով, ընդհանրապես թողնում է թռուցիկ մանրապատումների տպավորություն, ըւր բովանդակությունը զարգանում է բնույթով երկու հակադիր անձանց (հաճախ աստվածային և դիվային էակների) միջև կատարվող հարց ու պատասխանի ձևով, որով իսկ բացահայտվում է յուրաքանչյուրի նպատակն ու էությունը և հաճախ ավարտվում է չարը կանխող հմայական բանաձևով:

Բերված առաջին երկու աղոթքներում (Ա, Բ), որոնք ըստ էության տարբերակներ են, երկխոսությունն առաջին տարբերակում ընթանում է անձնավորված Չար աչքի և Քրիստոսի, իսկ երկրորդում՝ Չար աչքի և աղոթարար հմայողի միջև: Երկուսն էլ ունեն երդվեցական բնավորություն, խիստ բնորոշ լայնորեն տարածված երդմնեցուցական բանաձևերին, ուր չար ոգին աստվածային անձի կամ հմայողի զորության ազդեցությամբ՝ խոստովանում է իր չար արարքներն ու անելիքները և ցանկության խոսքի տարբեր բանաձևերով արժանանում հակառակ կողմի կանխարգելմանը:

Ա տարբերակում Չար աչքի խոստովանանքն արժանանում է Քրիստոսի արգելող հրամանին ու անեծքին, իսկ Բ տարբերակում՝ հմայող անձի անեծքին, որի իրականացման հույսը կապվում է աստվածային զորության հետ:

Գ աղոթքում երկխոսութունն ընթանում է բուժարար հմայողի և «բեդնի յարա» կոչված մաշկային հիվանդության միջև, որով բուժարարը կամենում է իմանալ այդ հիվանդության դեղը: Հիվանդության պատասխանը՝ դեղամիջոցների անվանումն է (այսինքն՝ բուժարարի ցանկության կատարումը) և միաժամանակ դրանց գովաբանումը:

Դ աղոթքը կարիճին «կապելու» (հմայելու, կախարդելու) բանածև է, ուր երկխոսությունը կատարվում է հմայող աղոթարարի և կարիճի միջև: Հմայողը կարիճին կապելու և կրակ տալու սպառնալիքով՝ նրա դեմքի գույնն է հարցնում: Ստանալով պատասխանը՝ նա աստվածային զորությանն ապավինելով՝ կարիճին ենթարկում է հմայական կապքի բանադրանքի:

Ուշագրավ է Ե աղոթքը, ուր գայլը «կապելու» հմայական արարողության նկարագրությունը (տե՛ս գայլկապի աղոթքների ճնշող մեծամասնությունը) վերածվել է աղոթողի և գայլի միջև կատարվող երկխոսության: Գայլին ուղղված ուղղակի հարցումների և պատասխանների միջոցով պարզվում են գայլը կապողի անունն ու կապելու առարկաները և եղանակները: Աղոթողի ցանկությունն արտահայտված է անուղղակի ձևով՝ գայլի տված պատասխանների միջոցով պատժվողի խոստովանության կարգով, որով առավել ազդեցիկ է դարձել աղոթքի հմայական զորության տպավորությունը:

4. Նկարագրությամբ և երկխոսությամբ

Ա.
Հաւբալն Նստեալ
Ի յանհուր և յանջուր և յանեղեմն դաշտին,
Լայր զերդ զայրի,
Եւ ողբայր զինչ զգերի,
Եւ ձայն ածէր զինչ զանեղբայր քոյր:
Հրամայեաց տէրն... թէ՝
-Հաւբալ, է՞ր ես Նստել
Ի յանհուր, ի յանջուր և անեղեմն դաշտին.
է՞ր կուլաս զերդ զայրի,
է՞ր կ'ողբաս զերդ զգերի,
Եւ ձայն ածես զինչ զանեղբայր քոյր:
Հաւբալն արար պատասխանի, թէ՝
-Ի՞նչ ցեղ չի Նստիմ
Ի յանհուր, ի յանջուր և յանեղեմն դաշտին.
Ի՞նչ ցեղ չի լամ զերդ այրի,
Եւ չողբամ զերդ զգերի,
Եւ ձայն ածեմ զերդ անեղբայր քոյր.
Երբ չի ծնանին իմ յղիքն,
Չյղենան իմ երընճնիքն,
Եւ չի արծակեցան իմ գոզարգելքն:
Նա հրամայեաց տէրն... թէ՝
-Մի՛ Նստել
Ի յանհուր, ի յանջուր և յանեղեմն դաշտիդ.
Եւ մի՛ լար զերդ այրի,
Եւ մի՛ ողբայր զերդ զգերի,
Եւ ձայն ածել զերդ անեղբայր քոյր:
Քո յղիքն ծնանեցան,
Եւ քո երընճնիքն յղեցան,
Եւ արծակեցան քո գոզարգելքն:-
Արծակեցաւ երկինք,
Եւ արծակեցաւ երկիր.
Եւ արծակեցաւ ծառայն աստուծոյ...
(Արեղյան 1966, 36)

Բ.
Աննաս և Շիթ և Սիսիատնոս
Եւ Մաթէ և Լուկտան,
Փոկոս, Պետրոս և Պօղոս,
Սոքա գնացին յանապատ տեղ մի
Եւ տեսին այր մի նստած ի վերայ աւազոյ.
Աչքն որպէս ասիկի,
Վիզն որպէս պղնձի,
Ատամունք և գլուխն որպէս վարազի
Եւ երեսն այլակերպ, քան
զամենայն կենդանոյ,
Որպէս ծիոյ ծար
Եւ ատամունքն յետոյ և պռկունքն առաջ:
Հարցին ցնա սուրբքն և ասին.
-Ձի՞նչ ես դու և կամ զի՞նչ գործեալ ես,
Ջստուգն ասայ մեզ:
Եւ նա ասէ.

-Ես եմ ալն չար,
Որ ճստիմ ի վերայ դղացկանի,
Ձմիսն և զխաստայն քաշեմ
Եւ զականջն խորովեցնեմ,
Ձմօրէն զտղայն խզեմ.
Մեր կերակուրն մանր տղայոց միս է
Եւ դղացկանի խաստապ է:
Ձ է [7] ամսու մանուկն գողանամք ի մօրէն,
Խուլ և մունջ տանիմք առ մեծաւորն
մեր յանդունդս:
Մեք ոչ բողումք, որ աղջիկն ի
հարսնութիւն հասանի
Եւ կամ կտրիճն փեսաւութիւն:
Մեր բնակութիւն յանկունս տանց է
Եւ ախոռս անասնոց:
Ահա ասացի ձեզ, ո՛վ սուրբք Աստուծոյ:
Եւ սուրբքն հանին զիրեղեն
սուսերն իւրեանց,
Կամեցան սպանանել զնա:
Եւ նա ասէ.
-Մի՛ սպանանէք զիս
Եւ ես երդնում ի ձեզ,
Որտեղ ձեր անուանքն յիշեն,
Մեք ի նա ոչ մտանեմ[ք],
Ոչ ի տուն,
Ոչ ի ծառայն Աստուծոյ

Աւետիքն, ամէն: (N 1(159)ժ)

Գ.

Կես գիշերին դուրս ելա,
Զարմանալի լույս տեսա.
Շատ աղաչի, ոտքն ընկա,
Ասի, թէ՝ դու ո՞վ ես:
-Ես սուրբ Սարգիսն եմ,
Գալիս եմ Մասիս սարից,
Գնում եմ Արբիտոն քաղաք.
Որդուս անունն է Մարտիրոս:
Բուրվառս է հրեղեն,
Գավազանս է ոսկեղեն:
Ով որ իմձի հիշե երեք անգամ,
Նրան կազատեմ սրից, քրից,
ջրից և կրակից, ամեն: (N 420դ)

Ոճաբանական այս ենթատիպում, նկարագրությունը հարակցվելով երկխոսությանը՝ առաջ է բերել սյուժետավոր ամբողջական պատումներ, ըստ էության առասպելաբանական բնույթի սնահավատական զրույցներ (հմմտ. **Աբեղյան 1966,** 37), որոնց հիմքում ընկած են աստծո, ոգիների, սրբերի արարքների ու գործառույթների մասին եղած տարբեր հավատալիքներ ու պատկերացումներ: Այս խմբին են պատկանում «Թազա հացի հոտ եկավ» սկզբնատողով ծննդկանի աղոթքի բազմաթիվ տարբերակները, որոնցից այստեղ նմուշներ առաջ չեն բերվում որոշակի կրկնություններից խուսափելու նպատակով (տե՛ս § 9):

Ա աղոթքը, թեպետ գոզկապին (միզարգելմանն) է վերաբերում, բայց ամբողջության մեջ արտահայտված է չար ոգու կողմից ամբողջ տիեզերքը (երկինք, երկիր, կենդանիներ, մարդ) «կալելու և կապելու» (=կախարդելու) հավատալիքը, որ տեսնում ենք դաշտերի չորացման (անհուր, անջուր, անբույս), անասունների չբեղմնավորվելու ու չծնելու, մարդու միզարգելման (իմա՝ չորանալու) իրադրություններում, որոնք վերանում են միմիայն աստվածային բարյացակամությամբ ու հրամանով՝ ի հետևանք երկնքի, երկրի, մարդու հմայական չար «կապքի» արձակման: Աստվածային այդ հրամանն էլ հանդիսանում է տվյալ աղոթքի ցանկության իրագործումը:

Բ աղոթքն ամբողջապես հիմնված է ծննդկանին և նորածնին վնասող չար ոգու՝ ալի (ալք) և նրան խոստովանեցնող, երդվեցնող ու վնասազերծող սուրբ անձանց հավատալիքի ու պատկերացումների վրա (մանրամասները տե՛ս սույն համահավաքի ծննդկանի աղոթքների ծանոթագրությունների նախաբանում): Սույն աղոթքը մի բնորոշ նմուշ է միջնադարում լայն տարածում գտած հմայական երդմնեցուցական բանաձևերի: Աղոթքում վիպական իրադրությունների հետևանքն է դառնում ալի երդումը, որն իր կյանքին սպառնացող սրբերին երդվում է՝ չդիպչել այն անձանց, ովքեր կհիշատակեն տվյալ սրբերի անունները: Ալի այս երդմամբ հավաստիացումն էլ դառնում է տվյալ աղոթքի ցանկության բուն նպատակը, որով եզրափակվում է աղոթքը:

Գ աղոթքում կեսգիշերին աղոթողին հանդիպելը և երկխոսությամբ իր անձն ու գործառույթները պարզաբանողը, հակառակ նախորդ աղոթքի, սուրբ Սարգիսն է, ո-

րի հավաստիացնող խոսքը, իբրև հետևանք վիպական իրադրության, դառնում է սրբազան պատգամ՝ ուղղված իրեն հիշող-հավատացողներին, որը և աղոթքի բուն նպատակն է:

Այս առնչությամբ պետք է մատնանշել հետևյալ կարևոր իրողությունը. հմայական աղոթքների բոլոր այն բաղադրյալ տիպերը (անկախ ոճաբանական բնույթից), որոնց վիպական իրադրությունները հիմնված են սրբախոսական կամ առասպելահավատալիքային բնույթի որոշակի սյուժեի վրա, իրենցից ներկայացնում են առասպելաբանական նախադեպի արժեք [հմմտ. **Топоров 1993**, 7]: Նման սյուժեներում ներփակված վիպական պատումները սրբազան նախադեպ-նախօրինակներ են, որոնց հետևանքով բուժվել կամ կանխվել է որևէ հիվանդություն, վերացել կամ կանխվել որևէ պատահար, փորձանք, դժբախտություն: Նման սրբազան պատումներում երբեմն բացահայտ կանխադրվում կամ ակնարկվում է դրանց աստվածային նախադեպությունը: Վերևում բերված Բ և Գ աղոթքներում, օրինակ, «որտեղ ձեր անուանքն յիշեն», «ով որ ինձի հիշե երեք անգամ» արտահայտություններով ակնարկված են այդ սյուժեների սրբազան նախադեպային բնույթը: Իսկ գլխացավի և ատամնացավի աղոթքներում այդ հանգամանքը շեշտված է առավել որոշակի: Սրբեր Սիսիանոսի, Սևերիանոսի լեռներում աղոթելու ժամանակ դևերը երկաթե քերիչներով խառնում են նրանց ուղեղները: Մեռնելիս՝ նրանք խնդրում են աստծոն, թե ով հիշի իրենց անունները՝ թող նրանց գլուխները չցավեն: Այդ պահին երկնքից ձայն է լսվում, թե՝ «Եղիցին որպէս և կամիք»: Կամ՝ սրբեր Անթիմոսը, Կոզմասը, Դամիանոսը և Բակոսը միմյանց հանդիպելով՝ իրենց կամքով իրենց ատամները հանում, գցում են ծովը և աստծոն խնդրում, թե ով իրենց անունները գրի հացի վրա, 12 անգամ երկրպագի աստծոն և այդ հացն ուտի, թող բնավ նրա ատամը չցավի [տե՛ս № 68 աղոթքը և № 57 ծանոթագրությունը]:

Կան սրբախոսական պատումներով կամ դրանց մոտիվներով կերտված այնպիսի բուժաղոթքներ, որոնք առանց որևէ ակնարկի ինքնին գիտակցվել են որպես սրբազան նախադեպեր և արտաբերվել հենց այդ իմաստով: Տե՛ս, օրինակ, փորացավի առիթով ասվող № 73ա-ժդ բազմատարբերակ աղոթաշարը, ծանոթագրություններում բերված Քրիստոսի մասին պատմվող համատիպ զրույցներով: Եվ հարկ եղած դեպքում նման նախադեպային զրույց-աղոթքների վերարտադրմամբ՝ հոգեբանորեն առաջ է գալիս նախադեպային ակնկալվող հետևանքը, որի վերապրումը ինքնին աղոթքի նպատակի իրագործումն է:

5. Նկարագրմամբ և հարցերով

Ա.
Լուծն լծեցի՝
Լուծն կոտրվավ,
Եզն պատռվավ,
Քառասուն մանկունք խլըսան:
Կալեցի, կապեցի,
Անտակ ծովը գցեցի:
Լուծն ո՞նց լծեցիր,
Լուծն ո՞նց կոտրվավ,
Եզն ո՞նց պատռվավ,
Քառասուն մանկունք ո՞նց խլըսան,
Ո՞նց կալեցիր, ո՞նց կապեցիր,
Ո՞նց անտակ ծովը գցեցիր:
Հանուն Հիսուս Քրիստոսի: (№ 29)

Բ.
Իրիք իրիք գեցալ ըն վար.
Իգնի հի՞նչ իլալ՝ կարիճ.
Ճըպատը հի՞նչ իլալ՝ օղն.
Օղնուն փուրավը մին աղ ու մուխեր.
Սև քարեն ցիքիմ,
Սև սալեն ցիքիմ.
Հույս Մարիամ,
Կույս Մարիամ,
Կամ աստուծո,
Հիսուս Քրիստոս աստուծ: (№ 28)

Ա աղոթքի առաջին չորս տողերում ներկայացված է չար աչքի ներգործության իրադրությունն իբրև նկարագրություն, իսկ հաջորդ երկտողը, դարձյալ նկարագրությամբ՝ չար աչքին կալելու, կապելու և Անտակ ծովը նետելու հմայական արարողությունն է, որը աղոթքի ցանկության իրագործումն է:

Այս ամբողջը (իրադրությունն ու արարողությունը) նույնությամբ կրկնվում է աղոթքի հաջորդ տողերում ոճաբանական այլ դրսևորմամբ՝ հարցումներով, որոնց պատասխանը տրված է վերջին տողում (հանուն Հիսուս Քրիստոսի): Միևնույն իրողությունների ոճաբանական տարբեր կրկնությունները սերելով հին ծիսահմայական բնագրերին բնորոշ ավանդույթից, միևնույն ժամանակ խիստ զորացնում են և ամրապնդում հմայական աղոթքի բուն իմաստն ու ներգործությունը (տե՛ս նաև № 29 աղոթքի ծանոթագրությունը):

Բ աղոթքում հարցումներով պարզաբանվում է երեք անձի կողմից ցած իջնելիս կարիճին և օձին նրանց հանդիպման իրադրությունը: Այդ վնասակար զեռունները խորհրդանշում են չար աչքը: Իբրև հետևանք այդ իրադրության՝ հաջորդում է աստվածային զորությանն ապավինած հմայողի բանադրական խոսքը, որն ամփոփում է աղոթքի բուն իմաստը՝ չար աչքին սև քարից ու սև սալից վայր նետելու, ոչնչացնելու ցանկությունը:

6. Ժխտում-արգելումներով և հաստատում-հերքումներով

Ա.
Ո՛չ հաւն ի ծին,
Ո՛չ ջորին ի ծնունդ,
Ո՛չ Ճորոխի ծայն
Ո՛չ բաղեղան ած,
Ո՛չ ոշի պտուղ,
Ո՛չ խլրդան աչք,
Ո՛չ լուլա,
Ո՛չ աքլար մաճկալ.
Չիք ես և չիք դառնաս: (№ 85)

Բ.
Տէ՛ր Աստուած,
Որ ժամ զարքայութիւն քո արարեր
Եւ շինեցեր զդ̄րախտն եդեմ ընդ յարևելս
Եւ հրամայացեր Դ [4] վտակն գետոյն
Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ,
Եւ որ ոչ կարասցեն կալ հակառակ հրամանաց քոց,
Տէ՛ր, նոյնպէս և մի՛ կարասցեն կալ հակառակ ծառայիս Աստուծոյ:
Տէ՛ր Աստուած,
Մի՛ չարակն, մի՛ չար լեզուն,
Մի՛ չար նիաքն,
Մի՛ չար զգայարանքն,
Մի՛ չար միտքն,
Մի՛ տեղատուք,
Մի՛ հանգուցակապք,
Մի՛ ծրարաւորք,
Մի՛ խափուսիկք,
Եւ մի՛ այլ ինչ,

Որ սատանական որոգայթք և գործք,
Զոր սատանական գործովք առնին ազգի-ազգի:
<...> Աստուծոյ կարող զօրութեամբն
Կապեալ եմ զամենայն կապք և զկախարդութիւնք:
Չչար ակն և և զչար լեզուն
Կապած լինին դիմաց ծառայիս Աստուծոյ: (№ 10(228))

Գ.
Գրեալ եմ և եդեալ զմազե սանդուխն և ելեալ եմ յերկինս.
Կապել եմ զարևն և զլուսինն ի կամարն,
Կապել եմ Ք [9000]-ից Ք [9000] աստեղաց:
Կապեր եմ ԳՃ [300] ու ԿԵ [65] գետս ի գնացման,
Կապեր եմ զտուն ի շէն զերերքն ի լերին, զմայրն դստերաւքն:
Չեմ դրեր զմազեղեն սանդուխն,
Չեմ կապեր զարևն և զլուսինն ի կամարն,
Չեմ կապեր ԳՔ [երեք բյուր ինը հազար] ի աստեղաց,
Չեմ կապեր զԳՃ ու ԿԵ [365] գետս ի գնեացս,
Չեմ կապեր զտուն ի շէն և զերերքն ի լերին,
Չեմ կապեր զմայրն դստերաւքն և որդովքն
Եւ զհաւն ձագերովն:
Այլ կապեմ զամենայն մարդու,
Զպարընհի, զնահպի,
Զհայու և զտաճկի,
Զիրան և զկնկաճ,
Զվերին կոպն ի յունքն,
Զունքն՝ ի վերին ճակատն ի գագաթն,
Զմազն ի յերկինքս...
Այլ կապեմ զներքին կոպն ի կուրցն,
Զկուրցն ի սիրտն,
Զսիրտն ի փորն,
Զփորն ի բաքն ի յուտն,
Զուտն ի վերայ սատանայի գլխոյն:
Ոչ երկնից սուն,
Ոչ գետն ի գերանն,
Եւ ոչ ծովուն խուբ,
Եւ ոչ յափին մէջն մազ բուսանի,
Եւ ոչ այս բանիս անցումն լինի՝
Անուամբ աներեին հաւր և որդոյ և սուրբ հոգոյդ,
Այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն: **(Հմայական կապքի և պահպանության աղոթքների ծանոթագրություններ, №1)**

Նախ՝ հարկ է նկատի առնել, որ աղոթքների ոճաբանական այս տիպերը բնորոշ են միջնադարյան գրավոր աղոթքներին: Ա աղոթքը, որ ասվում է մրջնուկի (երեքիկ) բուժման համար, ամբողջապես կառուցված է **ոչ** ժխտականի վրա, որով բացառվում են վիպական իրադրության մեջ բերված առարկաների տվյալ հատկանիշները: Այդ ժխտմամբ բացառումը միանգամայն համախոս է եզրափակիչ աներեքի ոճաբանությանը (չիք ես և չիք դառնաս), որով իսկ հերքվում, չքացվում է աղոթքի նպատակը կազմող հիվանդությունը:

Բ աղոթքը, անկախ իր համեմատաբար բարդ կառուցվածքից, հիմնամասում

հենված է մի արգելականի ոճաբանական կրկնությունների վրա, որոնցից յուրաքանչյուրում հմայական արգելք է դրվում մարդկային մի շարք չարիքների, այդ թվում նաև չար հմայագործության տարբեր տեսակների վրա, իբրև սատանայական չար արարքների: Եզրափակիչ քառատողը թվարկված հմայական արգելքների հետևանք-ամփոփումն է, այսինքն՝ աղոթողի բուն ցանկությունը, որով նա աստծո զորությանն ապավինելով՝ հմայական կապքի է ենթարկում չար աչքն ու չար լեզուն և բոլոր կարգի չար կախարդությունները: Իսկ աղոթքի սկզբի յոթ տողերը՝ աստվածային կամքով եղեմ դրախտի հիմնարկման մասին, բերված են սոսկ որպես համեմատության եզր՝ բուն աղոթքում աստծոց աղերսվող հմայական արգելքներին աստվածային անսասանություն հաղորդելու նպատակով:

Գ աղոթքը նախորդների համեմատ ոճաբանական առանձին տիպ է ներկայացնում, որի վիպական իրադրությունները կառուցված են միևնույն երևույթների նկատմամբ կիրառվող հմայական գործողությունների հաստատման և հերքման հակադրությունների վրա: Ոճաբանական այս երկվությունն էլ հենց այս տիպի աղոթքները դարձնում է առավել արտահայտիչ և բովանդակությամբ հետաքրքիր:

Աղոթքն ունի քառամաս կառույց: Առաջին մասում (առաջին հինգ տողեր) հաստատական գործողություններով ներկայացվում է ողջ Տիեզերքի հմայական կապումն ու կախարդումը: Երկրորդ մասում (հաջորդ 7 տողեր) առաջին մասում նկարագրված բացասական արարքների հերքումն է կամ ժխտումը (չեմ դրեր, չեմ կապեր): Երրորդ մասում այս փոխադարձ հաստատումներին ու հերքումներին հաջորդում է մի նոր իրադրություն. այստեղ նախորդ մասերի Տիեզերքին փոխարինել է Մարդը, իբրև Տիեզերքի կենտրոնի, որի նկատմամբ կատարվում են հմայական կապքի հաստատական գործողություններ՝ համապատասխան Տիեզերքի և Մարդու մասին եղած հնագույն առասպելաբանական պատկերացումների: Չորրորդ եզրափակիչ մասում (վերջին 7 տողեր), դարձյալ հերքումներով (**ոչ** ժխտականի պարբերական կրկնությամբ) հավաստվում են մի քանի ճշմարտություններ, միաժամանակ, ս. Երրորդության վկայակոչմամբ հաստատագրվում երրորդ մասում ներկայացված հմայական գործողությունների հետևանքների մնայունությունը (եւ ոչ այս բանիս անցումն լինի): Այս կերպ աղոթքի համակառույցում, նրա չորս տարբեր մասերի միջև ստեղծվել է ոճաբանական զուգահեռականություն, շնորհիվ առաջին և երկրորդ, ապա երրորդ և չորրորդ մասերում առկա հաստատման և հերքման իրողությունների, որով այս քառամասն աղոթքը ոճաբանորեն դարձել է միասնական ու ներդաշնակ:

11 Հմայական հավատալիքի, արարողության և աղոթքային բանաձևի փոխադարձ կապերի դրսևորումները: - Հմայական հավատալիքներն, ինչպես արդեն տեսել ենք (§ 2), ունեն երկանդամ կազմություն՝ բաղկացած պայմա֊ - իրադրությունից և ակնկալվող ցանկությունից, որոնք միմյանց են հարաբերվում պատճառի և հետևանքի փոխկապակցությամբ:

Երբ հմայական հավատալիքը գործարկվելով վերածվում է հմայական ակտի՝ իր երկու բաղկացուցիչ դրսևորումներով՝ գործով և խոսքով, այսինքն՝ հմայական արարողությամբ և բանաձևով (աղոթք), ապա հավատալիքի միևնույն տիպաբանական կառուցվածքը, պատճառի ու հետևանքի նույն հարաբերակցությամբ, իբրև ինվարիանտային (չփոփոխվող) նախատիպի՝ շարունակում է պահպանվել հմայական արարողության և աղոթքի բանաձևի մեջ:

Հմայական արարողության դեպքում պայման իրադրությունը վերածվում է սիմվոլային իրադրության, այսինքն՝ իրերի և առարկաների սիմվոլներով կատար-

վում է որոշակի համատիպ գործողություն (դիցուք, շերեփն իբրև գայլի խորհրդանիշ դերձանով կապում են սյանը), դրանից, իբրև պատճառի, ակնկալելով գայլի վնասազերծման, «կապվելու» ցանկալի հետևանքը:

Հմայական խոսքի՝ բանածևի դեպքում՝ պայման-իրադրությունը վերածվում է աղոթքի վիպական իրադրության՝ գեղարվեստական խոսքի տարբեր ձևերով ու միջոցներով, որին իբրև պատճառ հետևում է ցանկության խոսքի բանածևը (բանածևերը), իբրև հետևանք կամ արդյունք վիպական իրադրության:

Այսպես. նույն գայլկապի աղոթքում հմայական արարողության մեջ գայլին խորհրդանշող շերեփին, տրեխին կամ նրա երախը սիմվոլացնող ատամնավոր սանդերքին փոխարինում է անմիջականորեն գայլը ինքը, որի նկատմամբ, տարբեր սրբազան միջոցներով նկարագրվում է նրան կապելու գործողությունը, իսկ վերջինիս հետևում են ցանկության խոսքի հետևյալ բանածևերը. «Լիզուն կապվի, ակռեն թափի, / Եկած ճամփեն գա, մոլորի, / Մեր տիրոջը խաչը տեսնի, / Դիվանոնց պես էրթա կորի». կամ. «Գիլի ճամփեն մոլոր անեմ, / Գիլի ատամ խմոր անեմ, / Ոտները՝ թուլ, / Ականջը՝ խուլ» [№ 181 ա, դ] և այլն:

Հմայության այս զույգ ձևերը (արարողական և խոսքային) հանդես են գալիս, սովորաբար, միմյանց հետ սերտ փոխկապակցված: Երկուսն էլ փոխադարձաբար ուղեկցում են միմյանց. արարողությանն ուղեկցում է հմայական բանածևը՝ աղոթքը, իսկ վերջինիս՝ արարողությունը: Սա հմայության զույգ ձևերի դասական դրսևորումներից է:

Սակայն, ինչպես վկայում են հայ և այլ ժողովուրդների ավանդության տվյալները, արարողական և խոսքային հմայության այս փոխադարձ կապը արտաքուստ հաճախ խզվում է, կամ էլ խաթարվում: Շատ դեպքերում հմայական աղոթքը, մանավանդ վերջինիս ծավալուն տեսակները, այլևս պարտադիր չի ուղեկցվում հմայական արարողությամբ, իսկ հմայական արարողությանը չի ուղեկցում վիպական իրադրությամբ աղոթքը, այլ վերջինիս փոխարինում է միայն ցանկության խոսքի բանածևը, այսինքն՝ վիպական իրադրության հետևանքը:

Բայց հարկ է նշել, որ այս երկու դեպքում էլ արարողական և խոսքի հմայության փոխկապակցությունն ըստ էության չի խզվում կամ խաթարվում, այլ շարունակում է գոյատևել, միայն թե այլ մակարդակով ու որակով: Այսպես. հմայական այն աղոթքները, որոնք չեն ուղեկցվում հմայական արարողություններով, մեծ մասամբ օժտված են ծավալուն սյուժեով, որոնց վիպական իրադրական մասերում նկարագրվում է հմայական որոշակի արարողություն, որի հեղինակն է կա՛մ աղոթող հմայագործը, կա՛մ քրիստոնեական սրբեր ու հրեշտակներ, կամ Քրիստոս ու Տիրամայրը:

Այդ կերպ աղոթքին ուղեկցող հմայական արարողությունը իր գործնական կատարողական ոլորտից փոխադրվում է հմայական խոսքի ոլորտը, ներառվում աղոթքի բնագիրը, սյուժետավորվում, վերածվում վիպական իրադրության կամ պարզապես կազմում աղոթքի սյուժետային հիմքը:

Այլ կերպ ասած՝ աղոթքին ուղեկցող գործնական արարողությունը նման դեպքերում վերածվում է բանաստեղծական լեզվի ու տեքստի, և աղոթքն ամբողջությամբ փոխարինում է նաև հմայական արարողությանը, ուստի և վիպական իրադրական մասերում խիստ ընդլայնվում է ու ծավալվում:

Բերենք մի քանի բնորոշ ավանդական նմուշներ.

1. Ողջուն քեզ Մարիամ, մեր Մարիամ.
Ելա ի լյառն Ալալիա,
Մտա ի դասն Ամասիա.
Ամասիա ծով մը կար,

Ծովում մեջը ծառ մը կար,
Ծառանը վրա բուն մը կար,
Բնին մեջը օձ մը կար.
Օսկուն թասը կբեցի,
Արծըրին թասը մակըրթեցի,
Պաճիկ մը պանիր զարկի,
Աշք ընողին կերուցի:
Չար աշքը ճաքի,
Չար սիրտը պառուի,
Փուշը, տատաշը մտնե չար աշքը,
Թու՛, բու՛, բու՛, բու՛, բու՛: [№ 38գ]

Աղոթքի առաջին տասը տողերի վիպական իրադրությունում ներկայացված է հմայագործի ծիսահմայական արարողության նկարագրությունը՝ կապված տիեզերքն ու մարդը խորհրդանշող սրբազան ծառի, վերջինիս վրա բնավորված ստորգետնյա օձի զոհաբերման (տե՛ս № 38 ա ծանոթագրությունը) վաղնջական պատկերացումների հետ: Հմայագործը օձի կաթից պատրաստված պանիրը ճաշակեցնում է չար ակնահարողին (չարը չարով պատժելու դիտավորությամբ), որին հաջորդում է արարողությունից ակնկալվող հետևանքը՝ արտահայտված աղոթքը եզրափակող քառատող անեծքների բանաձևում:

2. - Տիրամար Աստվածամար,
Նստեր ես ծովին քանեար,
Ի՞նչ կուլաս, ի՞նչ կողբաս:
- Ի՞նչդ չլամ, ի՞նչդ չողբամ.
Տրաքեցավ չար նազարեն
Քառասուն ծիս, քառասուն ջորիս:
- Ա՛ռ ֆրանկի դանակը,
Մտի Քրիստոսու պաղչան,
Կտռե իրեք մասսրեն.
Մեկը տու սև սատանին,
Մեկը տու գել գազանին,
Մեկը տու ամենայն չարը փախանին,
Չար մասուրեն՝ չար նիաթին,
Չար նիաթը՝ չար կրակին: [№35գ]

Երկխոսական այս աղոթքում չար աչքից պատուհասված և ողբացող Տիրամորը որևէ սուրբ անձից (այլ տարբերակներում՝ հենց Քրիստոսից) խորհուրդ է տրվում կատարել հետևյալ հմայական արարքը. մտնել դրախտը (Քրիստոսի բախչան), կտրել դրախտային փշոտ մասրենուց երեք ճյուղ և դրանցով հարվածել երեք կարգի չարքերին, այդ թվում նաև՝ չար նայվածքին (նիաթ), իսկ մասրենիները հարվածից հետո, իբրև չարից վարակված՝ գցել կրակն ու վառել:

Հմայական այս արարողության մեջ արտահայտված է նաև դրա ցանկալի նպատակը՝ չար աչքի վնասազերծումն ու ոչնչացումը, որ բանաձևված է վերջին երկտողում:

3. Թազա հացի ֆոտ էկավ.
Ելեք աշեցեք վո՞վ էկավ.
Իրեք իրեք պոզ ծիավոր,
Իրեքն ա կանանչ կապավոր.
Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
Մեկը տղա մանուկ սուրբ Կիրակոս:
Էկավ սարով, իջավ ծորով
Հրեշտակին դեմը բարով:
- Տեր, ու՞ր կերթաս քու երամով:
- Կերթամ տունը հիվընդին,
էրթիկը ծննդկանին,
Ժննժիլ ցկեմ վրա բարծին,
Բալնիք ցկեմ վրա բարծին,
Որ չմարի սիրտը փորի[ն],
Որ չկլորի լեզուն բերնին:
[№ 146ա]

Ծննդկանի այս աղոթքի վիպական իրադրության մեջ ներկայացված է երեք սուրբ ծիավորների ժամանումը, իբրև պատճառ, որին հաջորդում է նրանց գալու նպատակ-հետևանքը: Վերջինիս մեջ արտահայտված է թե՛ հմայական արարողությունը (ծննդկանի բարձին պահպանական նպատակով շղթա, բանալի, դանակ ևն. դնելու ավանդական սովորույթի պատճառաբանումն իբրև սրբազան արարք) և թե՛, միաժամանակ, այդ արարողությունից ակնկալվող ցանկությունը (սիրտը չմարի և լեզուն չպապանձվի), այն է՝ ծննդկանի առողջության պահպանումը:

Նույն երևույթն է առկա նաև միջնադարյան հմայական աղոթքներին բնորոշ երդմնեցուցական բանաձևերում, որտեղ Քրիստոսը, տարանուն սրբերը, հրեշտակները, ճգնավորները և այլք լեռներում, ժայռերի ծերպերում, ծովափին կամ ճանապարհի վրա հանդիպելով չար ոգիներին (չար աչք, ալ, թպղա և այլ հիվանդություններ հարուցողներ), խոստովանեցնում են նրանց արարքները և երդվեցնում՝ այլևս չդիպչել տուժած տվյալ անձին՝ աստծո ծառա մարդ արարածին (տե՛ս №№ 37ա, 1 (159) ա-իգ և համատիպ այլ բանաձևեր): Այս բանաձևերում վիպական իրադարձություններին հաջորդող չար ոգիների խոստովանեցման և երդվեցման իրողություններն արդեն հմայական արարողություններ են՝ բարի և չար ոգիների միջև անմիջապես կատարվող, որոնց հետևում է բարի ոգիների սաստիչ հրամայական-կարգադրությունը, իբրև հմայագործի ցանկության կատարման աստվածային արտահայտություն:

Իսկ երբ աղոթքի ամբողջական բնագրի փոխարեն արարողությանն ուղեկցում են սոսկ ցանկության խոսքի կարճառոտ բանաձևերը, ապա այստեղ վիպական իրադրությանը փոխարինում է արդեն հմայական արարողությունը, որին, իբրև պատճառի, հետևում է ցանկության խոսքի բանաձևը:

Այսպես՝ Լուսինը՝ նոր, / գորտնուկը՝ չոր [№ 88ա],
կամ՝ Դու տի չըքվի, / Գորտնուկն՝ ընտի [№ 89ա]:

Հմայողի սոսկական ցանկությունն արտահայտող հակիրճ բանաձևերը, որոնք, ի դեպ, իրենց պարզ տիպաբանությամբ առավել նախնական բնույթ ունեն, ասվել են նորալուսնի ժամանակ գորտնուկների թվով գարու հատիկներ կամ աղի կտորներ թուրքի գերեզմանում թաղելիս: Կամ՝ **«Չուն էստեղ փջի, / Գորտնուկն էլ էստեղ փջի»** [№ 89 բ] բանաձևն ասվել է Վառվառա կույսի (կամ որևէ այլ սրբի) մատուռի տակ ծու թաղելու հմայական արարողության ժամանակ: Այս արարողություններում գարու հատիկները, աղի կտորները խորհրդանշում են գորտնուկները, որոնց թաղումով և արտաբերված հմայական բանաձևերով ապահովվել է գորտնուկների չքացման կամ վերացման հմայողի ցանկության կատարումը:

Այս և նման հակիրճ բանաձևերը, առանց ուղեկցող արարողությունների հիշատակման, հաճախ մնում են անհասկանալի: Հմայական արարողություններն այս կարգի բանաձևերի նկատմամբ կատարում են նույն դերը, ինչ հմայական ընդլայնված աղոթքներում՝ վիպական իրադրությունները, որոնք պատճառաբանում են ու պարզում այդ իրադրություններին հաջորդող ցանկության բանաձևերի նպատակն ու իմաստը:

Այս տիպի հմայական բանաձևերի նպատակն ու իմաստաբանությունը հենց պարզվում և հասկանալի են դառնում միմիայն դրանց ուղեկցող արարողությունների միասնական համատեքստում: Ուստի, անկախ հմայական արարողության և բանաձևի (գործի և խոսքի) մակարդակների տարբերությունից, նմանակերպ հակիրճ բանաձևերն ու դրանց ուղեկցող արարողությունները իրենցից ներկայացնում են մեկ միասնական ու ամբողջական բնագիր (տեքստ), հար և նման վիպական իրադրություններով ընդլայնված աղոթքներին, ուր վիպական իրադրություններում ներկա-

յացված է հմայագործի, չար ոգիների կամ աստվածային անձանց կատարած արարքների խոսքային նկարագրությունը:

Եվ այդպես, հմայական բնագրերը իրենցից ներկայացնում են *մտքի* (գաղափար), *գործի* (հմայական արարողություն) և *խոսքի* (հմայական բանաձև) եռամակարդակ միասնություն (հմմտ. § 7): Ընդ որում, յուրաքանչյուր մակարդակ հարաբերական առումով իրենից ներկայացնում է միևնույն երկանդամ կառուցվածքն ունեցող առանձին բնագիր: Ելակետայինը առաջին մակարդակն է՝ *հավատալիքը*, որն իբրև տեսական մտավոր ըմբռնում, գաղափար՝ *սրբազան պատգամ* է (աստվածային միտք) և ավանդական՝ ժամանակի և տարածության մեջ (սերնդից սերունդ և տեղից տեղ) փոխանցվող: Այն ձևավորվում է մարդկային խոսքով և վերածվում ավանդական *ասույթի*՝ կաղապարված խոսքային *բանաձևի*, որն ինքնին բնագիր է և մտնում է բանահյուսական ասույթաբանության (պարեմիոլոգիա) ոլորտի մեջ [տե՛ս **Пермяков 1975**, 247-274, **Հարությունյան 1995**, 44-46]:

Երբ ավանդական հավատալիքային ասույթը գործարկվում է իբրև հմայություն, երկրորդ մակարդակում այն վերածվում է սրբազան արարողության՝ պատճառի և հետևանքի միևնույն կապակցությամբ, և դառնում արարողական (ծիսական) բնագիր: Իսկ երրորդ մակարդակում միևնույն կառուցվածքով այն վերածվում է բանաստեղծական սրբազան խոսքի՝ հմայական բանաձևի, որը մի կողմից իր մեջ է ներառում երկրորդ մակարդակի արարողական բնագիրն ամբողջապես և դառնում նրա բանաստեղծական արտացոլումը, մյուս կողմից բավարարվում է սոսկ հմայության ցանկալի հետևանքի բանաձևումով, հմայական պատճառ-իրադրությունը վերապահելով երկրորդ մակարդակի արարողական բնագրին: Դրանով ստեղծվում է տեքստաբանական միասնական կապակցություն երկրորդ և երրորդ մակարդակների արարողական և խոսքային բնագրերի միջև և դրանք դիտվում են իբրև բնագրային մեկ ամբողջություն:

Հմայական բնագիրն իր հիշյալ եռամակարդակ ամբողջության մեջ, ինչպես նշվեց, *սրբազան* է գիտակցվում: Նախ՝ հմայության ելակետը՝ հավատալիքը, վաղնջական առասպելաբանական հայացքով դիտվել է իբրև գերագույն հայտնություն՝ **բան** (միտք իմաստով), որը կաղապարվելով մարդկային խոսքի մեջ՝ վերածվել է ավանդական պատգամի և պարտադրվել սերունդներին ի գործադրումն կամ ի խուսափումն (տաբու-արգելքների դեպքում): Երբ այդ ավանդական սրբազան պատգամները գործադրվելով՝ վերածվում են հմայական արարողության, ապա այդ արարողությունն ըմբռնվում է իբրև ծես, որն ինքնին սրբազան է և իրագործումն է գերագույն հայտնության՝ սրբազան մտքի: Մյուս կողմից՝ այդ արարողությունն ու նրա նպատակը ամբողջությամբ կամ մասնակի դրսևորվելով խոսքի մեջ՝ վերածվում են բանաստեղծական բնագրի՝ աղոթքի: Այստեղ, անկախ հայերեն «աղօթք» բառի ստուգաբանական նշանակությունից (աղաչել, խնդրել), անվանումն ինքնին վկայում է հմայական բանաձևի սրբազան բնույթը, իբրև սրբազան խոսք: Հմայական բանաձևում գործում է խոսքի հմայական զորության հնագույն հավատալիքը, որը միանալով նախորդ մակարդակներում հմայական հավատալիքի և արարողության (ծեսի) սրբայնության գաղափարին՝ առավել է զորացնում հմայական աղոթք-բանաձևի ներգործման ուժը:

Որ հմայական աղոթքն ու արարողությունը ավանդական մտածողության մեջ սրբազան են գիտակցվել, վկայված ենք տեսնում հայոց բանավոր ավանդության տվյալներում:

Հմայական աղոթքների ճնշող մեծամասնությունը, տարբեր սերնդի բանահավաքների վկայությամբ, նախ՝ քրիստոնեական ըմբռնումներով դրվել են սրբա-

զանության որոշակի շրջանակներում, ընդելուզվել քրիստոնեական սրբազան բանածևերով: Բոլոր հմայական աղոթքներն, ըստ այդմ, սկսվել և ավարտվել են տերունական «Հայր մեր» աղոթքով (կամ մեկ այլ աղոթքային բանածևով, ինչպես, դիցուք, վերևում բերված № 1 օրինակում՝ «Ողջույն քեզ, Մարիամ»): Ինչպես հաղորդում է անվանի բանահավաք Աղեքսանդր Մխիթարյանցը՝ «Բոլոր աղոթքների փակն ու բանալին «Հայր մերն է». նրանով սկսում են ու նրանով վերջացնում» [տե՛ս № 4 աղոթքի ծանոթագրությունը]: Երբեմն հմայական աղոթքները զուգակցվում են Մատթեոսի և Ղուկասի ավետարանների հատվածների ընթերցումով [տե՛ս N 1 ծանոթագրությունը]: Աղոթելուց առաջ աղոթողը խաչակնքում է իրեն կամ աղոթվողին, երբեմն էլ հմայվող անձին կամ կենդանուն խորհրդանշող առարկան (դիցուք՝ գայլի խորհրդանիշ շերեփը, սյունից կապելիս և արձակելիս), կամ էլ խաչակնքում է աշխարհի չորս կողմերը: Աղոթքի սրբազան ազդեցությունը զորացնելու նպատակով աղոթքը պարտադիր կրկնում են երեք, երբեմն հինգ, յոթ կամ ինն անգամ, այսինքն՝ միշտ կենտ, սրբազան թվերով:

Բանավոր հմայական աղոթքների մի մասն ավարտվում է քրիստոնեական աղոթքների ավարտին բնորոշ «ամէն» բառով կամ «Հանուն Հիսուս Քրիստոսի» բանածևով: Իսկ գրավոր ավանդված հմայական աղոթքները «ամէն»-ից բացի՝ երբեմն ավարտվում են քրիստոնեական աղոթքները եզրափակող Ս. Երրորդության անվանակոչման օրհնաբանական բանածևերով («Անուամբ Հօր և Որդւոյ... Անուն Հօր և Որդոյ...»):

Այս ամենը, ինչպես նաև հմայական աղոթքներում հաճախ որպես գործող անձինք հանդես եկող Քրիստոսը, Տիրամայրը, տարանուն հրեշտակները, սրբերն ու առաքյալները, նաև վկայակոչված աստվածաշնչյան սրբությունները վկայում են ոչ միայն հմայական աղոթքների սրբազանության հավաստիությունը, այլև դրանց քրիստոնեական բնույթը: Տիպաբանորեն սերելով վաղնջական ժամանակներից՝ հմայական աղոթքներից շատերը, վաղ միջնադարից ի վեր, քրիստոնեական կրոնի նոր ըմբռնումների ու պատկերացումների համաձայն՝ ենթարկվել են վերափոխման, վերանորոգման, կամ էլ դրանց ազդեցությամբ, բայց հին նախատիպերով ստեղծվել են ամբողջապես նոր աղոթքներ: Վերջիններիս բացահայտ վկայություններն են հմայական այն աղոթքները, որոնց սյուժետային հիմքում ընկած են քրիստոնեական հանրահայտ լեգենդներ, սրբախոսական և պարականոն զրույցներ, բոլորն էլ կապված նոր կրոնական անձանց վարքերի ու պատկերացումների հետ:

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա համահավաքն ընդգրկում է բանավոր ավանդված հայ հմայական և ժողովրդական աղոթքների տպագիր և արխիվային ժառանգությունը՝ համալրված աշխատասիրողի և իր գործընկերների կողմից նոր գրառումներով, ինչպես նաև միջնադարյան ախտարային ժողովածուներից քաղված գրավոր աղոթքների նմուշներով:

Բուն հմայական աղոթքները, անկախ իրենց գրավոր կամ բանավոր ավանդման եղանակից, միշտ էլ եղել են արհեստավարժ հմայագործների (բուժարարներ, գրբացներ, թուղթ ու գիր անողներ, տիրացուներ) սեփականություն, ունեցել են ներփակ կենցաղավարում և գործառնական որոշակի նպատակներ: Դրանք կիրառվել են ամենից առաջ մարմնական ու հոգեկան բոլոր կարգի հիվանդությունների բուժման կամ կանխման նպատակով, ապա ամեն տեսակ փորձանք-պատահարներից, բնական ու հասարակական աղետներից, չար ազդեցություններից (չար աչք, չար լեզու, չար ոգիներ), չար հմայությունից անհատին, հանրույթին, ունեցվածքը զերծ պահելու, կանխարգելելու, պահպանելու և, առհասարակ, մարդու ֆիզիկական, հոգեկան, բարոյական, սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր կողմերի ներդաշնակ ու ապահով գոյության ու բարգավաճման նպատակներին: Այս իմաստով էլ հմայական աղոթքներն ունեն շեշտված կիրառական նշանակություն, գործածվել են հատուկ նպատակներով, մեծ մասամբ ուղեկցվել հմայական արարողություններով, հետևաբար և, ըստ կիրառության նպատակների, բաժանվում են տարբեր խմբերի ու ենթախմբերի:

Հմայական աղոթքների այս ժանրային կիրառական հատկանիշներից ելնելով՝ դրանք ներկա համահավաքում դասակարգվել են ու համախմբվել ըստ կիրառության բնագավառների ու նպատակների:

Ժողովրդական աղոթքների ամբողջ նյութը համահավաքում զետեղվել է հետևյալ կիրառական ութ խմբերում.

1. **Բուժաղոթքներ (այդ թվում՝ չար աչքի և ծննդկանի):**
2. **Առողջապահության և մարմնի մասերի մաքրագործման աղոթքներ:**
3. **Փորձանք – պատահարների և բնական աղետների կանխման աղոթքներ:**
4. **Հմայական կապքի և պահպանության աղոթքներ:**
5. **Գործնական նպատակների իրագործման աղոթքներ:**
6. **Երեկոյան և առավոտյան աղոթքներ:**
7. **Ջանազան աղոթքներ (օրվա տարբեր ժամերի, երազի բարի կատարման, պանդուխտի, տարբեր սրբերի, ծիսական, նորալուսնի):**
8. **Ջավեշտական աղոթքներ և պարոդիաներ:**

Այս խմբերից մի քանիսն ունեն հավելվածներ, որտեղ զետեղվել են կիրառությամբ տվյալ խմբին հարող, բայց մեծ մասամբ միջնադարից գրավոր ավանդված աղոթքներ, որոնց մեջ կամ նկատելի են ավանդական-բանահյուսական տարրեր, կամ էլ պարզապես բերվել են տվյալ կիրառական խումբը համալրելու և ամբողջացնելու նպատակով:

Յուրաքանչյուր խմբի ներսում աղոթքների բանաձևերը համախմբվել են իրենց կիրառական կոնկրետ ենթախմբերի տակ, դիցուք՝ գլխացավի, աչքացավի, ծննդկանի, ալի և թպղայի, գայլկապի, հաց թխելու, բանթողի, սերմնացանի, սեր գրավելու և այլն, իսկ ենթախմբերում համակարգվել ըստ տարբերակների տիպաբանական

հատկանիշների, դրանց մերձավորության և հեռավորության սկզբունքների հաշվառման:

Հարկ է նկատի ունենալ, որ միևնույն աղոթքը, մանավանդ դրա հարակցումով (contamination) զարգացած տարբերակները բանավոր ավանդության մեջ կիրառվել են տարբեր նպատակներով, ուստի, ըստ կիրառական խմբերի դասակարգման, դրանք հանդես են գալիս տարբեր խմբերում, իսկ ավելի հաճախ՝ միևնույն խմբի տարբեր ենթախմբերում: Այստեղից էլ առաջ են եկել ներկա համահավաքում նույն աղոթքի կամ նրա տարբերակների անխուսափելի կրկնություններ: Դրանք նվազագույնի հասցնելու, ինչպես նաև բանասիրական-տեքստաբանական արդարացի նկատառումներով՝ տարբեր աղոթքներից բաղկացած այն ընդարձակ ստեղծագործությունները, որոնց հարակցված մասերը բացահայտ տարբեր ու անկախ աղոթքներ են և դեռևս ձույլ ամբողջություն չեն կազմել, անջատվել են միմյանցից, և յուրաքանչյուրը զետեղվել է իր տիպաբանական ու կիրառական համապատասխան խմբում:

Համահավաքում ընդգրկված աղոթքների բնագրերի ճնշող մեծամասնությունը գրառված է ժողովրդական բանավոր ավանդությունից: Դրան կից համահավաք են ներառվել նաև միջնադարյան ախտարային ձեռագրերից կամ հրատարակություններից քաղված հմայական գրավոր աղոթքների մի շարք նմուշներ, որոնք բանավոր ավանդված աղոթքների կա՛մ մերձավոր տարբերակներ են, կա՛մ հեռավոր վարկածներ (version), կամ էլ բացահայտ բանահյուսական ատաղձ ունեցող ստեղծագործություններ. հավանաբար բոլորն էլ նախապես արդյունք են բանավոր ավանդության:

Աղոթքների բնագրերը կազմելիս և տարբերակները բաղդատելիս՝ բառային, բառակապակցային և տողային տարբերությունները, ուղղումները, այլ լեզվյա թարգմանությունները, դրանց վերաբերյալ ծանուցումները համապատասխան տողահամարներով դրվել են բնագրերի տակ: Անմիջապես բնագրերի տակ են համառոտագրությամբ նշվել նաև տվյալ աղոթքի աղբյուրներն ու գրառման տեղավայրերը:

Համահավաքում աղոթքները դասակարգված են հետևյալ կերպ. վերևում գլխատառերով դրված է աղոթքի կիրառման նպատակի անվանումը, տակը՝ դրան վերաբերող բոլոր աղոթքները՝ իրենց տարբերակներով: Աղոթքները համարակալված են ածող թվանշաններով, իսկ տարբերակները՝ նույն թվանշանի կողքին դրված հայկական այբուբենի թվական արժեքներով (ա, բ, գ, դ և այլն): Աղոթքների բնագրերը թողնվել են նույնությամբ, ինչպիսիք եղել են բանահավաքների գրառումներում և միջնադարյան ձեռագրերում: Նկատի ունենալով աղոթքների ճնշող մեծամասնության չափածո բնույթը՝ դրանք ենթարկվել են տողատման կամ վերատողատման՝ ըստ բնագրի տաղաչափական հատկանիշների: Բնագրերում հաճախադեպ հանդիպող լեզվաբարբառային և ուղղագրական (մասնավորապես՝ միջնադարյան աղոթքներում) շեղումները որոշ նկատառումներով չեն ուղղվել: Ուղղվել կամ ճշգրտվել են բացահայտ վրիպակներն ու աղճատումները՝ դրվելով երբեմն ուղիղ փակագծերում, իսկ հաճախ՝ ծանուցվելով տողատակերում:

Համահավաքի երկրորդ բաղկացուցիչ մասն է կազմում **«Ծանոթագրություններ և մեկնաբանումներ»** բաժինը: Այստեղ նախ՝ աղոթքների յուրաքանչյուր կիրառական խմբի ծանոթագրություններից առաջ, նախաբանի կարգով, բերվել են տվյալ խմբին վերաբերող ժողովրդական ավանդության մեջ կենցաղավարած հմայական հավատալիքների, պատկերացումների, արարողությունների այն ընդհանրական համալիրը, որի միջավայրում ըմբռնելի է դառնում տվյալ խմբի աղոթքների և հմայական արարողությունների կիրառման նպատակների և էթնիկահոգեբանական ազդակների իմաստաբանությունը:

Ապա՝ ծանուցումներ են տրվում յուրաքանչյուր աղոթքի խորագրի, բանասացի, բանահավաքի, գրառման ժամանակի, աղոթքին ուղեկցող (վկայված) հմայական արարողության վերաբերյալ, հնարավորին չափ բացահայտվում և մեկնաբանվում են աղոթքում առկա կրոնավիպական անունների, մոտիվների առասպելաբանական ու պատմական հիմքերը, հնամենի պատկերացումներն ու հավատալիքները և առհասարակ ծանուցման ու մեկնաբանման կարոտ բնագրագիտական ու բանասիրական այլազան իրողություններ: Այս առնչությամբ առաջ են բերվել նաև ժողովրդական զրույցների, ծիսերգերի, միջնադարյան գրավոր աղոթքների բազմաթիվ նմուշներ, որոնց տվյալները լուսաբանման եզրեր են ծառայել բնագրերին առնչվող տարբեր հարցերի մեկնաբանման համար:

Համահավաքին կցված է **բառարան**, ուր ներկայացված են աղոթքների բնագրերում առկա օտար, բարբառային հին ու խրթին բառերի բացատրությունները, թեպետ որոշ բառեր (նաև անուններ ու հասկացություններ) աղճատման ու աղավաղման հետևանքով մնացել են անստույգ ու անբացատրելի:

Համահավաքն օժտված է աղոթքների բնագրերի, սկզբնատողերի, գրառման տեղավայրերի, անվանական, առարկայական, աղբյուրների և գրականության **ցանկերով**, ինչպես նաև **ներածական ընդարձակ ուսումնասիրությամբ**:

Հարկ է նշել նաև, որ սույն համահավաքը արդյունք է տարիների տևական ու տքնաջան աշխատանքի: Նյութերի հավաքումն սկսվել է տակավին 1960-ական թթ. սկզբներից, երբ հեղինակը նպատակ էր դրել մի քանի հատորում ընդգրկել հայ հմայական բանահյուսության բոլոր ժանրերի համահավաք բնագրերը՝ դրանց նվիրված ընդարձակ ուսումնասիրությամբ: Աշխատանքները, որոշ ընդհատումներով շարունակվել են նաև հաջորդ տասնամյակներին: Այդ ծրագրի իրագործման առաջին արդյունքը եղավ 1975-ին հրատարակված «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ» մենագրությունը: Երկրորդ արդյունքն, ահա, հմայական-ժողովրդական աղոթքների ներկա համահավաքն է: Իսկ անեծքների, օրհնանքների և երդումների բնագրերը, որոնք կուտակված են հեղինակի ձեռքի տակ, սպասում են իրենց գիտական համակարգմանն ու հրապարակմանը:

Վերջում հեղինակը հարկ է համարում իր երախտագիտությունը հայտնել **Գալուստ Կյուլպենկյան** հիմնարկության Հայկական բաժանմունքի տնօրեն **դոկտոր Զավեն Եկավյանին** և Երևանի համալսարանի հրատարակչության տնօրեն **Պերճ Ստեփանյանին** սույն հրատարակությունը սիրահոժար հանձն առնելու համար: Խորին շնորհակալություն ենք հայտնում սույն աշխատության համակարգչային շարվածքն իրականացնող Մխիթարյան միաբանության աբբահայր գերապայծառ **Եղիա վարդապետ Քիլաղպյանին:**

Համահավաքում կիրառված են հետևյալ համառոտագրությունները.

հմմտ. - համեմատել
ուղղ. - ուղղված է
փոխ. - փոխանակ

Առաջը կետ դրած ·յ կիսաձայնով արտահայտվել է հայերենի որոշ բարբառներում բառասկզբի ձայնավորներից առաջ հաճախ ավելացող յ հագագը (ձայնեղ **հ**):

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա – «Արծագանք», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1895:

ԱԱ – «Արաքս», պատկերազարդ հանդես, Ա գիրք, Պետերբուրգ, 1889:

Աբեղյան 1966 – Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966:

Աբեղյան 1975 – Մ. Աբեղյան, Երկեր, հ. է, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975:

Ագաթանգեղոս 1983, – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1983:

ԱՀ I, նաև ԱՀԱ - «Ազգագրական հանդես», Ա գիրք, Շուշի, 1896:
ԱՀ II, նաև ԱՀԲ ——— ,, ——— Բ գիրք, Թիֆլիս, 1897:
ԱՀ Ե ——— ,, ——— Ե գիրք, Թիֆլիս, 1899:
ԱՀ Զ ——— ,, ——— Զ գիրք, Թիֆլիս, 1900:
ԱՀ IX ——— ,, ——— IX գիրք, Թիֆլիս, 1902:
ԱՀ X ——— ,, ——— X գիրք, Թիֆլիս, 1903:
ԱՀ XIV ——— ,, ——— XIV գիրք, Թիֆլիս, 1906:
ԱՀ XVI ——— ,, ——— XVI գիրք, Թիֆլիս, 1907:
ԱՀ XVII ——— ,, ——— XVII գիրք, Թիֆլիս, 1908:
ԱՀ XX ——— ,, ——— XX գիրք, Թիֆլիս, 1910:
ԱՀ XXVI ——— ,, ——— XXVI գիրք, Թիֆլիս, 1916:

Ալիշան 1895 – Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895:

Աղայան 1976 – է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976:

Աճառյան 1913 – Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Թ., Թիֆլիս, 1913:

Աճառյան 1973 – Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ., Երևան, 1973:

Աճառյան 1977 – նույնը, հ. Գ., Երևան, 1977:

ԱՄ – «Արևելյան մամուլ», ամսագիր, Զմյուռնիա, 1884:

ԱՄԱ – Աղեքսանդր Մխիթարյանցի արխիվ, պահվում էր Լենինականում (Գյումրի), թոռան՝ Կարո Դուրգարյանի մոտ, այժմ գտնվում է ՀԱԲԱ:

Անասյան 1959 – Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագրություն, Ե – ԺԸ դդ., հ. Ա. ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1959:

ԱՆՆ – Գևորգ Տիգրանյան, Առածք, ասացվածք և զրույցք Հայոց Նոր-Նախիջևանի, Ռոստով (Դոնի վրա), 1892:

Ապարանի կամ Բլխերի Հմայիլ– Ապարանի շրջանի Շենավան (նախկ. Բլխեր) գյուղի բնակիչ Գևորգ Սիմոնյանի տանը պահվող ձեռագիր հմայիլ:

ԱՈՒ – Հ. Ալլահվերդյան, Ուլնիա կամ Ջեյթուն, Կ. Պոլիս, 1884:

Աւգերեան, Բ. - Մ. Աւգերեան, Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց, հ. Բ, Վենետիկ, 1811:

Աւգերեան, Դ. - Նույնը, հ. Դ, Վենետիկ, 1813:

Աւգերեան, Թ. - Նույնը, հ. Թ, Վենետիկ, 1813:

Աւգերեան, Ժ. - Նույնը, հ. Ժ, Վենետիկ, 1814:

Աւգերեան ԺԲ. - Մ. Աւգերեան, Մնացորդք վարուց սրբոց արտաքոյ տօնացուցիւն մերոյ յիշատակելոց, հ. ԺԲ, Վենետիկ, 1815:

ԲԱ – «Բյուրակն», հանդես գիտական, քաղաքական և ազգային, Կ. Պոլիս, 1898:

«Բազմավէպ» – հանդես, Վենետիկ, 1902, № 9-10:
Բարխուդարյանց 1895 – Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895:
ԲԲ – «Բյուրակն», հանդես, Կ. Պոլիս, 1899:
ԲԳ – «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1900:

ԳԱԹ – Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:
Գիրք աղօթից – Գիրք աղօթից, որ կոչի Կիպրիանոս, վասն ամենայն ազգ պատահարաց, որք գան ի վերայ մարդոյ, Կ. Պոլիս, 1875, նույնը, Կ. Պոլիս, 1893:
Գիրք սաղմոսաց, – «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» գրքում, Վիեննա, 1929:
Գյումրիի № 1 Հմայիլ – ձեռագիր հմայիլ, գրված 1748 թ. Բաղդադում, վանեցի Դավթի Պետրոս աբեղայի կողմից, որ մինչև երկրաշարժը պահվում էր գյումրեցի Գևորգ Գուրգենի Հովհաննիսյանի տանը՝ ժառանգած տատից՝ Զեբեթիա Հովհաննիսյանից (1864-1947 թթ.):
Գյումրիի № 2 և 3 Հմայիլ – երկու այլ ձեռագիր հմայիլներ, որոնք մինչև երկրաշարժը պահվում էին Գևորգ Գուրգենի Հովհաննիսյանի տանը:
Գյումրիի № 4 Հմայիլ – Ձեռագիր հմայիլի պատառիկ, որ մինչև երկրաշարժը պահվում էր գյումրեցի Կոստիկ Վարդիկյանի տանը:
Գրիգորյան 1970 – Ռ. Հ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970:

Դանիէլ – Մարգարէութիւն Դանիէլի, «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց» գրքում, Վիեննա, 1929:
Դիվան 1996 - Դիվան հայ վիմագրության, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց Գ. Մ. Գրիգորյան, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., Երևան, 1996:

ԵԱ – Գավառացի, Երգեր, առակներ, հանելուկներ, թերահավատություններ Խոտրջրո, Տփղիս, 1903:
Եզնիկ – Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1970:

ԷԱԺՋ – «Էմինյան ազգագրական ժողովածու», հ. Ջ., Մոսկվա – Վաղարշապատ, 1906:

Թագ. երկրորդ – «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Թագաւորութեանց երկրորդ, Վիեննա, 1929:
Թորգոմ պատրիարք - Սուրբք և տօնք Հայաստանեայց եկեղեցւոյ, Գ տպագր., Անթիլիաս, 1981:

ԺԱԲ – Տիգրան Վարդանյանց, Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, Թիֆլիս, 1900:

Լալայան 1983 – Երվանդ Լալայան, Երկեր հինգ հատորով, հ. I, ՀԽՍՀ ԳԱ հրատ. Երևան, 1983:
Լալայան 1988 – Երվանդ Լալայան, Երկեր հինգ հատորով, հ. II, ՀԽՍՀ ԳԱ հրատ. Երևան, 1988:
ԼԲ – «Լումա», ամսագիր, Բ գիրք, Թիֆլիս, 1904:

Խորենացի – Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1991:

Ծնունդք – «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Ծնունդք, Վիեննա, 1929:

ՀԱ – Հ. Ճանիկյան, Հնություն Ակնա, Թիֆլիս, 1895:
ՀԱԲԱ – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ:

FA = Երվանդ Լալայանի ֆոնդ
FB = Տիգրան Նավասարդյանցի ֆոնդ
FF = Այլ բանահավաքների ֆոնդ

Հարությունյան 1960 – Ս. Բ. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, ուսումնասիրություն, Երևան, 1960:

Հարությունյան 1965 – Ս. Բ. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ (բնագրերի գիտական համահավաք), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1965:

Հարությունյան 1975 – Սարգիս Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975:

Հարությունյան 1987 – Ս. Բ. Հարությունյան, Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», № 4,1987:

Հարությունյան 1989, – Ս. Բ. Հարությունյան, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1989:

Հարությունյան 2000 – Սարգիս Հարությունյան, Հայ առասպելաբանություն, մենագրություն, Բեյրութ, 2000:

Հարությունյան 1995 – Սարգիս Հարությունյան, Ժողովրդական հավատալիքներն իբրև բանաձևված ասույթներ և բանահյուսության տեսակներ, «Հանրապետական նստաշրջան՝ նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին», Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1995:

ՀԲՆ – Սարգիս Հարությունյան, Բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:

ՀԺՀ VI – Տ. Նավասարդյանց, Հայ ժողովրդական հեքիաթներ, VI գիրք, Թիֆլիս, 1890:

ՀԺՀ VII – Նույնը, VII գիրք, Թիֆլիս, 1891:

ՀԺՀ VIII – Նույնը, VIII գիրք, Թիֆլիս, 1894:

ՀԺՀ X – Նույնը, X գիրք, Թիֆլիս, 1903:

ՀԹԵ III – Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. III, Երևան, 1969:

Հիշատակարան – Հիշատակարան էվերեկ-Ֆենեսեի, հավաքեց Ալեքս Գրիգորյան, աշխատասիրեց Սեդրաք Գարակյոզյան, Փարիզ, 1963:

-Գնում եմ ծառը:
-Ծառին ճյուղնը չկա,
Ճյուղնին տերև չկա:
-Ծիծո մարդին լեղին քաղեմ:
-Խորանգին ծովը՝
Մայրամ Աստծո աղոթքովը,
Քրիստոսա հրամանքովը.
Թու չար աչքը,
Չար նիաքը,
Չար սհաքը.
Տեր մեր Հիսուս Քրիստուս:
ԱԳ XX, 114/Ղափան

37ա

Ելնէր երթայր չար ակն.
Տէր մեր Քրիստոս ի դեմ դիպաւ և ասէ.
-Ո՞ւր երթաս, չար ակն:
Պատասխանի ետ և ասէ.
-Երթամ յազգս մարդկան,
Զանմեռ մեռուցանեմ,
Զմիսն ուտեմ,
Զարիւնն ծծեմ
Եւ զոսկերքն խռիւ դարձուցանեմ:
Ասէ ցնա Յիսուս.
-Դարձիր յետ.
Չար ակն ի քար թող պատառի,
Չունիս հրաման, որ մերձենաս ի
ծառայիս Աստուծոյ:
Մատենադարան, հմայիլ № 1

37բ

Չար աչքը կերթար,
Քրիստոս դեմ դիպավ, ըսաց.
-Պիղծ անօրեն, հո՞ր կերթաս:
Ըսաց.-Կեռ կոտոշ կարմիր կովին,
Մեծակոտոշ սև գոմշին,
Կացինն ու յուր կոթին,
Սողոմոնն ու յուր թաղկին,
Մանուկն օրոցքին.
Էրիկմարդու աչքե՝
Գլխուն, արևուն,
Կնիկմարդու աչքե՝
Ծծին ու ծամին:
ՋԲ, 15/Ձավախք
ՀԱԲԱ FFI: 75204, 03/Գյումրի

7ՀԱԲԱ իր թաղքին:
9-12ՀԱԲԱ՝

Թե էրիկմարդու աչք է՝
Իր գլխուն ու արևուն,
Թե կնիկմարդու աչք է՝
Իր ծծին ու ծամին:

37գ

Հիսուս Քրիստոս վերս էլավ,
Չար խոռխոտը դեմս էլավ.
. Յո՞ւր կերթաս, չար խոռխոտ:
-Աղեկ կովն ի կթուն,
Աղեկ եզն ի լծուն,
Աղեյ մարդն ի բանուկը,
Աղեկ օրոսքին չոճուխը:
Սև օձը կթեցի, մակրթեցի,
Պաճիյ մը պանիր զարկի,
Աշք ընողին կերուցի.
Իով օր տեսսավ՝ արմնցավ,
Իով օր կերավ՝ ճաթեցավ:
Չար աշքը ճաթի,
Չար բուշտը պառռի:

ԳԲՍ, 640/Սեբաստիա

37դ

Դեն ծաղիկ, դեղին ծաղիկ,
Վարդ բասվավ, մանուշակ էղավ,
Խրխնջաց ի սրտին,
Ուզեց փորը, փքըռ փորը,
Սիրտը սրտին գլոխը,
Հրաման չուներ քեզ մտնելու:
Ելա առի ուրառգալ,
Կտրեցի իրեք նուռ նշանի,
Մեկը՝ խորի, մեկը՝ խոստուկի,
Մեկը ամենայն ցավու դեղի:
Չար աչքը ճամփա էլավ,
Փուշ փշենի մորուք ուներ,
Հրամանե մատներ ուներ:
Հիսուս Քրիստոս դեմն ելավ.
. Յո՞ւր կերթաս, գարշելի շուն:
-Աղեկ կովն ի կաթին,
Այեյ մանույն օրորոցին,
Աղեկ կտրիճն քիյնամեջին:
Գա մայրը, գա Մարիամը,
Հաց կերցնեմ Գայանե կուսին.
Տաճարը Սողոմոնին,
Գավազանը Մովսեսին,
Քնարը Դավիթին:
Սև օձը բռնեցի,
Կապուտ քարին կթեցի,
Էճնաս պանիր հանեցի.
Ով որ կերավ՝ ճաթեցավ,
Ով որ կերավ՝ պառռեցավ:
Քարը գլխուն, քարն ոտիցը,
Քարն ու քացախը արևուն:

ԳԲՍ, 646/Սեբաստիա

37ե

Աղոթիմ բութը մատով,
Անարժանիս բժշկարանի աղոթքով,
Աստվածամոր քաղցր կաթով,
Սուրբ կուսանաց աղոթքով,
Վաթսունուվեց հայրապետաց աղոթքով:
Չար Հուլիանոս ճամփան էլիլ էր,
Գոռալեն, կաթկըտալեն կերթար:
Հիսուս տեմն էլավ ու ասից.
-Չար Հուլիանոս, ո՞ւր կերթաս:
-Կերթամ ամեն աղեկին:
-Ըզտամ քեզի հրաման,
Չի՛ք ըլաս, չի՛ք դառնաս:

ՀԺՀ VIII, 93/Պրիմ

37զ

Չար աչքը չար չարաբանի՝
Քանց շունը կատաղած,
Քանց գետը վարար:
-Պիղծ, ո՞ւր ես գնում
Պիղծ պիղծ անելով,
Կով կով անելով,
Եզ եզ անելով:
Սև սարըմը սև ծոր կա,
Սև ծորըմը սև ֆոր կա,
Սև ֆորըմը սև օձ կա՝
Միսը կե, արիմը խմի.
Հիսուս Քրիստոս:

ԱՀ X, 239/Բորչալու

8 սև շոր կա *ուղղ. ըստ իմաստի և տաղաչափական հատկանիշի:*

38ա

Էլա մորին կնացի՝
Գացինը ծեռս պռնած.
Անդեղ մեգ մեծ մը ծառ մը գար,
Էնվոր մեչը պուն մը գար,
Պունին մեչը մեծ օց մը գար:
Օցը պռնեցի,
Առանց տանագ մորթեցի,
Առանց գրագ էփեցի,
Առանց պերան գերցուցի:
Թեդե, նեխե թափած կլխից
Գդրիս չար ըլանջըխը,
Գդրիս չար աչքը, չար նազարը.
Սև օց, չուբար օց, տեղին օց,

Թեդե, նեխե թափած,
Գդրիս չար աչքը,
Գդրիս չար նեֆեսը.
Իմ ծեռս չըլլա,
Իմ պերանս չի լինի,
Ասվածամոր պերանը լինի:
Սվազլյան1959/Նոր Նախիջևան-Մեծ Սալա

38բ

Հանսա երթանք Գալիլիա,
Գալիլիա լեռ մը կա,
Լեռան մեջը ծով մը կա,
Ծովուն մեջը ծառ մը կա,
Ծառին վրա բուն մը կա,
Բունին մեջը օձ մը կա,
Օձն օխտը պտուկ ունի.
Կթեցինք, մակրդեցինք,
Տիկ մը պանիր կոխեցինք.
Ով կերավ՝ արմնցավ.
Ով չկերավ՝ զարմացավ.
Աչք տվողին աչքը ճաթի,
Չար աչքը, չար պտողը ճաթի:
ԲՍ, 756/Մալկարա

38գ

Ողծուն քեզ Մարիամ, մեր Մարիամ.
Ելա ի լառն Ալալիա,
Մտա ի դասն Ամասիա.
Ամասիա ծով մը կար,
Ծովուն մեջը ծառ մը կար,
Ծառանը վրա բուն մը կար,
Բնին մեջը օձ մը կար.
Օսկուն թասը կթեցի,
Արծըթե թասը մակրթեցի,
Պաճիկ մը պանիր զարկի,
Աչք ընողին կերուցի:
Չար աչքը ճաթի,
Չար սիրտը պառռի,
Փուշը, տատաշը մտնե չար աչքը,
Թո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ:
ԳԲՍ, 638/Սեբաստիա

38դ

Անդնդային ծառ մի կար,
Ան ծառը սև օձ մի կար.
Անծեռք վար առինք.
Անդանակ մորթեցին,
Անկրակ եփեցին.
Ով կերավ՝ ճաթեցավ,
Ով չկերավ՝ պատռեցավ:
ՀԱ, 167/Ակն

38ե

Էլանք գացանք Գալիլիա,
Գալիլիան ծով մը կար,
Ծովուն մեջ ծառ մը կար,
Ծառին վրա բուն մը կար,
Բնին մեջ հավկիթ կար,
Հավկթին մեջ ծագ մը կար.
Ան ծագը անդանակ մորթեցին,
Անկրակ եփեցին.
Ով կերավ՝ զարմացավ,
Ով չկերավ՝ ճաթեցավ:
Աչք ընողուն աչքը ճաթի.
Աղեկ չոճուխին օրնեն կառնին,
Աղեկ կրիյծին փերչըմեն կառնին,
Աղեկ եզան լիծեն կառնին,
Աղեկ գոմշուն կոտոշեն կառնին:
Աչք ընողուն աչքը ճաթի.
Երսուներկու ձի ու ջորի
Էկան անցան Յիսուս պաղչան,
Կարմիր կովը մորթեցին.
Վեվ կերավ՝ զարմացավ,
Վեվ չկերավ՝ ճաթեցավ:
ԲՍ, 396/Պարտիզակ

38զ

Աղոթեմ ուր մատովս, էրկու բութովս,
Սուպ Սերգիսու ձիուն ծարովը,
Քրիստոսու քասղուն կաթովը:
Էլա Ալալիա,
Իջա Գալալիա.
Գալալիա ծառ մը կար,
Ծարը դեղին բուն մը կար,
Բունին մեջը թռչուն մը կար.
Անծեռք բռնեցի,
Անդանակ մորթեցի,
Անկրակ խորվեցի,
Աչք ընողին կերուցի:
Չար աչքը ճաթի,
Չար բուշտը պառռի,
Աչք ընողին աչվին էլլե,
Թո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ:
ԳԲՍ, 638/Սեբաստիա

38է

Ալելուիա լեռ մը կար,
Լերան վրա ծառ մը կար,
Ծառին վրա ծագ մը կար.
Անծեռք բռնեցի,
Անդանակ զենեցի,
Անկրակ եփեցի,
Չար աչքի, չար լեզվի, չար նեֆեսի զոհեցի:
Թանը բթու է,

Դգալը կյուճուկ է,
Չիք ես, չիք դառնաս:
Հիշատակարան, 229-230/Էվերեկ-Ֆենեսե

38ը

Ղըգալը կյուծյուք է:
Պընակը խոր է,
Թանը բըթու է,
Հացը կարի է:
Էլա Կալարիա կընացի,
Անդանակ գինեցի,
Անխալկին էփեցի,
Նազար էնողին կերցուցի:
Չար նազարներ <u>չաքլասըն,</u>
Կէօրեն կէօզլեր փաքլասըն,
Կէօզլերինէ եըլան կիծի դայնար շիշ:
Էքին պիթմետիք քարլատա,
Խօրոզ էօքմետիք եէրլէրտէ,*
Մահ ըլա, մահտաժ ընընա,
Մեր պըլուզը սաղնա,
Տեր մեր, Հիսուս Քրիստոս:
ԲԱ, 647/Կեսարիա

39ա

Քրիստոսի ուբը մատնով, երկու բբով
Չար աչքը արընի,
Չար միտքը կործանի.
Աստվածածնի քաղցր կաթով
Չար աչքը արընի,
Չար միտքը կործանի.
Սուրբ Սարգսին ծիու ձարով
Չար աչքը արընի,
Չար միտքը կործանի:
Հոնան մարգարեն ծկան փորումը աղոթեց,
Սև օձը սև սարի տակին կնքվեց, մկրտվեց.
Չար աչքը արընի,
Չար միտքը կործանի:
ԱԳ X, 240/Բորչալու

39բ

Քրիստոս ուբ մատով, էրկու բբով,
Մայր Աստվածածինը յուր քաղցր կաթովը,
Յոթ անվան ծիու ձարովը
Նստել էր մառմառ քարին, խնդրեր, աղոթեր.
Այս մարդին չար աչքը,
չար փակը կործանվի:
Չուգը ծովում աղոթեց Օնան մարքարեն,
Չգան փորում աղոթեաց՝
Այս մարդին չար աչքը կործանվի,
Հիսուս Քրիստոս, չար միտքը կոր[ծանվի]:
ՀԱԲԱ FAV: 5931, 01

39գ

Քեզի կապեմ կապաններով,
Ուբը մատով, երկու բբով,
Սուփ Սարքսի ծիաև ձարով,
Աստվածամոր քաղցր կաթով,
Սուփ Կարապետու վկաութենով,
Մարանա կուսի, Գարանա կուսի,
Շողակաթ կուսի աղոթքով.
Չար աչքը՝ չար փուշ,
Չար աչքը՝ չար կրակ:
ԳԱԹ, Քամալյանի ֆոնդ III-15/Շուլավեր

40

Աղոթեմ երկու բբով ու տաս մատով,
Քրիստոսի քարամաթով.
Չար աչ, չար փուշ, չար կրակ՝
Անդնդոց անհատակ:
Որն որ ակներ՝ ակնեվ խփեր,
Ուր տուն՝ սով, դուռն՝ ծով,
Սովեն հելնի, հընկնի ծով.
Օրշնյալ տեր մեր Հիսուս Քրիստոս:
Գետն էկավ, եբեր կոճ մի,
Հէլնի էն կոճն ի հէն գետեն,
Հէլնի էն ցավն ի քո անծնեն:
Չա՛ր աչ, զքե կապեմ,
Չէրթաս աղեկ ծիծն ի ծոցին,
Աղեկ բաժն ի բալեղին.
Չա՛ր աչ, զքե կապեմ արեգական գոլեն,
Լուսնի շաւղեն:
Չար աչ՝ չար փուշ,
Չար փուշն ի չար կրակ,
Չար կրակն՝ անդնդոցն. յանատակ:
Յա՛ խաբուն խնդիրկատար
սըրբ Աստվածածին,
Յա՛ սըրբ Գրիգոր Նարեկացի,
Սըրբ Սաֆար Ավետարան,
Մատնամատի Սըրբ Նշան,

---

* Ընդգծված տողերը թուրքերեն են.
Չար նազարները թող ճաքեն,
Տեսնող աչքերը պայթեն,
Աչքերին՝ օձի խայթիչը թունավոր շամփուր դառնա:
Ցանքը չբուսնի արտերում,
Աքլորը չկանչի հանդերում:

Չեր ծեռն եղնի,
Չեր աղոթողն եղնի,
Չեր բժիշկն եղնի:

ԲՍ, 354/Բիթլիս

41ա

Լալա լարթամ,
Ճեղն օնե, տիրև չոնե,
Չար մարդին խոսքը չոնե.
Տըղնը հոռե զընդան է
Պուրուտին փոռռումը
Չար մարդին խոսքը.
Վըսկեռան մես տյուս կկյա,
Չար մարդուց խոսքը տյուս կկյա:

ԱԳ XX, 114/Ղափան

5 փորումը ուղղ. *փռռումը (=փուռ), հմմտ. Բ տարբերակի* պրուտեն փոռնավը:

41բ

Լալան լերթ ա,
Լերթ ա լալան,
Ճեղնը չկա,
Ճեղանը տիրև չկա,
Չար մարդկանցը խոսքը չկա:
Պրուտեն փոռնավը,
Զընդրհորեն փոռնավը
Վըսկեռեն տյուս կյա մեսը,
Մըսեն տյուս կյա, տյուս
Չար մարդը, չար աչքը,
Չար նիաքը, չար սըհաքը,
Թո՛ւ չար աչքը:

ԱԳ XX, 114/Ղափան

42

Չար աչկը, չար սհաքը,
Չար աչկը փոռթ ըլի:
Ընկա Անտակ ծովը,
Հանեցի մի ծաղիկ,
Տվի չար աչկին.
Չար աչկը, չար սհաքը,
Չար աչկը փոռթ ըլի,
Օցը մածուն անի,
Մըերը ուտի:
Չար աչկը, չար սհաքը
Թե կնիկ ա՝ ծծացավ ընգյնի,
Թե մարդ ա՝ ըչկացավ ընգյնի.
Չար աչկը, չար սհաքը,
Չար աչկը փոռթ ըլի:

ՀԱԲԱ FFVII: 7593, 01/Գանձակ(Գյանջա)

43

Իշուխլուրա սարը
Եվ Քամու խաչը.
Չար աչքին՝ չար փուշ,
Չար սհաթին՝ չար փուշ,
Չար մամենտին՝ չար փուշ:
Սուրբ Վարդանեսը և Չըռ,
Սուրբ Փիրդաղի և Կարմիր վանքը.
Չար աչքին՝ չար փուշ,
Չար մամենտին՝ չար փուշ:
Մարիամ Աստվածածինը.
Չար աչքին՝ չար փուշ:
Հունան մարգարեն,
Ծառա սուրբ Հովհաննեսը,
Վառվառ ճգնավորը,
Սուրբ Գևորգը.
Չար աչքին՝ չար փուշ:
Գրիգոր Լուսավորիչը,
Սուրբ ճյնավորը.
Չար աչքին՝ չար փուշ,
Չար սըհաքին՝ չար փուշ,
Չար մամենտին՝ չար փուշ:

Աղոթքին հաջորդում է «Հայր մերը»:

ՀԱԲԱ FFVII: 6483, 01, 02-6484, 00/Սիսիան-Անգեղակոթ

44

Իրեքս իրեք աղբար էանք,
Իրեքս իրեք աղբուր բերանք,
Իրեքս իրեք ծառ տնկեցանք,
Իրեքս իրեք կարմունճ կապեցանք,
Չար աշքը կարմունճեն վար նետեցանք:
-Չար աշք, յո՞ւր կերթաս,
Ջետ շուն օռնաս,
Յետեվանց պոռաս:

ԳԲՍ, 638/Սեբաստիա

45

Անուն հոր և որդու և հոգուն սրբու, ամեն:
Չար աչքը՝ չար փուշ,
Չար փուշը՝ կրակ,
Կրակ անատակ ծովեր:
Իրեք հարուր վացընվեց հայրապետ,
Տասներկու դաս առաքյալ
Ազատեն քեզ չար աչքից, չար լեզվից,
Չար սհաթից, չար դանից:
Ազատող Աստված ինքը ազատի
Դուռը հիվանդին, երդիկը ծննդկանին,
Չի վախենա սիրտը փորին,
Մինչ ի գալոց Քրիստոսին:

Չար աչքը՝ չար փուշ,
Չար փուշը՝ կրակ,
Կրակ անատակ ծովեր:

ԷԱԺԶ, 305/Օշական

46

Այս տունը տերունի է,
Տաճարը Սողոմոնի է,
Պատերը երկաթ է,
Երկաթ չէ, պողպատ է,
Պողպատ չէ, սուր է,
Սուրը պատեն վար կախ է,
Իմաստունը դրանը գոց է:
Ահա, եկա, պոյ ծիավոր.
Իմ ձեռքս չէ, սՒուրբ] Նիկողոսինն է,
Մ[ուրբ] Նիկողոսինը չէ, Աստվածածինինն է:
Չորս, հինգ պիպեր ցանեցի.
Մեկը՝ սատանայի ոտքին,
Մեկը՝ գողին կուշտին:
Չար աչքը ճաթի,
Չար բուշտը պատռի,
Չար նազարը տարտղնի:

ԲԳ, 296/Մարգվան

47

Հիսուս բերդ, Հիսուս պարիսպ.
Պարսպի դուռը չինած,
բալանիքն առ Քրիստոս:
Քրիստոսի գիրքը գրկին,
Սուրբ Նշանը վրա գլխիս,
Ոչ վախի սիրտս փորիս:
Անկանիմ առաջի քո, սուրբ Աստվածածին,
Հիսուսին, Քրիստոսին,
Գավազանը Մովսիսին.
Աղոթք արա սուրբ Մինասին,
Հինգ դաս հրեշտակին,
Չորս գլուխ Ավետարանին.
Սուտը սատանին,
Գելը գազանին,
Իրանց աղոթքով սատակին:
Չար աչքը՝ չար փշին,
Չար աչքը՝ չար փշին,
Չար աչքը՝ չար փշին:

ՀԺՀ VI, 145/Վաղարշապատ

48

Մեղա՜, մեղա, մեղ Աստըծու,
Չոքիմ ու լամ տեմ Աստըծու:
Մեր Տերն էլավ ամպը խաղաց,
Էլավ նստավ փառք աթոռաց,
Խապար էրավ աշակերտաց,
Վաղցընընվեց հայրապետաց.
Չար աչքը՝ չար փուշ,
Չար աչքը՝ չար կրակ:

ԳԱԹ, Ս. Քամալյանի ֆոնդ III, 15/Շուլավեր

49

Հրանիւթ, Հրափայլ, Հրատն,
Համատուն, Համակէգ,
Որ եք սպասաւորք աստուծոյ,
Դուք կապեցեք և պապանձեցուցեք
Զամենայն չար աչք և չար նիէք
Եւ չար լեզու և չար խորհուրդ,
Կապք և կախարդութիւնք
Ընդդեմ ծառայիս աստուծոյ [անուն]:
Չարկամին չար աչքն ի չար փուշն,
Չար փուշն ի բարկ կրակն,
Բարկ կրակն ի քարն,
Քարն ի յանատակ ծովն:
Ամենայն չար աչք և չար նիէք
Եւ չար լեզու և չար խորհուրդ
Եւ չար զգայարանք
Պատառի և խաւար դառնայ
Ի դիմաց ծառայիս աստուծոյ [անուն],
Օգնական և պահապան եղիցի, ամէն:

Մատենադարան, Ձմայիլ № 1 (տպագիր)
Ձմայիլ № 21 (ձեռագիր)
ՀԱԲԱ FB: 1078, 02
ԷԱԺԱ, 228
Feydit 1986, 358-360

1-8 Feydit *չիք*
1 ՀԱԲԱ Հրատաւ
2ՀԱԲԱ Համատած. ԷԱԺԱ Համատուն *չիք*:
5 ԷԱԺԱ զամենայն չար աչքն, չար լեզուն, չար նիաքն:
6 Ձմայիլ № 21 չար խորհուրդք:
7 Ձմայիլ № 21 կապ և կախարդութիւն.
ԷԱԺԱ չար կապանքն և չար դութիւնք:
8 ՀԱԲԱ այսըմ ծառայի Աստուծոյ *[անուն]* խափանեալ եղիցի. ԷԱԺԱ ի դէմս:
9-12 Ձմայիլ № 21 չար աչք ի չար փուշն,
ի բարկ կրակն, ի քարն, ի ծովն յանատակ:
9 Feydit չար կամքն, չար ակն երթայ.
ԷԱԺԱ չարկամին *չիք:*
10 ՀԱԲԱ չար փուշն *չիք*:
ԷԱԺԱ ի չար կրակն:
11 ԷԱԺԱ ի լեռ քարն:
Feydit ի չար քարն:
12 ԷԱԺԱ լեռ քարն:
13 Feydit ուր:
14 Ձմայիլ № 21 եւ չար լեզու չիք:
ԷԱԺԱ *չիք:*
15 ԷԱԺԱ եւ *չիք:*
ՀԱԲԱ զգայարան:

Feydit կապք և կախարդութիւնք գայ:
17 ԷԱԺԱ ի դէմս. Feydit ընդդէմ:
18 Հմայիլ № 21, ՀԱԲԱ, ԷԱԺԱ, Feydit *չիք*:

50ա

Սուրբն Թորոս նստեալ գրէր և
դարձեալ ջնջէր,
Եւ չարակըն պատառէր,
Իւր միտս խառակըն կուրասցի,
Խաժակըն խաւարի,
Դրուցակըն ցամաքի,
Աղի, մաղի, կըմըրխի:
Սարերի ելեւէր հովիւըն ծերունի,
Արածէ զհօտըն ծիրանի,
Կթէ զկաթըն ծէրանի,
Անխաղաց պանիր եհան.
Ով որ տեսաւ՝ զարմացաւ,
Ով որ կերաւ՝ պատառեցաւ.
Նոյնպէս պատառի չար ակն,
Չար միտք, չար սիրտ,
Չար սըհաթ, չար խորհուրդ՝
Ի դիմաց ծառային Աստուծոյ Սիէրի,
Որդի Դաւիթին,
Ամենէն պահպանութեամբ
սրբուհոյ Աստուածածնին
Եւ սրբոյն Յոհաննու Կարապետին,
Եղիցի պահապան Դաւիթին, ամէն:

Սրվանձտյանց1978, 281-282/Խնուս

50բ

Սուրբն Թորոս նստէր գրէր և ջնջէր,
Չար աչքն պատառէր,
Զի մի տեսցէ բարի:
Աշումայ, Աշումիթայ,
Գաբրիէլ, Միքայէլ,
Ուրիէլ, Ըռաբայէլ,
Որ ունիք իշխանութիւն ի վերայ չար յաչից,
Դուք կապեցէք,
Կապեցէք ամենայն չար նիաքն,
Չար խորհուրդն, չար միտքն,
Չար սիրտն, չար լեզուն,
Չար բերանն, չար աչքն,
Չար ոտն, չար ձեռն.
Կապեալ և պապանձեալ եղիցի,
Որ ոչ մերձենայ ծառային Աստուծոյ:

Մատենադարան, Հմայիլ № 19

51

Գայր գետն Յորդանան
Եւ բերէր ծառ մի գեղեցիկ և պատուական.
Եւ կայր ի մէջ գետին խաչանմման:
Սերովբէքն և քերովբէքն շուրջ
նովաւ աղաղակէին և ասէին
-Սա է դեղ ակին ակնահարին,
Տան ակին, դրուցակին, մեղուշակին,
Կապուտ ակին, խաժակին, թուխ ակին,
Սպիտակ ակին և ամենայն չար ակին.
Սա է դեղ ակին երկաթահալի,
Փայտահարի, քարահատի,
ՅԿԵ[366] ցեղ ցաւոց դեղ է գիրս այս:
Չար աչքն ի չար փուշն,
Չար փուշն ի բարկ կրակն,
Բարկ կրակն յանատակ ծովն:
Ամենայն չար աչք և չար նիաք և
չար խորհուրդ
Հածի, պատառի և ի խաւար դառնա
Դիմաց ծառային Աստուծոյ *[անուն]*:

Մատենադարան, Հմայիլ № 1

52

Քրիստոս մի վերնատանն,
Սուրբ Սիօն պատարագեալ էր,
Սուրբ կոյսն զկնի չուեալ եկեալ էր,
Ի հրէիցն խիստ վախեցեալ էր,
Իւր միածին զողորմութեամբն
զնոսա կապեալ էր:
Կապի ամենայն չար աչքն, չար լեզուն,
Ի տիմաց իւրեանց ծառայի Աստուծոյ:

ՀԱԲԱ, FBI: 1078, 01

53ա

Ողորմացող, գթացող քաղցրիկ
Հիսուս Քրիստոս,
Սուրբ Մայր Աստվածածին,
Մեղացս թողություն,
Հիվանդիս ցավին փարատություն,
Չար աչքին պատռտում,
Չար նըֆսին պատռտում:

ՀԲՆ/Շիրակ-Փանիկ

53բ

Քառսուն կուսանք ծաղկականքով՝
Ցավիդ փարատություն,
Ջանիդ առողջություն, արևշատություն,
Բանիդ, գործիդ հաջողություն.
Չար աչք՝ չար փուշ,
Փուշն ու կրակ՝ գեշ մարդու աչքի մեջ:

ՀԲՆ/Շիրակ-Ջաջուռ

54

Տէր Աստուած մարդասէր,
Մարդասէր հոր որդին,
Պահապան և օգնական,
Ի քոյ ողորմութեամբ պահեա ի չար աչաց,
Ի չար լեզուից,
Երեւելեաց և աներևոյթից,
Եւ ամենայն որոգայթից:

Չար աչքը՝ չար փուշ, բարկ կրակըն,
Չար աչքը պատռի և անատակ ծովն ընկնի,
Ի ծառայիս *[անուն]* պահեա ի չար աչաց
Եւ չար լեզուէն
Եւ ամենայն որոգայթից, ամէն:

ՀԱԲԱ FFIV: 6601, 01/Սևան

1(55)

Չար աչքիՙ չար փուշ, բյո՛ւ, բյո՛ւ, բյո՛ւ,
Չար նըֆսիՙ չար փուշ:
Սուրբ Աստված,
Սուրբ և հզոր,
Սուրբ և անմահ, ողորմեա մեզ:
Փառավորեալ և օրհնեալ միշտ,
Սուրբ կուս Աստուածածին,
Մայրամՙ մայր Քրիստոսին,
Մատո զաղաչանս մեր
Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ,
Փրկէ զմեզ զամենայն փորձանաց:
Կոյս ամենամ փառաւորեալ Մարիամ,
Մայր Քրիստոսին և ամենօրշնեալ,
Որ բուժեցեր զանկ ու յելիս,
Զիմունս բուժեա զցաւս անձին,
Ի դառնութեամ ժամանակիս,
Հաս ի թիկունս, անսաց անձիս,
Որ զանարժանս ու զարժանիս
Միօրինակ յիշես, հայիս:
Զիմունս յիշեա զանձինս կարիս,
Գթած աչօքդ զիս հայեսցիս:
Երագահաս քոյին շնորհիւ
Ճարտար մատամքդ յիս մերձեսցիս,
Բարեխօսող հզօր բանիւդ,
Փարատեսցէ զվիշտ վշտագինս,
Ամէն:

ՀԲՆ/Աշոցք-Դագանչի

2(56)

Ի յաւուրն ուրբաթի,
ՁՏէրն մեր խաչեցին.
Աստուածածին ընդդէմ խաչին
Լայր, հառաչէր կողկողագին,
Թէ տէր Յիսուս, ինչ թիւ թուեցան
Եւ թիւ աւուրց կատարեցաւ,
Չար աչքն ի Տէրն մերձեցաւ
Եւ չար խորհուրդ կատարեցաւ:
Հրամայեց Տէրն ի խաչին
Քաղցրաբարբառ հետ ծնողին,
Թէ թիւս որ թվեցաւ
Եւ թիւ աւուրց կատարեցաւՙ
Մարգարէից բանքն լցաւ,
Քրիստոս յերկնից խոնարհեցաւ,
Եկեաւ ի կոյսդ բնակեցաւ,
Ի ծառայոց ապտակեցաւ
Եւ ի խաչին բևեռեցաւ.
Յենց որ չար աչքն մերձեցաւ
Եւ չար լեզուն արձակեցաւ
Եւ չար խորհուրդ կատարեցաւ,
Մարգարէից բանքն լցաւ:
Հրամաեաց Աստուածածին,
Թէՙ Տէր, լսէ քոյ ծնողին,
Որ եմ կանգնեալ դէմ քո խաչին
Արտասառոջ տրտմեալ հոգին.
Կապեմ չար աչքն նենգաւորին,
Չչար խորհուրդն անօրինին,
Չչար լեզուն մեղաւորին,
Որ ոչ մերձենայ զծառայս Աստուծոյ
Տիրացու Բալին այս անուն:
Հրամաեաց Տէրն ի խաչինՙ
-Ով մայր իմ լալագին,
Նոքայ կապէ կաթամբ քոյին կուսին,
Գաւազանաւն Մովսէսի,
Մկրտութեամբն Յոհաննէսի,
Բանք բերանոյն Յովաննէսի,
Ի խաչափայտիւն Քրիստոսի,
Որ ոչ մերձենայ ի քո ծառային:
Ելաւ չար աչքն նենգաւորին,
Չար լեզուն մեղաւորին
Եւ չար խորհուրդն անօրինին:
Դէմ դիպաւ Աստուածածինն
Եւ բարկացաւ ի վերայ երեքին.
-Ու՞ր կերթայք, թշնամիք խաչին:
Նոքա ասեն. «Երթանք հաենք գառն ի կործի,
Ջաղեկ մանուկն իւր բանին,
Ջարուեստաւորն իւր գործին»:
Հրամաեաց Աստուածածին.
-Ով անիծեալ թշնամիք,
Չունիք հրաման յորդուն մեր:
Անուանքն լինի ով որ ասէ
Բոլոր սրտիւն և աղաչէ Աստուածածին,
Թէՙ Տէր լսէ իւր ծնողին,
Ոչ վախենայ ի գիշերին,
Ոչ գայթակղի ի ցերեկին,
Ի չար աչից նենգաւորին,
Ի չար լեզուն թէ չար խորհուրդ անօրինին.
Նոքա պատառին և խաւարին,
Խաւար դառնան ի դէմ ծառային
Աստուծոյ *[այս անուն]:*

Մատենադարան, ձեռ. № 6678, 38ա

15 եկեայ, *ուղղ. ըստ իմաստի:*
39 նենգայորին. *ուղղ. ըստ ձևի, իմմտ.*
26 և 56 տողերը:
45 երթայք հաեքն. *ուղղ. ըստ ձևի:*
50 յորտուն:
55 ձերեկին:

Բ. ՏԱՐԲԵՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (№№ 57-145)

ԳԼԽԱՑՎԻ

57

Շեկեկը մտավ խոտի դեզը,
Երկաթը հենց կերավ,
Ոնց որ խոտը՝ եզը,
Առավոտահաս սուրբ Գեորգի անեծքով
Վե՛ կաց, դուրս ել, Շեկեկ:

Տաշրացի 1887, № 126/Լոռի
ԱԳ X, 242/Բորչալու
ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆոնդ, № 131

1 ԳԱԹ Շեկիկ:
4 ԱԳ X, ԳԱԹ առավոտյան.
ԳԱԹ սուրբ Գեորգի աղոթքով:

ԱԿԱՆՋԱՑՎԻ

58

Գնացինք լեռը,
Բռնեցինք մեկ սև օձ,
Կթեցինք տասերկու պտկեն,
Կեսը լցինք աննկաջը,
Կեսն էրինք պաճիր՝
Կերավ հիվանդը.
Խեթքը կտրավ,
Հիվանդն առողջացավ:

ԷԱԺԱ, 186/Շիրակ
ՀԱԲԱ, FFI: 7524, 04/Գյումրի

ԱՉՔԱՑՎԻ

59

Էլլա կնացի Մոսես սարը.
Հոն մեծ գոլ գա,
Գոլին մեչը մեգ հադ կեղ գա,
Կեղին մեչը մեծ ծառ գա,
Ճառին վրան պունա գա,
Պունային մեչը մեգ հադ ծու գա,
Ածո մեչն ալ մար օց գա.
Օցն ալ բալաներ ունի,
Օցն ալ մազ ունի:
Առի սուր տանագը,
Խոթեցի օցին պերանը,
Ճաշտեցի խաֆան.
Աչքին լուսը խլեցի,
Օհանիս լուս պերի:

Փորքշեյան1971, 97/Նոր Նախիջևան

60

Մեր ու վուրթին չորեք ճամփին
Դիփ լացեին, դիփ գոչեին:
Քրիստուս ճանապարհն անց էր կենում.
-Ո՞ւր իք լաց ըլում, ո՞ւր իք գոչում:
Սիվ օցը կթում էին,
Մածունը մերում էին,
Ով անց էր կենում՝ աճկն էր դիփչում.
Աճկը, աճկը, աճկը:
Քրիստուս նրա աճկը հանե,
Քար ու քացախը մեչն անե,
Փուշ ու տատաչի անե:
Աչն ու խաչը քիզ վրա:

ԹՄԿ, 18/Թիֆլիս

ԱԿՆԱՀԱՏԻ[12]

61ա

Մեր տան եդի կռնեն՝ մի կալ,
Կալի միջին՝ մի դեզ,
Դիզի միջին՝ մի հասկ,
Հասկի միջին՝ մի հատիկ.
Հատիկը գցի անդունդը:
- Ա՛յ հատ, դու այստեղ ջուրն ընկի,
Ա՛յ հասկը, դու էլ կալն ընկի:

Տաշրացի1887, № 126/Լոռի
ԱԳ X, 241/Բորչալու

61բ

Միր կտիր էդնեն ծով կա,
Ծովի մեչը կալ կա,
Կալի մեչը դեզ կա,
Դեզի մեչը խուրց կա,
Խուրցի մեչը հատիկ կա,
Հատիկ կուտանք, կու հանինք:

ԹՄԿ, 17/Թիֆլիս

61գ

Մեր տան ետի կողմը մի ծով կա,
Ծովի ետի կողմը մի կալ կա,
Կալի միջին մի դեզ կա,
Դեզի միջին յոթ խուրձ կա,
Յոթ խրձան միջին յոթ հասկ կա,
Յոթ հասկի միջին յոթ հատիկ կա.
Հատի՛կ, հատի՛կ, վեր ընկի,
Աչքի հատիկ, վեր ընկի:

ՀԺՀ VII, 134/Լոռի-Հաղպատ

---

[12] Ունի մի քանի համանիշ. *աչքահատ, աչքի հատ, աչից հատ,*- աչքի մեջ գոյացող հատիկանմման սպիտակ բիծ:

61դ

Մեր դռան առաջը ծով կա,
Ծովի վրա հալ կա,
Հալիճ վրա հասկի կա,
Հասկին վրա հատ կա.
Հատը կլորի, ընկնի ծովը:
Ութը կանոն սաղմոս,
Դու բարեխոս ըլլիս:

ՋԲ, 4/Ջավախք
ՀԱԲԱ, FFI: 7520, 04/Գյումրի

62

Նախրքաշը մե գյուղըմ կա,
Գյուղին մեչը մե ծառըմ կա,
Ծառին վրա մե բունըմ կա,
Բնին մեչը մե ծագըմ կա,
Ձագին բերանը մե հատըմ կա.
Ան հատը ֆյոն հալի,
Աս հատը ֆյոս հալի:

ԳԱԹ, Ս. Քամալյանի ֆոնդ, III-15

63

Փողոցումը բուրթի էին խաղում,
Բուրթին թրավ, աչկն ընգավ,
Աչքը արնով լքցվեց.
Վեր [ը]նգավ չորս ճա[մ]փի մեջտեղը,
Նստել էր լաց էր ըլում ու գանգատվում էր:
Մայր Մարիամը անց էր կենում, հարցրեց.
- Ի՞նչի ես լաց ըլում,
Անցկաց թտի մեր խեվի տակովը,
Քաղի եիրեք թհարը խոտ,
Եիրեք անգամ քսի,
Եիրեք անգամ փչի,
Կհանգչի կերթա:

ՀԱԲԱ, FAV: 5730, 01/Թիֆլիս

64

Նստեր էր սուրբ Երաշելին,
Կուլար իրեն բերանովը,
Ըսաց Տեր մեր Հիսուս Քրիստոսը.
- է՞ր կուլաս, է՞ր կը ողբաս:
Ըսաց. «Աչից հատ է ընկեր,
Արուն է կաթեր»:
Ըսաց. -Առ ըստակը,
Քցե ջուրը,
Քաշե հատը
Հրամանոք Աստուծո
[Այս անուն] մարդու:
Շինողքը շինեցիր,
Գնալը գնացիր,
Անդանակ մորթեցիր,
Անկրակ խորվեցիր,
Անատակ ձգրտեցիր:
Ինքը սիպտակ,
Ջագը սիպտակ,
Ջգեստը սիպտակ.
Անցավ գետը,
Կորավ հատը
Հրամանով Աստուծո
[Այս անուն] մարդու:

Ջ. Բ, 5/Ջավախք
ՀԱԲԱ, FFI: 7521, 01/Գյումրի

17-19 ՀԱԲԱ ճերմակ:
22 ՀԱԲԱ *չիք:*

65

Օխտը լուծը,
Օխտը սամի,
Օխտը սմոտեն,
Օխտը հետ ասեմ,
Աչքի հատ վերցի,
Քեզ փրկի.
Հայր մեր, որ յերկինս...

ԱԳ, X, 242/Բորչալու

5 հետ, *ուղղ. ըստ իմաստի:*

66

Մեր Տերն խաչին չարչարեցավ,
Հավատացող մարդը զորացավ,
Անօրեն չարչարողը տկարացավ,
Կույրին աչքերը բացվեցավ,
Վրայեն հատը վերցվեցավ,
Աստծու զորությամբը լավացավ,
Աշխարհս բոլոր աչոք տեսավ,
Իր տեր Աստուծմեն գոհացավ:

ԷԱԺԱ, 184/Շիրակ

ՀԱՎԿՈՒՐԻ

67

Հավկուրը միտս է,
Հավը խտիտս է:

ԹՄԿ, 19/Թիֆլիս

ԱՏԱՄՆԱՑԱՎԻ

68

Անքիմոս, Կոզմաս,
Դամիանոս եւ Բակոս
Առ միմեանս եկին
Եւ իւրեանց կամաւն զատամունսն քաշեցին
Եւ ի ծովն ընկեցին
Եւ յԱստուծոյ խնդրեցին.
- Եթէ ոք զմեր անուն

Ի վերայ հացին գրէ
Եւ Աստուծոյ ԺԲ[12] ծունր կրկնէ
Եւ զայն հացն ուտէ,
Այլ ոչ ցաւի ատամն:
Մատենադարան, ձեռագիր № 8428, 45/68/

1 Կողմաս *ուղղ. կոզմաս, հմմտ.*
№ 35ժա և այլուր:

ՋԱՆՋՈՂԻԿԻ[13]

69

Երկվորյակներ ծնած կնոջը կանգնեցնում են ձանձողիկով հիվանդի գլխավերևը. նա իր շապիկի փեշը գցում է հիվանդի վիզը և հարցնում.

- Ջանձողիկ, հե՞ր իս էղի:
Հիվանդը.- Յերկըվորիկ հե՞ր իս բերի:
Կինը.- Ես բերի ու պրծա:
Հիվանդը.- Ես լե էղա ու պրծա:

ԱՀՋ, 46/Բուլանըխ
Մովսիսյան1972, 63-64/Բուլանըխ

ԿՈԿՈՐԴՈՒՄ ՊԱՏԱՌ ՄՆԱԼՈՒ

70ա

Գնացի ծառավ ախպուրը,
Ծառավ ախպրի վրեն ծառըմ կար,
Ծառի վրեն բունըմ կար,
Բունը վեր առա՝ մեջը ծիտըմ կար.
Ծիտը վար առա՝
Անդանակ մորքեցի,
Անկրակ էփեցի,
Աստուծո հրամանքով,
Մայր Աստվածածնա քաղցր կաթով
Թիքի հանգույցն արծրկեցի:

ՋԲ, 6/Ջավախք
ՀԱԲԱ, FFI: 7521, 02/Գյումրի

2 ՀԱԲԱ *ծառավ չիք:*
4 ՀԱԲԱ *բնի մեջ ծիտըմ կար:*
9 ՀԱԲԱ *մայր չիք:*
10 ՀԱԲԱ *հանգուստն:*

70բ

Ծառի տակին մի բուն կա,
Բնի միջին մի ղուշ կա.
Անդանակ մորքեցին,
Անկրակ էփեցին,
Անբերան կերան,
Աստծու կարող զորությունով
Հիվնդի թիքեն հալածավ:

ԷԱԺՄ, 184/Շիրակ

71

Մերն ու վուրքին
Չորեք ճանփին նստած ին.
Սիվ օցը կբեին,
Մածունը մերեին,
Ով կուտեր՝ կու տրաքվեր,
Ով կու տեսներ՝ զարմաներ:

ԹՄԿ, 17/Թիֆլիս

72

Խաչըմ կէր ի սուրբ լերին,
Փուշ դժնիկ է կերակուր նորա.
Աղաչեր եմ վասն տղայի բրդուճներուն,
Թե ի բերանն է,
Թե ի յատամունքն է,
Դեղն ե՛ս ածեմ,
Տե՛ր Հիսուս աստված, ելնի, ամեն:

ՀԱԲԱ, FAV: 3089,03/Ոշտունիք

ՓՈՐԱՑԱՎԻ[14]

73ա

Քրիստեոս Տերս էկավ հուրը (հյուր),
Պառկեցավ քարե մսուրը.
Կուճուկ գդալիկ,
Խոռ պնակիկ,
Թթու բանիկ,
Գարու հացիկ,
Հորն աղեկութանը,
Մորը գիշութանը՝
Չար աչքը ճաթի,
Չար բուշտը պառռի,
Խոստուկը կըլյի,
Աչք ընողին աչքը փրթի,
Թու՛, թու՛, թու՛:

ԳԲՄ, 639/Սեբաստիա

73բ

Քրիստեոս Տերս հուր էր.
Օքևանքը մսուր էր,
Խոռ պնակիկ,
Թթու բանիկ,
Կուճուկ գդալիկ,
Թուճյի կտիկ,
Տուր *[ամուն]* բժշկություն:

ԳԲՄ, 639/Սեբաստիա

---

[13] Ջանձողիկը ծանր բկուռույցն է կամ բկացավը, բեթևը կոչվում է *կմունք:* Այս երկխոսությունը կրկնվում է երեք անգամ (ըստ բանահավաքի ծանուցման):

[14] Ժողովրդական խոսակցական լեզվում կոչվում է նաև *սանջու, խոցտուկ, խիթ, դոլինջ:*

73գ

Քրիստոս ու՞ր է,
Տակը մսուր է,
Գլխատակը տաշեղ է.
Այրն բարի է,
Վախեցածը սուր է,
Կնիկը չար է,
Քարղանը խոռ է,
Միջինը մարխոշ է,
Գտալը պոչչիկ է:
Երկնավոր թագավորս փրկութենը կուտա.
Այս տղայիս սիրտը՝ տեղը, լերդը՝ փորը:

ՋԲ, 17/Ջավախք

73դ

Քրիստոս մեզի հուր էկավ
Ավանակին մսուրքը,
Գավազանը բարձ ըրավ,
Փիլոնը ծածկոց ըրավ.
Կուճուկ դգըլիկ,
Խոռ չանախիկ,
Թրու բանիկ,
Գարի հացիկ.
Խոստու՛կ, թող, խոստու՛կ, թող:

ԲԱ, 471/Պարտիզակ

73ե

Մեր Տերն էկավ մեզի հյուր,
Տեղն էր մսուր՝ չանաղն էր խոռ,
Գդալն էր պոչատ՝ քանն էր թթու,
Հացն էր գարի, կինն էր բարի,
Իր անհավատ մարդն էր չարի.
Տեր Աստծու կարող զորութենով
Կտրի, չքվի *[այսինչի]* սանճուն:

ԷԱԺԱ, 185/Շիրակ
ՀԱԲԱ, FFI: 7522, 02/Գյումրի

73զ

Մեր տերը մե խուր,
Տեղիկը մսուր,
Հացիկը գարի,
Թանիկը թթու,
Քթելը պոչատ,
Մարդիկը պարի,
Կնիկը չարի,
Հիսուս Քրիստոս աստված:

ԱՀ IX, 12/Վայոց Ձոր-Ազատակ

73է

Քրիստոս խուր էր մամկեն.
Տեղ մսրենին,
Բարծ մսրանին,
Օթիկ էր քան,
Պոլըտ գդելիկ:
Կինն էր չար,
Մարդն բարի,
[Տղի փոր սանջուն բռնեց].
Քրիստո՛ս,
Դու դեղ էնես տղի փորին:

ՀԱԲԱ, FAV: 3079, 02/Ոշտունիք

73ը

Քրիստոս մեր դուռը դեմ առավ,
Քարը բարձ արավ,
Հողը դոշակ արավ.
Թթու մածուն, գարի հաց,
Խոռ դգալ, խոռ պնակ, մեջը բրդած:
Ան ողորմելի էրկանը,
Ողորմելի կնկանը,
Առ քոնդերեն ծաղեկը,
Կտրե *[այսինչ անուն մարդու]*
Չար աչքը, չար փուշը, չար կռնան:

ԱՀ IX, 50/Նոր Նախիջևան
Փորքշեյան1971, 96/Նոր Նախիջևան

5 Փորքշեյան մեջը բրդած հաց:

73թ

Քրիստոսը մեր շեմը նիսաֆիր,
Խուռ աման, կոճակ դգալ,
Գարիի հաց, թութու քան,
Կինը չար, էրիկը բարի,
Երեխան ինչի՞ գուլա կատաղի:
Չար աչքին, չար փուշին,
Չար նեֆեսին տերն է.
Կտռի օրմանը, կտռի չարմանը,
Կտռի չար աչքը, կտռի չար նեֆեսը՝
Սուրբ Սարքիսին մկլախը,
Սուրբ Գևորգին թոփուզը.
Տասներկու ժամի զորուբինով
Աստվածամոր աղոթքը՝
Քրիստոսին բերանը:

ՀԱԲԱ, FFIII: 2539, 01/Նոր Նախիջևան-Չալբր

73ժ

Քրիստոս մեր դունը էգավ,
Խարիբգիթին դունը մդավ,
էրիգը պարի, գնիգը չար,
Թութու մածուն, կարիի հաց:
Քրիստոս Դեր էգավ, դեսավ, մեղքցավ.

Գդռե չար աչք,
Գդռե չար նազար երեխային.
Չար նազար սև նաշով թաղինք,
Մեր Սինասին առոխչութին բերինք:
Փորքշեյան1971, 95/Նոր Նախիջևան

73ժա

Խոռ պնագ, խոռ տկալ,
Թութու մածուն, թանաբուր.
Սառը մսուրք նստիլ իմ,
Գուդիմ, գըխմիմ,
Պայց զավագս սիրդես տուս չի կալ,
Չար աչքը երեխայիս ծոցիցս հանից.
Չար աչքը՝ չար փուշ,
Չար փուշը աչքը փաթլամիշ անե,
Զավագս ազադե,
Գդռե չար աչք,
Գդռե չար նազար:
Փորքշեյան1971, 95-96/Նոր Նախիջևան

73ժբ

Ինքը սուրբ,
Տեղը մսուրք.
Թթու բան,
Պոչիկ գդալ,
Պռատ խան:
Ով սուրբ Աստվածածին,
Դու կտրես *[այսինչի]* սանջուն:
Տաշրացի1887, 126/Լոռի ԱԳ X, 245/Բորչալու

5 Տաշրացի պռան, *ուղղ. ըստ ԱԳ X:*

73ժգ

Դռչին, բռչին,
Ղորիկ խան,
Թթու բան,
Փետե խան,
Մե կտոր գարեհաց,
[Այսինչի] փուրին դի՛դ, դի՛դ, դի՛դ:
ԹՄԿ, 18/Թիֆլիս

73ժդ

Մուսլուխը՝ դոշակ, քարը՝ բարձ,
Թթու բան ու գարի հաց
Քրիստոս Տերն կերավ՝ հանգստացավ.
Ցավերդ ամենը հանգստանան:
ՀԱԲԱ, FBI: 1195, 02/Ղրիմ

74

Ավագ ծորում մի ծառ կա,
Ծառի վրեն մի ճյուղ կա,
Ճղքի վրեն մի բույն կա,
Բնի մեջը մե ձում՛կա,
Չվի մեջը մե ծագ կա,
Ճագի բերանը մե կապ կա:
Էն կապն ընտեղ արծկվի,
Էս սանջուն էլ՝ ըստեղ:
ՍԴ 1885, № 24/ Շիրակ

75ա

Խեթ անցավ խոցեաց,
Քրիստոս անցավ խաչեաց,
Չէր խաչեալ, այլ ննջեալ էր:
Եկին երեք աբեղա ի Լիբանանէ,
Գնացին ի դրախտն կանափին.
Մին հանեց, մին կանեց,
Մին հանգորց արկաներ վերա և ասէր.
Կապի՛ և կտրի խեթ ծառայիս Աստուծոյ:
ՀԱԲԱ, FAV: 3089, 01/Ոշտունիք

75բ

Իջին Գ[3] այր աբեղայ ի դուռն
սուրբ Սիոնին,
Քաշեցին Գ[3] շուղ կանափ.
Մինն կանէր,
Մինն մանէր,
Մինն զհանգոյցն հարկանէր:
Այսպես և ես մեղաւորս
Կապեմ զցաւն ծառայիս Աստուծոյ:
Մատենադարան, ձեռագիր № 8428, 73/82/

76

Սուրբ կոյսն Մարիամ
Ելեալ ի լեառն ծիթենեաց,
Չայնեաց Գ[3] անգամ
Եւ ասաց թէ.
- Ա՛ռ զդանակն Գ[3] բևեռէն
Եւ մուտ ի դրախտն տէրունական,
Կտրէ զկանափն որ է անցան,
Ոլորէ և Գ[3] տակէ և ասա թէ.
«Ելավ պեղծն յանկարծակի,
Քան զէշ հառաչեց,
Քան զառիւծ մռնչեց,
Քան զօձ գալարեց»:
Հրամայեաց Տէրն մեր Յիսուս
Քրիստոս և ասաց.
- Ո՞ւր երթաս, պե՛ղծ:
Եւ նա ասէ.
-Երթամ ի յաղեկ ծին և ի ջորին,

Ի մատղաշ մանուկն յօրորոցին,
Յաղեկ եզն ի լծին
Եւ յաղեկ գոմեշն ի գութանին,
Յաղեկ կովն ի կթին,
Ի գառն և ի մաքին,
Ի պատկերով այրն և կինն.
Տապ լինիմ, տօթ լինիմ,
Ջսիրտն մաղմտացնեմ,
Ջաղեքն գալարեմ,
Գահօր և դոլինջ առնեմ:
Սաստեաց ի նա Յիսուս և ասաց.
-Պիղծ դժնիկ, ո՛չ ունիս հրաման
Մտանել ի ստեղծուածս Աստուծոյ
Եւ ոչ ի ծառային իմ ի Գալուստն:

Մատենադարան, Հմայիլ № 22

77

Ես տեսա՝ շուն շան միս կերավ,
Իմ ձեռք՝ խոլնջի դեղ:

ԱԳԶ, 48/Մուշ-Բուլանըխ

78

Քու փոր թորկե՝
Աղվըսուն բռնե:

ԱԳԶ, 48/Մուշ-Բուլանըխ

ՔՈՍԻ

79

Աստվածածնի մատով,
Լուսավորչի խաչով՝
Արտ ա ցաներ,
. Յափն ա բուսեր.
Մեր տերն ա էկեր,
Տեսեր, զարմացեր,
Ասեր ա՝ չիք ես, չքանաս,
Ապառաժ քարեր բուսանաս:

ԷԱԺԶ, 299/Ալաշկերտ

ԵՐԵԹԻԿԻ[15]

80ա

Էրեթիկ, կըթիկ մըթիկ,
Էրեթիկ ջուր կը կրա,
Մրջըման բոն կը շինա.
Չուր մրջեմ ուր բոն դառնա,
Էրեթիկ ուր տեղ չորնա:

ՀԱԲՍ, FAV: 3087, 03/Ոշտունիք

80բ

Էրեթիկ արտ կը ջըրը,
Մրջըմիկ ջյուր կը բերը.
Չյուր մրջըմիկ երը՝
Էրեթիկ չուրցավ, թըռավ:

ՄՄ, ՍՏՀ. 74, 20բ/Մոկս

81

Մըռջըմուկը բուսեր է,
Չորս բոլորը հուսեր է,
Աստվածածին տեսեր է,
Դեղ էրեր, լավցուցեր է,
Սուրբ սննդովը սրբեր է:

ՋԲ, 6/Զավախք

ՀԱԲՍ, FFI: 7520, 03/Գյումրի

2 ՀԱԲԱ հոսել է:
1-5 ՀԱԲԱ բայերի բոլոր անցյալ կատարյալի ձևերը դրված են ել վերջավորությամբ (բուսել է, տեսել է և այլն):

82

Սրսվիլը[16] վար արավ,
Ակռավը ցան արավ.
Իս էս դեղը քսեցի՝
Էրկսին քարուքանդ արավ:

ԹՄԿ, 19/Թիֆլիս

83ա

Մրջըմնոց, մրջըմբլոց,
Մրջիմն էկավ հերկ ըրավ,
Աբելն էկավ՝ թերկ ըրավ.
Քրիստոս Տերն էկավ՝ զարմացավ,
Վրան թքավ՝ չորացավ:
Ես կը թքնեմ օր չորնա,
Թու՜, թու՜, թու՜:

ԳԲՄ, 640/Սեբաստիա

83բ

Մրչըմուկը հըկըկե, մըկըկե.
Քրիստոսը վերևեն անցավ,
Կայնավ, հիվընդին նայեցավ,
Տեսավ ու շատ զարմացավ,
Վրեն թքեց՝ վերքը չորացավ,
Մեկեն ի մեկ հիվանդն առողջացավ:

ԷԱԺՍ, 185/Շիրակ

---

15 *Էրեթիկը* (էկզեմա) կոչվում է նաև այլ անուններով՝ *մրջմուկ, մկնատամ, դերմուկ* կամ *դեմրեկու, որքին:*

16 *Սրսվիլ*՝ բանահավաքի ծանուցմամբ՝ վրացերեն է (սիրսվիլի) և նշանակում է *որքին, մկնատամ, մրջմուկ:*

83գ

Մրջունը սաբաո կաներ,
Քրիստոս եկավ, վրաո նայեցավ, զամացավ.
Թյու՜ֆ, թյու՜ֆ քքեց վրաո՝ չորացավ:

ԱԳ IX, 50/Նոր Նախիջևաո

83դ

Բուժուժը պուն չինից,
Մըռչունին հեդ օցը սաբաո վարից.
Քրիստոս Դերը էգավ, դեսավ՝
Իրեք հեդ թո՜ւքից՝ չորցավ:

Փորքշեյաո1971, 96/Նոր Նախիջևաո

83ե

Երեքի՛կ, երեքի՛կ, բարի լուս քի,
Արտ մե կորեկ իմ ցաոի,
Շկլոր բկլոր է դարձի,
Իմ Տեր վրավովն է .յնցի.
Չոր իս ու չորաոաս,
Փո՛ւ, փո՛ւ, փո՛ւ:

ԱԳՉ, 45-46/Մուշ-Բուլաոըխ

83զ

-Քուռ Երեմիա, .յու՜ր կերթաս:
-Խոց ուոիմ, բոր ուոիմ,
Աոդին դառնամ ոե՝ մրջըմնոց ուոիմ.
Քրիստոս Տերս տեսավ՝ զարմացավ,
Թքավ՝ չորացավ.
Թու՜, թու՜, թու՜:

ԳԲՍ, 640/Սևբաստիա

84

Վասո Աստծուո,
Վասո Քրիստոսիո,
Վասո իոո դաս հրեշտակաց,
Վասո ամենաո սրբոց,
Վասո կուսանց սարերաց.
Միտաոոսի սուրբ աղոթքով
Դու չորցուցես *[այսիո՛չի]* էրեթիկ:

ՀԱԲԱ, FAV: 3087, 04/Ոչտուոիք

85

Ո՛չ հաւո ի ծիո,
Ո՛չ ջորիո ի ծնուոդ,
Ո՛չ ծորոխի ծայո,
Ո՛չ բաղեղաո աճ,
Ո՛չ ոշի պտուղ,
Ո՛չ խլըրդաո այք,
Ո՛չ լուլա,
Ո՛չ աքլար մաճկալ.
Չի՛ք ես և չիք դառնաս:

Մատենադարաո, ծեռագիր № 8428, 71/81/

4 աոճ, ուղղ. ըստ ձևի:

86

Կապել եմ զլիքն ի ծառեո,
Կապաոօքն Պետրոսի և Պօղոսի,
Այլակերպութիւն Քրիստոսի,
Չոր այլակերպեցավ ի Թափորական լերին
Եւ լոյս ծագեցավ տիեզերաց,
Յաոուն հոր և որդւոյ և հոգւոյն սրբոյն, ամէն:

ԷԱԺՉ, 303/Վաղարշապատ-Ալիբեկլու

87ա

Ամամօն, Ամրամօն,
Պօրպօյ, էրի, Բըպայ,
Դուք չօրացուցէք զմուկնատամն
Ծառայիս Աստուծոյ այս աոուն փլանիս,
Աոուամբ հօր և որդոյ և հոգոյն սրբոյ,
Ամէն:

Մատենադարաո, ծեռագիր № 6677, 5/19/

87բ

Ամոն, ամոն, հռալամոն,
էն, էն ամոն բրայբոն,
Բրայբոն ամոն.
-Ագ, եգ աբգ, գաաագ,
Ագ, ագ, եղեգն:

ԱԳ X, 246/Բորչալու

87գ

Ամտ ամրամտ,
էփրեմ էփրեմով,
Ռամ կա կաթիյա...

ՀԱԲԱ, FFVII: 7595, 01/Գաոծակ(Գյաոջա)

ԳՈՐՏՆՈՒԿԻ[17]

88ա

Լուսինը՝ նոր,
Գորտնուկը՝ չոր:

ԱԳՉ, 318/Գաոծակ. ԱԳ X, 159/Բորչալու

1 ԱԳ X լիսինը:

17 Կոչվում է նաև *կոծոծ, կոծիծ* կամ *կոծիկ:*

88բ

Լուսինկան՝ նոր,
Կոծիկս՝ չոր:

ԳԲՍ, 640/Սեբաստիա

88գ

Լիսինը՝ նոր,
Գորտնուկը՝ չոր.
Օրթում ուտեմ՝
Թոք չուտեմ:
Ա՛յ աղ, դու այստեղ հալվի,
Ա՛յ գորտնուկ, դու ըստի չորացի:

Տաշրացի1887, № 126/Լոռի
ԱԴ X, 243/Բորչալու
ԳԱԹ, Կ. Կոստանյանի ֆոնդ, 128

89ա

Դու տի չըքվի,
Գորտնուկն՝ ընտի:

ԱԴ X, 159/Բորչալու

89բ

Ջուն էստեղ փջի,
Գորտնուկն էլ էստեղ փջի:

ԱԴ XVI, 51/Նոր Բայազետ

89գ

Իդը հուդը չորնա,
Էնի լե հունա չորնա:

ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի

90ա

Նո՛ր, նո՛ր, նորե զիս,
Կոծոծն յելի, կուտե զիս,
Դու կի կոծոծին՝
Կոծոծ չուտե զիս:
Նո՛ր, նո՛ր, նորե զիս,
Կտրե՛, կապե՝ չուտե զիս:

ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի

90բ

Նո՛ր, նո՛ր, նորե զիս,
Կոծոծն յելեր՝ կուտե զիս,
Կտրե՛ թալե, չուտե զիս:

ՀԱԲԱ, FFI: 8993,01
Մուշ-Բուլանըխ
ԷԱԺԶ / 299/ Ալաշկերտ

90գ

Նո՛ր, նո՛ր, նորելիս՝
Գորտնուկ ելե, կուտե զիս,
Կտրե գցե, չուտե զիս:

ՄԱ, ՍՏՀ/Մուշ-Բուլանըխ

90դ

Նո՛ր, նո՛ր, թազա թագավոր,
Ես ալևոր, դու թագավոր.
Էն աշխարքից ի՞նչ խաբար ես բերել:
Նոր, նո՛ր, տես զիս,
Գորտնուկն էկե, կուտա զիս,
Կեր գորտնուկին՝ չուտա զիս:

ՀԺՀ VI, 146/Վաղարշապատ

91

Թազա նորը նորեր ա,
Նորի կտոր կորեր ա,
Իմ աղբերը գթեր ա,
Պատի տակը տափեր ա:

ԱԴ XVI, 51/Նոր Բայազետ

ՆՈՐԵՆՑՔԻ

92ա

Նո՛ր, նո՛ր, շնախավոր, նո՛ր,
Ծեր գնացիր, տղա էկար.
Տյու՝ տղա, տղեն՝ տղա,
Տղեն տղից չի վախենա:

ԱԴ XX, 182/Վասպուրական

92բ

Նո՛ր, նո՛ր նորավոր,
Կանանչ-կարմիր թագավոր,
Ծեր գնա, մանուկ արի,
Աստված օղորմի իմ հորն ու մոր:

ՀԲՆ/Շիրակ-Ջաջուռ

ՕՋԻԿԻ

93

Սև օցը մդիլ է հիվանդին ծոցը,
Սոխախը բոյը համարցակ գեշբա:
Սև օցը վիզը փաթթվիլ է,
Սև օցը սրդին վրան բառկիլ է.
Բժշկաբեդ սուրփ Գարաբեդ
Գդռից սուրով օցին կլուխը:
Սև օցին՝ սև անեծք,
Սև լեշին՝ սև հող,
Հիվանդին՝ առողջութին:

Փորքշեյան1971, 96-97/Նոր Նախիջևան

94

Սուրբն Գրիգոր ի հորն իջաւ,
Օձն եւ կորն ի հետն իջաւ.
Կապեց զկորն կըճաւոր,
Եւ զօձն թիւնաւոր,
Եւ հրամայեաց իւր սուրբ բերանովն,
Թէ՝ ես ժաժիմ, դուք մի ժաժիք,
Ոչ եռայք, եւ ոչ եռվռայք,
Ոչ ծու ածեք, ոչ ծագ ծգեք,
Եւ ոչ զձեր տեղն ապականեք
Մինչեւ լծվարն զիւր լուծն վարէ
Եւ արեգակն զծայրն ծգէ,
Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն:

ԳԲՍ, 644

ՅԱՍԱՆԻ[18]

95

Նըջեցյալն ինչպես կմեռնի,
Դու էլ Քրիստոսի աղոթքովը այդտեղ մեռի:

Տաշրացի1887, № 127/Լոռի

96

Որդե մեռել կա՝ սաղանա,
Յամանի տակռին չորանա:

ՀԺՀ X, 92/Լոռի-Հաղպատ

97

Հիսուս Քրիստոս,
Ով սուրբ Մարիամ Աստվածածին,
Դու բժշկես էս ցավը.
Չեռը ինձանե՝ դեղը քեզանե:
Մաթոսանց Ակոբը[19] էնդեղ մեռնի,
Դու՝ էստեղ.
Նա էնտեղ կործանվի,
Դու՝ էստեղ,
Նա էնտեղ վերջանա,
Դու՝ էստեղ:

ՀԺՀ X, 92/Լոռի-Հաղպատ

98

Աթլաս,
Պաթլաս,
Ալալարա,
Բաս բաս:

ԱՀ X, 246/Բորչալու

ԲԵԴՆԻ ՅԱՐԱՅԻ[20]

99ա

-Բեդո,
Բեդնիերո,
Քու դեղն ի՞նչ ա.
-Անհալ մեղրը,
Գոգրու ծաղիկը,
Սառը շաքարը:
Կը գովեմ, կը գովասանքեմ,
Ալամ աշխարհքի գլխին կը պահեմ:

ԱՀ X, 242/Բորչալու

99բ

-Բեդո,
Բեդնիեարո,
Քու դեղն ի՞նչ է.
-Մորու թերը,
Գոգրի ծաղիկը:
Կը պահեմ, կը պահպանեմ,
Գլխին կը դնեմ,
Ալամ աշխարհս ման կածեմ:

ՀԱԲԱ, FBI: 1191, 01/Լոռի-Հաղպատ

99գ

-Բեդնի, յարա,
Բախտի բեդնի յարա,
Ի՞նչ ա քո դեղը.
-Գոգրի ծաղիկ,
Գորտի կաշին,
Քարերի մեջի դանդուրը,
Շատու շաքար,
Սիպտակ բելիլա,
Առանց կրակի մեղրը:

ՀԱԲԱ, FAV: 5731,01

---

18 Յամանը անասունների փորի տակ տարածվող ուռուցքն է:

19 Մեռած մարդու անուն է. ըստ բանահավաքի՝ որևէ մեռածի անուն պետք է հիշվի աղոթքում:

20 Ըստ բանահավաք Վ. Տաշրացու՝ *բեդնի յարաև* սպիտակ քամին է, որ մեծ մասամբ լինում է աչքերի տակ, սկզբից քոր է գալիս, ապա ուռչում, սպիտակում, դառնում վերք: Անունն ամենայն հավանականությամբ սերում է վրացերեն **բեդնիերի** բառից, որ նշանակում է «խեղճ, թշվառ, աղքատ» և միաժամանակ տվյալ հիվանդության անունն է (հմմտ. Ումիկաշվիլի, 1964, 172-173):

99դ

-Բեդնի՛, բեդնի յարա՛,
Գոգրի ծաղիկ,
Քու դեղն ի՞նչ ա.
-Թսան բողոճը:
-Բեդնի, բեդնի յարա,
Քու դեղն ի՞նչ ա.
-Չամիչը:
-Բեդնի, բեդնի յարա,
Քու դեղն ի՞նչ ա.
-Գորտը:

ԱՀ X, 242/Բորչալու

99ե

-Բեդո՛, բեդնի յա՛ր,
Քլնգով կը քանդեմ,
Բահով կը ծղեմ.
Քո դեղն ի՞նչ ա.
-Անհալ մեղրը,
Մորու թերը:

Տաշրացի1887, № 127/Լոռի

ԿԱՐՄԻՐ ՔԱՄՈՒ[21]

100

Սիպտակ քամի,
Կարմիր քամի,
Սև քամի.
Դանակով կը կտրեմ,
Կացնով կը ծեծեմ:

Տաշրացի1887, № 127/Լոռի

ԿԵՐՑԱՎԻ[22]

101

Էնհնոս-Մենհնոս,
Աթհնոս-մըրմընջ,
Չիք ես և չիք դառնաս:
Ո՛չ ունիս իշխանութիւն շարժելոյ
Անուամբն Աստուծոյ:

ՀԱԲԱ, FBI: 1195, 01

ԴԵՂՆՈՒԹՅԱՆ

102

Գայ դեղին գետն
Եւ բերէ դեղին փայտ,
Գայ դեղին ծագն
Եւ շինէ դեղին բուն,
Ածէ դեղին հաւկիթ:
Թռաւ ծագն ի բնէն
Եւ դեղնութիւն ի յայս մարդէն:

ԳԲՍ, 644

ՃՈՒՄԻ ԿԱՄ ՄԱՀԱՆԳՈՒՍՏԻ[23]

103

Հավքն երկնուց անցավ,
Ծովեն կանանչ տերեպ եբեր.
Միսը մսին դրի,
Ջիլը ջլին դրի,
Ոսկորն ոսկորին դրի:
Քար վեր կալի՝ անդնդոց դարձավ,
Վար դրի՝ լավցավ:
Ո՛վ Տեր, դու յանդնդոց լսես,
Դու յանդնդոց խալսես:

ԵԱ, 59/Խոտորջուր
ՀԱԲԱ FFI: 4185, 01/Խոտորջուր

2 ՀԱԲԱ իբեր:
5 ՀԱԲԱ *չիք:*
8-9 ՀԱԲԱ անդնդոց:

104ա

Երկնուց մատաղմ՝ եղավ՝
Միսը՝ մսին, պոզը՝ պոզին:
Կուչ կեցա՝ հանգստվեցավ,
Վեր ելա՝ արծկվեցավ:

ՋԲ, 5/Ջավախք

104բ

Քրիստոս Տերս պատ կը շարե,
Պողոս, Պետրոս քար կը կրե,
Մարթա, Սառա ջուր կը կրե:
Կուչ կենամ՝ ծոի կը,
Վեր կենամ՝ շիտկի կը:

ՋԲ, 6/Ջավախք

104գ

Հիսուս Քրիստոս բերք շինեցին,
Պողոս, Պետրոս քար կրեցին,

---

21 Ըստ բանահավաքի՝ *կարմիր քամին* երեսի կամ մարմնի որևէ մասի կարմրությունն է, որ կարծրանում է սովորականից ավելի, խիստ տաք է լինում և աստիճանաբար տարածվում:

22 *Փտախտ* կամ *քաղցկեղ:*

23 *Ճումը՝* հոդածգումն է, նույնն է, հավանաբար, *մսահանգուստը,* որը մկանների կամ հոդերի հանգուցումն է, ծգումը, ընդհանրապես՝ *հոդացավը:*

Կուս Մարիամ պատ շարեցին:
Կուչ կեցա՝ հանգստվեցա,
Վեր կացա՝ արծըկվեցա.
Օսկոռն՝ օսկոռին,
Թուք մունտառ մսին:

ՋԲ, 5/Ջավախք

104դ

Պողոս, Պետրոս ժամ կը շինեն,
Մարիամ, Մարթա ջուր կը կրեն:
Հա՛մ առա,
Հա՛մ սառա,
Միսը մսին դրին,
Ոսկոռն՝ ոսկոռին:
Կուզ կեցա՝ հանգուստվեցավ,
Վեր կեցա՝ արծակվեցավ:

ԺԱԲ, 7/Ախալցխա-Ծուղրուտ
ՀԱԲԱ, FAV: 5725, 01

3 ՀԱԲԱ հում առար:
4 ՀԱԲԱ հում սառար:
6 ՀԱԲԱ պոզը պոզին դրին:

104ե

Սառայի մարդը քար կը կրե,
Պողոս, Պետրոս պարիսպ շարե,
Քրիստոսը տաճար կը շինե:
Վար անցավ՝ հանկուստեցի,
Վեր անցավ՝ արծըկեցի,
Իմ Տիրոջս սուրբ կամքով
Ամուր ցավը տեղեն քակեցի՝
Մսահանգուստեն ազատեցի:

ԷԱԺՄ, 185/Շիրակ

4 հասկուստեցի, *ուղղ. ըստ իմաստի:*

105

Օրհնյալ տեր մեր Հիսուս Քրիստոս.
Աստված Ադամին շինից,
Դժոխքը, երկինքը, դրախտը շինից.
Կտրե արմատը,
Կտրե չար մուգը,
Միսը արունի դիր,
Արունը՝ միսի:
Փրկիչը փչից,
Աստվածամար փրկից:

ՀԱԲԱ FFVI: 8196, 01/Նոր Նախիջևան

106ա

Մեր տան առաջ ծովըմ կար,
Ծովի մեջը ծառըմ կար,
Ծառի վրա հավըմ կար.
Հավն անձեռք բռնեցի,
Անդաանակ մորթեցի,
Հավը կերա անբերան.
Կուզ կեցա՝ հանգուստվավ,
Վեր էլա՝ արծրկվավ.
Քրիստոս տեսավ՝ բազմեցավ,
Վրան քքեց՝ ողջացավ:

ՀԱԲԱ FFI: 7521, 03/Գյումրի

106բ

Վար կեցա՝ միսս հանգուստվավ,
Վեր կեցա՝ զուր վառվավ,
Սար ու ձորով կտռվավ:
Ծովին մեջ ծառմ՝ կար,
Ծառին վրա հավքմ՝ կար.
Անձեռք բռնեցի,
Անդաանակ մորքեցի,
Անբերան կերա.
Քրիստոս տեսավ՝ բազմեցավ,
Վրան քքեց՝ առողջացավ:

ՋԲ, 5/Ջավախք

ԽԻԹՔԻ[24]

107

Խիքքը խքքեց,
Քրիստոս վեր եկավ, խաչակնքեց.
Որ չէր խաչակնքել՝
Խիքքը մարդ կըսպաներ:
Քրիստոս բռնեց կանեփ թոկը,
Եկավ առավ Լուսավորչու աջը:

Տաշրացի1887, 125/Լոռի
ԱԳ X, 245/Բորչալու

ՋԵՐՄԱԽՏԻ

108

Օխլարըմ թաթարճա,
Մըխլարեմ թաթարճա:
Պաշընտա իսեն,
Պելինտե իսեն,
Եյուրեյինտե իսեն,
Հիսուս Քրիստոս խաչը իլեն,
Սողոմոնըն խաթըր իլեն:
Էմր էտերիմ, թաթարճա,
Էվին երգըլա, եուրտըն
տեվրիելե, թաթարճա.

[24] «Մրսելուց երբ մարդու մեջքը բռնվում է, մեջքի և ուսերի երակների մնջ արյունը կանգնում է և կապտանում, այս հիվանդությունը կոչվում է «Խիթք»: Ծանոթ. բանահավաքի:

Անունի Հիսուսի Քրիստոսի,
Չքանաս, չիքն ուրթիս թաթարճա,
սատանի որդի:
Հիշատակարան, 232/Կեսարիա

Թուրքերեն տողերի թարգմանությունը.
Նետահարում եմ քեզ, թաթարճա,
Մեխում եմ քեզ, թաթարճա.
Թող գլխիդ լինի,
Թող մեջքիդ լինի,
Թող սրտիդ լինի,
Հիսուս Քրիստոսի խաչով,
Սողոմոնի խաթրով
Հրամայում եմ, թաթարճա,
Տունդ քանդվի, օջախդ շրջվի, թաթարճա:

ՓԱՅԾԱՂԱԲՈՐԲԻ (ՏԱԼԱԽԻ)[25]

109

Ադամը շինից Քրիստոսին տաճարը,
Վար էղավ, կռնակով քար վերուց,
Վեր նայեցավ՝ դալախ էղավ:
Սարի վրա, լեռի վրա, տաճարին
պատին տակը
Առ թափոռը, կըտրե տալախը,
զարկ գետինին.
Լուսինը հինացավ լեռի պես,
Դալախը հալեցավ եղի պես,
Լուսին[ին] հինը, դալախին չորը,
Աստվածամոր աղոթքը Քրիստոսին բերանը:
ՀԱԲԱ FFIII: 2538, 01/ Նոր Նախիջևան-Չալբըր
FFVI: 8196, 03/Նոր Նախիջևան

1 FFVI Իմաստուն Սողոմոնի:
2 FFVI Քար առավ: կռնակով՝ *չիք:*
4 FFVI սարի վրա, լեռի վրա՝ *չիք:*
5 FFVI առ կացինը: կըտրե տալախը՝ *չիք:*
6 FFVI լուսինը նորացավ:
8 FFVI լուսինին:
9 FFVI Փրկիչ փչից, Աստվածամոր բժշկից:

ԳՈՋԿԱՊԻ (ՄԻՋԿԱՊԻ)

110

Մի տան մի կրակ կա՝
Կեսը կա, կեսը չկա.
Վրեն մի կասկարենք կա՝
Կեսը կա, կեսը չկա.
Վրեն մի պղինձ կա՝
Կեսը կա, կեսը չկա.
Վրեն մի խուփ կա՝
Կեսը կա, կեսը չկա.
Վերնուց մի հավք է անցկենում՝
Կեսը կա, կեսը չկա:
ՀԱԲԱ FBI: 1188, 01/Լոռի-Հաղպատ

111

Անանիա, Ազարիա
Գեցալ ըն Ազարիա սարը.
Քառասունյոխտը իշավուր,
Քառասունյոխտը ջուրավոր,
Քառասունյոխտը ծիավուր,
Քառասունյոխտը օղտավուր
Կտրալ ըն կանենչ տիրիվը.
Աս հեյվանս գյուզկապ ա՝
էտ արեր:
ԱԳ XX, 115/Մեղրի

112ա

Աղաչեմ, Տե՛ր, քու ձեռով, քու խաչվառով,
Սուրբ Պողոս-Պետրոսի աղոթքով,
Սուրբ Կադարանոսի արձակութենով,
Արդարութենով, վկայութենով դուրս գա.
Չարից, չար աչքից, չար սրտից,
չար կապից ազատես:
Աղաչեմ, Տե՛ր, քու ձեռով, քու խաչվառով,
Սուրբ Կադարանոսի վկայութենով,
Սուրբ Պողոս-Պետրոսի արձակութենով,
վկայութենով դուրս գա.
Չարից, չար աչքից, չար սրտից,
չար կապից ազատես:
Աղաչեմ, Տե՛ր, քու ձեռով, քու խաչվառով
Արձակութեն, բարութեն տաս,
Քու արձակումին տեր կանգնես,
Դու բարի արձակում տաս.
Հասի, փափուկ դռները բաց,
արձակում արա:
Աղաչեմ, Տե՛ր, չարից, չար նազարից,
չար աչքից, չար կապանքից ազատես,
Քու ձեռով, քու խաչվառով,
Սուրբ Կադարանոսի աղոթքով
արձակում արա:
[Աստված բարի լավութեն տա, որդի]:
ՀԱԲԱ FFVIII: 3689, 01, 02-3691, 00/
Ապարան-Մռավյան (Տամջըլու)

112բ

Աղաչեմ, Տե՛ր, մեղաց տեր եմ,
Քու ձեռին է, իմ ձեռին չէ.
Սուրբ Պողոս-Պետրոսի սուրբ աղոթք,
Չարից, չոռից, չար աչքից, չար նազարից,
Չար սրտից ազատես,
Ղադից, բալից ազատես, ազատող Տեր:
Աղաչեմ սուրբ Պողոսի, սուրբ Պետրոսի
սուրբ աղոթք,
Սրտին հանդարտությեն տաս,

[25] *Տալախ* կամ *դալախ*՝ բուրքերեն «փայծաղ»:

Ցավին փարատությեն տաս,
Ջանին առողջությեն տաս:
Աղաչեմ, Տե՛ր, քու ձեռին է, իմ ձեռին չէ.
Չարից, չար մարդից, չար օրից,
Չար վադից, չար գազանից ազատես,
Ղադից, բալից ազատես, ազատող Տեր:
Աղաչեմ սուրբ Պողոսի, սուրբ Պետրոսի
սուրբ աղոթք.
Աղաչեմ, Տե՛ր, քու ձեռին է, իմ ձեռին չէ,
Քու ձեռով, քու խաչվառով սրտին
հանդարտությեն տաս,
Ցավին փարատությեն տաս,
Ջանին առողջությեն տաս,
Ղադից, բալից ազատես,
Օգնական, պախապան լինես, ամեն:

ՀԱԲԱ FFVIII: 3685, 01, 02/Ապարան-Մռավյան (Տամջըլու)

ՏԱԿԸ ՄԻՋԵԼՈՒ ԴԵՄ

113

Թոնդրի Թորոս,
Աքսան Պողոս,
Դուս արի,
Տակը շ... էկիլ է:

ԹՄԿ, 429/Թիֆլիս

ՍՐՏԱՄՆԱՅԻ (ԿԵՐԱԿՐԻՑ ՁՁՎԱԾԻ)[26]

114ա

Սիպտակ սարի տակիցը
Սիպտակ Ուհաննես դուս եկավ,
Սիպտակ ջուրը մտավ,
Սիպտակ ձեռը տարավ,
Սիպտակ ծուկը հանեց:
Անծեռը բռնեց,
Անդանակ մորթեց,
Անկրակ խորովեց,
Անիշտահ կերավ,
Մատաժուժեն ելավ:

ԱՀ X, 244/Բորչալու
Տաշրացի1887, № 126/Լոռի

4 Տաշրացի *չիք*:
5 Տաշրացի բռնեց:
8 Տաշրացի եփեց:

114բ

Սիպտակ հլեվորը
Սիպտակ ձեռը տարավ,
Սիպտակ ծուկը հանեց,
Անդանակ մորթեց,
Անկրակ խորովեց,
Անիշտահ մարսեց:

ՀԺՀ VII, 133/Լոռի-Հաղպատ

114գ

Մտա ճերմակ ծովը,
Հանեցի ճերմակ ծուկը,
Անդանակ մորթեցի,
Անկրակ էփեցի,
Իրեն չի կերած՝ մարսեցի:

ՀԺՀ VIII, 94/Ղրիմ

115

Սուրբ Ստեփաննոս Նախավկեն,
Ինքը ճերմակ, ծին ճերմակ,
Ընկավ ծովը՝ ծովը ճերմակ.
Կալի կշտով անցկացավ՝
Կալից մի խուրձ պակասեց,
Խրձից մի դանճ պակասեց:
Ասեղը երկաթ, ջուրը պողպատ.
Սրտի կպած, պոկ արի:

ԷԱԺԶ, 303/Վաղարշապատ-Ալիբեկլու

116ա

Գնացի ծովը՝ ծովն էր ծիրանի,
Ծովի միջին ծառ կար՝ ծառն էր ծիրանի,
Ծառի վրա ճուղք կար՝ ճուղքն էր ծիրանի,
Ճղքան վրա բուն կար՝ բունն էր ծիրանի,
Բնի միջին ճուտ կար՝ ճուտն էր ծիրանի.
Անոտք նի ելա,
Անդանակ մորթեցի,
Անժխա (առանց զզվելու) կուլ տվեցի,
Պետրոսի մադաժաժը կտրեցի:

ՀԺՀ VI, 145/Վաղարշապատ

116բ

Շենին ծուրումը միհն ծավ կան,
Ծավուն մանջհին միհ ծառ կան,

[26] Հայոց տարբեր բարբառներում կերակրից զզվածությունը կոչվել է տարբեր անուններով. Լոռիում՝ *սրտամմա* կամ *սրտամմա էլած*, Մեղրիում՝ *սրտըմա*, Վաղարշապատում՝ *մադաժած*, դարձյալ Լոռիում՝ *մադաժուժ*, Մուշում, Ալաշկերտում՝ *զանել* և այլն: Ըստ բանահավաքների վկայության՝ «Կերակուր շատ ուտելուց կամ առանց ախորժակի ուտելուց երեխաները «սրտամմա» են լինում կամ, ինչպես ասում են, մադաժուժ են լինում: Սիրտները խառնում է և գլուխները շշնում»: (ՏԱԾՐԱՑԻ 1887, № 126): «Երբ միհը վատ է զգում իրեն և ախորժակ չի ունենում, կարծում են թե մի որևէ բանից գարշել է՝ սրտամմա է եղել» (ԱՀ X, 244):

Ծառուն վերան մին ծետ կան.
Ծետը առանց մըրթիլու՝ իփալ ըն,
Առանց իփիլու՝ կերալ ըն:
Աս մարդը սըրտըմավ ա.
Կապետ աման, կըժըգլոխ,
Հիսուս Քրիստուս աստուծ:
ԱԳ XX, 115/Մեղրի

116գ

Տեղս ծավ կան,
Ծավուն մանջին ծառ կան,
Ծառուն վերան բուն կան,
Բունուն մանջին ղուշ կան,
Ղուշն անդենակ մուրթիլ,
Անշենփուռ նիշերիլ,
Անգիրեկ խորավիլ,
Անբերան օտիլ:
Սերտըմնուն դեղը հի՞նչ.
Կըժը գլոխ, պըղվըտե ասուղ, ըրկաթե քար:
ԱԳ XX, 115/Մեղրի

116դ

Մեր տան ետնեն մի ծառ կա,
Վրեն մի բուն կա,
Միջին մի ղուշ կա.
Անոտը վեր էլա,
Անծեռնը բռնեցի,
Անդանակ մորթեցի,
Անկրակ խորովեցի,
Անբերան կերա,
Անիշտահ մարսեցի,
Հիսուս Քրիստոս:
ՀԱԲԱ FBI: 1192, 01, 03/Լոռի-Հաղպատ

117ա

Աթլաշ-մաթլաշ,
Դալալ ու բաշ:
ՀԺԳ VII, 133/Լոռի-Հաղպատ

117բ

Աթլաս,
Բաթլաս,
Թալաչբաշ,
Կարմիր քրեղան,
Լիքը կուժ:
ԱԳ X, 244/Բորչալու

ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾԻ

118

Սև օցը գըթեսինք,
Առանց մագարթ մագըրթեցինք,
Մայրը գերավ՝ ճաթեցավ,
Տուսրը գերավ՝ բայթեցավ,
Մայրամը գերավ՝ ազադեցավ:
Սվազյան 1959/Նոր Նախիջևան

119

Անանիա, Անանիա գանչեցի՝
Անանիան ճուրն ինգավ.
Ճուրին մեչը ծառ մը գար,
Ջառին վրա օց մը գար,
Օցին առանց տանագ մոշքեցի,
Աս հիվանտիս էփեցի, ուդեցուցի:
Սվազյան 1959/Նոր Նախիջևան

ԹԱԼԿԱՆԱԼՈՒ

120

Ալալոց, ալալոց,
Թալալոց սուրբ Կիրակոս,
Պիրեք տվեք իմ ծիանոց,
Խայնեմ, էրթամ դեմ տաճարին.
Քյուրդ հնվորին դեմ առից,
Աչքեր էրկինք խավարից,
Ոտքը գետին բիբեռից:
ԷԱԺՋ, 24/Կյուսենց գյուղ

ՄԵՌԵԼԱԿՈՒԽԻ (ԿՈՒՎԱԾՔԻ)[27]

121

Թյու՜, թյու՜, թյու՜,
Մեռել մեռելոցին,
Ետ երթաս, առաջ չի գաս,
Տուշմնիս դուռ չիգաս:
Թյու՜, թյու՜, թուքն ի երես,

27 *Կոխ, կոխք, կոխվածք, կոխոցք, կոխցու, մեռելակոխ* համանիշ անուններով է կոչվում հատկապես մանկական այն հիվանդությունը, որն, ըստ հավատալիքի, առաջ է գալիս մեռելներից կոխվելու հետևանքով: Երեխան երբ նիհարում է, թուլանում, ոտի վրա չի կարողանում կանգնել, ասում են մեռելից կոխ կամ կոխվածք է եղել: Կիրառում են բուժման տարբեր եղանակներ: Իսկ սովորաբար, այդ հիվանդությունից խուսափելու համար, երբ մեկը, անկախ տարիքից, հիվանդ է լինում և փողոցում մեռել են հուղարկավորում, հիվանդին հանում են փողոց, նրա հագուստները բափ են տալիս, որպեսզի մեռելը նրա ցավն ու հիվանդությունը իր հետ տանի և հիվանդը մեռելակոխ չլինի:

Չար սատանեն սևերես.
Առնեմ զչուլ, վերցնեմ զշոր,
Չար հրեշտակներ թափվին ի հուր:
ԱՀ XXVI, 190/Մուշ
«Արծագանք» 1895, № 116/Մուշ

4 «Արծագանք» չըգնաս:
7 «Արծագանք» առնիմ ... վերցում:
8 «Արծագանք» հրիշտակներ:

122

Ուր կերթաս, ուր տ'երթաս,
Մըր տան երթքից հեռանաս,
Չա՛ր, խատեն ու զբալեն
Առնիս, երթաս մըր դիեն:
«Արծագանք» 1895, № 116/Մուշ

123

Չարը չարով չորանա,
Մըր տղի արև կանչնա.
Հիսուս Քրիստոս, Մարիամ կույս,
Իմդատ կաղնիս իմ որդուս:
«Արծագանք» 1895, № 116/Մուշ

ՎԱԽԵՑԱԾԻ, ՎԱԽԻ

124ա

Դեղին ծաղիկ,
Դեղնածաղիկ,
Մերը քաղեց,
Դուստրը փնջեց.
Հավը ննջեց,
Որդին փնջեց,
էլավ սարին.
Քոթոթը քարին,
Հավն ա քառին,
Կովն ա կապին.
Ա՛յ սիրտ, տեղդ:
Տաշրացի1887, № 126/Լոռի
ԱՀ X, 236/Բորչալու

5 ԱՀ X հերը:

124բ

Հավը քառ,
Ջիրախը վառ,
Լերքը դեղը,
Սիրդը դեղը:
Սվազյան1959/Նոր Նախիջևան

125

-Ուստի՞ քուքաս, հայրաց հայրապետ:
-Ասիս-Մասիս սարերեն.
Բուրվառմ՝ ունիմ հրեղեն,
Քուլլի ճոթներ լուսեղեն.
Ածեմ տանդ, ածեմ դռանդ,
Ածեմ օրորոցիդ,
Չվախենա սիրտդ ի փորիդ
Ինչուրի գալն Քրիստոսի:
ԳԱԹ, Ս. Քամալյանի ֆոնդ III-15

126ա

Հրես էկա՛յ երեք ծիավոր.
Մինը Հիսուսը,
Մինը Քրիստոսը,
Մինը Մարիամ Աստվածածինը.
Թամքեց սև ձին,
Հաքավ սև շորը,
Սարի էս կռնովը վեր էլավ,
էն կռնովը վեր էկավ,
Դուշմանի աչքը հանեց:
ԱՀ X, 236/Բորչալու

126բ

Եկավ, եկավ երեք ծիավոր.
Մեկը՝ Իսուս, մեկ՝ Քրիստոս,
Մեկը՝ Մայր Աստվածածին.
էլավ սարով, էչավ ձորով:
-Ո՞ւր ես էրթում:
-Դուռը խիվանդին,
Մի վախացիր սերտը փորին,
Ժնջել քցեմ բարձը բոլոր,
Տեր *[մինչև]* դատաստանը գալը:
Բարեխոս Մայր Աստվածածին,
Թաթոս առաքել,
Օհաննես Մկր[տ]իչ
Զորավոր սուրբ Գեորգ,
Զորավոր սուրբ Սարգիս,
Օգնական, պախապան ըլես,
Տասներկու առաքել,
Օգնական, պախապան ըլես,
Չարից, փորձանքից ազատես:
Ասված օղորմի Գրիգոր Լուսավորչա ասկին,
Ասված օղորմի Կո[ս]դանդա թագավորին,
Կուշտը խաչով,
Կուշտը մանիշակով, ամեն:
ԱՀ IX, 114/Թավրիզ

126գ

Թազա հացի հոտ էկավ,
Քելեք տեսեք դոր էկավ.
Հետ էկավ իրեք ծիավոր,
Մեկն ի կանաչ կապավոր.
Մեկն Հիսուս, մեկն ի Քրիստոս,
Մեկն Ընձանոց Ասվարածին,
էլավ սարով, իջավ ծորով:
- էդ դո՞ր կըթաք խազար բարով:
Կէթան դուռն ի յերին,
Մարիամ նստեց դեմ խաչաքարին.
Աստված տվեց Հիսուս որդին,
էլ չվախենա սիրտն ի փորին,
Ջինջիլ քալի բոլոր պատին:

ԱՀ IX, 112/Վայոց Ձոր-Ազատակ

126դ

Մենք տուն մը ունինք երկըթե,
Պատերնա նա՝ պողպըտե.
Երեք-երեք պոգ ծիավոր,
Երեքն ալ կանաչ դիմավոր.
-Ո՞ւր կերթաս:
-Ան դուռն ի տան,
Որ չի վախես սիրտը փորդ:

ԱԱ, 57/Կիլիկիա-Այնթաբ

126ե

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Անմահական մարգարիտ.
Մեր տունը երկաթի ա,
Պատերը պողվատի ա,
Շողատոնը մին ա,
Հիսուս մեջին քնել ա:
Հրես եկավ երեք ծիավեր.
Մեկը Հիսուս,
Մեկը Քրիստուս,
Մեկը Աստուծ:

ԱՀ XX, 115/Դափան

127

Սուրբ Դանիել, մեղա քեզ,
Բան որ մտավ ձեղ տապան,
Կապեց ինձ, առյուծ,
Գելը կծավոր,
Օձը թունավոր,
Կարիճը խիթավոր,
Ջին ծիավոր.
Ութը մատով,
Երկու բոթով,
Սողոմոնի ծիան ծարով,
Աստվածազնի քաղցրիկ կաթով
Կալած կենաս ընդ գալուստ Քրիստոսի:

ԱՀ IX, 112/Վայոց Ձոր-Ազատակ

128

Սուրբ Սերգիս սնար սրտիդ,
Սուրբ Ավետարանը գրկիդ.
Սրտի՛կ, դուն մի վախենար,
Խաչեփայտեն մաս ունիս:
Խաչն հայրական,
Հրեշտակ պահապան,
Լինի հանգստական
Մեր Գորգսուն,
Սրտիկ Գորգմասուն:
էլլամ սարով, իշնամ ծորով,
-Դուն ո՞ւր կիյնաս, տեր թագավոր:
-էրթամ ի տուն հիվընդին,
Բալլին ձգեմ բարձին վրա՝
Չը վախենա սիրտը փորին,
Չը սարսափի միսն ըսկորին:

ԲԱ, 471/Պարտիզակ

8 եէր, *ուղղ. մեր ըստ մերձավոր իմաստի:*

129

Հույս ունիմ յուսիս,
Ասված ունիմ մտիս,
Ասվածամեր դեմ երեսիս,
Գաբրել հրեշտակ վըր աջ թևիս.
Ոչ վախենամ, ոչ զարգնդիմ
Ունչու գալուստն Քրիստոսի:

ԱՀ IX, 112/Վայոց Ձոր-Ազատակ

130

Ուսին, ուսին զսուրբ կուսին,
Ընկո էկավ Քրիստոս որդին,
Խրեղեն խաչը վըր թևին,
Երեք բևեռ կար վըր խաչին.
Մեկը՝ սիրտն ի սատանային,
Մեկն՝ ամեն չար խափանի,
Մեկը՝ չվախենա սիրտն ի փորին:

ԱՀ IX, 112/Վայոց ձոր-Ազատակ

131

-Մարյամ մայր, քուն ես, թե՞ զարթուն:
-Ոչ քուն եմ, ոչ զարթուն:
Պառկեցա, էրազ տեսա,
Ետ զարթա՝ սարսըփեցա.
Փշե պսակ էր չինած...

Գլխիվեր ոտքդ եմ ընկել,
Անունդ ի՞նչ է:
-Սուրբ Սարգիս:
-Որդուտ անունն ի՞նչ է:
-Սուրբ Կարապետ:
Առնեմ ընկնիմ դռներդուռ,
Գաս էնես օգնութեն,
Քու ձիուդ կարողութեն.
Քու ձիուդ կամկի վրա,
Անարատ ծովի վրա,
Շատ մարդ ընկի գերութեն,
էրթաս ընես ընկերութեն,
Թուրտ քաշես, էնես փրկութեն:

ՋԲ, 17/Ջավախք

132

Աստվածամարը ծունկի դրից,
Աչքը ի լաց ու աղաչից
Որդին Աստուծո.
-Ի քո խաչիդ է երկրպագած,
Քո սուրբ մեռոնով իմ մկրտված,
Քո ձեռքովդ իմ ստեղծված:
Վա՛յ յիս,
Եղուկս իմ միռոնիս.
Ատենական հուրն էրիմ,
Կրակն վառ սասանական,
Փողն գոչե գաբրիելական:
Մեկը մեջը աշխարհիս՝
Գիշեր-ավուր իրեք անգամ
Չարն խափանիս, բարին կատարիս:

ՀԺԴ VIII, 99/Ղրիմ

133

-Որդի դաբալաբզիկ,
Հե՞ր կիլաս, հե՞ր կվախնաս:
Ասաց.-Կլամ, կվախնամ
Գիշերվա գիշութենեն,
Ցերեկվա փորձութենեն:
Ասաց.-Մի՛ լա, մի՛ վախնա,
Չէ՞ դու խովիվ ես Քրիստոսին.
Գնա եկեղեցին, գիրեն
Ջինջիլ դիր վիզնը գողուն,
Կապա ձեռնը դևուն,
Անորեն ետև պատին՝ քամք զօձուն,
Չուր գա բարի լուս Քրիստոսին:
Քրիստոսի գալուս,
Չար խափանոս:
էկեղեցի պախպանեցի,
Որ պախեցիր տերնը խաչին,
Կուսը՝ յերին,
Գերեզմանը Քրիստոսին,
Մեռած մարմինը մութըգիշերին,
Դուռը բացինք անմահութենին:
Մեր Տերն էրեվեցավ,
Չեն տվեց չորս կողմը ցավ,
Չորս կողմը աշխարհ քնդաց.
Որն արդար էր՝ դա խնդաց,
Որ մեղավոր՝ քզուռ (քան զուռ) դողաց:
Մարիամ չոքավ վըր ուր ծնկան,
Արցունքով զուր ծունկ լվաց.
Ասաց.-Տե՛ր, մի տանիր մեղավորս մեղաց,
Քու յավազան ա մկրտած,
Քու խաչին ա դիպուցած:

ԱՀ IX, 111/Վայոց Ձոր-Էրդափին

134

Սիրտը պորտի տեղը,
Սի՛րտ, նստի իրաց տեղը:
Հրեն գալիս են եիրեք ախպեր.
Բղավել ուներ կատվի պես,
Մազեր ուներ սատանի պես,
Ոտները՝ ձիու պես,
Գլուխը՝ եզան պես,
էրգարությունը՝ գոմեշի պես:
Ի՞նչը վախացրեց.
Ծա՞ռը վախացրեց,
Մա՞րդը վախացրեց,
Ամբի գորո՞ցը վախացրեց,
Թե՞ գելը վախացրեց,
Թե՞ սատանեն վախացրեց:
Քու վախացնողին սրտումը ցավ,
Աչկումը՝ կրակած հող,
Շեմքումը՝ կրակ,
Կտուրիցը՝ կայծակ,
Ընգնին ծովի մեջ,
Չկարենան դուրս գան:
Տե՛ր Աստված, ձեռքը մերը,
Անունը քունը դեղ դարնա.
Ո՛վ Աստվածածնի զորություն,
Ո՛վ իրա հորն ու մոր համբուրելու խաչեր,
Դուք քոմագ ըլիք սրան:

ՀԱԲԱ FAV: 5729, 01

135

Ես տեսա՝ շունը շան միս կուտեր,
Իմ ձեռս փարփում:

ՀԱԲԱ FBI: 2980,14

ՖՇՏԻԿԻ

136

Ֆշտիկը ֆշտից, ֆշտեցավ,
Քառսուն կապով կապվեցավ,
Քառսուն անցով արծըկվեցավ:
Էկավ Քրիստոս Տերը,
Կապից ֆշտիկին,
Տրտմեցուց ֆշտիկին,
Դմրեցուց ֆշտիկին.
Աստվածամոր աղոթքը՝
Քրիստոսին բերանը:

ՀԱԲԱ, FFIII: 2538, 03/ Նոր Նախիջևան - Չալբըր

ԱՆՇԱՆՈԹ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ

137

Օրհնյալ տեր մեր Հիսուս Քրիստոս, ամեն.
Հայր մեր...
Թե նազար ես,
Թե գեշ աչք ես,
Թե գեշ նիաթ ես,
Թե քաղցր նիաթ ես,
Թե նորեն ես,
Թե փլեն ես,
Ինչ ցավ որ ես՝
Քեզի երդվեցընեմ
Խաչ ու խաչափայտն Քրիստոսին,
Բուրվառն ի Հարոնին,
Մատանին Սողոմոնին,
Քնարն ի Դավթին,
Տախտակն Աստվածածնին,
Չումբարն Տիրամոր,
Չորս գլուխ Ավետրան,
Ութ կարգ շարական,
Ինն դաս հրեշտակ,
Աթոռն Աստուծո,
Աստված ճշմարիտ:
Սուրբ Կարապետու տվուկն ա,
Սուրբ Կարապետու ձեռքովն
ելցես, գնասցես:

ԷՋԺՋ, 301/ Խլաթ

ՏԱՐԲԵՐ ՑԱՎԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ

138

Աի է զարիայ կապուտ և կարմիր ծովուն.
Թէ խիթք ես, թէ տենդ ես, թէ ջերմ ես,
Թէ գլխացավ ես, թէ յաչից ցավ ես,
Թէ սրտացավ ես, թէ ոսկերացաւ ես,
Թէ տութմայ ես, թէ ղոլինճ ես,
Թէ քամի ես, թէ դեղնացաւ ես,
Թէ չարոց-դևոց ես,
Թէ չար օրէ ես, թէ չար սհաթոյ ես,
Թէ զինչ ազգ ցաւ որ իցես,
Երդումեցուցանեմ զքեզ,
Զի Յիսուս Քրիստոս յայն կենդանին,
Որ եկն և գալոց է՝
Ամենայն ցեղ ցաւ հալածիս և չիք դառնաս,
Ոչ մտանես, ոչ մերձենաս
Ի դիմաց ծառայիս Աստուծոյ:

Մատենադարան, Ձմայիլ № 19

12 գալոց ես *ուղղ. ըստ իմաստի:*

ՀԻՎԱՆԴ

139

Աղոթիմ ութը մատով, երկու բութով,
Տասներկու հայրապետի զորութինով,
Անանիոսի, Թանյանոսի զորութինով.
Բժշկիմ՝ բժշկելով */հիվանդի անունը/*
ծառայիս,
Ամեն չարեն, փորցանքեն պահպանվի.
Իմ ձեռքս չիլա,
Աստվածամոր ձեռքը 'լա:

ՀԱԲԱ, FFIII: 2540, 02/Նոր Նախիջևան-Չալբըր

140

Ո՜վ օխտը անվան տեր Սըպ Կարապետ,
Ո՜վ Հազարանփրկիչ,
Ո՜վ սրբոց գլոխ Սուրբ Աստվածածին,
Դու քո ստեղծած հոգին չկորցնես.
Ո՜վ Արաբ Սըպ նիշան,
Դարալագյազու Սուրբ խաչ,
Բաղչու Կարմրակ,
Փուտկու Սուրբ Գեորգ, դու հասնես,
Ո՜վ ազատարար սրբեր, դուք հասնեք,
Դուք ազատեք ցավից, չոռից,
Չար աչքից, չար լեզվից,
Ղադից, ղադաբալից,
Իլլաքի անզգամի նհաղ շառից՝
Ազատեք ամեն հայ քրիստոնին:
Ո՜վ աղա սուլթան Սըպ Կարապետ,
Քո ձեռն ա, իմ ձեռը չէ,
Դու պիտի էս ցավին փարատություն տաս:

ԱՀ XVII, 112/ Նոր Բայազետ

141

Ի՜մ աստված, օգնես տկարին,
Ղոպչաղ Սուրբ նշան, դու օգնես,
Իմ անուշ Սուրբ Աստվածածին, դու օգնես,
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, դու օգնես,

Սուրբ Ամենափրկիչ, փրկես էս
ննջալիս էս ցավից,
Իմ Աստված, բոլորի գլխավոր Աստված,
դու օգնես:

ԷԱԺՋ, 303/ Վաղարշապատ-Ալիբեկլու

142

Մեղայ, ի՜մ Տեր, մեղայ, ի՜մ Տեր,
մեր մեղացն ի.
Քյաղցրի՜կ Տեր, քյաղցրի՜կ Քրիստոս,
տյու առողջացուցես.
Իրեսս սև ու մոխիր եմ,
Կգվեմ քյո ոտքեր, ճա՛ր արող Տեր,
Իմ անճար խիվընդին ճար արա.
Կզվեմ, քյո ոտք պաչեմ, դառնամ՝ քյո ծեռ.
Ումուտ արող Աստվա՛ծ, ումուտ
քե եմ արե,
Հյուիս քենով ի:

ԷԱԺՋ, 301/ Վաճ

ԴԻՎԱՀԱՐԻ[28]

1(143)

Ծառ մի կայր ի մէջ երկրի
Ոչ ճուղն ունէր և ոչ տերև և ոչ արմատ.
Արծիւ մի նստեալ էր ի վերայ նորա,
Որ ոչ գլուխ ունէր և ոչ թեւ և ոչ ոտք:
Հարցունք եղեն յարծևին և ասէին.
«Չի նստեալ ես ի ծառոյդ,
Որ ոչ ճուղն ունի և ոչ տերև և ոչ արմատ»:
Ասէ արծիւն այն դշիղն.
- Երթամ ի գլուխն մարդոյ,
Չմիսն որսեմ,
Չուղուղն ծըծեմ,
Չաչից լոյսն պակասացնեմ:
Լսեցին զայն հրեշտակք և
հրեշտակապետք,
Հրամայեցին և ասեն.
-Կապեալ կապեմք զքեզ երեք հարիւր և
ԿԵ[65] սրբովք,
Որք կան ի սիրտ արեգական,
Որ ոչ հրեշտակք գիտեն և ոչ
հրեշտակապետք,
Բայց միայն հայր Աստուած:
Եւ դարձեալ ասեմ.
Կապեմ զքեզ երեք հարիւր ԿԵ[65] սրբովք,
Որք կան ի մէջ ծովուն,
Որ ոչ հրեշտակք գիտեն և ոչ
հրեշտակապետք,
Բայց միայն հայր Աստուած:
Եւ դարձեալ ասեմ.
Կապեմ զքեզ ի քնարն Դաւթի,
Ի մատանին Սողոմոնի,
Ի տախտակն Մովսէսի,
Ի պատմուճանն Ահարոնի,
Ի դաստառակն Քրիստոսի,
Ի քաղցր կաթն սուրբ կուսին,
Ի չորեք բևեռն Քրիստոսի,
Որ Տեառն արեամբ ներկեալ ես:
Կալեմք կապեմք զքեզ կապանօքն
Պօղոսի և Պետրոսի,
Պայծառակերպութեամբն Քրիստոսի,
Որ պայծառակերպեցաւ ի Թաբոր լերինն
Երեք սրբեացն լուսովն,
Որ երևեցաւ ի վերայ անմահ
գագաթն Քրիստոսի:
Չունիս իշխանութիւն,
Ոչ աճիս և ոչ նիւթիս,
Եւ ոչ զօրանաս, խստանաս,
Այլ չորանաս և կորընչիս:
Չիք ես, չիք դառնաս
Բանիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
Ծառայիս Աստուծոյ տիրացու Գրիգորիի,
Այս անունն դիւահար մարդոյն:
Կապեմ զքեզ ԻԴ [24] մարգարէիւքն,
Երկոյտասան առաքելովքն,
ՀԲ [72] աշակերտովքն,
Ի փառքն Աղամայ՝ ի
վայելչութիւնն դրախտին,
Խոտն, որ հովանի եղև,
Ի բանն, որ ասաց Յիսուս ի վերայ խաչին՝
էլի, էլի, լամա սաբաքթանի[29]:
Կապեմ զքեզ ի պետութիւնքն և
իշխանութիւնքն
Եւ ի բարձրեալ սերօբէքն եւ քերօբէքն:
Կապեմ զքեզ, պիղծ դևք, ի
խաչիւն Քրիստոսի,
Չի նա է լուս և լուսատու տիեզերաց:
Կապեմ զքեզ, ՅԿՉ [366] ցաւ
կամ ախտաժետք,
Ի դիմաց որոյ ոչ այլ երևիս.
Եթէ կլխիվայր ես, եթէ կլխիվեր ես,
Եթէ գնալ[յ]ուն ես,
Եթէ կերնի ես, եթէ առիքեն ես,
Եթէ կետի առիւծ ես, եթէ կուլեկ ես,
Եթէ աղվիսուկ ես, եթէ ծերնուկ ես,
Եթէ խուլեկ ես, եթէ խլուրան ես,
Եթէ աչքունքն ես, եթէ մաչիկ ես,
Եթէ շուտիկ ես, եթէ կորտնիկ ես,
Եթէ սև բազուկ ես,
Եթէ խումիան ես, եթէ խոցունկ ես,
Եթէ անցաւ ես, որ մարկարկոլ ես,
Չիք ես եւ չիք դառնաս:

---

[28] Հայ բանավոր ավանդության ցարդ հայտնի տպագիր և անտիպ աղոթքներում դիվահարության դեմ ուղղված հմայական աղոթքներ չեն վկայված: Ժողովրդական կենցաղում խելացնորության այդ ծանր հիվանդությունը բուժուում էին հատուկ հմայագործ բուժարարները՝ հմայական տարբեր արարողություններով, բուժամիջոցներով և գրավոր աղոթքներով (Սողոմոնի, Վեցհազարյակ կն), որոնք նրանց մենաշնորհն էին: Թերևս այդ է պատճառը բանավոր ավանդության մեջ դրանց բացակայության: Հաշվի առնելով այդ պակասը՝ սույն հավելվածում են զետեղվում միջնադարյան գրավոր աղբյուրներից քաղված դիվահարության աղոթքների մի քանի ընտիր նմուշներ:

[29] Խաչի վրա Քրիստոսի արտաբերած վերջին խոսքն է եբրայերեն, որ նշանակում է «Աստված իմ, Աստված իմ, ինչու՞ թողեցիր ինձ»:

Զգիրս ես կարդամ
Եւ դեղ Յիսուս Քրիստոս լինի
Ծառայիս Աստուծոյ տիրացու
Գրիգորիոն այս անունն:
Կապեմ զքեզ,
Եթէ երկնային ես, եթէ երկրային ես,
Եթէ ի ծովու ես, եթէ ցամաքու ես,
Եթէ յարևելից ես, եթէ յարևմտից ես,
Եթէ յարաւային ես, եթէ յիւսիսային ես,
Եթէ դև ես, եթէ սատանայ ես,
Եթէ Բեեզդեբուղ ես, եթէ ալ ես,
Եթէ քաջք ես, կենդար ես,
Եթէ Նոփիաղն ես, եթէ դասն նետ ես,
Եթէ իշխան դիւաց ես,
Եթէ համր ես, եթէ խուլ ես:
Կապեցի զքեզ իշխանութեամբն հօր,
Տերութեամբն որդոյ,
Զօրութեամբն սուրբ հոգոյն,
Բարեխօսութեամբ սուրբ կուսին
Մարիամայ
Եւ ամենայն սուրբ կուսանացն
Եւ աղօթիւք սուրբ հայրապետաց և
ճգնաւորաց,
Եղեցի բժշկութիւն տիրացու Գրիգորին,
Այս անուն դիւահար մարդուն:

Մատենադարան, ձեռ. 6678, 43ա հտն.

3 առիւծ *ուղղ ըստ իմաստի արծիւ, հմմտ. 5 տողի հետ:*
7 ջուղն *ուղղ. ծուղն, հմմտ. 2 տողի հետ:*
8 առիւծն *ուղղ. ըստ իմաստի արծիւն, հմմտ. 5 տողի հետ:*
11 ծեծեմ *ուղղ. ըստ իմաստի ծըծեմ:*
15 ԿՍ *ուղղ. ըստ իմաստի ԿԵ, հմմտ. 20 տողի հետ:*
17 կիտեն *ուղղ. գիտեն, հմմտ. 22 տողի հետ:*
20 հարուր *ուղղ. հարիւր, հմմտ. 15 տողի հետ:*
29 տաստիարակն *ուղղ. ըստ իմաստի և 8153 ձեռագրի՝ դաստառակն:*
33 կասչեմք *ուղղ. ըստ իմաստի կալեմք:*
52 էլի, էլի լամայ սափայ թանի *ուղղ. ըստ Մատթէոսի ԻԷ,46:*
61 կերն էս *ուղղ. ըստ 8153 ձեռագրի կերնի /=գերանի/ ես:*
62 կիտես *ուղղ. ըստ 8153 ձեռագրի կետի /=գետի/:*

2(144)

Ջերմութիւն դիւացն զի որպէս ջուր
ելանէ աղբերացն,
Այնպէս ելանեն դևքն և խաբիչ
զորդիս մարդկան,
Զոր Տէր Աստուած հեռացուսցէ ի ծառայէս
Աստուծոյ Գրիգորիոն:
Եւ կապէի կախարդութեամբ իմով զերկինն,
Որ ոչ գայր զանձրև,
Ջերկիր, որ ոչ բուսանէր սերմանիս իւր,
[Ջ]արեգակն և լուսինն և զաստեղս՝
հանդերձ հաստատութեամբ,
Ջծով, որ ոչ տայր զալիս իւր,
Ջծառ, որ ոչ տայր զպտուղս իւր,
Ջձկունս, որ ոչ լողային ի ծովս,
Ջգետս, որ ոչ գնային,
Ջբերանս, որ ոչ բխէին,
Ջթռչունս, որ ոչ վերանային զօդս,
Ջանասունս, որ ոչ յղանային,
[Ջ]յղիս, որ ոչ ծնանէին,
Ջկանայս, որ ոչ յղանային,
[Ջ]զեռուն, որ ոչ զեռին,
[Ջ]վաստակաւորս, որ ոչ վաստակին,
Ջվաճառականս, որ ոչ վաճառէին,
Ջօդն, որ ոչ քնդար.
Եւ կապէի զերկինս յօդօքն
Եւ զերկիր ամենայն զձեռօքն,
Որ ոչ անցանէր ընդ հրամանս իմ՝
Ռ [1000] և Ճ [100] և ՄԹ [209]
յղանք կանանց
Եւ կախարդաց և արանց կանանց
Եւ արձակեալ եղիցի ի ծառայէս
Աստուծոյ Գրիգորիոն:
Եւ զոր յառաջն կապէի չար
դիւական աղանդօք,
Յայժմ արձակեալ եմ զամենայն կապեալս
Հրամանաւն Աստուծոյ.
Կայցեն երկինք և երկիր ի
հաստատութեան իւրեանց,
Հող զբոյսս դալար բուսուսցէ,
Ծառք պտղաբերք տացեն
զպտուղս իւրեանց
Եւ ամենայն կապեալք արձակումն առցեն
Յանուն սուրբ երրորդութեան Աստուծոյ:
Երդմնեցուցանեմ զքեզ, սատանայ,
Անուամբն Աստուծոյ և տէրն մեր
Յիսուսի Քրիստոսի
Եւ անուն այն,
Որ Ադամ բարկոյն ետ ի դրախտին
Եւ ինն դասք հրեշտակքն, որ
ելանէն և իջանէն
Եւ յանուն սերօբէքն,
Որ կան ի սպասաւորութեան
որդւոյն Աստուծոյ
Եւ թևս քօղարկելով ծածկեն
զերեսս իւրեանց,
Երգեն և ասեն.
,,Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց,
Լի են երկինք և երկիր փառօք:

Երդմնեցուցանեմ զձեզ, չար դևք և որդիք սատանայի,
Զի ոչ լինիք օգնական ամենայն կախարդաց և չարագործաց:
Երդմնեցուցանեմ զքեզ, սատանայ՝
Գեղեցկութիւն Ադամայ,
Վայելչութիւն դրախտին,
Ի խոնարհութիւն ամենայն սրբոց
Եւ ի սաղմոսն Դաւթի իմաստութեան
Եւ ի մատանին Սողոմոնի,
Ի գաւազանն Մովսէսի,
Ի աւետիքն Գաբրիէլի,
Զոր ետ կուսին Մարիամու ի ծնունդն
Եւ ի մկրտութիւնն Յիսուսի Քրիստոսի,
Որ մկրտեցաւ Յորդանան Յովաննէ.
Եւ ի սուրբ հրամանքն,
Որ հրամայեաց յանդամնալուծին
Եւ ի թուքքն, որ էբաց զաչս կուրին
Եւ ի խաչելութիւն Քրիստոսի,
Ի կեղարդն և ի փուշեղէն պսակն,
Ի հեղումն արեանն Աստուծոյ,
Որ խաչեցաւ ի վերայ սուրբ խաչին:
Երդմնեցուցանեմ և կապեմ և հալածեմ զձեզ, չար դևք,
Յարութեամբն Քրիստոսի,
Համբարձմանն Քրիստոսի
Եւ ի գալուստն հոգոյն սրբոյ
Եւ այլակերպութեամբն Քրիստոսի,
Որ այլակերպեցաւ ի Թաբօր լերինն,
Որ ոչ ունիք իշխանութիւն, դևք և աղանդաւորք,
Եւ կախարդութիւն արանց և կանանց՝
Մերծեցնել ի ծառայիս Աստուծոյ տիրացու Գրիգորին:
Երդմնեցուցանեմ կապաւոր[ք] և աղանդաւորք,
Որ կան ի վերայ երկրի,
Որ ոչ մերծենան ծառայս Աստուծոյ Գրիգորին:
Գիրս հրամանս պատահի,
Չարն ի բաց միշտ հալածի,
Ի կապօկան և պիտանի
Աղքատ Աստուծոյ և աղանդքն լուծանի
Ի ծառայս, որ է բարի,
Յոյժ պատուական և պիտանի,
Աղքա[տա]սէր ամենայնի,
Սուրբ հայր ըստ Սաղմոսի,
Ամէն և եղիցի,
Ուր աղանդք կայ աշխարհին,
Արք և դիւք ազգի-ազգի,
Ամէնն ի բաց հալածեսցէ:
Եւ տէրն օրհնեալ յամենայնի,
Որ ստեղծիչ մարդկան ազգի,
Պարգևատու որդոց Սիօնի
Եւ շնորհատու ամենայնի,
Առատաբաշ սպառելի,
Ստեղծողն է ամենայնի,
Երկնաւորաց և երկրաւորաց,
Ամեն եղելոց երևելից և աներևութից
Ի ծառայս Աստուծոյ տիրացու Գրիգորին այս անուն:

Մատենադարան, ձեռ. 6678, 47ա, 48, 48ա, 49

1 ջիւր *ուղղ. ջուր:*
8 զայլիս *ուղղ. զալիս:*
10 լղային *ուղղ. լողային:*
17 զձեռին *ուղղ. զձեռին:*
20 չօքն՝ որ ոչ քնգար *ուղղ. ըստ իմաստի զօդն, որ ոչ քնդար:*
24 յաղանք *ուղղ. յղանք:*
63 փոշեղեն *ուղղ. փուշեղեն:*
72 ունիս *ուղղ. ըստ իմաստի ունիք:*
79 ի բայց *ուղղ. ի բաց:*
94 առատապան *ուղղ. առատաբաշ:*
97 աներևօթից *ուղղ. ըստ ձևի:*

3 (145)

Բանն անծախելի,
Լոյսն անճառելի,
Թագն անպարագրելի,
Օր հրեշտակաց զարհուրելի,
Մատանին Սողոմոնի,
Տախտակն Մովսէսի,
Պատմուճանն Ահարոնի,
ԻԲ [22] պատուիրանն Մովսէսի,
Սուրբ արիւնն մանկանց Բեթղեհեմի,
Քահանայութիւնն Մելիքսեդէքի,
Աւետիքն Գաբրիէլի,
Չորեքկուսեան աթոռն-
Մինն մարդ, մինն առիւծ, մինն արծիւ
Եւ մինն եզի կերպարան,
Որոյ վերայ բազմի աներեւատեսիլն Աստուած:
Այս ամենայն անուանքս երբ յիշին կամ կարդան,
Դևքն հալածին,
Սատանայքն սարսին,
Չար ակն պատառի,
Չար նիաքն խափանի,
Չար աչքն կուրանայ,
Չար սիրտն չորանայ,
Ի դէմս ծառայիս Աստուծոյ...
Ամէն:

ԷԱԺՄ, 227

Գ. ԾՆՆԴԿԱՆԻ ԵՎ ՆՈՐԱԾՆԻ (№№ 146-158)

ԾՆՆԴԿԱՆԻ

146 ա

Թազա հացի ֆուտ էկավ,
Ելեք աշեցեք վո՞վ էկավ.
Իրեք իրեք պոզ ծիավոր,
Իրեքն ա կանանչ կապավոր.
Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
Մեկը տղա մանուկ սուրբ Կիրակոս:
էկավ սարով, իջավ ձորով
Հրեշտակին դեմը բարով:
- Տեր, ու՞ր կերթաս քու երամով:
- Կերթամ տունը հիվընդին,
էրթիկը ծննդականին
Ժնջիլ ցկեմ վրա պատին,
Բալնիք ցկեմ վրա բարձին,
Օր չմարի սիրտը փորի[ն],
Օր չկլորի լեզուն բերնին:

ՋԲ, 3/ Ջավախք
ՀԱԲԱ, FFI; 7520, 01/ Գյումրի

1 ՀԱԲԱ ֆուտ կուգա:
2 ՀԱԲԱ ելեք աշեք վո՞վ կուգա:
3 ՀԱԲԱ իրեք հատ:
4 ՀԱԲԱ իրեքն էլ կարմիր կապավոր:
6 ՀԱԲԱ տղա *չիք*:
9 ՀԱԲԱ տեր իմ, ու՞ր կերթաս:
10 ՀԱԲԱ *չիք*:
12-13 ՀԱԲԱ քցեմ:

146 բ

Տաք հացի հոտ էկավ,
էլեք աշեցեք՝ ո՞վ էկավ,
Երեք ձիավոր հրեղեն,
Կապա հագած մազեղեն.
էլան սարով, իջան ձորով՝
Հրեշտակին դեմը բարով:
Մեկն էր Հիսուս, մեկը՝ Քրիստոս,
Մեկը՝ մանուկ տղա սուրբ Մարտիրոս:
Մեկը՝ սուրը սատանին,
Մեկը՝ նետը գազանին,
Մեկը՝ չարը խափանի:
- Տեր, ու՞ր կերթաս, ու՞ր:
- Հիվանդին դուռը,
Տղոցկընին էրթիկը,
Շուրջառ ձըգեմ, էրթիկը բանամ,
Բանլիքըս ձըգեմ վըրա բարձի,
Ջնջիլ քաշեմ վըրա պատի.
Դուռը՝ գողը հալածի,
էրթիկը՝ գազան հալածի:

ԺՍԲ, 5/ Ախալցխա-Ծուղրուտ

146 գ

Թաժա խացի խոտ ա գալում,
Ելեք տեսեք ո՞րն ա գալում.
Իրեք պոզ ծիավոր ա գալում.
Մեկ Հիսուս, մեկ Քրիստոս,
Մեկ Մայրամ Ասվածածին:
էլան սարով, շրջվան ձորով,
Հրեշտակադեմ առով-փառով:
Ասավ.- Իմ Տեր, ու՞ր կերթաս
հազար բարով:
- Կերթամ դուռն հիվընդին,
էրթիս բանամ ծննդականին,
Բալնիս թալեմ վըր բարձին,
Որ չը վախի սիրտը փորին,
Որ չըկապվի լեզուն բերնին,
Ամեն:

ԲԳ, 106/ Բայազետ
էԱԺՋ, 304 / Բայազետ

1 էԱԺՋ թազա հացի հոտ ա գալի:
2-3 էԱԺՋ գալի:
5 էԱԺՋ մեկ Տիրամայր Աստվածածին:
6-7 էԱԺՋ չիք:
8 էԱԺՋ Տեր իմ, ու՞ր կերթաս, առաջ բարով:
9 էԱԺՋ կերթամ *չիք*:
10 էԱԺՋ բանամ *չիք*:
11 էԱԺՋ զնջիլ թալին բոլոր բարձին:
12 էԱԺՋ չբոլորի:
13 էԱԺՋ չպապանձվի:
14 էԱԺՋ մինչ գալոց Քրիստոսին:

146դ

Թազա հացի ֆոտ ա գալի,
Վերեք տեհեք՝ ո՞վ ա գալի.
Մեկ Հիսուս, մեկ Քրիստոս,
Մեկ կույս Աստվածածին:
Հարցրեցի.- .Յու՞ր եք էքում:
Ասին.- էքանք դուռ ծննդականին,
Բալնիք քցինք բարձն ի բոլոր,
Չվախենա սիրտը փորին:

էԱԺՋ / Վաղարշապատ

146ե

Թաժա հացի հոտ էկավ,
Յելեք տեսեք էն ո՞րն էկավ:
Երեք բոզ ծիավոր էկավ.
Մեկն է Հիսուս, մեկն է Քրիստոս,
Մեկելն՝ Ընծայիս Աստվածածին:
Յէլան սարով, յիջան ձորով՝

Բյուրք ու հազար հրեշտակով:
Մեր Տերն ըսավ.- Ու՞ր կերթաք:
-Դուռը հիվնդին, երդիք տղոցկնին,
Բալնիք թալենք վիրև բարձին,
Որ չըվախնա սիրտն ի փորին՝
Չուր ի գալոց Քրիստոսին.
Աստված գալոց չար խափանե:

ՀԺԴ VI, 143-144/Վաղարշապատ

146զ

Թաժա խացի խոտ կուգա,
էլեք տեսեք՝ վո՞վ կուգա.
Իրեք բեռզ ծիյավոր կուգա.
Մեյն ի Հիսուս, մեյն ի Քրիստոս,
Մեյ՝ Տիրամայր Աստվածածին:
էլան սարով, սոջվան ծորյով,
Խրիշտայն իրէ տեմըն փադով.
- Էն դո՞ր կերթաք խազար պարյով:
- Կերթանք տուռն խիվընդին,
Երդիս ծընընդկընին,
Պալնիս թալենք պյուլոր պատին,
Որ չվախենա սիրտն ի փորին:

ՀԱԲԱ FBI: 84/ Վան
ՊՎ, 116/ Վան
ՀԱԲԱ FAV: 3097, 01/ Ռշտունիք
ՀԱԲԱ FAV: 3089, 04/ Ռշտունիք
ՀԱԲԱ FFII: 7293, 01/ Վան

1 ՀԱԲԱ FAV կըգա:
ՀԱԲԱ FFII թազա խացա:
2 ՀԱԲԱ FAV: 3089 մե տեք՝ վո՞վ կըգա:
3 ՊՎ էրկու խատ պյոզ պյոզ ծիավոր:
ՀԱԲԱ FAV կուգա *չիք:*
ՀԱԲԱ FFII բոզ-բոզ:
4 ՊՎ մեկն ի Հիսուս ՙվ Աստվածածին:
ՀԱԲԱ FAV: 3097 մեկն ա:
ՀԱԲԱ FAV: 3089 մեկն էր:
ՀԱԲԱ FFII մեկ Իսուս, մեկ Քրիստոս:
5 ՀԱԲԱ FAV: 3097 մեկն՝ Հընդանից:
ՀԱԲԱ FAV: 3089 մեկ՝ Կենդանին:
ՀԱԲԱ FFII Կենդանանից սուրբ:
6 ՊՎ էլանք, շըռջըվանք:
ՀԱԲԱ FAV: 3097 էջան ծորով:
6-8 ՀԱԲԱ FAV: 3089 *չիք:*
7 ՊՎ իմ տերն էկավ դեմըս փառով:
ՀԱԲԱ FAV: 3097 իրյեք խազար բյուռ խրիշտկներով:
ՀԱԲԱ FFII մեր տեր իրե առքով, փառքով:
8 ՊՎ ասի՝ տիո՞ր կերթաս խազար բարով:
ՀԱԲԱ FAV: 3097 եմ տեր, դո՞ր կերթաս առաջ բարով:
9 ՊՎ ասաց՝ կերթամ դուռ խիվնտին:
ՀԱԲԱ FAV: 3097 կերթամ դյուռ:
ՀԱԲԱ FAV: 3089 գացին դուռ խիվընդին:
10-11 ՀԱԲԱ FAV *չիք:*
11 ՊՎ թալեմ:
12 ՊՎ, ՀԱԲԱ FAV: 3089 *չիք:*
ՀԱԲԱ FAV: 3097 քեշեմ բոլոր բարցին:
13 ՀԱԲԱ FAV չըվախենա սիրտ մըչ փորին:
ՀԱԲԱ FFII չըվախենա:
14-15 ՊՎ կալած կենա, կապած կենա չում գալուստ դատաստանին:
14 ՀԱԲԱ FAV: 3097 չուր Քրիստոս գա՝ չար խափանի:
ՀԱԲԱ FFII չում գալստյանն Քրիստոսին:

146է

Թազա խացա խոտ իրէ,
էլեք տեսեք՝ վո՞վ իրե.
Իրեք, իրեք պյոզ ծիավոր,
Կանաչ կապավոր.
Մեկն Իսուս, մեկ՝ Քրիստոս,
Մեկն Ընտանյաց Աստվածածին:
էլանք սարով, շրջվանք ծորով,
Իմ Տերն էկավ առոք- փառոք:
Ասի.- Դո՞ր կերթաս, իմ Տեր, բարով:
Ասաց.- Կերթամ դուռն խիվանդին,
Երթիս ծընընդկընին,
Բալնիս թալեմ բուլոր պարծին,
Ջընծիլ թալեմ բուլոր պատին,
Որ չը վախի սիրտն ի փորին,
Չում Քրիստոս գյա դատաստանին:
Պախապան խրեշտակ վըր աջ թևիդ,
Մուքայել խրեշտակ վըր ձախ թևիդ,
Աստվածամոր բյունդն բերնիդ,
Որ չը վախե սիրտդ ի փորիդ:

ԱՀ XX, 166 / Վասպուրական
ՎՍԱ, 67 / Վան
ԳԱԹ, Սրվանձտյանի ֆոնդ, IVբ, № 18 / Վան

ՎՍԱ *սկզբից ունի հետևյալ պահպանական երկտողը.*

Սուրբ Սարգիյս ամուր պարիս (պարիսպ),
Ամուրական խաչն էր թիվիս:

1 ՎՍԱ խացի:
ԳԱԹ խացոց:
3 ՎՍԱ, ԳԱԹ իրեյք բյոզ բյոզ ծիավոր իրե:
4 ՎՍԱ, ԳԱԹ *չիք:*
5 ՎՍԱ մեյն ի:
6 ՎՍԱ մեյն ի Կենդանանից:
ԳԱԹ մեկ Կենդանանոց:
7 ԳԱԹ էլան, շրջվան:
ՎՍԱ *փոխանցվել են 10-11-րդ տողերը հետևյալ տողի հավելումով, իրրև հարցի պատասխան.*

Կելնեյնք սարով, սրջվենք ծյորով,
Խազար խիյնգ բյուր խրիշտակներով:

8 ՎՍԱ, ԳԱԹ *չիք:*
9 ԳԱԹ էն դո՞ր կերթաք, իմ տեր, բարով:

ՎՍԱ ասին՝ դեռ՝ կերթայք:
10 ԳԱԹ ասաց *չիք:*
ՎՍԱ կերթայնք:
11 ՎՍԱ դյողցվորին:
12 ԳԱԹ վերև:
ՎՍԱ զընջիլ կապեյնք պյուլոր պատին:
13 ԳԱԹ *չիք:*
ՎՍԱ պանլիս թալեյնք վերև պառցին:
15 ՎՍԱ չյունմ 'ի գյալոց դատաստանին:
ԳԱԹ չումմ Քրիստոսին Իսոս գալոց չար խափանեց:
16-19 ՎՍԱ, ԳԱԹ *չիք:*

146ը

Էրած տեսա՝ զարհուրեցա,
Էլա տեղիս մեչը նստա:
Էլեք աշեցեք՝ վե՞վ քուքա,
Թաժա հացի ֆոտ քուքա,
Իրեք ղըռ ծիավոր քուքա.
Մեկը Իսոս, մեկը Քրիստոս,
Մեկը մարիկ Աստվածածին:
- Իմ Տեր, ու՞ր կերթաս:
- Ծնողաց տուս կերթամ,
Հիվընդի էրթիք կերթամ.
Պանլիք ցկեմ, վրա կողպեմ,
Չը վախենա սիրտ ի փորին:
Վեվ օր ասիկ օրը իրեք անգամ կըսե՝
Ոնչ առընվի, ոնչ փըռընվի,
Ոնչ մահեն մեռանվորի:

ԳԱԹ, Ս.Քամալյանի ֆոնդ, III-15

146թ

Ելեք տեսեք՝ ո՞րն եկավ.
Երեք պոզ ծիավոր եկավ.
Մեկն էր Հիսուսն, մեկն էր կուսին,
Մեկ՝ խանկարած Ասվարածին:
Եկան սարով, գացին ծորով,
Մեր Տերն եկավ խերով, բարով:
- Տո՞ր կերթաս:
- Տուն հիվընդին,
Երդիս տղոցկնին,
Բալնիս թալենք վերև բարծին,
Չը վախենա սիրտն ի փորին,
Չը կլորվի լեզուն բերնին՝
Չուր գալուստ գա Քրիստոսին:

ԳԱԹ, գ, Սրվանձտյանցի ֆոնդ, I բ, № 3, IV, № 2 28
ԼԲ, 51. Սրվանձտյանց 1978, 611

146ժ

Ելա տեհա՝ ո՞վ էկավ.
Իրեք կանաչ կապավոր.
Մեկ՝ Հիսուս, մեկ՝ Քրիստոս,
Մեկն՝ Աստվածածին:
Եկան սարով, իջան ծորով,
Հրեշտակ դեմ դիպավ բարով.
- Էդ յու՞ր կերթաք էդ յարաղով:
- Բալնիս թալեմ բարծի բոլորն՝
Ինչար գալուս Քրիստոս աստված:

ՀԱԲԱ, FFII: 1184, 02 / Կոտայք

146 ժա

Յելեք տեսեք՝ ո՞վ կգա,
-Երեք ծիավոր.
Մեկն Հիսուս, մեկը՝ Քրիստոս,
Մեկը՝ Սուլթան սուրբ Սարգիս:
Եգան սարով, յիջան ծորով:
- Տեր, յու՞ր կերթաս:
- Հիվանդի դուռ:
Բալիշի վրեն բանլիք չի բանի,
Որ տեսնես՝ մի զարուրի:
Եգան սարով, գնացին ծորով:

ՀԲՆ, 1972 / Հրազդան-Աղավնաձոր

146ժբ

Էկան իրեք ծիավոր.
Մեյն էր Հիսուս, մեյն էր Քրիստոս,
Մեյն՝ Հնձանաց սուրբ Աստվարածին.
Էլան սարով, շրչվան ծորով,
Քառսուն-հնուխինգ խաշալամով:
Խարցուցի.
- Իմ Տե՛ր, դո՞ր կերթաս բարով:
- Էլլեմ էրդիս տղոցկանին,
Բանլիս թալիմ պյուլոր բարծին,
Չը վախենա սիրտը փորին՝
Չուրին գալոց Քրիստոսին:

ԷԱԺՋ, 300/ Վան

146ժգ

Վերևեն էկավ իրեք ծիավոր,
Իրեքն էլ կանանչ կապավոր.
Մեկն էր Հիսուս, մեկն էր Քրիստոս,
Մեկն էլ մեր Տերն ինքն էր...
Տերն ըսավ՝ ու՞ր կերթաս:
- Դուռն հիվընդին,
Էրդիքը ծննդկանին.
Բալնիք քցեմ վերան բարծին,
Որ չը վախենա սիրտը փորին,
Չը քլորի լեզուն բերնին՝
Ինչարի գալոցն Քրիստոսին:

ԷԱԺՄ, 184 / Շիրակ

146ժդ

Հրես էկան իրեք, իրեք,
Իրեքն էլ բոզ ծիավոր.
Մինը Հիսուս, մինը Քրիստոս,
Մինն էլ Մարիամ Աստվածամեր.
Ելան սարով, իջան ծորով,
Բյուր ու հազար հրեշտակով:
Մեր Տերը ասավ՝ ու՞ր կերթաք:
- Դուռը հիվանդին,
Երթիկը տղոցկանին,
Բալնիք քաղենք վերև բարծին,
Որ չը վախենա սիրտը փորին:

ԱԳ XI, 36 / Բորչալու

146ժե

Եկան սարով, եկան ծորով,
Եկան իրեք կանանչ կապով.
Մեկն է Հիսուս, մեկն է Քրիստոս,
Մեկ՝ Ջնդաննց Աստվածածին:
Հրեշտակ դեմ դիպավ բարով.
- Դո՞ր կերթաք յառեջ բարով:
- Կերթանք դուռն ի հիվանդին,
Ջինճիլ բերինք բոլոր պատին,
Իրեք բևեռ կէր էն խաչին.
Մեկ՝ սիրտ սատանին,
Մեկ՝ բերան գել գազանին,
Որ ժուռ գա կես գիշերին,
Գա նստի վերև տղացկանին.
Բալնիք քալ[ինք] վերև բարծին՝
Չուր գա գալոց Քրիստոսին:
Պահապան հրեշտակ, պահապան էղնիս:

ԱԳ V, 125. ԱԳԶ, 73 / Մուշ-Բուլանըխ
Մովսիսյան 1972, 129 / Մուշ-Բուլանըխ

12 մեկ, ***ուղղ. ըստ իմաստի որ:***
15 ***Տպագրված է*** **զուր,** ***ուղղ. ըստ իմաստի չուր, հմմտ. նաև Մովսիսյան1972:***

146ժզ

էկան, էկան.
Մեկն Հիսուս, մեկ՝ Քրիստոս,
Մեկ՝ Մայրամ Աստվածածին:
.Յելան սարից, իջան քարից
Հրեշտակաց դեմ դիմացին.
- Բարև ձեզի, .յու՞ր կերթաս:
- Գեստը գցիմ վերա բարծին,
Գեստը գցիմ գլխաբարծին:

ՀԲՆ / Աշոցք-Դազանչի

146ժէ

Ընտիր, ընտիր տվավ բարով.
- Աս ու՞ր կերթաս հազար բարով:
- Երթամ ի տուն ես հիվընտին,
Դառնամ ի տուն տղասկանին,
Բալլիկս խաչ ձգեմ՝
Մինչակ գալուստն Քրիստոսի:

ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, I-5 / Մալկարա

146ժը

Չընկըր, չընկըր ձեն կիգա,
էլլանք հիանք՝ ո՞վ կիգա.
Իրեք ծիավոր.
Մեկ է Հիսուս, մեկ է Քրիստոս,
Մեկ է տղա մանուկ սուրբ Կիրակոս:

ԲԱ, 470 / Դիարբեքիր

146ժբ

էկան իրեք ծիավոր.
Մեկ՝ բոզ ծիավոր,
Մեկ՝ սեվ ծիավոր,
Մեկ՝ կարմիր:
Մեկ՝ Չորեքչընմուտ,
Մեկ՝ Ուրբըթմուտ,
Մեկ՝ Կիրակմուտ՝ ծննդկանի պահապան:

ԷԱԺԶ, 305 / Մուշ

146ի

Ալալուս, Թալալոս,
Ծննդկանի տեր Սուրբ Կիրակոս.
Մեյն Հիսուս, մեյ՝ Քրիստոս
Մեյն Հնձաննա ս[ուրբ] Աստվարածին:
Էլանք սարով, շրջվանք ծորով,
Իմ Տեր ասաց՝ դո՞ր կերթաս բարով:
- Կերթամ դուռն խիվընդին,
էրթիս՝ ծննդկանին՝
Չուր իգա գալոց, չար խափանի:

ԷԱԺԶ, 300 / Վան

146իա

Ալալոց, Թալալոց,
Մանազկերտու Սուրբ Տեփաննոս.
Ծնկեն հետ խըլմ էղավ,
Լեզուն բերանը քաղիք էղավ,
Աչքն էրեսին կուր էղավ:
Էլանք դարով, շրջանք ծորով,
Մեր Տերն էկավ հազար բարով:
Ըսինք՝ Տեր, ու՞ր կերթաս:
- Կերթամ դուռը հիվընդին,
Էլլեմ էրթիկ տղոցկնին,
Ժնճիլ քաշեմ բոլոր պատին,
Չը վախենա սիրտն ի փորին:

ՋԲ, 4 / Ջավախք:

146իբ

Լուսիկ, լուսիկ, երեք լուսիկ,
Երեքին հագածն է ճերմակ.
Մեկն է Հիսուս, մեկն՝ Մարիամ կույս,
Մեկն է Օհան Ոսկեբերան:
Մեկն դուռն կը պահե, մեկն՝ երդիքն,
Մեկն ալ գալած չարերս խափանե:
Չարխափան Աստվածամար,
Տիրամա՛ր, սուրբ Աստվածամար,
Եթամ սարով, գամ ծորով,
Քրիստոս դեմս էլավ զորով:
- Իմ Տեր, ու՞ր կերթաս բարով:
- Կերթամ ի դուռըն հիվընդին,
Ելլեմ երդիքը ծննդկանին,
Խաչս ձգեմ վերա բարձին,
Որ ամըրնա սիրտն ի փորին:
Մարիամ մայր իջավ վերնենի,
Կըրտեց երեք ծյուղ վարդենի,
Ղրկեց ի սուրբ եկեղեցի:
Ով որ ըսե ու լսե,
Օրն երեք անգամ հիշե՝
Աստված իր մեղքը չհիշե:

ՍԳՀ, 341 / Քղի

146իգ

Ուսին, ուսին սուրբ կուսին,
Գյացինք կայնանք տյուռ Մովսեսին:
էկան իրեք ծիավոր.
Մեկն էր Հիսուս, մեկ՝ Քրիստոս,
Տղա մանուկ սուրբ Կիրակոս:
էլանք սարեն, իջանք ծորեն,
Մեր Տերն էկավ՝ առաջ բարին.
- Տեր, յու՞ր կերթաս յառաջ բարի:
- Կերթամ տյուռն հիվընդին,
Բալնիք թողեմ վերև բարցին՝
Ազատիմ ամեն փորձեն:

ՄԱ, ՍՏՀ / Բուլանըխ

146իդ

Երեցք այն տարին շինեցին զԵրուսաղեմ.
Սուրբ շարեցյալ սուրբ սեղանին,
Սուն ու գերան սուրբ տաճարին,
Մելքոն, Գասպար, Բաղդասարին:
Ելան գացին Անդապոլիս[30],
Սարեցին, սար խնկեցին,
Ուխաց, բուխաց:
Քրիստոս էլավ ճերմակ ձիով,
Յիսուսնուհինգ աշակերտով,
Բալնիկ ածին բոլոր բարձին,
Հար[ի] գալոց Քրիստոսին:
Ելեք տեսեք՝ ո՞րն եկավ,
Թաժա հացի հոտ եկավ.
Մեկն է Հիսուս,
Մեկն է սուրբ տղա մանուկ.
Ելան սարով, իջան ծորով,
Բուլք ի հազար հրեշտակներով:
Կաթե աղբուր, քարե տաճար,
Իմ հոգին Աստուծո վճար,
Աստված ընէ իմ հոգուն ճար:

ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, I բ, № 1

146իե

Տուն ունիմ էրկաթե,
Ամեն պատը կղպաք է.
Սուրբ կույսն մեջը քուն,
Սուրբ Գրիգորը երթիքը զարթուն:
էկան իրեք պոզ ծիավոր,
Իրեքն ալ կանաչ կապավոր.
էլան բարձր խոռերով,
Ընկան խորունկ ծովերով,
Հիսուն հազար հրեշտակով:
Հառաջիմ՝ Տեր, ու՞ր կերթաս:
- Երթամ դուռը, փնտռիմ տղոցկանին,
Բալնիք վրան բացիմ, ձգիմ:
Սուրբ սիրտ ունիմ,
Սուրբ գոտի կապված ունիմ:
Անթիանոս, Պողոս, Պետրոս,
Գերեզմանը Տերն մեր Հիսուս:
Աստվածամար քուն էղավ, էրազ տեսավ,
Բեթղեհեմ քաղաք ընծայեցավ,
Խանձարուրով փաթաթվեցավ:
Անարժան քող էրեսիս,
Ի քող տուր, ցա՛վ, զիս:

ՀԺՀ VIII, 97 / Ղրիմ

146իզ

Տուն ունիմ երկաթե,
Պատերը ամեն կպղակ է,
Սուրբ կույսը մեջը քուն է,
Սուրբ Գրիգորը զարթուն է:
Երեք-երեք պոյ ծիավոր,
Երեքն ալ կանանչ կապավոր.
Մեկը՝ Հիսուս, մեկը՝ Քրիստոս,
Մեկը՝ մեր Տերը:
Ելլանք բարձր սարերով,
Իջանք խոր-խոր ծորերով,
Հարյուր հազար հրեշտակով:
- Առջի Տե՛ր, ու՞ր կերթաս:

[30] Ադրիանապոլիս - ծանոթ. բանահավաքի:

- էրթամ դուռը հիվընդին,
էլլիմ էրդիկը տղոցկանին,
Բալնիք ձգիմ վիրա պարցին.
Սուրբ ունիմ, սուրբ գոտի ունիմ,
Սուրբ գոտի կապած ունիմ:
Պողոս, Պետրոս, Անդիանոս,
Գերեզմանին՝ տերն Հիսուս,
Հայր Հովսեփ, կույս Մարիամ՝
Քուն եղավ, երազ տեսավ,
Բերդե քաղաք ընծայեցավ,
Ի խանձարուրս պատեցավ:

ԱԳ IX, 49 / Նոր Նախիջևան

Փորքշեյան1971, 96. / Նոր Նախիջևան

15 Փորքշեյան պալիք ծփիմ:
ԱԳ IX, Փորքշեյան վիրապաշտին,
ուղղ. ըստ իմաստի:
21 Փորքշեյան երազ *չիք:*

146իէ

Էս տունը էրկաթե,
Պատերը պողվատե,
Մարիամը մեջը քուն ա,
Սուրբ Գրիգորը զարթուն ա:
Երթանք սարով, գանք ձորով,
Քառասուն էրկու հրեշտակով:
Հրես էկան իրեք, իրեք,
Իրեքն էլ բոզ ծիավոր.
Մինը Հիսուս, մինը Քրիստոս:
Քրիստոսի ձեռին կար իրեք բևեռ.
Մինը զարկեց բերանը գել գազանին,
Մինը՝ աչքը սև սատանին,
Մինը տարավ դուռը ծննդկանին՝
Չզարհուրի սիրտը փորին:
Մարիամ, ընչի՞ կթակես թամբաքին,
Երեսին, վեր ներքին երեսին:

ԱԳ XI, 36 / Բորչալու

146իը

Մեր տուն զըմեն էրկաթ է,
Պատեր զըմեն պողպատ է.
Սուրբ Տեփանոս կայնել է,
Ջոջ Ավետրան գլխուն է.
.Յելավ Դալալյա,
.Յիջավ Գալալյա,
Մեր Տերը դեմ դիբավ,
Ըսավ՝ .յու՞ր կերթաս:
- Դուռ հիվընդին,
.Յէրտիք ծննդին:
Բալնիք ցգի բոլոր բարձին,
Չը սարսափի միսն օսկըռին.
Իրեք-իրեք խաչ,
Գավազանը դռան գոց,
Փիլոն՝. յէրթըգան ծածկոց:

ՀԲՆ / Վարդենիս-Չախըրլու

146իթ

Ճըրա, ճըրա ճշմարիտ,
Ճշմարտապես Մարտիրոս.
Քյացինք տյուռ մը՝ երկաթ էր,
Պատեր հըմեն պողպատ էր,
Սուրբ Մարտիրոս քնուկ էր,
Սուրբ Կիրակոս արթուն էր:
Ելանք սարեն, իջանք ձորեն,
Մեր Տերն էկավ առաջ բարին:
- Տեր հու՞ր կերթաս .յառաջ բարի:
- Կերթամ տյուռն հիվընդին,
Բալնիք թողեմ վերև բարցին,
Ազատիմ ամեն փորձեն:

ՄՄ, ՍՏԳ

146լ

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Ճշմարտապես Մարտիրուս.
Մարտիրուս հեծավ քուռակե,
Գնաց Ուռֆա քաղաքե,
Շըշեր քաշեց պողպըտե,
Դռներ բացեց էրկըթե:
Դընգըր, մընգըր ձեն կիգա,
Ելեք հիացեք՝ ո՞վ կիգա.
Երեք սիվտակ ձիավոր,
Լուս երեսով փառավոր.
Մեկն է Հիսուս Քրիստուս,
Մեկ՝ Մարիամ Տիրամայր կույս,
Մեկն՝ մանուկ սըրբ Կիրակուս:
Էկան տունե ծննդկանին,
Խաչն ի սյունե դրին սրտին,
Ավետարան՝ վեր գլխին,
Չարերը խափանվին:

ԱԳԳ, 343 / Տիգրանակերտ

146լա

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Խաչ գավազան Մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս
.Յելավ մտավ ծով ծիրանա,
.Յելավ մտավ աշխար Սվրանա:
Թաժա խացի խոտ գիգա,
.Յելեք տեսեք՝ ո՞վ գիգա.
Մեկ՝ Հիսուս, մեկ՝ Քրիստոս,
Մեկ՝ Հննանա Աստվածածին.
Բալնիք թալենք վերև բարձին,

Մանգաղ թալենք օրորոցին՝
Չընքի Քրիստոս գա չարոց խափան:
ԷԱԺՋ, 303 / Ալաշկերտ-Մանգասար

146լբ

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Կոստանդինոս, Մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Քրիստոս նստավ կապուտ քուռակ,
Գնաց էլավ Անի քաղաք,
Ծաղիկ քաղեց՝ ծաղկացավ,
Գլոխ զարկեց՝ զարթնացավ:
- Իմ Տեր, մթան դո՞ր կերթաս:
- Դուռըն հիվընդի:
Բալնիք տվեց տղոցկանին՝
Չըվախեցավ սիրտն իր ծոցին:
ՀԱԲԱ, FFII: 1693, 02/ Շիրակ-Լանջիկ
ՀԲՆ / Շիրակ-Լանջիկ
ՀԲՆ / Շիրակ-Փանիկ

4 ՀԲՆ հեծավ:
6 ՀԲՆ զարդարացավ:
6-11 ՀԲՆ / Շիրակ-Փանիկ / *չիք:*
7-9 ՀԲՆ չիք:
8 ՀԱԲԱ իմ տերութաւն, *ուղղ. ըստ իմաստի* իմ տեր, մթան:
11 ՀԲՆ չվախենա սիրտըն:

146լգ

Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Ալմախաթուն Մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Քրիստոսն հեծավ կապուտ քուռակ,
Գնաց էլավ Ամրի քաղաք,
Ծաղիկ քաղեց՝ ծերացավ,
Գլխին զարկեց՝ զարթարեցավ.
Բալլիք դրեց վերա բարցին՝
Չը բաբանձի լեզուն բեյնին:
ՀԱԲԱ, FFII: 2255, 04/ Ջավախք-Ուչմանա

146լդ

- Ճրագ, ճրագ ճշմարիտ,
Ճշմար խաչին մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Իմ տեր, .յու՞ր կերթաս:
- Դուռըն հիվընդին,
.Յերդիք տըղաձքընին:
.Յելավ տըսվերկու աշակերտներով,
Իջավ սարով, շրջավ ձորով,
Դըռներ բացեց էրկըթեն,
Դուռ մի բացեց պողպըտեն,
Նստեր վըր Սուրբ սեղանին,
Աղոթք կէներ սըբ տաճարին:
Տաճարի դռնին բացվան,
Միջու օրոցներ զարդըրվան,
Մեղավորնին չոքան, լացին,
Արդըրներ ճըլվըլացին:
Խնդրեմ տուր՝
Սիրտ մաքուր:
ԲԱ, 314 / Մուշ

146լե

Կրակը մարեցավ,
Չար խափանեցավ,
.Յիսուս Քրիստոս քողքն էրեսին.
- Հայրապե՛տ, ու՞ր բարով:
- Տղոցկընին բալնիս ցգիմ,
Ժնջիլ ցգիմ գլխաբարձին:
Էգան, էգան.
Մեգ՝ .Յիսուս, մեգ՝ Քրիստոս,
Մեգ՝ Մայր Աստվածածին.
.Յելան սարեն, .յիջան ձորեն՝
Հրիշտակաց դեմ դիմաց:
- Ու՞ր բարով:
- Տղոցկընին բալնիս ցգիմ,
Ժնջիլ ցգիմ գլխաբարձին.
Դուռըս գալող քար լինի,
.Յերդիկս գալող մսմար լինի:
Երբ մտա մայվան գերեզման՝
Դուք պայիք, դուք պայպանիք,
Փառավորի, լուսը հանիք:
ՀԲՆ / Աշոցք-Քոռաղբյուր /Ծաղկաշեն/

146լզ

Եղեցի էլիա,
Էրկըթե բալիա,
Գառնահատիկ,
Սուրբ Մարգրիտ:
Էլա սարով,
Իջա դարով՝
Հինգ հարուր հրեշտակով:
- Մեր Տերը, ու՞ր բարով:
- Կերթամ տունը հիվընդին,
Էրթիկը ծննդականին,
Բալնիք ցըկի վրա բարձին՝
Չըվախենա սիրտը փորին:
Ամեն, ալելույա, ալելույա:
ՋԲ, 4 / Ջավախք

147ա

- Պողոս, Պետրոս, ու՞ր կերթաս:
- Դուռը կերթամ հիվընդի,
Երդիկ կերթամ ծննդկանի.
Նյա՛ սիրտը փորին վախենա,
Նյա՛ օսկոռը տեղը թնդա:

ՋԲ, 4 / Ջավախք

ՀԱԲԱ, FFI: 7520, 01, 02/ Գյումրի

147բ

- Պողոս, Պետրոս, ու՞ր կերթաս:
- Դուռը կերթամ հիվնդի,
երդիկ կերթամ ծննդկանի.
Ոչ վախենա սիրտը փորին,
Օսկոռը տեղը չը թնդա:
Իսն էկավ Իսուս որդին,
Սուռչալեցին Քրիստոսին.
Հերն աչեց, որդին խաչեց,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:
Ես տունը տուն է,
Քրիստոս մեջը քուն է,
Գավազանը դռան փագիչ,
Սուռչալը երդեց ծածկոց:
Տեր մեր Իսուս Քրիստոս,
Աստըծո աչը,
Քրիստոսա խաչը վրեն էղնի, ամեն:

ԱԳ IX, 113 / Գյումրի

148

Մեր մեղաց մաքրեալ էլի,
Ո՛նչ վախացի, ո՛նչ սարսափի,
Քրիստոս գալոց՝ չար խափանի:
Իկին սարով, իկին ձորով,
Իկին խարիր աշակըրտով,
Գլուխ զարկին դուռ տաճարին,
Պախապան էլներ ծընընդկանին:

ՀԱԲԱ, FAV: 5946, 01

149

Յիսուս քողն իրիսին,
Հրեշտակներ չորս դին.
Յիսուս երկնքից էջավ,
Խաչապաշտի տուն մտավ:
- Եմ Տեր, .յու՞ր կերթաս:
- Հուր ունեմ հրեղեն,
Բուռվալ ունեմ բոցեղեն,
Թելեր լուսեղեն:

ՀԱԲԱ, FAV: 3103, 02 / Ոշտունիք

150

Ուսիմ, ուսիմ, ունեք ուսիմ,
Հրեղեն խաչը լուս իմ.
Մտա վանքը Մոսեսին,
Հագա շուրջառ Քրիստոսին:
Յոթը անասուն աշակերտեցին,
Յոթն ալ իրենց ուսումը առին:
Սուրն էր դռան գոցըն,
Փիլոն երթոց ծածկոցը:
- Մարիա՛մ, քու՞ն ես, արթու՞ն ես,
Այս բանը իծի չհայտնես:
- Քնացա, երազ տեսա,
Զարհուրեցա, ելա նստա:
Երեք կանանչ չպուխ կտրեցին.
Մեկը՝ չար նիքեաքին,
Մեկը՝ տղացկինին,
Մեկն ալ՝ վերի գլխավորին:

ՆԳԱՀ, 104 / Քոի

1 Տպագրված է ունեք քուսիմ, *կողքին փակագծերում բացատրված է* ունինք գիտություն, *այսինքն՝ ուսում: Ուղղ. ունեք ուսիմ:*
14 Նիքեաք *փակագծերում բացատրված է* չար աչք. *չար նիաքն է /= հայացք/, որ հաճախ է հանդիպում չար աչքի աղոթքներում:*

151

Էրնեկ, էրնեկ Վարդակուսին,
Լուսըքաքախ թուրն էրեսին,
Վանքը մտավ Նորսեսին,
Սուրջառն առավ Քրիստոսին,
Ծնավ բերեց Աստվածորդին.
Անբան մսուրը դրվեցավ,
Խանձ բալուլով բալուլվեցավ,
Գետ Հորդանան մկրտեցավ.
Մարգարեներ, գրքեր բերեք,
Ճգնավորներ, քավոր եղեք,
Անուն Հիսուս կատարեցեք:

ՋԲ, 3 / Ջավախք

152

Սուրբ Աստվածածին,
Քո ծնունդի, քո անարատ
ծնունդի սատաղեն
Դու բարի ազատություն տաս
իմ տղոցկանին,
Կալած կապած բողչեն բանաս՝
Որդին մորից բաժանես:

ԱԳ XVI, 34 / Նոր Բայազետ

153

Ով սուրբ Չալախամեր Աստվածածին,
Մարութա բարձր Աստվածածին,
Արնթաղ Գեղարդ, սուրբ գլխատեր,
Ատենահաս սուրբ Սարգիս,
Սըբ Չագերույց Նարեկացի,
Սըբ Խաթուն Տիրամեր,
Սըբ Տեսկանորդի,
Մշու սուլթան Սըբ Կարապետ,
Չանկլի դիվան Սըբ Կարապետ,
Վարագա Յոթ մանուկ Սըբ Նշան,
Կարմիր խաչ, Կապուտ խաչ,
ծածուկ ավազան,
Սըբ Չարխափան ավետարան,
Մուրխաս ավետարան, Շեկ ավետարան,
Սըբ կանաչ կտրիճ կիրակնամտներ,
Լուսին, արեգակ, էլվեճարավ
խրեշտակներ,
Չեթբետունք աստղեր, լուսին, արեգակ,
Օգնական, իմդատ կայնեք,
Որ մերն ու տղեն ազատեք:
Իմ ձեռը չի, իմ բերան էլ չի,
Չեր բերնով օգնական, իմդատ,
պահապան կացեք,
Ազատարար Տե՛ր, ազատարար Տե՛ր:

ԱԳ XX, 167 / Վասպուրական

154

Տե՛ր, ողորմյա,
Տե՛ր, քեզ մեղա,
Տասն առաքյալ,
Հոռոմսիմա:
Այս ավուր աշխարի էկար,
Լուս հոգիս սևացուցիր,
Փուշ մարմինս կրակեցիր:
Էրկար ճամփա ունիմ էրքըլու,
Փուշ ու տատրակ չեմ կոխելու,
Մազե կարմունջ եմ անցնելու,
Պաշար չունիմ հետս տանելու,
Մեղավոր եմ, ի՞նչ ջուվաբ տամ:
Օվա՞ն, Օվա՞ն Օսկեբերան,
Իրյեք գլոխ Ավետարան.
Հոգի՛ս, գնար,
Մի՛ վախենար,
Մեռոնած իս, կնքված իս,
Քրիստոսի գիրկ մկրտված իս,
Մարյամ Աստվածածնա յոլդաշն իս,
Սուլթան սուրբ Սարգսի խարդաշն իս.
Հար քիմ քի՝ յանմա գյալեր,
Աղլի բաղլի, դիլի տաշ[31]:

ՀԲՆ / Աշոցք-Ղազանչի

ՆՈՐԱԾՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

155

Երկիր, աշխարին խաղաղութեն,
Թագավորաց հաշտութեն,
Քրիստոնեից ազատութեն,
Ծախորդութաս մարդկանց աջողութեն,
Կապելոց արձակութեն,
Ամենաս փափագ լիութեն,
Մենձերուն արքայութեն,
Ջահիլներուն արևշատութեն:

ԱԳ IX, 113 / Գյումրի

156

Աստվա՛ծ, դու պահես էս երեխին.
Չարեն թափես, դևից ազատես,
Ամեն փորձանքից դու պահես, պահպանես:

ԱԳ IX, 252 / Բորչալու-Լոռի

157

Ամա՛ն, իմ Խաթուն Տիրամեր,
գրկանոցիդ մեռնեմ,
Բարեխոս ըլես առ Աստված,
Քյո մեյ բուրակի խաթրի խամար,
Չիկ մխիթարանք պախես իմ գրկանոց:

ԷԱԺՋ, 301 / Վան

158ա

Լուս արեգա՛կ,
Դու էս էրեխին ղսմաթ տաս,
Հորն ու մորը սաղ ջան տաս:

ԱԳ XVI,, 36 / Նոր Բայազետ

158բ

- Սուրբ 'րեգնա՛կ,
էս երեխի փայը տաս.
Երկնքիցը ցող ցողա,
Գետնիցը պտուղ ստանա,
Մենք էլ, մեղավորներս,
Սրա շվաքում ուտենք, կերակրվինք:

ԱԳ IX, 252 / Լոռի

---

31 Վերջին երկտողը թուրքերեն է.
Ով էլ լինի՝ իմ կողմը կգա,
Միտքը կապվի, լեզուն՝ քարանա:

1(159)ա

Յաւուր մի [յ]արեաւ սուրբ
առաքեալն Պետրոս՝ վէմն
հաւատոյ, կալ աղօթս:
Եւ երևեցաւ նմա դժնիկ դև մի:
Եւ զարհուրեալ սուրբն Պետրոս և ասէ.
- Ջի՞նչ ես դու, պե՛ղծ, կամ զի՞նչ է անուն:
Ասէ պեղծն թէ.
-Ետն ածէ անուն:
Ասէ Սիմոն Պետրոս.
-Իրաւի ետ ինձ իշխանութիւն տեառն մեր
Յիսուս Քրիստոս,
Թէ զօր կապիցէք երկրի՝
Եղիցի կապեալ երկինս.
Զոր արձակիցէք երկրի՝
Եղիցի արձակեալ երկին:
Եւ ասէ թէ.
«Դու ես վէմ,
Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ
Եւ դրունք դժոխոց
մի [յ]աղթայհարեսցին»:
Արդ կապած ես դու
հրամանաւն Քրիստոսի,
Մինչև ասէս կամ զի՞նչ է անուն քո:
Դժնի դևն հողմն թէ.
- Երբ որ կանայք ըղանան և ծնանին՝
Առաջ քան զտղայի կնքելն
ապականեմք զիւրեանքն.
Ջերեսն հարկանեմք և ետս դարձուցանեմք
Եւ մայրն ի վերայ տղային խեղդեմք նմայ:
Այնժամ ասաց սուրբն Պետրոս.
- Հաւատամ ի այն, որ ետ ինձ հրաման
ի վերայ ան[երևութ]ից,
Ի վերայ չար դիւաց:
Անիծեալ ես և կապեալ ես ի
կապանս երկաթի.
Կապած է հրամանաւ հօր տերութեամբ,
Որդոյ զօրութեամբ
Եւ իշխանութեամբ ամենասուրբ հոգին:
Ամենայն տուն, որ գտանի աղօթս
այս և բանքս,
Եւ այն տունն ի այն տեղիս
Չունիս հրաման մտանել կամ վնաս առնել.
Անուամբն հօր և որդոյ
Եւ հոգոյն սրբոյ
Չունես հրաման մերձենալ
ծառայիս Աստուծո:

Մատենադարան, Ձմայիլ № 3

---

[32] Բանավոր ավանդության մեջ ծննդկանին վնասող չար ոգիների՝ Ալի և Թպղայի մասին ծնոքի տակ եղած նյութերում վկայված են միայն երկու նմուշ, որոնք զետեղված են սույն հավելվածում: Մինչդեռ ժողովրդական հավատալիքներում (տե՛ս ծննդկանի աղոթքների ծանոթագրությունների նախաբանը) այդ զույգ ոգիների մասին առկա են բազմաթիվ վկայություններ, տարբեր պատկերացումներ և ավանդական զրույցներ: Իսկ միջնադարյան ախտարական ձեռագրերը լի են այդ ոգիների չար ներգործության դեմ ուղղված հմայական աղոթքներով: Այս հանգամանքները նկատի առնելով՝ սույն հավելվածում են զետեղվում միջնադարյան գրավոր տարբեր աղբյուրներից քաղված Ալի և Թպղայի մասին եղած հմայական աղոթքների մի շարք ընտիր նմուշներ, այդ ոգիների նկատմամբ ժողովրդական պատկերացումները ամբողջացնելու նպատակով: Միաժամանակ սույն հավելվածում է դրվում նաև սեռական կապքի արձակման և լոշտակ դեղաբույսի մասին միջնադարյան գրավոր աղոթքների մի քանի նմուշ:

1(159)բ

Սուրբն Պաւղոս և սուրբն Պետրոս,
Սուրբն Անոս և սուրբն Շիղա
Գնային առ ճանապարհաւ միով.
Եւ տեսին այր մի նստած ի վերայ աւազոյ.
Մազն նորա իբրև զաւծ
Եւ յունքն պղնձէ
Եւ աչք ապիկի
Եւ բերանն իբրև զշան
Եւ երեսքն նորա սեաւ որպէս զգործէլի
Եւ ատամունքն նորա երկաթի
Եւ ժանիքն նորա որպէս զվարազ խոզի:
Եւ էր տեսիլ նորա դժնիկ,
Այլակերպ յամենայն կենդանեաց:
Հարցին ցնա սուրբքն և ասեն.
- Զի՞նչ ես դու, պիղծ և դժնիկ կենդանի,
Եւ կամ զի՞նչ գործակալ ես,
Խոստովանեա մեզ ստոյգ:
Պատասխանի ետ պիղծ և ասէ.
- Ես եմ ալքն չար,
Որ նստիմ ի վերայ դղացկնին,
Զականջն խորեցնեմ,
Զխասապն քարշեմ
Եւ խեղդեմ զմայրն և զմանուկն:
Մեր կերակուրն մանտրիկ տղայոց միսն է
Եւ տղացկնի խասապն:
Զեաւթն ամսոյ մանուկն գողանամք ի մօրէն
Եւ խուլ և մունջ տանիմք առ
թագաւորն մեր ի յանդունդս:
Մեք հազարք հազարաց եմք
Եւ մեր բնակութիւն յանկիւնս տանց է
Եւ յախոռս անասնոց:
Ահա ասացի ձեզ զամենայն, ո՛վ
սուրբ[ք] Աստուծոյ,
Մի՛ տանջեք զիս:
Եւ ասէ ցՍիմոն Պետրոս
առաքեալն Պաւղոս.
- Յիրաւի ետ քեզ Տէր իշխանութիւն
Կապելոյ և արձակելոյ,
Եւ արժանի ես:
Ա՛րդ, կապես զդա ծանր շղթայիւք
բանիւն Աստուծոյ,
Մինչև ասասցէ դարձեալ զանուն իւր
Եւ զամենայն զչար գործսն:
Եւ իսկոյն սաստեաց նմայ սուրբ
Պետրոս ասել զճշմարիտն:
Եւ նա ասէ.
- Ես եմ յետսած դևն, դժնիկ հողմն,
Որ ի ծնանել տղային՝ ապականեմ զմայրն
Եւ զտղայն յառաջ քան զմկրտելն:
Եւ ասէ Պետրոս.
- Հաւատամ ի Քրիստոս,
Որ ետ ինձ իշխանութիւն ի վերայ այսոց,
պղծոց և աներևութից,
Կոխել զնոսա:
Արդ, անիծեալ ես դու,
Պիղծդ և չար թշնամի Աստուծոյ,
Եւ կապեալ կացցես աներևոյթ և
անլոյծ կապանօք բանիւն Աստուծոյ:
Եւ յոր տուն որ լինի մեր անունս
Եւ գիր յիշատակի,
Ոչ ունիս իշխանութիւն մտանել ի տունն յայն
Եւ կամ վնաս առնել ընտանեաց նորա:
Յանուն հօր և որդոյ և սուրբ հոգւոյն,
Պահեսցի անվնաս աղախինն
Աստուծոյ Նղաշխաթունն
Եւ ծնեալ զաւակն իւր
Եւ որ ծնանելոցն է՝
Անփորձ մնասցէ ի դիւէ, չարէ, ամէն:

Մատենադարան, Ձմայիլ №24

30 յահոռս *ուղղ. յախոռս:*

1(159)գ

Սուրբն Պետրոս և սուրբն Պօղոս
Եւ սուրբն Անաս և սուրբն Շղատ
Գնացին առ ճանապարհօն
Եւ տեսին այր մի նստեալ ի վերայ աւազոյ.
Մազ նորա իբրև զօձի
Եւ յունք նորա պղնձի
Եւ ատամունք նորա երկաթի
Եւ ժանիք նորա որպէս վարազ խոզի:
Հարցին ցնա սուրբքն և ասեն.
- Զի՞նչ ես դու, ո՛վ պեղծ,
Ըստուք խոստովանեա մեզ զզանցանս քո:
Եւ ասէ.
- Ես եմ ալքն չար,
Որ նստիմ ի վերայ ծննդկանին
և տղացկանին.
Զակա[ն]ջն խլացնեմ,
Զխասապն քարշեմ,
Խեղդեմք զմայրն և զմանուկն:
Մեր կերակուրն մանր տղա[յ]ոց մարմին է
Եւ տղացկանի խասապն, ջիկարն,
լերքն, սիրտն և թոքն է:
Զ է [7] ամսո մանուկն գողանամք ի մօրէն,
Խուլ և մունճ տանիմք առ թագաւորն
մեր յանդունդս:
Մեք Ռ [1000] հազարաց եմք և բիւրք բիւրոց.
Զի մեք ոչ թողում[ք],
Որ տղայն ի փեսա[յ]ութիւն հասնի
Եւ աղջիկն ի հարսնութիւն.
Զտղայն ի յօրոցն խեղդեմք
Եւ զտղացկան ի յանկողին,

Զմանուկն ի դաշտին կամ ի գինին:
Մեր բնակութիւն յանկիւնս տան է,
Ի դռան յետևն և յախոռս անասնոց:
Ահա ասացի Ձեզ զամենայն ինչ,
Ո՞վ սուրբք Աստուծոյ,
Մի՛ տանջեք զիս:
Եւ սուրբքն հանին զսուսերն հրէղեն
Եւ կամեցան սպանանել զպեղծն:
Եւ ասէ Սիմոն Պետրոս.
- Յիրաւի ետ մեզ Տէր իշխանութիւն և ասէ.
«Ձոր կապիցէք յերկրի,
Եղիցիք կապեալ յերկինս.
Եւ թէ զոր արձակիցէք յերկրի՝
Եղիցի արձակեալ յերկինս»:
Եւ ասէ Տէր Յիսուս Քրիստոս.
«Դու ես վէմ
Եւ ի վերայ այդր վիմի
Շինեցից զեկեղեցի իմ
Եւ դրունք դժոխոց զնա
մի յաղթահարեսցեն»:
Արդ կապեալ ես, ո՛վ պեղծ,
Մինչև ի գալուստն Քրիստոսի,
Չունիս իշխանութիւն մերձենալ
յաղախինս Աստուծոյ /Խանումին/, ամէն:

Գյումրիի ծեռագիր հմայիլ № 3

1(159)դ

Սուրբն Պետրոս և սուրբն Պօղոս
Ես սուրբն Շիշայ գնայցին
առ ծանապարհաւն,
Տեսին այր մի նստեալ ի վերայ աւազոյ.
Մազ նորա իբրև զօձի ծար ծիոյ,
Աչք նորա ապիկի
Եւ ատամունք երկաթի
Եւ ժանիք նորա պղընձի
Եւ մազ նորա որպէս վարազի խոզի,
Ոտքն մատունքն յետևն և կրունկն առջևն:
Հարցին ցնայ սուրբքն և ասին.
- Ձի՞նչ ես դու, ո՛վ պիղծ դժնիկ կենդանի:
Եւ նայ ասէ.
- Ես եմ ալքն չարութեան և չար
թղպ կանանց,
Որ ոչ թողումք մնայ զաւակօք.
Մտանեմք յորովայն կանա[ն]ցն,
Ծեծեմք զսիրտն,
Թուլացուցանեմ[ք] սակատն,
Քարշեմք զգոյն երեսացն,
թոռոմեցուցանեմ[ք],
Ձաչաց լոյսն պակասացնեմք
Եւ մանուկն Ձ [6] կամ է [7] ամսոյ լինի՝
Գօղանամք ի մօրէ,
Խուլ ու մունջ տանիմք առ թագաւորն մերոյ:
Մեր կերակուրն մանր տղայոց միսն է
Եւ տղացկանի խասապն:
Յայնժամ հանին սուրբքն Աստուծոյ
զսուրն հրէղեն
Եւ նոցա չարչարէին և ասէին.
- Երդմնեցուցանեմք զքեզ, չար դևք,
Ձհայր և զորդին և զսուրբ հոգին
Եւ միածին Աստուած կենդանին
Եւ ածեմ[ք] ի վերայ ձեր անողորմ
հրեշտակքն բազում:
Եւ ասէ մայրն ալին.
- Մի՛ չարչարէք զանդրանիկն իմ,
Ձի մեք երդնումք ի ձեզ
Աստուածն կենդանի
Եւ ի կաքն սուրբ կուսին Մարիամու,
Ի Քնարն Դաւթի,
Դ [4] ավետարանչացն,
ԻԴ [24] մարգարէիցն,
Ի Տախտակն Մովսէսի,
Ի բևեռն Քրիստոսի,
Ի մատանին Սողոմոնի.
Յոր տուն սոքայ անուանքն լինի[ն]
կամ յիշուի[ն]
Կամ գրած լինի[ն] անդ,
Ոչ մտանեմք ի յայն կին
Եւ զմանուկն ոչ գօղանամք
Եւ ոչ առնումք պակաս:
Եւ անուանքն մեր այս են.
Յառաջինն Ծնելոց,
Բ. Աղլազո, Գ. Մայրոյէ, Դ.Աղքատէ,
Ե. Այսմէ, Զ. Այսզին, է. Մարմարոյէ,
Ը. Այրոյ, Թ. Կալիշի, Ժ. Յուլիցայ,
ԺԱ. Եկիտուն, ԺԲ. Անկանես:
Ուր այս բանքս լինի
Եւ անուանքն սրբոց լինի[ն]՝
Հալածիմք ի սահմանաց դիւացն
Եւ փարատեմք զցաւս
Եւ բժշկեմք զցաւս
Ընդդէմ ծառայիս Աստուծոյ տիրացու
Գրիգորին այս անունն:
Յանուն հօր և որդւոյ
Եւ հոգւոյն սրբոյ,
Տեր Աստուած,
Փրկութեամբ քում ազատեայ յերևելի
և աներևոյթ թշնամոյն:
Գոհանալով փառաւորեմ քեզ՝
Հայր և զորդին և սուրբ հոգիդ
Այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Երդումնեցուցանեմք զձեզ, չար դևք,
Անուամբն որդոյն Աստուծոյ և
սուրբ առաքելոցն,
Մարգարէիցն և սուրբ հայրապետաց
Եւ սուրբ ճգնաւորաց
Եւ սրբոց կուսանաց,
Եղիցի բժշկութիւն այս անունն:

Մատենադարան, ծեռագիր № 6678, 33

5 ապիկին ***ուղղ. ապիկի:***

13 այլքն *ուղղ. ըստ իմաստի՝ ալքն:*
31 զմայրն *ուղղ. ըստ իմաստի՝ մայրն:*
44 յանկին *ուղղ. ըստ իմաստի՝ յայն կին, իմմտ. նաև ԺԷ տարբերակի հետ:*
55 հալածեմք *ուղղ. ըստ իմաստի՝ հալածիմք:*

1(159)ե

Սուրբն Պետրոս և սուրբն Պօղոս
Եւ սուրբն Շիղայ
Երթային ի ճանապարհին
Եւ տեսին ալք չար՝
Այր մի նստեալ ի վերայ աւազոյ.
Մազ նորա որպէս ծար ծիոյ,
Ունքն նորա պղնձի,
Աչք նորա ապիկի,
Երես նորա սպիտակ իբրեւ զծիւն,
Ատամունք նորա երկաթի,
Ժանիք նորա որպէս զվարազ խոզի:
Հարցին զնա սուրբք և ասացին.
- Ջի՞նչ ես դու, պիղծ դժնիկ կենդանի,
Եւ կամ զի՞նչ գործեալ ես,
Ըստոյգ խոստովանեայ մեզ:
Պատասխանի ետ պիղծ և ասէ.
- Ես եմ ալք չար,
Որ նստեմ ի վերայ տղացկանին,
Զմիսն ուտեմ,
Զըղեղն ծըծեմ,
Զերկու աչքն խաւարեցուցանեմ.
Խեղդեմ զմայրն
Եւ զտղայն գողանամք ի մօրէն զ է [7] ամսոյ,
Խուլ և մունջ տանեմք առ թագաւորն
մեր յանդունդս:
Մեր բնակութիւն յանկիւնս տան է
Եւ ի ախոռն անասնոց:
Մեր կերակուր մայր-տղային միս է
Եւ տղացկանի ղազապ:
Ահա ասացի ձեզ ամենայն,
սուրբք Աստուծոյ,
Մի՛ տանջեք զիս:
Եւ սուրբք հանին զհրեղէն սուրքն իւրեանց
Եւ կամեցան անդր դայ սուր առնել զնա:
Եւ ասէ Պօղոս ցՊետրոս.
- Իրաւի ետ մեզ Տէր
Իշխանութիւն կապելոյ և արձակելոյ:
Արդ կապուած ես ի կապանս երկաթի.
Յոր տուն, որ մեր անուն յիշուի՝
Չունի իշխանութիւն մերձենալ ի տուն այն,
Եւս առաւել ծառայիս Աստուծոյ
/այս անուն/:

Մատենադարան, ձեռագիր № 8428, 230

6 ծարծիոյ *ուղղ. ըստ իմաստի, իմմտ. № 1(159)թ տարբերակը:*

1(159)զ

Սուրբն Պօղոս և սուրբն Պետրոս
Եւ սուրբն Անթանիոս
Գնացին առ ճանապարհաւն,
Ջի տեսին այր մի նստեալ ի վերայ աւազոյ.
Ժանիքն երկաթի,
Յունքն պղնձի,
Աչքն որպէս հուր վառվռէր:
Հարցին սուրբքն և ասեն.
- Ո՞վ ես դու, պեղծ սատանայ,
Կամ ի՞նչ գործկայկալ ես,
Ճշմարիտն ասայ մեզ:
Եւ ասէ.
- Ես եմ ալքն,
Որ նստիմ ի վերա տղացկանին,
Խեղդեմ մայրն և զմանուկն,
Ջի մեր կերակուրն տղայոց միսն է
Եւ մեր ըմպելիքն տղացկանի արիւնն
եւ ծիկարն է:
Այս է բանս մեր:
Եւ դարձեալ ասէ սուրբն Պօղոս ցՊետրոս.
- Իրաւի ետ քեզ որդի
տեառն իշխանութիւն,
Եթէ զոր կապեցէք յերկրի՝
Եղիցի կապեալ յերկինս:
Եւ ասէ. «Դու ես վէմ,
Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի,
Դրունք դժոխոց մի
յաղթահարեսցեն զնայ»:
Արդ կապած ես մինչև գալուստ Քրիստոսի:
Յոր տունսը զայս գիրս կամ զանունս
մեր լինի,
Ոչ մտանէք ի յայն տունն,
Ոչ մեղանչէք մայրն կամ
զմանուկն ծառայիս Աստուծոյ:

Մատենադարան, Ձմայիլ, № 19

1(159)է

Սուրբն Անաս և սուրբն Շիղաս
Գնացին առ ճանապարհօն,
Տես[ին] այր մի նստեալ ի վերայ
ճանապարհին աւազու.
Մազն որպէս առըծու,
Ունքն պղընձի,
Աչքն ապիկի,
Արտևանունքն երկաթի,
Երեսքն սպիտակ որպէս զծիւն
Եւ ժանիք նորայ որպէս վարազի խոզի,
Թաթն յետևն և կրունկն յառջև:
Հարցին ցնա սուրբքն և ասեն.
- Ջի՞նչ ես դու կամ զի՞նչ գործակալ ես,
Ջստուքն խոստովանեա մեզ:
Պատասխանի ետ պեղծն և ասէ.

15 -Ես եմ ալք չար,
Որ նստիմ ի դղացկանին,
Ձականջն խորովեցնեմ,
Ձխասապն քարշեմ
Եւ խեղդեմ զմայրն և զմանուկն:
20 Մեր կերակուր մանր տղայոց միսն է
Եւ դղացկանի խասապն:
է [7] ամսո մանուկն գողանամք ի մօրէն,
Խուլ և մունջ առնեմք
Եւ տանեմ[ք] առնեմ[ք] առ թագաւորն
մեր յանդունդս:
25 Մեր բնակութիւն՝ յանկիւնս տան
Եւ յախոռս անասնոց:
Ահա ասացի ձեզ զամենայն, ո՛վ
սուրբք Աստուծոյ
Մի՛ տանջեք զիս:
Եւ սուրբքն հանին զսուրն հրեղեն
30 Եւ կամեցան սպանանել զնա:
Եւ նա ասէ.
- Մի սպանէք զիս.
Երդնում ի ձեզ,
Որ ինչ տուն որ ձեր անունդ յիշուին՝
35 Մեք անդ ոչ մտանեմք:
Եւ ասէ ցՍիմոն.
- Յիրաւի ետ քեզ Տէր,
Զոր կապէք յերկրի՝
Եղիցի կապեալ յերկինս:
40 Եւ ասէ. «Դու ես վէմ.
Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ
Եւ դրունք դժոխոց զնա
մի յաղթահարեսցեն»:
Արդ կապած ես մինչ ի
գալուստն Քրիստոսի,
Մինչև ասես, թէ զի՞նչ է անուն քո:
45 Եւ նա ասէ.
- Ես եմ յետասծ դևն դժնիկ,
Հողմն սաստիկ,
Որ ծնանի յառաջ, քան զտղայի կնքելն,
Ապականեմք զիւրեանքն:
50 Եւ ասէ Պետրոս.
-Հաւատամ յայն, որ ետ ինձ կարողութիւն
ի վերա աներևոյթից:
Արդ, անիծեալ և կապեալ լիցիս ի
կապանս երկաթի.
Յոր տուն մեր անունքս յիշուին՝
Չունիս իշխանութիւն մտանել կամ
մերձենալ ի ծառայիս Աստուծոյ:
Մատենադարան, Ձմայիլ№ 5

15 այլք *ուղղ. ըստ իմաստի:*
28 մանջէք *ուղղ. ըստ իմաստի*
(համմտ. №1 (159)բ, ե տարբերակները):

1(159)ը
Սուրբն Անու և սուրբն Շիղայ
Գնացին յանապատ տեղի
Եւ տեսին այր մի նստեալ ի վերայ աւազոյ.
Մազն նորա որպէս զօծի
5 Եւ յունք նորա պղնձի,
Աչք նորա ապիկի,
Երես նորա սպիտակ իբրև զծիւն,
Ատամունք նորա երկաթի
Եւ ժանիք նորա որպէս զվարազ խոզի:
10 Եւ էր տեսիլ նորա դժնիկ և այլակերպ:
Հարցին ցնա սուրբքն և ասէն.
- Չի՞նչ ես դու:
Պատասխան ետ պիղծն և ասէ.
- Ես եմ ալքն չար,
15 Որ նստի[մ] վերայ տղացկանին,
Ձականջն քարշեմ և զլերդն խորովեմ,
Խեղդեմ զմայրն և զմանուկն:
Մեր կերակուրն մանր տղայոց միսն է
Եւ տղացկանի ղասապն:
20 Մեք եմք մանր տղայ և մայր չեմք թողուր,
Որ չեմք վնասէր.
Ձեօքն ամսոյ տղայն գողանամք ի
մօրէն խուլ և մունջ
Եւ տանիմք յանդունդս առ թագաւորն մեր.
Եւ մեք ոչ թողումք,
25 Որ մանուկն ի փեսայութիւն և աղջիկն ի
հարսնութիւն հասանի:
Ահա, ասացի ձեզ զամենայն:
Եւ սուրբքն կամեցան սպանանել զպիղծն:
Եւ նա երդուաւ նոցա և ասաց.
- Երդնում ձեզ յԱստուած կենդանին
30 Եւ երդումն տամ նոցա,
Որք ընդ իսն են,
Չի յոր տուն, որ ձեր սուրբ անուանքդ լինին
և կամ յիշուին՝
Քառասուն տնով հեռի լինեմք ի յայն տանէն,
Ի մօրէն և ի տղայէն
35 Եւ ոչ մերձենամք ի ծառայն Աստուծոյ
ի գալուստն:
Մատենադարան, Ձմայիլ№ 22

1(159)բ
Սուրբն Նաոս և սուրբն Նշիաք
Եւ սուրբն Կղոթիոս և սուրբն Սիսիանոս
Եւ սուրբն Մաքէէ
[Գ]նայի[ն] անապատ տեղիս
5 Եւ տեսին այր մի նստեալ ի վերայ աւազոյ.
Մազն նորայ որպէս ծիոյ ծար,
Ունքն նորայ երկաթէ
Եւ ատամունքն նորայ պղնձի
Եւ աչքն նորայ հուր բորբոքեալ.
10 Եւ կրունք նորայ առաջի
Եւ մատունք նորայ ետոյ

Եւ ժանիք նորայ վարազի խոզի
Եւ տեսիլ նորայ դժնկի այլակերպ,
Քան զամենայն կենդանի:
Հարցին ցնայ սուրբքն և ասէն.
- Զի՞նչ ես դու, պեղծ դժնի կենդանի:
Պատասխանի ետ պեղծն և ասէ.
- ես եմ ալքն չար,
Որ նստիմ ի վերայ տղացկանին,
Ականջն քարշեմ և խեղդեմք:
Մեր կերակուրն մանր տղայոց միսն է
Եւ տղացկանի խասապն է:
է [7] ամսոյ մանուկն խուլ և մունջ
տանիմք անդունդս:
Մենք հազարք հազարոց ենք
Եւ բիուրք բիուրոց ենք.
Մեր բնակութիւն անկիւնս տանց է
Եւ ախոռս անասնոց է:
Եւ ոչ թողումք,
Որ տղան հարսնութիւն հասանի
կամ փեսայութիւն.
Զտղացկանն անկողինն
ըսպանանեմք զտղայն:
Ահայ ասացի ձեզ զամենայն չար գործս իմ:
Եւ սուրբքն հանեն զսուրն իւրեանց,
Կամեցան ըսպանանել զնայ:
Եւ նայ աղաղակեաց բարձր ձայն և ասէ.
- Մի՛ տանջէք զիս
Եւ ես երդումնիմ ձեզ և երդումն տամ,
Որ ընդ իշխանութիւն իմ ով իցեն,
Որ տուն ձեր անուանքն [յ]իշեն
Կամ գիր անուան ձեր լինի՝
Խ [40] աւուր ծանապարհաւ
հեռու լինիցիմք տանէն,
Ի տեղէն և դիմացէն
Ծառայիս Աստուծոյ */Մարգրտին/:*

Մատենադարան, Ձմայիլ № 3

1(159)ժ

Անաս և Շիթ և Սիսիատնոս
Եւ Մաթէ և Լուկտան,
Փոկոս, Պետրոս և Պօղոս,
Սոքա գնացին յանապատ տեղ մի
Եւ տեսին այր մի նստած ի վերայ աւազոյ.
Աչքն որպէս ապիկի,
Վիզն որպէս պղնձի,
Ատամունք և գլուխն որպէս վարազի
Եւ երեսն այլակերպ, քան
զամենայն կենդանոյ,
Որպէս ձիոյ ձար,
Եւ ատամունքն յետոյ և պոկունքն առաջ:
Հարցին ցնա սուրբքն և ասին.
- Զի՞նչ ես դու և կամ զի՞նչ գործեալ ես,
Ջստուգն ասայ մեզ:
Եւ նա ասէ.
- Ես եմ ալն չար,
Որ նստիմ ի վերայ դղացկանի,
Ջմիսն և զխասապն քաշեմ
Եւ զականջն խորովեցնեմ,
Ջմօրէն զտղայն խզեմ:
Մեր կերակուրն մանր տղայոց միս է
Եւ դղացկանի խասապ է:
Ջ է [7] ամսու մանուկն գողանամք ի մօրէն,
Խուլ և մունջ տանիմք առ մեծաւորս
մեր ի յանդունդս:
Մեք ոչ թուղումք, որ աղջիկն
ի հարսնութիւն հասանի
Եւ կամ կտրիճն փեսայութիւն:
Մեր բնակութիւն յանկուսս տանց է
Եւ ախոռս անասնոց:
Ահա ասացի ձեզ, ո՛վ սուրբք Աստուծոյ:
Եւ սուրբքն հանին զիրեղեն
սուսերն իւրեանց,
Կամեցան սպանանել զնա:
Եւ նա ասէ.
- Մի՛ սպանանէք զիս
Եւ ես երդնում ի ձեզ,
Որտեղ ձեր անուանքն յիշեն,
Մեք ի նա ոչ մտանեմ[ք],
Ոչ ի տուն,
Ոչ ի ծառայն Աստուծոյ Աւետիքն, ամէն:

ԲԲ, 716

16 այն չար, ***ուղղ. ըստ իմաստի:***

1(159)ժա

Սուրբն Սիսիանոս և սուրբն Անաստաս
Եւ սուրբն Շմայվոն և սուրբն Ուստիանոս
Եւ սուրբն Պողոս և Շիխաթ
Առին զդանակն և Գ [3] բիբեռն
Եւ յելին ի լեառն
Եւ տեսին դէվ մի նստեալ ի վերայ աւազոյ.
Եւ մազն նորայ յիբրև զծիոյ ձար
Եւ աչքն նորայ յապակի,
Յատամունք նորայ յերկաթի,
Ժանիք նորայ յիբրև զվարազի խոզի,
Ոտքն նորայ՝ մատունքն յետևն և
կըրունկն յառջևն:
Եւ հարցին ցնայ սուրբքն և ասէն.
- Զի՞նչ ես դու, պեղծ չար գազան և
որդ վարենի:
Պատասխանի յետ և ասէ.
- Ես եմ ալն չար,
Որ մտանեմ ընդ փորն և յորովանըն մօրն,
Ջսիրտն թոռէմէցուցանեմ,
Ջմիտքն կորուսանեմ,
Ջխասապն քարշեմ,
Ջկաթնն տանիմ,
Ջերթքըն յարեմ,

Զգուն յերեսէն թոռայմէգուցանեմ,
Ըղեղնն ծըծեմ,
Խուլ և մուճ, ծուռ-կաղ առնեմ,
Սպանանեմ զմայրն և զմանուկն:
Յայն օր և յանժամակ առնեմ
Եւ ամսյի պակաս առնեմ,
Զ, է, Ը, Թ [6, 7, 8, 9] յամսու
մանուկնըննն սպանանեմ:
Մեր կերակուրըը մանտրըը տղայոց միսն է
Եւ դաղացկանի խասայպան:
Տեսաւ և լսեց զնայ սուրբ Մարիամ
Աստուածածին և Սիսիանոս,
Կալան զնայ՝ չար ալնըը,
Կամեցան սպանանել եւ ասէն սուրբքն.
- Կենդանի է Տէր,
Եթե ոչ յերդնուս ի մեզ,
Ոչ թողումք զքեզ կենդանի,
Որ մտանես յորովանն մօրն
Եւ սպանանես զմանուկն նորայ:
Չունիս հրամանք մտանել ի տունն
Եւ ոչ ի ծնունդնըս սոցա:
Յերդուվեցաւ չար պեղծն և ասէ.
- Յերդումն ի սուրբ բազուկն տերունական,
Որ և տարածեաց ի վերայ սրբոյ խաչին
Յիսուս Քրիստոս,
Հայր և որդին և ի սուրբ հոգին,
Բարձրութիւն յերկնից և ի
խորութիւնս յերկրի
Եւ ի շառայվիղնն յարեգականըը և
ի լուսնին,
Չորեքկերպեան յաթոռնն Աստուծոյ,
Որ ոչ ստեմ զնեզ և ոչ մերձենամք
ի ծառայս Աստուծոյ
Եւ ոչ ի զաւակս նորայ:
Եւ յուր այս գիրս կենայ
Եւ ներ սուրբ յանունն յիշեն,
Խ [40] տնով հեռանամք ի
ծառայէս Աստուծոյ
Յանունամբ հօր և որդւոյ և հոգւոյն շընորհիւն
Եւ բարէխօսութեամբ սուրբ Աստուածածնի
Եւ սուրբ Սիսիանոսի աղօթիւքն
.... Յաղախնոյս քո և ծառայիս Աստուծոյ:

Մատենադարան, Ձմայիլ№11

51-52 եւ ներ սուրբ յանունն յիշեն Խ տնով, հեռանամք ի ծառայէս Աստուծոյ *ուղղ. ըստ իմաստի, ստորակետը տեղափոխվում է Խ տնով բառակապակցությունից առաջ և այն ըմբռնվում է տարածական առումով, իբրև Խ /40/ տան չափ հեռավորություն, հմմտ. 1(159)ը և թ տարբերակները, ուր Խ /40/ այդ իմաստով է գործածված:*

1(159)ժբ
Սուրբ Անտոն և սուրբ Նշխար
Գնացին առ ծանապարհաւն,
Լսեցին ձայն երեխային՝
Ի չար տանջանս աղաղակէր:
Եւ գնացին ընդ ձայնին
Եւ տեսին ալ մի չար,
Որ գողացեալ երեխա մի ի մօրէն,
Չի խեղդել և ուտել կամէր զնայ:
Եւ սուրբքն բռնեցին զալն չար
Եւ կապեցին մեծ վէմի:
Եւ եկեալ մայր ալին լալով:
- Այս ի՞նչ է բանս,-
Հարցին ցնայ սուրբքն և ասէն.
- Ըստուքն ասացէք մեզ զչար գործն ներ,
Թէ կու ըսպանանեմք ձեզ:
Ասաց ալն և ալայ մարն թէ.
- Մենք այն եմք,
Որ տղացկանին վնաս առնեմք.
Ջերեխաս այն ի մօրէն գողանամք,
Չի որովայն կանանց մտանիմք,
Չտղան մօրն արգանդն խեղդեմք,
Կտրատեմք տղայն,
Արիւնայխառն ի վար թափեմք,
Չի որուն հակառակիմք՝
Ոչ թողումք, որ դուստր և որդի աճին
և զօրանան:
Ահա ըստուքն ասացի ձեզ զչար գործն իմ,
Ո՛վ սուրբք Աստուծոյ,
Թողէք զիմ անդրանիկ որդին:
Եւ սուրբքն կամեցան կապել մայրն
ընդ որդին վէմն:
Աղաղակեաց մայր ալին՝ ասելով.
- Թողէք իմ որդին,
Որ տուն ներ անուանքն [յ]իշեն
Կամ գիր անուան ներ լինի՝
Մենք այն տան կամ մարդոյն հեռանամք
Եւ ոչ մերձենամք,
Զմօրն նենգեմք և հօրն վնասեմք:
Սուրբ Անտիոք բժիշկն
Եւ սուրբ Կոզմայ և Դամիանոս
Եւ սուրբ Պանդայլէեցնն բժիշկն,
Յանունամբ և բարեխօսութեամբն ներ,
Կապի չար ալքն և աղանդն
Ի դիմաց ծառային Աստուծոյ:

Մատենադարան, Ձմայիլ№ 3

28 անդրնիկ *ուղղ. ըստ իմաստի:*

1(159)ժգ

Տեսին Սիսիանէ և Սիսիանոս և Շիղաս.
Գնացին յանապատն և հանդիպեցան ծերոյ,
Չի նստեր ի վերայ աւազու.
Հարտէշ որպէս զաստղ,
Ատամն և անձն որպէս վարազի,
Հերքն նման որպէս օձի:
Հարցին ցնա և ասէն.
- Ո՞վ ես դու:
- Ես եմ ուժաւորն,
Որ կորուսանեմ զմանուկն յորովայն մօրն
Եւ ունիմ իշխանութիւն մինչև ի ԺԹ [10] ամ:
Կապեցին ցնա սուրբքն
Եւ կամէին սպանանել զնա:
Եւ նա ասէ.
- Մի սպանանեք զիս,
Չի ես երդն ձեզ:
Եւ երդուաւ նմա ի քնարն Դաւթի,
Ի մատանին Սողոմոնի,
Ի կաթն սուրբ կուսին,
Ի զօրութիւն սուրբ խաչին,
Ի բազուկն տէրունական:
- Եւ այս է,
Ուր այս գիրս լինի և անուանքս յիշուին՝
Մեք ի յայն վայրքն ոչ շրջիմք
Եւ ոչ մտանէմք ի ծառայն Աստուծո:

Մատենադարան, Հմայիլ № 15

1(159)ժդ

Սուրբն Սուքայէլիւն, սուրբն Միքայէլիւն
Եւ սուրբ Կղօտեայ.
Այս Գ [3] հրեշտակս ելին ի լեառն մի բարձր
Եւ տեսին այր մի նստած ի վերայ աւազու,
Որոյ ատամունքն խոզի, ոտքն շրջաւանօք:
Եւ հարցին ցնայ և ասէն.
- Ո՞վ ես դու, պիղծ սատանա:
Եւ նա ասէ.
- Ես եմ թպղայն, որ մանուկն սպանանէմ
Եւ մեր կերակուրն դղայոց միսն է
Եւ տղացկանի դասապն է:
Եւ սուրբքն կամեցան ըսպանանել ըզնայ:
Եւ ասէ.
- Մի ըսպանանէք զմեզ:
Երդումն Աստուած կենդանին,
Ի հայր և որդին և սուրբ հոգին,
Որտեղ այս անունք և գիրս որ լինի՝
Եւ ոչ մերձենամք այն տունն
Եւ ոչ մեղանչեմք մայրն և մանուկն:
Եւ անունք մեր այս է.
Զառաջինն Ծնանելոց երկուում,
Գ մայրոց,
Դ տղայոցն,
Որ է Ե Ասլըսամ,
Զ Համիլէ,
Չունիք իշխանութիւն մտանել տունն անդ:
Անուն հօր և որդոյ և հոգոյն սրբոյ,
Եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ:

Մատենադարան, ձեռագիր 6677, 57 /24/, ձեռագիր 8428, 227

2 8428 Կղօդիայ:
3 8428 մի *չիք:*
4 8428 նստեալ ... աւազոյ:
5 8428 չիք:
6 8428 հարցին սուրբք և ասեն:
7 8428 պիղծ և չար:
8 8428 նա *չիք:*
9 8428 ես եմ որթփաղն, որ մօր մանուկն խեղդեմ, զմարն սպանեմ:
10 8428 զի մեր կերակուր մանր տղի միսն է:
11 8428 կազապն:
12 8428 եւ դարձեալ սուրբքն տանջեցին զնա:
14 8428 ով սուրբք աստուծոյ, մի տանջեք զիս:
15 8428 և ես երդնում յաստուած կենդանի:
17 8428 որտեղ որ ձեր անուանք լինի և մեր անուն այս գիր լինի:
18 8428 մենք յայն տուն ոչ մտանեմք:
19 8428 և ոչ մեղանչենք զմայրն և զմանուկն:
20 8428 անուանքն այս են:
21-28 8428 *չիք:*

1(159)ժե

Սուրբն Փոկաս և սուրբն Շղատ
Եւ սուրբն Լուկտան և սուրբն Կղաւդիա
Եւ սուրբն Անաս և սուրբն Մաքէոս
Եւ սուրբն Պետրոս և սուրբն Պաւղոս
Տեսին զբեպղն
Եւ կամեցան սպանանել զպեղծն:
Եւ նա թէ.
- Մի սպանանէք զիս
Եւ ես երդնում ձեզ
Եւ երդում տամ այնոցիկ, որ ընդ իս իցեն.
Թէ յոր տուն, որ անուանք լինին
Եւ գիր անուան ձերոց՝
Մեք ի նա ոչ մերձենամք:

Գյումրիի № 3 ձեռագիր հմայիլ

1(159)ժզ

Հանդիպեցաւ սուրբ կոյսն Մարիամ
Աստուածածին պիղծ զալին,
Կալաւ զնա և ասէ.
- Կենդանի է Տէրն, ո՛վ պիղծ,
Եթէ ոչ երդնուս ինձ՝
Ոչ թողից զքեզ կենդանի,
Որ այլ ոչ մտանէս ի կին:
Երդուաւ նմայ և ասէ.

- Երդումն ի բազուկն տէրունական,
Որ տարածեաց ի վերայ խաչին Յիսուս
Քրիստոս աստուածն ամենեցուն,
Ի հայր նորա և սուրբ հոգին.
Ի վէմն, որ քաւալեցուց հրեշտակն,
Ետ ապաստան ահագին.
Ի շաւիղս արեգական և լուսինն,
Ի բարձրութիւն սերօբէից
Եւ ի խորութիւն ծովուն
Եւ ոչ ստեմ.
Ուր լինի զգիրս և զքոյ սուրբ անունդ՝
Մեք ոչ մտանեմք անդ.
Եւ ոչ տուն և ոչ կին և ոչ դուստրն
Եւ ոչ որդին և ոչ ի հարսն, ի ոչ ընտանիսն:
Եւ անունք մեր այս են.
Առաջին Ծնանելոցն,
Բաղաղու, Գեղագաստէ, Ասլասումէ,
Այիլին, Մառմառոյէ, Այէուէ,
Կալալի, Հովիգան, Եկիսան, Անկենես:
Եւ ուր այս գիրս լինի, անունք՝
Հալածվեմք ի սահմանաց և
բնակութեն ծառայիս Աստուծոյ:
Մատենադարան, ձեռ. № 6677, 159 /74ա/

1(159)ժէ

Սուրբն Սիսիանոս գայր ի լեռնէ մի վայր
Եւ տեսաւ պիղծ մի չար,
Եւ ունէր աչք հրեղէն
Եւ ի ձեռին երկաթի կտրոց:
Եւ հանդիպեցաւ ի տեղի աւազոյ,
Ասէ սուրբն Սիսիանոս.
- Ու՞ր երթաս, ո՞վ նզոված պիղծ և չար:
Պատասխանի ետ և ասէ.
- Երթամ զկանանց մանուկն
թառամեցուցանեմ,
Ջաչս խավարեցուցանեմ,
Ջղեղն ծըծեմ,
Խուլ և համր առնեմ
Եւ առնեմ զտղան
անժամանակ յորովայնէն:
Հանդիպեցաւ սուրբ կոյսն
Մարիամ Աստուածածին,
Կալաւ զնա և ասէ.
- Կենդանի է Տէր,
Եթէ ոչ երդնուս ինձ՝
Ոչ թողում զքեզ կենդանի,
Որ այլ ոչ մտանես ի կինն:
Երդուվաւ նմա և ասէ.
-Երդընումն ի բազուկն տէրունական,
Որ տարածեաց ի խաչին
Յիսուս Քրիստոս աստուածն ամենեցուն,
Ի հայր նորա, ի սուրբ հոգին
Եւ վէմն, որ քաւալեցոյց հրեշտակն
Եւ դատաստանն ահագին,
Ի շառաւիղ արեգական և զլուսնինն,
Ի բարձրութիւն երկնից,
Ի խորութիւն ծովուն, որ ոչ ստեմք:
Եւ ուր այս գիրս լինի՝
Ոչ մտանեմք ի կինն այն
Եւ ոչ ի տունն այն:
Եւ անուանքն մեր այս են.
Առաջին Ծնանելոյ,
Բ Ազլազոյ, Գ Մարոց,
Դ Դաղաքօտէ, Ե Ասլումէ,
Զ Այիլինէ, է Մառմառայ,
Ը Աշիոյ, Թ Կալելի,
ժ Հոմիգան, ԺԱ Եկիտուն, ԺԲ Անկէանիս:
Ուր այս գիրս լինի և անուանքս՝
Հալածիմք ի սահմանաց նոցա
Եւ ոչ մտանեմք ի կինն այն
Եւ ոչ ի տուն այն
Եւ մանաւանդ ի ծառայն Աստուծոյ:
Մատենադարան, Ձմայիլ № 30, Ձմայիլ № 3

1 Ձմայիլ № 3 սուրբ, ի լեռնէն ի վայր:
2 Ձմայիլ № 3 տեսանէր պեղծ:
4 Ձմայիլ № 3 ի ձեռն երկաթի:
7 Ձմայիլ № 3 նզովեալ պեղծ:
Ձմայիլ № 3 և չար *չիք:*
8 Ձմայիլ № 3 պատասխանի ետ պեղծն:
9 Ձմայիլ № 3 մանուկն կանանց:
10 Ձմայիլ № 3 զկաթն պակասեցուցանեմ:
Ձմայիլ № 3 աչքն:
13 Ձմայիլ № 3 եւ տղան այն ժամանակ առնեմ որովայնէ մօր իւրոյ:
14 Ձմայիլ № 3 սուրբ կոյս Աստուածածինն:
17 Ձմայիլ № 3 եթէ *չիք:*
18 Ձմայիլ № 3 ես ոչ թողից զքեզ:
19 Ձմայիլ № 3 ոչ մայրն մտանես և ոչ երեխայն և ոչ հայրն:
21 Ձմայիլ № 3 երդումն:
22 Ձմայիլ № 3 տարածեցաւ ի վերայ:
23 Ձմայիլ № 3 աստծուն:
24 Ձմայիլ № 3 ի սուրբ հոգին *չիք:*
26 Ձմայիլ № 3 ի դատաստանն:
27 Ձմայիլ № 3 և ի շաւիղս:
29 Ձմայիլ № 3 որ *չիք:*
29 Ձմայիլ № 3 ոչ ստեմ:
31 Ձմայիլ № 3 կինս այս:
32 Ձմայիլ № 3 ի տունս այս ծառային աստուծոյ:
33-44 Ձմայիլ № 3 *չիք:*

1(159)ժը

Սուրբն Սիաճոս որս էր ելէր.
Գնաց ի ծերպս վիմաց
Եւ գտաւ պեղծ մի անդ.
Եւ էր ժանիք նորայ որպէս պղնձի
Եւ ատամունք նորայ որպէս վարազի:
Էհարց զնայ սուրբն և ասէ.
- Ո՞վ ես դու, պեղծ:
Եւ նայ ասէ.
- Ես եմ որդն վայրենի,
Որ ըսպաննեմ զմանուկն ի որովայն մօր իւրոյ,
Զ Բ [2] ամսոյ մանուկն և Ը [8] ամսոյն,
Ե [5] ամսոյն և Դ [4] ամսոյն այլ աւելին և պակասն,
Այլ ինչ որ կամիմ՝ առնեմ:
Եւ զայն լսեցին սուրբքն
Եւ կամեցան ըսպաննել զնայ:
Եւ նայ ասէ.
-Մի՛ ածէք մահ ի վերա՛յ իմ,
Եւ ես երդնում ձեզ ամենայսուրբ երրորդութիւն,
Ի հայր և որդին և սուրբ հոգին
Եւ սուրբ մարդեղութիւն Քրիստոսի,
Կաքն սուրբ կուսին և խաչն փրկչական
Եւ սուրբ աւետարանն Քրիստոսի,
Ի երկրի հաստատութիւն
Եւ երկնից բոլորութիւն.
Ի որ տուն ձեր անուանքն լինի[ն]՝
Մենք ի այն տունն ոչ մտանեմք
Եւ ոչ մերձենամք ի ծառայս Աստուծոյ ...

Մատենադարան, Ձմայիլ№ 3

1(159)ժբ

Սուրբն Սիօվն, սուրբն Սիսի
Եւ սուրբն Սիսիանէ եւ սուրբն Նօվիէլ,
Եւ սուրբն Տածիէլ հրեշտակ՝
Հրամանաւն Քրիստոսի յորս էին ելեր
Եւ առին զձայն երեխային:
Գնացին և տեսան զայն ի չարութեան:
Բռնեցին և կալան կապեցին զայն
Ի յալին վէմն:
Եկեալ մայրն ալին և ասէ.
-Ի՞նչ իցէ այս:
Ասեն.
-Այս ի՞նչ է, որ մտանէք ի մօրն յոր[ո]վայն,
Ջերեխային զմիսն ուտէք,
Ջարիւնն խմէք,
Ըզլուս աչացն խաւար դարձուցանէք:
Ասէ մայրն ալին.
-Թողէք որդին իմ.
Յոր տուն, որ ձեր անուանքն յիշեն՝
Անդ ոչ մերձենամք ի ծառայն Աստուծոյ:
Յանուն հօր և որդոյ և հոգւոյն սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Մատենադարան, տպագիր հմայիլ № 8, Ձմայիլ№ 26. էԱժԱ, 229

3 Ձմայիլ№ 26 Տագիէլ:
էԱժԱ հրեշտակք:
4 էԱժԱ հրամանաւն Աստուծոյ:
Ձմայիլ№ 26 հրամանաւն Քրիստոսի լինին:
6 Ձմայիլ№ 26 տեսին: ի չարութիւն:
էԱժԱ զալին:
7 էԱժԱ կալեալ:
10 էԱժԱ զի՞նչ:
11 էԱժԱ պատասխանի տայցեն:
12 էԱժԱ յարգանդ մօրն երեխային:
13 էԱժԱ զերեխային *չիք*:
15 էԱժԱ և զլոյսն աչաց:
17 էԱժԱ զորդին:
18 էԱժԱ անուն ձեր յիշին:
19 էԱժԱ ծառայսն:
Ձմայիլ№ 26 ծառայս:
20-21 Ձմայիլ№ 26 *չիք*:
21 էԱժԱ *չիք*:

1(159)ի

Տէր մեր Յիսուս Քրիստոս
Եւ սուրբ Գաբրիէլ հրեշտակապետն
Յերքայինն եզրն ծովուն.
Դէմ ելեալ ալն չար և դժնիկ կենդանին:
Տէրն մեր Յիսուս Քրիստոս
Եւ սուրբն Գաբրիէլ հրեշտակապետն
Հարցին ըզչար և ասեն.
- Ջի՞նչ ես դու, պեղծ դժնիկ
Կամ զի՞նչ գործեալ ես,
Դու ըստուգ խոստովանեա մեզ:
Ասէ պեղծն.
- Ես եմ ալն չարն,
Զոր կորուսանիմ զմանուկն յորովայնի մօր:
Կապեցին զնա
Եւ կամեցան ըսպաննել զնա:
Եւ ասէ.
-Մի՛ ըսպաննէք զիս,
Յերդ[նում] ի քնարն Դաւթի,
Թէ ի մատանին Սողոմոնի,
Ի յաւատին Գաբրիէլի,
Ուր այս անունքս յիշեն՝
Անդ ոչ մերձենամք:

Մատենադարան, ձեռ. № 666, 365ա

3 յերքայր *ուղղ. ըստ իմաստի:*

1(159)իա

Վիշապ մի գայր բաշնաւոր ի լեռնէ՝
Բարձր և ահաւոր.
Տեսանէ աչքն նորայ որպէս աստղն,
Տեսանէ բաշն նորայ որպէս խոզի,
Տեսանէ լեզու ծիրանի:
Եւ սուրբ[քն] Աստուծոյ Սիսիանէ
և Շաղիտայ
Հանդիպեցան նմայ և ասէն.
-Ջի՞նչ ես դու, պեղծ:
Եւ նայ ասէ.
- Ես եմ ալքն չար ի զարմանալն մարդկան,
Մտանեմ[ք] ի բազումս
Եւ զկանանց գեղեցկութիւն տանիմք.
Մտանեմք ի լուծ եզանցն ուր,
կովուցն և մաքեաց,
Ջոմանս խելացն տանիմք:
Եւ անուանք մեր այս են.
Առաջին Ծնանելոյ, երկուս Ազլազոյ,
Գ Մարոյ, Դ Դայգաղայ գօտէ,
Ե Ասլումէ, Զ Այիլիմէ,
է Մարմառոյ, Ը Աշիոյ,
Թ Կալիլէ, ժ Հոմիգան,
ԺԱ Հոմիտուն, ԺԲ Անկանիս:
Եւ սուրբքն Աստուծոյ կալան զնայ
Եւ կամեցան առաքել անդունդ:
Եւ նայ երդուաւ նոցայ
Ի երկնից բարձրութիւն և եղջուրն լուսնին,
Թէ՝ որ տուն ձեր անուան քուղքն լինի,
Անդ ոչ մտանեմք.
Ոչ ի մայրն և ոչ ի մանուկն
Եւ ոչ ի ծառայն Աստուծոյ /Մարգրտին/
Եւ ոչ խաշինքն և ոչ անասունքն
Եւ ոչ ամենայն ստացուածս
ծառայիս Աստուծոյ:

Մատենադարան, Հմայիլ № 3

3 տեսանէի ***ուղղ. ըստ իմաստի:***

4 բաշն բաշն ***ուղղ. բաշն:***

1(159)իբ

Անգութիոս ելանէր ի ծովէն
Եւ թաւալէր ի վերայ թաւալման ջրոյ:
Եւ տես զնա սուրբն Յոհաննէս և ասէ.
- Ջի՞նչ ես դու, ո՛վ պեղծ դժնիկ կենդանի:
Եւ նա ասէ.
- Ես եմ ալքն չարութեան,
Որ նստիմ ի գլուխն մարդոյ,
Ջականջն խորովեմ,
Ջղեղն ծծեմ,
Ջարիւն քամեմ,
Բ աչաց լոյսն խաւար ածեմ,
Եւ չար կապանօք կապեմ զնայ:
Ասէ ցնա սուրբն Յոհաննէս.
- Ո՛վ պեղծ, այսուհետև չունիս հրաման
Անուամբն անեղին և անմահին
Եւ անքաւելի սուրբ երրորդութեան,
Որ ոչ մերձենաս ի ծառայս
Աստուծոյ /Ելեսանին/, ամէն:

Բլխերի հմայիլ

6 այլքն ***ուղղ. ալքն:***

1(159)իգ

- Սուրբ Սանո՛ս, սուրբ Սանո՛ս,
էլիլ իմ կուգամ անապատեն, -
Վազեց մեկ այր ի վրան,
Ադա՞մ էր, խո՞զ էր, մա՞զ էր, ձի՞ էր,
Ասից.
- Դու վո՞վ իս:
Ես ասի.
- Ալ դևն իմ:
- Գործդ ի՞նչ է:
- Գործքս ան է, որ տղոցկանը
տեղեն կուտիմ,
Տղան օրորոցեն կուտիմ,
Նոր հարսը քունջեն կուտիմ,
Աղէկ մանուկը աշդեն կուտիմ:
Սուրբ Սանո՛ս, սուրբ Սանո՛ս,
Ի՞նչ կամեցար:
Ահա ես մեռանիմ.
Վով որ քու աղոթքդ կասե,
Քու անունդ տա՝
Դողան, սարսափին,
Քառսուն դուռ հեռանան,
Թեք ինձի ապուլ տուր:

ՀԺՀ VIII, 98 / Դրիմ

2(160)

Մեկ ծառ մը կա անտեղը,
Ան ծառը պուն ունի անտեղը:
Սև օցն էլավ կանչելեն, ճնչելեն,
Շունը կանչելեն,
Կատուն միավելեն:
Մանուկն էր, մորին կերթար:
Քրիստոս ասաց՝ ու՞ր կերթաս:
- Կին է, տղոցկանին կերթամ:
- Չարքս տառնաս, տապակ ըլաս:

ՀԱԲԱ, FBI: 1823, 02 / Դրիմ-Սիմֆերոպոլ
FFIII: 1983, 03 / Նոր Նախիջևան
Փորքշեյան1971, 95 / Նոր Նախիջևան

9 ՀԱԲԱ FBI չարիս ***ուղղ. ըստ FFIII:***

3(161)

370 հրեշտակօքն արծակուի,
Չորս գլուխ ավետարանօքն արծակուի,
36 խաչովն արծակուի,
336 հայրապետօվն արծակուի:
Արծակեմ չորեք կողմանց աշխարհի սրբովն,
Արծակեմ այս անուն կապած մարդն՝
Ի վերայ իւր կնոջն:
Մատենադարան, ձեռագիր №8428, 61 /76/

4(162)

Աքա՛, Կատառասա՛ք, Դիա՛ս,
Փութացուցէք և արծակեցէք ի կապած
ծառայիս Աստուծոյ,
Զի բացցեն և արծակեն
Եւ առաջ եկեսցեն է պատկերն Աստուծոյ:
Կենդամաէ՛, Մաքէ՛,
Որ է[ք] զսպասաւորս Աստուծոյ,
Դուք օգնական լերուք
Եւ արծակեցէք կապած ծառայիս
Աստուծոյ, ամէն:
Անուն Աստուծոյ գթածին և ողորմածին,
Գաթայ, Հանայ, Լաքաք, Քաքիանէ, Շազարշ,
Արծակեցէք ծառայիս Աստուծոյ, ամէն:
Մատենադարան, ձեռագիր № 8428, 61 /76/

5(163)

Սուրբք հրեշտակք Աստուծոյ,
Առ այս Աւագ, Սեթրաք, Միսաք, Սիսիանէ,
Իտեղիկոս, Ադիաս, սուրբն Հռաքէլ,
Սուրբն Տածիէլ, սուրբն Ուրիէլ, Բասիլիոք,
Սուրբն Սուքայէլ, սուրբն Գաբրիէլ,
սուրբն Միքայէլ,
Սուրբն Բնոքէն Պատլիկիէլ, սուրբն Ամիէլ,
Սուրբն Մորենու Ջաքաղաք Սենդիաշ,
Որ ունիք իշխանութիւն ի վերայ կապածի,
Արծակեցէք զծառայն Աստուծոյ այս անուն:
Մատենադարան, ձեռագիր № 8428, 69 /80/

4 Տաճիէլ, Նուրիէլ *ուղղ. Տածիէլ, Ուրիէլ:*

Գոհանամք զքէն, բարերար Աստուած,
Որ հրամայեցեր Կպրիանոս թագաւորին
Եւ օրհնեաց զմեզ, Տէր,
Եւ մեք օրհնեմք զքեզ, լօշտա՛կ:
Աստուածային օրհնութեամբն
օրհնեալ լինիս,
Դեղ ամենայն ցաւոց,
Վասն որոյ, օրհնեալ ես
Եւ դեղ, և՛ թագաւոր ես ի վերայ
ամենայն խոտոց:
Եւ որպէս պարգևեաց զքեզ Աստուած
Եւ ետ շնօրհք ամենայն ի քեզ՝
Վասն բժշկութեան մարդկան
Եւ գոյացուց զքեզ,
Եւ զարդարեաց զքեզ,
Նոյնպէս և դու պարգևեայ զգինդ քո
Վասն բժշկութեան՝
Անեղին անուամբն,
Անմահին ողորմածին
Եւ քաղցր բարերարին Աստուծոյ
Եւ վասն ամենօրհնեալ Աստուածածնին
Եւ սրբոց առաքելոցն
Եւ մարգարէիցն
Եւ հայրապետացն
Եւ ամենայն սրբոց երկնաւորաց
Եւ սրբոց հրեշտակաց
Եւ ամենայն հրեշտակապետաց:
Բարեխօսութեամբ սոցա
Անմահ, անճառելի, անիմանալի
աստուածային կարող զօրութեամբն՝
Օրհնեալ լինիս, լօշտա՛կ,
Հազար անգամ, ծառայդ Աստուծոյ.
Աջն անեղին և բազուկն հզօրին՝
Յաղթահարեալ, վանեալ խորտակեսցին
Ամենայն չարն ցաւն ի քէն
Եւ օրհնեալ լինիցիս, լօշտա՛կ,
Հազար անգամ, ծառայդ Աստուծոյ,
Եւ հանգերուք հայրն մեր, որ յերկինս,
սուրբ եղիցի:
Մատենադարան, ձեռագիր № 6678, 92

Ջ. ԼՈՇՏԱԿԻ

6(164)ա

Ո՛վ ամենօրհնեալ այգի,
Որ զամենայն խսիաթն առ քեզ ունիս
Եւ Բ [2] պարգևք ետ քեզ Աստուած
Վասն բժշկութեան մերոյ.
Եւ նայ մեք՝ տարաժամեալքս մեղօք,

6(164)բ

Ո՛վ ամենօրհնեալ այգի,
Որ զերկնային զօրութիւն և խսիաթ դու
ի քեզ ունիս,
Որ և այսքան պարգևք ետ քեզ
բարերարն Աստուած՝
Վասն փրկութեան մարդկան:
Նաև մեք՝ տաժանեալքս մեղօք,

Գոհանամք յամենառատ
ողորմութենէ քումմէ՝
Տէր Աստուած մեր,
Եւ խնդրեմք ի քէն,
Որպէս հրամայեցեր Կիպրիանոս
բագաւորին վասն դեղոյս.
Եւ դեղս օրհնեալ է Աստուծոյ
Եւ ամենայն սրբոց նորա:
Դու ես բագաւոր ամենայն խոտից,
Եւ որ գոյացոյցն զքեզ
Եւ պարգևեաց քեզ բժշկութիւն
ազգի մարդկան
Ամենայն ցաւոց:
Եւ անուամբ անեղին և անմահին Աստուծոյ,
Ողորմածին և բարերարին Աստուծոյ,
Եւ սուրբ առաքելոց,
Մարգարէից, մարտիրոսաց,
Հայրապետաց, ճգնաւորաց,
Կուսանաց, զինուորաց
Եւ սուրբ հրեշտակաց և
հրեշտակապետաց
Եւ ամենայն երկնային զօրաց,
Եւս առաւել ամենօրհնեալ
Սուրբ կոյս Աստուածածնին
բարեխօսութեամբն
Օրհնեալ լինիս դու, լօշտա՛կ,
Զօրութեամբ Ամենակալին,
Աջովն Անեղին,
Բազկովն Հզօրին
[Յաղթ]ահարեալ վանեսցին և
խորտակեսցին դևք,
Եւ քակտեսցին մեքենայք,
Եւ սասանեսցին խումբք,
Եւ շարժեսցին հիմունք այսոց պղծոց.
Եւ դու լինիս օրհնեալ
Յայսմհետէ մինչև յաւիտեան:

ՍՄ, 327

6(164)գ

Ո՛վ ամենօրհնեալ այգի,
Որ զերկնային զօրութիւն առ քեզ ունիս
Եւ պարգևս իւր բարերարն Աստուած՝
Վասն փրկութեանն մարդկան:
Այժմ և մեք՝ տարաժամեալքս մեղօք,
Գոհանամք առ բարերարն Աստուած:
Որպէս հրամայեաց մեզ
Պարգևատուն Կիպրիանոս բագաւոր
Եւ օրհնեաց զքեզ,
Եւ մեք օրհնիմք զքեզ, լօշտա՛կ,
Աստուածային զօրութեամբն օրհնեալ
լինիս
Եւ դեղ ամենայն ցաւոց:
Վասնզի դու ես օրհնեալ յԱստուծոյ
Եւ բագաւոր ամենայն խոտոց,
Եւ սիւն պարգևեաց քեզ Աստուած՝
Վասն փրկութեան մարդկան,
Գոհացոյց զքեզ և զարդարեաց.
Նոյնպէս և դու
Պարգևեա՛ մեզ զգին քո
Վասն բժշկութեան.
Անուամբն Անեղին և Անմահին և
Ողորմածին՝
Քաղցր բարերարին Աստուծոյ,
Բարեխօսութեամբն սուրբ
առաքելոցն և մարգարէիցն,
Հայրապետացն, մարտիրոսացն,
զինուորացն,
Երկնային զօրացն
Եւ քաջ նահատակացն, հրեշտակացն
Եւս առաւել բարեխօսութեամբն սուրբ
Աստուածածնին
Եւ ամենօրհնեալ Աստուծոյ ծնօղին
բարեխօսութեամբն՝
Օրհնեալ լիցիս, լօշտա՛կ,
Զօրութեամբն ամենակալ Արարչին
Եւ աջին Անեղին,
Բազուկն Հզօրին
Յաղթահարեալ վանեսցէ
Եւ խորտակեսցէ ի քէն զդևս
Եւ զօրութեամբն քո,
Օրհնեալ եղիցիս զօրութեամբն Աստուծոյ:

ՀԱԲՍ, FBI: 1193, 01, 02-1194, 00

II
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻ ՄԱՔՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 165-175)

ՄԱՆԿԱՆ ԼՈԳԱՆՔԻ

165

Աս ջուրով, ան ջուրով,
Գետ Հորդանանի ջուրով
Անիրավի խելքը պակսի՝ իմ տղաս ավելնա,
Շատի միտքեն պակսի՝ իմ տղաս ավելնա:

ՀԺՀ VIII, 96 / Ղրիմ

166

Ծով-ծով աչք,
Կամար ունք,
Մեյտան ճակատ,
Պակլա քիթ,
Օյմաղ բերան,
Մարգրիտ ակռա,
Ասմա կերդան,
Սրմա մազ,
Էրկան վզիկ,
Կեռ խոռոզիկ:

ՀԺՀ VIII, 96 / Ղրիմ

167ա

Էրկան վզիկ,
Թափ տու ցավիկ,
Շալկե մսիկ:

ՋԲ, 10 / Ջավախք

167բ

Երկնավզիկ,
Թեթվաջրիկ,
Ջաղամաթի քունը քզիկ:

ԷԱԺՋ, 31 / Ալաշկերտ

167գ

Թոթվե ջրիկ,
Ժողվե մսիկ.
Կամար ընքվի լընիս,
Երկար թարթիչ լընիս,
Շահեն աչվի լընիս,
Պզտիկ քիթք լընիս,
Պզտիկ բերան լընիս:

Գրիգորյան 1970, 180 / Ակն

ՆՈՐԱՀԱՐՍԻ ՄԱՋԵՐԸ ՀՅՈՒՍԵԼՈՒ

168

Քու սկեսուրը հարս կու սիրե,
Հարսի էդնեն մազ կու սիրե.
Իմ էրգենքը, ջրի լենքը,
Աջն ու խաչը քիզ վրա:

ԹՄԿ, 18 / Թիֆլիս

Խ�ճՃՎԱԾ ՄԱՋԵՐԻ /ԹԵԼԻ/ ԱՐՁԱԿՄԱՆ

169ա

Աստված օղորմի անհիշատակ պառվուն,
Ինչ գնաց յերուսաղեմ,
Քար քաղեց, ավազ մաղեց,
Յերուսաղեմա տաճար էտու շինել.
Ուր մեղաց թողութեն չուզեց,
Խառնած մազին, խառնած մանծին
Յիստկութեն ուզեց:

ՀԱԲԱ, FAV: 3081, 02 / Ոշտունիք

169բ

Օղորմի անհիշատակ պառվին,
Օխտը դան գնաց Երուսաղեմ,
Չուզեց յիրան արքայութեն,
Ուզեց յիրան խառնակ ծամին յիստկութեն:

ԱՀ XVII, 121 / Նոր Բայազետ

169գ

Օղորմի անհիշատակ պառվին,
Գ'ացե նստե օխտը ճամփաբաժին,
Քարը քաղե, ավազը մաղե,
Չուզե իր մեղաց թողութեն,
Ուզեր ա խառնած կաժին,
Թաղկած մազին յիստկութեն:

ԱՀ XVII, 121/Նոր Բայազետ

169դ

Ասպած օղորմի բոբիկ պառվըկեն,
Անհիշատակ խաշին որկեն,
Յոթ դիր Հերուսաղեմն ա գ'ացեր,
Խառնած ծամին, խառնած կաժին,
Լոռ աղջկեն բախտի բանալ ա ուզեր:

ԲԱ, 652/ Շատախ

169ե

Աստված օղորմի էն խալեվորին,
Օր յոթ դիր էրուսաղեմ գնաց,
Խառնած մազին, խառնած կաժին,
Ազապ աղջկա բախտին,
Օրբեվերի հարսին
Յիստկուբեն ուզեց:

ԷԱԺՋ, 301/ Վան

169զ

Աստված օղորմի էն պառվի հոգուն,
Վուր կու նստեր չորեք ճամփին՝
Լիդր գզեր, լիդր մաներ,
Լիդր խծուծը կու հաներ:

ԹՄԿ, 17 / Թիֆլիս

170

Թու՛, քու՛, քու՛, քու՛, քու՛.
Ժըժնված մազին, ժըժնված թելին
իստըկություն,
Անհիշատակ պառվին ողորմություն,
Մեկիկ բալին արևշատություն.
Հացին էժնություն,
Մահին քանկություն,
Թակավորին սեր ու բարիշություն,
Աշխարհին խաղաղություն:
Թու՛, քու՛, քու՛, քու՛, քու՛.
Ժըժնված մազին, ժըժնված թելին
իստըկություն,
Նախանձ սրտին անկեղծություն,
Քյաֆուրի ծեռին առատություն:

ՀԱԲԱ, FFVI: 3564, 01

ԸՆԿԱԾ ԱՏԱՄԻ

171ա

Մուկի՛կ, մուկի՛կ, ա՛յ մուկիկ,
Առ քու էրկաթե ատամը,
Ինձի՝ իմ օսկոռե ատամը:

ԱԳ XI, 42 / Լոռի

171բ

Մու՛կ, մու՛կ, տար ու բի,
Իմ երեխի համա էրծաթի ատամ բի:

ԱԳ IX, 261 / Լոռի

172ա

Ահա՛ քու շան ակռեքը,
Տու՛ իմ օսկե ակռեքը:

ԹՄԿ, 16 / Թիֆլիս

172բ

Ա՛ռ քզի շան ատամ,
Տու՛ ընձի գառու ատամ:

ՀԲՆ / Աշոցք-Ղազանչի

ԿՏՐԱԾ ԵՂՈՒՆԳԸ ԹԱՂԵԼՈՒ

173ա

Օղու՛նգ, թաղած կեցիր,
Հա՛յր Աբրահամ, վկա կեցիր,
Անդի աշխարհին հազիր կեցիր:

ՀԺԳ VIII, 95 / Ղրիմ

173բ

Ըղու՛նգ, ըղու՛նգ, ըտի կաց,
Աքա՛մ, դուն վկա կաց,
Եփոր հարցնեմ՝ հազիր կաց:

ԱԳ XI, 42 / Լոռի
ԹՄԿ, 16 / Թիֆլիս

173գ

Եղու՛նգ, դու հոսա կեցի,
Ադա՛մ, Եվա՛, վկա կեցի,
Դատաստանին հազր կեցի:

Փ, 274 / Ջավախք-Կորխ

173դ

Եղու՛նգ, դուն հոս կեցիր,
Ադա՛մ, Եվա՛, վկա կեցիր,
Դատաստանին օրը եկուր
Եվ զիս պատրաստ գտիր:

ԲԲ, 348 / Ոտտոսբո

173ե

Ղե՛յնը, ղե՛յնը, ըստեղ կաց,
Հերու որ ուզիմ՝ հազիր կաց:

ԱԳ X, 247 / Լոռի

174

Գետի՛նք, քեզի տամ,
Երկի՛նք, դուն վկա,
Լուս քամին փչին նե՝
Վազիս, ինձի գաս:

ՀԺՀ VIII, 94 / Դրիմ

ՈՏՔԵՐԸ ԹՄՐԵԼՈՒ

175ա

Դմբրի, դմբրի, դմբրակալի,
Իս գնացի շան հարսանի,
Դուն մնացիր տմպլ տանի:

ԹՄԿ, 19 / Թիֆլիս

175բ

Դմբրի, դմբրի դմբրակալի,
Տակիս՝ մի նահալի,
Չիմ գնացին շան հըրսանիք,
Ես մնացի տան բըլանիք:

ԱՀ XI, 42 / Լոռի

III

ՓՈՐՁԱՆՔ-ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԱՂՈԹՔՆԵՐ (№№176-180)

ԱՉՔԸ ՇՅՈՒՂ ԸՆԿԱԾԻ

176ա

Ծեղ ես՝ ծալվի,
Ֆող ես՝ հալվի:

ԱՀ XI, 42/Բորչալու
ԹՄԿ, 429/Թիֆլիս

1ԹՄԿ դուս արի:

176բ

Խող ես՝ խալի,
Խիլ ես՝ էլի,
Աստվածածնի ծկութն ինե:

ԷԱԺՋ, 301 / Վան

176գ

Խող ես՝ խալի,
Քար ես՝ մաշի,
Խիլ ես՝ էլի,
Աստվածածնի ծծի կաթն յինի:

ՀԱԲԱ, FAV: 3085, 04 / Ոշտունիք

176դ

Քար իս նե՝ հալիս,
Աղ իս նե՝ թափիս,
Չոփ իս նե՝ թռիս,
Խաչ իս նե՝ պահիս:

ՀԺՀ VIII, 94 / Դրիմ

ՇԱՆԻՑ ՊԱՀՊԱՆՎԵԼՈՒ

177ա

Հիսուս Քրիստոս աշխարհ եկավ,
Շուն կար՝ գլուխ չկար:

ԱՀ X, 246 / Բորչալու
ՀԱԲԱ, FFII: 9255,06/Ջավախք-Ուչմանա

1 ՀԱԲԱ Քրիստոսն էկավ աշխարք:

177բ

Քրիստոսն էկավ աշխարհ՝
Շանը անգլուխ տեսավ:

Կ.Սահակյանի նյութերից / Գյումրի

177գ

Մե շունըմ կէր՝ պերան չըկէր,
Աստվածամոր որդի մը կէր,
Կալեր, կապեր՝ վեր մի չիգեր:

ԱՀ XXVI, 202 / Վան

177դ

Մե շու՛մ կա, շու՛մ էլ չըկա,
Աստվածամոր որդի մը կա,
Կալա, կապա՝ խը ծի չըգա:

ՀԱԲԱ, FAV: 3081, 04, 3091, 02 / Ոշտունիք

177ե

Սուրբը մեր մեջն է.
Շուն կա՝ բերան չի կա,
Խածնելու հրաման չի կա.
Չի՛ք ըլաս, կորչիս:

ՀԺՀ VIII, 97 / Դրիմ

ԿԱՐԿՈՒՏԻ

178

Յորժամ երթայր Տէրն մեր Յիսուս
Քրիստոս յԵրուսաղէմ,
Հարցին նմա սուրբ առաքեալքն.
- Յորժամ ելանիցէ ամպ բարկութեան
կարկտին, զի՞նչ արասցուք:
Պատասխանի ետ Տէրն մեր
Յիսուս Քրիստոս.
- Ասացէք անունք այսոքիկ, որք են.
Ենոք, Եղիա, Ռասին, Ռասուտ, Ատբել և Տրբել,
Դուք տարէք, հեռացուցէք զամպ կարկտին՝
Հանդից, հանդաստանից, ծառոց և
տնկոց ի տեղւոյս, ամէն:

ԱՀ X, 235 / Բորչալու-Լոռի

ԵՐԱՇՏԻ

179

Եղիր մեզի մայրացու,
Մեր արտերը թացացու,
Հաց տուր մեզի, կշտացու,
Ստեղծածիդ մի լացու:
Ստեղծել ես՝ չկորցնես,
Ղսմատ տաս՝ չչորցնես,
Ողորմութեն հասցնես.
Քու զորութենդ շատ է,
Ողորմութենդ շատ է.
Սրտներս մի քցե այ,
Մեզի մի էնե սովմայ,
Տե՛ր, ողորմյա, տե՛ր, ողորմյա,
տե՛ր, ողորմյա:

ՀԱԲԱ, FFVI: 3566,03

180

Ո՞վ սուրբ Գևորգ,
Քո զորությունին մատաղ,
Մեր տերն ու պահապանը դու ես.
Էս տաք ջրին մի հով ջուր ածա,
Մեր լաց ու աղաղակը լսի,
Մեր երեխեքանցը խեղճ արի:

ՊԵԺ I, 1962, 136 / Աշտարակ

IV
ՀՄԱՅԱԿԱՆ ԿԱՊՔԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ
(№№ 181-228)

Ա. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՊՔԻ (№№ 181-204)

ԳԵԼԿԱՊԻ

181ա

Գայլը կապեմ էրկու բթով,
Հայր Հոսեփի ուքը մատով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Տեր Մոսեսի գավազանով,
Լուսավորչի սուրբ հավատով.
Լիզուն կապվի, ակռեն թափի,
էկած ճամփեն գա, մոլըրի,
Մեր Տիրոջը խաչը տեսնի,
Դիվանոնց պես էրթա կորի:

ԷԱԺԱ 186/Շիրակ Փ, 284/Ջավախք-Կորխ
ՀԱԲԱ, FFII, 2255, 05/ Ջավախք-Ուչմանա
ՀԱԲԱ, FFII, 1692, 01/ Շիրակ-Լանջիկ
ՀԲՆ/Տաշիրք-Լեռնահովիտ
ԺԱԲ, 6/Ախալցխա-Ծուղրուտ
ՀԱԲԱ, FFVI, 3566, 01

2 *Մյուս բոլոր աղբյուրներում՝ չիք:*
3 ՀԲՆ քաղցր ծծի:
ԺԱԲ անուշ:
4 ՀԱԲԱ, FFII /Շիրակ-Լանջիկ/ ծայնով:
ՀԱԲԱ, FFII /Ջավախք-Ուչմանա/ սանձով:
ԺԱԲ *չիք*:
5 ՀԱԲԱ, FFII, /Ջավախք-Ուչմանա/ Սուրբ Մոսեսի:
6 ԺԱԲ Հիսուսի:
ՀԱԲԱ, FFII, ՀԲՆ, ՀԱԲԱ FFVI *չիք:*
7 ՀԱԲԱ, FFII /Շիրակ-Լանջիկ/ *չիք*:
ՀԱԲԱ, FFII /Ջավախք-Ուչմանա/ ակռեքը խաչվի:
ՀԱԲԱ, FFVI քիթը կալնվի, ակռեն խաչվի:
8 ՀԱԲԱ, FFII /Շիրակ-Լանջիկ/ գայլ մոլորի:
ՀԱԲԱ, FFII /Ջավախք-Ուչմանա/, ՀԲՆ, ԺԱԲ *չիք:*
ՀԱԲԱ, FFVI յուր գալած ճամպեն փակվի:
9 Փ իմ տիրոջս:
ՀԱԲԱ, FFII /Շիրակ-Լանջիկ/ իմ տիրոչը:
ՀԱԲԱ,FFII /Ջավախք-Ուչմանա/ տիրոջ:
ՀԲՆ իմ դիվանի պես խաչ տեսնի:
ԺԱԲ, ՀԱԲԱ, FFVI չիք:
ԺԱԲ *8-րդ և 9-րդ տողերի փոխարեն ունի՝*
Քանի իմ սիրոտս ես՝ կապ մնաս,
Սիրոտես որ ելլես՝ ազատիս:
10 Փ դիվանքի պես թող սասանի:
ՀԱԲԱ, FFII /Շիրակ-Լանջիկ/ դիվանի պես թող սասանի:
ՀԱԲԱ, FFII /Ջավախք-Ուչմանա/ դիվահարի ու սասանի:
ՀԲՆ չիք:
ՀԱԲԱ, FFVI թշնամու պես հալածվի, Տեր մեր Քրիստոս աստված:
ԺԱԲ դիվանի պես սասանիս:

181բ

Գայլը կապեմ էրկու բթով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Սուրբ Մոսեսի գավազանով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով:
Ասեմ՝ լուր,
Խնդրեմ՝ տուր,
Սիրտ մաքուր:

ՀԲՆ / Աշոցք-Դազանչի

181գ

Ալալոց, գալալոց,
Գել կապիմ էրկու բթով, էրկու մատով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Նահատակաց կարմիր քարով,
Գիլու ճամփեն մոլոր էնիմ,
Ագռեք խմոր էնիմ,
Աչքեր՝ քոռ, օդներ՝ թոփալ, բուլ:

ՀԲՆ / Տաշիրք-Լեռնահովիտ

181դ

Ալալոս, գալալոս,
Գելը կապեմ երկու բթով,
Երկու բթով, երկու մատով,
Աստվածածնա քաղցր կաթով,

Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Նահատակաց կարմիր քարով:
Գիլի ճամփեն մոլոր անեմ,
Գիլի ատամ խմոր անեմ,
Ոտները՝ թուլ,
Ականջը՝ խուլ:

ՀԹԵ III, 110 / Լոռի

182

Ալալոց, գալալոց,
Սուրբ Սահակա մարտիրոս,
Գիլի աչքերը գիզիկ անես,
Ատամները մումիկ անես,
Էս հանդեն կալես, կապես,
Էն հանդեն արծակ թողես:

ՀԺՀ VI, 148 / Վաղարշապատ

183ա

Գիր անեմ, գել կապ անեմ,
Օխտը մատով, օխտը բթով,
Աստվածածնա քաղցր կաթով,
Լուսավորչի սուրբ աջով
Գելի դունչը կապեմ,
Փորը ցխի անեմ,
Ոտները ծղի անեմ,
Ատամնին մոմի անեմ,
Լեզուն տըխտըմոր անեմ,
Սուրբ Սարգսի ծիու ծարը
Գյամ անեմ, գլուխն անեմ,
Տանեմ քյոթկիցը կապեմ:

ԱՀ X, 243 / Բորչալու-Լոռի

10 Ձիու չարը *ուղղ. ըստ իմաստի և այլ տարբերակների տվյալների:*

183բ

Գիլ անեմ, գիլկապ անեմ,
Ըտամնին խմոր անեմ,
Լիզուն տխտմոր անեմ,
Քրիստոսի ծիու ծարը
Գյամ անեմ, գլուխն անեմ,
Տանեմ քոթկիցը կապեմ:

Տաշրացի1887, №125 / Լոռի

183գ

Գել անեմ, գելկապ անեմ,
Գիլի ատամնին խմոր դառնա,
Լեզուն թխտմոր դառնա՝
Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Նահատակաց կարմիր քարով:

ՀԺՀ VII, 134 / Լոռի-Հաղպատ

183դ

Գիլին գելկապ անեմ
Ուքը մատով, իրեք բթով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով.
Ատամնին խմոր դառնա,
Լեզուն թթխմոր դառնա,
Հիսուս Քրիստոս:

ՀԱԲԱ FBI: 1192, 02, 04 / Լոռի-Հաղպատ

183ե

Գիլ անեմ, գիլկապ անեմ,
Աջու բթովս, թուրքի մատովս,
Մարիամ Աստվածածնու մազովը,
Սուրբ Սարգսի գյամովը,
Լուսավորչու աջովը:

Տաշրացի1887, №125 / Լոռի

183զ

Գիլ անեմ, գիլկապ անեմ,
Գելին աչքերը քրտղիղի անեմ,
Կռինքը մըմից անեմ,
Ոտները ծեղից անեմ,
Մեջքը թերից անեմ,
Պինչ կապեմ չուա ըռավոտը,
Որ կովս քթանամ:

ՀԱԲԱ FBI: 1828, 05-1829, 00 / Գանձակ-Խաչակապ

183է

Գիլ անեմ, գիլկապ անեմ,
Ոտները ծողի անեմ,
Հաքին թիլ անեմ,
Աչքերը գրըզիզի անեմ
Կռքնին մումա անեմ:

ՀԱԲԱ FAV: 5939, 01

183ը

Գիլ անեմ, գիլկապ անեմ,
Կռքներդ մոմա անեմ,
Ոտներդ խոզանի անեմ,
Աչքերդ կծորի անեմ:

ԱՀՋ, 359 / Գանձակ

183թ

Կյիր անեմ, կյիլկապ անեմ՝
Բերանդ փակ մնա,
Վըետներդ էլ կապած մնա,
Ըպրանքիս չդիպչես,
Աչկերդ քոռանա.
Կիր անեմ, կյիլկապ անեմ՝

Բերանդ փակ մնա,
Վրետներդ կռացած մնա,
Վրետներդ կապ մնա,
Աչքդ քոռ մնա,
Ըպրանքիս չդիպչես:
ՀԱԲԱ FFVII: 7595, 02 / Գանձակ

183ժ

Գել անեմ, գելկապ անեմ,
Վատ բերանդ ամուր կապեմ
Սուրբ Սարգսի ծիու մազով,
Աստվածածնա մաքուր կաթով.
Հանդը, հանդաստանը,
Կապվի գազանը,
Չուտե մեր մարդն ու հայվանը:
ՆԴ 1885, № 24 / Շիրակ
ՀԱԲԱ, FAV: 5971, 01, 02 / Շիրակ

184ա

Ութ մատով, երկու բոթով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Աստվածածնի քաղցրիկ կաթով՝
Կապվի գել գազանի բերան,
Չուտա դուս մնացող հայվան:
ՀԱԲԱ FAV: 3089, 02 / Ոշտունիք

184բ

Ութը մատով, երկու բույթով,
Աստվածամոր քաղցրիկ կաթով,
Սուրբ Սարգսին ծիույն ծարով,
366 հայրապետի աղոթքներով
Գայլին, գազանին բերան
Կալվին, կապ մնան:
ՍԳՀ, 376 / Քղի, Խարբերդ

184գ

Ութը մատով, երկու բթով,
Սուրբ Սարգսին ծիուն ծարով,
Տեր Մովսիսին գավազանով,
Սուրբ Գեորգա սուր գեղարդով,
Լուսավորչա լուս հավատով,
Աստվածածնա քաղցր կաթով
Կալեցեք, կապեցեք,
Աչքը դեմքին խավրեցուցեք,
Սուր ծանկերը բթացուցեք,
Ցերեկով աչք մթացուցեք:
Անվամբ Հիսուսի Քրիստոսի թափեսցի
Պատուհաս մեր ի վերա չար գազանին:
ՋԲ, 11 / Ջավախք

184դ

Ութեն, ութեն, երկու բթեն,
Աստվածամոր քաղցր կաթեն,
Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Տեր Մովսեսի գավազանով,
Լուսավորչա լուս հավատով՝
Կալեցեք, կապեցեք,
Լիզուն բերնին կպուցեք,
Սուր ծանկերը քոռցուցեք:
Անուն Հիսուս Քրիստոսի,
Չար գազանը պատուհասի:
ՀԱԲԱ FFI: 7523, 01 / Գյումրի

184ե

Ութ ութեն, երկու բթեն,
Աստվածամոր քաղցր կաթեն,
Սուրբ Սարգսի ծիու ծարեն
Կապե գելը, կապե գազանը,
Կապե գիճն ու գիճավորը,
Կապե օձն ու թրավորը,
Կապե մեջ գիշերվա ծովը.
Օր սիճոռը մտավ՝ բերանը գոցվի,
Սիճոռեն էլավ՝ բացվի:
ՋԲ, 10 / Ջավախք

185ա

- Գյալոզ, գյալմալոզ,
Ութ մատով, երկու բթով,
Աստվածածնա քաղցր գթով,
Սուրբ Սարգսա ծիուն ծարով՝
Կոլոշիմ գալուն գաբն,
Ալ չբացվի մալիս դեմ:
ԵԱ, 60 / Խոտրջուր

185բ

- Գե՛լ, գե՛լ,
Բերանդ ինչը՞ղ կապեմ.
Ութ մատով, երկու բթով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով,
Մայրամ Աստվածածնա կլխու ծամով:
ԱԳ IX, 115 / Շիրակ-Հոռոմ

185գ

- Ո՛վ գել գազան,
Քեզի ո՞վ կապեց:
- Սուրբ հայր Օսեփ:
- Քանի՞ մատով:
- Ութը մատով, երկու բթով,
Մայրամ Աստվածածնա ծիու ծծի կաթով:
ՀԱԲԱ FFII: 1692, 02 / Շիրակ-Լանջիկ

186

Կել կազար,
Աստվածազար,
Ադամութուն պղնձե.
Յոթն ութով,
Երկու քթով,
Էն աստուծո էն նիյեթին,
Սուրբ Սերգիսի ծին ծեռին
Կելի դիմաց,
Պերանը պաց,
Մեր կովերուն դեմը ելլող կելերուն
Պերանը կալած, կապած:

ԲԲ, 281 / Կեսարիա
ԲՍ, 648 / Կեսարիա

1 ԲԱ տեվ Կազար:
8 ԲԱ տեվին դիմաց:
10 ԲԱ մեր պըլուզին տեմն ելլող տեվերուն:

187ա

- Աստվածամա՛ր, արա՛,
Լուզուն բերանը բութ արա,
Ջեռքը, ոտքը գուլ արա,
Թաթը՝ էտևը, կրունկն՝ առջևը:

ԱՆՆ, 104 / Նոր Նախիջևան

187բ

- Աստվածամա՛ր, աի արա՛,
Անօրեն մարդուն մաի արա,
Լեզուն բերանը բուրդ արա,
Թաթը կրունկին տեղն արա:

ՀԺՀ VIII, 100 / Ղրիմ

188

- Ադա՛մ, Ադա՛մ, հա՛յր Ադամ,
Գուգար գելի պես,
Կայներ գառի պես.
Սուրբ Սարգսա ծիուն ծարովը,
Մայր Աստվածածնա քաղցր կաթովը,
Ութը մատով ու երկու բթովը՝
Կալիս ու կապ մնաս:

ՋԲ, 11 / Ջավախք

189

Գալը սարը կապեցի,
Սատանան անժաժ քարին կապեցի,
Քրիստոսին մխով մոմրոջը մխեցի:

ՋԲ, 11 / Ջավախք

190

Հավատամ հայր հոգու՝
Լուսաբերն է խաչելության,
Տեր ինչ անարատ հղության.
Հրեեքն էկան թափվեցան,
Ոտք ու ծեռքը բիբռյալ,
Խաչն է բիբռյալ,
Թաղն է բիբռյալ:
Ալալոց, գալալոց,
Գերեզմանից ելավ տերն Քրիստոս.
Մայրամ Աստվածածնա ծծի կաթով,
Սուրբ Սարգսի ծիու ծարով
Գայլն ու գազան կապիմ երկու բթով:

ՀԲՆ / Տաշիր-Շահնազար

3 Անարատ գողության, *ուղղ. ըստ իմաստի:*

191

Բոզ ծիավոր սուրբ Սարգիսը,
Ճերմակ մուրուս սուրբ Սիմասը
Մզրախ ձեռին էկան կայնան,
Աջերը դրին մալի վրան:
Չար գազանը ակռեն սրած,
Մնաց տեղը չորցած կայնած:
Մենծ սերոբեն քրով զարկեց,
Գիլու բերանը ճղեց-պատռեց.
Տեղնուտեղը ընկավ սատկավ,
Անասուններն ազատվեցավ:

ԷՄԺՍ, 186 / Շիրակ
ՀԱԲԱ FFI: 7523, 03 / Շիրակ / Գյումրի /

192

Մարգարեաց գավազանով,
Լուսավորչա հողաթափով,
Նահատակաց կարմիր արնով,
Կուսանաց մաքուր աղոթքով,
Ջինավոր սուրբ Գեորգա մզրախով,
Սուրբ Սարգսի կեծակե քրով,
Գաբրելական անուշ փողով
Չար գազանի բերանը պատռեմ,
Ոտ ու ծեռը ամուր կապեմ,
Սուր ակռեքը գետին թափեմ.
Աչքը քոռնա՝ ճամփեն չտեսնի,
Անգաճը խլնա՝ ծեն չըլսի,
Կեցած տեղը անժաժ նստի:
Հիսուս Տերս, աչքդ վրես,
Չար գազանի ճանկեն փրկես,
Ավուր փորձանքեն ազատես:

ԱՄՍ, 108 / Շիրակ

193

Որդի գալուստին
Հովիվ էր Քրիստոսին,
Նստեր օխտը ճամփին,
Կը լար, կ՛ողբար:
- Հե՞ր լաս, հե՞ր ողբաս,-
Հարցուց նորան Քրիստոս:
- Իմ Տեր, կըլամ, կ՛ողբամ՝
Կը վախեմ գելից, գազանից
Եվ ամենայն ջանավարից,
Որ շուռ կըգան մեջ գիշերին:
- Գնա՛ մտիր սուրբ Սիմեոնին,
Ա՛ռ երկթե ժնջիլ, պողպատե բալնիք,
Դիր գողն ի ոտին, գելն ի բերան
Եվ ամենայն ջանավարին,
Որ շուռ կը գան մեջ գիշերին:

ՀԺԴ VI, 147 / Վաղարշապատ

ԳԱՅԼԻ, ԳԱԶԱՆԻ, ԳՈՂԻ ԿԱՊՔԻ

194

Սուրբ Օվանեսը ուներ կապ պղնձե,
Կապեր գալ, կապեր գազան,
Կապեր ծին ծինավար,
Կապեր մարդ նենգավոր.
Կապերը կապած կենան,
Ամենայն չարի դիմաց կենան:

ՀԱԲԱ FFVI: 8196, 04 / Նոր Նախիջևան

195

Ըյնի լեռը,
Ըյնի ծովը,
Կապե գալը,
Կապե գազանը,
Ջին ջինավոր.
Օխտը խաթ ծովի տակը
Հալեցավ, մաշեցավ,
Բժշկվելով՝ բժշկվեցավ:

ՀԱԲԱ FFVI: 8196, 02 / Նոր Նախիջևան

3 գառը, ***ուղղ. ըստ իմաստի:***

196

Պասն ու աղօթքն Բարսեղին,
Նետն-աւեղն գինուորին.
Բարսեղ ըղըսղանտն
Մտաւ ի նեղ տապանն,
Կապեց օձն թիւնաւորն,
Գողն, գայլն գիշերն:
Քրիստոսի հրամանաւն,
Աստուածամօր քաղցր կաթնովն,
Սողոմոնի տախտակովն
Կապած կենայ,
Ոչ մերծենայ
Ծառայիս Աստուծոյ:

Մատենադարան, Ձմայիլ № 19

ԳԱՅԼԻ ԿԾԱԾԻ

197

Մանեմ, մանեմ,
Գիլի աչկերը խանեմ:

ՀԱԲԱ, FFII: 3351, 01 / Նոր Ջուղա-Սպահան

ԿԱՐԻճԻ

198

- Կարիճ, կարիճ,
Կապավորիչ,
Ագոռ, ագոռ,
Ագնի ծակին,
Աքեշ կտամ
Իմաճ, իմաճ.
Իրեստ ի՞նչ ա.
- Դեղին զըֆրան:
- Կալած էլնես,
Կապած էլնես՝
Օխտը մատով,
Օխտը բթով,
Տասներկու հայրապետով,
Քրիստոսա գերեզմընով,
Այ ջանավար,
Թի՛շ, թի՛շ թի՛շ:

ՀԱԲԱ, FFII: 3351, 02 / Նոր Ջուղա-Սպահան

199

Ալալիոս, գալալիոս,
Աղա Ստեփան, Ստեփանիոս,
Կալիլ իմ, կապիլ իմ՝
Ութը մատով, էրկու բթով,
Սուփ Սարքսի ծիու ծարով,
Աստուածածնի քաղցր կաթնով,
Ինչրու արեգակը դուս գա.
Չու՛շ, թու վիրի խար:

ԹՄԿ, 16 / Թիֆլիս
ՄՀ, 1874, №14 / Վայոց ծոր

2 ԹՄԿ Ստեփանոս, ***ուղղ. ըստ ՄՀ***
4 ՄՀ ***անցել է 7-րդ տողի փոխարեն:***
7 ՄՀ ***չիք:***
8 ՄՀ չու՛շ կարիճ, չու՛շ:
8 ***վրացերեն է՝ չու՛շ, թե էշ ես:***

ՕՋԻ ԵՎ ԿԱՐԻՃԻ

200ա

Կապիմ զօձը,
Կապիմ զկարիճը,
Անդնդային օձը,
Կըճավոր կարիճը՝
Ուքը մատովս,
Երկու բըդնըկովս,
Քրիստոսի ձիուն ձարովն,
Լուսավորչա աղոթքովն,
Մարիամ մոր արդար կաքնովն:
Առտոնց մանուկը գոտին կապե,
Ոչխարը դարն ելլա.
Մայր ճշմար, մայր ճշմար, մայր ճշմար:

ԱԱ, 1889, 57 / Կիլիկիա-Այնթապ
ՀԱԲԱ, FFI: 4023, 01 / Բուրսա-Չալդայա

1-2 ՀԱԲԱ կապեմ օձը, կարիչը:
3 ԱԱ անդադային, ***ուղղ. ըստ իմաստի և ըստ ՀԱԲԱ տարբերակի*****:**
8 ՀԱԲԱ Հիսուսի:
9 ՀԱԲԱ Նաևա Մարիամի:

200բ

Տունն իջավ տապանը,
Օձն ու կորը մեկտեղ եկան,
Լուսավորիչ վրա եկավ.
- Գասդռապա՛տ, ի՞նչ կու բանիս.
Քեզ կապիմ բթնուկ մատովս,
Մարիամ մորը քաղցր կաքնովը,
Սուրբ Սարգսա ձիուն ձարովը:
Վաղն առավոտուն
Արդար տղան քնեն ելնե,
Ոչխարը լեռն ելնե,
Կապիս ու կարկամիս:

ՀԱ, 168 / Սկն

201

Դանիելի եղեյք կապան,
Մտայք նեղ տապան.
Կապիցին չարն չաքիյն,
Կապիցին օձն ի ծակին,
Կապիցին կարիճ քունավորին,
Կապիցին գյող գիշերին,
Կապիցին գյող ցերեկին:
Ուք մատով, էրկու այոթով,
Սողոմոնի ձիու նալով,
Աստվածամոր ծընծի կաթով
Կալես, կապես,
Ապեկին թաս դնես,
Անատակ ծովեր թալես,
Մեր տուն ու տեղ չարից ազատես:
Չյորս պատերն պյուլորն էրկաք,
Սուրբը, գեյրան, դռներ պողպատ,
Քյրիստոս աստված, կայնես վեր
մեր տան տեղաց,
Էլնես օգնական, պախապան
մեր տղեյներաց:

ՎՍԱ, 77 / Վան

2 մտայնք, ***ուղղ. ըստ իմաստի:***

202

Սույբ սինը սըյտիս
Ավիտարոնը գըյկիս,
Խաչն ու խնծորն իրիսիս:
Ի՞նչ կու վախես, սեյտի՛ս,
Շեքեր դամիշն ի ձառիս.
Իջոյ հոյը,
Կապիցի կոյը,
Էձոնց ավերը,
Աստըծու մայ,
Քոյցդը գինի:

ԱԱ, 1889, 49 / Հաճն

ՕՋԻ

203

Կորի՛ր, անիծյալ,
Կապյալ լինիս Օհան Օձնեցու առաջին անմահ պատարագին:

ԱԳ X, 246 / Բորչալու

204

Լուսավորիչ պապան քովիկս է,
Շուրջառը վրաս ծածկոց է,
Գավազանը դրանս գոց է.
Պահե՛ ու պահպանե՛,
Կապե՛ ու կարկամե՛:

ՀԱ, 167 / Սկն

ԳՈՂԻ

205ա

Սուրբ Սարգիս մեր տունը օթե,
Թուրը դրանը գոց է,
Վալաճ երդիքը ծածկոց է,
Ով դուռը գա՝ կապի,
Ով երդիքն ելլե՝ կարկամի:

ՀԱ, 167 / Սկն

205բ

Մեր դուռը զնճըլած է,
Գավազանը դռանը կոց է,
Փիլոնն երդիք ծածկոց է.
Դուռն քալողը քար կըռռի,
Երդիք քալողը փուշ կըռռի:

ԳԱԹ, Ս. Քամալյանի ֆոնդ, III-15

205գ

Քրիստոս մեր դունն է,
Աթոռն Սողոմոնի է,
Բողոս, Բեդրոս տուռս է,
Սահագ, Ագոփ երթիկս է,
Փիլոնը երթիկիս ծածուգ է,
Խաչը, կավազանը տուռիս կոցն է.
Տուռըս էգողը քար գըդռի,
Երթիկիս եգողը ետ տառնա:

Փորքշեյան1971, 95 / Նոր Նախիջևան

205դ

Աս դունը դերունի է,
Դաջարը Սողոմոնի է,
Ծինը տուռը գաբ է,
Բողոս, Բեդրոս երթիգն է,
Փիլոնը երթիգին ծածուգն է,
Կավազանը տուռերուս կոցն է,
Խաչ, Ավեդարան կլուխներուս դագն է,
Անուն Հիսուսի Քրիստոսի:

Փորքշեյան1971, 95 / Նոր Նախիջևան

206

Երեք, երեք լուսիկ եկավ,
Երեքին հագածն է ճերմակ.
Մեկն է Հիսուս, մեկն է Քրիստոս.
Մեկը դուռը կը պահե,
Մեկը երդիքս կու պահե,
Մեկն ալ գալած չարիքս կու խափանե:

ՀԱ, 167 / Սկն

207

Սուրբ Գաբրիելի կրակե սրով,
Սուրբ Գրիգորի աղոթքներով,
Կիպրաննոսի անսուտ խոսքով,
Սուրբ Գեորգա անդի լարով
Որովայնը կալի, կապվի,
Սիրտը ուռի, փորը պայթի,
Մեզն ի փորին հանգուստ ընկնի,.
Միսն օսկոռեն ջոկվի, թափի,
Գողն իր բերնով խոստովանի,
Մինչ ի կորուստն հայտնվի:

ԷԱԺԱ, 187 / Շիրակ
ՀԱԲԱ, FFI: 7522, 04 / Գյումրի

ՉԱՐԻ, ՉԱՐԻՔԻ, ՉԱՐԿԱՄԻ

208

Ըսիճ քը՝ տեվ է,
Հայեցա նա՝ կառ է,
Կթիցի նա՝ կաթ է,
Խմեցի նա՝ քաղց է.
Ութ մատոք, երկու բթոք,
Մայամ մորը քաղցր կաթոք
Կապ կինա չարերուն պերանը,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԲԱ, 647 / Կեսարիա

5 բթոք, *ուղղ. ըստ իմաստի:*

209

Աստվածածին լեռներն ա,
Աստվածորդին գրկին ա,
Սաղմոսարան սրտին ա,
Իրեք բեվեռն ափին ա.
Մեկն՝ սիրտը սատանին,
Մեկն՝ բերանը գազանին,
Մեկն էլ տըժմին ու բըժմին,
Որ ժուռ կուգա գլխուս վրա:

ՍԺՀ, 341 / Քղի

210ա

Հոնե կագո մեր Հեղնին,
Թոգն ի գլուխը պիրիսմին,
Իսկի շրջոռը Քյիստիսո ուսին:
Չառն ունի էրկու բիպեռ.
Մեկը՝ սիյտը սատանին,
Մեկը՝ բիյոնը գազանին՝
Հովըխոսուն, մեջ գիշիրին:

ԱԱ, 49 / Հաճըն

210բ

Երեք բանն Յիսուսի,
Երեք բեւեռն Քրիստոսի.
Մեկն ի սիրտն սատանայի,
Ա[մեկն] ի բերանն գազանին,
[Մեկն ի] ձեռքն գողին,
Անպահ շուրջ գայ ի գիշերի:
Ով ի դուռս գայ՝ սարսի,
Ով ի յերդիքս գայ՝ կապուի,
Թաքն յետեւն եւ կրունկն ցյառջեւն:
Չիք դառնան ամէն չարքն ի դիմաց
ծառայիս Աստուծոյ...

Feldit 1986, 358

211ա

Ուսին, ուսին սուրբ Կուսին,
Երեք բևեռ Քրիստոսին.
Մեկն՝ ի սիրտ չար սատանին,
Մեկն՝ ի բերան գել գազանին,
Մեկն՝ օգնական յուր ծառային:
Ես գիշերիս, մեջ գիշերիս,
Չար, կալիս, կապվիս, կործանվիս:

ԱՄ, 256
ՍԺՀ, 319 / Մուշ
ԳԱԹ, Սրվանձտյանցի ֆոնդ, Ib, №1, IVբ № 18
ՀԺՀ VI, 143 / Վաղարշապատ

1 ՀԺՀ VI մայր կուսին:
2 ԳԱԹ, Ib, № 1, ՀԺՀ VI երեք պիպեր:
ԳԱԹ, IVբ, № 18, Տախտակ փակեր Մոսեսին:
3 ԳԱԹ, Ib, № 1, ՀԺՀ VI չար *չիք:*
ԳԱԹ, IVբ, № 18, Իրեք բևեռ կեր Քրիստոսին:
4 ԳԱԹ, IVբ, № 18, Մեկ բերան գել գազանին:
5 ՀԺՀ VI Մեկն էլ ի սիրտ չարին:
ԳԱԹ, Ib, № 1, IVբ, № 18 *չիք:*
ԳԱԹ, Ib, № 1, Մեջ գիշերին, կես գիշերին:
6 ԳԱԹ, IVբ, № 1, Մեկն էլ կաւ գեր կես գիշերին:
ՀԺՀ VI Որ չ'օլորտի մեջ գիշերին:
7 ԳԱԹ, IVբ, № 18, Որ չվախեր սիրտը փորին:

211բ

.Յուսին, .յուսին սուրբ Կուսին,
Ելանք գացինք դուռ Մուսեսին,
Երեք բևեռ Քրիստոսին.
Մեկն՝ ի բերան գել գազանին,
Մեկն՝ ի բերան չար աչքին,
Չար լեզվին, չար նիաթին, չար սահաթին,
Մեկն էլ ի՞նչ, կես քշերի, մեջ գիշերի
Դալան տոլաջմիշ կանի:
Թևը թևին թուլ անես,
Աչքն երեսին կուր անես,
Լեզուն բերնին օղ անես,
Ոտը ոտին կոնտ անես:

ԳԱԹ, Կ.Կոստանյանի ֆոնդ, № 129 / Աշտարակ-Ղզլբամուր /Ոսկեվազ/

211գ

Ուսին, ուսին սուրբ Կուսին,
Գնացինք հասանք Քրիստոսին՝
Վերնաժամ պատարագին ի մեջ դաշտին:
Պղծավորներ երևացին,
Պեղծ թշնամիք երևացին,
Ոտվին գետին պիպռեցին,
Գլուխ էրկինք պատրուսեցին,
Սիրտը փորը սուս էրին,
Աչքը էրեսին կուր էրին.
Կալած մնա, կապած մնա
Մինչ ի գալուստ Քրիստոսին:

ԷԱԺԶ, 19 / Կարս

212

Ուսին, ուսին սուրբ Կուսին,
Փողե կոճակ Հարութենին,
Հոռոմսիմեն հարսնեցուցին:
- Մայրա՛մ, քու՞ն ես, թե զարթուն:
- Ոչ ի քուն, ոչ ի յարթուն:
Իմ Տեր եկավ ամպու խաչաց,
Եկավ նստավ յաթոռ գալոց,
Չեն էտու աշակերտաց.
- Գնա՛, գնա՛, պիղծ թշնամի,
Բան ես գործե անօրինաց:

ՋԲ, 18 / Ջավախք

213

Իրեք պիպեր մի ափիս.
Մեկը՝ սիրտը սատընին,
Մեկը՝ բերան գազանին,
Չըգա պահե եփն ի կողին:
- Լուսի՛կ, դուն քու՞ն ես, քը արթուն:
- Ու չէ քուն եմ, ու չէ արթուն.
Քրիստոս իջավ հայրենիք,
Կըյրեց երեք թուփ վարդենիք,
Խըրկեց սրբոց առաքելոց:
Մեկը՝ Հիսուս, մեկը՝ Քրիստոս,
Մեկը՝ Օհան Ոսկիբերան.
Մեկը՝ դուռս կը պահե,

Մեկը՝ երդիքս,
Մեկն ալ հոգուս պահապան:
Ով որ այս աղոթքը օրն երեք անգամ հիշե՝
Աստված իրեն մեղքը չը հիշե:
ԱԱ, 36 / Կիլիկիա-Այնթապ
ՀԱԲԱ, FFI: 4019, 01 / Բուրսա-Չալդայա

4 ՀԱԲԱ դու պահե:
8 ՀԱԲԱ երեք *չիք*
14 ՀԱԲԱ *չիք:*

214

Հիսուս Քրիստոս, սուրբ ծերունի
Վերնատուն իմ, պատարագիմ՝
Ան թշնամին տուռը առավ:
Կույս Մարիամ ծանը լսից,
Վազից, չվանը ոտքը ցըքից,
Անօրինաց մահ հանից,
Սիրտը փորը փորցանից,
Աչքն էրեսը կուր անիս.
Փենճերեն էկողը փատ կտռի,
Տուռն էկողը քար կտրի:
ՀԱԲԱ, FBI: 1818, 03 / Դրիմ-Սիմֆերոպոլ
ՀԱԲԱ, FFIII: 1983, 04 / Նոր Նախիջևան
Փորքշեյան 1971, 95 / Նոր Նախիջևան

1 ՀԱԲԱ, FFIII, Փորքշեյան1971 ծերոնի:
3 ՀԱԲԱ, FFIII, Փորքշեյան1971 դունը:
9 ՀԱԲԱ, FFIII, Փորքշեյան1971
Փենջերեյին էգողը-քար գդռի:
10 ՀԱԲԱ, FFIII, Փորքշեյան1971 *չիք:*

215

Ալալոս, սըփ Թալալոս,
Իրեք ախպեր էճան լոս,
Գյացին գյետ Հեորտանես,
Խրեղեն թուր քյաշեցին,
Անիծածին զարկեցին:
Անիծած հերտըվցավ՝
Մատնիկ Սողոմոնին,
Կոճնակ Հարութինին,
Գյավազան Մուսեսին,
Որ չըմերծենա Աստծու ստեղծածին:
ՀԱԲԱ, FAV: 3091, 01 / Ոշտունիք

216

Էվան կբբեց, Մարիամ մակրդեց,
Քրիստոս էկավ խաչակնքեց,
Կաքն էղավ մակարդ, մակարդ լե կաք:
Էվան շաղեց, Ադամ կողեց,
Հայր Աբրահամ կերակրեց,
Չար կերավ, չար տարավ,
Չարի մեկ լե տեղե մնաց,
Հայր Աբրահամա պարագան մեջե մնաց:
Խաչակնքեմ, չարս հալածեմ,
Սուրբ խաչ, պայծառ խաչ,
Դուն իմ մտքիս աչքե բաց:
ԲԱ, 471 / Դիարբեքիր

217

Հավատով խոստովանեմ՝
Յոր գլուխ Ավետարան,
Կանգնած հացի խեր-խրիշտակ,
Մայր կուս, մայր Աստվածածին.
Դու չարկամներաց կալես, կապես,
Խալես, խափանես,
Կրակ կազաբից, արուն խղեղից
Ազատ անես,
Յա՛ չարխափան Սուրբ նշան:
ՀԲՆ / Վասպուրական

218

Էգեցի, էգմանեցի,
Ջուխտակ մոմեր կպուցի,
Երուսաղեմ ուխտ գնացի,
Լուս գերեզման համբուրեցի:
Բուռ'մ ջուր ավազանեն,
Թել'մ ապրեշում սուրբ սեղանեն.
Կալած կենաս, կապած կենաս,
Օխտը պորտես հեռու կենաս:
ՀԺՀ VI, 144 / Վաղարշապատ

ՉԱՐԿԱՄԻ ԵՒ ՉԱՐԱԽՈՍԻ

1(219)

Եկին ասացին, թէ քո չարկամքն գայլ էր նա:
Գնացի տեսա, որ գառն էր, զերդ կով էր:
Կալա զերդ զմաքի,
Բռնեցի զերդ զեզն,
Լծեցի քան զգումեզ,
Կապն դրի զերդ զէշ, հեծա
Եւ դարձեալ զերդ զոչխար արարի
Եւ կթեցի նա.
Քաղցր էր կաթն էր,
Երբ կերա նայ՝ քաղցր էր:
Քան զեզն լծեր եմ,
Զերդ զգումէշն կապեր եմ,
Քան զէշն իմ չարկամն հեծեր եմ:
Սև շուն ի շուկան
Եւ սպիտակն ի մէխած անկան
Եւ յիրար կառնի[ն] և կռուին:
Գէր սև աւձն ու բաժնէր և կտրէր:
Այնպես բաժանէր և կտրէր չարկամին,
չարխօսին սիրտնին,
Բաժանէր աչքն յէրեսէն,
Յանուն հօր և որդոյ և հոգոյն սրբոյ:
Եւ դարձեալ կապեցի չար խօսողին,
Բերան կողպաք դրի,
Ոչ բացուի և հալի,
Այլ կապին դէմ առաջին Աստուծոյ:

Գյումրիի Հմայիլ, № 3

17 կարէր, *ուղղ. ըստ իմաստի, հմմտ. 18-րդ տողի հետ:*

2(220)ա

Ի տանէն ես էդպրս ելայ՝
Իմ չարկամն տեսայ, ասէ.
- Լուսին եմ ձեր թևին,
Արեգակն բարկ եմ ձեր երեսին,
Աւետրան եմ ձեր գրկին,
Քահանա եմ ձեր մըտին,
Վարթ եմ ձեր գլխին,
Ըռիք ունեմ ձեր մէջքին,
Գօտին միսք եմ ձեր ջէպին,
Շաքար եմ ձեր բերանին,
Մատանի եմ ձեր մատին:
- Քան ըզգայլ տեսայ զձեզ,
Քան զգառ զենեցի.
Քանձ ասլան տեսայ,
Քանձ մաքի կթեցի.
Քանձ զառջ տեսայ,
Քան զկով կթեցի.
Քան զօձ տեսայ,
Քան զձուկ բռնեցի.
Քան զվիշապ տեսայ,
Քան զկով կթեցի:
Զարկի երես չար բռնաւորին,
չարկամին
ՀԲ [72] ազգի լեզուով,
Որ կուրացան և ոչ տեսին զլոյս
Եւ ոչ զծառայս Աստուծոյ [ասուն]:

Գյումրիի Հմայիլ, № 1

3 թիւն, *ուղղ. ըստ իմաստի:*
3-4 լուսին, արեգակն *դրված էին գաղափարագրով:*

2(220)բ

Քան զլուսին եմ քո թևիդ,
Քան զբարկ արեգակ եմ երեսիդ,
Քաֆըր վարդ եմ ի քթիդ,
Վարդապետ եմ ի մտիդ[34]:
Սրան հաջորդում են աղոթքի
հետագա տողերը:
Թէ գայլ ես՝ նայ գառ եղես,
Թէ առիւծ ես՝ նայ մաքի ես,
Թէ օձ ես՝ նայ կով ես.
Զերդ գառն տեսայ քեզ,
Զերդ մաքի բռնեցի,
Զերդ կով կթեցի զքեզ:
Ի սուրբ կուսանքն խապար տարան,
Իւր մուրազն զարկի:
Չունիք իշխանութիւն
Ոչ հպարտանաք, ոչ մեծանաք
Եւ ոչ բարձրանաք
Ի դիմաց ծառային Աստուծոյ *[ասուն]:*

Մատենադարան, Հմայիլ № 34

---

[33] Սույն հավելվածում են զետեղվում միջնադարյան հմայիլներից ու ձեռագրերից քաղված չարկամի և չարախոսի կապքի և տարբեր չարիքներից ու վտանգներից պահպանվելու հմայական աղոթքների մի քանի ընտիր նմուշներ, որոնց մեծ մասը հագեցված է ժողովրդական բառ ու բանի տարրերով, ըստ երևույթին, սերում է բանավոր ավանդությունից և ամբողջական պատկերացում է տալիս հմայական կապքի աղոթքների առավել վաղ ձևերի մասին:

[34] Այս քառատողին անմիջապես հաջորդում է հետևյալ ծանուցումը. «Զայս Գ[3] հետ ասայ և հանգստացուր և գնայ առ պարոնն անվախ: Երբ ի մօտն մտանես՝ զայս ասայ»:

Գ. ՏԱՐԲԵՐ ՉԱՐԻՔՆԵՐԻՑ ՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՎԵԼՈՒ
(№№ 3(221)-10(228))

3(221)ա

Ուրուճասմեր, Մարմարասմեր,
Հաղադիյիս, Քուրամ,
Որ սարն էք կամ որ ծոր էք,
Դուք հասուցէք ծառայիս Աստուծոյ
Եւ ազատեցէք գողէ, հարամէ,
Ի սրէ, ի թրէ, ի խանչարէ,
Ի մզրախէ, ի թւանկէ
Եւ յամեայն պատուհասէ, ամէն:

Մատենադարան, Ձմայիլ№ 19

3(221)բ

Յիշայ զՈվայել հրեշտակապետն,
Սուրիէլի, Ուզիէլ, Զիքայէլ, Ըռափայէլ,
Դաքայէլ, Սուքայէլ, Սիզացաէլ,
Դուք ազատեցէք գծառայիս Աստուծոյ
Ի սարէ, ի ծորէ,
Ի քարէ, ի քոլէ,
Ի կարկտէ, ի կածակէ,
Ի հեղէ, [որ] հանի հուն գետոյ,
Ի մահէ, ի մահտարաժամէ,
Ի գայլէ, ի գազանէ,
Ի գողէ, ի հարամէ,
Ի կատաղած շանէ,
Ի սրէ, ի թրէ
Ի նետէ, ի նիզակէ,
Ի խանջալէ, ի տանակէ,
Ի թուպէ, ի թվանքէ
Եւ ամենայն ինչ ցեղ սուր կայ՝
Կապի և փայտ [ղ]առնայ,
Ջեռն և զոտքն թուլանայ,
Խելքն ու միտքն կապի,
Որ ոչ կարէ զարկել զմարդն ծառայիս
Աստուծոյ *[անուն]:*

Մատենադարան, ձեռագիր № 6678, 43

5 ի ցորէ:
14 ի նեզակէ:
19 թուլայնայ:

3(221)գ

Գաբրիէլ և Միքայէլ, Ռափայէլ,
Անանիէլ, Ուրիէլ, Դակուէլ,
Ադոնիէլ, Բարաքիէլ, Փանուէլ,
Տածիէլ, Սուքաէլ, Սաղաքէլ,
Սարաքմիէլ, Սարայիէլ,
Ո՛վ սուրբ հրեշտակ[ք] Աստուծոյ
Եւ հրեշտակապետք Աստուծոյ,
Դուք օգնեցէք և փրկեցէք
Եւ ազատեցէք յամենայն
փորձանացն զծառայն՝ *[անուն]*
Ի յանկարծ զարկուց,
Ի սրէ և ի թրէ,
Ի խանջալէ, ի դանակէ,
Ի նետէ, ի նիզակէ,
Ի պարսետէ և ի քարէ,
Ի կատղած շանէ,
Ի գայլէ, ի գազանէ,
Ի գետէ հարուցելոյ,
Ի մահէ, ի մահտարաժամէ,
Ի խոցող հրեշտակէ,
Ի հրոյ, ի յօդոյ,
Ի ջրոյ, ի հողոյ,
Ի զարհուրանաց գիշերոյ,
Ի կայծակէ, ի յորոտմանէ,
Ի շարժմանէ, ի ցասմանէ,
Ի թշնամեաց, ի չարկամաց,
Ի չար լեզուէ,
Ի չար յաչից, ի չար նազարէ,
Ի չար մարդոց,
Ի դիւէ, ի սատանայէ,
Ի Բելիարայ,
Ի քաջքէ, ի յաւերժահարսէ,
Ի Լեգեհոնէ, ի Բեհեղզաբուղէ,
Ի չար այսոց,
Ի թպղէ, ի յալէ,
Ի չար սիաքէ:
Եւ ի յետս ածէ ի յիրէ չարէ,
Ի յաւուր չարէ,
Կանանց չարէ,
Ի պոռնկութենէ, ի փորձանաց
Երևելեաց և յաներևութից
Զծառայն Աստուծոյ *[անուն]:*

Մատենադարան, Ձմայիլ№ 34
Մատենադարան, ձեռագիր № 6678, 38

Ջեռագիր № 6678
1. Դակուէլ:
2. Փանուէլ, Տածիէլ, Սուքիէլ:
3. Սաղաքիէլ, Սարագմիէլ, Սարայիէլ, Ըռափայէլ:
4-7 չիք:
8-9 Դուք պահապան լերուք զծառայս Աստուծոյ:
10 ի յանկարծակ:
12 ի նիզակէ:
13 ի տանակէ, ի քարէ, ի մզրաղէ:
14 *չիք:*

16 ի գայլէ *չիք:*
17 յարուցմանէ:
18 տարաժամէ:
20 ի ջրոյ:
21 ի հողոյ *չիք:*
21 ի դևաց, այսոց չարեաց:
27, 29 *չիք:*
30 ի սատանայէ, ի Բելիարէ:
31 ի քաջէ:
32 ի Բեղեղաբօռէ:
33 ի չար այսոց տեղէ:
34 ի ալքէ և յետսած յիրէ:
35-38 *չիք:*
39 չարէ, փորձութենէ:
40 *չիք*:
41 Պահեա և փրկեայ զծառայս Աստուծոյ:

4(222)

Փրկեա, Տէ՛ր, զծառայս քո
Ի դիւաց, ի կախարդաց,
Ի յաղանդաւորաց, ի չարկամաց,
Ի չար աչից, ի չար լեզու[է],
Ի սուտ խօսից.
Ի գետէ յարուցելոյ,
Ի գազանաց կատաղելոյ,
Ի ժանեաց չար վիշապէ,
Ի յիժէ, ի քարբ աւծէ,
Ի կորէ, ի գայլէ,
Ի ջորեկէ, ի յառեծուց ժանեաց.
Ի գողէ, ի հարամկաց սըրէ,
Ի հարբած մարդոյ,
Ի կընկած չարէ,
Ի հով ու ջերմէ.
Ի սարսափելոյ, ի ցըրտանալոյ,
Ի գլխացաւէ, ի բերանացաւէ,
Ի յաչաց ցաւէ,
Ի փողացաւէ, ի յակռացաւէ.
Ի խոցոյ ելանելոյ,
Ի յելունէ, ի գնայունէ,
Ի սընկանէ, ի շուղաղէ,
Ի յարեաբեր ցաւէ,
Ի մեղմու քամէ, ի տկարութենէ.
Ի բարձր տեղաց փա[թե]րակելոյ,
Ի կատղած շանէ
Եւ այլ ազգի-ազգի ցաւէ և ի պատուհասէ.
Ի յաւագաց և ի բռնաւորաց
Եւ յամենայն պատահարաց:
Պահեա ամբողջ և անարատ
Եւ անսասան հոգւով և մարմնով,
Կեալ աստուածային աջով քո հովանի
ի վերայ սորին,
Սընոյ և ածի ի չափ հասակի.
Արա զսա որպէս ծառ պտղաբեր
Ի տան տեառն Աստուծոյ,
Տուր սոցա զաւակ,
Աւրհնութիւն և քեզ փառք
յաւիտեանս. ամէն:
Մատենադարան, Ձմայիլ№ 1

ՉԱՐ ԼԵՋՎԱԿԱՊԻ

5(223)

Արայխուլ, Մարախուլ, Ատպա, Կիրակի,
Դմիլամ, Իլլահ, Սեբիոս,
Սօվզան, Զօրիոս, Աբապէլն,
Ո՞վ սուրբ հրեշտակք Աստուծոյ,
Դուք քարէ հիմն արկէք
Ի վերայ հայի և տաճ[կ]ի,
Հաքեմի և բռնաւորի,
Դատաւորի և նայիպի,
Չարկամաց և չարախօսաց,
ՀԲ [72] միլաթի չար լեզուացն
Եւ պապանձեցուցէք,
Լալ և էշ դարձուցէք
Յառջևն ծառային Աստուծոյ,
Որոյ վերայ գիրս լինի *[անուն]* Աստուծով:
Մատենադարան, Ձմայիլ№ 34

6(224)

Յայն ժամ բացաւ երկինքն
Եւ ԿՌ [60000] հրեշտակք յերկիր իջին
Եւ աթոռ դրի վաթսուն Ռ [1000] զանջիլ:
Բերին զանջիլ, բերին զանջըլեցին
Եւ փակեցին վաթսուն հազար չարկամաց
Եւ չարախօսաց ՀԲ [72] միլաթին՝
Հայորդին և տաճիկին,
Բռնաւորին և դատաւորին,
Դուրին և դրկեցին,
Մեծին և փոքրին,
Մարդուն և զկնկանն,
Ազգաց և ազանց,
Որ էշ և լալ,
Խուլ և մունջ լինին
Յառջեւն ծառային Աստուծոյ *[անուն]:*
Մատենադարան, Ձմայիլ№34
7 հայոյտին *ուղղ. ըստ իմաստի:*

7(225)

Ալտում ալթուն մուշրուպայի,
Ենդում ալթուն փունդարինայ,
Ալտում ալթուն սուինտան,

Ալումի վա յուզում ուլտում *[անուն]*[35]:
Գնաց ի դիմաց ՅԲ [72] ազգ և միլաթ՝
Ի հայու և տաճիկի,
Փաշի և քեհի,
Պարնի և աղի,
Դատաւորի և բռնաւորի,
Մեծի և փոքրի,
Դրկեցի և օտարի
Եւ ամենայն ազգի *[անուն]:*
Քաղաքի գլուխ թագաւոր՝
Ճակատն՝ արեգակն,
Ունքն՝ կանբեղ,
Աչքերըն՝ սիրատես,
Բերանն՝ ղազի,
Լեզուն՝ Մօսուլ,
Ի դիմաց հայու և տաճիկի,
Մեծի և փոքրի,
Դատաւորի և բռնաւորի,
Դրկեցի և օտարի *[անուն]:*
Յուրայ երեսներն,
Թուրայ ի վզերն,
Կռանայ ի գլխըննեըն,
Լախթայ ի բիկներն,
Լուսայ ի յաչքերն,
Քաֆուր վարդ այ ի քթերն,
Շաքար այ ի բերներն,
Կօղպես այ ի պռկննեըն:
Ո՞վ ազգ և ազինք
Եւ հայ ու տաճիկ,
Աղայ և ամիրայ,
Չարկամ և չարախօս,
Էշ եք և էշ կացէք,
Չօ՛շ, չօ՛շ, չօ՛շ,
Լալ եք և լալ կացէք՝
Որպէս քարն անխօս
Եւ որպէս գետինն անմռունչ լինիք:
Յորոյ վերայ որ այս գիրս լինի *[անուն],*
Ամենեցուն բերներն բուրդ լինի,
Աչերն կուր լինի,
Անձներն մեռել լինի,
Որ ոչ կարենան չար խօսել
Եւ չար ասել
Եւ չար ակնել
Ծառայիս Աստուծոյ *[անուն]:*

Մատենադարան, Ձմայիլ № 34

14 Ճակատն, ***ուղղ. ըստ իմաստի:***

8(226)

ՉԱՐ ԼԵԶՎԻ ԵՒ ՉԱՐ ԱՉՔԻ ԿԱՊՔԻ

Կայր Մեծն Մովսէս յեզր Կարմիր ծովուն:
Եւ արտասուաց Մովսէս ի դառն արտասուս:
Եւ կաթեաց արտասուքն Մովսէսի ի յաթոռն աստուածութեան:
Եւ լուաւ Աստուած Մովսէսի ծառային իւրոյ:
Եւ ընկղմեաց զփարաւոնն զօրօքն իւրովքն [ի ծով] Կարմիր:
Նոյն ողորմութեամբն Աստուծոյ
Եւ աղօթիւքն Մովսէսի
Ընկղմին, կալին և կապվին
Ամենայն չար լեզուքն ամենայն միլաթին և ազգին.
Հայու և տաճիկին,
Փաշի և քեհի,
Պարնի և աղի,
Ղազու և մուֆթու,
Դատաւորի և բռնաւորի,
Սուպաշու և նայիպի,
Շահնու և նազրի,
Մէլիքի և ըռէսի,
Խանբի և պճեղի,
Մեծատան և աղքատի,
Դուրի և դրկեցի,
Օտրի և բնկի,
Հեռաւորի և մերձաւորի,
Մեծի և փոքրի,
Հաւատացելոյ և անհաւատի,
Արամու և աճամու,
Քրտու և թաբարի,
Հօռոմի և ֆռանկի,
Մարդու և կնկաց,
Որձու և իգու
Եւ ամենայն միլաթի:
Կապեա՛յ, Քրիստոս աստուած,
Չչար աչքն՝ ի չար այտին,
Չչար լեզուն՝ ի չար բերանին,
Չչար սիրտն՝ ի չար փորին,
Չչար խորհուրդն՝ ի չար փորին,
Չչար երակը՝ ի չար աճծին,
Չչար ոտքն՝ ի չար կօշիկին,
Չձեռքն՝ ի չար բզեզնիկին,
ՅԿԵ [365] զօդվածքն,
Ե [5] զգացեարանքն,
Չ [6] շարժմունքն,
Աչքերու լուսն,
Բերներու խօսքն,

---

35 Թուրքերեն քառատողի բարգմանությունն է.
Վերցրեցի ոսկե գավաթը,
Իջա ոսկե աղբյուրը,
Վերցրեցի ոսկե ջրից՝
Չեռքս ու երեսս լվացի:

Սրտերու խորհուրդքն,
Ոտներու քայլքն,
Ձեռներու շօշափն,
Գլխըներու խելքն
Եւ զամենայն զօրութիւնն նոցա:
Կապեա՛յ, Քրիստոս աստուած,
Երկաթի կապօք,
Պղնձեա սանձերօքն,
Հրեղէն բեւեռօքն,
Ընդ անշարժ վիմօք,
Անլուծանելի կապանօքն,
Որոց ոչ ունին իշխանութիւն
Չարխօսել և չար ասել և չարակնել
Ծառային Աստուծոյ այս անուն Յարութենին,
Որոց վերա գիրս լինի.
Յարութեան և իւրեանց տանն
Եւ որդոցն և մալին և ապրանացն,
Եզան և կովուն,
Ձիուն և ջորուն,
Գառուն և մաքուն,
Այծուն և ուլուն,
Գոմըշուն և ծագուն,
Իշուն և քուռկուն,
Վարին և ցանքին,
Արտին և ափին,
Կալին և կտին,
Լծանին և կթանին,
Թանին և թացնին,
Եղին և մեղրին,
Շանն և կատուին,
Խաւուն և ճվին
Եւ յամենայն ըստացուածին, ամէն:
Ոչ ափն մէջն մազ
Եւ ոչ ծովուն խուփ
Եւ ոչ երկնուց սուն,
Ոչ գետնին գերանն
Եւ ոչ այս կապիս արձակումն,
Ոչ այս գրիս բաղլումն եղիցի
Ի դիմաց ծառային Աստուծոյ Յարութիւնին:
Մատենադարան, Ձմայիլ№ 34

9(227)

Այս այն գիրն է,
Որ Յեսու որդին զարեգակն կապեաց
Եւ զթշնամին հաղթեաց
Եւ զծօւն պատառեաց.
Նոյնպէս կապի և կարկի բանիւն Աստուծոյ
Ամենայն չար լեզուքն և չար աչքն,
Չար թշնամիքն, չար անօրէնքն
Ի դիմաց ծառային Աստուծոյ *[անուն]:*
... Դարձեալ կապէմ բարեխօսութեամբ
Սուրբ Աստուածածնին և սուրբ առաքելոցն
Չարկամաց աչքն երեսօք
Եւ չար լեզուն ի բերան
Եւ չար ձեռն ընդ բազկան
Եւ զոտքնըն բանալօքն.
Կապեմ ՀԲ [72] ասքի աչքն և լեզուն՝
Ը [8] մատամբ և Բ [2] բթամբ,
Աստուածամօրն քաղցր կաթամբն
Եւ Քրիստոսի աւետարանաւն
Եւ Քրիստոսի աւանակի ծարօւն,
Վարսաւոր հրեշտակի հերօւն,
Սուրբ Գէւորգա ձիու ծարօւն,
Սուրբ Սարգսի ձիու ծարօւն.
Կապէմ ՀԲ [72] ասքի աչքն և լեզուն՝
Դ [4] գլուխ աւետար[ան]ու,
Ը [8] կանոն սաղմոսու,
ԻԴ [24] մարգարէիւ և
երկոտասան առաքելովքն,
Թ [9] դաս հրեշտակօւք
Եւ Դ [4] կողմ աշխարհի սրբօւքն.
Եւ սուրբ խաչին Քրիստոսի
Կապէմ զամենայն չար մարդո
զաչքն և զլեզուն՝
Ղադու և սուպաշու,
Հայու և տաճկի,
ՀԲ [72] միլաթի չար լեզուն:
Կապին և կարկին ի դիմաց
ծառային Աստուծոյ *[անուն]*,
Ամենեքեան զբարին խօսին, եղիցի, ամէն:
Մատենադարան, Ձմայիլ№ 10

ՉԱՐ ՀՄԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՊՔԻ
10(228)

Տէ՛ր Աստուած,
Որ ժամ զարքայութիւն քո արարեր
Եւ շինեցեր զդրախտն եդեմ ընդ յարևելս
Եւ հրամայեցեր Դ [4] վտակ գետոցն
Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատ,
Եւ որ ոչ կարասցեն կալ հակառակ
հրամանաց քոց,
Տէ՛ր, նոյնպէս և մի՛ կարասցեն
կալ հակառակ ծառային Աստուծոյ:
Տէ՛ր Աստուած,
Մի՛ չարակն, մի՛ չար լեզուն,
Մի՛ չար նիաթն,
Մի՛ չար զգայարանքն,
Մի՛ չար միտքն,
Մի՛ տեղատուք,
Մի՛ հանգուցակապք,
Մի՛ ծրարաւորք,
Մի՛ խափուսիկք
Եւ մի՛ այլ ինչ,
Որ սատանական որոգայթք և գործք,

Զոր սատանական գործովք
առնին ազգի-ազգի:
Նստեալ սուրբ կուսանք
դրախտն ԻԼԽ [20, 30, 40],
Առեալ զցօղն կաճեփի
Եւ կապեաց ԳՃԿԵ [365] լեզուն
հրէից և զՊեղատոսին:
Աստուծոյ կարող զօրութեամբն
Կապեալ եմ զամենայն կապք և
զկախարդութիւնք:
Չչար ակն և զչար լեզուն,
Կապած լինին դիմաց ծառայիս Աստուծոյ:

Գյումրիի Ձմայիլ № 4

18 որկայքք ***ուղղ. ըստ ծևի:***
20 կուսնք ***ուղղ. ըստ ծևի:***

V

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ
(№№ 229-253)

ՄՇԱԿԻ

229

Աստված օղորմի փիրին, փիշաքարին,
Խեր Աբրախամին, Դավիթ մարգարին,
Հալաջ Մասուրին, Հունան մարգարին,
Անհիշատակ պառվուն,
Ինչ յոթ դիր չոքներով յերուսաղեմ գնաց,
Ուր մեղաց բողութեն չուզեց.
Մշակի միջաց խանգստութեն ուզեց:

ՀԱԲԱ, FAV: 3081, 03 / Ոշտունիք

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ

230

Օրշնյալ Տեր մեր Հիսուս Քրիստոս,
Հայր մեր, որ յերկինս ես...
Իդա մեկ բուռ՝ երուևաց թռչունաց ղսմաք,
Իդա մեկ լե՝ անճար աղքըտի,
ղոնաղի ղսմաք,
Իդա լե՝ իմ ճժկներու ղսմաք:
Դու ամոթով չէնիս, Աստված,
Դու իմ տուն ու դուռ շեն պահիս,
Հայր Աբրամու օրշնիթք թափիս ես արտին,
Կանչըցու, ո՛վ Աստված, բարով,
խերով քաղինք,
Դուշման վըր մզի չի ծիծղըցուս, Աստված:

ԷԱԺՋ, 398 / Ալաշկերտ

ԴԱՇՏԱՄԿՆԵՐԻ ԴԵՄ

231

Յա՜ չորեքկողման պետ ու մանր սրբեր,
Ջիմ ծեռք ծըր փեշն իմ թալի,
Ջիմ ճժեր՝ ծըր յոտք.
Դուք իմտատ ու բարեխոս էղնիք է՞ն
Կոլի առաջ
Եվ ազատիք ես անիծուկներուց
Ջիմ ճժերու ու քուլֆըքթի սաղ
տարու զախիրեն:
Դուք դեղ՝ ես մըհանա.
Հիսուս Քրիստոս անուն աստծուն
հավիտենից հավիտյան, ամեն:

Ա, 1895, № 118 / Մուշ

ԲԱՆԹՈՂԻ /աշխատանքի ավարտի/

232

Օյռնալ ես Ասֆած */կրկնել երեք անգամ/*,
Փառգյ քեզ, Ասֆած,
Օր ֆեխիր-ֆուխարային ռըսխը կը
ճամբես անկումաճ տեղերե:
Ասֆած պին-պին պերեքեդ տա,
Ըսօր և առանձ բանի չի թողիր,
Ըսօր և խըսմեդներս հասուծիր:
Ինսեխյ ինձի հասար ու
օղորմուդանդ դուռը բացիր,
Ըմմպես և օղորմիր էլեմ տունյեյին.
Մեզի տայմա կապրծընես, Ասֆած,
Ֆեխետ նեչե-նեչե զավալիներ,
Վեվ գիտը չիեայծան ըսօր սըֆտա մի էնել:
Ընոնց հասիր, ընոնց չարա մի երը,
Ընոնց սատախան ճամբը:
Տիրուկ, Տիրուկ, փառգյ քիզի,
Եօր միզի պեքետեր պեյեծիր
Ու իրկվա կոշընըկի ծենն և լսելու
լայեխյ էրիր:
«Սուրբ Ասֆած, սուրբ և ըզոր,
սուրբ և ամմա, օղորմի մեզ»:

«Բազմավէպ», 1902, № 9-10, 481 / Բալու

ՀԱՑԻ ԽՄՈՐԻ

233

Պահապան խաչ հրեշտակ,
Խաց-խըմորի պահապան,
Թըթխըմորի պահապան,
Հիսուս Քրիստոս յոթ նկանակ,
Շնոխքդ՝ ի խաց-խմորաց,
Ուրախ սիրտ, ցամաք աչկով,
Ասկ ու ցեղ պարեկամով,
Խարսն-ախչկով, քուլֆըքթով,
Պարի վայելում էլնի.
Լոսն ի պարին հաճողվի,
Մութն ի չարին խափանվի,
Տուշմընախընտաց չեղնենք,
Աչկ ուրիշի ծեռ չելնենք,
Աստըծու շիբ ը շնոխկ
Վեր տան ու տեղաց ըլնի:

ՀԱԲԱ, FFI: 4099, 01 / Վան

234

Արի՛, արի՛, իմ խմոր,
Անսգամի թխթմոր,
Անդադարիմ խաց կա փոխ,
Չը դըփըքի չուր տամ կող:

ՀԱԲԱ, FAV: 3083, 03 / Ռշտունիք

ՀԱՑ ԹԽԵԼՈՒ

235ա

Դուք իմդադ հլնեք,
Թազա խա՛ց, խացի հրեշտակներ,
Չարը բարիմ դարձնեք:

ԱՀ XVII, 120 / Նոր Բայազետ

235բ

Հա՛ց, հացի հրեշտակ,
Արդար եզան վաստակ,
.Յէլինաք բարեխոս առ Աստված,
Չարն ի բարիմ դարձուք:

ՀԱԲԱ, FFI: 8934, 07 / Մուշ / Բուլանըխ/

235գ

Խա՛ց, խացի խրիշտակներ,
Պաղ սուփրա, տաք թունդիր,
Արդար եզան վաստակ,
Բարեխոս հլնեք Աստծուն,
Աշխարքին խեր, խաղաղութեն տաք,
Աղքատ խոքուս օղորմանաք:

ԱՀ XVII, 121 / Նոր Բայազետ

235դ

Յա՛ հաց, հացի հրեշտակ,
Արդար եզան վաստակ,
Դու բարեխոս էղնիս առ Աստված,
Օր գա մզի ամեն ավուր հաց,
Մենք լե տանք աղջտներուն, անճարներուն,
Օր վարձք էղնի մըր հոգուն.
.Օր էղնի վարձք,
Ճըր հոգուն լե դարձ:

ԷԱԺՋ, 297 / Ալաշկերտ

235ե

Տաք հա՛ց, պաղ սուփրա,
Դու .յէլնիս առ Աստված,
էղնիս բարեխոս.
Հացին էժնութեն,
Մահին թանգութեն,
Աշխարհին խեր ու խաղաղութեն,
Փորձանքից ազատութեն:

ՀԲՆ / Վարդենիս-Չախըռլու

235զ

Յա՛ տաք հաց ու պաղ խմոր,
Դու բարեխոս էղի .յըմնօր,
Օր Աստված հասնի .յըմեն
խարիբ-խուրբաքներուն,
.Յընկած ու նեղածներուն,
.Յերունաց ու թռչունաց,
Անճարաց ու անօգնականաց.
.Յըմնու սատաղեն իդա տան
Չարն բարի դարձուս, ամեն:

ԷԱԺՋ, 297 / Ալաշկերտ

235է

Խա՛ց, խացի խրիշտակ,
Արդար եզան վաստակ,
Բարեխոս առ Աստված.
Խացին .յեժնութեն,
Ջրին լիութեն,
Կանչին բուսութեն,
Ծառին պտղութեն,
Նընջեցելոց արքավութեն,
Մախին թանկութեն,
Բռնավորին ազատութեն,
Թագավորներուն բարիշութեն,
Դյունին խեր-խաղաղութեն,
Խիվընդին առրղջութեն:

ՀԱԲԱ, FAV: 3079, 01 / Ռշտունիք

235ը

Հա՛ց, հացի խրիշտակ,
Արդար եզան վաստակ.
Տա՛ք հաց, պաղ գունդ,
Դու հլնես հառ Աստված բարեխոս,
Չար էտես, բարին առաջես,
Չար խորհուրդը բարին կատարես,
Չար միտք, չար երազն բարի դարձուս,
Խնայես ավուր գալած փորձանքից,
Նաախ շառից, զուր բուխտանից,
Անզգամի շառից:
Երկինք, գետինք, ծով, ցամաք
Արարիչ ստեղծող Աստված.
Անխղճին խիղճ տաս,
Անխելքին խելք տաս,
Անմիտքին միտք տաս,
Անդարձին դարձ տաս:
Ռայիմ էրող Տե՛ր,
Դու ռայմ էնես.
Աշխատողին ջանսաղություն տաս,
Թագավորներին մի խիղճ տաս,
Աշխարհին խաղաղություն տաս,
Երիտասարդներին ազատություն տաս:
Մենք քեզ մի ջան ենք պարտք,

Դու էլ մեզ մի ղսմաթ իմալ կուտաս՝ տուր,
Կամքը քոնն է:
Արարիչ, ստեղծող Աստված,
Հաբիբ Նաջարի Աստված,
Աստվածը մեկ է,
Զորությունը հազար մեկ է:
Հաբիբ Նաջարի Աստված.
Իմալ դուռ բացիր Հաբիբ Նաջարի վրեն,
Իմալ էլ դուռ բացես
Ութանասուն էրկու միլաթի վրեն:

ՀԱԲԱ, FFIV: 5727, 01

235բ

Թո՛ղ տամ կող, թո՛ղ տամ կող,
Չը դադարի, չում տամ կող,
Անդադարին խաց կա փոխ:
Խա՛ց, խացի խրիշտակ,
Արդար եզան վաստակ,
Բարեխոս առ Աստված,
Հարաքաթ ծ'էնե,
Բարաքաթ քենե,
Ոժ ծ'էնե,
Ողջանծ քենե,
Ընկնիս ու չը կայնիս,
Լցվիս ու չը պատռիս:

ՀԱԲԱ, FAV: 3083, 02 / Ռշտունիք

236

Գառնենի գառը,
Խնկանի ծառը,
Անթառական պսակը
Գետին ճաշակի.
Օրհնած հողի,
Խաչած գերեզմանի
Նասիպ էնես ինձի:

ՋԲ, 10 / Ջավախք

ԽՆՈՑԻ ՀԱՐԵԼՈՒ

237

Եղ ծաղիկ,
Դեղին ծաղիկ
.Յափն է առե,
.Յափն է բուսե,
Հերն նստեր,
Օրթին փնջե:

ՋԲ, 10 / Ջավախք

ՀԻՆԱ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

238

Արիգա՛կ, չորցուր,
Լուսընկա՛, կարմրցուր,
Ըռքո՛, Սըրգո՛,
Քթիդ արյունը կաթեցուր:

ՆԳԱԴ, 131 / Քղի

ԼՎԱՑՔԻ

239

Թու՛, թու՛, թու՛,
Թաքնի ոռքը մաշի,
Սապոնինը չմաշի:

ԱԴ XVII, 121 / Նոր Բայազետ

ԽՃՃՎԱԾ ԹԵԼԸ ԲԱՑԵԼՈՒ

240

Աստուծ օղորմի անհիշատակ
Մանիշակի հոքուն.
Նրա խճուճն էնդի յիդ գա,
Իմն՝ էստի:

ԹՄԿ, 17 / Թիֆլիս

ԹԽՍԿԱՆԻ

241

Խռխռալի տակդ եմ անում,
Կճկճալի հանիլ պտես:

ԱԴ X, 247 / Լոռի

ՍԵՐ ԳՐԱՎԵԼՈՒ

242

Սուրբ Հարոս,
Սուրբ Ամաթոս,
Սուրբ Սալաթոս,
Սիրեցուցեք */այսինչին այսինչի/* հետ:

ԱԴ X, 246 / Լոռի

ԽՆԱՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ

243

Կարողն՝ Աստված,
Չեվողն՝ Աստված,
Ինձի քեզ տվողն՝ Աստված:

ՀԺԴ VIII, 99/Ղրիմ

ՄԱՆԿԱՆ ՔՆԵՑՆԵԼՈՒ

244

Իսուսիճ ու Քրիստոսիճ
Աչճ ու խաչը քիզ վրա:

ԹՄԿ, 15/Թիֆլիս

ՀԱՌԱՍՈՒՆՕՐՅԱ ՄԱՆԿԱՆ

245

Տե՛ր Աստված,
Տղաս խսմեքով թագավոր ըլա,
Աստված բարի քառսունք տա,
Մնացական ըլա,
Հորով-մորով պայիս,
Օղրլի օրքի ըլա:

ՀԺՀ VIII, 96 / Դրիմ

ԿՈՐՍՏԻ ՈՐՈՆՄԱՆ

246ա

Սատանա՛, սատանա՛,
Վուտիդ տակը իմքիճ կա՝
Կեսճ իճձ, կեսը քիզ:

ԹՄԿ, 54 / Թիֆլիս

246բ

Սըտա՛նա, սըտա՛նա,
Ոտիդ տակիճ մի բան կա,
Դուս բի՝ կեսը իճձ,
Դուս բի՝ կեսը քեզ:

ԱԳ XI, 42 / Լոռի

246գ

Սըտա՛նա, սըտա՛նա,
Մի զադ եմ կորցրել,
Դուս բի՝ կեսը քի, կեսը իճձ:

ԱԳ XI, 42 / Լոռի
ՊԵԺ I, 1962, 70 / Աշտարակ

3 ՊԵԺ I գտի:

ՆՈՐ ՇՈՐ ՀԱԳՆԵԼՈՒ

247

Իս քի մաշիմ, դուն իճձ՝ չէ:

ԹՄԿ, 20 / Թիֆլիս

ԱԿԱՆՋԸ ԿԱՆՉԵԼՈՒ

248ա

Մահը մտիս է,
Ահը ծտիս է:

ԱԳ XI, 42 / Լոռի

248բ

Մահը միտս է:

ԹՄԿ, 429 / Թիֆլիս

ԲԱՆԻ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ

249

Ծիտը թռչի,
Գորտը կպչի:

ԱԳ XI, 44 / Լոռի

250

Վիլա, վիլա,
Հընգերս գա:

ԱԳ XI, 44 / Լոռի

ՈՐԵՎԷ ՏԵՂԻՑ ԹՌՉԵԼՈՒ

251

Թու՛, իմ ախպոր ոտը կոտրի ոչ,
Իմ ոտը կոտրի ըչ,
Չալ ակռավի ոտը կոտրի:

ԱԳ XI, 43 / Լոռի

ՃԻԱԾԱՆԸ ԾԱԳԵԼԻՍ

252

Կանաչ ու կարմիրը իմ ախպոր գլխին,
Սևն ու սպիտակը՝ թուրքի գլխին:

ԱԳ XVII, 95 / Նոր Բայազետ

ՀՈՂ ՈՒՏՈՂ ԵՐԵԽԱՅԻ

253

Քու փայ խուղը */այսինչն է/* ուտում:

ԹՄԿ, 20 / Թիֆլիս

VI
ԵՐԵԿՈՅԱՆ ԵՎ ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ
(№№ 254-400)

Ա. ԵՐԵԿՈՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 254-352)

ԵՐԱԳ ՎԱՌԵԼԻՍ (ՔՆելուց առաջ)

254ա

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Ալ վառ խաթուն մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս,
Ամեն:

ՀԱԲԱ FFII: 2254, 05 / Ջավախք-Ուչմանա

254բ

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Ոսկեհավատ մարգարիտ.
Ա՛ռ, Եղիա բանալիք,
Տա՛ր դրախտի դուռը բաց,
Քաղենք անթառամ ծաղիկ:

ԳԱԹ, Մ.Աբեղյանի ֆոնդ / Նախիջևան-Աստապատ
ՀԱԲԱ, FBI: 1140, 01 / Ալաշկերտ

254գ

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Ճշմարտելավ մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս
Հեծավ ուր կապուտ քուռակ,
Գնաց ի յուրն ի քաղաք,
Կոտրեց դուռն ի պղնձին.
Քունն առուշ, երազն ի բարին:

ԱԳԶ, 73 / Մուշ-Բուլանըխ

254դ

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Ճշմարտապես մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս
Հեծավ իր ձին ու ջորին,
Գնաց յԵրուսաղեմ քաղաք,
Առավ անթառամ պսակ,
Բերեց Մարիամ սուրբ կուսին.
- Մարիա՛մ, դու քուն ու արթուն,
Մզի փրկե ամեն չարեն:

ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, I բ, №1

254ե

Երա յ, երա՛յ ճշմարիտ,
Ջայնախպիտ մարտիրոս.
Ջին խեծավ Օհաննես,
Գետ իջավ Վրդաննես,
Գացին մաքուր քաղաք,
Խանին մաքուր պատարագ,
Քաղեցին անթառամ ծաղիկ,
Փունջ ըրին բարձի տակիկ,
Քունն առուշ, երազն ի բարին:

ԲԱ, 460 / Վան
ՄԱ, 74, 22 / Մոկս

1-2 ՄԱ *չիք:*
4 ՄԱ ջորին խեծավ:
5 ՄԱ քեացին վար յ'Օրմա քաղքին:
6 ՄԱ *չիք:*
8 ՄԱ բերին դրին:

254զ

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Արքայութին մարգարիտ.
Երագն էկավ, լիսացավ,
Դևն ու քաջքը չքացավ.
Ճշմարտապես քնաձամ,
Դրախտի դուռը բանամ,
Մտնեմ անմահ դրախտը,
Անթառամ ծաղիկ ստանամ,
Փնջեմ, դնեմ գլխիս տակը,
Ինձ պահպանի սուրբ հրեշտակը:
Քուն ըլեմ, քունս առուշ,
Հրեշտակիս հետը մուշ-մուշ,
Ջարթնեմ՝ երազս բարի,
Ինչ որ խնդրեմ՝ կատարի:

ԱԳ XI, 35 / Բորչալու-Լոռի

254է

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Ճշմարիտ է մարգարիտ,
Անմահական բանալիք,
Տա՛ր, դրախտի դուռը բաց,
Քաղի անթառամ ծաղիկ,

Բեր դիր գլխիս տակ,
Քնեմ, քունս տանի,
Վեր կենամ՝ երազս բարի,
Ինչ խնդրեմ՝ Տերը կատարի:
Երկնքի դուռը բաց ա,
Ոսկե աթոռը դրած ա,
Քրիստոս վրեն նստած ա,
Ոսկե գրիչ բռնած ա,
Լուսավորիչ կանգնած ա.
Մեծ ու պստիկ գրում էին,
Արդարները խաղում էին,
Մեղավորներն լալում էին:

ԱԳ VII, 129/Վաղարշապատ

254ը

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Ճշմահատիկ մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս.
Քրիստոս գնաց Հնդու քաղաք,
Բերեց անթառամ ծաղիկ,
Դրեց Մարիամի գլխին:
Մարիա՛մ, Մարիա՛մ, դու կուս ես,
Հոգով, մարմնով հուս ես.
Էթամ դատեմ բարություն,
Հոգիս տանես արքայություն:

ԱԳ VII, 129 / Վաղարշապատ

254բ

Ճըրա՛, ճըրա՛ ճշմարիտ,
Ճշմարտապետ մարտիրոս,
Մեր սիրելի Քրիստոս:
Քնի, քնի, քունդ անուշ,
Երազ տեսար, երազն ի բարին.
Հովհաննես խեծեր վըր ձիուն,
Բալնիք տվիր խըտ Մուսես,
Բռնիր մանգղի կոթ,
Քեաղիր կանաչ խոտ,
Կըգա անուշ մեռոնախոտ:

ՍՍ, թղթ. 74, վավ. 20ա / Խիզան

254ժ

Երա՛գ: Երա՛գ ճշմարիտ,
Ճշմարիտը մարտիրոս,
Աղա վկա Քրիստոս.
Մե դուռըմ կար՝ Հիսուս,
Հիսուսի մեջ՝ Քրիստոս,
Շուրջառը վրեն ծածկոց,
Բուրվառը վրեն կախոց.
Դուռը գալող հետ դառնա,
.Յերթիքը գալող քար դառնա:

ՀԱԲՄ, FFI, 7519, 01 / Գյումրի

254ժա

Երա՛ք, երա՛ք ճշմարիտ մարտիրոս,
Դուռը բաց Քրիստոս.
Քրիստոս հեծավ իրեն ձին,
Գնաց Անգին քաղաքին,
Կտրվեց անթառամ ծաղիկը.
Քնի՝ քունն անուշ,
Զարթի՝ էրածն բարի...

ՋԲ, 12 / Ջավախք

254ժբ

Երա՛գ, երա՛գ ճշմարտահատիկ,
Ճշմահատիկ մարգարիտ.
Պանամ պղնձա դուռը,
Քաղեմ անթառամ ծաղիկը,
Փնջեմ, դնեմ գլխուս,
Քուն ըլլիմ՝ արազս պարի,
Աստված մուրազս կատարի,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:
- Ա՛յ Մարիամ, քու՞ն ես, թե զարթուն:
- Հազար քուն, հազար զարթուն:
Երկու, երկու եկին հերթը,
Երկու, երկու եկին դուռը.
Ով դուռը կյա՝ ետ դառնա,
Ով հերթը կյա՝ քար դառնա,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:
Էս տունը տըրտըրատուն ա,
Քրիստոսա ժամատուն ա,
Քրիստոսը հերթով,շուռ գա,
Փիլոնը քցինք հըրուրոցավը,
Քցինք հիվանդի պարծյավը,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԱԳՋ, 280 / Գանձակ

254ժգ

Երա՛յգ, երա՛յգ ճշմարիտ,
Ճշմարտապես մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:
Ջին խեծավ էովանես,
Գեյտ մտավ Վրտանես.
Կաքնով ախպյուր շաղաղիցին,
Քյարե տաճար կայնըցուցին,
Մեյնք չինինք Աստծու տաճար,
Աստված արեց մեր խուգյու ճար:

ՎՍԱ, 65 / Վան

255ա

Երա՛գ, երա՛գ ճշմարիտ,
Անմահական մարգարիտ,
Չարին խափան մարտիրոս,

Իմ սիրելի Քրիստոս:
էրնեկ, էրնեկ էն տարին,
Երուսաղեմ շինեցին,
Շինեցին, կատարեցին,
Պտղածառը տնգեցին,
Արթար ծաղիկ քաղեցին:
Մի տուն ունեմ էրկաթե,
Չորս բոլորը պողվատե,
Սուրփ կուսը տանը քուն,
Սուրփ Սարքիսը կտերը զարթուն.
Կտուրը էկողը եդ դառնա,
Դուռը էկողը փետ դառնա:

ԱՀ XI, 34 / Բորչալու-Լոռի ՀԱԲԱ, FBI: 1095, 01

2 ՀԱԲԱ *չիք:*
8 *տողից հետո ՀԱԲԱ ունի* Հելաև Գողգոթաև ջրին *հավելյալ տողը:*
9 ՀԱԲԱ արդարական:
10 ՀԱԲԱ տունըմ:
13 ՀԱԲԱ երդիքը:
14 ՀԱԲԱ Երդիք գալող դետ դառնա:
15 ՀԱԲԱ Դուռը գալող երկաթ դառնա:

255բ

Ճրա՛գ, ճրա՛գ ճշմարիտ,
Ճշնի խավար մարտիրոս,
Խավարեցին մարտիրոս...
էրնակ, էրնակ աև տարին,
Վերուսաղոմ շինեցին,
Կատարեցին, թըմմեցին,
Տորպատունը տնկեցին:
Մե տունմ' ունիմ պեն երկաթ,
Չորս պատը մեջը փոխ,
Քրիստոս մեջը քուն,
Ավետարան սրտիս սուն,
Սուրչալն երթոցը պահապան,
Կավազան՝ տուռն փակիչ:

ՀԱԹ, Ս.Քամալյանի ֆոնդ III-15 / Շուլավեր

255գ

Ճրա՛ք, ճրա՛ք ճշմարիտ,
Ճշմի խապար մարտիրոս,
Աղա վկա Քրիստոս.
էրնեկ, էրնեկ էն տարին,
Երուսաղեմ շինեցին,
Պտղով ծառը տնկեցին.
Մարիկիս ըսեք՝ դուս գա,
Բռով աչվին լուս գա:
Մե դուռմ' կար՝ Հիսուս,
Հիսուսի մեջ՝ Քրիստոս,
Շուրջառը վրեն ծածկոց,
Բուրվառը վրեն կախոց,
Գավազանը վրեն փակոց.
Դուռըս գալողը քար կտրի,
Երթիկս գալողը փատ կտրի:
Պողո՛ս, Պետրո՛ս,
Անթառական սուրբ Կիրակոս.
Հուրն ընկնիմ՝ չվառիմ,
Ջուրն ընկնիմ՝ չտանի,
Մինչ գալուստն Քրիստոսի:

ՋԲ, 9 / Ջավախք
էԱժՋ, 20 / Կարս

Առաջին 8 տողերն, իբրև անկախ աղոթք առկա են էԱժՋ և ունեն հետևյալ տարբերակումները.
2 ճիշտն ի խափան:
6 պտղածառը:
7 էն մորն:
8 աչքերը բեռավ:

ՔՆԵԼԻՍ (ճրագը մարելիս)

256ա

Ճրագ մարավ,
Հրիշտակ զարթավ,
Աստված գալոց,
Չար խափանոց, ամեն:

ՀԱԲԱ, FFII: 2254, 04 / Ջավախք-Ուչմանա

256բ

Ընցավ չար,
Խանգավ ճրագ,
Զարթավ պախապան Խրիշտակ՝
Օգնական պախապան մեր տան տեղաց:

ՀԱԲԱ, FAV: 3083, 04 / Ոշտունիք

257ա

Ընցավ չար,
Խանգավ ճրագ,
Զարթավ Քրիստոս պախապան՝
Չորեքդիման չարյաց խափան.
Չորս գլոխ Ավետրան,
Ութ կանոն Սաղմոսարան,
Տըսվերկու փոխ շարական,
Քրիստոս գալոս՝ չարյաց խափան,
Խոգուս օգնական,
Մարմնուս պախապան:

ՀԱԲԱ, FAV: 3085, 02 / Ոշտունիք

257բ

Ընցավ չար,
Խանգյավ ծրագ,
Պախապան խաչ, խրիշտակ օգնական.
Յոթ գլոխ Ավետրան,
Ութ կանոն սըփ նշան,
Մի՛ տուն՝ տուն պախապան,
Մի՛ քըլֆըքին խավսըրական:
Ոսկը փիրուզ զարդարացավ,
Թուս ապան աղաղակեց,
Էսաց՝ Աստված, իս իմ քյու աղաղակ.
Սնե սուն սունը սրտիս,
Խաչ Ավետրանը գրկիս,
Չը մերծենա չարը մտիս...

ՄՄ, թղթ.74, վավ.22 / Ոշտունիք-Մոկս

258

Ծրագը մարեցավ,
Չարը խափանեցավ,
Քրիստոս մեր մեջ հայտնեցավ.
Ով որ մեր տանը գայնե՝
Կապի, կարկամի,
Ճար չի գտնե՝ ելլե երթա:

ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ I-5 / Մալկարա

259ա

Չրախը անցավ,
Բարիճ կատարեցավ,
Իրեք խաչ էկան, օրթան կայնան.
Մեկը՝ սրտիս,
Մեկը՝ տնակիս,
Մեկն ալ՝ սաղ աշխարհիս.
Չար խորհուրդը բարիճ կատարիս:

ՀԺՀ VIII, 95 / Ղրիմ

259բ

Կրակը մարեցավ,
Չարը խափանավ,
Պողոս, Պետրոս արդարացավ:
Էրկընուս իրեք հրեշտակ իջավ.
Մեկը՝ հոգուս,
Մեկն՝ արևուս,
Մեկն ա՛ գալստական,
Չարերը խափանական:

ՋԲ, 9 / Չավախք

259գ

Չրախը մարեցավ,
Չարը խավարեցավ,
Բարիճ կատարվեցավ:
Իրեք ծիավոր անցավ.
Մեկը՝ Հիսուս,
Մեկը՝ Քրիստոս,
Մեկն ալ մեր տունի պահապան:

ՀԺՀ VIII, 95 / Ղրիմ

260

Կրակը մարեցավ,
Չարը խափանավ.
Քրիստոս քողն երեսին,
Հրեշտակները չորս դին՝
Երկնքեն իջավ,
Խաչապաշտից տները մտավ:
- Տեր իմ, ու՞ր կերթաս:
- Հուր ունիմ հրեղեն,
Բուրվառ ունիմ բոցեղեն՝
Ամեն թելն է լուսեղեն.
Գնացի խանձարուրքիս,
Երթամ հասնիմ պատարագին:
Կես գիշերին դուրս ելա,
Մեծավորիս խաչը տեսա.
Աղաչեցի. «Տեր, դու ո՞վ ես»:
- Հիսուս Քրիստոսն եմ ես:

Փ, 282 / Չավախք-Կորխ
ՋԲ, 7 / Չավախք
ՀԱԲԱ, FFI: 7519, 03 / Գյումրի
ՀԲՆ / Աշոցք-Ղազանչի

3 ՀԲՆ Յիսուս Քրիստոս:
4-5 ՀԲՆ *չիք:*
5 ՋԲ, ՀԱԲԱ էրկնուց:
6 ՀԱԲԱ իջավ, ՀԲՆ *չիք:*
7 ՀԲՆ հայրապետ:
11 ՀԱԲԱ խանձարուրքին:
11 ՀԲՆ հասնիս էրթաս խանձարակին:
12 ՋԲ պատարագին: ՀԲՆ հասնիս էրթաս:
13-16 ՋԲ, ՀԱԲԱ, ՀԲՆ *չիք:*

261

Ծրագն ընկավ լիացավ,
Դևն ու դավեն հալածեցավ,
Քրիստոս մեզի համար շուք չինեց,
Անմարեմար Մոսեսին,
Էրթային գան Քրիստոսին.
Գիրը գրի վրա,
Ավետարանը սրտիս վրա:
Ծրագ, ծրագ ճշմարիտ,
Ճշմարտապես եղիա մարգարե.
Բաց պղնձե դուռը, բանամ,
Մտնեմ անմահական դրախտ,
Ժողվեմ անթառամական ծաղիկ,
Փնջեմ, դնեմ գլխուս տակ,

Քուն ըլլիմ, քունս անուշ,
Ջարթիմ՝ էրածս բարի,
Ինչ խնդրեմ՝ Աստված կատարե:
ՋԲ, 12 / Ջավախք

262

Ճրագ չընցավ, չարն ընցավ,
Սուրբ Գրիգորն ընցավ.
Մեր դուռը ծիրանի,
Սողոմոն տաճարի,
Պողոս, Պետրոս հրեշտակի,
Օրշնալ տեր մեր Հիսուս
Քրիստոս աստված:
ԷԱԺԶ, 24 / Շիրակ-Դմզլու

263

Ընցավ չար,
Հանգավ ճրագ,
Ջարթավ եկեսցե, պահպանեսցե.
Անարատ խաչի լուսին,
Գերեզման Քրիստոսին:
Կույս Մարիամ կուսին կամար,
Դու էկար հոգվույս համար,
Հոգիս տվի խաթրիդ համար.
Ինչ գիտես՝ ինձ սովրցրու,
Դառն ի դժոխքեն հեռացու,
Մի թորկե չար գա մըտ յիս,
Չար շատ է՝ խաբե գիս.
Հայր ի բեմ, որդին՝ պարիսպ,
Քրիստոս գալոց, չար խափանոց:
ՀԺՀ VI, 143 / Վաղարշապատ

264

Ճրագն ընցավ, չարն խափանավ,
Սուրբն Սարգիս վրա հասավ՝
Բոզ ձիով, կանանչ խաբայով,
լուսեղեն փիլոնով:
- Լուսունկի՛կ, լուսունկի՛կ, հուսկա՞ կուգաս:
- Հեր Աբրեհամու ծովուն վրավեն:
- Դուն դեղին, ծիդ է դեղին,
Մորուքդ էկել՝ գույնը դեղին:
Աջն ու խաչը բարծիս վրա.
Հերը լոս է, որդին լըսե,
Հոգինը սուրբ արթնցուներ:
Գլխիկս վեր բարծին,
Հոգիս՝ ամանաթ սուրբ Աստվածածին:
ՍՀՀ, 342

265

Չար ընցավ, ճրագ չընցավ.
Ազատիս մարդ խաբուլ խատից,
Ազատիս մարդ զուրու բուխտից,
Ազատիս մարդ անընզգըմի շառից,
Ազատիս մարդ անփողպատ շապկից,
Պարզ հեթիս տու քյու դիվան տանիս.
Քյու արքայութեներն մայրում չէնիս,
Պուծառ իս ստեղծեր քո հոգին՝
պուծառ պահիս,
Պարզ հեթիս տու քյու դիվան տանիս:
ՄԱ, 74, 20բ / Ապարան

ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԴՈՒՌԸ ՓԱԿԵԼԻՍ

266ա

Տունմ՝ ունիմ երկաթե,
Պատերը սուրբ պողպատե,
Քրիստոս մեջն օթևան է,
Դուռը դռան գոց է,
Խալխան էրթկին ամրոց է.
Դռան գալող՝ ետ դառնա,
Երթիկ գալող՝ քար դառնա:
ՋԲ, 11 / Ջավախք
ՀԱԲԱ, FFI: 7522, 03 / Գյումրի

ՀԱԲԱ ***ունի հետևյալ տարբերակումները.***
2 սուր:
5 ***չիք:***
6 դուռը:

266բ

Մի տունմ՝ կէր՝ երկաթ էր,
Պատեր զընեն պողվատ էր,
Սըփ կուսը տունը քուն էր,
Սըփ Գրիգոր յուր բուն էր,
Փիլոն՝ վերևակ էր,
Շուրջալ՝ փրգևակ էր,
Խաչ-գավազան դռան փակ էր .
Գլոխս՝ բարձ, խուղգիս՝ Աստծուն ամանաթ:
ՄԱ, 74, 22 / Մոկս

266գ

Մեր տունն լիքը էրկաթ է,
Պատերը լիքը փողպատ է,
Սուրբ կուսը դուռն է,
Սուրբ Գրիգոր էրթիկն է,
Փիլոնը էրթոց ծածկոց է,
Խաչ-գավազան դռան փակ է.
Դուռը քալողը քար կտրի,
էրթիկ քալողը էրկաթ կտրի:
ՋԲ, 12 / Ջավախք

266դ

Տու՛մ կէր՝ էրկաթ էր,
Պատեր հըմեն պողվատ էր,
Սըփ կուսը քուն էր,
Սըփ Գրիգոր .յարթուն էր,
Խաչ-գավազան գլխուն էր:
- Էլե՛ք, եմ ծիրանին բերեք,
Խագնեմ, էրթամ պատարագին խասնեմ:
Չար թշնամին դեմ առեց,
Ոտաց տըկներ բեվեռ էլավ,
Լեզուն բերան թաղիս էլավ:
- Զարկե՛ք գլորեք,
Չը մերծենա Աստծու ստեղծածին:

ՀԱԲԱ, FAV: 3099, 01 / Ոշտունիք

267ա

Տունմ՛ կա՝ երկաթ է,
Պատեր հըմեն պողպատ է,
Խաչ-գավազան գլխուն է,
Ջոջ Ավետրան դրան է,
Մասն ու սկիհ բերնին է:
Իջան իրեք բոզ ծիավոր.
Մեկ՝ Հիսուս,
Մեկ՝ Քրիստոս,
Մեկ՝ Ցնծացին Աստվածածին:
- Տե՛ր, .յու՞ր կերքաս:
- Դուռն հիվընդին:
- Բալնիք քալիս բոլոր բարձին,
Չը վախենա սիրտն ի մարմնին.
Գող մի կապես ցերեկին,
Մեկն էլ՝ գիշերին,
Բախիս էնիս,
Աչքեր .յերես պղինձ էնիս,
Ոտներ գետին բիբեռ էնիս:
Ալալոց, բալալոց,
Ալաշկերտու Սըփ Կիրակոս,
Հոգին ը սուրբ, ազիզ,
Ամեն չարե փրկե զիս,
Քու արենի մեջ մաքրե զիս,
Քու արքայութենի մեջ հիշյա զիս:

ՄՍ, 74, 20բ / Բուլանըխ

267բ

Տուն մը ունենք երկըթե,
Պատեր ունենք պողպըտե.
Էկան իրեք պոզ ծիավոր,
Իրեք ալ կարմիր տիմավոր.
- Ու՞ր կերքաս:
- Աս տուռն ի տան,
Օր չը վախի սիրտը նրան:

ՀԱԲԱ, FFI: 4021, 02 / Բուրսա-Չալղայա

267գ

Այսօր ուրբաթ,
Տունը՝ էրկաթ,
Չորս պատերը բալնիք.
Աստվածամարը մեջը քուն,
Պողոս, Պետրոս դուռը,
Ակոբ, Սահակ երթիկը:
Իշտե էկան իրեք հատ ծիավոր,
Իրեքն ալ ճերմակ հագած.
Մեկը՝ Հիսուս,
Մեկը՝ Քրիստոս,
Մեկը՝ ամեն չարն խափանե,
Բարին կատարե:

ՀԺՀ VIII, 98 / Ղրիմ

267դ

Էս տունը տուն ա,
Քրիստոսը միջին քուն ա,
Պատերը բմբեռնած ա,
Սյոները չարմեխած ա,
Փիլոնը կտերը կալնիչ ա,
Գավազանը դռան փակիչ ա:
Հրես էկան իրեք ծիավոր.
Մինը՝ Հիսուս, մինը՝ Քրիստոս,
Մինն էլ ամեն ցավի փրկիչ:
Ով դուռը գա՝ եդ դառնա,
Ով կտուրը գա՝ էրկաթ դառնա:

ԱԺ XI, 35 / Բորչալու-Լոռի

268ա

Էկան իրեք ծիավոր,
Իրեքի հաքածն է ճերմակ.
Մեկն՝ Հիսուս, մեկըն՝ Քրիստոս,
Մեկըն՝ Տիրամար Ասվազածին:
Մեկըն դուռըս կը պահե,
Մեկըն էրթիկըս կը պահե,
Մեկն ալ գալիք չարիքը կը խափանե:

ՀԱԲԱ, FFI: 5269, 01 / Արաբկիր

268բ

Հանա՛ էկան իրեք սուրբ ծիավոր,
Իրեքն ալ կանաչ կապավոր.
Մեկը՝ Հիսուս, մեկը՝ Կարապետ,
Մեկը՝ սուրբ Աստվածամար:
Աստվածամա՛ր, հանե զիս,
Սուրբ աղոթքովդ պահե զիս,
Մեղավոր իմ, քավե զիս:

ՀԺՀ VIII, 97 / Ղրիմ

7 մեղավորիս, ***ուղղ. ըստ իմաստի:***

268գ

Էկին սարով, էկին ձորով,
Հազար հինգ հարիր հրըշտակներով.
Մեկն է Հիսուս, մեկն է Քրիստոս,
Մեկն է Անգդա սուրբ Աստվածածին.
Չենկել թալե որ իմ բարձին՝
Չը վախենամ ի դեմ չարին,
Մինչև բացվի լուսն ի բարին.
Հավտամ, խոստովանիմ Հիսուս որդին,
Բարեխոսությամբ սուրբ
Կույսի Աստվածածնին:

ԲՄ, 459 / Վան

10 Մեկն է Իսուս, մեկն է Քրիստուս,
Մեկն է ամեն ցավի փրգիչ:

ԹՄԿ, 14 / Թիֆլիս
ՀԱԲՄ, FBI: 1097, 02 / Թիֆլիս

ՀԱԲԱ *ունի հետևյալ տարբերակումները.*
4 Մովսեսինն է:
5-6 Քրիստուս վուրթին էկել է,
Մումն ու խունկը բերել է,
Դրան յետնեն ծխել է:
9 Նորեն:
9-րդ տողից հետո ունի հետևյալ հավելյալ տողը.
Յիրեքն ևեթ ճերմակ, ճերմակ:

268դ

Լըսնը նոր, շըյհնավեոր,
Կանաչ-կարմիր թագավեոր.
Էլեյի Սառա, էլեյի Մարթա,
Էլեյի նայինք՝ էո՞վ կուգա:
-Իրեք ծիավոր կուգա:
Մեյն է Հիսուս, մեյն է Քրիստոս,
Մեյն է սուրպ Ստեփաննեոս.
Գավազանը դրանս գեոց,
Փիլեոնն յերթեցս ծազկոց.
Դուռս էկողը քար կըլյի,
Յէրթիքս էկողը էրկաթ կըլյի:

ԳԲՄ, 642 / Սեբաստիա

271

Մեր տուն հրամատուն է,
Քրիստոս իշխանատուն է,
Պատեպատ էրկթե սուն է,
Փիլոնն՝ էրթըկոց ծածկոց է,
Խաչ-գավազան՝ դռան գոց է:
- Աքա Մարիա՛մ, հոտ ի՞նչ կէնես:
- Էրեցներուն շուռջառ կարեմ,
Հագնին, կայնին պատարագին,
Պատարագն ա Քրիստոսու:
Իրեք պուռ դանակմ՛ ունիմ.
Մեկը՝ սուտ սատանին,
Մեկը՝ գել գազանին,
Մեկն ա չար խափանին:

ՋԲ, 11 / Ջավախք

269

Իկին, իկին քաղաքին,
Իկին իջոն աղբիյը,
Կապիցին ժեք քուրոկ,
Տնկիցին ժեք խաչ.
Մեկը՝ սըյտիս,
Մեկը՝ սընաձիս,
Մեկը՝ տոնիս,
Բարի լիս:

ԱԱ, 49 / Հաճըն

272ա

Աս տունը Տերունի է,
Տաճարը Սողոմոնի է,
Քրիստոս հոս խոնախ է,
Ծին տուռը կապ է,
Պողոս, Պետրոս էրթիկն է,
Փիլոնը էրթիկին ծածուկն է,
Քավազանը տուռերու կոցն է,
Խաչ-Ավետարան կոլոխներուս տակն է,
Անուն Հիսուսի, Քրիստոսի:

ՀԱԲՄ, FBI: 1825, 02 / Ղրիմ-Սիմֆերոպոլ
Փորքշեյան1971, 95 / Նոր Նախիջևան

3 Փորքշեյան *չիք*:

270

Էս տունը տաճարինն է,
Տաճար Սողոմոնինն է,
Փիլոնը Ներսեսինն է,
Գավազան Քրիստոսինն է.
Գավազան դռան փակիչ է,
Փիլոնը կտիր ծածկիչ է:
- Մարիա՞մ, քու՞ն իս, թե զարթուն:
- Վունց քուն իմ ու վունց զարթուն.
Հորեն էկան իրիք իրիք.

272բ

Քրիստոս մեր տունն է,
Աթոռն Սողոմոնի է,
Պողոս, Պետրոս դուռս է,
Սահակ, Հակոբ երդիքս է,
Փիլոնը երդիքիս ծածուկ է,

Խաչը, գավազանը դուռիս գոցն է.
Դուռըս եկողը քար կտրի,
Երդիքս եկողը ետ դառնա:

ԱՆՆ, 104 / Նոր Նախիջևան
Փորքշեյան1971, 95 / Նոր Նախիջևան

273

Քրիստոս իկիկ տուն մնաս,
Փյուլյունիվ քարից վիրե մնաս,
Կավազոնու պըռնից չյուրս տահ մնաս,
Անուն Իսյուսյու Քյուրուստյուս,
Անուն Հոր և Որդո, Հոգին սուրբ:

ԲԳ, 185 / Մարաշ

274

Տունը հիսար պատած ի,
Տուռը, հերթիկ կալնած ի,
Տուռ պիպըռած ի,
Սուն աղոթած ի:
Ավետրան՝ պախապան,
Սըփ Մաշտոց՝ օքնական,
Սաղմոց ինոր կալնիչ,
Օքնական՝ սըփ փրկիչ:
Վով կայ՝ ետ տառնա,
Մոտըցող՝ քար տառնա:

ՀԱԲԱ, FFI: 3859, 01 / Վան-Սնծակ

275

Հիսուս՝ բերդ,
Քրիստոս՝ պարիսպ,
Ես ի պարսպի միջին,
Պարսպի դուռը փակ,
Բալանիքը առ Քրիստոս.
Քրիստոսա Գիրքը գրկիս,
Սուրբ Նշանը վրա գլխիս.
Ոնչ վախի սիրտս փորիս,
Ոնչ երերա լիզուս բերնիս:

ԱԳ XI, 35 / Բորչալու-Լոռի

276

Ես խաչակնքեմ զքեզ,
Որ քու սուրբ խաչովդ դուռը փակեմ,
Չար թշնամին խորտակվի,
Թշնամական ձեռքով դուռ չբանաս.
Որ քու սուրբ խաչովդ խաչակնքեմ,
Որ դուռը չար թշնամու ձեռքով չբացվի,
Քու սուրբ խաչիդ զորությամբ դուռը բանամ:

ՀԱԲԱ, FFII: 2254, 03 / Ջավախք-Ուչմանա

ԱՆԿՈՂՆՈՒՄ ՔՆԵԼԻՍ

277

Քրիստոս տեր վրա բարձիս,
Աստվածամար դեմ երեսիս.
Ոչ վախե սիրտս ի փորիս,
Ոչ լեզվակս ի բերանիս:
Լուսավորիչ պապան հոս է,
Փիլոնը վրաս ծածկոց է,
Կավազանը տուրան կեոց է.
Տուռը կալողը կապի,
Էօրդյուքը կալողը կարկամի,
Հեռուանց չարիքը խափանի:
Սուրբ Սերգիս գարտաշ,
Մայրամ մայր յոլտաշ,
Քիմ քի կելե գափույա,
Էլի պաղլը տիլի տաշ[36]:
Սուրբ Սերգիս քըճըս,
Մայրամ մայր ծոցըս,
Չը վախեմ էս գիշերըս.
Քուն տուր, որ քնանամ,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԲԲ, 280 / Կեսարիա

278

Ալլահ պաշ,
Մարիամ մայր յոլտաշ,
Սուրբ Սարգիս յոլտաշ[36ա].
Դուռը դռան ետին գոց,
Վալաճ՝ երթիկը ծածկոց.

---

36 11-14 տողերը թուրքերեն են.
Սուրբ Սարգիսը եղբայրս է,
Մարիամ մայրը ընկերս է,
Ով որ գա դուռը՝
Չեռքը կապվի, լեզուն՝ քարանա:

36ա 1-3 տողերը թուրքերեն են
Աստվածը գլխավորս է,
Մարիամ մայրը ընկերս է,
Սարի Սարգիսը ընկերս է:

Ով դուռը գա՝ կապվի,
Ով երթիկն ելլա՝ կարկամի:

ԱԱ, 56 / Կիլիկիա-Այնթապ
ՀԱԲԱ, FFI: 4021, 01 / Բուրսա-Չալկայա

ՀԱԲԱ *ունի հետևյալ տարբերակումները.*
1 աստվազ պաշ:
2 Մարյամ անա պաշ:
3 զորավոր պաշ:
5 *չիք*

279

Հիսուս՝ յիսուս, Քրիստոս՝ գրկիս,
Աստվածամար դեմ երեսիս,
Գաբրիել հրեշտակ աջքն ու բազնիս,
Սուրպ Սերգիսը էնքսեիս,
Սուրպ խաչերը բերդս ու բարիս,
Իէոչ մեկն էլան կախադնորիս:
էլլենք նեյին[ք] վէով կուգա,
Իրեք ձիավոր կուգա.
Մեյն է Պողես, մեյն է Պեյրոս,
Մեյն է սուրպ Ստեփաննոս.
Գավազանը դրանս գոց,
Փիլոնն երթեցս ծազկոց.
Դուռս էկողը քար կըյյի,
Բակըս էկողը փատ կըյյի,
Յերթիքս էկողը էրկաք կըյյի:
Աջն ու խաչը բարձիս վրա,
Ավետարան՝ բերնիս վրա.
Կուզեմ որդե հարիկս,
Սսվածամար մարիկս,
Բարի հրըշտակ աղբրտիքս,
Կույս մաքուր քրվըտիքս:
Ահա ես մտա գերեզման,
Հոգիս, մարմինս ծեզ ամանաք,
Մինչ ի բարի լուս ծագի:

ԳԲՍ, 645 / Սեբաստիա

280

Հիսուս սրտիս, Քրիստոս գրկիս,
Սուրբ Ավետարան, խաչն ա սրտիս,
Բազում աղոթք՝ բարձր տեղիս,
Աստված կապա չար թշնամիս:
Գլուխս դնեմ սնարքին,
Հոգիս գնեմ դրախտին:
Երկնուցեն երեք հրեշտակ իջավ.
Մեկն՝ ինծի պահապան,
Մեկ՝ դրանս պահապան,
Մեկն ալ ազգ ու աղաքիս պահապան:
Հիսուս Նազովրեցի,
Չար հրեաց թագավոր,
Հրեայք հալածին,
Անդունդն անցնին,
Իմ բոլորս ցագի փուշով պատին:

ԵԱ, 60 / Խոտրջուր

281

Սուրբ սկին սրտիս,
Սուրբ Ավետարոնու կրկիս,
Մը՛ վախի, հոգիս.
Խեչ մի խյունծյուր իրիսիս,
Խեչ մի ֆայտո մսիկիս,
Ի՞նչ կո վախիս, սրտիս:
Պոհպահապոն հրըշտոկ պեհե հոգիս,
Պեհե մարմին,
Չիգոն չոր սատանետեքի՝
Մեզնի խափին:

ԲԳ, 185 / Մարաշ

282

Իսուսին, Քրիստոսին,
Իսուսի Գիրն էր գրկիս,
Ջեռնագիրն ի ճակատիս,
Տերունական խաչն ի թիվիս,
Ասպածամոր պալնիս պենիս:
Մեր տերն իրե վերնական,
Խաչն ի խան, խաչ պատվական.
Վով ի քուն ի՝ քուն կենա,
Վով արթուն ի՝ անվախ կենա.
Վով զի չորս պերան հիշա՝
Սուրն իյնի, չը սասանվի,
Գետն իյնի, գետ չը տանի:
Առքավութքի տըռներ պացվի,
Տըժըխոց տըռներ փայվի:
Ես եմ խուր՝ իմ խրիշտըկով:

ՀԱԲԱ, FFII: 7297, 02 / Վան

283ա

Հիսուս՝ ուսիս,
Աստծու անունը սրտիս,
Ավետարանը բարձիս,
Մայր Աստվածածին դիմացս:
Ահա մտա գերեզմանս,
Հոքիս ու մարմինս քեզի ամանաք.
Մարմինս՝ գողնքին ամանաք,
Հոքիս Գաբրիել հրեշտակին.
Տերն մեր Հիսուս Քրիստոս:

ՋԲ, 8 / Ջավախք

283բ

Հիսուսի խաչը սրտիս,
Ավետարանը՝ բարցիս.
Ըհը մտա գերեզման,
Իմ տերը՝ Հիսուս անձնաման,
Հոքիս քեզ ամանաթ,
Մարմինս գողնքին ամանաթ,
Հոքիս՝ Գաբրիել հրեշտակին,
Թող հանձնե Հիսուս փրկչին:

ԱԳ XI, 35 / Բորչալու-Լոռի

284ա

Իսուսը սուն ի սրտիս,
Ավետարան ի կըրկիս.
Իմ Տեր, արարեր զիս,
Չը մերձենաս չարերը զիս:

ԱԳ XIX, 99 / Վան

284բ

Հիսուս սրտիս սուն ա,
Ավետրանը վըր սրտիս ա,
Հրեշտակ փակ ու բալնիս ա,
Չարք հեռանա զիս:

ՀԱԲԱ, FFII: 1184, 01 / Կոտայք

285

Ութ սուն սրտիս,
Խաչ, Ավետրան գրկիս,
Գաբրելական փողն ակնջիս,
Աստվածածնա բոթն բերնիս.
Չար չը մերձենա ջանիս,
Չուր Քրիստոս գա դատաստան:

ՀԱԲԱ, FAV: 3101, 02 / Ոշտունիք

286

Մտա ի տեղիս,
Քրիստոս ի կողքիս,
Ավիտրան ի կրծիս,
Տե՛ր, դու օքնական,
Փրկիչ պահապան:
Աճարատ կուս Տիրամեր,
Մազտ ի պարիս ի տեղիս,
Ամենօրշնալ Տեր փրկիչ:

ՀԱԲԱ, FFI: 3861, 01 / Վան-Աճձակ

287

Խաչը խաչին վրա,
Խաչը պարցին վրա,
Սուրբ սեղանը սիրտըս,
Ավետարանը գիրկըս,
Ոչ քուն, ոչ արթուն:
Ամպը թաղվեցավ,
Արդար հոգին ազատեցավ.
Վով որ մեր տուռը, փաճան գայնե՝
Ծեռքը, ոտքը կարկամի,
Լեզուն պերանը պռնըվի.
Նեննի, պըճիկս, նեննի:

ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, I-59/Տարենտե

288ա

Աշկն ու խաչ Քրիստոսին,
Սուրբ գավազան Մովսեսին,
Քսանուչորս տուն Ներսեսին,
Օգնական, պահապան
Հռոմա սուրբ էկեղեցին՝
Իմ անձին, իմ տեղին, իմ բարցին,
Որ ըսինք, սապախտան լուս էլլանք:

ՀԱԲԱ, FFII: 2255,03 / Ջավախք-Ուչմանա

288բ

Աջն ու խաչը .Յիսուսին,
Քսանչորս տուն Ներսեսին,
Հռոմա սուրբ եկեղեցին՝
Պաշտպան իմ տեղ ու բարձին:

ՀԲՆ / Շիրակ-Փանիկ

289

Քրիստոս էկավ ճորմակ ծիյոք,
Խաչ հանա վեր լուս պերանոք,
Փիլոնը էօրդյուքիս ծածկոց էրավ,
Կավազանը տուրանս կէօց էրավ:
Քուն տուր, որ քնանամ,
Չարը կա նա՝ իմանամ,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԲԲ, 280 / Կեսարիա

290

Օհան, Օհան էսկիպիրոն,
Կապես ամեն չարուս պիրոն,
Գավազոնը՝ տուռիս վիրոն,
Խաչը՝ կուսկիս վիրոն,
Փիլոնը՝ օրդիկիս վիրոն,
Թե յոթ հայրապետին աղոթքը՝
ամենին վիրոն,
Ամեն:

ԲԳ, 233 / Սթանոզ-Էնկյուրիա

291

Պախապան խաչ խրեշտակ,
Յոթ գլյոխ Ավետարան,
Ութը գլյոխ Սաղմոսարան,
Տասվերկու փոխ շարական,
Մայր Աստվածածին օգնական ու պախապան:
Մեյ շում'կյա՝ գլյոխ չկյա,
Մայր Աստվածածնա որդին կյա,
Կալի, կապի, վեր մե չկյա:
Յա՛ պատվական խաչ,
Յա՛ խերվան տընդառաջ,
Տյու քշես, պիրես առաջ:

ԷԱԺՋ, 299 / Վան
ՀԱԲԱ FBI: 3225, 02/Վան

1 ՀԱԲԱ չորս:
5-11 ՀԱԲԱ *չիք:*

292

Պահապան խաչ հրեշտակ,
Չորս կլուխ Ավետարան,
Տու էլնես մե պահապան.
Կիրակմըտի հրեշտակ,
Անարատ Աստվածածին,
Պոզ ծիյավոր Սըփ Սարքիս
Փառ թևավոր Սըփ Կեվորք,
Տուք հասնեք անկախ բեկախ.
Յա՛ Շաղբաղու Կարմիր Ավետրան,
Կենքաճանից քոշախան,
Ճանիմանենց սըփ Ավետրան,
Ծե զորք շնոխքին մեռնեմ.
Ոսկի փուլվրով, արծաթ մըզրղով
Տուք խասնեք, հիմդադ անեք.
Չխանեք ախն ի սրտեն,
Ամոթն էրեսեն,
Մեղա՞, մեղա՞ խազար պերան:

ՀԱԲԱ, FFI: 4101, 01/Վան

293

Խա՛չ Խա՛չ խարական,
Յոթը կանոն Սաղմոսարան,
Չորս գլուխ Ավետարան,
Ութը կարգ շարական.
Երեք բևեռն է Քրիստոսի,
Բարեխոսությամբ սրբո կուսի,
Էլի կայնի դեմ Հիսուսի:
Կուսի անունն էր Մարիամ,
Բևեռն էր Հիսուսի զորավոր,
Գովամ զանուն հրաշավոր.
Մեկն՝ Ատոր,
Մեկն է Կատոր,
Մյուսն՝ զորավոր Կաթնատոր,
Պահապան և օգնական
Եղիցի ինձ մինչ առտուն:

ԲԱ, 460/Վան

294

Գլոխսի դնեմ բարձին,
Հոգիսի տամ Աստըծուն,
Բարի հրըշտակ դուն պըհե,
Չար սատանան չըխաբե:

ԲԱ, 470/Դիարբեքիր

295

Գլոխ բարձ դնիմ,
Բարձս սուրբ գերեզման դնիմ,
Հոգիս քու սուրբ ձեռքը կավանդիմ,
Մայրիկ Աստվածածին, ամմեն:

ՀԱԲԱ, FFII: 2254, 06/ Ջավախք-Ուչմանա

296

Գլուխս բարձի տրի,
Հոգիս էմենեք տվի.
Հոգիս, չվախենաս՝
Մեռոնած իս, կնքած իս,
Սուրբ ավազան մկրտած իս:

ՀԺՀ VIII, 95/ Դրիմ

297

Գլոխս դրի բարձին,
Հոգիս տվի պահապան հրեշտակին.
Կեսգիշերին, մեջ գիշերին,
Հավախոսուն, դիմալուսուն՝
Երկնավոր թաքավորին,
Թասլիմ էրի իմ հոգին,
Ես մտա մահին գերեզմանը:
Թե քնիմ, թե մեռնիմ, թե նախախեմ՝
Հոգիս գիրկդ ավանդեմ, Աստվածածին:

ՋԲ, 9/Ջավախք
ՀԱԲԱ, FFI: 7522, 01/Գյումրի

ՀԱԲԱ *ունի հետևյալ տարբերակումները.*
1 վրա բարձին:
2 Անխոսել, անխոստովանել:
4 Բարի լսին:
5-6 *արանքում ունի հետևյալ հավելյալ տողը.*
Իմ պահապան հրիշտըկին:
7 մտա տեղս գերեզման:
8 թե նախախեմ *չիք:*
9 Աստվածածին *չիք:*

298

Մտա ի գերեզմանս,
Քաշեցի հողն ի գլուխս.
Տեր Աստված, թե մեռանիմ՝
Հոգիս ձեռքդ ավանդիմ,
Թե քնանիմ՝ դու զարթեցնես:

Ա, 1895, № 44/Ախալցխա-Ծուղրուտ

299

Մտա ի տիդս[37], ի գերեզմանս,
Անխոսիլ, անխոստովանիլ.
Անմահ մեռիլ իմ,
Անգերեզման թաղվիլ իմ.
Անքառամ փսակին,
Լուսեղեն դրախտին,
Քրիստոսի տիսին
Արժանի ըլնիմ:

ԹՄԿ, 15/Թիֆլիս
ԱՀ, XI, 35/ Բորչալու-Լոռի

7 ԱՀ *չիք:*

300

Ահա մտա զանկողին գերեզման,
Մեղա՛, մեղա՛, հազար-հազար,
Կաքնիկ աղպուր, քարե տաճար,
Ես եմ Աստուս լիլի պաճառ,
Աստված էնէ խաչ ու տաճար:
Տարին կորթ-կորթը խաչեցին,
Ես ան խաչին մասեն գուգեմ.
Ջօր ու գիշեր դատումս կտռեր է,
Տարածս երկու կանգուն շալ պիտենով,
Ամանաքը տալ պիտենով:

ՋԲ, 9/Ջավախք

301

Ըհը՛ մտա ես գերեզման,
Գլուխս բարցի վրան,
Մարմինս տվի իմ գողնքին,
Հոգիս՝ պահապան հրեշտակին:
Մեղա՛, մեղա՛ հազար հազար,
Ես քանդեցի հոգուս տաճար,
Եղա հազար մեղաց պատճառ.
Թե քնիմ, թե մեռնիմ,
Հոգիս գիրկը կավանդեմ
Երկնային թագավորին,
Իմ կենարար բարերարին,
Կես քըշերին, մեջ քըշերին,
Հավախոսին, լուսադեմին:

ԱՀ XI, 35/ Բորչալու-Լոռի

302

Գլուխս դրի բարձին,
Հոգիս տվեցի պահապան հրեշտակին.
Մե թիս՝ Հիսուս, մե թիս՝ Քրիստուս,
Գլխավերևս՝ պահապան հրեշտակ:
Խաչապաշտ եմ, ամեն, Հիսուս,
Մայրամ, սուրբ հայր Հովսեփ,
Խելքս, միտքս, մարմ[ն]ինս առնես,
Սուրբ ձեռքերիդ տակ պաշտպանես
Ամենայնիվ, հոգիդ սուրբ, Մայրամ:

ՀԱԲՍ, FFVIII: 0197, 02/Ջավախք-Մեծ Խանչալի

303

Գլոխս դնիմ բարձ,
Հոգիս՝ .յարքայություն,
Մարմինս՝ գերեզման.
Բարձս է փուշ,
Դոշակս՝ քար,
Յորղանս՝ հող:
Մեկ դեմ՝ .Յիսուս,
Մեկ դեմ՝ Քրիստոս,
Արընթաթախ խաչելություն սրտիս վրա:
Հանգավ ճրագ,
Անցավ չար,
Ջարթիր, պահապան հրեշտակ,
- Ես .յերդըմցընեմ զքեզ .Յիսուս կենդանի:
Անիրավ չար,
. Յիջի անդուդք,
Գնա դժոխք:
Տե՛ր, չեմ մտածի չորս վաղջան՝
Մայ, դադաստան, դժոխք և .յարքայություն:

ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի

304

Դոշակս՝ գերեզման, սավանս՝ պատանք,
Յորղանս՝ հող, բարձս՝ փշփշանք.
Սաղ սեմքս՝ սուրբ Աստվածամար,
Սոլ սեմքս՝ հայր Հուսեփ.
- Դուք ինձ օգնեցեք:

ՀԺՀ, VIII, 98/Ղրիմ

305

Աստված՝ Աստված է,
Աստված ջշմարիդ է.
Ահա մդա կերեզման,
Հոքիս քեզի էմանեք:

Փորքշեյան1971, 95/Նոր Նախիջևան

306

Հանսա մտանք գերեզման,
Հոգիկս խըչին կուտամ.
Հոգիկս անկածը արթուն պահես,
Տե՛ր մեղա՛, Տե՛ր ողորմյա:

ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, I-5/ Մալկարա

[37] Անկողին /ծան. բանահավաքի/:

307

Մտա տեղ կողին.
Խոսքով մեռել եմ,
Անթաղ կենթանի,
Անմախ մահացու:
Տե՛ր, տու ողորմաս
Իմ պազում մեղաց,
Հակամա մեղաց:

ՀԱԲՍ, FFI: 3859, 02/Վան-Անձակ

308

Կատարյա մարիկ,
Կատարուկս քուրուկ,
Հրըշտակ աղբրուկ,
Հոգիս քեզ ամանաք,
Մինչև առավոտ լուսո:

ԳԲՍ, 643/Սեբաստիա

309ա

- Հայրան Օսեփ, մե ծառ տնգիմ,
Քառսուն տարի բերնով ջրիմ,
Շուշա շաքրով ենտով պտղիմ,
ենտով ճարիմ արքայություն:
Իմ պարուն տեր, անումդ ի՞նչ է.
- Իմ անումը սուփ Սարքիս է,
Վուրթուս անուն Մարտիրուս է:
Պողոս, Պետրոս, Անթանիոս,
Հենց պլպլաս՝ բաց ծիրանոս:
Երգնքի դռնիրը բաց է,
Աստուածածին վեր է չոքած,
Ծիծն ու էրես արուն եղե.
Առուտվանը ժամն է բարին,
Ով որ հասնիք,
Իրեք, իրեք ծունդր դնիք,
Վուչ հուր ննգնիք,
Վուչ ջուր ննգնիք,
Վուչ ձեր միղքին հարցումս ըլի:

ՀԱԲՍ, FBI: 1804, 01/ Թիֆլիս

309բ

Պողոս, Պետրոս, Անթանիոս,
Գերեզմանի տերն է Քրիստուս.
Իրան արած խաչն էր ուսին,
Հինգ պլպլան վարթ ծիրանին,
Իւ գուչգուչե Գաբրիելին:
Էգեղեցու դուռը բացբաց,
Աստուածածին վեր էր չոքած,
Ծիծն ու էրեսն արուն էղեր:
Ով էս ասե առչի գիշիր իրիք բերան,
Վունց հուրը, վունց ջուրը ննգնի,
Վուչ իր միղկին հարցումս ըլի:

ԹՄԿ, 15/Թիֆլիս

310

Պողոս, Պեյյոս, սուպ Մարտիրոս.
Պողոս, Պեյյոս էրթային անցան,
Պոստան խաչին դռնեն անցան:
Ես ալ ունիմ հրըշտակաց
Մոմն ի ձեռին, խույն ի գոտին,
Ավետարանն աջիյի թևվին,
Կերթա կըյնի սուպ տաճարին:
Մայյամ մար սուպ տաճար պառկեր.
- Մայյամ մա՛ր, քու՞ն ես, թե արթուն:
- Ես ոչ քուն եմ և ոչ արթուն:
- Մայյամ մա՛ր, թեվիտ ներքև
Պուտ մը ջուր կը կաթե:
- Իեով օր ան ջուրը խմե՝
Արդարը թռի կանցնի,
Մեղավորը հուրը կանցնի:

ԳԲՍ, 642/Սեբաստիա

311

Պողոս, Պեյոս, Ընտանոս,
Ալի, Վալի մեռելոց.
Ալի, Վալի գերեզմանին
Գետնին տապանն իջեցուցին,
Գետնին վրա հաստատեցին,
Ելան լեռն Մովսեսին:
Մովսես գնաց աշակերտին,
Իշտե եկավ Հիսուս որդին,
Ան խըրեղեն խաչելություն.
Ան խաչը՝ խաչ է մում եղեր,
Ան պատըրագը՝ պատըրագն է լուսեղեն:

ԱԱ, 56/Կիլիկիա-Այնթապ

312

Հազարական Ստեփանոս,
Հազարումեկ Աստվածածին,
Մըջ ֆռանկաց՝ Պողոս-Պետրոս,
Հաղբակա Բարդուղիմոս,
Դիարբեքիրա Սուրբ Կիրակոս,
Էն գերեզման, ինչ էլավ լուս՝
Մարմնավոր արժան անես մեղավորս:

ՀԱԲՍ, FAV: 5945, 02

313

Մեղա՞, մեղա՞, Տե՛ր քե մեղա,
Ճգնավորաց գետ Հորդանան.

Անկա, Սառա՛, անկա, Մարթա՛,
Վաղվան օրըս մորմես եղա,
Բուք մարմինս կրակն էրցա,
Լուս հոգիկս խավարեցա.
Տե՛ր, մեղա՞, Տեր ողորմյա:

ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, I-5/ Մալկարա

314

Տե՛ր, մեղքս շատ է քընց սարը, քընց ծորը,
Քընց քարը, քընց գլխուս մազերը,
Երկնուց սուն է,
Սատանուց բուն է.
Տե՛ր, դու ազատ էնես աղքատ հոգիս,
Չեռքդ վրայես չքաշես:

ՋԲ, 8/Ջավախք

315

Իմ մեղք շատ ի քընց ավազ ծովու,
Քընց գետն ի գնեն.
Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ,
Ջորն ասեմ, զորն խոստովանեմ:
Խացն ի խավոց խորմեղեն,
Աստված ունենք մե ապավեն.
Աստվածասեր Մայր կույս,
Ինչ որ գիտես՝ մե ուսու,
Դառն ի դժոխքից մե ընցու,
Մեղաց տոպրակ խլըսցու,
Խոգյուս խրըշտակ ուրախցու:

ԷԱԺՋ, 23/Վան

316

Սուրբ Օվանես, լեռեն կուգաս,
Սաղմոսը քաղելեն կուգաս:
Սաղմոսը դրեց քարին վրան,
Վեր նայեցավ՝ նշան տեսավ,
Վար նայեցավ՝ սասանեցավ.
Նշանը նստի քուֆթ կպանի
Ալ ու կանանչ չիպիլտիքով,
Էս թաղեցեք փատե նաշով.
Փատը փտըտած փտտեցուներ,
Էս թաղեցեք օսկի նաշով,
Օսկին հալման հալեցուներ:
Հայ, հոռոմ կըսկըծացին,
Ոտքի տակեն ջուր չ'անցնի:
- Մարիամ Մաղթանի, ինչու՞
մենակ պառկիլ իս:
- Ես մենակ չիմ,
Քրիստոս գլխուս տակը,
Տասներկու առաքյալ չորս քովս,
Անուն Հիսուսի Քրիստոսի:

ՀԱԲՍ, FFIII: 1985, 01/Նոր Նախիջևան
Փորքշեյան1971, 95/Նոր Նախիջևան
ՀԱԲՍ, FBI: 1825, 01/Ղրիմ

1-13 ՀԱԲՍ, FBI *չիք:*
10 Փորքշեյան փադե նաշով:
16-17 տողերի արանքում ՀԱԲՍ, FBI ունի* Կալը /գայլ/ ոտքիս տակը *հավելյալ տողը:

317

Տերն ի տապան տրին,
Թևն ի վերեն տրին,
Ան խաչն էր լուսեղեն,
Պատարագն էր մոմեղեն,
Աթոռ տրին գլխուս վերեն,
Ուրար քեշին մեջքիս վերեն,
Տարին ի կուրծըս կապիցին,
Օխտըն աշակեր ինձ ասին,
Առին, առաջնորդ արին:
Քուն ես՝ քընաներս,
Արթուն ես՝ չը վախնաս.
Ով քեզ իրեք անգամ հիշի՝
Ասվազ աներ կյուներեն չը հիշի:

ՀԱԲՍ, FBI: 5267, 01/Արարկիր

318

Էլա Ուռնայու կալը,
Տեսա հրըշտայնուն գալը.
Փուտ մարմինս կրակեցավ,
Նշխարք հոգիս խավարեցավ:
Էրկան ճամփա եմ գնալիք,
Չունիմ պաշար հետ տանելիք:

ԳԲՍ, 643/Սեբաստիա

319ա

Երնեկ, երնեկ զէն տարին,
Երուսաղեմ շինեցին,
Շինեցին, թամմեցին,
Անուն Հիսոս անվանեցին:
Եկեղեցիմ՝ կա վերև մե,
Հրմալ սիվտակ, քընց եղևնիկ,
Որ երեք բերան զէնի հիշա՝
Խուր ընկնա՝ չը խուրուրի,
Սուր ընկնա՝ չը սասանի,
Աչքն ի դժոխք չընկնա,
Արքայութենին արժան էնի:

ԱԳՋ, 73/Մուշ-Բուլանըխ

319բ

էրանիկ էր էն տարին,
էրուսաղեմ զուքեցին,
Օսկի կամար կայնեցուցին.
Հիսուս ի քուն դեռ տաճարին,
Գիշեր ուզեր Հիսուս որդին,
Շորորեր խաչը շենքին,
Տեղ բուսներ ծառ խնկենին:

ՋԲ, 8/Ջավախք

319գ

էրնա՞կ, էրնա՞կ էն տարին,
.Յերուսաղեմ շինեցին,
Պտղածառը տնկեցին,
Քրիստոս վրեն բազմեցուցին:
Մայրամ նստել սուրբ սեղանին,
Աղոթք կ'էնե սուրբ տաճարին.
Մեկ անարատ լուսըմ տեսա,
Մահվան բալուլ բարով տեսա:

ՀԱԲԱ, FFI: 7518, 07/Գյումրի

320

էս գիշեր դուս էլա,
Մե անարատ լուսըմ տեսա,
Եփ որ տեսա՝ զարհուրեցա,
Մահվան բալուլ բալուլվեցա:
Երկինքը պարզ է, ծիրանի,
Մայրամ նստեր սուրբ սեղանի,
Աղոթք կ'ենե սուրբ տաճարի,
Հրեղեն օրթին է գրկե:
Վեվ օր հիշե՝ կամքով հիշե,
Դատաստանին մեղքը չը հիշե:

ՋԲ, 8/Ջավախք

321

Կես գիշերին դուս էլանք,
Մեծավորի խաչը տեսանք:
- Հայր սուրբ, դու վե՞վ ես,
Մենք քրիստոնյա ենք:
- Ու՞մ հետ խոսաս:
- Վարդապետի:
Հասիր, հասիր ինձանից,
Դուս գալող մսմար լինի,
էրթիկս գալող քար կլինի:
Թե քնած իս, թե զարթնած իս,
Հոգուդ ապաշխարանք համարիս,
Փառիս, փառավորիս, պայպանվիս, ամեն:

ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի

322

Երուսաղեմ շինեցին,
Շինեցին, ոսկի կանթեղներ կախեցին,
Աստվածածնից խնդրվեցին,
Երեք վանք շինեցին,
Անուններ դրեցին.
Մեկ՝ Շողակաթ,
Մեկ՝ Հռիփսիմը
Եվ մեկն էլ Գայանե:
Աղոթք կանեմ ութը մատով, երկու բթով,
Մաքուր Մարիամ Աստվածածնի
ծծի կաթով:
Ուս ուսին,
Տախտակը փակ Քրիստոսին,
Գավազան Գաբրիելի,
Քնար Դավիթին.
Իրեք պիպեռ կաթ տուր Քրիստոսին,
Մեկը զընի չար ճանապարհին,
Մեկ զընի ավեր բանին,
Մեկ զընի չար մտքին:

ՀԱԲԱ, FFIV: 5725, 02

323ա

Իմ Տեր եկավ ամպուխաղաց,
Չորեք դիմաց աշխարի դողաց.
Գաբրիելական փող փչեցավ,
Մեղավորներ քզար դողան,
Արդարական ծառ ծաղկեցավ...
Մարիամ չոքի դիլակ կընե,
Աստուծո կերկրպագե:

ՀԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ Իբ, № 1

323բ

Իմ Տերն եկավ ամպախաղաց,
Աշխարհ սարսեց չորեքդիմաց.
Գաբրելական փողի ձենից
Մեղավորի հոգին դողաց.
Դրախտենական ծառ ծաղկավ,
Անմահութքի հոտ բուրավ:
Մարիամ չոքեր դիլաք կանե.
Աստված հըմեն հայ քրիստոնեին
Մեղքը թողնե, արժան անե
Կաթնաղբյուրին, լույս տաճարին:

ԱՄ, 256

323գ

Մեր Տերն եկավ ամպով խաղաց,
Չորեքկողմ աշխար դողաց,
Եկավ նստավ աթոռ փառաց,
Չեն տվեց հրեշտակաց.
Եկավ Պողոս, եկավ Պետրոս:

Որ երեք բերան զենք հիշա՝
Խուր ընկնա՝ չը խուրուրի,
Սուր ընկնա՝ չը սասանի,
Աչքն ի դժոխք չընկնա,
Արքայութենին արժան էղնի:
ԱՀՋ, 73/Մուշ-Բուլանըխ

324

Մեր Տերն երեկ, ամպը գոռաց,
Ելավ նստավ աթոռ փառաց,
Աստվածամոր սիրտը ցավաց:
Աստվածամար քնացավ,
Երազ տեսավ՝ զարհուրեցավ,
Ելավ նստավ, մեկուն չըսավ:
- Մի՛ վախնար, ինծի ըսե,
Ես իմ կամովը խաչ կելլեմ,
Խաչափայտս ես կը շինեմ,
Գլխուս ֆեսը քագ կը շինեմ,
Հուրը ձգեմ՝ հուր չի տանի,
Ջուրը ձգեմ՝ ջուր չի տանի:
Հիշվի դատաստանս ու մեղքս:
ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, I-5/ Մալկարա

11-12 տողերը բնագրում՝
Հորը ձգեմ, հոր չի տանի,
Հուրը ձգեմ, ջուր չի տանի,
ուղղ. ըստ իմաստի:
13 *փխ.* Չհիշվի մեղքս դատաստանին:

325

Մեր Տեր էրի համբ խաղա,
Չորս կողմ ախշարք հառջև կը տեղա:
Ասաց. Պերեք իմ ծիրանին,
Խագնեմ, էրթամ խասնեմ պատարագին:
Պերին ծիրանին,
Գյնաց խասավ չուր կես ճամբխին՝
Չար թշնամին տեմ առեց.
Աչքեր պըճնակռավ իրես,
Լեզուն պապանձավ պերան,
Չեռքյեր զըմըռվան հիտև,
Ոտքյեր պիվըռվան գյետին,
Աստված թու ճար չէրաց վեր էն:
ՀԱԲԱ, FAV: 3093, 01/Ոշտունիք

326

Ասֆած, քավյալս մեղավոր[38].
Դեր Իսուս Քրիստոս ասֆած,
Դուն ամմենքըս խեթեպելեյեն
ազըտես ըս գյիշեր,
Չար սատնի օդգյը կըյրիս մեր շեմիքեն,
Օր գյիշերս ամփորձ անճընինք...
Քու սուրբ բարի լուսուտ տեսուն
արժանի էնես,
Առտվա ժամուտ-պաշտումիտ լայեխ էնես...
Դուն ասնիս, դուն օղորմիս
ըն խղճուկներուն,
Վեվ օր կտոր մի խսիր յա փալաս
չունի տակը ցգյելու,
Յա վրան առնելու...
Օ՜խ, խետետ առնիմ, էրկնավո՜ր Ասֆած,
Աճափ քանի՞, քանի ֆուխարաներ
Իրկունս անոթի, ծարավ պիտի
պառկին ու չարչըրվին...
Ընոնճ ասնիս, ընոնճ օղորմիս,
Ընոնճ բանաս քու օղորմուդանստ դուռը:
Օղորմուդանստ խուոյական, Ասֆած.
Ասֆած, էռեջ ընոնճ ասնիս,
Սոռը իմ տուննուտեղս,
Մալս, մուլգյըս,
Չոլուղս, չոճուխս
Ազըտես գյիշերվան հազար ու
մեկ փորձանգներեն...
Դե՛ր, դու անգյիսդ քուն տաս միգի,
Դու պահապան կայնիս մեր գլխուն վրա,
Օր մուխեննեդին ձեռգյը միգի չի դիպի...
Օյռնալ Դեր մեր, Չար մեր էրկինս...
«Բազմավէպ» 1902, № 9-10, 480/Բալու

327

Սուրբ եղիցի,
Հավատամ, խոստովանիմ
մայրիկ, Մայր Աստվածածին,
Ինչ խըղըր սուրբ ու սրբորեք կա.
Կանանչ մեռոն,
Հավատամ, խոստովանիմ
Քըզի, քու ջանին,
Քու տան, քու տեղին,
Պահապան էղնիս իմ բալեքներուն:
ՀԱԲԱ, FFVIII: 1825, 02/ Շիրակ-Հայկավան

328ա

Օդջում Մայրամ անապատին,
Ակն ի բոլոր պատարագին,
Մայրամ ծնավ, բերեց որդին.
Բուրդ խանձելով փաքըքեցին,
Գետ Հորդանան մկրտեցին,
Սուրբ Կարապետ քավոր էրեցին,

[38] 1 տողը, ըստ բանահավաքի՝ **Ասֆած քաւեա զիս զմեղաւորս**, կրկնել երեք անգամ:

Ամեն Իսուս կոչեցին:
Գլոխս ի բարձ,
Բարձս ի գերեզման,
Հոգիս քեզի տամ:
ՀԱԲԱ, FFII: 1692, 03/Շիրակ-Լանջիկ, 2255, 01, 2255, 02/ Ջավախք-Ուչմանա. ՀԲՆ I /Շիրակ-Լանջիկ, II/Աշոցք-Ղազանչի III / Շիրակ-Փանիկ

1 ՀԱԲԱ 2255, 02 Օղչում, օղչում Աղաբեկին:
ՀԲՆ I Յիսուս, Մայրամ:
2 ՀԱԲԱ 2255, 01 ակներ,
ՀԲՆ I բադնի:
3 ՀԱԲԱ 1692, 03, 2255, 01, 02, ՀԲՆ I Իսուս ծնավ:
4 ՀԱԲԱ 2255, 01 խանձուրով:
5 ՀԱԲԱ 1692, 03, ՀԲՆ I, II, III գետ որ տարան:
ՀԱԲԱ 2255, 01 գետ Հորդարան:
ՀԱԲԱ 2255, 02 գետը տարան:
6 ՀԱԲԱ 2255, 01, 02, ՀԲՆ II սուրբ Օվանես էղավ քավոր:
ՀԲՆ III սուրբ Կարապետ էղավ քավոր:
7 ՀԱԲԱ 2255, 01 *չիք:*
ՀԱԲԱ 2255, 02, ՀԲՆ I, II անուն Իսուս կոչվեցավ:
8-10 ՀԱԲԱ 2255, 02, ՀԲՆ I, II, III *չիք:*
ՀԱԲԱ 2255, *01 փոխարենն ունի*՝
Մեկ դեն Իսուս,
Մեկ դեն Քրիստոս,
Խաչելություն սրտիս վրա դրվեցավ, ամեն:

328բ

Մայրամ նստե անապատին,
Ծնավ բերավ Հիսուս որդին,
Բուռդ խանձուրին փաթաթեցին,
Համպավին մսուր դրեցին,
Հիսուս Քրիստոս անուն գովեցին:
Տեր մեր, Տեր մեր Հիսուս
Քրիստոս աստված:
ՀԱԲԱ, FFVI: 3562, 01

329ա

Օղջում, Մայրամ, դու կուս իս,
Հոգով, սրտով դու լուս իս,
Լուսեղեն կամար իս կապի,
Հոգիս քեզ համար իս պահի.
Տու ինձ իմաստություն,
Գնամ գործիմ բարություն,
Հոգիս տանիս արքայություն:
ՀԲՆ I/Շիրակ-Լանջիկ
ՀԱԲԱ, FFII: 1693, 03/ Շիրակ-Լանջիկ
ՀԲՆ II/ Աշոցք-Սարագյուղ ՋԲ, 7/Ջավախք

ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ, I բ,№ 1
ՀԲՆ III/Շիրակ-Փանիկ

1 ՀԱԲԱ, ՀԲՆ II, III. Յիսուս Մայրամ:
ՋԲ, ԳԱԹ Աստվածածին:
2 ՀԲՆ II, III հոգով սրբով:
ՋԲ, ԳԱԹ հոգով մարմնով:
3 ՋԲ կապեր ես կամար:
ԳԱԹ քի կամար իմ պահի:
4 ՋԲ հոգիս պահեմ քեզի համար:
ԳԱԹ զիմ հոգին քի համար իմ պահի:
5 ՋԲ դուն տու ինձի իշխանութեն:
ԳԱԹ *չիք:*
6 ՀԱԲԱ *չիք:*
ՀԲՆ II, III, ՋԲ, ԳԱԹ էրթամ:
7 ՀԲՆ III *ունի* չերթամ գործիմ չարություն *հավելյալ տողը:*

329 բ

Հիսուս Մայրամ, դու կուս ես,
Հոգով, մարմընով լուս ես,
Դու ես երկնային կամար,
Կապել ես օսկի քամար,
Հոգիս պահել քեզի համար:
Ունիս իշխանություն,
Հոգիս տանես արքայություն:
Մտա գերեզման,
Քաշեցի հողն երեսիս:
ԳԱԹ, Ս Քամալյանի ֆոնդ, III-15/Շուլավեր

329գ

Մարիա՛մ, որ կույս իս,
Հոգվով, մարմնով որ լույս իս,
Հոգիս պահեցի քեզի համար,
Տար, դժոխքի դռնեն անցուր
Ու դրախտին դուռը ցուցուր:
ՀԺՀ VIII, 101/Որիմ

330

Ասվածամա՛ր, կույս իս,
Մեղավորաց հույս իս,
Անդադար բարեխոս իս,
Հոգիս քեզի կնքահար.
Սուրբ մեռոնով սրբե զիս,
Ամենայն չարե, պելայե փրկե զիս:
ՀԱԲԱ FBI: 1824, 02/Որիմ-Սիմֆերոպոլ
FFIII: 1985, 02/Նոր Նախիջևան
Փորքշեյան1971, 95/ Նոր Նախիջևան

331

Մայրամ, դու կույս ես,
Հոգով, մարմնով լույս ես.
Մայրն ես բարի որդոց,
Փրկիչ, փրկիր ամենոց:

ՀԱԲԱ, FFVI: 3564, 00

332

Աստվածամար, դուն կուս ես,
Դրախտին մեջը լուս ես.
Սուրբ գավազանով պահես մեզ,
Օրթնած ճուրով վլաս մեզ:

ԱՀ IX, 162/Կ.Պոլիս

333

.Յիսուս. Յոսեփ, ո՛վ Մարիամ,
Սիրտս ու հոգիս քեզ կտամ.
էրթամ գործիմ բարություն,
Հոգիս տանիս. յարքայություն:

ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի

334

Աստվածածին, կույս Մարիամ,
Հոգով, մարմնով լույս, Մարիամ,
Լուսեղեն կամար ես կապել,
Հոգիս քեզ համար ես պահել:
Դուն ինծ տուր իշխանություն,
Իշխանություն, կարողություն՝
Գնամ գործեմ շատ բարություն,
Հոգիս տանես արքայություն:
Արքայության դռները բաց,
Քո ծառայիդ արա իմաց.
էլ ճար չունեմ աղաք գնալու,
Մազե կամուրջն անցկենալու,
Հիսուս որդուդ ջուղաբ տալու:

ԱՀ XI, 36/Բորչալու-Լոռի

335

Մայրա՛մ, Մայրա՛մ, դու կույս ես,
Հոգով, մարմնով դու լույս ես.
Լուսեղեն կամար ես կապե,
Հոգիդ մեզ համար ես վառե:
Մայրամ նստե սուրբ սեղանին,
Աղոթք կանե սուրբ տաճարին:
Տաճարի դռներ բացվեցավ,
Ոսկի օրոցք դուրս եկավ,
Միջի տղեն զարթնեցավ:
Կաթնե աղբյուր, քարե տաճար,
Աստծու հետ անենք վճար,
Աստվա՛ծ, դու անիս մի լույս ու ճար:

ՀԲՆ/Շիրակ-Լանջիկ

336

Մարիա՛մ, ողջու՛յն քեզ, կուս ես,
Հոգով, մարմնով լուս ես.
Հագել ես լուսեղեն կամար,
Հոգիս պահեմ քեզի համար:
Տուր ինծի իշխանություն,
Հոգուս գործեմ բարություն.
Գրկել ես լուսեղեն որդի,
Մեջքին կապել օսկի գոտի:
- Մարիա՛մ, քու՞ն ես, թե զարթուն...
- Ոչ քուն եմ, ոչ զարթուն.
Քուն էղա՝ էրած տեսա,
էրծիս վրա զարհուրեցա.
Բեթղեհեմ քաղաք ընծայեցա,
Խանձարուրով բալուլվեցա,
Անուշ եղով շաղվըվեցա,
Գլխուս վրա քավորվեցա:
- Մի ետ զարթի, Մարիա՛մ, դու կուս ես
Հոգով, մարմնով լուս ես...
Գետ Հորդանան մկրտեցին,
Փշով երեսը ծեծեցին,
Խաչվեցավ խաչելատոն,
Վրան առավ ծիրան փիլոն:
Մարտիրոսաց չարչարություն,
Իմ մեղացըս թողություն:
Մեր Տերը խաչը հանվեց,
Խաչին վրա չարչըրվեց.
Խաչեն իջավ դժոխքն ավրեց,
Ադամ, Եվա դժոխքեն հանեց:

Ա/Ախալցխա-Ծուղրուտ

337ա

Մայոմ մա՛յ, Աստըծու մայ,
Դուն ինչ գիտես՝ ընձա ուսու,
Սըյտիս վեյվեն չոյը կալցու,
Չոր սատանան անդունդն անցու,
Ջիս արքայութըն դուռը մնցու:

ԱԱ, 48/Հաճն

337բ

Մայյամ մա՛ր, Աստվածամար,
Հոգիս կուտամ քեզի համար.
Իմ չար միքքս ընծի մոռցուր,
Բարին միքքս ընծի բուսուր,
Տար դժոխաց դուռնեն անցուր,
Արքայության դուռը ցցուր:
Մայյամ մար, Աստվածամար
Քնացավ, էրազ տեսավ,
էլավ նստավ զարհուրեցավ,
Լուսը լուսցավ՝ ցնծայվեցավ:
Ասվածորդին խածրուրը փաթեցին,
Տարին գետ Հորդանան, մկրտեցին,

Անունն էր Հիսուս Քրիստոեոս,
Աննըվեցավ, կնքըվեցավ:
Մայյամ մար նստեր սուպ սեղանին,
Աստծու գիրքն իր բերանին
Անի առեր, կարգն է կաթեր,
Օսկուն բուրվար վեր է առեր:
ԳԲՍ, 637/Սեբաստիա

338ա

Աստվածամա՛ր, կամիս կատար,
Ուխտ ունիմ քեզի համար.
Ինչ խնդրեմ նե՝ ան կատարիս,
Հիսուս Քրիստոսի անունով՝
Չարը խափանիս, բարին կատարիս:
ՀԺՀ VIII, 101/Ղրիմ

338բ

Աստվածամա՛ր, կամիս կատար,
Աղոթք կանիմ քեզի համար.
Ինչ խնդրեմ նե՝ ան կատարիս,
Չար խորհուրդը բարին անիս:
Աստվածամա՛ր, դու սուրբ կույս իս,
Անդադար մեզ բարեխոսիս:
ՀԺՀ VIII, 100/Ղրիմ

338գ

Աստվածամա՛ր, օսկի կամար,
Ծունկ եմ չոքեր քեզի համար,
Աղոթք ընեմ հոգուս համար:
Հիսուս օրտտի, խաթերս համար,
Ինչ հրամմես՝ ան կատարես,
Խնդիրքս պարին կատարես:
ԱՀ IX, 162/Կ.Պոլիս

339

Աստվածամա՛ր, օսկի կամար,
Հոգիս կուտամ քեզի համար.
Հոգին սրբու դուն էիր տաճար,
Դուն միացիր օրբուն համար.
Դուն բարեխոս և անդադար,
Իմ սուրբ հոգիս քեզ զենեհար:
ԳԲՍ, 642/Սեբաստիա

340

Աստվածամա՛ր, կամար, կամար,
Աղոթք կանիմ քեզի համար.
Իմ մեղացս տուր թողություն,
Մամայիս, պապայիս՝ առողջություն:
ՀԺՀ VIII, 101/ Ղրիմ

2 Քեզի համար աղոթք կանիմ, *ուղղ. ըստ հանգակցության:*

341

Աստվածամա՛ր, կամքդ կատար,
Չարը խափանե, բարին կատարե:
ՀԱԲՍ, FFIII: 1981, 01/ Նոր Նախիջևան
***Փորքշեյան 1971,** 94/ Նոր Նախիջևան*

342

Աստվածամա՛ր, կամար, կամար,
Ծունկ եմ չոքեր քեզի համար,
Աղոթք եմ ըրեր հոգուս համար:
Ես մեկ մեղավոր մարդ մըն եմ,
Երկար ճամփա երթալու եմ.
Բաժակ չունիմ հետս տանելու,
Երես չունիմ վեր նայելու:
Մարիամ նստեր սուրբ սեղան,
Աղաչանք կուտար Աստուծո:
Աստվածամա՛ր, դուն կույս ես,
Աշխարհի բարի լույս ես,
Անդադար, բարեխոս ես:
Աստվածամա՛ր, օրհնե մեզ,
Օրհնած ջրով ցողվե մեզ,
Օրհնած ջրով ցայե մեզ,
Չար փորձանքեն պահե մեզ:
ԲՍ, 757/Մալկարա

343

Աստվածամե՛ր, լուսով կամար,
Հիսուս որդուդ խաթրի համար
Իմ չար մեղքիցը ինձի դարձրու,
Հոգիս դրախտին արժանացրու,
Չար մեղքերս տար կորցրու,
Քու գիտեցածը սըվորցրու,
Լուս հոգուցդ ինձ լուս տու,
Հաստատ հավատ, հաստատ հուս տու:
Սուրբ կաթը Մարիամ կուսին,
Անգին արիւնը Տեր Հիսուսին,
Ծաղիկ դառնան, թող փնջվին,
Բալքի մեղքերս ջնջվին:
ԱՀ XI, 36/Բորչալու-Լոռի

344

Աստվածամա՛ր, կուտաս կամար
Մեկիկ օրթուդ խաթեր համար.
Իմ գիտեցածս տար կորու,
Քու գիտեցածտ ինծի տու:
Աստվածամա՛ր, լուսին կամար,
Հրեղեն ծով ինծի հըմար.
Տա՛ր, դրախտին դուռը ցըցու,
Իմ հոգին հոն հանգստացու,
Լուս մտացետ ինծի լուսու,
Չար մեղացես ինծի դարցու:
Դրախտի դռվիքը բացին,
Արդըրները ճտվտացին,
Մեղավորները չոքան լացին.
Պաշար չունեմ հետս տանելու,
Մազե կամուրջ անցընելու,
Քրիստոսիտ ջուհապ տալու,
Ալ ճար չկա ետ դառնալու:
Տիրամա՛ր, Աստվածամա՛ր,
Լուս ես կապե կամար կամար,
Ես կը մեռնեմ քեզի հըմար,
Դուն տու ինծի իշխանութեն,
Հոգիս տանիս արքայութեն:

ՋԲ, 12/Ջավախք

345

Կուսին, կուսին, կամար կուսին,
Աշխարհն էգավ հոգուս համար,
Հոգիս տվի խաթրիդ համար:
Տե՛ր, ծյեռ միդա՝
Կնքուգ իմ, մեռոնուգ իմ
.Յիսուսի սուրբ ավազանով,
Ինչ որ գիտեմ՝ բալ, կորու,
Ինչ որ չիդեմ՝ սովրըցրու,
Դժոխքի դռնեն հեռեցու.
Թողեմ օթևանս,
էրթամ պառգիմ գերեզմանս:

ՀԲՆ/Շիրակ-Փանիկ

346

Ո՞վ Տիրամար, պահե զիս,
Խաչ գավազանը գրկիս,
Չգա պատե չարը յիս:
Շրթան հաղորդը պըռկիս
Ահա մտա մարս-գերեզմանս.
Դու քնեցնես, դու զարթեցնես,
Աղքատ հոգիս խավար գիշեր լուս հանես:

ՋԲ, 8/Ջավախք

3 պատեն, *ուղղ. ըստ իմաստի:*

347ա

Աստվածածի՛ն, օրհնե իս,
Օրհնած ջրով վլա իս,
Մաքուր բերնով մաքրե իս,
Սուրբ՝ մարմնով սրբե իս,
Ամենան չարեն փրկե իս,
Յարքաութանն հիշե իս:

ԳԲՄ, 642/Սեբաստիա

347բ

Աստվածամա՛ր, հող վիզիս,
Օրհնած ջրով ցողե զիս.
Հոգիս քեզի էմանեք,
Սուրբ աղոթքովդ պահե զիս:
Աստվածամա՛ր, դուն սուրբ կույս իս,
Անդադար մեզ բարեխոս իս:

ՀԺԳ VIII, 100/Պրիմ

347գ

Աստվածամա՛ր, մեղա քեզ,
Օրհնած ծրով լվա մեզ,
Սուրբ աղոթքով սրբե մեզ,
Ամենայն չարեն փրկե մեզ:

Սվազլյան 1959/Նոր Նախիջևան

348

Սուրբն Մարիամ, Մարիա՛մ,
Բարեխոսյա, Աստվածամե՛ր,
Ինը դաս սուրբ հրեշտակներ,
Լյուս գերեզման, լյուս գերեզման,
Բարեխոսյա, Աստվածամե՛ր,
Սուրբ պատարագներ,
Անճաճակ պսակներ,
Բարեխոսյա, Աստվածամեր:

ԲՄ, 331/Կեսարիա-Նիզե

349ա

- Մարիամ Աստվածամայր,
քու՞ն ես, թե արթուն:
- Ոչ քուն էի, ոչ զարթուն,
Երազ տեսա՝ զարհուրեցա.
Գետ Հորդանան մկրտեցա,
Չար հրեշքը զանսիմացա.
Ոդվին, ծեռվին կապեցին,
Փշով երեսը նխշեցին,
Գլխուն փշե թագ շինեցին,
Խաչափայտը բևեռեցին,
Մինչև դժոխքը ավերեցին,
Կապյալ հոգիքը ազատեցին:

ՀԱԲՄ, FBI: 2980, 13

5 *Հավանաբար՝ չար հրեայքը ընդդիմացան:*

349բ

- Մայր Մարյամ սուրբ Ասվածածին,
Քուո՞ւն ես մի, արբուո՞ւն ես մի:
- Ոչ քուն եմ, ոչ արբուն եմ.
Քնացա, տեսիլք մը տեսա,
Արթնցա՝ զարհուրեցա:
- Մի՛ վախիր, մի՛ զարհուրիր:
- Մեր Տերը պռնեցին,
Օքքը, ծառքը կապեցին,
Փերքին վրան պլլեցին,
Պուտ մը ճուրը խնայեցին,
Աղն ու քացախ խմցուցին,
Վա՞խ, միածին Հիսուս որդին:
Երկինքը պատռեցավ,
երկիրը շարժեցավ,
Լուսինը խափանեցավ,
Աստղերը վար թափեցավ,
Մարյամը դրախտն անցավ:
Ով այս աղոթքը գիտենա,
Օրը իրեք անգամ խոստանա՝
Վասը կանի ծնողաց,
Մեխկը չհիշվի դատաստանաց:

ԱԳ IX, 162/Կ.Պոլիս

349գ

- Մա՛յր իմ, գիշերը պառկեցա,
Մի երազ տեսա՝ խիստ վախեցա:
Մա՛յր իմ, դու՛ն մի վախիլ.
էկան հրեայքնիրը զի բռնիցին,
Վուտնիր, ձեռնիր բիբարեցին,
Միաբանով մսուր դրին,
Փշով երեսըս ծեծեցին:
Ով ասե, մեծ լսե,
Վուչ չար կտրե, վուչ թուր կտրե,
Վուչ դատե, վուչ դատաստանե:

ՀԱԲԱ, FBI: 1098, 01/Թիֆլիս

349դ

- Տեր իմ, ընձի ի՞նչ կասես:
- Ջիս բռնեցին, չարչարեցին,
Աստղփշով զիս ծեծեցին,
Քաղցրիկ մորս լացուցին,
Արուն քրտինք կոխեցին,
Երկինք, գետինք ցնծացին,
Լուսավորչու կանթեղ վառեցին,
Արընկվա զիս կոխեցին:

էԱԺՋ, 21/Բայազետ

349ե

Աստվածամեր, է մեր, է մեր,
Աղջիկս է մեր, քուն է եղեր,
Երազ տեսեր ու զարմացեր՝
Ինքն իր կամով խաչ է հաներ:
Խաչափայտը ես կշալկեմ,
Գլխուս ոսկին թագ կշինեմ,
Ջուրը ձգեմ, ջուր չտանի,
Չարը տեսնա, չար չտանի:
Սըրբ լուսն էկավ մեր երդիքը,
Մեջ երկինքն ու մեջ գետինքը.
Լուսեղեն սյունն էր սրտին,
Սուրբ Ավետրան էր գրկին,
Փեճկեր զմազեր, թափեր էջին,
Մեկիկ որդին էր վեր խաչին:
Ով որ էս աղոթք կարդա՝
Աստված էնոր մեղքը թող տա:

ՍԳԴ, 342/Քղի

349զ

- Օհա՛ն, Օհա՛ն Օսկիբերան,
Քրիստոս անցավ բարձր լեռան,
Չեն տվեց աշակերտաց,
Խունկ ճամբից վարդապետաց:
- Մարիա՛մ, քուն իս, քուն կեցի,
Արթուն ես՝ չը վախենաս.
Մեր Հիսուսե բռնեցին,
Փշով արին հանեցին,
Բամպըկով արին քաղեցին,
Լուս գերեզման շինեցին,
Օսկի գաւետիլ կախեցին,
Քրիստոս մեջը պառկցուցին:

ԲԱ, 470/ Դիարբեքիր

349է

.Յիսուս գնաց ճանապարհ,
Մայրամ կույսին՝
- Մայրամ մայրիկ, ի՞նչ կանիս:
- Ի՛նչ քուն իմ, ի՛նչ զարթուն իմ.
Չընչըխմասի էրազ տեսա:
-Պատմե, մայրիկ, քու էրազդ:
- Լալու բան կա,
Գալու բան կա.
Ութուն տարին, ութուն բերին,
Չեռքը, ոտքը վեր բերին:
Այս աղոթքը ասողը՝
Հուրը ըյնի, հուրը չէրի,
Ջուրը ըյնի, ջուրը չիտա,
Հանկարծակի մահ չունենա,
Հոգին էշտա առքաութին:

ՀԱԲԱ, FFIII: 2539, 02/Նոր Նախիջևան-Չալբըր

349ը

- Մոյրամ, Մոյրամ, Մոյր Աստուծո,
Քու՞ն ես մը, զարթուն ե՞ս մը:
- Օչ որ քուն եմ, օչ որ զարթուն եմ.
Գըշերին կեսը մեկ ելած տեսո,
Կրակ ընկա՝ չոյրեցո,
Տենիզ ընկա՝ չը խըտտվեցո,
Անտի տյունիոն կնացի՝ չը կորսնվեցո:

ԲԳ, 233/Սթանոզ-Էնկյուրիա

350

Աստվածածին մեկիկ է,
Օրտին առիր գրկիկ է,
.Յուր կը կանչեմ՝ հոն կը հասնի,
Ի՞նչ օղորմած սրտիկ է:
Աստվածածին արդար է,
Դատաստանե ճարտար է.
Դատաստանե լարվելուն՝
Խըզտե մեղացս տաֆթարե:
Աստվածածին մաքուր է,
Էնի մըզի մամ ու քուր է.
Դատաստանե լարվելուն՝
Կըսե՝ աղոթքիդ .յու՞ր է:
Աստվածածի՛ն, դուն կուս իս,
Մեղավորաց դուն լուս իս.
Արդար ջրով վլա մեզի,
Ըմեն չարեն փրկե մեզի:
Դրախտի ճամփան և դուռ կանանչ է,
Մեղավոր չընդունի, արդար կը կանչե.
Մեր գիցածե տար, քու գիցածե բեր,
Դժոխքի դռանն անցու մեզի,
Արքայության դուռե ցցու մեզի,
Բարի խորհուրդն ուսցու մեզի,
Տե՛ր, ես մեղա, դուն օղորմյա:

ԲԱ, 470/Դիարբեքիր

351

Անուն հոր և որդու և հոգու սրբու, ամեն:
է՛, մեռնիմ քեզի, բարի .յիրգուն,
Բարի Կիրակմուտ, բարի Հիշտեք:
Տեր Աստված, դու օղորմանաս,
Դու փորցընքներուց ազատ էնիս.
է՞յ, մեռնիմ քեզի կապուտ գոլավոր,
Կապուտ չադրավոր,
Դու անսուն, անգերան մեր վերև կայներ ես.
Դու օղորմանաս, գթաս,
Դու փորցընքներուց ազատ էնես,
Դու անփորցանք պայես:
Տեր Աստված, ես քեզ մեղա,
Դու ինձ օղորմանա,
Քու օղորմութենը անչափ, անքննելի է:

ՀԲՆ/Վարդենիս-Չախըռլու:

352

Կույս ամենօրշնյալ,
Լեր ինձ օգնական,
Ի ժամու մայվան,
Յիսուս պահապան:

ՀԲՆ/Շիրակ-Փանիկ

Բ. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 353-5(400))

ԼՈՒՍԱԲԱՑԻ

353

Լուսացավ, լուսացավ,
Լուսն է բարին,
Ծիտն է ծառին,
Հավն է թառին,
Բեդովլաքի քունն է տարի.
Դովլաբաու՛ր, վիկաց բանի:
Իրգնքի դռնիրը բաց էր,
Օսկե աթուռը դրած էր,
Քրիստոս վրեն նստած էր,
Լուսավուրիչը կանգնած էր,
Օսկե դալամը բռնած էր.
Մինձ ու պստիկ գրում էին,
Միղավուրները լալում էին,
Արթարնիրը խաղում էին:

ԹՄԿ, 26/Թիֆլիս

ՀԱԲԱ, FFIII: 2540, 03/ Նոր Նախիջևան-Չալթըր
ՀԱԲԱ, FFVI: 6382, 02/ Գյումրի
ՀԲՆ/Վարդենիս-Չախըռլու

5 ՀԱԲԱ, FFIII Աշխատավոր, վեր կաց բարին:
ՀԱԲԱ, FFVI, ՀԲՆ Աշխատավոր, վեր կաց բանի:
6 ՀԱԲԱ, FFIII, ՀԲՆ ծուլ մաշտոցը քունը կը տանի:
ՀԱԲԱ, FFVI ծույլ տղայի քունը կը տանի:
7 ՀԱԲԱ, FFIII էրկինքին դուռը բացված է:
10-11 ՀԲՆ *չիք:*
13-14 ՀԱԲԱ, FFIII, ՀԲՆ Աշքարները խաղում են, Մեղավորները լալիս են:

354ա

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
Հիսուս նստավ սուրբ սեղանին,
Բոլոր շարեց վարդն ու գինին,
Ձեն տվեց աշակերտաց՝
Մեկ դեմ Պետրոս, մեկ դեմ Պողոս:

Ով մեղավոր էր՝ դարն ի գնաց,
Ով արդար էր՝ խիստը խնդաց:

ՀԲՆ/Աշոցք-Քոռաղբյուր

354բ

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ Տեր կենդանին,
Մայրամ նստի սուրբ սեղանին.
Արքայության դռները բացին,
Արդարները ուրախացին,
Մեղավորներ նստան լացին:

ՀԱԲՄ, FFII: 2254, 02
/Ջավախք-Ուչմանա

354գ

Լուսացավ, լուսացավ, լուսն է բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
Մարիամ նստեր սուրբ սեղանին,
Աղոթք կաներ սուրբ տաճարին,
Աստուծո բանքը բերանին:

ՀԺՀ VIII, 101/Ղրիմ

354դ

Լուսացավ, լուսն է պարին,
Ես հավադամ Դերն գենթանի.
Էրգինքը պածըռ է Սիմոնին,
Մարիամ նստի սուրփ սեղանին,
Լուսաթաթախ խաչն երեսին,
Աստծո պանն էր պերանին.
Վով որ ասե իրեք պերան,
Մեղքը չը հիշվի տադարանին:

Փորքշեյան1971, 94/ Նոր Նախիջևան
ՀԱԲՄ, FBI: 1818, 01/Ղրիմ-Սիմֆերոպոլ

3 ՀԱԲԱ պացվե:
5 ՀԱԲԱ լուսնուբաթախ:
8 ՀԱԲԱ թատաստանին:

354ե

Լուսացավ, լուսացավ, լույսն է բարին,
Մարիամ նստավ սուրբ սեղանին,
Աստվածաբանքն յուր բերանին,
Ես հավատամ Տեր կենդանին,
Ինքն անարատ, որդին գրկին:
Ով որ հիշեց երեք բերան,
Մեղքը չհիշվի դատաստանին,
Տեր ողորմյա, Տեր ողորմյա, Տեր ողորմյա:

ԳԱԹ, Մ.Աբեղյանի ֆոնդ/
Նախիջևան-Աստապատ
ՀԱԲՄ, FBI: 1140.02/ Ալաշկերտ

8 ՀԱԲԱ *չիք:*

354զ

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
Մայրամ նստավ սուրբ սեղանին,
Գիրկ առավ Յիսուս օրթին,
Լուսաբեր էր խաչի լուսին,
Լուսաթաթախ խաչի թևին:
Վեվ օր իրեք պերան աղոթք կէնե,
Մեղքը չի ուզվի դատաստանին:

ՀԱԲՄ, FAV: 2302, 02/Բասեն

354է

Լուսացավ, լուսն է բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
Ուսին, ուսին սուրբ կուսին,
Իրեք բևեռ Քրիստոսին:
Մարիամ նստեր սուրբ սեղանին,
Գիրկն է առե Աստվածորդին՝
Խաչըմ սրտին, խաչըմ լերդին,
Խաչ գավազան միջի նստին,
Աղոթք կէնե լուս տաճարին:

ՋԲ, 7/Ջավախք

8 տողը անիմաստ է, կա բառի աղավաղում, հմմտ. հաջորդ Ը տարբերակի 7-րդ տողի միջի մատին բառակապակցության հետ, որով տողը դարձել է իմաստալի:

354ը

Լուսացավ, լուսն է բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
Մայրամ նստեր սուրբ սեղանին,
Գիրկն է առե Աստվածորդին,
Աղոթք կէնե սուրբ տաճարին.
Խաչըմ սրտին, խաչըմ լերդին,
Խաչ գավազան միջի մատին:
Տաճարի դռները բացվավ,
Երկու կերոն մոմ վառվեցավ:

Փ, 282/Ջավախք-Կորխ

355

Լուսացավ, լուսն է բարին,
Ես հավատամ Տեր կենդանին:
Ուսին, ուսին էն սուրբ կուսին,
Հրեղեն ծով ա, հրեղեն լուսին.
Մարիամը նստեր սուրբ սեղանին,
Աստծու շնորհքն էր բերանին,
Գիրկն էր առել Աստվածորդին,
Մի խաչ սրտին, մի խաչ լերդին:
Անարատ կուսություն,
Մկրտություն, խաչելություն:
Եկեղեցու դուռն էր բաց,

Աստվածածին մեջը չոքած,
Աղոթք կաներ լուս տաճարին,
Ծիծն ու էրեսը վարդ ծիրանի,
Աղոթք կաներ իր խաչորդուն,
Որ ողորմի ամեն մարդուն,
Փրկե ցավից, պատուհասից,
Չար փորձանքից, սասում սասմից:
Ով որ իրեք բերան ասի,
Մեղքը ջնջվի դատաստանին:

ԱՀ XI, 33/Բորչալու-Լոռի

356

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
էրկու սուլթան խաչելություն,
Լուսը փայլակ մկրտություն:
Երկինք բացվավ՝ ծով ծիրանի,
Սուրբ Կուս նստավ սուրբ սեղանին,
Կուսբան արած որդին գիրկը:
Մայրամ Աստվածածին, դուն գուզես,
Հոգով, սրտով դու սիրես:
Մեր Տերն էգավ մեզ համար,
Կապեց լուսեղեն կամար,
Իմ հոգիս քեզ համար:
Դու գործե բարություն,
Ես էլ գործեմ արքաություն:

ՀԲՆ/Հրազդան-Աղավնածոր

357

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ Տեր կենդանին.
Մարիամ նստե սուրբ սեղանին,
Աղոթք կէներ սուրբ տաճարին՝
Օրեն իրեք տարվա գ'իշեր՝
Մեղքը չհիշվեր դատաստանին:
Հայր Հովսեփ, Կուս Մարիամ,
Պառկեցեր երազ տեսար, ելար նստար,
Խանձաքաղաք խանձարեցիր,
Խանձաձարով փաթութեցիր.
Սուրբ Օհանու գիրկը դրիր,
Անունն Հիսուս մկրտեցիր,
Մկրտիչ սուրբ Կարապետ:

էԱԺՀ, 19/Կարս

358

Լուսացավ, լուսն ի բարին,
Ես հավատամ երկինք տարին,
Երկինքիդ պաց ու ծիրանին.
Մարիամ նստավ սուրբ սեղանին՝
Որդին կրկած ինք կըրմանե
Հինգ արարած հրեշտակաց:
Կելլեմ, կելլեմ, նորեն կելլեմ
էս աղոթքը կիտացողին,
Օրը իրեք տապու ըսողին.
Ճուրն ընձի՝ ճուրը չտանե,
Կրակն ընձի՝ կրակը չէրե,
Դատաստանին մեղք չքաշե:

ԲԲ, 201/Կեսարիա

359

Լուսցավ, լուսցավ, լուսն ի բարին.
Օղորմեցավ Տեր կենդանին.
Մարիամ նստավ սուրբ սեղանին,
Տիլակ էրաց մեղավորաց:
էկավ անցավ Գաբրիել հրեշտակ.
- Հուս ունիմ, Հիսուս ունիմ,
Ես ապավեն աստված ունիմ,
Խաչիդ խողովե եսի քաղե,
Չար սատանեն խոռու պըտըե:

ԲԱ, 470/Դիարբեքիր

360

Լուսացավ, լուսն ու բարին,
Ես հավատամ Հայր կենդանին.
Երկինքըն ծով ի ծիրանին,
Մարիամ նստավ սուրբ սեղանին:
- Մարիա՛մ, Մարիա՛մ, հոդ ի՞նչ դատիս:
- Իրիցներուն չուրջառ կարիմ,
Սարկվագներուն գուլպա քաղիմ,
Որ գան ինծի պատարագ էնին:
Նընջեցելոց աղոթք էնին:

ԵԱ, 57/ Խոտրջուր

361

Լուսացավ, լուսն ու բարին,
Մեք հավատանք Տեր կենդանին.
Սուրբըն նստավ սուրբ սեղանին,
Հագել կապել պատարագին,
Պատարագն ա Քրիստոսին:
Քուն եղա, երազ տեսա,
Ետո զարթա զարհուրեցա,
Անձինս արյուն փաթութեցա,
Լուսեղեն փուշ պսակ տեսա:

ԵԱ, 57/ Խոտրջուր

362

Լուսացավ, լուսացավ,
Մե պերեց լուս ի պարին,
Քրիստոս՝ լուս կենդանին,

Տիրամեր՝ լուս աթոռին,
Ասսու շնոխք ի պերանին.
Կրկած իր ասվածորթին,
Կլոխ տրեր վեր սրտին,
Ծեռներ տրեր վեր դոշին.
Աչկեր քըցեր աստըվորին,
Կուզեր աշխարին բիթուն
Սիրութեն, խաղաղութեն:

ՀԱԲԱ, FFI: 3835, 01/Կոտայք-Գառնի

363

Օրհնյա՞լ ի բարի լուսու բարին,
Խավատամ իմ Տեր սուրբ կենդանին.
Աստվածորդին ա գրկին,
Աստծու գիրն ա ճակտին,
Աստծու բաներն ա բերնին:
Որ հիշաց էսա խերն ու բարին՝
Չուզեր մեղք դատաստանին:

ՀԱԲԱ, FAV: 3081, 01/Ոշտունիք

364

Լուս լուսացավ՝ լուսն ու բարին,
Ես մահանամ Տեր կենդանին.
Արարածին մկրտություն,
Մկրտություն և թողություն:
Թռավ գնաց տեր Ներսեսին,
Փիլոնը հագավ սուրբ Քրիստոսի
Եվ իր տասներկու առաքյալի.
Քրիստոսը իմ մեղքը չը հիշե դատաստանին:

ՀԺՀ, VIII, 101/Ղրիմ

365

Լուսացավ, լուսացավ, լուսն է բարի,
Ես հավատամ՝ դու կենդանի.
Ամեն մարդուն մի-մի մեղա՝
Մեղքը ջնջի դատաստանի:

ԺՍԲ, 6/Ախալցխա-Ծուղրուտ

366

Լուսը լուսացավ,
Բարին բացվեցավ.
Լուսեղեն կապել է կամար,
Հոգին պահ տամ քեզի համար:
Ուսին, ուսին սուրբ կուսին,
Իրեք բևեռ Քրիստոս[ին].
Մայրամ նստել սեղանին,
Գիրկն է առել սիրուն որդին,
Խաչըմ սրտին, խաչըմ լերդին,
Աղոթք կէնե լուս տաճարին:

ՀԱԲԱ, FFI: 7519, 02/Գյումրի

367

Լուս լուսցավ,
Տեր քաղցրացավ,
Ողորմության դուռը բացվավ,
Հոգին էլ ուրախացավ:

ՄՄ/Ապարան

368ա

Լուսը լուսացավ,
Խաչը պարզեցավ,
Աստված քաղցրեցավ.
Դրախտին դռվիքը բացվան,
Դժոխքինը՝ ավըրվեցան,
Կապած հոգիս արձըկվեցավ,
Հիսուս մեզի ողորմեցավ:

ՋԲ, 7/Ջավախք

368բ

Լուսը լուսացավ,
Արև պարցրացավ,
Տիրոչ զորութենով
Տրախտի տռներ պացվան,
Տժոխքի տռներ կոցվան,
Արթարներ ուրխըցան,
Մեղավորներ տանջվեցան:

ՀԱԲԱ, FFI: 3857, 01/Վան-Անծակ

368գ

Լիսը լիսով լիսացավ,
Տիրոջ խաչը պարզեցավ,
Աստծ վերեն քաղցրացավ,
Հիսուս որդին ողորմեցավ:
Դրախտի դռները բացին,
Արդարները ծլվլացին,
Մեղավորները խիստ լացին,
Հիսուս փրկչին հուսացին:
Դրախտի դռները բացվեցան,
Դժոխքինը՝ ավերվեցան,
Կապած հոգիքը արձակեցան,
Երկինք, գետինք ուրախացան:
Տե՛ր Աստծ, քեզ հուսացի,
Բարով խերով լուսացըրի.
Լուս տուր հոգուս՝ գործեմ բարին,
Արժանանամ սրբոց շարին:

ԱՀ XI, 34/Բորչալու-Լոռի

369

Տեր ողորմյա, Տեր ողորմյա, Տեր ողորմյա.
Լուսացավ լուսավորչա,

Ամեն գեղ էլ ուրախացավ,
Մեղավորնին մեղքը լացան,
Արդարները ճլվլացին:
Տեր ողորմյա, Տեր ողորմյա, Տեր ողորմյա:
ՀԱԲԱ, FBI: 1140, 03/ Ալաշկերտ

370

Լոս լոսացավ,
Տեր քաղցրացավ,
Բարու դռներ բացվավ,
Օդըրմութեն շատացավ:
Քրիստո՛ս, չը խանիս քու ախ իմ սրտեն,
Քու ախ-ամոթով ծի շախես, պախես:
Տե՛ր, դու ես ստեղծե՝ չը կորուսես,
Տե՛ր դու ես շինե՝ չը կործանես,
Քու արդար ճամբխըներու վերեն
Չի խանգիստ մախըմ տաս:
ՀԱԲԱ, FAV: 3085, 03/Ոշտունիք

371

Լուս լուսացավ,
Տեր քաղցրացավ,
Չար զատնացավ,
Աստծու բերքն ը բարին մոտեացավ:
Բարը լուսո սարսուփ սըփ աղոթրան,
Խատ նա բարը լուսուն
Քյու բարը դռներ բանաս վար ախշարքին,
Հավքե տու [72] միլաքին,
Չորս բոլոր ախշըրքին,
Կարիպ կուրպըքին,
Մեր հմենանց սատաղեն:
Յա՛ բարը, բարըլուս,
Խատ նա բարը լուսուն՝
Ուըր օր բարին, զէն կամենաս:
ՄԱ/Մոկս

372ա

Բարի լեո՛ս, բարի առաջնորդ,
Նասիպնիս դրկես,
Կյորուննուպ կեորմեզ[39],
Փորձանաց փրկես:
ԳԱԹ, Թ.Ագատյանի ֆունդ I-136/Սկն

372բ

Բարի լեո՛ս, բարի առավոտ,
Բարին բերես, բարի առաջնորդ,
Չարերնիս բարին դարձնես,
Ո՛վ Տեր, նասիպնիս ալ դրկես:
ԳԱԹ, Թ.Ագատյանի ֆոնդ I-136/Վան-Ականց

373

Աղոթարան հավոց դասին,
էրկու դասին և մի լուսին,
Ծառայեցեք Ստեղծողին.
Իսկի չկա քի բարենբար,
Հաքած, կապած էրկու կողման.
Լուսն երկնքուց կապեց կամար,
Բացվեր է սուրբ աղոթարան:
ՀԲՆ/Աշոցք-Դագանչի

374

Ել, ժամ գնա խորոզխոսուն,
Ղըսմեք կուգա բարի լուսուն:
Ես ժամ գացի, փառքին հասա,
Սուպ քրիաննուն կայնուլ տեսա:
Իով օր Հայ մեղա /*Հայր մեր*/ մը ըսե,
Օրն ալ իրեն անգամ հիշե,
Ասված ալ իր մեղքը չ'իշե:
ԳԲՍ, 643/Սեբաստիա

375

Ալելույա, ալելույա,
Ճըրօխնեքը եկու ճըրուքլյուսավ,
Արևը եկու ըրեվլյուսավ,
Ջադեգյը եկավ ըլըվլյուսավ:
ՀԱԲԱ, FFVII: 6201, 01/ Արցախ-Քյոհնաշեն

376

Է՛յ, քըզի մեռնիմ, Կապուտ կապավոր,
Առաջ դատավոր Աստված,
Դու հասնիս իմ տղին,
Հարեհաս հասնիս:
ՀԱԲԱ, FFVIII: 3901, 14/Ապարան

377

Աստվա՛ծ, դու ազատիս
Գիշերվա, ցերեկվա փորձանանցեն,
Հում լեզվեն,
Հոտած բերնեն,

[39] Թուրքերեն է՝ Տեսած, չտեսած:

Կրճալը ատամեն,
Աճօրի շառեն,
Ջուր ու բուխտընեն,
Հանկարծակի փորձանացեն,
Իմ մեղացեն,
Դառն դժոխքեն,
Պարտքեն ու փոխեն:
Աստվա՛ծ, դու ազատիս
Խրեն, ջրեն, կրակեն,
Սրեն, քրեն, դրեն,
Իմ մեղացեն,
Պարտքեն ու փոխեն:
Աստվա՛ծ, դու ազատիս
Սարեն, քարեն,
Գելեն, գազանեն,
Աժդահարեն, վուշապեն,
Ամենայն գիջու ջանավարեն,
Սելեն-սելաֆեն,
Թոփեն, թվընքեն,
Կռիվ ու կռվանքեն,
Իմ մեղացեն,
Դառն դժոխքեն,
Պարտքեն ու փոխեն:
Աստվա՛ծ դու ազատիս
Թոնեն, քնջանքեն,
Կարկուտեն, կայծակեն,
Ծաղկեն, կարմրուկեն,
Պատեն, պատատըկեն,
Քարեն, քարսպանեն,
Փետեն, փետուրանքեն,
Ջնեն, ծներանքեն,
Տրտեն, խիամաթեն,
Իմ մեղացեն...
Աստվա՛ծ, տաս աշխարհին խաղաղութեն,
Իմ մեղաց թողութեն,
Պարտքեն ու փոխեն ազատութեն,
Եկեղեցաց պայծառութեն,
Հացին .յեժնութեն,
Մահին քանկութեն,
Թագավորաց և դատավորաց համբերութեն,
Մեզի ուրախութեն արժանի էնիս, ամեն:

ՁԱԹ, Ս. Հայկունու ֆոնդ
ԷԱԺՋ, 298/Ալաշկերտ

...

378

Երկրին խաղաղություն,
Բարի լույս, քաղցր Քրիստոս աստված.
Հավուր գալած փորձանքից
ազատ պահես,
Նեղյալներին հասնես,
Նրանց սադաղեն՝ մեզ:
Հացին՝ առատություն,
Հիվանդներին՝ առողջություն,
Մեր ծնողներին՝ արքայություն,
Երիտասարդներին՝ սեր, միություն,
Ծերերին՝ մահով մահ,
Բոլորի նպատակին՝ կատարում:

ՀԱԲԱ, FFIV: 6593, 05/Սևաձ

379.

Բարի լուսու Աբրամի աստված,
Ինչխոդար օր անճար կա,
Ինչխոդար օր բիչար կա՝
Ընձուն հասնիս,
Յեդո հասնիս իմ բալեքներուն:
Աշխըրքին խախանդությեն տաս,
Մային՝ քանգությեն,
Հացին՝ էժնությեն,
Յուսուսի Քրիստոսի օգնությեն, փրկությեն
.Յըմեն անճարին,
.Յեդո իմ բալեքներուն:

ՀԱԲԱ, FFVIII: 3645, 01
Ապարան-Ղազանֆար

380

Տե՛ր ջան, դու տաս երկրին,
աշխարքին խաղաղություն,
Մեզ էլ՝ կանաչություն, առողջություն,
Փորձանքից հեռու,
Ուրախահոտ, ծաղրերես,
էլած սրտին համբերություն տաս:
Տե՛ր ջան, քաղցրանաս,
Չար մարդկանց սիրտը բարեցնես,
Խիղճ տաս իրենց,
Գութ գցես սրտերը:
Մուխանճաթին էյթաջ չէնես,
Բարի աչքդ վրեներս պայես,
Անփորց, անքյադար պայես,
Հացին էժնություն,
Մային քանկություն:

ՀԲՆ/Շիրակ-Առափի

381

Բարի լուսի քաղցր Քրիստոս,
Դու օղորմանաս, դու գթաս,
Դու փորցընքներաց ազատ էնես,
Դու անփորցանք պահես, տե՛ր Աստված:

ՀԲՆ/Վարդենիս-Չախըրլու

382

Բարի լուսու քաղցրակաթ հայր Իսուս,
Կաղաչենք և քեզ կը խնդրենք,
Ինչպես լույսը բացիր ընթանուր երկրի վրա,
Լույսը բանաս քու արարածոց,
ստեղծած հոգոց վրա.
Հասնիս հավատացյալ քրիստոնեից,
Ձի ազգն անօրենից, հերձվածողաց [է]:
Տաս երկրին խաղաղություն,
Թագավորաց հաշտություն,
Քու դուռը բանաս օղորմության՝
Քու ստեղծած հոգոց վերա:
Փա՜ռք քեզ, Աստված, փա՜ռք քեզ, Աստված,
Իրեք հարուր բյուրապատիկ անվան տեր Աստված,
Դու խնայիս,
Քու բարկության սուրը դադրեցուս.
Վերջին սադաղին հասնիս իմ հոգուն,
Որ բոլորի համար խնդրեցի:

ՀԱԲԱ, FFII: 2254, 01/ Ջավախք-Ուչմանա

383

Անուն հոր և օրթու և հոգուն սրբուն, համեն:
Տե՛ր իմ աստվածս,
Երկինք, գետին, ծով ու ցամաք ստեղծող.
Տաս աշխըրին խաղաղութեն,
Աղքատ հոգուս առքաութեն,
Ամենայն ազգի ազատութեն:
Տեր իմ Յիսու՛ս, օղորմանաս,
Օղորմությանդ դուռը բաց էնիս,
Չոր քարին կանանչ պուսեսնես,
Ամեն դուլիդ նեասիբը դու տաս,
Օգնական, պահապան դու էղնիս:
Տե՛ր իմ աստվածըս,
Հանկարծակի մահեն, դժոխքի կրակեն ազատ պահես,
Անօրի շառեն, ղարիբեթուն ազատ էնիս:
Տեր օղորմյա, Տեր իմ Իսուս,
Գթա՛, Քրիստոս, մեզ օղորմյա:

ՀԱԲԱ, FAV: 2307, 03/Բասեն

384

Պարի լուս պացեր ես,
Պացես տուռին-տրկցին,
Ախշրին խաղաղութեն տաս,
Սաղ ճան տաս,
Խում լեզվից ազատ անես,
Որն օր պարին է՝ էն կամենաս,
Չար տանես, պարին պերես,
Պոլորին հասնես,
Հետո մեր պարին տաս,
Նամարդին մուխտաջ չանես:

ՀԲՆ/Արտաշատ-Դիդակ

385

Օրշնյալ ի սուրբ Աստված,
Հավատամ, խոստովանիմ, Աստված,
Երկիր պագանիմ քեզ, Աստված.
Ավուր խադից,
Անզգըմի շառից,
Անփողպատ շապկից ազատիս,
Փա՜ռք քեզ, Աստված:

ՀԱԲԱ, FFVIII: 3731, 02/Ապարան-Բուժական

386

Աղոթրանի բարի լուսվան Աստված,
Ամենան փորձանքեն ազատ էնիս
Ձիմ ճժեր, զիմ երեխեք.
Միամիտ փորձանք չիգա վըր ժողովրդին,
Մայրիկ մայր Աստվածածին,
Կանանչ մեռոն:

ՀԱԲԱ, FFVIII: 1825, 01/Շիրակ-Հայկավան

387

Յա՛ սուրբ Աստված,
Չարն ի բարին դարծուս, Աստված.
Էրունին ու թռչունին խսմատ տաս,
Մեկ ցանիմ՝ հազար դառնա.
Հարևանին, դուրին-դրացուն շատ տաս,
.Յամենու սադաղեն լե ընձի տաս:

ՀԱԲԱ, FFVIII: 3733, 01/Ապարան-Բուժական

388

Հե՛յ քե մեռնեմ, յոթ անվան տեր,
Յոթ մասունք Օհաննես Սկրտիչ, ամենափրկիչ.
Ապավինել եմ քեզի, բարի լուսու քաղցր Քրիստոս,
Իմալ մթնցուցեր ես, մթան, լուսո տեր,
Դու մի դուռ բացես ամեն անճարի վրեն:
Անճարին ճար էնող Տեր,
Դու խասես ամեն անճարին.
Էս ձեռ էն ձեռին հավջա չէնես,

Մարդը նամարդին մուխթեճ չէնես,
Քո սրտով էնես,
Ստեղծածիդ սրտով չէնես,
Ամեն մարդու սրտի չափով հուրին տաս:
ՀԱԲԱ, FFIV: 5741, 02

389

Ո՜վ բարի լուսու Աստված,
Շաղաթաթախ սուրբ աղոթրաև,
Խեն քրիստոնեն ձեռ անօրանց ազատես:
Ո՜վ Կյալու սուրբ Խոգեց վանք, մեռնեմ քե:
Ո՜վ Աստված, դյու բարի ղսմաթ մի տաս,
Աստվա՛ծ, բալից, փորձանքից ազատես,
Անմեղ՝ լեզվից, կրակից, ջրուց ազատես,
Դյու քու տված օղորմությունից
անբաժին չանես,
Քյու ստեղծած խոգին
ժառութենով չառնես,
Քյու ստեղծած խոգին չի կուրիսես:
Օրհնյալ Տեր մեր, Հիսուս
Քրիստոս աստված,
Դյու ճար արող ես, քատբիր արող ես,
Աստվա՛ծ, դյու օղորմանաս.
Կը խնդրեմ, դյու էրկեն ձեռ չկարճացուցես:
ԷԱԺՋ, 306/Վասպուրական-Նորդուզ
2 սուրբ ավետրան *ուղղ. ըստ իմաստի:*
3 փրիստոնեն *ուղղ. ըստ իմաստի:*

390

Բարի լո՛ս, բարի Քիրսդոս ասֆած,
Հազար շուքուր քիզի,
Օր մեր վրայեն անձուձիր ըս գյիշերը
Ու միզի ողջ-առողջ պեյեէձիր:
Շնորակալ ինք քումինեդ,
Օր սուրբ Արևը,-
Արև՛, Արև՛, խուոյպան ըլլիմ սուրբ էրըսիդ,
Խուոյպան՝ լուս էրըսիդ,-
Սուրբ լուսը ցաթեձուձիր միզի վրա:
Օղորմուդանստ մեռնիմ, Ասֆած,
Օր տայմա՝ չես մառնար միզի
պես մեղավորները
Ու օղորմուդանստ դուռը կը բանաս:
Ռեճե կենիմ քիզի, էրկնավոր Ասֆած,
սուրբ Արև,
Դու իմ մեխգյիս թողուդին տաս,
Ցեռգյիս, օդգյիս, աշգյիս, մեշգյիս
խուվադ տաս,
Օր ըսօր տեյմ՝ իրկուն բանիմ
Ու օղլուշաղիս սատաղան վասդըկիմ,
Ջալըմ-զուլումին բերանը փակիմ
Ու քիզի փառգյ տամ...
Սերի սապաճդան խելի սըֆդա մի ճամբիս,
Խըսմեդս հասձընիս,
Չաղաներուս աշգյը էլի ձեռգյը չի հայիս:
«Բազմավէպ», 1902, № 9-10, 481/Բալու

391

Աստվա՛ծ, դու զը չընգգըցիս,
չընգնավորցընիս,
Նըմարդ մարդու մոհթեճ չգցիս,
Կպրե կարասես, Մազե կարմնջեն
ազատ էնիս,
Խայ քրիստոնեին ազատութին տաս,
Քրիստոնեից թուր կտուր էնիս.
Քաղցրըակ մախըմ տաս,
Օխնած խողին արժանացնիս,
Սըբ մեռոնին արժանացնիս,
Խերկան, մերկան արքաութին տաս,
Խացին առատութին, պտղին
շատութին տաս,
Հըմեն նեղյալին խասնիս,
Բարեխոս ըլնիս հառաջին Աստծու.
Փորձանքից փրկիս, ազատիս,
Բարեբախտ տաս չամ իմ չարկամին,
Մենք էլ ապրինք ընունց սըադաղին:
Հայր մեր, ուըր էրկինքն իս, սըբ
եղիցի անուն քո...
Աստվա՛ծ, դու ստեղծիր իս, չկորցնիս,
Անօրենի սրտավն ռահմ գցիս,
Ճամխուրներուն, ծովյալներուն
դուզ ճամբախմ՝ շանց տաս,
Ի փառս հավիտյան, ամեն:
ՀԱԲԱ, FFIII: 6015, 01/Մոկս-Սիպ

392

Է՜յ Ռաբբի,
է՜յ Տեր. Յիսուս Քրիստոս, Տեր Աստված.
Դու. յըմեն անճարներուն, նեղյալներուն,
Ըռաբաններուն, խարիբ
խուրբաթին հասիս,
Ընոնց սադաղեն նոր մըզի:
Դու. յըմեն խարիբ խուրբաթին,
Ուրենց բուն ու փըթոթներուց
հեռու էղնողներուն
Ուրանց տուն ու տեղին, կնիկ
ծըժուն հասուս,
Ընդոնց սադաղեն լե իմ խարիբ.
Հեռու տեղեն մըր տուն ու տեղին
բերիս հասուս իմ տղին.
Թե օր չուզե լե՝
Ուրեն մոլըրցուս, տուն դարծուս:
Դու աշխըրքին խաղաղութեն իտաս,
Գիլաներուն գառ դարծուս.

Մըզի ոն խային կիշկա,
Մըր վրեն ոն սուր կը սըրա՝
Ուր սուր լե ուր փոր մտուս:
Է՛յ սուրբ Մայր Աստվածածին,
Տեր Յիսուս Քրիստոս,արարիչ Աստված,
Խեղճ ինք, ըռաբան ինք,
Դու[ք] ձըր սուրբ էրեսից մըզի չը գցիք,
Չըր աչք մեր վրեն քաղցր պահիք:
Կաղաչիմ, կը պաղատիմ, մունենաք կէնիմ՝
Դու մըզի սովեն ու մահեն հեռու պահիս,
Քու ըստեղծածն ինք՝ խըղճաս մըզի.
Դու ըստեղծեր իս, դու լե պահիս մըզի:

ՀԱԲԱ, FFVIII: 5995, 01/Մուշ-Դացիկ

393

Օրշնյալ ի Աստված,
Օրշնյալ ի բարի լուսու քաղցրիկ Քրիստոս,
Է՛յ շաղաթաթախ Հայոց սուրբ աղոթրան,
Է՛յ չորեքկողմանի սրբեր,
Սերոբեք, քերոբեք, ինն դաս հրիշտակներ,
Բարեխոս էլնաք առ Աստված:
Յա՛ Տիրամար սուրբ Աստվածածին,
Յա՛ Մշու սուլթան սուրբ Կարապետ,
Ատենահաս բոզ ծիավոր սուրբ Սարգիս.
Իմ ձեռն ի ձեր փեշն իմ թալի,
Բարեխոս էղնիք արար աշխարհքին,
Իմ մեղավոր հոգուն:
Մեղա՛յ իմ քըզի, Աստված,
Մեղա՛ Աստծու, Աստված,
Երկնքի և երկրի ստեղծող Աստված,
Մեղա՛ քեզ:
Տե՛ր, դու զքու ստեղծած հոգին չըկորցուս.
Իմ մեղք շատ է, քանց քարն ի քըռեն,
Քանց ավազն ի ծովեն,
Քանց թուփն ի ծառեն.
Աստված, դու իմ մեղք չաչքիս,
Իմ խեղճն աչքիս:
Տե՛ր, դու ողորմանաս հավքե դու
[72] միլաթին,
Ամենեցու սադաղեն իմ տան ընտավորին,
Իմ դարիբ դուրբաթին,
Իմ մեկուճար պուրակին,
.Յետև գահուն իմ մեղավոր,
չանարժան հոգուն:
Տե՛ր, դու չհանիս ահն ի սրտեն,
Չտանիս ամոթն ի .յերեսեն,
Դու զչար խափանիս, զբարին բերիս,
Չար երազն ի բարին դարձուս,
Ամեն փորձանքից հեռու պահիս:
Քու աչն հովանի էղնի, Տե՛ր, մեղա քեզ.
Է՛յ կապուտ վրան, քի իմ ապավինի:

ԱԳԶ,18-19/Մուշ-Բուլանըխ

394

Հայր մեր յէրկինք ՝ւ էրկրի...
Աստված, քավյա զիս մեղավորս,
Տեր ներող, Տեր ողորմյա,
Տեր գթած, Տեր ողորմյա:
Տե՛ր, դու ստեղծեր՝ մի՛ կորուսե,
Քաղցրիկ Քրիստոս, քե եմ կանչե,
Քու ստեղծած հոգին մի՛ կուրիսե,
Քո ճամեն մի՛ հանե:
Չը հանես ահն սրտեն,
Չը տանես ամոթն իրիսեն:
Աստվա՛ծ, քե փառք, գոհանամ քեզնից.
Ստեղծեր ես, դու հուն հանես,
Ճար անող Տեր, դու ճար անես,
Լոս արող Տեր, դու լոս անես,
Հոգացող Տեր, դու հոգաս,
Ջըմեն անճարոց ճարիկն անես, ապա՝ մե:
Ճար չունեմ, իմ ճարն դու ես,
Մայր ողորմության սուրբ Աստվածածին,
Մայր մեր, մայր Քրիստոսին:
Տե՛ր, քե մեղա.
Անդարձիս դարձ տաս, անզեղջիս՝ զեղջ.
Պոռնիկ, սևերես, մեղավոր եմ, Տե՛ր,
դու գիտես.
Իմ մեղք շատ ի, քանծ ավազն ծովուց,
Քանծ աստղունք երկնուց,
Քանծ հողն երկրի:
Տե՛ր, դու գիտես, դու ողորմես,
Քո ողորմութեն անչափ ի.
Անգումանք քե գումանք՝ դու հասնես, Տե՛ր,
.Յըմեն շառից, .յըմեն
փորձանքից պարզերես պահես.
Անզգամի շառից, անզգամի լեզվից
ազատ պահես.
Ամա՜ն, Տե՛ր, դու վատ օր նշանց չի տաս:
Բարի լուսու սիրուն Քրիստոս,
քե եմ կանչե,
Քաղցրիկ Տե՛ր, ձեռնիկս քո փեշն եմ թալե,
Հոգիս քե ամանաք եմ տվե:
- Չետ, պետ աստղու՛նք, օգնական,
պահապան կայնեք,
Գաբրիել, Մուքայել հրեշտակներաց հետ
Մե ազատեք .յըմեն փորձանաց,
Չար մարդուց, չար սըհաթից:
- Մաղմտացի՛, մաղմտավոր աղոթրան,
Բացվի բարի լուս վեր .յըմեն
անճարներաց,
Վեր .յըմեն կարիք կուրբաթներաց,
Ինոնց սատաղեն վեր մե:
Շաղաթաթախ աղոթրա՛ն, դու բարի օր,
բարի դսմաթ բերես մե:
- Յա՛ կամավոր ժամեր, պատարագներ,
Դուք հիմդադ հասնեք .յըմեն
ղարիբ դուրբաթին,

Ինոնց բանին, գործին հաջողութեն տաք,
Ինոնց սատաղեն՝ մեր ղարիբներաց:
Աստվա՛ծ, դու չար ուզողին բարի տաս,
Ինչ որ կա կաշու տակ՝
Չը թողնես էլնի կաշու իրես:
Յա՛ սուրբ սրբերենք, ձեռնիկս ձեր
փեշն եմ թալե,
Դուք օգնական, բարեխոս կայնեք:
Բարի լուսու բարի Քրիստոս,
Դու թեվքրիկ ցավիկ, հանգիստ մահիկ
տաս ձիկ,
Իմ զավկնեկաց արևշատութեն տաս,
Իմ ղարիբնեկաց արևշատութեն տաս,
Տատականնեկաց ուժ ու
կարողութեն տաս,
Իմ ձետկիկ ձագեկաց ձենիկը դառնաս,
Հավասար ննջեցելոց քաղցրիկ
արքայութեն տաս:
Հացիկ էժնութեն,
Ջրիկ առատութեն,
Անձրևու շատութեն,
Մեր բազում մեղաց թողութեն,
Մեր լոս հավատքիկ հաստատութեն,
Երկրի ճոչերաց սեր, խաղաղութեն,
Հայոց ազգիկ միաբանութեն, ազատութեն:
Աստվա՛ծ, քե փառք,
Ումուտս քե եմ արե, գոհանամ քեզնից,
Աստվա՛ծ, իրեսս քե հող ու մոխիր.
Տե՛ր, դու գիտես, դու ողորմյաս:
Հայր մեր...

ՍՄ, 306-309/Վան

395

Օրշնյալ Տեր մեր Հիսուս Քրիստոս, ամմըն:
Հայր մեր օր երկիս, սերսուբ էղիցի
անուն քո,
էղեցե կամք քո, օրպես երկիս և երկրի,
Հաց մեր անապատ օրտուր մեզ այսօր...
Ալ փրկիս զմե չարեն,
Զի քիմն է արքայութեն, զորութեն,
փառք յավիտենից, ամմեն:
Երկիր պագութեն կենըմ Աստուն:
Բարի դրկից չըխտակ խորան Աստծածին,
Գուսկեդու Աստծածին,
Մուրատադուռ յոթնանվան դեր
Սըբ Գարապետ,
Սըբ Հակոբ, Սըբ Սարգիս,
Յոթը դուռ Սըբ Գանանոս,
Սըբ Ատովմեան, Սըբ Սահակ,
Սբիտակերիս Սըբ Աղբերիկ,
Բարձրիկ գլուխ Սըբ Մարաթուկ,
Փութգա Սըբ Գևորգ, փութափութ հասնիս,
Սըբ Գլխադիր,
Խնդրաքատար Աստծածին,
Օսգի ջկութ Բողոս-Բեդրոս,
Չխտակ քումպեյթ դռնբաց Քրիստոս,
Ամդա Սըբ Սարգիս, Սըբ Դանիել,
Հազարումեկ Աստծածին,
Էվելի Ուրֆայու Աստծածին,
Դըսվերկու դաս առաքյալնի,
Ինը դաս հրեշդագնի,
Մանդրբիր սրբեր, խոշոր սրբեր,
Սարերու սրբեր, ձորերու սրբեր,
Հույս կենըմ ու կաղաչըմ ձեր էրեսնուվեր,
Ըմ մեֆեր դուք եք.
Ըմ մեղք շատ է, գից թուփն ի ծառե,
Գից ավազն ի ծովե,
Բարեխոս էղնիք, տիլքճի էղնիք
խեչ Աստված
Մըր մեղաց թողության համար:
Ո՜վ Քրիստոս, մեղավոր հոգի չը հանիս,
Գենառար լուսեղեն դրախտին
արժանի էնիս.
Անարժան ըմ, մեղավոր ըմ, քու հեսիրն ըմ,
Փոշիման ըմ, չանաժան ըմ, չգիտցող ըմ,
Անցաք, դարձաք մեղայ Աստըծու:
Տե՛ր Աստված, դուն ազատիս խաֆլուխաթից,
Տասուն պարտուց, սրեն, թրեն,
Անըզգա գընկա շառեն,
Անփողկապ շապկեն,
Խիթուիլուց, թառեզնելուց, քոթի խոցեն,
Շտկեն, ժանեն, ժունեն,
Յանզրնագի մըհեն, մահդառաժամեն,
Չար սահաթեն, չար ջամբուց:
Տե՛ր Աստված, իմ դիր դուն ըս,
Իմ դիրական դուն ըս,
Դուն ազատիս ամընան փորձանքնուց:
Բարիլուսու Քրիստուս Աստված,
Չչար էրած բարին դարձուս,
Բարին գամենաս,
Նեմերտին մահաճճ չէնիս,
Չարկամին խնտանելիք չէնիս,
Չիվար ու էրերուն չէնիս.
Դու օղորմենաս մըր հին ու նոր
ննջեցելոց հոգուն,
Վիր զավակ չգա՝ դուն իդաս,
Վիր ը գա՝ դուն բղիս ու ազատիս,
Հըտ ուրաց գիս, զըմ քուֆլեթիկ
չը թուփլցուս,
Չչար դեվի բերան գալիս, գապիս:

ԲԲ, 75/Նփրկերտ-Մուրատքաշ

1(396)

Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Խրեղեն խաչ վըր թևին.
Արևն առավ սուրբ սեղանին,
Բանծրաց գնաց Յերուսաղեմ.
Մայրամ, գա կույս ես,
Խոգով, մարմնով դու լուս ես,
Լուսեղեն կամար ես կապե,
Խոգիս քե խամար ես պահե:
Տուր ծի միտք,
Երթամ գործեմ քո բարություն,
Խոգիս տանես արքայություն,
Անարատ լուս խանես...

ԳԱԹ, Ս.Հայկունու ֆոնդ/Արծեշ

2(397)

Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Սուրբ կույս նստե վեր սեղանին,
Չեն կուտա աշակերտին.
- Պետրոս իլի՛, Պողոս իլի՛,
Խոռոմսիմեն խարսնացավ:
Գաբրելական փող փչեցին,
Մազե կարմունջ կապեցին,
Խնկյան ծառ տնկեցին,
Արդար, մեղավոր ջոկեցին:
Արդարներ ընցան Մազե կարմունջ,
Վեր խնկյան ծառին ծլվլացին,
Մեղավորներ չոքան, լացին:
Թաժա խացի խոտ իկյավ,
Իլեք տեսեք՝ վով իկյավ:
Բոզ, բոզ ձիավոր իկյավ.
Մեյ Կենդանանից Աստվածածին:
Իլավ սարով, իջավ ծորով՝
Քյուրդ հնվորին դեմ առից,
Աչքեր էրկինք խավարից,
Ոտքեր գետին բիբեռից:
Իմ Տեր իլավ ամպեր, խաղաց,
Չորեքդիմաց աշխարհ դնդաց.
Տե՛ր մեղավորիս, Աստված:

ԷԱԺՋ, 23/Թիմար-Կյուսենց գյուղ

3(398)ա

Ուսին, ուսին էն Սըբ կուսին,
Սըբ Կուս նստե վեր աթոռին,
Քյրիստոս նստե վեր սեղանին՝
Օրն ի ավուր դատաստանին:
Չեն իտու աշակերտաց.
- Արի՛, Պուղոս, արի՛, Պիտրոս,
Խուռումսիմեն ի խարսնացե.
Փեսեն, փեսեն՝ կանաչ լյուսին:
Գյաբրելական փող փչիցին,
Արդար, մեղավոր ծյոկիցին:
էն մեղավոր դառնիկ իլաց,
Դառն արտասունքով ծնգվեր լվաց,
Աստվածածնա խաթըր մնաց.
Ես քեյ ավազան մկրտված:

ՎՍԱ, 66/Վան

3(398)բ

Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Սուրբ կուս նստե սուրբ սեղանին,
Առջև վառվի սուրբ ծիրանին,
Թազա փեսեն՝ կանաչ լուսին.
Գաբրելական փող փչեցին,
Գնացին հասան Հալապա քաղաք,
Մազե կարմունջ վեր էն դրած.
Վով արդար էր՝ ընցավ գնաց,
Վով մեղավոր՝ տառնիկ մը իլաց,
Տառն արտսուք ծնկվերն լվաց:

ԳԱԹ,Գ.Սրվանձտյանցի ֆոնդ IVբ, № 18/Վան

3(398)գ

Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Սուրբ կուս նստավ սուրբ սեղանին,
Չեն կուտա աշակերտին.
- Պուղո՛ս, արի՛, Պետրո՛ս, արի՛,
Խուռումսիմեն ի խարսնացի,
Փեսեն՝ պսակ կանաչ լուսուն:
Փող փչեցին Գաբրելական,
Մազե կարմունջ կապեցին,
Խնկան ծառեր տնկեցին:
Աստվա՛ծ, Աստվա՛ծ, տու մե խամար,
Մեր չարություն տար խափանցու,
Քյո բարություն բի մոտացու:
Քաղաք չինին Յերուսաղեմ,
Տռներ կախին տեմ տաճարին,
Տըսվերկու պատարագ արին:
Ո՛վ զանազան Աստվածածին,
Քյո քարեր ըռընդով տաշած,
Քյո կավըն կաքնով շաղախած.
Ո՛վ զանազան Աստվածածին,
Աշըղներաց վարպետ տու իս:

ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ IV բ, № 18/Վան

3(398)դ

Ուսին Սըփ կուսին,
Կուս նստե վըր սեղանին,
Ձեն էրե աշակերտին.
- Արի՛, Պողոս, արի՛, Պետրոս,
Ալալոս, սըփ Թալալոս,
Կարմիր բըրչամ սըփ Կիրակոս,
Քյո տաճարի տռներն ա փոս:
Ծառ խնկենին կայնեցուցին,
Մազե կարմունջ կապեցին,
Գյապրելական փող փչեցին,
Արդըրներ ճըլվըլացին,
Մեղավորներ չոքյան, լացին:

ՀԱԲԱ, FAV: 3095, 01/Ոշտունիք

11 արտըտներ ***ուղղ. ըստ իմաստի, հմմտ. № 2(397):***

4(399)ա

Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Ահա՛ կյո հրե որդի կուսին,
Հրեղեն խաչ կէր թևին.
Խաչի տակ աղբյուր մը կէր,
Վազեր, աղպրի ճուրն էր խմեր,
Խերն որդուն խոստովաներ:
Մազե կարմունճ, քարե տաճար,
Քրիստոս նստի մեջ քի վաճառ,
Իսու՛ս, անիս անճարաց ճար:

ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ IV բ, № 18/Վան

8 աճար ***ուղղ. ըստ իմաստի, հմմտ № 5(400) աղոթքի 9-րդ տողը:***

4(399)բ

Ուսին, ուսին էն Սուրփ կուսին,
Հան գո վիրեվ որտի կուսին,
էն խրեղեն խաչն ի թիվին:
էն խաչի տակ ծառ մը կէր,
էն ծառի տակ ախպուր մը կէր.
էն ախպըրի ճուր վով խըմեր,
Խերն ուր տղին խոստովաներ:
Իմ խեր կնաց Հալբա քաղաք,
Արընե գետեր կապեց,
Մազե կարմունջ վերեն իտիր.
Որն էր արտար՝ ընցավ կընաց,
Որ մեղավոր՝ տառնիյ մ՛իլաց,
Տառն արտըսունք ծիյնվեր վըլաց:
- է՞, մա՛յրը, մե՛ր, ընչի՞ կուլաս.
էն զորություն ինչ ես ունեմ՝
Շատ կաղ ը կոր կը պժշկեմ,
Անդամալուծ կայնըցուցեմ.
Երուսաղեմ քաղայ շինեմ,
Տուռն ի պանամ տեմ տաճարին,
Սուն ի գերան ի խորանին,
Առնի հուսին, էլնի հէրին:

ՀԱԲԱ, FFII:7301, 01/Վան

5(400)

Խաչըն, խավատ, խա՛ր, մեղա՞,
Ասպած ունեմ ապավա,
Ի՛նչ որ կիտես՝ զիկ ուսու,
Տառնիյ տըժոխք զիկ ընցու,
Մեղաց տոպրակ խըլըսցու,
Խուգուս խրիշտայն ուրախցու,
Առքավութնին տիրացու:
Կաթնով ախպուր, քարե տաճար,
Խետ Աստըծուն անենք վաճառ,
Աստված աներ մեր խուգու ճար:
Քո օխնըվովն եմ օխնըվե,
Քո ավազանով մըկըրտըվե.
Գապրելական փող փչիցին,
Արտար, մեղավոր ճոկիցին,
Մազե կարմունջ կապիցին,
Արտարներ չանձ խավքու քըռուցին,
Մեղավորներ անտառք, անճար ընցուցին:
Խոստովանի քո մեղքը, լաց,
Աչկերըտ պաց,
Փուճ աստըվոր ծեռնետ կընաց:

ՀԱԲԱ, FFII: 7307, 01/ Վան

VII
ՋԱՆԱՋԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 401-452)

Ա. ՕՐՎԱ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԵՐԻ (№№ 401-419)

ԵՏՁԱԾՅԱ

401

Հազար անգամ շուքուր քիզի,
Տե՛ր երկնավոր Ասֆած.
Դու խեր ու պերեգյետ տաս իմ հանձիս.
Դու լիացնես,
Հար Ափրամու սեղանն էնես,
Օղլուշաղիս նեսիբ խըսմետը ճամբես.
Վարող-վաստըկողին,
Ցանող-քաղողին,
էփող-կերցընողին
Բանիճ-գործին խեյըլի աջողուդին տաս:
Դու յարտըմճի ըլլիս ֆեխեր-ֆուխարային,
Լոխմա մի հածի հերսեթը քաշողներուն,
Օ՜ֆ, Տեր Ասֆած,
Դու միզի ազետես զալըմ-զուլումին,
Քեֆեր մուխեննեդին ձեռացն:

«Բազմավէպ», 480/Բալու

ԵԿԵՂԵՑՈՒՄ

402

Մեղա՜, մեղա՜ Աստուծո,
Տիվան կաննիմ Աստուծո.
Իմ կիտացածիս մոռցուր,
Քու կիտացածիդ ուսցուր.
Դժոխքին դրանն անցուր,
Արքայութնա փառքին հասցուր:
Խոսելոք, խոստովանելոք
Եվ ամենայն դավանելոք՝
Յոգիս արքայութնա ղըսմաթ էրա,
Դապուլ ու մախպուլ էրա:

ԲԱ, 331/Կեսարիա-Էվերեկ

403

Տե՛ր, ողորմյա, Տե՛ր, քեզ մեղա,
Խաչն Աստուծու Հոռոմսըմա.
Վա՜յ օրերան, օր ես եղա,
Հերամ, հելալ չըսի՝ կերա:
Էրկան ճամփա եմ էրթալու,
Մազե քեռփրույ եմ անցնելու,
Քրիստոսի դիմացը ծունկ եմ չոքելու,
Մեղք ունիմ լալու,
Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԲԱ, 331/Կեսարիա-Մունճուսուն

404

Տե՛ր, ողորմյա, Տե՛ր, քեզի մեղա,
Տասն առաքյալ, Հոռոմսիմա.
Ասն ավուր աշխարհ էկա,
Փուշ մարմինս կրակեցի,
Լուսահոգիս սևացուցի:
.Յերկար ճամփա ունիմ էրտելու,
Փուշ ու տատասկ եմ կոխելու,
Մազե կարմունջն եմ անցնելու,
Պաշար չունիմ հետ տանելու,
Մեղավոր իմ, ի՞նչ ջուվաբ տամ:
Օհա՛ն, Օհա՛ն Օսկեբերան,
Իրեք գլոխ Ավետարան.
Հոգի՛ս, մի վախենա՝ կնքած ես,
մեռոնած ես,
Քրիստոսի գիրկ դրված ես,
Մայրիկ մայր Աստվածածնա յոլդաշն ես,
Սուլթան սուրբ Սարգսի խարդաշն ես.
Հար քիմ, քի յանմա գյալուր,
Աղլի բաղլի, դիլի տաշ[40]:

ՀԲՆ/Աշոցք-Քոռաղբյուր

405

Մեղա՜, մեղա՜ խարիր խազար,
Խոստովանիմ անդար խազար,
Կաքնով աղբյուր, քարե տաճար,
Խետ Աստծուն անեմ վաճառ,
Աստված անի իմ խուգու ճար:

ՀԱԲԱ, FBI: 3225, 01/Վան

---

40 Վերջին երկտողը թուրքերեն է.
Ով որ իմ կողմը գա՝
Միտքը կապվի, լեզուն՝ քար:

406

Մեղա՜, մեղա՛, Աստծուն մեղա,
Կիշեր ծով եմ, կը ծփամ,
Ցերեկ եղեք եմ՝ կերերամ.
էլա եռ եռացի,
էկա նստա՝ կուշտմ՝ լացի,
Ծենիյս առեց Խայր Ապրեխամ:
-Էտ ի՞նչ կանես, Խայր Ապրեխամ:
Որդին զինած՝ տըրած սեղան,
Ըմենք կերան, կըշտացան.
Ուսկոռ զարկին՝ պատ կայնավ,
Ուսկոռն էլավ ճուռ պարյունակ,
Խավող կախվավ սևը սիվտակ:
Դե՛ քաղեցաք, դե՛ քամեցեք,
Ընտիր-ընտիր աման լցեք,
Սուրբ պատարաք պաժկի արեք,
Ինչ խռով կա՝ խաշտըցուցեք,
Ինչ անբախտին՝ հաղորթեցեք:

ՀԺԴ VI, 147/Վասպուրական

407

Մեղա՜, իմ Աստված, մեղա ցանկամ[41],
Փա՜ռք քեզ Աստված.
Մեր ստեղծող Աստված, մեզ օգնես,
Ազատես էս մեղքից մեր խղճալի հոգին:
Իմ ստեղծող, ո՛վ սուրբ լիքը սկիհ,
Ո՛վ սուրբ եկեղեցի, ո՛վ քաղցր Աստվածածին,
Ազատես մեզ ամենայն մեղքից.
Ո՛վ սուրբ պաշտոն-պատարագ, սուրբ սեղան,
Ամենայն նեղությունից ազատես մեզ,
Ազատ պահես օրե խաթից, օրե շառից, օրե փորձանքից մեզ,
Ո՜վ Տեր մեր Աստված,
Ո՜վ սուրբ պաշտոն-պատարագ,
Դու մեր թագավորներին հաշտութեն տաս,
Հացին էժանութեն տաս,
Մահին՝ քանկութեն,
Մեր հոգուն՝ փրկութեն,
Մեր ժառանգներին՝ բարութեն:

ԷԱԺԶ, 302/Վաղարշապատ-Ալիբեկլու

408

Տե՛ր Աստված,
Դուն աշխարիս հաղաղութին տաս,
Հացին՝ էժնութին,
Ցավին՝ քանգութին,
Կենքնին՝ արիվշատութին,
Հիվընդին՝ առվուղչութին,
Մեռլին՝ արքաուրին,
Ճամփուրրին՝ աչողութին:
Դուն փրգիս ու ազատիս Քու սիղծածին
Ամեն ցավեմեն,
Փուրցանքսեմեն ու անսկամի շառեմեն:
Մի կտրի ահը սրտես, ամոթն էրեսես:
Տե՛ր, դուն բաց արա դիփունի համա
Քու օղորմութենի դռնիրը:

ԹՄԿ, 13/Թիֆլիս

409

Տե՛ր Աստված,
Վուրդի ճանփուրդ կա,
Հիվանդ կա,
Խիղճ կա,
Անճար կա,
Ծլնգդան կա,
Գերի կա,
Նիղացած կա՝
Նրանց օղորմաս.
Ու նրանց արիվ սաղաղա՝ իմ վուրբկերանցը:
Ցավին՝ փրգութին,
Մահին՝ քանգութին,
Իրգնքեն՝ ցող,
Գեղնեն՝ պտուղ,
Թագաուրներուն՝ հաշտութին,
Աշխարիս՝ հաղաղութին:

ԹՄԿ, 184/Թիֆլիս

410

Աստվա՛ծ, բա՛խտ,
Աստվա՛ծ, քու բախտն եմ ինկել,
Իմ ձեռ քու փեշդ եմ թալե.
Դու ծի չէգկիս նամարդի մուխթեջ,
Դու ծի .յաջեբ-.յաջբատես չէնես,
Դու ծի չարկամխնդոց չէնես,
Դու ծի անորդի մեր չէնես,
Դու ծի ուրախ մերիկ էնես:

ՀԱԲԱ, FAV: 3087, 02/Ռշտունիք

411

Գոխանամ քենե, Աստվա՛ծ,
Փա՛ռք քե, խազար խարիր բերան.
Դու՛ տվիր, դո՛ւ տարար,
Գոխանամ քենե, Աստվա՛ծ:

ՀԱԲԱ, FAV: 3087, 01/Ռշտունիք

---

41 Կրկնել երեք անգամ *(ծանոթ. բանահավաքի)*:

412

Օրհնյալ է Աստված,
Ամենայն ռամ Աստված,
Մարդասեր Աստված,
Հաջողեաս Աստված,
Տեր Աստված,
Աղաչեաս Աստված,
Մեղափրկիչ Աստված,
Հիշեցեք Աստված:

ՀԱԲԱ, FAV: 5929, 01

413

Հէրի, հէրի հանապատին,
Քյամակ էտու խաչափետին,
Շնչաց, էպի Յիսուս որտին.
Պուրք խանձարուր փաթուբեցին,
Անմահրուր մսուր տրին,
Եարալիս կարտեցին,
Այփ, պեմ գյրեցին:
Գյացեք ասեք կուսն ու խաչին՝
Թըխ գյա տանի ուր մեկ որտին.
էն բաբաք չի աշկերտնուբնին,
էն բաբա[թ] ա վարպետնուբնին:
Մերիկ, կը լաս, կաղաղակես,
Կաղ ու կոր լուսավորես,
Անդրմնալուծ քյելեցուցես,
Կաթնիկ հախայուր պոխացուցես:
Որ իրեք տիր ծի հիշա՝
Նա՛ խորի, նա՛ խորովըտի
Չուր գյա գյալոս Քյրիստոսին.
Քյրիստոս գյա լոս՝ չարյաց խափան,
Խոգյուս պախապան, մարմնուս
օգյնական:

ՀԱԲԱ, FAV: 3105, 01/Ոչտունիք

414

Աղոթք էնիմ պարտեզին,
Բռնեալ Յիսուսին,
Փուշ պսակ կազմեցին,
Յիսուս օրդու գլուխ դրեցին.
Յիսուս օրդին վերա խաչին,
Խաչելություն Քրիստոսին:

ՀԲՆ/Աշոցք-Սարագյուղ

415

Ժամտան տուռը պաց էր,
Տիրամեր չոքած էր,
Չոքած աղոթք կէներ:
Աղոթք կէներ տերորքուն,
Որ ողորմի ամեն մարքու,
Ազատի ցավից, չոռից,
Սասումից, պատուխասից.
Խալսի, ազատի ատամորքին,
Տե՛ր պարերար, ամմեն:

ՀԱԲԱ, FFI: 3857, 02/Վան-Անձակ

416

Չանտ՝ ծկան,
Աշքտ՝ խլըրտան.
Լուսս՝ Լուսավորչին,
Հավատքս՝ Քրիստոսին.
Վա՞յ ուրացողին,
Վա՞յ ուրացողին,
Վա՞յ ուրացողին:

«Նավասարդ», 104/Սեբեստիա
ԳԲԱ, 637/Սեբաստիա

ԵՐԱՉԻ ԲԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

417ա

Ատանագինա հայրապետ,
Դանիել սուրբ մարգարա,
Երեք մանկունք,
Ջուրն ի գինի,
Ավազն ի գարի,
Չար երազ բարին դառցնե[ք]:

ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, 1բ, № 1

417բ

Ո՛վ սուրբ Անդանակ հայրապետ,
Մեջընա *[Մծբնա]* հայրապետ,
Մշու սուլթան Կարապետ.
Դուք ջուրը գինի փոխեք,
Ավազը՝ գարի,
Իմ չար երածս՝ բարի:

ԳԱԹ, Ս.Քամալյանի ֆոնդ,
III-15/Շուլավեր

418

Ազդ անիմ, Մարիա՛մ,
Ի՞նչ նստիլ իս աննման:
Ես մեղավոր իմ,
Քրիստոս աշխարիք էկիլ է՝
Քուկդ պտուղն է.
Տասներկու առաքյալ չորս դիս կայնիլ իմ,
Ես մեջտեղը պառկիլ իմ:

ՀԺՀ VIII, 96/Դրիմ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

419

Հմեն կարիպ կուրպեթին
հաջողություն տվող Աստված,
Կարիպիս հաջողություն, ջանին
սաղութեն տաս:
Ջյորավոր Տե՛ր, իմ կարիպիս ազատ արա՛
Գիշերվա փորձանքներե,
Ջուր ջրհեղեղե,
Ավուր շառից:
Քյաղցրիկ Տե՛ր, բարի հաջողություն տաս,
Կարիպին խասուցես ուր խոր խերանին,
Վեր ուր ծեքկիկ ձգերուն:
Մեղավոր սրտով, անարժան պերնով քե
կը կանչեմ, Աստվա՛ծ,
Իրես մի դարձուցեր ընձնից,
Ողորմութեն դուռը բաց,
Քյո դիվան դարկյախից ծիկ
չզրկիս, Աստվա՛ծ:

ԷԱԺՋ, 300/Վան

Բ. ՍՐԲԵՐԻ (№№ 420-435)

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ

420ա

Կես գիշերին դուս էլա,
Մեկ ծիավոր սուրբ տեսա,
Իր անունն սուրբ Սարգիս,
Օրդուն անունը՝ սուրբ Մարտիրոս:
Սուրբ Մարտիրոս լուս կուտա,
Կերթա ամպերի վերա,
Ամպն ալ կերթա ամպի վերա,
Սուրբը հեծած ծիու վերա:
- Գնացեք ասեք՝ գեհներուն
Ազատ կանե իր արևուն:
Ով որ իրեք օր ծոմս բռնե,
Ով որ հինգ օր պասս բռնե,
Ջնա կ'առնում ծիիս վերա,
Ջնջիմ, կառնիմ չարը բարով,
Կը հասցնիմ նարան ամեն տարով:

ՀԺԴ VIII, 100/Ղրիմ

420բ

Սուրբ Սարգիս, դուն հասնիս.
Գիշեր ասի, դուս էլլա,
Մեկ զորավոր սուրբ տեսա,
Ասի, լացի, ոտն ինկա.
Ասի.- Հայր սուրբ, անունդ ի՞նչ է:
- Իմ անունս՝ Սուրբ Սարգիս,
Օրդուս անունը՝ Սուրբ Մարտիրոս,
Ջիս կը քալե ամպի վերան,
Անթաթար ծովի վերան:
Գնա ասա գերիներուն,
Ազատ անե իր արևուն:

ՀԱԲԱ, FFIII: 1981, 02/ՆորՆախիջևան
Փորքշեյան1971, 94/ Նոր Նախիջևան
ՀԱԲԱ, FBI: 1819, 01/Ղրիմ-Սիմֆերոպոլ
ԱԺ IX, 16/Նոր Նախիջևան

1 ՀԱԲԱ, FBI, ԱԺ IX *չիք:*
10 ՀԱԲԱ, FBI փերիներուն:

420գ

Ես աս գիշեր դուրս ելա՝
Մեկ կանչելուս սուրբ մը տեսա,
Անունն էր սուպ Սերգիս,
Տղին անունն էր սուպ Մարտիրոս.
Իր ծին կերթա պաղուն վրա,
Անապատու ծովուն վրա:
Մարդ մըն է ընկեր գերություն,
Մենք ընենք ընկերություն.
Հովը փչե հովալա,
Ջարնե, խղդե Հոռոմ պապան:

ԳԲՄ, 637/Սեբաստիա

420դ

Կես գիշերին դուրս ելա,
Ջարմանալի լույս տեսա.
Շատ աղաչի, ոտքն ընկա,
Ասի, թե՝ դու ո՞վ ես:
-Ես սուրփ Սարգիսն եմ,
Գալիս եմ Մասիս սարից,
Գնում եմ Արբիտոն քաղաք.
Որդուս անունն է Մարտիրոս:
Բուրվառս է հրեղեն,
Գավազանս օսկեղեն:
Ով որ ինձի հիշե երեք անգամ,
Նրան կազատեմ՝ սրից, քրից,
ջրից և կրակից,
Ամեն:

ՀԱԲԱ,FFII: 9254, 07/Ջավախք-Ուչմանա

420ե

Ես էս գիշեր տուրս մ'էլա,
Մեկ ծիով սուբ մը տեսա,
Տեսածիս զեհրուեցա:
- Սու՛րբ, քու անունդ ի՞նչ է:
- Սուրբ Սերգիս է:
- Որդիդ անունը ի՞նչ է:

- Մարտիրոս է:
Իջանք կացանք կետ Հորդանան,
Մեկը՝ Հիսուս Քրիստոս,
Մեկը՝ սուրբ Կիրակոս:
Խորոգխոսուն կանուխ-կանուխ,
Որն է թենպել, որն է պանուկ,
Սուրբ սեղան նստեր քառսուն մանկունք:
Մուշու սուրբ Կարապետ, սուրբ
Սերգիս ծիու վրա,
Յոթնը պորտը ծովու վրա,
Յոթնը Ավետարանը կլխուս վրա,
Սուրբ խաչն էլ էչքիս վրա,
Ըլլա, ըլլա, Տեր մեր Հիսուս Քրիստոս:
ԲԲ, 201/Կեսարիա

420զ

Տեն ման կալեն լուս մը տեսա,
Տեսածիս պես զեհրուեցա,
Յոթնը սահաք օդգըն ինջա՝
Վլացի, վլացի, վլացի,
Արքայութինի տուռը տրի:
Իջանք կացանք կետ Հորդանան՝
Էրկու ծիավոր տեսանք,
Էրկուքն է կանաչ կապանոք.
Մեկը՝ Հիսուս Քրիստոս,
Մեկն՝ սուրբ Կիրակոս,
Մեղա՜, մեղա՜, Տե՛ր, ողորմյա:
ԲԲ, 201/Կեսարիա

421ա

Սըփ Սարգիս, յամուր կանիս,
Համուր խաչն էր վըր թևիս,
Ջին գացե յանապտա ծովու վերեն.
Շատ մարթ ա ինկե գերուբեն,
Տ'իյամ էնեմ ընկերուբեն:
ՀԱԲԱ, FAV: 3101, 01/Ոշտունիք

421բ

Սուրբ Սարգիս անուն պարի,
Ոսկի գուտիկ, ոսկի վարի .
Իմ ծին կնաց թամքու վերա,
Անատակ ծովու վերա:
Շատ մարթ ինգեր ի գերուբեն,
Էրթամ անեմ ինգըրուբեն,
Իմ Սառայի խանըերուբեն:
Սառա՛, էլի թոներ վառի,
Տե ինչ պարի խըռերն եմ պիրե.
Մեյն ի Օխան, լոսն ի պերան,
Մեյն Ուրուխան, ոսկի պերան.
Կընաց մտավ մեչ տաճարին,
Պուռ ըմ կերավ, պուռ ըմ տարավ,
Քառսուն սակառ ավըլցուցին:
Վիրին Վարաք, սուրբ պատարաք,
Իրեյ պիպեռ կէր էն խաչին.
Մեյն ի սիրտ սատանին,
Մեյն գուղի ափից մեչին,
Մեյն կիշըրվա կան գացողին:
ՀԱԲԱ,FFII: 7305, 01/Վան

422ա

Սուրփ Սարգիս անուն պարի,
Ետ կնաց, առաճ իրե,
Ծինը տայ խըրեղեն,
Պուրվառն ը ծեռ լոսեղեն.
Ծառին զարներ, ծառ կը ծըղեր,
Ճողին զաներ, արուն ֆըշեր:
Վով զիկ իրեյ պերան հիշեր,
Ուր մեղք չ'իշեր,
Ուր խորը, մոր խավսարական:
ՀԱԲԱ,FFII: 7363, 01/Վան

422բ

-Սուրբ Սարգիս,
Անունդ պարիսպ,
Հու՞ստ կգաս, հու՞ստ կէրթաս:
-Ավտժմալա քաղաքից:
-Փուրվարթ ա լուսեղեն,
Գավազանտ էր հրեղեն:
Ավուր կանչա իրեք անգամ,
Ազատվես չարեն, չարքեն:
ՀԱԲԱ,FFIV: 6343, 01/ Աշտարակ-Բյուրական

423

-Սուպ Սերգիս, յուսկի՞ կուգաս:
-Ասաս-Մասաս լեռներեն:
Հուր ունիս հրեղեն,
Բուրվառ ունիս խնկեղեն,
Իրեք խաչ ունիս խաչեղեն.
Մեկը սրտիս, մեկը սվարիս,
Մեկը չարիս, չար խափանիս:
Ան խաչերեն խաչ մ'է խաչեր,
Ան կաթինքեն կաթ մ'է կաթեր,
Ան լուսերեն լուս մ'է լուսեր:
Լուսը՝ դուն, խաչերը՝ դուն,
Սուրպ ավազան մկրտության.
Մեր Տերը բարս սուպ սեղանին,
Աստծու բանն իր բերանին:
Իով որ աս աղոթքը գիտե,
Ավուրն իրեք անգամ հիշե՝
Ասված ալ իր մեղքը չ'իշե:
ԳԲՍ, 641/Սերաստիա

424

Ադենախաս բոզ ծիավոր սուրբ Սարգիս,
Ապավիներ եմ քեզի.
Իմալ խասար Աշըղ Ղարիբին,
Խասացիր յուր մուրազին,
Խասնես ամեն նեղածին,
Ամեն հընգածին,
Անճար նաչարին:

ՀԱԲԱ, FFII: 5729, 01

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԵՐԻ

425

Կես գիշերուն ես դուրս ելա,
Հայ զորավոր սուրբ մի տեսա,
Չոգուկ գացի, ոտքը ինկա.
-Տե՛ր, քո անունն ինծի ասա:
-Իմ անունըս է սուրբ Վարդեր,
Աղբորս անունն է Համատիկ:
Սուրբըն Վարդեր ծիո վրա,
Սուրբ Համատիկն ջորվո վրա:
Արծըքե թաս կէր ւ.փերը,
Առան էլան պաղ աղբերը.
Մեկ մ'էր ինկեր խիստ նեղութեն,
Առան էլան համբերութեն:

ՍԳՀ, 378

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ

426

Ես այս գիշեր դուրս ելա,
Փառավորյալ լուս մը տեսա:
- Ի՞նչ տեսար:
- Օհաննու Կարապետ:
Ջինճիր բռնիմ փարա-փարա,
Նստեցուցիմ ոտվիս վրա,
Աննա տաղին ծովին վրա:
Ով որ գիտե աս աղոթքը՝
Օրն երեք անգամ հիշե,
Դատաստանին մեղքը չի հիշե:

ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ I-5/ Մալկարա

427

Քրիստոս կայնավ կետ Հորտանան,
Սուփ Կարապետ ինոր վըկան.
Մըկըրտեցին հըրով, ծըրով,
Հոքիք փըրկեց հրեղեն սըրով.
Անտառց՝ տառց էկավ,
Անտեղ՝ տեղ քըթավ,
Կուր՝ տեսավ,
Խուլ՝ լըսավ,
Ինոնց սաղաղին
Քրիստոսի օրհնութեն
Վեր ծե ըլնի բիթուն:

ՀԱԲԱ, FFI: 4223, 01/Վան

428

Հե՛յ քե մեռնեմ, յոթ անվան տեր
սուլթան սուրբ Կարապետ,
Ժողվա կախ դև, լից քո զնդան:
Կախ դևն ասաց՝ յամա՜ն, յամա՜ն,
Ես կհելնեմ քեզ փոշախան,
Տանենք թալենք Փրե Բաթման,
Չուր Քրիստոս գա դատաստան:

ՀԱԲԱ, FFIV: 5741, 01

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ

429

Է՛յ կեսօրվա դիվան դարգյահ Աստված,
Հիքսուն ավուր պաշտուն պատարագ,
Գրիգոր Լուսավորչի լուս գերեզման,
Դու խասնես ամեն անճարին,
Ամեն նեղ ընկածին,
Ընոնց սաղաղեն նոր մեզի:
Գրիգոր Լուսավորչի լուս գերեզման,
Ապավինել եմ քեզի,
Մեր հայոց լուս հոգին
Ազատես այլազգի ձեռքից,
Հայ քաջերի թուրն միշտ կտրուկ պահես.
Բազուկն միշտ ամուր, թուրն միշտ կտրուկ՝
Այլազգի գլխին միշտ պահած ընկի.
Մեր հայոց ազգի Թուր կայծակին
Միշտ թող շողշողա Օսմանլու
փաշայի գլխին:

ՀԱԲԱ, FFIV: 5743, 03

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳԻ

430

Խորդեցե՛ք, ավիլեցե՛ք,
Փունջ մանուշակ խտխտեցեք,
Պարոն Սըփ Գորգ վերեն խանեք,
Աշխարհ հմեն յառջև բերեք.
Որ արդար էր՝ էքի ընդաս,
Որ մեղավոր՝ դառնիկ մ'էլաց:

ՀԱԲԱ, FAV: 3083, 01/Ոշտունիք

ՏԱՐԲԵՐ ՍՐԲԵՐԻ

431

Սուրբվեոր, սուրբ Գրիգեոր,
Անապատու սուրբ Կիրակեոս
Վեր առին Պետեղանոս,

Վար դրին Ստեփաննոս.
- Ուսկե՞ կուգաս:
- Խաչն ի լուսուն,
Էջջեվ կուսուն,
Մեր Տերը խաչը հանեցին,
Խաչեն ընկավ, դժոխոհ ավրեց:
Իով օր աս աղոթքը գիտե,
Ավուրն իրեք անգամ հիշե,
Ասված ալ մեղքը չ'հիշե:

ԳԲՄ, 642/Սեբաստիա

Վա՛յ ան ավուր՝ մորես եղեր,
Հերամ-հելալ չըսի՝ կերեր:
Կաթնեն աղբուր, քարեն տաճար,
Աստծու դեմ բռնենք վաճառ,
Ասված ալ տա մեղասնուն ճար:
.Յերկան ճամբա եմ գնալու,
Փուշ ու տատաշքն եմ կոխելու,
Պաշար չունիմ հետ տանելու՝
Քրիստոսիս ճուղապ տալու:

ԳԲՄ, 641/Սեբաստիա

432

Պստի, պստի եկեղեցի,
Դանկով զարկի դուռը բացի,
Մտա ինե, աղոթք կացի,
էլա դյուս, մեղա տվի:
Մեղա՛, մեղա՛, խազար բերան,
Խոստովանիմ երկու խազար՝
Կաթնով աղբուր, քարե տաճար՝
Խետ Աստըծյուն անենք վաճար,
Աստված անի մեր խոգյու ճար:
Իմ անուն՝ սուրբ Հակոբ,
Իմ խոր անուն՝ սուրբ Մարտիրոս.
Ծառին զարնեմ՝ ծառ կը խշա,
Ճյուղին զարնեմ՝ արուն կը խշա.
Որ ծիկ իրեք բերան հիշա,
Աստված ուր խոր-մոր մեղք չհիշա:

ԷԱԺՋ, 22/Վան

433

Աղոթք մ'ըսեմ Տեր Մուսեին,
Երանելի վարդապետին.
Գիշեր ճըյիներ, ցորեյ դատեր,

434

Հըսոս Քիստոս, խոտե աստված, կամ քե հոգ.
Փուբկի խանե, տու խասնես ծիկ,
Սատանի ճամպխից զատհամ.
Տիրամե՛ր, տար քու ճամխին.
Յա՛ սուբ Սարկիս, տու խասպեխաս խասնիս:
Հիվի կամ քու մոտից՝
Յեմ կունահներ չ'խես,
Ռապան պլնքազ անցեր իմ.
Յա՛ խաչ, հավետրան, պատարաք,
Տու օխնիս, պախապան կաս,
Խազար ճար մեղա՛, մեղա՛, մեղա՛:

ՀԱԲՄ, FFI: 9211, 01/Մոկս

435

Յա՛ Հիսուս Քրըստոս, խաչ, Ավատըրան,
Տու խըլաս արե մեխկե մա, կըրբան.
Էյ՛ խոդե ասված, յա Մեյրան անա.
Ազ մեղավոր ամ.
Սըփ Բուտկի Կեվո,
Տու խըլաս արա, կըրբանե տամա:

ՀԱԲՄ,FFI: 4229, 01

Գ. ԾԻՍԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 436-447)

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ

436

Քառսուն մանուկ, քառսուն կուս,
Քառսուն մանուկ բարեխոս:

ՀԱԲՄ, FBI: 1102, 03

437

Քառսուն մանուկ, քառսուն կույս,
Քառսունին էլ բարեխոս.
Լիճքը լիքը լցվեցավ,
Քառսուն մանուկ թմմեցավ:
Բաղնեպանին տվիր պսակ,
Ինձ էլ բաժին տուր պսակ:

ՀԱԲՄ, FFI: 7183, 01, 02/Գյումրի

438ա

Սուրբ քառսունք, սուրբ քառսունք,
Քառսուն մանուկ էր լճին,
Թագն ու պսակն էր վզին.
Ինչպես օղորմեցար բաղնեպանին,
Ինձի ալ անպես օղորմե:

ՀԺՀ VIII, 99/Պրիմ

438բ

Քառսուն մանուկ վըր մեկ լճին,
Կուսանաց փսակ վըր ճակտին.
Էն, ինչ արժան էրիր բաղմաբանին՝
Մե խել արժան էնիս:

ՀԱԲՄ, FAV: 1141, 01-03/Ոշտունիք

439

Քառսուն մանուկ,
Բռնե գոտիս՝
Չելնե հոգիս:

ՀԺՀ VIII, 99/Որիմ

ԶԱՏԿԻ

440

Օրհնեալ է Աստուած,
Օրհնեալ է Աստուած,
Օրհնեալ է Աստուած,
Օրհնեալ է Հայրն Աստուած,
Որդին Աստուած,
Հոգին Աստուած:
Մեզ աւետիք, ձեզ աւետիք,
Մեզ և ձեզ մեծ աւետիք,
Զի Տէրն յարեաւ ի մեռելոց,
Ազատութիւն իւր գերելոց:
/Օրհնեալ է Աստուած.../
Օրհնեալ է երկինքն ու երկիր,
Սէրովբէք և քէրովբէք,
Հրեշտակք և հրեշտակապետք,
Ռամիկք և շինականք,
Արք և կանայք,
Ծերք և տղայք,
Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Ազատութիւն ետ գերելոց,
Մեզ աւետիք, ձեզ աւետիք,
Չեզ և մեզ մեծ աւետիք:
/Օրհնեալ է Աստուած.../
Նախահայրն գուշակեալ
ի մարգարէից,
Անարգեալն ի հրէից,
Հայհոյեալն ի քահանայապետից,
Ըմբռնեալն ի փարիսեցւոց,
Մատնեալ ի պիղծ Յուդայից,
Խաչեալն ի Պիղատոսէ,
Խոցեալն ի զինաւորէն.
Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Ազատութիւն ետ գերելոց.
Մեզ և ձեզ մեծ աւետիք:
/Օրհնեալ է Աստուած.../
Օրհնեալ է սուրբ Երրորդութիւն,
Վենծութիւն, բարձրութիւն,
Թագաւորաց հաստատութիւն,
Գերելոց ազատութիւն,
Հիւանդաց ազատութիւն,
Քրիստոնէից հաստատութիւն,
Մեր մեղացն թողութիւն,
Նընջեցելոց արքայութիւն,
Զի Տէրն յարեաւ ի մեռելոց,
Ազատութիւն ետ գերելոց.
Մեզ աւետիք, ձեզ աւետիք,
Մեզ ու ձեզ մեծ աւետիք:
/Օրհնեալ է Աստուած.../
Օրհնուի և պահպանուի
Ձեր դաշտն ու սարը,
Այծն ու ոչխարը,
Կովն ու կթանը,
Ձուքն ու գութանը,
Վարն ու վաստակը,
Գլուխն ու տակը,
Հանդն ու հանդաստանը,
Արօտն ու այգեստանը,
Կալն ու ջաղացը,
Ցորէնն ու հացը,
Ձին ու էշը,
Եզն ու գոմէշը,
Գռնարածն ու հորթարածը,
Տուարածն ու խոզարածը:

ԱՀ, X, 263-264/Լոռի

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

441

Համփարցում պացըռ պատի,
Օսկի կամար, օսկի կոտի,
Տուռըտ կայնի Քրիստոսի
Ճիկուտը մեկ արծաթ-օսկի.
Վովօր հինգ օր պաստ պըռնե՝
Մեխքը չ'իշվի թատաստանիկ:

ՀԱԲԱ, FBI: 1818, 02/Որիմ-Սիմֆերոպոլ
ՀԱԲԱ, FFIII: 1983, 01/Նոր Նախիջևան
Փորքչեյան1971, 94/ Նոր Նախիջևան

ՏՆՕՐՀՆԵՔԻ

442

Օրհնեցի տունն ու անդիվորն,
Պառավն ու խալիվորն,
Ախչիկն ու տղեն,
Խարսն ու փեսեն,
Թրքոտ ու մկնոտն,
Ձավարն ու կուրկոտն,
Մաղազեն ու մառան,
Ամբարն ու հնծան,
Չեթն ու եղաման,
Սոխն, սխտորն, սխտորաման,
Տաշտ ու մաղն,
Բիբարն ու աղն,
Թան ու բթխմորաման,
Պանիրն ու չորքան,
Գյոմն ու մարայք,
Ծըծումն ու կարայքն,
Բակն ու ցանի տուն,
Հավն ու հավի բուն,
Պտտուրն ու փքիր,

Խառջեկաբն ու թոնիր,
Ժաժիկն ու մածուն,
Պռվածքն ու բթուն,
Գինին ու ծուկն,
Մանդակն ու պտուկ,
Կարասն ու տյուծիկ,
Կուժն ու կաղալիկ,
Ուտողքն ու սեղան,
Պղինձն ու քյասան,
Արտն ու անդաստան,
Բաղչեն ու բոստան,
Կալն ու ճաղացն,
Ցորյան ու հացն,
Ջին ու ջորին,
Խոտ, հարդն ու գյարին,
Կովն ու էշը,
Եզն ու գյոմեշը,
Ծառն ու ճյուղն,
Բարն ու պտուղն,
Հովիվն ու ոչխար,
Էծն ու գյառ՝
Միշտ և հավիտյան
Օրհնեցի և պահպանիցի:

ՎՍՍ, 75/Վան

ՍԵՂԱՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

443

Օրհնեցուք մեք միաբան,
Խայր և Որդի և սուրբ Խոգիյն.
Որ բարության է պարգևիչ,
Ջոր վայելեն ազգը մարդկան:
Առաջ օրհնենք զտանուտերն,
Որ մեզ կոչյաց ի միասին.
Եվ էն սեղան որ պատրաստեց,
Եվ պատրաստեց անուշ գիյնին:
Սեղանն քո օրհնյալ լինի,
Անեղական աջով վերին.
Որ ժողովուրդ Իսրայելի,
Նա կերակրեց յանապատի:
Այն որ ի տան մաքսավորի,
Եվ քող զմեղս Զաքեոսի,
Չեզի մեղաց նա ազատի,
Աղաչանոք Աստվածածնի:
Ամենեցուն Տեր բարեգութ,
Զձեզ պահե յուր հովային.
Ալ[ս]տեն ուրախ պահի մարմնով,
Անդեն անճառ ի յուր բարին:

ՎՍՍ, 74/Վան

444

Քրիստոսի լուս բերան,
Յայսմավուրք ու շարական,
Չորս գլուխ սուրբ Ավետարան,
Հարդայիմ ծեզի պախա միաբան:
Բոլոր նստի ձեր սեղան,
Հորդոր մնա ձեր կքան,
Չուր ի Քրիստոս գա դատաստան:
Մելքոն, Գասպար, Բաղդասար,
Գացին Քրիստոսի տեսության.
Էնոնց օրհնություն ձեզի ու ձեր տան:
Աստված էնա ձեզի նազար,
Չեզի օրշնա հոգովն սուրբ աղքատ Ղազար:
Սուրբ Կարապետ, որ կը հուսան,
Առավ իջավ գետ Հորդանան,
Մկրտել զՏեր միայն,
Այն ըլլա ձեզի օգնական, պահապան:
Օրհնենք սերովբեաց, քերովբեաց,
Ինն դաս հրեշտակաց,
Տասներկու դաս առաքելաց,
Քսան ու չորս մարգարեաց,
366 հայրապետաց,
Օրշնեն զձեզի՝ առի նման,
Խնկենի ծառի նման,
Սահակա գառի նման.
Ջեր մեկ մալն Տերն էնե հազարական:
Աստվածածին ծնավ ի յէր,
Անարատ էբեր զՏեր մեր,
Էնի օրշնե զձեզի, ձեր խեր ու մեր:

ՀԺՀ VI, 148/Արցախ-Սորշեն

445

Առաջ սուրբ Աստված միածին՝
Մեր տեր Քրիստոս հավատացին,
Երուսաղեմա դուռը բացին.
Քրիստոսա լուս բերան,
Չոս գլոխ Ավետարան,
Ութ կանոն սաղմոսարան,
Մենք էկան[ք] էսական,
Աստված հաջողա ձեր բան,
Բոլոր մնա ձեր սեղան,
Հորդոր մնա ձեր կքան,
Օրհնվի հանդ ու հանդաստան,
Սաղ մնա ձեր լծկան:
Արի նման, բարի նման,
Սուրբ Սահակա գառի նման,
Ծլեք, ծաղկեք սուրբ] Սաբեկա ծառի նման,
Մելքիսեդ քհանայի նման,
Պտուղն ուտեք՝ անմահանաք,
Վերի դասին արժանանաք:

ՀԱԲԱ, FAV: 5937, 01

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ

446

Խրըշտակ իչավ հերթիս,
Ջըվաբ կընացա Քրիստոս,
Ասին՝ Արթար խուկի կը պիրին,
Ասեց՝ Փառավոր տեղ արեք մեչ տրախտին:
Տեղ արին, առին տարան,
Փառավոր, փառքն ի վերան:
Ողորմի խազար պերան
Արթար մեռելոց խոքուն,
Որ տատրի մեչ տրախտին:

ՀԱԲԱ, FFI: 3863, 01/Վան-Շաղբաղի

ՈՒԽՏԱՎՈՐԻ

447

Ո՜վ սուրբ, երեսս ոտիդ տակը,
Դու իմ բալենու ռուզդը հասցնես,
Դու սրանց արևշատություն ու սաղ ջան տաս.
Դու հանդ ու հանդաստանը ցասումից ազատես,
Աշխարհքին առատություն տաս,
Դու ամեն նեղացածի փրկես, ազատես,
Նրանց սադաղին էլ մեզ:
Մեղա՜ քեզ, Տե՛ր, անարժան մեղավոր եմ,
Դու քու ստեղծածը չի կորցնես,
Դու իմ մեղավոր հոգուն մի լիս ու ծար անես,
Արքայութենից մասն ու բաժին տաս.
Դու չի դուշմանի սրտով անես նամարդի մոհտաջ:
Քու լիս երեսին ղուրբան,
Քու լիս տաճարին ղուրբան,
Դու քաղցր աչքով մտիկ անես իմ տանն ու տեղին,
Իմ տիրոջը դու շառից ու փորձանքից ազատես.
Անդարձին դարձ տաս,
Չարը կործանես, բարին առաջացնես,
Դու մեր հողն ու ջուրը պտղացնես,
Ազար բեզարը հեռացնես,
Աշխարհքի ռուզդը շատացնես,
Թագավորի սիրտը կակղացնես,
Կարկուտը կորցնես,
Ջինն ու անծրևը առատացնես,
Աշխարհին հանդարտություն տաս,
Մեծերին հաշտություն տաս,
Հիվանդներին սաղություն տաս...

ԱԳ X, 226/Լոռի

Դ. ՆՈՐԱԼՈՒՄՆԻ (№№ 448-452)

...

448ա

Նո՛ր, նո՛ր նորավոր,
Կանանչ-կարմիր թագավոր,
Ծեր գ'ացիր, տղա եկար,
Յեզր աշխրքեն ի՞նչ խաբրիկ բերիր:
- Աշխրքին՝ խեր ու խաղաղութեն,
Թագավորներուն բարիշութեն,
Մահին՝ թանկութեն,
Հացին՝ յեժնութեն,
Իմ աղեկներուն՝ արևշատութեն,
Իմ հոգուն արքայութեն:

ԱԳԶ, 32/Մուշ-Բուլանըխ
ՀԱԲԱ, FFI: 8992, 03/Մուշ-Բուլանըխ
ՕԱԹ, Գ.Արվանձտյանցի ֆոնդ Ip, № 1

1 ԳԱԹ Նորաւոր:
5-6, 9 ՀԱԲԱ *չիք*
5-6, 10 ԳԱԹ *չիք*
9 ԳԱԹ հայ քրիստոնի տղեկներաց արևշատութեն:

448բ

Թագավոր, թագավոր, նոր թագավոր,
Կանանչ ու կարմիր զահավոր,
Նոր կասեր՝ տղա եկավ,
Աստուածեն ի՞նչ խապար:
- Մահաւ՝ հարստություն,
Հացուն՝ էժնություն,
Մեղաց՝ ի թողություն,
Ոգվույն՝ արքայություն:

ՊԱԳԲ, 331/Այնթապ

448գ

- Նոր լուսի՛ն, նո՛ր, շնահոր,
Իմ ախպարս նոր քաքավոր.
Ձեր կնացիր, գենջ էգար,
Ինձ ի՞նչ պերիր արմաղան:
- Յերեսիդ՝ քիսպեք,
Սիրդիտ՝ սուն,
Ծեռնիտ՝ բերեքեք:

Սվազյաւ 1959/ Նոր Նախիջևան

448դ

- Կանաչ-կարմուր թագավորս,
Տեր կենացդ մատղաշ եկար,
Ի՞նչ պերիր:
- Անուշ անմահություն,
Մեղքերուս թողություն,
Մեղա՛, մեղա՛, Տեր ողորմյա:

ԲՍ, 331/Կեսարիա-Նիզե

449

Լուսինը նուր, շնահաուր,
Իս միղաուր, դուն թաքաուր.
Նստած բանիս՝ բարաքաք,
Կանգնած ջանիս՝ հարաքաք:

ԹՄԿ, 16/Թիֆլիս

450ա

Լուսինկա՛, օսկի ընկա,
Բերիքսիվար վետքտ ընկա.
Դուն դեղին, ծիտ դեղին,
Մորուքտ իջել գոտելտեղտ.
Ծեր գնացիր, մանուկ էկար,
Մեղքս տարեր, վարձքս բերեր:

ԳԲՍ, 644/Մեբաստիա

450բ

Լուսընկա՛, լուս վերըն կա,
Ծովին վրա օդկըդ ինկա,
Պագնելն իքեն ծովը ինկա.
Ծեր կացիր, մանուկ էկար,
Մեխկս տարիր, վարձկս պերիր:

ԱԴ IX, 163/Կ.Պոլիս

451

Լուսընկա՛, լուս վերըն կա,
Պ'երես ինկա, օքկտ ինկա.
Իրեք զինավոր հասնի.
Մեկը՝ Հիսուս,
Մեկը՝ Քրիստոս
Մեկն ալ՝ բարեխոս:

ԱԴ IX, 162/Կ.Պոլիս

452

Լուսունկա՛, լուս վերըն կա,
Ծովին վրա փարա մը կա,
Առնելն իքեն ծովը ինկա,
Ծովեն էլա՝ հորը ինկա:
Սուրբ Սերգի՛ս,
Պռնե կոտիս,
Չելլա հոգիս.
Դրախտին տուռը պաց,
Ասդարները՝ ներս,
Մեղավորները՝ տուրս:

ԱԴ IX, 162/Կ.Պոլիս

VIII
ՋԱՎԵՇՏԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՈԴԻԱՆԵՐ
(№№ 453-463)

ՏԿՆՈՐԻ

453ա

Ուլ էիր, թաքյա դարծար,
Բարձըր սարերուն արծեցար,
Ծաղկնոցնին մաղվեցար[42],
Չարչրկվելով մորթվեցար,
Բզրդկվելով քերթվեցար,
Կպրախանեն կուպրվեցար,
Շիրաջխանեն կնքվեցար:
Ո՜վ երանելի սուրբ տկճոր,
Լուլեդ բա՛ց, ողորմա՛ մեզ:

ԵԱ, 59/Խոտրջուր

ՀԱԲԱ, FFI: 4183, 01/Խոտրջուր

453բ

Ուլ էիր ու տիկ դառար,
Տկահան չարչրվեցար.
Հալվաբրի դարիդուսին,
Տվինք մշակի ուսին:
Ո՜վ, ո՜վ սուրփ տկճուր,
Լուլետ բա՛ց, միզ ողորմա՛:

ԹՄԿ, 52/Թիֆլիս

ՇԱՏԱԽՈՍԻՆ ԼՌԵՑՆԵԼՈՒ

454

Ով օր խոսի, խոստովանի՝
Օչիլն ուտե ղրղճալի,
Դարփուն դեդի ց... ուտե,
Լեգզու պ... ուտե.
Քարափումը մե կնիկ կա,
Թող նրա ծիրծիդեն ուտե:
Կա՛պ, ...
Կողպեքը քի, բալնիքն ինձ:

ԹՄԿ, 19/Թիֆլիս

ՀԻՎԱՆԴԻ

455ա

Աղոթիմ՝ լավանաս,
Տաս քաթա գողնաս,
Ես ուտեմ՝ դու լավնաս:

ԵԱ, 58/Խոտրջուր

455բ

Աղոթիմ՝ լավնաս,
Չորս գաթա գողնաս,
Ես ուտիմ՝ դու սաղնաս:

ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի

456

Աղոթեմ՝ աղ գողանաս,
Բոշիցը մաղ գողանաս,
Ջուխտ գաթեն սաղ գողանաս,
էն էլ ուտես՝ ոչ սաղանաս:
Գնաս, գնաս փորիսող,
Կերածդ ըլի լիսնահող.
Ցածր պատից պատրաստ կենաս,
Բարձր պատից դվեր ընկնես,
Բարակ ջրից պատրաստ կենաս,
Վարար ջրից մեջն ընկնես.
Քանի ջուրն ալիկ տա,
Քեզ վեր ունի՝ քարիկ տա.
Քանի ջուրը փրփրի,
Քեզ վեր ունի քրքրի.
Քանի ջուրն ափիկ տա,
Քեզ վեր ունի՝ թփիկ տա:

ՆԴ, 1887, № 125/Լոռի

ԱՀ XI, 45/Լոռի

457

Աղչի՛, դու ոչ ըլես,
Կատվների փայ ըլես,
Աղամանիկ աղ ցանես,
Օխտը խախալ ցավս ունես:

ԱՀ XI, 42/Լոռի

---

42 Անասունների իրար կողք-կողքի արածելը *(ծաև. բանահավաքի)*:

458

Օխնեմ, օխնեմ՝ օղոճկես,
Ոտնեդ վեր պողոճկես.
էրբաս քյաղայք աղ առնես,
Չեբիկ-մեբիկ ցավ առնես:
Տայդ փռեն քանձր քաղիս,
Վերեն պառկես քյառսուն ամիս.
Քյանձ կալե մաղ՝ կալկլվես,
Քյանձ ծարե մաղ՝ ծարծրվես,
Քյանձ փոկե մաղ՝ փյոփքվես,
Կտելով ճյուր խմես՝
Ճամած խաց ուտես:
էրկրես, էրկրես, չ'փոռքնես էտա ցավից.
Չամիչ յոթ տիր կըծ անես.
Ասեղը էրկու թիվով շլկես:
Նռան խատ ամսե-ամիս,
Շաքրի կտոր չյում խիյնգ ամիս:
Վանա ծով ձեք էլնի,
Չայիր-չիման ճրայգ էլնի,
Մաչիդ մատրասեն պատրույգ էլնի,
Գիյշեր ցերեկ հա՛ վառվի՝
Խուգյուտ բողուբեն չէլնի:

ՎՍԱ, 78/Վան

ՀԻՍՏՈՍ ՔՐԻՍՏՈՍ

459

Հիստոս Քրիստոս,
Քոռնա Մարտիրոս,
Պզրի Հախեն
Կտրի կարեն,
Խափանի ծլուլի Պողոս.
Հեռանա մեր երկրեն
Հը՛մ շեյխ, հը՛մ մոլլեն,
Ե՛լ ք... քրդու դռեն:

ԳԱԹ, Գ.Սրվանձտյանցի ֆոնդ Իբ, № 1

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

460

Հայր և Որդի և Հոգի սուրբ,
Օր կը սատկի սաքսան քուրդ,
Մեկ հատ հայ, էն ալ սուտ,
Ու՞մ փոյն անոթի ա, ու՞մ ա կուրթ,
Իմ ու քու բան մնաց բուրդ:

ԵԱ, 58/Խոտրջուր

ՀԱՅՐ ՄԵՐ

461

Հայր մեր, որ երկինք վկա,
Կերա քթու՝ փքա,
Ընկա՝ շուտ սըկա,
Ելա դուռ՝ լըկա:

ՀԱԲԱ, FFVII: 1174, 01/ Մուշ-Բուլանըխ

462

Հայր մեր երկինք, հայտա՛ դալտի[43],
Սուրբ եղիցի, չայտա դալտի,
Անուն քո եկեսցե, տահա կյալմատի:

ԵԱ, 59/Խոտրջուր

ՆԱՅԱԾ ՍԻՐՈՎ

463

Նայած սիրով հարսըմ գտա,
Համոզելով տունը մտա,
Աղաչելով ծոցը մտա,
Ափլփելով բանըմ գտա:

ՀԲՆ/Կարս

---

[43] Տողերի երկրորդ բաղադրիչները թուրքերեն են, հերթականորեն նշանակում են. «հայդե մնաց», «գետում մնաց», «դեռևս չեկավ»:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԲՈՒԺԱՂՈԹՔՆԵՐ
(№№1-164)

Հայ հմայական բանահյուսության, մասնավորապես դյութաղոթքների, մեծագույն մասն են կազմում բուժաղոթքները: Դրանք մարմնական և հոգեկան տարբեր հիվանդությունների բուժմանն ուղղված հմայական բանածներ են, որոնք մեծ մասամբ ուղեկցվել են հմայական արարողություններով, հուռութք-թալիսմաններով, հմայագրերով («թուղթ ու գիր»), ինչպես նաև բանական ու կախարդական բուժամիջոցներով:

Կատարողներն են՝ տվյալ գյուղում, գավառում, քաղաքում լայն ճանաչում ու հեղինակություն գտած վարպետ աղոթող-բուժարարները (մեծ մասամբ տարեց կանայք), «թուղթ ու գիր» անող կամ «գրբաց» տիրացուներն ու թափառաշրջիկ քահանաները, երբեմն էլ մոտակա բնակավայրերում կամ հեռավոր վայրերում անուն հանած այլազգի մոլլաներն ու շեյխերը:

Հայ ժողովրդական բանավոր ու միջնադարյան գրավոր բուժաղոթքներն ուղղված են շուրջ 40 տարբեր հիվանդությունների բուժման: Դրանց մեջ քանակով ու տարբերակների առատությամբ աչքի են ընկնում հատկապես ակնահարվածին (չար աչք դիպածին), ծննդկանին բուժող և վերջինիս վնասող չար ոգիներից (ալ, թպղա) պահպանող աղոթքները:

Ըստ ժողովրդական հավատալիքների՝ հիվանդությունները կամ ցավերն արդյունք են չար ոգիների կամ դևերի ներգործման: Այս հավատալիքը լավագույնս դրսևորված է միջնադարյան ախտարական գրականության մեջ տարբեր խմբագրություններով հայտնի՝ «Հարցմունք Սողոմոնի թագավորին յոթանասուներկու դևերաց» կամ «Եօթանասուն և երկու հարցմունք Սողոմօնի» և կամ «Հարցմունք Սողոմօնի ի փերիներուն վասն ամուլ կանանց ծնանելոյ, զաւակն մեռանելոյ և կամ ապրելոյ» այս և այլ խորագրերով ժողովածուներում (ըստ Մատենադարանի № 6677, 6678, 8423, 8428 ձեռագրերի):

Սրանք ժողովրդի մեջ «Սողոմոնի» կրճատ անունով հայտնի կախարդական գրքերն են, որոնցով իրենց հմայական արվեստում առաջնորդվում էին գրագետ հմայագործները՝ տիրացուներն ու քահանաները:

Սողոմոնը (ըստ № 8423 ձեռագրի) կանչում է 72 դևերին (չար ոգիներ), որոնցից յուրաքանչյուրը ճշող մեծամասնությամբ ունի իր անունը, և նրանց ենթարկում երդվեցման: Նախ՝ նկարագրվում է դևերի արտաքինը, որ բաղադրված է մարդու և տարբեր կենդանիների մարմնի մասերի խառնուրդից, ապա հաջորդում է դևերի խոստովանությունը: Սկզբից հայտնում են, թե իրենք որտեղ են բնակվում, ապա՝ թե մարդկանց ինչ վնասներ են պատճառում: Պարզվում է, որ յուրաքանչյուր դև մեկ հիվանդություն է հարուցում, և Սողոմոնի երդվեցման շնորհիվ նրանք հայտնում են տվյալ ցավի բուժամիջոցը, հմայագիրը (թլիսմ) և օգտագործման եղանակը: Սողոմոնի այս հարցումները հմայական երդմնեցուցական բանածների դասական օրինակներ են: Դրանցից նախ պարզվում են հին աշխարհայացքին բնորոշ մի շարք իրողու-

թյուններ: Առաջին հերթին տրվում են հիվանդություններ հարուցող չար ոգիների անունները, որոնց մի մասը օտար ծագում ունի, իսկ մի քանիսը (Շամաշ, Թապալա, Աֆրետուն) զուգամիտվում են հին արևելյան դիցանուններին: Այնուհետև ներկայացվում են նրանց մարդակենդանակերպ արտաքինը, բնակության վայրը, գործառույթները, իբրև հիվանդության հարուցիչների և յուրաքանչյուր հիվանդության հմայական բուժամիջոցները:

Ապա, որ դարձյալ կարևոր է, Սողոմոնի հարցում-երդվեցումներն իրենց հորինվածքով (կոմպոզիցիա) գրեթե նույնանում են բարի և չար ոգիների երկխոսության վրա կառուցված գրավոր ու բանավոր հմայական բուժաղոթքներին, որոնք բոլորն էլ ունեն երդմնեցուցական բնույթ: Այնպես որ, երդմնեցուցական բանաձևերն իրենց հիմքով կարող են սերած լինել Սողոմոնի հարցումներից կամ նմանատիպ հարցումների առավել վաղ ձևերից:

Միջնադարյան երդմնեցուցական մյուս բանաձևերում, որտեղ բարի ոգիների դերում հանդես են գալիս քրիստոնեական սրբերն ու հրեշտակները, դարձյալ հիվանդություններն անձնավորված են չար ոգիների կերպարներում, որոնց երդվեցնում ու պատժում են քրիստոնեական սրբերը:

Միջնադարյան գրավոր ավանդությունից բացի, ինչպես վերևում նշվեց, ժողովրդական բանավոր ավանդության մեջ ևս հիվանդությունների հարուցումը մեծ մասամբ չար ոգիների հետ է կապվում:

Խարբերդում, Սիվրիհիսարում, Իզմիտում, Բաբերդում և արևմտահայ այլ ազգագրական շրջաններում հավատում էին, թե հիվանդությունները հարուցում են «մեզմե աղեկներ» կոչված ոգիները, երբ նրանց նկատմամբ, հաճախ անգիտությամբ, որևէ անթույլատրելի արարք է կատարվել կամ խախտվել է որևէ հմայական արգելք (դիցուք, գիշերով ջուր են թափել փողոցը և վնասել այնտեղ շրջող ոգիներին, կամ դռան շեմից երեխաներին անց են կացրել առանց աղոթելու և այլն): Կատարվել են զանազան հմայական արարողություններ (շաքար շաղ տալ կամ օշարակ ցանել ոգիների գտնված տեղում)՝ նրանց բարկությունը մեղմելու համար [հմմտ. ԲԳ, 54. ԲԲ, 540, 568. ԲԱ, 380]:

Հիվանդությունները համարվել են նաև սրբերի (իմա՝ սրբավայրերի, խաչերի) տված պատիժ, երբ մեկն իր արարքով արժանացել է որևէ սրբի (խաչի) ցասման և հիվանդացել: Լոռիում գուշակելու համար, թե որ խաչից է հասել ցասումը, կատարվել են գուշակման տարբեր արարողություններ (մաղ պտտել, փիլթա դնել, գարի գցել, կուռը չափել և այլն): Եվ երբ գուշակվել է հիվանդություն հարուցող սրբի անունը, հիվանդին խորհուրդ է տրվել մոմով ու մատաղով գնալ այդ սրբի դուռը՝ նրա ցասումը շիջելու և բուժում ստանալու համար [ԱՀ X, 232-234]: Այս հավատալիքը դարձյալ արտահայտությունն է ոգիներից կամ աստվածություններից (իմա՝ սրբերից) պատժվելու հեթանոսական հնագույն աշխարհայացքի:

Ժողովրդական ավանդությամբ հիվանդությունները (ցավեր) հաճախ հանդես են գալիս անձնավորված, մարդկային կամ կենդանական որոշակի կերպարանքով, երբեմն՝ մարդակենդանակերպ, հաճախ՝ որոշակի հանդերձանքով հանդերձավորված կամ զենքերով ու գործիքներով զինված:

Հայ ազգագրական տարբեր շրջաններում որոշակի կերպարներով ու գործառույթով են հանդես գալիս հատկապես համաճարակային և տարափոխիկ հիվանդություններ (ժանտախտ, խոլերա, տիֆ) հարուցող ոգիները, որոնք կոչվում են *ցավեր*

կամ *գրողներ:* Նրանք պատկերացվում են սրածայր գլխարկներով, ձեռքերին բռնած սև, սպիտակ, կարմիր (կամ կապույտ և կանաչ) ճիպոտներ: Երբեմն նրանք պատկերացվում են մանուկների կերպարանքով [ԱՀՋ, 353-354]: Նրանք ունեն և՛ իրենց առաջնորդը, և՛ ուղեկիցը. վերջինիս վերցնում են տվյալ բնակավայրում բնակվող տեղացի, իրական անձնավորություններից մեկին, որ կոչվում է «գրողի գգիր»: Միայն ջերմ (մալարիա) հիվանդությունը չունի ուղեկից և շրջում է միայնակ: Այդ ոգիները կրում են աստվածությունից իրենց հանձնված մի մատյան (դավթար), ուր նախապես գրված են մահվան և հիվանդության ենթակա անձանց անունները: Նրանք գգիրի ուղեկցությամբ աներևույթ շրջում են տանից տուն և ում սև (երբեմն՝ կանաչ) ճիպոտով են հարվածում, նա տեղնուտեղը մեռնում է, իսկ ում՝ սպիտակ (կամ կարմիր, երբեմն՝ կանաչ) ճիպոտով, նա հիվանդանում է, բայց չի մեռնում, դարձյալ ապաքինվում է: Ճիպոտի հարվածին ենթարկվածների մարմնի տվյալ մասում գոյանում է խոշոր պալար: Այդ ոգիների այցելության և մեկնելու պահերին լսվում են թմբուկների հեռավոր ու խուլ ձայներ [տե՛ս ԱՀ I, 298, 309, ԱՀՋ, 48-50, 393-394, ԲԱ, 508]: Մարզվանում խոլերա հարուցող ոգիները՝ էճինլյուները, պատկերացվում են թմբկահար մանուկների կերպարանքով, որոնք թմբուկ հնչեցնելով՝ շրջում են փողոցները, և նրանց ձայներ լսողը բռնվում է խոլերայով և մեռնում [ԲԳ, 428]: Վասպուրականում և այլուր հավատում էին, թե մեռնողի մարմնի որևէ մասը եթե կապտում է, «գրողի զարկած ճպոթի տեղն ի» [**Սրվանձտյանց 1978,** 146], կամ եթե հիվանդի մարմնի վրա կապույտ բծեր են նկատվում, ուրեմն՝ «գրողի կանաչ ճիպոտի նշանն է» և գուշակում էին, որ նա շուտով մեռնելու է, քանզի գրողը կանաչ ճիպոտի հարվածով նշան է անում այն հիվանդի վրա, որի հոգին մի քանի օրից հետո առնելու է [ԱՀ XX, 192]:

Լոռիում անասունների հիվանդություններ անձնավորող ոգիները կոչվում են «ազար (հիվանդություն) ման ածող հրեշտակներ» կամ պարզապես՝ «ազարի հրեշտակներ», որոնք պատկերացվել են տաճկական հագուստներով հանդերձավորված և ձեռքերին տեգ բռնած: Դրանց դեմ, ըստ տեղական ավանդության, մահակով, շամփուրով ու կրակով մաքառել են տեղացի քահանաները, հաղթել են նրանց և գոմերից դուրս վանել [ԱՀ X, 214-215]:

Հիվանդության չար ոգիները (գրողները) գիշերվա մթին բնակվում են ծառերի մեջ, ջրի ակունքներում, ջրհորերում, ավերակներում: Գիշերով նման տեղերից անցնելիս պետք է Հիսուս Քրիստոսի անունը տալ, հակառակ դեպքում կարող են հարվածել անցորդին և հիվանդություն պատճառել: Հորանջելիս պետք է բերանը խաչակնքել, այլապես գրողները կմտնեն փորը և կդիվահարեցնեն **[Սրվանձտյանց 1978,** 147]:

Չար ոգիներից զարկվածները (մասնավորապես հոգեկան հիվանդները) կոչվում են «դիպած», «դիպուկ», «խփնված», այսինքն՝ դիվահարված կամ այսահարված (այսը դարձյալ չար ոգի է, քամու նմանվող), իսկ հիվանդությունը կոչվում է *հանդեպք* (= չար ոգիներին հանդիպած) [հմմտ. ԲԲ, 540, 568]:

Առանձին հիվանդություններից անձնավորված են հանդես գալիս չար աչքը, որ դիպչում է ամենալավ և ընտիր բաներին (մարդ, կենդանի, ապրանք, ունեցվածք, իրեր ու առարկաներ) և վնասում, և հատկապես ծննդկանին ու նորածնին վնասող ալն ու թպղան (տե՛ս համապատասխան աղոթքների ծանոթագրությունները):

Եվ քանի որ հիվանդությունները մեծ մասամբ դիտվում են իբրև չար ոգիների

գործունեության արդյունք, ուստի, հիվանդությունների բուժումը ընբռնվում է իբրև պայքար չար ոգիների դեմ: Միջնադարյան երդմնեցուցական բուժաղոթքներում այդ պայքարն իրացնում են Սողոմոն իմաստունը, Քրիստոսը, Տիրամայրը և տարբեր հրեշտակներ ու սրբեր, որոնք իրենց գերբնական զորությամբ խոստովանեցնում են չար ոգիներին, բացահայտում նրանց չար դիտավորությունները, ինչպես նաև հարուցած հիվանդությունների բուժման միջոցները, ապա սպառնալիքով ու անեծքով երդվեցնում նրանց՝ այլևս չմոտենալ աստծո ծառա մարդ արարածին, կամ էլ պարզապես սրերով խփում, սպանում են նրանց և դրանով փարատում հիվանդությունը: Այդ պայքարը երբեմն դրսևորվում է ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված, աստվածային անձի խորհուրդի ձևով, որ տրվում է հիվանդությունից տուժած սրբազան անձին (դիցուք՝ Քրիստոսի կողմից Տիրամորը)՝ որոշակի գործողությամբ պատժելու, ոչնչացնելու, վերացնելու չար ոգուն ու նրա հարուցած հիվանդությունը:

Միջնադարյան գրավոր բուժաղոթքների մեջ կա մի տեսակ ևս, որտեղ այդ պայքարը խիստ պասիվացել է, անգամ վերացվել. հիվանդության ոգիների պատճառած մարմնական տանջանքներին զոհ են գնում սուրբ անձինք (ճգնավորներ), որոնք մահվանից առաջ խնդրում են աստծուն, որ տվյալ հիվանդությամբ տառապողները եթե հիշատակեն իրենց անունները, վերջ տրվի նրանց ցավին: Աստված կատարում է սրբերի ցանկությունը, որը և դառնում է աղոթքի հմայական բուժամիջոցը: Նման տիպի աղոթքներն իրենց գաղափարախոսությամբ խիստ քրիստոնեական են, ուր պայքարին փոխարինել է նահատակությունը, որը ծառայեցվում է նահատակների մարդասիրական բաղձանքի իրականացմանը (իրենց մահով փրկել ուրիշներին՝ գրեթե նույնական Քրիստոսի առաքելությանը):

Սրբերի այս նահատակությունն ու բաղձանքը բնույթով նախադեպ է, որ աստվածային կամքով դառնում է սրբազան ավանդույթ գալիք սերունդների համար:

Հիվանդության կամ այն մարմնավորող ոգիների դեմ մղած կռվի ընբռնումը առավել ակտիվ դրսևորումներ ունի ժողովրդական բուժաղոթքներում և հմայական աղոթքներում առհասարակ: Այստեղ ևս բազմաթիվ նմուշներ կան հար և նման միջնադարյան գրավոր աղոթքներին բնորոշ սուրբ անձանց կողմից չար ոգիներին երդվեցնելու, վերջիններիս անեծքով, սպառնալիքով, ինչպես և ֆիզիկապես պատժելու մոտիվներին: Ավելի շուտ՝ այդ կարգի ժողովրդական աղոթքները գրավոր համանման աղոթքների յուրատեսակ տարբերակներ են և ամենայն հավանականությամբ գրավոր աղբյուրներից են փոխանցվել բանավոր ավանդությանը: Սակայն բուն ժողովրդական հմայական աղոթքներին առավել յուրահատուկ է աղոթող հմայագործի ակտիվ դերը հիվանդությունների և առհասարակ չար ոգիների դեմ մղած պայքարում, մի բան, որ սակավադեպ է գրավոր աղոթքներում:

Հմայագործի դերի ակտիվության աստիճանն իր հերթին երկու կարգի դրսևորում ունի ժողովրդական աղոթքներում: Մեկն այն է, երբ գործողության հեղինակը թեպետ ինքը աղոթողն է և աղոթքներում հաճախ հանդես է գալիս եզակի առաջին դեմքով (գնացի, մտա, ելա, հանեցի, կապեցի ևն), բայց դեռևս նա գործում է ավանդական սուրբ անձանց կամ սրբազան մասունքների և առարկաների զորությամբ և օգնությամբ (տասներկու հայրապետների զորությամբ, Լուսավորչի աղոթքով, աջով, Աստվածածնի կաթով, ս. Սարգսի ծիու ծարով, Քրիստոսի խաչափայտով ևն): Մի քանի աղոթքներում անգամ ընդծվում է, թե *«Իմ ձեռքս չիլա, /Աստվածամոր ձեռքը ըլա»* կամ *«Իմ ձեռը չիլա, /Հեքիմ սուրբ Աբսենտոսի ձեռքը իլա»* ևն., այսինքն՝ ոչ թե աղո-

թողի, այլ այդ սրբազան անձանց ձեռքով է կատարվում բուժումը:

Մյուսն այն է, երբ աղոթքներում իսպառ (կամ գրեթե իսպառ) բացակայում են սրբերի ու սրբությունների վկայակոչումները, և աղոթողն ինքն է միակ գործող անձը՝ թե՛ չար ոգիներին կապողը, թե՛ վնասազերծողը, թե՛ նրանց բանադրողն ու սպառնացողը, հետևաբար և հիվանդին բուժողը: Այս կարգի աղոթքներն են հենց բացակայում միջնադարյան գրավոր աղբյուրներում, և նման կարգի ժողովրդական աղոթքներում են արտահայտություն գտել թե՛ առասպելաբանական հնությունների շատ հիշատակներ և թե՛ հմայական արվեստի վաղնջական պարզ ու անմիջական գծեր (հմմտ. չար աչքի աղոթքների՝ Սև լեռան ծովի, ծառի վրա գտնվող բնի, օձի, թռչնածագերի զոհաբերման, Անտակ-անհատակ ծովի, Սև օձը կթելու, մածուն մերելու և համանման այլ մոտիվները, որոնք առկա են նաև աչքի հատի, զզվածի և այլ հիվանդությունների բուժաղոթքներում):

Հմայագործի ակտիվ գործողություններով հատկանշվող հմայական աղոթքները խիստ համախոս են հմայական այն արարողություններին, որ կատարում է հմայագործը աղոթելիս: Քանի որ արտաաղոթքային այդ արարողությունների միակ կատարողն աղոթողն ինքն է, ուստի այդ քանիցս կրկնվող հմայական արարողությունները ու շարժումները, միանալով աղոթքի գործողությունների խոսքային նկարագրությանը, որի գլխավոր գործող անձը դարձյալ աղոթողն ինքն է, առաջ է բերում աղոթողի հոգեբանական բացառիկ ակտիվություն իր տվյալ հմայական արարքների ու խոսքի նկատմամբ, և, ինչպես իրավացիորեն նշում են բանահավաքներից որոշ ականատեսներ, աղոթողը, ձեռքին դանակ բռնած, անընդհատ խաչակնքում էր հիվանդին և *«իր սովորական աղոթքի ընթացքին կը հորանջեր, կը հևար ու ներքնաբուխ պոռթկումներով կը գալարվեր՝ պայքարելով չար ոգիին դեմ»* [**Հիշատակարան,** 229-230]:

Աղոթողի այս հոգեռանդ լարված տրամադրությունը և կենսաճառագայթումը փոխանցվում է հիվանդին՝ առաջ բերելով կենսահոգեբանական ռեակցիա ու առասպելական իրադրության վերապրում, ենթագիտակցական կողմնորոշում դեպի սիմվոլների աշխարհը՝ իր հակադրություններով, պայքարով, իրադրության աստիճանական կայունացմամբ: Գիտակցականը՝ ենթագիտակցականի, զգայականը՝ գերզգայականի փոխանցման և իրականության առասպելաբանական վերապրման շնորհիվ հիվանդի մարմնական ու հոգեկան տառապանքների մեջ աստիճանական փոփոխություններ են կատարվում դեպի լավը, և հիվանդությունն սկսում է նահանջել բուժարար աղոթողի արարողական ու խոսքային թովչության ազդեցությամբ, ճիշտ այնպես, ինչպես մերօրյա հոգեթերապիական և հոգեվերլուծական բուժումների ժամանակ [հմմտ. նաև Леви Строс 1985, 175-179]:

Իրական այս հետևանքներն են, որ անգամ մեր օրերում ժողովրդի տարբեր խավերում տակավին կենդանի են պահում հմայական արվեստի ավանդությունը՝ բուժման ու արարողության նոր ձևերի ենթարկված:

ՉԱՐ ԱՉՔԻ
(№№ 1-56)

Չար աչքի կամ չար հայացքի (նայվածք) հավատալիքը տարածված է աշխարհի գրեթե բոլոր հին ու նոր ժողովուրդների ավանդության մեջ [հմմտ. S. von Seligmann, Der BÖse Blick und Verwandtes, Berlin, 1910]:

Հայերենում (հին ու միջին գրականում և բարբառներում) այն կոչվել է համանիշ բնիկ և փոխառյալ տարբեր անուններով. *չար ակն, չար նազար, չար նիաք:* Վերջիններիս (այդ թվում նաև չար աչքի համանիշի) գոյական բաղադրիչներից կազմվել են բայական տարբեր ձևեր՝ *ակնահար* - ակնահար(վ)ել - ակնահար(վ)ած, *աչք առնել* - աչքըռած, *աչք դիպնել* - աչք դիպած, *աչք տալ* - աչք տված, *աչք լինել* - աչք իլել, աչեղ լինել, *նազար առնել* - նազար տված, *նիաք տալ* - նիաք տված, *նիաք առնել* - նիաք առած և այլն, - բոլորն էլ չար աչքի ներգործությանը ենթարկվելու կամ ենթարկվածի իմաստով:

Չար աչքի առասպելաբանական ըմբռնման հիմքում ընկած է աչքի, հայացքի չար ու վնասակար ներգործման հնագույն հավատալիքը: Ըստ այդմ՝ աչքի վնասակար ներգործության զորությամբ են օժտված՝ թե՛ որոշակի մարդիկ, թե՛ կենդանիներ, սողուններ, թռչուններ և թե՛ գերբնական էակներ (աստվածներ, դևեր, ոգիներ): Ըստ երևույթին, այդ հավատալիքի նախահիմքում ընկած է աչքից բխող կենսաճառագայթահարման ազդեցության իրական ըմբռնումը՝ ենթարկված առասպելականացման ու գերբնական զանազան պատկերացումների: Որոշ առասպելագետների (Ճվարց, Դարմստեդեր և այլք) կարծիքով՝ ակնահարման հավատալիքն առնչվում է բնության երևույթների, մասնավորապես, ամպրոպային կայծակի անձնավորման հետ. *«ամպերի միջից շեղ փայլատակող կայծակն»* ըմբռնվել է իբրև ցասկոտ ու զարհուրելի խեթ հայացք, որը վնասում է մարդկանց, կենդանիների և պատահած ամեն ինչի [**Աբեղյան 1975,** 99-101]:

Հայկական ավանդության մեջ չար աչքի մասին հնագույն վկայությունը պահպանված է Խորենացու մոտ և վերագրված է առասպելականացված Երվանդ արքային. *«Բայց ասեն զերուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որ-ծաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել ործաքար վիմացն»* [**Խորենացի II,** ԽԲ]: Նույն հավատալիքը տարբեր վկայություններով հարատևել ու պահպանվել է ժողովրդական ուշ ավանդության մեջ: Ակնում, օրինակ, պատմել են, որ մի մեծ վեմ քար է եղել, ոչ մի կերպ չեն կարողացել կոտրել: Քաղաքում եղել է մի համբավավոր չարահայաց պառավ. կանչել են, նայել է քարին, ասել է. *«Օ՜, այս ի՜նչ մեծ քար է»:* Քարն անմիջապես կտոր-կտոր է եղել [ՀԱ, 159]: Լոռիում, Վ. Տաշրացու վկայությամբ, իրենց գյուղացի Բեգլարի հայրը վատ աչք է ունեցել. մի անգամ տեսնում է, որ հարևանը մի մեծ սալ է հանած լինում, զարմացած ասում է. *«Պա՜, պա՛, ինչ մեննծն ու լավն ա»:* Այս ասելիս՝ պատն ի դուրս դրած սալը երկու կտոր է լինում: Եվ այժմ էլ այդ քարը ցույց են տալիս:

Իսկ Բեգլարն ինքը ևս հոր նման օժտված է եղել չար նայվածքով: Մի անգամ գյուղացիները Բեգլարի արտը վարելիս են լինում. եզները արագ-արագ քաշել են գութանը, իսկ հոտաղները՝ ոգևորված երգել: Այդ պահին Բեգլարն ուրախացած բացականչել է. *«Ջա՜ն, ջա՜ն, ձեր հոգուն մատաղ, համա թե վարում է, հա՜»:* Այդ ասե-

լիս՝ խոփը որտեղից որտեղ մի քարի է դիպչում, և գութանը մի քանի տեղից կոտրտվում է: Բեգլարը սաստիկ բարկացած խփում է իր աչքերին ու ասում. *«Կուրանա՛ք դուք, կուրանա՛ք, հա՛մ ուրիշի համար եք վատ, հա՛մ ինձ համար»* [**Տաշրացի** 1887]:

Ընդհանրապես չար աչք ունեցողները «սաստիկ նախանձոտ, չարախնդիր, ծանր ու անտանելի բնավորությամբ մարդիկ են»: Դրանց հանդիպելիս՝ գյուղացիները կռանում, գետնից քար են վերցնում և շրջում, ապա երեսը դարձնում, չտեսնելու տալիս՝ զգուշանալով նայելուց աչքերին [**Տաշրացի**, 1887]: Հմմտ. Երվանդ արքայի չար ու նախանձոտ բնավորության, դժնի հայացքի և նրա դիմաց որձաքարեր բռնելու արարողության հետ:

Սրվանձտյանցը ևս չար աչք ունեցողներին համարում է սրտի չարությամբ օժտվածներ, որոնցից մարդիկ շատ են վախենում: *«Եթե չար աչք մեկը՝ զույգ մը ընտիր գոմեշ տեսնա ու ըսե. «Օ՜, ինչ աղեկ են», իսկույն կը պատռին անոնք: Եթե ծիու նայի, ծիերը կ'իյնան կը սատկին. եթե գեղեցիկ տան մը՝ պիտի փլչի այն տուն. եթե մեկի մը հաջողության՝ պիտի ծախորդի անոր գործը. մարդոցմե շատերը կը հիվանդանան, շատերը կը մեռնին. քար անգամ կը հալի. կանանչ ծառեր և արտեր կը գոսանան և այլն»* [**Սրվանձտյանց 1978,** 161]:

Նոր Բայազետում հավատում են, որ կրծքից կտրած երեխան եթե որոշ ժամանակ անց նորից կուրծք ուտի, ապա մեծանալիս՝ նրա *«աչքից սար ու քար կպատռի»*, այսինքն՝ սաստիկ չար աչք կունենա [ԱՀ XVI, 43]: Այս և նման ըմբռնումներից է սերում *«Չար աչքը քարն էլ ճաքացնում ա»* տարածված առածը [**Ղանալանյան 1960,** 295]:

Սովորաբար չար են համարվում խիստ կապույտ և կանաչ աչք ունեցողները, որոնց անվանում են *«Չալաղապտուղ»* [**Սրվանձտյանց, 1978,** 161, ՀԺՀ VII, 28], թեպետ միջնադարյան գրավոր, մասամբ և ժողովրդական աղոթքներում իբրև չար աչք են հիշատակվում նաև խաժ ակնը, թուխ ակնը, սպիտակ ակնը, մեղուշ ակնը և ուրիշներ (տե՛ս սույն բաժնի աղոթքների համապատասխան բնագրերը):

Հայկական հավատալիքներում և մանավանդ հմայական աղոթքներում չար աչքը երբեմն հանդես է գալիս անձնավորված, իբրև չար ոգի, որը շրջում է ամենուրեք, մարդկանց նյութական ահռելի վնասներ պատճառում և ամենակարևորը՝ բազմաթիվ հիվանդություններ ու ցավեր հարուցում: Մի շարք աղոթքներում անձնավորված ու թափառող չար աչքին հանդիպում է Քրիստոսը կամ որևէ սուրբ անձ և հարցնում. *«Պիղծ անօրեն, ու՞ր: /Ըսավ. - Կեռ կոտոշ կարմիր կովին, /Մեծակոտոշ սև գոմշին, /Կացնին ու իր կոթին, /Սողոմոնն ու յուր թաղկին, /Մանուկն օրոցքին...»* [տե՛ս № 37բ]: Կամ՝ նույն հարցին պատասխանում է այսպես. *«Գնում եմ ծառը, /Ծառին ճյուղը չկա, /Ճյուղնին տերև չկա, /Իլլիմ մարդու գլոխ, /Ծուծում լեղե»* և այլն [տե՛ս № 36ա]. կամ էլ տալիս է հետևյալ պատասխանը. *«Երբամ յազգս մարդկան, /Զանմեռ մեռուցանեմ, /Զմիսն ուտեմ, /Զարիւնն ծծեմ, /Եվ զոսկերքն խոիվ դարձուցանեմ»* [№ 37ա]:

Բնական է, որ նման չար ու վնասակար ներգործությունից զերծ մնալու համար պետք է պահպանության և ապաքինման համապատասխան միջոցներ կիրառեին: Անշարժ ու շարժական ունեցվածքը չար աչքի ազդեցությունից պահպանելու համար հայ ազգագրական տարբեր շրջաններում հմայական կանխարգելիչ տարբեր միջոցներ ու հուռութքներ են կիրառել: Խիանում հանդերն ու բերքը չար աչքից զերծ պահելու նպատակով աղ են գցել կրակը [ԲԱ, 427]. Սիվրիհիսարում այգիների պտ-

դատու ծառերի վրա ոչխարի կամ շան գանգ են դրել, իսկ տների վրա՝ եղնիկի եղջյուր [ԲԱ, 53]. Կյուրինում հավատացել են, թե նորահաս պտղատու այգու մեջտեղը էշի գլուխ կախելու դեպքում այգին չար աչքից չի ակնահարվի [ԲԳ, 631]. Սղերդում, հունձն ու կութքը չակնահարվելու համար, արտերում երկար ծող են տնկել, վրան ծիու գանգ ամրացրել, իսկ գեղեցկաշեն շենքերի ճակատին ամրացրել են կամ եղջերվի եղջյուրներ, կամ հախճապակե պնակ, կամ էլ նախշուն հավկիթների շարք [ԲԳ, 316]. Ակնում նոր շինած տան ծածկի մեջտեղի գերանի փողոցի կողմը դուրս եկող ծայրից կախել են մաշված հագուստ, ծու կամ մի պճեղ սխտոր [ՀԱ, 164]: Ամենատարածվածը ծիու պայտն է, որ ամրացնում են տան ճակատին կամ դռան մուտքի վերևը: Զեյթունում չակնահարվելու նպատակով ծիու և ջորու պարանոցից խոզի ատամ են կախել [ԱՈՒ, 106], իսկ ազգագրական շատ շրջաններում գեղեցիկ ընտանի կենդանիների վզից բռնչենու փայտից հուռութքներ են կախել [ԲԳ, 453]:

Ակնահարման նկատմամբ հատկապես զգայուն են երեխաները: Ուստի նրանց չար աչքի ազդեցությունից պահպանելու համար կիրառվել են տարբեր հուռութքներ: Ամենտարածված և բոլոր հայ ազգագրական շրջաններին բնորոշ հմայական պահպանության միջոցը *կապույտ ուլունքն* է կամ, ինչպես տարբեր բարբառներում են կոչում՝ *ակնաուլունքը, աչքահուլունքը, աչիչ ուլնիկը, աչքի հլունը, աչուլակը:* Այն, մեծ մասամբ կապույտ աչք հիշեցնող երակներով որևէ հանքաքար է, որ կամ մանկան վզից, ուսից, մեջքից են կախում, կամ հագուստի վրա կարում: Կապույտ գույնը, առհասարակ, նկատված է իբրև ակնահարության դեղթափ (բուժամիջոց, պահպանության միջոց), և երեխաներին հաճախ այդ նպատակով կապույտ շոր են հագցնում [ԲԱ, 427, ԲԲ, 475]:

Վայոց ձորում ակնաուլունքը կատվի մազի, աղի ու հացի հետ փաթաթում են կապույտ շորի մեջ և կարում մանկան հագուստի աջ ուսի վրա: Նույն աջ ուսին են կարում սև շորի մեջ փաթաթված սխտորի գլուխ և շան կեղտ: Երբեմն էլ մետաքսե թելով ասեղնագործում են մի երկտակ շոր, մեջը մի գլուխ սխտոր դնում և կարում մանկան մեջքին: Նույն նպատակով դաղդաղան փայտի փոքրիկ կտորի վրա դանակով զանազան նախշեր են անում և կարում երեխայի կամ հանդերձին, կամ էլ՝ վզից կախում: Դարձյալ նույն նպատակով մանկան մեջքին թիկնանոց են կարում. այն մի հմայիլ է՝ եռանկյունածև շորի մեջ դրված, ասեղնագործված և վրան կապույտ ուլունքներ ու թելի փնջիկներ շարած [ԱՀ XIV, 144]:

Արաբկիրում երեխայի ուսին կամ կապույտ քար (ակնաուլունք) են կարում, կամ ծոպից մի ասեղ կախում [ԲԱ, 620]: Կյուրինում գեղեցիկ տղային չար աչքից զերծ պահելու նպատակով նրա օձիքը փուշ են խրում [ԲԲ, 820]: Զեյթունում, այդ նպատակով, մանուկների գլխարկից կախում են կամ արծաթազոդված շան ատամ կամ էլ արծաթազոդված արծվի մագիլներ [ԱՈՒ, 101, 106] և այլն:

Սղերդում, բացի մանկան հագուստին ուլունքներ կարելուց, նաև ճակատին ու դեմքին ածուխի մուր են քսում [ԲԲ, 614], իսկ Սեբաստիայում տան անդամներին ակնահարվելուց պահպանելու համար դռան առջև մոխիր են լցնում:

Չար աչքն ամենից առաջ տարբեր հիվանդությունների հարուցիչ է և այդ իմաստով մեծ ընդհանրություններ ունի հիվանդությունների ոգիների՝ ցավերի հետ՝ դառնալով դրանց տարատեսակներից մեկը: Ինչպես վկայված է աղոթքներից մեկում, նա 366 (իմա՝ տարվա օրերի չափ) պիղծ հիվանդություններ է պատճառում մարդկանց ու կենդանիներին: Ուստի թե՛ աղոթքներում և թե՛ ժողովրդական կենցաղում չար աչ-

քի հարուցած հիվանդությունների դեմ բուժման զանազան հմայական արարողություններ են կատարում:

Ակնահարումից առաջացած հիվանդության առաջին կանխանշաններից են գլխի, կզակի կամ մարմնի որևէ մասի անառիթ ցավը, ջերմությունը, հորանջումը: Հիվանդության կանխագուշակման և բուժման նպատակով դիմում են աղոթող կանանց կամ տղամարդկանց: Կամ հիվանդին են տանում աղոթողի մոտ, կամ աղոթողին են բերում հիվանդի մոտ, եթե ծանր է, կամ էլ հիվանդի հագուստի որևէ մասը (գլխարկ, թաշկինակ ևն.) տանում են աղոթողին: Եթե աղոթելիս աղոթողը ևս սկսում է սաստիկ հորանջել, ապա դա նշանակում է, որ հիվանդն ակնահարված է:

Թավրիզում, կից գավառներում և այլուր, երբ մեկը հիվանդանում է և կասկածում են, որ չար աչք է դիպել, անալի խմորից մանր գնդիկներ են պատրաստում, գցում կրակը. եթե գնդիկներից մեկը կամ մյուսները ճայթում են, գուշակում են, որ հիվանդն ակնահարված է [ԲԲ, 696]:

Որոշ գավառներում հատուկ արարողություններով փորձում են գուշակել աչք տվողի սեռը, անգամ՝ անունը: Մունջուսունում, օրինակ, այդ նպատակով կապարը հալում, լցնում են ջրի մեջ. եթե կապարը տափակ ձև է ընդունում՝ գուշակում են, որ ակնահարողը կին է, եթե ցցված է մնում՝ տղամարդ [ԲԲ, 490]: Այլ տեղերում մոմ են վառում, վերցնում մի քանի չորացած մեխակ, յուրաքանչյուրին չար աչք ունեցող հայտնի կանանցից մեկի անունն են դնում, ապա մեխակները գցում են մոմի բոցի մեջ. որը որ պայթի, ուրեմն, ակնահարողը դրա անվան կրողն է [ԲԱ, 427-428]:

Երբ հավաստվում է ակնահարման փաստը և, մասնավորապես, հայտնի դառնում ակնահարողի անձը, Ակնում, Սիվրիհիսարում, Մարզվանում և այլուր վերջինիս դռան սեմից մի կտոր տաշեղ են պոկում կամ գաղտնի նրա հագուստից մի կտոր կտրում, բերում ակնահարվածի տուն՝ ծխեցնելով այրում, ակնահարվածին պահում այդ ծխի վրա [ԱՈՒ, 160, ԲԳ, 22-23, 648, ԲԲ, 667]:

Կիրառվում են նաև բուժահմայական տարբեր միջոցներ, որոնք, եթե վկայված կան, կբերվեն սույն բաժնի յուրաքանչյուր աղոթքի ծանոթագրության մեջ: Այստեղ կհիշատակվեն միայն մի քանի բնորոշ նմուշներ:

Մարզվանում և արևմտահայ այլ գավառներում աղոթող պառավը աղոթելիս՝ դանակով մի քանի անգամ խաչակնքում է ակնահարվածին գլխից մինչև ոտքերը և ոտքերից մինչև գլուխ: Աղոթքն ավարտելուց հետո մի պատառ հաց են շանը տալիս, որպեսզի հիվանդությունը փոխանցվի նրան [ԲԲ, 667]:

Կ. Պոլսում և այլուր երբեմն ակնահարվածի գլխավերևը կանաչ ամանով ջուր են պահում և մեջը երեք կրակ մարում: Գիշերը քնելիս տանեցիները շուն են բերում, ամանի ջուրը թափում շան վրա, որպեսզի հիվանդությունը նա առնի [ԲԱ, 427-428]: Ակնում և Մարզվանում ակնահարված մանկան գլխավերևը առաջնեկ զավակի կողմից մի աման ջուր է դրվում, մեջը յոթ հատիկ կրակ է մարեցվում և այդ ջրի մի մասը խմեցվում է հիվանդին, մյուսը՝ թափվում [ՀԱ, 160, ԲԳ, 430]: Իզմիտում աղոթող պառավը, ակնահարվածին աղոթելիս, գլխից մինչև ոտքերը խաչակնքում է, ապա վերցնում 40 հատիկ սև հունդ և սխտորի գլխի մազմզուկ, դրանցով 40 անգամ աղոթում, որից հետո դրանք ծրարում և կապում հիվանդի վրա [ԲԲ, 540]: Սիվրիհիսարում ակնահարված երեխայի վրա սոխի և սխտորի կեղևներ են ծխացնում, երբեմն էլ ծեծված մարմարը շղարշով մաղում են, խառնում ջրին և խմեցնում ակնահարված ծծկեր երեխային [ԲԳ, 22-23]:

Իյունիեում, եթե ակնահարվածը գլխացավով էր տառապում, վերցնում էին մի բուռ աղ, երեք անգամ հիվանդի գլխի շուրջը պտտեցնում, ապա գցում կրակը կամ ջուրը [ԲԳ, 476]:

Սղերդում, երբ կովի կաթը սովորականից նվազում էր, ենթադրվում էր, որ կովն ակնահարված է. յոթ տան շեմերից փայտի կտորներ էին պոկում, կովի կաթի տակ կրակ անում, որպեսզի կաթն առատանար [ԲԳ, 316] և այլն:

Այդպիսով, չար աչքի մասին հայկական հավատալիքներում ակնահարության և բուժման միջոցների մեջ են մտնում կենդանիների ու թռչունների մարմնի մասերը (եղջերուի, եղնիկի, ձիու, էշի, ոչխարի, շան գլուխ, խոզի ատամ, կատվի մազ, շան ատամ, կղկղանք, արծվի մագիլ, հավի ձու), որոնք, անշուշտ, հին տոտեմիստական պաշտամունքից սերող վերապրուկներ են:

Բույսերից հիշատակված են բռնչենին, մասրենին, փուշը, դաղդաղանի փայտը (և փայտն առհասարակ), սոխը, սխտորը, մեխակը, սև հունդը, հանածոներից՝ աղը, քարը (կապույտ մարմար), երկաթը, կապարը և հատկապես մետաղե սուր գործիքները՝ դանակ, դաշույն, ասեղ, մետաղե շյուղ, բնության տարրերից՝ հուրն ու ջուրը, իսկ խոհանոցային արտադրանքներից՝ հացն ու խմորը:

Այդ բոլոր առարկաների մեծ մասը հատկանշվում է ամրությամբ (քար, մետաղ, փայտ, կենդանիների գլուխներ), սուր ծայր ունեն և օժտված են ծակելու, խոցելու կամ կտրելու հատկությամբ (ասեղ, փուշ, մետաղե շյուղ, դանակ, դաշույն, կենդանիների ատամներ, եղջյուրներ, մազեր, մագիլներ) կամ էլ սուր, ծակող կծու հոտով (սոխ, սխտոր, մեխակ), ինչպես նաև կլանելու, ոչնչացնելու զորությամբ (ջուր, կրակ և վերջինիցս բաղադրված՝ վառած ածուխ, մոխիր):

Այս իրական հատկանիշների պատճառով են թերևս այդ առարկաները մտել ծիսահմայական կենցաղի մեջ և դարձել չար աչքից պահպանվելու կամ բուժման միջոցներ:

* * *

1ա. Խորագրված է «Աչքըռածի կամ չար աչքի աղոթք»: Գրառված է 1968 թ., բանասաց՝ Խուրշուդյան Հերիքնազ, 60 տ., անգրագետ, բանահավաք՝ Ս. Հարությունյան:

Կցված է բանահավաքի հետևյալ ծանոթությունը. Աղոթողը «վերցնում է ասեղ, կանչում Գրիգոր Նարեկացուն, որին «պաբե» կամ «Աղա պաբե» է կոչում. «Սուրբ Գրիգոր Նարեկեցի, մեռնիմ քըզի, պաբե ջան» և ասում այդ բանածևը»:

1բ. Խորագրված է՝ «Չար նիաթ»: Բանահավաքը (Քաջբերունի) կցել է հետևյալ ծանոթությունը. *«Շարուրի Ուլիա Նորաշեն գյուղում հիվանդ կամ վեր թռչող երեխային աղոթում են այսպես. փոքր ալյուրի խմոր քսում են հիվանդի մարմնի զանազան մասերին և շինելով նորանից յոթը գնդակ, որ կոչվում է բլոլա, յուրաքանչյուրը մեծ ասեղով յոթը տեղ ծակում են և ամեն մի ասեղ ծակելիս ասում են» (բերվում է այդ աղոթքի բանածևը): «Ապա բոլոր գնդակները ծգում են վառ թոնրի մեջ և եթե նրանցից մեկն ու մեկը տրաքի, հիվանդի լավանալու նշան է»:*

Հմայական այս արարողությամբ խորհրդանշորեն իրագործվում է աղոթքի բա-

նաճնում նկարագրվող իրադրությունը: Խմորի գնդիկները խորհրդանշում են չար աչքը, ասեղը՝ փուշը, որով ծակում, խոցում են չար աչքը (իմա՝ խմորի գնդիկները): Թեպետ աղոթքում չեն հիշատակված հմայական արարողության մեջ առկա կրակի ու չար աչքը պայթելու մոտիվները, սակայն հաջորդ աղոթքներում (№№ 2, 3 և այլուր) դրանք հիշատակված կան (*«Չար փուշ՝ չար կրակ», «Չար աչքը ծաքի»* և այլ ձևերով):

1գ. Խորագրված է «Չար աչքի»:

Գրառված է 1970 թ.:

Ըստ բանասացի վկայության՝ հիվանդի վրա կարդում են Մատթեոսի և Ղուկասի ավետարանների վերջին գլուխները և սկզբից ու վերջից ասում սույն և № 6 հմայական բանաճները:

2. Երբ ակնահարվածին պատկանող հագուստ-կապուստից որևէ նմուշ (թաշկինակ, գլխաշոր) տանում են նազարի սեպագ (ակնահարության բուժման զորությունը նախնիներից ժառանգած) կնոջ մոտ, նա ձեռքով շփում է այն, ասում հիշյալ բանաճնը և աղոթում: Սույն բանաճնը, փաստորեն, աչքի աղոթքին ուղեկցող պարտադիր ավանդական մի հատված է:

3. Գրառման վայրն ու բանահավաքի անունը չեն նշված: Գրառումը մատիտով կատարված սևագիր է և դժվարընթեռնելի:

Աղոթքի ավանդական եռատող բանաճնին հարակցված վերջին եռատողի Իրեքշըբաթմուտ, Չորեքշըբաթմուտ, սըբ երկնամորուս, սըբ Կրակմուտ անունները, ըստ երևույթին, վերաբերում են ծննդյանը նպաստող երկու կույսերին՝ Չորեքմուտին և Ուրբաթամուտին, ինչպես նաև նրանց կրտսեր եղբորը՝ Կիրակմուտին (վերջինիս արական սեռը նկատվում է նրան տրվող «սըբ երկնամորուս» մակդիրից), որոնք պաշտվել են ջահել կանանց կողմից երեքշաբթի, չորեքշաբթի և շաբաթ երեկոներին: Ըստ հավատալիքի՝ նրանք ծննդյանը նպաստող ոգիներ են: Եթե ծննդկանը ժամանակին պաշտել է նրանց (հիշյալ երեկոներին գործ չի արել, հրաժարվել է կենակցելուց և այլն), ապա ծննդաբերելիս աղոթում է նրանց, որոնք երևում են ծննդկանին, դյուրացնում ծննդաբերությունը, ջուր բերում, լողացնում նորածնին, ձվածեղ պատրաստում և անգամ նորածնին անվանակոչում [տե՛ս ԱՀ I, 341, **Աբեղյան 1975,** 97]:

Այս երեք անունների հիշատակությունն ու նրանցից պահպանություն ու օգնություն աղերսելը վկայում է, որ աղոթքը ծննդկանի համար է կատարվել՝ չար աչքից զերծ պահելու նպատակով:

4. ԷԱԺԱ խորագիրն է. «Աղոթք չար աչքի և չար նազարի»: Բանահավաք Աղ. Մխիթարյանցը աղոթքի սկզբում դրել է «Հայր մեր, որ յերկինս ես» տողը և ծանոթագրել, որ «Բոլոր աղոթքների փակն ու բանալին «Հայր մերն է». նրանով սկսում են ու նրանով վերջացնում»: Ապա աղոթքի վերջում ավելացնում է. «Ամեն աղոթք, առանց բացառության, երեք անգամ պետք է կրկնել»:

ՀԱԲԱ խորագիրն է. «Դարձյալ չար աչքի աղոթք»: Բանահավաքն է՝ Ն. Նիկողոսյան, գրառված է 1940 թ. Գյումրիում:

Աղոթքում չար աչքն անձնավորված է իբրև կենդանի էակ, որն ուղղվել է դեպի

հիվանդի դուռը, իսկ աղոթող-հմայողը անեծքի բանաձևով խեղանդամ է դարձնում նրան՝ կուրացնում, ձեռը կոտրում, լեզուն բևեռում և դրանով զրկում նրան իր չար նպատակն իրագործելու հնարավորությունից:

5. Բանահավաքն աղոթքին կցել է հետևյալ ծանոթությունը, ուր նկարագրվում է ակնահարված մանկան ախտորոշումն ու բուժումը. «Եթե երեխան չար աչքի ազդեցությամբ հիվանդացած է լինում, օրորոցում պառկած միջոցին նրա վրա մի ափսե են դնում և մեջը խաչածև բամբակ դարսում, ապա այս խաչի թևերի միջև աղ ածում՝ նշանակելով այն անձերի անունները, որոնք կարող են աչք տված լինել. հետո միաժամանակ վառում են խաչի չորս թևերն էլ ու դիտում, ո՛ր աղի մոտ որ վերջին բոցը հանգչի, դրա վրա նշանակած անունը կրող անձն է աչք տվել երեխային. ուստի և մի գիշեր գաղտնաբար գնում են այդ մարդու տան դրսի դռնից փոքր-ինչ տաշում և բերում երեխայի օրորոցի տակ վառում, որպեսզի չար աչքի ազդեցությունն անցնի: Վառելիս շատ անգամ այս աղոթքն էլ են շշնջում»:

Այս, ինչպես նաև հաջորդ աղոթքը (№ 7), թեպետ զգալիորեն խաթարված տեքստով, պահպանել են միջնադարում սիրված հայրենի չափի որոշ յուրահատկություններ և վկայում դրանց նախապես այդ չափով հորինված լինելու փաստը:

6. Խորագրված է «Չար աչքի»:
Գրառված է 1970 թ.:
Տե՛ս № 1գ ծանոթագրությունը:

7. Դրված է չար աչքի աղոթքների շարքում՝ Թ համարի տակ: Տե՛ս № 5 ծանոթագրությունը:

8. Աղոթքին կցված է բանահավաքի (Տ. Նավասարդյանց) ծանուցումը. «Երեք անգամ կրկնել»:

Աղոթքի վերջին տողի *չար*, եթե չար բառի վրիպակը չէ, ապա հավանաբար շառ «փորձանք, վտանգ» բառն է:

9ա. Բերված է հետևյալ ծանոթությունը. աչք առնողի ֆեսը, վերարկուն և այլն շփում են և ասում «Հայր մեր» և մի քանի աղոթքներ, ինչպես և բերված բանաձևը:

9բ. Աղոթքի բանաձևին նախորդում է բանահավաքի հետևյալ ծանուցումը. եթե հիվանդին չար աչք է դիպել, ապա չար աչք ունեցող մեկի քղանցքից մի լաթ են կտրում կամ նրա դռան սեմից գաղտնի մի կտոր տաշեղ պոկում, բերում, հիվանդի առաջ ծխում և մրմնջում այդ աղոթքը:

10ա. ՀԱԲԱ խորագրված է «Աղոթք չար աչքի և չար նիաթի»: Այս աղոթքը, ինչպես նաև հաջորդ տարբերակները բաղադրված են անեծքների շարքից, ուր բանադրական համեմատությունների կուտակումով առավել սաստկանում է խոսքի հմայական ազդեցության տպավորությունը: Այս իրողությունն իր հերթին վկայում է անեծքների կազմաբանական նշանակությունը հմայական աղոթքների ձևավորման գործընթացում: Աղոթքների այս տարբերակաշարում աղոթողը հանդես է գալիս

հմայական ակտիվ դերով. նրա անեծքների շարանը ուղղված է չար ակնահարին, կամ, ինչպես հաջորդ տարբերակներում է ասվում՝ աչքահարին (ըչքահարին): Վերջինս գիտակցվում է ոչ թե իբրև անձնավորված առասպելական էակ, այլ իրական մարդ՝ օժտված չար աչքով ու բնավորությամբ: Սա չար աչքի իրատեսական-ռեալիստական ընկալումն է:

10բ. Աղոթքին նախորդում է բանահավաք Վ. Տաշրացու հետևյալ ծանուցումը. Սառա հարսը «վերցրեց մի ասեղ, երեսը խաչ հանեց և քթի տակին երեք անգամ ասաց աչքի աղոթքը: Նա շարունակ ասեղը խաչածև շարժում էր գլխիս վրա»: Աղոթքի ժամանակ մի քանի անգամ հորանջում է, աչքերը ջրակալվում են և միաժամանակ «մի կողմը մի քանի անգամ մեղմ կերպով քքեց և կրկնեց՝ թե շատ խիստ աչքն են տվել»:

11բ. Խորագիրն է՝ «Աչքը տվածի աղոթք»:

Բանահավաք՝ Գրիգոր քահանա Երզնկյան: Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը երեք անգամ են ասում՝ մի ձեռքում դանակ բռնելով»:

11գ. Բանասաց՝ Ավագյան Աստղիկ, բանահավաք՝ Արազ Կարապետյան, գրառված է 1961 թ.: Աղոթքին կցված է բանասացի հետևյալ ծանուցումը. «Օխտը հետ իրար վրա ասել»:

11դ. Այս և հաջորդ տարբերակներում երևան է գալիս «չար աչք, չար նիաթ, չար սահաթ» մոտիվաշարը, որը հին ծիսաառասպելական լեզվին յուրահատուկ դաշնակավոր հնչյունախաղից բացի, իմաստաբանական նոր նրբերանգ է մուծում աղոթքում, առաջ բերում չարի տարածաժամանակային ըմբռնում (աչքն իբրև չարության բուն, որից բխում, տարածվում է չար հայացքը (նիաթ), որն իրացվում է որոշակի չար պահի, ժամի (սահաթ): Հին ախտարային աշխարհայացքով օրը բաժանվում է բարի և չար ժամերի. չարիքն ու վնասը պատահում են հենց չար ժամերին:

11ե. Չար աչքի աղոթքները, ըստ բանահավաքի (Ե. Լալայան), շատ են և շատ շատերը գիտեն՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, մանավանդ պառավները: Ինչպես չար աչքի, այնպես էլ մնացած կախարդական աղոթքները ամեն մարդ կարող է սովորել և գործադրել՝ առանց որևէ սրբից շնորհ ստանալու, միայն թե սովորեցնողն ու սովորողը պետք է տարբեր սեռի ներկայացուցիչներ լինեն, այլապես երկուսի աղոթքն էլ չեն «կտրիլ»՝ ազդեցություն չեն ունենա: Աղոթքում հիշատակված «հոգևոր պառավը», ըստ երևույթին, հենց ինքը՝ աղոթող-հմայողն է, որն իր հմայական խոսքով՝ անեծքների տարափով, վնասազերծում, տանջում ու տառապեցնում է ակնահարի չար աչքն ու նրա անձը, ուժազրկում նրան և փրկում հիվանդին:

12. Վերնագրված է «Աչքի աղոթք»:

Բերված է բանահավաքի (Վրեն Տաշրացի) հետևյալ ծանուցումը. «Աղոթելու ժամանակ ձեռքը պիտի վերցնել մի որևէ սուր բան, օրինակ՝ ասեղ, դանակ, դաշույն և այլն»:

13. Աղոթքի առաջին յոթ տողերը աղավաղված վրացերեն են և սերում են չար աչքի մասին ասվող վրացերեն աղոթքներից: Նման աղոթքների սիրված սկզբնամասերից են.

«Շագիլոցավ թվալիսասա, շինաուրիսասա դա գարեուլիսասա» (աղոթում եմ աչքին՝ տանեցիների ու դրսեցիների), կամ՝ *«Շագիլոցամ թվալիսասա, ուծին չեմի թավիսասա, շինաուրիսասա, գարեուլիսասա, իդուրիսասա, բիդուրիսասա»* - (աղոթում եմ աչքին, սկզբից իմ գլխին, տանեցիների, դրսեցիների, իդուրիների, բիդուրիների (օտարների) [տե՛ս **Ումիկաշվիլի 1964,** 153-154]:

Աղոթքի աղավաղված վրացերեն տողերում հանդիպում են վրացական աղոթքներից բերված գրեթե բոլոր բառերը, թեպետ, ոչ միշտ նույն հերթականությամբ: Հայկական աղոթքի կառույցում այդ փոխառված բառերն ու տողերը ևս, ինչպես վրացերենում, հանդես են գալիս իբրև սկզբնամաս, բայց, ըստ երևույթին, աղոթողի համար արդեն անհասկանալի դարձած:

14. Խորագրված է՝ «Աչքը տվածի աղոթք»:

Բանահավաքը (Գր. Երզնկյան) աղոթքին կցել է հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը հինգ անգամ են ասում մի կտոր հացի և մի կտոր ածուխի վերա: Աղոթելուց հետո ածուխը ոտի տակ են տալիս, փշրում, իսկ հացը՝ հիվանդին ուտեցնում»:

Աղոթքի այս և հաջորդ տարբերակներում երևան են գալիս չար աչքը և նրա միջավայրը խորհրդանշող նոր իրակությունններ, որոնք բնութագրվում են սև մակդիրով (սև մերի=անտառ, սև դար, սև սար, սև լեռ, սև քար, սև օձ, սև կաթ, սև պուտուկ=կճուճ, սև ամպ, սև ծի, սև մարդ):

Սև գույնն այս աղոթաշարում ունի նախնական տիեզերաբանական իմաստ, խորհրդանշում է աշխարհի կարգ ու կանոնին սպառնացող քաոսային սև ուժերը: Լեռը (սար, դար), անտառը (ծառեր) մեծ տիեզերքի, իսկ ծին ու մարդը՝ փոքր տիեզերքի նախնական պատկերացումներն են, որոնք սևացել են չար աչքի կողմից՝ նրանց սպառնացող կործանման հետևանքով (հմմտ. № 17 աղոթքի չար աչքի ճստած կամ գրաված տեղը բնութագրող՝ «Նստել ես սև սարին, /Ապառաժ լեռ քարին» տողերի հետ):

Սև օձը, որ ամենահաճախական մոտիվն է այս աղոթաշարում, դուրս է գալիս սև անտառում գտնվող սև քարի տակից, ինքը հենց խորհրդանշում է ստորգետնյա սև քաոսը, իսկ նրանից կթած սև կաթը, դրանից մակարդած սև մածունը՝ լցրած սև կճուճի մեջ, որ հաջորդ տարբերակներում ուտեցվում է չար աչքին. վերջինս դրա հետևանքով ճաքում է, ոչնչանում, հիվանդը՝ լավանում, աշխարհը (տիեզերքն ու մարդը) կրկին վերադառնում են իրենց բնական վիճակին:

Աղոթքին ուղեկցող հմայական արարողությունը ևս խիստ խորհրդանշական է և համախոս աղոթքում նկարագրված իրադրությանը. աղոթքն ասվում է մի կտոր ածուխի և հացի վրա: Ածուխն իր սևությամբ խորհրդանշում է քաոսային սև ու կործանարար ուժը՝ հիվանդությունը, մինչդեռ հացն իր սպիտակությամբ ու էությամբ հակադրված է ածուխին, իբրև կենարար ու ամոքիչ: Ուստի աղոթքից հետո ածուխը, ոտի տակ գցելով, փշրում են, ոչնչացնում, իսկ հացը տալիս են հիվանդին ուտելու: Տիեզերքի ու քաոսի այս հնագույն առասպելական պատկերացումները աղոթքներում շատ խտացվել են, սիմվոլացվել և ծառայել աղոթողի հմայական նպատակներին: Այդ ավանդական պատկերացումների օգտագործման և խիստ սիմվոլացման

շնորհիվ աղոթող հմայագործը կարողանում է հոգեբանական զորեղ տպավորություն գործել հիվանդի և ունկնդիրների վրա, իսկ ինքը հանդես գալ աշխարհը վերափոխողի, վերակառուցողի ակտիվ դերով, յուրովսանն փոխարինելով աշխարհի հին արարչին:

15. Աղոթքը վերատողատված է ըստ ռիթմի և հանգերի:

17 կարճ տողերից բաղկացած այս աղոթքի 13 տողերը սկսվում են չար բառով: Վերջինիս պարբերաբար ու շեշտված կրկնությունները ոչ միայն ռիթմական հանգիտություն են հաղորդում ամբողջ աղոթքին, այլև շարունակ նպատակամիտված շեշտում բառիմաստը, որի դեմ է ուղղված հմայական խոսքը:

16. Բանասաց՝ Մարտիրոսյան Ալմաստ, 90 տարեկան, գաղթած Մշո Ղարս գյուղից:

Բանահավաքներ՝ Ս. Հարությունյան, Ա. Սահակյան, գրառված է 1969 թ.:

Նույն բանասացից միաժամանակ գրանցվել են նույն աղոթքի ևս երկու տարբերակներ, որոնք համադրվել են բնագրում:

17. Խորագրված է՝ «Աչքը տվածի աղոթք»: Տողատումը կազմողինն է:

Բանահավաքը (Գրիգորիս Երզնկյան) աղոթքին կցել է հետևյալ ծանուցումը. «Նախ «Հայր մեր» են ասում և ապա երեք անգամ կրկնում այս աղոթքը որևէ ասեղի վերա: Աղոթքի ավարտումից հետո վերցնում են այդ ասեղը, երեք անգամ անցկացնում հիվանդի շորի միջով և այնպես թողնում մի օր շարունակ: Եթե հիվանդը բացակա է, աղոթողը նույն գործողությունը կատարում է նորա թաշկինակի վերա ու այդ աղոթած թաշկինակը ուղարկում հիվանդին, որ կապե գլուխը»:

18. Աղոթքի վերջին տողերում *չար ճաֆասը* (շունչ) հակադրված է բարի աղոթքին (չարի և բարու հակադրություն): Վերջինս չեզոքացնում, վնասազերծում է առաջինին, որը և աղոթքի բուն նպատակն է:

19. Խորագրված է «Չար աչից աղոթք»:

Ձեռագրերը պահվում են ԳԱԹ Գ. Սրվանձտյանցի ֆոնդում և այնտեղ գտնվող Լևոն Մաքսուտյանի տետրում: Առաջին անգամ Գ. Սրվանձտյանցի անունով տպագրվել է «Լումայում», «Գավառական երգեր» շարքում: Տպագրվում է ըստ «Լումայի» հրատարակած բնագրի:

Աղոթքի գրառման վայրն անհայտ է, բայց, ելնելով բարբառային հատկանիշներից, որոնք բնորոշ են Մշո բարբառին, հարցականով դնում ենք Մուշ:

Աղոթքում հիշատակվող սև օձից կթած կաթը չար փշի վրա լցնելու և փուշը չար աչքի մեջ խրելու առասպելական մոտիվը գրեթե նույնական է ժողովրդական կենցաղում տարածված հմայական հետևյալ արարողության հետ. երբ կովի կաթի հետ արյուն էր կթվում, այդ արյունագույն կաթը (հմմտ. № 14 աղոթքի չարության խորհրդանիշ սև օձից կթվող սև կաթի հետ) տանում, լցնում էին աստղփուշ կոչվող փշեղնու վրա, որպեսզի կովի հիվանդությունն անցներ [*իմ հավաքածուից*]: Հավանաբար, արյունախառն կաթի պատճառը ևս համարվել է ակնահարությունը, որը խափանվում էր փշի միջոցով: Փաստորեն, աղոթքի բանաստեղծական պատկերավոր փոխաբերությունը սերում է ծիսակենցաղային իրական արարողությունից:

20. Խորագրված է՝ «Աղոթք չար աչքի և չար նիաթի»:

Բանահավաքն (Աղ. Մխիթարյանց) աղոթքին կցել է հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքն երեք անգամ աղ ու հացի վերա կրկնելով՝ տալիս են շանն ուտելու»:

Աղոթքի առաջին երկտողում՝ «Սև օձն էկավ կչկչալով,/ Սև ամպն էկավ որոտալով», բացահայտ նկատվում է սև օձի ամպրոպային բնույթը: Նա զուգորդվել է սև, որոտացող ամպին և, փաստորեն, նույնացել ամպրոպային վիշապի առասպելական կերպարին: Իսկ վերջինս, ինչպես հայտնի է, ունի խտոնիկ-ստորերկրյա ծագում և նույնանում է ստորերկրյաքի կամ Սև Անհատակի քաոսային չար ուժերին և դրանց մարմնավորումն է: Նրանից կթած կաթն ու մերած մածունը, ըստ աղոթքի, լցնում են խարկած կժերն ու գցում անհատակ ծովերը (հմմտ. ախտարային գրականության մեջ Սողոմոն իմաստունի կողմից չար դևերին կժերի մեջ լցնելու և ծովը նետելու առասպելաբանական մոտիվի հետ), այսինքն՝ քաոսային չար ուժերի արտադրանքը՝ չարիքը, վերադարձնում են այնտեղ, որտեղից այն դուրս էր եկել. Անհատակ ծով ըմբռնումը նույնական է Սև Անհատակին (իմա՝ ստորերկրյա քաոսին և քաոսային ջրերին): Ըստ աղոթքի՝ այնտեղ է գտնվում նաև չար աչքի տերը, այսինքն՝ ակնահարողը, որին կերցնում են սև օձի կաթից բաղադրված մածունը: Այստեղից երևում է, որ չար աչքը նույնական է անդնդային քաոսին և նրա չար ուժերին, որպիսին է նաև սև օձը: Այդ գաղափարին է համամիտվում նաև նախորդ տարբերակների ինվարիանտային հմայական բանաձևերում (№№15, 19) հիշատակվող Անհատակ ծովը, ուր վերջին հաշվով հմայական խոսքով՝ քշվում, նետվում է չար կրակը, որը վառել էր չար աչքին խոցած չար փշին և, իբրև իր մեջ չարության հետքեր պարունակող, ընդմիշտ նետվում է Անհատակ ծովի խորքերը՝ իր բուն հանգրվանը, որտեղից դուրս են գալիս չարիքներն ու չարությունը:

21. ՀԱԲԱ ՆԴ 1885, № 24-ում բերված աղոթքի ձեռագիր պատճենն է, որի աղբյուրը նշված է ձեռագրի հեղինակի կողմից:

Աղոթքին, ըստ բանահավաքի վկայության, հետևում է «Հայր մեր»-ը:

Աղոթքից առաջ բանահավաքը նկարագրում է հետևյալ արարողությունը. երեխայի գլուխը երբ ցավում է, մայրը, վերցնելով նրան, դիմում է աղոթարար պառավին: Վերջինս զննելով երեխայի դեմքը՝ եզրակացնում է, որ նրան չար աչք է դիպել. հանում է գրպանից պատրաստի դանակը և սկսում նրանով խաչակնքել երեխայի դեմքը, կիսաձայն աղոթք շշնջում և հորանջում: Հորանջը նշան է, թե չար աչք է դիպել, ուստի ասում է. «Գրող.յելնի ըդման աչքին, փու՛շ բուսնի»: Ապա, մերթ ընդ մերթ քթելով դանակի վրա՝ «Թյու՛, թյու՛, թյու՛», վերջացնում է աղոթքը: Աղոթքն ամբողջապես բանադրանք է՝ անեծք՝ ուղղված չար աչքին, չար մտքին ու խորհրդին: Փուշն այստեղ ոչ միայն իր սուր ծայրով ծակող, խոցող հատկանիշով է նշանավորվում, այլև նկատի առնելով աղոթողի հոգեբանական ռեակցիան՝ «Գրող.յելնի ըդման աչքին, փուշ բուսնի», նշանակում է՝ փուշը ձեռք է բերում նաև անպտուղ, մոլախոտային բույսի արժեք, որ բնորոշ է ավերակներին ու անտերունչ վայրերին, այսինքն՝ նշանակում է ոչնչացում ու ավերում:

Իսկ աղոթքում հիշատակվող սև օձի փուշը սև օձի թունավոր խայթիչն է, որով կամեցվում է խոցել չար աչքը, այսինքն՝ չարին չարով պատժել: Ե՛վ սև օձը, և՛ չար աչքը աղոթքներում համարժեք են՝ քաոսային միևնույն կործանարար ուժերի տարբեր դրսևորումները:

22. Աղոթքի առաջին վեց տողում նկարագրված վիպական իրադարձությունը խիստ պատկերավոր է և առասպելաբանական. լեռը՝ իբրև տիեզերքի խորհրդանիշ, աղոթքում հանդես է գալիս սև գույնով:

Սև լեռը կամ սև սարը հաճախ հանդես է գալիս հեքիաթներում: Մեռնող հայրը պատվիրում է որդուն՝ որսի չգնալ սև սարը: Որդին խախտում է հոր պատվիրանը, գնում այնտեղ որսի, հանդիպում դևի, հետը կռվում, հաղթում, ապա ենթարկվում բազում պատուհասների [տե՛ս **Սրվանձտյանց 1978,** 204]: Սև սարը, այս. ինչպես նաև այլ հեքիաթներում, անգամ մեր ժողովրդական վեպում դիտվում է իբրև չար դևերի բնակության, չարիքի ու դժբախտության վայր:

Սև սարի վաղագույն պատկերացումը առկա է շումերական ավանդության մեջ. շումերները արեգածագման և մայրամուտի կետերը պատկերացրել են երկու լեռան տեսքով. արևելյան կետը կոչել են սպիտակ սար, իսկ արևմտյանը՝ սև սար: Առհասարակ, տիեզերքը խորհրդանշող այդ լեռան ներսում է գտնվում ստորերկրյա աշխարհը: Ասուրաբաբելական հմայական մի աղոթքում հիշատակված է, որ սարսափելի յոթնյակը ծնվում է արևածագի (իմա՝ սպիտակ) լեռան և մեծանում արևամուտի (իմա՝ սև) լեռան մեջ [**Jeremia 1929,** 132]: Այդ յոթ մեծ մասկիմների դեմ է ուղղված ասուրական հետևյալ հմայական աղոթքը, որից պարզ երևում է այդ սարսափազդու չար ոգիների քաոսային ստորերկրյա ծագումը:

Յոթն են, յոթն են նրանք,
Ծովի անդնդային խորքերում յոթն են նրանք՝
Երկնքի յոթ խոռվարարները.
Նրանք ելնում են օվկիանոսի խորքերից,
Սրբազան գաղտնարաններից.
Ոչ կին են նրանք,
Ոչ տղամարդ են նրանք,
Տարածվում են ցանցի նման:
Կին չունեն նրանք,
Զավակներ չեն ծնվում նրանց,
Պատիվն ու շնորհը հայտնի չեն նրանց,
Աղոթք ու աղերս չեն լսում նրանք:
Պիղծ են՝ ծնված լեռներում,
Թշնամի են էա աստծուն...
Թշնամի են, թշնամի:
Յոթն են նրանք,
Յոթն են նրանք,
Կրկնապատիկ յոթն են նրանք.
Երկնքի աստվածը անիծի նրանց,
Երկրի աստվածը անիծի նրանց:

[Лемани 1900, 37]

Միմյանց հակադիր սպիտակ ու սև սարերի պատկերացումը վկայված է նաև այլ ավանդություններից, դիցուք, ինչպես սլավոնականում, ուր առկա է Белая гора և Черная гора, համապատասխանաբար իրենց վրա բնակվող Белобог և Чернобог

բարի և չար աստվածություններով [տե՛ս Топоров1980, 313]:

Մայրամուտի սև լեռան այս ավանդական պատկերացումն է, հավանաբար, որ կա աղոթքում: Լեռն իր սևությամբ խորհրդանշում է կյանքի մայրամուտը (հմմտ. արև-կյանք խորհրդանիշը, որից «Արևդ խավարի», «Արևդ մարի», «Արևամեռ» անեծքները), որ առաջ է եկել հիվանդության՝ չար աչքի տիրապետության հետևանքով: Եվ ահա, սև լեռը պատռվում է, և նրա միջից դուրս են գալիս երեք սև էակ՝ սև ծի, սև մարդ, սև օձ, երեքն էլ, ըստ երևույթին, չարի, չարիքի, հիվանդության ու մահվան մարմնացումներ, այսինքն՝ քաոսային կործանարար ուժեր. ընդ որում, սև օձի մեկ աչքը հուր է, մյուսը՝ ջուր: Հուրն ու ջուրը թե՛ բնության և թե՛ առասպելաբանության մեջ (հայկականում՝ երկվորյակ քույր ու եղբայր) իրար հակադիր ուժեր են, առաջինը միշտ էլ կլանվում, ոչնչացվում է երկրորդից: Այդպես են նրանք հանդես գալիս նաև չար աչքի աղոթքների իմաստային բանաձևերում և հմայական արարողություններում (հմմտ. «Չար աչքն ի չար փուշ, /Չար փուշն՝ ի չար կրակ, /Չար կրակն ի յանատակ ծով» և նման բանաձևերի հետ, ուր չար աչքը պատուհասվում, ոչնչանում է փշից, փուշը՝ կրակից, կրակը՝ ջրից: Կամ՝ նկատի առնել կրակը ջրի մեջ մարելու և ջուրը հիվանդին խմեցնելու արարողությունը, ուր, ըստ երևույթին, չար աչքը սիմվոլացնում է կրակը, որ կլանվում, ոչնչացվում է ջրից): Կրակը, իբրև չար աչքի խորհրդանիշ, երևում է նաև ամպրոպային առասպելներում: Այստեղ երկնային հուրը՝ կայծակը, դիտվում է իբրև ամպրոպային էակի չար հայացք: Այդպիսին են, օրինակ, Հրաչք և Ծովինար կայծակնային էակները հայոց պատկերացումներում: Նրանց աչքերը հրեղեն են և այրում են ամեն ինչ: Իսկ իրանական առասպելաբանության մեջ չար Ահրիմանը՝ օձի կերպարանք առած (Անգրա Մայնյու), երկնքում կռվում է բարի Օրմազդի դեմ և իր չար հայացքով առաջացնում 9-90 հազար հիվանդություն [տե՛ս **Աբեղյան 1975,** 99-100]:

Աղոթքի առաջին վիպական նկարագրական մասին հաջորդում է երկրորդ՝ բանադրական մասը, որն ուղղված է չար աչքի՝ ենթադրվող գունային տեսակների (թուխ, շեկ, կանաչ, կապույտ) դեմ և ավարտվում «Չար աչքը տրաքի» անեծքով: Այս անեծքն ու աղոթքի սկզբնատողը («պատռեց սև լեռը»), այսինքն՝ վերջն ու սկիզբն արտահայտված են նույնիմաստ բայական համանիշներով (տրաքել, պատռել), բայց տարբեր եղանակներով (ըղձական և սահմանական), որ պայմանավորված է երկու մասերի իմաստների տարբերությամբ (առաջին մասը կատարված, ավարտված իրողություն է, մինչդեռ երկրորդը՝ ցանկալի):

Հմայական աղոթքների մի մասը (մանավանդ, միջնադարյան) կառուցված են համեմատական զուգահեռականության սկզբունքով, երբ բաղձալի հետևանքը զուգադրվում, համեմատվում է առաջին՝ վիպական նկարագրական մասին՝ նպատակ ունենալով դրանից առաջ բերել ցանկալի կամ բաղձալի հետևանքը: Քննվող աղոթքը, ահա, կառուցված է այդ սկզբունքով. տարբեր գույների չար աչքի տրաքվելու ցանկությունը համեմատվել է սև լեռան պատռվելու պատկերին, և ինչպես լեռան պատռվելու հետևանքով նրանից դուրս են գալիս չար արարածները, և լեռն ազատվում է իր չար պարունակությունից, այդպես էլ թող չար աչքը տրաքվի, և ակնահարվածն ազատվի իրեն դիպած չար հիվանդությունից:

23. «Կապել» բայն այս և հաջորդ աղոթքներում իր բուն նշանակությունից բացի, գործածվում է նաև հմայել, կախարդել իմաստով: «Կապ, կապք, կապս» ժո-

ղովրդական լեզվում նշանակում է հմայք, թովչություն, հմայագործություն կամ կախարդման ծրարը, առարկան [հմմտ. ՆՀԲ, 1053]: Այստեղից էլ՝ «Կապքի աղոթք» բառակապակցությունը, որ նշանակում է հմայական աղոթք:

Ըստ հավատալիքի՝ չար ոգիների ազդեցության հետևանքով կարող են կալվել և կապվել թե՛ բնությունը (երաշտի դեպքում ասվում է. «Երկինքը կալվել ու կապվել է»), թե՛ կենդանիները (անծնություն, կաթի ցամաքում), թե՛ մարդիկ ու նրանց մարմնի մասերը (շարժվելու, լսելու, խոսելու, տեսնելու, սեռական ունակության և այլնի կորուստ, միզկապություն, փորկապություն և այլն):

Միաժամանակ կալելու և կապելու ունակությամբ են օժտված նաև կախարդ հմայողները, որոնք բարի ոգիների օգնությամբ «կապում», կախարդում են ուզած վնասակար կենդանուն (գայլ, գիշատիչ գազան, օձ, կարիճ), դարձնում անվնաս, հիվանդներին վնասազերծում չար ոգիների ազդեցությունից և, ընդհակառակը, չար ոգիների օգնությամբ, մարդկանց «կալ կապս» անում, հատկապես նորապսակներին՝ զրկելով նրանց սեռական ունակությունից, անգամ կալել ու կապել երկինքը՝ առաջ բերելով երաշտ ու անբերրիություն [հմմտ. **Սրվանձտյանց 1978,** 163-164. **Աբեղյան 1966,** 34-36]:

Այստեղից էլ հմայական արվեստում չար կապքի (չար կամ սև հմայության) դեմ է ուղղված կապքի արձակման հմայությունը (հայ միջնադարում կոչվում էր «գիր արձակման»), որով չեզոքացվում, վնասազերծվում, հմայական կապից ու կալանքից ազատվում էր կախարդված անձը կամ առարկան [հմմտ. ՀԱ, 166]:

24. Խորագրված է «Աչքի աղոթք»:

Բանասացը, բանահավաքը, գրառման տեղն ու ժամանակը չեն նշված:

Նկատի առնելով աղոթքի լեզվում առկա Թիֆլիսի բարբառին բնորոշ հատկանիշները՝ այն որոշ վերապահությամբ համարում ենք թիֆլիսահայ ավանդության արդյունք:

Տողատումը կազմողինն է: Աղոթքի վրա զգալի է վրացերեն հմայական աղոթքների ազդեցությունը: Առաջին երկտողը («Աղոթում եմ աչքիտ,/ Առաչի անգամ իմ գլխին»), որ բնավ չի հանդիպում հայ ավանդական աղոթքներում, ճիշտ թարգմանությունն է ակնահարված երեխայի և, առհասարակ, ակնահարվածների վրա ասվող վրացերեն աղոթքների հետևյալ սկզբնատողերի. «Շագիլոցամ թվալիսասա, ուծին չեմի թավիսասա»: Բացառությամբ հայկական տարբերակի հաջորդ 3-րդ և 4-րդ տողերի, որոնք քրիստոնեական աղոթքների պարտադիր բանածևի («Անուն հօր» ևն) աղավաղումն են, հետագա 5-11-րդ տողերը դարձյալ, աննշան տարբերակումներով, հանդես են գալիս վրացերեն ներքոհիշյալ աղոթքներում [տե՛ս **Ումիկաշվիլի 1964,** 149, №№ 19, 20. 153, №№ 27, 28], հմմտ. նաև №№ 13 աղոթքի ծանոթագրությունը:

25. Առաջին երկտողը ինչ-որ բառերի, գուցե և գուշանունների աղավաղում է և գրեթե՝ անհասկանալի:

Փուշը, ժողովրդական հավատալիքներում և, մանավանդ, հմայական աղոթքներում, իր ծակող, խոցող հատկությամբ ընդհանրապես չարահալած է, անգամ հանդես է գալիս չար աչքից պահպանվելու հմայական միջոց (հմմտ. «Չար աչքն՝ ի չար փուշ» բանածևի հետ):

Սակայն այս, ինչպես նաև այլ աղոթքներում, չար փուշը հանդես է գալիս չար աչքին համազոր և համիմաստ հասկացությամբ (հավանաբար, իբրև չար աչքի ծակող, խոցող զորությունը մարմնավորող) և նրա հետ անեծքով կործանման դատապարտվում:

27. Խորագրված է «Չար աչքի»:

Բանահավաք՝ Արքայիկ:

Այս վեցտողյա աղոթքում 8 անգամ կրկնվում է չար մակդիրը՝ 5 անգամ վերադրվելով աչքի, 2 անգամ՝ ուղու (հղե), մեկ անգամ՝ մարդու վրա և հարակրկնությամբ առաջ բերում չարի իմաստաբանական հնչյունախաղ, անընդհատ շեշտում չարն ու չարիքը: Աղոթքում տարբեր գունային մակդիրներով են (սև, կապույտ) բնորոշվում երկու տարբեր քարեր՝ սև սալը (մահվան, դժբախտության խորհրդանիշ), որի վրա է աղոթքն ուղղում չար աչքի ներգործությունը և կապույտ քարը, իբրև չար աչքից պահպանվելու հմայական միջոց (հմմտ. կապույտ ակնաուլունքի հետ, որպես ակնահարության պահպանակ):

28. Խորագրված է «Չար աչքի»:

Բանահավաք՝ Արքայիկ:

Կառուցված է հարց ու պատասխանի սկզբունքով: Չար աչքը խորհրդանշվել է կարիճի և օձի պատկերով, իբրև թունավոր խայթիչներով կենդանիների: Ընդ որում, օձի փորը լցված է աղ ու մոխիրով, որ խորհրդապատկերում է մրմուռ և ավերածություն:

Աղոթող հմայագործը այդ կենդանիներին վայր է նետում սև քարից ու սև սալից (չարության, մահվան, դժբախտության խորհրդանիշներ), որոնք համարժեք են օձին ու կարիճին, և Կույս Մարիամի հույսով և աստծո կամքով ազատում հիվանդին չար աչքի ներգործութունից:

29. Խորագրված է՝ «Աչքի աղոթք»:

Աղբյուրը, որից քաղված է աղոթքը, նշված է «Առողջապահական թերթ», 1881 թ., № 29:

Աղոթքի տակ ծանուցված է՝ «Յոթ անգամ ասել»:

Աղոթքն ուշագրավ է իր կառուցվածքային մասերով ու հատկանիշներով: Այն բաղադրված է չորս մասից. առաջինում (առաջին չորս տողերում) նկարագրված է չար աչքի ջախջախիչ ներգործությունը լծի, լծկանների և, հավանաբար, հոտաղների (քառասուն մանկունք) վրա. երկրորդ մասում (5-6 տողեր)՝ չար աչքը կապելու և անտակ ծովը նետելու հմայական արարողությունը: Երրորդ մասում, որը և ուշագրավն է, հարցման եղանակով կրկնվում են առաջին երկու մասերում ներկայացված չար աչքի և աղոթողի հմայական արարքները և այդ կրկնությամբ ավելի է ամրապնդվում և կարևորվում աղոթքի բուն իմաստը: Եվ, վերջապես, չորրորդ մասում, որն աղոթքի եզրափակիչ տողն է, յուրատեսակ պատասխան է տրվում այդ հարցումներին՝ «Հանուն Հիսուս Քրիստոսի», այսինքն՝ այդ բոլորը կատարվել են Հիսուս Քրիստոսի անունով և զորությամբ:

Հարցադրման ու պատասխանի նման և այլ ձևեր, որոնք հանդիպում են նախորդ № 28, նաև այլ աղոթքներում, ծագումով հին են և սերում են աշխարհի կազմի

ու կառուցվածքի մասին եղած վաղնջական ծիսաառասպելաբանաստեղծական բնագրերի ավանդությունից: Դրանք իրենց մեջ խտացնում ու ամփոփում են աշխարհի ու մարդու (մեծ ու փոքր տիեզերքներ) կործանմանն սպառնացող իրադարձությունները ու դրանց դեմ ուղղված ծիսահմայական արարքների ամբողջությունը, իբրև տիեզերաբանական կայուն կարգավիճակի պահպանման հակադիր սկզբունքների միասնության համապատկեր:

30. Խորագրված է՝ «Նազար չառնելու աղոթք», այսինքն՝ չար նայվածքից պահպանվելու աղոթք է և ոչ թե բուժման: Հետևաբար, առանց հմայական բանաձևի, որը, հավանաբար, բանավոր ավանդման հետևանքով մոռացվել ու սղվել է, թվարկվում են միայն այն կենսական կարևոր առարկաներն ու անձինք, որոնք ենթակա են ակնահարման և աղոթքով ապահովվում դրանց անվտանգությունը: Չար աչքի ենթակա այս և այլ կարգի օգտակար առարկաների ու պիտանի անձանց թվարկումը առկա է նաև այլ աղոթքներում (տե՛ս №№ 31, 34բ և այլուր):

31. Խորագրված է՝ «Չար աչքի (նազարի) աղոթք»:

Իմաստը փոքր-ինչ մթագնած է. հստակ չեն տարբերակվում բուժման հմայական-երևակայական միջոցները (ճնճղուկի կիթ, օձի եղջյուր, մրջյունի կաթ) ակնահարման ենթարկված առարկաներից (լավ աղջկա ծամ, լավ կտրիճի բազուկ, հմմտ. նախորդ № 30 աղոթքում թվարկված առարկաների ու անձանց հետ):

Ելնելով բովանդակությունից՝ պետք է ենթադրել, որ օձի եղջյուրն ու մրջյունի կաթը չար աչքի հալածիչներ են, որոնք աղոթողի ցանկությամբ պետք է հովանավորեն լավ աղջկա ծամն ու լավ կտրիճի բազուկը, որպեսզի չար փուչը (իմա՝ չար նայվածքի խայթիչ զորությունը) հալածվի նրանցից: Ըստ այսմ էլ, կազմողի կողմից փոփոխվել են աղոթքի կետադրության նշանները:

32. Աղոթքը կառուցվածքով բաղադրված է երկու հիմնական մասերից. ակնահարին ուղղված անեծքի երկու բանաձևերից (առաջին երկտողը և վերջին քառյակը) և նրանց միջև ընկած վեց տողից բաղկացած վիպական նկարագրությունից: Փաստորեն, աղոթքն սկսվում և վերջանում է անեծքի հմայական բանաձևերով: Իսկ վիպական նկարագրությունը, որը բաղադրված է անասնապահական-արտադրական կենցաղից վերցրած պատկերներից, այլաբանորեն ներկայացնում է հմայական արարողությունը: Վերջինիս իմաստի սիմվոլային դրսևորումը հատկապես կայանում է կապույտ գույնի խաղարկման մեջ: Կապույտը, իբրև մակդիր, հանդես է գալիս յոթ անգամ, ընդ որում, յուրաքանչյուր դեպքում դրվելով տարբեր կենդանիների, առարկաների ու անձանց վրա (կապույտ եզ, կով, մածուն, խնոցի, կարագ, մարդ, կին), կրկնվելով յուրաքանչյուր տողասկզբին, առաջ բերելով գունահնչյունային միասնականություն, ընդհանրություն, անընդհատ շեշտելով ու ընդգծելով այն, իբրև գլխավոր իմաստակիր բառի: Եվ քանի որ ժողովրդական ըմբռնումներով կապույտ գույնն առհասարակ ակնահարությունից պահպանվելու և բուժվելու միջոց է նկատվում (հմմտ. կապույտ ակնաուլունքը, կապույտ շորը և այլն), ապա միանգամայն հասկանալի են դառնում «կապույտ» բառի այդօրինակ կրկնությունների նպատակն ու իմաստը: Հմայագործը համատարած կապտությամբ է օժտում ամեն ինչ, որ հաճախ անբնական է ու արտառոց է հնչում (ինչպես, դիցուք՝ կապույտ մածուն, կապույտ

կարագ, կապույտ մարդ, կապույտ կին), բայց քանի որ այդ արվում է հատուկ խորհրդանշանային նպատակով՝ շեշտելու համար ակնահարվածին կապույտով բուժելու կամ չար աչքից պահպանելու գաղափարը, ուստի ամեն ինչ դառնում է իմաստալի և ծիսաբանաստեղծական: Բացի այդ, վիպական հիշյալ նկարագրության մեջ պատկերվում է (հմայագործի կողմից կատարվող) անասնապահական-արտադրական կենցաղի օգտակար աշխատանքների մի շարք (եզ լծել, կով կթել, մածուն մերել, խնոցի հարել, կարագ պատրաստել), որն իր գործընթացների հերթական աստիճանականությամբ և վերջնական եկամտի ստացումով խիստ շահեկան է: Իսկ երբ նկատի է առնվում, որ այդ վերջնական եկամտի արդյունքն է ոչ միայն կարագը, այլև մարդ ու կինը, որոնք բոլորն էլ կապույտ են, ապա պարզ է դառնում այդ աշխատաշարի ծիսաայլաբանական իմաստը, նրա հավասարաձևունակությունը՝ իր իսկ այլաբերած ակնահարված կնոջը կամ տղամարդուն վերջնական բուժելու, վերաստեղծելու, կյանքն ապահովելու հմայական բուժման գործընթացին:

33. Խորագրված է՝ «Նազար չառնելու աղոթք»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքի 2-րդ և 4-րդ տողերը հմայական իրական արարողության հիշատակումն են (դանակով և հացի ափսեով չար աչքի կտրելը՝ վնասազերծումը): 3-րդ տողը անեծքի բանաձև է՝ չար աչքին ուղղված, ուր ակնարկված է նրա ստորերկրյա (քառասային) ծագումը և դարձյալ այնտեղ՝ գետնի տակ վերադառնալը (հմմտ. № 20 ծանոթագրությունը): Վերջին եռատողում նախորդ (№ 32) աղոթքի նման, դարձյալ խաղարկվում է կապույտ գունաբառը, որ կրկնվում է երեք անգամ և վերաբերում կաթի, մածունի և չար աչքի կապտությանը: Արդեն նշվել է, որ խիստ չար են համարվում կապույտ և կանաչ գույնի աչքեր ունեցողները (տե՛ս սույն ծանոթագրությունների նախաբանը): Այս աղոթքում, հմայագործի ծիսաայլաբանական արարողությամբ՝ նրա կթած կապույտ կաթից մերած կապույտ մածունը ուտեցվում է կապույտ աչք ունեցողին, իբրև չար աչքի խորհրդանիշի: Բայց միաժամանակ հայտնի է, որ կապույտ գույնը չար աչքից պահպանվելու և բուժվելու միջոց է: Հետևաբար, չար աչքի աղոթքներում, հմայություններում ու հավատալիքներում կապույտ գույնը խորհրդանշում է երկակի հայեցակետ. կապույտ աչք ունեցողի դեպքում այն վնասակար ու չար է գիտակցվում, մինչդեռ կապույտ ակնաուլունքի, կապույտ շորի կամ հագուստի դեպքում, ընդհակառակը՝ չար աչքի ազդեցությունը վնասազերծող, նրանից պահպանող: Անգամ աղոթքներում հաճախ հիշատակվող այլաբանական կապույտ մածունը ծանոթագրվող աղոթքում ուտեցվում է կապուտաչ ակնահարին, իբրև հակաթույն և հակազդեցության միջոց՝ նրա վնասակար հայացքի:

34ա. Գրառման ժամանակը՝ 1940 թ., բանահավաք՝ Ն. Նիկողոսյան: Այս նույն աղոթքը հանդես է գալիս հաջորդ տարբերակի (№ 34բ) սկզբում, իբրև առանձին մաս:

34բ. Այս աղոթքը առնվազն չորս տարբեր աղոթքների հարակցում է՝ միավորված ավանդական բանադրանքի նույն բանաձևի («Չար աչքը՝ չար փուշ,/Չար նիաք, չար խրատ») պարբերական կրկնություններով: Այդ կրկնությունները, կատարվելով որոշակի քանակի (2, 3, 4, 5, 11) տողերից հետո, առաջ են բերում բանաստեղծական

տների ռիթմական զգացողություն և դառնում յուրատեսակ կրկնակ աղոթքի ամբողջ կառույցի համար:

Աղոթքում գերակշռում է խորհրդանշական սև գույնը (սև եզ, սև սար, սև սամոտեն, սև կթոց, սև օձ), որ, վերադրվելով համապատասխան գոյականների վրա, իբրև մակդիր, առաջ է բերում նաև բաղաձայների հանգիտություն (մասնավորապես ս հնչյունի), ստեղծում իմաստահնչյունային համապատկեր:

Սև եզան վրա գտնվող «օխթը հանգույցը» խորհրդանշում է կապքը՝ հմայությունը:

Հիշատակված են աստվածաշնչային մի շարք սրբազան հասկացություններ՝ (Սողոմոնի տաճար, Դավիթ մարգարեի գավազան, Ահարոնի խոսք, Ունանի (իմա՝ Հովնանի) բանալի, այսինքն՝ ձկան փորից դուրս գալու աստվածային շնորհը), որոնք վկայակոչվում են ընդդեմ չարի:

Չար աչքի դեմ օգտագործված են երկու տարածված անեծքի բանաձևեր («Աչքը խավրի, արևը մարի») և անպատկառությանն ուղղված և փոքր ինչ ոճափոխված մեկ առած («Դռնեն վռնդես՝ էրթեցեն ներս կըննկի») **[Ղանալանյան 1960,** 23]:

Ուշագրավ է հատկապես աղոթքի վերջին, եզրափակիչ հատվածը՝ կառուցված երկխոսության վրա, ուր երդվեցվում կամ խոստովանեցվում է անձնավորված չար աչքը, հմայության մի տարածված եղանակ՝ դրսևորված հատկապես միջնադարյան գրավոր աղոթքներում: Այստեղ նախ՝ անձնավորված է չար պահը՝ ակնթարթը (ժամ, սհաթ), որ նույնանում է չար աչքին: Կարևոր են հատկապես այն առարկաներն ու կենդանիները, մանավանդ դրանց այն հատկանիշները, որոնց կրելու դեպքում են միայն դրանք ենթակա չար աչքի ներգործությանը: Դրանք են՝ անխաչ խմորը (հունցած խմորի վրա միշտ խաչի նշան են անում, որ չարը չդիպչի), բաց օրորոցը կամ կամարը (չարը չդիպչելու նպատակով միշտ ծածկած են պահում), լավ եզը, գոմեշը, ձին, ոչխարի հոտը, ջրաղացի քարը, արտի գարին և, առհասարակ, բոլոր լավագույն բարիքները (հմմտ. նաև այլ աղոթքներում հանդիպող աղեկ կտրիճ, աղեկ աղջիկ, աղեկ տան տիկին, աղեկ տուն որակավորումները): Այստեղից հետևում է, որ չար աչքի ներգործությանը ենթարկվում է լավը, ընտիրը, գեղեցիկը, կատարյալը, քանզի դրանք են միայն զարմանքի, հիացմունքի, գովասանքի, հետևաբար և ակնահարության արժանանում: «Կախարդությունն ինքը հենց այն գովասանքն ու բարեմաղթությունն է, որ անում է չար աչք ունեցողը» **[Աբեղյան 1975,** 101]:

35ա. Բնագրում սույն աղոթքին հարակցված էր դարձյալ չար աչքի մասին մեկ այլ անկախ աղոթք («Չար աչքը կերթար, Քրիստոս դեմ դիպավ, ըսաց» սկզբնատողով): Վերջինս, բացի Քրիստոս և չար աչք անուններից, ուրիշ ոչ մի ընդհանրություն չունի սույն աղոթքի հետ: Ձեռքի տակ եղած նյութերում առկա են այդ հարակցված աղոթքի տարբերակները, իբրև անկախ ստեղծագործություններ: Ուստի, նպատակահարմար համարվեց անջատել այն սույն աղոթքից և տեղադրել այդ տարբերակների շարքում (տե՛ս № 22ա):

Աղոթքում հիշատակվող Սողոմոնի տաճարը՝ Երուսաղեմի հռչակավոր տաճարն է՝ կառուցված մ.թ.ա. 9-րդ դարի սկզբներին, Հուդայի և Իսրայելի միասնական պետության թագավոր Դավթի որդի՝ Սողոմոնի կողմից: Այն, հին առասպելաբանական հայացքով, կառուցված էր աշխարհի կենտրոնում, Հին աշխարհի և, մանավանդ, հրեական ցեղերի ամենահեղինակավոր սրբություններից էր, որի հեղինակու-

թյունը Աստվածաշնչի ազդեցությամբ շարունակվեց պահպանվել նաև հետագայում բոլոր քրիստոնյա ժողովուրդների մեջ՝ կապվելով Քրիստոսի կյանքի ու գործունեության հետ:

Աղոթքում հիշատակված առաքելոց դանակը, որ հաջորդ տարբերակներում դառնում է մերթ սև կոթով, մերթ ֆրանկի դանակ, որով «կտրում», վնասազերծում են չար աչքն ու «իրեք հարուր վաթսունըվեց պիղծ ցավը», սերում է ակնահարության բուժման հմայական գործընթացից: Մետաղե այլ սուր առարկաներին զուգահեռ, հմայողն աղոթելիս հաճախ ձեռքին դանակ էր պահում կամ դրանով ոտից գլուխ քանիցս խաչակնքում ակնահարվածին, այսինքն՝ սիմվոլային ձևով կտրում, ոչնչացնում էր չար աչքի ազդեցությունը:

Հմայական նույն պրակտիկայից է սերում նաև աղոթքի վերջին տողում հիշատակված բռնչու տերևը, որ չար աչքին իբրև ուտելիք է հրամցվում: Բռնչենին թփենի է, որի փայտից հմայիլներ էին պատրաստում և կախում կենդանիների վզից՝ ակնահարումից պահպանելու նպատակով:

Աղոթքի այս և հետագա տարբերակների վիպական մասերում հանդես է գալիս նոր գործող անձ՝ Կույս Մարիամը, քրիստոնեական իր տարբեր հորջորջումներով (Մայր Մարիամ, Տիրամայր, Աստվածամայր, Մայրիկ մայր Աստվածածին կամ պարզապես՝ Մարիամ), որը նստած է դրախտի դռների մոտ կամ ծովափին, կամ էլ մի անորոշ վայրում, խիստ հուսահատ լալիս ու ողբում է չար աչքի պատճառած բազում վնասների և հատկապես հարուցած հիվանդությունների համար: Քրիստոսը կամ մեկ այլ անանուն անձ նրան խորհուրդ է տալիս չհուսահատվել, այլ մտնել դրախտը կամ Հիսուսի բաղչան, որևէ դանակով կամ մկրատով կտրել արմատքը կամ երեք մասրենի, կամ երեք ուռենի, կամ երեք պտուղ, կամ չար փուշը, չար աչքը և տարբեր հիվանդություններ:

Վիպական այս մանրապատումներից մի քանիսում Կույս Մարիամը հանդես է գալիս քառասուն կամ հիսուն ծիերի ու ջորիների ջոկերի տեր կամ հովանավոր. դրանք պատուհասվել են չար աչքի ազդեցությունից: Քրիստոսի պատգամով ու խորհրդով Մայր Մարիամը դառնում է չար աչքի և տարբեր այլ հիվանդությունների բուժող (հմմտ. № 40 աղոթքը և ծանոթագրությունը):

Մարիամին վերագրված այդ հատկանիշները, մասնավորապես, իբրև ընտանի կենդանիների տեր և հովանավորող, ինչպես նաև տարբեր հիվանդություններ բուժող, ըստ ամենայնի, սերում է հին մայր աստվածություններին յուրահատուկ գործառույթից: Իրանական ջրերի և պտղաբերության դիցուհի Արդվի Սուրա Անահիտան Ավեստայում հանդես է գալիս իբրև երկնային ջրերի, պտղաբերության, ընտանի կենդանիներին հովանավորող աստվածուհի [տես Маковский 1960, 123]: Նա նաև կանանց ծննդաբերությունը դյուրացնող է, և, ինչպես Յաշտում է նշված՝ Ահուրա Մազդայի առաջարկությամբ «հղի երիտասարդ կանայք քեզնից (իմա՝ Անահիտայից) պետք է բարի ծնունդ խնդրեն» [YAŠT 5, 84, հտն]: Նման գործառույթով է օժտված նաև Մարիամ Աստվածածինը ծննդկանին նվիրված հայկական բուժաղոթքներում (տես № 146 տարբերակաշարը, 152, 157):

Կենդանիներին հովանավորելու և մարդկանց բուժելու հատկություններով է օժտված եղել նաև հին հայոց մայր դիցուհին՝ Անահիտը, որի տաճարների շրջակայքում դիցուհուն նվիրված արջառների ու երինջների նախիրներ են արածել, իսկ հիվանդ Արտաշես թագավորը Երիզայի Անահիտի մեհյանից առողջություն և երկար

կյանք է հայցել [տե՛ս **Մելիք-Փաշայան 1963,** 58, 92]:

35բ. Տողատումը կազմողինն է:
Տե՛ս № 35 ա ծանոթագրությունը:

35գ. Աղոթքում մասրենին փոխարինում է ավանդական բանաձևերում հանդիպող չար փշին: Մասրենու խոցող փուշը հենց չարահալած է գիտակցվել և ուղղվել բոլոր կարգի չարքերի դեմ (սև սատանա, գել-գազան, չար հայացք և այլն): Տե՛ս № 35ա ծանոթագրությունը:

35դ. Խորագրված է՝ «Չար դրկցից ազատվելու»:
Տե՛ս № 35ա ծանոթագրությունը:

35ե. Խորագրված է՝ «Աղոթք ակնահարի»:

Նախորդ տարբերակների Քրիստոսի պարտեզում (իմա՝ դրախտում) գտնվող երեք մասրենուն այստեղ փոխարինել է երեք ուռենին: Ուռենին ժողովրդի մեջ, մասնավորապես եկեղեցական կենցաղում, սրբազան ծառ է համարվում (հմմտ. ծաղկազարդի ուռենին իբրև նոր արթնացող ու ծաղկող բնության սուրբ խորհրդանիշ): Ն. Շնորհալին դեռևս 12-րդ դարում զգուշացնում էր հատկապես բարդի ծառ պաշտող արևորդիների աղանդի հետևորդներին, թե՝ «Եւ զբարտի ծառն մի աւելի պատուէք քան զուռքն և զկաղամախին, և զայլս ի ծառոց» [**Շնորհալի** 243]: Թեպետ Շնորհալու խոսքը բարդու հեթանոսական պաշտամունքի դեմ է ուղղված, բայց ուռենու առաջին տեղում հիշատակելն արդեն վկայում է հայ եկեղեցու առաջնորդի՝ նրան տված նախապատվությունը: Ուռենին, իբրև սրբազան ծառատեսակ, բնական է, որ լիներ նաև չարխափան, որպիսի իմաստով էլ հիշատակված է աղոթքում և համարվել է «պեսպեսական ցավի դեղ»:

Աղոթքի 10-րդ տողից հետո հարակցված հատվածում, ուռենուց բացի, իբրև չար աչքի դեղ է հանդես գալիս նաև օձամարտիկ կամ վիշապամարտիկ սրբեր՝ Սարգսի և Գևորգի բռնած սև օձի կաթից պատրաստված կարագը. մի տարածված մոտիվ, որ հանդիպում է նաև չար աչքի նախորդ աղոթքներում (հմմտ. №№ 14-20):

35զ. Խորագրված է՝ «Աղոթք նազարի կամ չար աչքի»:

Բանասաց՝ Չակայան Եղ., 75 տարեկան, բանահավաք՝ Մկրտիչ Լյուլեճյան, գրառված է 1960 թ.: Տողատումը կազմողինն է:

Աղոթքում իբրև չար աչքի բուժամիջոց են հանդես գալիս սևակոթ դանակով կտրված դրախտային երեք պտուղները: Ի տարբերություն նախորդ տարբերակների, այստեղ բուժում հայցողը ոչ թե Աստվածամայրն է, այլ աղոթող-հմայողը, իսկ բուժման խորհրդատուն՝ Աստվածամայրը. կատարվել է դերերի փոխատեղում, Քրիստոսին փոխարինել է Տիրամայրը: Վերջին քառատողում դարձյալ հանդես է գալիս աղոթող հմայագործը, որը բուժման զորությունը ոչ թե իր անձի հետ է կապում, այլ բժիշկ սուրբ Աբսենտիոսի և Աստվածամոր հետ: Այս վերջին մոտիվը կրկնվում է աղոթքի՝ Նոր Նախիջևանից գրառած մի քանի տարբերակներում: **Հեքիմ սուրբ Աբսենտի**,- նկատի ունի ս. Աւքսենտիոս (Օգսենտիոս) քրիստոնեական վկային, որը այն հինգ նահատակներից մեկն էր (բոլորն էլ Մեծ ու Փոքր Հայքից կամ սահմանակից

տարածքներից), ովքեր եկեղեցական ավանդության մեջ հայտնի են իրենց պարագլխի՝ Եվստրատոսի (ծագումով հայ, Եկեղյաց գավառի մոտակայքի Արաւրակ կամ Արօրկայ քաղաքից) անունով՝ «սուրբք Եւստրատիոսեանք»: Բոլորն էլ նահատակվել են 4-րդ դարի սկզբներին Սադաղում կամ Սեբաստիայում [տե՛ս **Աւգերեան,** Թ, 481-534]:

Ս. Օգսենտի (Օգսենտիոս) անունով հայկական եկեղեցիներ են եղել Ղրիմում (Ղարասուբազար, Կաֆա), Բեսարաբիայում (Ակկերման): Վարդան Կաֆայեցու մի բանաստեղծության մեջ հիշատակված Կաֆայի (Թեոդոսիա) հայկական եկեղեցիների շարքում ս.Օգսենտ եկեղեցին որակվում է որպես մեծ բժիշկ («Սուրբ Օգսէնտ մեծ բժիշկ է») [տե՛ս **Դիվան 1996,** 18-19, 112-113, 259-260]: Փաստը վկայում է, որ ղրիմահայերի (դրանց թվում՝ նոր նախիջևանցիների) համար ս.Օգսենտ (Աքսենտը) եղել է բուժող սուրբ և նրա եկեղեցուն դիմել, ուխտ են արել բուժման նպատակով: Հմմտ. նաև № 35է, ԺԳ տարբերակները:

35է. Խորագրված է՝ «Աղոթք նազարի կամ չար աչքի»:

Բանասաց՝ Չակայան Եղ., 75 տարեկան, բանահավաք՝ Մկրտիչ Լյուլեճյան, գրառված է 1960 թ.:

Կազմողի կողմից ենթարկվել է մասնակի տողատման:

35ը. Աղոթքում որոշ բառեր *(իյա, մայս)* անհասկանալի են, և բանահավաքը հարցական նշաններ է կողքի փակագծերում դրել: Պարզ չեն նաև *ցողալ* և *աղալ* բայերի բնագրային առումները («Աստվածածին նստեր ցողա, (Ով մարդ, ի՞նչ կաղաս»): Գուցե «ցողալ» բայը փոխաբերաբար «լացել», «արտասվել» իմաստով է գործածված, իսկ «աղալ» - «հեղել»՝ բարբառային «հեղալ, այսինքն՝ արցունք հեղել, լալ» բառի աղավաղումը լինի (հմմտ. հաջորդ Թ տարբերակում լացող Աստվածածնին ուղղված հարցը. «Ո՞ր կուլաս, ո՞ր արուն կը հեղաս»):

35բ. Աղոթքում հիշատակվող Գայանեն մեկն է Հռիփսիմյանց 40 կույսերից, որոնք, ըստ հայ եկեղեցական ավանդության, քրիստոնյա լինելու պատճառով հալածվում են Հռոմի հեթանոս Դիոկղետիանոս կայսեր կողմից, գալիս ապաստանում են Հայաստանի Վաղարշապատ մայրաքաղաքում և բոլորն էլ չարաչար նահատակվում են հայոց Տրդատ Մեծ թագավորի գործակիցների ձեռքով:

Աղոթքի *որ* հարցական դերանունը գրաբարի և միջին հայերենի *էր* (ինչ կամ ինչու) հարցականի բարբառային հնչյունափոխված ձևն է:

35ժ. Խորագրված է «Նազարի աղոթք»:

Գրառված է 1959 թ. Դոնի Ռոստովում: Այստեղ աղոթքի ավանդական սյուժեն ենթարկվել է վերաիմաստավորման: Աղոթողը դիմում է Մարիամ Աստվածածնին, որպեսզի նա դադարեցնի իր ողբը, մտնի դրախտ, սևակոթ դանակով կտրի չար աչքը և բուժի նրան, ում համար աղոթում է աղոթողը: Այլ կերպ ասած՝ աղոթողը ակնահարվածի բուժումն աղերսում է Մարիամից:

35ժա. Սույն աղոթքը երկու անկախ աղոթքների հարակցում է: Երկրորդ աղբյուրում (Խ. Փորքշեյանի հրատարակած) երկատված, բաժանված է երկու անկախ

աղոթքների. առաջինն ընդգրկում է 1-8 տողերը, իսկ երկրորդը՝ «Ո՛վ Մարիամ, ի՞նչ կանիս» սկզբնատողով հատվածը:

Աղոթքում հիշատակված **Կոզման** և **Դամիանոսը** (հմմտ. ռուս. աղոթքների Кузьма и Демьян), քրիստոնյա սրբեր, երկվորյակ եղբայրներ, ծնունդով Կիլիկիայի էգեա քաղաքից, ծագումով արաբներ (ըստ լատինական որոշ աղբյուրների՝ հռոմեացիներ), ապրել են Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի ժամանակ, դաստիարակվել քրիստոնեական աստվածապաշտությամբ, ուսանել բժշկություն և ծրի բուժել տարբեր մարմնական և հոգեկան հիվանդություններ: Քրիստոնյաների հալածանքների ժամանակ ձերբակալվում են Լյուսիա (Լիւսիայ) անունով դատավորի կողմից, որն ստիպում է ուրանալ քրիստոնեությունը, սակայն ապարդյուն: Եղբայրների հետ ձերբակալվում են նաև նրանց համախոհ գործակիցներ Անթիմոսը, Ղևոնդիոսը և Եվպրեպիոսը, բոլորին էլ ենթարկում են անլուր տանջանքների (շղթայակապ գցում են ծովը, կրակի մեջ, խաչում են և ենթարկում քարկոծման ու նետահարման), բայց նրանք ս.Հոգու զորությամբ մնում են անվնաս: Ի վերջո հինգին էլ գլխատում են: Նրանց գերեզմանը դառնում է ուխտավայր հիվանդների համար, որոնք աղոթելով՝ բուժվում են [**Աւգերեան,** Ժ, 222-233]:

35ժբ. Գրառված է 1950-ական թթ. կամ հետո, բանահավաք Հայկ Սողոմոնյանի կողմից:

35ժգ. Գրառված է 1950-ական թթ. կամ հետո, բանահավաք Հայկ Սողոմոնյանի կողմից: Ունի բանահավաքի հետևյալ ծանուցումը. աղոթողը «Թու՛, թու՛, թու՛ է անում, վերջն ալ մատը թուք է անում, հիվանդին ճակատին վրան խաչ է քաշում»:

35ժդ. Խորագրված է «Նազարի կամ չար աչքի աղոթք»: Բանասաց՝ Չակայան Եղ., 75 տարեկան, բանահավաք՝ Մկրտիչ Լյուլեճյան, գրառված է 1960 թ.:

Նախորդ տարբերակների սևակոթ դանակին, որով Տիրամայրը կամ մեկ այլ անձ կտրում էր չար աչքն ու չար նայվածքը, այստեղ փոխարինում է Աստվածածնի ոսկե կացինը, որն ունի տասներկու բերան: Կացնի նկարագիրը բացահայտ վկայում է նրա գերբնական առասպելական բնույթը և աստվածային զենք լինելու փաստը (տե՛ս № 22 աղոթքի ծանոթագրությունը):

35ժե. Խորագրված են՝ ԱՀ IX «Չար աչքով բռնվածների համար», **Փորքշեյան 1971** «Չար նազարի աղոթքներ» շարքից:

Առաջին վեց տողերում հիշատակված սուրբգրային մոտիվները (Կույսի կաթ, Մովսեսի գավազան, Դավթի քնար, Սողոմոնի մատ, Հիսուս Քրիստոսի ձեռք) համակցվել են սույն տարբերակաշարի հիմքում ընկած ավանդական աղոթքին, որով առաջ է եկել հարակցումային նոր տարբերակ:

35ժզ. Խորագիր չունի: Գրառված է 1959 թ. Դոնի Ռոստովում: Աղոթքի առաջին տողը («Թարսը թուրսը ձով ասես») անհասկանալի է, հավանաբար կոնկրետ անունների աղավաղում է կատարվել և չի հասկացվում, թե ով է գործող անձը, որ, ցավին հանդիպելով, լալիս ու ողբում է:

36ա. Խորագրված է «Չար աչքի»: Աղոթքը կառուցված է տրամախոսության վրա. երկխոսությունը գնում է աղոթող հմայողի և անձնավորված չար աչքի միջև: Երկխոսությունից պարզվում է չար աչքի նպատակը, որին հետևում է աղոթողի անեծքն ու սպառնալիքը՝ զորացած քրիստոնեական սրբությունների վկայակոչումներով:

Այստեղ դարձյալ հանդես է գալիս խորոնդուն ծովը (իմա՝ անդունդախոր, անհատակ քաոսային ծովը), ուր չար աչքին հաշմելուց հետո կամենում է նետել աղոթողը:

Չար աչքին տրվող *պողտ* կոչականը հավանաբար «պիղծ» իմաստն ունի (հմմտ. դարձյալ Ղափանից գրառված հաջորդ Բ տարբերակի հետ):

Այս և հաջորդ տարբերակում անծյուղ ու անտերև ծառի պատկերը, որի վրա է ուղղված չար աչքի ներգործությունը, ըստ երևույթին, խորհրդանշում է մարդուն, քանզի այդ պատկերին անմիջապես հետևում է չար աչքի պատասխանը, թե ինքը կամենում է մարդու գլխին բարձրանալ և ծծել ուղեղը: Իսկ հին առասպելաբանական մտածողությամբ՝ թե՛ աշխարհը (մակրոտիեզերք) և թե՛ մարդը (միկրոտիեզերք) հավասարաձևունակ էին պատկերացվում և մոդելավորվում էին հաճախ ծառի կերպարով: Մարդու ծառակերպ այլաբանական պատկերը առկա է հայկական հանելուկներում [տե՛ս **Հարությունյան 1965,** 100, **Հարությունյան 2000**]:

36բ. Խորագրված է «Չար աչքի»:

Սկսվում և ավարտվում է չար աչքին ուղղված թքով, որ հավասարազոր է անեծքի (հմմտ. *թուք ու նալլաթ* (անեծք) բառակապակցությունը): Թուքը ժողովրդական մտածողությամբ ունի թե՛ չարը ոչնչացնող, անիծող, հերքող և թե՛ միաժամանակ բուժիչ հատկանիշ (հմմտ. մաշկային որոշ հիվանդություններ թքով օծելու և բուժելու սովորույթը):

Տե՛ս № 36ա ծանոթագրությունը:

37ա. Խորագրված է «Տլիսմ և աղաւթք չար աչից»: Վերնագրին հաջորդում է հմայագիրը՝ տլիսմը (թլիսմ, թալիսման), որին էլ՝ աղոթքի բնագիրը:

Միջնադարյան այս գրավոր աղոթքը իր մի շարք տարբերակներն ունի բանավոր ավանդության մեջ (տե՛ս Բ-Զ տարբերակները):

Տողատումը կազմողինն է:

37գ. Աղոթքում ուշագրավ է չար աչքին տրվող *չար խոռխոտ* մականունը, որն աղավաղված ձևով՝ խոխուրդ, հանդիպում է նաև Զավախքից գրառված № 35ա աղոթքում (եթե վերջինս, իհարկե, խորհուրդ բառի աղավաղումը չէ):

«Խոռխոտ»՝ բառարաններում չի վկայված, կա բրբռ. «խոռոմխոտ», որ նշանակում է «խռովարար, չարահույզ» [տե՛ս **Սուքիասյան 1967,** 270, 275]:

37դ. Խորագրված է «Աղոթք պառավական ամենայն ցեղ ցավու»: Խորագիրը համախոս է աղոթքի բովանդակությանը. բաղադրված է երկու տարբեր աղոթքների հարակցումից: Առաջին տաս տողանոց հատվածը տարբեր հիվանդությունների դեմ ուղղված բուժաղոթք է (խորի, խոստուկի և ամենայն ցավի), որի մեջ կրկնվում են չար աչքի աղոթքներին յուրահատուկ մոտիվներ (կտրոցով երեք ճյուղ կամ պտուղ կտրել և ուղղել հիվանդության դեմ): Երկրորդ հատվածը իր երկու ավանդական հիմ-

նական մոտիվներով (չար աչքի խոստովանությունը և սև օձի արտադրանքից պատրաստված սննդամթերքի ուտեցնելը չար աչքին) բնորոշ են ակնահարման աղոթքներին:

Ուշագրավ է, մասնավորապես, չար աչքի արտաքինի նկարագրությունը՝ փուշ փշենի մորուքով և հրամանե (հավանաբար՝ Ահրիմանի, Վանի բրբռ.՝ խարամանի, այսինքն՝ չարի, չարագործի) մատների մոտիվները: Փուշ փշենիով խորհրդանշվել է չար աչքի ծակող, խոցող հատկությունը, իսկ ահրիմանական մատներով՝ նրա չարագործությունը:

Բանահավաք Կ. Գաբիկյանը աղոթքին կցել է հետևյալ ծանոթությունը. «Ի հնումն Կեղտերու (իմա՝ կելտերի - Ս. Հ.) մոտ դրուիտք (քրմեր՝ Ս. Հ.) մեծ հանդիսիվ և աղոթքներով կերթային յանտառ և սրբազան ոսկի դանակով ծառոց ոստերեն կը կտրեին առ ի բժշկություն զանազան ցավոց: Այսպիսի աղոթքներու և արարողություններու մասին հարուստ են և հայ բժշկարանք: Պառավական սույն աղոթքս ալ այդ բաները կը շոշափե և ազգագրականորեն իր կարևորությունն ունի կը կարծենք, դժբախտաբար շատ մը տեղերը մութ մնացին և չկրցինք ճշտել»:

Գաբիկյանի այս նկատումը հետաքրքիր է հմայական աղոթքներում սևակոթ, ֆրանկի, երկսայր դանակով կամ Տիրամոր ոսկե կացնով բույսեր կտրելու հաճախադեպ մոտիվը ծիսայնորեն հիմնավորելու և մեկնաբանելու իմաստով:

Տողատումը կազմողինն է:

37ե. Խորագրված է՝ «Նազար չառնելու աղոթք»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում չար աչքի դերում հանդես եկող Չար Հուլիանոսի կերպարի նախահիմքում ընկած են 4-րդ դարի բյուզանդական նշանավոր պետական ու քաղաքական գործիչ **Փլավիոս Կլավդիոս Հուլիանոսի** (332-336 թթ.) անձի ու անվան հետ կապված հիշողությունները: Հուլիանոսը մանկության ժամանակ ստացել է քրիստոնեական խստաբարո դաստիարակություն, բայց պատանության տարիներին, տարվելով հեթանոսական գրականությամբ ու փիլիսոփայությամբ, հետագայում ուրանում է քրիստոնեությունը, դառնում հեթանոս, իսկ կայսր եղած տարիներին՝ անգամ փորձում վերականգնել հեթանոսական կրոնը իր կայսրության սահմաններում: Այդ արարքների համար նա ժառանգում է Ուրացող մականունը [տե՛ս Словарь античности]: Հայկական, մասնավորապես արևմտահայ ժողովրդական ավանդության մեջ Հուլիանոսի անունը դառնում է չարության խորհրդանիշ (Չար Հուլիանոս կամ Չար Ուլիանոս ձևերով, որոնցով հաճախ կոչում էին նաև չար ու անհանգիստ երեխաներին):

37զ. Նախորդ աղոթքների համառոտված յուրատեսակ տարբերակներից է, ուր չարագործ չար աչքը համեմատվում է կատաղած շան ու վարարած գետի (իմա՝ կործանարար ուժի) հետ: Սղված է չար աչքին երդվեցնող անձի անունը և անգամ՝ չար աչքի պատասխանը, որի փոխարեն երդվեցնողի խոսքում նույն բառի կրկնություններով (պիղծ պիղծ, կով կով, եզ եզ) բացահայտվում է չար աչքի պիղծ գործունեության նպատակը՝ կովերին ու եզներին վնասելը: Աղոթքի վերջաբանը քառասային ստորգետնյա սև ուժերի մի աշխարհ է ներկայացնում (սև սար, սև ձոր, սև հոր, սև օձ), ուր հմայողը ուղարկում է չար աչքին և պատվիրում ուտել սև ձորի սև հորում

գտնվող սև օձի միսը և խմել նրա արյունը, - մի նեգատիվ զոհամատուցում, որ հակապատկերն է ճշմարիտ սրբազան զոհամատուցման (չարով չարին հատուցել): Նկատի առնելով վերջին քառյակի առաջին երեք տողերի տաղաչափական կառուցվածքի յուրահատկությունը (նախորդ տողի վերջին բառերով հաջորդ տողերն սկսելը)՝ ըստ երևույթին աղոթքի 8-րդ տողի *սև շորը* բնագրական շեղում է, քանի որ հաջորդ տողը սկսվում է *սև ծորով:* Հետևաբար, սև շորը պետք է ուղղել սև ձոր, մանավանդ որ համատեքստում խոսքը վերաբերում է բնության առարկաներին (սար, ձոր, հոր, օձ), իսկ շորը մշակութային իրակություն է և տրամաբանորեն առարկաների տվյալ շարքին անհարիր:

Աղոթքների այս տարբերակաշարին է հարում միջնադարյան հետևյալ ձեռագիր աղոթքը՝ խորագրված «Այլ գիր չար աչից և չար նազարի».

Ելեալ չար աչքն և չար նազարն ի ծովէն,
Որպէս զամբ գոռար,
Որպէս զառուծ մռնչեր
Եւ որպէս զգուլ գոչէր և գալարէր:
Լսեցին զայն ողորմութեան հրեշտակքն
Եւ ասէն չար աչացն և չար նազարին.
- Ո՞վ չար պեղծ, յու՞ր յերթայք:
Պատասխան տվին չարքն.
- Յերթամք ամենայն մարդու կամ տղայոց,
Յարանց և կանանց զգլօխն ցաւեցուցանեմք,
Զսիրտն թոռմեցուցանեմք,
Զքունքն յերեսէն տանեմք,
Զաչքն խաւարեցուցանեմք,
Զբախտն կապեմք,
Զբանն և զաչողութիւն կապեմք,
Տուն և զորդիս խառնակեմք,
Զամենայն բան ոչ թողում[ք], որ յառաջ գայ,
Զօրն, շաբաթքն, յամիսն, տարին յանաջող առնեմք,
Զորդիքն և զդուստերն իւր ծնօղացն դիմայ դարձ առնեմ[ք],
Եւ զեղբարքն միմեանց դիմայ դարձ առնեմք և բաժանեմք,
Ի մէջ ազգաց սիրելաց և բարեկամաց կամ յօտարաց
Ի մէջն յուզումք և յատելութիւն յարկանեմք,
Եւ զամենայն սէր և զսիրելութիւն՝ խռովութիւն արկանեմք,
Զամենայն բարի բանն ի չարութիւն դարձուցանեմք:
Եւ զայս ամենայն չարութիւնս լսեցին հրեշտակքն և ասացին.
- Չար աչացն և չար նազարին և չար պղծոցն
Կապեմք զեզան լուծանելի կապանօք:
Յանուն հօր և որդոյ և հոգոյն սրբոյ,
Շնորհիւք և ամենայն օրհնեալ մօրն կուսի միջնորդութեամբ և բարեխոսութեամբ
Կապեալ լիցի ամենայն չար աչք և չար նազար
Ի դեմ ծառայիս աստուծոյ:

[Մատենադարան, Ձմայիլ№11]

26 պղծոցն *ուղղ. ըստ իմաստի:*

Այստեղ չար աչքը և չար հայացքը, որոնք զույգ են նկատվել, դուրս են գալիս ծովից, որպես ամպրոպային փոթորիկ («որպէս զամբ գոռար... և որպէս զցուլ գոչէր և գալարէր») և համեմատվում են այնպիսի կենդանիների հետ (ցուլ, առյուծ), որոնցից առաջինը ամպրոպի առասպելական մարմնավորումներից է:

Այստեղ հատկանշականը չար աչքի ստործովյա ծագումն է և նրա փոթորկահույզ ու խիստ վտանգավոր նկարագիրը, որ վկայում է նրա ստորերկրյա քաոսի կործանարար ջրերի հետ ունեցած սերտ կապը և միաժամանակ հասկանալի դարձնում նրա դեմ ուղղված ավանդական բանադրանքում չար աչքին կամ նրան խոցող ու այրող չար փուշն ու չար կրակը Անտակ-Անհատակ ծովը սուզելու հաճախ կրկնվող հմայողի ցանկությունը: Այսինքն՝ որտեղից դուրս է եկել նա, թող այնտեղ էլ վերադառնա:

Այս տարբերակում խիստ ընդլայնված են չար աչքի ներգործության ոլորտները, որոնք վերաբերում են թե՛ տարաբնույթ հիվանդությունների հարուցմանը, թե՛ մարդկանց բախտը կապելու, անհաջողություններ առաջ բերելու, հարազատների ու բարեկամների միջև խռովություններ, անհնազանդություն, ատելություն սերմանելու և, առհասարակ, ամեն բարի բան չարությամբ փոխարինելու իրողություններին: Սրանով ընդգծվում է կյանքի տարբեր բնագավառների վրա չար աչքի ազդեցության լայն նշանակությունը:

38ա. Աղոթքի այս և հաջորդ տարբերակներում երևան է գալիս նոր մոտիվաշար. անտառում, կամ որ ավելի հաճախադեպ է, լեռան վրա գտնվող ծովի միջից բարձրացող ծառ՝ իր վրա գտնվող օձի բնով, օձով կամ էլ թռչունի բնով, ձվով և թռչնաձագով: Օձի և թռչնաձագի հետ կատարվում են երկու տարբեր հմայական արարողություններ, որոնց մեջ գերակշռում է անդանակ մորթելը, առանց կրակ եփելը, առանց բերան ուտելը (ուտեցնելը): Երկրորդ արարողությունը՝ օձին կթելը, կաթից մածուն կամ պանիր պատրաստելը և չար աչքին ուտեցնելը, որ հաճախ է հանդիպում նախորդ աղոթքներում:

Կարևորն այստեղ լեռան վրա գտնվող ծովից բարձրացող ծառի պատկերն է, որը, ինչպես ցույց է տրված այլուրեք, տիեզերական ծառի առասպելաբանական հին պատկերացումն է [հմմտ. **Հարությունյան 1965, Հարությունյան 2000**]: Ըստ այդմ՝ Քաոսից անջատված ու նրան հակադրված Տիեզերքի ուղղածիգ տարածական մոդելը պատկերացվել է որպես լեռ (սար), ծառ կամ սյուն, որոնց գագաթը մոդելավորում էր երկինքը, միջնամասը՝ երկիրը, իսկ ստորին մասը (լեռան տակը, ծառի արմատները, սյան հիմքը)՝ ստորերկրյայքը, որը հենց Քաոսն է կամ քաոսային ուժերի հանգրվանը: Ծովը ինքը հենց ջրային Քաոսն է, քաոսային ուժերի մարմնավորումը (հմմտ. Անտակ, Անհատակ ծովի կամ Սև Անհատակի հայկական պատկերացումների հետ):

Այս իմաստով շատ ուշագրավ է աղոթքի հաջորդ բ և գ տարբերակներում հանդես եկող ծառը, որը աճել է Գալիլիայի (Քրիստոսի հայրենիքի) լեռան մեջ գտնվող ծովի միջից[44]: Այստեղ համադրվել են տիեզերական ծառի մի քանի իմաստաբանա-

[44] Գալիլիա անունով ժայռ կամ լեռնագագաթ կա Վանի շրջանում: Այդ անվամբ է կոչվում Վարագ լեռան կարմիր ապառաժյա գագաթը: Վարագ լեռան տակից է բխում Գայլ գետը, որը ըստ Սրվանձտյանցի՝ «անհիշատակ ժամանակներե հետե իմաստունները հնարեր են խրամով մը գետնի տակեն անցընել անոր ջուրը, որ Չորովանք, Զրվանդանց և Սղգա գեղերու առջևեն յուր ընթացքը կ'առնու և կերթա Վանա

կան պատկերացումներ, որոնցով առավել ամբողջական է դարձել ծառի տիեզերաբանական բնույթը: Նախ՝ այդ ծառը տեղադրված է քրիստոնեական ըմբռնմամբ աշխարհի սրբազան կենտրոնում՝ Գալիլիայում (Քրիստոսի ծննդավայր), ապա՝ ծառը համադրված է տիեզերքի մեկ այլ տարածական պատկերացման՝ լեռան հետ: Այդ լեռան մեջ է գտնվում ծովը, այսինքն՝ ջրային քաոսը, որի միջից աճել ու բարձրացել է Տիեզերքի բուսական խորհրդանիշ ծառը, որն իր որակով ու վերծիգ դիրքով հակադրված է հորիզոնական ծովին (ջրին): Ծառի վրա է գտնվում օձն ու իր բույնը՝ դարձյալ քաոսային ներգետնյա (խթոնիկ) ուժերի խորհրդանիշ: Սովորաբար, տիեզերական ծառի դասական պատկերացումներում օձը գտնվում է ծառի ներքնամասում, նրա արմատների մոտ, մինչդեռ աղոթքում այն ծառի վրա է բարձրացել ու բնավորվել:

Հմայական աղոթքում տիեզերական ծառը «հանդես է գալիս իբրև միջնորդավորող օղակ տիեզերքի (մակրոկոսմոս) և մարդու (միկրոկոսմոս) միջև և հանդիսանում է նրանց հատման վայրը» [Топоров 1980, 405]: Այլ խոսքով, նա հավասարածանուցակ է մարդուն և մոդելավորում է նաև նրան: Հետևաբար, ծառի վրա բնավորված օձը խորհրդանշում է ակնահարվածի հիվանդությունը. տվյալ իրադրության մեջ (հիվանդություն) օձը, իբրև քաոսային կործանարար ուժ, բարձրացել է ծառի արմատներից, բնավորվել նրա վրա և սպառնում է կործանել նրան (մարդուն՝ միկրոկոսմոսին): Եվ այստեղ հանդես է գալիս հմայողը, իբրև տիեզերական արարչի ծիսակատար և սկսում իր ծիսա-հմայական մենամարտը (խոսքով և արարողությամբ) հիվանդությունը մարմնավորող կործանարար ուժի դեմ:

Աղոթքի ա և ե տարբերակներում նա բռնում է օձին, անդանակ մորթում, առանց կրակի եփում և կերցնում առանց բերան ունեցող չար աչքին: Իսկ գ, է, ը տարբերակներում նույն գործողությունները կատարվում են ծառի վրա բուն դրած թռչնածագերի հետ:

Անդանակ մորթելը, անկրակ եփելը, անբերան ուտելը բացահայտորեն վկայում են արարողության ոչ թե իրական, այլ ծիսահմայական խոսքային բնույթը, իսկ արա-

---

բերդի ներքևեն մինչև ծովու միջակետը ու այնտեղ դուրս կուտա յուր ջուրը»: Այսինքն՝ ստորգետնյա ջրանցք՝ կառուցված հնում, հավանաբար, ուրարտական շրջանում:

Ջանազան առասպելական հավատալիքներ են կապված եղել այդ ջրանցքի և նրա Գայլ անվան հետ: Հավատացել են, թե՝ «այնքան ահագին և անհուն է այս գետը, որ եթե բացվի յուր ծածկույթը՝ պիտի ջրասուզե այդ բոլոր երկիրը: Թե՝ հառաջ այդ ջրով ծածկված է եղեր բոլոր Վանա հովիտը ծովի բերնեն մինչև Վարագա սարը <...> թե՝ ինչպես երբեմն տեղ-տեղ ծածկույթը ծակվեր է, և մարդ կամ անասուն անկեց ջուր խմած՝ երբեմն ալ լվացված ժամանակ, ջուրը գիրենք քաշեր կլլեր կամ խեղդեր. արդեն ասոնց համար է, որ Գայլ գետ կ'ըսեն» [Սրվանձտյանց 1978, 78]: Այս բոլորը ստորգետնյա քաոսային կործանարար ջրերի (իմա՝ սև ջրի) առասպելական հավատալիքի արդյունք է:

Վարագա սարի մեկ կողմը Քեշիշ գյուղն է (Քահանայի լիճ, մյուս կողմը՝ Տոնյա գելին և Սուլթան յայլասին, որոնցից բխում են պաղ ու ջինջ ջրի վտակներ:

Միանգամայն հնարավոր է, որ աղոթքի այս տարբերակներում հիշատակված Գալիլիան և այն շրջապատող ծովի պատկերը բանաստեղծական արտացոլումը լինի Վարագա համանուն լեռնագագաթի և այն շրջապատող լճի ու ջրերի բնաշխարհիկ միջավայրի, չնայած, որ այդ աղոթքները գրառված են ոչ թե Վասպուրականից, այլ Վանից ու Վարագից բավական հեռու գտնվող Փոքր Հայքի տարածքից:

Հնարավոր է նաև, որ Վարագի լեռնագագաթի Գալիլիա անունը քրիստոնեական ավանդությամբ սերած լինի Քրիստոսի ծննդավայրի անունից, մանավանդ որ Հռիփսիմյանց խաչի ինչ-որ լեգենդներ են կապված եղել այդ լեռնագագաթի հետ, իսկ Վարագն ինքը շրջապատված էր քրիստոնեական նշանավոր սրբավայրերով՝ Վարագի վանական համալիրով, Ս. Գրիգորի և Կարմրավորա վանքերով և ծգնարաններով:

րողության բովանդակությունը զոհաբերությունն է, որի նպատակն է վերականգնել քաոսային ուժերից խախտված տիեզերքի (իմա՝ միկրոտիեզերքի) նախկին կարգավիճակը (իմա՝ առողջությունը) և ապահովել նրա բարգավաճումը ներկայում և գալիքում: Զոհվող կենդանիներն են օձն ու թռչունը, որոնք խորհրդանշում են տիեզերքի երկու տարրերն ու ոլորտները՝ հողն ու օդը, երկիրն ու երկինքը՝ իրենց բոլոր կենսահաստատ հետևանքներով:

Հին ծիսաառասպելաբանական բնագիրն աղոթքներում հարմարեցվել է բուժման ծիսահմայական նպատակներին և վերածվել հմայական լեզվի ու բնագրի:

38բ. Խորագրված է «Աչիչի աղոթք»

Տե՛ս 23ա ծանոթագրությունը:

Աղոթքում ծառի վրա գտնվող օձը յոթ պտուկ ունի, որից հմայողը կաթ է կթում, մակարդում, մի տիկ պանիր պատրաստում:

Աղոթքի հաջորդ՝ գ տարբերակում ավելանում են երկու նոր մոտիվներ. հմայողը օձին կթում է ոսկե թասի մեջ, իսկ արծաթե թասի մեջ մակարդում և մածունից ստացված պանիրը կերցնում ակնահարողին՝ չար աչք տվողին, որին հաջորդում է հմայական այդ արարողության ցանկալի հետևանքը անեծքով՝ «Չար աչքը ճաթի,/ Չար սիրտը պառռի»: Դրանով պարզվում է արարողության բուն նպատակը. օձի կաթից պատրաստված պանիրը ուտեցնել չար աչքին, որպեսզի այն պայթի և հիվանդությունը կանխվի, մի բան, որ հստակ չի երևում սույն ծանոթագրվող տարբերակում: Այստեղ հիշատակված է միայն, որ ով այդ պանիրը կերավ՝ արմացավ, ով չկերավ՝ զարմացավ: Արմանքն ու զարմանքը նույնարմատ և նույնիմաստ համանիշներ են և առանձնապես իմաստային տարբերակումներ չունեն: Ըստ երևույթին, այդ բառերի կիրառությամբ շեշտվում է օձի կաթի և նրանից պատրաստված սննդամթերքի բացառիկության, հազվագյուտության պարագան (հմմտ. «Օձի կաթ էլ կճարվի» դարձվածի իմաստի հետ), որը և հենց զարմանք է հարուցում:

Համենայն դեպս, այդ զարմանքին հաջորդող և աղոթքը եզրափակող «Աչք տվողին աչքը ճաթի,/ Չար աչքը, չար պտուղը ճաթի» անեծքի բանաձևը վկայում է արարողության բուն նպատակը և ենթադրել է տալիս, որ այդ հազվագյուտ պանիր ուտողը չար աչքն է, որն արմանում, զարմանում, հիանում, հմայվում է դրանից և մի տեսակ կապվում (կախարդվում), կորցնում է իր ազդեցությունը:

38գ. Խորագրված է «Աղոթք չար աչքի, չար նազարի»:

Աղոթքի սկզբնատողը՝ «Ողջուն քեզ Մարիամ» եկեղեցական (կաթոլիկական) հայտնի աղոթքի (Ave Maria) սկիզբն է, որով, ըստ երևույթին, իբրև նախաբան, սկսվել է սույն հմայական աղոթքը:

Աղոթքում հիշատակվող Ալալիա լեռնանուն գրականությունից հայտնի չէ: Սեբաստիայի նահանգում, որտեղից գրառված է աղոթքը, կա վկայված Ալայա անունով բնակավայր, ինչպես նաև այդ տեղերով անցնող Ալայան անունով գետ: Ալալան անունով գյուղանուն կա վկայված Վանի նահանգում, իսկ Ալալեյս կիրճ՝ Հաշտեանքում: Եթե Ալալիա նախորդ տարբերակի Գալիլիա անվան աղավաղումը չէ (հմմտ. գ տարբերակի «Էլա Ալալիա, իջա Գալալիա» հնչյունանմանությամբ հարմարեցրած աղավաղված անունները), ապա հնարավոր է ենթադրել, որ թերևս Փոքր Հայքի Ամասիա քաղաքի մոտակայքում գտնված լինի (ցարդ գրականությամբ չվկայված)

այդ անունով մի լեռ, քանզի ինչպես աղոթքում է ասվում՝ «Ելա ի լյառն Ալալիա,/ Մտա ի դասն Ամասիա», այսինքն՝ Ալալիա լեռից անցել է Ամասիայի սահմանը կամ մերձակայքը: Սա նշանակում է, որ Ալալիան Ամասիայի սանջակին կից կամ մերձ է մտածվել:

Իսկ Ամասիան բնաշխարհիկ անուն է, գտնվում է Փոքր Հայքում, հնում եղել է պոնտական թագավորության մայրաքաղաքը, հետագայում՝ Թուրքիայի Սվասի (Սեբաստիա) վիլայեթի Ամասիա սանջակի կենտրոնը [տե՛ս **Տեղանունների բառարան, 1986**]:

Տե՛ս 38բ աղոթքի ծանոթագրությունը:

38դ. Խորագրված է՝ «Կապք կամ նվերք չար աչքի, նազարի»: Այստեղից հետևում է, որ Ակնում դյութական աղոթքները կոչվել են նաև *նվերք*, այսինքն՝ սրբություն, սուրբ բան [տե՛ս ՆՀԲ, II, 450, բառի 2-րդ նշանակությունը]:

Ուշագրավ է աղոթքի առաջին երկտողը անդնդային ծառի և սև օձի մոտիվներով, որոնք վկայում են Քաոսից բարձրացած ծառի տիեզերական բնույթը՝ Քաոսի խորհրդանիշ սև օձով:

Նույնքան ուշագրավ է նաև վերջին երկտողը, որով հավաստվում է, որ մորթված, եփված (= զոհաբերված) օձը «Ով կերավ՝ ճաթեցավ,/Ով չկերավ՝ պատռեցավ», այսինքն՝ ուտողն էլ, չուտողն էլ պայթում, ոչնչանում են: Սա վկայում է, որ սև օձը խորհրդանշում է հենց չար աչքը, որի ծիսական սպանությամբ (զոհաբերությամբ) վերջանում է նրա ազդեցությունը՝ անկախ զոհը ճաշակելու հանգամանքից:

Տե՛ս 38ա ծանոթագրությունը:

38ե. Խորագրված է՝ «Նազարի աղոթք (աչիչ)»:

Աղոթքը բաղադրված է երեք մասերից. առաջին մասը հարում է սույն տարբերակաշարի աղոթքների տիպին, միայն այն տարբերությամբ, որ օձին փոխարինել է թռչնածագը: Երկրորդ մասում թվարկվում են այն անձինք ու կենդանիները, որոնք ենթակա են չար աչքի ներգործությանը և տիպով մերձենում է № 37ա, բ երդմնեցուցական աղոթքներին: Երրորդ մասը մի երկու մոտիվով մոտենում է 35ա աղոթքին: Այս երեք մասերի միասնությանն է նպաստում «Աչք ընողուն աչքը ճաթի» անեծքի բանածևը, որը, կրկնվելով I և II, II և III մասերի միջև, յուրօրինակ կրկնակի դեր է կատարում: Այդ օրինաչափությամբ՝ նրանով պետք է եզրափակվեր ամբողջ աղոթքը, բայց հրատարակված բնագրում այն բացակայում է: Աղոթքի այս տարբերակն աչքի է ընկնում նաև մեկ այլ յուրահատկությամբ. այստեղ ծառի վրա գտնվող օձին փոխարինած թռչնածագը ևս ենթարկվում է զոհաբերման և ճաշակման նույն արարողությանը, ինչպես նախորդ տարբերակներում՝ օձը: Սակայն այդ արարողության հետևանքները երկուստեք տարբեր գնահատականի են արժանանում: Եթե օձի կամ նրա պանրի ճաշակման դեպքում ուտողն էլ է զարմանում, չուտողն էլ (տե՛ս № 38բ) կամ ուտողն էլ է պայթում, չուտողն էլ (տե՛ս № 38դ), ապա թռչնածագի զոհաճաշակման դեպքում ճաշակողը զարմանում է, չճաշակողը՝ պայթում: Նույնը կատարվում է նաև սույն տարբերակի եզրափակիչ մասում՝ Հիսուսի բաղչայում (իմա՝ դրախտ) զոհաբերված կարմիր կովի ճաշակման դեպքում:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ զոհաբերման հետևանքը պայմանավորված է զոհաբերվող կենդանու որակով. օձն իբրև չարության, հենց իրեն՝ չար աչքի

մարմնավորում, համազոր է իր իսկ զոհաբերության հետևանքին. նրա զոհաբերությունը նեգատիվ բնույթ ունի, նրան ճաշակողը պայթում է կամ հենց նրա զոհաբերությամբ՝ չարիքը վերանում: Մինչդեռ թռչունը կամ կարմիր կովը, իբրև բարության մարմնացումներ և զոհաբերման կենդանիներ, պոզիտիվ են, համապատասխան են զոհաբերության սրբազան էությանը, և պայթում, ոչնչանում է նրանց մարմինը չճաշակողը, այսինքն՝ չար աչքը կամ հենց ինքը՝ չարիքը, ինչպես բոլոր ճշմարիտ զոհաբերությունների դեպքում:

38զ. Խորագրված է «Աղոթք չար աչքի, չար նազարի»:

Առաջին երեք տողերը տվյալ աղոթքի բնագրին անհարիր են, եկամուտ, բնորոշ են գայլկապի աղոթքներին (տե՛ս № 184ա-ե) և նրանցից են փոխանցվել:

38է. Այս տարբերակում նախորդ տարբերակների Ալալիա տեղանունն աղավաղվել, դարձել է Ալելուիա՝ քրիստոնեական օրհներգությունների սկսվածքին բնորոշ բառային բանածև, և այդ իմաստով էլ ընկալվել է բանահավաքի կողմից, դրվել ստորակետով:

Աղոթքի վերջին եռատողը, մանավանդ նախավերջին երկտողը («Թանը թթու է,/ Դգալը կյուծուկ է») եկամուտ է, բնագրին անհարիր և գալիս է փորացավի կամ խիթքի՝ կողացավի, աղոթքներից (տե՛ս 73ա-ժդ):

Աղոթքում բացահայտ վկայված է, որ թռչնածագի մորթելը և եփելը զոհաբերություն է համարվել («Չար աչքի, չար լեզվի, չար նեֆեսի զոհեցի»): Այդ առթիվ տե՛ս № 38դ, ե աղոթքների ծանոթագրությունները:

Բանահավաքը (Ալեքս Գրիգորյան) աղոթքին կցել է աղոթողի բուժման հմայական արարողության մասին հետևյալ ծանոթությունը. աղոթողը «Հիվանդը կը նստեցներ իր առջև, դանակին ծայրը հացի կտոր մը անցուցած կը դներ ճակտին, ուսերուն ու կուրծքին խաչանշան կնքելով թուրքն ու քրիստոնյան անխտիր: Իր սովորական աղոթքի ընթացքին կը հորանջեր, կը հևար ու ներքնաբուխ պոռթկումներով կը գալարվեր՝ պայքարելով չար ոգիին դեմ»:

38ը. Աղոթքի առաջին քառատողը եկամուտ է և անհարիր սույն տարբերակի բուն բնագրին: Այդ տողերը հարակցվել են փորացավի և կողացավի (խիթք) առթիվ ասվող աղոթքներից (հմմտ. № 73ա-ժդ):

Տե՛ս նաև նախորդ տարբերակի (է) ծանոթությունը:

Աղոթքի 9-13-րդ տողերը թուրքերեն են, որոնց հայերեն թարգմանությունը՝ կազմողի կողմից կատարված, զետեղված է բնագրի տակ:

39ա. Տողընդմեջ կրկնվող հմայական անեծքի բանածևը («Չար աչքը արընի, /Չար միտքը կործանի») մի կողմից տաղաչափորեն կազմակերպում է աղոթքի բնագրի ռիթմական կառույցը, մյուս կողմից՝ անընդհատ կրկնություններով սաստկացնում և զորացնում անեծքի տպավորությունը:

Չար աչքի և չար մտքի կործանումը հայցվում է Քրիստոս աստծուց, Տիրամորից, սուրբ Սարգսից և աստվածաշնչյան Հովնան մարգարեից, որի կետ ձկան կողմից կլանվելու և ապա ձկան փորից կենդանի դուրս ժայթքվելու առասպելը (մասնավորապես երեք օր ձկան փորում աղոթելու մոտիվը) որոշակի ազդեցություն է թողել

հմայական ավանդության վրա: Վիշապ ծկան փորում Հովնանի երեք օր մնալն ու անվնաս դուրս գալը համեմատվել է սև սարի տակ գտնվող չարության մարմնացում սև օձի կնքվելու և մկրտվելու (իմա՝ հեզ ու անվնաս դառնալու) հմայողի ցանկությանը, այսինքն՝ չար աչքին վնասազերծելու հետևանքի հետ:

39բ. Աղոթքի բնագիրը մատիտով կատարված սևագիր է, դժվարընթեռնելի: Գրառման վայրը, ժամանակը, բանասացը, բանահավաքը չեն նշված:

Տե՛ս 39ա ծանոթագրությունը:

39գ. Խորագրված է «Նազարի աղոթք»:

Նախորդ երկու տարբերակներում հիշատակված սուրբ անձանց այստեղ մասամբ փոխարինել կամ ավելացվել են նոր անուններ՝ սուրբ Կարապետ, Մարանա (= Մարինե), Գարանա (= Գայանե), Շողակաթ կույսեր, որոնք հայոց եկեղեցական ավանդության մեջ հայտնի են չարի ու չարիքի դեմ մղած իրենց անհաշտ պայքարով:

40. Այս աղոթքը բերված է իբրև ազգագրական նյութ Դ. Խաչկոնցի «Բանահյուսության ազդակներն ու տեսակները» հոդվածում: Աղոթքին կցված է բանահավաք Թուխ Կրպոյի հետևյալ ծանոթությունը. «Սուրբերեն մեկը կնոջ մ'երազին մեջ կըսե. կամ խիլ մը (= շյուղ), կամ կտոր մը հաց և կամ պտղունց մ'աղ առ ձեռքիդ մեջ և նիաթ եղողներն առողջացուր: Մեկու մը ծայնը, հասակը, գեղեցկությունը գովելու ատեն հարկ է «Մաշալլա (= Աստված պահե)» բառը գործածել, եթե ոչ գովողեն կ'աչքռնվի (= աչքե առնվի) ու նիաթ կըլա (= գեշ աչքով նայելով կը հիվընտա), որու նշանն է հորանջելը: Պատգամ ընդունողը կերթա հիվընդին վրա և, պտղունց մ'աղ առնելով, կըսե» սույն աղոթքը: Այս վկայությունից հետևում է, որ չար աչքի բուժման արվեստը սրբերի տուրք է համարվել, թեպետ այլ ազգագրական շրջաններում (Լոռի), ըստ Ե. Լալայանի, չար աչքի դեպքում «հարկավոր չէ երազում մի որևէ սրբից շնորհ ստանալ» [ԱՀ X, 238]:

Առաջին տողը՝ «Աղոթեմ երկու բթով ու տաս մատով», համեմատելով նախորդ № 39 գ աղոթքի՝ «Քեզի կապեմ կապաններով./ Ութը մատով, երկու բթով» առաջին երկտողի հետ՝ պարզ երևում է, որ «աղոթել» և «կապել» բառերը նույնիմաստ համանիշներ են գիտակցվել: Աղոթելը խոսքի գործունեություն է, կատարվում է լեզվով, մինչդեռ աղոթքի բերված առաջին տողում այն կատարվում է ձեռքերով ու մատներով, այսինքն՝ այն ընթռնվում է իբրև արարողություն, գործողություն, որ միանգամայն համապատասխանում է կապել բային:

Այս և նման այլ կիրառությունները ցույց են տալիս, որ ժողովրդական ավանդության մեջ աղոթել և կապել բայերը նույն իմաստով են օգտագործվել և նշանակում են «հմայել, կախարդել, թովել» (հմմտ. «Աղոթած մարդ», «Աղոթած էշ» և նման դարձվածները, իբրև հմայված, շշմած, շփոթված):

Աղոթքի վերջին՝ 20-26 տողերը օգնության վկայակոչումներ են տեղական սրբերի, որոնցից հմայողը բուժման օգնություն է հայցում: Սա ևս վկայում է, որ հմայողը սրբոց տուրք է համարել իր արվեստը:

41ա. Այս և հաջորդ բ տարբերակում, բարբառային որոշ բառերի աղավաղման հետևանքով, փոքր-ինչ մթագնվել է աղոթքի իմաստը: Խոսքը, հավանաբար, վերա-

բերում է բույսի (լալա, կակաչ, պուտ), որ չորացել է չար մարդու խոսքի հետևանքով (ա տարբերակում այն ճյուղ ունի, տերև չունի, իսկ բ տարբերակում՝ ճյուղ էլ չունի, տերև էլ): Սա ակնահարման հետևանքով ստեղծված սիմվոլիկ իրադրությունն է:

Դրան հաջորդում է չար աչքին ու չար խոսքին հմայողի կողմից սպառնացվող տառապանքը. պատկերավոր ձևով չար մարդը, չար աչքը, չար խոսքը համեմատվել են բրուտի հնոցում խորովվող ոսկրոտ մսի հետ, այնպես, ինչպես խորովվող միսն է ոսկրից անջատվում, դուրս գալիս, ազատվում, այնպես էլ չար խոսքը, չար աչքը ակնահարվածից դուրս գա, ազատի նրան:

41բ. Տե՛ս 41ա ծանոթագրությունը:

42. Խորագրված է «Նիաթի կամ աչք տալու աղոթք»:

Բանասաց՝ Մաճկալյան Անուշ, բանահավաք՝ Արազ Կարապետյան, գրառված է 1969 թ.:

Ուշագրավ է Անտակ ծովի (իմա՝ քաոսային ջրերի) խորքից հանված ծաղկի մոտիվը. ծաղիկը տրվում է չար աչքին՝ վերջինիս պատռվելու, վերջանալու նպատակով: Այդ մոտիվը համազոր է օձի կաթից մերված մածունը նույն չար աչքին կերցնելու ցանկությանը, որին նախորդում է չար աչքը պայթելու հմայական անեծքը: Այսինքն՝ ստորջրյա ծաղիկն ու ստորգետնյա օձի մածունը համարվել են հմայական բուժամիջոցներ չար աչքի դեմ, որը, ինչպես հայտնի է այլ աղոթքներից, հմայողի կողմից դարձյալ Անտակ կամ Անհատակ ծովի տակն է ուղարկվում:

Ստործովյա կենսատու և ապաքինող ծաղկի մոտիվը շատ հին է և առասպելաբանական. նրա անդրանիկ դասական նմուշը վկայված է տակավին շումերաաքադական Գիլգամեշի վեպում: Անմահության գաղտնիքը որոնող Գիլգամեշը համաշխարհային օվկիանոսի մահվան ջրերի ափին ջրհեղեղից փրկված Ուտնապիշտիի խորհրդով ծովի հատակից հանում է անմահության և հավերժ երիտասարդության ծաղիկը, որը փշենու տեսքով և վարդի նման փշերով պատված գտնվում էր ծովի հատակին: Գիլգամեշը, ձեռքերը փշերից խոցոտելով, մեծ դժվարությամբ հանում է ծաղիկը ծովի հատակից: Այդ ծաղիկը կյանքի ծաղիկն է՝ ըստ վեպի, և նրանից ուտող ծերունին կջահելանա: Սակայն վերադարձին, երբ կանգնում են ծովափին հանգստանալու, Գիլգամեշը մտնում է մոտակա սառնորակ ջրավազանը լողանալու: Օձը, անմահական ծաղկի հոտն առնելով, իր բնից դուրս է սողում, հափշտակում ծաղիկը և հետ դառնալով՝ կաշին թողնում [**Гильгамеш 1961**, XI, 263-289]: Աղբյուրի ակունքների շուրջը բուսնող ամոքիչ ու ջահելացնող ծաղկի առասպելը՝ կապված օձերի կողմից այն ճաշակելու և ապաքինվելու հետ, զանազան տարբերակներով հայտնի են հայ ժողովրդական ավանդության մեջ: Դրանցից մեկն էլ Մառնիկցի Մարգարի զրույցն է, որն օձերի օրինակով կերել է այդ ծաղիկը, լողացել աղբյուրում, ջահելացել և ապրել 250 տարի [տե՛ս **Սրվանձտյանց 1978,** 45-46]: Այդ հրաշալի ծաղկի և օձի մոտիվը երգերի տեսքով քանիցս հանդիպում է նաև հայ միջնադարյան ավանդության մեջ: Երգերից մեկի խորագիրն է «Տաղ ծաղկի պալասանի», որ վկայում է ծաղկի բուժիչ բալասան լինելու հատկանիշը:

Ծաղիկ այն ծաղկին ասեմ,
Որ օձին բերնիկն է բուսեր,
Շատ մարդ այն օձին ահէն,

Ջայն ծաղկին հոտն չէ առեր,
Մանուկ մի Հոռմանց տանէն,
Ջարևու թարկիկն է տուէր,
Գնացեր, զօձն ի քուն տեսեր,
Ջայն ծաղիկն ի բերնէն առեր... և այլն

[Մնացականյան 1956, 268 հտմ., 559 հտմ.]

Այսպես, բուժիչ անմահական ծաղկի մոտիվը հնուց օձի հետ զուգակցված է մտածվել. ծաղիկն իբրև բույս կապվել է ջրերի (ծովի, օվկիանոսի հատակ, աղբյուր) հետ, իսկ օձը, իր ստորգետնյա բնակության պատճառով՝ հողի հետ: Երկուսն էլ հանդես են գալիս հմայական աղոթքներում, բայց ոչ միմյանց զուգակցված, այլ միևնույն գործառույթով. երկուսն էլ հանդես են գալիս իբրև բուժամիջոց չար աչքի դեմ:

43. Խորագրված է՝ «Նազար բռնելու աղոթք»:

Բանասաց՝ Ջաքարյան Արուսյակ, 65 տարեկան, բանահավաքներ՝ Արտաշես Նազինյան, Արուսյակ Սահակյան, գրառված է 1967 թ.:

Աղոթքին կցված են բանահավաքների հետևյալ ծանուցումները. «Նա, ով նազար է առել, գալիս է նազարը բռնել տալու, հետը բերում է մեջը աղ լցրած հաց: Աղոթողը ձեռքին բռնում է մի ասեղ և, աղոթք մրմնջալով, ձեռքը շարունակ տանում է իր բերանը և աչք առածի գլխի շուրջը շարժումներ անում»:

Ըստ բանահավաքների հաղորդման՝ այս նույն աղոթքն ասվում է նաև վախ բռնելիս կամ վախ չափելիս: Այս դեպքում աղոթողը ձեռին բռնում է կարմիր կտոր կամ կարմիր թել, իր արմունկից մինչև վախեցողի սիրտը երեք անգամ չափում, ասում այս աղոթքը: Սրբերի անունները տալիս՝ շարունակ կրկնում է. «Ջեր հունարիցն է, իմ հունարից չէ»:

Աղոթքն ամբողջապես կառուցված է քրիստոնեական սրբերի և սրբազան վայրերի վկայակոչումների և պարբերաբար կրկնվող չար աչքի ավանդական բանաձևի վրա: Ընդ որում, յուրաքանչյուր սուրբ կամ սրբերի խումբ վկայակոչվում է իբրև չար աչքի ու չար պահի մեջ խրվող փուշ: Վկայակոչվող սուրբ օբյեկտները (սար, խաչ, վանք) տեղական սրբություններ են, տեղացիներից պաշտվող, մինչդեռ սուրբ անձանց անունները (Մարիամ Աստվածածին, Հունան (իմա՝ Հովնան) մարգարե, սուրբ Հովհաննես, Վառվառա ճգնավոր, սուրբ Գևորգ, Գրիգոր Լուսավորիչ) համազգային են կամ համաքրիստոնեական:

Ըստ բանահավաքների՝ աղոթքում հիշատակված Իշուխլուրա սարը Սիսիանի Աղուդի-Վաղուդիի բլուրներն են, իսկ Ջըռ՝ Անգեղակոթի մոտ գտնվող սուրբ տեղավայր է, ուր թաղված է երեք սուրբ քույրերից մեկը:

44. Երեք եղբայրների այս շինարարական գործառույթը (աղբյուր հանել, ծառ տնկել, կամուրջ կապել), իբրև վիպական մոտիվ, առաջին անգամ է հանդիպում հմայական աղոթքներում. այն իր շինարար բնույթով հակադրված է չար աչքի կործանարար էությանը: Այս հակադրության իմաստաբանական նախահիմքում, ըստ երևույթին, ընկած է Տիեզերքի (շինարար սկզբունք) և Քաոսի (կործանարար սկզբունք) հակադրությունը, որ լուծվում է հօգուտ առաջինի. արարող երեք եղբայրների կողմից կործանարար չար աչքը կամուրջից ցած է նետվում, հավանաբար դեպի Անտակ, Անհատակ ծովը, որով վերջ է տրվում նրա ազդեցությանը:

45. Խորագրված է «Ակնահարի աղոթք»:

Սկսվում է քրիստոնեական աղոթքների սկզբից պարտադիր ասվող խաչակնքման բանաձևով («Անուն հոր...»), որին հաջորդում է չար աչքի հմայական ավանդական բանաձևը: Բուժումն ակնկալվում է քրիստոնեական եկեղեցու 366 սուրբ հայրերից, 12 առաքյալներից (թվեր, որոնք ունեն ժամանակային արժեք, խորհրդանշում են տարվա օրերի և ամիսների քանակը) և ամենակարող աստծուց: Հիշյալ թվերը իմաստավորվում են հիվանդի դուռը, ծննդկանի երդիկը, հիվանդին ամենայն չարից ու չարիքից, հատկապես չար աչքի ներգործությունից զերծ ու ազատ պահելու ժամկետի հիշատակումով («Մինչ ի գալոց Քրիստոսին»), այսինքն՝ մինչև տվյալ ժամանակի վախճանը, երբ Քրիստոսը կրկին աշխարհ կգա և կնստի վերջին դատաստանին: Այլ կերպ ասած՝ աղոթքով ապահովվում են հիվանդն ու նրա միջավայրը չարի ներգործությունից հավիտյանս, մինչև աշխարհի վախճանը:

46. Խորագրված է «Չար աչքի աղոթք»:

Այս աղոթքը, բացառությամբ վերջին եռատող ավանդական բանաձևի, ասվում է սովորաբար քնի (տե՛ս № 270 հտն.), ծննդկանի (146ին և հտն.) պահպանության և բուժման վերաբերյալ, և աղոթքի այս տիպը բնավ բնորոշ չէ չար աչքի աղոթքներին:

Աղոթքի վիպական մասում ներկայացվում է մի տերունական սրբազան տուն, որի պատերը երկաթից են կամ պողպատից, պատից կախված սրով և հսկվող փակ դռնով, որոնք աստվածային պահպանության և ապահովման խորհրդանիշներ են: Տան պահպանությունը (տվյալ դեպքում՝ չար աչքի ներգործությունից ապահովումը) կատարվում է «պոյ ձիավորի» կողմից, որի անձի տակ հանդես է գալիս աղոթող հմայագործը, որը, սակայն, իր զորությունը վերագրում է ս. Նիկողոսին (սրբերն են սովորաբար ձիավոր պատկերացվում) կամ էլ՝ Տիրամորը՝ Աստվածածնին: Հմայագործը չորսից հինգ պիպեռ = բևեռ (մետաղյա մեխ, գամ) է գցում (բնագրում՝ «պիպեր ցանեցի», որ գուցե բանասացի կողմից բառը անհասկանալի լինելու պատճառով՝ նմանահնչությամբ հասկացված լինի բիբար (= պղպեղ ցանել), որոնցից մեկը խոցում է սատանայի ոտը, մյուսը՝ գողի կողքը, իսկ մնացածներով ճայթում է չար աչքը, պատռվում՝ չար բուշտը և ցրվում՝ չար հայացքը (= նազար):

Այստեղ դարձյալ մետաղյա սրածայր իրը՝ բևեռը, հանդես է գալիս իբրև չար աչքը խոցող, չար հայացքի ազդեցությունը ցրող հմայական առարկա:

Ս. Նիկողոսը քրիստոնեական եկեղեցու հայրապետներից է, Լիկիայի Մյուռա քաղաքի Նիկողայոս Սքանչելագործ արքեպիսկոպոսը 4-րդ դարում, որն իր հրաշագործություններով աչքի է ընկել դեռ մանուկ հասակից: Ձեռնադրվել է եպիսկոպոս իր համանուն քեռու կողմից, մասնակից է համարվում Նիկիայի եկեղեցական ժողովին (325թ): Մանուկներին շատ սիրելու համար դիտվել է իբրև մանուկների պաշտպան: Նա հռչակված է եղել նաև որպես նավաբեկյալների ազատարար [**Թորգոմ պատրիարք**, 93]: Իր այս պահպանական ու փրկարար գործառույթներով է ս. Նիկողոսը հանդես գալիս սույն աղոթքում:

47. Խորագրված է «Գլխացավի աղոթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Այս աղոթքը կրկնել երեք անգամ»:

Երկու տարբեր աղոթքների (վախի և չարից պահպանվելու) հարակցում է, որ եզրափակվում է երիցս կրկնվող չար աչքի ավանդական բանաձևով: Այս վերջին

հանգամանքը վկայում է, որ գլխացավը դիտվել է իբրև չար աչքի ազդեցության հետևանք և հիմք ծառայել աղոթքը չար աչքի աղոթքների շարքում զետեղելու համար:

Տողատումը կազմողինն է:

Առաջին երկտողի մոտիվները (Հիսուսն իբրև բերդ ու պարիսպ), որ հանդիպում են նաև երեկոյան աղոթքներում (տե՛ս № 275), առկա են տակավին միջնադարյան ձեռագիր աղոթքներից մեկում՝ հետևյալ ձևով.

Հայր՝ բերդ անձինս ամուր,
Որդին՝ պարիսպ մտացս ամուր,
Հոգին՝ դուռն հոգւոյս ամուր:

[Feidit 1986, 350]

48. Խորագիր չունի:

Առաջին երկտողը աղերսանք-պաղատանքի մեղայական բանածև է, որ սովորաբար խորթ է հմայական աղոթքների սպառնալից բանադրական ոգուն ու ոճին. այն բնորոշ է միայն քրիստոնեական պաղատանքի աղոթքներին: Հաջորդ քառատողում նկատի է առնվել Քրիստոսը, որ երկնային բարձունքներից լուր է ուղարկում իր աշակերտներին ու եկեղեցու 66 հայրապետներին՝ կանխելու չար աչքի ներգործությունը, այն էլ հմայական ավանդական բանածևով («Չար աչքը՝ չար փուշ» և այլն):

Կատարվել է հին ու նոր (քրիստոնեական) հավատալիքների համադրում, որ հաճախադեպ է հմայական աղոթքներում:

49. Հմայիլ№ 1. Խորագրված է «Աղօթք չար նազարի և չար լեզւի», Հմայիլ№ 21՝ «Աղօթք չար աչեչ և չար նազարի և չար լեզուի», ՀԱԲԱ՝ «Չար լեզուի աղօթք», ԷԱԺԱ՝ «Վասն չար աչաց և չար լեզուի», Feidit խորագիր չունի:

ՀԱԲԱ-ի տարբերակը արտագրված է Շուշիում Միքայել Հովհաննիսյանցի կողմից ոմն Խաշներյանցի ինչ-որ ձեռագրից (հավանաբար հմայիլ կամ միջնադարյան ախտարային ձեռագիր):

ԷԱԺԱ-ում վկայված է, որ այն ձեռագիր աղոթք է, հմայիլ:

Աղոթքի առաջին հինգ տողերը առկա են Գյումրիի Գևորգ Հովհաննիսյանի տանը պահվող ձեռագիր հմայիլի չորս պատառիկներից մեկում՝ հետևյալ ձևով. *«Հրանուէ, Հրայփայլ, Համայասան, Հրամակէզ, Համայզարդ, որք եք դուք հրշտակս աստուծոյ, դուք կապեցէք զամենայն չար աչք և զչար նիաթ...»:*

Աղոթքի մեկ այլ աղավաղված տարբերակ գրառված է Կ. Գաբիկյանի կողմից Սեբաստիայում, հավանաբար ձեռագիր հմայիլից: Այստեղ բերվում է այն ամբողջությամբ՝ բանահավաքի հարցականներով ու բացատրություններով:

«Հրանուն, Հռափայէլ,
Համազուն, Համատուն,
Դուք էք Աստըծո պասաւոր (սպասաւոր) ծառան.
Կապէ և պապանձէ
Չար աչքը, չար սիհերը,
Բար[կ] կրակը, Անատու ծովը (անհատակ?),
Իպղեն? Նեյե՞? (Կարապետ) ծառայիս»:

[ԳԲՍ, 643]:

Աղոթքի առաջին ութ տողերը, իբրև չար աչքի դեմ ուղղված ամբողջական աղոթք առկա է Մատենադարանի № 6677 ձեռագրում (էջ 14) և № 2 ձեռագիր հմայիլում:

Տողատումը կազմողինն է:

Շատ ուշագրավ են սույն աղոթքում և նրա տարբերակներում բերված հինգ հրեշտակների անունները (Հրանիւթ, Հրափայլ, Հրատն, Համատուն, Համակէզ), որոնք բոլորն էլ ունեն հայերեն բաղադրություն: Առաջին երեք անունների հիմքում ընկած է *հուր* բառը՝ համակցված դարձյալ հայերեն *նիւթ, փայլ* գոյականների և *-ատ* ածանցի հետ, իսկ վերջին երկուսը կազմված են *համա-* ածանցով, *տուն* գոյականով և *կէզ* (կիզող, այրող, շատ տաք, շոգ) ածականով, որ դարձյալ հրի հետ է աղերսվում: Այս անունների ձեռագրական մյուս տարբերակները՝ Համայասան, Հրամակէզ, Համայզարդ, Հրանուն, Հռափայէլ, Համազուն, Համատած կա՛մ աղոթքի բնագրային անունների աղավաղումն են (Հրամակէզ կարող է լինել Համակէզ անվան աղճատումը, կա՛մ էլ գուցե Հրակէզ նոր անվան, իսկ Հռափայէլը՝ Հրափայլի աղավաղումն է, եբրայական Ռափայել հրեշտակապետի անվան բացահայտ ազդեցությամբ), կա՛մ էլ բոլորովին նոր հայիմաստ անուններ են, ինչպես, դիցուք, Հրանուն, Համազարդ, Համատած, Համազուն (Համատուն անվան իմաստային զուգորդմամբ, այսինքն՝ համատուն և համացեղ): Անհասկանալի է մնում Համայասան անունը: Միջնադարյան ախտարական գրականության մեջ (հմմտ. Մատենադարանի № 8428 ձեռագիրը, էջք 231, 233, 748) բերված են բոլոր այն սրբերի և հրեշտակների անունները, որոնք վկայակոչվել են տարբեր հիվանդությունների, այդ թվում նաև չար աչքի, չար լեզվի և չար հայացքի բուժման կամ դրանցից զերծ մնալու նպատակով, ինչպես նաև ցերեկվա, գիշերվա բոլոր ժամերը, շաբաթվա օրերը հսկող ու հովանավորող, հետևաբար և վկայակոչվող հրեշտակների անունները: Այդ բոլոր անունները սերում են քրիստոնեական կամ հուդայաեբրայական ավանդություններից և դրանց շարքում վերոբերյալ հայկական անունները որևէ ձևով չեն հիշատակված: Դրանցից հայտնի է միայն Հրատն անունը, որ Մարս մոլորակի հայկական անվանումն է, հետևաբար և՝ երկնքին աղերսվող: Մնացածները, տեսանք, կազմված են *հուր-* և *համա-* նմանահունչ սկզբնական բաղադրիչներից և վկայում են հին առասպելաբանաստեղծական արվեստի սիրված յուրահատկության՝ ալիտերացիայի կիրառման փաստը:

Բանաստեղծական հնարանքը հին է, անշուշտ, որը հուշում է նաև այդ անունների հնության հնարավորությունը: *Հրանիւթ, Հրափայլ, Հրատն, Հրանուն, Համակէզ* վկայում են արեգակնային որոշակի հատկանիշներ և ենթադրել տալիս, որ դրանք կարող են լինել հայոց հին արևային աստվածության հատուկ տարաւավորված, ծածկագրված մակդիրներ՝ առանց բուն աստվածության անվան հիշատակման: Այդ մակդիրները հետագայում, թերևս, անձնավորվել են և վերածվել առանձին սրբազան անձանց, որոնք, իբրև ոգիներ կամ հրեշտակներ, դրվել են աստծո ծառայության ներքո: Դրանք կարող են լինել նաև անձնավորված աստղանուններ, ինչպես, դիցուք, վկայում է Հրատ (Մարս մոլորակ) անունը: Որ այդ անունները վերաբերում են երկնքի աստղային ոլորտին, վկայված է *Համազարդ, Համատած* (ամենուրեք զարդարված, տարածված), *Համատուն* (հմմտ. աստեղատուն) և *Համազուն* (միատեղ և միացեղ) անունների իմաստներում:

Թեպետ այդ անուններից մի քանիսը (Համազարդ, Համատած, Համատուն, Համակէզ, Հրանուն), իբրև սովորական բարդ բառեր, հին մատենագրությունից չեն

վկայված, այդուհանդերձ, բուն անուններն ու դրանց հետևությամբ բաղադրված այս նորակազմությունները վկայում են հայոց հին դիցարանում կամ առասպելաբանության մեջ նման մակդիրներով ոգիների գոյությունը, այլապես դրանք, իբրև սրբազան անուններ, չէին թափանցի միջնադարյան հմայական աղոթքների մեջ և նրանցից բուժման օգնություն չէր հայցվի:

50ա. Խորագիր չունի: Գրավոր աղոթք է, որ Գ. Սրվանձտյանցն արտագրել է Խնուսի Գովանդուկ գյուղի Ռես Միերի երկամյա որդի Դավթի գլխարկին կարված հմայիլից:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում թվարկված են տարբեր գույնի ու որակի աչքերի տեսակները, որոնք չար են գիտակցվել: Դրանք են՝ չարակըն, խառակըն (թերևս խառնագույն), խաժակըն և դրուցակըն (եթե դրուժակնի աղավաղումը չէ):

Սուրբ Թորոսն աղոթքում հանդես է գալիս իբրև հմայող՝ չար աչքի դեմ թուղթ ու գիր անող, իր մտքում նրան ոչնչացնող (տե՛ս նաև հաջորդ բ տարբերակը):

Նախորդ աղոթքներում հաճախ հանդիպող սև օձից կթած սև պանիր պատրաստելու, չար աչքին ուտեցնելու և պայթեցնելու մոտիվներին այստեղ փոխարինել է սարերից իջնող ծերունի հովվի ծիրանագույն ոչխարների հոտից կթած ծէրանի (ծիրանի) կաթից պատրաստված «անխաղաց», այսինքն՝ անշարժ, պինդ, ամուր պանիրը, որին նայողը զարմանում է, ուտողը՝ պայթում: Խոսքն, անշուշտ, վերաբերում է կարմրագույն ոչխարներից կթվող կարմիր կամ արյունագույն կաթին (հմմտ. սև օձի սև պանրի հետ), որ դարձյալ հիվանդագին է և վնասող:

Սուրբ Թորոս, - ս. Թեոդորոս (Տյուռոս) քաջ զինվորական, վիշապասպան և ս. Թեոդորոս Ստրատելատ (զորավար), քրիստոնեական երկու վկաներ, երկուսն էլ ծնված Ամասիա քաղաքի մերձակայքում, հայ եկեղեցու կողմից տոնելի սրբեր: Առաջինը՝ Տյուռոս-Թորոսը, քեռին էր Թեոդորոս Ստրատելատի, ըստ ավանդության՝ այրել է Ամասիայի Ռեյա (Կիբելա) դիցուհու տաճարը և նահատակվել 305 թ. փետրվարի 17-ին, թաղվել հայրենի Եվքայիտա գյուղում, նրա գերեզմանը դառնում է ուխտավայր բոլոր ցավագարների բուժման: Այստեղ է հետագայում թաղվում նաև նրա քրոջ որդին՝ Թեոդորոս Ստրատելատը, նահատակված Լիկինիոս կայսրի օրոք՝ 315 կամ 320 թ. օգոստոսի 26-ին: Նրանց աճյունների վրա կառուցվում է եկեղեցի, որը հետագայում Չմշկիկ կայսրի կողմից (971 թ.) քանդվում է, տեղը կառուցվում է նոր մեծաշեն եկեղեցի, բնակատեղին էլ վերանվանվում է Թեոդորուպոլիս [տե՛ս **Վարք սրբոց,** 189-201]: Կան նաև ս.Թորոս անունով երկու այլ վկաներ. մեկը Թեոդորոս մանուկն է (Թորոս Երզնկայու), հայ Սուրեն իշխանի որդին, նահատակված հոր կողմից 3-րդ դ. վերջերին, մյուսը՝ դարձյալ հայ, Թեոդորոս Կեսարացին է (Ս. Թորոս Ղայսերիու), նահատակված 1204 թ., Կեսարիայի ամիրա Ռուգնատի կողմից [տե՛ս **Աւգերեան,** ԺԲ, 181-184]:

Աղոթքում ս. Թորոսի կողմից հմայագիր գրելու և ջնջելու մոտիվը, հավանաբար, արձագանքն է ս. Թեոդորոս Ստրատելատին խաչելիս, նրա գրագրի կողմից իր տիրոջ վկայաբանությունը գրելու, ապա տիրոջ տառապանքները տեսնելիս՝ գրելուց հրաժարվելու վկայաբանական դրվագի:

50բ. Խորագրված է «Գիր՝ չար յաչից չար նիաթի, որ ոչ մերձենայ», այսինքն՝

չար աչքից պահպանվելու աղոթք է:

Վերջինից պարզվում է, որ չար աչքի վրա իշխելու հնարավորություններ ունեն վեց հրեշտակներ՝ Աշումա, Աշումիթա, Գաբրիել, Միքայել, Ուրիել, Ըռաբայել (Ռափայել): Առաջին երկու անուններն անհայտ են, ձևով սերում են, հավանաբար, բաբելոնյան ավանդությունից: Մնացած չորսը հայտնի անուններ են, խիստ գործածական եբրայական և դրանից սերող քրիստոնեական ու մուսուլմանական հրեշտակաբանության (Angelologie) մեջ: Այս վերջին չորս հրեշտակապետների անունները տարբեր գործառույթներով հանդես են գալիս հայ միջնադարյան ախտարական գրականության մեջ. Գաբրիելը, Միքայելը, Ռափայելը ցերեկվա առաջին երեք ժամերի, իսկ Ուրիելը գիշերվա առաջին և երրորդ ժամերի պահապանն է: Նրանք հանդես են գալիս նաև շաբաթվա յոթ տարբեր օրերի պահապաններ. Ռափայելն ու Կռետիոսը կիրակի օրվա հրեշտակներն են, Գաբրիելն ու Մատանիելը՝ երկուշաբթվա, Միքայելը, Նաթանայելը, Ուրիելը, Մուսիելը՝ երեքշաբթվա, Աննայիելը, Սարաքիելը, Միքայելն ու Նաթանիելը՝ չորեքշաբթվա, Ուրիելը, Մուսուիելը, Բարագիելը, Սուքիելը՝ հինգշաբթվա: Ըստ ախտարական հավատալիքների՝ ով որ տվյալ օրը կամ տվյալ օրվա տարբեր ժամերին ինչ գործ անի և տվյալ օրվա կամ ժամի հրեշտակների անունը հիշի և բարեխոս բռնի, ապա նրա գործը հաջող կգնա [տե՛ս **Մատենադարան, ձեռագիր** № 8428, 231, 233]:

Միջնադարյան ձեռագրերում հանդիպում են մի շարք հմայական քառակուսի կնքադրոշմների պատկերներ՝ զանազան ծածկագրություններով, որոնց չորս կողմերից (նման աշխարհի չորս կողմերին) յուրաքանչյուրում գետեղված են այդ չորս հրեշտակներից մեկի անունը [տե՛ս **Անասյան 1959,** 458]:

Այս պատկերացումը համամիտվում է եբրայական հմայական աղոթքներից մեկի այն վկայությանը, թե Գաբրիելը, Միքայելը, Ռափայելը և Անիելը (որ փոխարինել է Ուրիելին - Ս. Հ.) կանգնած են արեգակի շրջանագծերի ներքո [տե՛ս **Stübe** 1895, 23-27]:

Այս փաստերից թերևս կարելի է հետևեցնել, որ այդ չորս հրեշտակները աշխարհի չորս կողմերի պահապան հսկիչներ են պատկերացվել:

51. Խորագրված է «Տլիսմ և աղաւթք չար աչից»:

Կցված է դրանից առաջ բերված մեկ այլ գրական աղոթքի: Այն իր վիպական սկզբնամասով («Գայր գետն Յորդանան...») և կառուցվածքով անկախ ու ամբողջական ստեղծագործություն է, որի պատճառով էլ կազմողն անջատել է նախորդից: Նույն սկզբնամասով չար աչքի աղոթքի մի շարք տարբերակներ են հանդիպում այլ ձեռագրերում և հմայիլներում ևս:

Դրանցից նախընտրվել է սույն տարբերակը, որը կառուցվածքով և մանավանդ չար աչքի ավանդական բանաձևով խիստ մերձենում է ժողովրդական բանավոր աղոթքներին:

Վիպական սկզբնամասում ակնարկվում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը, որ ներկայացվում է այլաբանորեն՝ խաչանման ծառի պատկերով (Մատենադարանի № 34 հմայիլի տարբերակում ուղղակի նշվում է, որ այդ ծառ բերողը հենց Քրիստոսն է): Խաչակերպ ծառն ինքը մկրտված Քրիստոսի խորհրդանիշն է, իբրև նոր կրոնի, նոր աշխարհի, նոր Տիեզերքի կերպարի, որը հակադրված է Հորդանանի քաոսային ջրերին և Քաոսից ծնվող ամենայն չարիքի, այդ թվում նաև չար աչ-

քի և համարվում է բուժամիջոց ակնահարման տարբեր տեսակների և առհասարակ ՅԿԵ (365) տեսակ հիվանդությունների:

52. Խորագրված է «Գլխացավի աղոթք»:

Բայց այն իր հմայական կապքի բանածևով՝ «Կապի ամենայն չար աչքն, չար լեզուն», բնորոշ է չար աչքի աղոթքներին, ուստի և զետեղվում է դրանց շարքում:

Աղոթքը գրառված է Շուշիում՝ Միքայել Հովհաննիսյանի կողմից, ոմն Հ. Խաչներյանցի պատկանող ձեռագրից (ըստ երևույթին՝ միջնադարյան):

53ա. Խորագրված է «Չար աչքի»:

Գրառված է 1970 թ., բանասաց՝ Նահապետյան Պետրոս Վարդգեսի, 44 տարեկան:

53բ. Խորագրված է «Նազարի աղոթք»:

Գրառված է 1969 թ., բանահյուսական արշավախմբում: Բանահավաք՝ Վեներա (Արուսյակ) Սահակյան, բանասաց՝ Մկրտչյան Արշակ Մարտիրոսի, ծնվ. 1890 թ.: Ըստ բանասացի ծանուցման՝ սկզբից ասվում է «Հայր մեր» աղոթքը:

Բաղադրված է երկու հակադիր բանածևերից՝ հիվանդին ուղղված բարեմաղթություններից և չար ու վնասակար աչքին ուղղված անեծքի հմայական ասույթներից:

54. Խորագրված է «Աղոթք չար նազարի ու չար աչքի»:

Բանահավաք՝ Ռոզա Գրիգորյան, գրառված է 1968 թ.: Հին ուղղագրության է վերածված կազմողի կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ

Սույն հավելվածում է զետեղվում չար աչքին ուղղված երկու աղոթք. մեկը (№ 55) գրառված բանավոր ավանդությունից, մյուսը (№ 56)՝ քաղված միջնադարյան ձեռագրից, երկուսն էլ ունեն գրքային ծագում:

55. Խորագրված է «Չար աչքի աղոթք»:

Բանասաց՝ Հարությունյան Սաթենիկ, 62 տարեկան, գրագետ, տերունական զանազան աղոթքներ իմացող, Ղազանչի գյուղի նախկին բնակիչ, հետագայում վերաբնակված Լենինականում: Գրառված է Ղազանչիում՝ 1960-ական թթ. կեսերին:

Սաթենիկը աղոթելիս վերցնում էր մետաղե ճաղ (շյուղ) կամ ասեղ, դրանով երեք անգամ խաչակնքում հիվանդի գլուխը, ապա բարձը, հետո այն դնում հիվանդի գլխատակը կամ բարձին: Աղոթքի սկզբում երեք անգամ թքում էր (թյու՛, թյու՛, թյու՛), ապա շարունակում աղոթքը:

Չար աչքի ավանդական բանածևը հարակցվել է տերունական աղոթքների հանրահայտ բանածևերին (3-5 և 6-11 տողեր), մասնավորապես Տիրամորն ուղղված միջնադարյան չափածո տաղին (12-25 տողեր):

56. Խորագրված է «Գիր չար աչից և չար նիաթէ»:

Այս աղոթքը իր ծավալով ու վիպական բնույթով բացառիկ տեղ ունի հմայական աղոթքացանկում: Աղոթքի առաջին վիպական մասում նկարագրված է Քրիստոսի

խաչելությունը և Տիրամոր ողբը, որ ուղեկցվում է խաչված որդու և մոր ուշագրավ երկխոսությամբ: Երկխոսությունից պարզվում է նաև աստվածաշնչյան այն հավաստումը, որ Քրիստոսի, իբրև աստվածային էակի՝ կույսից ծնվելու, չարչարվելու, խաչվելու իրողություններով, փաստորեն, իրականացվել են հրեա մարգարեների հարյուրամյակներ առաջ արած գուշակությունները՝ փրկչի աշխարհ գալու, կրելիք տառապանքների և նահատակման մասին: Բայց ուշագրավն այն է, որ Քրիստոսի խաչելությունը դիտվում է իբրև չար աչքի մերձեցման, չար լեզվի արձակման և չար խորհրդի կատարման արդյունք: Չարի կամ չարիքի այս երեք ըմբռնումները սովորաբար հաճախ են միասնաբար հանդես գալիս չար աչքի մասին ասվող հմայական աղոթքներում: Սակայն տվյալ աղոթքում դրանք շատ են մասնավորեցվել և իմաստավորվել: Այստեղ նկատի է առնվել և՛ Հուդայի մատնությունը, իբրև չար լեզվի արդյունք, և՛ քահանայապետերի ու դպիրների նենգ խորհուրդը Քրիստոսին սպանելու մասին, և՛ Քրիստոսի խաչելությունը, իբրև արդյունք չար աչքի:

Աղոթքում Աստվածամայրը, դիմելով խաչին գամված որդուն, հավաստիացնում է, որ ինքը կկապի նենգավորի չար աչքը, անօրենի չար խորհուրդը և մեղավորի չար լեզուն: Քրիստոս որդին մորը խորհուրդ է տալիս նրանց կապել իր՝ կույսի կաթով, Մովսեսի գավազանով, Հովհաննես Մկրտչի մկրտությամբ, Հովհաննեսի բերանի աղոթքով և Քրիստոսի խաչափայտով: Քրիստոսի այս պատգամով հիմք է դրվում քրիստոնեական այն սրբություններին, որոնցով հմայական շատ աղոթքներում Աստվածածինը կամ նրա օգնական համախոհները «կապում» կամ երդվեցնում են չար ոգիներին: Աղոթքի այս վիպական մասով, փաստորեն, պատճառաբանվում են հմայական աղոթքներում և արարողություններում Աստվածածնի և հիշատակված սրբությունների վկայակոչման ակտիվ դերն ու գործառույթը տարբեր չարիքների խափանման և հիվանդությունների բուժման գործընթացում, առասպելաբանական նախադեպի (պրեցեդենտ) պատճառաբանման և հետագա ծավալման մի սխեմա, որ նախահիմքն է կազմում պատճառակցական բոլոր առասպելների:

Եվ այդ վիպական հատվածին անմիջապես հաջորդում է (աղոթքի 39-րդ տողից սկսած) չար աչքի մասին մի անկախ ու ամբողջական աղոթք (տարբերակները տե՛ս № 37ա-զ), ուր չար աչքի, չար լեզվի և չար խորհրդի անձնավորված եռյակին հանդիպում է Աստվածածինը, խոստովանեցնում նրանց չար մտադրությունները և բանադրանքով արգելում նրանց արարքները:

Այս եզրափակիչ հատված-աղոթքը, փաստորեն, ցուցադրումն է վերևում բերված նախադեպային պատգամի իրագործման:

29-30-րդ տողերը՝ «Որ ոչ մերձենայ զծառայս Աստուծոյ/ Տիրացու Բալին այս անունն», աղոթքի ավանդական բնագրի մեջ են ներմուծվել կոնկրետ աղոթողի կողմից, որ կարող է լինել հենց ինքը՝ այդ ոմն աղոթող տիրացու Բալին, հիվանդի վրա աղոթքի ներգործությունն առավել զորացնելու նպատակով:

Բ. ՏԱՐԲԵՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(№№ 57-145)

57. Առաջին երկու աղբյուրներում խորագրված է «Շեկեկի (գլխացավի) աղոթք», «Աղոթք շեկեկի (мигрень)», երրորդ աղբյուրում անխորագիր է:

Առաջին աղբյուրում (Վ. Տաշրացի) արված է հետևյալ ծանուցումը. «Գլխացավի մի տեսակը, որ կոչվում է «շեկեկ», ունի յուր համար առանձին աղոթք: Շեկեկը այն ցավն է, երբ սաստիկ ցավում է միայն գլխի մի մասը: Այս տեսակ գլխացավ ունեցողները, երբեմն գրել են տալիս այդ աղոթքը, եռանկյունի ծալում, շորի մեջ մուշամբա անում և գլխաշորի վերա կարում»:

ԱՀ X-ում ծանուցվում է. «Երբ գլխի կեսն է ցավում - շեկեկ ունին - հետևյալ աղոթքը գրում են մի թղթի վրա, եռանկյունածև ծալում և կարում, եթե տղամարդ է՝ գլխարկի, իսկ եթե կին՝ գլխաշորի մեջ»:

Երրորդ աղբյուրում, ինչպես վկայված է Կ. Կոստանյանի կողմից, աղոթքը քաղված է Ա. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափություն» գրքից (էջ 38):

Այս աղոթքը լայն տարածում ունի վրաց բանավոր ավանդության մեջ: Միայն Պ. Ումիկաշվիլու բանահյուսական ժողովածուում տեղ է գտել յոթ տարբերակ (№№ 43-48): Հիվանդության և աղոթքի անունը վրացերենում գրեթե նույնական է հայերենին՝ *շակիկի:* Ոչ միայն անունը, այլև վրացական տարբերակներից մի քանիսը գրեթե նույնն են հայկականի հետ: Ահա դրանցից մեկը.

43. Շելոցվա շակիկիսա

Շակիկի շամոչվեուլիա սաթիբիս բոլոսա,
Ասե խվրեմդա ոկինասա, րոգորց խարի թիվասա,
Գաուցդրա ծմիդա Գիորգի, գապարուլիղո դիլասա:

43. Աղոթք շակիկի

Շակիկը գնացել է խոտհնձի վերջում,
Էնպես է ծամել երկաթը,ոնց որ եզը՝ խոտը,
Ջայրացել է սուրբ Գևորգը, առավոտյան թողել փախել է:

[տե՛ս **Ումիկաշվիլի 1964,** 159]:

Հայոց մեջ հիվանդության անունն ու աղոթքը տարածված է եղել միայն Լոռիում, այն 19-րդ դարում մտնում էր Բորչալուի ընդարձակ գավառի մեջ, որի վրա նկատելի է վրացական մշակույթի ազդեցությունը: Բացառված չէ, որ հիվանդության անունն ու տվյալ աղոթքը վրացականից փոխանցված լինի հայ ավանդությանը, մանավանդ որ այդ գավառում կան այլ առավել խոսուն օրինակներ (հմմտ. չար աչքի մասին №№13, 24 աղոթքներն ու ծանոթագրությունները):

Միջնադարյան գրավոր աղբյուրներում կան գլխացավի մի շարք աղոթքներ, որոնցից տիպաբանորեն ու բովանդակությամբ ուշագրավ են հետևյալ երկուսը.

Գիր վասն գլխացաւի, աչացաւի եւ նզուլի

Սուրբն Սիսիանոս և սուրբն Սևերիանոս և սուրբն Սարասինոս կային ի լերինն և աղօթէին: Եւ դնքն երկաթի քերչօք խառնէին զուղեղս նոցա:

Եւ նոքա ի ժամ մահուան իւրեանց խնդրեցին յաստուծոյ, թէ.

- Տէր Աստուած, եթէ ոք յիշէ զանունս մեր, մի՛ ցաւեսցի գլուխ նորայ:

Եւ ձայն եղև յերկնից թէ.

- Եղիցին որպէս և կամիք:

Նոյնպէս մի մերձեսցի ամենայ ցաւ ի ծառային Աստուծոյ [անուն]:

[Մատենադարան, Հմայիլ № 4]

Գիր գլխացաւի եւ տուբմայի

Երանելի սուրբ հրեշտակք Աստուծոյ Միքայէլ և Կաբրիէլ գային զօրութեամբ և աւետարանէին զկնալն իւրեանց:

Հանդիպեցան չար դևքն. ասէին հրեշտակն և հրեշտակապետքն Աստուծոյ ընդ չար դևքն.

- Ու՞ր երթայք:

Ասէն չար դևքն.

- Երթամք մտանեմք ի մարդն, ցաւեցնեմք գլուխն կամ զկէս գլխոյն կամ զասարեալ:

Եւ հանեալ հրեշտակքն գիրեղէն սուրն և սատակեցին զչար դևքն և ազատեցին զծառայս Աստուծոյ:

Եղիցի բժշկութիւն տիրացու Գրիգորին այս անունն:

[Մատենադարան, ձեռ. № 6678, 42]

Առաջինում հանդես են գալիս լեռներում ծգնող սրբերը, որոնք ենթակա են գլխացավ հարուցող դևերի չար ներգործությանը: Այդ չարչարանքներից նահատակվելով՝ նրանց անվան հիշատակումը աստվածային հրամանով դառնում է գլխացավի բուժամիջոց: Երկրորդ աղոթքում սրբերի պասիվ դերը փոխարինված է Միքայել և Գաբրիել հրեշտակների ակտիվ գործառույթով: Նրանք սրերով սպանում են գլխացավ հարուցող չար դևերին և ազատում հիվանդին գլխացավից: Առաջինը քրիստոնեական վկայաբանական ոգով է օժտված: Առհասարակ միջնադարյան գրավոր աղոթքներից շատերը, որտեղ հանդես են գալիս սրբերը, ունեն սրբաբանական վիպական գրույցների բնույթ՝ համապատասխան գաղափարախոսությամբ:

58. Երկու աղբյուրում էլ առկա է նույն խորագիրը՝ «Աղոթք ականջացավի»:

Երկրորդ աղբյուրի բանահավաքն է Ն. Նիկողոսյանը, գրառման թվականը՝ 1940: Ն. Նիկողոսյանի ինչպես այս, այնպես էլ չար աչքի մասին գրառած մի քանի աղոթքներ գրեթե նույնությամբ համընկնում են ԷԱԺԱ և ՋԲ ավելի վաղ հրապարակումներին, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ դրանք ոչ թե նոր գրառումներ են, այլ պարզապես հիշյալ աղբյուրներից արտագրություններ:

Սև լեռան վրա սև օձ բռնելու, կթելու, դրանից մածուն մերելու կամ պանիր պատրաստելու և հիվանդին կերցնելու մոտիվները հաճախադեպ են չար աչքի մասին ասվող աղոթքների տիպաբանական մի ամբողջ խմբում (հմմտ. № 14-20):

59. Խորագրված է «Աչքի ցավի աղոթք»:

Աղոթքում դրսևորված է տիեզերական ծառի պատկերը (տե՛ս № 38ա ծանոթագրությունը): Օձն այստեղ խորհրդանշում է աչքացավի հիվանդությունը, և նրա գլխի ջախջախումով ապահովվում է հիվանդության բուժումը:

Օձն առհասարակ հմայական բուժարվեստում, այդպես նաև հայկականում,

խորհրդանշում է երկակի իմաստ. մի կողմից նա չար ու վնասակար հիվանդության մարմնացում է, և նրա ջախջախելով ապահովվում է հիվանդության բուժումը, մյուս կողմից՝ հենց իր այդ չար ու վնասակար հատկանիշի պատճառով հմայագործության մեջ օգտագործվում է իբրև հիվանդություններ վնասազերծող ու բուժող, այսինքն՝ հմայագործի միջոցով նրա այդ հատկանիշն ուղղվում է հիվանդությունների դեմ (հմմտ. նախորդ աղոթքներում օձի կաթից պատրաստված մածնի կամ պանրի միջոցով չար աչքն ու այլ հիվանդություններ վնասազերծելու մոտիվները): Սույն աղոթքի բանահավաք Խ. Փորքշեյանի վկայությամբ [էջ 94]՝ Նոր Նախիջևանում աղոթող հմայագործ «պառավները հանում են գրպաններից մի որևէ առարկա, գլխավորապես օձի գլուխ և կամացուկ աղոթում, քշում հիվանդի վրայից նրա ցավը»:

Աղոթքում հիշատակված Մոսես սարը, եթե վիպական անուն չէ, ապա աշխարհագրորեն Մուսա լեռն է Միջերկրական ծովի ափին՝ Հին Անտիոքում:

60. Խորագրված է «Աչքացավի աղոթք»:

Տողատումը կազմողինն է:

Այստեղ դարձյալ հանդես է գալիս սև օձի կաթից մերած մածնի մոտիվը իբրև չար աչքի դեղ (հմմտ. № 58 աղոթքը): Բայց աչք բառի երիցս հմայական կրկնությունը ու նրան ուղղված անեծքը վկայում են, որ խոսքը վերաբերում է վնասակար չար աչքին ու նրա ազդեցությանը:

Հետևաբար, աչքի ցավը ևս դիտվել է իբրև չար աչքի ներգործության արդյունք, կամ, որ դարձյալ հնարավոր է, սույն աղոթքը նախապես եղել է չար աչքին ուղղված:

61ա. Խորագրված է «Ակնահատի աղոթք»:

Առաջին աղբյուրում բերված է բանահավաքի (Վր. Տաշրացի) հետևյալ ծանուցումը: Աչքի սպիտակ հատը ծաղիկ հիվանդության թողած հետևանքներից է, որ երևում է արդեն մեծացած երեխաների մոտ: Աչքի հատիկով բռնված երեխաներին տանում են ակնահատի աղոթքը իմացողների մոտ: «Վերջիններս էլ վերցնում են մի ամաման լիքը ջուր, ձեռքի մեջ բռնում են բրնձի, ցորենի, կորեկի կամ ոսպի հատիկներ և սկսում» բերված աղոթքը: «Քանի անգամ ասում են այս աղոթքը, այնքան անգամ ձեռքում բռնած հատիկներից ձգում են ջրի մեջ»:

Երկրորդ աղբյուրում [ԱՀ X, 241] աղոթքին կցված է հետևյալ ծանոթությունը. «Երբ մինի աչքի մեջ բրնձի մեծության բծեր (հատ) են գոյանում, պառավ կանանց աղոթել են տալիս, որ անցնի: Սրանք ջրով լի մի ամաման բռնում են այդպիսի հիվանդություն ունեցողի աչքի առաջ և գլխի վրայից 7 հատ բրինձ մի-մի ձգում են ջրի մեջ, ամեն անգամին հետևյալ աղոթքը կրկնելով»:

Աչքի մեջ գոյացած հիվանդագին սպիտակ բիծը ժողովրդական լեզվով ըմբռնվել է իբրև հունդ, հատիկ: Այս պատկերավոր ըմբռնումը հմայական արարողության մեջ առավել կոնկրետանալով՝ առարկայացել, դարձել է բրնձի, ցորենի, կորեկի կամ ոսպի հատիկ, իսկ աղոթքի բանաձևում՝ կապվել կալի, դեզի, հասկի, նրա մեջ գտնվող հատիկի համասեռ առարկաներից բաղադրված մի ամբողջական համայնապատկերի հետ: Այդտեղ դեզն, ըստ երևույթին, խորհրդանշում է հիվանդի գլուխը, հասկը՝ աչքը, իսկ հատիկը՝ աչքի բիծը՝ ակնահատը:

Հմայական արարողությամբ աղոթողը առարկայորեն վերարտադրում է այն իրադրությունը (ամանով հիվանդի առաջ ջուր դնել, գլխի վրայից հատիկները մեկ-

մեկ ջրի մեջ գցել), որ փոխաբերաբար նկարագրված է աղոթքում (դեզի մեջ գտնվող հասկի հատիկը անդնդային ջրի մեջ գցելը):

Աղոթքի հաջորդ տարբերակներում (№ 61բ, գ, դ) հանդես է գալիս նաև ծովը (ուր գլորվում, ընկնում է հատիկը), որին արարողության մեջ առարկայացնում է ջրով լի ամանը: Փաստորեն, աղոթքի բանածնը դարձել է բուժման հմայական արարողության սիմվոլային փոխաբերական վերարտադրությունը: Աղոթքի բանածնը, սակայն, իր առասպելաբանական հիմքով հին է՝ կապված տիեզերաբանական ըմբռնումների հետ: Կալը, իր մեջ բարձրացած դեզով, խորհրդանշում է աշխարհի վերծիգ կառույցը, որ հակադրված է անդունդին կամ անդնդային ծովին, իբրև Քաոսի մարմնացում: Առասպելաբանական այդ նույն հայացքով մարդը հավասարածնունակ է դիտվել Տիեզերքին (մակրոկոսմոս), իբրև փոքր տիեզերք (միկրոկոսմոս): Աղոթքում վերծիգ դեզը խորհրդանշում է մարդուն կամ նրա գլուխը: Մարդուն սպառնացող հիվանդությունը (տվյալ դեպքում՝ ակնահատիկը) ևս քաոսային է, քաոսային կործանարար ուժերի արդյունք, որ հմայող բուժարարի ցանկությամբ ու պարտադրանքով ետվում է ջրային անդունդը կամ ծովը (իմա՝ քաոսը), որտեղից սկիզբ է առել այն (հմմտ. չար աչքն ու չար փուշը Անտակ կամ Անհատակ ծովը ետելու մոտիվը և դրան տված մեկնաբանությունը, № 20):

61բ. Խորագրված է «Ակնահատի աղոթք»:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանոթությունը. «Աչքումը հատիկ ունեցողին տալիս են մի ամանով ջուր, որ կժի գլուխ պիտի լինի. աղոթողը 7 հատիկ ցորեն կամ բրինձ է վեր առնում, ասում այս աղոթքը և մեկ-մեկ հատ գցում ջրի մեջ: Վերջը աղոթածը այն ջուրը պիտի գլխից ետ ածե: Մեկ առավոտն են աղոթում, մեկ էլ երեկոյին, մինչև որ հատիկը կհալվի»:

Տե՛ս 61ա տարբերակի ծանոթագրությունը:

61գ. Խորագրված է «Աչքահատի աղոթք»:

Տողատումը կազմողինն է: Բանահավաք Գրիգորիս քահանա Երզնկյանը կցել է հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը կրկնվում է երեք անգամ»: Թեպետ այս ծանուցման մեջ բուժման հմայական արարողությունը չի վկայված, սակայն աղոթքում երիցս կրկնվող 7 թիվը (յոթ խուրձ, յոթ հասկ, յոթ հատիկ), ինչպես նաև եզրափակիչ հմայական կարգադրությունը («Հատի՛կ, հատի՛կ, վեր ընկի, /Աչքի հատիկ, վեր ընկի») վկայում են, որ նախորդ ա և բ տարբերակների նման սույն աղոթքին ևս ուղեկցել է յոթ հատիկներ ջրի մեջ գցելու արարողությունը (հմմտ. № 61ա, բ տարբերակների ծանոթագրությունները): Բացի այդ, այս և նախորդ տարբերակները գրառված են նույն կամ կից (Լոռի, Բորչալու, Թիֆլիս) ազգագրական շրջաններից:

61դ. Առաջին աղբյուրում (բանահավաք՝ Ե. Լալայան) խորագրված է «Աղոթք աչից հատի», երկրորդ աղբյուրում (բանահավաք՝ Ն. Նիկողոսյան)՝ «Աչքահատի աղոթք»:

Այստեղ, նախորդ տարբերակների կալին փոխարինել է ծովը, դեզին՝ հալը, իսկ հմայական կարգադրությանը՝ ութ կանոն սաղմոսի բարեխոսության վկայակոչումը, որով կատարվել է հին հեթանոսական և նոր՝ քրիստոնեական ըմբռնումների զուգակցում:

62. Խորագրված է «Աչիչ հատի»:

Այս աղոթքը, թեպետ տիպաբանորեն հարում է նախորդ տարբերակախմբին, բովանդակությամբ, սակայն, առանձին ստեղծագործություն է, ուր առավել հստակ ու որոշակի է դրսևորված Քաոսից (լիճ) բարձրացած Տիեզերքի ավանդական պատկերը (ծառ), իր վրա գտնվող թռչնաբնով ու ծագով [տես **Հարությունյան 2000**]: Հմմտ. չար աչքի մասին աղոթքների № 38ա-ը տարբերակախումբը՝ համապատասխան ծանոթագրություններով, ինչպես նաև 61ա աղոթքի ծանոթագրությունը:

63. Խորագրված է «Աչքի հատի աղոթքը»:

Բանասացը, բանահավաքը, գրառման տեղն ու ժամանակը չեն նշված: Աղոթքի լեզվին բնորոշ են թիֆլիսահայ բարբառի յուրահատկությունները:

Տողատումը կազմողինն է:

Փողոցում գնդակ (բուրթի) խաղալիս՝ գնդակն աչքին դիպչելն ու աչքի արյունակալման մոտիվներն առանձնահատուկ են աչքացավի մասին ասվող վրացական հմայական աղոթքներին [հմմտ. **Ումիկաշվիլի 1964,** № 14, 21, 25]:

64. ՋԲ՝ խորագրված է «Աչից հատի աղոթք», ՀԱԲԱ՝ «Դարձյալ հատի աղոթք»:

ՀԱԲԱ տարբերակն ունի միայն վերջին 11 տողերը («Գնալը գնացիր» տողից սկսած), իբրև առանձին աղոթք:

Աղոթքի երկրորդ մասում, փոքր ինչ մթագնած, խոսքը վերաբերում է սպիտակ կենդանու (հավանաբար՝ թռչունի) հմայական սիմվոլիկ զոհաբերման արարողությանը (անդանակ մորթել, անկրակ խորովել, Անհատակը նետել), որ հանդես է գալիս նաև չար աչքի աղոթքներում (տես № 38ա ծանոթագրությունը):

65. Խորագրված է «Ակնահատի (աչքի հատ) աղոթք»:

Ուշագրավը յոթ թվի կրկնությունն է, որ զուգամիտվում է ակնահատի նախորդ աղոթքների հմայական արարողությունների ժամանակ ջուրը նետվող հատիկների թվին, իսկ մյուս կողմից վկայում աղոթքի յոթ անգամ կրկնվելու փաստը («Օխտը հետ ասեմ»):

Աղոթքում հանդես եկող գութանի կամ սայլի լծասարքի մասերի (լուծ, սամի, սամոտեն) թվարկումը, ըստ երևույթին, ակնարկում է ակնահատը հացահատիկի հետ նույնացնելու ֆունկցիոնալ կապը՝ աղերսված լծի ու լծկանի միջոցով հացահատիկը ցանելու, կալսելու և կրելու երկրագործական աշխատանքներին:

66. Խորագրված է «Աղոթք աչքի հատի»:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքն ասելիս՝ աղոթողը հիվանդի ճակատի վրայից բրնձի, գարու, ցորենի հատիկները մի առ մի կամաց-կամաց թափում է ձեռքում բռնած ամանով ջրի մեջ»:

Աղոթքն ամբողջապես քրիստոնեական կրոնի գաղափարախոսությամբ է օժտված: Կույրի աչքերը բացվելու և ակնահատը վերացնելու մոտիվը վերաբերում է ոչ թե Քրիստոսի ավետարանական հրաշագործություններից որևէ մեկին, այլ նրա չարչարվելու, խաչվելու և քրիստոնեական հավատը աշխարհով մեկ տարածվելու և այդ հավատքի լույսով մարդկության աչքը բացվելու ընդհանրական գաղափարին:

67. Խորագրված է «Հավկուրի աղոթք»:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Ձատկից մինչև Համբարձումը երեկոներին բան չեն շինում կանայք՝ հավկուրից ազատ լինելու համար: Եվ եթե մեկը պատահմամբ այդ միջոցին բան է շինում, ասում են այս, որ չարը չխփե ու աչքերը չկուրացնե»:

Հավկուրությունը աչքի հիվանդություն է, որով տառապողը աղոտ լույսի ժամանակ, հատկապես մթնշաղին ու երեկոյան, չի տեսնում:

Բառը ժողովրդական ստուգաբանությամբ կապվում է հավի հետ (աղոտ լույսի ժամանակ հավի չտեսնելու զուգահնմանությամբ), և այդ ըմբռնումն էլ դրսևորված է հմայական այդ ասույթում. «Հավը խտիտս է», այսինքն՝ գրկիս է, ասելով, հավանաբար հասկացել են հավկուրությունը մշտապես կրողին՝ հավին, որի վրա էլ պետք է փոխանցվի հմայական արգելքի (տաբու) խախտման հանցանքը:

68. Խորագրված է «Գիր ատամնացաւի»:

Տողատումը կազմողինն է:

Անթիմոս, Կոզմաս, Դամիանոս, Բակոս, - վաղ միջնադարյան քրիստոնեական ավանդության մեջ սրբացած վկաներ:

Անթիմոս եպիսկոպոսը եղել է Նիկոմիդիայի հոգևոր տեսուչը, որը նահատակվել է Դիոկղետիանոս կայսրի հրամանով՝ 302 թ.: Եղել է աներկյուղ ու աներեր քրիստոնյա: Նա քրիստոնյա է մկրտում անգամ իրեն կալանավորելու եկած զինվորներին և բանտում գտնվող հեթանոս կալանավորներին: Նա թագավորի առաջ ևս աներկբա քարոզել ու պաշտպանել է քրիստոնեական վարդապետության սկզբունքները, որի համար ենթարկվել է դաժան տանջանքների և ի վերջո գլխատվել [տե՛ս **Թորգոմ պատրիարք,** 123]:

Բագոսը եղել է ս.Սարգսի ընկերն ու գործակիցը և նահատակվել նրանից առաջ, Մաքսիմիանոս կայսրի ժամանակ, Անտիոքոս դքսի կողմից [տե՛ս **Վարք** և **վկայաբանութիւնք,** Բ, 272-279]:

Կոզմասի և Դամիանոսի մասին տե՛ս №35ժա ծանոթագրությունը:

Այս գրավոր աղոթքից բացի, հայ բանավոր ավանդության մեջ ատամնացավի մասին ուրիշ աղոթք չի վկայված: Բացառություն է կազմում թերևս անցյալ դարի վերջերին Գրիգորիս քահանա Երզնկյանի կողմից Հաղպատից (Լոռի) գրառած հետևյալ վրացերեն աղոթքը (բանահավաքի հայերեն կից թարգմանությամբ), որ, հայերեն չլինելու պատճառով, բնագրերում չի զետեղվում:

Ծմինդա Գեորգի խըվթիսայո,
Նու՛ արկեբ կբիլայո,
Արց վճամ շավսա բոլոկասա,
Արց բերծնուլ տխիլսայո:
[Սուրբ Գեորգ Աստուծո,
Մի՛ ցավեցներ ատամը,
Ոչ կուտեմ սև բողկը,
Ոչ էլ կուտեմ հունական կաղինը]:

[ՀԱԲԱ, FBI: 1190,01-1191,00]

Տարբերակը տե՛ս **Ումիկաշվիլի 1964**, 177, № 104:

70ա. Խորագրված է «Աղոթք թիքի (պատառի)»:

Տարբերակները տե՛ս չար աչքի (№ 38ա-ը), ակնահատի (№ 62), աչքացավի (№ 59) աղոթքներում:

70բ. Խորագրված է «Աղոթք թիքի»:

Աղոթքն ունի բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքն ասելուց հետո, աղոթողը բերանը դնում է հիվանդի բերանին և ուժով փչում ներս, որ դեմ առած թիքեն վար իջնի - անհետանա կորչի»:

71. Խորագիր չունի: Ունի միայն բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Երեք անգամ ասում են, երբ մեկի կոկորդումը կերակուր է մնում»: Աղոթքի առավել ամբողջական տարբերակները տե՛ս չար աչքի (№ 38բ, գ) աղոթքներում:

72. Խորագիր չունի:

Լեզուն ու ոճը մասամբ գրքային են, հավանաբար սերում է միջնադարյան գրավոր աղբյուրներից: Առաջին վիպական երկտողում ներկայացված է սուրբ լեռան վրա գտնվող խաչը, ըստ երևույթին՝ խաչքար, որի կերակուրն է դժնիկ փուշը, այսինքն՝ իր առջև բուսած փշենիով: Այս պատկերը դարձել է զուգահեռական համեմատության եզր տղայի բերանում արգելված պատառը բնորոշելու համար (ինչպես դժնիկ փուշը խաչի դիմաց իբրև կերակուր):

Ուշագրավ է նաև եզրափակիչ երկտողը, ուր հմայող բուժարարը շեշտում է իր կողմից կատարվող բուժումը («Դեղն ե՛ս ածեմ»), բայց և միաժամանակ հույսը դնում Հիսուս աստծո վրա, որպեսզի նրա զորությամբ պատառը դուրս գա հիվանդի կոկորդից:

73ա. Խորագրված է «Աղոթք խոցտուկի»:

Բանահավաքը աղոթքին կցել է նրա բովանդակությունը պարզաբանող հետևյալ ավանդազրույցը. «Քրիստոս աղքատի կերպարանքով կերթա տուն մը, հյուրընկալություն կը խնդրե: Կինը կը մերժե, էրիկը կըսե, որ ներս առնեն: Կովուն մսուրը անկողինը կը ծգեն. ուտելու համար խոռ պնակով մը թթու թան, գարիի հաց, կամ թունիրի կուտ հաց կուտան, կուճուկ դգալով մը: Կես գիշերուն տնեցիներուն հարսը ծանր խոցտուկը մը կը բռնվի. ճարահատ կըսեն, որ աղքատ մարդուն դիմե՛նք, նայինք՝ դեղ մը գիտե՞: Կը դիմեն, «Բերեք աղոթեմ» կըսե: Այս աղոթքը կըսե ու խոցտուկը կը դադրի»:

Այս աղոթքի տարբեր տեղերից գրառված տարբերակներում հաճախ է հիշատակվում այս նույն զրույցը (հմմտ. № 73գ, ժբ ծանոթագրությունները):

Զրույցն իր հիմնական մոտիվներով գրեթե ամբողջապես արտացոլված է աղոթքում: Այս և համանման այլ փաստեր վկայում են, որ հմայական աղոթքների, մասնավորապես դրանց վիպական պատմողական հատվածները սերում են վիպական ավանդությունից (առասպելաբանական, սրբախոսական, վարքաբանական զրույցներ, աստվածաշնչյան լեգենդներ և այլն):

Աղոթքի վերջին քառյակում խոցտուկի վերացման (բուժման) ցանկությանը զուգորդել է չար աչքի ոչնչացման ավանդական բանաձևը, որն իր հերթին հավաստում է, թե տարբեր հիվանդություններ (գլխացավ, աչքացավ, փորացավ և այլն) դիտվել

են իբրև չար աչքի ներգործության հետևանք:

73բ. Խորագրված է «Աղոթք խոցտուկի»: Դրված է իբրև նախորդ № 73ա աղոթքի զանազանակ (տարբերակ):

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73գ. Խորագրված է «Վախի աղոթք»:

Աղոթաշարի տիպաբանական խումբը չխախտելու նպատակով սույն տարբերակը, որ նոր մոտիվներով առանձնապես չի հատկանշվում, ևս տեղադրվում է այս շարքում:

Բանահավաքը աղոթքին կցել է այն մեկնաբանող հետևյալ ավանդազրույցը. «Քրիստոս ծերունի աղքատի կերպարանքով ողորմություն է խնդրում: Մի մարդ երեկոյան տանում է նորան յուր տունը գիշերելու, սակայն կինը չի հոժարում: Ամուսինը անճարացած առաջարկում է նրան պառկել մսրում և բարձի տեղ տաշեղ դնել գլխի տակ: Ընթրիքին մարդը ցանկանում է ծերունուն իրենց սեղանակից առնել, սակայն կինը ոչ միայն թույլ չի տալիս, այլև իրենց համար պատրաստված կերակուրներից էլ նրան բաժին չի հանում. մի կոտրած քարղանի մեջ (կավե աման) լցնում է թթու թան, պոչիկ (պոչի կեսը կոտրված) դգալը ձգում է մեջը և տալիս նրան ուտելու: Բայց հենց որ պառկում են, երեխան սաստիկ վախից միանգ ի լույս գոչում ու լալիս է: Երբ ոչ մի հնարքով չեն կարողանում երեխայի լացը կտրել, հայրը հարցնում է ծերունի աղքատին, թե մի աղոթքով չի՞ կարող լավացնել երեխային: Նա էլ այս աղոթքն է ասում և լավացնում»:

Տե՛ս նաև 73ա ծանոթագրությունը:

73դ. Խորագրված է «Փորու ցավի աղոթք»:

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73ե. Խորագրված են «Աղոթք սանճուի»:

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73զ. Խորագրված է «Վախ բռնելու»:

Սա ևս նոր մոտիվներով այս տարբերակաշարի աղոթքներից չի զանազանվում, ուստի այն տեղադրվում է սույն տարբերակաշարում:

Տե՛ս 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73է. Խորագրված է «Երեխի խիթ կտրելու»:

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73ը. Առաջին աղբյուրը խորագիր չունի, բայց ծանոթության մեջ նշված է, որ այն պորտացավի (Նոր Նախիջևանի բարբառով՝ *կռնանի*) դեմ ուղղված աղոթք է: Եզրափակիչ տողով դարձյալ հավաստվում է, որ կռնանը չար աչքի ազդեցության արդյունք է: Երկրորդ աղբյուրն ունի «Չար նազարի աղոթք տղոցկանի համար» ընդհանուր խորագիրը:

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73բ. Խորագրված է «Աղոթք շփորթի»:
Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73ժ. Այս և հաջորդ թ տարբերակը վերնագրված են «Չար նազարի աղոթքներ»:
Հաշվի առնելով, որ մի շարք հիվանդություններ, այդ թվում նաև փորացավը, համարվում են չար աչքի ներգործության արդյունք, ինչպես նաև այս և հաջորդ տարբերակների բովանդակության ու տիպաբանության ընդհանրությունները սույն աղոթաշարի հետ, այս և հաջորդ տարբերակները ևս զետեղվում են տիպաբանական նույն խմբում:
Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73ժա. Տե՛ս № 73ը, ժ ծանոթագրությունները:

73ժբ. Խորագրված են «Կոլընջի կամ սանջուի աղոթք»:
Առաջին աղբյուրում Վ. Տաշրացին տալիս է կոլինջ և սանջու կոչված հիվանդությունների հետևյալ բացատրությունը. «Կոլինջը փորացավի այն տեսակն է, երբ ցավը փորի մի տեղից մյուսն է անցնում, սաստիկ ծակծկում է և ինչպես ասում են «շամփուր տալիս»: Սանջուն էլ փորացավի խիստ տեսակն է, երբ ամբողջ փորը ցավում է և երբեմն ցոլքում»:
Անդրադառնալով աղոթքի բովանդակությանը՝ Տաշրացին գրում է. «Այս աղոթքի բովանդակությունը կրոնական է: Մի օր Քրիստոս անցնելիս է լինում մի աղքատ գյուղով: Նա քաղցած է լինում: Գյուղացիներից մեկը հյուրասիրում է նրան յուր տուն: Նրա առաջը դնում են մի աման թթու բան, ձեռքը տալիս են մի պոչիկ գդալ, իսկ տակը դնում են մի պռատ խան (ցորեն չափելու աման): Քրիստոս ասում է, որ նրանից հետո այդ բաները կը լինին փորացավի դեղը: Հիրավի, փորացավ ունեցողին բան են խմացնում, գդալով սղմում են ցաված տեղերը, իսկ խանը, որ նույնն է՝ մի սառն աման, դնում են փորի վերա: Սառն ամանը մի քիչ մեղմացնում է փորացավը: Բացի սրանից աղյուս են տաքացնում և դնում փորին: Տաքացրած աղյուսը շորում փաթաթած նույնպես դնում են ցավող փորի վերա»:
Երկրորդ աղբյուրում (ԱՀ X) դարձյալ տրված է համանման մի ծանոթություն:
«Երբ մինի փորը ցավում է, աղոթող պառավը մի պոչիկ գդալ ձեռին ցավոտ տեղերը սեղմելով աղոթում է՝ շշնջալով հետևյալ աղոթքը և պատվիրում է թթու բան խմացնել:
Աղոթողները այս աղոթքն հառաջանալու պատճառն այսպես են բացատրում. մի անգամ, երբ Քրիստոս անցնում էր մի աղքատիկ գյուղով, մի գյուղացի հրավիրում է նրան յուր տուն, մի պռատ (կոտրված) խան (ցորեն չափելու աման) դնում՝ վերան նստելու և մի պոչիկ (պոչը կոտրված) գդալ ձգելով թթու բանի մեջ՝ առաջարկում է ուտել: Քրիստոս սիրով ընդունում է այդ աղքատիկ, բայց սրտանց հյուրասիրությունը, և երբ տեսնում է, որ դրա երեխան տանջվում է փորացավով, աղոթում է նրան վերոհիշյալ աղոթքը հնարելով ու աներևութանում է: Այնուհետև, թթու բանն ու պոչիկ գդալով մասաժը վերոհիշյալ աղոթքի հետ համարվում է փորացավը կտրելու ամենալավ միջոց»:
Բերված զրույցները (հմմտ. նաև 73ա ծանոթագրության մեջ նշվածը) բնույթով պատճառական առասպելներ են, որոնցով պատճառաբանվում և հիմնավորվում են

փորացավի բուժման ժամանակ որովայնը պոչատ գդալով մերսելու, հիվանդին թթու թան խմեցնելու, սառը ամանը փորին դնելու հմայական արարողությունները: Առասպելներ են դրանք, քանզի կապվում են աստվածային սրբազան անձի (Քրիստոս) անվան և նրա որոշակի արարքների հետ, որոնք նախադեպային արժեք ունեն և այնուհետև դառնում են կայուն ավանդույթ փորացավի և այլ հիվանդությունների բուժման համար:

Բացի այդ, աղոթքում, առասպելում և հմայական արարողություններում կիրառվող առարկաները՝ պոչատ գդալ, պռատ խան, թթու թան, ունեն նաև սիմվոլային-խորհրդանշական իմաստ: Դրանք իրենց բնական, իրական վիճակից խեղված, խաթարված են (գդալի պոչը կոտրված է, խանը՝ խոռված, իսկ թանը՝ թթված) հանդես գալիս, որ միանգամայն համախոս է մարդու հիվանդ վիճակին, իբրև բնական առողջ վիճակից շեղում, և խորհրդանշում են հենց հիվանդությունն իբրև այդպիսին [հմմտ. **Հարությունյան 2000**]:

73ժգ. Խորագրված է «Փորացավի աղոթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ աղոթքն ասվում է փորացավ ունեցողի փորը մերսելով:

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

73ժդ. Խորագրված է «Գլխացավի աղոթք»:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 73ա, գ, ժբ ծանոթագրությունները:

74. Խորագրված է «Աղոթք սանջուի»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ աղոթքն ասվում է անասունների փորացավի դեպքում: Եթե կովը փորացավ ունի, վերցնում են մի կտոր աղ ու հաց, տալիս են աղոթողին. վերջինս այն աղոթում է, ապա ուտեցնում են կովին: Վերջին երկտողը վկայում է, որ փորացավը դիտվել է իբրև հմայական կապք, կապանք, այսինքն՝ չար հմայություն, և աղոթում են, որպեսզի այդ կապքն արձակվի: Աղոթքի վերջաբանը հենց այդ նպատակի կատարման ցանկությունն է:

Աղոթքում դրսևորված է տիեզերական ծառի առասպելաբանական պատկերը՝ ճյուղերով, թռչնի բնով, մեջի ձվով և ձվի մեջ եղած թռչնաձագով:

Աղոթքի այս տիպը տե՛ս չար աչքի մասին ասվող № 38ա-է աղոթաշարում, կոկորդում պատառ մնալու (№ 70ա, բ) աղոթքներում և համապատասխան ծանոթագրություններում:

75ա. Խորագրված է «Խեթի»:

Աղոթքի լեզուն ու ոճը մասամբ գրական են, և ինչպես վկայում է հաջորդ բ տարբերակը, սերում է միջնադարյան գրավոր աղբյուրներից:

Տե՛ս 75բ տարբերակի ծանոթագրությունը:

75բ. Խորագրված է «Գիր կօլնջի և սանջուի»:

Աղոթքի սկզբից ծանուցվում է հետևյալ հմայական արարողությունը. «Առ անջուր կանափ, է հանգոյց արայ, ամէն հանգոյցի ա ասայ»:

Թե՛ հմայական արարողությունը և թե՛ աղոթքի բանաձևը վկայում են, որ փորացավը դիտվել է իբրև կենդանի էակ, որին թե՛ աղոթող-հմայողը և թե՛ աղոթքում հանդես եկող սուրբ անձինք (երեք աբեղա) կապում, հանգուցում են կանեփի թելով: Այստեղ ևս հմայական արարողությունն ու բանաձևը համախոս են միմյանց, հմայողը կատարում է այն, ինչ նկարագրված է աղոթքի բանաձևում: Աղոթքի վերջին երկտողով հմայողը կապքի իր արարողությունը համադրում, համեմատում է վիպական մասում նկարագրված աբեղաների համանման արարքին:

76. Խորագրված է «Գիր ղօլինջի, սանջուի և տուբմայի»:

Տողատումը կազմողինն է:

Կատարվել է երկու տարբեր աղոթքների հարակցում. առաջինը՝ կույս Մարիամի խորհրդով դրախտ մտնելն է, կանեփ կտրելը և դրանից երեք տակ թել ոլորելը, որը մոտիվներով մասամբ հարում է նախորդ աղոթքի երկու տարբերակներին (№ 75ա,բ):

Երկրորդը, որ սկսվում է «Ելավ պեղծն յանկարծակի» տողով՝ ամբողջական և անկախ աղոթք է, երդմնեցուցական բնավորությամբ, խիստ բնորոշ չար աչքի աղոթքներին (տե՛ս № 37ա, բ տարբերակները): Ինչպես չար աչքի դեպքում, այնպես էլ այս աղոթքում հիվանդությունը (այստեղ փորացավ ղոլինջը) հանդես է գալիս անձնավորված՝ պիղծ ոգու կերպարանքով, որին երդվեցնում է Քրիստոսը և արգելում դիպչել աստծո ստեղծած արարածներին: Երդվեցման մեջ թվարկվում են այն բոլոր կենդանիները, մարդկանց սեռատարիքային խմբերը, որոնք ենթակա են այդ հիվանդությանը: Ուշագրավ է հատկապես հիվանդության ախտաբանական նկարագրությունը՝ ջերմության բարձրացում («Տապ լինիմ, տօթ լինիմ»), սրտի մղկտոց, աղիքների ցավ ու գալարում, որ բնորոշ է փորացավի այդ տեսակին:

77. Խորագրված է «Խոլինջ (Goligue)»:

Կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Խոլինջի խեթը լավացնելու շնորհքն կունենան այն ամեն անձինք, երբ տեսնեն, որ շուն շան միս կուտե՝ և այսպես կասեն (երեք անգամ)»: Բերված է հմայական բանաձևը: «... Այնուհետև, եթե ասողը յուր ձեռքը խոլինջի խեթ ունեցողի փորու կամ քամակի քսե՝ ցավը կանցնի:

Ս. Սարգսի պահոց շաբաթվա շաբաթ օրը երբ մեկը պաս պահե, այլևս խոլինջ չեղնի»:

78. Խորագրված է «Խոլինջ (Goligue)»:

Բանահավաքի ծանուցման մեջ ասվում է. «Խոլինջի խեթը կանցնի նաև, երբ անդրանիկ մեկը հիվանդի վրայից երեք անգամ այս ու այն կողմը շենքա և ասե» սույն բանաձևը երեք անգամ:

79. Խորագրված է «Քոսի աղոթք»:

80ա. Խորագրված է «էրեթիկի»:

Հիվանդությունն անձնավորված է իբրև փոքրիկ ջրկիր, որը կաթիլ կաթիլ ջուր է բերում և մրջյունի համար բույն շինում: Նկատի է առնվել երեթիկի թաց և բշտոտ տեսակը, որ արտաքուստ մրջնաբույն է հիշեցնում: Միաժամանակ շեշտվում և պատ-

ճառաբանվում է հիվանդության մյուս անվանումը՝ **մրջմուկ** (փոքրիկ մրջյուն), հիվանդության մի այլ անձնավորումը:

80բ. Խորագիր չունի:

Աղոթքին կցված է բանահավաք Արտաշես Շահինյանի հետևյալ ծանուցումը.

«Մոկսում էրեթիկ կոչված վերքը բուժելու համար՝ կիրակնըտի երեկոները վերքը բռնում են և ասում (տվածորիկ է)» սույն աղոթքը:

Այս, ինչպես նաև նախորդ տարբերակում մրջյունը ոչ միայն հիվանդության անձնավորումն է, այլև նրա հարուցիչը (ա տարբերակում նրա բունն է շինվում, իսկ այստեղ ինքն է ջուր բերողը, այսինքն՝ ջրային բշտիկներ հարուցողը):

Ժողովրդական հավատալիքներով մի շարք հիվանդություններ հարուցվում են ստորգետնյա կենդանիների կողմից (օձ, խլուրդ, գորտ, մրջյուն և.ն.) և հենց նրանց անունով էլ համապատասխանաբար անվանվում (օձիկ, խլուրդ, գորտնուկ, մրջմուկ): Այդ կենդանիներն իրենց ստորգետնյա (խթոնիկ) բնույթի պատճառով չար են համարվում և դասվում ահրիմանական կենդանիների շարքը (հին իրանական չարի արարիչ Ահրիմանի անունից) [հմմտ. **Աբեղյան 1975,** 31-32]:

Այս և հաջորդ աղոթքներում (№№ 81, 83ա) մրջյունը հանդես է գալիս իր միջավայրին՝ հողին առանձնահատուկ իրադրություններում (արտ ջրել, հերկ անել, բուսնել): Մաշկային այդ հիվանդությունը փոխաբերվել է արտի, վարուցանքի, արտը ջրելու և բուսնելու հետ, որ կատարվում է մրջյունի կողմից, նրա ժրաջան աշխատանքի շնորհիվ: Այլ կերպ ասած՝ հիվանդության հարուցիչը՝ ինքը մրջյունն է: № 83ա տարբերակում հիվանդությունն անգամ **մրջնանոց** (մրջմնոց) է համարվել: Եվ ահա գալիս է աստվածային անձը (Աստվածամայր, Քրիստոս), իր ակտիվ միջամտությամբ (դեղ անել, վրան նայել, քքել) միանգամից չորացնում մրջյունի մշակած արտն ու մրջնանոցը:

81. Խորագրված են «Աղոթք մռջըմուկի»:

Տե՛ս № 80բ ծանոթագրությունը:

82. Խորագիր չունի: Բանահավաքի ծանուցմամբ՝ «Ասում են որքիւնի վրա քսելով՝ նորա ոչնչացնելու համար»:

83ա. Խորագրված է «Աղոթք մրջըմնոցի»:

Այստեղ բուժող անձը Քրիստոսն է, որը բուժում է՝ քքելով վերքի վրա:

Թուքը հմայության մեջ երկու հիմնական իմաստ ունի. նախ՝ իբրև ոչնչացնող, սպանող, անիծող զորություն, ինչպես, դիցուք, չար աչքի աղոթքներում, ուր թուքը պարտադիր ուղեկցում է թե՛ աղոթելիս և թե չար աչքին անիծող, ոչնչացնող բանադրական հատվածներին: Թուքը միաժամանակ ունի նաև բուժիչ զորություն, ինչպես օձի կծածի, մաշկային որոշ հիվանդությունների, հենց երեթիկ-էկզեմայի բուժման ժամանակ (քքելը վերքի վրա, որը ոչ միայն չարի ոչնչացումն է, այլև վերքը բուժելու միջոց): Թուքն, ահա, իր այս երկակի իմաստով է դրսևորվում երեթիկի այս և հաջորդ աղոթքներում:

Տե՛ս № 80բ ծանոթագրությունը:

83բ. Խորագրված է «Աղոթք «մրչըմուկի»»:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ հաղորդումը. «Այս աղոթքն ասելիս՝ աղոթողը փետուրով թանաք է քսում վերքին»:

Տե՛ս № 80բ և 83ա ծանոթագրությունները:

83գ. Աղոթքին կից ծանուցված է, որ սա **մկնատամը** (ըստ նորնախիջևանցիների՝ **դեմրեկը**) բուժելու համար ասվող աղոթք է:

Տե՛ս №80բ և 83ա ծանոթագրությունները:

83դ. Խորագրված է «Դեմրուկի աղոթք»:

Տե՛ս № 80բ և 83ա ծանոթագրությունները:

83ե. Խորագրված է «Երեթիկի աղոթք»:

Կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Տվածուրիկ շնորհք ունեցողը հիվանդի կշտին կանգնած՝ արագ կը կրկնե հետևյալ տողերը» և «երեք անգամ կը թքե»:

Շկլոր բկլոր, ըստ բանահավաքի, «շատ խոշոր և անդուր աչքերը կը կոչվին»:

Շկլոր բկլոր դառնալ հասկացության տակ, ըստ երևույթին նկատի է առնվել երեթիկի բորբոքված վիճակը, երբ անդուր աչքերի նման բորբոքված բշտիկները խոշորանում են, կլորանում և անգամ ժողովրդի մարդկանց մոտ ըմբռնվում իբրև չար աչքի ներգործության արդյունք (աչքերի նմանվելու պատճառով):

Տե՛ս № 80բ և 83ա ծանոթագրությունները:

83զ. Խորագրված է «Աղոթք Տեմրեկուի (էքսեմա)»:

Տե՛ս № 80բ և 83ա ծանոթագրությունները:

84. խորագրված է «էրեթիկի»:

Ոճով ու բնույթով հարում է միջնադարյան գրավոր աղոթքներին:

85. Խորագրված է «Աղօթք մռջնկան»:

Աղոթքին կից ծանուցված է. «Ասէ և գրէ շուրջ զխոցավն»:

Աղոթքը բնույթով խիստ մոտ է բանավոր ավանդությամբ վկայվածներին. կառուցված է ժխտողական համեմատությունների վրա, որոնց համախոս է եզրափակիչ բանադրական տողը («Չիք ես և չիք դառնաս») իր բացառող, հերքող բնույթով:

86. Խորագրված է «Մկնատամ գրելու աղոթք»:

«Գրել» բառով ակնարկվում է այդ հիվանդության շուրջը թանաքով հմայական գրեր քաշելու բուժման սովորույթը (տե՛ս նախորդ № 85 աղոթքի ձեռագրական ծանուցումը, նաև № 87գ ծանոթագրությունը):

Աղոթքը քրիստոնեական բովանդակությամբ, լեզվով, ոճով գրական ստեղծագործություն է, թեպետ գրառված է բանավոր ավանդությունից:

87ա. Խորագրված է «Գիր մուկունատամի է» և դրված է հմայագիր:

Առաջին երկտողում նշված անծանոթ անունները, հավանաբար, ոգիներ են,

որոնցից աղերսվում է հիվանդության բուժումը: Այդ անուններն աղավաղված ձևով, բայց առանց բուժման հայցման, կրկնվում են հաջորդ բանավոր ավանդված բ և գ տարբերակներում:

87բ. Խորագրված է «Աղոթք մկնատամի»: Բանահավաքի կողմից ծանուցված է. «Մի թղթի վրա գրում են հետևյալը և դնում մկնատամի վրա <...> Այս գրում են առավելապես չորեքշաբթի և մանավանդ «չիք չորեքշաբթի» (Ջատկի ավագ չորեքշաբթի) օրը»:

Ամոն կամ **Ամուն** - քրիստոնեական վարքագրության մեջ եկեղեցու սուրբ հայր, եգիպտացի, մանկուց եղել է առաքինասեր: Երբ նրան բռնի ամուսնացնում են, կնոջ հետ պայմանավորվում են ապրել որպես քույր ու եղբայր: Մաքսիմիանոս կայսրի հալածանքների ժամանակ, ծնողներին կորցնելուց հետո, կինը մտնում է վանք, իսկ Ամոնը քաշվում է անապատ, դառնում խստակրոն միայնակյաց, 3000 ճգնավորների առաջնորդ և մեռնում բնական մահով [**Աւգերեան,** ԺԲ, 31]:

Եթե աղոթքում իսկապես այս սրբանունն է նկատի առնվել, ապա նախորդ տարբերակի (տե՛ս № 87ա) **Ամամօն, Ամրամօն** անստոյգ անունները ևս պետք է համարել **Ամոն** սրբանվան աղավաղումներ:

87գ. Խորագրված է «Մկնատամի կամ էրեթիկի աղոթք»:

Բանասաց՝ Մաճկալյան Անուշ, բանահավաք՝ Արազ Կարապետյան, գրառված է 1969 թ.: Սա հատված է աղոթքի սկզբնամասի: Բանահավաքի վկայությամբ՝ աղոթողը չէր հիշում շարունակությունը, բայց վկայում, որ «աղոթում էին կիրակի, չորեքշաբթի, ուրբաթ օրերին և գրիչը վերքի չորս կողմը շարժում էին, իբր գրում էին, որ [վերքը] ուրիշ տեղ չտարածվի»:

Հմմտ. № 86 ծանոթագրությունը:

88ա. Խորագրված են «Գորտնուկ»:

ԱՀՋ ծանուցմամբ՝ Գանձակում գորտնուկը բուժելու համար լուսնի նորին (նորալուսին) ձեռքը թաց են անում, գորտնուկի վրա աղ ցանում, պարզում դեպի լուսինը և ասում այդ բանաձևը:

ԱՀՀ ծանուցմամբ՝ նորալուսնին գորտնուկները հաշվում են, ասում այդ բանաձևը և այն կրկնում յոթ օր:

Այս երկանդամ կառուցվածքը հմայական բանաձևերի ամենապարզ տիպերից է, բաղադրված երկու զուգահեռ անդամից՝ բնության առարկայից և նրանից աղերսվող բուժման ցանկությունից: Հաջորդ տարբերակներում այդ հիմնական բանաձևին հարակցվում են նոր մանրամասներ, և աղոթքը զարգանալով՝ կերպարանափոխվում է:

Այս, ինչպես նաև գորտնուկի բոլոր աղոթքների հիմքում ընկած է լուսնի, մասնավորապես նորալուսնի հետ կապված հիվանդության ու բուժման տարբեր հավատալիքներ, որոնք ունեն իրական բնախոսական դրդապատճառներ:

Երկրի նկատմամբ լուսնի ամսական շրջապտույտով պայմանավորված նրա տարբեր դիրքերը (փուլեր), դրանց առաջացրած ծգողական դաշտի պարբերական փոփոխությունները՝ երկրի ու մարդկային օրգանիզմի վրա թողած զգալի ազդեցություններով (մակընթացություններ, տեղատվություններ, նյարդային տարբեր հի-

վանդությունների, կանանց արյունահոսության պարբերական կրկնություններ և այլն) հիմք են ծառայել առասպելական տարբեր հավատալիքների գոյացման: Դրանցից է նաև գորտնուկի բուժման հավատալիքը՝ կապված լուսնի նորացման (իբրև թե՛ նոր ամսվա սկզբի և թե՛ նյարդային ու մաշկային որոշ հիվանդությունների գրգռման ու բորբոքման ժամանակահատվածի) հետ:

Գորտնուկը (ինչպես անունն է վկայում), ըստ տարածված հավատալիքի, հարուցվում է գորտերի կողմից, ուստի չի կարելի նրանց քարով սպանել [ԱՀ II, 243. ԱՈՒ, 107]: Գորտ տեսնելիս, մանավանդ գիշերը, պետք է ոտներին ու ձեռներին քքել, որպեսզի գորտնուկ չառաջանա (թուքը որպես չարի ոչնչացման միջոց): Մինչդեռ որոշ ազգագրական շրջաններում նույն գորտնուկային ելունդի առաջացումը կապվում է երկնային լուսատուների հետ: Բաբերդում, Ակնում հավատացել են, թե ով երկնքի աստղերը հաշվի՝ նրա վրա գորտնուկ կլինի [ԲԲ, 523. ՀԱ, 165]: Իսկ Մարզվանում եթե մեկը լուսինը մատով ցույց տար, իսկույն զգուշացնում էին մատը կծել, այլապես մատնաշուրթ կամ էլ գորտնուկի թուք (կոճականման մսե ելունդ) կառաջանար նրա վրա [ԲԲ, 795]:

Ուրեմն, ըստ այս վերջին հավատալիքների, լուսինը (հատկապես նորալուսինը) և՛ գորտնուկ հարուցող է, և՛, միաժամանակ գորտնուկ բուժող (ըստ հմայական աղոթքների և արարողությունների): Լուսնի ազդեցության այդ երկվական ընկալումն առկա է նաև *նորենցք* կամ *լուսնկեն ղրուկ* կոչված մանկական հիվանդության հարուցման և բուժման հավատալիքներում [տե՛ս ԲԱ, 458, 507-508]:

88բ. Խորագրված է «Աղոթք կոծիկի»: Բանահավաքի ծանուցմամբ՝ այս աղոթքը «Լուսնի նորին, կոծիկը լուսինկին ցուցնելով՝ երիցս կը կրկնեն»:

Իսկ Զեյթունում, երբ մեկը կոծիծ (գորտնուկ) է ունենում, նորալուսնի ժամանակ դառնում է դեպի լուսինը, գետնից հող է վերցնում, դնում կոծիծի վրա, որպեսզի բուժվի դրանցից [ԱՈՒ, 106]:

Տե՛ս № 88ա ծանոթագրությունը:

88գ. Խորագրված են «Գորտնուկի աղոթք»:

Առաջին երկու աղբյուրներում ծանուցվում է. «Այս աղոթքը ասում են մի կտոր աղ ձեռքը բռնած: Կամ գրում են աղոթքը հավի ծվի վերա և տանում հինգ կամ յոթը ճանապարհամիջում թաղում», այսինքն՝ ճանապարհների հատման տեղում:

Սա նախորդ տարբերակների հարակցված զարգացումն է՝ նոր մոտիվներով: Մոտիվներից մեկը թոք չուտելու երդումն է (թոքը, սովորաբար լյարդը, իբրև մաշկային հիվանդությունների գրգռիչ, հավանաբար արգելվել է գորտնուկ ունեցողին ուտել), մյուսը՝ հմայական արարողության նպատակն է, ձեռքում բռնած աղի հալման զուգահեռությամբ՝ գորտնուկի ոչնչացում չորացումը:

89ա. Խորագիր չունի: Ունի բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Գորտնուկի թվով գարի և աղի կտորներ են վերցնում և տանում թուրքի գոռում (=գերեզման- Ս. Հ.) թաղում, ասելով» սույն բանածևը:

89բ. Խորագրված է «Աղոթք գորտնուկի»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Վառվառե կուսի կամ մի այլ սրբի մատռան տակ

մի ծու են թաղում՝ ասելով» սույն բանածնը:

«Այս միևնույն անեծքը կրկնելով, միայն ծվի փոխարեն թաղված իրի անունը տալով՝ 1) մսի կտոր են թաղում գետի ափին, 2) 7 գարի են թաղում թոնրի շրթի մոտ»:

89գ. Խորագրված է «Գորտնուկի աղոթք»:

Բանասաց Սաթենիկ Հարությունյանի (62 տարեկան, գրագետ) ծանուցմամբ՝ «Գորտնուկի, աչքի կլզտրուկի դեմ նորալուսնի.յառեջն օր գելնին, հացի միջուկից (խմորից) մուկ կը շինին, կաղոթին իրյեք անգամ, կըսին» այս բանածնը: Հետո առնում են «մուկը», անխոս տանում, մի այնպիսի տեղ են թաղում, որ ոչ ոք չիմանա, ապա դարձյալ անխոս վերադառնում են: Դա թլիսմն է (կախարդանք), որից հետո գորտնուկը չորանում է:

90ա. Խորագրված է «Աղոթք գորտնուկի»:

Բանասաց Սաթենիկ Հարությունյանի հաղորդմամբ՝ «Գորտնուկ ունեցողը կամ աղոթողը նորալուսնին գելնի կայնի լուսնըկի դեմ, իրյեք.յանգամ խաչակնքե.յերեսն ու կըսե» սույն աղոթքը: Ասվում է երեք անգամ:

Նորալուսնից աղերսվում է նորացում, թարմացում, առողջացում («նորե զիս»):

Տե՛ս նաև № 89գ ծանոթագրությունը:

90բ. ԷԱԺՋ խորագրված է «Կոծոծը լավացնելու աղոթք»:

ՀԱԲԱ բանահավաք Բենսեի (Ս. Մովսիսյան) ծանուցմամբ՝ «Գորտնուկը կամ կոծիծը անհետացնելու համար առնում են կոծիծների թվով գարի, թաղում կամ թոնիրի կողքին կամ տան տանիքում, ապա կոծիծ ունեցողին լուսինը ցույց տալով՝ ասում են» այս աղոթքը:

90գ. Բանահավաք Արտ. Շահինյանի ծանուցմամբ՝ «Լուսին նոր ժամանակ տեսնելիս՝ գորտնուկ ցավ ունեցողներ հետևյալ խոսքերով դիմում են նրան (լուսնին)»:

90դ. Խորագրված է «Գորտնուկի աղոթք»:

Աղոթքին կից ծանուցված է. «Երեք անգամ կրկնել լուսնի լրման ժամանակ»: Այս ծանուցման մեջ բացահայտ վրիպակ կա: Թե աղոթքի բնագիրը, թե գորտնուկի բուժման ժամանակը միշտ նորալուսնի հետ է կապվում: Լուսնի լրումը՝ լիալուսինն է, մինչդեռ խոսքը գնում է նորալուսնի մասին:

Աղոթքի առաջին երեք տողերը սերում են լուսնին նվիրված աղոթքներից (տե՛ս № 448ա-դ ծանոթագրությունները) և եկել հարակցվել են գորտնուկի հմայական բանաձևերին՝ լուսնային թեմայի նույնության պատճառով:

91. Խորագրված է «Աղոթք գորտնուկի»:

Աղոթքին կցված է հետևյալ ծանուցումը. «Լուսնի նորին մատը դնում են գորտնուկի վրա և յոթն անգամ ասում»:

Բերված բանածնը բնույթով հմայական աղոթք չէ, այլ նորալուսնին նվիրված մանկական պատկերավոր երգ, որը հավանաբար երեխաների կողմից է ասվել, իբրև գորտնուկի բուժման աղոթք՝ լուսնային թեմայի ընդհանրության պատճառով:

92ա. Խորագրված է «Նոր դիպչելու (առնելու) աղոթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Երբ երեխան առաջին անգամ «Նուրու կառնի»,- շրթունքների վրա վերքեր են գոյանում, այնպես, որ չի կարողանում ծիծ ուտել, լուսնի նորին մայրը վերցնում է երեխային և լուսինը ցույց տալով ասում» սույն աղոթքը:

Նորալուսինը ժողովրդական հավատալիքներով մանկական *նորենցք* կոչված հիվանդության հարուցիչն է: Այն կանխելու համար նորալուսնածն մետաղե հուռութք էին դարբնին պատրաստել տալիս և կախում մանուկների վզից:

Սույն աղոթքն ուղղված է այդ հիվանդության բուժման նպատակին: Աղոթքում նորալուսինը, ըստ հավատալիքի, դիտված է նորածին, նորամանուկ, որ ծերացել, գնացել է, ապա վերադարձել նորածին տղայի տեսքով: Ուստի աղոթողը դիմելով նորալուսին - մանկանը՝ համոզում է, որ իր զավակն էլ նորամանուկ տղա է, հետևաբար տղան տղայից չպետք է վախենա (մանրամասները տե՛ս Լուսնի աղոթքներում):

92բ. Խորագրված է «Նորենցքի»:

Բանահավաք՝ Ա. Սահակյան, գրառված է 1969 թ. բանահյուսական արշավախմբում:

Բանասաց՝ Մկրտչյան Արշակ Մարտիրոսի, ծնվ. 1890 թ.: Աղոթքին նախորդել է «Հայր մեր» տերունական աղոթքը:

Տե՛ս № 92ա ծանոթագրությունը:

93. Խորագրված է «Օձիկի աղոթք»:

Օձիկը վերք է: Ձեյթունում, երբ այն նոր է գոյանում, ախտորոշելու համար վերցնում են «Ուձքոր» (օձքար) անունով քարը (օձամորթի գույնի հանքաքար՝ մագնեզիումի սիլիկատ, որը լավ հղկվում է), դնում վերքի վրա. եթե կպչում է վերքին, ուրեմն վերքն օձիկ է: Բուժելու համար մայրի ծառի կեղևը ծեծում են, խառնում մածնի հետ, վերքը ճեղքում և դնում վրան [տե՛ս ԱՈՒ, 95. **Աղայան 1976,** 1589]:

Բացառությամբ վերջին տողի՝ աղոթքի մնացած բոլոր տողերում առկա են **ս** բաղաձայնի, մասամբ և **սև** բառի պարբերական կրկնություններ, որոնք աղոթքի իմաստին համապատասխան՝ առաջ են բերում օձի սուլոցին նմանվող բաղաձայնութային հնչյունախաղ, որ առհասարակ բնորոշ է ծիսահմայական բնագրերին:

Աղոթքում հանդես է գալիս սուրբ Կարապետը, որ բնութագրվում է «բժշկապետ» մակդիրով, իբրև հիվանդությունն անձնավորած սև օձի հակառակորդ, և սրով կտրում է օձի գլուխը: Այս արարքի մեջ դրսևորվել է սուրբ Կարապետի, իբրև ամպրոպային աստվածության քրիստոնեական վերամարմնավորման առասպելաբանական հին գործառույթներից ամենաբնորոշը՝ օձասպանությունը կամ վիշապամարտությունը [հմմտ, **Հարությունյան 2000**]:

94. Խորագրված է «Աղօթք օձիկի»:

Ըստ բանահավաքի հաղորդման՝ արտագրված է միջնադարյան բժշկարանից:

Աղոթքին կցված է նաև գրչի հետևյալ ծանուցումը. «Թէ զայս ասես՝ զլեզուտ խած և մի զրուցեր, զմեղուն բռնես՝ չխայթէ զքեզ»: Սա վկայում է, որ աղոթքն ասվել է նաև մեղվի խայթոցից պաշտպանվելու համար:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքի հիմքում ընկած է Գրիգոր Լուսավորչին օձերով ու կարիճներով լի Խոր

Վիրապում բանտարկելու ավանդական զրույցը: Բանտարկության նպատակն այն էր, որպեսզի Գրիգորը «անդէն իսկ միանգամայն օձից լիցի կերակուր» [**Ագաթանգեղոս 1983,** 136]: Սակայն, ըստ քրիստոնեական լեգենդի՝ տասներեք տարի նա Խոր Վիրապում իր դավանած հավատքի շնորհիվ մնում է անվնաս:

Իսկ ըստ ժողովրդական ավանդության, որի ցայտուն արտահայտություններից մեկն էլ այս աղոթքն է, սուրբ Գրիգորը իր հմայական զորությամբ կապում է խայթոցավոր կարիճներին ու թունավոր օձերին, որպեսզի նրանք չկարողանան ոչ իրենց տեղից շարժվել, ոչ բազմանալ և ոչ էլ իրենց տեղն ապականել:

95. Խորագրված է «Յամանի աղոթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ **յամանը** անասունների փորի տակ տարածվող ուռուցքն է: Աղոթքն ասելիս՝ սառը ջուր են քսում ուռուցքին, սպիտակ դրամով շուրջը գծում և վրան խաչ քաշում:

Ասվում է յոթ անգամ:

Աղոթքը կառուցված է պարզ համեմատության սկզբունքով: Յամանի գրեթե բոլոր աղոթքներում վերքը կամ ուռուցքը համեմատվում է մեռելի հետ, որի համանմանությամբ ցանկացվում է մեռած տեսնել ուռուցքը: Տե՛ս հաջորդ աղոթքները:

96. Խորագրված է «Յամանի աղոթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Այս աղոթքը երեք անգամ են ասում և ամեն մի ասելուց հետո՝ յարի չորս կողմը սպիտակ փող քսում»:

97. Խորագրված է «Յամանի աղոթք»:

Տողատումը կազմողինն է:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «այս աղոթքը յոթ անգամ են ասում հետն էլ սպիտակ փողով յարի շուրջը քսում. ամեն ասելու վերջը երեք անգամ քքում են գետնին: Աղոթելուց հետո սպիտակ փողը յարի վրա են դնում և մի քիչ ժամանակ պահում»:

98. Խորագրված է «Աղոթք յամանի (կենդանիների Рожа)»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Մի արծաթե դրամ դնելով վերքի վրա կամ քսելով նրա շուրջը և կամ դանակով խաչակնքելով՝ յոթն անգամ ասում են այս աղոթքը»:

Յամանի բերված բոլոր աղոթքներին ուղեկցող համանմանման բուժական արարողությունները վկայում են, որ տվյալ ցավի բուժման հիմնական բուժամիջոցը արծաթն է կամ արծաթախառն սպիտակ մետաղի համածուլվածքը:

Աղոթքը բաղադրված է նմանահունչ մի քանի բառերից, որոնց իմաստն անհասկանալի է:

99ա. Խորագրված է «Աղոթք բեդնի յարայի (Рожа)»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Երբ երեսի վրա մանր բշտիկներ են դուրս գալիս, մի դանակ քսելով վերքին՝ 7 անգամ շշնջում են» վերոհիշյալ աղոթքը:

Աղոթքն ուշագրավ է իր հորինվածքով. սկզբից կոչականով հարց է ուղղվում հիվանդությանն իբրև կենդանի էակի՝ նրա բուժամիջոցի մասին, որին հետևում է պատասխանը՝ դեղերի թվարկումով: Աղոթքը եզրափակվում է բուժարարի հմայական

հավաստիացմամբ, որով համայն աշխարհի վրա սահմանվում է հիվանդության բուժումը:

Աղոթքը բուժամիջոցների թվարկումով վերածվել է տվյալ հիվանդության յուրատեսակ դեղատոմսի:

99բ. Խորագրված է «Բեդնի յարի աղոթք»:

Աղոթքին կցված է բանահավաք Գրիգոր քահանա Երզնկյանի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը երեք անգամ են ասում և յուրաքանչյուր ասելու վերջը՝ երեք անգամ թքում: Սորա համար հարկավոր է անուշահամեմը, սխտորը, սառը շաքարը և օթիսը իրար հետ խառնել, ծեծել և ապա դնել յարի վրա»:

Տողատումը կազմողինն է:

99գ. Խորագրված է «Բեդնի յարի աղոթք»:

Գրառման վայրը չի նշված:

Բանահավաքը ծանուցում է, թե այս աղոթքը «երեք անգամ ասեցեք և էդ բոլորը խարնեցեք ու քսեցեք»: Այսինքն՝ աղոթքում թվարկած բուժամիջոցներն ամբողջությամբ նույնական են տվյալ վերքի բուն դեղամիջոցներին:

99դ. Խորագրված է «Աղոթք բեդնի յարայի (Рожа)»:

Աղոթքը կառուցված է երեք հարց ու պատասխանների վրա, ընդ որում յուրաքանչյուր պատասխան համապատասխանում է մեկ դեղամիջոցի: Աղոթքի երկրորդ տողը՝ գոգրի (դդումի) ծաղիկ, իր բուն տեղից խախտվել է ու դրվել հարցի մեջ: Մինչդեռ այն դեղամիջոց է և պետք է լիներ պատասխաններից մեկի մեջ (հմմտ. նախորդ տարբերակները): Հետևաբար՝ բուն աղոթքը ենթադրում է չորս հարց ու պատասխան:

99ե. Խորագրված է «Բեդնի յարի աղոթք»:

Բանահավաքի ծանուցման մեջ նշված է, որ վերքի առաջին դեղը անհալ մեղրն է, որ քսում են մորու թերի վրա և դնում վերքին: Դարձյալ, ուրեմն, բուժամիջոցների ստույգ անվանում բուժաղոթքում:

Աղոթքի կոչականով դիմումը աննշանավորված հիվանդությանը, հարց ու պատասխանները, իսկ այս տարբերակում նաև հիվանդությանն ուղղված սպառնալիքը («Քլունգով կը քանդեմ, /Բահով կը ճղեմ»), այս տիպի աղոթքները մոտեցնում, անգամ նույնացնում են իրենց երդմնեցուցական բանաձևերին, որոնցով երդվեցվում, խոստովանեցվում են չար ոգիները, որպեսզի նրանք այլևս չմերձենան աստծո արարածներին կամ էլ հայտնեն հիվանդության բուժման միջոցները:

100. Խորագրված է «Կարմիր քամու աղոթք»:

Բանահավաքը առաջ է բերել նաև սույն աղոթքի թուրքերեն հետևյալ տարբերակը.

Աղ ել, կարա ել, կրմըզի ել.
Բալթայինան ազբաշընընա,
Բի ախինան քյաս բաշընա:

101. Խորագրված է «Կերցավի աղոթք»:

Արտագրված է հին ձեռագրից:

Աղոթքին կից ծանուցված է. «Սույն աղոթքը գրել ծվի վերա և պահել առաստաղում»:

102. Խորագրված է «Աղօթք դեղնութեան»:

Արտագրված է հին բժշկարանից:

Տողատումը կազմողինն է:

Հիվանդության գունային կերպն ու անվանումը (դեղնություն) հիմք է ծառայել աղոթքի գունային կերպավորման: Աղոթքում գերիշխում է այնտեղ հանդես եկող բոլոր առարկաներին վերադրված դեղին մակդիրի պարբերական կրկնությունը (դեղին գետ, դեղին փայտ, դեղին ծագ, դեղին բուն, դեղին հավկիթ), որը ձևաիմաստային ամբողջականություն է հաղորդել հմայական բանաձևին:

Հիվանդության հարուցումն ու բուժումը դիտվել է դրանք խորհրդանշող առարկաների շարժման գործընթաց (հոսող դեղին գետը իր հետ բերում է դեղին փայտ, որի վրա գալիս նստում է ծագը, բույն շինում, ձու ածում, ապա բնից թռչում, հեռանում): Հիվանդության հարուցումը ըմբռնվել է իբրև թռչնի բնավորում ու ծվադրում (հմմտ. «էկավ բուն դրեց, ծագ հանեց» ժողովրդական դարձվածը, որ նշանակում է գալ տնավորվել, հիմնավորվել, բնակվել): Մինչդեռ հիվանդության բուժումը խորհրդանշվել է ծագի կողմից բույնը թողնելու և թռչելու պատկերով (հմմտ. մարմինը՝ բույն և հոգին՝ թռչուն պատկերացումը, արտահայտված հանելուկներում, երբ թռչունը թողնում է բույնը, այն ավերվում է, հակառակ սույն աղոթքի պատկերացմանը) [տե՛ս **Հարությունյան 1965,** №1968-1972]:

103. Խորագրված է «Ճումի աղոթք»:

ՀԱԲԱ տարբերակի բանասացն է խոտրջրեցի 60 տարեկան Արսեն Քելեկյանը, բանահավաքը՝ Գեղամ Թարվերդյանը, գրառված է հավանաբար 1936 թ.:

ԵԱ տարբերակին կցված է բանահավաքի հետևյալ ծանոթությունը. «Սույն աղոթքը երեք անգամ կը կրկնեն, հիվանդին ցավուն տեղը տրորելով, միայն թե կրկնած ժամանակ կանանչ տերեպ, կարմիր տերեպ, կապույտ տերեպ կը զուրցեն»: Ուրեմն, աղոթքը երեք անգամ ասելիս՝ երկրորդ տողի «կանանչ տերև» բառակապակցության «կանանչ» մակդիրը երկրորդ անգամ ասվում է «կարմիր», իսկ երրորդ անգամ՝ «կապույտ»: Այսինքն՝ սրբազան բուժամիջոցը երկնքից անցնող հավքի կողմից ծովից բերված երեք գույնի՝ կանաչ, կարմիր, կապույտ տերևներն են: Դրանք ներկայացված են աղոթքի առաջին մասում: Երկրորդ մասում նկարագրվում է աղոթող հմայագործի բուժման արարողությունը (միսը՝ մսին, ջիլը՝ ջլին, ոսկորը՝ ոսկորին դնել, քարը վերցնել և վար դնել):

Եվ վերջին եզրափակիչ մասը՝ աղոթող հմայագործի դիմումն է տիրոջը՝ աստծուն, որից աղերսվում է հիվանդության վերջնական բուժումը:

Այլ կերպ ասած՝ սույն աղոթքի հորինվածքում արտահայտված են հին բժշկության երեք հիմնական հայեցակետերը՝ սրբազան բուժամիջոց, բուժողի բուժման արարողություն և աստվածային միջամտություն:

Աղոթքի այս և հաջորդ տարբերակներում առկա բուժման մոտիվաշարը՝ միսը մսին դնել, ջիլը ջլին դնել, ոսկորը ոսկորին դնել, վրան թքել և այլն, հնության խոր

կնիք է կրում և հանգում է հնդեվրոպական հնության ժամանակներին:

Հին գերմանական (մերզեբուրգյան) մի հմայական աղոթքում ասվում է.

bốn zi bốna, bluot zi bluota
Lid zi gilidin, sɨse gelimida sin.
«Ոսկրը ոսկրին, արյունը արյանը,
Ջիլը ջլին թող միանան (կպչեն)»:

Սրա առավել վաղ տարբերակն առկա է հին հնդկական մի բուժաղոթքում, հետևյալ ձևով.

«Թող միանա ոսկրածուծը ոսկրածուծին,
Եվ թող միանա ջիլը ջլին,
Ինչ որ քո մսի վրայից է անցնում,
Եվ ինչ որ քո ոսկրից է աճում.
Ոսկրածուծը ոսկրածուծին թող միանա,
Մաշկը մաշկին թող բարծրանա»:

[տե՛ս **Schnaeder 1968**, 78/84]

Այս աղոթքներում, որոնց ձայնակցում են նաև հայկական սույն աղոթքի տարբերակները, գերմանացի հետազոտող Անդրեաս Հոյսլերի կարծիքով՝ «վաղ հնդգերմանական (իմա՝ հնդեվրոպական - Ս. Հ.) բանաստեղծության վերապրուկ է»:

Սույն աղոթքի հին տարբերակներից մեկը առկա է միջնադարյան ձեռագրերում հետևյալ տեսքով.

Աղոթք միս հանկուրցի

Վասն մսահատի գ անգամ ասա՛. միսն ի մսէն, ոսկորն յոսկորէն, արծակ[եցաւ] մսահանգուրցն ի միջացաւէն. ծովն ծփաց ծիծաղեցաւ, գետինն պատառեցաւ... արծակեցաւ մսահանգուրցն միջացաւէն: Ապա ամեն անգամ ասելոյդ ձեռքդ ցաւած տեղն մերսէ, բու՛ք և ասա. Թու՛, հոտած միս[ի] հոտ կու գայ: Մսահատի ասա. Կցի՛ երկինք, կցի գետինք, կցի ծով, կցի ցամաք, կցի Գէորգին միսն բարուն: Թզով զգետինն չափէ՛ եւ չափելն ասա գ անգամ, եւ եթէ մարդու անուն բերեն եւ զերեսն չտեսնես, այլ զի ասա. նոյնպէս ասա, ազատի Աստուծով:

[**Feldit** 1986, 368]

Հմմտ. №104, 105, 106 աղոթքները:

104 ա. Խորագրված է «Աղոթք մսահանգուստի»:
Տե՛ս 104բ տարբերակի ծանոթագրությունը:

104բ. Խորագրված է «Աղոթք մսահանգուստի»:
Առաջին երեք տողերում Քրիստոսի, նրա առաքյալների ու աստվածաշնչյան սրբացած անձանց շինարարական գործունեությամբ այլաբանորեն արտահայտված է հիվանդության բուժման գործընթացը: Իսկ վերջին երկտողում (նաև նախորդ տարբերակի) ներկայացված են հիվանդի տկար և առողջ վիճակները՝ հոդացավից կծկվելը (իբրև մսահանգույց) և ոտքի վրա կանգուն, ապաքինված դիրքը, որն արդյունք է աղոթքի առաջին մասում հիշատակված սրբությունների և սուրբ անձանց արարքների ազդեցության (ա տարբերակում՝ երկնային զոհաբերված կենդանու, բ տարբերակում՝ Քրիստոսի և սրբերի շինարար գործունեության):

104գ. Խորագրված է «Աղոթք մսահանգուստի»:
Տե՛ս №104բ ծանոթագրությունը:

104դ. ԺԱԲ Խորագրված է «Մարմնակապի աղոթք»:
ՀԱԲԱ՝ «Մարմնակապ»:
ՀԱԲԱ տարբերակը քաղված է «Արծագանք» թերթի 1895 թ. №44-ից: Աղոթքի 5-6 տողերում հանդես են եկել (նաև նախորդ գ տարբերակում) №103 աղոթքի հնագույն մոտիվները մսի և ոսկորի մասին, որոնք հարակցվելով «Հա՛մ առա,/ հա՛մ սառա» տողերին, ստեղծել են մրսելու հետևանքով հիվանդության հարուցման և նրա բուժման (միսը մսի, ոսկորը ոսկորի վրա դնելու հետևանքով մարմնի վերանորոգման) պատկերը: Վերջինս առավել է ամբողջականանում եզրափակիչ երկտողի հարակցմամբ:
Տե՛ս նաև 104բ ծանոթագրությունը:
Մարիամ և Մարթա, - ըստ Հովհաննու Ավետարանի՝ քույրերը Ղազարի, որին մեռած վիճակից հարություն է տալիս Քրիստոսը: Մարթան աշխատասիրության տիպար է, որն ըստ Ղուկասի՝ անընդհատ կլանված է հյուրասիրության գործերով, անգամ խնդրում է Քրիստոսին, որպեսզի վերջինս միջամտի քրոջը՝ Մարիամին, օգնի իրեն: Մինչդեռ Մարիամը՝ նստած Քրիստոսի ոտքերի մոտ, ուշադիր լսում էր նրա խոսքերը: Մարիամը հավատի խոր ընկալում ունի և նվիրում. նա նարդոսի յուղով օծում է Քրիստոսի ոտքերը և իր մազերով սրբում դրանք: [տե՛ս **Յովհաննու ԺԱ, ԺԲ, Ղուկաս, Ժ**]:

104ե. Խորագրված է «Աղոթք «մսահանգուստի»:
Այս տարբերակում առավել պարզ է դրսևորվել աղոթքի երկրորդ մասում (4-8-րդ տողեր) պատկերված հիվանդության հարուցման և բուժման նկարագրությունը, որը զուգադրվելով առաջին երեք տողերում երեք խումբ սուրբ անձանց կողմից կատարվող շինարարական գործունեության խորհրդանշական պատկերին՝ առաջ է բերել իմաստաբանական ներքին կապ աղոթքի այդ երկու մասերի միջև: Այդ կապի հանգույցն արտահայտված է «Իմ տիրոջս սուրբ կամքով/ Ամուր ցավը տեղեն քակեցի» տողերում, ուր ակնարկված է Քրիստոս տերը, որ 3-րդ տողում տաճար է կառուցում (իմա՝ կյանքի, առողջության վերակառուցման, վերաստեղծման խորհրդանիշ): Տե՛ս նաև 104բ ծանոթագրությունը:

105. Խորագրված է «Խուլիջի (ռադիկուլիտի) աղոթք»:
Բանասաց՝ Եղ. Չակայան, 75 տարեկան, գրառված է 1960 թ. Մկրտիչ Լյուլեճյանի կողմից:
Առաջին տողը քրիստոնեական օրհնաբանական բանաձև է, որով սովորաբար սկսում են քրիստոնեական արարողությունները: Ապա ներկայացված է մարդու և տիեզերքի աստվածային արարումը, որին հաջորդում է մարդու մարմնի, իբրև միկրոկոսմոսի, խաթարումը հիվանդությունից և նրա վերանորոգումն ու վերակերտումը փրկիչ աստծո որդու և Տիրամոր կողմից:
Այսինքն՝ մարդու հիվանդ մարմնի վերանորոգումն ու վերաշինումը (իմա՝ բուժումը) զուգորդված է մարդու և տիեզերքի արարմանը իբրև հավասարաձևուկակ հասկացություններ, և երկուսն էլ դիտված են որպես աստվածային արարումներ,

առասպելաբանական հին ու ընդհանրական հայացքի մի կոնկրետ դրսևորում:

106ա. Խորագրված է «Աղոթք մսահանգուստի»:

Բանահավաք՝ Ն. Նիկողոսյան, գրառված է 1940 թ.:

Ծովից բարձրացող ծառի, վրայի թռչունի, նրան անծեռք բռնելու, անդանակ մորթելու և անբերան ուտելու ավանդական պատկերին զուգորդվել է հոդացավի աղոթքներին բնորոշ բանաձևը:

106բ. Խորագրված է «Աղոթք մսահանգուստի»:

Սա նախորդ տարբերակի կառուցվածքային փոփոխակն է, ուր ծովից բարձրացող ծառի պատկերը մտել է հոդացավի բանաձևի մեջ և այն երկատել նախաբանի ու վերջաբանի:

107. Խորագրված են «Խթքի (խիթքի) աղոթք»:

Աղոթքին կցված է բանահավաք Վրեն Տաշրացու հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը մի քանի անգամ ասելով՝ տրորում են մրսած մարդու ուսերի կամ մեջքի վերա առաջացած խիթքը, մինչև որ ցրվում է: Կանայք կան, որոնց հենց ձեռքն է փրկարար դեղ հանդիսանում այդ հիվանդության»:

Աղոթքն ամբողջապես վիպական-պատմողական նկարագիր ունի և սերում է Նոր կտակարանից եկող Քրիստոսի հրաշագործ բուժման ավանդության վրա հորինված ժողովրդական զրույցներից: Դրանց ազգայնացման բնույթը երևում է թեկուզ աղոթքի վերջին երկտողից, ուր Քրիստոսը կանեփի թոկ բռնած՝ գալիս ողջունում է հայ եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորչին: «Աջն առնել» ոչ միայն նշանակում է աջ ձեռքը բռնել, այլև համբուրել, որով շեշտվել է անգամ Լուսավորչի սրբության առավելությունը Քրիստոսից:

108. Խորագրված է «Աղոթք թաթարծայի»:

Ըստ բանահավաքի ծանուցման՝ թաթարծա Կեսարիայում անվանում են «ներսի դողը, սարսուռը, չար ոգին, փորի ցավը ու ջղային հուզումները»: Աղոթողը «Աղոթքի պահում բոլորովին վերացած՝ դանակի կամ ավելի համարձակ շարժումներով կը սպառնար անունովը Քրիստոսի ու աներևույթ զորությանց»: Այս աղոթքն ասելուց հետո, աղոթողը «վերջին անգամ խաչակնքելով հիվանդի անձին վրա կը ձգեր ավելը գետին, դրան սեմին կից, որուն վրա կը ցատքեր հիվանդը, հոն ձգելով իր ցավերն ու նեղությունը: Հիվանդը ընդհանրապես իր հետ բերած կըլլար ավելը, որ կը մնար իբր վարձատրություն կատարված արարողության»:

Աղոթքը թեպետ թուրքերեն է, բայց մեջընդմեջ առկա են հայերեն կամ թուրքերեն քրիստոնեական բանաձևեր, որոնք վկայում են հայկական միջավայրում տվյալ աղոթքի տարածման և փոխակերպման մասին:

Այս երկլեզվյա աղոթքից բացի, միջնադարյան ձեռագրերում առկա են ջերմախտի բազմաթիվ աղոթքներ, որոնցից մի քանիսը դրվում են ստորև:

1. ՎԱՍՆ ՋԵՐՄԻ

Սուրբ առաքեալն Բարդողիմէոս ել ի լեառն Դատունայ, ետես անդ զդեւն ջերմոց և կամէր հալածել զնայ անդի: Եւ նայ ըստորոտ ծայնիւ ասաց ցսուրբն.

- Ձի արդ հալածես զիս աստէն. յորոց վերայ անուն սրբոյ հրեշտակապետին Միքայէլի յիշեսցի՝ հալածեցայց յանմահ: Յալածեսցի անուամբ հօր և սրբոյս պիղծս ծառայիս Աստուծոյ:

[Մատենադարան, ձեռ. 6677, 8ա (26)]

2. ԳԻՐ ՋԵՐՄԱՆ ԵՎ ԴՈՂԻ

Յանուն ամենասուրբ երրորդութեան՝
Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ.
Ակաս, Միաս, Պուռիքառես և Խիլաքիսպառ,
Հարևանց կոճ և կտուր և սարսափ.
Քեզ ասեմ, ջհուդ ջերմն,
Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուածն կենդանի,
Որ եկն և գալոց է
Եւ ի սուրբ հրեշտակապետն
Գաբրիէլ և Միքայէլ
Ռափայէլ և Սուքայէլ
Եւ ի յարոռն Աստուծոյ,
Ի գաւազանն Մովսիսի,
Ի քնարն Դաւթի,
Ի մատանին Սողոմոնի,
Ի բևեռն Քրիստոսի
Եւ ի քաղցր կաթն սուրբ կուսին:
Չար և պիղծ ջերմն և տենդ,
Չունիք հրամանն և իշխանութիւն կալ աստ,
Այլ ելեալ փախերուք ի ծառայէս Աստուծոյ:

[Մատենադարան, Ձմայիլ № 22]

3. ԳԻՐ ՎԱՍՆ ՏԵՆԴԻ

Տէր մեր Յիսուս Քրիստոս,
Անուն հրեշտակացն, որք ունին իշխանութիւն
Ի վերայ ջերմի, տենդի՝ այս է.
Խոտատագ, Աբագ, Րադա, Բարգա, Մարգա,
Դուք եք իշխանութիւն,
Հրամայեցեք ծառային Աստուծոյ Գրիգորիոն.
Երդմնեցուցանեմ զձեզ, ջերմ-տենդի,
Այն կենդանի Աստծուն և անունն սուրբ
հրեշտակացն,
Թէ հայ ես՝ երդում տամ ես անուն
Յիսուսի Քրիստոսի,
Թէ ջհուտ ես՝ երդումն տամ ձեզ Մովսէսի և
Ահարօնի տախտակն տապանակին,
Թէ կղէմիտր եք՝ երդումն տամ ես ձեզ
Բէլիարն:
Գնացեք մտեք ի տեղիս,
Մի մտանեք, որ նա դողայ և զձեզ
դողացուցանէ և ձեզ հանգուցանէ,
Թէ որ բար անցանէ նա,
Պեզարեք Ովհաննոսե, ո՛վ անօրեն չար դեւք,
Եւ զօրութեամբ փառացն Աստուծոյ
Ելե[ք] ծառայէս Աստուծոյ տիրայցու
Գրիգորիոն:
Անունն հօր,
Անուն հրեշտակացն Աստուծոյ,
Անուն սերովբէիցն և քրովբէիցն,
Անուն հրեշտակացն և հրեշտակապետացն
Գաբրիէլի, Միքայէլի Աստուծոյ
Եւ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին.
Եւ Յոհաննու Կարապետին,
Սրբոյ Ըստեփաննոսի նախավկային,
Այլ ամենայն սրբոցն Աստուծոյ
Կապի ջերմն և տենդն ծառայիս Աստուծոյ
Գրիգորիոն:

[Մատենադարան, ձեռ.. 6678, 42ա]

4. ԴԱՐՁԵԼ ՎԱՍՆ ՋԵՐՄԱՆ

Թող վասն Աստուծոյ ծառայես ջերմն,
Վասն սուրբ կուսին Մարիամայ՝
Դուն ազատես այս ջերմէս:
-Էհակթին, Հարահքաւ, Միքաւէի, Աննա,
Բարեխօսութեամբն սուրբ Աստուածածնին,
Աննուն Յիսուսի Քրիստոսի.
Սուրբ հրեշտակապետք,
Որ ունիք իշխանութիւն ի վերա ջերման՝
Գաբրիէլ, Միքայէլ, Զավայէլ, Գայիէլ,
Օգնական և պահապան ծառայիս Աստուծոյ
Մելքոնին, ամեն:

[Մատենադարան, ձեռ. 8428, 58]

Տարբերակները տե՛ս նույն ձեռագրի էջ 48-49 և ԳԲՍ, 644:

5. ԳԻՐ ՋԵՐՄԻ

Գ քղքի վերայ գրէ, ա քարի տակ դիր,
Մէկն ջուրն ձգէ և մէկն կրակն ձգէ,
Ծուխ տուր. կրակ ձգելոյն ասէ.
«-Զախմիքայ, Ամսշաքայ, Վասմիքայ,
Երդմնեցուցանեմ զձեզ Աստուածն կենդանի,
Թողէք [զ] դողն և զշողն»:
Քարի տակ դնելոյն այս է.
«-Առամայ, Խորամայ, Թարշամայ,
Դարձեալ ձեր արևուն համար
Թողէք զդողն և զշողն»:
Ջուրն ձգելոյն այս է.
«-Մակսիմանոս, Ամդիկոս, Դիոնոս,
Անտոնիոս, Կոստանդինոս, Յոհաննէս,
Հեկսակիոս, Տատիանոս, Յովհէլ հրեշտակ,
Թողէք ի բաց [զ] շողն և [զ] դողն
Ծառայիս Աստուծոյ այս անուն»:

[Մատենադարան, ձեռ.. 8428, 81/86/]

Առաջին աղոթքում ջերմը անձնավորված է դևի, մեկ այլ աղոթքում **[Բարխուդարյանց 1895,** 347] վարազի նման ժանիք ունեցող իժի, երկրորդում ջերմը բնութագրվում է ջհուդ էթնիկական մակդիրով (ննջգության և անողոքության իմաստով), երրորդում՝ տենդի ոգուն վերագրված են էթնիկական և կրոնադավանաբանական հատկանիշներ (թե հայ ես, թե ջհուդ ես, թե կղեմիտր եք): Առաջին երեք և հինգերորդ աղոթքներն ունեն երդմնեցուցական բնավորություն, իսկ չորրորդը՝ խնդրական, աղերսական: Երկրորդ աղոթքի երդվեցման աստվածաշնչյան սրբությունները (Աստծո աթոռ, Մովսեսի գավազան, Դավթի քնար, Սողոմոնի մատանի, Քրիստոսի խաչելության բևեռներ, ս. Կույսի՝ Աստվածածնի քաղցր կաթ) խիստ բնորոշ են ժողովրդական հմայական աղոթքներին:

Ուշագրավ է հատկապես 5-րդ աղոթքը: Այն ձևով և հմայական եռակի արարողություններով շատ է հնաբույր: Թեպետ հակիրճ բանաձևերով, բայց կառուցվածքով խիստ մերձենում է սեպագիր և հին աղբյուրներով վկայված քրմական աղոթքաձևերին ու հմայական արարողություններին:

Աղոթքում միևնույն հիվանդության բուժման համար կատարվում է երեք տարբեր հմայական արարողություն՝ ուղղված երեք խումբ տարբեր ոգիների, որոնք կապված են բնության երեք տարրերի՝ հրի, ջրի և քարի հետ: Ջուրն ըստ երևույթին խորհրդանշում է դողը (կապված մրսելու, դողալու գաղափարին), հուրը՝ ջերմը, տենդը (կապված տաքության, տաքությունից վառվելու գաղափարին): Այս զույգ հակադիր իրավիճակներն աղոթքում արտահայտված են «դող և շող» բառակապակցությամբ, շողն իբրև «տաքություն, ջերմություն» (հմմտ. «Ոչ կդողամ, ոչ կշողամ» առածի հետ): Իսկ քարը խորհրդանշում է ծանրությունն ու կարծրությունը, քանզի հմայագիրը քարի տակ դնելով՝ վերջինս իր ծանրությամբ ու կարծրությամբ ընդ-

միշտ արգելում է իր տակից հիվանդության դուրս բերումը:

Երեք արարողության իմաստն էլ հիվանդության ոչնչացումն է (կրակն իբրև այրող, ոչնչացնող, ջուրը՝ տանող, կորցնող, իսկ քարն էլ՝ ծածկող, արգելափակող):

Ուշագրավ օրինաչափություն է նկատվում աղոթքում բերված երեք խումբ ոգիների քանակի և անունների էթնիկական պատկանելության մեջ:

Հմայագիրը կրակը գցելիս և քարի տակ դնելիս վկայակոչված են երեքական ոգիների անուններ, իսկ ջուրը գցելիս դրանց քանակը դառնում է ինը, որ հավասարվում է երեք անգամ կատարվող արարողություններից յուրաքանչյուրում հանդես եկող երեքական ոգիների գումարին:

Կրակը գցելիս վկայակոչված ոգիների անունները (Զախմիթայ, Ամսշաթայ, Վասմիթայ) նման են իրանական անուններին, քարի տակ դնելիս վկայակոչվածները հիշեցնում են սեմական անուններ, իսկ ջուրը գցելիս վկայակոչված ինն անուններից 8-ը (բացառությամբ Հովիել հրեշտակի) բացահայտ հունա-բյուզանդական անուններ են:

109. Խորագրված են «Աղոթք դալախի (տալախի)»:

FFIII-ի բանահավաքն է Հայկ Սողոմոնյանը, գրառված է, հավանաբար, 1950-ական թթ.:

FFVI-ի բանահավաքն է Մկրտիչ Լյուլեճյանը, գրառված է 1960 թ., բանասաց Եղ. Չակայանից, 75 տարեկան:

«Լուսինը հինացավ լեռի պես, /Դալախը հալեցավ եղի պես/ Լուսին հինը, դալախին չորը» տողերից ակնհայտ է դառնում, որ փայծաղի բորբոքումը մաշկային և նյարդային այլ հիվանդությունների նման կապված է լուսնի փուլերի հետ. նորալուսնի ժամանակ բորբոքվել է, իսկ լրման ու փլման ժամանակ՝ դադարել:

110. Խորագրված է «Գոզկապի աղոթք»:

Կցված է բանահավաք Գր. Երզնկյանի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը երեք անգամ են ասում գոզկապ եղած մարդու կամ անասունի վերա և երեք անգամ գերմաստի փայտով խփում»:

111. Խորագրված է «Աղոթք միզկապի»:Նախավերջին տողը վկայում է, որ աղոթքն ասվել է անասունների միզկապության առիթով: Այդ է անուղղակի ակնարկում նաև քառասնյոթական անասունների (էշ, ջորի, ձի, ուղտ) անվանական թվարկումը:

Միզկապությունը փոխաբերվել է կանաչ տերևների հատման հետ, իբրև աճող, կենսալի գոյության ընդհատում:

Անանիա և Ազարիա՝ աստվածաշնչյան ավանդությամբ՝ իսրայելցի այն երեք մանուկներից երկուսի՝ Սեդրաքի և Աբեդնագովի եբրայական անուններն են, որոնց Նաբուգոդոնոսոր արքան իր ոսկեկուռ պատկերին չերկրպագելու համար գցում է կրակի մեջ, բայց նրանք իրենց հայրենի աստծո զորությամբ մնում են անխաթար ու անվնաս [տե՛ս **Դանիէլ Ա, Գ**]:

112ա. Խորագրված է «Գոզկապի աղոթք»:

Բանահավաք՝ Սարգիս Հարությունյան, գրառված է 1968 թ., բանասաց Անգին

Սարգսի Եղիազարյանից, ութսունն անց, անգրագետ, ծագումով Ապարանի Բլխեր գյուղից:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանոթությունը. «Աղոթողը կանգնում է հիվանդի հետևը, ասեղը բռնում աջ ձեռին, երեք անգամ խաչակնքում, երեք անգամ բքում գլխին և երեք անգամ կրկնում սույն աղոթքը, ընդ որում բավական տարբերություններով, որոնք և արտացոլում են գտել բնագրում»:

Գոզկապը (միզկապ), ինչպես ցույց է տալիս անունն ու հիվանդության իմաստը՝ իրոք կապ է, միզկապություն: Դրան նվիրված աղոթքների մեծ մասում և հմայական արարողություններում այդ իրական կապը ըմբռնվել է հենց հմայական առումով, իբրև չարի, չար ոգիների կողմից հարուցված կապք (միզարգելում), որի արձակմանն էլ նվիրված են այդ աղոթքները:

Սուրբ Կադարանոսը հավանաբար **ս. Կատարինե (Նեկտարինե)** կույսն է, որն ըստ «Վարք սրբոցի» (էջ 273-277) ծնվել է Ալեքսանդրիա քաղաքում, ապրել Մաքսենտիոս և Մաքսիմիանոս թագավորների օրոք, քրիստոնեական հավատի համար ենթարկվել բազում փորձությունների և նահատակվել: Նրա վերջին խնդրանքը աստծուն այն է եղել, որ ով իր անունը հիշի՝ ողորմություն գտնի, ցավերը բուժվեն:

112բ. Խորագրված է «Վախի աղոթք»:

Բանահավաք՝ Սարգիս Հարությունյան, գրառված է 1968 թ. բանասաց Անգին Սարգսի Եղիազարյանից, ութսունն անց, անգրագետ, ծագումով Ապարանի Բլխեր գյուղից:

Ըստ բանահավաքի ծանուցման՝ «Աղոթողը ասեղը բռնում է աջ ձեռին, երեք անգամ խաչակնքում հիվանդին և երեք անգամ կրկնում սույն աղոթքը՝ որոշ տարբերություններով: Յուրաքանչյուր անգամ աղոթքի վերջում աղոթողը բքում էր և հորանջում, որ նշան էր հիվանդին չար աչք դիպչելու:

Այս նույն աղոթքը Անգինն ասում էր չար աչքի, կարմիր քամու և ուռուցքի համար»:

Քանի որ գոզկապի դեմ ասվող նախորդ 112ա աղոթքը սույն աղոթքի տարբերակն է՝ աննշան տարբերակումներով, ուստի նկատի առնելով աղոթքի մի շարք հիվանդությունների (գոզկապ, վախ, չար աչք, կարմիր քամի, ուռուցք) համար ասվելու հանգամանքը՝ նպատակահարմար համարվեց սույն աղոթքը զետեղել իր տարբերակի կողքին, մանավանդ որ աղոթքում վախի համար բնորոշ գրեթե ոչ մի մոտիվ չկա:

Տե՛ս նաև 112ա ծանոթագրությունը:

113. Խորագիր չունի:

Կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Գիշերն անկողնում ջրվեթ անող երեխային, այս սովորությունը ետ գցել տալու համար, շալակած խփում են սենյակի չորս անկյուններին երեք շաբաթ գիշեր» և ասում այս բանածևը:

Ըստ երևույթին Թոնրի Թորոսն ու Աքսան Պողոսը տան ոգիներ են, որոնց կոչ է արվում դուրս գալ՝ արգելելու երեխայի մեզը:

114ա. Խորագրված են ԱՀ Χ՝ «Աղոթք սրտամնայի», Տաշրացի՝ «Սրտամնայի կամ մադաժուժի աղոթք»:

ԱՀ X բանահավաքի ծանուցմամբ, երբ կասկածում են թե հիվանդը սրտամնա է՝ «Դիմում են սրտամնայի աղոթքը իմացողին, և սա ջրով լի մի թասի մեջ մի ասեղ է ձգում, աջ ցուցամատը դնում վերան և հետևյալ աղոթքը յոթը անգամ կրկնելուց հետո բարձրացնում է ցուցամատը. եթե ասեղը կպած լինի մատին՝ նշանակում է, որ սրտամնա է եղած»:

Տաշրացու ծանուցմամբ՝ «Այս աղոթքը ասելով սառը ջուր են խփում սրտամնա եղածի երեսին, հրամայում են դուրս գնալ և հովումը ման գալ, գլուխը բարձր պահելով: Միևնույն ժամանակ թքու բան են ուտեցնում»:

Սպիտակ սարի տակից դուրս եկած **Ուհաննեսի** կերպարով ու ջրի հետ առնչվելու նրա գործառույթով ըստ երևույթին նկատի է առնվել Նոր կտակարանի Հովհաննես Մկրտչին, որը Հորդանան գետում մկրտում է Քրիստոսին: Աղոթքում սպիտակ գույնի պարբերական խաղարկումը եթե մի կողմից խորհրդանշում է արդարության և անբծության գաղափարը, որ բնորոշ է Հովհաննես Մկրտչին ու նրա արարքներին, ապա մյուս կողմից, առարկայական առումով սպիտակ գույնը նույնանում է աղոթքին ուղեկցող հմայական արարողության մեջ հանդես եկող առարկաների գույնին՝ թան (հավանաբար՝ սպիտակ), ջուր, ասեղ, մատ: Ընդ որում ասեղը, որ իր մատին կպած՝ աղոթողը հանում է ջրով լի թասից, սիմվոլացվել է սպիտակ ծկան պատկերով, որին աղոթքում սպիտակ ջրից, սպիտակ ձեռքով բռնում, հանում է սպիտակ Ուհաննեսը: Այլ կերպ ասած՝ աղոթքի վիպական պատկերներով խորհրդանշվել է նրան ուղեկցող հմայական արարողության ամբողջական համալիրը:

Աղոթքի երկրորդ մասը պատկերում է զոհաբերման արարողություն, ուր զոհվող կենդանին սպիտակ ծուկն է, որին անձեռ բռնում են, անդանակ մորթում, անկրակ խորովում և անախորժակ ուտում և դրանով փրկում հիվանդին («մատաժուժեն ելավ», այսինքն՝ սրտամնայից ազատվեց): Այս ժխտական բառերով ներկայացված զոհեբերությունն ու զոհաճաշակումը, ինչպես արդեն նշվել է (տե՛ս չար աչքի աղոթքների № 38ա ծանոթագրությունը) ակնարկում է տվյալ արարողության ոչ թե իրական, այլ սոսկ ծիսահմայական, խոսքային բնույթը:

Աղոթքի առաջին մասում «սպիտակ» բառի, իսկ երկրորդ մասում **ան** ժխտականով կազմված բառերի տողասկզբային պարբերական կրկնություններով ստեղծվել է յուրահատուկ հանգիտություն, որով աղոթքի առաջին մասը տաղաչափորեն անջատվել է երկրորդ մասից, իսկ երկու մասերը միասին, նմանաձայն տարբեր բառերի հակադրությամբ՝ ուժեղացրել են հմայական խոսքի տպավորությունը և առաջ բերել հնչյունական որոշակի ռիթմ:

114բ. Խորագրված է «Սրտամնա էլածի աղոթք»:

Կցված է բանահավաք Գր. Երզնկյանի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը այսպես են կատարում. վեր են առնում մի թաս ջուր, դրան աղոթում են ասեղով, երեք անգամ կրկնելով. հետո ասեղը երեք անգամ սրտամնա էլածի շլնքովն են քսում, ապա աղոթած ջուրը նրան խմեցնում»:

Տե՛ս 114ա ծանոթագրությունը:

114գ. Խորագրված է «Կերակրից զզվածի աղոթք»:

Աղոթքի վերջին տողը նկարագրված սիմվոլիկ զոհաբերության արդյունքն է, հիվանդության բուժումը, որ արտահայտվել է զոհված ծուկը չճաշակած՝ մարսելու

պատկերով: Մարսելն այստեղ նշանակում է ճաշակած ու դրանից զզված կերակուրի յուրացումը, մարսումը, իբրև հետևանք հմայական աղոթքի:

Տե՛ս 114ա ծանոթագրությունը:

115. Խորագիր չունի:

Առաջին երեք տողերում առկա են նախորդ աղոթքի տարբերակախմբի մի քանի մոտիվներ (սպիտակ անձ, սպիտակ ծով): Այդ տարբերակների սպիտակ Հովհաննեսին կամ սպիտակ ալևորին սույն աղոթքում փոխարինել է սուրբ Ստեփանոս Նախավկան, որ դարձյալ սպիտակ է և ունի սպիտակ ձի և դարձյալ հավաստում սրտամնայի աղոթքներում հանդես եկող սպիտակ անձի սրբությունը: Տե՛ս նաև 114ա ծանոթագրությունը:

Աղոթքի հաջորդ երեք տողերը կալի, խրձի և խրձից հատիկ պակասելու մասին ակնահատի (տե՛ս № 61ա-դ) աղոթքների համապատասխան տողերն են՝ փոքր-ինչ ձևափոխված և հարակցված սպիտակ անձի մոտիվաշարին: Նախավերջին տողը («Ասեղը երկաթ, ջուրը պողպատ») սրտամնայի աղոթքներին ուղեկցող ասեղով և ջրով կատարվող հմայական արարողության ակնարկումն է, որը և հենց հիվանդության բուժամիջոցն է՝ վկայված վերջին տողով («Սրտի կպած, պոկ արի»):

116ա. Խորագրված է «Մադաժաժի աղոթք»:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Վաղարշապատում, երբ մեկը զզվում է, մադաժաժ լինում որևէ կերակուրից, պառավ կանայք այս աղոթքով հեռացնում են այդ զզվանքը: Աղոթքից առաջ մի բաժակ ջուր են լցնում և ասեղի ծայրը ջրի մեջ դնելով՝ ասում այս աղոթքը. երբ ավարտվում է աղոթքը, բաժակի ջուրը տալիս են հիվանդին խմելու»:

Աղոթքում հանդես է գալիս ծովից բարձրացող ծառի պատկերը, որը խորհրդանշում է Տիեզերքի հնագույն տարածված պատկերացումը (տես չար աչքի № 38ա աղոթքի ծանոթագրությունը) և հաճախ է հանդիպում տարբեր աղոթքների բնագրերում (տե՛ս չար աչքի № 38ա-է, 51 աղոթքները):

Այստեղ դրսևորվել է նաև տիեզերական ծովի (աշխարհը շրջապատող օդային և ջրային տարերքի, այդ թվում երկնքի կամ երկնային ծովի) հնավանդ ծիրանագույն պատկերացումը (հմմտ. Վահագնի երգի «երկնէր և զծովն ծիրանի» բանատողի հետ): Աղոթքում «ծիրանի» մակդիրը ոչ միայն ծովին է վերադրված, այլև այնտեղ հանդես եկող առարկայական ամբողջ համալիրին (ծովի, ծառի, ճյուղերի, բնի, թռչնաձագի), որով գունային միասնականություն է ստեղծվել բոլոր առարկաների միջև: Գունայինից բացի, ծիրանի բառի հնգապատիկ կրկնությունները տողավերջին, առաջ են բերել նաև հնչյունական միասնություն՝ համահնչունություն կամ հանգակցություն աղոթքի առաջին հինգ տողերի միջև՝ շեշտելով տվյալ բառի գերակայությունը: Վերջինս դրսևորվել է նաև տվյալ բառասկզբի ծ բաղաձայնով և հնչյունաբանորեն նրան նմանվող ճ հնչյունով սկսվող տարբեր բառերի (ծով, ծառ, ճուղք, ճուտ) կրկնություններում, որոնցով հնչյունաերաժշտական միասնական ձևավորում է ստացել աղոթքի առաջին հնգատող հատվածը: Հնչյունանմանության (ալիտերացիա) վրա հիմնված տարբեր բառերի այս հնչյունախաղերը հին ծիսաառասպելական բնագրերի լեզվին յուրահատուկ բանաստեղծական հատկանիշ են և վկայում են տվյալ բնագրի խոր հնությունը: Իսկ աղոթքում հանդես եկող բոլոր առարկաների

բառային միավանկ կազմությունը (ծով, ծառ, ճուղք, ճուտ, բուն) դարձյալ արդյունք է միավանկ բառերի միտումնավոր ընտրության (վերջինս առկա է հնից վկայված ծիսաառասպելաբանական այլ բնագրերում ևս, հմմտ., օրինակ, «Ահա ծփայ նաւն ի ծովուն» միջնադարյան ծիսերգը):

116բ. Խորագրված է «Սըրտըմայի աղոթք»:

Ծ բաղաձայնի խաղացկուն հնչյունական կրկնություններն առկա են նաև սույն տարբերակում (տե՛ս 116ա ծանոթագրությունը): Աղոթքի վերջին տողերը պատկերում են հիվանդության ախտորոշումը («Աս մարդը սըրտըմավ ա») և բուժումը, որ կատարվել է հավանաբար կուժի գլխին դրված կապույտ ամանի մեջ ջուր լցնելով և ասեղ գցելով (հմմտ. 114բ ծանոթագրությունը): Այդ փաստն առավել պարզ ու հստակ է դրսևորված հաջորդ 116գ տարբերակի վերջին տողերում (տե՛ս):

116գ. Խորագրված է «Սըրտըմայի աղոթք»:

Վերջին երկտողում հռետորական հարցումով առաջադրված է սրտամնայի դեղը (իմա՝ բուժումը), որ է կժի գլուխը (իմա՝ աման), պողպատե ասեղը (հավանաբար գցած ջրով լի ամանի մեջ) և երկաթե (=ամուր, կարծր) քարը:

Տե՛ս նաև 116ա, բ ծանոթագրությունները:

116դ. Խորագրված է «Սրտամնա էլածի աղոթք»:

Գրառումը բանահավաք Գր. Երզնկյանի:

Աղոթքին կցված է Տ. Նավասարդյանի հետևյալ ծանուցումը. «Սույն աղոթքը ասելիս վարվում են նույնպես, ինչպես հիշատակված էր մեր ժողովածու 7-րդ գրքի հավելվածում, երես 133, աղոթք № 1»: Նկատի ունի իր «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի VII գիրքը:

Նավասարդյանի մատնանշած աղոթքը զետեղված է սույն համահավաքի 114բ համարի տակ (տե՛ս ծանոթագրությունը):

Տողատումը կազմողինն է:

117ա. Խորագրված է «Եղվածի աղոթք»:

«Եղվածը» հավանաբար յուղալի կերակուրից խոցված կամ զզվածն է: Կցված է բանահավաք Գրիգորիս Երզնկյանի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը երեք անգամ են ասում մի բաս ջրի վերա և ապա ջուրն եղվածին խմեցնում»:

Աղոթքը թուրքերեն աղավաղված բառախաղ է: Հմմտ. նաև հաջորդ տարբերակի առաջին երեք տողերի հետ:

117բ. Խորագրված է «Աղոթք սրտամնայի»:

Կցված է բանահավաքի սույն ծանուցումը. «Երբ <...> որոշում են, որ հիվանդությունը սրտամնա է, մի քանի առավոտ հետևյալ աղոթքը շշնջալով մի գավաթ ջրի վրա՝ մի քիչ շաղ են տալիս երեսին, մնացածը խմեցնում, խորհուրդ տալով, որ թթու բաներ ուտի և զբոսնի գլուխն բարձր բռնած»:

Աղոթքի վերջին երկտողն ըստ երևույթին հմայական արարողության մեջ կիրառվող ջրամանն է ակնարկում:

118. Խորագրված է «Աղոթք թունավորվածի վրա»:

Սև օձը կթելու, մակարդելու, մածունը հիվանդին կերցնելու մոտիվը, տե՛ս չար աչքի (№№ 11գ, 14, 15, 16, 17, 35ե, ժա, 38բ, գ) և այլ աղոթքներում (№ 71):

Մայրամը եթե թունավորվածի անունը չէ, ապա հավանաբար Տիրամոր անունն է, իբրև բուժող սրբություն:

119. Խորագրված է «Հիվանդի աղոթք»:

Հիվանդության անունը թեպետ որոշակի չի նշված, բայց քանի որ տիպաբանորեն մասամբ հարում է 118ա աղոթքին, պայմանականորեն տեղադրվում է նրա կողքին:

Աղոթքին կցված է բանասացի հետևյալ ծանուցումը. «Իդա աղոթքը գասիս, լուցգին գըքսիս ծուրին մեչը»:

120. Խորագիր չունի և չի նշված, թե ինչ հիվանդության համար է ասվել: Ելնելով «թալալոց» բառի առկայությունից՝ ենթադրաբար համարվում է թալկանալու դեմ ուղղված աղոթք և պայմանականորեն դրվում այդ հիվանդության տակ:

Թալալել բարբառներում նշանակում է «թալկանալ, ուշաթափվել, նվաղել, թուլանալ»: **Թալալոց** որոշ բարբառներում մանկական հիվանդություն է, երբ երեխան դեղնում, ուշագնաց է լինում, ատամները կափկափում, շնչահեղձ լինում: Ժողովրդական ծիսական կենցաղում մեծ պասի առաջին կիրակին կոչվում էր «Թալալոցի կիրակի»: Մայրերը այդ կիրակին նշում էին հատուկ արարողություններով, որպեսզի երեխաներին զերծ պահեն նյարդային հիվանդություններից, մասնավորապես թալկանալուց, ուշագնաց լինելուց: «Թալալոց», երբեմն «ալալոց-թալալոց» միասին, բարբառներում նշանակում է նաև «փորձանք, պատահար, աղետ», որ հավանաբար թալկանալու, ուշագնաց լինելու իմաստի ընդլայնման ու ընդհանրացման արդյունք է, քանզի թալկանալն ինքնին փորձանք կամ պատահար է դիտվում:

Ինչպես երևում է աղոթքի բնագրից, թալալոցի բուժման սուրբ է համարվել Կիրակոսը (այլուրեք Ալաշկերտի ս.Կիրակոս), այլ աղոթքներում և երգերում այդ գործառույթով հանդես է գալիս նաև սուրբ Թորոսը:

Աղոթողը դիմում է թալալոցի սուրբ Կիրակոսին, խնդրում, որպեսզի բերեն իր ձիերը, հագնի և գնա հասնի նրա տաճարին: Եվ այստեղ նա դեմ է առնում քուրդ հնձվորին, որը հենց հիվանդությունն է կամ նրա հարուցողը: Աղոթողը ս. Կիրակոսի զորությամբ պատժում է նրան, աչքերը երկնքին հառած խավարեցնում, իսկ ոտքերը բևեռում, գամում երկրին, այլ կերպ ասած՝ երկնքի ու երկրի միջև կապում, վնասազերծում է նրան:

121. Խորագրված են ԱՀ XXVI «Աղոթք ննջեցյալի», «ԱՐՁԱԳԱՆՔ»՝ «Աղոթք կոխի դեմ»:

«Արձագանք»-ում աղոթքի առաջին և երկրորդ քառատողերը բերված են իբրև կոխի դեմ ուղղված երկու անկախ աղոթքներ: Այդտեղ երկու աղոթքի համար էլ ծանուցված է միևնույն արարողությունը. «Ասում են հիվանդների շորերը մեռելի առաջ երեք անգամ թափ տալիս, երբ մեռելին անց են կացնում փողոցով»:

ԱՀ XXVI ծանուցում է հետևյալը. «Ննջեցյալին տանելիս հիվանդները դուրս են գալիս իրենց տան դուռը, և պառավ կանայք դուրս են բերում սրանց շորերը և թափ

տալիս», միաժամանակ ասում սույն աղոթքը:

«Եվ այս բոլորը այն նպատակով, որ ննջեցյալը հիվանդի չոռն ու ցավը իրեն հետ տանի»:

Աղոթքում գրեթե արտացոլված է ոչ միայն նրան ուղեկցող հմայական արարողությունը, այլև մեկնաբանված է վերջինիս իմաստը: Մեռելի առջև հիվանդի շորերի թափ տալը, ինչպես վկայված է վերջին երկտողում, ըմբռնվել է իբրև հիվանդություն հարուցող չար ոգիների թոթափում՝ գետնի տակ գտնվող դժոխքի կրակների մեջ: Ավելին. աղոթքն ուղեկցվել է նաև քքելու գործողությամբ, որ թեպետ բանահավաքների ծանուցումներում չի վկայված, բայց աղոթքում երկիցս առկա է: Թքելը չարը ոչնչացնելու, վերացնելու սիմվոլիկ արարողություն է, որ ուղեկցել է անեծքներով հմայական բանաձևերին:

Աղոթքում քքելով անիծվում է մեռելը իբրև չարահարույց, ըստ սնահավատքի՝ հիվանդություն ու մահ հարուցող («Ետ երթաս, առաջ չի գաս, Տուշմնիս դուռ չի գաս», հմմտ. «Երթալդ էղնի, գալդ չեղնի» մահվան ցանկություն արտահայտող անեծքի հետ): Նույն կերպ՝ քքելով, անիծվում է նաև չար սատանան (իմա՝ հիվանդություն հարուցող չար ոգին՝ ցավը), որ կառչել է հիվանդի հագուստներից:

Այդ կերպ աղոթքն ամբողջությամբ վերածվել է մեռելի և չար ոգիների դեմ ուղղված հմայական բանադրանքի:

122. Խորագրված է «Աղոթք կոխի դեմ»:

Ըստ բանահավաքի՝ ասվում է մեռելի առջև հիվանդի շորերը երեք անգամ թափ տալիս:

Տե՛ս 121 աղոթքի ծանոթագրությունը:

Աղոթքը ոճով թեպետ փոքր-ինչ գրականացված է, բայց պահպանել է բուն իմաստը, ըստ որի մեռելակոխը դիտվել է իբրև չար ոգի, որին հրամայվում է առնել իր փորձանքն ու մեռելի հետ հեռանալ տվյալ օջախից:

123. Խորագրված է «Աղոթք կոխի դեմ»:

Ըստ բանահավաքի՝ ասվում է մեռելի առջև հիվանդի շորերը երեք անգամ թափ տալիս:

Այս քառատող աղոթքը բաղադրված է անեծքի (ուղղված չար ոգուն), օրհնանքի (ուղղված մանկան բարգավաճմանը) և խնդրանք-աղերսանքի (ուղղված Քրիստոսին ու Տիրամորը) բանաձևերից: Նպատակը չարի ոչնչացումն է, հիվանդ զավակի առողջացումն ու աստվածային հովանավորությունը:

Տե՛ս նաև 121 աղոթքի ծանոթագրությունը:

124ա. Խորագրված են **Տաշրացի՝** «Վախի աղոթք», ԱՀՀ - «Վախ բռնելու աղոթք»:

Բանահավաք Վր. Տաշրացին կատարել է հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքը երեք անգամ ասելով, նույնքան անգամ կապ են ձգում վախեցած երեխայի մոր գոտին և դնում երեխայի սնարի տակ: Ապա առավոտյան արձակում են կապերը: Նույն բանը երեք գիշեր շարունակ կրկնում են»:

Սա վկայում է, որ Տաշրացու տարբերակն էլ վախ բռնելու աղոթք է: Դեղին ծաղկի պատկերով, ըստ երևույթին, վախեցած երեխայի գույնն է խորհրդանշված, իսկ

ծաղիկը քաղելու, փնջելու, կապելու գործողություններով՝ մոր գոտու վրա հանգույցներ գցելու և արձակելու հմայական արարողությունները: Վերջին տողը՝ «Ա՛յ սիրտ տեղդ» սիրտը կրկին իր տեղը գցելու հմայական կարգադրությունն է, քանզի ժողովրդական ըմբռնմամբ՝ վախի հետևանքով սիրտը տեղաշարժ է կատարում, տեղից ելնում է, իսկ աղոթողի նպատակը այն կրկին իր տեղը գցելն է (հմմտ. «Սիրտը տեղից թռչել», «Սիրտը վեր թռչել» վախի մասին ասվող դարձվածները):

124բ. Խորագրված է «Սիրդ չափել»:

Սիրտ չափելը նույնն է «վախ չափել» կամ «վախ բռնել» բուժման հմայական արարողության հետ:

Տե՛ս 124ա ծանոթագրությունը:

125. Աղոթքը բերված է երկու գրառումներով, որոնցից մեկը չունի առաջին տողը: Մեկ գրառումը խորագրված է «Վախի», մյուսը՝ փակագծերում «Երեխի վախի ժամանակ»:

«Ասիս-Մասիս սարեր» անվանումը գալիս է միջնադարից: «Ասիս-Մասիս լեռնէն ի վար» սկզբնատողով երկու երգ կա գրառված Խաչգռուզի կողմից 17-րդ դարի սկզբներին (1608 թ.): Այդ անունը հիշատակվում է նաև ժողովրդական երկու այլ երգերում, գրառված 19-20-րդ դարերում [տե՛ս **Մնացականյան 1956**, 115-116, 464]:

Ասիս-Մասիսը հավանաբար Սիս-Մասիս (= Մեծ և Փոքր Մասիսներ) լեռների անվանումն է, որ սուրբ է գիտակցվել հայոց մեջ: Այնտեղից է իջնում, ըստ աղոթքի՝ հայրերի հայրապետը, որը ձեռին ունի հրեղեն բուրվառ՝ լուսեղեն եզրերով և նրանից տարածվող լույսով ու խնկահոտով օծում հիվանդի տունը, դուռն ու օրորոցը, որպեսզի հիվանդը զերծ մնա վախից մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը, այսինքն՝ աշխարհի վախճանը:

126ա. Խորագրված է «Վախ չափելու աղոթք»:

Կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «3 անգամ են ասում, մյուս անգամներին «կարմիր, սպիտակ» ածականներ են տալիս ձիուն և շորին»:

Ապա «Վախ չափել» ենթավերնագրի տակ հանգամանորեն ներկայացվում է բուժման այդ հմայական արարողությունը. «Երբ ցանկանում են իմանալ, թե մինի հիվանդությունը վախենալուց է առաջացել, դիմում են վախ չափող կանանց, որոնց մի որևէ սուրբ պարգևել է այդ իմանալու շնորհքը: Վախ չափող կինը մի քանի անգամ երեսը խաչակնքելով քանդում է յուր գոտին, մի ծայրը տալիս է հիվանդի ձեռքը, մյուս ծայրից ինքը ձախ ձեռքով բռնում և «վախի աղոթքներից» մինը շշնջալով՝ աջ ձեռի արմունկը դնում բռնած տեղին և դաստակը աջ ու ձախ դարձնելով մեկնում գոտու վրա. ապա ձախ ձեռով՝ առանց գոտու բռնած տեղը թողնելու՝ առաջ է բերում և բռնում գոտու այն տեղից, ուր հասել էր աջ ձեռի ցուցամատը և այս կերպ մի կանգուն ևս չափելով՝ հիվանդին բռնել է տալիս երկրորդ կանգունի հանգած տեղից: Ապա բաց է թողնում առաջի կանգունը չափելուց հետո բռնած տեղը և կրկին երկու կանգուն չափում. եթե այս անգամ «ձեռքը երկարանալով» անցնում է հիվանդի բռնած տեղից, ասել է հիվանդը վախեցել է և այնքան սաստիկ, որքան ավելի երկարանում է ձեռքը. իսկ եթե «ձեռքը կուճ գալով» չի հասնում բռնած տեղին, նշան է, որ հիվանդությունը վախից չէ առաջացել:

Հետո վախեցածին աղոթում են այսպես. վերցնում են նրա մոր գոտին, վախի աղոթքը երեք անգամ ասում, յուրաքանչյուր անգամին մի հանգույց ձգելով գոտու վրա և գիշերը դնում վախեցածի գլխի տակ»:

Ի դեպ, սույն հաղորդման վերջին հատվածը նույնանում է 124ա աղոթքի ծանոթությանը, որ պատկանում է անվանի բանահավաք Վրեն Տաշրացուն: ԱՀ X գրքում հրատարակված Ե. Լալայանի «Բորչալու գավառ» աշխատության «Կախարդություն» բաժնում զետեղված հմայական աղոթքների մի մասը իրենց ծանուցումներով, այդ թվում նաև 124ա աղոթքը, նույնանում է Վ. Տաշրացու 1887-ին «Նոր-Դար» լրագրում հրատարակած աղոթքներին: Փաստը վկայում է, որ Ե. Լալայանը Վ. Տաշրացու հրատարակած այդ նյութերը գրեթե նույնությամբ զետեղել է իր հիշյալ աշխատության մեջ:

Ինչպես սույն, այնպես էլ հմայական այլ աղոթքներում ու ծիսերգերում Հիսուսն ու Քրիստոսը հանդես են գալիս իբրև երկու տարբեր անձինք (տե՛ս նաև բ, գ, դ տարբերակները): Նրանք Մարիամ Աստվածածնի հետ միասին կազմում են ձիավոր սրբերի երրորդություն, որն ի հայտ է գալիս թե՛ վախի և թե՛, մանավանդ, ծծնդկանի (տե՛ս) աղոթքներում: Ձիավոր սրբերի այս երրորդությունը, անշուշտ անունների փոփոխությամբ, տարածված մոտիվ է ոչ միայն հայ, այլև եվրոպական շատ ժողովուրդների հմայական բուժաղոթքներում:

Սույն աղոթքում թեպետ երեք ձիավոր է հիշատակված, սակայն ակտիվ գործողությունը վերագրված է միայն մեկին, որը, ինչպես բանահավաքն է վկայում, աղոթքի եռակի կրկնության ժամանակ հանդես է գալիս երեք տարբեր գույների (սև, կարմիր, սպիտակ) ձիով ու հագուստով: Այս երեք տարբեր գույների փաստը վկայում է, որ ձիավորներից երեքն էլ մասնակից են հիվանդությունը խորհրդանշող թշնամու (դուշման) պարտությանը կամ ոչնչացմանը:

Երեք ձիավորների մոտիվը, դարձյալ կապված հիվանդության բուժման գաղափարին, արտացոլում է գտել ժողովրդական մի երգում, գրառված Վանից և բանահավաքի կողմից զետեղված «Սրբոց երգեր» շարքում: Այն բանահավաքի (Գ. Շերենց) կողմից վերնագրված է «Հիվանդի հավատք»:

Էլեյք, տեսեյք վո՞վ էկավ:
- Իրեյք ձիավոր էկավ.
Վեր քևերաց խաչմ՝ կեր,
էն խաչի տակ ծառմ՝ կեր,
Ծառի տակ ախպյուր կեր:
էն ախպրեն ծյուր վով խմեր՝
Խրեղեն խոսս....
Իմ խեր կնաց Հալբա քյաղայք՝
Արնե գեյտեր կապելու,
Մազե կարմունջ դնելու:
Որն էր արդար՝ ընցավ կնաց,
Որ մեղավոր՝ դառնիկ իլաց:
Ասաց՝ իմ մա՛ր, իմ մե՛ր, ինչի՞ կու լաս.
էն զորութեն ինչ մո քե կա.
Կաղը, կոր կ՛բժշկեմ,
Անդամալուծը քեյլըցուցեմ:

[ՀՍՍ, 67]

Այս վիպերգը, բաղադրված տարբեր մոտիվներից, շատ աղերսներ ունի ժողովրդական բուժաղոթքների հետ: Խաչակիր երեք ծիավորների խաչի հովանու տակ աճած ծառի և նրա տակից բխող աղբյուրի ջուրը կյանք և առողջություն է պարգևում: Մինչդեռ երկրորդ մասը՝ Հալբա (=Հալեպ) քաղաքի, արյան գետեր կապելու, մազե կամուրջ դնելու, վերջինիս վրայով արդարների անցնելու և մեղավորների լացի պատկերները ներկայացնում են հանդերձյալ աշխարհը, դրախտում և դժոխքում հոգիների վերջնական ապաստանման մոտիվներով,- մի պատկերացում և հավատալիք, որ հաճախ է հանդես գալիս ժողովրդական աղոթքներում:

Կյանքի և մահվան իրար հաջորդող այս պատկերները եզրափակվում են լացող մորը դիմելու և նրան իր զորությունը հիշեցնելու մոտիվով, որ հաճախադեպ է բուժաղոթքներում, մասնավորապես չար աչքի աղոթքներում, ուր Քրիստոսն է դիմում լացող Տիրամորը նույն հարցումով (հմմտ. № 35ա-ժ): Երգն ավարտվում է Քրիստոսի լավատեսական պատգամով՝ կաղին, կույրին, անդամալույծին բուժելու իր ավետարանական գործունեության հավաստիացմամբ, որը և կազմում է սույն վիպերգի բուն նպատակը՝ սրբազան անձանց նկատմամբ հիվանդի տածած բուժման հավատը:

Սույն վիպերգը իր մոտիվների բաղադրությամբ ու նպատակներով մերձենում է հմայական բուժաղոթքների վիպական նկարագրական մասերին:

126բ. Խորագրված է «Վախ չափելու աղոթք»:

Ըստ բանահավաքի ծանուցման՝ ասվում է երեխայի վախը չափելու ժամանակ տերունական աղոթքից հետո:

Բուն աղոթքը առաջին ինը տողերն են, որոնց հարակցվել են սրբերին ու առաքյալներին բարեխոսության և օգնության կոչելու աղերսանքները:

Նախավերջին տողերում ողորմիքի բարեբանությամբ միմյանց են զուգորդվել հայ առաքելական եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորիչն ու ըստ երևույթին Հռոմի **Կոստանդին I (Մեծ) թագավորը** (272-337 թթ.), որի օրոք (313 թ.) քրիստոնեությունը կայսրության մեջ ճանաչվում է պետական կրոն, իսկ ինքը՝ իր եկեղեցաշեն գործունեության պատճառով, հայ առաքելական և ռուս ուղղափառ եկեղեցիների կողմից սրբերի դասն է դասվում:

126գ. Խորագրված է «Աղոթք վախ բռնելու»:

Կցված է բանահավաք Քաջբերունու հետևյալ ծանուցումը. «Դարալագյազի Ազատակ գյուղում պառավ կինը իր գլխածածկի (լաչակ) մի ծայրը տալիս է վախեցած երեխայի ձեռքը, մյուսն ինքը բռնած՝ երեք անգամ մոտեցնում է երեխայի սրտին և հետևյալ աղոթքներից մինն արտասանում: Կամ բամբակից պատրույգ է ոլորում երկարությամբ երեխայի գոտկից մինչև նրա քիթը և աղոթելուց հետո այրում է նորան»:

«Թազա հացի հոտ եկավ» սկզբնատողով և երեք ծիավորների մոտիվով աղոթքների տարբերակները տե՛ս ծննդկանի (№ 146ա-լզ) աղոթքների շարքում:

Մետաղե իրերը, մանավանդ երկաթը, պողպատը և այլն ժողովրդական հավատալիքներով չարխափան, չարահալած են գիտակցվել և հմայություններում օգտագործվել են իբրև պահպանության միջոցներ: Աղոթքի վերջին տողում հիշատակված պատի շուրջը շղթա գցելու արարողությունը հենց այդ չարից պահպանելու նպա-

տակն է հետապնդում, որ արտահայտված է նախավերջին տողում՝ «էլ չվախենաս սիրտն ի փորին»:

126դ. Խորագրված է «Չվախենալու աղոթք»

Աղոթքում ներկայացված պողպատե պատերով երկաթե տունը, որի դուռն են գալիս կանաչ զգեստով երեք ծիավորները, իր մետաղյա շինվածքով չար ոգիների ներգործությունից մարդուն պահպանելու այն երևակայական հմայական ապաստարանն է, ուր ցանկանում է ապաստանված տեսնել հիվանդին աղոթողը՝ երեք սուրբ ծիավորների հսկողության տակ:

Տե՛ս 126գ ծանոթագրությունը:

126ե. Խորագրված է «Սիրտ չափելու աղոթք»:

«Սիրտ չափել» նույնն է «վախ չափել»:

Տե՛ս 126 գ, դ ծանոթագրությունները:

Կազմված է «Ճրագ, ճրագ ճշմարիտ» սկզբնատողով աղոթքների, երկաթե տան և երեք ծիավորների մոտիվների բաղարկումով:

127. Խորագրված է «Աղոթք վախ բռնելու»:

Տե՛ս 126 գ ծանոթագրությունը:

Աղոթքում դիմում է արվում աստվածաշնչյան **Դանիել մարգարեին,** որին ըստ լեգենդի, բաբելացիների ամբաստանությամբ, Աստիագես թագավորը գցում է յոթ քաղցած առյուծներով բնակված գբի մեջ: Յոթ օր Դանիելը մնում է այդ հորում և Աստծո զորությունով ու հովանավորությամբ առյուծները նրան չեն դիպչում **[Դանիէլ ԺԳ,** 27-41]:

Դանիելն, ըստ լեգենդի, աղոթքում հանդես է գալիս իբրև չար գազաններ ու զեռուններ կապող-հմայող, որ դարձել է համեմատության եզր աղոթողի կողմից հմայության ավանդական միջոցներով (Սողոմոնի ձիու ձար, Աստվածածնի կաթ) վախը կալելու և կապելու արարողության:

128. Խորագրված է «Վախու աղոթք»:

8-րդ տողի հարցականը հրատարակչինն է:

Գորգսուն և **Գորգմասուն** հավանաբար հիվանդի անվան աղավաղված ձևերն են: Անհասկանալի է «եէր» բառը, եթե «մեր»-ի աղավաղումը չէ:

Աղոթքում զրույց է վարվում սուրբ անձի (գուցե ս. Սարգսի, հմմտ. առաջին տողը) հետ, որը հավանաբար ձիավոր է (հմմտ. ծննդկանի աղոթքների համապատասխան տարբերակների հետ, որտեղ նման հարցումով դիմում են սարուձոր պտտվող ձիավոր սուրբ անձանց):

129. Խորագրված է «Վախ բռնելու»:

Տե՛ս 126գ ծանոթագրությունը:

Աղոթքը պահպանական բնույթ ունի և բովանդակությամբ խիստ լավատեսական է: Կատարվում է հիվանդի անունից, որը հույսը դրել է իր ուսին, որտեղ, ըստ հավատալիքի, կանգնած հսկում է պահապան հրեշտակը: Ինքը հավատավոր է՝ աստված մտքի մեջ է, Աստվածամայրը՝ դեմքի վրա, Գաբրիել հրեշտակը, որ դարձյալ

պահապան է գիտակցվում, աջ թևի վրա է, որոնց պահպանության շնորհիվ էլ նա չի վախենում և ապահովված է զգում մինչև դատաստանի օրը՝ Քրիստոսի երկրորդ գալուստը:

130. Խորագրված է «Վախ բռնելու»:

Տե՛ս 126 գ ծանոթագրությունը:

Դարձյալ պահպանական աղոթք է վախի դեմ: Քրիստոսի խաչի յուրաքանչյուր բևեռ (մեխ) թե՛ իբրև սրածայր մետաղ և թե՛ իբրև սուրբ մասունք՝ ըմբռնվել է չարը խոցող, խափանող, չարից պահպանող միջոց:

131. Խորագրված է «Վախի աղոթք»:

Աղոթքը թեպետ փոքր ինչ աղճատված, բայց բովանդակությունն ընդհանրապես հասկանալի է:

Սուրբ Սարգիսը դիմում է կիսանինջ Մարիամ Աստվածածնին, որը պատմում է իր երազում տեսած փշե պսակի մասին (հավանաբար որդու գլխին դրված), որից նա սարսափել է: Տիրամայրը հարցնում է ս.Սարգսին նրա ով լինելը: Իմանալով այդ, նա խնդրում է ս.Սարգսին գնալ և իր ձիով ու սրով փրկել գերի ընկած մարդկանց, տվյալ դեպքում՝ վախեցածներին: Մարիամի սարսափը երազից՝ դարձել է աղոթքում վախի հիվանդագին իրադրությունը:

Տիպաբանական տարբերակները տե՛ս №№ 324, 420 ա-զ:

132. Խորագրված է «Վախեցածի աղոթք»:

Տիրամոր ծնկաչոք ողբն ու աղերսանքը ուղղված որդուն՝ Քրիստոսին, հանուն բարու կատարման և չարի խափանման, որի վրա է ամբողջապես կառուցված սույն աղոթքը, իբրև առանձին մոտիվ հանդես է գալիս հաջորդ՝ 133 աղոթքի վերջնամասում, հարակցված Քրիստոսի հարության և վերջին դատաստանի մոտիվներին:

133. Խորագրված է «Վախը բռնելու աղոթք»:

Աղոթքի առաջին 12 տողերը հմայական ավանդական աղոթքի մի ամբողջական տարբերակ է, որի վաղագույն նմուշներից մեկը վկայված է տակավին միջնադարից՝ «Հաւբալն նստեալ ի յանհուր և յանջուր և յանեղեմն դաշտին, լայր զերդ զայրի» սկզբնատողերով [տե՛ս **Ալիշան 1895,** 383]: Առավել մերձ տարբերակները առկա են բանավոր ավանդության մեջ և ասվում են գելկապի (№ 193), չար աչքի (տե՛ս № 35ա-ժզ) վերաբերյալ:

Այդ տարբերակներում սովորաբար ողբացող անձին դիմողը Քրիստոսն է:

Մինչդեռ սույն աղոթքում դիմողի անունը չի վկայված: Ելնելով աղոթքի բովանդակությունից, կարելի է ենթադրել, որ Քրիստոսի հովվին դիմողը թերևս Տիրամայրն է: Ներկա աղոթքում այդ ավանդական տարբերակին հարակցվել են Քրիստոսի հարության և վերջին դատաստանի առասպելական մոտիվները (ի դեպ, Քրիստոսի հարությունը ժամանակագրորեն շփոթվել է նաև երկրորդ գալուստի և հոգիների դատաստանի վախճանաբանական պատկերացումներին), այդ թվում նաև № 132 աղոթքում նկարագրված Տիրամոր ողբի ու աղերսանքի իրադրությունը:

134. Խորագրված է «Վախի աղոթք»:
Բանասացի, բանահավաքի, գրառման վայրի անունները չեն նշված:
Տողատումը կազմողինն է:
Հնչյունաբանական և բարբառային որոշ հատկանիշներ վկայում են, որ սույն աղոթքը գրառված է վիրահայերից: Այն իր նմանակն ու տարբերակները չունի հայ ավանդության մեջ, մինչդեռ հեռավոր կամ մերձավոր տարբերակները հանդիպում են վրացական հմայական աղոթքներում (հմմտ. **Ումիկաշվիլի 1964,** 163-164): Ավելին, սրա վրացական համառոտ տարբերակներից մեկը հայատառ վրացերենով գրառել է Գրիգորիս քահանա Երզնկյանը անցյալ դարի վերջերին Հաղպատից և կցել հայերեն թարգմանությունը, որ պահվում է Տ. Նավասարդյանի արխիվում: Ստորև դրվում է այդ գրառումը՝ բանահավաքի կից թարգմանությամբ.

Գուլո, գուլիս ալագասա,
Գուլո, դաջե՛ք ալագասա.
Կատա՞մ շագաշինա,
Գուե՞լմա շագաշինա,
Փռինվե՞լմա, անգելո՞զմա շագաշինա...
Գուլո, գուլիս ալագասա,
Գուլո, դաջե՛ք ալագասա:

Թարգմ.՝

Սի՛րտ, արի քո տեղը,
Սի՛րտ հանգստացիր.
Արդյոք կատու՞ն վախեցրեց,
Օ՞ձը վախեցրեց,
Թռչու՞նը, հրեշտա՞կը վախեցրեց...
Սի՛րտ, արի քո տեղը,
Սի՛րտ, հանգստացիր:

[ՀԱԲԱ FBI: 1189,02-1190,00]

Փաստը վկայում է, որ Լոռվա հայոց մեջ ընտանի է եղել վախի մասին ասվող վրացերեն այս աղոթքը, որի հայացած տարբերակներից մեկն էլ սույն № 134 ընդարձակ բանածնն է:

135. Խորագրված է «Տղի վախ բռնելու»:
Բանահավաքի կողմից ծանուցված է՝ «Երեք անգամ կը կրկնեն»:

136. Խորագրված է «Աղոթք ֆշտիկին»:
Բանահավաք՝ Հայկ Սողոմոնյան, գրառման ժամանակը՝ հավանաբար 1950-ական թթ.: Բանահավաքը աղոթքի տակ փակագծերում դրել է աղոթողի կողմից հիվանդ հարսի սկեսրոջն ուղղված հետևյալ խոսքերը, որոնք վերաբերում են հիվանդության բուժմանը. «Հա՛յդը, հաքա, հարսը փորին վրան շեռով լաթ արա, ծքե, ու վաղը ըռինտ կըլա»: Այսինքն՝ լաթը մեզով թրջել, դնել հարսի փորին և նա հաջորդ օրը կառողջանա:

Հիվանդության անունն անծանոթ է, ըստ երևույթին կանացի հիվանդություն է, գուցե և հղի կնոջ:

137. Խորագրված է «Անծանոթ հիվանդության վերաբերյալ սուրբ Կարապետի աղոթք»:

Տողատումը կազմողինն է:

Հիվանդությունն ախտորոշված չէ, ուստի աղոթողը դիմում է անծանոթ հիվանդությանը՝ ցավին, թվարկելով նրա մի քանի հնարավոր հարուցիչները՝ ակնահարություն, լուսնահարություն և այլն: Նորը՝ նորալուսինն է, փուլը՝ լիալուսինը:

Ինչպես այլուր, այստեղ անծանոթ ցավը ևս պնծնավորված է ըմբռնված, որին աղոթողը երդվեցնում է աստվածաշնչյան մի շարք սրբություններով (հմմտ. չար աչքի № 40 և այլ աղոթքների հետ): Աղոթքն, ամենայն հավանականությամբ, ասվել է հիվանդ երեխայի վրա, քանզի երեխաներն են նորալուսնից «զարկվում»՝ հիվանդանում, որ կոչվում է **նորենգք**: Բացի այդ, աղոթքի նախավերջին տողում հիշատակված՝ «Սուրբ Կարապետի տվուկն ա», վերաբերում է հիվանդին (երեխա), որ ծնվել է, ըստ ծիսական սովորույթի, Ս.Կարապետին ուխտի գնալու, պաս ու ծոմ պահելու, մատաղ անելու և այլն հետևանքով: Ուստի և աղոթողը ապավինում է Ս. Կարապետի զորությանը, քանի որ հիվանդը նրա շնորհած պարգևն է, հավանաբար բուժողն էլ Ս.Կարապետն է լինելու և վերջինիս ձեռքով էլ ցավը հիվանդի մարմնից պիտի դուրս գա և հեռանա:

Աղոթքը երդմնեցուցական բնույթ ունի, որ բնորոշ է միջնադարյան հմայական աղոթքներին:

Սույն աղոթքի վրա, թեպետ և ժողովրդական, առհասարակ նկատելի է գրքային և կրոնական ազդեցություն, որ երևում է թեկուզ օրհնաբանական սկզբնամասից և «Հայր մեր» տերունական աղոթքից: Բանահավաքի ծանուցումից պարզվում է, որ աղոթքը գրի է առնված քահանայի այրի Ասլի Մելիքյանից, որը տեսել է յոթ քահանաների օծում, իսկ ամուսինը՝ Տեր Ղուկաս քահանան, եղել է նշանավոր աղոթող և հիվանդներ բուժող: Ամուսնու մահից հետո է միայն Ասլին իրավունք ստացել աղոթքով հիվանդներ բուժելու:

138. Խորագրված է «Գիր ամենայն ցեղ ցաւոց բժշկութեան»:

Տողատումը կազմողինն է:

Նախորդ բանավոր աղոթքի հեռավոր տարբերակն է: Աղոթքի առաջին երկու բառերը՝ «ահ է զարիայ» ըստ երևույթին պարսկաարաբական ահու, «արատ, հիվանդություն» և զար կամ զայեր «վնասակար, չարաղետ» բառերն են, որոնք նշանակում են չարաղետ արատներ կամ հիվանդություններ: Հետևաբար, աղոթքի առաջին տողը պետք է հասկանալ այսպես. չարաղետ հիվանդությունները պատել են կապույտ և կարմիր ծովերը: Իսկ այդ ծովերը, հավանաբար, խորհրդանշում են տիեզերական տարածքը՝ երկիրն ու երկինքը (հմմտ. «երկինքն է ծով ծիրանի» ժողովրդական ըմբռնման հետ, որ գալիս է հնից՝ Վահագնի երգից):

Այս կերպ՝ աղոթքի առաջին տողը ներկայացնում է տիեզերական տարածքը տարբեր վնասակար հիվանդություններով բռնված լինելու իրադրությունը, որ երևում է նաև հաջորդ տողերում տարբեր և բազմապիսի հիվանդությունների թվարկումից: Ի դեպ, թվարկված հիվանդությունների քանակը հասնում է 12-ի (խիթք,

տենդ, ջերմ, գլխացավ, աչքացավ, սրտացավ, ոսկրացավ, տուբմա, ղոլինջ, քամի, դեղնացավ, չարոց-դիվոց=դիվահարություն), որը ոչ միայն ուշագրավ է իր քանակական ցուցանիշով (12-ն իբրև տիեզերաժամանակային թիվ, հմմտ. երկնային 12 կենդանակերպ համաստեղությունների թվի և յուրաքանչյուրից սպասվող հիվանդության ախտարային հավատալիքի, տարվա ամիսների քանակի և այլնի հետ), այլև այնու, որ միջնադարյան ժողովրդական բժշկագիտական ըմբռնումներն ըստ երևույթին, հիմնականում հիվանդությունների այդ անուններով ու թվով են սահմանափակվել (հարկավ, ոչ բացարձակ իմաստով):

Այդ 12 հիվանդությունների անուններից զատ, աղոթքում հիշատակված են նաև հիվանդությունների հարուցման ժամանակային պահերը՝ չար օր և չար սհաթ (ժամ), որ դարձյալ ախտարական հավատալիքներից է գալիս:

Աղոթքում անվանված բոլոր հիվանդություններն ըմբռնվել են աննձնավորված, իբրև կենդանի ոգիներ, որոնց երդվեցնում է հմայողը («Թէ զինչ ազգ ցաւ որ իցես, երդումեցուցանեմ զքեզ»)՝ նրանց հալածելու, հիվանդից հեռացնելու, չքացնելու միտումով:

139. Խորագրված է «Աղոթք»:

Գրառված է 1950-ական թթ. կամ հետո, գրառող՝ Հայկ Սողոմոնյան:

Ընդհանուր բնույթի բուժաղոթք է, որի առանձին մոտիվները հանդիպում են չար աչքի №№ 35 բ, զ, է, ժա, ժգ, ժե, ժզ, 37 ե, 38 ա, զ, 39ա-գ, 40 աղոթքներում:

140. Խորագիր չունի: Բանահավաքի ծանուցմամբ՝ աղոթքն ասվում է մոմ թափելով գուշակություն անելիս, հավանաբար հիվանդության բնույթը պարզելու համար: Աղոթքում թեպետ դիմում է արվում տարբեր սրբերի և սրբությունների, բայց աղոթողի խոսքն ուղղված է հիմնականում սուրբ Կարապետին, որից, ըստ բանահավաքի ծանուցման, իր կախարդողի և բուժողի շնորհքն էր ստացել աղոթող՝ նորբայազետցի Մոմճոնց Սալիկ պառավը:

Սուրբ Կարապետը նորկտակարանյան Հովհաննես Մկրտչի մակդիրներից մեկն է, որ հայ քրիստոնեական ավանդության մեջ զործածվում է իբրև առանձին սրբանուն՝ զուգահեռ ս. Հովհաննեսին: Հայ ավանդության մեջ այդ սուրբն օժտված է յոթ անուններով՝ Հովհաննես, Մկրտիչ, Կարապետ, Վարդապետ, Մարգարե, Առաքյալ, Մարտիրոս: Նրա գլխավոր սրբատեղին գտնվում էր Մուշում, Քարքե լեռան վրա: Նա ժողովրդի մեջ հաճախ հորջորջվում էր Մշո սուլթան սուրբ Կարապետ կամ՝ Սուլթան սուրբ Կարապետ կոչումներով:

141. Խորագրված է «Աղոթք հիվանդի»:

Այս, ինչպես նաև հաջորդ 142, 143 աղոթքները զուրկ են հմայական բնավորությունից, ունեն սոսկ պաղատական, աղերսական բնույթ, ուղղված քրիստոնեական տարբեր սրբերի ու սրբությունների՝ հիվանդին բուժելու նպատակով:

142. Խորագրված է «Հիվանդի վերաբերյալ աղոթ»:

Քրիստոնեական ջերմեռանդությամբ աղաչանք է աստծուն՝ հիվանդին բուժում հայցելու նպատակով:

Տե՛ս № 141 ծանոթագրությունը:

Ստորև դրվող հիվանդի վրա ասվող աղոթքն ունի բացահայտ գրական ծագում.

Հոգի Մարիամու, լուսավորեա զիս,
Մարմին Մարիամու, մաքրեա զիս,
Քաղցր կաթն Մարիամու, դարձո զիս,
Արտասուք Մարիամու, մաքրեա զիս,
Փոխումն Մարիամու, հաստատեա զիս.
Մարիա՛մ, Մայր շնորհօք, բարեխօսեա
Վասն մեր քաւութեան, թողութեան մեղաց մերոց:

[ՋԲ, 6/ Ջավախք]

Աղոթքն, ըստ բանահավաքի ծանուցման, ասվել է կաթոլիկ հայերի միջավայրում: Այն թեպետ վերնագրված է «հիվանդի վերա», ըստ էության՝ հիվանդի կողմից Տիրամորն ուղղված աղերսանք է՝ հոգու փրկության, մաքրագործման, քավության ու մեղքերի թողության վերաբերյալ, որ բնույթով մերձենում է մահվանից առաջ կատարվող վերջին օծման ծիսական աղոթքներին:

Տե՛ս № 141 ծանոթագրությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ II

1 (143). Խորագրված է «Գիր դիւացհար մարդոյ վերայ, կարդայ կամ գրէ, վերայ պահէ, լաւանայ Աստուծով»:

Աղոթքի վիպական սկզբնամասում պատկերված է տիեզերական ծառը՝ գագաթին նստած արծիվով, որ հաճախ է հանդիպում միջնադարյան գրավոր բուժաղոթքներում:

Ծառի և արծվի բնական կերպարները խիստ խաթարված են. ծառը պատկերված է առանց ճյուղերի, տերևների ու արմատների, իսկ արծիվը՝ առանց գլխի, ոտքի ու թևերի: Դա տիեզերքի խաթարված պատկերն է, որ առաջ է եկել մարդու հիվանդության հետևանքով, քանի որ մարդն ու տիեզերքը առասպելաբանական հայացքով հավասարածնունակ են ըմբռնվել [տե՛ս **Հարությունյան, 2000**]:

Մարդու և տիեզերքի այս խախտված վիճակը վերականգնելու նպատակով աղոթքում հմայագործի (տիրացու Գրիգորի) կամքով հանդես են գալիս հրեշտակներն ու հրեշտակապետերը, որոնք երիցս (աղոթքի շարունակության մեջ հրեշտակներն ու հմայագործը շփոթվել են միմյանց) քրիստոնեական սրբերով ու սրբություններով (365 սրբեր, 24 մարգարեներ, 12 առաքյալներ, 72 աշակերտներ, Սողոմոնի մատանի, Մովսեսի աստվածագիր տախտակ, Ահարոնի պատմուճան, Քրիստոսի թաշկինակ, խաչի չորս մեխ, Տիրամայր, ս. Կույսի քաղցր կաթ, ս. Երրորդություն և այլն) կալում, կապում են հիվանդությունը հարուցող չար ոգուն, և դրանով վերականգնում մարդ-տիեզերքի (միկրոկոսմոս) խաթարված վիճակը առողջությամբ:

Աղոթքը կառուցվածքով կապքի հմայական բանաձևի խիստ ընդլայնված նմուշ է: Այն բաղադրված է վիպական սկզբնամասից (1-14 տողեր) և կապքի երեք ընդարձակ բանաձևերից (15-45, 46-73, 74-92 տողեր), որոնցից երկուսն ավարտվում են անեծքի ավանդական բանաձևերով («Չիք ես, չիք դառնաս» և այլն), իսկ վերջինը՝ հիվանդին առողջանալու ցանկությամբ («եղիցի բժշկութիւն»):

57-68 տողերում հմայողի խոսքը վերաբերում է ՅԿՉ (366) հիվանդություններին և նրանց անձնավորված կամ առարկայացված պատկերացումներին, իսկ 75-84 տողերը՝ հիվանդություն հարուցող չար ոգու բնակված տեղերին ու չարքերի տեսակներին (Բեհեզդեբուդ, դև, սատանա, ալ, քաջք, կենտրավրոս (կենդար), նոփիաջն): Անուններից շատերն աղավաղված են և անհասկանալի: ՅԿԵ (365)կամ ՅԿՉ (366) թվերը, որոնք հիշատակվում են այս և այլ աղոթքներում, տիեզերական ժամանակի թվեր են (արեգակի շուրջը երկրի կատարած տարվա շրջապտույտի օրերի քանակը), որոնցով միջնադարյան ավանդության մեջ արտահայտված է թե՛ քրիստոնեական սրբերի, թե՛ հիվանդությունների, թե՛ մարդու մարմնակազմական երակների կամ մկանների (հմմտ. Սայաթ-Նովայի «Իրեք հարուր վացուն ու վից ամեն անդամտ դարարի» տողը) քանակը:

Տողատումը կազմողինն է:

2 (144). Խորագրված է «Աղօթք այսահարի»: Փակագծերում ծանուցված է. «Վիզն կապէ կամ վրան կարթայ»,այսինքն՝ ոչ միայն աղոթք է, այլև հմայագիր հուռութք:

Սա ևս նախորդ աղոթքի նման հմայական ընդարձակ գրական ստեղծագործություն է, երկուսն էլ բերված են նույն ձեռագիր բժշկարանում (գրված 19-րդ դարի կեսերին) և երկուսի հմայող աղոթարարը միևնույն անձն է՝ տիրացու Գրիգորը:

Աղոթքն ուշագրավ է մի քանի առումներով: Առաջին մասում (1-25 տողեր) հմայող աղոթողը (տիրացու Գրիգոր) հանդես է գալիս իբրև չար կախարդ, իբրև դևերից գայթակղված և աստծոց մերժված, որ զբաղվում է չար կամ սև հմայությամբ՝ կալում և կապում է երկինքը և երկիրը, արևը, լուսինն ու աստղերը, ծովը, գետերն ու ակունքները, ծառերը, թռչունները, կենդանիները, ձկներն ու սողունները, մարդկանց՝ տղամարդկանց և կանանց, տարբեր դասերի ներկայացուցիչների, մի խոսքով՝ ամբողջ տիեզերքը իր տարրերով, վերից վար հերթագայությամբ, ամբողջը վնասելու և խաթարելու դիտավորությամբ:

Երկրորդ մասում (26-34 տողեր) հմայողը ենթարկվում է աստծոն և նրա հրամանով կատարում հակառակ գործողությունը՝ կախարդական կապանքներից արձակում ողջ տիեզերքը: Իսկ հաջորդ մասերում (35 և հետագա տողեր) քրիստոնեական հավատքի սրբություններով հմայողը երդմնեցնում է ենթարկում բոլոր չար դևերին ու սատանաներին կապելու սպառնալիքով՝ չմերձենալու և չկախարդելու աստծո արարածներին և իրեն՝ տիրացու Գրիգորին:

Այլ կերպ ասած՝ աղոթքում պատկերավոր ձևով իրար են հակադրված ու ներկայացված հմայության չար և բարի տեսակները, որոնցից առաջինը համարվում է դիվային, հակաբնական ու հակամարդկային, իսկ երկրորդը, ընդհակառակն, աստվածային, բնական ու մարդասիրական:

Մյուս կողմից՝ կախարդությունը դիտված է իբրև հեթանոսական արարք, իբրև աղանդավորների ու դյութքերի չար գործունեություն, որին հակադրված են քրիստոնեական սրբությունները իրենց մարդասիրական նպատակադրումով՝ հեթանոսական չարն ու չարիքը կանխելու, վնասազերծելու, աշխարհի ու մարդկության բարգավաճումն ապահովելու ձգտումներով:

Աղոթքի վերջաբանը (78 և հետևյալ տողերը) ձևով նման է միջնադարյան ձեռագրերի չափածո հիշատակարաններին, ուր ընդհանրացված է աղոթքում առաջադր-

ված չարը հալածելու և բարին առաջնորդելու մարդկային բարօրությունն ապահովելու գաղափարը:

3(145). Խորագրված է «Գիր զօրավոր վասն դիւահարի, այսահարի և չար նիաթի»:

Քաղված է հին ձեռագրերից:

Աղոթքում թվարկված չարահալած աստվածաշնչյան սրբությունների մեջ (որոնք թվարկվում են գրավոր և բանավոր այլ աղոթքներում ևս) ուշագրավ է ահեղատեսիլ Աստծո բազմած քառակողմ աթոռը՝ չորս կողմերը խորհրդանշող մարդու, առյուծի, արծվի և եզան պատկերներով: Ըստ ամենայնի նկատի են առնված չորս ավետարանիչների սիմվոլները. (Մատթեոս=մարդակերպ հրեշտակ, Մարկոս=առյուծ, Հովհաննես=արծիվ, Ղուկաս=եզ): Ըստ աղոթքի իմաստի՝ աստվածային կարգն ու օրենքը խարըսխված են չորս ավետարանների անսասան ուսմունքի վրա:

Աղոթքում հիշատակված բոլոր սրբությունները չարահալած են, որ արտահայտված է աղոթքի վերջընթեր հմայական բանաձևերում («Դևքն հալածին, / Սատանայքն սարսին, /Չար ակն պատառի, /Չար նիաթն խափանի, /Չար աչքն կուրանայ, /Չար սիրտն չորանայ»): Այստեղ հիշատակված են միաժամանակ հիվանդության հարուցիչները՝ դև, սատանա, չար աչք, չար սիրտ:

Տողատումը կազմողինն է:

Գ. ԾՆՆԴԿԱՆԻ ԵՎ ՆՈՐԱԾՆԻ (№№ 146-158)

Հայ հմայական աղոթքներում, չար աչքից հետո, քանակով երկրորդ տեղն են բռնում ծննդկանին (տղոցկան) և նորածնին չար ոգիների, մասնավորապես ալի և թպղայի չար ներգործությունից պահպանելու աղոթքները: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ չար ոգիների ազդեցությանը միշտ ենթակա են ծննդկանն ու նորածինը, և այդ հավատալիքային հիմքի վրա էլ ձևավորվել են զանազան առասպելական պատկերացումներ, զրույցներ, ծիսահմայական արարողություններ ու արգելքներ, որոնց կիրառության շնորհիվ ջանում են ծննդաբերության ցավերից թուլացած ծննդկանին և մանավանդ թույլ ու անօգնական նորածնին զերծ պահել նրանց սպառնացող զանազան վտանգներից ու հիվանդություններից:

Այդ նպատակով ծննդկանի նկատմամբ կիրառել են հմայական պահպանության տարբեր միջոցներ: Դրանց մեջ առաջին հերթին մտել են մետաղյա սուր գործիքները (դանակ, կացին, շամփուր, մկրատ, ասեղ) և այլ առարկաներ (շղթա, մատանի, ապարանջան, բանալի), ինչպես նաև կենցաղային մաքրող իրեր (ավել) և իհարկե տարբեր հուռութքներ և հմայական աղոթքներ: Այդ բոլոր գործիքներին ու առարկաներին վերագրվել է չարահալած հատկանիշ:

Վասպուրականում, օրինակ, երկունքի պահին տատմայրը վերցնում էր մի շամփուր և նրանով խաչեր գծում սենյակի չորս պատերին, որպեսզի չարքերը հալածվեն և չկարողանան մերձենալ ծննդկանին: Ապա՝ նա այդ շամփուրը տալիս էր ծննդկանի ձեռքը և ինքը սկսում էր աղոթել: Այդ նույն նպատակով ծննդկանի մոտ դնում էին մետաղե շիշ, սուր, դաշույն, Ավետարան, Նարեկ և զանազան հմայիլներ [ԱՀ XX, 166-167]:

Ապարանում ծննդկանի գլխատակը դաշույն էին դնում, թրով գլխավերևը օդում հարվածում էին և պարանով պատում անկողնի չորս բոլորը [ՓԺ, 64]: Շիրակում ծննդկանի բարձի տակ կամ անկողնու շուրջը դնում էին սուր և հրացան [ՆԴ, 1885, № 25]: Գանձակում թե՛ ծննդկանի և թե՛ նորածնի բարձի տակ կամ օրորոցում դնում էին սուր, սուր երկաթ՝ ծայրին սոխ ամրացրած, խոզի մազ, Նարեկ, հմայիլ: Իսկ հղի կինը ուսին պողպատի կտոր էր ամրացնում կամ մատը պողպատի մատանի դնում: Գիշերը տանից դուրս գալիս՝ նա ամուսնու դանակը դնում էր ծծերի մեջ կամ էլ, երբ գիշերով կամենում էր ջուր խմել՝ պողպատի կտոր կամ էլ կացին էր դնում ոտների տակ և ապա ջրին ձեռք տալիս [**Լալայան 1988,** 365, 369]: Բաբերդում ծննդկանի անկողնի մոտ ակիշ ու մկրատ էին դնում [ԲԲ, 523], Ջավախքում՝ ակիշ [**Լալայան 1983,** 168], Մալաթիայում՝ մկրատ ու դանակ [ԲԳ, 333], Ռոտոսթոյում՝ ավել [ԲԲ, 348], Սղերդում, մինչև քառասունք լրանալը ծննդկանի մոտ մի կտոր երկաթ էին դնում, իսկ ջուր խմած պահին՝ ասեղ էին գցում բաժակի մեջ. նորածնի վրա ևս ասեղ էին ամրացնում [ԲԳ, 315]: Մուշճուսունում ծննդկանի կողքին ակիշ էին դնում, իսկ նորածնի վրա՝ հաց [ԲԲ, 474]: Ակնում ծննդկանի գլխին Նարեկ էին դնում, իսկ նորածնի գլխատակին՝ հացի կտոր կամ նշխար [ԲԳ, 647]:

Այս բոլոր նախազգուշական միջոցների կիրառման նպատակն այն էր, որպեսզի չար ոգիները, մասնավորապես ծննդկանին ու նորածնին վնասող ալերն ու թպղաները չմերձենային նրանց:

Այս ոգիները թշնամաբար են տրամադրված հատկապես մարդկային ցեղի բազմացման դեմ [**Աբեղյան 1975,** 95]: Ալը (ժողովրդական լեզվում հաճախ գործածական է հոգնակի ալք ձևը) իգական ոգի է: Ըստ Ջավախքում պատմվող մի պատճառական առասպելական զրույցի՝ աստված Ադամին ստեղծելուց հետո ստեղծում է Ալին իբրև նրան ընկեր: Ալը հրեղեն էր և միաչքանի, մինչդեռ Ադամը հողեղեն էր, և նրանք բնավ իրար չէին սազում: Այդ պատճառով էլ Ադամը չէր սիրում Ալին: Աստված այդ տեսնելով՝ ստեղծում է Եվային: Այդ օրվանից Ալը թշնամանում է Եվայի և նրա ցեղի հետ:

Ալերը կանանց վնասում են հատկապես ծննդաբերության ժամանակ: Նրանք մտնում են կանանց փորը, ուտում ծննդկանի և նրա զավակի փայծաղը, որի հետևանքով վերջիններս մեռնում են [**Լալայան 1983,** 236]:

Այս հավատալիքը հին է, վկայված տակավին միջնադարից և տարածված հայկական շատ ազգագրական շրջաններում:

Ժողովրդական պատկերացումներում ալը միշտ ներկայանում է կնոջ կերպարանքով, որ վկայված է անգամ նրան տրվող **ալապուճուկ** և **մանավանդ** ալիպառավ համանիշ անուններում:

Մալաթիայում, օրինակ, ալը պատկերացվում է «շիկագույն ու գռուզ մազերը աչքներեսը թափթփած, միջակ հասակով, կապույտ աչքով, ձեռվներն ու ոտվները հինայած, ցամքած ու չորցած, վառվռուն ոստոստիկ պառավի» տեսքով, որը մերթ իր այս բնական կերպարանքով է հանդես գալիս, մերթ էլ որևէ կենդանու տեսքով է ներկայանում տղոցկաններին և նորածիններին և հանելով նրանց թոքերը՝ տանում է մոտակա անտառներից մեկն ու ուտում իր ընտանիքի հետ [ԲԱ, 524]:

Մուշճուսունցիների պատկերացմամբ՝ ալը դեռատի հարս է, որը ճնշում է տղոցկանին, և եթե թոքը հանելով տանի ջուրը գցի՝ տղոցկանն իսկույն կմեռնի: Եթե այդ պահին տղոցկանը ալի մատը խածնի, իսկույն ալը կհպատակվի տղոցկանին [ԲԲ, 488-489]:

Ալերը բազմանում են, ունենում են իրենց զավակները («ալքի որդիք»), որոնց մայրերը կերակրում են ծննդկանի և նորածնի լարոդով: Աղոթքներում և զրույցներում ալի մայրը հաճախ հանդես է գալիս իր զավակների հետ: Ընդ որում դրանց թիվը, ըստ որոշ աղոթքների՝ հասնում է 12-ի:

Պարտիզակցի մի պառավ ճանապարհի վրա մի աղջիկ է գտնում, որ լալիս է և ասում. «Իմ մամաս տըհա ճիկյար չի բերավ»: Պառավը խղճում է աղջկան, նրան լավ ուտելիք խոստանում, բերում տուն: Գիշերը ալը գալիս է, պառավի դուռը ծեծում և ասում. «Աղջիկս տվեք»: Տանեցիները կարծելով, որ եկողը աղջկա տերն է՝ դուռը բացում են և աղջկան հանձնում են ալին: Վերջինս տեսնելով, որ իր աղջկա ճակատի մազերը կտրել են՝ զայրանում է և անիծում. «Չեզի գեշ-բան չեմ ըսեր. մինակ ասկե ետքը ձեր տանը մեջը հողե սաղ աման չի ըլլա»: Եվ այդպես էլ լինում է [ԲԲ, 542]:

Շիրակցիների պատկերացմամբ՝ ալը ծննդկան կնոջ ոխերիմ թշնամին է: Նա շարունակ պտտվում է ծննդկանի անկողնու շուրջը և միջոց է որոնում սպանել նրան նորածնի հետ: Ծննդկանին մենակ գտնելով՝ ալը գողանում է նրա լարդը և շտապում դեպի գետը, ուր լվանալով լարդը՝ ագահաբար լափում է: Հետևանքը լինում է ծննդկանի մահը: Եթե ալը դեռ լարդը չի հասցրել գետը, «Սողոմոնի» նայող մեկը (աղոթող-հմայող) կարող է գրի զորությամբ լարդը ետ առնել ալի ձեռից և ծննդկանին մահից փրկել: Երբ ալը տանում է ծննդկանի լարդը, այսինքն՝ երբ ծննդկանը մահամերձ է լինում, ամբողջ գյուղը լցվում է ծննդկանի տունը, հարայ-հրոց բարձրացնում, հրացաններ կրակում, որպեսզի ալը վախենա և լարդը թողնի փախչի [ՆԴ, 1885, № 25]:

Արևմտահայ որոշ գավառներում ալերին հաճախ շփոթել են քաջքերի հետ և նրանց քաջքերի նման անվանել են «քանց զմեզ աղեկներ» (մեզանից լավեր): Ալերի վերաբերյալ պատմվել են գրեթե նույն զրույցները՝ ոգիների նույն գործառույթներով, ինչ քաջքերի համար են ասվել և պատկերացվել:

Շապին Գարահիսարում, օրինակ, ալերի չար ու վնասակար գործառույթներին զուգահեռ հավատացել են նաև նրանց բարի արարքներին, որ զուգամիտվում է նույն քաջքերի երկվական՝ բարի և չար բնույթին: Այնտեղ ալերին կամ ալքերին անվանել են «քըզ մեզ աղեկներ»: Հավատացել են, որ նրանք տղոցկանների թշնամիներ են, բայց լույս ցերեկով կամ գիշերը ճրագ վառած ժամանակ չեն կարող մարդուն մոտենալ: Ուստի մինչև նորածնի մկրտելը, ճրագը մինչև լույս վառ են թողել ծննդկանի մոտ՝ միշտ մեկի հսկողությամբ, իսկ եթե հարկ է եղել ծննդկանին մենակ թողնել, ապա խստիվ պատվիրվել է, որ եթե մեկի ձայնն առնի, անմիջապես տեղում նստի, խաչակնքի և աղոթի: Քանզի ալը նման դեպքերում գալիս է և ծանոթ մեկի ձայնով ու արտասանությամբ դիմում ծննդկանին. «Բացվեր ես, ախչի՝ ծածկվե» ասում և մոտենալով նրան՝ արագ փորից քաշում հանում է լարդը և տանում աղբյուր: Ջուրը զարկելուն պես՝ ծննդկանը մեռնում է, իսկ նորածնի ձայնն էլ կտրվում է, բերանը ծռվում, մեծանում: Հավատացել են նաև, թե ալը լավ երեխային վերցնում է և իր վատ զավակին դնում նրա փոխարեն: Կանայք հիվանդ և նիհար երեխա տեսնելիս՝ ասել են «Ալքու փոխած» կամ «Ալքու կոխած կը լմանի» [ԲԳ, 232]:

Այս նույն հավատալիքը առկա է եղել Մարզվանի, Սղերդի, Մալաթիայի հայության մեջ: Մարզվանում նորածնին որոշ ժամանակ մենակ չէին թողնում՝ վախենալով թե «մեզմէ աղեկները» նրան կփոխեն իրենց տգեղ երեխայի հետ: Կամ էլ երեխայի օրորոցը բաց չէին թողնում, որպեսզի «մեզմէ աղեկները» իրենց երեխային մեջը

չքնեցնեն [ԲԳ, 428]: Սղերդում, երբ նորածինը շատ նիհար էր լինում, ասում էին «Մեն աղեկները փոխեր են» [ԲԳ, 315]: Մալաթիայում քառասունքկոխով հիվանդացած երեխային համարում էին «մեզմէ աղեկների» կողմից մեկ ուրիշ երեխայով փոխված [ԲԱ, 841-842]:

Չար ոգիների կողմից երեխաներին փոխելու այս հավատալիքը ևս հին է, որ վկայված է տակավին 5-րդ դարից: Ըստ Մ. Խորենացու՝ իր ժամանակ հավատացել են, թե «վիշապազունք գողացան զմանուկն Արտավազդ և դև փոխանակ եդին» **[Խորենացի Բ, կա]**:

Ալերին ևս քաջքերի նման կարող էին բռնել, բերել տուն, աշխատեցնել, և նրանք տանեցիներին այլևս վնաս չէին տալիս:

Շապին Գարահիսարում հավատում էին, որ ալը բթամատ և բթամատի եղունգ չի ունենում, ուստի եթե մեկին հաջողվի նրա վրա ասեղ շուլալել, ապա նրա հմայքը կկորչի և այլևս չի կարող աներևութանալ: Ով ալ բռնի՝ նրա տունը կհարստանա, ամեն ինչով կառատանա՝ «Եղեն թող լլեն, մեղրեն թող խմեն»,- ասում են սովորաբար նման դեպքերում: Ալը ինչի վրա որ ձեռք դնի՝ անհատնում կլինի [ԲԳ, 232]: Ալ բռնած և հպատակեցրած տները կոչվել են «ալի օջախ» կամ պարզապես «օջախ»: Նման տներից լաթի կտորներ են վերցրել, դրել ծննդկանի գլխատակը, որպեսզի ալը նրան «չկոխի» [ԲԲ, 488-489]:

Մալաթիայում պատմված մի զրույցով՝ մի մարդ այգին բահով փորելիս՝ տեսնում է հեռվում շտապ քաղաք գնացող մի կնոջ: Նա բահը խրում է գետնի մեջ և մոտենում կնոջը: Կինը այլևս չի կարողանում տեղից շարժվել, քանզի բահը հողում խրելուց կապվել էր: Նա շատ է թախանձում իրեն ազատել: Երկար հարցուփորձից հետո խոստովանում է իր ալ լինելը: Մարդը ալին բերում է տուն և բանտարկում ախոռում: Ալը բազմաթիվ խոստումներ է տալիս մարդուն, արտոնություններ շնորհում, որպեսզի այդ մարդու ներկայությունից ալերը փախչեն, հալածվեն [ԲԱ, 524]:

Նման զրույց և կենդանի հավատալիք է գոյություն ունեցել Ակնում՝ կապված Քեչյանների գերդաստանի նախնիներից մեկի հետ: Քեչյաններից «քաջասիրտ անձ մի լեառն Ալին հանդիպելով, որի ձեռքը տղացկանի սիրտ մը կա եղեր՝ մարտնչած է հետն և Ալն խոստացած է բնավ Քեչյանի տունն ոտք չկոխել: Եվ եթե տղացկանի մի տունն Քեչյանի տնեն գիրք, բևեռ, մկրատ կամ այլ իր մը գտնվի՝ այն տունն չի մտներ: Ուստի այս ավանդության համեմատ, այժմ իսկ Քեչյանց տունեն գիրք և այլն տանելով՝ ծննդաբերին անկողնու և բարձին ներքև կդնեն կամ տղացկանն յուր վրա կը պահե մինչև 40 օր, զի վտանգը 40 օրվան մեջ է եղեր»: Այս փաստերն ու հավատալիքները հաղորդող Հ. Ճանիկյանը իրավացիորեն նկատում է, թե միջնադարյան հմայիլների մեջ հաճախ հանդիպող «սուրբ Սիսին ու Սիսաեին վերագրյալ դերն աստ Քեչյաններու նախահարց միայն տված է» [ՀԱ, 154]:

Եվ հիրավի, բերված զրույցներն իրենց հիմնական մոտիվներով գրեթե նույնական են միջնադարյան հմայական աղոթքներում հաճախ հանդիպող վիպական այն մոտիվներին, երբ սրբերը դաշտում կամ լեռներում հանդիպում են ալին, կապում, խոստովանեցնում նրա արարքները, իսկ վերջինս խնդրում է իրեն ազատ արձակել՝ փոխարենը երդվելով չմերձենալ այն անձանց, ովքեր կհիշատակեն այդ սրբերի անունները (հմմտ. № 159 ա-իգ աղոթքները):

Հաջորդ չար ոգին, որ ժողովրդական հավատալիքներով վնասում է հատկապես նորածնին, կոչվում է թպղա: Վերջինս և՛ անձնավորված ոգի է, և՛ հիվանդության

անվանումը, որ հաճախ կոչվում է նաև թպղոտել, այսինքն՝ թպղայով բռնվել, թպղայով հիվանդանալ: Ակնում թպղան կոչվում է նաև **քեպե**:

Թպղայով հիվանդանում են և՛ նորածինները, և՛ արդեն հասուն երեխաները, անգամ պատանիները և ծննդկանները [ՀԱ, 155. ԲԲ, 488-489]:

Հիվանդության նշաններն են՝ սաստիկ նիհարումը, մարմնի կապտումը, ինչպես նաև նորածնի կոկորդում ցորենաչափ ուռուցքի գոյացումը: Եթե այդ ուռուցքը պատռվի, ըստ հավատալիքի՝ երեխան կմեռնի:

Բուժման բանական միջոցներից էին երեխայի քիմքերին մեղր քսելը կամ ոզնու մաղձ խմեցնելը [ԲԳ, 428]: Իսկ բուժման հմայական միջոցներից էին հետևյալները. Մունճուսունում թպղան կանխարգելելու նպատակով հղի կնոջը, ծննդաբերությունը մոտենալիս, անց էին կացնում շան ձագերի վրայով: Եթե շան ձագերն անմիջապես սատկեին, ապա դա նշան էր, որ թպղան փոխանցվել էր նրանց [ԲԲ, 488-489]: Նույն նպատակով Ակնում Ավագ հինգշաբթի (խավարման գիշերը) դարբիններին պողպատե խաչ էին շինել տալիս, շինելիս ոչ ոքի հետ չխոսելով՝ խաչը գիշերով տանում կապում էին տղոցկանի ձեռքը, կամ էլ նույն օրը դեռ արևը չծագած մի կին էին հանում ճանապարհին, որը պետք է անխոս, 7 կամ 40 տանից մի-մի կտոր արծաթ ժողովեր, դրանից օղակ էին շինում և հագցնում թպղա ունեցող կնոջ թևը [ԲԱ, 867, ՀԱ, 155]:

Ակնում և Թալասում 40 տանից 40 տեսակ կերպասի կտորներ էին ժողովում, դրանցից հագուստ կարում և հագցնում թպղայով հիվանդ երեխային [ԲԳ, 150. ՀԱ, 155]:

Ալի, մասամբ և թպղայի, իբրև չար ոգիների անձնավորված դրսևորումները իրենց թե արտաքին նկարագրով և թե մանավանդ հիմնական գործառույթներով առավել հստակ ու որոշակի են պատկերացված միջնադարյան հմայական աղոթքներում: Հարկ է նշել, որ թեպետ այդ երդմնեցուցական աղոթքների ճնշող մեծամասնության խորագրերը վերաբերում են ալիին և թպղային, սակայն բուն աղոթքներում հանդես եկողը հիմնականում ալն է, իսկ եթե մեկ մեկ էլ թպղան է հիշատակվում, ապա նա ևս օժտված է նույն նկարագրով ու գործառույթներով, ինչ ալը: Սա ցույց է տալիս, որ դեռևս միջնադարում այդ զույգ ոգիները շփոթվել են իրար և զույգ անուների տակ հաճախ հանդես է գալիս մեկ ոգի՝ ալը: Ժողովրդական ուշ ավանդության մեջ ևս, ինչպես տեսանք, իսպառ բացակայում է թպղայի, իբրև անձնավորված չար ոգու արտաքին նկարագիրը:

Մյուս կողմից տեսանք, որ ուշ ժողովրդական ավանդության մեջ ալը ամենուրեք հանդես է գալիս իբրև մարդակեր իգական ոգի, որը կարող է կերպարանափոխվել տարբեր կենդանիների: Մինչդեռ միջնադարյան հմայական աղոթքների մեծ մասում ալը հանդես է գալիս՝ տղամարդու տեսքով՝ «այր մի»:

Մի քանի աղոթքներում ալը հանդես է գալիս իբրև երեխա իր մոր («մայր ալիին») հետ. վերջինս խնդրում է սրբերին՝ բաց թողնել որդուն:

Երբեմն այդ չար ոգին հանդես է գալիս ծերունու կերպարանքով, երբեմն այն կոչվում է **դև, վիշապ, որդ վայրենի, պիղծ դժնիկ, պիղծ չար** և այլ ընդհանուր անվանումներով:

Աղոթքներում ալը կամ թպղան հանդիպում են սրբերին ամայի վայրերում (անապատ, լեռներ, վեմերի ծերպեր, ճանապարհի վրա), մեծ մասամբ ավազի վրա նստած: Նրանց արտաքինը այլակերպ է, թեպետ հաճախ շեշտվում է նրանց մարդ լինելը («այր մի»), բայց ներկայացվում են ոչ մարդկային, այլ գերբնական, հրեշային

կերպարանքով: Ահա ալի արտաքին համահավաք նկարագրությունը ըստ միջնադարյան համանման աղոթքների. «<....> տեսին այր մի նստեալ ի վերայ ավազոյ. մազն նորայ իբրև զօծ և յունք նորայ պղնձի և ատամունքն նորայ երկաթի և աչք նորայ ապիկի (կամ՝ հուր բորբոքեալ), և բերանն իբրև զշան և երեսքն նորայ սեավ որպէս զգործէլի, ժանիք նորայ վարազի խոզի, ոտքն նորայ մատունքն յետևն և կրունկն յառջևն և տեսիլ նորայ դժնկի այլակերպ, քան զամենայն կենդանի»:

Ալի և թպղայի ոչ միայն հրեշավոր արտաքինն է նույնը, այլև նրանց գործառույթներն ու արարքները, որոնք դրսևորված են սպառնացող սրբերին կատարած իրենց խոստովանություններում: Ահա նրանց արարքների համահավաք պատկերը. «Ես եմ ալքն չար, որ նստիմ ի վերայ տղացկանին, զականջն քարշեմ և զլերդն խորովեմ, խեղդեմ զմայրն և զմանուկն: Մտանեմ ընդ փորն և ի յորովայնըն մօրն, զսիրտն թոռոմեցուցանեմ, զմիտքն կորուսանեմ, զխասապն քարշեմ, զկաթն տանեմ, զլերդն հարեմ, զգուն յերեսին թոռոմեցուցանեմ, զընդեղն ծծեմ, խուլ և մունջ, ծուռկաղ առնեմ, սպանանեմ զմայրն և զմանուկն: Մեր կերակուրն մանր տղայոց միսն է և տղացկանի ղասապն: Մեք եմք՝ մանր տղայ և մայր չեմք թողուր, որ չեմք վնասէր. զեաւթն ամսոյ մանուկն գողանամք ի մօրէն և խուլ և մունջ տանիմք առ թագավորն մեր ի յանդունդս: Եւ մեք ոչ թողումք, որ մանուկն ի փեսայութիւն և աղջիկն ի հարսնութիւն հասանի»:

«Զտղայն ի յօրոցն խեղդեմք և զտղացկան ի յանկողին, զմանուկն ի դաշտին կամ ի գինին»:

«Մենք այն եմք, որ տղացկանին վնաս առնեմք, զերեխաս այն ի մօրէ գողանամք, զի որովայն կանանց մտանիմք, զտղան մօրն արգանդն խեղդեմք, կտրատեմք, տղայն արիւնախառն ի վար թափեմք, զի որուն հակառակիմք՝ ոչ թողումք, որ դուստր և որդի աճին և զօրանան»:

«Մենք հազարք հազարաց եմք և բիւրք բիւրոց եմք. մեր բնակութիւն անկիւնս տանց է և ախոռս անասնոց է»:

Ալի և թպղայի արարքներից բացի, վերևի նկարագրություններում վկայված է նաև այդ չար ոգիների բնակության վայրերը (տան անկյուններ և անասունների գոմ), ինչպես նաև նրանց թագավորի կամ գլխավորի գտնվելու տեղը («ի յանդունդս»):

Մի քանի աղոթքներում այդ չար ոգիները հանդես են գալիս ձեռքերին երկաթե կտրոց բռնած, որով նրանք կատարում են իրենց չարագործությունները:

Միջնադարի ախտարական մանրանկարներում ալն ու թպղան պատկերված են մարդակենդանակերպ՝ ձեռքներին ծննդկանի կապոցանման լյարդը բռնած, որ գրեթ նույնական է երդմնեցուցական աղոթքներում նկարագրվածին:

Ալի և թպղայի դեմ մաքառողները, նրանց կապողներն ու խոստովանեցնող-երդվեցնողները տարանուն քրիստոնեական սրբեր են կամ հրեշտակներ և Մարիամ Աստվածածինը: Սրանք հանդես են գալիս նաև ժողովրդական աղոթքներում, իբրև ծննդկանին պահպանող ոգիներ՝ երեք ձիավորի տեսքով:

Երեք փրկարար ձիավորների մոտիվը ամենատարածվածն է ծննդկանի ժողովրդական աղոթքներում: Այդ երեք տարանուն ձիավորները սարերից ու ձորերից շտապում են տղոցկանի մոտ՝ վերջինիս պահպանելու չար ոգիների ներգործությունից (տե՛ս № 146 աղոթքների տարբերակները): Նրանք, ինչպես վերևում բերված ծննդկանին պահպանելու ծիսահմայական սովորույթներում, մետաղյա զանազան իրեր ու առարկաներ (շղթա, բանալի, խաչ, բևեռ) կամ էլ շուրջառ ու գավազան են

գցում ծննդկանի բարձին, անկողնին, նրա շուրջը կամ դռանը՝ ծնունդը դյուրացնելու և չար ոգիներից պահպանելու նպատակով:

146ա. Խորագրված են՝ ՋԲ «Աղոթք ծննդկանի», ՀԱԲԱ՝ «Ծննդկանի աղոթք»:

ՀԱԲԱ բանահավաքն է Ն. Նիկողոսյանը, գրառված է 1940թ.: Վերջից հարակցված է «Պողոս, Պետրոս, ու՞ր կերթաս» սկզբնատողով հնգատող մի բանաձև, որը կիրառվում է իբրև անկախ աղոթք (տե՛ս № 147ա): Այս աղոթքը և նրա տարբերակները ծննդկանին նվիրված ժողովրդական աղոթքների կայուն բաղադրիչներից են: Հանդես են գալիս նաև ծննդկանի տարբեր սկզբնատողերով աղոթքներում:

Նոր թխած հացի հոտ գալու մոտիվը, որ հաճախադեպ է և բնորոշ ծննդկանի աղոթքներին, ըստ երևույթին ակնարկում է մանկան մոտալուտ ծնունդը՝ նորաթուխ հացով խորհրդանշելով նորածնին:

146բ. Խորագրված է «Դժվարածին ծննդկանի աղոթք»:

Նախորդ, այս և հաջորդ տարբերակներում, ինչպես նաև ժողովրդական այլ աղոթքներում Հիսուս Քրիստոսի անձը երկատված է և ըմբռնվում է իբրև երկու տարբեր անձինք:

Երրորդ ձիավոր սուրբը նախորդ տարբերակում տղա մանուկ սուրբ Կիրակոսն է, այստեղ՝ սուրբ Մարտիրոսը (եկեղեցական ավանդությամբ՝ ս. Սարգսի որդին):

Հաջորդ տարբերակներում երրորդ ձիավորը մեծ մասամբ հանդես է գալիս Տիրամայրը՝ Աստվածածինը:

Այստեղ յուրաքանչյուր ձիավոր օժտված է առանձին գործառույթով. առաջինը սատանային խոցող սուր է, երկրորդը՝ չար գազանին խոցող նետ, երրորդը՝ բոլոր չարերի խափանիչ, որոնց արարքների շնորհիվ, ըստ եզրափակիչ երկտողի, հալածվում են դրսում գտնվող բոլոր չար գողերն ու գազանները:

146գ. ԲԳ անխորագիր է. աղոթքը բանահավաք Հ. Մարուխյանի կողմից դրված է ս. Սարգսի տոնակատարության նկարագրության մեջ՝ «Սուրբ Սարգիսը դևերու հալածիչ ու ցավերու փարատիչ» գործառույթը ներկայացնելու նպատակով: Ըստ երևույթին աղոթքն ըմբռնվել է իբրև ս. Սարգսին նվիրված, թեպետ նրա անունն իսպառ բացակայում է բնագրում (հմմտ. 146է տարբերակը):

ԷԱԺՋ խորագրված է «Ծննդկանի աղոթք»:

146դ. Խորագրված է «Ծննդկանի աղոթք»:

146ե. Խորագրված է «Աղոթք»՝ երկու այլ տարբեր աղոթքների հարակցումով:

Սա երրորդ անկախ աղոթքն է, որ անջատված է նախորդ երկուսից կազմողի կողմից:

Վերջին տողը («Աստված գալոց չար խափանե») աղոթքի վիպական մասից անկախ պահպանական բանաձև է, որ բացակայում է մյուս տարբերակներում:

146զ. Խորագրված են՝ ՀԱԲԱ FBI, FFII, ՊՎ «Աղոթք», ՀԱԲԱ FAV խորագիր չունեն, ՀԱԲԱ FBI վերջից հարակցված է «Ուսին, ուսին սուրբ կուսին» սկզբնատողով հմայական բանաձևը, որը կիրառվում է իբրև անկախ աղոթք (տե՛ս №№146իգ, 211ա, գ, 212 և այլուր):

Նույնը հարակցված է ՊՎ սկզբից, իսկ վերջից՝ «Իմ տերն էլավ ամպն խաղաց» սկզբնատողով աղոթքը, որը ևս ունի անկախ կիրառում (տե՛ս № 323 ա, բ, գ):

146է. Խորագրված են՝ ԱՀ XX «Աղոթք ծննդկանի», ՎՍԱ «Սուրբ Սարգսի երգ» և տեղադրված է «Սրբոց երգեր» շարքում, ԳԱԹ «Մանկաբարձ կին կաղոթե տղաբեր կնոջ վրա»: Վերջինս քաղված է վանեցի Պուտուր Կիրակոսյանի երգերի տետրից:

ԱՀ XX ծանոթագրության համաձայն՝ սույն աղոթքը տատմայրն ասում է ծննդկանի ազատվելու պահին, որին նախորդում է նրա կողմից տան չորս պատերին շամփուրով խաչեր գծելու և շամփուրը տղոցկանի ձեռը դնելու արարողությունը: Այդ է վկայում նաև ԳԱԹ աղոթքի վերնագիրը:

ՎՍԱ բերված աղոթքի խորագիրն ու առաջին երկտողը, ինչպես նաև այլ աղբյուրներում նշված տվյալները վկայում են, որ ս. Սարգիսը ժողովրդական ավանդության մեջ, իբրև արագահաս և փափագակատար ոգի՝ ըմբռնվել է նաև ծննդկանին հովանավորող, պահպանող, չարահալած և ծնունդն արագացնող ու դյուրացնող սուրբ (հմմտ. № 146գ ծանոթագրության տվյալները):

146ը. Խորագրված է «Մորս աղոթքը»:

Առաջին երկտողը գրված էր լուսանցքում առանձին՝ 1 թվանշանի տակ, իսկ բուն աղոթքը՝ 2 թվանշանի տակ, որ նշանակում է 1-ի շարունակություն:

Առաջին երկտողում արտահայտված երազ տեսնելու, զարհուրելու և արթնանալու մոտիվը ժողովրդական մի շարք աղոթքների ավանդական սկսվածք է (հմմտ. № 131, 349ա-գ և այլուր): Ձեռագրում զարհուրեցա բառի փոխարեն գրված էր *զու հագեցա* անհասկանալի բառակապակցությունը, որն ուղղվում է ըստ այլ աղոթքների համանման սկսվածքներում հանդիպող հիշյալ բառով:

Աղոթքը եզրափակող չափածո եռատողը բնագրի բովանդակության հետ կապ չունի, վերաբերում է աղոթքի կենցաղավարման ձևին ու նպատակներին և ունի ծանոթագրական արժեք: Նման վերջաբան հանդիպում է նաև մի շարք այլ աղոթքներում:

146բ. Անխորագիր է: Ինքնագիրը պահվում է ԳԱԹ Գ. Սրվանձտյանցի ֆոնդում (Իբ, № 3): Նույնը արտագրված է Գ. Սրվանձտյանցի կողմից Լ. Մաքսուտյանի տետրից և պահվում է դարձյալ ԳԱԹ Գ. Սրվանձտյանցի ֆոնդում (IV, № 28):

Նույնը աննշան սրբագրական փոփոխություններով տպագրվել է «Լումա» հանդեսի 1904 թ. № 2-ում՝ Գ. Սրվանձտյանցի «Գավառական երգեր» բանահյուսական նյութերի շարքում: Նույնը վերահրատարակված է Գ. Սրվանձտյանցի երկերի I հատորի (Երևան, 1978 թ.) հավելվածում (էջ 611):

Հրատարակվում է ըստ ԳԱԹ ինքնագրի:

4-րդ տողի Աստվածածնի **խանկարած** մակդիրը եթե այլ անվան աղավաղում չէ (դիցուք՝ հնձանից, հնձանաց ևն., տես № 146 ժբ ծանոթագրությունը), ապա հավանաբար հանգած (ավերված, քանդված, չգործող) բառի այլափոխումն է, որ ժողովրդական լեզվում տրվում էր ավերված եկեղեցիներին, տվյալ դեպքում՝ այն անձնավորած ս. Աստվածածնին:

146ժ. Խորագրված է «Աղոթք քնից արթնանալիս»:

Այն առավոտյան աղոթքների հետ բնույթով ու բովանդակությամբ չի աղերսվում, ուստի տեղադրվում է սույն տարբերակաշարում:

Բանահավաք՝ Վարդ Բդոյան, բանասաց՝ Կիրակոս պապի, գրառված է 1938 թ.:

Ծննդկանի աղոթքների սույն տարբերակաշարին է առնչվում ստորև բերվող տարբերակը, որ բանահավաք Արշակ Աթայանը զետեղել է իր ձեռագիր հավաքածուի «ծաղրերգեր» բաժնում:

Խացախոտ ա գոլ,
Գնացեք տեսեք՝ ո՞վ ա գոլ:
-Իրեք ծիավոր ա գոլ.
Մինըմ՝ Ակ,
Մինըմ՝ Սրհակ,
Միմն էլ Ոսկեբերան վարդապետ:
Վարդապետինի ժամ անելեն,
Տերտերանին փըրվառ տալեն,
Աշագերտներ ժամ ասելեն,
Արթարանին ծըլվըլալեն,
Մեղավորնին փուշ ու տատաշ կոխատելեն:

[ՀԱԲԱ, FFII: 3343, 05 /Նոր Ջուղա-Սպահան]

Վերջին երկտողի արդարների և մեղավորների հակադրության մոտիվը տե՛ս առավոտյան աղոթքներում (№№ 353, 354բ):

146ժա. Խորագիր չունի:

Գրառված է 1972 թ., բանահյուսական նպատակային արշավախմբում:

Բանասաց՝ Քոչարյան Լևոն Սուքիասի, 75 տարեկան, ծնվել է Բասենի Թոդեվերան (Արտաշեն) գյուղում, լսել է հոր տատից՝ Աչո մամից:

Սույն աղոթքը հարակցված էր «Լուսացավ, լուսն ի բարին» սկզբնատողով առավոտյան աղոթքին (տե՛ս № 356):

Անջատվել է կազմողի կողմից:

146ժբ. Խորագրված է «Ծննդկանի աղոթք»:

Հնձաևաց սուրբ Աստվածածինը նույնն է Հընդանից (տե՛ս № 146զ տարբերակի տողատակի այլընթերցվածները), ինչպես նաև 146է Ընտանյաց Աստվածածին հասկացությունների հետ:

146ժգ. Խորագրված է «Աղոթք ծննդկանի»:

Բնագիրը փոքր-ինչ աղավաղված է: Երրորդ ծիավորը կոչված է «մեր տերն ինքը», որ պետք է հասկանալ հայր աստծո իմաստով: Նա է, ըստ բնագրի, Հիսուս Քրիստոսին հարցնում նրա գնալիք տեղը, որը տրամաբանական չէ, քանզի ինքն է երկատված Հիսուս Քրիստոսի հետ եկողը, հետևաբար ինքն էլ է նույն նպատակը հետապնդում:

146ժդ. Խորագրված է «Աղոթք ծննդկանի»:
Տե՛ս 146ժգ ծանոթագրությունը:

146ժե. Խորագիր չունի: Նշված երեք աղբյուրների բանահավաքն է Ս. Մովսիսյանը (Բենսե): Վերջին աղբյուրներում (**Մովսիսյան 1972**) բանահավաքը որոշ ինքնահաճ խմբագրումներ է կատարել, որոնք տվյալ դեպքում հաշվի չեն առնվել:
Տպագրվում է ըստ ԱՀ V, և ԱՀՋ հրատարակված բնագրերի:
Աղոթքը բերված է ծննդաբերության ծիսակատարությունը նկարագրելիս՝ բանահավաքի հետևյալ ծանոթությամբ. «Երեխայի պորտը կտրելուց հետո, տղացկանը (ծննդական) յուր ծննդարանից <....> տուն բերելու ժամանակ ձեռքը երկաթե շիշ մը կուտան և դռնեդուռ անցնելու պահին «Հիսուս Քրիստոս» կը մրմնջեն և երրորդության անունովը կը խաչակնքեն: <....> Տղացկանի գլխու տակ անպատճառ կը դնեն մի համայիլ, մի դանակ և ուրիշ երկաթի կտորներ, որ չարքեր չմոտենան: Երկյուղած տատմերը այդ ժամանակ քթի տակից կը պտպտա հետևյալ աղոթքը»:
Զնդաննց Ասվածածին բառակապակցության մեջ զնդաննց-ի կողքին հարցական է դրված: Բենսեն հետագայում քմահաճորեն խմբագրել է «անարատ» [տե՛ս **Մովսիսյան 1972,** 129]:
Զնդաննց տեղական որևէ սրբության (վանք, եկեղեցի, սրբավայր) անվան աղավաղումն է: Այն հնչյունական նմանություն ունի Հընդանից, Ընտանյաց, Հնձաձա, Կենդանանոց անուններին, որոնք հաճախ են հանդիպում Վասպուրականից գրառված ծննդկանի աղոթքներում (իբրև մակդիրներ Աստվածածին անվան, տե՛ս № 146 զ, է, ի): Այն, հավանաբար, Հընդանից անվան աղավաղումն է:

146ժգ. Խորագիր չունի:
Գրառված է 1960-ական թթ. Ղազանչի գյուղացի հովիվ, 55-ամյա Տեփանոս (Տեպուշ) Ղալաչյանից, որը լսել է Ախալքալաքի շրջանի բնակիչներից:

146ժէ. Խորագրված է «Տղաբերի աղոթք»:

146ժը. Խորագրված է «Դիարբեքիրցի կիներուն աղոթքը»:
Տղա մանուկ սուրբ Կիրակոս, - ըստ սրբախոսական ավանդության, հավանաբար նկատի է առնվել Յուղիտա վկայուհու որդի, մանկահասակ Կիրակոսին: Յուղիտան եղել է իկոնացի բարեպաշտ այրի կին: Երբ Դոմետիանոս դատավորը գալիս է Լիկաոնիա՝ քրիստոնյաներին հալածելու, Յուղիտան թողնելով ունեցվածքը՝ իր միակ զավակի՝ Կիրակոսի հետ փախչում է Կիլիկիայի Տարսոն քաղաքը, բայց շուտով ձերբակալվում է, տարվում Սելևկիայի դատավոր Աղեքսանդրոսին: Երբ դահիճները Կիրակոսի աչքի առաջ տանջում են մորը, իսկ վերջինս շարունակ կրկնում է «Ես քրիստոնյա եմ և միայն Տեր Հիսուսին եմ պաշտում», որդին սկսում է լալ: Դատավորը գիրկն է առնում մանուկ Կիրակոսին, փաղաքշում, համբուրում, բայց նա մի կողմ է հրում դատավորի անդուր դեմքը և կամենում մոր մոտ գնալ: Թագավորը հարցնում է Կիրակոսին, թե նա ի՞նչ է կամենում, մանուկը ճչում է՝ «Ես քրիստոնյա եմ»: Դատավորը զայրանում է, բռնում է մանուկ Կիրակոսի ոտքերից, թափով նետում աստիճաններին, սպանում: Մորը ենթարկում են անլուր տանջանքների, ապա գլխատելով՝ նահատակում 304 կամ 305 թթ. [տե՛ս **Թորգոմ պատրիարք, 83-84**]:

Աղոթքում մանուկ Կիրակոսը դարձել է ծննդկանի, իբրև մոր, բարոյական փրկիչն ու պահապանը: Հմմտ. №№ 146 ի, իգ տարբերակները և ծանոթագրությունները:

146ժթ. Խորագրված է «Հղի կանանց աղոթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Հղի կինն սուրբ պիտի պահե և միշտ պիտի հիշե Չորեքմուտը, Ուրբաթմուտը և Կիրակմուտը, երբ ծնի՝ օգնության հասնին. եթե չէ պահած՝ ծննդյան միջոցին «Սատանեք կը քոմին, ճիկյարը հանին կը տանին»:

Խոսքը վերաբերում է ծննդկանի ծնունդը դյուրացնող, պահպանող և հովանավորող ոգիներին, որոնք կոչվում են հենց հիշյալ անուններով: Հայկական մի շարք ազգագրական շրջաններում (Ջավախք, Մուշ և այլուր) հավատում են չորեքշաբթիմուտը, ուրբաթամուտը և կիրակնամուտը անձնավորող ծննդյան ոգիների գոյությանը: Առաջին երկուսը քույրեր են, իսկ Կիրակմուտը կամ Հիշտեկը (=«հիշատակ» բառից, կապված նախնիների պաշտամունքին) նրանց եղբայրն է: Այս երեք ոգիները պաշտվում են ջահել, հատկապես հղի կանանց կողմից. վերջիններս երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ երեկոներին ժամերգությունից հետո ոչ մի գործ չեն կատարում և անգամ հրաժարվում են կենակցելուց: Ծննդաբերելիս կանայք աղոթում են նրանց. նրանք երևում են այն կանանց, ովքեր նրանց միշտ պաշտամունք են մատուցել: Եղբայրը (Կիրակմուտ) նստում է դռան ետևը, դուռը փակում, ջուր բերում և կատարում իր քույրերի բոլոր հրամանները: Քույրերն արագացնում են ծննդաբերությունը, եթե ծննդկանը մենակ է լինում՝ լողացնում են երեխային, բարուրում, ձվածեղ անում ծննդկանի համար, նորածնին որևէ շնորհք են պարգևում և անուն դնում [տե՛ս ԱՀ I, 341-342. **Աբեղյան 1975,** 97]: Հմմտ. նաև № 351 աղոթքը և նրա ծանոթագրությունը:

Աղոթքում հիշատակված երեք տարագույն ձիավորները ծննդյան այդ երեք ոգիներն են, որոնց օգնությունն է հայցում ծննդկանը սույն աղոթքով:

Բանահավաքի ծանուցման մեջ հիշատակված ծննդկանի ըարդը հափշտակող սատանաները՝ ալերն ու թպղաներն են:

146ի. Խորագրված է «Ծննդկանի աղոթք»:

Սկսվում է գայլկապի հմայական աղոթքներին բնորոշ «Ալալոս, թալալոս» բանաձևով (տե՛ս № 181ա ծանոթագրությունը):

Այս բանաձևից պարզվում է, որ ծննդկանի տեր ու հովանավոր է գիտակցվել ս. Կիրակոսը (հմմտ. 146ժթ տարբերակը Կիրակմուտ անունով ձիավորի հետ):

Բանաձևը հարակցվել է ծննդկանին օգնող երեք ձիավորների մոտիվով հանրահայտ աղոթքին:

Հնձանա սուրբ Աստվածածին - տե՛ս №146ժբ ծանոթագրությունը:

146իա. Խորագրված է «Ծննդկանի աղոթք»

Առաջին հինգ տողը կապքի (գայլկապի) հմայական բանաձև է, որ հարակցվել է ծննդկանի պահպանության հանրահայտ աղոթքի երկրորդ հատվածին՝ վերածվելով յուրահատուկ տարբերակի:

Մանազկերտու սուրբ Տեփաննոս՝ հավանաբար նկատի ունի Մանազկերտում գտնվող ս. Ստեփաննոս անունով սրբավայրը:

146իբ. Խորագրված է «Աղոթք»:

Նախորդ աղոթքների նոր մոտիվների հարակցումով ու զարգացումով աճած տարբերակն է: Վերջին եռատողը (19-21 տողեր) ունի ծանոթագրական բնույթ (իմմտ. № 146ը):

Օհան Ոսկեբերան (Հովհան Ոսկեբերան), քրիստոնեական եկեղեցու սուրբ հայրերից է, ծնվել է Անտիոքում մոտ. 350 թ., մահացել է 407 թ., եղել է Անտիոքի քահանա, Կոստանդնուպոլսի պատրիարք (397 թ), հետագայում (403 թ.) կարգազրկվել է և 404 թ. աքսորվել Հայաստան: Հեղինակ է բազմաթիվ քարոզների, ներբողների, սաղմոսների: Թե՛ ընդհանուր և թե՛ հայոց եկեղեցու պատմության մեջ վայելել է մեծ հեղինակություն:

Աղոթքում հանդես եկող երեք սրբերը (Քրիստոս, Մարիամ կույս, Հովհան Ոսկեբերան) իրենց սպիտակ համազգեստով բնութագրվում են իբրև լույս, լուսեղեն արդարության խորհրդանիշներ: Նրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի գործառույթ. մեկը ծննդկանի դուռն է պաշտպանում, մյուսը՝ երդիքը, իսկ երրորդը (ըստ երևույթին Տիրամայրը) խափանարարն է բոլոր չար ոգիների և բնութագրվում է «չարխափան» մակդիրով: Նա կտրում է երեք ճյուղ վարդենի, այսինքն՝ փշոտ մասրենի (փուշն իբրև չարահալածության խորհրդանիշ) և ուղարկում եկեղեցի:

Թվարկած այս մոտիվներն են ավելացել ծննդկանի ավանդական աղոթքի վրա և այն վերածել նոր և իմաստալից տարբերակի:

146իգ. Խորագրված է «Աղոթք քնելուց առաջ»:

Տիպով և բովանդակությամբ պատկանում է ծննդկանի աղոթքների տիպաբանական խմբին:

«Ուսին, ուսին սուրբ Կուսին» սկզբնատողով աղոթքներ տե՛ս №№ 146իգ, 211ա, գ, 212, 1(396), 2(397), 3(398)բ, գ, 4(399)ա:

146իդ. Խորագրված է «Աղոթք պառավաց»:

Ձեռեղված է բանահավաք Լևոն Մաքսուտյանի գրառած բանահյուսական նյութերի տետրում, որը բանահավաքի կողմից ուղարկվել է Գ. Սրվանձտյանցին՝ 1881 թ. մայիսին: Գրառման վայրը չի նշված:

Աղոթքի առաջին յոթտողյա հատվածը՝ Երուսաղեմի տաճարի շինարարությունը և Քրիստոսի ծնունդն ակնարկող մի անկախ վիպական նկարագրություն է, որը իմաստալից ձևով հարակցվել է ծննդկանի ավանդական աղոթքին՝ դառնալով յուրահատուկ նախաբան սպիտակ ծիով և հիսունհինգ աշակերտներով ելնող Քրիստոսի հայտնությանը:

Մելքոն, Գասպար, Բաղդասար՝ ըստ եկեղեցական ավանդության՝ Քրիստոսի ծննդյան աստղը տեսնող և նրա աստվածային ծնունդն ավետող երեք տարբեր երկրների թագավորների անուններն են:

Աղոթքի «Կաթե աղբուր, քարե տաճար» սկզբնատողով վերջին եռյակը ավանդական աղերսանքի բանաձև է, յուրահատուկ վերջաբան, որ հանդիպում է արևմտահայ չափածո բանահյուսության տարբեր ստեղծագործություններում:

146իե. Խորագրված է «Դժվարածին ծննդկանի աղոթք»:

Աղոթքի այս և հաջորդ տարբերակներին հարակցումով ավելացել է չորս կող-

մից փականքով փակված երկաթե տան մոտիվը, իբրև ծննդկանին չարից պատսպարելու խորհրդանիշ: Ծննդկանը բանաստեղծական զուգահեռականությամբ համադրվել է այդ անխոցելի տանը քնած ս. Կույսի՝ Մարիամի հետ: Նույնը առկա է նաև վերջընթեր տողերում քնած Աստվածամոր տեսած երազի, Քրիստոսի ծննդավայր Բեթղեհեմ քաղաքի ընծայման և մանուկ Հիսուսի խաճնարուրով բարուրելու մոտիվներում: Այստեղ նորածինն ու ծննդկանը լռելյայն համեմատվել են Հիսուսի և Տիրամոր հետ իբրև սրբությունների՝ տղոցկանի ծնունդը դյուրացնելու ակնկալիքով, արտահայտված ծննդկանի կողմից ասվող՝ «Անարժան քող էրեսիս, Ի քող տուր, ցավ, զիս» ամփոփիչ երկտողում:

Սուրբ Գրիգորը, որ հսկում է երկաթյա տան երդիքը՝ հայ եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորիչն է. նա հաճախ է հանդես գալիս ժողովրդական աղոթքներում՝ իբրև Քրիստոսի կամ Աստվածամոր գործակից:

Անթիանոս, - տե՛ս № 1(159)զ ծանոթագրությունը:

146իգ. ԱՀ խորագիր չունի, բայց բանահավաքի ծանուցմամբ՝ «Տղոցկանին չար աչքից բժշկելու համար ասվող աղոթք է»: **Փորքշեյան 1971** խորագրած է «Չար նազարի աղոթք տղոցկանի համար»:

Երկու աղբյուրի բանահավաքը Խ. Փորքշեյանն է: Երկրորդ աղբյուրում, բացի բնագրի տողատակում նշված տարբերություններից, ըստ Նոր Նախիջևանի բարբառի հնչյունաբանության՝ ձայնեղ բաղաձայնները խլացված են, իսկ խուլերը՝ ձայնեղացված:

Նախորդ իե տարբերակը, որ գրառված է Ղրիմից, բնագրային նույնության հասնող ընդհանրություններ ունի սույն տարբերակի հետ, որն, անշուշտ, վկայում է ղրիմահայերի և նոր նախիջևանցիների էթնիկական ընդհանրությունը:

Տե՛ս նաև 146իե ծանոթագրությունը:

146իէ. Խորագրված է «Աղոթք ծննդկանի»:

Տե՛ս 146 իե ծանոթագրությունը:

Նախորդ տարբերակների համեմատությամբ՝ այստեղ ավելացել է Քրիստոսի ձեռին բռնած երեք բևեռների մոտիվը, որ բնորոշ է կապքի հմայական աղոթքներին (հմմտ. №№ 209, 210ա, բ, 211ա, բ և այլն):

Մետաղե այդ բևեռները իրենց սուր և խոցող բնույթի պատճառով Քրիստոսի ձեռին հանդես են գալիս իբրև յուրահատուկ սրբազան զենք (անշուշտ այստեղ դեր է խաղացել նաև Քրիստոսին խաչի վրա բևեռվելու հոգեբանական զուգորդությունը), որոնցով նա խոցում, խափանում է իրական և երևակայական չարքերին (գել գազան, սև սատանա), ինչպես նաև պահպանում ծննդկանի դուռը՝ վերջինիս սպառնացող վտանգներից (հմմտ. 146 ժե):

Մարիամը (Աստվածամայր), բացի ծննդկանին պահպանելու և հովանավորելու գործառույթներից, որ հաճախադեպ է ծննդկանի աղոթքներում, այստեղ և այլուր հանդես է գալիս նաև որպես ծննդկանի՝ իբրև ծնող մոր, խորհրդանիշ: Մարիամ անվան տակ աղոթքներում երբեմն նկատի է առնվել հենց ծննդկանը:

Սույն աղոթքի վերջին դիմումնային երկտողում («Մարիամ, ընչի՞ կթակես թամբաքին,/Երեսին, վեր ներքին երեսին») ըստ երևույթին խոսքն ուղղված է ծննդկանին, որը հավանաբար երկունքի ցավերից տանջվելով՝ հարվածել է բարձին:

146իը. Խորագրված է «Ծննդկանի»:

Գրառված է 1973 թ., բանասաց՝ Անդրեասյան Մարիամ Ավետիսի, ծնվ. 1891 թ., Բասենի Իզվերան գյուղում:

146իթ. Խորագրված է «Աղոթք քնելուց առաջ»:

Գրառման վայրը չի նշված:

«Ճրագ, ճրագ, ճշմարիտ» սկզբնատողով ամբողջական աղոթքները, կիրառման ժամանակի իմաստով, սովորաբար բնորոշ են երեկոյան (քնելու) աղոթքներին (տե՛ս):

Նույն սկզբնատողով հարակցված ծննդկանի աղոթքների այս տարբերակախմբում (146իթ-լդ) ճշմարիտ ճրագի (իմա՝ արդար, անաղարտ լույսի) պատկերով առհասարակ նկատի է առնվել ճրագի լույսի չարխափան զորությունը, իսկ առավել որոշակի՝ ծննդկանի մահճի մոտ ամբողջ գիշերը ճրագը վառ թողնելու ծիսական սովորույթը, որով, ըստ հավատալիքի՝ լույսի կամ կրակի զորությամբ պահպանվում էր ծննդկանը չար ոգիների մերձեցումից (տե՛ս ծննդկանի աղոթքների ծանոթագրության նախաբանը):

Անխոցելի մետաղե տան մոտիվի մասին տե՛ս 146իե ծանոթագրությունը:

146լ. Խորագրված է «Աղոթք»:

Նույնը անխորագիր տպագրվել է Գ. Սրվանձտյանցի կողմից «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1884 թ., էջ 471: Արտատպվել է նաև «Համով-հոտովի» վերահրատարակություններում:

Տե՛ս 146իթ ծանոթագրությունը:

Ուրֆա քաղաքը միջնադարյան աղբյուրներում՝ Ուռհա, հին Եդեսիան է, ներկայիս Թուրքիայում:

146լա. Խորագրված է «Ծննդկանի աղոթք»:

Տե՛ս 146իթ ծանոթագրությունը:

Աշխարհ Սվրանա - հավանաբար՝ Սուրուանա (Սուրիա, Սիրիա) երկրանվան աղավաղումն է, միջնադարյան Ասորիքը (հմմտ. **Անասյան 1959,** 999):

146լբ. Խորագրված է ՀԱԲԱ «Տղոցկանի աղոթք», ՀԲՆ՝ խորագիր չունի:

ՀԱԲԱ բանահավաքն է Վ. Բդոյանը, որը գրառել է 1946 թ. Աղինի շրջանի Լանջիկ (նախկ. Մուսլուղլի) գյուղացի Սողոմոն Խաչատրյանից:

Ս. Հարությունյանը գրառել է 1959 թ.՝ Աղինի շրջանի Լանջիկ գյուղի նախկին բնակիչ Վարդանուշ Հարությունյանից. մյուս տարբերակը՝ 1970 թ. Փանիկում, բանասաց Նահապետյան Պետրոսից (44 տարեկան):

Աղոթքում Քրիստոսի գնացած քաղաքը տեղայնացվել է, դարձել է հայոց միջնադարյան Անի մայրաքաղաքը, որը բավական մոտ է գտնվում բանասացների բնակության վայրին՝ Մուսլուղլի (Լանջիկ) գյուղին:

Տե՛ս 146իթ ծանոթագրությունը:

146լգ. Խորագրված է «Երկունքի ժամին»:

Բանահավաքն է Վ. Բդոյանը, որը գրի է առել 1947 թ., Վրաստանի Բոգդանով-

կայի շրջանի Ուչմանա գյուղի բնակիչ Անուտկա Շահինյանից (ծնվ. 1892 թ)՝ ծագումով Աշոցքի շրջանի Ղազանչի գյուղից:

Ամրի քաղաքը - ըստ երևույթին՝ էմրի քաղաք, հավանաբար արաբական ժամանակաշրջանի էմիրությունների հիշողությունների վերապրուկ է:

146լդ. Խորագրված է «Պառավներու աղոթք»:

Բաղարկված է տարբեր աղոթքների բնորոշ մոտիվներից (տե՛ս №146 իբ ծանոթագրությունը):

11-16 տողերը բնորոշ են լուսաբացի աղոթքներին (տե՛ս № 353):

146լե. Խորագրված է «Աղոթք տղոցկանի»:

Գրառված է 1960-ական թթ. սկզբներին, Աշոցքի շրջանի Քոռաղբյուր (այժմ Ծաղկաշեն) գյուղում, 56-ամյա Արփո Սարգսյանից: Աղոթքը նա լսել և սովորել էր Ախալցխայի Ծղալթբիլա գյուղում ապրած՝ համագյուղացի Սրբուն Ալեքսանյանից: Աղոթքի առաջին և վերջին եռատող հատվածները տիպաբանորեն պատկանում են քնի աղոթքների խմբին (հմմտ. № 260):

Աղոթքի բանադրական երկտողը («Դուռըս գալող քար լինի./ Յերդիկս գալող մսմար լինի») հանդես է գալիս ինչպես քնի, այնպես էլ պահպանական այլ աղոթքներում (տե՛ս № 266 ա, գ, 267դ): Բանադրանքի այդ բանաձևը ուղղված է դրսից սպառնացող չարիքներին ու չար ոգիներին և բնույթով համախոս է ծննդկանի հմայական պահպանության գաղափարին:

146լզ. Խորագրված է «Աղոթք ծննդկանի»:

Ծննդկանի ավանդական աղոթքին է հարակցվել առաջին քառատողը, որի իմաստը մթագնված է և հանելուկայն առեղծվածի բնույթ ունի: Խոսքն ըստ երևույթին վերաբերում է եկեղեցուն, երկաթե բանալուն և եկեղեցական սրբություններին:

147ա. Խորագրված են «Ծննդկանի աղոթք»:

ՀԱԲԱ սույն աղոթքը հարակցված էր «Թաժա հացի ֆոտ կուգա» սկզբնատողով աղոթքին (տե՛ս 146ա ծանոթագրությունը):

Այս և հաջորդ տարբերակում ծննդկանին պահպանող սրբերի դերում հանդես են գալիս Քրիստոսի երկու հանրահայտ առաքյալները՝ Պողոսն ու Պետրոսը, որոնք, ինչպես երևում է բայի եզակի թվից (ո՞ւր կերթաս, կերթամ), ըմբռնվել են իբրև մեկ անձնավորություն:

147բ. Խորագիր չունի:

Բանահավաքի ծանուցմամբ՝ սույն աղոթքն ասում է տատմայրը ծննդաբերության ժամանակ:

Աղոթքում նախորդ տարբերակը հարակցվել է Քրիստոսի ծիսական հանդերձավորման և նրա քնած ապահով ու անվտանգ տան (հմմտ. երկաթե տան պատկերացումը՝ 146 իե-իթ տարբերակներում և քնի աղոթքներում՝ № 267 ա-դ) մոտիվներին:

Քրիստոսի ծիսական հանդերձանքի մեջ մտնող գավազանն ու շուրջառը դիտված են իբրև ծննդկանի (իսկ քնելու աղոթքներում՝ նաև քնողի) անվտանգությունն ապահովող հմայական սրբություններ (դռան փականք և երդիքի ծածկոց):

148. Խորագրված է «Տղոցկընի»:

Գրառման վայրը, բանասացի և բանահավաքի անունները չեն նշված:

Ծննդկանի պահպանության աղոթք է, նախորդ տարբերակներից զգալիորեն հեռացած: Աղոթողը ծննդկանին մաղթում է առօրյա մեղքերից մաքրազերծում, աներկյուղություն՝ կապված Քրիստոսի այցելության և դրա հետևանքով՝ չարի խափանման բաղձանքին: Այդ տրամաբանությամբ էլ շարունակության մեջ, թեպետ անուններ չեն հիշատակված, ենթադրվում է, որ սարով ու ձորով և հարյուր աշակերտներով եկողների մեջ է նաև Քրիստոսը, որոնցից աղոթքի վերջում ակնկալվում է ծննդկանի պահպանությունը:

149. Անխորագիր է: Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավի կողմից: Հավանական գրառողը Արտ. Բարսեղյանն է:

Բանահավաքի կողմից որևէ ծանուցում չունի: Տիպաբանորեն հարում է ծննդկանի աղոթքների նախորդ տարբերակախմբին:

150. Խորագրված է «Քղեցիական հին աղոթք մը»:

Այս աղոթքի առանձին մոտիվներ հանդիպում են թե՛ ծննդկանի աղոթքների նախորդ տարբերակախմբում (հմմտ. 146 իբ, իգ, իե, իէ, 147բ) և թե՛ վախի ու քնի աղոթքներում (տե՛ս №№ 131, 349ա-ը):

Այդ, ինչպես նաև նախավերջին տողի տղոցկանի հիշատակության հանգամանքները հաշվի առնելով՝ սույն աղոթքը զետեղվում է ծննդկանին նվիրված աղոթաշարում:

151. Խորագրված է «Ծննդկանի»:

Վարդակույսը՝ այստեղ Մարիամ Աստվածածինն է:

Սա փաստորեն Քրիստոսի ծննդյանն ու մկրտությանը նվիրված կրոնական վիպերգ է, որն աստվածային սուրբ ծննդի թեմայի պատճառով դարձել է նմանություն, բաղդատություն ծննդաբերության համար առհասարակ և վերածվել է ծննդկանի վերաբերյալ ասվող սրբազան բնագրի:

152. Խորագրված է «Աղոթք ծննդկանին»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Այս աղոթքն ասում է տատմայրը երկունքի ցավով բռնված տղոցկանին, ապա մեջքի կողմից շալակում է նրան, թափ տալիս, որպեսզի երակները բացվեն և ծնունդը շուտ տեղի ունենա»:

Կալած կապած բողչա - պատկերավոր ձևով նկատի է առնվել ծննդկանի արգանդը, որը պետք է բացվի, և երեխան ազատվի:

Սույն աղոթքի գրավոր վարկածներն առկա են միջնադարյան ախտարական ձեռագրերում, որոնցից ուշագրավ են հետևյալ երկուսը.

1. ԳԻՐ ՎԱՍՆ ԾՆԸՆԴԿԱՆԻ

Ուլնահատ և Հուրազատ, Մաքուդարայ, Աքէաքայ,Կաթառասաք, Դիաս, որք փութացուցիք զծնունդ Սուրբ կուսին, փութացուցեք և այժմ զծնունդ աղախնոյս աստուծոյ այս, զի բացցին դրունք ծննդեան սորա և երևեսցի պատկերն աստուծոյ:

[Մատենադարան, Հմայիլ№ 22]

Տարբերակները տե՛ս ձեռ. № 8428, 45/68/, 64:

Աղոթքի վերջում թվարկված անունների մասին արված է հետևյալ ծանուցումը. «Սոքա էին հրեշտակքն, որք մանկաբարձք էին սրբոյ կուսին, յորժամ ծնաւ զմանկացեալն Յիսուս»:

Ուրեմն՝ միջնադարում գոյություն է ունեցել մի պարականոն զրույց, որի համաձայն Քրիստոսի ծնունդը դյուրացրել են հիշյալ վեց մանկաբարձ հրեշտակները:

Աղոթքում այս ավանդական զրույցը դարձել է աստվածային նախօրինակ ու նախապատկեր մարդկային հետագա բոլոր ծնունդների համար և ծննդկանի աղոթքներում վկայակոչվել է իբրև սրբազան նախադեպ՝ ծնունդը դյուրացնելու նպատակով:

«... և երևեսցի պատկերն աստուծոյ» նախադասությամբ նորածինը մի կողմից համեմատվել է մանուկ Հիսուսի հետ, մյուս կողմից՝ դրսևորվել է մարդը աստծո պատկերով ստեղծելու քրիստոնեական ըմբռնումը:

2. Ովիաս, Ուլիքաս, որ բազմեալք եք ի վերնատունն ի վերայ աթոռոյն, ունիք բանալիս, բացէք զարգանդ զայս անուն կնոջ՝ բարեխօսութեամբ սուրբ Աստվածածնին և սուրբ Յակոբայ և ամենայն սրբոց քոց: Քրիստոս աստուած մեր, քո սուրբ անուամբն ազատէ զծառայս քո ի նեղութենէ:

[Մատենադարան, ձեռ.№ 8428, 71]

Տարբերակը տե՛ս ձեռագիր № 6677, 107:

Խորագիր չունի:

Աղոթքի սկզբից ծանուցված է. *«Կին, որ դժար ծննի, զայս կարդայ ի վերայ ջրին և տուր, որ խմէ և գիրն ի բազուկն կապէ. տղայն շուտով ծնանի և բաժանի»:*

Այս և հաջորդ տարբերակում բացահայտված է №146 տարբերակաշարում Քրիստոսի և այլ սրբերի կողմից ծննդկանի բարձին բանալի դնելու մոտիվի, ինչպես նաև հմայական արարողության ժամանակ նրա բարձի տակ դարձյալ բանալի դնելու սովորույթի խորհրդանշական հավատալիքի իմաստը:

Ըստ աղոթքի տվյալների՝ հավատացել են, թե ծննդաբերության ոգիները հատուկ բանալի են ունեցել, որով բացել են ծննդկանի արգանդը և Աստվածածնի ու այլ սրբերի բարեխոսությամբ՝ դյուրացրել ծնունդը:

153. Խորագրված է «Աղոթք ծննդկանի»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ աղոթքն ասում է տատմայրը ծննդկանին ազատելիս:

Աղոթողը դիմում է մի շարք կրոնական ու բնական սրբությունների, որոնց մի մասը հանրահայտ քրիստոնեական վանքեր ու եկեղեցիներ են Արևմտյան Հայաստանում (Մարութա բարձր Աստվածածին, Խաթուն Տիրամեր, Սուրբ Տեսկանորդի, Չանկլի դիվան սուրբ Կարապետ, Վարագա սուրբ Նշան), մի մասը՝ պաշտվող տեղական սուրբ վայրեր են (Կարմիր խաչ, Կապույտ խաչ, Ծածուկ ավազան) կամ էլ պաշտվող հրաշագործ ավետարաններ (Չարխափան ավետարան, Մուրխաս (=մուրազահաս) ավետարան, Շեկ ավետարան), մի մասը անձնավորված հանրաճանաչ սրբեր են (ս. Սարգիս, ս. Գրիգոր Նարեկացի, ս. Կարապետ, կիրակնամտի կանաչ կտրիճ ոգիներ, հրեշտակներ), իսկ մնացածները՝ պաշտվող երկնային լուսատուներ (արեգակ, լուսին, մեծ ու փոքր աստղեր):

Քրիստոնեական ու նախնական հեթանոսական սրբություններն աղոթքում հա-

մադրվել են իրար և ժողովրդական ըմբռնումով դարձել համազոր հասկացություններ:

Աղոթող տատմայրը դիմում է այդ բոլոր սրբերին ու սրբություններին՝ աղերսելով հաջող ծննդաբերություն, օգնություն ու պահպանություն ծննդկանին ու նորածնին:

Չպլախամեր Աստվածածին - հավանաբար Վասպուրականում գտնվող ս. Աստվածածնի վանքերից մեկին տրվող ժողովրդական անվանում է:

Մարութա Բարձր Աստվածածին - Սասուն գավառի Մարութա լեռան վրա կառուցված վանքը, սասունցիների ամենասիրած ու պաշտելի ուխտավայրը, որ հաճախ է հանդես գալիս «Սասնա ծռեր» հերոսավեպում:

Արնքաղ Գեղարդ - հավանաբար նկատի ունի Գեղարդա վանքը կամ Այրիվանքը ներկայիս Կոտայքի շրջանում, ուր ըստ ավանդության, պահվում է Քրիստոսին խոցած արյունաշաղախ գեղարդը (նիզակ):

Չագերույց Նարեկացի -ձագերույց (իմա՝ ձագահարույց) մակդիրով նկատի է առնվել Գրիգոր Նարեկացու հրաշագործություններից մեկը, երբ, ըստ ավանդության, Նարեկ գյուղը տիրող քրդի թուխսն ու ձագերը պատահաբար ջախջախվում են, ծառայող կինը տիրոջ ահից սարսափած՝ սատկած թուխսն ու ձագերը մաղով տանում դնում է Գր. Նարեկացու գերեզմանին, աղոթում, վերադառնում: Մեկ ժամ անց թուխսը ձագերով վերակենդանանում է և վերադառնում տուն: Այդ դեպքից հետո Նարեկացուն տրվում է ձագահարույց մակդիրը [տե՛ս **Ղանալանյան 1969,** 306]:

Խաթուն Տիրամեր - Վան քաղաքից հյուսիս, Վանա լճի ափին գտնվող Խաթուն տիրամոր կամ ս. Աստվածածնի վանքը, մի նշանավոր ուխտատեղի, ուր դիմում էին մաշկային վերքերով ու հիվանդություններով տառապող շատ ուխտավորներ: Համաժողովրդական մեծ ուխտագնացությունը կատարվում էր ս. Աստվածածնի վերափոխման տոնի ժամանակ:

Տեսկանորդի - Տեր Հուսկան որդի՝ վանք Բերկրի գավառում, Վանա լճից հյուսիս արևելք, որ կոչվում էր նաև Տեր Հուսկանորդվո վանք:

Չանկլի դիվան սըբ Կարապետ կամ **Մշու սուլթան սըբ Կարապետ** - Տարոնի Քարքե լեռան վրա կառուցված ս. Կարապետի հռչակավոր վանքն է, որին տրվող *չանկլի դիվան* բաղադրյալ մակդիրը կազմված է թուրքերեն չանկլի «զանգակավոր» և դիվան «ատյան, ծիսավայր» բառերից, որ նշանակում է զանգակավոր ուխտատեղի, ուխտի ատյան:

Վարագա յոթ մանուկ սըբ նշան - Վանի մոտակայքում՝ Վարագա լեռան աջ թևին կառուցված յոթնագմբեթ վանք, որ կոչվում է սովորաբար Վարագա վանք:

154. Խորագրված է «Աղոթք ծննդկանի»:

Գրառված է 1960-ական թթ. սկզբներին, 55-ամյա հովիվ Տեփանոս (Տեպուշ) Ղալաչյանից, որը լսել էր Ախալքալաքի շրջանի բնակիչներից:

Առաջին քառատողում ծննդկանի անունից ողորմածության դիմում է արվում աստծոն, Քրիստոսի տաս առաքյալներին և հայոց սրբուհի Հռիփսիմեին (=Հոռոմսիմա):

Հաջորդ տողերում նորածնի ծնունդը դիտվում է իբրև մոր (ծննդկանի) համար մահվան պահ և հոգու մեղսագործություն («Լուս հոգիս սևացուցիր»): Երկունքն իր ճակատագրական հետևանքներով ծննդկանի համար առհասարակ ըմբռնվում է իբ-

րև մահվան իրադրություն, և սույն աղոթքում ծննդկանը ողբում է իր մեղքն ու գնալիք մահվան երկար, դժվարին, փշոտ ճանապարհը:

Աղոթքում հակիրճ ներկայացված են մահվանից հետո անդրաշխարհում հոգու անցնելիք ճանապարհի հայկական պատկերացումները: Այդ ճանապարհը բնութագրվում է երկար ու ձիգ, փշով ու տատասկով ծածկված: Այն ավարտվում է Մազե կամուրջով, որ, ըստ հավատալիքի, ձգված է հրեղեն գետի վրա: Բոլոր հոգիները պարտադիր անցնելու են այդ կամուրջով. հանցավոր հոգիների մեղքի ծանրությունից Մազե կամուրջը կտրվում է և նրանք թափվում են դժոխքի հրեղեն գետի մեջ, իսկ արդար հոգիները թեթևությամբ անցնում են կամրջով և գնում դրախտ:

Պաշար չունիմ հետս տանելու տողը ըմբռնվում է հոգևոր առումով՝ իբրև արդար գործերի պաշարից զուրկ, մեղավոր:

Աղոթքի երրորդ հատվածում ծննդկանի հուսահատ հոգին դիմում է քրիստոնեական եկեղեցու հռչակավոր հայր Հովհան Ոսկեբերանին՝ հավանաբար երեք գլուխ Ավետարան կարդալու և իր մեղքը թեթևացնելու հույսով: Դիմումին անմիջապես հաջորդում է հուսատու պատասխանը, որով քաջալերվում է չվախենալ, քանզի ինքը քրիստոնյա է՝ մկրտված ու մեռոնված քրիստոնեական սրբազան ծեսերով, որոնցով դարձել է ծննդաբերությունը դյուրացնող Մարիամ տիրամոր ընկերն ու միշտ օգնության հասնող ս. Սարգսի եղբայրը:

Աղոթքի այս հուսատու և լավատեսական հատվածն ավարտվում է բանադրանքի հմայական բանաձևով՝ չարի պատժով և նրա մտքի ու լեզվի քարացմամբ:

155. Խորագիր չունի:

Բանահավաք Քաջբերունին աղոթքին կցել է հետևյալ ծանուցումը.

«Ալեքսանդրապոլում նորածնունդ մանկան փաթաթելուց հետո տատմայրն առնում է նորան յուր գիրկը և թուրը կամ թաթակիշը ձեռքն առած կամ երեխայի վերա մի հաց-լավաշ սփռած, տանում է դուրս և դեմքը դեպի արևելք՝ տատմայրը յոթն անգամ տյառնակնքում է յուր երեսը և հետո արտասանում այս աղոթքը: Սա կրկնում է տուն մտնելիս և ապա երրորդ անգամ՝ մանկամոր առաջ կանգնած»:

Այս աղոթքը բարեմաղթությունների ծավալուն բանաձև է, որի տարրերը տարբեր հարակցումներով հանդիպում են և՛ նորալուսնին ուղղված աղոթքներում, ուր նորալուսինը ըմբռնվում է իբրև անձնավորված նորամանուկ կամ նորածին թագավոր (հմմտ. № 448ա-դ), և անգամ հայ քրիստոնեական եկեղեցու պատարագի «Տեր ողորմեա» հայտնի շարականում:

Քաջբերունին նույն տեղում ծննդկանի և նորածնի հետ կապված ծիսահմայական արարողությունների նկարագրության մեջ բերում է հետևյալները. «Ընդունելով որ իբր թե հրեշտակները մանուկ Քրիստոսին բերել տվել են սուրբ կույս Մարիամին և ասել են ստորև հիշյալ խոսքերը, Ալքսանդրապոլում տատմայրը այդ խոսքերը հարց ու պատասխանով երեք անգամ կրկնում է և յուրաքանչյուր կրկնության ժամանակ մանկանը դիպցնում է մոր ծնկներին.

-Մարիամ, ես եմ ծանդր, թե՞ դու, - հարցնում է տատմայրը:

-Տու՝ ծանդր, ես՝ թեթև, - պատասխանում է մայրը»:

«Անդրանիկ ծննդի ժամանակ նոր ազատված կնոջ փորի ցավը կտրելու համար՝ տատմայրը թուրը աջ ձեռով յոթն անգամ մանգաղի նման անց է կացնում յուր ձախ ձեռքի տակով կնոջ փորի վերա և ամեն անցկացնելու ժամանակ հարց և

պատասխանով ասում է հետևյալը.

-Ահա՛ն, ես կքաղեմ:

-Ի՞նչ կքաղես:

-Հեղինեի *(ազատվածի անունը)* սանջուն կքաղեմ»:

156. Խորագիր չունի:

Աղոթքն ասում է տատմայրը նորածնին լողացնելուց հետո, երբ բախտավոր համարվող մեկը աղ է ցանում նորածնի վրա և տատմոր բուռը:

157. Խորագրված է «Աղոթք նորածնի»:

158ա. Խորագրված է «Աղոթք նորածնին»:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. նորածնին լողացնելուց հետո տատմայրը վերցնում է խանձարուրված երեխային, «վրան երկու հաց դնում, ձեռքին՝ ծայրը մի սոխ ցցած շամփուր առած, շեմքն ու պատը խազելով դուրս գալիս տնից, բարձրանում է կտուրը և դեպի արևելք դառնալով՝ աղոթում: Հետո ձեռի շամփուրով խաչածև գիծ է քաշում գետնին, խաչակնքվում և վերադառնում»:

Մետաղե շամփուրն ու սոխը, ըստ հավատալիքի, չարահալած առարկաներ են, որոնց միջոցով տան շեմին ու պատերին կատարած խազումներով անջրպետվում, արգելակվում էր չար ոգիների մուտքը տուն: Տանիք բարձրանալու, արեգակին դիմելու, նրանից նորածնին բախտ ու ծնողներին առողջություն հայցելու արարողությունը արևապաշտության հնագույն հիշատակ է, որով շեշտված է արեգակի կյանքի և երջանկության պարգևիչ լինելու գաղափարը:

Տե՛ս № 158բ ծանոթագրությունը:

158բ. Խորագիր չունի:

Բանահավաքի հաղորդմամբ՝ ասում է տատմայրը երեխային լողացնելուց հետո, բարուրելիս: Նա բարուրի վրա մի հաց է դնում, ձեռքը վերցնում ծայրին սոխ անցկացրած շամփուր, տանից դուրս գալիս, դառնում դեպի արևելք և ասում այս աղոթքը: Այնուհետև մտնում է տուն, նորածնին դնում ծննդկանի աջ կողմը, շամփուրը դնում ծննդկանի բարձի տակ՝ հետը ավելացնելով դաշույն, սանդերք, երբեմն էլ հրացան, որպսզի չարերը չհամարձակվեն մոտենալ երեխային:

Աղոթքը արևապաշտության բացահայտ վերապրուկ է. տատմայրը արեգակին դիմում է իբրև աստծո և նրանից աղերսում նորածնի համար կյանք *(փայ՝ կենաց բաժին, հմմտ. «Արևդ երկարի», «Աստված արևդ բաշխի», «Արևդ կանաչի» ևն. մաղթանքները)* և կենսամիջոցների ապահովում: Արեգակը դիտված է որպես կյանք և կենսամիջոցներ պարգևող, իսկ նորածինը՝ կենսաբաշխ արևի նոր սերնդի ներկայացուցիչ, որի հովանու տակ պետք է պատսպարվեն ու գոյատևեն տարեց սերնդի մարդիկ, որոնց արևը (=կյանք) տարիքի առաջացման հետ աստիճանաբար պակասում է:

1(159)ա. Խորագրված է և ծանուցված. «Աղօթք տղացկանի և թպղայի և ալի, զոր ասաց սուրբ առաքեալն Քրիստոսի Պետրոս»:

Տողատումը և որոշ բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

Միջնադարյան գրավոր աղոթքների այս ամբողջ տարբերակաշարը երդմնեցուցական բնույթ ունի և ընդհուպ մերձենում է Սողոմոնի երդվեցումներին (տե՛ս Բուժաղոթքների ծանոթագրությունների նախաբանը), բաղկացած է վիպական նկարագրական նախաբանից, հարց ու պատասխանով խոստովանություններից, չար ոգու երդվեցումից, սուրբ անձանց հմայական կապքի կարգադրություններից և ծննկանին ու նորածնին ուղղված պահպանության մաղթանքներից:

Սիմոն Պետրոսը - նորկտակարանյան նույն անձն է՝ Պետրոս առաքյալը, Քրիստոսի 12 աշակերտներից մեկը, որի բուն անունն է Սիմոն: Պետրոսը նրա հունարեն մականունն է, որ թարգմանված է արամերեն Քեփա «քար» բառից և հունարեն հենց «քար» է նշանակում: Քրիստոսն է «Պետրոս» մակդիրով անվանում Սիմոնին՝ աշակերտներ ընտրելու ժամանակ: *«Դու ես վէմ, - ասում է նրան Քրիստոսը, - և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն»:* Եվ Քրիստոսը նրան է նախընտրում հանձնել երկնային արքայության դռների բանալիները:

«Եվ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս» [**Մատթեոս ԺԶ,** 18-19]:

Պետրոսին ուղղված Քրիստոսի այս պատգամները քանիցս հանդես են գալիս աղոթքների սույն տարբերակաշարում իբրև հմայական յուրահատուկ բանաձևեր:

1(159) բ. Խորագրված է և ծանուցված՝ «Գիր թպղի կամ ում տղա չապրի, զայս բաներս ու զայս տլըսմս պօղպատ ամանով ի հետն պահէ»:

Խորագրին հաջորդում է հմայագիրը (=տլըսմ - թալիսման), որն այստեղ տեխնիկական պատճառներով չի բերվում:

Տողատումը և որոշ բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

Պաւղոս (հուն. Պաուլոս) - քրիստոնեական ավանդության մեջ Պողոս առաքյալը, եբրայական անունը՝ Սաւղոս, սկզբնապես քրիստոնյաներին պատժող ու հալածող, բայց Դամասկոս գնալիս՝ իրեն երևացած աստվածային տեսիլից հետո ընդունում է քրիստոնեական դկրտություն, դառնում քրիստոնեության մոլի քարոզիչ: Նա թեպետ անձամբ ծանոթ չի եղել Քրիստոսին և չի պատկանում վերջինիս 12 աշակերտների թվին, սակայն իր աստվածաբանական-առաքելական բացառիկ արդյունավետ գործունեության շնորհիվ Պետրոս առաքյալից հետո և նրա հետ միասին ճանաչվում է իբրև քրիստոնեական ուսմունքի «նախաթոռ առաքյալ» և «տիեզերական վարդապետ»:

Եկեղեցական պաշտամունքում և մանավանդ ժողովրդական ավանդության մեջ

Պողոս առաքյալը հաճախ հանդես է գալիս Պետրոս առաքյալի հետ իբրև զույգ սրբեր:

Սուրբն Անոս և սուրբն Շիղա - Անոս, եթե Անթիանոս (տե՛ս № 146 իե, իզ) անվան աղավաղումը չէ, ապա Անաս անվան վրիպակն է (հմմտ. № 1(159)է աղոթքի Անաս և Շիղաս զույգ սրբանունները), այլ տարբերակներում՝ Անու (№ 1(159)ը): Անաս հավանաբար Անաստաս սրբանվան հապավումն է (տե՛ս №1(159)ժա ծանոթագրությունը): Շիղան Պողոս առաքյալի ակտիվ գործակիցն է եղել և քրիստոնեական ուսմունքի եռանդուն քարոզիչ [տե՛ս **Գործք առաքելոց ԺԵ,** հտն.]:

Շիղա անունը հաջորդ տարբերակներում աղավաղվելով՝ դարձել է Շղատ, Շիշայ, Շիթ, Շիխաք, Շաղիթայ:

Այս, ինչպես նաև նախորդ աղոթքում ալը հանդես է գալիս իբրև չար քամու մարմնավորում՝ «դժնիկ հողմ», մի հնագույն հավատալիք, որ վկայված է տակավին 5-րդ դարից:

Եզնիկի վկայությամբ՝ հողմը, ըստ սնահավատքի՝ ոգի է: «Այս» կոչված չար ոգին (որից ցարդ հարատևող «այսահար» «այսահարվել»- դիվահար, դիվահարվել իմաստները) Հայաստանի որոշ գավառներում կիրառվել է «հողմ, քամի» նշանակությամբ [**Եզնիկ I, ԻԳ**]: Այս նույն հավատալիքի արդյունք է ժողովրդական ավանդության մեջ որևէ անհայտ հիվանդության մասին հաճախ ասվող «չար քամի է դիպել» դարձվածը: Ըստ այս հավատալիքի՝ մի շարք հիվանդություններ, այդ թվում նաև ալքոտվելը կամ թպղոտվելը դիտվել են իբրև չար քամին անձնավորող ոգիների ներգործության արդյունք:

1(159) գ. Խորագրված է և ծանուցված. «Գիր վասն թեպղի և որդէծնութեան աղախնոյս աստուծոյ Խանումին եղիցի, ամէն»:

Տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Աղոթքի 38-46 տողերը, փոքր ինչ աղավաղումներով, Քրիստոսի կողմից Պետրոս առաքյալին ուղղված խոսքերն են՝ քաղված Մատթեոսի ավետարանից:

Տե՛ս 1(159)ա ծանոթագրությունը:

1(159) դ. Խորագրված է և ծանուցված. «Գիր թպղի կամ ում տղայ չի ապրի, գրէ, վերայ պահէ, այլ ոչ վնասի զաւակն Աստուծոյ»:

Տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

Այս տարբերակում նկարագրվող չար ոգին և արարքների խոստովանողը տղամարդ ալն է: Սակայն երդվեցման ժամանակ անսպասելիորեն հանդես է գալիս նրա մայրը: Վերջինիս երդվեցումից պարզվում է, որ այդ ալը նրա անդրանիկ զավակն է և նրանից բացի նա ունի ևս 11զավակ, որոնց անունները ըստ կարգի թվարկվում են իր իսկ կողմից:

Ալի մոր երդվեցմանը հաջորդում է աղոթողի տերունական աղոթքների բանաձևերով դիմումն աստծոն և չար ոգիների երդվեցումը (59 և հտլ. տողերը)՝ հանուն հիվանդի բուժման:

Տե՛ս 1(159)ժդ ծանոթագրությունը:

1(159)ե. Խորագրված է «Գիր թպղի կամ ում տղայ չապրի»:

Տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը: Տե՛ս նաև № 1(159)ա, բ ծանոթագրությունները:

1(159)զ. Խորագրված է «Գիր ալքի և ծնուն կանաց չար թպղի, որ ոչ վնասէ կանաց կամ տղաց»:

Հմայիլը գրված է ՌճԾԲ (1703) թ. հոկտեմբերին:

Աղոթքի վերևը, կլոր շրջանակի մեջ, պատկերված է ս. Պետրոսը, որը մատները դեմ է արել ալի ճակատին: Ալը զույգ ոտի վրա կանգնած նապաստակի նման կենդանի է՝ ձեռին բռնած ծննդկանի լյարդը:

Տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

21-25 տողերը, ըստ Մատթեոսի, Պետրոս առաքյալին ուղղած Քրիստոսի խոսքերն են (տե՛ս №1(159) ա, բ, գ ծանոթագրությունները):

Սուրբ Անթանիոս - հայ սրբախոսական գրականության մեջ հայտնի են Անտոնինոս (կամ՝ Անտոնիոս) անունով մի քանի վկաներ: Դրանցից մեկը Անտոնինոս Աղեքսանդրացին է, ապրած և նահատակված Դեկոս (249-251 թթ.) և կամ Դիոկղետիանոս (284-305 թթ.) կայսրերի ժամանակ: Հայտնի է կռապաշտների դեմ մղած իր աներկյուղ պայքարով: Մյուսը Անտոնինոս Սուրոնացին է, «քարահատ և շինող», նահատակվել է քրիստոնեության առաջին դարերում, Ապամիայում: Երրորդը Անտոնինոս երեցն է՝ Պաղեստինի Կեսարիայից, նահատակված Մաքսիմիանոս կայսրի օրոք (286-305 թթ.): Չորրորդը՝ Անտոնինոս կամ Անտոնիոս Անկյուրացին է, որդին Մելասիպոսի և Կասիանեի, 13-ամյա ջերմեռանդ քրիստոնյա: Նրա աչքի առաջ, Հուլիանոս Ուրացող կայսրի (332-363 թթ.) ներկայությամբ, երբ չարաչար տանջանքներով նահատակում են ծնողներին, Անտոնիոսը վերցնում է նրանց անդամատված մարմնի մասերը, համբուրում և արյունը դեմքին քսում: Հուլիանոսը պահանջում է ուրանալ քրիստոնեությունը, իսկ Անտոնիոսը, ի պատասխան, թքում է Հուլիանոսի դեմքին և գերադասում նահատակվել [տե՛ս **Ալգերեան, Դ,** 361-362, ԺԲ, 268-269, **Անասյան 1959,** 998-999]:

Թե որ Անտոնիոսն է աղոթքում նկատի առնվել, դժվար է ասել, եթե դա Անտոն Անապատականի (Թեբայեցի) անվան աղավաղումը չէ, որը եղել է եգիպտական միայնակյաց (251-356 թթ.), խիստ բարեպաշտ ճգնավոր, իր ավելի քան 80-ամյա ճգնակեցության տարիներին շարունակ ենթարկվել է չար ոգիների ներգործությանը և միշտ հաղթահարել: Նա հայոց եկեղեցում դասվել է տոնելի սրբերի շարքը [տե՛ս **Վարք սրբոց,** 220-232]:

1(159)է. Խորագիր չունի:

Տողատումը և վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

Դևի յետասած (հմմտ. №1(159)ա, ետն ածէ, բ, յետսած) անունը անստույգ է և անհասկանալի: Այստեղ առավել հստակված է, սակայն, այդ դևի՝ իբրև մարմնավորված

չար հողմի գործառույթը (տե՛ս № 1(159) բ ծանոթագրությունը):

Աղոթքի 48-49 տողերից պարզվում է, որ այդ դևը (իմա՝ ալը կամ թպղան) ծնվում է նորածնի կնունքից առաջ և մինչև նրա կնքվելը ու մկրտվելը վնասում և ապականում է նրան: Այստեղից էլ նորածնին շուտափույթ կնքելու և մեռոնելու ծիսական սովորույթը, որով, ըստ հավատալիքի, նա վնասազերծվում է չար ոգիների ներգործությունից:

Աղոթքի սկզբում հիշատակված են միայն երկու սրբեր՝ Անաս և Շիղաս. մինչդեռ շարունակության մեջ ալին երդվեցնողը Սիմոն-Պետրոսն է (տե՛ս № 1 (159) բ ծանոթագրությունը): Աղոթքի սկզբնամասն, ըստ երևույթին սրբերի անվան նկատմամբ որոշ չափով աղճատվել է, և Պետրոսի ու Պողոսի անունները, որոնք նախորդ տարբերակներում հանդես են գալիս այս զույգ սրբերի հետ, դուրս են ընկել, բայց շարունակության մեջ պահպանել են իրենց երդմնեցուցական խոսքն ու գործառույթը:

1(159)ը. Խորագրված է և ծանուցված. «Գիր վասն թպղին և չար ալքին, որ նստի ի վերայ տղացկանի. որ ոչ մերձենայ անուամբ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ»:

Տողատումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

1(159)թ. Խորագրված է «Գիր թպղայի և չար ալքի»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքի վերևում պատկերված է սրբերից մեկը՝ բարձր հասակով, մերկացրած սուրը ձեռին. նա մյուս ձեռով բռնել է ողջ մարմինը մազով ծածկված ալի գլխի մազափնջից և կամենում է կտրել գլուխը: Ալը սարսափից աչքերը չռած՝ կծկվել է, ձեռին բռնած ծննդկանի մուգ կարմիր լարդը: Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

Սույն տարբերակում ալին երդվեցնող սրբերի քանակը հասել է հինգի, իսկ անունները լրիվ փոխվել են: Դրանք են. Նաևոս, Նշիաթ, Կղոթիոս, Սիսիաևոս, Մաթէ, որոնցից մի քանիսը հանդես են գալիս նաև հաջորդ տարբերակներում:

1(159)ժ. Խորագրված է «Աղօթք և տլիսմ թպղէ, ծառայս Աստուծոյ»:

Տողատումը կազմողինն է:

Գրի է առել Ա. Գըլըճյանը մի ձեռագիր հմայիլից, որ ունեցել է հետևյալ հիշատակարանը. *«Գրեցաւ պահպանութիւն համայլիս ի թվին ՌՃՀԶ ի քաղաքն Մարաշ, ի թաղըն Աղտէրէ, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետ եկեղեցւոյ, որ կառուցեալ կայ և է բարեխօս ամենայն Քրիստոնէից, ձեռամբ մեղաւոր և անարժան ոտաց կոխան հող և փոշի, Յովաննէս երիցու, ի վայելումն Աւետիքին՝ բարով վայելել տացէ, ամէն»:*

1(159)ժա. Խորագրված է «Գիր չար ալի կապ է և թպղի է»:

Տողատումը կազմողինն է:

Ալի և թպղայի մասին տե՛ս ծննդկանի աղոթքների սույն ծանոթագրությունների նախաբանը:

Երդվեցնող սրբերի քանակն այս տարբերակում հասել է վեցի, որոնց մեջ հանդիպում են նոր անուններ՝ Անաստաս, Շմավոն, Ուստիանոս:

Շարունակության մեջ, սակայն, հանդես է գալիս նաև 7-րդ սուրբ անձը՝ Մարիամ Աստվածածինը, որը Սիսիանոսի հետ միասին երդվեցնում է ալին (տե՛ս № 1(159)ժբ ծանոթագրությունը):

Աղոթքի վիպական սկզբնամասում ավելացել են նոր մոտիվներ. հիշյալ վեց սրբերը ոչ թե ճանապարհ կամ որսի գնալիս պատահաբար են հանդիպում ալին, այլ նրանք բարձրանում են լեռը հատուկ նպատակով՝ իրենց հետ վերցնելով դանակ և երեք բևեռ (մեխ), ըստ երևույթին ալին կապելու, բևեռելու կամ սպանելու համար:

Աղոթքի 22-27-րդ տողերում ալի գործառույթները բնորոշող նոր մոտիվ է առկա, ըստ որի՝ երեխայի օրապակաս ծնունդը ևս դիտվել է իբրև ալի չար ներգործության արդյունք *(«Յայն օր և յանժամանակ առնեմ/ Եւ ամսյի պակաս առնեմ»):*

Անաստաս և **Շմավոն** սրբանունները հավանաբար վերաբերում են պարսիկ քրիստոնյա վկաներին: Առաջինը կոչվել է Անաստաս (Անաստասիոս) Պարսիկ, բուն անունը Մակունդատ (կամ՝ Մակունդաս), եղել է մոգի որդի և պարսիկ զինվորական, Երուսաղեմում մկրտվել է քրիստոնյա, վերանվանվել Անաստաս (հուն. հարություն կամ հարուցյալ) և ընդունել կրոնավորական կարգ: Պարսից Խոսրով 2-րդ թագավորի հրամանով տարվել է Պարսկաստան և 628 թ. նահատակվել: Թաղվել է ս.Սարգսի եկեղեցում: Նրա գերեզմանը հետագայում դառնում է ուխտատեղի, մասունքները՝ բուժամիջոց **[Աւգերեան, Ը,** 5-40]:

Շմավոնը եղել է պարսից եպիսկոպոս, Տիզբոնի եպիսկոպոսապետը, փայլել է իր քրիստոնեական վարդապետութեամբ, ապրել է Շապուհ Երկայնակյացի ժամանակ: Երբ վերադարձել է Երուսաղեմ կատարած ուխտագնացությունից, Կոստանդիոս Մեծը եկեղեցու շինության համար նրան ընծաներ է տալիս: Պարսկաստանում Շապուհը նրանից խիստ բարձր հարկեր է պահանջում: Շմավոնը անկարող լինելով վճարել՝ ձերբակալվում է: Սկսվում են քրիստոնյաների դեմ նոր հալածանքներ: 340 թ. Շմավոնը շատ քրիստոնյաների հետ նահատակվում է **[Աւգերեան, ԺԲ,** 304-305]:

1(159)ժբ. Խորագրված է «Գիր ալքի և թպղայի»:

Տողատումը և որոշ բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Աղոթքի վիպական սկզբնամասում, նախորդ տարբերակների համեմատությամբ հանդես են եկել նոր մոտիվներ. նախ փոխվել են երդվեցնող սրբերի անունները՝ Անտոն և Նշխար: Ապա նրանք հանդիպում են ոչ թե անգործ նստած ալին, այլ նրան բռնում են հենց հանցանքը կատարելու պահին՝ նորածնին խեղդելիս: Սրբերը նրան կապում են վեմից, և այդ պահին հանդես է գալիս ալի մայրը (մայր ալին), որին էլ սրբերը ենթարկում են խոստովանեցման և երդման:

Այս նոր մոտիվները զգալիորեն փոխել են աղոթքի սույն տարբերակի բովանդակությունը: Աղոթքի եզրափակիչ մասը ևս ենթարկվել է փոխակերպման: Աղոթողը բուժման համար դիմում է ոչ թե աստծոն կամ ս. Երրորդությանը, ինչպես նախորդ տարբերակներում, այլ միջնադարում քրիստոնեական եկեղեցու կողմից սրբացած մի խումբ բժիշկների (Անտիոքացի բժիշկ, Կոզմա, Դամիանոս, Պանդալեոն):

Սուրբ Անտիոք բժիշկ - Անտիոք կամ Անտիոքոս սուրբը, ըստ ավանդության, եղել է քրիստոնյա բժիշկ, Սեբաստիա քաղաքից, որը շրջել է բոլոր գավառները և հիվանդներին ձրի բուժել *(այստեղից էլ նրա Անարծաք մակդիրը):* Նրա համբավը տարածվում է ամենուրեք, հասնում թագավորին: Նրան ձերբակալում է անօրեն դատա-

վոր Ադրիանոսը, ենթարկում ծանր տանջանքների, որպեսզի հրաժարեցնի քրիստոնեական հավատից: Սակայն նա մնում է անսասան: Նրան գցում են գիշատիչ գազանների, ինձերի մեջ, բայց նրանք պատկառելով սրբից՝ չեն մոտենում նրան: Տեսնելով այդ, սրբին ազատ են արձակում: Բայց վերջինս գիշերով մտնում է կուռքերի տաճարը, կործանում բոլոր բագինները, քրմերից ձերբակալվում և գլխատվելով նահատակվում [տե՛ս **Վարք եւ վկայաբանութիւնք, Ա,** 135-137]:

Կոզմայի և **Դամիանոսի** մասին տե՛ս չար աչքի աղոթաշարի № 35ժա ծանոթագրությունը:

Պանդայլէոն, ստույգ՝ **Պանդալեոն** կամ **Պանտալեյման** («ամենաողորմ»)- ըստ քրիստոնեական սրբախոսական ավանդության՝ Նիկոմիդիա քաղաքի բժիշկ, ապրած և գործած 3-րդ դարի երկրորդ կեսերին: Բժշկություն է սովորել Եվփրոսինոս բժշկապետից, իսկ քրիստոնեություն է ընդունել և մկրտվել Երմոլես քահանայից: Քրիստոնեական հավատի համար նահատակվել է 303 թ.:

Իր երկրորդ անունը՝ Պանտալեյման, ստացել է նահատակման պահին՝ երկնքից հնչած աստվածային հրամանով [**Վարք սրբոց,** 284-291]:

1(159)ժգ. Ունի կրկնակի խորագիր՝ գրված տարբեր ձեռագրերով. «Գիր որդամեռի: Այս գիր պահպանութեան»:

Տողատումը կազմողինն է:

Չար ոգու անունը չի նշվում երդման մեջ, այլ միայն մակդիրը՝ *Ուժաւոր:*

Այստեղ ծննդկանին վնասող չար ոգին հանդես է գալիս ծերունու կերպարանքով և աստղի նման շեկ կամ գորշ՝ հարտէշ -խարտյաշ:

1(159)ժդ. Խորագրված են՝ ձեռ. № 6677 «Գիր թպղայի և չար դևի», ձեռ. № 8428 «Գիր թպղի և զաւակ մնալոյ»:

Տողատումը կազմողինն է:

№ 8428 ձեռագիրն ավարտվում է «անուանքն այս են» նախադասությամբ, որին տրամաբանորեն պիտի հաջորդեր չար ոգիների անունների թվարկումը: Մինչդեռ № 6677 ձեռագրում այդ անունների թվարկումը կա, սակայն ոչ լրիվ, ընդամենը հինգ անուն: Անունների ամբողջական թվարկումը, ընդ որում 12 դիվանվան, առկա է Մատենադարանի № 30 հմայիլում (տե՛ս № 1 (159) ժա տարբերակը) և № 6678 ձեռագրում (№ 1(159) դ տարբերակը):

Համեմատության համար ստորև բերվում են այդ անունների շարքերը՝ ըստ սույն համահավաքի տարբերակների:

1(159) դ	1(159) ժէ	1(159) ժդ	1(159) իա
1.Ծնելոց	Ծնանելոյ	Ծնանելոց	Ծնանելոյ
2.Աղլազո	Ազլազոյ	չիք	Ազլազոյ
3.Մայրոյէ	Մարոց	Մայրոց	Մարոյ
4.Աղքատէ	Դաղաքօտէ	Տղայոցն	Դայգաղայ Գօտէ
5.Այսմէ	Ասլումէ	Ասլըսամ	Ասլումէ
6.Այսգին	Այիլինէ	Համիլէ	Այիլինէ
7.Մարմարոյէ	Մառմառայ	չիք	Մարմառոյ
8.Այրոյ	Աշիոյ	չիք	Աշիոյ
9.Կալիշի	Կալելի	չիք	Կալիլէ
10.Յուլիցայ	Հոմիզան	չիք	Հոմիզան
11.Եկիտուն	Եկիտուն	չիք	Հոմիտուն
12.Անկանես	Անկեանիս	չիք	Անկանիս

Համեմատությունից պարզվում է, որ բերված 12 դիվանուններից աղոթքների չորս տարբերակներում մոտավորապես համապատասխանում են միմյանց №1-ը, որի հիմքում ընկած է հայերեն ծնել կամ ծնանել բառը, № 3-ը (Մայրոյէ, Մարոց, Մայրոց, Մարոյ), որ կարող է հայերեն մայր բառի վրա հիմնված լինել (Մայրոյէ անվանածնում է հավանաբար հայերենի օժանդակ բայն է, անվան ուղիղ ձևը՝ Մայրոյ. № 5-ը (Այսմէ, Ասլումէ, Ասլըսամ) օտար ինչ-որ անվան տարբերակներ են: Իսկ լրիվ անվանացանկը պարունակող աղոթքի երեք տարբերակներում միմյանց են նույնությամբ կամ մոտավորապես համապատասխանում №-4-ը (Աղքատէ, Դաղաքօտէ, Դայգաղայգօտէ), որտեղ երկրորդ անվանածնի սկզբնատառը՝ Դ հնարավոր է անվան հերթական թվի (4) մեխանիկական համակցում լինի բուն անվանը՝ Աղաքօտէ, № 7-ը (Մարմարոյէ, Մառմառայ, Մարմառոյ), № 9-ը (Կալիշի, Կալելի, Կալիլէ), մասամբ № 11-ը (Երկիտուն, Հոմիտուն) և 12-ը:

Հնչյուններով մասամբ իրար են նմանվում № 6-ը (Այսգին, Այիլինէ), № 8-ը (Այրոյ, Աշիոյ): Բնավ իրար չեն համապատասխանում №10-ը (Յուլիցա, Հոմիզան) և № 6-ի 3-րդ տարբերակի Համիլէ անունը, որ չի հանդիպում երեք լրիվ անվանացանկերում առհասարակ: Չի բացառվում, որ վերջին № 12-ում նշված անունների (Անկանես, Անկեանիս, Անկանիս) հիմքում ընկած լինի հայերեն անկանել բառը՝ իմաստաբանորեն կապված չար ոգիների կողմից հղի կնոջը վիժեցնելու՝ մանկան անժամանակ անկման երևույթին (հմմտ № 1 Ծնելոց, Ծնանելոյ անունների իմաստների հետ):

1(159)ժե. Խորագիր չունի:

Չեռագիր հմայիլում հաջորդում է № 1(159) բ ընդարձակ տարբերակին, որը խորագրված է «Գիր վասն թպղի և որդեծնութեան»:

Տողատումը կազմողինն է:

Սուրբ Փոկաս, - Պոնտոսի Փոկաս եպիսկոպոսը, Սինոպ քաղաքից, մանկությունից ստանալով քրիստոնեական կրթություն, Պոնտոսում մեծ հռչակ է ձեռք բերում հեթանոսներին քրիստոնյա դարձնելու իր ձիրքով: Երբ Տրայանոս կայսրը գալիս է Ամասիա, Փոկասը ներկայանում է նրա ատյանը, հարցաքննվում և բազում չարչա-

րանքներից հետո հրկիզմամբ նահատակվում [**Թորգոմ պատրիարք**, 86-87]:

1(159)ժզ. Խորագրված է «Աղօթք պահպանութեան, որ ոչ վնասի դիւաց»:

Տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Ալին երդվեցնելու դիմումը և ալի երդումը, գրեթե նույն բանաձևերով ու սրբություններով, առկա են նաև 1(159)ժա, ժէ տարբերակներում (տե՛ս):

Ալը երկուստեք քրիստոնյա սրբերին երդվում է նրանց կողմից ընդունվող և պաշտվող քրիստոնեական սրբություններով. խաչի վրա խաչված Քրիստոսի տարածած բազուկներով, հայր աստծով և սուրբ հոգով, Քրիստոսի գերեզմանի վրա դրած և հարության ժամանակ հրեշտակի կողմից տապալած վեմով, վերջին դատաստանով (հմմտ. 1(159)ժզ տարբերակը), որն ընգրկում է ամբողջ տիեզերքը՝ արևի և լուսնի տարածած ճառագայթներով և երկնքի բարձրություններն ու ծովերի խորքերը:

Աղոթքում թվարկված են ալերի 11 անուններ, որոնք որոշ տարբերակումներով առկա են նաև 1(159)դ, ժդ, ժզ աղոթքներում (տե՛ս 1(159)ժդ ծանոթագրությունը): Սույն աղոթքը, իբրև առանձին մաս, հարակցվել է 1(159)ժէ տարբերակին (տե՛ս տարբերակն ու ծանոթագրությունը):

1(159)ժէ. Խորագրված են. Հմայիլ№ 30 «Աղօթք թպղայի և ալի, որ ոչ մերձենայ»,Հմայիլ№ 3 «Այլ գիր թպղայի և ալի»:

Տողատումը կազմողինն է:

Սույն աղոթքի առաջին վիպական մասը (սրբի հանդիպումը ալին կամ թպղային և վերջինիս խոստովանությունը), որ հաճախ է հանդիպում սույն 1(159) տարբերակաշարում, հարակցվել է Տիրամոր կողմից ալին երդվեցնելու անկախ աղոթքին (տե՛ս նախորդ 1(159)ժզ տարբերակը) և առաջ է բերել իմաստային անհարիրություն. աղոթքում չար ոգուն հանդիպողը և հարցնողը ս. Սիսիանոսն է, սակայն բռնողն ու երդվեցնողը՝ Մարիամ Աստվածածինը:

Աղոթքն ուշագրավ է նաև ալերի կամ թպղաների անունների թվարկումով, որ հանդիպում է նաև այլ տարբերակներում ևս (հմմտ. №1(159) դ, ժդ, ժզ): Պարզվում է, որ նրանց քանակը հավասար է տիեզերական թվի՝ 12-ի (տե՛ս № 1(159) ժդ ծանոթագրությունը):

1(159)ժը. Խորագրված է և ծանուցված. «Գիր ալքի և թպղայի, որ ի վերայ տղացկանին նստի կամ տղայն չապրի, նայ զայս տլսմս և աղօթս վրան պահէ, տղան ապրի ծառային Աստուծոյ»:

Սրան անմիջապես հաջորդում է հայատառ, արաբատառ և արամեատառ հմայագիրը, որը այստեղ տեխնիկական պատճառներով չի զետեղվում:

Տողատումը կազմողինն է:

Ուշագրավ է ծննդկանին վնասող չար ոգու ինքնաբնութագիրը՝ «Ես եմ որդն վայրենի» և իր արարքների թվարկումը: Այսինքն՝ նա վայրի որդի նման ներսից ուտում, սպանում է մանկանը տակավին մոր արգանդում կամ էլ երկու, ինը, հինգ կամ չորս ամսական հասակում ուզած ձևով վնաս է պատճառում մանկանը: Այս մոտիվները նախորդ տարբերակների համեմատ, որոշ նորություն են բերում ալի և թպղայի գործառությանը:

Աղոթքի սկզբում հիշատակվում է միայն մեկ սրբի՝ Սիանոսի (իմա՝ Սիսիանոս)

անունը, որը հանդիպում է չար ոգուն և երդվեցնում նրան: Սակայն շարունակության մեջ, երդվեցումից հետո անորոշ ձևով հանդես են գալիս մի քանի սրբեր, որոնք կամենում են պատժել չար ոգուն («Եվ զայն լսեցին սուրբքն/Եվ կամեցան ըսպանանել զնա»): Սա ցույց է տալիս, որ աղոթքի երկրորդ մասը այլ տարբերակներից է հարակցվել աղոթքի առաջին մասին, ուր միայն մեկ սրբի արարք է նկարագրվում, և առաջ է բերել իմաստային անհարիրություն (հմմտ. 1(159)ժ, ժգ, ժդ և այլ տարբերակները):

1(159)ժք. Խորագրված են. Հմայիլ№ 8 «Աղօթք թպղայի և ալի», ԷԱԺԱ «Վասն Թպղայի և Ալի», Հմայիլ№ 26 խորագիր չունի:

ԷԱԺԱ տարբերակը տպագրված է ձեռագիր հմայիլից: №8 տպագիր հմայիլը գրված է ՌճԿԷ (1718) թ.:

Տողատումը կազմողինն է:

Այստեղ ևս, ինչպես 1(159)ժբ տարբերակում, հանդես է գալիս ալի մայրը և ինքն է երդվում սրբերից կապված ալի փոխարեն:

Ս. Սիօվն (Սիօն) - եբրայական ավանդության մեջ՝ բլուր Երուսաղեմում, որտեղ ըստ աստվածաշնչյան առասպելի՝ գտնվում էր Եհովա աստծո տաճարը և Դավիթ թագավորի ապարանքը: Հուդայական կրոնում այլաբանորեն նշանակում է «աստծո հավատարիմ» մարդ: Քրիստոնեական աշխարհում կիրառվում է որպես Երուսաղեմի համանիշ: Աղոթքում գործածված է որպես կոնկրետ սրբի անձնանուն:

Ս. Սիսի, ս. Սիսիանէ, ս. Սանոս, ս. Սիսիանոս սրբանունները ընդհանուր եկեղեցական ավանդության մեջ Սիսոյի, Սիսինիոս, Սիսիանոս ձևերով հաճախ նույնացվում են: Ըստ վարքագիր Պալադիոսի՝ Սիսինոս աբբան կամ Սիսիանոսը եղել է ազգությամբ կապադովկացի, երևելի միայնակյաց, 6-7 տարի սովորել է Ելպիդիոս Կապադովկացու մոտ՝ Լուկա լեռան Երիքովի քարայրում, ապա երեք տարի փակվել է գերեզմանում և հոտընկայս աղոթել, որով նա դևերի վրա ձեռք է բերել լիակատար իշխանություն: Հետագայում նա վերադարձել է իր հայրենի երկիրը՝ Կապադովկիա, և արժանացել քահանայության: Հայոց հարուստ վարքագրության մեջ այդ սրբերի մասին հիշատակություն չկա [տե՛ս **Աւգերեան, Թ,** 287-290]:

Ս. Նօվիէլ և ս. Տածիէլ - եբրայական ավանդության մեջ հրեշտակների անուններ են:

1(159)ի. Խորագիր չունի:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքը գրված էր ձեռագրի վերջին պահպանակ թղթերից մեկի վրա՝ լի սխալներով և բառերի աղճատումներով:

Հակառակ նախորդ տարբերակների, ուր ալը սրբերին հանդիպում է դաշտում, անապատում, լեռներում, հաճախ ավազի վրա նստած, այս աղոթքում ալը Քրիստոսին և Գաբրիել հրեշտակին հանդիպում է ծովափին, մի մոտիվ, որ ակնարկում է ալի կապը ջրային տարերքի հետ (տե՛ս № 1(159)իբ ծանոթագրությունը):

1(159)իա. Խորագրված է «Այլ գիր թպղայի և ալի»:

Տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Աղոթքում ալը հանդես է գալիս լեռներից իջնող ամեհի վիշապի կերպարանքով, որն ունի խոզի նման բաշ, աստղի նմանվող աչք և կարմիր, ծիրանագույն լեզու:

Ալի այս նկարագիրն ունի առասպելաբանական ծագում և սերում է լեռնային վիշապների մասին ավանդական պատկերացումներից:

Աղոթքներում և միջնադարյան մանրանկարներում ալը և թպղան մեծ մասամբ հանդես են գալիս մարդակերպ կամ մարդակենդանակերպ և բնավ չունեն այն ահռելի մեծությունն ու վիշապակերպ նկարագիրը, որպիսին առկա է սույն աղոթքում: Վիշապի հին ավանդական պատկերացումը պարզապես բաղարկվել է ալի չար կերպարին և նրան դարձրել վիշապ: Նման բաղարկման արդյունք է թերևս ալի գործառույթների շրջանակի ընդլայնումը սույն աղոթքում:

Հայտնի է, որ ալը և թպղան ծննդկանին և նորածնին վնասող չար ոգիներ են միայն: Մինչդեռ աղոթքում հիշատակվում է նրանց մեկ այլ գործառույթը. «Մտանեմք ի լուծ եզանցն ուր, կովուցն և մաքեաց,/Ջոմանս խելացն տանիմք», մի փունկցիա, որը բնորոշ է չար աչքին, երբ վերջինս վնասում է լավ եզներին ու լծանը, կովերին, ոչխարներին և այլն (հմմտ. չար աչքի № 37 ա-զ աղոթքների համապատասխան մոտիվների հետ): Իսկ չար աչքը աղոթքներում հաճախ ունի վիշապային նկարագիր (սև օձ) և նրա գործառույթները միանգամայն համախոս են իր ավանդական պատկերացումներին:

Ալի վիշապային, հատկապես ջրային ծագումն ու պատկերացումը առկա է նաև հաջորդ աղոթքում (տե՛ս № 1(159) իբ), որ դարձյալ արդյունք է վիշապի հնագույն կերպարի բաղարկման:

Աղոթքում թվարկված են նաև ալերի 12 անունները (տե՛ս 1(159)ժդ ծանոթագրությունը):

1(159)իբ. Խորագիր չունի:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում ալը պատկերված է ծովի ընդերքից բարձրացող և ջրի ալիքների վրա թավալվող ջրային կենդանու կերպարով (տե՛ս № 1(159) իա ծանոթագրությունը) և կոչվում է **Անգութիոս:** Անվան ստուգաբանությունը պարզ չէ: Եթե այն առասպելական ջրային հրեշի օտար անվանում չէ, ապա հնարավոր է, որ հայերեն *անգութ* բառի վրա հունարեն -ոս անվանակերտ վերջածանցի նպատակային հավելումը լինի, իբրև չար ոգուն բնորոշող մակդիր: Նրա այդ օտար անվանածևը հմայական խորհրդավորության նպատակ կարող էր հետապնդել:

Աղոթքում Անգութիոս ալն ունի ջրային-ծովային ծագում, որ բնորոշ չէ ծննդկանին վնասող ալին կամ թպղային: Հմայական աղոթքների ճնշող մեծամասնության մեջ այդ չար ոգիները հանդիպում են չոր լեռներում, ճանապարհներին, անապատներում, հաճախ ավազի վրա նստած, որ վկայում է նրանց կապը չորության (իմա՝ անբերրիության) հետ, մինչդեռ խոնավությունը խորհրդանշում է իգականություն, պտղաբերություն, արգասավորում: Նրա խոստովանանքը, ընդհանուր նմանություններով հանդերձ, տարբերվում է ալի և թպղայի կոնկրետ գործառույթներից և խիստ մերձենում չար աչքի արարքներին (մարդու գլխին նստել, ուղեղը ծծել, արյունը քամել և զույգ աչքերը կուրացնել), (հմմտ. չար աչքի №№ 36 ա, բ, 37 ա աղոթքները):

Սա ցույց է տալիս, որ աղոթքն սկզբնապես ասվել է չար աչքի վերաբերյալ, հետագայում է փոխանցվել չար ալին՝ բայց շարունակելով պահպանել նախկին նկարագիրը: Ալը սույն աղոթքում ըստ երևույթին ըմբռնվել է իբրև հիվանդություններ հարուցող չար ոգու անվանում, ինչպես չարք, դև, քաջք և այլն, քան ծննդկանին կամ

նորածնին վնասող որոշակի չար ոգի:

1(159)իգ. Խորագրված է «Նորապսակների վերա աղոթք»: Միաժամանակ տողատակին ծանուցված է. «Սույն աղոթքը ասվում է նաև ծննդկանի քնելու ժամանակ»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքը ալի և թպղայի մասին ասվող միջնադարյան սույն տարբերակաշարից սերող, փոքր-ինչ աղավաղված և ժողովրդական փոփոխակն է՝ նույն երդմնեցուցական բնավորությամբ: Այն նորապսակների վրա է ասվել թերևս ալ դևի երդվեցման մեջ հիշատակվող նորահարսին և աղեկ մանկանը (իմա՝ նորափեսային) ուտելու, հոշոտելու նորամուտ մոտիվի պատճառով:

Սուրբ Սաւնոսը տարբերակաշարում հաճախ հիշատակվող սուրբ Սիսիաննոսի կամ Սիաննոսի համառոտված անվանածևն է:

2(160). Խորագրված են. FBI «Տղոցկանի աղոթելու խոսքեր», FFIII, Փորքշեյան 1971 «Տղոցկանի աղոթք»: FBI բանահավաքն է Հարություն դպիր Տեր-Հովհաննիսյան Սարոյանցը, գրառված է 1881 թ. Սիմֆերոպոլում:

FFIII բանահավաքն է Խաչատուր Փորքշեյանը, գրառված է 1961 թ. Նոր Նախիջևանում, նույնը հնչյունական աննշան տարբերակումներով տպագրված է **Փորքշեյան 1971**:

Աղոթքում տղոցկանի մոտ գնացող, նրան վնասող և Քրիստոսի կողմից անիծվող մանուկը նույնանում է ալիին կամ թպղային, այդ նկատառումով սույն աղոթքը տեղադրվում է ալի և թպղայի դեմ ուղղված աղոթաշարում:

Ե. ՍԵՌԱԿԱՆ ԿԱՊՔԻ ԱՐՁԱԿՄԱՆ (№№ 161-163)

3(161). Խորագրված է «Վասն կապածի»:

Վերնագրին անմիջապես հաջորդում է հետևյալ ծանուցումը. *«Զայս աղօթս գրէ, կապածն հետն պահէ, իւր տուն գնա՝ արծակվի Աստուծով, այս է»:* Ծանուցմանը հաջորդում է բուն աղոթքը:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքը վերաբերում է տղամարդու սեռական ունակության խաթարման իրողությանը, որը ժողովրդական հայացքով դիտվել է իբրև չար մարդկանց կողմից կախարդելու և «կապելու» արդյունք: Աղոթքի բուն նպատակը արտահայտված է վերջին երկտողում *(«Արծակեմ այս անուն կապած մարդն՝/ Ի վերայ իւր կնոջն»,* այսինքն՝ սեռական կապքի (կախարդական արգելքի) վերացում:

Այդ կախարդական կապքի արձակումը աղոթողը կապում է քրիստոնեական մի շարք սրբությունների (370 հրեշտակների, չորս գլուխ Ավետարանի, 36 սրբազան ուխտավայրերի՝ խաչերի, 366 եկեղեցական հայրերի և աշխարհի չորս կողմի սրբերի) զորության հետ: Բոլոր թվերն արտահայտված են արաբական թվանշաններով, որոնք իրենց անծանոթ պատկերով հմայական որոշակի խորհրդավորություն են հաղորդում աղոթքին: Բացի այդ, այդ թվերը քրիստոնեական սրբությունների քանակն արտահայտելով հանդերձ, ունեն տիեզերական տարածաժամանակային միավոր-

ների քանակային իմաստ (տարվա, ամսվա օրեր, չորս եղանակ, աշխարհի չորս կողմեր), որոնցով հմայական ցանկության իրականացումը դառնում է ընդգրկուն և տիեզերապարփակ:

4(162). Խորագրված է «Վասն կապածի»:

Վերնագրին անմիջապես հաջորդում է հետևյալ ծանուցումը. *«Զայս գրէ գ շաբաթի, լուսին նոր լինի, ի վերայ նոր հաւու ծվին, որ այն օրն լինի ածած»:*

Աղոթքը 8-րդ տողից հետո, ընդմիջարկվում է հետևյալ ծանոթությամբ. *«Որդի աստուծոյ, ընկալ քաղցրութեան Ներսէսին աղօթքն ի վերայ այնպէս ասէս, զսաղմոսն ի նեղութեան ասէս լման:*

Զայս աղօթս գրէ, կապածի բազուկն կապէ»:

Այս վերջին նախադասությանը հաջորդում է աղոթքի վերջին եռատողը, որ ենթադրել է տալիս, թե խոսքը վերաբերում է միայն վերջին եռատողի գրելուն և հիվանդի բազկին կապելուն: Այսինքն՝ աղոթքի եզրափակիչ եռատողը դիտվել է իբրև անկախ աղոթք: Իսկ վերևի ծանուցման մեջ հիշատակվող որդի աստուծոյ, ընկալ քաղցրութեան բառակապակցություններից առաջինը Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի մի հատվածի (բան ԽԱ), մյուսը՝ Ներսես Շնորհալու հանրահայտ աղոթքի սկսվածքներն են, աղոթքներ, որոնք ժողովրդական ավանդության մեջ հաճախ են ասվել տարբեր հիվանդությունների բուժման ժամանակ:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում հիշատակված տաս սուրբ անձանց անունները, որոնցից աղերսվում է հիվանդի բուժումը, բոլորն էլ գրեթե անստույգ են:

Տե՛ս 3(161) ծանոթագրությունը:

Մատենադարանի նույն № 8428 ձեռագրում, էջ 59 (75) կա նաև սեռական կապքի արձակման մեկ այլ հմայագրով աղոթք, որի բովանդակությունը բաղադրված է հմայագրից և տաս անստույգ անուններից, որի պատճառով էլ այն զետեղվում է ստորև՝ ծանոթագրությունների մեջ:

«Զայս թլսմս կապածի է հարսի և փեսայի: Գրէ օր Դ շաբաթի ի վերայ երկաթի մի, ձգէ ջուր, լողանան՝ արձակուին աստուծով:

Թարաթ, Երուդ, Աբա, Տալաթ, Ապէր, Ազուպ, Թայիս, Աչանի, Երթայ, Ալդայ, դուք արձակեցէք զայս կապած մարդս»:

Ուրեմն բերված հմայագիրը և բանաձևը գրվել են երկաթի վրա երկուշաբթի օրը, երկաթը գցել են ջրի մեջ և այդ ջրով լողացրել կապված հարսին ու փեսային և դրանով բուժել նրանց: Սեռական և այլ կարգի կապքի (=կախարդության) արձակման աղոթքներն ու հմայագրերը, որոնցով լի են միջնադարյան ախտարական ձեռագրերը (շատերը զուրկ են հմայական բանաձևերից) վկայում են, որ չար հմայության դեմ եղել է նաև հակահմայություն, որի նպատակն է դյութությամբ լուծել, արձակել, չքացնել կախարդական կապանքները: Այլ կերպ ասած՝ պայքար է մղվել հմայության երկու տեսակների՝ չար կամ սև, բարի կամ սպիտակ կոչված հմայությունների միջև. առաջինը պատժել է մարդուն, երկրորդը՝ փրկել:

5(163). Խորագրված է «Գիր կապածի արձակման»:

Ձեռագրին հաջորդում է հետևյալ հմայական արարողության նկարագրությունը: *«Առ նոր ամանով մի ջուր և նոր կողպանք մի և առ սաղմոսարան մի: Եւ մեկտեղ*

կանգնեցոյ զայրն և զկին: Ի վերայ նոցա և ի վերայ ջրին ասայ զխզեսցուք փոխն գ անգամ. զփակած կողպանքն ի վրանին և ի ջրին բանայ և յետոյ չի փակէ, մինչև մեկ լինին: Եվ այլ աղօթք կամ բժշկութեան աւետարան կարդայ, որչափ որ կարէ: Եւ ջրովն հաւասար զանձն լուանան, այր ու կին արձակին աստուծով»:

Այստեղ ներկայացված է հմայական մի ամբողջական ծիսակատարություն, ուր առաջնակարգ տեղ ունեն ջուրը, մետաղե կողպեքը և աղոթգիրքը: Փակած կողպեքը խորհրդանշում է սեռական կապը: Փակ կողպեքը աղոթելու ընթացքում բաց է արվում «կապված» ամուսինների գլխի և ջրի վրա, որով խորհրդանշվում է կապի արձակումը: Աղոթքով և արարողությամբ սրբացած ջրով ամուսինների օծումը դառնում է հմայական բուժման վերջնակետը՝ հմայական աղոթքի զուգակցմամբ:

Այս օրինակում բացառիկ պարզ ու ամբողջական է դրսևորվել արարողական և խոսքային հմայության միասնությունը:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում թվարկված են այն հրեշտակների անունները, որոնք, ինչպես վկայված է եզրափակիչ տողում, ունեն իշխանություն «ի վերայ կապածին», այսինքն՝ բուժում են սեռական արգելակում ունեցող հիվանդներին:

Անունների մի մասը աղավաղված է և անստույգ և չի հանդիպում Մատենադարանի նույն № 8428 ձեռագրում բերված բուժիչ սրբերի և հրեշտակների, ինչպես նաև ցերեկվա և գիշերվա 24 ժամերը և շաբաթվա յոթ օրերը հսկող հրեշտակների անվանացանկերում: Դրանցում հանդիպում են սույն աղոթքում հիշատակված անուններից միայն հետևյալները. Սեդրակ, Միսաք (գիշերվա 7 և 8-րդ ժամերը հսկողներ), Տածիէլ (ցերեկվա 8-րդ ժամը հսկող), Ուրիէլ (գիշերվա առաջին և երրորդ ժամերը, ինչպես և հինգշաբթի օրը հսկող), Սուքայէլ, անվանացանկում՝ Սուքիէլ (ցերեկվա 9-րդ ժամը և հինգշաբթի օրը հսկող), Գաբրիէլ (ցերեկվա առաջին ժամը և երկուշաբթի օրը հսկող), Միքայէլ (ցերեկվա երկրորդ ժամը, երեքշաբթի և չորեքշաբթի օրերը, ինչպես նաև անվեհերություն ներշնչող, դատաստան կամ այլ դժվար տեղ գնալիս վկայակոչվող սուրբ) [տե՛ս ձեռ. № 8428, էջեր 231-233, 748]:

Ըստ միջնադարյան ախտարական հավատալիքի, որ դրսևորված է հիշյալ ձեռագրի 748 էջում, աստծո արքունական աթոռը շրջապատած հսկում են 12 հրեշտակապետեր (դրանց մի քանիսի անունները հիշատակվեցին վերևում): Եվ որտեղ նրանց անունները հիշատակվեն՝ *«այլ ցաւ կամ կախարդութիւն կամ չար ակն և չար լեզու և չար նիյաթ ոչ կարեն մերձենալ ի ծառայս Քրիստոսի...»:*

Զ. ԼՈՇՏԱԿԻ

6(164)ա. Խորագրված է և ծանուցված *«Աղօթք լօշտակին (պարտ է եօթն հանգամ ասել»):*

Լոշտակը (briania alba) դդմազգիներին պատկանող լայնատերև և երկար մարդակերպ արմատներով բույս է, Հայկական լեռնաշխարհում շատ տարածված, հնուց օգտագործվում է բժշկության մեջ, իբրև դեղաբույս, արդի խոսակցականում կոչվում է նաև «հայկական ժենշեն»: Ժողովրդական ավանդության մեջ լոշտակի վերաբերյալ կան մի շարք հավատալիքներ: Ըստ առասպելակյան զրույցի՝ մի վարդապետ Լոշտակ անունով մի փոքրավոր է ունեցել, որին շատ է տանջել: Վերջինս վարդապե-

տի քնած ժամանակ ձեթ է լցրել նրա մորուքին և կրակ տվել: Վարդապետն արթնանալով անիծել է Լոշտակին՝ գետին մտնել: Լոշտակը մտել է գետին, բայց վարդապետը զղջալով իր անեծքի զորությունից՝ անմիջապես պատգամել է, որ Լոշտակը ամենայն հիվանդության դեղ դառնա: Բայց նորից զգալով այրվածքի կսկիծը՝ վարդապետը կրկին անիծել է Լոշտակին, թե ով նրան հողից հանի՝ ինքը մտնի նրա տեղը [**Ղանալանյան 1969,** 118]: Հայաստանի շատ վայրերում հավատում են, թե լոշտակի արմատները հողից հանելիս՝ սուր ճիչ են արձակում, որը լսելիս՝ մարդ մեռնում է: Այդ հավատալիքի հիման վրա լոշտակը հողից հանում են հմայական հատուկ արարողությամբ. նախ՝ լոշտակի կողքերը փորում են, շանը կապում են արմատներից, իրենք բավական հեռանում, որ ճիչը չլսեն: Երբ շունը քաշում հանում է լոշտակն իր արմատներով, հավաստիացնում են, թե շունն այդ ճիչից սատկում է:

Սույն աղոթքը պարունակող Մատենադարանի ձեռագրի 98բ և 99 էջերում ներկայացված է լոշտակը հանելու եղանակը և ծանուցված, որ հանելիս պետք է 7 անգամ ասվի այս աղոթքը: Վկայված է նաև, թե բժշկարաններում լոշտակը գովաբանված է իբրև լավագույն դեղաբույս, ընդ որում թե՛ ծիլը, թե՛ պտուղը և թե՛ արմատը: Բժշկարանի գրիչը հավաստիացնում է, որ ինքն անձամբ, փորձել է և տեսել լոշտակի բուժիչ զորեղ հատկությունը և թերահավատներին բացատրում, որ լոշտակը պետք է օգտագործել համապատասխան դեղաչափերով, հակառակ պարագայում այն ոչ մի օգուտ չի տա: Անգամ հավաստիացնում է, որ իմաստուն *«փռանգաց ազգի» (իմա՝ եվրոպացիների) մոտ «լօշտակն ոսկոյ բարեբար է, ոսկոյ յետ կշռի և առնէ»:*

Նույն ձեռագրի 101(201) և հետագա էջերում բերված են լոշտակի բուժական կիրառության մասին չորս տարբեր վկայություններ և ծանուցվում է, որ լոշտակը հունարեն կոչվում է **ապասլեղի**:

Սույն աղոթքը (ինչպես նաև հաջորդ տարբերակները) բույսի նախնական պաշտամունքի քրիստոնեական մի օրհներգ է, ձևավորված տերունական աղոթքների, մասնավորապես պահապան հրեշտակին նվիրված աղոթքի ոճով և տարերքով:

Տողատումը կազմողինն է:

6(164)բ. Խորագրված է «Աղօթք վասն լօշտակին»:

Աղոթքի վերջում ծանուցված է *«Եօթն անգամ ասա և ապա հանէ իւր արմատովն. և յորժամ քաշես՝ պտուղն պտղեցո ի սուրբ աման, պահէ. Թէ հանց հանդիպի, որ չորս ճեղ լինի, նոր ամանի մեջ ծրարէ, պահէ»:*

Աղոթքի հրատարակիչ Գ. Սրվանձտյանցի վկայությամբ՝ այն վերցրել է մի բժշկարանից:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 6 (164)ա ծանոթագրությունը:

6 (164)գ. Խորագրված է «Լոշտակի աղօթք»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Սույն աղոթքները (նկատի ունի ևս երեք այլ աղոթքներ՝ Ս. Հ.) արտագրել ենք մի հին ձեռագրից, որ գտնվում էր պ. Հարություն Տեր-Բարսեղյանցի մոտ»:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 6 (164)ա ծանոթագրությունը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐԻ ՄԱՔՐԱԳՈՐԾՄԱՆ
(№№ 165-175)

Այս բաժնում են համախմբված մանկան լոգանքի, նորահարսի գլուխը լվանալու, խճճված մազերն արձակելու, ընկած ատամը, կտրած եղունգը պահելու, ոտները թմրելու առիթով ասվող հմայական բանաձևերը, որոնք ուղեկցվել են ծիսական հատուկ արարողություններով:

165. Խորագրված է «Նոր մկրտված մանկանց լողացնելիս»:

Մանկան ետմկրտության ծիսական լոգանքն աղոթքում նմանեցվել է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությանը, որից ակնկալվում է մանկան խելքի և մտքի ավելացում՝ համեմատությամբ չօծված, չմկրտված անհրավների:

166. Խորագրված է «Նոր մկրտված մանկանց լողացնելիս»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Լողացրած մանկանը ջրից հանելիս՝ վերոհիշյալ զգայարանքները սեղմելով՝ ասում են մաղթանքը»:

Տողատումը կազմողինն է:

Մաղթանքի այս բանաձևն ամբողջապես հորինված է մանկան գլխի մասերի (աչք, հոնք, ճակատ, քիթ, բերան, ատամ, պարանոց, վիզ) մակդիրավոր թվարկման վրա: Աղոթքի ողջ բարեբանական իմաստը ներդրված է մարմնի մասերին տրված ավանդական մակդիրների գովաբանական նշանակությունների մեջ:

167ա. Խորագրված է «Տղան լողացնելիս»:

Հմայական այս հակիրճ բանաձևի նպատակը մանկան աճն է (վզի երկարում, մարմնի մսակալում) և ցավերի թոթափումը:

167բ. Խորագիր չունի:

Ըստ բանահավաքի ծանուցման՝ «Ալաշկերտում փոքր երեխային տաշտի մեջ լողացնելիս ասում են այս երգը, որ վիզը երկար լինի, ջուրը՝ թեթև, քունը՝ երկար»:

167գ. Խորագիր չունի:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Նորածին երեխան ամեն օր կլողացնեն և 40 օր և յուրաքանչյուր լոգանքի ավարտումը շոշափելով մաղթում են»:

Հմմտ. № 166 աղոթքն ու ծանոթագրությունը:

168. Խորագիր չունի:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Գլուխը լվանալուց հետո սկեսուրը հարսի մազերը հյուսելով ասում է, որ իբր նորա մազը ավելի երկարանա»:

169ա. Խորագրված է «Խառնած մազի»:

Բանահավաք՝ Արտ. Բարսեղյան, գրառված է Ե. Լալայանի խմբարշավում 1915-16 թթ.:

Ըստ երևույթին հորինված է ինչ-որ վիպական զրույցի հիման վրա: Աղոթքի «անհիշատակ պառավը» համեմատելի է հնդեվրոպական ավանդության մեջ անդրաշխարհում (ներքնաշխարհ) մարդկանց բախտը (կյանքի տևողությունը բրդից մանող) կին դիցուհիների կերպարների (հուն. մոյրերի, հին իսլ. նորների, սլավոն. Մոկոշի) հետ [Гамкрелидзе, Иванов 582]:

Խճճված թելը (մազը) ժողովրդի մեջ առհասարակ գիտակցվում է սատանայի, չարի, դևի արարքի, հատկապես վրան նստելու հետևանք: «Անհիշատակ պառավը» իր սրբագործ արարքների դիմաց խճճված մազին ու մանածին արձակում, հստակեցում է ուզում:

169բ. Խորագիր չունի:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Երբ գլխները լվանում են և սկսում սանրել խճճված մազերը շուտով հարթելու համար, ասում են» այս աղոթքը:

Տե՛ս № 169ա. ծանոթագրությունը:

169գ. Խորագիր չունի:

Տե՛ս 169 ա, բ ծանոթագրությունները:

169դ. Խորագրված է «Մանածը կամ գլխի մազերը խառնվելու աղոթք»:

Այստեղ բոկոտն, անհիշատակ ու ուխտավոր պառավի խճճված մազերն ու կծիկը արձակելու գործառույթին ավելացել է նաև տարիքոտ (լոռ) աղջկա բախտը բացելու (ամուսնանալու) խնդրանքը, որով շեշտվում է պառավի մարդկանց ճակատագիրը տնօրինելու հատկանիշը (հմմտ. № 169ա ծանոթագրությունը):

Սույն աղոթքի առիթով բանահավաքը առաջ է բերել նաև հետևյալ քառյակը, որ ասվել է ծամերը սանրելիս.

Ծամիկ, ծամիկ, ծիրանիկ,
Քամին թել-թել կու տանի.
Դոր կու տանի, բող տանի,
Քրիստոսի բախչեն կու տանի:

169ե. Խորագրված է «Ծամեր սանրելու աղոթք»:

Տե՛ս 169ա, դ ծանոթագրությունները:

169զ. Խորագրված է «Խճճված թելը բացելու աղոթք»:

Այս տարբերակում առավել հստակ է երևում պառավի դիցաբանական կերպարը, որը նստած բախտաբաժան չորս ճանապարհների խաչմերուկում և իր լիտր գգելու, լիտր մանելու և լիտր խճուճը հանելու գործառույթներով գրեթե նույնանում է մարդկանց բախտը տնօրինող, գգող, մանող դիցուհիներին (մոյրեր, նորներ ևն. տե՛ս №169 ա, դ ծանոթագրությունները):

Մազերի կամ թելի խճուճի բացումը ինքնին վկայում է այդ դիցաբանական կերպարի մարդկանց բախտը հստակեցնելու, որոշարկելու հատկանիշի մասին:

170. Խորագրված է «Աղոթք ժըժնված մազի, ժըժնված թելի»:

Բանահավաքի, բանասացի, գրառման վայրի, տարեթվի տվյալները չեն նշված: Հավանաբար 1960-70-ական թթ. գրառումներից է:

Սկսվում է «Թու՛, թու՛ թու՛» թքելու (չարին ոչնչացնելու, անիծելու) հնգապատիկ կրկնություններով, որ բնորոշ է հմայական աղոթքներին (չար աչքի, գորտնուկի ևն.):

Աղոթքում թելի խճճման և խճուճի բացման հմայական ցանկության մեջ դրսևորված է առավել լայն, տիեզերաբանական հայեցակետ: Թելի կամ մազերի խճճումը դիտված է որպես տիեզերական կարգուկանոնի, ներդաշնակության խախտում: Խճուճի բացմանն ու հստակեցմանը աղոթքում հետևում է աշխարհի խաղաղության, հաշտության և սիրո, կյանքի արևշատության, կենսամիջոցների դյուրացման, առատածեռնության, մարդկային սրտից նախանձի վերացման ցանկությունների շարքը, որն ինքնին վկայում է տիեզերքի խախտված ներդաշնակության վերականգնման ձգտման մասին, որով իսկ աղոթքը, համեմատած նախորդների հետ, վերածվել է ծիսաառասպելաբանական ուշագրավ բնագրի:

Տե՛ս № 169 ա, դ ծանոթագրությունները:

171ա. Բերված է իբրև մանկական երգ:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Ասում են, երբ ատամը վայր է ընկնում և դնում են թարեքին կամ պատի խոռոչում»:

Ժողովրդական կենցաղում, առհասարակ, մարմնից անջատված մասերը (ընկած ատամ, կտրած եղունգ, գլխի մազ ևն.) դեն չեն նետում, այլ խնամքով տեղավորում են որևէ ապահով տեղ (գետնի մեջ, պատի խոռոչ, թոնրի ակ և այլուր) նախ այն հավատալիքային գիտակցությամբ, որ մասը նույնական է ամբողջին (մարմնին) և եթե այն ընկնի ոտքի տակ, ապա տիրոջ գլուխը, ատամները, մատները կը ցավեն: Եվ ապա՝ աշխարհի վախճանին՝ վերջին դատաստանին, երբ բոլոր մեռնողները գերեզմաններից կը հառնեն, նրանց մարմնի բոլոր մասերը պետք է իրենց հետ լինեն, որպեսզի մարմնի բոլոր մասերով ներկայանան դատավարության:

Հմայական սույն հակիրճ բանաձևում ընկած ատամի տերը դիմում է մկանը՝ հավատացնելով նրան, որ ընկած ատամը անպետք չէ, այլ երկաթից է, որպեսզի մուկը տանի և բնում, վերոհիշյալ նպատակով ապահով թաքցնի: Մուկը հնդեվրոպական ավանդության մեջ, առհասարակ, կապված է թաղման ծիսական արարողության հետ:

Այս և հաջորդ տարբերակում (տե՛ս) մուկն իր կրծող հատկանիշի պատճառով ըմբռնվել է իբրև ատամ տնօրինող, պարգևող, հինը տանող, նորը բերող:

171բ. Խորագիր չունի:

Բանահավաքի ծանուցմամբ, երբ երեխայի ատամը ընկնում է, այն գցում են թոնրի ակը և ասում սույն բանաձևը:

Տե՛ս № 171ա ծանոթագրությունը:

172ա. Բանահավաքի ծանուցմամբ՝ ասվում է «Երեխայի առաջին անգամ փոխած ատամը մի անկյուն գցելով»: Ուրեմն, դիմում անկյունում բնակվող և ատամը տնօրինող աներևույթ ոգուն, որ նախորդ բանաձևերում մուկն է գիտակցվել (տե՛ս № 171 ա ծանոթագրությունը):

172բ. Ասվում է երեխայի ընկած ատամը թոնրի ակը գցելիս (հմմտ. 171ա ծանոթագրությունը):

173ա. Խորագրված է «Կտրած եղունգը թաղելու աղոթք»:

Այս և հաջորդ տարբերակներում բացահայտ ներկայացված է կտրած եղունգները թաղելու արարողությունը, որին վկա են հրավիրվում մարդկային ցեղի նահապետները (Հայր Աբրահամ, Ադամ, Եվա), և թաղման նպատակը՝ անդրաշխարհում հոգիների դատաստանին պատրաստ լինելը (տե՛ս № 171ա ծանոթագրությունը):

173բ. ԱՀ XI բերված է որպես մանկական երգ, որ ասվել է կտրած եղունգը թաղելիս (տե՛ս 171ա, 173ա ծանոթագրությունները):

173գ. Ասվում է կտրած եղունգները ծակերում թաղելիս: Տե՛ս 171ա ծանոթագրությունը:

173դ. Խորագրված է «Աղոթք եղունգ կտրելու»:

Տե՛ս №171 ա ծանոթագրությունը:

173ե. Բանահավաքի ծանուցմամբ՝ «եղունգները կտրելիս գետնում թաղում եմ՝ ասելով <....>, որպեսզի պատրաստ մնա, որ մյուս կյանքում կրկին վերցնեն»:

Տե՛ս №171ա ծանոթագրությունը:

174. Խորագրված է «Կտրած եղունգը թաղելու աղոթք»:

Այստեղ գետնում եղունգը թաղելիս վկայակոչված է երկինքը, իբրև սրբություն:

Լուս քամին փչին՝ նկատի է առնվել աշխարհի վախճանին և վերջին դատաստանին փչող հողմը:

Տե՛ս № 171ա ծանոթագրությունը:

175ա. Խորագիր չունի:

Բանահավաքի վկայությամբ՝ ասում են «ոտները թմրելուց ազատելու համար»:

175բ. Բերված է որպես մանկական երգ, որ ասում են մանուկները ոտները թմրելու ժամանակ:

Անկախ իր փոքր ինչ զավեշտական բնույթից, այն նախապես հմայական բանաձև է եղել, որ փոխանցվելով մանուկներին՝ հարմարեցվել է նրանց լեզվին ու հոգեբանությանը: Բանաձևում ներկայացված է սոսկ երևույթը՝ ոտների թմրակալումը և դրա հետևանքով տանը նստելու հանգամանքը, առանց հմայական ցանկության խոսքի:

ՓՈՐՁԱՆՔ-ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ (№№176ա-180)

Այս խմբի տակ են համախմբվել աչքը շյուղ ընկածի, շան կծածի, կամ դրանցից պահպանվելու, ինչպես նաև կարկուտի և երաշտի կանխմանն ուղղված հմայական բանաձևերը:

176ա. Խորագիր չունեն: Ասում են երեխաները աչքի մեջ որևէ բան ընկնելիս՝ աչքը տրորելով:

176բ. Խորագրված է «Աչքից շյուղ հանելու աղոթք»: Առաջին երկտողը գրեթե նույնական է նախորդ տարբերակին: Եթե նախորդում աչքից շյուղ հանելու հույսը դրված է սոսկ հրամայական խոսքի հմայական ներգործության վրա, որն առավել վաղնջական է, ապա սույն, ինչպես նաև հաջորդ երկու (176գ, դ) տարբերակներում դրան զուգորդվում է նաև աստվածային սուրբ զորությունը, հանձին Աստվածածնի ճկույթի, կրծքի կաթի կամ էլ սուրբ խաչի, բոլորն էլ բուժիչ քրիստոնեական սրբազան մասունքներ: Դրանցով սրբայնացվում, հետևաբար՝ առավել է զորացվում հմայական բանաձևերի ազդեցությունը:

176գ. Խորագրված է «Աչքի շյուղը հանելու»:
Տե՛ս №176բ ծանոթագրությունը:

176դ. Խորագրված է «Աչքի մեջ հատիկ ընկածի աղոթք»:
Բանահավաքի ծանուցմամբ՝ «Ասում են թերթերունքներից բռնելով»:
Տե՛ս № 176բ ծանոթագրությունը:

177ա. ԱՀ X խորագրված է «Աղոթք շներից ազատվելու համար», ՀԱԲԱ՝ «Շանկապ» (շանը հմայելու, կապելու):
Ըստ երևույթին նկատի է առնվել հնում շան զոհաբերության, մասնավորապես գլխատված շան ծիսական պատկերը, որով նա, ըստ աղոթքի իմաստի՝ դառնում է անվնաս [հմմտ. **Հարությունյան 1989**]:

177բ. Ասվում է շան հարձակումից պահպանվելու համար:
Տե՛ս 177ա ծանոթագրությունը:

177գ. Ասվել է վախի դեմ, մասնավորապես՝ շանից վախեցածի:
Աստվածամոր որդին Քրիստոսն է, որ հանդես է գալիս իբրև չարը հմայող՝ կալող-կապող:
Տե՛ս № 177ա ծանոթագրությունը:

177դ. Խորագրված է «Կատղած շան»:
Տե՛ս 177ա, գ ծանոթագրությունները:

177ե. Խորագրված է «Շան հարձակմունքից ազատվելու աղոթք»:

Սուրբը հավանաբար Քրիստոսն է (տե՛ս նախորդ տարբերակները), որի զորությամբ փակվել է շան բերանը և կծելն արգելվել: Աղոթքն ավարտվում է աներծքի ոչնչացնող բանածևով, իբրև աստվածային հրաման:

178. Խորագրված է «Կարկտագիր»:

Աղոթքին կցված են բանահավաք Ե. Լալայանի հետևյալ ծանուցումները. «Գանձակի գավառի նման Լոռին ևս ունի մի քանի տիրացուներ, որոնք կարկտագիր անելով ապահովեցնում են գյուղացիների արտերն ու այգիները կարկտից: Այս տիրացուներից ամենահռչակավորը դսեղցի Գրիգորն է: Սա երբ լավ վարձատրվելով կամենում է, որ յուր կարկտագիրը սաստիկ զորավոր լինի, գրում է Ավագ Հինգշաբթի օրը եկեղեցու խորանում, երբ քահանան վերաբերումն է կատարում, միայն թե նախորդ օրը ութ կանոն սաղմոս պիտի քաղած լինի, <...>: Չորս կտոր թղթերի վրա այս միևնույնը արտագրելուց հետո, նույն խորանում վերցնում է նախ ս. Յովհաննու Ավետարանը և ապա ս. Գրիգոր Նարեկացու աղոթագիրքը և սրանց ԺԲ գլուխները կարդում այդ թերթիկների վրա և հետո ինքն իրեն անդաստան կատարում: Հետո այդ թղթերը տանում է տուն և մի մաքուր տեղ պահում: Համբարձման օրը, այդ թղթերը ծոցում դրած ներկա է լինում պատարագին, որից հետո ամեն մինը տալիս է մի երիտասարդի, որ տանի գյուղի մի անկյունում, երկու քարերի մեջ, մի չոր տեղ թաղի: Կարկուտն այդ թղթերի սահմանից ներս չի կարող անցնիլ»

Աղոթքը, թեպետ քաղված ժողովրդագիտական աղբյուրներից, ձևով, լեզվով, բովանդակությամբ միջնադարյան է, հիմնված ավետարանական պարականոն զրույցի վրա: Նրա ծիսական գործարկումը ևս առնչվում է եկեղեցու, հոգևորականի, քրիստոնեական սրբազան գրքերի և տոնական խորհուրդների հետ: Այդուհանդերձ իր բնույթով և մանավանդ գործառնությամբ ու նպատակադրումով (գյուղի չորս անկյուններում, զույգ քարերի արանքում կարկտագիրը թաղելը՝ կարկուտը գյուղ չներթափանցելու ակնկալիքով) հմայական է, խիստ բնորոշ հին պրոֆեսիոնալ հմայություններին:

Ենոքը հինկտակարանյան ավանդությամբ՝ Ադամի սերնդից է, Նոյի նախապապը, ապրել է 365 տարի (արեգակնային օրերի թիվ), շատ սիրվել է աստծոց և վերացել երկինք՝ նրա մոտ:

Եթովպական, հին սլավոնական, եբրայական և արամեական գրավոր ավանդությամբ (Կումրանյան տեքստերում) Ենոքը երկնային արքունիքում հաղորդակցվում է երկնքի կառուցվածքի և տիեզերքի աստվածային կառավարման գաղտնիքներին և դառնում Եհովայի թագավորության առաջնակարգ պալատականը (մետատրոն) [Мифы I, 435]:

Եղիան Հին կտակարանում մարգարե է, Եհովայի մոլեռանդ պաշտող և միայն նրա պաշտամունքը Իսրայելի թագավորության մեջ հաստատող: Նա Եհովայի կամքով, երկնքից իջած հրեղեն կառքով վերանում է երկինք: Տարբեր ավանդություններում, այդ թվում նաև հայոց, Եղիան նույնացել է ամպրոպի, անձրևի, պտղաբերության գաղափարներին, փոխարինել հին ամպրոպային աստծոն (ամպի գոռոցը համարվել է երկնքում ընթացող Եղիայի կառքի դղրդոցը): Ենոքի և Եղիայի աստծո կամքով երկինք վերանալու, երկնային արքայության, ամպրոպի ու անձրևի հետ կապվելու առասպելաբանական այդ հատկանիշների պատճառով նրանք ժողովրդաքրիս-

տոնեական ավանդության մեջ դարձել են մքնոլորտային երևույթները կարգավորող սրբազան ոգիներ: Այս գործառույթով էլ նրանք հանդես են գալիս սույն աղոթքում:

179. Խորագրված է «Աղոթք չորայինի համար»:

Բանասացի ծանուցմամբ՝ «Ըսըմ են, օր անձրև գա»:

Բանահավաքի, բանասացի, գրառման տեղավայրի անուններն ու գրառման ժամանակը չեն նշված: Դատելով բարբառային հատկանիշներից և թղթի ու ձեռագրի որակից, ենթադրվում է, որ աղոթքը գրառվել է Շիրակից կամ կից շրջաններից, 1960-70ական թթ.:

Ոճաբանությամբ աղոթքը հմայական չէ, այլ աղերսական, պաղատական, ուղղված աստծոն կամ Տիրամորը՝ անձրև բերելու, պտղաբերության և ապրուստի միջոցներով ապահովելու աղերսանքով: Այն բնույթով ավանդական չէ և մասամբ անհատական ստեղծագործության դրոշմ ունի:

180. Պ. Պռոշյանի վկայությամբ՝ երաշտի ժամանակ Մուղնու ս.Գևորգին ուխտավոր կանանց կողմից ուղղված պաղատական աղոթք է:

Ս. Գևորգը քրիստոնեական ավանդության մեջ առհասարակ ըմբռնված է վիշապամարտիկ (օձամարտիկ) սուրբ և հին ամպրոպային աստծո քրիստոնեական փոխանորդն է: Հավատացյալ քրիստոնյաները նրանից են երաշտի դեմ անձրև հայցել:

IV

ՀՄԱՅԱԿԱՆ ԿԱՊՔԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ (№№ 181-288)

Այս բաժնի տակ են համախմբվում նախ հմայական կապքի այն աղոթքները, որոնց մեջ կապքը (= հմայություն) դիտվում է իբրև կապելու ֆիզիկական, առարկայական գործողություն, որով կապվում են բնության առարկաները (արև, լուսին, աստղեր, երկինք, գետին), մարդիկ, այդ թվում՝ գողեր, չարագործներ, չար ոգիները, վնասարար կենդանիները (գայլ, օձ, կարիճ) և դրանով դառնում անվնաս:

Այստեղ են զետեղվում նաև ընդհանուր անվամբ կոչվող պահպանական աղոթքները, որոնց բուն նպատակն է պահպանել մարդուն, նրա առողջությունը, ունեցվածքը բնական ու սոցիալական տարատեսակ չարիքներից:

Նման խմբաբաժանումը մասամբ պայմանական է, քանզի սույն խմբի տակ չմտնող շատ աղոթքներում հմայությունը հաճախ դիտվում է իբրև ֆիզիկապես կապելու գործողություն, իսկ հմայական աղոթքների ճնշող մեծամասնությունն առհասարակ հետապնդում է պահպանական նպատակներ: Այսուհանդերձ, այլ խմբերի տակ զետեղված աղոթքները համախմբվում են առավել բնորոշ առարկայական հատկանիշներով (չար աչքի, բուժաղոթքներ, ծննդկանի և այլն), քան սույն խմբի մեջ մտնող աղոթքները: Հմայական կապքի և արձակման բնույթն ու էությունը պատկերացնելու համար ստորև բերվում են միջնադարյան աղոթքների մի քանի բնորոշ նմուշներ, որոնք արդյունք են տիեզերաբանական հին ըմբռնումների և հմայագործ կախարդի ակտիվ արարքների:

1
Գրեալ եմ և եդեալ զմազե սանդուխն և ելեալ եմ յերկինս.
Կապել եմ զարևն և զլուսինն ի կամարն,
Կապել եմ Ք [9000]-ից Ք [9000] աստեղաց:
Կապեր եմ ԳՃ [300] ու ԿԵ [65] գետս ի գնացման,
Կապեր եմ զտուն ի շէն զերերքն ի լերին, զմայրն դստերաւքն:
Չեմ դրեր զմազեղէն սանդուխն,
Չեմ կապեր զարևն և զլուսինն ի կամարն,
Չեմ կապեր ԳՔ [երեք բյուր ինը հազար=270 մլն.] ի աստեղաց,
Չեմ կապեր զԳՃ [300] ու ԿԵ [65] գետս ի գնեացս,
Չեմ կապեր զտուն ի շէն և զերերքն ի լերին,
Չեմ կապեր զմայրն դստերաւքն և որդովքն
Եւ զհաւն ծագերովն:
Այլ կապեմ զամենայն մարդու,
Զպարընի, զնաիպի,
Զհայու և զտաճկի,
Զիրան և զկն[կ]ան.
Զվերին կոպն ի յունքն,
Զունքն՝ ի վերին ճակատն ի գայգաբն,
Զմազն ի յերկինք...
Այլ կապեմ զներքին կոպն ի կուրցն,
Զկուրցն ի սիրտն,
Զսիրտն ի փորն,
Զփորն ի թաքն ի յուտն,
Զուտն ի վերայ սատանայի գլխոյն:
Ոչ երկնիցն սուն,
Ոչ գետն ի գերանն,
Եւ ոչ ծովուն խուբ,
Եւ ոչ յափին մէջն մազ բուսանի,
Եւ ոչ այս բանիս անցումն լինի՝
Ամուամբ աներեին հաւր և որդոյ և սուրբ հոգոյդ,
Այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն:

[Մատենադարան, Ձմայիլ № 27]

Ոճով ու կառուցվածքով ուշագրավ աղոթք է: Բաղկացած է չորս հիմնական մասերից:

Առաջինը հմայական կապքի հաստատական գործողությունների նկարագրություն է, ուր հավաստվում է հմայողի մազե սանդուղքով /հմմտ. այս ու այն աշխարհը կապող Մազե կամուրջի հետ/ երկինք բարձրանալը, նրա կողմից արևի, լուսնի, աստղերի, 365 հոսող գետերի, շեների, տների, տատանվող լեռների, մարդկանց իրենց զավակներով կախարդական կապքի ենթարկելը: Այսինքն՝ խոսքը գնում է ամբողջ տիեզերքի, նրա բաղադրիչ տարրերի, այդ թվում նաև մարդկանց հմայական պատուհասի ենթարկելու մասին: Սա փաստորեն աշխարհի արարչագործության դրական իրողությանը հակառակ բացասական գործողությունների շարք է, որ կատարում է կախարդ հմայողը նույն հերթագայությամբ՝ դրսից ներս եկող (երկինք, երկնային լուսատուներ, երկիր, գետեր, լեռներ, բնակավայրեր, մարդիկ) խտացում-

ներով, ինչ կատարվել էր առասպելական ժամանակի սկզբին՝ Աշխարհի ստեղծման ժամանակ:

Աղոթքի առաջին մասն, այդպիսով, տիեզերակերտման առասպելի նկարագրություն է, միայն բացասական ցուցիչով:

Երկրորդ մասը այդ բացասական արարքների ժխտումն է կամ հերքումը, որ կատարում է հմայողը, դարձյալ միևնույն՝ վերից վար եկող հերթագայությամբ և թվարկված նույն բացասական իրողությունների ժխտումով:

Դրանով հմայողը իրեն ստորադասում է Արարչին, նրա համատիեզերական զորությանը, որին նա ապավինում է իր որոշակի հմայագործությունը կատարելիս՝ արտահայտված աղոթքի եզրափակիչ բանաձևում՝ աստվածային սուրբ երրորդությանն ուղղված:

Առաջին երկու մասերի հավաստումներից ու հերքումներից հետո երրորդ մասում հմայողը բացահայտում է իր որոշակի նպատակը. նա ոչ թե ողջ տիեզերքն է կապում, այլ միայն մարդկանց, բոլորին, անկախ ազգային, սոցիալական կամ սեռային պատկանելությունից: Ուշագրավ են հատկապես հմայական կապքի ֆիզիկական նկարագրությունները, որոնք կառուցված են վերի ու վարի՝ երկնքի ու ստորերկրյայքի հակադրության վրա: Մի դեպքում նա մարդու վերին կոպը կապում է հոնքին, հոնքը՝ ճակատին ու գլխին, մազերը՝ երկնքին, մյուս դեպքում՝ ներքին կոպը կապում է կրծքին, կուրծքը՝ սրտին, սիրտը՝ փորին, փորը՝ ոտի թաթին, ոտը՝ սատանայի գլխին (ստորերկրյայք): Ընդհանուր պատկերն այն է, որ հմայվող անձը կապված է երկնքի ու երկրի միջև, վերնամասով՝ գլուխը մազերով, կապված է երկնքին, իսկ ներքնամասով՝ ոտների թաթերով՝ ստորերկրյայքին, մի պատկերացում, որը նույնանում է մարդու, իբրև միկրոկոսմոսի վաղնջական արխետիպային պատկերացմանը, որով մարդու մարմինն իր երեք մասերով խորհրդանշում է Տիեզերքի եռամասն կառուցվածքը. գլուխը խորհրդանշում է երկինքը, իրանը՝ երկիրը, ոտքերը՝ ստորերկրյայքը, հավասարաձևունակ տիեզերական սյան կամ ծառի հնագույն առասպելաբանական պատկերացումներին:

Եվ տիեզերական այդ սյան պատկերացման հերքումն է հավաստվում աղոթքի չորրորդ եզրափակիչ մասում, ուր բերվում է ժողովրդական ավանդական ասույթների մի շարք, որ լավագույնս դրսևորված է հանելուկներում [տե՛ս **Հարությունյան 1965,** № 2099 և հտն.]: Այդ ասույթներում հավաստվում է, որ երկինքը սյուն չունի, ծովը՝ խուփ, գետում գերան չի բուսնում և ձեռքի ափի մեջ՝ մազ: Եվ դրանց հաջորդում է հետևյալ տողը. «Եւ ոչ այս բանիս անցումն լինի», որը վերաբերում է թե՛ այդ ասույթների բովանդակության և թե՛ տիեզերքի գոտիների միջև կապված մարդու, այսինքն՝ Տիեզերքի մարդակերպ պատկերացման հավերժությանը: Աղոթքում փաստորեն բացառվում է երկնային (տիեզերական) սյան պատկերացումը և հավաստվում է նրա մարդակերպությունը:

2
Աստուած արձակեցաւ ի վերայ հրու.
Եւ հուրն արձակեցաւ ի վերայ լուսոյն,
Լուսն արձակեցաւ ի վերայ յօդոց,
Օդն արձակեցաւ ի վերայ արեգակն,
Արեգակն արձակեցաւ ի վերայ շառաւիղաց լուսին,
Լուսինն արձակեցաւ ի վերայ աստեղաց,

Աստեղք արձակեցան ի վերայ ամբոց,
Ամբք արձակեցան ի վերայ երկրի.
Երկիր արձակեցաւ ի վերայ ջուր,
Ջուրք արձակեցան ի վերայ անդնդոց,
Անդունդք արձակեցան ի վերայ բանիւն Աստուծոյ,
Բանն Աստուծոյ արձակեսցէ զայս անուն,
Որ արձակիչդ ես կապելոց, արձակէս զիս,
Ջծառայս քոյ ի կապանաց անդի,
Բարէխօսութեամբ սուրբ Կուսիւն Մարիամու
Եւ ամենայն սրբոց քոյ, ամէն:

[Մատենադարան, ձեռ. № 6677, էջ 6ա/22/
Տարբերակը տե՛ս ձեռ. № 8428, 66]

Սա փաստորեն կախարդական կապքի արձակման աղոթք է՝ խորագրված *«Վասն կնոջ այրն կապելոյ»:* Խորագրից ներքև ծանուցված է. *«Դարձեալ ի վերայ կապած մարդոյն ասա զայս բանս»:*

Վերնագիրն ու ծանուցումը վկայում են, որ աղոթքը վերաբերում է տղամարդու սեռական անկարողության (կապքի) վերացմանը:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքը կառուցված է աշխարհի արարչագործության աստվածաշնչյան ավանդության տվյալների հիման վրա, արարչական գործողությունների գրեթե նույն հերթագայությամբ, որ վերաբերում է միայն Տիեզերքի արարմանը (հուր, լույս, օդ, արեգակ, լուսին, աստղեր, ամպ, երկիր, ջուր, անդունդ և աստվածային բան=խոսք, միտք, գործ):

Տիեզերքի աստվածային արարման յուրաքանչյուր գործողություն աղոթքում կոչված է «արձակել» (բաց թողնել, ազատել, կապանքը քանդել) ծիսահմայական նպատակ հետապնդող բայով, որով բանաստեղծական զուգահեռականություն է ստեղծվել հմայական կապքի (տվյալ դեպքում՝ սեռական անկարողության) ենթարկված անձի կապանքի արձակման և արարչագործության յուրաքանչյուր ակտի միջև, և աստվածային արարման յուրաքանչյուր գործողություն դառնում է մարդու հմայական կապանքից արձակվելու մի նոր աստիճան, որն ի վերջո հանգում է Աստվածային բանին (հրամանին կամ արարքին), որով մարդ իսպառ ազատվում է կախարդանքի կապանքներից:

Աղոթքում մարդու արատի ամոքումը փաստորեն մոդելավորված է Տիեզերքի աստվածային արարչագործության ամբողջական պատկերով, և Տիեզերքի արարումն ու Մարդու (միկրոտիեզերք) ապաքինումը դիտված են իբրև հավասարաձևունակ իրողություններ:

3
Սողոմոն իմաստունն ետես զիշխանն դիւաց խաւարի.
Գոռայր իբրև զամպ,
Ճչէր որպէս զվիշապ:
Ասէ Սողոմոն.
5 - Ո՛վ պիղծ և անիծեալ, զի՞նչ ես դու:
Ասէ դեւն.
- Ես եմ իշխան դիւաց

Եւ մայր ամենայ չարեաց և մեղաց:
Ես եմ, որ ատելութիւն ածեմ ի մէջ եղբարցն,
Ածեմ վէճ և կռիւ և խռովութիւն և պոռնկութիւն,
Մտանեմ ի սիրտ մարդկան
Եւ բերեմ սերմանեմ զչար ցանկութիւն:
Ասէ Սողոմոն.
- Բարձրացի՛ր, որ ես տեսանեմ:
Եւ բարձրացաւ քան զլեառն
Եւ կամէր անկանիլ ի վերայ նորայ:
Ասէ Սողոմոն.
- Փոքրացի՛ր:
Եւ փոքրացաւ քան զգ հատըն մանանխոյ:
Եւ Սողոմոն կալաւ զնա
Եւ եդ ի յաջ մատանին
Եւ մաս մի ի տախտակացն Սինայի,
Եդ ի վերայ ակամբ մատանոյն:
Եւ Նոյի տապանակաւն
Եւ Յակոբայ սանդխտաւն
Եւ Աիարոնի գաւազանաւն
Եւ Կոնոնոսի աղօթիւքն,
Հալածեալ եւ խափանեալ եղիցի[ն]
Ամենայն չար դևքն և սատանայական չար հնարք,
Արձակեալ և հեռացեալ եղիցին ի ծառայէս Աստուծոյ:

[Մատենադարան, Հմայիլներ
№ 8 /տպագիր/,
№ 3, № 30, ձեռագրեր
№ 8428 /229/,
№ 8153 /30/, № 6678 /33/]

12-*13 տողերի արանքում, ըստ № 6678 ձեռ.,*
առկա է. Ես եմ, որ տղացկան ի խասապն
քարշեմ և զարիւն ծծեմ, չար կապանօք
կապեմ զնայ:
22 Հմայիլ№ 8 Սենեայի, Հմայիլ№ 3
Սինայ, *ուղղ. ըստ № 8428:*
Խորագրված է «Աղօթք կապանաց դիւաց»:

Աղոթքն ավարտվում է «Ջճանապարհս քո տէր ցոյց ինձ և զշաւիղս քո ուսոյ ինձ» սաղմոսի տողերով:

Տողատումը կազմողինն է:

№ 8 Հմայիլում աղոթքի վերևում պատկերված է Սողոմոն Իմաստունը՝ գլխին լուսապսակ, ձեռին՝ սուր: Առջևում դևն է՝ սև, փրչոտ ու մերկ, որին երդվեցնում և կապում է Սողոմոնը:

Աղոթքին հիմք է ծառայել իսրայելա-հուդայական պետության թագավոր (մ.թ.ա. 965-928 թթ.) **Սողոմոն Իմաստունի** մասին տարածված լեգենդը, ըստ որի նա իր հրաշագործ մատանու (կնիք Սողոմոնի) շնորհիվ իրեն է ենթարկել ու հպատակեցրել դևերին, անգամ նրանց գլխավորին՝ Աշմեդային (հուն. Ասմոդեոս) և ծառայեցրել

իրեն [Мифы, I, 114, II, 460]:

Աղոթքներում դևերի իշխանը խոստովանում է Սողոմոնին, որ ինքն է մարդկանց հոգիներում եղած բոլոր չարիքների, մեղքերի, ատելության, չար ցանկությունների հարուցիչն ու պատճառը:

Սա արտացոլումն է հին կրոնական այն հայացքի, թե բոլոր չարիքները, արատները, դժբախտությունները և այլն արդյունք են չար ոգիների ներգործության: Այստեղից էլ այդ չար ոգիներին կալելու, հմայական կապանքի ենթարկելու, վնասազերծելու անհրաժեշտությունը, որն աղոթքում իրագործում է Սողոմոն Իմաստունը իր հմայական կնիք մատանիով և Հին կտակարանի սրբություն սրբոց Սինայի աստվածային պատվիրանների մովսիսական տախտակով:

Սողոմոն Իմաստունն իր այս գործառույթով եբրայական, մուսուլմանական և քրիստոնեական ավանդությունների մեջ դարձել է չար ոգիներին (դևեր, ջիններ) կախարդող, հպատակեցնող, կապող, սափորի մեջ լցնող ու ծովը նետող ամենակարող հմայագործի խորհրդանիշ (այստեղից էլ նրա անունով՝ «Սողոմոնի» կոչվող բուժահմայական գրքերի անվանումը):

Այս իմաստով սույն աղոթքը կառուցվածքով հմայական երդմնեցուցական բանաձևերի (որոնք բնորոշ են միջնադարյան աղոթքների մեծ մասին) մի նախատիպ կաղապար է, որից ածանցվող տարբերակներում Սողոմոնին փոխարինում են տարբեր հրեշտակներ, քրիստոնեական սրբեր, անգամ Քրիստոսն ինքը:

Սույն աղոթքում Սողոմոնի հմայագործական սրբազան առարկաներին (կնիք, մատանի, Սինայի տախտակ) անմիջապես հաջորդում է հինկտակարանյան այլ սրբությունների (Նոյի տապանակ, Հակոբ Նահապետի տեսիլքում երևացած երկիրն ու երկինքն իրար կապող աստվածային սանդուղք, Մովսեսի եղբայր Ահարոն քահանայապետի աստվածային կամքով ծաղկող, փթթող գավազան) և քրիստոնեական սուրբ Կոնոնոսի աղոթքի թվարկումը, իբրև համազոր սրբություններ, որոնց զորությանն է ապավինում աղոթողը՝ չար դևերին հալածելու և նրանց վնասակար ներգործությունից անձին ազատելու և արձակելու համար: Այսինքն՝ աղոթքի վիպական նկարագրական մասը սերտորեն կապված է նրա հմայական նպատակին, մի բան, որ նմանատիպ այլ աղոթքներում միմյանց են աղերսվում մեծ մասամբ տարբեր զուգահեռական անդամների իմաստային հարաբերակցությամբ:

Կոնոնոս այսահալած (Կոնոն Իսավրացի), - առաքյալների ժամանակակից, հեթանոս ծնողների զավակ, ամուսնանում է, բայց Միքայել հրեշտակապետի խորհրդով՝ կնոջ հետ չի կենակցում, դառնում են քույր ու եղբայր: Ծնողներին դարձի է բերում, դարձնում քրիստոնյա. իր խոսքի զորությամբ կործանում է հեթանոսական բագինները և դրանցում բնակված դևերին հնազանդեցնում և իրեն ծառայեցնում: Բոլորին կոչ է անում, որ միայն Կոնոնոսի աստվածն է հաղթող և շատերին դարձնում քրիստոնեական հավատի: Ի վերջո նրան մատնում են և հանձնում Մագնա դատավորին, որը նրան չարաչար պատժելով՝ նահատակում է [**Աւգերեան, ԺԲ,** 237-238]: Հայաստանում ս.Կոնոնոսի վանքը գտնվում էր Սասունում (Հազզո), որտեղ, ըստ ավանդության՝ դևերի մի ահագին բանակ կա, «կարասներու մեջ լցած ու գետնի տակը թաղած, բերանները զմռած մինչ օրն դատաստանին» [**Սրվանձտյանց 1978,** 75]:

Ս. Կոնոնոսի դևերին հալածելու, իրեն ենթարկելու, կարասներում փակելու գործառույթները գրեթե նույնական են Սողոմոն Իմաստունի համատիպ արարքներին, որի համար էլ նա ստացել է այսահալած-դիվահալած մակդիրը:

181ա. Խորագրված են «Աղոթք գելկապի» (ԷԱԺԱ, ՀԱԲԱ FFVI), «Գալ-կապի աղոթք» (Փ), «Գելկապի աղոթք» (ԺԱԲ, ՀԲՆ), «Գելկապ» (ՀԱԲԱ FFII):

ԷԱԺԱ բանահավաքն է Աղ. Մխիթարյանց, Փ՝ Հ. Գեղամյան, ՀԱԲԱ FFII (Աղին--Մուսլաղլի)՝ Վ. Բդոյան, բանասաց՝ Լուսիկյան Հովսեփ, (Ջավախք-Ուչմանա)՝ Վ. Բդոյան, բանասաց՝ Շահինյան Անուտկա, ՀԲՆ բանահավաք՝ Խաչիկ Սուքիասյան, բանասաց՝ Շահբազյան Չինար, ԺԱԲ բանահավաք՝ Տ.Վարդանյանց, ՀԱԲԱ FFVI բանահավաքն ու բանասացն անհայտ:

ԷԱԺԱ տարբերակն ունի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքներն ասելիս (խոսքը վերաբերում է գելկապի աղոթքներին՝ Ս.Հ.) շերեփը երեք տեղ հանգույց արած ղազիլով կապում են սան երեսից ու թողնում մինչև կորած կենդանու գտնելը: Գտնելուց հետո նոր շերեփն արձակում են, որ գայլի փակված բերանն արձակվի»:

ՀԱԲԱ FFVI տարբերակին կցված են բանասացի հետևյալ ծանուցումները. «Երբ մարդ է մնում դուսը, այս աղոթքը ըսում են շերեպի ու մազե թոկի վրա: Իրեք անգամ թակրըրըմ են, աղոթած շերեպը մազե թոկով կապըմ են սունը: Մընմ է, չուրի մարդ է դուսը, թե անասուն, գալըմ է տուն, նոր շերեպը արձակում են սնից»:

Աղոթքը վերջացնելիս՝ «վերջին տողին (ուր հիշվում է «Տեր մեր Հիսուս Քրիստոս աստված»՝ Ս.Հ.) երեսն խաչակնքըմ է աղոթողը ու իրան ձեռով, շերեպը կապըմ սունը. իրեք անգամ էլ շերեպն է խաչակընքըմ»: Աղոթքին ուղեկցող հմայական այս արարողությունները վկայում են, որ շերեփն իր երկարավուն գլխով ու կեռ պոչով խորհրդանշում է գայլի պատկերը, որին մազե պինդ թելով կապում են սյանը, իբրև հմայական կապանքի առարկայական գործողություն: Այդ արարողությամբ փաստորեն կապում են գայլին և հատկապես բերանը, որով վնասազերծում են նրան և ապահովում դրսում մնացած մարդկանց կամ անասունների անվտանգությունը: Ուշագրավ է նաև այն, որ կորած անասունը գտնելուց կամ դրսում մնացած մարդու վերադարձից հետո մազաթելով կապած շերեփն արձակում են սյունից, որպեսզի գայլի կապված բերանը բացվի և նա վերադառնա իր նախկին վիճակին: Ինչպես վկայում է երկրորդ ծանուցումը՝ գայլկապը դիտվել է իբրև սրբազան արարողություն, որի ժամանակ աղոթողը երեք անգամ խաչակնքում է երեսն ու սյանը կապված շերեփը:

Այս հմայական սրբազան արարողությունների խորքում ըստ ամենայնի ընկած են հնդեվրոպական ավանդության մեջ լայնորեն տարածված գայլի (նաև շան) զոհաբերման հնամենի ծիսական սովորույթի արձագանքները, որոնք վկայված են հեթիթական, իռլանդական, գերմանական, հռոմեական, հին բալկանյան և այլ ավանդություններից:

Հեթիթական ավանդության մեջ գայլն այլ կենդանիների շարքում համարվել է «աստվածների կենդանի», սերտորեն աղերսվել eia կոչված հավերժ կանաչ սրբազան ծառին, որը խորհրդանշել է Տիեզերական ծառը (նաև Սյունը): Ըստ ծիսական բնագրերի՝ «աստվածների կենդանիներին» որոշակի հերթագայությամբ կապել են այդ ծառի բնի միջնամասին, ընդ որում՝ գայլին ամենաբարձր մասում, ապա նույն հերթականությամբ նրանց արձակել են: Գերմանական ավանդության մեջ Օդին--Վոտան աստծուն, որ համապատասխանում է Տիեզերական ծառին, գայլեր են զոհաբերել. նրանց կախել են ծիսական սյուներից, որոնք կոչվել են «գայլի ծառ»

(հին իսլանդերեն vargtrie):

Հիշարժան է նաև հռոմեական ավանդության մեջ յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ին կատարվող լուպերկալիա (բառացի՝ գայլկապ, գայլարգելում) ծիսական տոնը՝ նվիրված մաքրագործմանն ու պտղաբերմանը [Гамкрелидзе, Иванов 1984, 486-487. Словарь античности 1989, 324]:

Հեթիթական տվյալները, որոնք խոր հնության հետքեր են մատնանշում, շատ են մերձ հայկական գայլկապի հմայական սիմվոլային արարողություններին (գայլը խորհրդանշող շերեփը սյանը (իմա՝ Տիեզերական ծառին) կապելու և արձակելու մոտիվները): Գերմանական տվյալներն առավել են որոշարկում գայլի, իբրև աստվածային կենդանի լինելու հանգամանքը (հմմտ. նաև Օդին-Վոտանին ուղեկցող Գերի և Ֆրեկի սրբազան զույգ գայլերի հետ), հատկապես գայլերին զոհաբերելու, զոհասյունից կախելու ծիսական մոտիվը, որը իմաստաբանորեն լուսաբանում է գայլի խորհրդանիշ շերեփը սյունից կապելու, խաչակնքելու, աղոթելու, ապա արձակելու հայոց գայլկապի հմայական արարողությունը: Սյունն այստեղ խորհրդանշում է հին զոհասյունը, որից կապում կամ կախում էին զոհաբերվող կենդանուն, իսկ զոհասյունն ինքը նույնական էր Տիեզերական ծառին կամ Աշխարհի կենտրոնից բարձրացող սրբազան առանցքին:

Գայլի աստվածային կենդանի լինելու հին ըմբռնումը դրսևորված է հայկական հավատալիքներում և հմայական աղոթքներում, ուր գայլը դիվայնացված է, սիմվոլացված, դարձած ձմեռն ու գիշերվա խավարը խորհրդանշող գիշատիչ (գել-գազան) չար ոգի, հավասար է դասված բոլոր մարդակերպ չար ոգիներին, երբեմն պատկերացվում է երկոտանի կերպարանքով, չար դևերի նման ոտքի թաթերը ետ ծռված, կրունկներն՝ առաջ: Երբեմն էլ գայլը ներկայանում է իբրև չար ոգիներին կլանող, ոչնչացնող, որով կանխվում է վերջիններիս բազմացումը, մեկ-մեկ էլ գայլն է չարքերից կլանվում, որով նվազեցվում է գայլերի թիվը աշխարհում [տե՛ս **Աբեղյան 1975,** 92]: Վերջինս դրսևորված է նաև լեզվական իմաստային ձևերով, դիցուք, ինչպես՝ շներոց-գելերոց, սատանոց-դիվոց, այսինքն՝ դրանց ենթակա դառնալ, բաժին դառնալ:

Իսկ **Ալալոս-Թալալոսի** (երբեմն՝ Ալալոս, սուրբ Թալալոս, հմմտ. № 120 աղոթքը) դեպքում, ըստ երևույթին առկա են հնագույն դիցանունների արձագանքներ: Նախ՝ սուրբ Թալալոսը սրբավայր ուխտատեղի էր Վանի նահանգում՝ Արտամետում. գտնվելիս է եղել մի թուրքի այգում, ուր բուժման են տարել թալալած (թալկացող, ուշագնաց եղող) երեխաներին: Նույն նպատակով մեծ պասի շաբաթ օրը՝ ս.Թեոդորոսի տոնին, թալկացող երեխաների մայրերը հատուկ նշել են այն, միաժամանակ հիվանդ երեխաներին անց են կացրել թալալոց կոչված ծակ քարերի միջով [ԱՀ XX, 183]:

Սա վկայում է Թալալոսի հնուց եկող ծիսական պաշտամունքը, որը բաղարկվել է ս. Թեոդորոս քրիստոնեական սրբի անվանն ու գործառույթին: Ապա. հին բալկանյան ավանդության մեջ, մասնավորապես մակեդոներենում պատերազմի «գայլային աստծո» անունը եղել է Թաուլիոս (Thaulios), ըստ Հեսիքոսի՝ Thaulos: Գտնում են, որ տվյալ արմատը բալկանյան լեզուներում սերում է հ-ե. *dheu-«սպանել, խեղդել» բառից, որից էլ կազմվել են գայլի անվանումները, հմմտ. thaunon և փռյուգերեն daos [տվյալները քաղված են Ա. Պետրոսյանի «Արամի առասպելը հայ և հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում» աշխատության ձեռագիր տարբերակից]:

Այս տվյալները վկայում են, որ հայոց գայլկապի աղոթքներում հաճախ հիշատակվող Թալալոս, Թալալոց անստույգ անվանումների հիմքում ընկած է հավանաբար հին բալկանյան այդ «գայլային աստվածության» անունը:

Որոշ հայ բարբառներում (Նիկոմիդիա) թալկանալը (մանուկների ուշագնացությունը) կոչվում է թալալոց: Արդյո՞ք հայ. թալ «նվաղում», որից թալանալ, թալկանալ անստույգ բառը, չի սերում վերոհիշյալ հ-ե *dheu - «սպանել, խեղդել» արմատից:

Աղոթքի այս և հաջորդ տարբերակներում, ի թիվս այլ սրբությունների, ավելացել է նահատակաց կարմիր քարի մոտիվը, որով նկատի է առնվել քրիստոնեական հավատի համար նահատակված սրբերի արյամբ ներկված քարերը (հավանաբար շիրմաքարերը), որոնք ժողովրդի կրոնական ըմբռնումներում միշտ էլ սուրբ ու զորավոր են գիտակցվել:

Տե՛ս № 181ա ծանոթագրությունը:

182. Խորագրված է «Գելկապի աղոթք»:
Ծանուցված է՝ «Կրկնել երեք անգամ»:
Տե՛ս № 181ա,գ ծանոթագրությունները:

183ա. Խորագրված է «Աղոթք գելկապի»:

Բանահավաքը (Ե. Լալայան) կցել է հետևյալ ծանուցումը. «Երբ լոռեցու անասունը կորչում է կամ հանդ է մնում, գելկապ անողին գայլի բերանը կապել է տալիս, որպեսզի սա չկարողանա յուր անասունը ուտել: Պատմում են, թե շատ անգամներ գել-կապ անելուց հետո գնացել տեսել են, որ գայլը կապված բերանով հանգիստ պպզած է ոչխարի մոտ, առանց նրան մի որևէ վնաս հասցնելու: Լոռեցին նաև այնքան բարեսիրտ է, որ յուր անասունը տուն բերելուց հետո նույն գել-կապ անողին գայլի բերանը բանալ է տալիս, որպեսզի խեղճը քաղցածությունից չը սատկի: Գել--կապ անողը հետևյալ աղոթքը յոթը անգամ չշնջալով յոթը հանգույց է ձգում տխրատենի (տրեխի կապ) կամ գուլպի թելի վրա, որպեսզի ագահ գայլի բերանը փակվի, կամ կացինը դնում է սանդերքի բերանի մեջ, որպեսզի գայլի բերանն էլ սուր դրվի, և կամ մոխրով լի գդալը դնում է պատի մեջ, որպեսզի գայլի աչքերն էլ մոխիր լցվի և չը տեսնե անասունին: Գայլի բերանը բանալիս առանց մի որևէ աղոթք ասելու արձակում են հանգույցները, վերցնում են կացինը սանդերքի բերանից, գդալի միջից մոխիրը դեն ածում»:

Տե՛ս նաև № 183բ աղոթքի բանահավաքի ծանուցումը:

Հմայական այս արարողությունն այստեղ և ընդհանրապես կառուցված է սիմվոլների խաղարկման վրա: Տրեխի և գուլպայի կապերի վրա կատարվող յոթ հանգույցները խորհրդանշում են գայլի հմայական կապանքները, սանդերքն իր սուր մետաղե ատամներով՝ գայլի բերանն ու ժանիքները, սանդերքի ատամների բերանակերպ բացվածքում դրվող կացինը՝ գայլի բերանը խոցող, ժանիքները վնասազերծող հնագույն զենք ու չարխափան մետաղյա գործիք, պատի մեջ դրվող մոխրով գդալը՝ գայլի կուրացող աչքը: Հմայական սիմվոլների այս համալիրը խիստ մերձենում է բանաստեղծական փոխաբերության և դառնում այդ արարողությանն ուղեկցող աղոթքի (խոսքային հմայության) մեջ նկարագրվող գործողությունների սիմվոլային փոխաբերական արտահայտությունը:

Այս աղոթքով սկսվում է գայլկապի հմայական բանաձևերի մի նոր տարբերա-

կաշար՝ «գիր անեմ, գելկապ անեմ» սկզբնատողով (բնորոշ հատկապես արևելահայ՝ Լոռի, Գանձակ ազգագրական շրջաններին), ուր նախորդ աղոթքների որոշ մոտիվներ (մասնավորապես քրիստոնեական սրբությունների վկայակոչումները) կրելով հանդերձ, հմայական ներգործության ակտիվության տեսակետից վերածվել է նոր որակի: Եթե նախորդներում հմայողի հույսը հիմնականում դրվում էր վկայակոչվող սրբությունների զորության վրա, ապա այս տարբերակաշարում, բայական առաջին դեմքի գերակշիռ կիրառմամբ, շեշտվում է հատկապես աղոթողի հմայական կարողությունը, նրա անձի ակտիվ, ներգործուն դերը գայլի հմայական կապքի գործընթացում, մի հատկանիշ, որ բնորոշ է նախնական հմայություններին:

183բ. Խորագրված է «Գիլկապի աղոթք»:

Բանահավաք Վրեն Տաշրացին կցել է հետևյալ ծանուցումը, որ շատ տեղերում նույնական է նախորդ (№ 183ա) տարբերակի բանահավաքի ծանուցմանը:

«Պատահում է, որ գյուղացու եզներից կամ կովերից մեկը կորչում է, գիշերը դուրսն է մնում: Գյուղացին շատ փնտրում է նրան, սարեսար, թփեթուփ է ընկնում, շտապում է տուն և գիլկապ անել տալիս, որպեսզի գայլերը յուր կորած եզին կամ կովին չվնասեն:

Այս աղոթքը պետք է անել կենտ (անզույգ) անգամ. օրինակ երեք, հինգ, յոթն անգամ: Աղոթքը ասելով պետք է վերցնել կացինը և տանել սանդերքի բերանը դնել. այդ նշանակում է, երևի, գայլի բերանը սուր կոխել: Կամ պետք է գդալը մոխրով լցնել և դնել պատի մեջ. այդ էլ նշանակում է գայլի բերանը մոխրով լցնել: Եվ կամ պետք է վերցնել գուլպայի կամ տրխի թել և աղոթքն ասելով, կենտ անգամ կապել: Յուրաքանչյուր կապ ձգելու համար աղոթքը պիտի կրկնել: Այս էլ նշանակում է գայլի բերանը թոկով կապել: Այսպիսով գայլը չի վնասիլ կորած կենդանուն: Պատմում են դեպքեր, որ իբր թե տեսել են գայլը կորած կենդանուց քիչ հեռու ընկած, առանց վնաս տված լինելու նրան: Մեկն էլ պատմում է, թե յուր պապը գնացել տեսել է, որ յուր կորած եզը արածել կշտացել է և նստած փնչալով որոճ է անում, իսկ նրանից քիչ հեռու պպզած է լինում մի գայլ և ատամները ժնգժնգացնելով մնացել է տեղնուտեղը մեխված:»

Տե՛ս № 183ա ծանոթագրությունը:

Աղոթքի (նաև հաջորդ տարբերակների) *«Գիլ անեմ, գիլկապ անեմ»* սկզբնատողում ամենայն հավանականությամբ նկատի է առնվել աղոթքին ուղեկցող հմայական սիմվոլային արարողությունը, երբ շերեփը, տրեխը նն վերցրել են իբրև գայլի խորհրդանիշ (իմա՝ գել են արել) և ապա այն ենթարկել կապման ու թելերի հանգուցման (իմա՝ գելկապ անել): Իսկ նախորդ (№ 183ա) տարբերակի *Գիր անեմ* (փխ. գիլ անեմ), եթե գրագետ բանահավաքի սրբագրումը չէ, ապա նկատի է առնվել իրոք գայլին գրով (հմայագիր, թուղթ ու գիր) կախարդելը:

183գ. Խորագրված է «Գելկապի աղոթք»:

Բանահավաք Գրիգորիս Երզնկյանն աղոթքին կցել է հետևյալ ծանուցումը. «Վեր են առնում մի տրեխ, նրա թելը յոթ տեղ կապկպոտում ու գցում սանդերքի ատամների մեջ, իսկ սրա վրա դնում մի կացին, այնուհետև կրկնում են այս աղոթքը երեք անգամ»:

Տե՛ս 183ա ծանոթագրությունը:

183դ. Խորագրված է «Գելկապի աղոթք»:
Բանահավաք՝ Գրիգորիս Երզնկյան:
Տողատումը կազմողինն է:

183ե. Խորագրված է «Գիլկապի աղոթք»:
Բանահավաք՝ Վրեն Տաշրացի:
Տե՛ս № 183բ ծանոթագրությունը:

183զ. Խորագրված է «Գայլկապ»:
Բանասաց՝ Մարտիրոս արքեպիսկոպոս, գրառված է 1881թ.:
Աղոթքում գայլի մարմնի մասերի ցանկալի վերափոխումները բնութագրվում են փափկությամբ (ատամները մոմի վերածել), դյուրաբեկությամբ (ոտները ծեղի վերածել), նրբությամբ (մեջքը թերի վերածել), որոնք ունեն բացասական որակ և միտված են գայլին դարձնել անկարող ու անվնաս:
Տե՛ս № 183բ ծանոթագրությունը:

183է. Խորագրված է «Գելուկապ»:
Բանահավաքը, գրառման վայրը, թվականը չեն նշված:
Տե՛ս № 183բ, զ ծանոթագրությունները:

183ը. Խորագրված է «Գիլ-կապ»:
Բանահավաքը (Ե. Լալայան) աղոթքի սկբից կցել է հետևյալ ծանուցումը. «Երբ մի անասուն է կորչում, գիլ-կապ անող պառավներին խնդրում են գայլերի բերանները կապել, որպեսզի կորած անասունը չուտեն: Սրանք էլ կամ թել են վերցնում, մատի վրա փաթաթում և հանգուստում և կամ մի գրչահատ, բերանը բաց անում և ապա փակում և այդպես պահում: Այս երկու դեպքում էլ ասում են հետևյալ աղոթքը»:
Տե՛ս № 183բ,զ ծանոթագրությունները:
Կծորի, ըստ բանահավաքի՝ լուսատիկ: Աղոթքում ցանկություն է հայտնվում գայլի աչքերը կծորի - լուսատիկ անել, որի առիթով բանահավաքն ավելացնում է. «Կարծում են, թե լուսատիկի աչքերը չափազանց փոքր են և իրենց արձակվող լույսից շլացած՝ ոչինչ չեն տեսնում»: Հետևաբար՝ աղոթողի բաղձանքն է գայլին կուրացնելը:

183թ. Խորագրված է «Կյիլկապի աղոթք»:
Բանահավաք՝ Արազ Կարապետյան, բանասաց՝ Մաճկալյան Անուշ, գրառված է Կիրովաբադում (Գանձակ):
Կցված է բանասացի սույն ծանուցումը. «Աղոթքը ասինք, օխտը հետ թելն էլ օխտը հետ կշկռակապ անինք, տնինք քարի տակին, մըչև ըպրընքների քքնիլը»: Քարն այս արարողության մեջ խորհրդանշում է ծանրություն, որի տակ գտնվող գայլկապը մնում է անսասան: Մյուս կողմից վկայվում է, որ գայլկապը ժամանակավոր է, մնում է քարի տակ այնքան ժամանակ, մինչև կորած անասունների (ապրանք) գտնվելը, որից հետո, ըստ երևույթին, կապը հանվել և հանգուցալուծվել՝ արձակվել է: Հմմտ. № 181ա, 183ա ծանոթագրությունները:

183ժ. Խորագրված են «Գելկապի աղոթք»:

ՀԱԲԱ կրկնօրինակն է ՆԴ 1885, № 24 տպագրից, արտագրված անհայտ մեկի կողմից 1920-30-ական թթ., աղբյուրի նշումով:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Ճանապարհորդին և կամ ոչխարի հոտը գայլից ապահովցնելու համար, մի թել յոթն հանգույց անելով՝ հետևյալ աղոթքի զորությամբ կապում են գայլի բերանը, որ նա ուր ուրեք պատահելիս չկարողանա պատառել նրանց»:

Տե՛ս № 183բ ծանոթագրությունը:

184ա. Խորագրված է «Գազան կապելու»:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, գրառված 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավում:

Սույն աղոթքով սկսվում է «Ութ մատով, երկու բթով» կամ «Ութ ութեն, երկու բթեն» սկզբնատողերով նոր տարբերակաշար, բնորոշ արևմտահայ (Ռշտունիք, Խարբերդ, Բարձր Հայք) ազգագրական շրջաններին:

Սրանց մեջ ևս առկա են նախորդ տարբերակախմբերի մի քանի կայուն մոտիվներ (ս. Սարգսի ծիու ծար, Աստվածածնի կաթ, Տեր Մովսեսի գավազան, Լուսավորչի հավատ և այլն), որոնք ունեն ինվարիանտային արժեք գայլկապի աղոթքների մեծ մասի համար, անկախ դրանց ազգագրական շրջանների պատկանելությունից:

184բ. Խորագրված է «Աղոթք»:

Այստեղ ավելացել է քրիստոնեական սրբությունների նոր մոտիվ՝ եկեղեցու 366 հայրերի (հայրապետներ) աղոթքներ, որ բնորոշ է թե՛ հայ վիմագիր արձանագրությունների օրհնանքի բանաձևերին և թե՛ միջնադարյան հմայական աղոթքներին: 366-ը տիեզերագիտական թիվ է (հմմտ. տարվա 366 օրերի հետ), որն իբրև սրբազան թվի հասկացություն 3, 7, 12, 40, 72 տիեզերաբանական, մարդակազմական, էթնիկամշակութային և այլ կարգի քանակական ըմբռնումներ խորհրդանշող թվերին զուգահեռ՝ հաճախ է կիրառվում հայ և ընդհանուր մշակութային ավանդության մեջ:

184գ. Խորագրված է «Աղոթք գելկապի»:

Նախորդ տարբերակների քրիստոնեական սրբություններին զուգահեռ այս աղոթքում հավելվել է նորը՝ սուրբ Գևորգի սուր գեղարդը (նիզակ):

Հայ և ընդհանուր քրիստոնեական ավանդության, մասնավորապես պատկերագրության մեջ ս.Գևորգը պատկերացվում է ծիավոր մարտիկի տեսքով, նիզակը ձեռին՝ վիշապի հետ մենամարտելիս: Ըստ ավանդության՝ նա սկզբում եղել է հովիվ, հետագայում դարձել է զինվոր ու զորավար և հաղթական կռիվներ վարել կռապաշտների դեմ և ի վերջո՝ նահատակվել: Ս.Գևորգին նվիրված հայկական մի վիպերգում նա ներկայանում է իբրև ժամանակին օգնություն հասնող հեծյալ զինվոր *(«Սարը սուփ Գիուրքն էր զենավոր,/ Ատենախաս բոզ ծիավոր»*, ՓԺ, 44): Սլավոնական ավանդության մեջ նա հանդես է գալիս մարդկանց ու անասուններին գայլերից պահպանող, անգամ գայլերի վրա իշխող (վերջիններս համարվել են նրա շները) [տե՛ս МС 1990, 145-146]:

Հայոց մեջ ս.Գևորգի գայլերի վրա իշխելու, մարդկանց ժամանակին հասնելու, գայլերից պահպանելու և այլ գործառույթներ մեծ մասամբ կրում է ս. Սարգիսը, որի զորության վկայակոչումը առկա է գայլկապի գրեթե բոլոր աղոթքներում:

Աղոթքում (հակառակ նախորդ տարբերակների) հմայագործին երկրորդական դեր է վերապահված. կապքի գործողությունների հեղինակներն ու միջոցները վկայակոչված սրբություններն են, որոնց դիմում է աղոթողը՝ գայլին բռնելու, կապելու, աչքը կուրացնելու, լեզուն պապանձեցնելու, ճանկերը բթացնելու և մարդկային պատուհասները նրա վրա թափելու պատիժների ցանկությամբ:

184դ. Խորագրված է «Գելկապի աղոթք»:

Բանահավաք՝ Ն. Նիկողոսյան, գրառման ժամանակը՝ 1940 թ.:

Սա նախորդի համառոտված տարբերակն է՝ ոճական որոշ փոփոխություններով:

Տե՛ս № 184գ ծանոթագրությունը:

184ե. Խորագրված է «Աղոթք գելկապի»:

Սակայն իր բովանդակությամբ այն, բացի գայլի կապքից, ուղղված է նաև խավարում դեգերող բոլոր կարգի կնճիթ-խայթոցավոր (կիճավոր) զեռուններին, առաջին հերթին կարիճների, օձերի, ինչպես նաև կեսգիշերյա ծովացած խավարի (բոլորն էլ քաոսային չար ուժերի ու չարության մարմնացումներ) հմայական կապանքի նպատակին:

Աղոթքի վերջին երկտողը վերաբերում է գայլի կապելու և արձակման պայմաններին. եթե նա մտել է աղոթել տվողի հողամասի սահմանը, պետք է կապված մնա, եթե սահմանից դուրս է ելել՝ պետք է արձակվի կապանքներից (հմմտ. № 181ա և 183ա ծանոթագրություններում բերված հմայական արարողություններում գայլի կապքի և արձակման հայեցակետերի հետ, որով կապքը դիտվում է ժամանակավոր երևույթ՝ պայմանավորված սպառնացող վտանգով և վտանգի վերացմամբ):

185ա. Խորագրված է «Գայլը կապելու աղոթք»:

«Թերահավատություններ» բաժնում (էջ 128) բանահավաքը ծանուցում է. «Երբ անասուն մը կորսվի ու գիշերն դուրս մնա, կուգան գայլկապ ընողին քով, որ զորավոր աղոթք մը ընելով՝ գայլուն բերանը կը կապե, որ մալ չուտե»:

Ապա տողատակին ավելացնում է. «Գայլը կապելու աղոթքը գիտցողն՝ իր գիտցածն ուրիշին ասելու չէ, ապա թե ոչ իրեն ալ չի անցնի»:

Ի դեպ այս սովորութային հավատալիքը այլ ազգագրական շրջաններում վերաբերում է ոչ միայն գայլկապի, այլ առհասարակ հմայական բոլոր աղոթքներին:

Այս աղոթքով սկսվում է գայլկապի հմայական բանաձևերի մի նոր տարբերակաշար, որին բնորոշ է դիմումնային կոչականով սկսվածքը կամ ամբողջական բանաձևի երկխոսական կառուցվածքը:

Աղոթքն սկսվում է **գյալոզ, գյալմալոզ** կոչականով, որը «գայլ» բառով կազմված հմայական այլախոսություն է՝ ուղղված գայլին: Շարունակության մեջ, ավանդական սուրբ զորությունների օժանդակությամբ, աղոթողը ոլորում է գայլի կապը, որպեսզի այն իր անասունի դեմ չարձակվի:

185բ. Խորագրված է «Գելկապ» աղոթք»:

Այդ առթիվ բանահավաք Քաջբերունին ծանուցում է. «Շիրակի Հոռոմ գյուղում, որպեսզի դաշտում գիշերը մնացած անասունին գայլը չվնասի, անասունի տերը դի-

մում է գելկապ անողի օգնության: Մազից հյուսած թոկով աղոթարարը կապում է շերեփը սյունին գլուխ ի վայր և երեք անգամ յուր մտքում կրկնում է» աղոթքը:

Տե՛ս № 181ա ծանոթագրությունը:

Աղոթքն սկսվում է գայլին ուղղված կրկնակի կոչականով և հարցումով (հռետորական), թե ինչպե՞ս կապել նրա բերանը, որին հետևում է կապելու ձևի և կապքի ավանդական սրբազան միջոցների (ս. Սարգսի ձիու մազ, Աստվածածնի գլխի ծամ) թվարկումը:

Նախորդ աղոթքներում ամենուրեք հիշատակվող Աստվածածնի կրծքի կաթին, այստեղ փոխարինել են նրա ծամերը, որոնք ս.Սարգսի ձիու պոչի մազի համադրությամբ միանգամայն համախոս են աղոթքի հմայական արարողության մեջ գայլին խորհրդանշող շերեփը սյանը կապելու մազից հյուսված թոկին: Մազե պարաններն առհասարակ ժողովրդական կենցաղում համարվում էին ամենաամուր և անքակտելի կապերը:

185գ. Խորագրված է «Գելկապ»:

Բանահավաք՝ Վ. Բդոյան, բանասաց՝ Սողոմոն, գրառման տարեթիվը՝ 1946 թ.:

Այս տարբերակը ձևով տրամաբանական զարգացումն է դիմում կոչականով սկսվող նախորդ երկու աղոթքների: Այստեղ կոչականով և հարցումով գայլին դիմելուն հաջորդում են գայլի պատասխանն ու հաջորդ հարց ու պատասխանները: Աղոթքի այս երկխոսական կառուցվածքը տիպաբանորեն մերձենում է միջնադարյան երդմնեցուցական բանաձևերին, դարձյալ կառուցված հարց ու պատասխանների վրա:

Աստվածածնի կաթն այս տարբերակում դարձել է Աստվածածնա ձիու ծծի կաթ, հավանաբար բաղարկվելով ս.Սարգսի ձիու ձարի հետ:

186. ԲԲ խորագիր չունի: ԲԱ խորագրված է «Չար աչքի աղոթք»:

ԲԲ բանահավաք Տ.Վ.Պալյանը աղոթքին կցել է հետևյալ ծանուցումը. «Երբոր մեկու մը կովը, կամ ոչխարը և այլն կորսվի, կարդացողի կը դիմե, որ գայլին բերանը կապե մասնավոր աղոթքով, որպեսզի գայլը կորսված անասունը չկրնա հոշոտել»:

Աղոթքը մասամբ աղճատված է: Սկսվում է գել գազանին (= կել կազար) ուղղված դիմում-կոչականով, ուր գայլը որակվում է աստվածազար (աստծոց զարկված, պատժված) թե՞ ընդհակառակն՝ աստվածազարմ, իբրև հմայական մեղմասույթ (հմմտ. գայլի, իբրև աստվածային կենդանու վաղնջական ըմբռնումը): Ըստ երևույթին աղճատման հետևանք են աղոթքի հաջորդ տողերի հետևյալ իրակությունները. **առամուրուն պղնձե** (հավանաբար «ատամունքն պղնձե», հմմտ. ալի և թպղայի աղոթքներում հաճախ հանդիպող այդ մոտիվի հետ, տե՛ս № 1(159)թ.), յոթն ութով, երկու քթով (փխ.«ութն ութեն, էրկու բթեն», որը գայլը զույգ ձեռքերի տասը մատով կապելու կերպն է մատնանշում և հաճախադեպ է գելկապի աղոթքների նախորդ տարբերակներում), սուրբ Սերգիսի ծին ծեռին (փխ.«Սուրբ Սարգսի ձիու ձարով» հաճախադեպ մոտիվի):

Այս նույն աղոթքը աննշան փոփոխություններով (գելի փոխարեն դև) ԲԱ բերված է որպես չար աչքի աղոթք, հետևյալ ծանուցմամբ. «Գովասանք է, չար աչքի հանդիպելով նազար առնողին վրա կարդացընելու համար պառավ վարպետ կնիկ-

ներ բերել կուտան, պառավը դանակ մը կառնե ձեռքը, դանակի ծայրը կը խոթե հացի կտոր մը, ատով նազար առնողին երեսը կը խաչակնքե և կսկսի հորանջել, միշտ հորանջել, «Հայր մերը» կարտասանե իր գիտցած կերպով և ապա զանազան աղոթքներ»:

Աղոթքում, բացառությամբ մեկ դարձվածի («էն աստուծո էն նիյեթին»), չար աչքին բնորոշ այլ բան չկա: Այն իր մոտիվներով առավել մերձենում է գայլկապի բանաձևերին, ուստի տեղադրվում է այդ շարքում:

Այս տարբերակում **Կազար** մեկնաբանված է Ղազար, **ադամութուն**՝ ադամամութ, **պլուզ**՝ փոքր: Բացի վերջինից, մյուս բացատրությունները համոզիչ չեն:

187ա. Խորագրված է «Գայլ կապելու աղոթք»:

Դիմում կոչական՝ ուղղված Աստվածամորը (առանց վիպական սկզբնամասի) գայլի լեզուն բերանում բթացնելու, ձեռ ու ոտը թուլացնելու, թաթը ետևը, կրունկն առջևը (բոլորը չարքերին բնորոշող հատկանիշ) դարձնելու հմայական պատիժների ցանկությամբ:

187բ. Խորագրված է «Աղոթք թշնամու դեմ»:

Նախորդի տարբերակն է, միայն 2-րդ տողում անօրեն մարդու մահվան մոտիվի շեշտմամբ, որով և վերածվել է չարական մարդու՝ թշնամու դեմ ուղղված հմայական բանաձևի: Սակայն հաշվի առնելով 3-րդ և 4-րդ տողերում գայլի կապքին բնորոշ մոտիվների առկայությունը, այն տեղադրվում է գայլկապի աղոթքների շարքում, իբրև տարբերակ: Տե՛ս № 187ա ծանոթագրությունը:

Ուշագրավ է, որ սույն աղոթքի երկու տարբերակներն էլ պատկանում են միևնույն ազգագրական շրջանին՝ ղրիմահայությանը և Ղրիմից գաղթած ու Նոր Նախիջևանում հաստատված նույն հայությանը:

188. Խորագրված է «Աղոթք գելկապի»:

Սկսվում է Ադամ նախահորն ուղղված դիմում կոչականով, իբրև սուրբ անձի, որից, ըստ երևույթին, աղերսվում է գայլի սանձահարումն ու վնասազերծումը: Գայլի ու գառի հակադրությամբ ներկայացվում են գայլի՝ իր զոհին մոտենալու հակադիր արարքները:

189. Խորագրված է «Աղոթք գելկապի»:

Հմայական եռատող պարզ բանաձև է, որի յուրաքանչյուր տողը ներկայացնում է ժողովրդական հավատալիքներով չար գիտակցված գայլի, սատանայի, մրջյունի (մոմրոնջ՝ մորմոնջ) կապքն ու վնասազերծումը:

Անժաժ քարը անսասանության, ամրության խորհրդանիշ է, որից հմայողը կապում է սատանային (հմմտ. № 183բ. ծանոթագրությունը): Գրեթե նույն իմաստն ունի Քրիստոսի խաչելության մեխը՝ բևեռը, որով հմայողը մեխում՝ գամում է մրջյունին, ահրիմանական այդ չար զեռունին:

190. Խորագրված է «Գելկապի աղոթք»:

Բանահավաք՝ Խաչիկ Սուքիասյան, բանասաց՝ Մխոյան Սաթո, գրառված է 1984 թ.:

Աղոթքի առաջին մասում, թեպետ փոքր-ինչ մթագնված ձևով, ներկայացված է Հայր Աստծո պատգամով Քրիստոսի՝ անարատ հղացմամբ ծննդի, չարչարանքի, խաչելության և հարության ավետարանական մոտիվները, որոնք իբրև սրբազան իրողություններ զուգադրվել են Աստվածածնի կրծքի կաթի և ս.Սարգսի ծիու ձարի ավանդական ըմբռնումներին, որպես համազոր հասկացություններ՝ առավել զորացնելով գայլը կապելու արարողության հմայական ներգործությունը:

191. Խորագրված են «Աղոթք դարձյալ «գելկապի»»:

ՀԱԲԱ բանահավաքն է Ն.Նիկողոսյան, գրառման տարեթիվը՝ 1940 թ., Լենինական:

Վերջինս, սկսած վերնագրից, ամբողջապես էԱԺԱ օրինակի պատճենումն է և տարբերակային արժեք չի ներկայացնում:

Աղոթքն ամբողջությամբ վիպական չափածո զրույց է՝ գրական վերամշակման ենթարկված: Բացակայում են կապքի սովորական աղոթքներին բնորոշ հմայական բանադրանքներն (անեծք, սպառնալիք, հրաման) ու երդվեցումները: Դրանց փոխարինում են վիպական պարզ սյուժեի մեջ դրսևորված քրիստոնեական սրբերի արարքները՝ անասուններին հովանավորելը և նրանց սպառնացող գայլի սպանությունը: Այդ վիպական արարքների մեջ էլ արտահայտություն է գտել աղոթքի բուն ցանկությունը՝ անասունների անվտանգության ապահովումն ու գայլի սպառնալիքից ազատվելը:

Առավել ուշագրավ են վիպական այդ պատումի առասպելաբանական հիմքը, կերպարներն ու նրանց գործառույթները: Դրա հիմքում, ըստ ամենայնի ընկած են անասուններին պահպանող ու հովանավորող ոգիների կամ աստվածությունների մասին նախնական պատկերացումները՝ վերամարմնավորված քրիստոնեական սրբերի կերպարներում: Երկու սրբերն էլ բնութագրվում են լույսն ու արդարությունը խորհրդանշող սպիտակագույն մակդիրներով (ս. Սարգիսը՝ «բոզ (սպիտակավուն) ձիավոր» ավանդական մակդիրով, ս.Մինասը՝ ճերմակամորուս): Երկու սրբերն էլ առասպելական հերոսների նման ռազմիկ են՝ զինված նիզակով և սրով, չար ոգիների դեմ կռվով մաքառող ու հաղթող՝ օժտված աստվածային հմայության զորությամբ, որից ընկրկում են ատամները սրած չար գազանները:

Սուրբ Սարգսի մասին տես №420ա ծանոթագրությունը:

Սուրբ Մինաս անունով ընդհանուր եկեղեցական ավանդության մեջ հայտնի են երկու նշանավոր սրբեր. մեկը **Մինաս Եգիպտացին** է, ապրած Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս կայսրերի ժամանակ, եղել է զինվորական: Երբ հիշյալ թագավորների կողմից սկսվել են հալածանքները քրիստոնյաների դեմ, Մինասը թողնում է զինվորական ծառայությունը, քաշվում անապատ, բայց 3 տարի անց իջնում է քաղաք, թատրոնում հավաքված մեծ բազմության առաջ դիմելով իշխանին՝ հայտնում է իր ով լինելն ու քրիստոնեական հավատին զինվորագրվելը: Իշխանը փորձում է զանազան խոստումներով հրաժարեցնել նրան իր հավատից, բայց ապարդյուն: Նրան ենթարկում են բազում տանջանքների, ի վերջո՝ գլխատելով նահատակում: Հետագայում նրա նշխարների վրա իր անվամբ վկայարան են կառուցում, ուր բուժման են գալիս բոլոր կարգի հիվանդները:

Մյուսը **Մինաս Մեծն** է, աթենական «ուսմամբ ճոխացեալ, այր իմաստուն և հանճարեղ», որին Մաքսիմիանոս կայսրն ուղարկում է Աղեքսանդրիա, տեղի խոռ-

վությունները դադարեցնելու: Մինասը գալիս է խռովարարներին խաղաղեցնելու, բայց ընդունում է քրիստոնեական հավատը, ունեցվածքը բաժանում աղքատներին, իսկ աղոթքներով բուժում հիվանդներին: Ջայրացած կայսրը Աղեքսանդրիա է ուղարկում Երմոգինես անունով եպարքոսին, որը Մինասի դասընկերն է եղել և դարձյալ աթենացի: Վերջինս գալիս է, որպեսզի համոզի Մինասին՝ հրաժարվել քրիստոնեությունից: Սակայն հրապարակային բանավեճի ժամանակ Մինասը հաղթում է Երմոգինեսին: Վերջինիս կարգադրությամբ Մինասին խեղանդամ են դարձնում, բանտարկում, բայց աստծո զորությամբ Մինասը նույն գիշերվա մեջ առողջանում է: Երմոգինեսը, որ արդեն զղջացել էր իր արարքի համար, տեսնելով հրաշքը, ինքն էլ դառնում է քրիստոնյա, եպիսկոպոս օծվում և.շրջելով հեթանոսական տաճարները՝ բագինները կործանում: Ի վերջո Աղեքսանդրիա է գալիս Մաքսիմիանոսը, երկուսին էլ չարաչար տանջանքների ենթարկելով՝ նահատակում **[Վարք եւ վկայաբանութիւնք, Բ,** 57-73]: Աղոթքում, իբրև ռազմիկ սուրբ, հավանաբար նկատի է առնվել Մինաս Եգիպտացին:

192. Խորագրված է «Աղոթք «Ամենայն չար գազանաց»»:

Մինչև 1988 թ. երկրաշարժը պահվում էր Լենինականում Աղ. Մխիթարյանցի թոռան՝ Կարո Դուրգարյանի մոտ:

Այս աղոթքը Աղ. Մխիթարյանցի բանահյուսական ձեռագիր նյութերում, «Մեր պապերի ու մամերի բժշկական աղոթքները» խորագրով, դրված էր վերջին՝ №13-ի տակ: Նախորդ 12 աղոթքները ժամանակին զետեղվել են և հրատարակվել Աղ. Մխիթարյանցի կազմած «Փշրանքներ Շիրակի ամբարներից» ժողովածուում (ԷԱԺՍ, 1901 թ.): Սույն աղոթքը ինչ-ինչ պատճառներով չի մտել հիշյալ ժողովածուն և տպագրվում է առաջին անգամ:

Այն թե՛ իր մոտիվաշարով և թե՛ կառուցվածքի ամբողջականությամբ յուրատեսակ ամփոփումն է գայլկապի նախորդ աղոթքների:

Աղոթքի առաջին յոթ տողերում թվարկված են քրիստոնեական յոթ սրբություններ, որոնց միջոցով ու զորությամբ աղոթողը «կապում է» չար գազանին, պատառոտում բերանը, ատամները գետին թափում, կուրացնում և խլացնում նրան: Այդ վկայակոչված յոթ սրբություններից, նախորդ աղոթքների համեմատությամբ ավելացել են երկուսը՝ քրիստոնյա կույսերի մաքուր աղոթքը և աշխարհի վախճանին, հոգիների վերջին դատաստանին ներկայանալու համար մեռելների հարությունն ավետող Գաբրիել հրեշտակապետի փողը: Մնացած ավանդական սրբությունների վկայակոչումներում մտել են նոր մոտիվներ. Լուսավորչի սուրբ հավատին փոխարինել է նրա հողաթափը (դարձյալ եկեղեցական սրբություն), նահատակաց կարմիր քարին՝ նրանց կարմիր արյունը, ս. Սարգսի ձիու ձարին՝ նրա կեծակե թուրը (հայկական վեպում և առասպելներում Սասնա դյուցազունների ավանդական կայծակե զենքը, որն, ի դեպ, հատկանշական է ամպրոպա-կայծակնային հերոսներին, այդ թվում նաև ս. Սարգսին, որը վեպում հանդես է գալիս իբրև Սասնա դյուցազուններին օգնական ու զորավիգ և կրում է հողմի հին աստվածության բացահայտ հատկանիշներ, տե՛ս №42ա ծանոթագրությունը):

Թվարկված սրբություններին հաջորդում են, ինչպես նշվեց, չար գազանին պատժելու ձևերը՝ արտահայտված հմայական բանադրանքի տարբեր բանաձևերով: Աղոթքն ավարտվում է Քրիստոս տիրոջն ուղղված, աղոթողի անձի անվտանգութ-

յունն ապահովող, քրիստոնեական աղոթքներին բնորոշ բանաձևված աղերսանքով:

193. Խորագրված է «Գելկապի աղոթք»:

Տակը ծանուցված է. «Կրկնել երեք անգամ»:

Տիպաբանորեն նույնական է չար աչքի մասին ասվող «Կուս Մայրամ կերթա դրախտը» և համանման սկզբնատողով աղոթքների խմբին (հմմտ. № 35ա և հտն.), ուր Գալուստի որդու փոխարեն հանդես է գալիս կույս Մարիամը:

Երկխոսական աղոթքների այս տիպը հանգում է միջնադարյան երդմնեցուցական բանաձևերին, ուր չար վտանգից ողբացող անձանց փոխարեն հանդես են գալիս չար ոգիները, իրենց խոստովանություններով ու երդումներով:

Աղոթքում, որպես կապքի հմայական միջոցներ, հանդես են գալիս երկաթե շղթան և պողպատե բանալին, առաջինը գողի ոտները շղթայելու, երկրորդը՝ գայլի բերանը փակելու համար: Այս կիրառական գործառություններից անկախ, երկաթե և պողպատե առարկաներն առհասարակ, ըստ հավատալիքների, ունեն չարխափան հատկություն և որպես այդպիսիք լայն կիրառություն ունեն հմայական արարողություններում ու բանաձևերում:

194. Խորագրված է «Չարագործներին կապող աղոթք»:

Աղոթքից առաջ ծանուցված է՝ «Խաչակնքելով չորս կողմ»:

Բանահավաք՝ Մկրտիչ Լյուլեճյան, բանասաց՝ Խռխռյան Աստվածատուր, 63 տարեկան, գրառված է 1960-ական թթ.:

Առաջին չորս տողերը կապքի վիպական նկարագրություն է, որտեղ կապող-հմայողի դերում հանդես է գալիս սուրբ Հովհաննեսը (սուրբ Կարապետ), որը հայ ավանդության մեջ հայտնի է դևերին կապելու և ստորերկրյայքում բանտարկելու գործառույթով: Աղոթքում նա ունի պղնձե կապ, որով կալում և կապում է գայլերին, չար գազաններին և նենգ մարդկանց:

Վերջին երկտողը հմայական բանադրանքի բանաձև է, սերտորեն առնչված վիպական մասին, որով աղոթողն իր ցանկությունն է արտահայտել կապքի անսասանության վերաբերյալ:

Աղոթքն ուշագրավ է հատկապես տաղաչափական յուրահատկությամբ: Ընդամենը 6 տողից բաղկացած այդ բնագրում, բացառությամբ վերջին տողի, 7 անգամ կրկնվում են *կապ* և *կապել* բառերը, որոնք ոչ միայն գեղեցիկ հնչյունանմանություն են ստեղծում ամբողջ տեքստում, այլև իրենց վրա են կրում աղոթքի իմաստաբանությունը, իբրև կապքի հմայական բնագրի: Բառահնչյունային իմաստալից կրկնությունները բանաստեղծական հնագույն ավանդույթ է, բնորոշ հատկապես ծիսաառասպելական և հմայական բնագրերին:

195. Խորագրված է «Գեշ բանի աղոթք»:

Բանահավաք՝ Մկրտիչ Լյուլեճյան, բանասաց՝ Չակայան Եղ. /75 տարեկան/, գրառված է 1960 թ.:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքի վերջին տողից երևում է, որ այն բուժաղոթք է, չար ուժերի դեմ ուղղված, դրանց լեռան վրա կամ ծովի անդնդային խորքերը նետելու, ոչնչացնելու բաղձանքով: Բայց, միաժամանակ, առավել որոշակի են շեշտված գայլին, գազանին և այլ

գիշատիչներին կապելու մոտիվները, որոնք նույնանում են գայլկապի նախորդ աղոթքների համանման մոտիվներին: Ուստի սույն աղոթքը ևս տեղադրվում է դրանց շարքում:

196. Խորագրված է «Կապք օձի, գողի, գայլի, որ ոչ վնասէ»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքի ներքևում պատկերված է սրբի դիմանկար՝ «Սուրբն Բարսեղ Կեսարացին» մակագրությամբ:

Բարսեղ Կեսարացին 4-րդ դարի քրիստոնեական եկեղեցու նշանավոր հայրերից է, վարել է ճգնավորական կյանք, ապա ընտրվել Կեսարիայի արքեպիսկոպոս, կուսակրոնության խրախուսող ու հիմնադիր, պայքարել է արիոսական քրիստոնեական աղանդի ուսմունքի դեմ, թողել է եկեղեցական գրականության հարուստ ժառանգություն, որից հայերեն են թարգմանվել տակավին 5-րդ դարում: Նա մեծ ազդեցություն է թողել քրիստոնեական աստվածաբանության գիտական մտքի զարգացման վրա, սրբացվել և իր վիթխարի հեղինակության պատճառով հաջորդների կողմից անվանվել Բարսեղ Մեծ:

Այս հեղինակավոր սուրբը աղոթքում բնութագրվում է պասով ու աղոթքով ապրող, որ արծագանքն է, անշուշտ, Բարսեղի բարեպաշտ ճգնակեցության:

3-րդ տողում Բարսեղ անվանը հաջորդում է *ըրըսղանտն* աղավաղված անստույգ բառը, որ գուցե թե *արիոս աղանդն* բառակապակցության աղավաղումը լինի և մթագնված արծագանքը Արիոսի աղանդի դեմ մղած նրա գաղափարաբանական պայքարի:

Առաջին երկու տողերի տրամաբանությունը հետևյալն է. պասն ու աղոթքը Բարսեղի համար նույնն է, ինչ նետ ու աղեղը զինվորի համար: Այս կերպ Բարսեղը հանդես է գալիս մաքառողի, յուրատեսակ ռազմիկի դերով. նա մտնում է նեղ տապանը, կապում թունավոր օձին և գիշերվա գողին ու գայլին, որը (եթե ճիշտ է 3-րդ տողի մեկնաբանությունը) իմաստաբանորեն զուգորդված է Արիոսի աղանդին, իբրև երկուստեք չար հասկացությունների:

197. Խորագրված է «Գայլի կծածի դեղ» և դրված «Բժշկություն» բաժնում: Բանահավաք՝ Արշակ Աթայան:

Սույն բանածնը թեմատիկ ընդհանրության պատճառով զետեղվում է գայլկապի աղոթաշարում:

198. Խորագրված է «Կարիճին կախարդում են, որպեսզի չկծի»: Բանահավաք՝ Արշ. Աթայան:

Առաջին տողում աղոթողը կրկնակի կոչականով դիմում է կարիճին: Նույն զուգանմանությամբ, նույն դիմումն է կրկնվում նաև 3-րդ տողում, միայն այլ բարբառային ձևերով և փոքր ինչ աղավաղված: *Կոր* արևմտահայ մի շարք բարբառներում նշանակում է «կարիճ»: Ըստ երևույթին 3-րդ տողի «Ագոռ, ագոռ» կրկնավորը «Ա՛ կոր, ա՛ կոր» (ա՛յ կարիճ, ա՛յ կարիճ) բարբառածևի աղավաղումն է: Իսկ հաջորդ տողերը՝ «Ագնի ծակին (Աթեշ կտամ) Իմամ, իմամ» ըստ երևույթին պետք է հասկանալ թոնրի ակի անցքից հանգիստ ու ապահով կրակ (պրսկ. աթեշ) բորբոքելը, այսինքն՝ թոնիր վառելը (կրակն իբրև կարիճին հալածելու, ոչնչացնելու սպառնալիք):

Կարիճի կերպարանքի մասին հմայողի հարցումն ու պատասխանները փաստորեն չարի (կարիճի) երդվեցումն է, որին հաջորդում են հմայական կապքի բանաձևերը և նրա վնասազերծումը:

199. Անխորագիր են:

ԹՄԿ բանահավաքի ծանուցմամբ՝ «Կարիճ տեսնելիս են ասում և իբր նա դառնում է անվնաս»:

Աղա Ստեփան, Ստեփանիոս - քրիստոնեական սուրբ է, հավանաբար ս.Ստեփանոս Նախավկան՝ քրիստոնեական կրոնի առաջին քարոզիչներից մեկը և առաջին վկա - նահատակը, որը քարկոծվել ու նահատակվել է Երուսաղեմում, հավանաբար 34թ. [տե՛ս **Գործք առաքելոց Ձ** - է]: Աղոթքում նրան է դիմում հմայողը և նրա զորությամբ ու սրբազան մասունքներով (ս. Սարգսի ձիու մազ, Աստվածածնի կաթ) կալում և կապում է կարիճին և դարձնում ավանակի նման հնազանդ ու անվտանգ:

Այս, ինչպես նաև օձի և կարիճի կապքի հաջորդ աղոթքները, որոնք սրա հեռավոր տարբերակներն են, եզրափակվում են լուսաբացի կամ առավոտյան մոտիվներով (հմմտ. № 200ա,բ աղոթքները): Սույն աղոթքում այդ մոտիվն ունի միանգամայն որոշակի և տրամաբանական իմաստ. հմայական կապքը նկարագրելուց հետո՝ ավելացվում է՝ «Ինչրու արեգակը դուս գա», որ նշանակում է կարիճին կապած, հմայած պահել մինչև լուսաբաց, այսինքն՝ արևածագը դիտվում է իբրև հմայության վերջնաժամկետ: Այս փաստը վկայում է, որ աղոթքը սկզբնապես ասվել է երեկոյան, մութն ընկնելուն պես, չարն ու խավարը խորհրդանշող զեռուններից ու գազաններից աղոթքին ենթակա անձին զերծ պահելու համար: Կարիճը, մրջյունը, օձը և գետնի մեջ բնակվող մյուս զեռունները հին կրոնական հավատալիքներով (իրանական, հայկական ևն.) դիտվել են իբրև ստորերկրյայքն ու գիշերային խավարը խորհրդանշող, մարդկանց վնասող արհիմանական չար կենդանիներ, որոնց ազդեցությունը հատկապես վտանգավոր է գիշերվա խավարում, իսկ արեգակը, ցերեկվա լույսը, որ ցրում է գիշերային չարն ու խավարը, նրանց դարձնում է անվտանգ: № 200ա, բ աղոթքներում լուսաբացին արևն, ըստ երևույթին խորհրդանշվել և անձնավորվել է հովիվ մանկան կամ տղայի պատկերով, որն, ըստ № 200ա տարբերակի՝ կապում է գոտին (կապքի առարկայական դրսևորում) և ոչխարը սար բարձրացնում (ոչխարն իբրև հովվի կամքին ենթակա հլության, հնազանդության արտահայտություն, որով նկատի են առնվել արևի լույսով կապված, կախարդված օձն ու կարիճը): Իսկ ըստ 200բ տարբերակի՝ բնորոշվում է *արդար* մակդիրով *(արդար տղա),* միանգամայն բնորոշ «արեգակն արդար» հին առասպելաբանական պատկերացմանը: Կրոնաառասպելաբանական այս հին ըմբռնումներն են ընկած սույն և հաջորդ աղոթքների հիմքում և վկայում, որ այդ աղոթքները նախապես ասվել են գիշերը կամ երեկոյան (տե՛ս № 200բ աղոթքին կցված բանահավաքի ծանոթությունը):

200ա. Խորագրված են «Օձ կապելու աղոթք»:

ՀԱԲԱ տարբերակի գրառողը Գ.Թարվերդյանն է. գրառումը կատարել է 1936 թ. Վաղարշապատում, 50 տ. Սրբուհի Մեյրեմգուլիյանից:

Աղոթքն սկսվում է օձի և կարիճի հմայական կապքով, որին հաջորդում է (3-4 տողեր) հմայված օձի և կարիճի կերպարների որոշարկումը՝ անդնդային օձ և կճավոր (խայթոցավոր, խայթող) կարիճ: Անդնդային օձը ստորերկրյա օձն է, առասպելա-

կան վիշապը, Քաոսի անձնավորումն ու խորհրդանիշը, որ սպառնում է Աշխարհի կարգուկանոնին: Նրան է մերձենում նաև *կծավոր կարիճը*՝ իր մահաբեր խայթոցով: Երկուստեք առկա է օձի և կարիճի սիմվոլիկ առասպելաբանական պատկերացումը:

Կապքի ավանդական բանաձևերին հաջորդում են լուսաբացին մանկան գոտին կապելու և ոչխարը սարն հանելու մոտիվները, որոնք, ըստ էության ունեն առասպելաբանական բովանդակություն (տե՛ս № 199 ծանոթագրությունը): Աղոթքն ավարտվում է «Մայր ճշմար» երիցս կրկնվող կոչական բանաձևով, որը ճշմարիտ մորը, իմա՝ Տիրամորն (հնում, գուցե Արևամորն) է ուղղված:

200բ. Խորագրված է «Կապք իբր աղոթք օձի և կարիճի»:

Բանահավաք Հ. Ճանիկյանը աղոթքին կցել է հետևյալ ծանոթությունը. «Կա նաև կարիճի այլ նվերք կամ կապք մի հետևյալ կերպիվ. Ավագ ուրբաթ գիշերն կտոր մի բամպակե մանած թել թզաչափ կու կտրին և յուրաքանչյուր թելին վրա յոթը հանգույց ձգելով՝ աղոթք կըսեն, և այս թելերը տունն կարիճ ունեցող անձանց կուտան մեյ մեկ հատ, զորս ծոցերնին կը պահեն մինչև հաջորդ տարվա նույն օրն: Վերոգրյալ կապքերն ըսող կամ ընողներն կը հուսան, թե գող չի գար, և կարիճն կապվելով այլևս չի խայթեր»:

Սա նախ՝ վկայում է, որ Ակնում հիշյալ աղոթքից բացի կարիճի դեմ կիրառվել են այլ հմայքներ (= նվերք) ևս, որոնցից մեկն է նկարագրված արարողությունը: Եվ ապա՝ կարիճ «կապելու» արարողությունը կատարվել է գիշերը (Ավագ ուրբաթի))տե՛ս № 199 ծանոթագրությունը): Եվ ի վերջո գողն ու կարիճը գողունի տուն մտնելու պատճառով դիտվել են իբրև համարժեք հասկացություններ (հմմտ. № 204 աղոթքի խորագիրը):

Գասդռապատ բառը Հ. Ճանիկյանի ծանուցմամբ՝ անհասկանալի է. «Ի՞նչ կը նշանակե հարցա, չի գիտեմք ըսին: Ակնա մեջ «դուռը պատ արե» կըսեն՝ «դուռը գոցե» իմաստով»: Այսինքն՝ ենթադրում է, թե բառը կարող է բաղադրված լինել դուռ և պատ բառերից: Բառը, վերցրած այս նույն աղոթքից, Հր. Աճառյանի Գավառական բառարան է մտել վրիպակով՝ **գառտրապատ,** իբրև անծանոթ բառ և մեկնաբանվել է թեականորեն՝ «գուցե աշխատասիրությամբ, ժրաջանորեն» [**Աճառյան 1913,** 220]:

Տապանը տունն իջնելու և օձ ու կարիճի մեջտեղ գալու մոտիվներն ըստ երևույթին առնչվում են Նոյի տապանի և այնտեղ ապաստանած կենդանիների ջրհեղեղյան առասպելի մոտիվներին, իբրև հիշյալ կենդանիների նախաստեղծ ներկայացուցիչների, որոնց հմայական կապքով վնասազերծումը դիտվել է իբրև առասպելական նախադեպ և կապվել հայ եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Դրան, անշուշտ, հիմք են ծառայել Գրիգորի օձ ու կարիճներով լեցուն Խոր վիրապում բանտարկվելու և իր սրբազան զորությամբ հիշյալ կենդանիներից չվնասվելու առասպելական մոտիվները, ինչպես նաև նրա «լուսավորիչ» մակդիրի (արևային հատկանիշ) նախնական առասպելաբանական ըմբռնումը: Ուստի աղոթքում նա հանդես է գալիս օձին և կարիճին կապող-հմայողի գործառույթով: Աղոթքն ավարտվում է դարձյալ լուսաբացի և արդար տղայի քնից արթնանալու, ոչխարը սարը բարձրանալու մոտիվներով (տե՛ս № 199 ծանոթագրությունը):

201. Խորագրված է «Հանգստյան օրհնություն» և տեղակայված «Օրհնություններ» շարքում:

Աղոթքը բաղադրված է երեք մասից. առաջին վիպական մասում (1-7 տողեր) նկատի է առնվել **Դանիել մարգարեի** մասին հինկտակարանյան հայտնի լեգենդը, որի համաձայն՝ պարսից Դարեհ արքայի նախարարներն ու զորավարները նախանձելով իրենց հրամանատար կարգված Դանիելին, հրահրում են թագավորին՝ Դանիելին իջեցնել առյուծներով լի գուբը, իբրև անհնազանդի և այլ աստծո պաշտողի: Դարեհը ակամա ենթարկվում է նախարարների կամքին և իր սիրելի հրամանատարին իջեցնում է առյուծների գուբը: Սակայն աստվածային կամքով առյուծների բերանը կապվում է, Դանիելը մնում է անվնաս [տե՛ս **Դանիէլ Զ**]:

Աստվածային զորությամբ գբում՝ (իմա՝ տապան) առյուծների բերանները կապելու մոտիվն աղոթքում վերածվել է առհասարակ ամեն տեսակ չարի, օձի, կարիճի, գողի հմայական կապքի խորհրդանիշի:

Երկրորդ մասում (8-14 տողերում) թվարկված են այն հանրահայտ սրբությունները (Սողոմոնի ձիու նալ, Աստվածածնի կաթ), որոնցով կապվում, վնասազերծվում է չարը և ապակյա թասի մեջ դրած՝ նետվում անհատակ ծովերի անդունդը (հմմտ. Սողոմոնի կողմից դևերին կժի մեջ փակելու և ծովը նետելու, ինչպես նաև չար աչքը Անհատակ ծովի խորքերը գցելու հանրահայտ առասպելական մոտիվների հետ):

Երրորդ մասը (15-18 տողեր) հմայական այլ աղոթքներից եկող (տե՛ս №№ 266ա-դ և ուրիշներ) պողպատե սյուներով, գերաններով ու դռներով կառուցված երկաթե տան (իբրև հմայական պահպանության ու ապահովության խորհրդանիշ) առասպելական պատկերի հարակցումն է սույն աղոթքին, որտեղ աղերսանքի բանաձևումով աղոթողը Քրիստոսից խնդրում է իր տուն ու տեղի և զավակների անվտանգության ապահովումը: Նման հարակցումներով օձի, կարիճի, գողի կապքի նպատակին ուղղված հմայական աղոթքը վերածվել է առհասարակ ունեցվածքն ու ընտանիքը ամեն տեսակ չարիքից ու փորձանքից պահպանելու և ապահովելու բանաձևի:

202. Խորագիր չունի:

Բովանդակությունից երևում է, որ աղոթքն ուղղված է օձի և կարիճի հմայական կապքին:

Աղոթքում ներկայացված հմայագործ սուրբ անձն ըստ երևույթին Գրիգոր Լուսավորիչն է, պատկերված իր քրիստոնեական ջերմեռանդ հավատով (ս. սյունը սրտին, Ավետարանը գրկին, խաչը երեսին, շաքարեղեգնից գավազանը ձեռքին), որ իջնում է կարիճներով ու օձերով բնակված Խոր վիրապը և աստվածային զորությամբ (Տիրամոր անունով և Քրիստոսի արյունը խորհրդանշող քաղցր գինով) կարիճներին և ավերող օձերին կապում ու վնասազերծում: Հին առասպելաբանական հայացքով սա լույսի և արեգակնային աստծո ստորերկրյայք իջնելն է և չար ոգիներին սարսեցնելը, որը հետագայում փոխանցվում է քրիստոնեությանը, հանձին Քրիստոսի դժոխք իջնելու, չար վիշապին կապելու, փակված-կապվածներին ազատ արձակելու առասպելական մոտիվների:

203. Խորագրված է «Աղոթք օձի խայթոցից ազատվելու համար»:

Բանահավաքի ծանուցմամբ՝ ասվում է օձ տեսնելիս, այսինքն՝ պահպանական աղոթք է: Բնույթով հմայական պարզ բանաձև է՝ բաղադրված օձին ուղղված կոչական սաստիչ հրամանից և Օձնեցու սուրբ պատարագով նրան հմայական կապքի ենթարկելու ցանկությունից: Այստեղ արտահայտվել են հայ եկեղեցու նշանավոր

գործիչ **Հովհան Օձնեցու** անվան ժողովրդական ստուգաբանական իմաստը (բաղադրված Օձուն, հիմքում՝ օձ բառից) և նրա օձահմայության մասին Լոռիում առկա հավատալիքն ու տեղական ավանդական զրույցները [հմմտ. **Ղանալանյան 1969,** 62-63]:

204. Խորագրված է «Կապք գողի և կարիճի»:

Նախորդ աղոթքների նման այստեղ դարձյալ սրբազան գործող անձը Գրիգոր Լուսավորիչն է, որ հանդես է գալիս իբրև պահապան իր շուրջառով ու գավազանով և միաժամանակ չարը հմայող՝ կապող ու կարկամեցնող (տե՛ս № 202 ծանոթագրությունը): Աղոթքն ունի տիպաբանական պարզ կառուցվածք, բաղադրված եռամոտիվ վիպական նկարագրից և հմայական երկանդամ բանաձևից՝ մաղթանքի և աննեծքի բաղադրիչներով:

Մատենադարանի երկու ձեռագիր հմայիլներում (№№ 18 և 21) առկա են օձահմայության երկու ընդարձակ աղոթքներ, որոնք նույն ստեղծագործության տարբերակներ են, միմյանցից զգալի հեռացած և աղավաղված: Անհնար էր դրանց բնագրերը ճշգրտել կամ վերականգնել. ուստի ստորև դրվում են այդ աղոթքներից միայն առանձին հատվածներ, որոնք օձերի վերաբերյալ առասպելական հավատալիքների ուշագրավ տվյալներ են պարունակում:

№ 21 հմայիլը խորագրված է *«Աղօթք սուրբն Պողոսի, զոր ետ նմա հրեշտակն տեառն, յորժամ ել նա ի ծովէն ծառայիս աստուծոյ»:* Երկու տարբերակների առաջին մասում, թեպետ մասամբ աղավաղված, պատմվում է հետևյալը. Պողոս առաքյալը, որն սկզբում եղել է եկեղեցու հալածիչ, դուրս է գալիս ծովից և խռիվ է հավաքում: Հանկարծ նրա աջ ձեռքի խռիվից մի բան է կախվում, հավանաբար՝ օձ: Պողոսը ս.-Հոգու շնորհիվ նրան թոթափում է վառվող կրակի մեջ և նվաղյալ հոգով աստծոց օգնություն խնդրում: (Վիպական այս դրվագն իբրև Մալթա կղզում ապաստանած Պողոս առաքյալի հետ կատարված իրական եղելություն տե՛ս **Գործք առաքելոց ԻԸ,** 1-6): Նույն պահին աստված հրեշտակին ուղարկում է Պողոսի մոտ, մի թուղթ ձեռին և ասում. *«Պողոս, ընկալ զգիրս զայս, բաց զդա և գտանես ի դմա դրոշմ աստուծոյ ոչ եթէ վասն միոյ չարի, այլև ամենայն չարեաց»:* Դրան անմիջապես հաջորդում են 366 տարբեր տեսակի օձերին և 16 տեսակի կարիճներին ուղղված երդմնեցումները, որոնցից այստեղ կհիշատակվեն մի քանիսը:

«Երդմնեցուցանեմ զԳՃԿԶ (366) ազգ օձից զզարեքն և զամենայն զեռունս, որ զեռան ի վերայ արդ երկրի և հարկանեն զմարդիկ: Երդմնեցուցանեմ զԺԶ [16] ազգ կորացն: Երդմնեցուցանեմ զմորմ[մ]ն և զկարիճն և զամենայն թունաւորս և զկորն, որ ելանէ ի թունից սատանայի և ինքն է թագաւոր հրէից ամենայն զեռնոց: Երդմնեցուցանեմ և զենիմ և զպարիկն, որ զմահադեղն բարձեալ ունի զակն իւր աջոյ: Երդմնեցուցանեմ զօձն գզեզ, որ է ԺԲ [12] գլխէն և Դ [4] լկամէն»: Ըստ № 18 հմայիլի՝ *«Երդմնեցուցանեմ զխիթն և զարեգն, որ զմահու դեղն ի բերանն ունի: Երդմնեցուցանեմ և զարեգն, որ մահու դեղն բարձեալ ունի աջոյ կզակն և որ է ԺԲ գլխէն»:* Ըստ № 21 հմայիլի՝ *«Երդմնեցուցանեմ զօձն ակռավատես, որ զմահն բարձեալ ունի յաջոյ ասեղն իւր ի ժանին, որ եթէ հարկանէ զմարդ կամ զանասուն, անհնար է ապրել, եթէ ոչ ժամանէ աղօթքն սուրբ առաքելոյն Պողոսի ի վերայ նորա: Երդմնեցուցանեմ զօձն երկնահայեաց և զօձն ակունդիոս և զօձն, որ ծառն ելանէ և զօձն արեգնահայեաց և զօձն աստեղնահայեաց և զօձն թրչող, որ Ճ [100] տարի ակն*

մարդոյ ոչ տեսանէ, վիշապանայ և վերանայ և է ԺԲ գլխեայ և Դ լկամէ»:

Այս վերջին տեսակի օձի պատկերացումը գրեթե նույնանում է Վանում տարածված այն հավատալիքին, թե վիշապը երբ հազար տարեկան լինի, սարսափելի մեծանում է, և հրեշտակները երկնքից իջնելով՝ նրան շղթայակապ քաշում են վեր, հանում արևի մոտ. որ այդ վիշապը վարսեր ու թևեր ունի [**Արվանձտյանց 1978,** 69]:

№ 18 հմայիլի վերջին հատվածում ներկայացված է ամպրոպային վիշապ օձի առասպելաբանական պատկերը՝ իր աշխարհակործան գործառույթներով: *«Երդմնեցուցանեմ զօձն մեծ գլուխն և խոր և զերկինս, որ ոչ տայր անձրև, և զերկիր, որ ոչ բուսուցաներ զսերմանիս իւր, զծառ, որ ոչ տայր զպտուղ իւր, զանասունս, որ ոչ ծնանէին, զսողունս, որ ոչ սողայինն, զթռչունս, որ ոչ թռչէին, զկանայս, որ ոչ յղանային, զգնայունս, որ ոչ գնային, զշարժունս, որ ոչ շարժէին, զլուսաւորքն, որ ոչ փայլէին և աստեղք առհասարակ, իբրև ի մէջ գիշերին երեւէին»:*

Դրան անմիջապես հաջորդում է կապքի եզրափակիչ հմայական բանածևը, որի իմաստային կապը բուն տեքստի հետ փոքր-ինչ մթագնված է. *«Կապէի զորդիս մարդկան, որ ոչ շոշափէին կամ վաճառ անէին. կապէի զերկինս աստեղօք և զերկիր ամենայն կենդանիօք որ ոչ անցանէր ըստ հրամանաց իմոց»:*

Բ. ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՊՔԻ (№№ 205 - 2(220))

205ա. Խորագրված է «Կապք գողի»:

Ս.Սարգիսը հանդես է գալիս պահապան ոգի, որը տանը նստած՝ թրով դուռն է փակել, թիկնոցով ծածկել երդիքը և իր նման դրությամբ՝ դարձել դռանը և երդիքին մոտեցող գողին կապող-հմայող:

205բ. Խորագիր չունի և գրառման վայրը չի նշված:

Տե՛ս № 205 ա ծանոթագրությունը:

205գ. Խորագիր չունի: Նախորդի տարբերակն է՝ սուրբ անձանց անունների փոփոխությամբ: Այս տարբերակաշարում, մասնավորապես այս և հաջորդ (№ 205դ) տարբերակում սուրբ անձինք և նրանց պատկանող սրբազան առարկաները (փիլոն, խաչ, գավազան, Ավետարան) հանդես են գալիս իբրև տան պահապան ոգիներ և չարախափան միջոցներ:

Աթոռ Սողոմոնի, որի վրա նստած է Քրիստոսը, երկու իմաստով է հասկացվում. նախ՝ իբրև Դավթի որդի Սողոմոնի գահ (որը իր գեղեցկությամբ ու շքեղությամբ համարվում էր հին աշխարհի հրաշալիքներից մեկը), որ ժառանգել է Դավթի ցեղից սերված Հիսուս Քրիստոսը, իբրև վերին (երկնային) Երուսաղեմի թագավոր, և ապա Երուսաղեմի Սողոմոնի կառուցած տաճարում դրված գահույքը (հմմտ. հաջորդ դ տարբերակում տաճար Սողոմոնի հասկացության հետ), իբրև առաջին դատավորի և քահանայապետի աթոռ:

Պողոսն ու **Պետրոսը** Քրիստոսի երկու անվանի առաքյալներն են (տե՛ս № 1(159)ա ծանոթագրությունը):

Սահակը և **Հակոբը** հայ եկեղեցու երկու հեղինակավոր սրբերից են: Առաջինը Գրիգոր Լուսավորչի թոռ Սահակ Պարթև կաթողիկոսն է (4-5-րդ դդ.), երկրորդը՝ ասորի Հակոբ Մծբնեցի հայրապետը, ասորի և հայ եկեղեցիների նշանավոր գործիչ,

Մծբինի եպիսկոպոս, հայ եկեղեցու կողմից սիրված և սրբացված:

205դ. Խորագիր չունի:

Առաջին երկտողում շեշտվում է տան սրբությունը (տերունի՝ աստվածային բնույթը) և համեմատվում Երուսաղեմի հռչակավոր Սողոմոնի տաճարի հետ:

Տե՛ս № 205գ ծանոթագրությունը:

206. Խորագրված է «Կապք գողի»:

Աղոթքում խոսքը թեպետ գնում է երեք լուսավոր ու ճերմակազգեստ պահապան ոգիների մասին, սակայն հիշատակված է միայն Հիսուս Քրիստոսի անունը, այն էլ երկատված, երկու անձի առումով, որ հաճախադեպ է ժողովրդական աղոթքներում:

207. Խորագրված են «Աղոթք գողկապի»:

ՀԱԲԱ բանահավաքն է Ն.Նիկողոսյան, գրառված է 1940թ.:

ԷԱԺԱ բանահավաք Աղ. Մխիթարյանցի ծանուցմամբ՝ «Այս աղոթքն ասելիս, թրջած ղազիլը (մազե դերձան) երեք տեղ հանգույց անելով կապ կը գցեն ու կը դնեն քարի տակ, մինչև կորուստը գտնելը»:

Հորինված է միջնադարյան բանաստեղծությանը բնորոշ 8 վանկանի քառատակտ տողերով և ունի գրական ստեղծագործության երանգ:

Կիպրիանոս - Ռասցիոս Ցեցիլիոս, ծնվել է 200թ. հետո Կարթագենում և գլխատվել է 258 թ. Վալերիանոս կայսրի ժամանակ: Ծագումով սերել է հեթանոսական հարուստ գերդաստանից, սկզբում եղել է հռետոր, 246 թ. քրիստոնյա է մկրտվել և 248 թ. դարձել Կարթագենի եպիսկոպոս: Թե՛ իր ժամանակ և թե՛ մանավանդ միջնադարում համարվել է եկեղեցական խոշորագույն հեղինակություն: Թողել է մի քանի աշխատություններ և ութ տասնյակի չափ թղթեր՝ նվիրված ժամանակի եկեղեցական խնդիրներին: Նրա մարդաշահ գործունեության մեջ առանձնակի կարևորություն է ներկայացնում 252-254 թթ. մոլեգնած ժանտախտի ժամանակ հիվանդանոցի հիմնադրումն ու հիվանդների օգտին նյութական միջոցների հավաքումը, որով նա հռչակվում է իբրև սուրբ բուժարար: Հայ միջնադարում առանձնակի հռչակ է վայելել նրա *«Գիրք աղօթից, որ կոչի Կիպրիանոս, վասն ամենայն ազգ պատահարաց, որք գան ի վերայ մարդոյ»* ժողովածուն (Կ.Պոլիս, 1875), որը լայնորեն կիրառվել է միջնադարյան հմայական բուժարվեստում, իբրև հեղինակավոր բժշկական գրքերից մեկը:

208. Խորագրված է «Չար աչքի աղոթք» և զետեղված «Նախապաշարումներ և գուշակություններ» բաժնում:

Ըստ էության չար աչքի աղոթք չէ, այլ առհասարակ չարքերի ու չար էակների (այդ թվում նաև գայլի) բերանը կապելու հմայական բանածև, որ վկայված է բնագրում, զուգակցված գայլկապի աղոթքներին բնորոշ կապքի առարկաներին ու սրբություններին (ութ մատ, երկու բութ, Մարիամ Աստվածածնի քաղցր կաթ):

Առաջին քառատողում հավանաբար նկատի է առնվել չար էակի (դև) կերպարանափոխումը գառի և շեշտվել վերջինիս բնական ոչխարային հատկանիշները (կթվել, քաղցր կաթ տալ), որոնց անմիջապես հաջորդում է կապքի հմայական բանադրանքը:

209. Խորագրված է «Աղոթք»:

Տիրամոր ծեռքի երեք բևեռները Քրիստոսի խաչելության գամերն են, որոնք ըմբռնվել են չարը խոցող և չարահալած սրբազան միջոցներ:

Տե՛ս № 211ա ծանոթագրությունը:

210ա. Խորագիր չունի:

Նախորդ աղոթքի Տիրամորն այստեղ փոխարինել է ս.Հեղինեն՝ հանդերձավորված Քրիստոսի ոսկեհյուս շուրջառով, ձեռին երկու բևեռ, որով դարձյալ նկատի են առնվել Քրիստոսի խաչելության գամերը:

Տե՛ս № 209, 211ա ծանոթագրությունները:

210բ. Խորագրված է «Գիր եւ աղօթք աւազակաց կապելու»:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 209 և 211ա ծանոթագրությունները:

211ա. ԱՄ խորագիր չունի, բանահավաքը՝ Գ. վ. Սրվանձտյանցն է: ՍՀՀ, ՀԺՀ VI վերնագրված են «Աղոթք», ԳԱԹ Ibբ, № 1 վերնագրված է «Աղոթք պառավներուն», բանահավաքը Լևոն Մաքսուդյանն է, որը սույն աղոթքը պարունակող բանահյուսական նյութերի իր գրառումների տետրը 1881-ին ուղարկել է Գ.Սրվանձտյանցին:

ԳԱԹ, IVբ № 18 խորագիր չունի, գրառված է վանեցի աշուղ Պուտուր Կիրակոսյանի երգած երգերի տետրում՝ 1876 տարեթվով և պահվում է Գ.Սրվանձտյանցի ֆոնդում:

ՍՀՀ տարբերակը, որ նույնական է ԱՄ հրատարակածին, հարակցված է 10 տողից բաղկացած հետևյալ անկախ աղոթքի հետ:

Իմ տերն եկավ ամբախաղաց,
Աշխարհ սարսեց չորեքդիմաց.
Գաբրելական փողի ծենից
Մեղավորի հոգին դողաց:
Դրախտենական ծառ ծաղկավ,
Անմահութքնի հոտ բուրավ:
Մարիամ չոքեր դիլաք կանե.
Աստված հըմեն հայ քրիստոնեին
Մեղքը թողնե, արժան անե
Կաքն աղբյուրին, լույս տաճարին:

(Տարբերակը տե՛ս № 323 ա-գ:)

Այս հարակցված աղոթքում ներկայացված են աշխարհի վախճանին Քրիստոսի երկրորդ գալստյան, Գաբրիել հրեշտակի փողի ծայնով ավետվող վերջին դատաստանի, դրախտական անմահության ծառի ծաղկման քրիստոնեական պատկերացումները, միացրած Մարիամ Աստվածածնի հայ քրիստոնյա ազգի հոգևոր փրկությանն ուղղված աղերսանքին և վերջինիս անմահության կաքնաղբյուրին և երկնային լուսե տաճարին արժանացնելու բաղձանքն արտահայտող ժողովրդական ըմբռնումներին:

Այս երկու տարբեր աղոթքների հարակցմանը հիմք է ծառայել երկուստեք հան-

դես եկող Տիրամոր (ս.Կույս Մարիամ), իբրև մարդկանց ամենայն չարից փրկողի, պահպանողի խորհրդանշական կերպարը, որն առաջին աղոթքում հանդես է գալիս խաչված որդու (Քրիստոսի) տանջանքները խորհրդանշող մետաղե երեք բևեռները (գամեր) ուսին դրած վիճակում (որդու տառապանքների ծանրությունից կքված մայր): Քրիստոսին խաչին գամող բևեռները, իրենց մետաղե և խոցող հատկանիշների պատճառով, աղոթքում (և առհասարակ ժողովրդական ավանդության մեջ) վերածվել են սրբությունների և չարին խոցող ու վնասազերծող հզոր զենքերի:

211բ. Խորագրված է «Նիաթի աղոթք»:

Բովանդակությամբ ու բնույթով, սակայն, սոսկ չար աչքի աղոթք չէ, այլ ամեն տեսակ չարի, չար գազանի, գիշերվա չարքերի, նաև չար աչքի ու չար լեզվի դեմ ուղղված հմայական կապքի բանաձև է:

Տե՛ս նախորդ (211ա) ծանոթագրությունը:

211գ. Խորագիր չունի:

Եթե նախորդ (211բ) տարբերակում չարի պատիժն իրագործվում էր եզրափակիչ քառատողում արտահայտված հմայական բանադրանքով, նրա մարմնի տարբեր մասերը (թև, աչք, լեզու, ոտք) հաշմելու ցանկությամբ, ապա սույն տարբերակում պիղծ թշնամին պատժվում է աստվածային արարքով, հմայական ցանկությունը փոխարինված է կատարված, իրականացված գործողությամբ: Աստվածային այդ արարքով պիղծ թշնամու ոտքերը բևեռվում են գետնին, գլուխը պատվաստվում, կապվում է երկնքին, սիրտը դադարեցվում է գործելուց, իսկ աչքը՝ կուրացվում, որով դրսևորվել է չարի տիեզերական պատժի առասպելաբանական մի ամբողջական պատկերացում: Հմայական ցանկությունն արտահայտված է վերջին երկտողում, *«Կալած մնա, կապած մնա / Մինչ ի գալուստ Քրիստոսին»* ավանդական բանաձևով: Աղոթքի այս զույգ բաղադրիչների (աստվածային արարքի և հմայական ցանկության) միասնության մեջ դրսևորվել է չարին պատժելու, վնասազերծելու տարածական (երկնքի և երկրի միջև կապելը) և ժամանակային (մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը, այսինքն՝ աշխարհի վախճանը կապած-կալած մնալը) հայեցակետը,-ծիսա-առասպելաբանական մի հնագույն հայացք, որով ներկայում և գալիքում չարի սպառնալիքից ապահովվում է աշխարհի ու մարդկության անվտանգությունը:

212. Խորագրված է «Անօրեն մարդկանցից ազատվելու աղոթք»:

Տարբեր աղոթքների հատվածներից հարակցված ստեղծագործություն է, որոշ չափով իմաստային վերամշակման ենթարկված: Աղոթքի բուն իմաստն արտահայտված է վերջին երկտողում՝ պիղծ և անօրեն թշնամուն հալածելու աստվածային կարգադրությամբ:

Տե՛ս նաև № 211ա ծանոթագրությունը:

2-րդ տողը՝ «Փողե կոճակ Հարութենին», ըստ երևույթին աղավաղումն է «Փող ու կոչնակ Հարութենին» բառերի, որով նկատի է առնվել Քրիստոսի հարությունն ավետող փող ու կոչնակ (զանգ) երաժշտական գործիքները: Հմմտ. № 215 աղոթքի «կոճնակ Հարութենին» բառակապակցության հետ, որ բերված է իբրև կրոնական սրբություն, այսինքն՝ «Ս. Հարություն» անունը կրող եկեղեցու կոչնակ:

Հոռոմսիմա, որ հաճախ է հանդես գալիս Քրիստոսի ծննդյան ժողովրդական եր-

գերում, սրբուհի Հռիփսիմեի անունն է, որի նահատակմամբ, ըստ քրիստոնեական հայացքի, նա հարսնանում է, դառնում Քրիստոսի երկնային հարսնացուն:

213. Խորագիր չունեն:

ՀԱԲԱ բանահավաքն է Գ. Թարվերդյանը, բանասացը՝ Մեյրեմգուլիյան Սրբուհի, 50 տարեկան, գրառված է Վաղարշապատում, 1936թ.:

Բնույթով չարից պահպանվելու հմայական աղոթք է, երկու տարբեր աղոթքների հարակցումով: Առաջին քառյակը Քրիստոսի խաչելության երեք բևեռներով չարին խոցելու և վնասազերծելու մոտիվն է, որ աղոթքներում (հմմտ. № 211ա) սովորաբար հանդես է գալիս իբրև հմայական վերջաբան: Սույն աղոթքում այն դարձել է սկզբնամաս և կցվել «Լուսիկ (կամ՝ Մարիամ) քու՞ն ես, թե զարթուն» սկզբնատողով անկախ աղոթքին, որն ունի իր ուրույն պահպանական վերջաբանը:

Վերջին երկտողը, իբրև բնագրին ձուլված ծանուցում, յուրահատուկ է քրիստոնեական ժողովրդական աղոթքներին (հմմտ. Երեկոյան աղոթաշարը):

214. ՀԱԲԱ, FBI խորագրված է «Աղոթք», բանահավաքն է Հարություն դպիր Տեր Հովհաննիսյան Սարոյանց, գրառված է 1881թ.:

ՀԱԲԱ, FFIII, Փորքշեյան 1971 խորագիր չունեն, երկուսի գրառողը Խաչ. Փորքշեյանն է, գրառված է 1961 թ.:

Մի քանի մոտիվներով մասամբ մերձենում է № 211գ աղոթքին: Կույս Մարիամի կողմից չար թշնամուն կապելու, սպանելու, սիրտը փորում փորձանքի ենթարկելու և կուրացնելու գործողություններից զատ, աղոթքն ավարտվում է նաև թշնամուն փայտացնելու և քարացնելու հմայական բանադրանքի բանաձևով, որով հատուկ շեշտվում է աղոթքի պահպանական նպատակը:

Տե՛ս № 211գ ծանոթագրությունը:

215. Խորագիր չունի:

Բնույթով երդմնեցուցական աղոթք է և հավանաբար սերում է միջնադարյան համաբնույթ հմայական աղոթքներից:

Անիծածն այստեղ չար ոգին է, որին հրեղեն սրով սպառնում են լույսից իջած սուրբ եղբայրները: Չար ոգին ստիպված երդվում է հմայական ավանդական սրբություններով՝ Սողոմոնի մատանիով, ս. Հարության (եկեղեցու) կոչնակով և Մովսեսի հրաշագործ գավազանով՝ աստծո արարածներին այլևս չմերձենալու խոստմամբ:

Ալալոս և **սուրբ Թալալոս** տե՛ս №181 գ ծանոթագրությունը:

216. Խորագրված է «Դիարբեքիրցի կիներուն աղոթքը»:

Աղոթքի վիպական մասում աստվածաշնչյան սուրբ անձանց կողմից (նախամայր Եվա, նախահայր Ադամ, հրեական ցեղի նախնի հայր Աբրահամ, Տիրամայր Մարիամ, Քրիստոս) կատարված առտնին աշխատանքային գործողությունների (կաթ կթել, մակարդել, օրհնել-խաչակնքել, խմոր շաղել, հաց թխել, կերակրել) միջոցով խորհրդանշվել է ապրուստի միջոցների նախաարարումը, հենց սկզբից դրանց հափշտակումն ու վայելումը չարի կողմից *(«Չար կերավ, չար տարավ»)*, չարի ու բարու մշտական առկայությունը մարդկային կյանքում *(«Չարի մեկ լե տեղե մնաց,) Հայր Աբրահամա պարագան մեջե մնաց»)* և չարի դեմ մղվող կրոնական պայքարի

անհրաժեշտությունը՝ հանուն մարդու կյանքի և հոգու անվտանգության ապահովման *(«Խաչակնքեմ՝ չարս հալածեմ, (Սուրբ խաչ, պայծառ խաչ,) Դուն իմ մտքիս աչքե բաց»)*:

217. Խորագիր չունի:

Քաղված է Թովիկի «Արշալույսից առաջ» ձեռագիր վեպից,1960-ական թթ. սկզբներին:

Աղոթքում դիմում է կատարվում քրիստոնեական և ժողովրդական կրոնի երեք սրբությունների (7 գլուխ ավետարան, հացի առատությունն ապահովող հրեշտակ, Տիրամայր) չարակամ մարդկանց կապելու, նրանց չար դիտավորությունը խափանելու և գալիք փորձանքներից ապահովելու ակնկալիքով: Վերջում վկայակոչված է ս.Նշանն իբրև չարխափան, որ կարելի է և՛ «խաչ» իմաստով հասկանալ, և՛ համանուն եկեղեցու:

218. Խորագրված է «Աղոթք»:

Էգեցի, էգմանեցի ըստ երևույթին գրաբար **եկեսցի** բառի բարբառային աղավաղված ձևերն են, հնչյունային խաղարկման ենթարկված: «Եկեսցե»-ն նաև եկեղեցական ծիսական աղոթքի անվանում է և այդ իմաստով էլ կիրառվել է սույն աղոթքում, որ երևում է շարունակության մեջ (ջուխտակ մոմեր վառել, Երուսաղեմ ուխտ գնալ ևն.): Ուխտագնացության ծեսի նկարագրությունն ու մանավանդ ս.ավազանից վերցրած մի բուռ ջուրն ու ս.սեղանից առած մետաքսե թելը, իբրև սրբազան մասունքներ, հոգեբանական զուգահեռականությամբ դարձել են չարը կալող ու կապող, ներկայում ու գալիքում աղոթողի ու նրա ժառանգների անվտանգությունն ապահովող *(«Օխտը պորտես հեռու մնաս»)* հմայական զորեղ միջոցներ:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

1(219). Խորագրված է «Գիր վասն լեզուականի»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում կենդանական սիմվոլիկայով և կենցաղային կենդանի պատկերների միջոցով ներկայացված է չարակամ չարախոսը իր երկու հակադիր վիճակներով՝ նախքան հմայվելը, երբ նա հանդես է գալիս գայլի կերպարանքով (չարի խորհրդանիշ) և հմայագործի հմայելուց հետո, երբ նա վերափոխվում է գառի, կովի, ոչխարի, եզի, գոմեշի, էշի (հեզության, հլության, հնազանդության խորհրդանիշներ):

Աղոթքում հմայագործը հանդես է գալիս խիստ ակտիվ դերով, իբրև չարկամին կապող, խոնարհեցնող, իր կամքին ուզած ձևով հպատակեցնող:

Աստվածային զորությանն ապավինման ցանկությունն արտահայտված է երկրորդաբար, միջանկյալ, 14-20 տողերում, ուր սև ու սպիտակ շների կռվի և սև օձի կողմից նրանց բաժանման խորհրդանշական պատկերը դարձել է զուգահեռական համեմատություն՝ ս.Երրորդության շնորհիվ չարակամ չարախոսի սիրտը երկուստեք կիսելու և աչքը դեմքից բաժանելու հմայագործի բաղձանքն իրագործելու նպատակով: Հմայագործի նույն ակտիվ գործողությունն ընդգծված է նաև եզրափակիչ քառատողում, ուր աստված հանդես է գալիս դարձյալ պասիվ դիտողի դերում («Այլ կապին դէմ առաջին Աստուծոյ»):

2(219). Խորագիր չունի:

Տողատումը կազմողինն է:

Սկզբնատողերը ոճաբանորեն նման են միջնադարյան հայրենների սկսվածքներին (հմմտ. *«Ես աս գիշեր դուրս ելայ», «Այս գիշեր ի դուրս ելայ», «Գիշերս ես ի դուրս ելայ, / Թե եար մի գտնում սիրելու, / Գրօղն այլ ի դէմս ելաւ» ևն.):* Միջնամասում (11-21 տողեր) ոճաբանական նմանություն ունի «Սասնա ծռերում» Խանդութի գովքը լսելուց հետո Դավթի երգային խոստովանության հետ (հմմտ. *«Քանց կառն անարատ ի, գելու նման ես կատղա», «Ես քընց գառ անմեղ ենք, դու ընձի գիլուց չար դառցուցիք», «Իմ սիրտն քանց ավագ ծովեր անարատ ա, քանց գարնան գետեր պղտորիք»* ևն. [**Սասնա Ծռեր** Ա, 284, Գ, 328, Բ, II, 286]):

Աղոթքի առաջին մասում (3-11 տողեր) ներկայացված է չարակամ-չարալեզվի կեղծ, շողոքորթ խոստովանությունը իր բարի և արդար լինելու մասին: Երկրորդ մասում (12-21 տողեր) հանդես է գալիս հմայագործը, որը տարբեր չար ու բարի կենդանիների համեմատության միջոցով չարակամ-չարախոսին վնասազերծում, հնազանդեցնում, դարձնում է իր կամքին հլու և անվտանգ: Վերջին քառյակում հմայողն ուղղակի խփում, պատժում է չարախոսին, կուրացնում նրան, որպեսզի նա այլևս չկարողանա տեսնել մարդկային արարածներին և չկարողանա նրանց վնասել:

Այս աղոթքում իսպառ բացակայում է աստվածային զորության ապավինումը, և չարակամ չարախոսին հմայելու և պատժելու ամբողջ ծանրությունն իր վրա է վերցրել աղոթող հմայագործը:

Տե՛ս № 1 (219) ծանոթագրությունը:

2(220)բ Խորագրված է «Գիր քաղցրութեան»:

Մասնակի տողատումը և բացահայտ վրիպակների ուղղումը կազմողինն է:

Լինելով չարկամի դեմ ուղղված նախորդ աղոթքի տարբերակը՝ այն, դատելով խորագրից և աղոթքի միջնամասի ծանուցումից, ուղղված է իշխանավորների չար բնավորությունը մեղմացնելու, քաղցրացնելու նպատակին: Հմայական այս նոր գործառույթի պատճառով էլ որոշ չափով մեղմացվել է սույն տարբերակի եզրափակիչ բանադրական մասը, ուր հմայական կարգադրությամբ կանխարգելվում է իշխանավորների մեծամտությունն ու գոռոզությունը:

Տե՛ս № 1(219), 2(220)ա ծանոթագրությունները:

Գ. ՏԱՐԲԵՐ ՉԱՐԻՔՆԵՐԻՑ ՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՎԵԼՈՒ
(№№ 3(221) - 10(228))

3(221)ա. Խորագրի փոխարեն սկզբից տրված է հետևյալ ծանուցումը. «Զայս անուամբ սրբոց հրեշտակացն, որոյ վերայ կենայ, ի մէջ հարամու, ի մէջ կռվոյ ոչ երևի և ոչ վնասի»:

Այսինքն՝ այս հրեշտակների անուններով գրված աղոթքը (հմայագիրը, թուղթ ու գիրը) ում մոտ լինի, նա թշնամիների և կռվի մեջ կմնա աներևույթ և անվնաս:

Այս անստույգ անուններով չորս հրեշտակներն, ըստ աղոթքի, սար ու ծորը հսկող ոգիներ են, որոնց դիմում է հմայողը՝ աղոթվող անձին գողից, ավազակից և նրանց գենքերից պահպանելու նպատակով:

Տողատումը կազմողինն է:

3(221)բ. Խորագրված է «Այլ գիր չար նիաթի և չար լեզուի և օձի»:

Աղոթքն սկսվում է արաբերեն և թուրքերեն հատվածով, որը դուրս է թողնվել բնագրի հայերեն շարունակությունից, վերջինիս ամբողջականությունը չխախտելու նպատակով:

Աղոթքի խորագիրը չի բռնում իր բուն բովանդակությանը, որն ուղղված է ամեն տեսակ շարիքներից պահպանելու նպատակին:

Տողատումը կազմողինն է:

3(221)գ. Հմայիլ№ 34 խորագրված է «Գիր վասն պատերազմի» և սկզբից ունի հետևյալ ծանուցումը. «Այս անուանք ում վերայ լինի, հրեշտակք Աստուծոյ պահեն զնայ և փրկեն ամենայն փորձանաց»: Չեռ. № 6678. խորագրված է «Գիր պահպանութեան»:

Տողատումը կազմողինն է:

Այս և նախորդ աղոթքում նշված հրեշտակների անունները, փոքր-ինչ աղավաղված, գալիս են եբրայական (հիմնականում՝ աստվածաշնչյան) ավանդությունից:

Լեկեհոնը, 1. քրիստոնեական ավանդության մեջ **Լէգէովն,** չար ոգի է կամ չար ոգիների խումբ [տե՛ս **Մարկոս Ե,** 9-10]: Անունը հավանաբար ծագում է լատ. **լեգեոն** «զորախումբ, զորք, զորքի ստորաբաժանում» բառից: 2. Հայ ավանդության մեջ հսկայամարմին ծուկ, որը պտտվում է օվկիանոսի մեջ գտնվող և տիեզերքը խորհրդանշող վիթխարի լեռան շուրջը, նույնական համաշխարհային օվկիանոսում երկրի շուրջը օղակող Լևիաթան ձկանը (վերջինիս անունը սերում է աստվածաշնչյան համանուն ջրային հրեշից): Հայ ավանդության մեջ Լեկեոնը նաև աստծո դեմ ապստամբած հրեշտակներից մեկն է, որն իջնում է դժոխք և դառնում դժոխքի տիրակալ:

Բելիար, եբր. **Բելիալ, Վելիալ,** հայ ժող. լեզվում երբեմն՝ **Բեռիալ,** հուդայական և քրիստոնեական առասպելաբանության մեջ դիվային էակ, աստծո դեմ առաջին ապստամբներից, նույնացված **Սադայելին** կամ սատանայի բանսարկուին, խավարի զավակ, Քրիստոսի գործին հակառակորդ: Հայ ավանդության մեջ Բելիարը ևս աստծո դեմ ապստամբած հրեշտակներից մեկն է:

Բեհեղզաբուղ (Բեղեզաբօք), Բեէղզեբուղ անվան աղավաղված ձևերից, քրիստոնեական պատկերացումներում **Բեէղզեբուղը** (հավանաբար հանգում է փղշտացիների **Բաալ Զեբուբ**՝ ճանճերի տիրակալի դիցանվանը) դիվային էակ է, ըստ Մատթեոսի ավետարանի՝ դևերի իշխան [ԺԲ, 24] [տե՛ս նաև **Ղուկաս, ԺԱ,** 15-19]: Հայ ավանդության մեջ նա (Բեհեզդեբուղ անվանածևով) աստծո դեմ ապստամբած երրորդ հրեշտակապետն է, որն, իբրև չար ոգիների տիրակալ, իշխում է երկրի վրա:

Այս տարբերակաշարի պահպանական աղոթքներին բնորոշ է հետևյալ կառուցվածքը. ա) դիմում սուրբ անձանց (անվանաշարով), բ) վտանգների թվարկում՝ սկսած նյութական-առարկայական փորձանքներից, բնական աղետներից, վերջացրած բարոյական, հավատալիքային չարիքներով ու չար ոգիներով, գ) աղոթվող անձի անվտանգության ապահովման աղերսանք, որ դրվում է թե՛ վտանգների թվարկումից առաջ և թե՛ վերջում:

Ուշագրավ է սույն աղոթքի *«Գիր վասն պատերազմի»* խորագիրը, որ վկայում է,

թե հնում կռվող զինվորների անվտանգությունն ապահովելու համար հատուկ հմայագիր է արվել և իբրև հուռութք պատերազմի ժամանակ այն կրել են իրենց վրա: Աղոթքի ռազմի բնույթն են վկայում նաև նրանում զենքերի տարբեր տեսակների թվարկումը և դրանցից անխոցելի մնալու ցանկությունը:

4(222). Խորագիր չունի: Դրված է «Տլիսմ և աղաւթք չար աչից» աղոթաշարի ընդհանուր վերնագրի տակ, իբրև 3-րդ միավոր:

Աղոթքն ուղղված է աստծոն կամ Քրիստոսին:

Աղոթքում չարիք-պատահարները խմբավորված են ըստ տեսակների և անջատված են միմյանցից միջակետերով: Սկզբից թվարկվում են գերբնական չարիքներն ու դրանք հարուցող չար ոգիները (2-5 տողեր), որոնց հաջորդում են բնական պատահարներն ու փորձանքները, դրանք հարուցող բնության առարկաներով և գիշատիչ կենդանիներով (6-11 տողեր): Սրանց հաջորդում են մարդկային-հասարակական չարիքներն (12-14 տողեր) ու հիվանդությունները (15-24 տողեր) և ակնարկված են ավազներից ու բռնավորներից հարուցվող սոցիալական պատուհասները, որոնք առավել մանրամասնորեն դրսևորված են աղոթքների հաջորդ խմբերում (տե՛ս № 7(225), 8(226)):

Փաստորեն որոշակի համակարգմամբ ի մի են բերված վտանգների ու չարիքների այն հիմնական ոլորտները (գերբնական, բնական, մարդկային-հասարակական), որոնք ամենուրեք սպառնում են մարդ արարածին և դրանցից զերծ մնալու համար հորինվել են պահպանության բոլոր կարգի հմայական աղոթքներն ու արարողությունները:

5(223). Խորագրված է «Գիր վասն լեզվայկապի, որ կապին ամենայն չար լեզուքն յարջևն ծառային աստուծոյ Յարութենին»:

Տողատումը կազմողինն է:

Մարմնի մասերի չար ներգործության հմայական հավատալիքներում չար աչքից հետո երկրորդ տեղն է բռնում չար լեզուն (իմա՝ չար խոսքը, չարախոսությունը): Այն կապված է առհասարակ խոսքի հմայական զորության հնագույն հավատալիքի հետ: Ըստ այդմ, լեզուն իր չար ազդեցությամբ, համարվել ու համարվում է մարդուն սպառնացող մեծագույն վտանգներից մեկը, որը կանխելու, վնասազերծելու համար հորինվել են համապատասխան հմայական բանածևեր:

Միջնադարյան գրավոր աղբյուրներում հաճախ միևնույն աղոթքն ուղղված է և՛ չար լեզվի, և՛ չար աչքի դեմ, որ վկայում է այդ զույգ չար ըմբռնումների համազորությունը:

6(224). Խորագրված է «Գիր վասն լեզւայկապի»:

Այստեղ, նախորդ աղոթքների համեմատ, ոճաբանական փոփոխություն է կատարվել: Հրեշտակներին ու հրեշտակապետներին անվանապես ուղղված դիմումին ու խնդրանքին փոխարինել է հրեշտակների երկնքից իջնելու, շղթաներ բերելու և դրանցով 72 ազգերի (ազգերի քանակի ավանդական-աստվածաշնչյան թիվ) սոցիալական տարբեր խմբերի չարախոսներին շղթայելու, խուլ ու համր դարձնելու նկարագրությունը:

7(225). Խորագրված է «Գիր և տլըսմն վասն քաղցրութեան և լեզուականի, որ կապին ամենայն միլաթ ի դիմաց [անուն]»:

Տողատումը կազմողինն է:

Թե՛ խորագիրը, թե՛ աղոթքի կառուցվածքն ու բովանդակությունը վկայում են, որ այն ուղղված է երկու նպատակի. բոլոր ազգերի սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների աղոթվող անձի նկատմամբ բարեհաճության հարուցմանը, արտահայտված գովաբանական մակդիրներով, միաժամանակ այդ նույն ազգերի չարկամ-չարախոսներին ուղղված անեծքների ու հմայական կապքի բանադրանքներով:

Աղոթքի սկզբի թուրքերեն քառատողը՝ ոսկե գավաթի, ոսկե աղբյուրի, վերջինիս ոսկեջրով ձեռքերն ու դեմքը օծելու և լվանալու մոտիվներով հմայական այլաբանական նախաբան է՝ աղոթվող անձին հարստությամբ, առատաձեռնությամբ ու անձեռնմխելիությամբ օժտելու ցանկության, որի իրականացմանն է ուղղված ամբողջ աղոթքը (նյութական և բարոյական արժեքների ակնկալում, չարի և չարիքի կանխում):

8(226). Խորագրված է «Գիր վասն չար լեզուի և չար աչից, որ կապեն դիմաց ծառային աստուծոյ, որոյ վերայ լինի գիրս Մարքարիտի որդի Յարութին»:

Տողատումը կազմողինն է:

Կառուցվածքով բաղկացած է վեց մասերից:

Առաջինը վիպական սկզբնամասն է, Մովսեսի կողմից հրեաներին Կարմիր ծովն անցկացնելու և փարավոնի հետապնդող զորքը խորասուզելու աստվածաշնչյան պատմությամբ, որը դարձել է համեմատության եզր աղոթքի հաջորդ հմայական կապքերը նկարագրող մասերի համար:

Երկրորդ մասում (հիմնականում հակադիր զույգերով) ներկայացված են չար լեզու կրողների ազգային ու սոցիալական հնարավոր խմբերը, նրանց լեզուները կալելու և կապելու հմայական ցանկությամբ: Երրորդ մասում նկարագրված են չարիքների տեսակները և դրանց հմայական կապքի եղանակները: Չորրորդ մասում տրված են հմայական կապանքի առարկաներն ու տեսակները: Հինգերորդում թվարկված են աղոթվող անձի տան և տնտեսական ունեցվածքի տեսականին, որոնք ենթակա են չար ներգործության և աղոթքով ապահովվում է դրանց պահպանությունն ու անվտանգությունը: Եվ, վերջապես, վեցերորդ եզրափակիչ մասում, մի քանի ավանդական բացասական ճշմարտությունների (ափի մեջ մազ չբուսնելու, ծովը՝ խուփ, երկինքը սյուն չունենալու և այլն) թվարկումով և դրանց համեմատությամբ ամրակայվում է տվյալ հմայական կապքի արձակման և հմայագրի լուծարման անհնարինությունը:

Անկախ աղոթքի գրավոր տեսքից ու բարդ կառուցվածքից, այն, առաջին մասից բացի, ամբողջապես ներծծված է ժողովրդական բառ ու բանով և ոճական դարձվածներով: Ոճաբանական կառուցվածքով այն մասամբ մերձենում է տիեզերական կապքի սույն ծանոթագրությունների սկզբում դրված առաջին աղոթքին, իսկ մոտիվներով հարաբերվում է տնօրհնեքի № 442 աղոթքին: «Կայր Մեծն Մովսէս յեզր Կարմիր ծովուն» սկզբնատողով և նույն վիպական սկզբնամասով մի քանի աղոթքներ հանդիպում են նաև տարբեր ձեռագրերում: Շարունակության մեջ, սակայն, մի քանի ընդհանուր մոտիվներով հանդերձ, դրանք շատ են հեռացել սույն աղոթքից և բանահյուսական առանձին հետաքրքրություն չեն ներկայացնում (հմմտ. «Գիր չար լեզ-

ուաց կապի», Մատենադարան, ձեռ. №№ 6678, 36ա-37, «Աղաւթք վասն չար աչից և չար լեզուի», Գյումրիի № 3 ձեռագիր հմայիլ և այլուրեք):

9(227). Խորագրված է «Գիր լեզուականի և նազարի»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքի առաջին 9 տողերին բնագրում հաջորդում էր հայատառ արաբերենով հմայական մի բանաձև, որը չի ներառվել սույն տեքստում և փոխարեն դրվել են կախման կետեր:

Ուղղագրությունը թողնվում է անփոփոխ:

Աղոթքի առաջին քառատողում հիշատակված է Հին կտակարանի նշանավոր անձ, Մովսես մարգարեի հաջորդ և իսրայելացիների աստվածընտիր առաջնորդ Հեսու Նավեայի հմայական հանրահայտ արարքը: Երբ Հեսուն պաշարում է Գաբավոն մեծ քաղաքը և սկսում հարձակումը, նա հրամայում է արեգակին ու լուսնին՝ կանգնած մնալ երկնակամարում Գաբավոնի դիմաց, մինչև կռվի հաղթական ավարտը: *«Եւ կացին արեգակն և լուսին ի կայի իւրեանց, մինչեւ էառ Աստուած զվրէժ ի թշնամեաց նոցա <...> եւ եկաց արեգակն ի մէջ երկնից, եւ ոչ խաղաց ընդ արևմուտս՝ մինչև ցկատարումն աւուր միոյ: Եւ ոչ եղեւ այսպիսի օր ոչ յառաջ եւ ոչ յետոյ»* [**Յեսուի Նաւեայ ժ**, 12-14]:

Հեսուի այս աննախադեպ արարքը սույն, ինչպես նաև այլ աղոթքներում ևս, դարձել է հմայական նախադեպ ու նախօրինակ գալիք հմայությունների համար: Աղոթքի սկզբնամասի այն հավաստումը, թե «Այս այն գիրն է, որ Յեսու որդին զարեգակն կապեաց», վկայում է, որ հմայողը նույն զորությունն է վերագրել իր հմայագրին, որպիսին, իբրև նախօրինակ ու նախադեպ, օժտված է եղել Հեսուի վերոհիշյալ հմայական արարքը: Վերջինս աղոթքում վերածվել է նաև հմայական արարողությունների համեմատության եզրի (ինչպես Հեսուն կապեց, նույնպես թող կապվեն բոլոր չար լեզուներն ու չար աչքերը):

Սույն աղոթքում, ինչպես նաև գայլկապի և կապքի այլ ժողովրդական աղոթքներում հանդես են գալիս նույն ավանդական սրբությունները (Աստվածածնի քաղցր կաթ, ս. Սարգսի, ս. Գևորգի ծիու ծար և այլն), որ վկայում է աղոթքի ժողովրդական տարերքի մասին:

10(228). Խորագրված է մասամբ անընթեռնելի «Գիր վասն չար-արարարգաց» (հավանաբար՝ **արարքների կամ ձեռարկաների**):

Թե՛ խորագիրը, թե՛ բովանդակությունը վկայում են, որ աղոթքն ուղղված է ամենայն չար կապքի ու կախարդության դեմ:

Տողատումը կազմողինն է:

Առաջին հինգ տողերում համեմատության եզր է ծառայել չորս նշանավոր գետերի վրա եղեմ դրախտի կառուցման հինկտակարանյան աստվածային արարչագործությունը, իբրև աստծո կամքի դրսևորման անկասելի արտահայտություն: Այդ անկասելիության հետ է համեմատվել աղոթվող անձին ամենայն չար հմայությունից զերծ պահելու աղոթողի ցանկությունը:

Մի արգելականով (իբրև հմայական խոսքի կանխարգելման ձև) թվարկված չար կախարդությունների շարքում հիշատակված **տեղատուք, հանգուցակապք, ծրարաւորք, խափուսիկք** բառերը կախարդության արվեստի առարկայացված հաս-

կացություններ են: Տեղատուքը հմայագրի կամ հուռութքի տեղադրումն է, տեղակայումը. հանգուցակապը՝ թելի հանգույցով հմայվողին կապել, կախարդելն է. ծրարավորը՝ հուռութքը կամ հմայագիրը ծրարում-փաթաթումն է. խաբուսիկը՝ հուռութք-հմայագիրը այլ առարկաների կերպարանքով ներկայացնելն է: Բոլոր այդ հմայական ձևերն ու առարկաները աղոթքում որակված են որպես սատանայական որոգայթներ ու գործեր:

Աղոթքն իբրև չար հմայության դեմ ուղղված հմայական կապքի բանածև՝ հազվադեպ նմուշ է հայ ավանդության մեջ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ (№№ 229-253)

Այս բաժնում են համախմբված աշխատանքային ու առօրյա սովորութային կենցաղին առնչվող աղոթքները, որոնց նպատակն է ապահովել աշխատավորի, նրա արտադրական գործունեության, ակնկալվող արդյունքների, ինչպես նաև սիրո, ամուսնության և տարբեր այլ նախաձեռնությունների հաջողությունը:

229. Խորագրված է «Մշակի աղոթք»

Գրառված է 1916 թ. Ե. Լալայանի բանահավաքչական խմբարշավի կողմից, գրառող՝ Արտաշես Բարսեղյան:

Անհիշատակ պառավը մի քանի ազգագրական շրջանների բանահյուսական նմուշներում (Թիֆլիս, Ռշտունիք ևն) հանդես է գալիս իբրև այլասիրության, բարյացակամության խորհրդանիշ, որի հիշատակը միշտ օրհնվում է (տե՛ս № 240, 169ա-զ ծանոթագրությունները): Սույն աղոթքում նա հավասար է դասվել գործի սկզբնական վարպետ-փիրիկ, արհեստավոր-փեշաքարիկ, իսրայելացիների նախնի Հայր Աբրահամին, Դավիթ և Հովնան մարգարեներին, Հալաջ Մասուրին, իբրև աշխատանքի հովանավորների:

230. Խորագրված է «Սերմնացանի աղոթք»:

Աղոթքում արտացոլվել է արտը ցանելիս սերմացուից մեկ-մեկ բուռ թռչուններին, կենդանիներին (մկներ ևն.), աղքատ մուրացկաններին և այլոց բաժին հանելու հայ շինականների ավանդական սովորույթը, որն, ըստ երևույթին, զոհաբերության ծիսական արտահայտություն է՝ ցանքսի մնացած արդյունքը ապահովելու ակնկալությամբ: Այդ են վկայում նաև աստծոն ուղղված աղերսանքի բանածևերը, իբրև հիշյալ ակնկալության իրականացման անմիջական ցանկություններ:

231. Խորագրված է «Աղոթք դաշտամկների դեմ»:

Աղոթքին կցված է հետևյալ ծանուցումը. «Մշեցի գյուղացիները դաշտամկներից ու խլուրդներից զերծ պահելու հասունացած արտերը, դիմում են ս.Հակոբա հիշատակին կառուցված մատուռներին և նրանց փեշերից վերցրած մի-մի բուռ օրհնյալ հողը ցանում են արտերի վրա և ի խորոց սրտի մրմնջում վերևի աղոթքը»:

Աղոթքում արտացոլված է ծանուցման մեջ հավաստված շրջակա մեծ ու փոքր սրբերին դիմելու սովորույթը: Աղոթողը խնդրում է սրբերին օգնական ու բարեխոս լինելու «է՞ն կոլի առաջ»: Կոլ հավանաբար թրք. գոլ - «լիճ» բառն է, որով նկատի է առնվել երկինքը (հմմտ. երկնային ծով, ծիրանի ծով հին առասպելական ըմբռնումները), իբրև երկնային աստծո բնակարան կամ հենց՝ աստված (մեր մի քանի բար-

բառներում «երկինք» և «աստված» բառերը նույնական են և առհասարակ երկինքն աստված է ըմբռնվում):

232. Խորագրված է և ծանուցված՝ «Երեկոյան գործատուլի - բանքողի աղոթք (եկեղեցյաց զանգակները ղողանջելիս - կոշընկին)»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում աստված փառաբանվում է սոցիալական որոշակի նկատառումով՝ տվյալ օրվա աշխատանքով ու ապրուստով խեղճ ու կրակ մարդկանց ապահովելու համար: Միաժամանակ խնդրվում է աստծոց՝ նման կերպ (իբրև համեմատություն) ապահովել նաև ամբողջ աշխարհի (էլեմ տունյեյի) այն բոլոր թշվառների ապրուստը, որոնք այդ օրը չեն կարողացել որևէ գործ կամ ապրուստ ճարել (չիեայծան ըսօր սըֆտա մի էնել):

Ըստ ամենայնի սույն աղոթքը քաղաքային բանահյուսության արգասիք է, ասվել է արհեստավորների կողմից երեկոյան, եկեղեցու զանգերը հնչելիս և իր մեջ է խտացրել համքարական խավերի բարքերն ու հոգեբանությունը:

233. Խորագրված է «Հացի խմորի աղոթք»:

Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, բանասաց՝ վանեցի Ա. Գասպարյան, գրառված է 1936 թ.:

Աղոթքի առաջին եռատողում նշված պահապան խաչ հրեշտակի (որ հացի խմորի և թթխմորի պահապանն է) հավատալիքը իր առարկայական դրսևորումն ուներ հայ գեղջկական կենցաղում: Խմորը հունցելուց հետո տանտիկինը խաչ էր դաջում հունցված խմորի վրա, աղոթք մրմնջում և մեզարով խմորը ծածկում:

4-րդ տողի՝ **Հիսուս Քրիստոս յոթ նըկանակ** արտահայտությամբ նկատի է առնվել Քրիստոսի հրաշագործություններից մեկը: Երբ Քրիստոսը գալիս է Գալիլեայի ծովեզերքը և այնտեղ երեք օրվա ընթացքում բուժում բազմաթիվ հիվանդների, վերջիններս կամենում են մեկնել: Քրիստոսը գթալով նրանց՝ չի կամենում քաղցած բաց թողնել, ուստի դիմում է իր աշակերտներին՝ կերակրել նրանց: Վերջիններս տարակուսած պատասխանում են, թե որտեղից այս անապատում այնքան հաց ճարեն, որ կարողանան հագեցնել այդ հսկա բազմության քաղցը: Քրիստոսը հարցնում է, թե քանի՞ նկանակ հաց ունեք: Աշակերտները թե՝ յոթ նկանակ և քիչ էլ ձուկ: Քրիստոսը հրամայում է ամբողջ ժողովրդին բազմել գետնին, վերցնում է յոթ նկանակը, կիսում և աշակերտների ձեռով բաժանում ժողովրդին: Բոլորը կուշտ ուտում են, հագենում և անգամ յոթ զամբյուղ էլ լիքը լցնում հացի պատառներով [**Մատթեոս, ԺԵ,** 29-39]:

Աղոթքում Քրիստոսի այս յոթ նկանակից, իբրև հացի առատության խորհրդանիշից, աղերսվում է իր առատության շնորհը տարածել խմորի և դրանից թխվող հացի վրա, որպեսզի ամբողջ ազգ ու ցեղով, բարեկամներով վայելեն այն, միշտ մնան լիաչք, արդար, չարից անձեռնմխելի և անկախ:

234. Խորագրված է «Խմորի գալուն»: Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավի կողմից, գրառող՝ Արտաշես Բարսեղյան:

Աղոթքի այս քառյակը յուրօրինակ հմայական խոսք է՝ ուղղված հունցած խմորին, վերջինիս շուտ հասունացմանն, դրանից արագ հաց թխելու և պարտքով փոխ առած հացը անհամբեր ու անդադար պարտքատիրոջը վերադարձնելու ակնկալիքով:

Հմմտ. № 236 աղոթքի առաջին երեք տողերի հետ:

235ա. Խորագիր չունի:

Աղոթքին կցված է հետևյալ ծանուցումը. «Երբ հացառը (ռաֆաթեն, բադաթը) խփում են թոնրին, այսինքն առաջին հացը կպցնում են թոնրի կողին, որ թխվի, ասում են» այդ աղոթքը:

Նորաթուխ հացն աղոթքում ոգեղենացված է, շնչավորված և համազոր դիտված հացի հրեշտակներին (ոգիներին), որոնց դիմում է աղոթողն իբրև սուրբ անձանց և նրանցից աղերսում օգնություն և չարը բարին դարձնելու կարողություն:

235բ. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Բենսե (Սահակ Մովսիսյան), գրառված է Լենինականում, 1935 թ.:

Աղոթքին կցված է բանահավաքի հետևյալ ծանուցումը. «Տանտիկինը՝ հացթուխը, երբ բացած խմորը առնում է ձեռը և այն պարզում բադաթի վրա, երկյուղածությամբ ասում է այս աղոթքը և հացը խփում է թոնրի կողը»:

Տե՛ս № 235 ա ծանոթագրությունը:

Այստեղ հացն ու հացի հրեշտակը դիտված են իբրև միջնորդ բարեխոս ոգիներ մարդկանց և աստծո միջև, նույն ակնկալիքով, ինչ նախորդ տարբերակում:

Սրբազան միջնորդի նույն ըմբռնման արդյունք է վերջին հաշվով նաև ծիսական հացի՝ նշխարի (իմա՝ ս. հաղորդության), իբրև զոհաբերված աստծո (Քրիստոսի) մարմնի ճաշակումը հավատացյալների կողմից, աստծուն միանալու, նրա էությանը հաղորդակցվելու ակնկալությամբ:

Այս, ինչպես նաև հաջորդ տարբերակներում ավելացել է հացը որպես արդար եզան վաստակ (աշխատանքի արդյունք) ըմբռնելու մոտիվը, որն արտահայտությունն է եզան կամ ցլի հնավանդ պաշտամունքի: Այդ է վկայում նաև եզան **արդար** մակդիրը: «Վաստակ» բառը հայերենում, բացի «աշխատանքի արդյունք» իմաստից, ունի նաև «զավակ, ժառանգ, զարմ» նշանակությունը: Հետևաբար՝ հացը հին առասպելաբանական մտածողությամբ կարող էր ըմբռնվել ոչ միայն եզան, իբրև լծկանի աշխատանքի (վար, կալսում և.) արդյունք, այլև ցլի (իբրև արգասավորող, բեղմնավորող կենդանական սկզբունքի) զարմ, ժառանգ, զավակ (հմմտ. ամպրոպային աստծո ցլակերպ պատկերացման, անձրևների միջոցով հողը բեղմնավորելու, բուսականությունն ու հացաբույսերը աճեցնելու գործառույթների հետ):

235գ. Խորագիր չունի:

Ունի հետևյալ ծանուցումը. «Հաց թխելու ավարտին գրտնակողը գրտնակը համբուրում, դնում է գլխին, իսկ հացթուխը խաչակնքում է հացառն ու թոնիրը՝ ասելով» սույն աղոթքը:

Այս տարբերակում հացին ու հացի հրեշտակներին ավելացել են նաև պաղ սուփրան (հաց գրտնակելու՝ խմորը բացելու սեղան) և տաք թոնիրը, որոնք համադրվելով նախորդներին՝ դարձել են համազոր սրբություններ, իբրև արտահայտություն հացի սեղանի և թոնրի (օջախի) պաշտամունքի:

Տե՛ս № 235ա, բ ծանոթագրությունները:

235դ. Խորագրված է «Հաց թխելու աղոթք» (հացը դեռ չթխած)»:

Այս տարբերակում ընդգծվել է աստվածային բարեխոսության նպատակը, որն

ունի երկու հայեցակետ. մեկը՝ մարմնավոր (ամենօրյա հացով ապահովում), մյուսը՝ հոգևոր, կրոնաբարոյական (կարիքավորներին հացի բաժնեհանում՝ իբրև հոգու փրկության վարձք):

Տե՛ս № 235ա, բ ծանոթագրությունները:

235ե. Խորագրված է «Հաց թխելու»:

Գրառված է 1973 թ., բանասաց՝ Անդրեասյան Մարիամ Ավետիսի, ծնվ. 1891 թ., Բասենի Իզվերան գյուղում:

235զ. Խորագրված է և ծանուցված՝ «Հաց թխելու աղոթք» (ասվում է թխելու սկզբին):

Այս տարբերակը զարգացել է հացի աստվածային բարեխոսության նոր նպատակներով՝ զորավիգ կանգնել բոլոր պանդուխտներին, անօթևաններին, ընկածներին, նեղվածներին, թշվառ անճարներին, անօգնականներին, նաև կենդանիներին ու թռչուններին, բոլորն էլ օժտված սոցիալական շեշտված իմաստով:

Տե՛ս նաև № 235ա, բ ծանոթագրությունները:

235է. Խորագրված է «Տասնաբանյա»:

Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավի կողմից, բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան:

Հացի բարեխոսության նպատակների մեջ արտահայտված է աղոթողի տասնյակություն (որից էլ «տասնաբանյա» խորագիրը), որ վերաբերում է ապրուստի բնական միջոցների առատության, աշխարհի խաղաղության, բանտարկյալների ազատության, մահվան սակավության և հոգու փրկության գաղափարներին: Բոլորն էլ ժողովրդական ձգտումներին բնորոշ ավանդական մոտիվներ են, դրսևորված հայկական տարբեր աղոթքներում և օրհնաբանական բանաձևերում, այդ թվում նաև «Տէր ողորմեա» հանրահայտ կանոնիկ շարականում, որի ժողովրդական ակունքներն ակնհայտ են:

Սույն աղոթքի մի քանի մոտիվներ, իբրև բարեմաղթության անկախ բանաձև, ասվում է հացթուխի կողմից՝ ի պատասխան թոնրում եփվող հացերից լսվող տժտժոցի.

Խեր, խեր,
Խացիկ հեժնուբեն,
Մահիկ քանգուբեն,
Իմ խորն ու մորն արքայութեն:

[ԱՀ XVII, 120]

Տե՛ս № 235ա, բ ծանոթագրությունները:

235ը. Խորագրված է «Հաց թխելու աղոթք»:

Բանահավաքը, գրառման տարեթիվն ու վայրը չեն նշված: Հավանաբար գրառված է 1950-60-ական թթ.:

Այս տարբերակում հաց թխելու ավանդական աղոթքը, 11-րդ տողից սկսած, ընդլայնվել և հարակցվել է արարիչ աստծուն ուղղված ընդհանուր բնույթի աղերսանքներով:

Հաբիբ Նաջար կամ **Ուստա Նաջար,** հայ բանավոր ավանդության մեջ վիպական անձ, հյուսն - ատաղձագործ, որին բռնակալ թագավորը հանձնարարում է մեկ գիշերվա մեջ պալատ կառուցել, հակառակ դեպքում վիզը կկտրի: Երբ նա հուսահատված գալիս է տուն և կնոջը պատմում թագավորի պայմանի մասին, կինը, տեսնելով ամուսնու ծանր հոգեվիճակը, հանգստացնում է նրան, հորդորում քնել, հանգստանալ և հույսը դնել աստծո վրա, աստված ողորմած է: Առավոտ կանուխ թագավորի մարդիկ ծեծում են Հաբիբ Նաջարի դուռը և կանչում նրան: Հաբիբը համոզված, որ իրեն տանում են մահապատժի, հրաժեշտ է տալիս կնոջը և դուռը բացում: Թագավորի մարդիկ հայտնում են Հաբիբին, թե թագավորը գիշերը մահացել է և նրան շտապ կանչում են պալատ՝ թագավորի համար դագաղ շինելու:

Այստեղից էլ *Հաբիբ Նաջարի աստված* սիմվոլային հասկացությունը, որ հաճախ է վկայակոչվում բանավոր խոսքի մեջ և բարեմաղթություններում, իբրև ամենաանհույս պարագաներում հասնողի և ողորմացողի:

Տե՛ս նաև № 235ա, բ ծանոթագրությունները:

235բ. Խորագրված է «Հացթուխի»:

Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավի կողմից, գրառող՝ Արտաշես Բարսեղյան:

Այս տարբերակի առաջին երեք տողերը № 234 խմորի հասունացման քառատող աղոթքի տարբերակն է, որ կցվել է հացաթխման ավանդական աղոթքին իբրև սկիզբ և ենթարկվել իմաստային որոշ փոփոխությունների (տե՛ս № 234 աղոթքն ու ծանոթագրությունը):

Այստեղ հացի աստվածային բարեխոսության նպատակ են դարձել աղոթողի հետևյալ ցանկությունները, որոնք նա հենց հացից է ակնկալում. իրեն (ձ'էնե, ինձնից, ինձ համար, այսինքն՝ աղոթողին) զորություն և ուժ, իսկ հացից՝ առատություն և առողջություն:

Վերջին հմայական երկտող բանածևը վերաբերում է հացին, հաց թխելու գործընթացին, որպեսզի հացը չընկնի թոնիրն ու կուտ չգնա և թոնրի կողին ուռչելիս չպատռվի:

Տե՛ս № 235ա, բ ծանոթագրությունները:

236. Խորագրված է «Աղոթք հաց եփելիս»:

Աղոթքի իմաստը թեպետ մթագնված, բայց թվարկված սրբազան կենդանին ու առարկաները (մատաղացու գառ, դրախտային խնկի ծառ, անթառամ պսակ) հավանաբար վերաբերում են հացին, որպես նրա սրբազան հատկանիշներ: Բոլորը միասին հողից են ճաշակվում (ճաշակն իբրև թե սնունդ և թե միաժամանակ ծիսական իմաստով՝ ս. հաղորդություն), որով շեշտված է նաև հողի սրբությունը:

Այդ ամենը վկայում է հացի սրբազան զորությունը, որից աղոթողն իբրև ճշմարիտ քրիստոնյա՝ աղերսում է օրհնած հողի և խաչով կնքած գերեզմանի արժանանալ, դարձյալ կապված հացը սնուցող հողի գաղափարի հետ:

237. Խորագրված է «Աղոթք խնոցի հարելիս»:

Ասվել է, ըստ երևույթին, խնոցու մեջ կարագը շուտ հասունանալու նպատակով:

Աղոթքն ամբողջությամբ կառուցված է այլաբանական փոխաբերությունների

վրա: Դեղին կարագը փոխաբերվել է դեղին ծաղկի ավանդական պատկերով (հմմտ. *«Կարագ չէ, ծաղիկ է»* կամ կարագին տրվող *«գը լմանի ծաղիկ»* ժող. համեմատութ-յունների հետ): Այդ ծաղիկն, ըստ աղոթքի, բուսել ու աճել է ջրափին, որով թանը փոխաբերվել է ջրի հետ: Խնոցում լցված սերուցքը կամ թթվասերը փոխաբերվել է հոր, նրա նստած դիրքը՝ սերուցքի նստելու, տարրալուծվելու, իսկ որդին՝ այդ տարրալուծումից անջատված թանի հետ, որը փնջում, հավաքում է նորաբույս ծաղիկ-կարագը:

238. Խորագիր չունի:

Բերված է իբրև մանկական երգ:

Ըստ բանահավաքի ծանուցման՝ Քղիում մանկահասակ աղջիկները քարաքոսից հինա են պատրաստում և քսում ձեռներին: Նրանք ջուր են լցնում սալաքարին եղած քարաքոսի վրա, ապա սուր քարով սկսում են երկար ժամանակ շփել քարաքոսը, որի ընթացքում վերջինս սկսում է փրփրել և բարձրանալ: Աղջիկներն այդ փրփուրով լվանում են ձեռքերը, շփում, ապա բռնում արեգակի դեմ և երգում սույն աղոթքը:

Ըռքո՝ Առաքել, Սըրգո՝ Սարգիս անունների հապավված բարբառածևերն են, որոնք սուրբ անուններ են և հավասար են դասվել արեգակին ու լուսնին:

Սույն աղոթքն իր կոչական հրամայական ոճով և ցանկությունների արտահայտությամբ ծիսահմայական բանածև է, ուղղված երկնային լուսատուներին ու սրբերին և ուղեկցել է հինա պատրաստելու արարողությանը, իբրև ծիսական գործողության:

239. Խորագրված է «Աղոթք լվացքի»:

Բանահավաքի հաղորդմամբ՝ լվացք անելիս քքում են օճառի վրա և ասում սույն բանածևը, որպեսզի քիչ օճառ գործածվի:

Սա հմայական բանածևի նախնական տիպերից է, բաղադրված քքելու սաստիչ արարողությունից և սոսկական ցանկությունից, առանց առասպելական և հավատալիքային մոտիվների. վերջիններս բնորոշ են հմայական աղոթքների զարգացած տեսակներին:

240. Խորագրված է «Խճճված թելը բացելու աղոթք»:

Հմայական պարզ բանածև է, երկանդամ կազմությամբ, բաղադրված անհիշատակ կնոջն ուղղված բարեմաղթանքից (հմմտ. անհիշատակ պառավի մոտիվը № 229 աղոթքում), որի անվան հետ կապված է եղել խճուճն արձակելու ինչ-որ դիպված և աղոթքի սոսկական ցանկությունից: Այս երկու անդամներն իրար են աղերսվել զուգահեռականության սկզբունքով:

241. Խորագիր չունի, դրված է «Սնոտիապաշտություններ» բաժնում:

Ունի հետևյալ ծանուցումը. «Հավը թուխս դնելիս հավկիթները դարսում են գդակի մեջ, տանում և միանգամից դարձնում՝ ասելով» սույն բանածևը: «Հետո գդակը դնում են գետնին և իրենք էլ մոտը նստում, որ հավը նստկան լինի»:

Հմայական պարզ բանածև է, արտահայտված բնաձայնական բառերով և ցանկության կատարման ակնկալիքով:

242. Խորագիր չունի: Ունի հետևյալ ծանուցումը. «Միևի սերը գրավել ցանկանալով մի փոքրիկ թղթի վրա գրում են» սա, «հետո եռանկյունաձև ծալում են, մի շորի մեջ կարում - հմայիլ շինում - և միշտ պահում սերը գրավել ցանկացողի մոտ և կամ մանր կտորներ անում, լցնում ջրի մեջ և խմացնում նրան, որի սերը կամենում են գրավել»:

Սա հմայական պարզ բանաձև է, սերում է միջնադարյան գրավոր ավանդությունից, կենցաղավարում է գրավոր, իբրև կախարդական «թուղթ ու գիր»:

243. Խորագրված է «Խնամախոսության աղոթք»:

Ունի հետևյալ ծանուցումը. «Հարսնախոսները, ապագա ամուսիններին միմյանց ցույց տալու ժամանակ, ասում են սույն աղոթքը երկուսի բերանից»:

244. Խորագրված է «Աղոթք»:

Ասվում է երեխային քուն դնելիս՝ խաչակնքելով:

245. Խորագրված է «Քառասունօրական մանկանց համար աղոթք»:

Ունի հետևյալ ծանուցումը. «Սույն աղոթքը ասում է ծննդական մայրը տղային եկեղեցիից տուն տանելիս. նա ճանապարհին ցորեն շաղ տալով է գնում»:

Բաղադրված է մոր՝ սեփական որդուն ուղղված մաղթանքների շարքից:

Աղոթքն ուշագրավ է իր ծիսական իմաստաբանությամբ: Երեխային քառասունքից հանելը, որ կատարվում էր եկեղեցում ծիսական հատուկ արարողությամբ, ըստ հավատալիքի ապահովում էր թե՛ մանկան և թե՛ մոր առողջությունն ու անվտանգությունը չար ուժերի ազդեցությունից: Դրանով վերացվում էին նաև ծիսական մի շարք արգելքներ, որով մայրն ու մանուկը դառնում էին առավել ազատ ու անկաշկանդ: Քառասունքից դուրս գալու ծիսական այս խորհուրդի իմաստն է ընկած աղոթքի մաղթական բանաձևերի հիմքում: Տարիքային այդ տարրական ու փորձանքաշատ աստիճանից մանկան դուրս բերումը դիտվել է իբրև նոր կյանքի վերածնունդ, որը մոր մեջ հույսեր է արթնացնում որդու երջանիկ գալիքի նկատմամբ՝ արտահայտված առաջին հերթին նրան բախտավոր թագավոր (նորափեսա) տեսնելու, մնացական լինելու, հորով-մորով մեծանալու և երջանիկ զավակ դառնալու բարեմաղթություններով:

246ա. Բանահավաքի ծանուցմամբ՝ «Ասում են մի բան որոնելիս»:

Այստեղ և հաջորդ տարբերակներում արտահայտված է ժողովրդական այն հավատալիքը, թե յուրաքանչյուր կորուստ սատանայի արարքի հետևանք է. նա նստում է կորուստի վրա կամ դնում ոտի տակը, որի հետևանքով էլ կորուստը չի երևում (հմմտ. կորստի առթիվ ասվող հետևյալ ասույթը՝ *«Սատանե՞ն է վրեն նստի»)*: Ուստի սույն բանաձևերում կորուստ որոնողը դիմում է սատանային՝ ոտի տակից կամ թաքցրած տեղից հանել կորած առարկան՝ խոստանալով կեսը բաշխել նրան: Սա չար ոգուն շողոքորթելու, հաճոյանալու, համոզելու եղանակ է, բնորոշ ժողովրդական հավատալիքներին:

246բ. Այս և հաջորդ գ տարբերակը բերված են որպես մանկական երգեր, որոնք, ըստ բանահավաքի՝ «Երբ մի բան են կորցրել, աշխատում են այս խոսքերով

խաբել սատանային, որ չպահի»:

246գ. Տե՛ս № 246ա, բ ծանոթագրությունները:

247. Բանասացի ծանուցմամբ՝ «Նոր շոր հագնողը ոտը վրան դնելով ասում է, իբր երկարակյաց լինելու համար»:

248ա. Բերված է որպես մանկական ասույթ, որ ասվում է ականջը ծեն տալիս:

248բ. Ասվում է «երբ մեկի ականջը ծվում է»:

249. Բերված է որպես մանկական ասույթ. ասվում է մի քանի անգամ, երբ մեկին որևէ բանի են ուղարկում: Ուղարկվողը համեմատվում է ծտի արագ թռիչքի և գորտի ամուր կառչելու հետ, գործի հաջողությունը ապահովելու նպատակով:

250. Բերված է որպես մանկական ասույթ, որ կրկնվում է մի քանի անգամ: Գործի ուղարկվածը համեմատվել է ճախարակի արագ պտտվող վիլակի հետ, դարձյալ գործի հաջող և արագ կատարման նպատակով:

251. Մանկական երգային ասույթ է, որ ասվում է որևէ տեղից թռչելիս: Նպատակն է խոսքի հմայական զորությամբ ապահովել թռչողի անվտանգությունը: Վտանգի հնարավորությունը անեծքով փոխանցվում է մի երրորդ դեմքի՝ չալ ագռավին:

252. Բանահավաքի ծանուցմամբ՝ ասվում է ծիածանը ծագելիս: Երբ ծիածանը կրկնակի է լինում, ասում են՝ պայծառը հայինն է, խավարը՝ թուրքինը:

Հմայական այս երկանդամ ասույթը կառուցված է գունային և էթնիկական երկհակադրության սկզբունքով:

Կանաչն ու կարմիրը, որ նաև ծիածանի ժողովրդական անվանումն է, միաժամանակ երջանկության, ամուսնության, փափագի կատարման խորհրդանիշներ են (հմմտ. նորափեսայի կանաչ ու կարմիր նարոտի հետ), որ հակադրված է սևին ու սպիտակին (անգույնին), որին հաջորդում է հայ/թուրք համապատասխան էթնիկական հակադրությունը: Ասույթի իմաստն հանգում է հային երջանկության և կյանքի հարատևության, իսկ թուրքին՝ դժբախտության և մահվան ցանկությանը:

253. Բանահավաքի ծանուցմամբ՝ «Հող ուտող երեխայի ծնողը օձ տեսնելիս ասում է այս, կանցնի իբրև թե երեխայի սովորությունը»:

Ժողովրդական պատկերացմամբ, որ ըստ երևույթին սերում է Եվային խաբող օձի աստվածային անեծքից, օձը հող է ուտում և հողով սնվում:

Սույն ասույթի նպատակն է օձին հայտնելով երեխայի հողակերության սովորույթը՝ վերջինիս կողմից, իբրև հմայող կենդանու, կարգելվի երեխայի հողակերությունը:

Այս բաժնում են համախմբված օրվա երկու հակադիր ժամերին՝ գիշերը և լուսաբացին ասվող ժողովրդական աղոթքները՝ կապված հատկապես քնի և արթնացման բնախոսական զույգ երևույթների հետ, բովանդակավորված խավարի և լույսի, մահվան և կյանքի, հոգու և հանդերձյալ աշխարհի առասպելական հավատալիքներով:

Օրվա ժամանակային ցիկլը իր երկու մասերով (գիշեր, ցերեկ) առասպելաբանորեն իմաստավորված է որպես մահվան և կյանքի հակադրություն: Գիշերվա խավարը դիտված է իբրև չարի մարմնավորում, համատարած քնով և անշարժությամբ՝ մահվան տիրապետություն, իսկ ցերեկն ու ցերեկվա լույսը՝ բարու մարմնավորում, մեռածների (քնածների) հարություն, զարթոնք, վերակենդանացում, իրենցից բխող բոլոր հետևանքներով:

Այս հանգամանքներով է, անշուշտ, պայմանավորված երեկոյան աղոթքների մեծ մասի շեշտված հմայական, պահպանական բնույթը՝ ուղղված գիշերը մարմնավորող չարի, վերահաս մահվան (քնի) ժամանակ հոգու փրկության, մարմնի անձեռնմխելիության ապահովման նպատակին:

Մինչդեռ լուսաբացի աղոթքները, կապված լինելով լույսի, նոր սկսվող օրվա, կյանքի վերածննդության հետ, առավելաբար ուղղված են իրական կյանքի սոցիալական, բարոյական, անձնական ցանկությունների կատարման նպատակին (կենսամիջոցների, խաղաղ կյանքի պայմանների, խղճի ազատության, դավանանքի, բարոյական մաքրության ապահովում, պանդուխտների վերադարձ և հովանավորում, առօրյա փորձանք-պատահարներից, չարիքից ու չարկամներից ազատում և այլն):

Լուսաբացի աղոթքներում առկա են նաև մեղքերի թողության և հոգու փրկության ապաշխարանքի ու աղերսանքի մոտիվներ, որոնք հին հավատքով դարձյալ կապվում են լուսաբացի, արշալույսի հետ, երբ բացվում են երկնքի (իմա՝ դրախտի) դռները, որոնց առջև կատարվում է հոգիների ամենօրյա դատաստանը: Լուսաբացի աղոթքները հիմնականում ունեն խնդրական, աղերսական բնույթ, գրեթե զերծ են հմայական տարրերից և ամբողջապես տոգորված երկնային լույսի, արևի, արևագալի, արևելք-աղոթարանի հին լուսապաշտության ոգով ու մոտիվներով, որոնք առկա են նաև հայոց քրիստոնեական հոգևոր երգերում (շարականներ) և եկեղեցական աղոթքներում:

Քնի (երեկոյան) հմայական բնույթի աղոթքները, ի տարբերություն սովորական հմայական աղոթքների (չար աչքի, կապքի, ծննդկանի, բուժաղոթքներ), որոնք պարտադիր ասվում են բուժող-հմայող անձի կողմից և ուղղված են աղոթքին ենթակա անձի բուժմանը կամ նրա անվտանգության ապահովմանը, բացառում են հմայագործին և ասվում են քնող անձի կողմից՝ ուղղված իր սեփական մարմնի ու հոգու պահպանության նպատակին: Այս իմաստով թե՛ քնի և թե՛ արթնացման (իմա՝ առավոտյան) աղոթքները, անկախ իրենց հմայական կամ աղերսական բնույթից, կատարմամբ, կիրառությամբ և անձնականության ոգով նույնանում կամ մերձենում են քրիստոնեական աղոթքներին, իբրև անձի պահպանության և հոգու փրկության համար ասվող սրբազան բանաձևեր:

254ա. Գրառված է 1947 թ.:

Բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ., Աշոցքի Ղազանչի գյուղում:

Բանահավաք՝ Վարդ Բդոյան:

Սույն եռատող բանաձևը կայուն ավանդական սկզբնամաս է գիշերը քնելիս ասվող հաջորդ աղոթքաշարի: Տարբերակներում այն զարգանում է տարբեր մոտիվների հարակցմամբ և աճմամբ՝ վերածվելով ծավալուն աղոթքների: Այդ նոր մոտիվների զարգացմամբ էլ պայմանավորված են նույն սկզբնամասով աղոթքների կիրառման տարբեր նպատակները: Դրանք հիմնականում ասվում են գիշերը քնելիս, մի մասն ուղղված է ծննդկանի պահպանությանը (տե՛ս № 146 իթ-լդ), իսկ մի քանիսն էլ ասվում են Ջատկին երեխաների կողմից, իբրև զատկական երգ:

Սույն ավանդական բանաձևում առկա է **ճրագի** (իմա՝ լույսի, կրակի) հնագույն պաշտամունքը, դիտված իբրև ճշմարտության խորհրդանիշ, միաժամանակ ենթարկված քրիստոնեական վերաիմաստավորման: Ճշմարիտ ճրագի հին հավատալիքը բաղարկվել է Քրիստոսի պաշտամունքին, դարձել վերջինիս խորհրդանիշը, իբրև ճշմարտության (իմա՝ արդարության) համար մարտիրոսված, նահատակված սրբություն:

Սույն աղոթքով սկսվող քնի աղոթաշարի մի մասն ունի աղերսական, խնդրական բնույթ և խիստ մերձենում է քրիստոնեական կրոնական աղոթքներին, մյուս մասն ունի շեշտված հմայական բնույթ, արտահայտված հմայական բանաձևերով:

254բ. ԳԱԹ խորագրված և ծանուցված է. «Աստապատցիք երեկոյան անկողին մտնելու ժամանակ աղոթում են»: Գրառված է Մ. Աբեղյանի կողմից, 1882թ. օգոստոսի 13-ին:

ՀԱԲԱ խորագրված է «Գիշերվա աղոթք», գրառված է 1890 թ.:

Ճշմարիտ ճրագը սույն աղոթքում հատկանշվել է մի նոր դրական հասկացությամբ՝ *ոսկե հավատ մարգարիտով,* որն առավել է ընդգծում ճրագի (լույսի) հին պաշտամունքը:

Տե՛ս № 254ա ծանոթագրությունը:

Եղիա Բանալիք - դրախտի բանալի: Հինկտակարանյան Եղիա մարգարեն հայ և քրիստոնյա այլ ազգերի ավանդության մեջ, կենդանի երկինք համբարձվելու պատճառով, հաճախ նույնացվել է նրանց ամպրոպային աստվածությանը (հմմտ. № 178 ծանոթագրությունը): Ըստ աղոթքի՝ երկնային դրախտի բանալին կոչվել է հենց Եղիայի անունով: Աղոթքում դիմում է արվում ճշմարտության ճրագին, իբրև լուսեղեն հավատի մարմնավորման, որն ինքը՝ Քրիստոսն է, որպեսզի նա բացի դրախտի դուռը և թույլ տա քնող-աղոթողին քաղելու դրախտի անմահության ծաղիկը (այսինքն՝ նրա հոգին դրախտին արժանացնելու):

254գ. Խորագիր չունի:

Յուրն ի քաղաք - յուր քաղաքը, հավանաբար նկատի ունի Երուսաղեմը (հմմտ. № 254դ տարբերակի համապատասխան մոտիվը):

Տե՛ս № 254ա ծանոթագրությունը:

254դ. Խորագրված է «Հիսուս և յուր աշակերտներ»:

Գրառված է Լևոն Մաքսուդյանի «Գովք, առակ, բամբառակ, առասպել, վեպ և այլն» խորագրով ձեռագիր տետրում, մայիս, 1881թ. տարեթվով, որը հեղինակն ուղարկել է Գ. Սրվանձտյանցին:

Աղոթքի խորագիրը ևս վկայում է, որ ճրագ-ճշմարիտի տակ բանասացներն ու բանահավաքները նկատի են ունեցել Քրիստոսին (նաև նրա աշակերտներին):

Տե՛ս № 254ա, բ ծանոթագրությունները:

254ե. ԲԱ խորագրված է «Իրկվան աղոթք», ՄԱ «Երեկոյան կանանց աղոթքը (ճրագ մարելուց հետո)»:

ՄԱ տարբերակը հարակցված էր № 266բ քնելու աղոթքին, իբրև վերջնամաս:

Անջատումը կազմողինն է:

Գետ իջավ Վրդանես - «Գետ իջավ Հորդանես (Հորդանան)» բառակապակցության աղավաղումն է:

Աղճատված ձևով ներկայացված է Հովհաննես Մկրտչի ձեռով Քրիստոսին Հորդանան գետում մկրտելու նորկտակարանյան իրողությունը:

Գացին մաքուր քաղաք, հավանաբար նկատի է առնված Երուսաղեմը, բայց ոչ իրական, այլ կրոնական՝ վերին (երկնային) Երուսաղեմը, այսինքն՝ դրախտը, ուր ծաղկում է անթառամ ծաղիկը (հմմտ. № 254բ աղոթքի համանման մոտիվների հետ): Անթառամ ծաղիկն առհասարակ քնելու աղոթքներում հանդես է գալիս իբրև քնաբեր, գիշերային չար ոգիներից պաշտպանվելու սրբազան միջոց [տե՛ս **Աբեղյան 1975,** 37]: Այն նաև դրախտային անմահությանն արժանանալու խորհրդանիշ է:

Տե՛ս № 254 ա, բ ծանոթագրությունները:

254զ. Խորագրված է «Քնելիս ասվող աղոթք»:

Սույն տարբերակում համախմբված են և ընդհանրացված նախորդ աղոթքների՝ քնի հետ կապված հավատալիքային մի շարք մոտիվներ:

Նախ՝ ճշմարտության ճրագը դիտված է իբրև արքայության լույս (մարգարիտ), որի ազդեցությամբ չքանում են խավարը խորհրդանշող գիշերային չար դևերն ու քաջքերը: Ապա, դրա հետևանքով վրա հասած արդար (ճշմարտապես) քունը գիտակցված է իբրև հոգու այցելություն անմահության դրախտ, որտեղից քաղած ու փնջած անթառամ ծաղիկները, քնի պահապան հրեշտակի զուգակցմամբ, դառնում են քնածի պահպանության զորավոր միջոցներ՝ ընդդեմ չարի և անուշ քնի ու բարի երազների կատարման գրավականներ:

Տե՛ս № 254ա-ե ծանոթագրությունները:

254է. Խորագիր չունի:

Բանահավաք Քաջբերունու վկայությամբ՝ սույն աղոթքը երեխաների կողմից Վաղարշապատի շրջակա գյուղերում կատարվել է Զատիկի օրը, իբրև ծիսական երգ: Նրանք այդ երգը կատարելով շրջել են տնետուն և ձու հավաքել:

Քնի ինընտողյա ավանդական աղոթքին սույն տարբերակում հարակցվել է լուսաբացին ասվող և հոգիների ամենօրյա դատաստանի պատկերը ներկայացնող աղոթքի մի հատված՝ «Երկնքի դուռը բաց ա» սկզբնատողով (տե՛ս լուսաբացի № 353 աղոթքն իր տարընթերցումներով):

254ը. Խորագիր չունի:

Սա ևս նախորդ տարբերակի նման, բանահավաք Քաջբերունու հաղորդմամբ՝ Վաղարշապատի շրջակա գյուղերում երեխաների կողմից կատարվել է որպես զատկական երգ:

Այս տարբերակում ևս կատարվել է երկու տարբեր աղոթքների հարակցում: Վերջին քառատողը, դարձյալ քնելիս ասվող անկախ աղոթքի հատված է, որ կցվել է սույն տարբերակին, երկուստեք առկա *Մարիամ* անվան ընդհանրության պատճառով (հմմտ. № 329ա-գ աղոթքները):

Հնդու քաղաք՝ տարաշխարհիկ քաղաքի անուն է, հայ բանավոր ավանդության մեջ հաճախակի հիշատակվող, որը տվյալ բնագրում իմաստաբանորեն նույնացել է դրախտային քաղաքի հետ, ուր աճում է անթառամ ծաղիկը:

Տե՛ս № 254ա-է ծանոթագրությունները:

254թ. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Արտաշես Շահինյան, գրառված է Ապարանի Չամըրլու գյուղում:

Բերված է իբրև երգ:

Վերջին հինգ տողերում Մովսես մարգարեին բանալի տալու, Հովհաննես Մկրտչի կողմից կանաչ խոտհնձի և խոտից անուշ մեռոնահոտ բուրելու մոտիվները փոքր-ինչ մթագնած ձևով արտահայտում են նախորդ տարբերակներում եղած բանալիով դրախտի դուռը բացելու, այնտեղից անուշաբույր անթառամ ծաղիկներ քաղելու մոտիվների իմաստը:

Տե՛ս № 254ա-ը ծանոթագրությունները:

254ժ. Խորագիր չունի:

Գրառող՝ Նիկողոս Նիկողոսյան: Գրառման թվականն ըստ արխիվային տվյալների՝ հավանաբար 1940 թ.:

Ավարտվում է անեծքի հմայական բանաձևով, որ վկայում է աղոթքի պահպանական բնույթի մասին: Շուրջառն ու բուրվառը, իբրև կրոնական արարողության սրբազան մասունքներ աղոթքում, հանդես են գալիս որպես հմայական պահպանության միջոցներ:

Տե՛ս № 254 ա-թ ծանոթագրությունները:

254ժա. Խորագրված է «Դուռը փակելիս»:

Խորագիրը վկայում է աղոթքի երեկոյան ասվելու իրողությունը, երբ դուռը փակում են և պատրաստվում քնել:

Բաղադրված էր երկու տարբեր և ավարտուն աղոթքների հարակցումից: Երկրորդ՝ «Մեր տունն լիքը էրկաթ է» սկզբնատողով աղոթքն անջատվել և դրվել է համատիպ աղոթքների շարքում (տե՛ս № 266գ):

Առաջին յոթտողյա աղոթքը, իբրև քաղցր ու խաղաղ քնի ցանկության արտահայտություն, ավարտվում է օրհնաբանական բանաձևերով, մինչդեռ հաջորդ ութտողյա հատվածը որպես պահպանության աղոթք, եզրափակվում է չարիքի և չար ոգիների դեմ ուղղված անեծքի բանաձևերով:

Տե՛ս . № 254ա-ժ ծանոթագրությունները:

254ժբ. Խորագիր չունի:

Ունի հետևյալ ծանուցումը. «Գիշերները հոգատար սկեսուրները նախքան քնելը խաչակնքում են ծննդկաններին և հետևյալ աղոթքը շշնջում»:

Սույն տարբերակը բաղադրված է երեք տարբեր աղոթքների հարակցումից. յուրաքանչյուր բաղադրիչ մյուսից անջատված է և ավարտվում է *«Տեր մեր Հիսուս Քրիստոս»* աղոթքային բանաձև կրկնակով: Առաջին բաղադրիչը սույն տարբերակաշարի հիմքը կազմող քնի ավանդական ութտողյա աղոթքն է, որն ավարտվում է երազի ու մուրազի բարի կատարման մաղթանքով:

Երկրորդը՝ դարձյալ քնելիս ասվող «Մարիամ, քու՞ն ես, թե զարթուն» սկզբնատողով յոթտողյա պահպանական աղոթքն է, չարը կանխելու անեծքային բանաձևով: Երրորդը չարից անխոցելի տերունական տան (այլ՝ տարբերակներում հաճախ՝ երկաթե տան) մոտիվով աղոթքային հատվածն է, որ հանդես է գալիս թե՛ քնի (տե՛ս № 266ա, հտն.) և թե՛, մանավանդ, ծննդկանի պահպանության (տե՛ս № 146հե-իը) աղոթքներում: Այս վերջին հատվածի մոտիվների իմաստաբանության (Քրիստոսի փիլոնով օրորոցը ծածկել, այն ծննդկանի գլխատակը դնել) շնորհիվ, քնի աղոթքի այս հարակցված տարբերակը կիրառվել է նաև ծննդկանի պահպանության նպատակով:

Տե՛ս № 254ա ծանոթագրությունը:

254ժգ. Խորագիր չունի: Դրված է «Սրբոց երգեր» ընդհանուր վերնագրի տակ:

Կաթնաղբյուրի ջրի շաղախով աստվածային քարե տաճար կառուցելու մոտիվն, ըստ երևույթին, այլաբանորեն ակնարկում է քրիստոնեական նոր հավատի հիմնադրման իրողությունը, որին հաջորդում է Հորդանան գետում Հովհաննես Մկրտչի կողմից Քրիստոսի մկրտության արարողությունը: Այդ նույն գաղափարն է մարմնավորված հաջորդ տարբերակներում Երուսաղեմի կառուցման կրկնվող մոտիվներում:

Գետ **Վրտանես** տե՛ս № 254ե ծանոթագրությունը:

255ա. Խորագրված է ԱՀ XI «Քնից զարթնելիս ասվող աղոթք», ՀԱԲԱ խորագիր չունի, ունի հետևյալ ծանուցումը. «Այս երգը իբրև գիշերային աղոթք են գործածելիս եղել»:

ԱՀ XI խորագիրն, ըստ երևույթին, թյուրիմացության արդյունք է: Թե՛ աղոթքի մյուս տարբերակները և թե՛ սույն տարբերակի բովանդակությունը վկայում են, որ աղոթքը ասվել է քնելիս:

Կազմված է քնելիս ասվող երկու տարբեր աղոթքների բաղարկումից: Առաջին ինընտրյա մասում այլաբանորեն ներկայացված են Քրիստոսն ու իր հիմնադրած նոր կրոնը, իբրև նորակառույց Երուսաղեմ և նորատունկ պտղատու ծառ՝ իր արդարության ծաղիկներով (տե՛ս № 254ժգ ծանոթագրությունը): Դրան հարակցվել է երկաթե տան մոտիվով ավանդական աղոթքը՝ իր պահապան սրբերով և պահպանության հմայական բանաձևերով:

Տե՛ս № 254ա ծանոթագրությունը:

255բ. Խորագիր չունի:

Կազմված է երկու տարբեր աղոթքների բաղարկումից: Տե՛ս № 255ա ծանոթագրությունը:

255գ. Խորագրված է ՋԲ «Անկողին մտնելիս», ԷԱԺՋ խորագիր չունի:

Կազմված է քնելիս ասվող երկու տարբեր աղոթքների բաղարկումից (տե՛ս № 255ա ծանոթագրությունը): Երկրորդ բաղարկված աղոթքը՝ «Մե դուռմ՛ կար Հիսուս» սկզբնատողով, տարբերակն է «Տունըմ ունիմ երկաթե» սկզբնատողով աղոթքի: Վերջինիս կցվել է նաև Պողոս-Պետրոսին և ս. Կիրակոսին ուղղված աղերսական հնգատողը՝ հոգու փրկությունն ապահովելու ցանկությամբ:

256ա. Խորագրված է «Ճրագ մարելիս»:

Բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ. Աշոցքի Ղազանչի գյուղում: Բանահավաք՝ Վարդ Բդոյան, գրառված է 1947 թ.:

Այս և հաջորդ աղոթքներում ճրագի լույսի չարահալած հնագույն հավատալիքը զարգացել է նոր կրոնական ըմբռնումներով: Ճրագը մարելուց հետո նրան փոխարինելու են գալիս երկնքից իջած կամ արթնացած պահապան հրեշտակները, աստվածը և Քրիստոսը, որոնք պահպանելու են չարքերից քնածի հոգին ու անձը: Տե՛ս № 259բ ծանոթագրությունը:

256բ. Խորագրված է «Քնելուց առաջ»:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, Ե.Լալայանի 1915-16 թթ. արշավախմբի նյութերից:

Ամանաքը քնող անձի հոգին է, որը նա քնելիս, ըստ հավատալիքի, հանձնում է աստծոն ի պահ:

Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

256գ. Խորագրված է «Քնելուց առաջ»:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, Ե.Լալայանի 1915-16 թթ. արշավախմբի նյութերից:

Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

257ա. Խորագրված է «Քնելուց առաջ»:

Տե՛ս № 256գ ծանոթագրությունը:

257բ. Խորագրված է «Երեկոյան կանանց աղոթքը (ճրագ մարելուց հետո)»:

Բանահավաք՝ Արտաշես Շահինյան:

Սույն աղոթքը իր ավարտուն տեսքով կցված էր «Մի տունմ՛ կեր՝ էրկաթ էր» սկզբնատողով քնի աղոթքին (տե՛ս № 266 ծանոթագրությու-նը):

Անջատումը կազմողինն է:

Տե՛ս № 256ա և 259բ ծանոթագրությունները:

258. Խորագրված է «Գիշերվան աղոթք»:

Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

259ա. Խորագրված է «Մութ տեղեր մտնելու աղոթք»:

Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

259բ. Խորագրված է «Քնից զարթնելիս»:

Վերնագիրը վկայում է, որ աղոթքն ասվել է առավոտյան, քնից արթնանալիս, թեպետ, բացառությամբ առաջին երկտող ավանդական բանածևի, բովանդակությամբ այն քնելիս ասվող երեկոյան աղոթք է: Այդ են վկայում նաև մյուս տարբերակները: Այսուհանդերձ, առաջին երկտող բանածևը, որ հաճախ է կրկնվում քնելիս ասվող սույն աղոթաշարում, ժողովրդական հին հավատքի առումով, ունի տրամաբանական հակասություն: Ըստ հավատալիքի՝ կրակը (ճրագը) իր լույսով չարահալած է, այսինքն՝ բնական առումով այն ցրում, լուսավորում է չարը մարմնավորող գիշերային խավարը: Հետևաբար, եթե այն գիշերն է ասվել, ապա ճրագի մարելուն հետևող չարի հալածումը իմաստաբանորեն հակասում է ճրագ-կրակի լուսային հավատալիքին: Մինչդեռ եթե այդ բանածևը առավոտյան՝ լուսանալիս է ասվել, ապա հակասությունը վերանում է, քանզի գիշերային ճրագի լույսին փոխարինելու է գալիս օրվա բնական լույսը, որն ինքնին չարահալած է: Այս իմաստով էլ հավանական է դառնում, որ հիշյալ ավանդական բանածևը սկզբնապես ասվել է առավոտյան, քնից արթնանալիս, երբ ծագել է ցերեկային լույսը: Հետագայում այդ բանածևը ենթարկվել է քրիստոնեական վերաիմաստավորման, ցերեկային բարի լույսին փոխարինել են Քրիստոսն ու հրեշտակները, և այն վերածվել է քնելիս ասվող աղոթքի բանածևի: Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

Պողոս, Պետրոս արդարացավ - նկատի է առնվել, ըստ երևույթին, Քրիստոսի այն կանխատեսումը, թե Պետրոս առաքյալը մինչև լուսաբաց իրեն երեք անգամ ուրանալու է, որը և արդարանում, իրականանում է:

Այս մոտիվը դարձյալ կապված է լուսաբացի հետ:

259գ. Խորագրված է «Մութ տեղեր մտնելու աղոթք»:

Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

260. Փ, ՀԲՆ խորագիր չունեն:

ՋԲ խորագրված է «Անկողին մտնելիս», ՀԱԲԱ «Քնելու աղոթք»:

Վերջին քառատողը այլ աղոթքներից եկող (տե՛ս №№ 320, 321, 420 ա-ե) սկզբնամաս է, հարակցված սույն աղոթքին:

Տե՛ս № 256ա ծանոթագրությունը:

261. Խորագրված է «Չար աչքի»:

Կազմված է երեկոյան ասվող տարբեր աղոթքների, չար աչքի և այլ աղոթքների տարբեր մոտիվների հարակցումից:

Ներկա աղոթքը ևս կազմված է երեկոյան աղոթքների տարբեր մոտիվների բաղարկմամբ, որն, այդուհանդերձ, ունի ամբողջական նկարագիր, ուստի անջատվում է հիշյալ հարակցված ընդարձակ աղոթքից (22-38 տողեր) և ներկայացվում սույն աղոթաշարում իբրև անկախ ստեղծագործություն: Վերջինս այդ հարակցված աղոթքում ունի հետևյալ շարունակությունը.

Հասուս Մասուս քաղքեն կուգամ,
Շատ պիտուական քաղաք կերթամ.
Հուր ունեմ հրեղեն,
Բուրվառ ունեմ լուսեղեն:
Հիսուս բերդ, Քրիստոս պարիսպ,
Մենք մեջը պարսպինք,
Հարը փակե՝ օրթին բանա,
Բալնիքը վրան Քրիստոսու:
Սուրբ կաթը կուսին,
Անգին արունն Հիսուսին,
Մեր մեղքը ջնջեցին:
Տունմ ունիմ երկըթե,
Բոլորը պողպըտե,
Սուրբ Գեորգ քուն է,
Սուրբ Հակոբ զարթուն է:
Ահա էկավ երեք ծիավոր,
Կանաչ կապավոր.
Մեկը Հիսուս,
Մեկը Քրիստոս,
Մեկը Հայր Աբրահամ.
Չար աչ, չար կրակ,
Չար փալը փչակեցին,
Դրին դրախտին դուռը.
Կտրիչ եզը պատռի,
Չար աչքը կոտռի:
Մտա Քրիստոսու պաղչան,
Կտրեցի երեք մարմարե սուն,
Երկուսը երթիցս պահապան,
Մեկը՝ դռանս:
Չար աչ, չար խափանի,
Չար սիրտ, չար խափանի:
Հավը քառը, սիրտտ տեղը:

262. Խորագրված է «Երեկոյան աղոթք»:

263. Խորագրված է «Աղոթք»:

Սույն աղոթքը բնագրում հարակցված է «Ուսին, ուսին, մայր Կուսին» և «Թաժա հացի հոտ էկավ» սկզբնատողերով ամբողջական աղոթքներին:

Անջատումը կազմողինն է:

264. Խորագրված է «Աղոթք»:

Աղոթքի 4-7տողերը լուսնին (տե՛ս № 450 ա,բ) ուղղված աղոթքի հատված է, ուր լուսինը պատկերացվել է դեղնամորուս, դեղին ծիավորի կերպարանքով, որը բաղարկվել է ծիավոր սս. Սարգսի կերպարին և դարձել պահապան ոգի:

265. Խորագրված է «Երեկոյան աղոթք (ճրագ անցնելուց հետո)»:

Բանահավաք՝ Արտաշես Շահինյան:

Խնդրական-աղերսական բնույթի աղոթք է՝ ուղղված ճրագի անմարելի լույսը խորհրդանշող Քրիստոսին (տե՛ս № 254ա ծանոթագրությունը)՝ անձը առօրյա փորձանքներից պահպանելու և հոգին դրախտային փրկությանն արժանացնելու ակնկալիքով:

Հմմտ. նաև № 255ա ծանոթագրությունը:

266ա. Խորագրված է ՋԲ «Դուռը փակելիս», ՀԱԲԱ խորագիր չունի:

Քնելու ներքոբերյալ աղոթքների շարքում տարբեր ձևերով դրսևորվում է անմատչելի երկաթե և պողպատակուռ տան պատկերը, որը հովանավորվում և պահպանվում է Քրիստոսի և այլ սրբերի ու նրանց պատկանող սրբազան առարկաների կողմից: Այդ պահպանության ու անխոցելիության սիմվոլային պատկերը, տարբեր մոտիվների և հմայական բանաձևերի հարակցմամբ, կիրառվել է տարբեր նպատակներով, մե՛րթ իբրև ծննդկանի (№ 146 իե-իթ), մե՛րթ վախի (№ 126դ, ե), մե՛րթ քնելու աղոթքներ: Բոլորի հիմքում էլ ընկած է չարիքից ու չար ոգիներից անձի պահպա-

նության և անծեռնմխելիության գաղափարը:

266բ. Խորագրված է «Երեկոյան կանանց աղոթքը (ճրագ մարելուց հետո)»:
Կցված էր «Ընցավ չար, խանգյավ ճրագ» սկզբնատողով աղոթքին (տե՛ս № 257բ ծանոթագրությունը):
Անջատումը կազմողինն է:
Տե՛ս № 266ա ծանոթագրությունը:

266գ. Խորագրված է «Դուռը փակելիս» և կցված էր № 254 ժա «Ճրագ, ճրագ ճշմարիտ» սկզբնատողով աղոթքին:
Անջատումը կազմողինն է:
Տե՛ս № 254ժա և 266ա ծանոթագրությունները:

266դ. Խորագիր չունի:
Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, Ե. Լալայանի 1915-16 թթ. խմբարշավի նյութերից:
Աղոթքում ուղղակի խոսքն ասվում է սուրբ Գրիգորի (Լուսավորիչ) կողմից, իբրև պատարագի գնացողի և դեմը ելած չար թշնամուն պատժողի:

267ա. Խորագրված է «Աղոթք՝ երեկոյան, քնելուց առաջ»:
Բանահավաք Արտաշես Շահինյանի ծանուցմամբ՝ աղոթքն «Ասեց Սողոմոն Միսակյան, 12 տարեկան, սովորած է իր հորեղբոր աղջկանից՝ 30 տարեկան»:
Վերատողատումը կազմողինն է:
Աղոթքը բաղադրված է երեք տարբեր աղոթքների հարակցումով. երկաթե տան մոտիվով հնգտողյա աղոթքին բաղարկվել է երեք ծիավորների մոտիվով հանրահայտ աղոթքը՝ բնորոշ ծննդկանի աղոթքներին (հմմտ. № 146ա-ժզ): Վերջինիս կցվել է «Ալալոց, բալալոց» սկզբնատողով (բնորոշ գայլկապի աղոթքներին, հմմտ. № 181գ, դ, 182), բայց բովանդակությամբ հոգու փրկության նպատակին ուղղված քրիստոնեական աղերսական բանաձևը:

267բ. Խորագրված է «Չվախենալու աղոթք»:
Բանասաց՝ Մեյրեմգուլիյան Սրբուհի, 50 տ., բանահավաք՝ Գեղամ Թարվերդյան, գրառված է 1936 թ. Վաղարշապատում:
Տե՛ս № 267ա ծանոթագրությունը:

267գ. Խորագրված է «Միայնակ քնողների աղոթք»:
Տողատումը կազմողինն է:
Տես՝ № № 266ա, 267ա ծանոթագրությունները:

267դ. Խորագրված է «Քնելիս ասվող աղոթք»: Տե՛ս № 266ա, 267ա ծանոթագրությունները:

268ա. Խորագիր չունի:
Գրառված է 1936թ., բանահավաք՝ Գ. Թարվերդյան:

Այս և հաջորդ տարբերակները երեք ծիավորների մոտիվներով հանրահայտ աղոթքներ են, որոնք իբրև տիպաբանական բաղադրիչներ հանդես են գալիս երկաթե տան մոտիվով աղոթքների նախորդ տարբերակախմբում:

268բ. Խորագրված է «Անկողնի մեջ վատ երազից հետո»:

268գ. Խորագրված է «Իրիկվան աղոթք»:

268դ. Խորագրված է «Աղոթք պառավական»:

Առաջին երկտողը նորալուսնին ուղղված ողջույնի հավատալիքային բանաձև է, որով շնորհավորվում է նորալուսինը, իբրև նորափեսա (**կանաչ-կարմիր թագավոր,** հմմտ. **գորտնուկի** և **լուսնի** մասին ասվող աղոթքների հետ):

Սույն տարբերակը նախորդների համեմատությամբ ունի բացահայտ հմայական բնույթ՝ արտահայտված եզրափակիչ երկտող բանաձևում:

Բնագրում սույն տարբերակին կցված էր հետևյալ աշուղական բնույթի վեցտողյա երգային անկախ հատվածը, որը բացի Քրիստոսի անվան հիշատակումից, որևէ կապ չունի սույն աղոթքի հետ:

Մտա կեմին (նավ), էլա Յաֆա,
Արպլները ըրին ճեֆա,
Սուպ Կարապետ քիշեցայի սեֆա:
Էրուսաղեմ կանանչ դաշտ է,
Մեջը իլլիք խաչապաշտ է,
Քրիստեոս Տերն մեր հետ հաշտ է:

269. Խորագիր չունի:

Բովանդակությամբ հարում է նախորդ աղոթքների երեք ծիավոր սրբերի մոտիվներին: Սույն աղոթքում երեք ծիավորներ բերում են երեք խաչ, մեկը տնկում քնողի սրտին, մյուսը՝ սնարին, իսկ երրորդը՝ տան վրա և ապահովում քնողի անվտանգությունը մինչև բարի լուսաբացը:

270. Խորագրված է ԹՄԿ «Աղոթք», ՀԱԲԱ խորագիր չունի:

Տե՛ս № № 266ա, 267ա ծանոթագրությունները:

Անմատչելի երկաթե տունն այս աղոթքում փոխարկված է տաճարի, առավել որոշակի՝ Սողոմոնի տաճարի, այսինքն՝ հեղինակավոր սրբավայրի, որն իր սրբազանությամբ նույնքան անխոցելի ու անմատչելի է, որքան երկաթե տունը, մանավանդ, որ այն դարձյալ պահպանվում է Քրիստոսի գավազանով ու ս. Ներսեսի (հավանաբար հայոց 4-րդ դ. Ներսես Մեծ կաթողիկոսը) փիլոնով:

271. Խորագրված է «Դուռը փակելիս»:

Աղոթքում երկաթե տան ավանդական պատկերը համադրվել է Քրիստոսի իշխանատան (իմա՝ եկեղեցու) հետ, որի անմատչելիությունն առավել զորանում է եկեղեցու սրբազանությամբ: Հմմտ. № 270 աղոթքն ու ծանոթագրությունը:

Իրեք պուռ դանակ - եռաշեղբ կամ եռաբերան դանակ, որով, իբրև մետաղե զենքի և պահպանության հմայական միջոցի, Տիրամայրը խոցում, վնասազերծում է գիշերը սպառնացող չար ոգիներին (սուտ սատանա, գել գազան, չարք):

272ա. Խորագիր չունեն:

ՀԱԲԱ FBI գրառողն է Հարություն դպիր Տեր Հովհաննիսյանց Սարոյանց, գրառված է 1881թ.:

Տե՛ս №№ 270, 271 ծանոթագրությունները:

272բ. Խորագրված է ԱՆՆ «Վախի աղոթք», Փորքշեյան խորագիր չունի:

Տե՛ս №№ 270, 271 ծանոթագրությունները:

273. Խորագրված է «Քնելու աղոթք»:

Աղոթքին կցված բանահավաքի ծանուցմամբ՝ «Այսպես ըսելով քանի մը անգամ խաչ կը հանեն, հետո կը պառկին»:

274. Խորագիր չունի:

Գրառված է 1936 թ., Գառնիի ենթաշրջանի Քարփիչլի գյուղում, Վանի Անծակ գյուղի նախկին բնակիչ, 45-ամյա Ստեփանյան Նազոյից:

Բանահավաք՝ Գեղամ Թարվերդյան:

Աղոթքում անմատչելի տունը ներկայացված է պարսպապատ, դուռ ու երդիքը փակ, դուռը բևեռներով գամված, սյունը աղոթած, որը պահպանվում է քրիստոնեական կրոնի սրբություններով (Ավետարան, Մաշտոց, սաղմոսարան, սուրբ Փրկիչ):

Տե՛ս նաև № 266ա ծանոթագրությունը:

275. Խորագրված է «Քնելիս ասվող աղոթք»:

Աղոթքում նախորդ երկաթե անմատչելի տանը փոխարինել է դուռը փակ բերդն ու պարիսպը, մարմնավորված Հիսուս Քրիստոսի երկատված անձի մեջ, որը դարձել է պարսպապատ բերդի անմատչելիության գրավականը: Պատկերն ամբողջականանում է փակ դռան բանալին Քրիստոսի մոտ գտնվելու, աղոթող անձի պարսպի ներսում պատսպարվելու, Քրիստոսի Ավետարանը գրկին և խաչը գլխի վրա գտնվելու մոտիվներով, որոնցով քնող-աղոթողը դառնում է անվախ ու անխոցելի:

Աղոթքն ունի երկմասնյա հստակ բաղադրություն՝ կազմված ժողովրդական հավատալիքների բանաձևերին բնորոշ պատճառի և հետևանքի ձևատրամաբանական սկզբունքով: Առաջին յոթ տողերը ներկայացնում են առարկայական պատճառական իրադրությունը, որից բխում է բաղձալի հետևությունը՝ աղոթողի երկյուղի վանման և նրա անձի ապահովման իրադրությունը: Այդ զույգ իրադրությամբ ձևավորվում և ամբողջականանում է աղոթքն իբրև միասնական կառույց և ձեռք բերում հմայական իմաստաբանություն:

276. Խորագրված է «Դուռը փակելիս»:

Բանահավաք՝ Վ. Բդոյան, գրառված է 1947 թ.:

Բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ.:

Բնույթով քրիստոնեական ծիսական աղոթք է:

277. Խորագիր չունի, զետեղված է «Նախապաշարմունքներ» ընդհանուր խորագրի տակ:

Բանահավաք՝ Տրդատ վ. Պալյան:

Կազմված է տարբեր աղոթքների կամ դրանց հատվածների հարակցումով և վերամշակմամբ: Առաջին քառատողը № 275 աղոթքի համառոտ տարբերակն է: Հաջորդ 5 տողերը քնի և պահպանության այլ աղոթքների հանրահայտ հատված է՝ հմայական շեշտված բնավորությամբ, անեծքի համապատասխան բանաձևերով: Նույն բովանդակությամբ է օժտված հաջորդ թուրքերեն քառատողը, որն առանձին ստեղծագործություն է: Վերջինիս մոտիվների աճումով զարգացած հատված է աղոթքը եզրափակող հնգատողը՝ խնդրական-աղերսական բանաձևումներով:

Այս բարդ կազմությամբ է պայմանավորված աղոթքի հմայական և աղերսական երկակի բնույթը:

Աղոթքի թուրքերեն քառատողը Ակնում ասվել է որպես առանձին աղոթք, որին բանահավաքը կցել է հետևյալ ծանուցումը. «Մամիկները այս թուրք[երեն] աղոթքը երեք անգամ կը կրկնեն և ամեն մի կրկնելուն՝ մեկ անգամ կը խաչակնքեն: Սա իրենց պահպանական աղոթքն է, տուներնին գողե զերծ մնալու համար: Իսկ երբ պիտի պառկին, ուրիշ աղոթք մ'ալ կըսեն, անկողինը գերեզմանի և վերմակն ալ հողի նմանցընելով.

«Մտա գերեզմանս,
Քաշեցի հողիկս վրաս» [ԳԱԹ, **Թ. Ազատյանի ֆոնդ,** I-136]:

278. Խորագրված են «Քնանալու աղոթք»:

ՀԱԲԱ բանահավաքն է Գ. Թարվերդյան, գրառված է 1936թ., Վաղարշապատում՝ Սրբուհի Մեյրեմգուլիյանից:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Սույն տարբերակը բաղադրված է № 277 ընդարձակ աղոթքի հայերեն և թուրքերեն մոտիվներից:

279. Խորագրված է «Աղօթք ի ժամու պառկելոյ»:

Աղոթքի վերջից կցված էր հետևյալ չափածո քառատող անեծքը, որը բանավոր ավանդության մեջ տարածված է որպես զավեշտ և աղոթքի ավարտուն բնագրի հետ առնչություն չունի.

Անիծեմ, անիծեմ՝ իրանաս,
Ամմեն ցավուս տիրանաս,
Քանի ծովը փրփրի,
Դուն ալ հետը քրքրիս:

Այս անեծքին բանահավաք Կ. Գաբիկյանը տվել է հետևյալ ծանուցումը. «թուրք տղաք հայ տղոց կարդալ ստիպելու առթիվ անիծախառն ընթերցմունքի մեկ վառիանքը» (էջ 503): Այսինքն՝ երբ թուրք տղաները իրենց հայ հասակակիցներին ստիպել են թուրքերեն կարդալ, վերջիններս այս անեծքով են սկսել ընթերցանությունը, որպես զավեշտ ու արհամարհանք իրենց ստիպողների նկատմամբ, որոնց համար անհասկանալի է եղել հայերենը: Լեզվական այս յուրօրինակ «ծածկաբանությունը»

տարածված երևույթ է բանավոր ավանդության մեջ, հատկապես էքնիկական հակադրությունների դեպքում:

Աղոթքի մի քանի բառեր ու արտահայտություններ անհասկանալի են եղել անգամ բանահավաքին, որը դրանց կողքին հարցականով դրել է իր ենթադրած իմաստները. յիսուս (ուսիս ?), աջքն ու բազնիս (աջն ու բազկիս ?), բերդս ու բարիս (բերնիս ու սնարիս ?) իէոչ մեկն էլան կախադնորիս (ոչ մեկն էլան ... ??), իսկ կախադնորիս բառի համար նույնիսկ ենթադրելի իմաստ չի գտել:

Բացառությամբ բերդս ու բարիս կապակցությունից, բանահավաքի մյուս հավանական բացատրություններն ընդունելի են: Բերդս ու բարիս ըստ երևույթին «բերդ ու պարիսպ» բառակապակցությունն է, որ վերագրվել է սուրբ խաչերին (հմմտ. № 275 աղոթքի Հիսուս՝ բերդ, Քրիստոս՝ պարիսպ զուգահեռման արտահայտությունը):

Անհասկանալի է մնում **կախադնորիս** բառը, որը գուցե թե «կախարդել» բառի աղավաղումն է: Նման նշանակությունը մասամբ արդարացվում է աղոթքի համատեքստի ընդհանուր իմաստով: Պաշտպան սրբությունների թվարկմանը հաջորդող «ոչ մեկն էլան (իմա՝ չար ոգիները) կախարդելու գիս», այսինքն՝ այդքան պաշտպաններից հետո ոչ ոք չհամարձակվեց ինձ կախարդել (չար իմաստով):

Աղոթքը բաղադրված է երեք տարբեր աղոթքների հարակցումից. առաջին հնգտողյա հատվածը սույն աղոթաշարին բնորոշ տարբերակ է (տե՛ս նախորդ և հաջորդ աղոթքները), երկրորդը «Ելեք տեսեք ով կգա» սկզբնատողով երեք ծիավորների տարածված մոտիվով աղոթքն է՝ տարբեր առիթներով ասվող, և երրորդը սույն աղոթաշարին և «գլուխս դրի բարձին» սկզբնատողով հաջորդ տարբերակաշարին բնորոշ մոտիվների համադրմամբ ստեղծված աղոթք է՝ հոգու և մարմնի անվտանգության ապահովման ցանկությամբ (հմմտ. № 294-304 աղոթքները):

Տարբեր աղոթքների հարակցումից էլ առաջ է եկել սույն աղոթքի երկվական բնույթը՝ հմայական (հմմտ. 13-15-րդ տողերը) և աղերսական:

Ահա ես մտա գերեզման տողով արտահայտված է ժողովրդական այն հավատալիքը, ըստ որի քունը ժամանակավոր մահ է գիտակցվել, իսկ անկողինը՝ գերեզման: Ուստի, ըստ աղոթքի, քնողը իր հոգին ու մարմինը երեկոյան ի պահ է հանձնում աստծուն ու հրեշտակներին, մինչև առավոտյան բարի լույսի ծագումը:

Այս հավատալիքային մոտիվներն առավել մանրամասնորեն են դրսևորված քնի հաջորդ աղոթքներում (տե՛ս № 283ա, բ):

280. Խորագրված է «Աղոթք երեկոյան»:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Բնույթով հմայական աղոթք է՝ բանադրական բանաձևումներով:

Իմ բոլորս ցագի փուշով պատին, այսինքն՝ աղոթողի շուրջը ցանկապատի փշով պատել, ցանկապատել և նրան դարձնել ապահով ու անվտանգ: Փուշն իր ծակող, խոցող հատկանիշի պատճառով, ըստ ժողովրդական հավատալիքի՝ ունի չարահալած հատկություն և գիտակցվել է չարից պահպանվելու, ապահովվելու հմայական միջոց:

Հիսուս Նազովրեցի, չար հրեաց թագավոր, նկատի են առնված ավետարաններում քանիցս հիշատակվող Քրիստոսի Դավիթ թագավորի տոհմից սերվելու, երկրպագող մոգերից, Պիղատոս Պոնտացուց, դատապարտող քահանայապետե-

րից ու ամբոխից նրան լուրջ կամ ծաղրանքով տրվող «արքայ Հրէից» կամ «թագաւոր Հրէից» տիտղոսները:

281. Խորագրված է «Քնելու աղոթք»:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Աղոթքի հիմնական նպատակը չար սատանաների խաբկանքից պաշտպանվելն է՝ արտահայտված վերջին երկտողում, որ բանավոր ավանդության մեջ կոչվում է սատանախաբություն (իմա՝ գիշերախաբություն, երազախաբություն): Ըստ ժողովրդական հավատալիքի՝ չար ոգիները (սատանաներ) կանացի կերպարանքով երազներում այցելում են մարդկանց, կենակցում նրանց հետ և անգամ զավակ ունենում: Այդ հավատալիքը վկայված է տակավին 5-րդ դարից՝ Եզնիկի մոտ [Ի]: Ուստի տարփալից երազները համարվել են գիշերային չար ոգիների ներգործության արդյունք, գիտակցվել են մեծ մեղք, որի դեմ էլ ուղղված է աղոթքը [տե՛ս **Աբեղյան 1975,** 35-36]:

282. Խորագիր չունի: Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի արշավախմբի կողմից:

283ա. Խորագրված է «Անկողին մտնելիս»:

Այս և հաջորդ տարբերակում (տե՛ս) առավել հստակ է արտահայտված քունը ժամանակավոր մահ, անկողինը՝ գերեզման, մարմինը՝ անկողնին, իսկ հոգին հոգեառ Գաբրիել հրեշտակին ժամանակավորապես ավանդելու ժողովրդական հավատալիքը:

Տե՛ս № 279 ծանոթագրությունը:

283բ. Խորագրված է «Քնելիս ասվող աղոթք»:

Տե՛ս №№ 279, 283ա ծանոթագրությունները:

Այս երկու տարբերակներն էլ աղերսական բնույթի քրիստոնեական աղոթքներ են, ժողովրդական հավատալիքների վրա ձևավորված:

284ա. Խորագիր չունի:

Աղերսական բնույթի քնելու աղոթք է:

284բ. Խորագրված է « Քնի աղոթք»:

Գրառված է 1938 թ., Վարդ Բդոյանի կողմից:

285. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, Ե. Լալայանի 1915-16 թթ. խմբարշավի նյութերից:

Ութ սյունը խորհրդանշում է անսասանության գաղափարը, տվյալ դեպքում՝ քրիստոնեական հավատի անսասանությունը որպես չար ոգիներից պաշտպանվելու միջոց, որ երևում է քրիստոնեական սրբությունների հետագա թվարկումից (խաչ, Ավետարան, Գաբրիելական փող, Աստվածածնի բուր):

Գաբրիելական փողը, ըստ քրիստոնեական վախճանաբանության՝ Աշխարհի

վախճանին և հոգիների վերջին դատաստանին Գաբրիել հրեշտակի կողմից մեռելների համընդհանուր հարությունն ավետելու երաժշտական գործիքն է:

Նույն վախճանաբանության գաղափարն է արտահայտված աղոթքի վերջին տողում *(Չուր Քրիստոս գա դատաստան)*, որով աղոթողը ցանկանում է հավիտենապես՝ մինչև հոգիների վերջին դատաստանը, իր հոգին անձեռնմխելի պահել չարի ներգործությունից:

286. Խորագիր չունի:

Գրառված է 1936 թ., Գառնիի ենթաշրջանի Քարփիչլի գյուղում, Վանի Անձակ գյուղի նախկին բնակիչ, 45-ամյա Ստեփանյան Նազոյից:

Բանահավաք՝ Գեղամ Թարվերդյան:

Մազտ ի պարիս ի տեղիս, հավանաբար՝ մազերդ պարիսպ լինեն անկողնիս (տեղիս) շուրջը, որ խնդրում է աղոթողը Աստվածածնին՝ իր անվտանգությունն ապահովելու նպատակով:

287. Խորագրված է «Օրոր»:

Վերնագրի տակ ծանուցված է. «Պզտիկը քնացուցած ատեն, թե չարը քնացնելու, թե տունը գողե պահելու համար»:

Գրառված է 1899 թ. փետրվարի 2-ին՝ Տարենտեում, բանահավաք՝ Մկրտիչ Ա. Թուրյան:

Քնի հմայական աղոթք է, որը ասվել է մոր կողմից երեխային քնեցնելիս իբրև օրորոցային: Միակ հավելումը աղոթքին՝ վերջին կրկնակ տողն է, բնորոշ օրորոցային երգերին:

Փաճան, հավանաբար **փանջարա** (պատուհան) բառի բարբառային սեղմ ձևն է:

288ա. Խորագրված է «Քնելիս»:

Բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ., Աշոցքի Ղազանչի գյուղում:

Բանահավաք՝ Վարդ Բդոյան, գրառված է 1947 թ., Ջավախքի Ուչմանա գյուղում:

Քսանուչորս տուն Ներսեսին, նկատի է առնվել Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» 24 բանաստեղծական տներից բաղկացած հանրահայտ աղոթքը, որ սովորաբար ասվում է երեկոյան՝ չարից պահպանվելու նպատակով:

Հռոմա սուրբ էկեղեցին աղոթքում վկայակոչված է որպես քրիստոնեական կարևոր սրբություն: Այն վկայում է աղոթքը կաթոլիկ հայերի միջավայրում տարածված լինելու մասին, մանավանդ որ թե՛ Ջավախքի Ուչմանա գյուղը և թե՛ բանասացի ծննդավայր Աշոցքի Ղազանչին բնակեցված են կաթոլիկ հայերով:

288բ. Խորագրված է «Երեկոյան աղոթք»: Գրառված է 40-ամյա Քուշկյան Սեդայից, 1970 թ.:

Տե՛ս № 288ա ծանոթագրությունը:

289. Խորագիր չունի:

Այս, ինչպես նաև քնելու աղոթքներում առհասարակ, հաճախադեպ են սուրբ անձանց փիլոնի և գավազանի մոտիվները, առաջինն իբրև ծածկելու, պատսպարե-

լու, երկրորդը՝ դուռը փակելու, գոցելու հմայական միջոցներ:

290. Խորագիր չունի:

Այստեղ քրիստոնեական եկեղեցու նշանավոր հայր **Հովհան Ոսկեբերանը** (տե՛ս № 146 իբ ծանոթագրությունը) դարձել է չարին կապող և կախարդող:

Կապքի հմայական ցանկությունն արտահայտվել է աղոթքի սկզբում (որ, սովորաբար, վերջում է դրվում) և նպատակը դարձրել անմիջական:

291. Խորագրված է ԷԱԺՋ «Երեկոյան աղոթք», ՀԱԲԱ «Հաոց պառավ կնկան աղոթք»:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Յոթ (փխն. չորս, տե՛ս № 292 աղոթքը) *գլուխ ավետարան, ութ գլուխ սաղմոսարան, տասներկու փոխ շարական,* - հայ քրիստոնեական եկեղեցու ժամասացության ծիսական կանոններից են, որոնք որպես քրիստոնեական սրբություններ հավասար են դասվել անձնավորված պահապան խաչին (= հրեշտակ) և Տիրամորը, որոնցից քնողը խնդրում է պահպանություն և հովանավորություն:

Աղոթքի 6-8 տողերը հմայական առանձին բանածև է՝ շան հարձակումից պահպանվելու ժամանակ ասվող (տե՛ս № 177գ, դ աղոթքը և ծանոթագրությունը):

Խերվան տընդառաջ, - հերվա (անցյալ տարվա) տեառնընդառաջի տոնը, որին պատվական խաչին զուգահեռ, իբրև սրբության դիմում է աղոթողը:

292. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, գրառված է 1936 թ.:

Բանասաց՝ Գասպարյան Ա.:

Հայտնի սրբերից բացի (ս. Սարգիս, ս. Գևորգ) թվարկվում են նաև Վասպուրականի տեղական սրբությունները (Շաղբաբ գյուղի Կարմիր ավետարան, Կենդանանից գյուղի քոշահան, Ջանիմանենց ավետարան), որոնք տեղացիների միջավայրում վայելել են արժանի հեղինակություն:

Կիրակմուտի հրեշտակի անվան հիշատակությունը վկայում է աղոթքի երեկոյան ասվելու մասին:

293. Խորագրված է «Իրկվան աղոթք»:

Սաղմոսների կանոնների և շարականների կարգի թվերը շփոթվել են, տե՛ս № 291 ծանոթագրությունը:

Ըստ բանահավաք Մ. Դանիելյանի ծանուցման՝ **Ատոր, Կատոր, Կաքնատոր,** Քրիստոսի խաչելության երեք բևեռների անուններն են, որոնցից, իբրև սրբություների, պահպանություն և օգնություն է խնդրում աղոթողը:

294. Խորագրված է «Դիարբեքիրցի կիներուն աղոթքը»:

Վերնագրի տակ ծանուցված է. «Գիշերները քնանալու ատեն կսեն»:

Քնելիս ասվող այս և հաջորդ աղոթքները գլուխը բարձին դնելու, հոգին աստծուն ավանդելու, անկողինը գերեզման համարելու մոտիվներով համախմբվում են քունը ժամանակավոր մահ ըմբռնելու հավատալիքի շուրջը, իր տարբեր մանրամասներով (տե՛ս 279 ծանոթագրությունը):

Ներկա աղոթքում քնողը հոգին աստծուն հանձնելուց հետո դիմում է բարի հրեշտակին՝ պահպանելու իր հոգին ու մարմինը, որպեսզի դրանք չենթարկվեն սատանայական գայթակղությանը՝ սատանախաբությանը (տե՛ս № 281 ծանոթագրությունը):

295. Խորագրված է «Քնելիս»:
Տե՛ս №№ 288ա և 294 ծանոթագրությունները:

296. Խորագրված է «Անկողին մտնելիս»:
Քանի որ քունը մահ է գիտակցվել, ուստի աղոթողը մտահոգված է հոգու փրկությամբ, քաջալերելով վերջինիս չվախենալ, քանզի այն ենթարկված է քրիստոնեական եկեղեցու կնքման ու օծման արարողություններին, հոգեպես մաքրագործված է և չարիքի ենթակա չէ:
Տե՛ս № 279 ծանոթագրությունը:

297. Խորագրված են ՋԲ «Քնից զարթնելիս», ՀԱԲԱ «Քուն մտնելու աղոթք»:
Վերատողատումը կազմողինն է:
Տե՛ս №№ 279 և 294 ծանոթագրությունները:
Վերջին երկտողում արտահայտված է քնողի այն մտահոգությունը, որ եթե քնելիս ինքը հանկարծ մահանա, ապա թող Աստվածածնի գրկում ավանդի հոգին, այսինքն՝ ապահովի իր հոգու փրկությունը: Այդ մտահոգության պատճառը հիմնավորված է: ՀԱԲԱ տարբերակի 2-րդ տողում՝ **անխոսել, անխոստովանել,** որ նշանակում է, թե ինքը քնելիս (= ժամանակավորապես մեռնելիս) չի ապահովել բարեպաշտ քրիստոնյային պարտադիր մահվանից առաջ մեղքերը խոստովանելու և թողություն հայցելու ծիսական խորհրդի կատարումը՝ հոգու փրկությունն ապահովելու նպատակով:

298. Խորագրված է «Գիշերվա աղոթք»:
Բանահավաք՝ Տիգրան Վարդանյան:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

299. Խորագրված են ԹՄԿ «Աղոթք», ԱՀ «Քնելիս ասվող աղոթք»:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:
Աղոթքի 2-4 տողերն սկսվում են **ան-** ժխտականով, որը հանգիտության հնչյունական կրկնություններով տարբեր տողեր ու բառեր միավորելուց բացի, իմաստաբանորեն ևս միավորում է քնի ու մահվան հետ կապված հավատալիքների իմաստային տարբերությունները (անխոսել, անխոստովանել, անմահ մեռնել, անգերեզման թաղվել):

300. Խորագրված է «Անկողին մտնելիս»:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:
Տարին կորթ-կորթը խաչեցին, նկատի է առնվել Քրիստոսին Գողգոթա լեռան վրա խաչելը: Կորթ-կորթը եթե Գողգոթա անվան աղավաղումը չէ, ապա կոշտ, խոպան, պինդ իմաստն ունի, որ նույնական է լեռան անվան, կոշտ ու անմշակ մակերեսին:

Աղոթողը խնդրում է Քրիստոսի խաչափայտից մասն ունենալ, իբրև սրբազան ու պահպանիչ մասունք, անդրաշխարհ գնալու համար:

Վերջին երկտողում երկու կանգուն շալով ու ամանաթով նկատի է առնվել մեռյալի պատանքն ու հոգին, վերջինս աստծոն ավանդ տալու (= հոգին ավանդել) իմաստով:

301. Խորագրված է «Քնելիս ասվող աղոթք»:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

302. Խորագրված է «Աղոթք քնելուց առաջ»:
Բանասաց՝ Անանիկյան Փառանձեմ, ծնվ. 1874թ.:
Բանահավաք՝ Մարիետա Մարաբյան, գրառման տարեթիվն անհայտ:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

303. Խորագրված է «Քնելու աղոթք»:
Գրառված է տարբեր տարիների, քույր ու եղբայրներ տարբեր բանասացներից, որոնց բանավոր աղբյուրը նույնն է եղել, իրենց մայրը: 1. Հարությունյան Անանիկ, ծնվ. 1909 թ., լսել է մորից՝ Հռիփսիմե Հարությունյանից (ծնվ. 1888 թ.), գրառված է 1969 թ. Երևանում: 2. Հարությունյան Սերվենիկ, ծնվ. 1912 թ., գրառված է 1977 թ. Լենինականում. 3. Հարությունյան Բարդուղիմեոս, ծնվ. 1906 թ., գրառված է 1993 թ. Երևանում: Երեք գրառումներն էլ նույնական են, առկա են միայն աննշան տարբերակումներ:

Միակ նշանակալից տարբերակումը նախավերջին տողում երկրորդ բանասացի կողմից «չեմ մտածի» փոխարեն ասված է «մտածեմ»:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

10-րդ տողից սույն աղոթքին է հարակցվել ճրագը մարելիս ասվող «Հանգավ ճրագ, անցավ չար» սկզբնատողով աղոթքը, զարգացած երդմնեցման բանաձևով և վախճանաբանական մոտիվներով: Վերջիններս, ըստ քրիստոնեական պատկերացման, չորսն են. մահ, հոգիների դատաստան և հոգիների վերջնական հանգրվանները՝ դժոխք և դրախտ: «Չեմ մտածի» բառերով աղոթողն, իբրև մեղավորի, իր զղջումն է արտահայտում կենդանության օրոք վախճանաբանական այդ չորս իրողությունների նկատմամբ անուշադիր լինելու համար:

304. Խորագրված է «Միայնակ քնողների աղոթք»:
Տողատումը կազմողինն է:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

305. Խորագրված է «Աղոթք գիշերը պառկելու ատեն»:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

306. Խորագրված է «Գիշերվան աղոթք»:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

307. Խորագիր չունի:
Տե՛ս №№ 279, 294, 297 ծանոթագրությունները:

308. Խորագիր չունի:
«Մայրիկ» կոչականով նկատի է առնվել Աստվածամայրը, քույրիկով՝ սրբուհիները, եղբայր հրեշտակով՝ պահապան հրեշտակը, որոնց իր հոգին ավանդ է հանձնում աղոթողը մինչև լուսաբաց, այսինքն՝ մինչև ժամանակավոր մահվան ավարտը (հմմտ. № 279 աղոթքի վերջին յոթտողյա հատվածը):

309ա. Խորագիր չունի:
Տ. Նավասարդյանի արխիվում դրված է «Երգեր» ընդհանուր խորագրի տակ:
Կազմված է տարբեր աղոթքների և կրոնական մոտիվների հարակցումով (հմմտ. լուսաբացի, ս. Սարգսի աղոթքների համապատասխան մոտիվները): «Երգնքի դռնիրը բաց է», «Առուտեհան ժամն է բարին» տողերը վկայում են սույն աղոթքի առավոտյան ասվելու մասին: Այսուհանդերձ, աղոթքը տիպաբանորեն հարում է հաջորդ 309բ տարբերակին և հաջորդող մյուս աղոթքներին, ուստի և դրվում է դրանց շարքում:
Հայրան Օսեփ,- նորկտակարանյան Հայր Հովսեփն է, Հիսուսի հայրն ու Մարիամի ամուսինը, որին դիմում է աղոթողը:

309բ. Խորագրված է «Աղոթք»:
Նկատի է առնվել Քրիստոսի խաչելությունը և Տիրամոր ողբը: Աղոթքի վերջին երեք տողերը յուրատեսակ ծանոթություն են աղոթքի կիրառման ժամանակի և նպատակի մասին: Այդ ծանուցման հիման վրա աղոթքը զետեղվում է երեկոյան աղոթքների շարքում:
Անթանիոս (№ 311՝ **Ընտանոս**),- սուրբ **Անտոնիոսն** է, տե՛ս № 1(159)զ, ծանոթագրությունը:

310. Խորագրված է «Աղոթք պառավական»:
Մարիամի տաճարում քնելու մոտիվը, որ հանդես է գալիս քնելիս ասվող այլ աղոթքներում ևս (տե՛ս № 316, 324, 336, 337բ., 349ա-ը), վկայում է նրա կիրառման ժամանակի մասին:

311. Խորագրված է «Հայ գեղջուկ մամի աղոթքը»:
Ընտանոս - տե՛ս № 309բ և № 1(159)զ ծանոթագրությունները:
Ալի, Վալի մուսուլմանական (այլադավան) անունները եթե Քրիստոսի մարմինը Պիղատոսից խնդրող, օծող և ժայռափոր գերեզմանում տեղադրող **Արիմաթացի Հովսեփի** մականվան աղավաղումը չեն, ապա, հավանաբար այլ զրույցներ են նկատի առնված:

312. Խորագրված է «Քնելիս»:
Գրառման վայրը, բանահավաքն ու բանասացը չեն նշված:
Աղոթքում դիմում է արվում Հայաստանում և լատինական աշխարհում գտնվող քրիստոնեական տարբեր սրբերի անուններով սրբավայրերին (հազարական, հազա-

րումեկ՝ տվյալ սրբավայրերի քանակն է նկատի առնված), խնդրելով՝ ըստ եկեղեցական ավանդության, նրանց գերեզմաններին իջած երկնային լույսի աստվածային զորությանն արժանացնեն նաև քնողի մարմինը, որպեսզի այն գիշերային խավարից ապահով մնա և կրկին վերակենդանանա (հմմտ. № 279 ծանոթագրությունը):

313. Խորագրված է «Գիշերվան աղոթք»:

Բանահավաք՝ Մ. Աղասյան:

Վերատողատումը կազմողինն է:

Եթե **սառա** և **մարթա** բառերը սառել և մարթել (հնարել, հայթայթել, գործի դնել, ճարել) բայերի կատարյալի ձևերը չեն (բնագրում տրված են փոքրատառերով), ապա, հավանաբար, աստվածաշնչյան **Սառա** և **Մարթա** անուններն են, որոնք ընծեռնվել են իբրև մայրության խորհրդանիշեր: Բոլոր դեպքերում խոսքը գնում է ընկնելու, մեռնելու (իմա՝ քնելու) և հաջորդ օրը վերածնվելու, վերակենդանանալու (մորից ծնվելու) հավատալիքային իրողություններին:

Տե՛ս № 279 ծանոթագրությունը:

314. Խորագրված է «Անկողին մտնելիս»:

Ապաշխարական բնույթի քրիստոնեական աղոթք՝ հիմնված քունը ժամանակավոր մահ ընծեռնելու ժողովրդական հավատալիքի վրա, որից էլ մահվանից առաջ աստծոց մեղքերի թողության և հովանավորության հայցումը:

Տե՛ս № 279 ծանոթագրությունը:

315. Խորագիր չունի:

Բնույթով քնելու աղոթք է և իր ապաշխարության, հոգու փրկության աղերսման մոտիվներով մերձենում է քնի նախորդ աղոթքներին:

316. Խորագիր չունեն:

Առաջին երկու աղբյուրների բանահավաքը Խաչ. Փորքշեյանն է: Տպագրում բանահավաք-հրատարակիչը հնչյունական որոշ բարբառայնացում է կատարել:

Հրատարակվում է ըստ արխիվային բնագրի:

Երրորդ աղբյուրի բանահավաքն է Հարություն դպիր Տեր-Հովհաննիսյան Սարոյանցը, գրառված է Սիմֆերոպոլում, 1881 թ.: Նրա տարբերակն ունի միայն 14-18 տողերը (մեկ տողի հավելումով), իբրև առանձին աղոթք:

16-րդ տողը վերատողատված է ըստ իմաստի:

Մարիամ Մաղթանի - աստվածաշնչյան Մարիամ Մագթաղինացին է:

Աղոթքի առաջին վիպական մասում, փոքր-ինչ մթագնած, խոսքը գնում է Հովհաննես Մկրտչի մկրտչական քարոզի, Քրիստոսի աստվածային առաքելության խորհրդանշանային տեսիլքի և իր սպանության ու թաղման մասին:

Վերջին հնգտողյա հատվածը, որ վերաբերում է Մարիամ Մագթաղինացու պառկելու, Քրիստոսի ու նրա 12 առաքյալների հովանավորության մոտիվներին, սերում է Մարիամի կողմից գիշերով Քրիստոսի գերեզմանի հսկման, Քրիստոսի հարության, իր աշակերտներին հղած պատգամի ավետարանական լեգենդից [տե՛ս **Յովհաննէս, Ի**] և վկայում է աղոթքը երեկոյան քնելիս ասվելու մասին:

317. Խորագիր չունի:
Բանահավաք՝ Գեղամ Թարվերդյան, գրառված է 1936թ.:

318. Խորագրված է «Աղոթք»:

Ուռնայու կալ. - Հին կտակարանի Ոռնյա Հեբուսացու կալը, որ գնում է Դավիթ թագավորը և այնտեղ ս.զոհասեղան կանգնեցնում: Հետագայում նրա որդի Սողոմոնը այդ սրբավայրն ավելի է ընդարձակում և այնտեղ կառուցում Երուսաղեմի հռչակավոր տաճարը [ԹԱԳ. երկրորդ, ԻԹ]: Հայ ավանդության մեջ այդ կալում է կատարվելու աշխարհի վախճանին մեռելների ընդհանուր հարությունն ու հոգիների վերջին դատաստանը:

Ըստ երևույթին քնելու աղոթք է, որով, ըստ հավատալիքի, քունը մահ է գիտակցվել և անդրաշխարհում հոգու երկար ճամփորդություն, երբ մեռնողը մտահոգված է իր հոգևոր պաշարի՝ արդարության, բարիքի, բարեգործության բացակայության համար, որը նրանից պահանջվելու է հոգիների վերջին դատաստանին:

319ա. Խորագիր չունի: Դրված է «Սրբոց երգեր» շարքում:
Տե՛ս № 319բ ծանոթագրությունը:

319բ. Խորագրված է «Անկողին մտնելիս»:

Բնույթով և բովանդակությամբ կրոնական վիպերգ է Երուսաղեմի տաճարի կառուցման, հարդարման և տաճարում քնած Քրիստոսի բաղձանքի՝ Երուսաղեմի տաճարի գմբեթին խաչ տեսնելու և տեղը դրախտական անմահության խնկենի բուսնելու մասին: Այլ կերպ ասած՝ խոսքը վերաբերում է հրեական տաճարը քրիստոնեական պաշտամունքատեղիի վերածելու ժողովրդի կրոնական ըմբռնմանը: Քրիստոսի գիշերը քնելու և երազելու մոտիվը, իբրև համեմատության եզր, համադրվել է քնողի վիճակի հետ, և կրոնական վիպերգը ըմբռնվել է սրբազան բնագիր, վերածվել քնելիս ասվող յուրակերպ աղոթքի:

319գ. Խորագիր չունի:
Բանահավաք՝ Նիկ. Նիկողոսյան, գրառված է 1940 թթ.:
Տե՛ս № 319բ ծանոթագրությունը:

Վերջին երկտողի «անարատ լույսի» և «մահվան բարուրի» մոտիվներում նկատի են առնվել Քրիստոսի ծննդյան մասին աստվածային ավետումն ու մանուկ Քրիստոսի՝ Տիրամորը մահվան բարուրով (իմա՝ զոհաբերման նշան) երևալու տեսիլը:

320. Խորագրված է «Անկողին մտնելիս»:

Բանահավաք Ե. Լալայանի ծանուցմամբ՝ գրի է առել «հարյուր քսան տարեկան պառավից»:

Սկզբնատողով թեպետ տարբեր է նախորդ և հաջորդ աղոթքներից, որ, ի դեպ, բնորոշ է միջնադարյան հայրեններին, (ես գիշեր դուս էլա) մոտիվով, սակայն նույնանում է նախորդ 319բ տարբերակին (տե՛ս ծանոթագրությունը): Աղոթքի երկրորդ մասը (5-8 տողեր)՝ ծիրանագույն երկնքի (արշալույս) տաճարում որդուն գրկած աղոթող Աստվածամոր պատկերը բնորոշ է լուսաբացի աղոթքներին (հմմտ. № 354 ա-ը), որ հարակցվել է սույն աղոթքի առաջին 4 տողերին:

321. Խորագիր չունի: Գրառված է 1960-ական թթ. սկզբներին, 55-ամյա հովիվ Ստեփանոս (Տեպուշ) Ղալաչյանից, որն այն սովորել էր Ջավախքի բնակիչներից:

Բանասացն այս աղոթքը ծննդկանի և այլ աղոթքների հետ միասին արտասանում էր իբրև մեկ ստեղծագործություն: Սա, ըստ էության, գիշերը քնելիս ասվող պահպանության աղոթք է:

322. Խորագիր չունի:

Բանահավաքը, բանասացն ու գրառման տարեթիվը չեն նշված:

Հորինված է երկու տարբեր ստեղծագործությունների և մոտիվների հարակցմամբ: Առաջին ութ տողերը № 319ա-գ աղոթքների տարբերակն է, սակայն այլ մոտիվների զուգակցումով: Երուսաղեմը, իբրև քրիստոնեական սրբության կենտրոն, մտովի նույնացել է համահայկական կրոնական կենտրոն էջմիածնի հետ՝ հռիփսիմյան երեք նշանավոր կույսերի (Շողակաթ, Հռիփսիմե, Գայանե) անուններով կառուցված վանքերով:

Հաջորդ տաս տողերը «Ութը մատով, երկու բթով» և «Ուսին, ուսին սուրբ կուսին» խառը սկզբնատողերով կապքի աղոթքների (հմմտ. №№184ա, բ, 211ա) հարակցում է՝ դրանց բնորոշ մոտիվներով:

Ելնելով աղոթքի սկզբնամասի նախորդ աղոթքի հետ ունեցած ընդհանրությունից՝ այն պայմանականորեն տեղադրվում է քնի աղոթքների կիրառական խմբում:

323ա. Խորագրված է «Աղոթք պառավաց»:

Աղոթքում ներկայացված է աշխարհի վախճանի և վերջին դատաստանի տեսարանը, երբ Քրիստոսը երկրորդ անգամ է աշխարհ գալու, հնչելու է մեռելների հարության ազդանշանը՝ Գաբրիել հրեշտակի փողը, որին հաջորդելու է մեղավորներին արդարներից զատումն ու դժոխքի հավիտենական տանջանքներին դատապարտումը: Դրանից հետո, ըստ քրիստոնեական կատարածաբանության՝ աշխարհում իշխելու է հավերժական արդարությունը, որն աղոթքում արտահայտված է արդարության ծառի ծաղկման խորհրդանշական պատկերով:

Սա ևս կրոնական բովանդակությամբ վիպերգ է՝ վերածված աղոթքի:

Տե՛ս № 318 ծանոթագրությունը:

Մոտիվներով աղոթքների այս տարբերակաշարին է հարում «Եկեղեցի» խորագրով հետևյալ կրոնական վիպերգը, որը զետեղված էր «Սրբոց երգեր» ընդհանուր խորագրի տակ.

Եկեղեցիս կարմիր կեցիս,
Քյարե տաճար կայնըցուցիս,
Չորս պյուլոր անկյուն քյարեր
Խաչով, խնգյով դրոշմիցիս:
Մեր Տերն էլավ ամպը խաղաց,
Էկավ նստավ աթոռ փառաց,
Աշակերտաց թամբեխ արաց,
Ուր խետ նստեն օրն փառաց:
Վով արդար էր՝ խույնգը խնգյաց,
Վով մեղավոր՝ դառնիկ իլաց,
Դառնիկ աղի արտասունքյով
Ուր չար մեղքեյր մեկեն լվաց:

[ՎՍԱ, 65/Վան]

323բ. Խորագիր չունի:

Տե՛ս № 323ա ծանոթագրությունը:

Նախորդի համեմատ, այս տարբերակում ավելացել է Տիրամոր աղոթքի նպատակի մոտիվը՝ բոլոր հայ քրիստոնյաների մեղքերի թողության և դրախտին (կաթնաղբյուրը ժողովրդական պատկերացումներում դրախտային անմահության աղբյուրն է, իսկ լույս տաճարը՝ դրախտն ինքը) արժանացնելու ցանկությունը, որով աղոթքը ձեռք է բերել ազգային փրկության հայրենասիրական երանգ:

323գ. Խորագիր չունի: Դրված է «Սրբոց երգեր» շարքում:

Տե՛ս № 323ա ծանոթագրությունը: Հմմտ. նաև №№ 319 և 324 աղոթքների վերջաբանը:

324. խորագրված է «Գիշերվան աղոթք»:

Սույն խորագրի պատճառով էլ «Մեր տերն եկավ ամպախաղաց» սկզբնատողով նախորդ և հետագա աղոթքները դրվում են գիշերվա (քնի) աղոթքների կիրառական խմբում, թեպետ նույն սկզբնատողով այլ աղոթքներ կիրառվել են նաև այլ նպատակներով (տե՛ս **աղոթքների սկզբնատողերի ցանկը**):

Աղոթքում, ըստ երևույթին, նկատի է առնվել Մարիամի անարատ հղացման և Քրիստոսին ծննդաբերելու մասին աստվածային ավետման ավետարանական լեգենդը, զարգացած որդու չարչարվելու և խաչվելու հետագա ճակատագրին վերաբերող երազային տեսիլով: Մոր տեսած զարհուրելի երազին աղոթքում հաջորդում է որդու՝ Քրիստոսի, մորն ուղղած մխիթարանքի խոսքը: Վերջին տողը հավանաբար աղոթողի ցանկության խոսքն է, որ բնագրում աղավաղվելով միացել է Քրիստոսի ուղղակի խոսքին:

325. Խորագիր չունի:

Գրառողը հավանաբար Արտաշես Բարսեղյանն է, գրառված է Ե. Լալայանի 1915-1916 թթ. կազմակերպած արշավախմբում:

Բնույթով հմայական կապքի աղոթք է՝ ուղղված չարին կալելու, կարկամեցնելու և վնասազերծելու նպատակին:

Տե՛ս № 324 ծանոթագրությունը:

326. Խորագրված է «Գիշերվան աղոթք - էկեսսե (եկեսցե)»:

Տողատումը կազմողինն է:

Տիպաբանորեն ժողովրդական աղերսական բնույթի աղոթք է, սկսվում է տերունական բանաձևով և ավարտվում «Հայր մերով» և խիստ մերձենում է կրոնական աղոթքներին: Ամբողջովին հագեցված է քրիստոնեական այլասիրությամբ և ժողովրդական անկեղծությամբ ու անմիջականությամբ: Աղոթքների այս տիպը հատկապես բնորոշ է լուսաբացի աղոթքներին (հմմտ. № 377, 390-395):

327. Խորագրված է «Երեկոյան աղոթք»:

Բանահավաքներ՝ Ս. Հարությունյան, Վ. Սահակյան, բանասաց՝ Մարտիրոսյան Ալմաստ, 90 տարեկան, գրառված է 1969 թ.:

Տողատումը կազմողինն է:

328ա. Խորագրված են ՀԱԲԱ, FFII: 1692, 03 «Պառկելիս», մնացած աղբյուրներում՝ «Օղջում»:

ՀԱԲԱ FFII:1692, 03 բանահավաքը Վ. Բդոյանն է, գրառված է 1946 թ., բանասացը չի նշված:

ՀԱԲԱ FFII մնացած երկու տարբերակների բանահավաքն է Վարդ Բդոյանը, բանասացը՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ., գրառված են 1947 թ.:

ՀԲՆ I, բանասաց՝ Հարությունյան Վարդանուշ, ծնվ. 1907 թ., գրառված է Երևանում, 1959 թ.:

ՀԲՆ II, բանասաց՝ Հարությունյան Սերվենիկ, ծնվ. 1912 թ., գրառված է Լենինականում, 1977 թ.:

ՀԲՆ III, բանասաց՝ Կարապետյան Քրիստինե Մկրտչի, 46 տարեկան, գրառված է 1970 թ.:

Բոլոր բանասացները կաթոլիկ հայեր են, որ վկայում է նրանց միջավայրում աղոթքի տարածման մասին:

Այս տարբերակախմբից սկսած, հաջորդ բոլոր քնելիս ասվող աղոթքներն ուղղված են Տիրամորը՝ Մարիամ Աստվածածնին:

328բ. Խորագրված է «Աղոթք աստծու»:

Բանասացի, բանահավաքի անունները, գրառման վայրն ու տարեթիվը չեն նշված:

Բանահավաքի ծանուցմամբ՝ վերջին տողը կրկնվում է երեք անգամ:

329ա. Խորագրված են ՀԲՆ I, II, III «Քնելու աղոթք», ՀԱԲԱ «Օղջում», ՋԲ «Քնից զարթնելիս», ԳԱԹ «Աստվածածին»:

ՀԲՆ I բանասաց՝ Հարությունյան Վարդանուշ, ծնվ. 1907 թ., գրառված է 1965 թ. Երևանում:

ՀԱԲԱ բանասաց՝ Լուսիկյան Հովսեփ, բանահավաք՝ Վ. Բդոյան, գրառված է 1946 թ.:

ՀԲՆ II բանասաց՝ Նիկողոսյան Վարդանուշ, ծնվ. 1905 թ., գրառված է 1980 թ.:

ՀԲՆ III բանասաց՝ Արիգյան Մարիամ, 60 տարեկան, գրառված է 1970 թ.:

ԳԱԹ բանահավաք՝ Լևոն Մաքսուտյան, գրառված է 1881 թ.:

Քրիստոնեական բովանդակությամբ գովաբանական աղոթք է՝ ուղղված Մարիամ Աստվածածնին, որը հանդես է գալիս հոգով ու մարմնով լուսեղեն, իբրև լույսի կամար, որով, ըստ երևույթին, նկատի է առնվել արշալույսին լուսացող երկնակամարը, մարմնավորված անարատ կույսի կերպարով (հմմտ. հնդկական Ուշաս՝ «արշալույս» կույսի հետ, տե՛ս նաև № 329 բ տարբերակը): Լուսեղեն Մարիամ կույսը աղոթքում իմաստություն պարգևող է և բարեգործության ու արդարության հովանավոր, հոգու փրկիչ:

329բ. Խորագրված է «Քնելու աղոթք»:

Քնելիս ասելու փաստն է վկայում աղոթքի վերջին երկտողը, ուր քունը գիտակցված է որպես մահ, անկողինը՝ գերեզման, վերմակը՝ հող:

Տե՛ս № 329ա ծանոթագրությունը:

329գ. Խորագրված է «Աստվածամոր աղոթք»:

Այս տարբերակում առավել է շեշտվել Աստվածամոր լուսեղեն կերպարի արդարության հատկանիշը և աղոթողի հոգին դրախտին արժանացնելու նրա գործառույթը:

Տե՛ս № 329ա ծանոթագրությունը:

330. Խորագրված է «Աստվածամար»:

ՀԱԲԱ, FBI բանահավաքն է Հարություն դպիր Տեր-Հովհաննիսյան Սարոյանց, գրառված է 1881 թ.:

ՀԱԲԱ, FBIII բանահավաքն է Խաչ. Փորքշեյանը, գրառված է 1961 թ.: Նույնը հրատարակված է **Փորքշեյան 1971**:

Տիրամայրն այս աղոթքում հանդես է գալիս քրիստոնեական բուն պատկերացման համաձայն, իբրև մեղավորներին բարեխոս և մարդկանց հոգին սրբազան մեռոնով օծող ու դրոշմող, ամենայն չարից ու փորձանքից զերծ պահող ծիսական դերով:

331. Խորագիր չունի:

Բանասացը, բանահավաքը, գրառման տարեթիվն ու վայրը չեն նշված:

332. Խորագիր չունի:

Բանահավաքներն են Արմենուհի և Հրաչյա Աճառյանները:

Տե՛ս № 330 ծանոթագրությունը:

333. Խորագիր չունի:

Գրառված է 1993 թ., Երևանում, Հարությունյան Բարդուղիմեոսից, 86 տարեկան. լսել է մանկության ժամանակ մորից՝ Հռիփսիմե Հարությունյանից: Ըստ բանասացի՝ աղոթքն ասվում է օրեկան 3 անգամ:

334. Խորագրված է «Աստվածածնի աղոթք»:

Աղոթքի առաջին ութ տողերը № 329ա, բ աղոթքի տարբերակն է, որը հաջորդ հինգ տողերում զարգացել է նոր մոտիվներով, կապված հանդերձյալ կյանքի հին ու նոր կրոնական պատկերացումների՝ դրախտի, Մազե կամուրջի և Քրիստոսի կողմից կատարվող վերջին դատաստանի հետ:

Տե՛ս № 329 ա, բ ծանոթագրությունները:

335. Խորագրված է «Աղոթք»:

Գրառված է 1983 թ. Լանջիկում, բանասաց՝ Մամիկոնյան Արաքսի, ծնվ. 1912 թ. Բաթումում, ապրել է Մաստարա գյուղում, հետագայում՝ Լանջիկում:

Բաղադրված է երեք տարբեր աղոթքների հատվածների հարակցումով (տե՛ս №№ 329ա, բ, 254ը, ժգ և այլուր):

336. Խորագրված է «Տիրամոր աղոթք»:

Բանահավաք՝ Տիգրան Վարդանյան:

Կազմված է երկու տարբեր աղոթքների հատվածների բաղարկումով (տե՛ս №№ 324, 328ա-բ, 329ա-գ):

Առաջին վեց տողերը, որոնք նշված համարներում անկախ աղոթքներ են, Տիրամորն ուղղված ողջույնով նման են կաթոլիկական եկեղեցում խիստ սիրված ու տարածված «Ողջույն քեզ, Մարիամ» տերունական աղոթքին:

Երկրորդ մասում, որ սկսվում է Տիրամոր քնելու և արթնանալու մոտիվներով, վիպական սեղմ ձևերի մեջ ներկայացված են Մարիամի տեսիլքի, անարատ հղացման, Բեթղեհեմում Քրիստոսի ծննդի, բարուրման, յուղով օծման, Հորդանանում մկրտվելու, ձերբակալվելու, չարչարվելու, խաչվելու, իր մահով մարդկությանը փրկելու, հարության ավետարանական մոտիվները, որոնք եզրափակվում են Քրիստոսի դժոխք իջնելու, այն ավերելու և Ադամին ու Եվային ազատելու քրիստոնեական կատարածաբանության դրվագներով:

337ա. Խորագիր չունի:

Սույն հնգտողյա աղոթքը որոշ փոխածևումներով հանդես է գալիս հաջորդ 337բ տարբերակում որպես աղոթքի առաջին մաս: Այստեղ Տիրամայրը որակված է իբրև չարահալած և չարից պահպանող սրբուհի:

337բ. Դրված է «Պառավաշունչ աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Բաղադրված է չորս տարբեր աղոթքների կամ կրոնական վիպերգերի վիպական հատվածների հարակցումով (հմմտ. №№ 328 ա, բ, 329 ա, գ, 334, 335, 336 աղոթքների համապատասխան մոտիվների հետ): Տե՛ս նաև № 337ա ծանոթագրությունը:

Այդ տարբեր մասերը կապակցված են «Մայյամ մար, Աստվածամար» տողով կամ «Մայյամ մար» անվամբ, որոնք յուրօրինակ կրկնակի դեր են կատարում և երիցս կրկնվելով՝ ստեղծել են աղոթքի թույլ ամբողջություն:

338ա. Խորագրված է «Աստվածամոր աղոթք»:
Տողատումը կազմողինն է:

338բ. Խորագրված է «Աստվածամոր աղոթք»:
Տողատումը կազմողինն է:

338գ. Խորագիր չունի:
Բանահավաքներ՝ Արմենուհի և Հրաչյա Աճառյաններ:

339. Խորագրված է «Պառավական աղոթք»:

340. Խորագրված է «Աստվածամոր աղոթք»:
Բանահավաքի ծանուցմամբ՝ «Սույն աղոթքը մանուկների համար է»:

341. Խորագիր չունի:
Երկու աղբյուրի բանահավաքը Խաչ.Փորքշեյանն է, գրառված է 1961 թ.:
Վերատողատումը կազմողինն է:

342. Խորագրված է «Գիշերվան աղոթք»:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Բաղադրված է Տիրամորն ուղղված աղոթքների ու կրոնական երգերի տարբեր մոտիվներից ու մասերից:

Առաջին եռատողը սույն տարբերակաշարի սկզբնամասերին բնորոշ, Տիրամորն ուղղված պաղատանքի բանաձև է (հմմտ. №№ 338ա-գ, 340): Հաջորդ քառատողը (4-7 տողեր), մեղավոր հոգու անդրաշխարհում երկար ու անհույս ճամփորդելու մոտիվներով, մերձենում է № 318 աղոթքի վերջին երկտողին (տե՛ս ծանոթագրությունը): 8-9 տողերը գրեթե նույնական են №№ 335, 337 բ աղոթքների ս. սեղանի մոտ Տիրամոր աղոթելու մոտիվներին, 10-12 տողերը՝ № 330 և մերձավոր տարբերակներում շարունակաբար կրկնվող Տիրամոր կուսության և լուսեղենության մոտիվներին, իսկ վերջին քառատողը՝ մեռոնով օծվելու և չարից փրկվելու մոտիվներով, մերձենում է № 330 աղոթքի վերջին երկտողին:

343. Խորագրված է «Աստվածածնի աղոթք»:

Տե՛ս № 342 ծանոթագրությունը:

344. Խորագրված է «Չար աչքի աղոթք»:

Վերջինս տարբեր աղոթքների հարակցում է, որից անջատվում են առաջին 22 տողերը, իբրև Աստվածամորն ուղղված մեկ ամբողջական թեմա ներկայացնող աղոթք, որն իր տիպաբանական հատկանիշներով և մոտիվներով հարում է սույն աղոթաշարին:

345. Խորագրված է «Երեկոյան աղոթք»:

Գրառված է 1970 թ., բանասաց՝ Արիգյան Մարիամ Հովսեփի, 60 տարեկան, լսել է պապից՝ Նիկոյան Հակոբից:

Բանասացի վկայությամբ՝ աղոթքն ասվում է երեկոյան, անկողին մտնելիս, ամեն չարից հեռու մնալու համար:

Այստեղ գերեզմանը, ըստ հավատալիքի, խորհրդանշում է անկողինը՝ քունն իբրև ժամանակավոր մահ ընդունման համաձայն:

346. Խորագրված է «Անկողին մտնելիս»:

Աղոթքն ունի աղաչական պահպանական բնույթ և դրսևորում է քունը՝ մահ, անկողինը՝ գերեզման, արթնացումը՝ հարություն դիտելու ժողովրդական հավատալիքը:

347ա. Խորագրված է «Աղոթք պառավական»:

Այս և հաջորդ երկու տարբերակներն իրենց հիմնական մոտիվներով արտացոլված են №№ 330 և 342 աղոթքներում, իբրև բաղադրիչ տարրեր: Դրանցում ամենուրեք շեշտված է հոգու մաքրագործման և փրկության գաղափարը, որ վկայում է դրանք երեկոյան քնելիս ասվելու (ժամանակավորապես մահանալիս հոգու փրկության մտահոգության) մասին:

Տե՛ս № 342 ծանոթագրությունը:

347բ. Խորագրված է «Աստվածամոր աղոթք»:

Աղոթքի քնելիս ասվելու վկայություններից են *«հող վզիս»* և *«հոգիս քնզի էլաներ (ավանդ)»* մոտիվները, որոնցով արտահայտվել է անկողինը՝ գերեզման, վերմակը՝ հող, քունը՝ մահ և հոգին ժամանակավորապես Տիրամորը ավանդ թողնելու հավատալիքը:

Տես № 347ա ծանոթագրությունը:

347գ. Խորագիր չունի:

Տես № 347ա ծանոթագրությունը:

348. Խորագրված է «Աղոթք ս. եկեղեցու մեջ»:

Տիրամորն ուղղված բարեխոսության ջերմեռանդ խնդրանք է, ուր նաև վկայակոչված են քրիստոնեական հավատում ու ծիսակարգում սրբագործված իրողությունները (ինը դաս հրեշտակ, Քրիստոսի լույս գերեզման, սուրբ պատարագ, անծանակ պսակ):

Աղոթքն, ըստ ծանուցման, ասվում է եկեղեցում: Պայմանականորեն այն զետեղվում է Աստվածամորն ուղղված երեկոյան աղոթաշարում:

349ա Խորագրված է «Գիշերվա աղոթք»:

Բանահավաքը, բանասացը, գրառման վայրն ու տարեթիվը չեն նշված:

Այսու սկսվում է Տիրամորն ուղղված քնելու աղոթքների մի տարբերակաշար, որը տիպաբանորեն ունի երկխոսական կառուցվածք, հետևյալ բովանդակությամբ. հարցում Աստվածածնին՝ նրա քնած, թե՞ արթուն լինելու մասին: Հետևում է պատասխանը իր տեսած զարհուրելի երազի և այնտեղ երևացած Քրիստոսի մկրտության, ծերբակալման, չարչարանքների, խաչելության մասին, որոնք եզրափակվում են, փոքր-ինչ աղավաղված ձևով, Քրիստոսի կողմից դժոխքի ավերման և կապված հոգիների արձակման կատարածաբանական մոտիվներով:

Սույն տարբերակը հիշյալ թեմայով կրոնական վիպերգ է, որ Տիրամոր քնելու և արթնանալու մոտիվի պատճառով կիրառվել է որպես քնելիս ասվող աղոթք:

Հայ բանավոր ավանդության մեջ կան համանման մոտիվներով կարճասույթ բանաձևեր՝ ուղղված Տիրամորը, որոնք երբեմն ընկալվում են որպես աղոթք, սակայն բուն իմաստով աղոթք չեն, այլ Տիրամորն ու Քրիստոսի չարչարանքներին վերաբերող վիպական չափածո ասույթներ: Դրանցից են.

ա. Աստվածածին,
ծոցովծածին,
Մանուկ օրթուն
Զարդարեցին:
[ՀԲՆ/Աշոցք-Ղազանչի]

բ. Ածին, ածին, Աստվածածին,
Մանուկ տղին զարդարեցին,
Մազա կամուրջն ինի անցուցին,
Չոքեցուցին, լացուցին:

գ. Ածին, ածին, Աստվածածին,
Վրեն խաչին բևեռեցին,
Տարին քավարան ցուցուցին,
Արքայության դրան բացին,
Դոգիս էնտեղ ավանդեցին
[ԵԱ, 58/Խոտրջուր]

Աղոթքի սույն երկխոսական տիպաբանական խմբի տարբերակները, տարբեր մոտիվների հարակցումով առկա են նաև №№ 324, 336, 337 աղոթքներում:

349բ. Խորագիր չունի:

Բանահավաքներ՝ Արմենուհի և Հրաչյա Աճառյաններ: Նախորդ տարբերակի համեմատ, 10-րդ տողից աղոթքն ընդլայնվել է ավետարանական նոր մոտիվներով՝ Քրիստոսին խաչի վրա լեղի ու քացախ խմեցնելու և մանավանդ երկնքի խավարման, երկրաշարժի, ժայռերի պատառման վկայություններով [տե՛ս հատկապես **Մատթեոս, ԻԷ,** 51, **Ղուկաս, ԻԳ,** 44-45]:

Տե՛ս № 349ա,գ ծանոթագրությունները:

349գ. Խորագրված է «Քրիստոսի և մոր խոսակցությունը»:

Բանահավաքը, բանասացը, գրառման վայրն ու տարեթիվը չեն նշված: Բարբառային տարրերը վկայում են, որ այն պատկանում է թիֆլիսահայ բանահյուսությանը: Աղոթքում, հակառակ մյուս տարբերակների, մոր փոխարեն հանդես է գալիս Քրիստոսը, որը երազում տեսնում է իր գալիք տառապանքները և մխիթարում մորը:

Աղոթքի վերջում ծանուցված է. «Ով այս օրը երեք անգամ կրկնե 12 տարի շարունակ, նա իր մեղքերից կարդարանա, վերջին դատաստանին չի քննվի»: Սա պարզաբանումն է աղոթքի վերջին եռատողի բնագրային յուրօրինակ ծանուցման, որը կցվելով վիպական բնագրերին (հաճախ զուրկ աղոթքին բնորոշ հատկանիշներից), որոշարկում է դրանց ժանրային պատկանելությունը և հիշեցնում դրանց աղոթք լինելը: Հմմտ. №№349բ,դ,ե,է, 309, 317, 324 աղոթքների վերջին եզրափակիչ տողերը:

Տե՛ս № 349ա ծանոթագրությունը:

349դ Խորագիր չունի:

Տիպով մերձենում է նախորդ տարբերակին. այստեղ ևս Քրիստոսն է պատմում իր չարչարանքների մասին:

Տե՛ս № 349ա,գ ծանոթագրությունները:

Թեմայով սույն աղոթաշարին է հարում հետևյալ կրոնական վիպերգը, դարձյալ նվիրված Քրիստոսի չարչարանքների ու խաչելության սոսկական նկարագրությանը, առանց երկխոսության: Այն ևս գիտակցվել և կատարվել է որպես աղոթք:

Աղոթում էր պարտեզին,
Սնդ բռնեցին .Յիսուսին,
Փուշ պսակ դրին գլոխ,
Բանծրացուցին Տեր խաչին,
Խաչի փայտով փայտեցին,
Իրեք բիբռով բիբռեցին.

Արտասվեցավ, տքնեցավ,
Լեղի քացխով հարբեցավ,
Գերեզմըններ բացվեցան.
Քան զմեռանել՝ ոչ մեղանչիմ:
[ՀԲՆ / Աշոցք- Ղազանչի]

Գրառված է Երևանում, 1993 թ.: Բանասաց՝ Հարությունյան Բարդուղիմեոս, 86 տարեկան, լսել է մանկության ժամանակ մորից՝ Հռիփսիմե Հարությունյանից:

349ե. Խորագրված է «Աղոթք»:

Բաղադրված է երկու տարբեր մասերի հարակցմամբ: Առաջին ութ տողերը սույն տարբերակախմբի փոփոխակ է, առանց երկխոսության՝ վերածված պատմողական նկարագրության:

Հաջորդ վեց տողերը վիպական անկախ հատված է, որը թեմայի նույնության (Տիրամոր սրբայնացած կերպարն ու որդու խաչելության պատճառով մազափետված արտաքինը) հիմքի վրա բաղարկվել է աղոթքի առաջին հատվածին և զգալի չափով միասնականացել:

Տե՛ս №№ 349 ա, գ ծանոթագրությունները:

349զ. Խորագրված է «Դիարբեքիրցի կիներուն աղոթքը»:

Հովհան Ոսկեբերանին ուղղված սկզբի քառատողում ներկայացված են Քրիստոսի գալստյան ու քարոզի մոտիվները, որոնք, իբրև նախապատճառ, ծուլվել են աղոթքի բուն տիպում պատմվող Քրիստոսի ձերբակալման, չարչարման, մահվան ու թաղման մոտիվներին: Մարիամի երազային տեսիլքին փոխարինել է այլոց կողմից նրան որդու մասին բուն ճշմարտության հայտնումն ու զգուշացումը:

Սա, մասամբ նաև նախորդ տարբերակները, Քրիստոսի կյանքի ավետարանական պատմության բանաստեղծական համառոտ վերապատումներ են՝ վերածված քնի աղոթքի:

Տե՛ս № 349 ա ծանոթագրությունը:

349է. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Հայկ Սողոմոնյան, գրառված է հավանաբար 1950-60-ական թթ.:

Ութուն - Հուդային (Ութա), Քրիստոսին մատնող աշակերտը:

Տե՛ս № 349 ա, գ ծանոթագրությունները:

349ը. Խորագիր չունի:

Այս տարբերակում իսպառ բացակայում է Մարիամի տեսած երազի նախորդ տարբերակների բովանդակությունը: Այն փոխարինված է կրակ ընկնելու և չվառվելու, ճահիճը ընկնելու և չընկղմվելու, անդրաշխարհ գնալու և չկորչելու մոտիվներով, որոնք վերագրված են Մարիամին: Մինչդեռ աղոթքի համատիպ տարբերակներում դրանք աղոթողի ցանկություններն են (հմմտ. № 349 գ, է տարբերակների վերջնամասերի հետ): Աղոթողի բաղձանքը նույնացել է Մարիամի տեսլին և այն վերածել աղոթողի հոգու փրկության նպատակն արտահայտող հոգեբանական զուգահեռական անդամի:

350. Խորագրված է «Դիարբեքիրցի կիներուն աղոթքը»:

Բաղադրված է երեք տարբեր ստեղծագործությունների հարակցումով:

Առաջին 12-տողյա հատվածը Աստվածածնի գովերգ է, նրա տարբեր հատկանիշների և արարքների թվարկումով (միակ, որդին գրկին, ամենահաս, ողորմած, արդար, ճարտար դատավոր, մաքուր):

Երկրորդ հատվածը (13-16 տողեր), թեպետ ունի գովաբանական մոտիվներ, սակայն էությամբ աղոթք է, ունի խնդրական, աղերսական բնույթ, որի տարբերակները կիրառվում են որպես անկախ աղոթք (հմմտ. №№330, 332):

Երրորդ հատվածը (17-23 տողեր), որ տաղաչափությամբ տարբերվում է նախորդներից, դարձյալ խնդրական, աղերսական բնույթ ունի, բուն էությամբ աղոթք է և գալիս է լրացնելու նախորդ աղոթքային հատվածում արտահայտված ցանկությունները:

Աղոթքում արտացոլված են ժողովրդաքրիստոնեական մի շարք հավատալիքներ, կապված թե՛ Տիրամոր, թե՛ հանդերձյալ կյանքի պատկերացումների հետ:

Աստվածամայրը հանդես է գալիս որդին գրկին, ինչպես քրիստոնեական պատկերագրության մեջ, բարի է, ողորմած, ամենուրեք հասնող: Նա մասնակցում է հոգիների դատաստանին, իբրև ճարտար դատավոր (հմմտ. լուսաբացի (առավոտյան) աղոթքները): Դատավարության լարված պահին նա կարող է անգամ պատռել դատավորի մեղքերի գրանցման մատյանը (դաֆթար, հմմտ. հոգեառ գրողի դավթարի հետ), այսինքն՝ ներում շնորհել մեղավորին, միաժամանակ խիստ արդար է և պահանջկոտ, դատվողից պահանջում է նրա ապաշխարության աղոթքները, իբրև փրկության գրավական: Անդրաշխարհում դրախտի ճանապարհն ու բակը (դուռ) պատկերացվում են կանաչ բուսականությամբ ծածկված, որտեղ մուտքի իրավունք ունեն միայն արդարները: Աղոթքում խնդրվում է Տիրամորից իրենց երկրային թերի իմացությունները փոխարինել երկնային-աստվածային իմացություններով և ըստ այդմ էլ իրենց հոգիները դժոխքի դռնից հեռու տանել, ցույց տալ դրախտի մուտքը և բարի խորհուրդներով օգնել նրանց և արժանացնել իր աստվածային գթասիրտ ողորմածությանը:

Տիրամոր գովքի և նրա գործառույթների հիշատակության առումով ուշագրավ է միջնադարյան ախտարական աղբյուրներում հանդիպող հետևյալ աղոթքը՝ վերնագրված «Գովեստ սուրբ Աստուածածնին՝ ազատիչ յամենայն չարէ, յամենայն փորձանաց»:

Ով ամենասրբուհի, պարծանք կուսութեամբ,
Երագ պայծառ, քան զարեգակն.
Ով ջահափայլուն, քան զլուսինն.
Ով աթոռ քերովբէից, բարձրագուն, քան զյերկինս.
Ով որովայնակրող մայր աստուածածնող,
Քև տւաւ փայտն անմահութեան,
Մի՛ մոռանար յուսացեալ ի քեզ,
Այլ պահեայ և ազատեայ յամենայն չարէ,
Ի ծանապարհէ, ի գողէ,
Ի սրէ, ի բրէ, ի գազանէ,
Ի կարկտէ, ի կայծակէ,
Ի չար հրեշտակէ,
Ի չարեաց դիւէ և ի մարդոց անիրաւէ,

Երևելեաց և աներևութից, ամէն:
Լեր օգնական ծառայիս Աստուծոյ:
[Մատենադարան, Հմայիլ № 19]

Տողատումը կազմողինն է:

Այս աղոթքում Տիրամայրը գովաբանվում է եկեղեցական բարձրաոճ դարձվածներով և, միաժամանակ, կոնկրետ թվարկումներով հանդես է գալիս որպես ամեն տեսակ չարից, չարիքից ու փորձանքից մարդկանց ազատարար:Ժողովրդական աղոթքների հետ համեմատած՝ այստեղ Աստվածածնից սպասվող ակնկալիքները աշխարհիկ-իրատեսական են, մինչդեռ ժողովրդականների մեծ մասում՝ հոգևոր, կրոնական: Սա, հավանաբար, պայմանավորված է ախտարային աղոթքների հմայական գործնական բնույթով և դրանց ոճաբանական կաղապարներով:

351. Խորագրված է «Երեկոյան աղոթք»:

Գրառված է 1973 թ., բանասաց՝ Անդրեասյան Մարիամ Ավետիսի, ծնված 1891 թ., Բասենի Իզվերան գյուղում:

Աղոթքում անձնավորված են Բարի իրիկունը, Բարի կիրակմուտը և Բարի Հիշտեքը, որոնք ժողովրդական հավատալիքներում հանդես են գալիս որպես բարի ոգիներ, հատկապես ծննդկաններին օգնող:

Հիշտեք - հավանորեն «հիշատակ» բառի հապավումն է և վերաբերում է նախնիների հիշատակին [տե՛ս **Աբեղյան 1975,** 97-98]:

Աղոթքում անդրադարձվել են երկնքի ժողովրդական պատկերացումները՝ մերթ իբրև կապուտ գոլավոր, այսինքն՝ կապույտ լիճ ունեցող (հմմտ. երկնային ծով պատկերացման հետ), մերթ կապուտ չադրավոր՝ կապույտ վրանավոր, վրան, որն անսյուն ու անգերան կանգնած է մարդկանց գլխավերևում (այս պատկերացումն առկա է նաև հանելուկներում, հմմտ. երկնքի մասին ասվող հանելուկները) [**Հարությունյան 1965,** № 1գ, դ]:

352. Խորագրված է «Քնելու աղոթք»:

Գրառված է 1970 թ., բանասաց՝ Ջնդոյան Գրիգոր Ստեփանի, 47 տարեկան:

Սա, ըստ երևույթին, կանոնիկ աղոթք է կամ աղոթքի հատված:

Բ. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 353 - 5 (400))

353. ԹՄԿ, ՀԱԲԱ, FFIII խորագիր չունեն, ՀԲՆ խորագրված է «Առավոտյան աղոթք»: Վերջինս գրառված է 1973 թ., բանասաց՝ Անդրեասյան Մարիամ Ավետիսի, ծնված 1891 թ., Բասենի Իզվերան գյուղում:

ԹՄԿ և ՀԱԲԱ, FFVI զետեղված են մանկական երգերի և խաղերի բաժնում: Առաջին վեց տողերը բանավոր ավանդության մեջ երբեմն հանդես են գալիս իբրև անկախ մանկական երգ [հմմտ. **Գրիգորյան 1970,** №732]: Աղոթքն, ըստ այդմ, ասվել է մանուկների միջավայրում և արտացոլում է հոգիների դատաստանի հնագույն պատկերացումներ: Լուսաբացը դիտված է իբրև երկնային դարպասների բացում: Դարպասների առջև ոսկե գահույքին բազմած է Քրիստոսը, կողքին, ոսկե գրիչը ձեռ-

քին կանգնած է Գրիգոր Լուսավորիչը, իսկ մեծ ու փոքր գրագիրները հավաճաբար արձանագրում են մեղավոր և արդար հոգիների դատման վճիռը, որն արձակում է Քրիստոսը: Սա հոգիների ամենօրյա դատաստանի պատկերն է, որ կատարվում է յուրաքանչյուր լուսաբացի, նախորդ օրվա ընթացքում մեռածների հոգիների նկատմամբ: Հավատալիքը հին է, նախաքրիստոնեական, առկա է նաև իրանական ավանդության մեջ, ուր արևելքում, երկնային դարպասների մոտ արևային Միթրայի և Ռաշն Արդարի կողմից կատարվում է հոգիների դատաստանը:

Հայոց մեջ, քրիստոնեության ազդեցությամբ Միթրային փոխարինել է Քրիստոսը, Ռաշն Արդարին՝ Գրիգոր Լուսավորիչը [հմմտ. **Աբեղյան 1975,** 24-25]:

Հոգիների դատաստանի այս պատկերացումն առկա է նաև հետևյալ ժողովրդական կրոնական երգում.

Ճյուղն ի ծառին ծուռ մարդերաց,
Ազատավոր քեզ այս պարին.
Երկնքի դուռը բացած է,
Ոսկե աթոռ թալած է,
Քյրիստոս վերեն նստած է,
Ոսկի կալամ բռնած է՝
Հրմեն մարդոց մեղքն կ'գրե:
Արդարներաց կուտա աջակողմյան փառքն ու պատիվ,
Դռան պանլիս արքավութքին.
Երթան էնտեղ ուրախ էլենեն,
Փառք պատիվ տան Աստըծուն,
Վայելեն երկնից անվերջ երանություն:
Մեղավորացն է չարչարանք,
Դառնիկ հացը ու խղճմտանք.
Դժոխոց հուրն կրակին,
Պիտի մաշի ինոնց խոգիյն:

[ՎՍԱ, 78 / Վան]

354ա. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Գրառված է Լենինականում, 1977 թ., Աշոցքի Քոռաղբյուր գյուղի նախկին բնակիչ Հովսեփյան Մարգարիտից, որը մանկության ժամանակ լսել և սովորել է հայրենի գյուղի ասացողներից:

Աղոթքի վիպական հիմքն է կազմում, ըստ երևույթին, խորհրդավոր ընթրիքի ժամանակ Քրիստոսի այն հայտնությունը, թե իր աշակերտներից մեկը մատնելու է իրեն, որը շփոթ է առաջացնում աշակերտների մեջ:

Ավետարանական այս հանրահայտ միջադեպը բաղարկվել է լուսաբացին կատարվող հոգիների դատաստանի հին հավատալիքին՝ մեղավորների դատավարման և արդարների ուրախության մոտիվներով:

Տե՛ս № 353 ծանոթագրությունը:

354բ. Խորագրված է «Դուռը բանալիս»:

Բանահավաք՝ Վարդ Բդոյան, բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ., գրառված է 1947 թ.:

Աղոթքի այս և հաջորդ տարբերակներում երկնային արքայության դռների բացման (իմա՝ լուսաբացի) ժամանակ Քրիստոսին փոխարինում է մայրը՝ սուրբ կույս

Մարիամը, որը հին հավատալիքներով արշալույսի լուսեղեն մարմնավորումն է, նման հին հնդկական Ուշասին (= արշալույս), որ պատկերացվել է որպես անբիծ մարմնով երիտասարդ կույս (հմմտ. հայ. *սուրբ կույս անարատ* պատկերացման հետ). Տե՛ս քննելիս ասվող № 329ա աղոթքն ու ծանոթագրությունը:

354գ. Խորագրված է «Աղոթք արշալույսին»:

Տե՛ս № 354բ ծանոթագրությունը:

Այս տարբերակում արշալույսը մարմնավորող Մարիամ կույսն ամբողջապես ըմբռնված է քրիստոնեաբար: Նա նստած է երկնային սուրբ տաճարում ս. սեղանի մոտ և աստվածային խոսքերը բերանին՝ ջերմեռանդ աղոթում է: Այստեղ արտացոլված է երկինքը լուսեղեն տաճարի տեսքով ժողովրդական հին պատկերացումը [հմմտ. **Աբեղյան 1975**, 29]:

354դ. Փորքշեյան խորագիր չունի, ՀԱԲԱ խորագրված է «Աղոթք լուսու»:

ՀԱԲԱ բանահավաքն է Հարություն դպիր Տեր-Հովհաննիսյան Սարոյանցը, գրառված է 1881թ. Սիմֆերոպոլում:

Տե՛ս № 354բ, գ ծանոթագրությունները:

Վերջին երկտողը աղոթքի նպատակը բացահայտող յուրօրինակ ծանոթագրություն է՝ տաղաչափական կշռույթով հարակցված ու մերված աղոթքի բնագրին: Նման ծանոթագրություններ առկա են նաև այլ աղոթքներում:

354ե. ԳԱԹ խորագրված է «Աստապատցոց առավոտյան աղոթք», ՀԱԲԱ «Առավոտյան աղոթք»:

• ԳԱԹ բանահավաքն է Մ. Աբեղյանը, գրառված է 1882թ. օգոստոսի 13-ին: ՀԱԲԱ բանահավաքը չի նշված, գրառված է 1890 թ.:

Տե՛ս № 354բ, գ, դ ծանոթագրությունները:

354զ. Խորագրված է «Աղոթք»:

Բանահավաք՝ Երվանդ Պեզազյան:

Տե՛ս № 354 բ, գ, դ ծանոթագրությունները:

Աղոթքի վերջից հավելվել են հետևյալ 5 տողերը, որոնք Տիրամորն ուղղված երեկոյան տարբեր աղոթքների մոտիվներ են (հմմտ. № 329ա և հտն.).

Տուր ընծի իմացութեն,
Երթամ կոծեմ բարութեն,
Տաս ընծի առքաւութեն:
Կապեր ես լուսեղեն կամար,
Հոգիս պահեր եմ քեզի համար:

354է. Խորագրված է «Քնից զարթնելիս»:

Տե՛ս № 354 բ, գ ծանոթագրությունները:

Աղոթքի 3-4-րդ տողերը նույն սկզբնատողերով հանրահայտ աղոթքներից են ներթափանցվել՝ Մարիամ Աստվածածնին առնչված լինելու պատճառով:

354ը. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Հ. Գեղամյան:

Տե՛ս №№ 354 բ, գ ծանոթագրությունները:

Աղոթքի վերջից հարակցված էր ծննդկանի հանրահայտ աղոթքի հետևյալ հինգտողյա հատվածը.

Թաժա հացի հոտ եկավ,
Ելլինք աշինք ո՞վ եկավ.
Երեք պոզ ծիավոր եկավ.
Մեկն էր Հիսուս, մեկը՝ Քրիստոս,
Մյուսը՝ սուրբ Աստվածածին:

Աղոթքի վերջին երկտողում արշալույսը խորհրդանշող Մարիամի աղոթքին հաջորդում է երկնային տաճարի դռները բացվելու և երկու կերոնների վառվելու պատկերը, որն, անշուշտ, դիցաբանական իմաստ ունի և ներկայացնում է լուսաբացն ու արևածագը:

355. Խորագրված է «Աղոթք՝ քնից զարթնելիս»:

Տե՛ս № 354բ, գ ծանոթագրությունները:

Սույն աղոթքում երևան է գալիս նաև երկնքի մեկ այլ առասպելական պատկերացումը՝ հրեղեն ծով, որով ներկայացվում է արշալույսին շառագունած երկինքը (հմմտ. *ծիրանի ծով* նույնիմաստ պատկերացման հետ), որն իր ուսերին է կրում արշալույսն աննձնավորող Մարիամը: Նույն մտածողության արտահայտություն է նաև «լուս տաճարն» (= երկինք) ու Տիրամոր մարմնի ծիրանագույն երանգը *(ծիծն ու էրեսը վարդ ծիրանի):* Այս հնագույն պատկերացումներին զուգահեռ Տիրամայրը հանդես է գալիս իր բուն քրիստոնեական գործառույթով, իբրև բարեխոս խաչված որդու (=աստծո) առաջ՝ հանուն մարդկանց հոգևոր և մարմնական փրկության:

356. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Գրառված է 1972 թ., բանասաց՝ Քոչարյան Լևոն Ստեփանի, 75 տարեկան, ծնվել է Բասենի Թոդեվերան գյուղում, լսել է հոր տատից՝ Աչո մամից:

Սույն աղոթքին կից, իբրև շարունակություն, ասվում է նաև «.Յելեք տեսեք՝ ո՞վ կգա» սկզբնատողով ծննդկանի աղոթքը, որն անջատված և զետեղված է հիշյալ բաժնի աղոթքների շարքում:

Վերջին երկտողում, համեմատած համանման մոտիվների հետ, կատարվել է Տիրամոր և աղոթողի գործառույթների փոխատեղում և աղավաղում:

Այս աղոթքում ևս դրսևորվել է երկնքի *ծիրանի ծով* հին առասպելաբանական պատկերացումը:

Տե՛ս № 354 բ, գ ծանոթագրությունները:

357. Խորագիր չունի:

Լուսաբացի աղոթքի ավանդական մասին հարակցվել են Հովսեփի և Մարիամի ավետման, Քրիստոսի ծննդյան և մկրտության ավետարանական մոտիվները, որոնք հանդես են գալիս Տիրամորն ուղղված երեկոյան աղոթքներում (տե՛ս № 328ա, բ) և

այլ ծիսերգերում ևս: Մասամբ աղճատված է աղոթքի 5-րդ տողը՝ «Օրեն իրեք տարվա գիշեր»: Խոսքը վերաբերում է աղոթքը ասվելու պարբերությանը (հմմտ. սույն աղոթաշարի համանմանա իմաստներ արտահայտող «Վեվ օր իրեք պերան աղոթք կենե», «Ով որ հիշեց երեք բերան», «Վով որ ասե իրեք պերան» տողերի հետ):

Օրեն բուն իմաստով նշանակում է «օրական», բայց, այստեղ այն, հավանաբար, երկու տարբեր՝ անձնական և ցուցական դերանունների *որ* (բրբռ. *ով) էն* միացումն է:

Գիշեր ոչ թե գիշերն է, այլ հիշել բայի պայմանական եղանակածևը՝ *գը հիշեր*, h-ի սղումով (հմմտ. հաջորդ տողի «Մեղքը չհիշվեր» ժխտական ձևի հետ): Տարվա բառն այս համատեքստում տարի բառի սեռականը չէ, որ անհմաստ կլիներ, այլ տաբրա բառն է՝ «անգամ» նշանակությամբ (տե՛ս № 420 ծանոթագրությունը), որ հանդիպում է Կեսարիայի բարբառում: Բոլոր դեպքերում այդ աղճատված տողը հաջորդ տողի հետ հետևյալ իմաստն ունի. որ [ով] էն [աղոթքը] երեք անգամ կհիշի, [նրա] մեղքը չի հիշվի դատաստանին:

Սուրբ Օհանը ավետարանյան Հովհաննես Մկրտիչն է, որի մակդիրներից մեկն է *կարապետ* և հայ ավանդության մեջ նա առավել սիրված ու տարածված է հենց այդ անունով՝ սուրբ Կարապետ:

Այս անվան հիշատակության պատճառով սույն աղոթքի վերջից հարակցվել էին Մշո Սուրբ Կարապետի վանքին ու հենց իրեն՝ սրբին նվիրված հանրահայտ երգի հետևյալ երեք տողերը.

Սուրբ Կարապետ բանցր տեղ է,
Չորս բոլորը սար ու ճեղ է,
Մշու սուլթան սուրբ Կարապետ:

358. Խորագիր չունի:

Տե՛ս №№354բ, գ, դ ծանոթագրությունները:

Աղոթքին ներծուլված վերջին վեցտողյա հատվածը, որ յուրօրինակ ծանոթագրության արժեք ունի, ձեռք է բերել հմայական բանադրանքի իմաստ և լուսաբացի աղոթքը վերածել է ջրից, հրից, վերջին դատաստանի մեղադրանքներից փրկելու, պահպանելու միջոցի:

359. Խորագրված է «Դիարբեքիրցի կիներուն աղոթքը»:

Այստեղ դարձյալ շեշտված է աստծո (Քրիստոսի) առաջ Տիրամոր բարեխոս լինելու գործառույթը, որ խտացված է ուղղակի խոսքով դրված եզրափակիչ քառյակում:

Հմմտ. № 356 աղոթքը և ծանոթագրությունը:

360. Խորագիր չունի:

Աղոթքի երրորդ տողն անդրադարձնում է արշալույսին շառագունած երկնքի հին ավանդական պատկերացումը՝ իբրև *ծիրանագույն ծովի*, որի հնագույն վկայությունն առկա է Վահագնի երգում *(երկներ և ծովն ծիրանի)*, հմմտ. № 355 աղոթքի հրեղեն ծովի հետ:

Աղոթքում արտահայտված է Տիրամոր մտահոգությունը ննջեցյալների հոգու փրկության համար, որ դարձյալ վկայում է լուսաբացը հոգիների ամենօրյա դատաս-

տան նկատելու հին հավատալիքը:

361. Խորագիր չունի:

Բաղադրված է երկու տարբեր՝ լուսաբացին կատարվող երկնային պատարագի և Մարիամի քնելու և զարհուրելի երազ տեսնելու մոտիվների հարակցումով և վերամշակումով: Մարիամի տեսած երազը՝ արյան և լուսեղեն փշե պսակի մոտիվներով, աղոթքում դարձել է նկարագրվող պատարագի իմաստային մեկնաբանությունը, իբրև Քրիստոսի չարչարանքին և զոհաբերմանը նվիրված սրբազան արարողության:

362. Խորագիր չունի: Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, գրառված է 1936 թ. Գառնիում, 55-ամյա Թորոսյան Նախշունից, ծագումով արևմտահայ՝ ականցի:

Ընդգծված է Քրիստոսի լույսի կենդանի անձնավորումը *(Քրիստոս՝ լուս կենդանին)* և Տիրամոր բարեգթությունը, սիրո և խաղաղության ցանկությունը ամբողջ աշխարհի մարդկության նկատմամբ:

363. Խորագիր չունի, դրված է «Աղոթքներ» շարքում:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան:

364. Խորագրված է «Աղոթք արշալույսին»:

Բնագիրը փոքր-ինչ խաթարված է: **Տեր Ներսեսը** հավանաբար հայոց Ներսես Մեծ կաթողիկոսն է, իր պապ Գրիգոր Լուսավորչից հետո հայոց մեջ քրիստոնեական հավատքի մեծագույն նախանձախնդիրը, որ աղոթքում արտահայտված է Քրիստոսի փիլոնը հագնելու խորհրդանշանային պատկերով: Աղոթողի միակ նպատակը մահվանից հետո իր հոգու փրկության հույսն է, արտահայտված աղոթքի 2-րդ տողի իր մեռնելու և վերջին տողի՝ Քրիստոսի կողմից վերջին դատաստանին իր մեղքերը չհիշելու մոտիվներում:

365. Խորագրված է «Լուսաբացի աղոթք»:

366. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Բանահավաք՝ Նիկ. Նիկողոսյան: Աղոթքին կցված նրա ծանուցմամբ՝ «Աղոթքները սկսում են «Հայր մեր»-ով և նրանով էլ վերջացնում են»:

Աղոթքը բաղադրված է տարբեր աղոթքների մոտիվների հարակցումով: Այստեղ փոխված են աղոթքների նախորդ խմբին բնորոշ տիպաբանական սկզբնատողերը, բայց բովանդակությամբ այն դեռևս կապված է այդ խմբի աղոթքներին (հմմտ. №№ 354 է, ը, 355 աղոթքները):

367. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Սույնով սկսվում է առավոտյան աղոթքների տիպաբանական նոր տարբերակաշար՝ սկզբնատողերի նոր բանաձևումներով, հավատալիքներով և մոտիվներով:

368ա. Խորագրված է «Քնից արթնանալիս»:

Այստեղ լույսն ու լուսաբացը դիտված են իբրև դրախտի դռների (իմա՝ երկնա-

յին դարպասների) բացում և դժոխքի (իմա՝ գիշերային խավարի) դռների ավերում: Հոգին արձակվում է գիշերային խավարի, այն է՝ մահվան կապանքներից (հմմտ. քունը ժամանակավոր մահ դիտելու հավատալիքը երեկոյան աղոթքներում) և արժանանում աստվածային (Հիսուսի) ողորմածության: Աղոթքի հիմքում ընկած է լույսի և խավարի հակադիր ըմբռնման հին հավատալիքը՝ իր տարբեր դրսևորումներով (կյանք / մահ, դրախտ / դժոխք, արդար / մեղավոր):

368բ. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, բանասաց՝ Ստեփանյան Նազո, գաղթած Վանի շրջանի Անձակ գյուղից: Գրառված է 1936 թ., Գառնիի շրջանի Քարփչլի գյուղում:

Տե՛ս № 368ա ծանոթագրությունը:

368գ. Խորագրված է «Քնից զարթնելիս ասվող աղոթք»:

Տե՛ս № 368ա ծանոթագրությունը:

Աղոթքի այս ընդլայնված տարբերակում արդարների ուրախության և մեղավորների լացի և Քրիստոսից փրկություն հուսալու մոտիվները զուգակցված դժոխքի դռների ավերման, կապված հոգիների արձակման և երկնքի ու գետնի ուրախության մոտիվներին՝ բնորոշ վերջին դատաստանի պատկերացմանը, որոշակի վախճանաբանական իմաստ են հաղորդել աղոթքին: Այդ է հավաստում նաև աղոթքի քառատող վերջաբանը, ուր աղոթողը հոգու լույս, այսինքն՝ արդարամտություն է աղերսում աստծոց՝ բարի գործեր կատարելու, սրբերի դասը դասվելու, հետևաբար՝ սեփական հոգին վերջին դատաստանի առջև փրկելու ակնկալիքով:

369. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Գրառված է 1890 թ.:

Առավոտյան աղոթքի քառատող ավանդական մոտիվներն սկսվում և ավարտվում են եկեղեցական աղոթքների «Տեր ողորմյա» բանաձևի երիցս կրկնություններով, քառատողին հաղորդելով սրբազան բնագրի երանգ:

370. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, գրառված է հավանաբար 1915-16 թթ.:

Լուսաբացի աղոթքի ավանդական սկզբնամասին հաջորդում է անձնական մտորումներով լեցուն աղոթողի աղեսանքը՝ ուղղված Քրիստոսին, բարոյական մաքրության, հոգու փրկության, հանգիստ մահվան ակնկալումներով, ձևակերպված ժողովրդական ավանդական դարձվածներով:

371. Խորագրված է «Առավոտման աղոթք կիներուն» և փակագծերում ծանուցված՝ «Լվացվելուց առաջ»:

Առաջին քառատողը լուսաբացի նախորդ աղոթքներից եկող հատված է՝ լուսաբացին զուգորդված Տիրոջ (=աստծո) քաղցրացման, չարի հեռացման, աստվածային բերք ու բարիքի մոտեցման մոտիվներով: Հաջորդ 10-տողյա հատվածը ամբողջապես նվիրված է անարատ ու սուրբ աղոթարան - արշալույսին (ծեքծեքուն արևելքը, որին, արևածագից առաջ իր դեմքն է ուղղում ջերմեռանդ հայ քրիստոնյան աղոթելիս): Այն հանդես է գալիս աստվածացված, իբրև բարի լույսի ամենակարող աստ-

վածություն, որից աղոթողն աղերսում է ամբողջ աշխարհին, 72 ազգից բաղկացած մարդկությանը, պանդուխտ օտարականներին բարիք ու երջանկություն: Սա լույսի վաղնջական պաշտամունքի բացառիկ արտահայտություն է, մաքուր հեթանոսական ոգով, որ դրսևորված է նաև լուսաբացի հաջորդ ժողովրդական աղոթքներում:

372ա. Խորագրված է «Առավոտուն»:

Այստեղ դարձյալ առավոտյան լույսն ըմբռնված է որպես բարի աստվածություն, բարի առաջնորդ, որից աղերսվում է բախտի բաժին, չարից ու փորձանքից փրկություն:

Տե՛ս № 371 ծանոթագրությունը:

372բ. Խորագրված է «Առավոտուն» և ծանուցված. «Այս ալ անկողնեն ելնելե վերջ՝ մեկ անգամ կըսեն և մեկ անգամ ալ կը խաչակնքեն»:

Տե՛ս № 372ա ծանոթագրությունը:

373. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Բանասաց՝ 55-ամյա Ղալաչյան Տեփանոս (Տեպուշ), լսել է Ախալքալաքի շրջանի բնակիչներից, գրառված է 1962թ.:

Բովանդակությամբ և բնույթով ծոներգ-գովերգ է ուղղված արշալույսին, քան աղոթք:

374. Խորագրված է «Աղոթք»:

Այս և գրքում զետեղված մի շարք աղոթքներից առաջ հիշատակված է «Հայր մեր»-ը (տեղական բարբառով՝ «Հայ մեղա»), որ նշանակում է, թե տվյալ ժողովրդական աղոթքներն ասվել են իբրև կցորդ հիշյալ տերունական աղոթքին:

Առհասարակ ժողովրդական աղոթքները, անկախ ծավալից, բանավոր ավանդության մեջ մեծ մասամբ հաջորդում կամ նախորդում են որևէ տերունական աղոթքի: Սա վկայում է այն մասին, որ ժողովրդի մարդիկ հոգեբանորեն չբավարարվելով տերունական-պաշտոնական աղոթքների չոր, բանածևված խոսքերով, հաճախ՝ դժվարամատչելի լեզվով, սկզբից կամ վերջից իբրև կցորդ, ավելացրել են իրենց հասկանալի բանավոր աղոթքներն ու հոգեռանդ պաղատանքները՝ լեցուն հանպատրաստից հորինման տարրերով, ի բավարարումն իրենց ջերմեռանդ ապրումների (տե՛ս նաև սույն Համահավաքի ներածությունը):

375. Խորագրված է «Ալելույա»:

Բանահավաք՝ Սվետլանա Վարդանյան, բանասաց՝ Պետրոսյան Ավանես, 80 տարեկան, նախկին տիրացու, գրառված է 1970 թ.:

Բուն իմաստով աղոթք չէ, այլ ընդարձակ ասացվածք, որը լույսի յուրօրինակ փառաբանման պատճառով դրվում է լուսաբացի աղոթքների շարքում:

376. Խորագրված է «Աղոթք»:

Բանահավաք՝ Սվետլանա Վարդանյան, գրառված է 1968 թ.:

Կապույտ կապավոր - կապույտ կապա, թիկնոց հագած, նկատի ունի երկնային կապույտը, որ ժողովրդական ավանդության մեջ հաճախ տրվում է երկնքին կամ աստ-

ծոն, իբրև մակդիր կամ փոխաբերություն:

Բնույթով և բովանդակությամբ լուսաբացի աղոթքներին է հարում հետևյալ աշուղական աղոթերգը (մասամբ խաթարված ու աղճատված), որ բանահավաքը զետեղել է աղոթքների շարքում.

Աշխրքի չորս կողմ լուս անող Աստված,
Բանաս աղոթարան հետ բարի լուսուն.
Չի մոռնաս ղուլդ, չի թողնիս ծեռաց,
Այնի դու օղորմանաս հետ բարի լուսուն:
Հրեշտակներ փառաբանեն, հալածեն (?),
Վերունաց, թռչնաց.
Աստված ճանաչեն...
Բարեպաշտ մարդիկը կուլան, կաղաչեն,
Այնի դու օղորմանաս հետ բարի լուսուն:
Հրեշտակներ կայներ, կըսեն դասե ի դաս՝
Սաղմոս ու շարական հետ բարի լուսուն...
Այնի դու օղորմանաս հետ բարի լուսուն:

[ԷԱԺՋ, 20 / Կարս]

377. Խորագրված է ԳԱԹ «Գեղացու առավոտյան աղոթք», ԷԱԺՋ «Առավոտյան աղոթք»:

Բանահավաք՝ Ի. Միրաքյանց, հրատարակիչ՝ Ս. Հայկունի:

ԳԱԹ ձեռագրում աղոթքի 5 տները համարակալված են 1-5 թվահամարներով: ԷԱԺՋ Ս. Հայկունին դրանք իրավացիորեն միացրել է միմյանց և կատարել որոշ խմբագրումներ:

Ներկա բնագրում աղոթքը հրատարակվում է այդ տարբեր տների միացումով, ինչպես կատարված է ԷԱԺՋ-ում, սակայն առանց Ս. Հայկունու խմբագրումների: Կատարված են միայն որոշ անհրաժեշտ սրբագրումներ:

Հրատարակվում է ըստ ԳԱԹ բնագրի:

Աղոթքի մի քանի մոտիվներ (աշխարհին խաղաղություն, եկեղեցիներին պայծառություն, մեղքերին թողություն) նույնանում են «Տեր ողորմեա» տերունական հանրահայտ աղոթքի մոտիվներին: «Տեր ողորմեա»-ի ժողովրդականացած տարբերակների վրա առհասարակ նկատելի է բանավոր ավանդության ազդեցությունը:

378. Խորագրված է «Աղոթք»:

Բանահավաք՝ Ռոզա Գրիգորյան, գրառված է 1968 թ.:

Ամբողջապես բաղադրված է բարեմաղթություններից և այդ առումով էլ դառնում է աղոթքի յուրահատուկ տիպ:

Հմմտ. № 377 աղոթքի վերջին ութնյակի հետ:

379. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Բանահավաք՝ Ս. Հարությունյան, գրառված է 1968 թ., 60-ամյա Խուրշուդյան Հերիքնազից, ծագումով՝ քահանայի տոհմից, անգրագետ և նշանավոր աղոթասաց:

Աբրամ - աստվածաշնչյան Հայր Աբրահամը, հրեաների նահապետը, որի արդարության պատճառով նրա խնդրանքը միշտ լսելի է եղել աստծոն՝ Եհովային: Այդ

առումով էլ «Հայր Աբրահամի աստված» հասկացությունը դարձել է խնդրակատարության խորհրդանիշ:

Հմմտ. № 377 և 378 աղոթքների հետ:

380. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Գրառված է 1969 թ., Ախուրյանի արշավախմբում, բանահավաք՝ Վ. Սահակյան, բանասաց՝ Մարտիրոսյան Սեդրակ Տեփոյի, 75 տարեկան, նախնիները գաղթել են Մշո Բուլանըխից:

381. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Գրառված է 1973 թ., բանասաց՝ Անդրեասյան Մարիամ Ավետիսի, ծնված 1891 թ., Բասենի Իզվերան գյուղում:

382. Խորագրված է «Առավոտյան աղոթք անկողնում»:

Բանահավաք՝ Վարդ Բդոյան, բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ. Ղազանչի գյուղում, գրառված է 1947 թ.:

Աղոթքը ժողովրդական լինելով հանդերձ, ներծծված է եկեղեցական աղոթքների ու հասկացությունների, անգամ լեզվի տարրերով:

Տողատումը կազմողինն է:

383. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Երվանդ Պեզազյան, գրառված է հավանաբար 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

Աղոթքն սկսվում է ս. Երրորդության հիշատակման եկեղեցական հանրահայտ բանաձևով և ավարտվում «Տեր ողորմեա» տերունական աղոթքի վերջաբանի փոքր ինչ ձևափոխված տողերով: Դրանով ժողովրդական աղոթքը շրջանակվում է եկեղեցական աղոթքների սրբազան տարրերով, որոնց համախոս է նաև աղոթքի կառուցվածքը՝ բաղադրված երեք մասից, աստծոն ուղղած երեք կոչականություններով և երեք խումբ ցանկությունների կատարման աղերսանքներով:

384. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Գրառված է 1972 թ. բանահյուսական նպատակային արշավախմբում, բանահավաք՝ Վ. Սահակյան, բանասաց Զադոյան Մարգարիտ, 88 տարեկան, ծնված Հայոց ձորի Հերմերուր գյուղում:

385. Խորագրված է «Առավոտյան աղոթք» և ծանուցված. «Լվացվելուց հետո»:

Բանահավաք՝ Ս.Հարությունյան, բանասաց՝ Սարգսյան Սաֆար, 100 տարեկան, գաղթած Տարոնից (Բուլանըխ), գրառված է 1968 թ.:

Ծանուցումը, ինչպես նաև առավոտյան լվացվելուց հետո միմյանց ողջունելու սովորույթը վկայում են, որ առավոտյան լվացվելը դիտվել է որպես մաքրագործման ծիսական արարողություն, որին հաջորդել են աղոթքն ու ողջույնի բարեմաղթությունը:

Աղոթքի 2-3-րդ տողերը սերում են Ն. Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» հանրահայտ աղոթքի *«Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ՝ Հայր և Որ-*

դի եւ Սուրբ Հոգի» սկսվածքից, ենթարկված ժողովրդական ոճավորման: Աղոթքում արտահայտված ցանկություններն էլ, հակառակ Ն.Շնորհալու, վերաբերում են ոչ թե հոգու փրկությանը և մեղքերի ապաշխարությանը, այլ իրական կյանքի ռեալ փորձանքներից ու պատահարներից ազատվելուն, խիստ բնորոշ ժողովրդական աղոթքներին առհասարակ:

386. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Բանահավաքներ՝ Ս. Հարությունյան, Վ. Սահակյան, բանասաց՝ Մարտիրոսյան Ալմաստ, 90 տարեկան, գաղթած Մշո Ղարս գյուղից, գրառված է 1969 թ.:

Աղոթրանի բարի լուսվան Աստված արտահայտության տակ թերևս պահպանված է հին երկնային լույսի աստվածության հիշողության վերապրուկը: Ուշագրավ է հատկապես հանրույթի (ժողովրդի) ճակատագրի նկատմամբ աղոթողի կենսափորձից բխած մտահոգությունը՝ *Միամիտ փորձանք չիգա վըր ժողովրդին,* որ մարգարեաբար է հնչում մեկ տասնամյակ անց տեղի ունեցած ահեղ երկրաշարժի կերպի ու հետևանքների առումով:

387. Խորագրված է «Առավոտյան աղոթք» և ծանուցված՝ «Ցանքսի ժամանակ ասվող»:

Բանահավաք՝ Ս. Հարությունյան, բանասաց՝ Սարգսյան Սաֆար, 100 տարեկան, գաղթած Տարոնից (Բուլանըխ), գրառված է 1968 թ.:

Աղոթքում արտահայտված է սերմնացանի բաղձանքը իր սկսած գործի արդյունքի նկատմամբ՝ հագեցած այլասիրական մոտիվներով, բնորոշ գեղջկական աշխատանքային երգերին:

388. Խորագիր չունի:

Բանահավաքը, բանասացը, գրառման վայրն ու թվականը չեն նշված:

Հավանաբար 1950-60-ական թթ. գրառում է:

Աղոթքի առաջին երկու տողերը կոչ են՝ ուղղված սուրբ **Հովհաննես Մկրտչին,** հայ ավանդության մեջ այլ անվամբ՝ ս. Կարապետին: Ըստ այդմ՝ ս. Կարապետը յոթ անվան տեր է: Այդ անուններն են՝ *Հովհաննես, Մկրտիչ, Կարապետ, Մարտիրոս, Առաքյալ, Վարդապետ* (տարբերակ՝ *Նահատակ, Ավետիք), Մարգարե:* Բացի առաջինից, մնացածները այդ սրբի անվան մակդիրներ են՝ նրա տարբեր գործառույթները բնութագրող:

Յոթ մասունքը Հովհաննես Մկրտչի յոթ նշխարներն են, որոնցից երկուսը ըստ ավանդության՝ թաղված են Քարքե լեռան վրա, Ս. Կարապետ վանքում:

389. Խորագրված է «Առավոտյան աղոթք»:

Կյալու սուրբ Խոգեց վանք, - Վասպուրականի Նորդուզ գավառի նշանավոր վանքերից մեկը՝ Հոգոց կամ Հոգեաց վանք, գտնվում է հին անունով Աթոռ Անահտա կամ Դարբնաց քար տեղավայրում, խոր ու ժայռապատ ձորի մեջ:

390. Խորագրված է կրկնակի «Առավոտյան աղոթք-բարի լուսո աղոթգյ»:

Տողատումը կազմողինն է:

Արևն աղոթքում օժտված է *լուսերես, սուրբերես,* սուրբ մակդիրներով և հավա-

սար է դասված երկնային աստծոն, որոնցից աղերսվում է մեղքերի թողություն, ֆիզիկական զորություն, կենսամիջոցների ապահովում: Սրանք հնից եկող արևապաշտության արտահայտություններ են:

Աղոթքն ավարտվում է «Օյռնալ և այլն: Հար մեր և այլն» ծանուցումով, որ վկայում է, թե սույն ժողովրդական աղոթքին հաջորդել են տերունական աղոթքներ: Հմմտ. № 374 ծանոթագրությունը:

391. Խորագրված է «Աղոթք»:

Բանահավաք՝ Ավետիս Բարսեղյան, գրառված է Սևանում, 1961 թ.:

Կպրե կարաս, Մազե կամուրջ. - ժողովրդական հավատալիքներով՝ դժոխքում մեղավոր հոգիները տանջվում են եռացող կուպրով լեցուն կարասների մեջ, իսկ հանդերձյալ աշխարհ մտնելիս բոլոր հոգիները անցնելու են դժոխքի առջև գտնվող հրե գետի վրա ձգված Մազե կամուրջով: Մեղավոր հոգիների մեղքերի ծանրությունից Մազե կամուրջը կտրվում է, և նրանք թափվում են հրե գետը, իսկ արդար հոգիները անվտանգ անցնում են այդ կամուրջով դեպի դրախտ:

«Հայր մեր» տերունական աղոթքի տողերը մտել են սույն աղոթքի մեջ, իմաստավորելով աղոթողի աստծոն ուղղած դիմում կոչականը:

392. Խորագրված է «Իմ մամու աղոթք»:

Բանահավաք՝ Հակոբ Թովմասի Հակոբյան, ծնվ. 1901 թ., գրառված է 1964թ. հիշողությամբ: Բանահավաքի ծանուցմամբ՝ «Լուսադեմ ու .յիրիկուն քնուց .յառեջ իմ մամ աղոթք կէներ: .Յըմեն օր լե, էլման ուրիշ օրվա խոսքեր կըսեր. էրես կէներ քըղ աղոթրան կըսեր»:

Տողատումը կազմողինն է:

393. Խորագիր չունի: Ունի հետևյալ ծանուցումը. «Առավոտյան արշալույսին, երբ գյուղացի կինը երեսը դեպի հայոց ս.աղոթարանը դարձուցած սրտաբուխ կաղոթե, այսպես կարտահայտե յուր հավատո հանգանակը»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքն ունի ավանդական կուռ կառուցվածք և մերձենում է արարչագործության առասպելների կառուցվածքային տրամաբանությանը:

Աղոթքը բաղադրված է 4-6 տողերից կազմված վեց հատվածներից, որոնցից յուրաքանչյուրը թեպետ ունի թեմատիկ ամբողջություն, բայց ենթարկված է աղոթքի ընդհանուր կառույցի տրամաբանական հերթագայությանը:

Առաջին հատվածը (1-6 տողեր) մաղթանքի բարեբանություններով ներկայացնում է վերին, երկնային սրբությունները (Աստված, Քրիստոս, Հայոց սուրբ աղոթարան, չորեքկողմյան սրբեր, սերովբեներ, քերովբեներ, ինը դաս հրեշտակներ):

Երկրորդ հատվածը (7-12 տողեր) դիմում է երկրային սրբություններին (Տիրամայր, ս.Կարապետ, ս.Սարգիս) դարձյալ աստծո առաջ բարեխոսության ցանկությամբ՝ արար աշխարհի և իր մեղավոր հոգու համար:

Երրորդ հատվածը (13-16 տողեր) ամբողջովին մեղայական է՝ ուղղված երկնքի ու երկրի արարչին: Դրան հաջորդող չորրորդ հատվածը (17-22 տողեր) աղոթողի մեղքերի ապաշխարության և զղջման խոսքեր են՝ դարձյալ ուղղված արարչին: Հինգերորդ հատվածը (23-27 տողեր) աստծոց ողորմության հայցում է նախ՝ աշ-

խարհի 72 ազգերի, ապա աղոթողի ընտանիքի անդամների, պանդուխտների, մինուճար զավակի և ի վերջո սեփական անարժան հոգու համար: Եվ վերջին վեցերորդ հատվածը (28-33 տողեր) մարդկային բարոյական նորմերի ապահովման, չար պատահարներից զերծ մնալու ցանկություններ են:

Աղոթքի կառուցվածքը վերից վար՝ ուղղածիգ գծով զննելիս, նկատվում է մի կողմից երկնայինից՝ աստվածայինից, երկրայինն ու մարդկայինն իջնող իրողությունների հերթագայություն, մյուս կողմից, յուրաքանչյուր հատվածի ներսում՝ ընդհանուր մարդկայինից դեպի անձնական-անհատականը եկող ցանկությունների շարք: Այլ կերպ ասած՝ նկատելի է «դրսից» (ընդհանուր տիեզերականից) դեպի «ներս» (երկրային, ընդհանուր մարդկայինից անհատականը) եկող իրողությունների շարքեր, որոնք զգալիորեն նմանվում են տիեզերաբանական (աշխարհի արարչագործության) առասպելների երկնքի ու երկրի արարմանն ու դրան հաջորդող բնության ու մարդկային կյանքի, մշակույթի արարման տրամաբանական հերթագայությանը:

Այս ընդհանրությունը պատահական չէ, քանզի յուրաքանչյուր լուսաբաց, նույն առասպելաբանական մտածողությամբ, գիշերային խավարից հետո ըմբռնվում է իբրև նոր օրվա, նոր կյանքի, տիեզերքի նոր արարման սկիզբ: Եվ լուսաբացի աղոթքն իբրև ծիսական բնագիր, ծիսական լեզվով ու մտածողությամբ վերարտադրում է այն, ինչ կատարվել է արարչագործության սկզբում և, կարևորը՝ ամենօրյա կրկնություններով ապահովում տիեզերքի ու մարդու (փոքր տիեզերքի) տվյալ օրվա գոյությունն ու անվտանգությունը:

Ուշագրավ է նաև աղոթքի եզրափակիչ տողը, ուր աղոթողը առասպելաբանաստեղծական փոխաբերությամբ դիմում է երկնքին իբրև կապույտ վրանի, իբրև աշխարհն իր ներքո ամփոփող տիեզերական աստվածային սկզբունքի և ամբողջապես ապավինում նրա հովանավորությանը:

394. Խորագրված է «Վանա պառավանց աղոթք»:

Սույն աղոթքը ժողովրդական աղոթքների շարքում ամենածավալունն է (շուրջ 70 տող) և ուշագրավը: Աղոթքն ամբողջապես տոգորված է ջերմեռանդ հավատով, անկեղծ աղերսանքով ու պաղատանքով՝ ուղղված աստծո՛ն, Տիրամորը, հրեշտակներին, սրբերին, եկեղեցուն, մեծ ու փոքր աստղերին, շաղաթաթախ աղոթարան արևելքին՝ հոգևոր ու մարմնավոր տարբեր իղձերի ու ակնկալիքների կատարման ցանկությամբ: Բաղադրված է ժողովրդական լեզվի պատկերավոր բանաձևերով, եկեղեցական աղոթքներին բնորոշ լեզվաոճական տարրերով՝ շաղախված մեղմ քնարականությամբ, հուզիչ անկեղծությամբ, մարդասիրական ու ազգասիրական ազնիվ ոգով:

395. Խորագրված է «Աղոթք բուն Հազգոյի բարբառով»:

Տողատումը կազմողինն է:

Թեպետ խորագրում նշված է, որ այն գրառված է Սասնա (Հազգո) բարբառով, սակայն գրառման մեջ բարբառային շատ առանձնահատկություններ չեն պահպանված:

Աղոթքն սկսվում է «Հայր մեր»-ով, որի աղավաղված բնագրից նկատվում է, որ աղոթողը չի հասկացել գրաբարն ու խորամուխ չի եղել նրա իմաստի մեջ: Այն յուրովի հակադրված է 7-րդ տողից սկսվող բուն ժողովրդական աղոթքին, ուր ժողովրդա-

կան անմիջական ոգով ու ոճով դրսևորված են աղոթողի հոգեբուխ տվայտանքներն ուղղված աստծոն ու սրբերին, ապաշխարանքի, զղջման, պաղատանքի, մարմնական ու հոգևոր փրկության ակնկալիքների բանաձևերով:

Աղոթքի առաջին ընդարձակ մասը (8-32 տողեր) դիմում է՝ ուղղված Սասունի ու հարակից շրջանների նշանավոր վանքերին ու եկեղեցիներին, մեծ ու փոքր սրբավայրերին, տասներկու առաքյալներին և ինը դաս հրեշտակներին՝ աստծո առջև միջնորդ և բարեխոս լինելու աղոթողի մեղքերի թողության համար:

Երկրորդ մասը (33-59 տողեր), որ արտահայտում է աղոթքի բուն նպատակը, աղոթողի անմիջական խոսքն է ուղղված աստծոն, երիցս կատարված դիմում կոչականներով, երեք խումբ տարբեր ցանկությունների կատարման աղերսանքով: Առաջին դիմումը արարչին (33-37 տողեր) ուղղված է իր մեղքերի թողության և հոգու փրկության նպատակին: Երկրորդ դիմումը (38-48 տողեր)՝ մարմնական փորձանքպատահարներից, հիվանդություններից զերծ պահելու, իսկ երրորդը (49-59 տողեր) ուղղված է չարի ու չարիքի խափանման, մարդկային բարոյական արժանիքների պահպանման, մարդկային ցեղի աճի ու ապահովման նպատակներին:

Ստացվել է աղոթքի կառուցվածքից բխող հետևյալ իմաստային տրամաբանությունը. միջնորդության ու բարեխոսության հայցում սրբերից՝ աստծո և մարդու միջև, կայացած միջնորդությունից հետո անմիջական զրույց աստծո հետ՝ հոգևորից մարմնականին իջնող ցանկությունների կատարման աղերսանքներով:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Սույն հավելվածում են զետեղվում «Ուսին, ուսին, սուրբ կուսին» սկզբնատողով ստեղծագործությունները, որոնք մեծ մասամբ Տիրամորն ուղղված հոգևոր երգեր են, մասամբ վերածված աղոթքների: Դրանք տարածված են եղել հիմնականում Վասպուրականում: Թեպետ ոչ մի վկայություն չկա դրանց ասելու ժամանակի մասին, սակայն Մարիամի սուրբ սեղանի մոտ նստելու, աշակերտներին կանչելու, հոգիներին դատաստանի ենթարկելու, արդար և մեղավոր հոգիների ուրախության ու լացի, ինչպես նաև հանդերձյալ կյանքի ավանդական պատկերացումների մոտիվներով խիստ մերձենում են համանման մոտիվներ ունեցող երեկոյան և առավոտյան աղոթքներին: Ուստի դրանք զետեղվում են երեկոյան և առավոտյան աղոթքների հավելվածում:

1(396). Խորագրված է «Տիրամոր աղոթք»:

Բանասաց՝ Գասպարյան Եղիսաբեթ, 50 տարեկան:

Աղոթքի վերջից հարակցված է «Թաժա խացի խոտ եկավ» սկզբնատողով ծննդկանի հանրահայտ աղոթքի մի աղավաղված տարբերակ, որն անջատվում է սույն աղոթքից:

Աղոթքի 5-12 տողերը Տիրամորն ուղղած երեկոյան անկախ աղոթքի տարբերակներից է (տե՛ս №329ա և հտն.):

2(397). Խորագիր չունի:

Աղոթքն արդյունք է երկու տարբեր ստեղծագործությունների բաղարկման, ո-

րին հիմք են ծառայել երկուսում էլ հիշատակված Տիրամոր անունն ու արաքները:

Առաջին 12 տողերը անկախ ստեղծագործություն է (տե՛ս հաջորդ տարբերակները), բաղկացած թեմայով միմյանց հարակից երկու տարբեր՝ քրիստոնեական և ժողովրդական հավատալիքային մոտիվներից:

Առաջինը Տիրամոր դիմումն է Քրիստոսի աշակերտներ Պետրոսին և Պողոսին՝ ս.Հռիփսիմեի (քրիստոնեական հավատի համար Տրդատ Գ-ի կողմից նահատակված կույս) հարսնանալու, այն է՝ Քրիստոսին հարսնացու դառնալու հավատալիքի մասին: Ըստ քրիստոնեական ավանդության՝ Քրիստոսի հավատի համար նահատակված յուրաքանչյուր կույս դառնում էր երկնքում նվիրական աստծո հարսնացուն, մի հին՝ հավատալիք, որ գալիս էր նախաքրիստոնեական շրջանից և վերաբերում էր դյուցազնի (աստծո) կողմից ազատագրված կույսի հետ աստծո կամ դյուցազնի ամուսնությանը: Այն կատարվում էր երկնքում, համարվում էր սուրբ և կոչվում էր «Սուրբ հարսանիք», որով վերականգնվում էր Տիեզերքի խախտված ներդաշնակությունը:

Հռիփսիմեի այս երկնային, աստվածային հարսնացման հավատալիքը, որ կապված էր անդրաշխարհի պատկերացման հետ, բաղարկվել է անդրաշխարհում կատարվող հոգիների դատաստանի (գաբրիելական փողի հնչեցում, Մազե կամուրջի կապում, դրախտային անմահության խնկի ծառի տնկում) ժողովրդական պատկերացումներին և ստեղծել անդրաշխարհի և հոգիների դատաստանի մի ամբողջական պատկեր:

Աղոթքի երկրորդ՝ հարակցված մասը (13-21 տողեր), «Թազա հացի հոտ եկավ» սկզբնատողով, ծննդկանի մասին ասվող հանրահայտ աղոթքի տարբերակներից է, որտեղ վերջին հմայական բանադրանքի հատվածը (չարին պատժելու, կապելու մոտիվներով) վերածվել է կոնկրետ էթնիկական (քուրդ հնվոր-հնծվորներին պատժելու, կապելու) հասկացության, պայմանավորված կոնկրետ սոցիալ-պատմական իրողություններով:

Աղոթքն ավարտվում է *«Իմ Տեր իլավ ամպեր, խաղաց, (Չորեքդիմաց աշխարհ դնդաց»* երկտողով, որը այլ աղոթքից եկող սկզբնամաս է (հմմտ. №№ 323ա-գ 324), դարձյալ կապված հոգիների վերջին դատաստանի պատկերացումներին, որով ընդհանուր կապ է ստեղծվում հարակցված երկու տարբեր աղոթքների միջև:

3(398)ա. Խորագրված է « Աստվածածնի երգ»:

Ձետեղված է «Սրբոց երգեր» շարքում:

Չորրորդ տողում *(«Օրն ի ավուր դատաստանին»)* բացահայտ շեշտված է, որ խոսքը գնում է ոչ թե հոգիների վերջին կամ Ահեղ դատաստանի, այլ մեռնողների ամենօրյա (ավուր) դատաստանի մասին, թեպետ շարունակության մեջ առկա է նաև վերջին դատաստանի մոտիվներից մեկը (գաբրիելական փողի հնչեցում):

Վերջին երկտողում, որը փոքր-ինչ մթագնված իմաստ ունի, վիրավորանքի շեշտ կա, հավանաբար Աստվածածնի կողմից՝ ուղղված մեղավորին այն բանի համար, որ նա լինելով սուրբ ավազանում մկրտված քրիստոնյա, իրավունք չուներ մեղքեր գործելու և պատժվելու:

Տե՛ս № 2(397) ծանոթագրությունը:

3(398)բ. Խորագիր չունի:

Գտնվում է Գ. Սրվանձտյանցի ֆոնդում պահվող «Վանեցի Կիրակոսյան աշըղ

Պուտուրի երգածներու տետր»-ում:

Սա վկայում է, որ այն ևս երգվել է, ինչպես նախորդ տարբերակը (տե՛ս ծանոթագրությունը):

Տե՛ս № 2(397) ծանոթագրությունը:

3(398)գ. Խորագիր չունի:

Տե՛ս № 2(397) և 3(398)բ ծանոթագրությունները:

Նախորդ ստեղծագործությունների վիպական մասին, սկսած 10-րդ տողից, ավելացել են աստծոն և Աստվածածնին ուղղված աղերսանքի ու գովասանքի բանածևեր, այն վերածելով աղոթքի:

Վերջին տողը վկայում է, որ Աստվածածինը ս. Կարապետի նման համարվել է աշուղներին ձիրք շնորհող սուրբ:

3(398)դ. Խորագիր չունի:

Տե՛ս № 2(397) ծանոթագրությունը:

4(399)ա. Խորագիր չունի:

Տե՛ս №№ 3(398)բ և 2(397) ծանոթագրությունները:

Սա, թեպետ նույն սկզբնատողով, բայց բովանդակությամբ այլ ստեղծագործություն է, որի վերջին աղերսական տողը այն վերածել է աղոթքի:

4(399)բ. Խորագիր չունի: Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Գրառված է 1915-16 թթ. Ե.Լալայանի խմբարշավի կողմից:

Այս տարբերակը, նախորդների համեմատությամբ, 14-րդ տողից սկսած հավելվել է մի նոր անկախ հատվածով, ուր Քրիստոսը դիմելով իր արտասվող մորը՝ իր հրաշագործ զորությունների թվարկումով լավատեսություն է ներշնչում նրան:

Տե՛ս № 2(397) ծանոթագրությունը:

5(400). Խորագիր չունի: Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավի կողմից:

Ամբողջությամբ վերառած հոգու փրկության նպատակին ուղղված աղոթք է՝ ապաշխարանքի, հանդերձյալ կյանքի և հոգիների դատաստանի մոտիվներով: Տե՛ս № 2(397) ծանոթագրությունը:

Կաքնով ախպուր, քարե տաճար՝ արտահայտված է երկնային դրախտի ժողովրդական պատկերացումը, երկինքն իբրև տաճար իր անմահական կաքնաղբյուրով (հմմտ. քարե երկինք հին հնդեվրոպական պատկերացման հետ/:

Վերջին եռատողում ամփոփված է աղոթքի քրիստոնեական գաղա-փարախոսությունը. հոգիների անաչառ դատաստանը նկարագրելուց հետո հիշեցվում է մահկանացուին՝ բացել հոգու աչքերը և այդ հայացքով նայել անցողիկ ունայն աշխարհին, խոստովանել մեղքերը և զղջալ (հմմտ. Սայաթ-Նովայի նույնիմաստ տողերի հետ. *«Թե վուր լալով զղծում անիս՝ անմահացըն մասըն կուտան, (Խոստովանիս արած միխկըդ՝ չանիս ինքար, Սայաթ-Նովա»):*

Հանդերձյալ կյանքի պատկերացումների թեմայով սույն աղոթաշարին է հարում նաև ներքոբերյալ կրոնական վիպերգի պատառիկը.

Խորն ընկա՝ խոր չտարավ.
Գետն ընկա՝ գետ չտարավ.
Եկեղեցիս՝ ես քահանա,
Փող փչեցին հարուբենա:
Խորոմսիմեն խարսնացուցին,
Լուսեղեն խանդերձ խագուցին,
Օսկի քամար կապեցին,
Խնկաման ծառեր տնկեցին,
Մազե կարմունջ կապեցին.
Արդարներ թռան, գացին,
Մեղավորներ նստան լացին:

[ԷԱԺՋ, 22/ Վաճ]

ՋԱՆԱՋԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ
(№№401-452)

Այս բաժնում են համախմբված օրվա տարբեր պահերին, եկեղեցում և այլուր ասվող պաղատական, ապաշխարական բնույթի, ինչպես նաև առանձին սրբերի, Տորալուսնին ուղղված և քրիստոնեական տարբեր ծեսերի ժամանակ կատարվող աղոթքները:

Ա. ՕՐՎԱ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԵՐԻ (№№ 401 - 419)

401. Խորագրված է «Ճաշեն վերջը - հածեն էդյգը»:

Տողատումը կազմողինն է:

Սկսվում է «Օյռնալ Դեր մեր և այլն: Հար մեր էրկինս և այլն» հապավված տողերով, որոնք վկայում են, որ աղոթքն ասվել է «Հայր մեր» տերունական աղոթքից հետո:

Աղոթքը բաղադրված է օրհնանք - բարեմաղթությունների շարքից՝ ենթարկված ոճաբանական փոխակերպման, որով բարեմաղթությունները վերածվել են խնդրանք աղերսանքի:

402. Խորագրված է «Աղոթք ս. եկեղեցու մեջ»:

Աղոթքն ամբողջապես հագեցված է ապաշխարանքի, հոգու փրկության և երկնային արքայությանն արժանանալու քրիստոնեական գաղափարախոսությամբ:

403. Խորագրված է «Աղոթք ս. եկեղեցու մեջ»:

Բանահավաք՝ Տ. վ. Պալյան:

Ոգով ապաշխարության և ողորմության աղոթք է, հանդերձյալ կյանքի (Մազե կամուրջ, երկար ճանապարհ) ժողովրդական պատկերացումներով:

Հոռոմսիմե - ս. Հռիփսիմե (տե՛ս №2(397) ծանոթագրությունը):

404. Խորագրված է «Աղոթք»:

Գրառված է 1960-ական թթ., բանասաց՝ Սարգսյան Արփենիկ (Արփո), 56 տարեկան, լսել է Ախալցխայի Ծղալթբիլա գյուղում ապրած համագյուղացի Ալեքսանյան Սրբունից:

Աղոթքն, անկախ իր ապաշխարության, զղջման և լավատեսության քրիստոնեական մոտիվներից, ավարտվում է անեծքի հմայական բանաձևով, որ բնորոշ է հմայական աղոթքներին:

Տե՛ս №№ 403 և 2(397) ծանոթագրությունները:

405. Խորագրված է «Հաոց պառավ կնկան աղոթք»:

Կաթնով աղբյուր, քարե տաճար - դրախտի ժողովրդական պատկերացումներից մեկն է, որին աղոթողը կամենում է աստծոն ուղղած իր մեղայական խոսքով ու խոստովանությամբ հոգին արժանացնել:

406. Խորագիր չունի:

Առաջին հինգ տողերը մեղքերի ապաշխարության աղոթքի հատված է, որը 6-րդ տողով կապվել է Հայր Աբրահամի մասին հայկական հետևյալ զրույցին: Հրեշտակը հյուր է գալիս Հայր Աբրահամի տունը: Վերջինս նրան հյուրասիրելու համար մորթում է հորթը: Երեկոյան կովը տուն է գալիս և փնտրում հորթին: Հրեշտակը տանտիրոջից խնդրում է հորթի կաշին և ոսկորները: Աբրահամը բերում է դրանք, բայց չի գտնում հորթի ազդրոսկրը: Հրեշտակը վերակենդանացնում է հորթին: Քիչ անց Աբրահամը գտնում է նաև կորած ազդրոսկրը: Հրեշտակը պատվիրում է այն թաղել այգում: Մեկ տարի անց հորթի ազդրոսկրից բուսնում է խաղողի որթը [**Ղանալանյան 1965,** № 326]:

Այս զրույցի հիմքի վրա աղոթքում զարգացել են նոր մոտիվներ (խաղողի որթից սև ու սպիտակ ողկույզների հասունացում, դրանցից գինու պատրաստում, ամանների լցում և այդ գինուց պատարագի մատուցում): Նույն զրույցն է ընկած նաև հետևյալ տարբերակի հիմքում:

Սառա, Սառա, թոներ վառի,
Որթիկ գինի՝ մատաղ էրա:
Եմ տեր խուր էր էկի,
Դել չ'կերավ՝ կշտացավ,
Ոսկոռ էզար՝ պատ կայնավ,
Խաղող էլավ ճութ բարունակ:
Քաղեցին, քամեցին,
Յընտիր յընտիր աման լցին,
Եմ խերկան մերկան՝ բաժին խանիցին:

[ՀԱԲԱ, FAVI: 3103, 01/ Ռշտունիք]

Ըստ երևույթին համանման զրույցի արդյունք է նաև մի քանի տարբերակներով հայտնի «Օհան, Օհան Ոսկեբերան» սկզբնատողով հետևյալ կրոնական վիպերգը, ուր Հայր Աբրահամի հորթին փոխարինել է խոյը:

Օհան, Օհան Ոսկիբերան,
Կոչ մորթիցիմ դրիմ սեղան,
Հայկակն ու սեր էկան կերան[45]*,*
Կերան, կերան կուշտ կշտացան,
Ուսկոռը զարկին պատմ, էլան.
Ուսկոռն էլավ ծուռ պարունակ,
Վերեն կախվավ սեմ սիպտակ:
Ընտիր-ընտիր քաղեցեք, քամեցեք,
Տարեք դրեք վերին Վարագ,
Վերեն արեք սուրբ պատարագ:
Խորդեցեք ու ավիլեցեք,
Վարդի ջրով սըրսըմկեցեք,
Մեջքը կապեք ոսկի քյամար՝
Աստվածամոր խաթրի խամար,
Վերեն կաթի լուսո կամար:

[ՊՎ, 119/ Վաճ]

Տարբերակները տե՛ս ՎՍԱ, 66, ՀԱԲԱ FFII: 7309, 01, FFI: 4597, 01:

Բանաստեղծական այս ուշագրավ բնագրի հիմքում ըստ երևույթին ընկած են սրբազան զոհի տիեզերաշեն նշանակության հնագույն պատկերացումներ (խոյի զոհաբերում, մսի ճաշակում կույսերի կողմից՝ արու (խոյ) - էգ (կույս) հակադրությամբ, զոհի ոսկրերից աշխարհաշինություն, բույսերի աճ, հասունացում, պտղաբերում, խաղողի ողկույզներից սրբազան խմիչքի՝ գինու պատրաստում, լիացում, աշխարհի լուսավորում):

Սրբազան զոհաբերության այս վաղնջական մոտիվները սույն բնագրում վերաիմաստավորվել են քրիստոնեական կրոնի նոր գաղափարախոսությամբ, դարձել ս. Կույսի կողմից անարատ հղացման, Քրիստոս աստծո ծննդյան, նրա զոհաբերման, զոհաբերված աստծո արյան (իմա՝ գինու) վրա ս. պատարագի ծիսական արարողության կատարման, Վերին Վարագա վանքում տեղայնացման և ի վերջո զոհաբերման հետևանքով աշխարհի լուսավորման ու փրկության այլաբանական արտահայտություններ:

407. Խորագրված է «Եկեղեցու աղոթք»:

Ընդհանրական բնույթի քրիստոնեական ոգով աղոթք է, որի վերջին 6 տողերը ժողովրդական ավանդական օրհնաբանության բանածևեր են և հաճախակի են հանդես գալիս թե՛ լուսաբացի (տե՛ս №№ 377-379) և թե՛ սույն խմբի աղոթքներում, վերածված՝ աղերսանքի:

408. Խորագիր չունի, դրված է մաղթանքների շարքում:

Բանահավաք Գ.Տեր-Աղեքսանդրյանի ծանուցմամբ՝ «Թիֆլիսեցի հայք, ինչպես և ուրիշ գավառացիք, աղոթելը սկսում են Տերունական աղոթքով՝ Հայր մերով, որ պառավ կանայք և ծեր տղամարդիկ աղավաղված ձևով են ասում: Եվ վերջը այս աղոթքից հետո, ավելացնում են այսպիսի մաղթանք»:

Սա ևս վկայում է, որ ժողովրդական աղոթքները հիմնականում ասել են իբրև

45 Հավանաբար՝ Հայկազն կույսեր էկան կերան, հմմտ. ՀԱԲԱ, FFII:

կցորդ, հավելում տերունական աղոթքներին, որոնք իրենց կիսահասկանալի լեզվով ու կաղապարված ընդհանուր բովանդակությամբ հագուրդ չեն տվել ժողովրդի մարդու՝ քրիստոնյա հավատացյալի հոգեկան տոչորումներին: Եվ նա իր ապրումներն ու զգացումները մարմնավորել է իրեն հասկանալի լեզվով կերտված աղերսանքի բանաձևերում:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 407 ծանոթագրությունը:

409. Խորագիր չունի, դրված է «Օրհնանք և բարեմաղթություններ» բաժնում:

Տողատումը կազմողինն է:

Սա փաստորեն աղոթք է՝ բաղադրված այլասիրական աղերսանքներից և ավանդական մաղթանքի բանաձևերից:

Տե՛ս № 407, 408 ծանոթագրությունները:

410. Խորագրված է «Եկեղեցու մեջ»:

Բանահավաք՝ Արտաշես Բարսեղյան, գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

Բաղադրված է դեռահաս մոր կողմից ասված անձնական-բարոյական ու մայրական ցանկությունների կատարման աղերսանքներից:

Արտ. Բարսեղյանի գրառումներում աղոթքների շարքն է դասվել նաև հետևյալ եռատող ասույթը, որ վերաբերում է հավատացյալի կողմից ասվող աղոթքի երկնային հատուցման գաղափարին.

Վերն ա պարգ, վեր գա ծյուն,
Ինչ որ գա աղամորդուն,
Ուր ծունդր աղոթք կենալուն:

[ՀԱԲԱ, FAV: 3079, 03/ Ռշտունիք]

411. Խորագրված է «Որդեկորույս մայր»:

Բանահավաք՝ Արտ. Բարսեղյան, գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

Սա որդեկորույս մոր աղոթք է, քրիստոնեական հնազանդության ու համբերատարության խոր հավատի արգասիք, որ առկա է *«Աստծու տված, Աստծու տարած»* առածում և գաղափարով սերում է թերևս Աստվածաշնչից:

412. Խորագիր չունի: Մատիտով սևագիր է՝ գրված Ե. Լալայանի ձեռագրով: Կառուցված է աստծո տարբեր հատկանիշների սոսկական թվարկման վրա, որոնց մեջ իսկ արտահայտված են աղոթողի աղերսանքն ու ցանկությունները՝ աղաչանք, բարեգթություն, մարդասիրություն, հաջողություն, մեղքերից փրկություն:

Աստվածային հատկանիշների սոսկական թվարկման այս ավանդույթը թերևս սերում է միջնադարյան գրավոր աղոթքներից, որոնցից բնորոշը պահպանության հետևյալ աղոթքն է, ամբողջապես կառուցված աստծոն տրվող ածական մակդիրների այբբենական հերթագայության վրա:

Անսկիզբն աստուած, Բարի աստուած,
Գովեալ աստուած, Դատաւոր աստուած,
Երրորդութիւն աստուած, Ջորաւոր աստուած,
Էական աստուած, Ընդունելի աստուած,
Թագաւոր աստուած, Ժամանօղ աստուած,
Ի սկզբանէ աստուած, Լուսա[վ]որ աստուած,
Խորաքննին աստուած, Ծածկագէտ աստուած,
Կենդանի աստուած, Հայրախնամ աստուած,
Ձեռնատու աստուած, Ղամբարափայլ աստուած,
Ճշմարտասէր աստուած, Մեղաւորաց քաւիչ աստուած,
Յուսացելոց աստուած, Նեղելոց փրկօղ աստուած,
Շարասաստ աստուած, Պահապան աստուած,
Ջահալոյս աստուած, Ռահացուցիչ աստուած,
Շնորհատու աստուած, Ողորմած աստուած,
Սուրբ աստուած, ստեղծօղ աստուած,
Վեհագոյն աստուած, Տէր աստուած, տվիչ աստուած,
Րաբուն աստուած, րաբունապետ աստուած,
Ցնծութիւն աստուած, ցաւոց բժիշկ աստուած,
Բուսապսակիչ աստուած, Փառահեղ փարատիչ ցաւոց աստուած,
Քերօյբէանիստ աստուած, Քաւիչ մեղաց աստուած,
Եւ ինձ օգնեա աստուած, Օրէնըսդիր աստուած,
Ալֆայ և օ[մեգա] աստուած,
Աստուած, աստուծոց աստուած,
Քոյ սուրբ անուանց և ահեղ զօրութեամբդ
Պահեա ամենայն չարէ,
Երևելի և աներևոյթ բշնամէ
Ջծառայս աստուծոյ [անուն]:

[Գյումրիի № 1 Հմայիլ]

413. Խորագրված է «Աղոթք»:

Բանահավաք՝ Արտ. Բարսեղյան, գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

Աղոթքին նյութ են ծառայել Քրիստոսի ծննդյան, մանկության, ուսումնառության, հրաշագործությունների վիպական դրվագները: Այդ վիպական մասերին կցվել է վերջին հնգտողյա հատվածը, որի մեջ արտահայտված է ամբողջ վիպական մասի աղոթային սրբազան իմաստը՝ իր պայմանով (ով երեք անգամ ինձ հիշի), նպատակը (չի կորչի և խորովվի, այսինքն՝ կմնա անեղծ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը) և բաղձանքը (Քրիստոսի լուսեղեն գալուստով չարերը կխափանվեն, հոգին կպահպանվի և մարմինը կառողջանա՝ կվերամարմնավորվի):

Փաստորեն այդ եզրափակիչ աղոթային բանաձևերով ամբողջ վիպերգը վերածվել է սրբազան բնագրի՝ աղոթքի:

414. Խորագրված է «Եկեղեցում ասվող աղոթք»:

Գրառված է 1980 թ., բանասաց՝ Սարուխանյան Վերո, ծնվ. 1905 թ., Ջավախքի

Մեծ էշտիա գյուղում, հետագայում հարս է եկել Սարագյուղ (նախկին Դարաքյոյ):

Բնագիրը ներկայացնում է Գեթսեմանի պարտեզում Քրիստոսի աղոթելու, ձերբակալման, չարչարանքների և խաչելության ավետարանական դրվագները, առանց աղոթքներին հատկանշական աղերսանքի կամ հմայության բանաձևերի:

Այդ վիպական դրվագները և մանավանդ եկեղեցում ասվելու հանգամանքը ինքնին սրբազան են գիտակցվել, ուստի և բնագիրը ընբռնվել է որպես աղոթք:

415. Խորագիր չունի:

Գրառված է 1936 թ., Գառնիի ենթաշրջանի Քարփիչլի գյուղում: Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, բանասաց՝ Ստեփանյան Նազո, 40-45 տարեկան, գաղթած Վանի Անձակ գյուղից:

416. **«Նավասարդ»** խորագիր չունի, ԳԲՍ խորագրված է «Պառավաշունչ աղոթք»:

Երկու աղբյուրում էլ բանահավաքը Կարապետ Գաբիկյանն է: Ըստ նրա ծանուցման՝ օրվա գլխավոր պահերին ասվող մամիկների աղոթք է, որի մեջ նա իրավամբ տեսնում է ազգային ոգու, հավատքի պահպանման անխոցելի վահան, միաժամանակ «անոր ընհատակված կյանքի արունլըվա պատմությունը»:

Չանտ՝ ծկան, / Աչքտ՝ խլրտան - ծկան նման լուռ ու մունջ, ուշադիր ու խլրտացող հայացքով շուրջը նայող և զգուշացող, որով նկատի է առնվել ազգի ու հավատի թշնամիների միջավայրում ապրող, իր ոգուն ու կրոնին հավատարիմ կառչած ժողովրդին:

417ա. Խորագրված է «Չար երազն ի բարին»:

Տողատումը կազմողինն է:

Ատանագինա, նկատի ունի քրիստոնեական եկեղեցու սուրբ Աթանագինեսին, որի նշխարները ս. Հովհաննեսի նշխարների հետ միասին թաղված են Մշո Ս. Կարապետ եկեղեցում:

417բ. Խորագրված է «Երազի աղոթք»:

Բանահավաքի կողմից **Անդանակ** անունը կողքի փակագծերում բացատրված է *Նաթանագինե,* **Մեջընա՝** *Մծբնա:* Մծբնա հայրապետը քրիստոնեական եկեղեցու սուրբ Հակոբն է:

418. Խորագրված է «Անկողնի մեջ վատ երազից հետո»:

Տողատումը կազմողինն է:

Աղոթքում երազի բարի կատարման ցանկությունն արտահայտված է անուղղակի՝ աղոթողի մեղսունակությամբ և նրան շրջապատող սուրբ անձանց (Մարիամ, Քրիստոս, 12 առաքյալ) հակադրությամբ և ի վերջո՝ շրջապատի սուրբ անձանց բարի ներգործության ակնկալիքով:

419. Խորագրված է «Պանդխտի համար աղոթք»:

Մասնակի տողատումը կազմողինն է:

Աղոթքն ունի խնդրական, աղերսական բնույթ և սոցիալական շեշտված բովան-

դակություն: Այն ուղղված է հայ ժողովրդի դարավոր սոցիալական կյանքին բնորոշ երևույթներից մեկին՝ պանդուխտին և պանդխտությանը: Հիմնական նպատակը պանդուխտի առողջության, գործի հաջողության, անվտանգության ապահովման և կարևորը՝ հայրենիք վերադառնալու և իր անչափահաս զավակներին տեր կանգնելու ցանկությունների իրականացումն է, արտահայտված ժողովրդական անկեղծ, հուզիչ լեզվով ու դարձվածներով:

Բ. ՍՐԲԵՐԻ (№№ 420 - 435)

420ա. Խորագրված է «Սուրբ Սարգսի աղոթք»:

Այս, ինչպես նաև ս. Սարգսին ձոնված այլ աղոթքներում, վիպերգերում, ժողովրդի ավանդական պատկերացումներում սուրբը հանդես է գալիս իբրև ձիավոր ռազմիկ, զորավար: Այդպիսին է նա նաև սրբախոսական վարքերում: Ըստ հայ եկեղեցական ավանդության՝ Սարգիսը ապրել է 4-րդ դարում, եղել է Կեսարիայի հռոմեական զորավար, խուսափել Հուլիանոս Ուրացող կայսրի (361-363 թթ.) հալածանքից, նախ՝ ապաստանել հայոց Արշակ 2-րդ թագավորի մոտ, ապա վերջինիս խորհրդով անցել Պարսկաստան, կարգվել Շապուհ 2-րդի զորահրամանատար: Սակայն պարսից զորքի մեջ քրիստոնեություն տարածելու մեղադրանքով ձերբակալվել է, մերժել զրադաշտական հավատ ընդունելու առաջարկը և իր Մարտիրոս անունով որդու և 40 քրիստոնյա զինվորների հետ նահատակվել: Քրիստոնյա հավատացյալները առևանգել են նրա դիակը, տարել Ասորիք: Մեսրոպ Մաշտոցը ս. Սարգսի մասունքները բերել է Հայաստան, ամփոփել Կարբի ավանում և Գագա դաշտում հիմնել սրբի անունով երկու եկեղեցի [ՀՍՀ, 10, 215]:

Հայ եկեղեցու այս հեղինակավոր սրբի արարքները ժողովրդական հավատալիքներում համածուլվել են հին հեթանոսական հողմի աստվածության գործառույթներին, կապվել բքի և հողմի հետ, ս. Սարգսին դարձրել արագահաս, ժամանակին հասնող, ազատարար, մուրազատու, մասնավորապես սիրահարների փափագակատար, ինչպես նաև չարի դեմ (վիշապ) մաքառող ու հաղթող սուրբ:

Այս հատկանիշները մասամբ դրսևորված են սույն աղոթքում և դրա հաջորդ տարբերակներում, ուր ս. Սարգիսը կամ նրա որդին ներկայացված են ամպերի մեջ, երկնային ծովում սլացող լուսակերպ ձիավորի կերպարով, իբրև արագընթաց հողմնային ոգի, գերիների ազատարար, չարխափան և փափագակատար:

Ստորև բերվում է ուշ միջնադարում աշուղական արվեստով հորինված մի ծոներգ, որն իր աղոթային բանաձևված վերջաբանով ընկալվել և կատարվել է որպես աղոթք:

ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ՁՕՐԱՎԱՐԻՆ
Երջանիկ մեծ զօրական,
Եւ Քրիստոսի յաղթող վկայն.
Գլուխ զօրացն Կոստանտեայ
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս:
Է ի ծովելոյ ամբարըշտին,
Մոլորելոցն Յուլիանէ
Շրհանդուրժելով յանօրէնին՝
Եղեր պարիսպ սուրբդ Սարգիս:

Գեղեցկապէս տնօրինելով
Զայս արարչին նախասահմանեալ
Մեծ զօրավիգ մեզ առաքեալ,
Արիացեալ սուրբդ Սարգիս:
Ո՞ր յարևմուտս յառաջ եկեալ
Եւ յարևելս եկեալ հասեալ,
Մեզ հասանիլ ի յօգնութիւն,
Ատենահաս սուրբդ Սարգիս:
Սուրբդ Սարգիս ի մեզ գթայ,
Մատոյ զծայն մեր մաղթանաց,
Առ ողորմած Քրիստոս Աստուած
Այն որ օրհնեալ է արարած,
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս:
Սիրով արքայն զծեզ ընկալեալ
Եւ մեծագույն փառօք պատուեալ,
Մեծ զօրավիգ մեզ առաքեալ,
Ի այլաստան պահակ եդեալ,
Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս:
Ծունր կրկնեմք սուրբ նշանի
Եւ նկարեալ քո պատկերի,
Մեզ հասանիլ ի յօգնութիւն,
Ատենահաս սուրբդ Սարգիս:
Իսկ գերելոց այլասեռից,
Որք ի կապանս եմ յերկաթի,
Դան զնոսա ի չար կապից,
Մեծ գերեհան սուրբդ Սարգիս:
Հօրն փառք, որդոյն պատիւ
Եւ սուրբ հոգոյն:
Այժմ յաւիտեանս յաւիտենից, ամէն:
Ծառայիս աստուծո [Կոստանդին]
Օգնական և պահապան եղիցի, ամէն:

[Մատենադարան, Ձմայիլ № 1]

Չոներգն ստեղծված է վարքագրական աղբյուրների հիման վրա, մի քանի մոտիվների և անունների հիշատակմամբ (քրիստոնյա Կոստանդին թագավոր, Հուլիանոս Ուրացող), սակայն առանց որոշակի սյուժեի:

Գովաբանական-ծոներգային բնույթի պատճառով էլ այն ընկալվել և կատարվել է որպես աղոթք: Վերջինումս հիշատակված են նաև ս. Սարգսի գործառույթները բնորոշող մի քանի մակդիրներ (ատենահաս, քաջ սպառազեն, մեծ գերեհան, արիացեալ), որոնցից **ատենահասը** սերում է բանավոր ավանդությունից:

420բ. Խորագիր չունեն:

ՀԱԲԱ, FFIII, **Փորքշեյան 1971** բանահավաքը Խաչ. Փորքշեյանն է, գրառված՝ 1961 թ.:

ԱՀ IX բնագիրը դրված է Ե. Շահազիզի «Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք» ազգագրական հոդվածում, ս. Սարգսի ծիսական տոնի առնչությամբ: Այն քաղ-

ված է Ք. Պատկանյանի «Говор Нахичеванский» բարբառագիտական աշխատությունից:

Տե՛ս №420ա ծանոթագրությունը:

420գ. Խորագրված է «Պառավաշունչ աղոթք»:

Ս. Սարգսի ձիու՝ սառույցի վրա քայլելու, բքաբեր քամուց խեղդելու մոտիվները վկայում են, որ աղոթքը թերևս ծիսական է և ասվել է հավանաբար ս. Սարգսի տոնին՝ փետրվարի սկզբներին: Ս. Սարգսի բքաշունչ հողմից Հռոմի պապի (Հռոմ պապա) խեղդելու ցանկությունը արտահայտությունն է ուշ շրջանի դավանաբանական պայքարի ժողովրդական ընկալման: Ժողովրդական հավատալիքներում ս. Սարգիսն առհասարակ հանդես է գալիս իբրև հոռոմների (հույների) թշնամի:

Տե՛ս № 420ա ծանոթագրությունը:

420դ. Խորագրված է «Կես գիշերին»:

Բանահավաք՝ Վ. Բդոյան, գրառված է 1947 թ.:

Բանասաց՝ Շահինյան Անուտկա, ծնվ. 1892 թ., Ղազանչի գյուղում:

Բանահավաքի ծանուցմամբ՝ «Ասվում է արթնանալիս կամ ճանապարհներին»: Սա վկայում է, որ աղոթքը սկզբնատողի մոտիվի պատճառով ասվել է կեսգիշերին պատահաբար արթնանալիս կամ գիշերով ճանապարհ գնալիս:

Տե՛ս № 420ա ծանոթագրությունը:

420ե. Խորագիր չունի: Ձետեղված է հավատալիքների բաժնում, իբրև չարից պահպանվելու աղոթք: Բաղկացած է երեք վիպական մասերի հարակցումից: Առաջինը՝ ս. Սարգսի և նրա որդու մոտիվն է, որ հանդես է գալիս սույն տարբերակաշարում, երկրորդը՝ Հորդանան գետի մոտ իջնելու և երկու սրբերի հանդիպելու մոտիվն է, որ առկա է հաջորդ տարբերակում (տե՛ս № 420զ), իսկ երրորդը՝ (11-13 տողեր) առավոտ կանուխ 40 մանկանց ս. սեղան նստելու մոտիվը:

Աղոթքը եզրափակող վերջին 5 տողերը, մասամբ բաղադրված հիշյալ վիպական մոտիվներից (ս. Կարապետը և ս. Սարգիսը ձիու վրա, յոթը պորտը ծովի վրա, իբրև գիշերային խավարի ծովը հսկող սրբեր), զուգակցվել են յոթ Ավետարանը և սուրբ խաչը աղոթողի գլխին ու աչքին լինելու ցանկության հետ և դարձել պահպանության բանաձևեր:

420զ. Խորագիր չունի: Չարից պահպանվելու աղոթք է:

Ձետեղված է Կեսարիայի շրջակա գյուղերի հավատալիքների մեջ և ասվել է այն դեպքերում, երբ մեկը ստիպված գիշերը գնում է ավերակների մեջ բնական պետքերը հոգալու համար: Այդ պահին գնացողը կարող է չար ոգիների ուշադրությունն իր վրա հրավիրել, և որպեսզի չարերի հարվածից զերծ մնա, ասում է այս աղոթքը: Վերջինիս կցված է հետևյալ ծանուցումը. «...Այս աղոթքը ով որ կիտե նե, օրը իրեք տաբրա թը ըսե, Աստված ի չարեն փրկե»:

Սույն աղոթքը նախորդի տարբերակն է, սակայն առանց ս. Սարգսի անվան հիշատակման (հավանաբար լույսը, որի առաջ խոնարհվում է աղոթողն ու ոտները լվանում՝ ինքը՝ ս. Սարգիսն է):

421ա. Խորագիր չունի:

Բանահավաք՝ Արտ. Բարսեղյան, գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

Տե՛ս № 420ա ծանոթագրությունը:

421բ. Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

Առաջին 7 տողերը նույնական են նախորդ՝ № 421ա տարբերակին: 3-րդ տողից սկսվում են նոր անուններ և մոտիվներ: **Սառան** աստվածաշնչյան Հայր Աբրահամի կինն է, որ այստեղ դարձել է ս. Սարգսի կին, **Օխան** (լուսաբերան) և **Ուրուխան** (ոսկեբերան) անունները նույն Հովհան Ոսկեբերանի անվան տարբեր ձևերն են, որոնց հետ կապված վիպերգերի ու զրույցների մոտիվները հարակցվել են սույն աղոթքին և այն ընդլայնել նոր սյուժեով (հմմտ. № 406 ծանոթագրության մեջ բերված բնագրերը):

Վերջին երեք տողերն ունեն հմայական բնույթ, և դրանք աղոթքի բնագիրը վերածել են հմայական չարխափան պահպանական բանածևի:

Տե՛ս նաև № 420ա ծանոթագրությունը:

422ա. Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի կազմակերպած խմբարշավում:

422բ. Խորագրված է «Աղոթք»:

Բանահավաք՝ Ռոզա Գրիգորյան, գրառված է 1964 թ.:

Բանասաց՝ Կարապետյան Բեզո, 87 տարեկան, նախնիները՝ խոյեցի:

Այստեղ ս. Սարգիսն իբրև չարիքներից ու չարքերից պաշտպանող ու պահապան՝ համեմատվել է պարսպի հետ:

Տե՛ս №420ա ծանոթագրությունը:

423. Խորագրված է «Աղոթք պառավական»:

Ասաս-Մասաս (**Ասիս-Մասիս** անվանածևով) հաճախ են հանդես գալիս միջնադարյան երգերում և ժողովրդական աղոթքներում: Դրանք, ըստ երևույթին Սիս-Մասիս լեռնանունների աղավաղումներն են:

Տե՛ս № 420ա ծանոթագրությունը:

424. Խորագիր չունի:

Բանահավաքը, բանասացը, գրառման վայրը չեն նշված:

Հավանաբար 1950-60-ական թթ. գրառում է:

Առաջին տողում կոչականով ընդգծված են ս. Սարգսին բնութագրող ժողովրդական երկու մակդիրներ՝ *ատենահաս* և *բոզ ծիավոր:*

Ըստ «Աշուղ Ղարիբ» արևելյան սիրավեպի հայկական վարկածի՝ աղքատ Աշուղ Ղարիբը սիրահարվում է հարստի դստեր Շահ Սանամին: Հայրը չի համաձայնվում իր դստերը ամուսնացնել աղքատ աշուղի հետ: Վերջինս գնում է օտար երկիր՝ հարստություն ձեռք բերելու և հրաժեշտի ժամանակ պատվիրում Շահ Սանամին, որ եթե յոթ տարի հետո ինքը չվերադառնա, ապա նա կարող է ուրիշի հետ ամուսնանալ:

Յոթ տարի անց, հայրենիք վերադառնալիս, Աշուղ Ղարիբը ճանապարհին ուշանում է և հուսահատված դիմում է ս. Սարգսի օգնությանը: Վերջինս իսկույն հայտնվում է,Ղարիբին առնում է իր ծիու գավակին ու մեկ ակնթարթում հասցնում է Շահ Սանամին [ԹՄԿ, 334]: Ս. Սարգսի կողմից սիրո փափագի կատարման, ժամանակին օգնության հասնելու այս հատկանիշներն են նկատի առնված սույն աղերսական աղոթքում:

425. Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Կցված էր «Սըրբ լոսն էկավ մեր էրդիքը» սկզբնատողով աղոթքին:

Անջատումը կազմողինն է:

№ 420 և հետևյալ աղոթքների տարբերակներից է, միայն սրբերի անունների փոփոխությամբ:

Աղոթքում հիշատակված հայ գորավոր սուրբ կոչումը, **սուրբ Վարդեր,** եղբայրը՝ **Համաղիկ** անունները հիմք են տալիս կարծելու, որ խոսքը վերաբերում է հայ եկեղեցու կողմից սրբացված **Վարդան և Հմայակ Մամիկոնյան** եղբայրներին՝ անունների որոշ փոփոխություններով ու աղավաղումներով:

426. Խորագրված է «Գիշերվան աղոթք»:

Սա ևս նախորդի նման № 420 աղոթքի տարբերակներից է՝ սրբի անվան փոփոխությամբ:

Աննա տաղին ծով - եթե «Անհատակ ծով», համաշխարհային օվկիանոսի (նաև քաոսային ջրերի) ժողովրդական ըմբռնման աղճատումը չէ, ապա վիպական անվանում է (հմմտ. № 421բ):

427. Խորագրված է «Օրշնանք»:

Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, գրառման վայրը, տարեթիվը, բանասացը չեն նշված:

Բնույթով օրհնաբանական աղոթք է՝ կառուցված Հորդանան գետում ս. Հովհաննեսի կողմից Քրիստոսի մկրտության, վերջինիս հրաշագործությունների ավետարանյան մոտիվների հիման վրա:

428. Խորագիր չունի:

Բանահավաքը, բանասացը, գրառման վայրն ու թիվը չեն նշված: Հավանաբար 1950-60-ական թթ. գրառում է:

Բացի առաջին դիմումնային տողից, մնացած հինգ տողերը հանրահայտ վիպերգի համառոտված տարբերակն է, ուր նկարագրված են ս. Կարապետի կողմից դևերի արգելափակումը Մշո Քարքե լեռան վրա գտնվող Իննակնյա կոչված տեղերում: Սուրբ Կարապետի կողմից միայն Կաղ դևին ազատ թողնելու և իր անվամբ վանքի փոշեհան կարգելու առասպելական մոտիվները տե՛ս **Սեդրակյան 1874,** 7, **Սրվանձտյանց 1978,** 75:

Այս բնագրում աղոթային աղերսական իմաստ ունի միայն առաջին տողը, իսկ վիպական մասը հոգեբանական զուգահեռականությամբ արտահայտում է չարից պահպանվելու և ապահովվելու աղոթողի ցանկությունը:

Ստորև բերվում է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավի կողմից գրառված ս.

Կարապետի գովերգը, որը ուշագրավ է մի քանի տեսակետից: Նախ՝ երգում բանաստեղծորեն նկարագրվում է *Մշո Սուրբ Կարապետ եկեղեցին,* նրա աշխարհագրական դիրքն ու նշանավոր ուխտավայր լինելու հանգամանքը: Ապա, որ կարևոր է, ներկայացվում և մեկնաբանվում են ս. Կարապետին տրվող յոթ անունները (հմմտ. աղոթքի «յոթ անվան տեր սուլթան սուրբ Կարապետ» ժողովրդական հանրահայտ դարձվածի հետ): Դրանք, ըստ երգի, հետևյալներն են. **Մարգարե, Հովհաննես, Առաքյալ, Մարտիրոս, Մկրտիչ, Ավետիք, Կարապետ:**

Բացի այդ, երգում հատուկ շեշտված են ս.Կարապետի առավելությունն ու մեծագույն հեղինակությունը այլ սրբերի նկատմամբ («Հրմեն սրբոցս էլ վեր տու ես», համեմատությունը արևի, լուսնի, աղայի, վեզիրի հետ), նրա հիմնական գործառույթները՝ արտահայտված մուրադատու քանիցս կրկնվող և **հասեճար, ճարտար ջառահի, հեքիմ, ցավերի փարատող, մկրտարար** մակդիրներում:

Իսկ վերջում, այլ տաղաչափությամբ (10 վանկանի երկանդամով) ներկայացված են Հովհաննես Մկրտչի ծննդյանն առնչվող և հոր՝ Զաքարիայի, մոր՝ Եղիսաբեթի և Մարիամի հետ կապված ավետարանական լեգենդները [**Ղուկաս, Ա**]:

ՍՈՒՐՓ ԿԱՐԱՊԵՏԻ ԵՐԳ

Սուրփ Կարապետ պանցդի շինած,
Խիստ զանազան ի օրինաց,
Մեչ աշխարիս ակ մ'ի տըրած,
Ակն ու գուհար սուրփ Կարապետ:
Քո չորս պուլոր սալբի ծառեր,
Կարիբ խավքեր մեչ կը թառեր,
Քե կանչողներ մուրադ կառներ,
Մուրադատուր սուրփ Կարապետ:
Քե շինեցին մեչ պըրակին,
Քո տոն էր կանաչ-կիրակին,
Մուրադ կուտաս բեմուրադին,
Մուրադատու սուրփ Կարապետ:
Էկանք խասանք չում Մուրադ գետ,
Ջատու տեսանք սուրփ Կարապետ,
Մուրադն առինք, մենք տառցանք ետ,
Մուրադատու սուրբ Կարապետ:
Տու յոթն անուն ունես քամամ,
Առաճ անուն էր Մարգարա.
Մոր արգանդեն մարգարացար.
Երկու անուն էր Օհաննես,
Քո հոր կապած լեզուն պացար.
Իրեք անուն ի Առաքյալ,
Առաքելոց քարոզացար.
Քո չորս անուն ի Մարտիրոս,
Իսրայելի ազգ մարտիրոսացավ.
Քո հինգ անուն էր Մկրտիչ,
Մեռոն լցիր մեչ քո ափից,
Մկրտեցիր տերն արարիչ,
Մկրտարար սուրփ Կարապետ:
Քո վեց անուն ի Ավետիք,
Տըժոխ Ատամա ավետիք տարար.
Քո յոթ անուն սուրփ Կարապետ:
Տու ես արև, տու ես լուսին,
Քավոր էլար Մարիամ կուսին,
Առիր էճար գետ Հորտանան,
Մկրտեցար սուրփ Կարապետ:
Տու աղա ես, տու ոզիր ես,
Հրմեն սըրփոցս էլ վեր տու ես,
Քեզ կանչողաց տու հազըր ես,
Ո՛վ հասեճար սուրփ Կարապետ:
Հոր անուն Զաքարիա, պապանճավ լեզու,
Մայր Եղիսապեթ սուրփ Կարապետու:
Մարիամ մարգարեացար, քո գալն էր պարի,
Հորժամ պացիր լեզուն քո հայր Զաքարին,
Էլար անվանապետ դու սուրփ Կարապետ:
Անունդ գրեցին առաքյալ անարատ,
Ճարտար ջառահի, հեքիմ, շատ ցավոց փարատ,
Վով էկավ քո տուռ՝ առավ ուր մուրադ:

[ՀԱԲԱ, FFII: 7351, 01/ Վան]

429. Խորագիր չունի:

Բանահավաքը, բանասացը, գրառման վայրն ու տարեթիվը չեն նշված: Հավանաբար 1950-60-ական թթ. գրառումներից է:

Աղոթքն, անկախ ավանդական բանաձևումներից, արդյունք է նոր ժամանակների, թերևս դարասկզբի ազգային-ազատագրական պայքարի շրջանի և անհատական հորինման: Արտահայտած գաղափարներով բուն ազգային աղոթք է, որն ազգի ազատագրման ու պայքարի կոնկրետ գաղափարներով զուգամիտվում, գուցե և սերում է Գրիգոր Լուսավորչին նվիրված միջնադարյան հետևյալ աղոթքից:

ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ

Խընդրեմք ի քէն հայր պատուական,
Լուսաւորիչ ազգի մարդկան,
Տէր սուրբ Գրիգոր պետ պարթևեան,
Եր մեզ պարիսպ և օգնական:
Ծնող բարի, ի մեզ գթայ,
Ջգրուեալ զորդիս քո ժողովեա,
Ի բանսարկուէն զմեզ փրկեա
Եւ ի բարին առաջնորդեա, ամէն:

[Մատենադարան, Ձմայիլ № 1]

430. Դրված է «Աղոթքներ» ընդհանուր խորագրի տակ:

Բանահավաք՝ Արտ. Բարսեղյան, գրառված է 1915-16 թթ. Ե. Լալայանի խմբարշավում:

Բնույթով աղոթք չէ, այլ կրոնական վիպերգի հատված (հմմտ. №406 ծանոթագրությունը), ս. Գևորգի անվան հիշատակմամբ:

431. Խորագրված է «Աղոթք պառավական»:

Սուրբվեոր՝ հավանաբար սուրբ Գևոր անվան աղավաղումն է:

432. Խորագիր չունի:

Առաջին քառատողը ասվում է ձմերուկի մասին իբրև հանելուկ [տե՛ս **Հարությունյան 1965,** №№ 405ա-ժա]:

7-9 տողերը հաճախ հանդես են գալիս տարբեր աղոթքներում, իբրև թափառիկ մոտիվներ (տե՛ս № 405, 433), որոնք ունեն նաև անկախ կիրառություն որպես երգ, ինչպես հետևյալը.

Կաթնով աղբյուր, քարե տաճար,
Երթանք անենք վարձ վաճառ,
Ասպած անի մեր խուկին ճար:

[ԱԳ XIX, 99 / ՎԱՆ]

Ս. Հակոբ՝ նկատի է առնվել Հակոբ Մծբնացի հայրապետը, որ բաղարկվելով ս. Սարգսի աղոթքներին բնորոշ մոտիվներին, դարձել է Մարտիրոսի որդի (ս. Սարգսի որդին դարձել է ս. Հակոբի հայր): Հմմտ. №422ա:

433. Խորագրված է «Աղոթք պառավական»:

Աղոթքն իր ապաշխարական ոգով և մանավանդ վերջին քառատողում արտահայտած անդրաշխարհում հոգու ճամփորդության մոտիվներով՝ բնորոշ է երեկոյան աղոթքներին:

434. Խորագրված է «Հայ տեվերցի պառվի աղոթքը»:

Բանահավաք՝ Աբրահամ Աբրահամյան (Խիկար), գրառված է 1930-ական թթ.:

Տողատումը կազմողինն է:

Տեվեր կամ Դըհեր (տե՛ս № 435 աղոթքը):

Այս և հաջորդը (տե՛ս) քրդախոս հայերի աղոթք են:

Փութկի խանե՝ Փութքի ս. Գևորգի վանքը, գտնվում է Մոկսում, ձյունապատ լեռան վրա և հռչակված էր եղանակը գուշակող իր աքաղաղով:

435. Խորագրված է «Դհերցու աղոթքը»:

Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, գրառված է 1930-ական թթ.:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 434 ծանոթագրությունը:

Գ. ԾԻՍԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ (№№ 436 - 447)

436. Խորագրված է «Աղոթք»:

Ունի հետևյալ ծանուցումը. «Այս աղոթքն ասում են քառասուն մանկանց տոնին: Օրիորդք հավաքվում են մի տան մեջ և 40 անգամ 40 ծունր են դնում և ամեն անգամ կրկնում են այս աղոթքը»:

Տե՛ս № 437 ծանոթագրությունը:

437. Խորագրված է «Քառասուն մանուկ»:

Բանահավաք՝ Ն. Նիկողոսյան, որն աղոթքի բնագիրը բերել է հետևյալ նկարագրության մեջ. «Մեծ պասի կեսին միջունքն էր: Նորահարսին փեսայի տանից ընծաներ էին տանում: Այդ շաբաթվա ուրբաթ երեկոյան նորահաս աղջիկները հավաքվում էին մի տան մեջ և նրանցից մեկի ղեկավարությամբ կատարում էին «Քառասուն մանուկ»: Նրանք այդ գիշեր պետք է ծունր դնեին 40x40=1600 և կրկնեին» այս աղոթքը: «Աղոթքը տևում էր մինչև ուշ գիշեր. նրանք աղանձ էին ուտում չքնելու համար»:

Քառասուն մանկունք, - եկեղեցական ավանդությամբ՝ Լիկինիոս կայսրի ժամանակ, 316 թ. մարտի 9-ին, Սեբաստիա քաղաքի մերձակա լճակում քրիստոնեական հավատքի համար նահատակված 40 քաջարի զինվորները (ծագումով Կապադովկիայից և Փոքր Հայքից), որոնք ենթարկվելով մարմնական ծանր տանջանքների, չեն ուրանում իրենց հավատը:

Ի վերջո հեթանոս դուքսն ու դատավորը նրանց վիզը պարան են գցում, գիշերով լցնում բոլորին Սեբաստիայի մերձակայքի սառ լճակը, իսկ կողքին տաք բաղնիք սարքում, որպեսզի նահատակվողները գայթակղվեն բաղնիքով, սառ ջրից դուրս գան և ուրանան իրենց հավատը: 40-ից միայն մեկն է գայթակղվում, լճակից դուրս է վազում, մտնում բաղնիք, բայց սաստիկ ջերմությունից տեղնուտեղը մահա-

նում: Մնացած 39-ը լճակում աղոթում են առ աստված: Կատարվում է հրաշք. երկնքից լույս է իջնում լճակի վրա և 39 լուսեղեն պսակ՝ նահատակվողների գլխին: Հրաշքին ականատես հսկիչ բաղնեպանը արթնացնում է պահակներին, ձայն է տալիս, որ ինքն էլ քրիստոնյա է դարձել և իրեն գցում է լճակը և արժանանում 40-րդ պսակին: Գալիս են դատավորն ու դուքսը, լճակից հանել են տալիս նահատակվածների մարմինները, բարձում սայլերին, տանում գետափ, դիակները վառում և մոխիրը լցնում գետը:

Երրորդ օրը Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը երազում տեսնում է 40 նահատակներին, որոնք խնդրում են գիշերով գալ գետափ և իրենց նշխարները հանել գետից: Գիշերով գաղտնի, գետի ջրերի վրայից հավաքում են նրանց նշխարները, բերում և հետագայում դրանց վրա Սեբաստիայում կառուցում են մի վայելուչ եկեղեցի 40 մանկանց անվամբ, որը դառնում է ուխտատեղի [Ալգերեան, Բ, 482-510]:

438ա. Խորագրված է «Քառասուն մանկանց տոնի գիշերը քառասուն ծուռ դնելով ասելու»:

Տողատումը կազմողինն է:

Տե՛ս № 437 ծանոթագրությունը:

438բ. Բերված է «Լճիկ» խորագրով ծեսի հետևյալ նկարագրության մեջ. «Բախտ բաժանելու երեկոն Լճիկն է, երբեմն այդ օրը ձյուն կգա, այնպես որ՝

Լճիկ, ձյուն էկի, տվի ճիչք (զիստ):

Բարեպաշտ կիները, մուրազ ունեցող աղջիկները կը հավաքվեն մի սակավամարդ տուն, կը վերցնեն քառասուն փոքրիկ քար և կսկսեն ծուռը իջնել աղոթելով<...>: Քառասուն ծուռերից հետո մի քար կը ձգեն և մի քիչ կը հանգչեն այնպես, որ մինչև առավոտյան դեմ հազիվ կը լմնցնեն քառասուն անգամ քառասուն ծնրադրությունը»:

Տե՛ս № 437 ծանոթագրությունը:

439. Խորագրված է «Քառասուն մանկանց տոնի գիշերը քառասուն ծուռ դնելով ասելու»:

Տե՛ս №№ 436, 437, 438·բ ծանոթագրությունները:

440. Բերված է «Ջատիկ» խորագրով հետևյալ ծեսի նկարագրության մեջ. «Օծունում պատարագից հետո ժամավորները դուրս են գալիս եկեղեցուց և շրջապատում Սմբատ թագավորի դամբարանը, մի քանի գյուղացիներ բարձրանում են նրա աստիճանների վրա և երգում հետևյալը, որի յուրաքանչյուր տան ավարտին բազմությունը ձայնակցում է երգելով. օրհնեալ է Աստուած» և բերվում են սույն օրհնաբանական աղոթքի առաջին վեց տողերը, որոնք փաստորեն կրկներգ են:

Վերատողատումը կազմողինն է:

Բնույթով Ջատիկը (Քրիստոսի հարությունը) ավետող հասարակական ծիսակատարության օրհնաբանական աղոթք է և մերձենում է «ավետիս» կոչված ժողովրդակրոնական ծիսերգերին:

Բանահավաքի (Ե. Լալայան) վկայությամբ՝ այս աղոթերգին հաջորդում է ծիսական զոհաբերության՝ Ջատկի մատաղի բաժանումը, կատարված երկու տարբեր զո-

հատեսակների և կենդանիների՝ խոզի («թուրքատարուկ») և տավարի («ախար») մսից:

Ծիսական այս աղոթքը բաղադրված է եկեղեցական օրհնաբանական բանաձևերից, Քրիստոսի կյանքի սուրբգրային և կրոնական մոտիվներից, «Տեր ողորմեա» տերունական հանրահայտ աղոթքի հատվածներից և կարևորը՝ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի հիմնական բնագավառները բնորոշող իրողություններից (վերջին 15-տողյա տունը), որոնց օրհնության և պահպանության բաղձանքը իր վրա է կրում աղոթքի ողջ իմաստաբանությունը (հանրույթի սոցիալ-տնտեսական գոյության ապահովում):

441. Խորագիր չունեն:

FBI բանահավաքը Հարություն դպիր Տեր-Հովհաննիսյան Սարոյանցն է, գրառված՝ 1881 թ.:

FFIII բանահավաքը Խաչ. Փորքշեյանն է, գրառված՝ 1961 թ.:

Վերջին երկտողում հիշատակված է Համբարձման տոնից հետո հնգօրյա (եկեղեցականում՝ եռօրյա) պասը պահելուն, որն աղոթքում դիտված է որպես հոգիների դատաստանի ժամանակ մեղքերի ներման նախապայման:

442. Խորագրված է «Օրհնություն տան և պարագայից»:

Բացի առաջին տողի և վերջին երկտողի օրհնաբանական բանաձևերից՝ ամբողջ բնագիրը կառուցված է տան անդամների, կարասիների և ունեցվածքի գրեթե բոլոր տեսակների մանրակրկիտ թվարկումների վրա, որոնց մեջ նկատվում է որոշ զավեշտական վերաբերմունք: Այդ զավեշտն է եղել, անշուշտ, պատճառը, որ սրա տարբերակներից մեկն արժանացել է Նաղաշ Հովնաթանի գրական մշակմանը՝ *«Օրհնութիւն գեղացի երէցի»* խորագրով, կատարված միևնույն ոտանավորով և նույնության հասնող ընդհանրություններով [տե՛ս **Ն. Հովնաթան, Բանաստեղծութիւններ, Ե., 1951,** էջ 126-127]:

443. Խորագրված է «Օրհնություն»:

Սա կրոնական օրհնություն է, սկզբնապես գրաբար հորինված, հետագայում ժողովրդական լեզվի ազդեցությամբ ենթարկված լեզվական և ոճական փոփոխության:

444. Խորագրված է «Աշուղների օրհնությունը»:

Ըստ երևույթին ասվել է արևմտահայ աշուղների կողմից: Լեզվական առումով պատկանում է արևմտահայ բարբառներին և ոչ մի առնչություն չունի գրառման տեղավայրի՝ Ղարաբաղի բարբառի հետ: Բաղադրված է յոթ տարբեր օրհնությունների շարքերից, ոգով ու բովանդակությամբ կապված սուրբգրային ավանդական պատկերների ու խորհրդանիշերի հետ:

Մելքոն, Գասպար, Բաղդասար, Քրիստոսի ծնունդը կանխագուշակող, Բեդղեհեմ ժամանող և նրան առաջինը երկրպագող Արևելքի երեք մոգերը կամ թագավորները:

Աղքատ Ղազար, նկատի է առնվել Քրիստոսի պատմած նորկտակարանյան զրույցը Աղքատ Ղազարոսի մասին: Վերջինս, լինելով աղքատ ու մարմինը վերքերով

ծածկված, պառկում էր մի մեծահարուստ մարդու տան առջև և սնվում նրա սեղանի փշրանքներով: Մեռնելուց հետո Ղազարոսը գնում է դրախտ, Հայր Աբրահամի գիրկը, իսկ մեծահարուստը՝ դժոխք և ենթարկվում անլուր չարչարանքների [տե՛ս **Ղուկաս, ԺԶ,** 19-31]: Աղոթքում Աղքատ Ղազարին տրված «Հոգովն սուրբ» մակդիրը բնորոշում է Ղազարոսի արդար և սուրբ էությունը և բաղձանք է արտահայտվում ենթարկվել նրա օրհնությանը:

Սահակա գառ, նկատի է առնվել հինկտակարանյան զրույցի այն մոտիվը, ըստ որի, երբ Հայր Աբրահամը կամենում է աստծոն զոհել իր միակ որդուն՝ Իսահակին, աստված նրա փոխարեն ծառից կախում է մի արու գառ՝ խոյ, որը և զոհաբերվում է Իսահակի փոխարեն [**Ծննդոց, ԻԲ,** 1-14]:

445. Խորագիր չունի:

Բնագիրը մատիտով սևագիր է, հավանաբար գրված Ե. Լալայանի ձեռքով:

Ծիսական աղոթք է, բնույթով օրհնաբանական՝ բաղադրված մեծ մասամբ ժողովրդական բարեմաղթության բանաձևերից: Ասվել է, ըստ երևույթին, ծիսարար քահանայի կողմից ինչ-որ ծեսի և ծիսական սեղանի առիթով: Օրհնաբանական մոտիվներով մասամբ մերձենում է նախորդ աղոթքին:

Տե՛ս № 444 ծանոթագրությունը:

Սուրբ Սաբեկա ծառ,- այն ծառը, որից աստված կախում է Իսահակի փոխարեն իջեցրած գառը (խոյ):

Մելքիսեք, Հին կտակարանի Սաղեմա թագավոր Մելքիսեդեկ քահանան, որն օրհնում է Աբրահամին թշնամու դեմ տարած հաղթանակի համար [**Ծննդոց, ԺԴ,** 18-20]:

446. Խորագիր չունի:

Վերնագրված է ըստ բովանդակության՝ կազմողի կողմից:

Բանահավաք՝ Գ. Թարվերդյան, գրառված է 1936 թ. Արտաշատի Ավդալար գյուղում, Վանի Շաղբաղի գյուղի նախկին բնակիչ, 33-ամյա Ինջիմազյան Մարգարիտից:

Աղոթքն իր երկանդամ հորինվածքով՝ վիպական մասի և ողորմության աղերսանքի հարադրությամբ, համասեռ է. աղերսանքը բխում է վիպական նկարագրության տրամաբանությունից:

447. Խորագիր չունի:

Բանահավաք Ե. Լալայանի ծանուցմամբ՝ աղոթքն ասվել է ուխտավորի կողմից ուխտավայրի քարը, դուռը, հուշարձանը համբուրելուց, մոմերը վառելուց և մի քանի անգամ երկրպագելուց հետո:

Ժողովրդական աղերսական աղոթքներին խիստ բնորոշ նմուշ է, ամբողջապես տոգորված իրական կյանքի սոցիալ-բարոյական, ընտանեկան, նյութատնտեսական պայմանների բարելավման ցանկությունների կատարման խնդրանքով, ուր հոգու փրկության կրոնական գաղափարը, հակառակ եկեղեցական աղոթքների, աննշան տեղ է գրավում:

448ա. Խորագիր չունեն, բայց բերված են իբրև «Պառավանց աղոթք»: Առաջին երկու աղոթքների բանահավաքը Բենսեն է (Սահակ Մովսիսյան): ԳԱԹ բանահավաքը Լևոն Մաքսուտյանն է, գրառված է 1881թ.:

Աղոթքում լուսնի տարբեր փուլերը (նորալուսին, լիալուսին, փլուզում և անհայտացում) համադրվել են մարդու հասակային տարբեր ցիկլերի հետ (ծնունդ, հասունացում, ծերացում, մահ), և ըստ այդմ լուսինն անձնավորվել է տղամարդու կերպարում: Նորալուսինը աղոթքում հանդես է գալիս որպես նորափեսա (կանաչ-կարմիր թագավոր, ուր նկատի է առնված նորափեսայի խորհրդանիշը՝ կանաչ-կարմիր նարոտը, ուսբանտը): Ըստ աղոթքի՝ նա ծերացել է, գնացել անդրաշխարհ (եզր աշխարհ՝ աշխարհիի ծայրը, եզրը) և ապա վերածնված, մանկացած, ջահելացած վերադարձել:

Լուսնի այս հասակային տարբեր փուլերի հավերժ շրջապտույտը իր կորնչմամբ, անհետացմամբ, ապա վերածնմամբ ու վերադարձով արտահայտել է մեռնող-հառնող (կամ կորսվող-վերադարձող) աստծո առասպելաբանական գաղափարը: Աղոթքում լուսինը դիտված է որպես աստվածային կերպար, անդրաշխարհից եկած, նոր կյանքի, նոր սկզբի ավետաբեր, որին դիմում է աղոթողը և ստանում ցանկալի պատասխանը աշխարհի խաղաղության, թագավորների հաշտության, կենսամիջոցների ապահովման, կյանքի հարատևման և հոգու փրկության մասին, որը և աղոթքի բուն նպատակն է:

Աղոթքում անուղղակի արտահայտված է նաև նորալուսնի դիրքին նայելով՝ նոր սկսվող լուսնային ամսի բարեբերությունը կանխագուշակելու ժողովրդական սովորույթը:

448բ. Խորագիր չունի:

Բնագիրը փոքր-ինչ աղճատված է, որը հիմք է տվել բանահավաք Եղիա Քասունուն **կաստէր, մահաս** բառերի նկատմամբ անհավանական ենթադրություններ անել: Մինչդեռ իրականությունն այն է, որ *կաստէր* բայը բնագրում *ասում էր* իմաստով է գործածված, իսկ *մահաս՝ մահ* բառի տրականի աղավաղումն է, որ կցվելով հարստության բառին՝ լրիվ աղճատել է բառակապակցության իմաստը: Քասունին առաջարկում է մահան կարդալ մանկան, որ այնքան էլ համոզիչ չէ:

Տե՛ս № 448ա ծանոթագրությունը:

448գ. Խորագրված է «Նորածագ լուսնի աչքալուսանք»:

Տե՛ս № 448ա ծանոթագրությունը:

448դ. Խորագրված է «Աղոթք ս. եկեղեցու մեջ»:

Բանահավաք՝ Տրդատ վ. Պալյան:

Աղոթքը մասամբ աղճատվելով՝ հարմարեցվել է Քրիստոսին, թեպետ ոչ լիակատար իմաստով: «Ծեր կնացիր, մատղաշ էկար» լուսնին նվիրված ավանդական տողը աղճատվելով վերածվել է «Տեր կենացդ մատղաշ եկար» գրեթե իմաստազուրկ նախադասության: Աղոթքին հավելվել է «Մեղա՛, մեղա՛, Տեր ողորմյա» ապաշխարանքի եկեղեցական բանածևը, ավանդական բնապաշտական աղոթքին հաղորդե-

լով քրիստոնեական կրոնական երանգ:

Տե՛ս № 448ա ծանոթագրությունը:

449. Ըստ բանահավաքի՝ ասվում է «Նոր լուսին տեսնելիս»:

Այստեղ նորալուսնից աղերսվում է աշխատանքի բարիքների առատություն և մարմնական ուժ ու զորություն:

Տե՛ս № 448ա ծանոթագրությունը:

450ա. Խորագիր չունի:

Այստեղ առկա է լուսնի կերպարի ամբողջական պատկերացում. լուսինը հանդես է գալիս դեղնագույն - ոսկեգույն կերպարով, դեղին ծիրով, մինչև գոտկատեղը հասնող մորուքով: Ծերացող ու ջահելացող նրա հավերժ կերպարանափոխությանը (տե՛ս № 448ա ծանոթագրությունը) այստեղ ավելացել է նոր գործառույթ՝ մարդկանց մեղքը անդրաշխարհ տանելու և այնտեղից վարձք՝ հատուցում, բերելու հատկանիշը՝ կապված նրա ծերացման և մանկացման կերպարանափոխումների հետ: Մեղքի և վարձքի այս կրոնական ըմբռնումների հետ լուսնի առնչումը առավել է շեշտում վերջինիս դիցական, աստվածային նկարագիրը և նրա կապը այսրաշխարհի և անդրաշխարհի կրոնաբարոյական պատկերացումներին: Լուսնի կերպարի դիցական հատկանիշը աղոթքում առավել է զորանում նրա նկատմամբ եղած բացահայտ պաշտամունքով՝ արտահայտված աղոթողի կողմից նրան երկրպագելու՝ բերանքսիվայր ոտքը ընկնելու պատկերով:

450բ. Խորագիր չունի:

Բանահավաքներ՝ Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ:

Այստեղ լուսնի բացահայտ պաշտամունքից բացի (տե՛ս № 450ա ծանոթագրությունը), առկա է նաև երկնային ծովի առասպելական պատկերացումը:

451. Խորագիր չունի:

Բանահավաքներ՝ Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ:

Տե՛ս № 450ա ծանոթագրությունը:

Բանահավաքների ծանուցմամբ՝ պերես բառը «Կը գործածվի առանց նշանակությունը գիտնալու»:

Մինչդեռ ելնելով բնագրի իմաստից և մյուս տարբերակների տվյալներից, հավանաբար այն **երես** բառն է, պրսկ. **բե** (բրբռ. պե) նախածանցի հավելմամբ, այսինքն՝ երեսին, երեսի վրա: Երկրորդ տողում խոսքն ուրեմն երեսի վրա ոտքը ընկնելուն, այն՝ երկրպագելուն է վերաբերում (հմմտ. նախորդ տարբերակները):

Այս տարբերակում լուսնին երկրպագելու նպատակն է դառնում երեք զինավոր (ռազմի) սրբերի (Հիսուս, Քրիստոս, Բարեխոս - հավանաբար Աստվածածինը) օգնության հասնելու ակնկալիքը, հանգամանք, որ վկայում է լուսնի աստվածային գերակայության հնագույն ըմբռնումը:

452. Խորագիր չունի:

Բանահավաքներ՝ Հրաչյա և Արմենուհի Աճառյաններ:

Ծովին վրա փարա մը կա տողում լուսինը համեմատվել է ծովի (երկնքի) վրա գտնվող կլոր մետաղադրամի (փարա), ըստ երևույթին՝ ոսկեդրամի հետ: Աղոթողի կողմից այդ ոսկեդրամը (իմա՝ լուսին) վերցնելուն պես ծովն ընկնելու, ծովից դուրս

գալուց հետո հորն ընկնելու և ս. Սարգսին օգնության կանչելու, այդ հորից (անդունդ, ստորերկրյայք, դժոխք) փրկվելու և երկնային դրախտում՝ իբրև արդարի տեղ գտնելու ձգտումներում արտահայտված են մի կողմից լուսնի նվիրական պաշտամունքը, մյուս կողմից՝ երկնային ծովի (երկնքի) և անդնդային հորի (ստորերկրյայքի), այլ կերպ ասած՝ դրախտի ու դժոխքի, համապատասխանաբար՝ արդարների և մեղավորների հակադրության առասպելաբանական պատկերացումները և ս. Սարգսի կողմից արդարներին փրկելու հավատալիքը:

Մոտիվներով նորալուսնի սույն աղոթաշարին է հարում հետևյալ մանկական գովերգը.

Էրթանք, էրթանք ամպում վրա,
Նահապետին ծովում վրա.
Քանծ իրիգայն՝ արդար ես,
Քան լուսինկան՝ պայծառ ես,
Օսկի պտուղ բերան ես:

[ԳԲՍ, 644 / Սեբաստիա]

ՋԱՎԵՇՏԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՈԴԻԱՆԵՐ (№№ 453 - 463)

Սույն բաժնում զետեղված են թվով սակավ, բայց ժողովրդական հումորով հագեցված զավեշտական աղոթքներն ու հայտնի աղոթքների ծաղրանմանեցումները (պարոդիաներ/:

453ա. Խորագրված է «Տկճորին աղոթք»:

ՀԱԲԱ բանահավաքն է Գ. Թարվերդյանը. գրառված է 1930-ական թթ., 60-ամյա խոտրջրցի Քելեկյան Արսենից:

Գինու տկճորները հնում պատրաստում էին այծի մորթուց: «Աղոթքում» ներկայացված է այծի «կենսագրությունը»՝ սկսած ուլային մանկությունից մինչև հասունացումը, մորթումը, քերթումը, մորթու ծյութապատումը և օգտագործումը գինետանը: Այդ ամենը ներկայացված է սրբազան զոհաբերությունների բնագրերին յուրահատուկ լեզվով ու ոճով: Իսկ աղոթողի ցանկությունն արտահայտող եզրափակիչ երկտողի արտաքնապես սրբազան բնույթի մեջ արտահայտված է ժողովրդական անկեղծ հումորը:

453բ. Խորագիր չունի: Դրված է զավեշտական երգերի շարքում:

Տե՛ս № 453ա ծանոթագրությունը:

454. Խորագրված է «Շատ խոսողին լռեցնելու»:

Ըստ երևույթին ասվել է մանկական միջավայրում:

Տիպաբանորեն հմայական բանածև է՝ կազմված վիրավորիչ պարսավանքների շարքից, որն ավարտվում է կապքի (բերանը փակելու) պատկերավոր ասույթով:

455ա. Խորագիր չունի: Դրված է աղոթքների շարքում:

455բ. Ասվում է մանկական միջավայրում, երբ մեկը գանգատվում է հիվանդությունից:

456. Խորագիր չունի:

ՆԴ բանահավաք Վ. Տաշրացու վկայությամբ՝ ասել են երիտասարդ աղջիկները խաղալիս, երբ մեկը հիվանդ է ձևանում, իսկ մյուսը բուժելու նպատակով ասում է սույն աղոթքը:

Այդ առթիվ առավել մանրամասն տվյալներ է հաղորդում ԱՀ XI բանահավաք Ե. Լալայանը:

«Երբեմն աղջիկները միատեղ ժողովված դեպքում զվարճության համար սկսում են հետևյալ աղոթքի ձևով հորինված խաղը խաղալ:

Աղջիկներից քնքույշը,- Աղջի ջան, գլուխս շատ գեշ ցավում է:

Նրան ծաղրող մեկը,- Ախ յարաբ իմանամ ո՞վ աչքը տվեց:

Մեկ ուրիշ կատակասերը,- Աղջի ջան, արի աղոթեմ, որ անց կենա, որ նրանից հետո էլ ոչով չկարենա քեզ աչքը տալ»:

Անկախ իր զավեշտական բնույթից, աղոթքը տիպով նույնանում է հմայական աղոթքներին՝ բաղադրված տարբեր անեծքների չափածո շարակցումով:

457. Բերված է որպես մանկական ստեղծագործություն, որ ասում են այն անձին, որին կամենում են փոխանցել իրենց հիվանդությունը:

Տիպով ծավալուն անեծք է՝ հմայական բովանդակությամբ:

458. Խորագրված է «Երգիծողական օրհնություն» և դրված՝ «Օրհնություններ» շարքում:

Սա ևս նախորդների նման բաղադրված է տարբեր անեծքների չափածո շարակցումով: Առաջին տողի «Օխնեմ, օխնեմ» բառի կրկնությամբ ընդգծվում է ստեղծագործության ծաղրանմանեցումը օրհնություններին և օրհնաբանական աղոթքներին:

459. Խորագիր չունի:

Գրառված է 1881 թ., բանահավաք Լևոն Մաքսուտյանի կողմից:

Աղոթքի պարոդիա է, ուր ծաղրի են ենթակված բանասացի միջավայրին ծանոթ թե՛ հայ բացասական անձինք և թե՛ մանավանդ, օտար հոգևորականներն ու կանայք, որոնց նկատմամբ արտահայտված են սեփական երկրից նրանց արտաքսվելու և անպատվության ենթարկվելու ազգային-ժողովրդական բաղձանքները:

460. Խորագիր չունի. դրված է «Աղոթքներ» շարքում:

Աղոթքի պարոդիա է:

Հմմտ. № 459 աղոթքն ու ծանոթագրությունը:

461. Խորագիր չունի. բերված է բառարանում որպես մանկական ստեղծագործություն:

Բանահավաք՝ Բենսե (Սահակ Մովսիսյան):

Աղոթքի պարոդիա է:

462. Խորագրված է «Աղոթք այլազգ հիվանդաց վրա»:
Աղոթքի պարոդիա է՝ թուրքերենի խառնուրդով:

463. Աղոթքի պարոդիա է, հորինված Ն. Շնորհալու «Նայաց սիրով Հայրն գթաց» շարականի սկզբնատողի համաբանությամբ:
Գրառված է 1970-ական թթ. Թիֆլիսում, բանասաց՝ Հարությունյան Յուղաբեր, ծնված 1919 թ., լսել էր կարսեցի հարևանուհուց:

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ագռ. - ա գռռ (կոչական), ա՛յ կոր, ա՛յ կարիճ: Տե՛ս Կոր:

Ագռա, նաև՝ **Ակռա.**- ատամ, ագռեք.- ատամներ:

Ադամորդի. - Ադամ նախահոր որդի, մարդ:

Ադամութուն. - ատամներ, ատամունք: *Ադամութուն պղնձէ* (№ 186) - պղնձէ ատամներ:

Ազ. - ես: *Ազ մեղավոր ամ.* (№ 435). - ես մեղավոր եմ:

Ազար. -հիվանդություն (անասունների):

Ազգ ու տակ. - ամբողջ ազգը, տոհմը:

Աբ. - ծի: *Աբ հազար, չաբ հազար* (№ 9ա) - հազար ձի, հազար ղրխկոց: Տե՛ս **Չաբ:**

Աբեշ տալ. - կրակ տալ, վառել:

Աժդըհար. - 1. աժդահա, հսկա, 2. վիշապ:

Ալ, ալք. - ծննդկանին և նորածնին վնասող չար ոգի (տե՛ս Ծանոթագրությունները):

Ալլահ. - աստված:

Ալամ աշխարիք. - ողջ աշխարհը, ամենքը:

Ախ. - ահ, երկյուղ, վախ:

Ախտաժետ. - 1. հիվանդ, ցավագար, 2. հիվանդացնող, 3. ախտավոր կրքերով վարակված:

Ածամեր. - աստվածամայր, Մարիամ Աստվածածինը:

Ակն. - աչք: Ակնել, - ակնահարել, աչքով տալ: *Որն որ ակներ, ակնել խփեր* (№ 40), - ով որ ակնահարել է, աչքով խփել:

Ահ է զարիայ. -չարաղետ հիվանդություններ: *Ահ է զարիայ կապուտ կարմիր ծովուն* (№ 135),- չարաղետ հիվանդությամբ են բռնված կապույտ ու կարմիր ծովերը:

Աղաք. - առաջ, առջև: *Աղաք գնալ,* - առաջ գնալ, առաջանալ: *Մեկն ալ ազգ ու աղաքիս պահապան* (№ 260), - մեկն էլ ազգիս ու իմ առջևը լինի պահապան:

Աղբիյ. - աղբյուր:

Աղբրուկ. - եղբայր, եղբայրիկ:

Աղեյ.- աղեկ, լավ, ընտիր, սիրուն:

Աղոթրաճ. - 1. արևելքը լուսաբացին, ուր իր դեմքն է ուղղում աղոթողը, 2. այգաբաց, լուսաբաց:

Աղոքք. - աղոթք:

Աճամ. - պարսիկ:

Աճափ. - արդյոք:

Ամանաք. - ավանդ:

Ամիրայ. - 1. կուսակալ, կառավարիչ, իշխան, 2. Կ.Պոլսում բարձրաստիճան հայերի հարգալից տիտղոս:

Այ. - Ահ, երկյուղ, վախ:

Այնի. - դարձյալ, ևս, էլի: *Այնի դու օղորմանաս հետ բարի լուսուն* (№ 376 ծանոթագրությունը), - դարձյալ դու ողորմաս բարի լույսի հետ:

Այս. - չար ոգի, չար շունչ, դև:

Անա. - մայր, մայրիկ: *Մեյրամ անա,* - Մայրամ մայր (=Աստվածածին):

Անասուն. - անուսում (№150):

Անբին. - ամպին:

Անգիրեկ. - անկրակ, առանց կրակի:

Անգյիստ. - հանգիստ:

Անգումանք. - 1. հույս չունեցողներ, 2. անհուսություն:

Անդար. - անթիվ, անհամար:

Անդենակ. - անդանակ, առանց դանակի:

Անդըմնալուժ. - անդամալույծ:

Անդիվոր. - ընտանիք, տունուտեղ:

Անեղ. - 1. աղեղ, *անղի.* - աղեղի, 2. անստեղծ, ինքնագո (աստվածային մակդիր):

Անզեղջ.- չզղջացող:

Անըզգա. - անզգամ, լիրբ: *Անըզգա գընիկ,* - անզգամ կին:

Անթաթար. - անդադար, անհանգիստ, ալեկոծ:

Անթառական. - անթառամ, չթառամող, չթորշոմող: *Անթառական պսակ* (№236), - անթառամ պսակ:

---

* Բառարանում չեն ընդգրկվել այն բացահայտ բառախաղերն ու բառային դարձվածները, որոնց իմաստն անստույգ է ու անմեկնելի:

Անժամ. - անշարժ:
Անժամակ. - անժամանակ, ժամանակավրեպ, ժամանակից շուտ:
Անիշտահ. - անախորժակ, առանց ախորժակի:
Անլսաղաց. - պինդ, ամուր, անշարժ:
Անխալկին. - առանց կաթսայի, անպղինձ, անկաթսա:
Անխաչ. - առանց խաչի, խաչանշանի: *Անխաչ խմոր,*- առանց խաչանշանի խմոր (հայկական կենցաղում ամենուրեք հունցած խմորի վրա, ձեռքով խաչանշան էր դաջվում):
Անծանակ. - 1. չծանակված, չծաղրված, անեղծ, 2. անծաղրելի, անպարսավելի: *Անծանակ պսակներ* (№ 348), - անեղծ պսակներ:
Անկախ բեկախ (անգահ բեգահ). - անժամանակ, անսպասելի, հանկարծակի:
Անճառելի. - անասելի, աննկարագրելի, անպատմելի:
Անտառց.- անդարձ, հեթանոս, անհավատ: *Անտառց՝ տառց էկավ* (№ 427), - անդարձը (անհավատը) դարձի եկավ (դավանափոխվեց):
Անտի տյունիո (անդի դունիա). - անդրաշխարհ, այնկողմնային աշխարհ, մահվան թագավորություն:
Անօրա. - անօրեն, *անօրի,* -անօրենի:
Աննըվեցավ. - անուներվեց, անվանակոչվեց, անվանադրվեց:
Անքյադար. - անփորձանք, անվտանգ:
Անմահրուր. - անբարուր, առանց բարուրելու: *Անմահրուր մսուր տրին* (№ 413), - անբարուր (մանուկ Հիսուսին) մսուր դրին:
Անմարեմար.- անմայր, որբ:
Անպահ. - անժամանակ, տարաժամ:
Անշենփուռ. - անշամփուր, առանց շամփուրի:
Անսալ. - 1. լսել խոսքը, 2. հանդուրժել: *Անսայ անծիս,* - լսիր, հանդուրժիր անծիս:
Անտառք. - առանց դարձի եկածներ, մեղքերը չխոստովանածներ (№ 5(400):
Ապա. - մեծ հարս, ավագ քույր, մայր:
Աշգյ, աշք. - աչք: *Աշք ըմող,* - աչք տվող, ակնահարող:
Աշքար. - արդար:
Աշվի, աչվի. - աչքեր:
Աչքել. - 1. նայել, տեսնել, դիտել, 2. ակնահարել, աչքով տալ:
Աչքով հարվել, - ակնահարվել, չար աչքի ենթարկվել:
Ապեկի. - ապակյա: *Ապեկին քաս* (№ 201), - ապակյա քաս:
Ապիկի. - ապակի, ապակե բաժակ:
Ապուլ տալ. - արծակել, բաց թողնել: *Թեք ինձի ապուլ տուր,* (№ 1(159) իգ), - միայն թե ինձ բաց թող:
Աջիյի. - աջի, աջ կողմի:
Առատաբան. - ճարտասան, պերճախոս:
Առըծու. - առյուծի:
Առիք. - առաստաղ, ձեղուն:
Առունծ. - ճնճղուկ:
Առտոնց, Առտուն, Առուտվան. - առավոտյան:
Առվուղչութին. - առողջություն:
Առքավուրին. - արքայություն, դրախտ:
Ասդարներ. - արդարներ:
Ասլան. - առյուծ:
Ասկ. - ազգ:
Ասմա կերդան . - ճռճվող վիզ, պարանոց:
Ասսու. - Աստծու:
Ասպած, Ասվազ, Ասված, Աստվազ, Ասֆած. - Աստված:
Ասվազածին, Ասվարածին. - Աստվածածին:
Աստղփուշ. - աստղածև փշենի, որ մատղաշ ժամանակ ուտում են, իսկ սովորաբար կիրառվում է բուժահմայական արարողություններում:
Աստըվոր. - 1. աշխարհ, 2. երկրային, աշխարհային, 3. ժամանակավոր, վաղանցուկ:
Աստըծոյ մայ. - Աստվածամայր:
Ասուղ. - ասեղ:
Ավուր. - 1. օրվա, 2. օրը, օրական:
Ատենական հուր. - վերջին դատաստանի ատյանով դատապարտվածի կրակ, դժոխքի անշեջ հուր: *Ատենական հուրն էրիմ* (№ 132), ատյանի (վերջին դատաստանի) կրակում այրվեմ:
Ադենախաս, Ատենահաս. - ժամանակին հասնող, օգնող, զորավիգ կանգնող (ս. Սարգսի մակդիրներից):
Արազ. - երազ:
Արամ. - արամեացի, ասորի:
Արաչի. - առաջին:
Արեաբեր ցաւ. - արյունաբեր հիվանդություն:

Արբարանի. - արդարներ:
Արմաղան. - նվեր, ընծա (հեռու տեղից բերված):
Արմանալ. - զարմանալ:
Արմունկ. - ծեռքի ծալվելու տեղը, բազուկ, դաստակ:
Արնքաղ. - արնաքաքախ, արյունաքաքախ:
Արպըներ. - արաբներ:
Արտասառոջ.-հավանաբար՝ արտասվահառաչ, հառաչանքով արտասվող: *Արտասառոջ տրտմեալ հոգին* (№ 2 (56), հառաչանքով արտասվելուց տրտմած հոգին:
Արքավութեն. - տե՛ս Առքավութին:
Աւծ. - Օձ:
Ափլփել. - խարխափելով ծեռքի ափերով շոշափել:

Բ

Բաբաք. - արժանի, վայել: *Էն բաբաք չի աշկերտնուբնին, էն բաբաք ա վարպետնուբնին* (№ 413):
Բաբանծել. - պապանծել:
Բաղլումն եղիցի (բաղալ բառից). - փոխարինվել, կեղծվել, խարդախվել: *Ոչ այս գրիս բաղլումն եղիցի* (№ 8(226), - այս գիրս (հմայագիր) չփոխարինվի (մեկ այլ գրով), չկեղծվի:
Բաժ. - հասակ:
Բալա. - փորձանք, աղետ, չարիք:
Բալա. - որդի, զավակ:
Բալեղ. - սլացիկ, հասած, հասունացած, կատարյալ: *Բաժն ի բալեղին* (№ 40), - հասակն է սլացիկ (կատարյալ):
Բալենի, Բալեք. - բալաներ, զավակներ, երեխաներ:
Բալիա, Բալլի, Բալլիկ, Բալնիս. - բանալի:
Բալիշ. - բարձ:
Բալուլ. - բարուր: *Բալուլվել*. - բարուրվել:
Բալքի. - գոնե, գեթ:
Բանծրաց. - բարձրից, վերևից:
Բաղմաբան. - բաղնեպան:
Բանուկ. - աշխատող, բանող:
Բանք. - բաներ, խոսքեր: *Աստուծու բանք*. - աստվածային խոսքեր, աղոթք:
Բաշ. - 1. թավամազ գլուխ, 2. մազեր, ծամեր:
Բաշնաւոր. - բաշավոր, բավամազ մեծ գլխով:
Բարաքաթ. - առատություն, բարիք, երջանկություն:
Բարեննբար. - հավասար, համակշիռ, պատշաճ:
Բարիշութեն, Բարիշություն. - հաշտություն:
Բարկ. - տաք, շիկացած:
Բասվավ. - բացվավ, բացվեց:
Բարս. - բարձր:
Բեաթ. - վատ, չար: *Բեաթ նէաֆաս*, - չար շունչ:
Բեդովլաթ. - անպետք, անպիտան, ծույլ:
Բեզար, - հոգնածություն, ձանձրույթ: *Ազարբեզարը հեռացնես* (№ 447), - հիվանդություն-հոգնածությունը հեռացնես:
Բելիլա. - սպիտակ հանքային ներկ:
Բեմուրադ. - անփափագ, անմուրազ, փափագից, մուրազից զրկված:
Բեյնին. - բերանին:
Բևեռ. - մեխ, գամ:
Բերդս ու բարիս. - բերդ ու պարիսպ:
Բերնեքեթ. - տե՛ս Բարաքաթ:
Բերիքսիվար. - բերանքսիվայր, խոնարհված:
Բըլանիք. - բանալի:
Բըրչամ. - մազափունջ, ծամ (տղամարդու):
Բթոկ, Բթուկ. - բութ մատներով:
Բիբառ. - **բևեռ** (տե՛ս):
Բիբար. - տաքդեղ:
Բիբարել, Բիբեռել. - բևեռել, մեխել, գամել:
Բիբեռ. - տե՛ս Բևեռ:
Բիբռյալ. - բևեռված, մեխված, գամված:
Բիպեռ. - տե՛ս Բևեռ:
Բիթուն. - բոլոր(ը), ամբողջ(ը):
Բիյոն. - բերան:
Բիչար. - անճար, թշվառ, խեղճ:
Բղիս. - պահես:
Բմբեռնած. - բևեռված, մեխված:
Բոզ, Բեոզ. - գորշ (ծերմակավուն):
Բոթ. - բութ, բթամատ (№ 285):
Բոլոր. - շուրջ, շուրջբոլոր: *Բոլոր բարծին*, - բարձի շուրջը, շուրջբոլորը:
Բոլոր մնալ. - բոլորվել, շրջան կազմել սեղանի շուրջը: *Բոլոր մնա ձեր սեղան* (№ 445), - ձեր սեղանը միշտ բոլորված մնա (մարդկանցով):
Բողչա. - կապոց (հագուստի):
Բռնչի. - բռնչենի ծառատեսակը, որի փայտը

կիրառվել է ծիսահմայական արարողությունների մեջ:

Բրդուճ. - 1. հացի պատառ, կտոր, 2. լավաշի փաթույթ՝ տարբեր ուտելիքներով:

Բուժուժ. - բոժոժի թրթուր (№ 83դ):

Բուլոր. - տե՛ս **Բոլոր:**

Բուլք. - բույլ, խումբ:

Բուշտ. - բշտիկ (վերքի):

Բուռդ. - բուրդ:

Բուռվաւ - բուրվառ:

Բուսուր. - բուսեցրու: *Բարի միքքս ընծի բուսուր* (№ 337բ), - Բարի միտքս ինձ (իմ մեջ) բուսեցրու (աճեցրու):

Բուրակ. - տե՛ս **Պուրակ:**

Բուրթի. - խաղագնդակ:

Գ

Գա. - ահա, ահավասիկ: *Մայրամ, գա կույս ես* (№ 1(396), - Մայրամ, ահա կույս ես:

Գար. - կապ, կապած:

Գալ. - գայլ:

Գալոս, Գյալոս, Գյալոց. - 1.գալիս, գալու, գալստյան ժամանակ, 2. գալուստ: *Քրիստոս գալոս՝ չարյաց խափան* (№ 257 ա), - Քրիստոսի գալու ժամանակ չարերը կխափանվեն: *Չուր գյա գյալոս Քրիստոսին* (№ 413), - մինչև գա գալուստը Քրիստոսի:

Գալում. - գալիս: *Խոտ ա գալում* (№ 146բ), - հոտ է գալիս:

Գալիս, գապիս. - կալես, կապես:

Գահ. - ժամանակ:

Գահօր. - անծանոթ հիվանդության անուն:

Գանտիլ. - կանթեղ:

Գառնենի. - գառան մորթի:

Գդելիկ. - գդալիկ, փոքր գդալ:

Գդռից. - կտրեց:

Գեյտ. - գետ:

Գենառար. - կենարար:

Գենջ. - երիտասարդ, մատաղահաս:

Գեշ. - 1. վատ, 2. տգեղ:

Գեշքա. - կերթա, գնում է:

Գեոց. - գոց, փակ:

Գեստ. - եկեղեցականի ծիսական զգեստ:

Գետն ի գընն. - գնայուն, հոսող գետ:

Գեցալ ըն. - գնացել են:

Գըթեսինք. - կթեցինք:

Գըյկիս. - գրկիս:

Գիլաններ. - գայլեր:

Գիճ, Գիջ. - կնճիթ, խայթոց: *Գիճավոր, գիջու ջանավար* (№ 371), - կնճիթավոր (խայթոցավոր) գազան (օձ, կարիճ ևն):

Գիշութեն. - վատություն, չարություն, վտանգ: Տե՛ս **Գեշ:**

Գից. - քան, քանց:

Գիցածե. - գիտցածը, իմացածը:

Գյամ. - սանձ:

Գյապրելական փող. - Գաբրիելական փող, աշխարհի վախճանին և հոգիների վերջին դատաստանին Գաբրիել հրեշտակապետի կողմից մեռելների ընդհանուր հարության նպատակով հնչեցրած փողը:

Գյացինք. - գնացինք:

Գյետ Հեորտանես. - գետ Հորդանան, Հորդանան գետը Պաղեստինում:

Գյուզկապ. - գոզկապ, միզկապ (հիվանդություն):

Գնայուն. - շարժվող, գնացող: *Ի գնայուն է* (№ (222), - շարժվողից, գնացողից (նկատի ունի կենդանի էակներին):

Գոգրա. - դդում: *Գոգրու ծաղիկ* (№ 99ա), դդմենու ծաղիկ:

Գոլ. - գալ: *Ո՞վ ա գոլ,* - ո՞վ է գալիս:

Գոլ. - լիճ:

Գոխանամ. - գոհանամ:

Գոծգըրնալեն. - կոծելով, լալով, ողբալով:

Գողինք. - անկողին:

Գոտելտեղ. - գոտկատեղ:

Գործկայկալ. - գործակալ:

Գրըզիզի, - քրքրում, քչփորում (?): *Աչքերը գրըզիզի անեմ* (№183 է), - աչքերը քչփորեմ (?):

Գրկանոց. - գրկի երեխա, ծծկեր:

Գուլա.- կու լա, լաց է լինում:

Գուլ անել. - բթացնել (ատամ, դանակ):

Գուղ. - գող:

Գումանք. - հույսեր, սպասելիքներ:

Գուջուջ. - հավանաբար գուճ. - ծունկ բառի կրկնավորն է, որ նշանակում է ծունկ-ծունկ անել, ծնկի գալ, խոնարհվել: *Ի գուջգուջե Գաբրիելին* (№ 309բ), - Գաբրիելի ծնկի գալը, խոնարհվելը (Քրիստոսի առաջ):

Գուշկուր. - կոշկոռ, կոշտացած խորդուբորդ

հող: *Մեջը փուշ, գուշկուր դուրս գա* (№ 10ա):

Գուտիկ. - գլխարկ: *Ոսկի գուտիկ*, - ոսկե գլխարկ, թագ:

Դ

Դալա. - ճյուղ, ոստ: *Դալաճ տոլաջմիշ կանի* (№ 211բ), - ճյուղերը կը խճճի (խճողի):

Դալալ. - 1. միջնորդ, 2. մունետիկ:

Դամ. - հատիկ:

Դամ. - անգամ: *Օխտը դամ*, - յոթ անգամ:

Դանդուր. - դանդուռազգիներին պատկանող բանջարաբույս:

Դաջար. - տաճար:

Դաս. - 1. խումբ, գունդ, 2. տեղ, վայր, շրջան: *Հինգ դաս հրեշտակ* (№ 47), - հինգ գունդ (խումբ) հրեշտակ: *Մտա ի դասն Ամասիայ* (№ 38գ), - մտա Ամասիայի շրջանը (վայրը):

Դաստառակ. - թաշկինակ:

Դավի. - վեճ, կռիվ, անհամաձայնություն: *Դևն .ւ դավեն հալածեցավ* (№ 261), - դևն (չար ոգին) ու անհամաձայնությունը հալածվեցին:

Դար. - բլուր, սար, բարձունք:

Դարիդուս. - դարիվեր, բարձունքն ի վեր:

Դգըլիկ. - գդալիկ, փոքր գդալ:

Դեմ. - կողմ, դիմ:

Դեդի. - մայր, մայրիկ:

Դել. - դեռ, դեռևս:

Դերունի. - տերունի:

Դըսվերկու. - տասներկու:

Դըփըթել. - համբերել, սպասել: *Չը դըփըթի* (№ 234), - չի համբերում, չի սպասում:

Դժնիկ. - դժնի, դաժան, չար:

Դի.- կողմ, տեղ: *Առնիս, էրթաս մըր դիեմ* (№ 122), - առնես, գնաս մեր տեղից (կողմից):

Դիլակ, Դիլաք. - 1. իղձ, ցանկություն, 2. խնդրանք, աղաչանք: *Դիլաք անել*, - աղաչել, խնդրել:

Դիմադարձ. - դեմ կանգնող, հակառակ, հակադիր: *Դիմայդարձ առնեմք*, - իրար հակադրենք, միմյանց հակառակեցնենք:

Դիմավոր. - դեմքով, արտաքինով, կերպով: *Երեքն ալ կանաչ դիմավոր*_(№126դ), - երեքն էլ կանաչ արտաքինով (հագուստով):

Դիղ. - դեղ:

Դիւ. - դև:

Դիվան. - դատարան, դատաստան:

Դիվան-դարկյախ (դարգյահ). - աստվածային դատարանի կամ դատարանի ատյանի դարպաս, դուռ:

Դիվանոնց. - դևերի:

Դիր. - տեր:

Դիր. - անգամ:

Դիփ. - 1. բոլորը, ամբողջը, 2. միշտ, անընդհատ:

Դիփունի. - բոլորի, ամենքի:

Դղայոց. - տղաների, երեխաների:

Դղացկան. - տղոցկան, ծննդկան, ծննդաբերող կին:

Դմբրակալ. - թմրված, թմրակալված:

Դմբրի. - թմրելու, թմրածության:

Դյողցվոր. - դողացող անձ (վախից, մալարիայից):

Դյունիա. - աշխարհ, երկիր, տիեզերք:

Դնդալ. - բնդալ:

Դշիղ. - դժխեմ, դժնի, չարաբարո, ժանտ:

Դոխ. - 1. աղավնի, 2. աղավնածագ, թռչնածագ:

Դոշ. - կուրծք, կրծքավանդակ:

Դովլաթաուր. - ունեցվածքի տեր, ունևոր:

Դոր. - որտեղ, ուր:

Դռա. - քրդուհի, քրդի աղջիկ, կին:

Դռվիք. - դռներ:

Դվեր ընկնել. - վայր ընկնել, ցած ընկնել:

Դրուցակըն. - դրսի, դրսեցու, օտարի աչք (չար աչքի իմաստով):

Դուզ. - 1. ուղիղ, շիտակ, 2. ճիշտ, ճշմարիտ:

Դուր-դրացի. - դրկից, հարևան:

Ե

Եարալի. - վիրավոր:

Եզր աշխարք. - 1. աշխարհի եզր, ծայր, սահման, 2. անդրաշխարհ:

Եիրնք. - երնք:

Ելուն. - ելնող, բարձրացող: *Ի յելուն է* (№ 4(222), - ելնողից, բարձրացողից:

Եկեսցէ. - սույն բառով սկսվող երեկոյան աղոթք:

Եղևնիկ. - աղունիկ, աղավնի:

Եղեցի. - եկեղեցի:
Եղեք. - եղեգն:
Եղուկ. - 1. ավա՜ղ, ափսո՜ս, վա՜յ, 2. խե՜ղճ: *Եղուկս իմ միռոնիս* (№ 132), - ավա՜ղ իմ մեռոնին:
Եմ. - իմ: *Եմ Տեր*, - իմ Տեր:
Եռայք, Եռվռայք. - շարժվեք, խաղաք: *Ոչ եռայք, ոչ եռվռայք* (№ 94),- չշարժվեք, չխաղաք (ուղղված զեռուններին):
Եսի. - ինձ:
Ետնեն. - ետևը:
Երագահաս. - արագահաս:
Երած. - երազ:
Երդն. - երդում, երդվել:
Երդովավ. - երդվեց:
Երդոց. - երդիքի:
Երդումնիմ. - երդվում եմ:
Երեկ. - եկավ: *Մեր Տերն երեկ, ամպը գոռաց* (№ 324), - մեր Տերը եկավ, ամպը գոռաց:
Երերալ. - խռովահույզ վիճակում գտնվել, տարուբերվել, տատանվել: *Ինչի՞ գ'ուլաս, ինչի՞ կերերաս* (№ 35գ), - ինչու՞ ես լալիս, ինչու՞ ես խռովվում (տարուբերվում):
Երկաննմորուս. - երկար մորուք, երկար մորուքավոր:
Եփն. - եփումը, եփվելը: *Եփն ի կողին* (№ 213), - թոնրի կողին խփած հացի եփվելը:
Եօր. - որ:

Զ

Զադ. - բան, որևէ բան:
Զադեգյ. - Ջատիկ:
Զալըմ. - դաժան, անարդար, բռնակալ:
Զախիրե. - ապրուստ, օրապահիկ, ուտեստ:
Զաղեքն. - աղիքները:
Զանկ. - անկ, անդամալույծ:
Զանջիլ. - շղթա:
Զանջիլել. - շղթայել, շղթայակապ անել:
Զավալիներ. - խեղճեր, թշվառներ, դժբախտներ:
Զատամունսն. - ատամները:
Զատհամ. - զատիր, հեռացրու ինձ: *Սատանի ճամպխից զատհամ* (№ 434), - սատանի ճամփից հեռացրու ինձ:
Զատու. - հեռվից: *Զատու տեսանք*, - հեռվից տեսանք:
Զարզանդել. - զարհուրել, սարսափել:
Զարթնացավ. - զարդարվեցավ, զարդարվեց:
Զարիայ. - տե՛ս **Աի ու զար:**
Զաւծ. - օձ (զ նախդրով օձ բառի հայցականը):
Զեղջ. - զղջում:
Զեհրուեցա. - զարհուրեցի, վախեցա (№ 420 ե):
Զենել. - մորթել, սպանել, զոհել:
Զենեհար. - զգուշացում: Բայց № 339 աղոթքում ունի «զոհաբերում, մատաղ» իմաստը: Աղոթողը սկզբից դիմելով Աստվածամորը՝ ասում է. «Հոգիս կուտամ քեզի համար», իսկ վերջում եզրափակում՝ «Իմ սուրբ հոգիս քեզ զենեհար»: Պարսկերենից փոխառյալ զենհար (զգույշ, զգուշացում) բառը, համահնչունության պատճառով շփոթվել է հայերեն զենուլ, զենել, (մորթել, զոհաբերել, մատաղ անել) բառի հետ և աղոթողի կողմից այդ իմաստով ընկալվել:
Զենք. - զինք, նա ինքը (№ 323):
Զերդ. - ինչպես, որպես, նման:
Զետ (№ 44). - տե՛ս **Զերդ:**
Զէն. - այն, էն:
Զը. - ինձ,զիս:
Զըղեղնն. - ուղեղը:
Զըմեն. - ամենը, բոլորը:
Զըմըռվել. - զմռսվել, ամրանալ, անշարժ մնալ, պնդանալ, կապվել: *Ձեռքյեր զըմըռվան հիտև* (№ 325), - ձեռքերը կապվեցին հետևը:
Զընդան. - հոր, ստորգետնյա բանտ: *Տեղը հոռե զընդան է* (№ 41ա),- տեղը հորի զնդան է:
Զընդըհոր. - զնդանի հոր, տե՛ս **Զընդան:**
Զընճիլ. - տե՛ս **Զանջիլ:**
Զընել. - զարնել, զարկել, խփել: *Մեկը զընի ավեր բանին* (№ 322):
Զըֆրան. - զաֆրան, քրքում:
Զիկ. - 1.ինձ, 2. իրեն, նրան (զինքն):
Զիմուս. - իմը, իմոնց, իմ սեփականը:
Զինավոր. - 1. զինվոր, 2. զինված:
Զինել. - տե՛ս **Զենել:** *Որդին զինած՝ տրած սեղան*, - որդին զոհած (մորթած), դրած սեղանին:
Զինճիլ. - տե՛ս **Զանջիլ:**

Զինճիր. - տես **Զանջիլ:**

Զնճըլած. - շղթայած:

Զորք. - զորություն:

Զուլում. - 1. անարդարություն, բռնություն, ճնշում, 2. արհավիրք, մեծ չարիք:

Զուր բուխտան, Զուր ու բուխտան, Զուր ու բուխտ. - զուր ու զրպարտանք: *Ազատիս մարդ զուր ու բուխտից* (№ 265), - ազատես մարդուն զուր ու զրպարտանքից:

Զուքել. - 1. շինել, կառուցել, 2.հարդարել, զարդարել: Տես **Սուքել:**

է

էբի. - գնաց (երբալ-էբալ բայից):

էգեցի, էգմանեցի. - տես № 218 ծանոթագրությունը:

էլ. - օտար, ուրիշ, ոչ հարազատ:

էլաց. - տես Իլաց:

էլեյի. - ելեք:

էլեմ տունյե. - արար աշխարհի, ամբողջ աշխարհը:

էլվեճարավ. - ելևէջ անող, բարձրացող- իջնող: *Էլվեճարավ խրեշտակներ* (№ 153), - ելևէջ անող հրեշտակներ:

էծ. - օձ, էծոնց. - օձերի:

էճաճ. - իջան: *Էճաճ լոս,* - լույս ընկան, հայտնվեցին:

էճճաս. - տեսակ-տեսակ, տարբեր տեսակի: *Էճճաս պանիր հանեցի* (№ 37դ),- տեսակ-տեսակ պանիր հանեցի:

էմեննեք. - տես **Ամանաք:**

էյթաջ. - կարիք, պետք, անհրաժեշտություն: *Մուխանճաքին էյթաջ չէնիս* (№ 380), - ստորի, անարժանի կարիքին չարժանացնես:

էնվոր. - նրա: *Էնվոր մեջը,* - նրա մեջը:

էնքսե. - ծոծրակ:

էշքալ. - երթալ, գնալ:

էպի. - բերեց:

էչք. - աչք:

էռջով. - առջև:

էռջին. - առջևը, առաջը:

էսկիպիրոճ. - Ոսկեբերան:

էտես. - տեսնես: *Չար էտես, բարին առաջես* (№ 235ը), - չարը տեսնես, բարին առաջ-նորդես:

էտու. - տվեց:

էր. - ինչու:

էրած. - երազ:

էրդեց. - երդիք:

էրեթիկ. - երեթիկ, էկզեմա (մաշկային հիվանդություն):

էրերուճ. - երերուն, անհանգիստ՝ խռոված դրության մեջ գտնվող, խռովահույզ:

էրթայի. - 1. երդիք, 2. կտուր, տանիք: *Պողոս, Պեյյոս էրթայիճ անցան* (№ 310), - Պողոսը, Պետրոսը երդիքով (տանիքով) անցան:

էրթեցեճ. - երդիքից:

էրթիս. - երդիք:

էրի. - եկավ: *Մեր Տեր էրի համպ խաղա* (№ 325), - մեր Տերն եկավ ամպի մեջ խաղալով:

էրիկ, էրկաճ. - ամուսին, ամուսնու:

էրծաքի. - արծաթի:

էրկենք. - երկայնք, երկարություն:

էրկրես. - երկարես, ձգվես (№ 458):

էրցա. - երեցա, այրվեցի, վառվեցի:

էրուճ-թռչուճ, էրուճաց-թռչուճաց. - կենդանի և թռչուն, կենդանիների ու թռչունների (էրուճ՝ ծագում է էրէ / երէ բառից, - որսի վայրի կենդանի):

էօրդյուք. - երդիք: *Էօրդյուք կալողը,* - երդիք գալողը, եկողը:

Ը

Ըլանջըխ. - խոցային հիվանդություն, հավանաբար՝ օձիկ:

Ըլըվլուսավ. - բոցի, կրակի լույսով:

Ըմ. - իմ:

Ըմմպես. - այնպես:

Ըյնի. - ընկնի:

Ընդաս. - այն դասը, այն խումբը: *Ով արդար էր՝ էթի ընդաս* (№ 430), - ով արդար էր՝ գնաց էն դասը (արդարների):

Ընկնավոր. - 1. ցավագար, էպիլեպտիկ, 2. կատաղի, խենթ:

Ընկնավորցնել. - վախեցնել, խենթացնել, իրեն կորցնել:

Ընկո. - ահա, ահավասիկ, հրես:

Ընտավոր. - ընտանիքավոր, ընտանիքի անդամ:

Ընցուցին. - անցկացրին:
Ընքվի. - հոնքեր:
Ընչաահար, ընչկհար. - ակնահար, չար աչք տվող:
Ընչաահարել. - ակնահարել, չար աչքով տալ:
Ընպրանք. - 1. ապրանք, ունեցվածք, 2. անասուն, տավար:
Ընռաբան. - տե՛ս Ռապան:
Ընես. - ռես, գյուղապետ:
Ընիք. - առիք, առաստաղ:
Ընկոր. - ոսկոր:
Ընտակ. - փող, մետաղե դրամ:
Ընտուք. - ստույգ, ճիշտ:
Ընտամնի. - ատամներ:
Ընվլուսավ. - արևալույսով:

Թ

Թաբախ. - ափսե, պնակ:
Թազա, թաժա. - նոր, թարմ:
Թալաչբաշ (№ 117բ). - շերտված գլուխ:
Թալել. - գցել, նետել: *Թալիս,*- գցես, նետես:
Թաղկած. - թաղիքի նման սեղմված, աղտոտված:
Թաղ. - կամար:
Թաղիս. - թաղիք, քեչա: *Թաղկին,*- թաղիքին, թաղիքի վրա:
Թամամ. - լրիվ, ամբողջ, ողջ:
Թամբաք. - բարձ (?):
Թամբեխ անել. - պատվիրել, հանձնարարել:
Թամմել. - 1. թամամել, ավարտվել, վերջանալ, 2. լրացվել, համալրվել:
Թապլել. - գցել, նետել:
Թառեզն (№ 395). - ինչ որ հիվանդություն:
Թասլիմ անել. - հանձնել, ավանդել:
Թատաստան. - դատաստան:
Թատբիր. - հնար, ճար, միջոց: *Դյու ճար արող ես, թատբիր արող ես* (№ 389), - ... հնար գտնող ես:
Թարս-թուրս. - հակառակորդ, թշնամի: *Թարսը թուրսը ծով ասես* (№ 35 ժզ), - հակառակորդները (չարքեր) ծովի նման շատ են (տարածական իմաստով):
Թափոռ. - կացին, տապար:
Թաքյա. - այծ:
Թաքնա. - տաշտ:
Թենպել. - ծույլ, անբան:
Թեպղ. - տե՛ս **Թպղա:**
Թեվքրիկ. - թեթվիկ, թեթև:
Թեր. - 1. ծաղկի թերթ, 2. տերև:
Թերկ ըրավ. - թողեց, դադարեցրեց, վերջ դրեց:
Թեք. - սոսկ, միայն, միայն թե:
Թզեզնիկ. - թեզանիք, հագուստի թևքը կամ նրա ծեռքը ծածկող մասը:
Թըխ. - թող:
Թըմմել. - տե՛ս **Թամմել:**
Թըճ. - ուս, *թըճիս,* - ուսիս:
Թի. - դիի, կողմ: *Մե թիս Հիսուս, մե թիս՝ Քրիստոս* (№ 302), - մի կողմս Հիսուս, մի կողմս՝ Քրիստոս:
Թիվ. - թև:
Թիքա. - պատառ, կտոր:
Թլորել. - թլիկանալ, կակազել:
Թհար. - տեսակ:
Թոգ. - թագ:
Թոն. - անձրև:
Թոռայմեցուցանեմ. - թոռոմեցուցանեմ, թոռոմեցնում եմ:
Թորկել. - 1. թողնել, բաց թողնել, ազատ արձակել, 2. թույլ տալ, արտոնել, 3. վերջ տալ, դադարել:
Թոփ. - թնդանոթ, հրանոթ:
Թոփուզ. - գուրզ:
Թնջանք. - գետնի թացություն, խոնավություն:
Թպղա, Թեպղ, Թըպղ. - 1. ծննդկանին և նորածնին վնասող չար ոգի, 2. թեպղ հիվանդությունը (տե՛ս նաև Ծննդկանի աղոթքների ծանոթագրությունը):
Թսան բողոճ. - թստան բոլոջ, խոնավ տեղերում ապրող սև բոլոջ, որը տհաճ հոտ է արձակում:
Թվանք, Թւանկ. - հրացան:
Թունյի կտիկ. - թոնրի կուտ, թոնրում կուտ գնացած, կիսածխացած հաց:
Թուպ. - տե՛ս **Թոփ:**
Թուս. - խոպոպ, մազափունջ: *Թուս ապա* (№ 257 բ), - խոպոպավոր մեծ հարս, (ավագ քույր, մայր): Տե՛ս **Ապա:**
Թուրայ. - բրդից կամ կանեփից հյուսված թել, լարան:
Թուփլցնել. - թոփալացնել, կաղացնել: *Ջիս, զըմ քուֆլեթիք չը թուփլցուս* (№ 395), - ինձ, իմ ընտանիքի անդամներին չկաղացնես:

Ժ

Ժաժիկ. - լոռ, շոռ:
Ժաժիմ. - շարժվում եմ: *Ես ժաժիմ, դուք մի ժաժիք* (№ 94), - ես շարժվում եմ, դուք մի շարժվեք:
Ժան, ժուն. - ինչ որ ծանր հիվանդություն, գուցե և՝ ժանտախտ:
Ժառութեն. - հավանաբար՝ բռնություն, դաժանություն: *Քյու ստեղծած խոգին ժառութենով չառնես* (№ 389), - քո ստեղծած հոգին բռնությամբ չառնես:
Ժեք. - երեք:
Ժըժնված. - խծճված, խառնված:
Ժնճիլ, Ժնջել. - տե՛ս Ջանջիլ:
Ժուռ գալ. - պտտել, շրջել, թափառել, մաճ գալ:

Ի

Իգու. - էգի:
Իդա, Իդը. - այս, սա:
Իդալ. - տալ:
Իեով.- ով:
Իզ. - հետք:
Իէոչ. - ոչ:
Իլաց. - լացեց, լաց եղավ, արտասվեց:
Իլլաքի. - մանավանդ, հատկապես:
Իլլիմ. - ելնեմ:
Իկիկ. - եկավ:
Իկին. - եկան:
Իկյավ. - եկավ:
Իմալ. - ինչպես, ոնց:
Իմաճ. - հավատ:
Իմդադ, Իմդատ. - օգնական, սատար, հովանավոր:
Իմքին. - բան, որևէ բան, մի բան:
Իյա. - ահա:
Ինգըրութեն. - ընկերություն, բարեկամություն:
Ինե, Յինե. - ներս, մեջ:
Ինկե. - ընկել է: *Ինկե գերութեն.* - ընկել է գերության մեջ:
Ինոնց. - նրանց:
Ինչար. - մինչև:
Ինչխդար. - ինչչափ, որչափ, որքան:
Ինչղ. - ինչպես, ոնց:
Ինչրու, Ինչուրի. - մինչև, մինչև որ:
Ինսեխյ. - ինչպես որ:
Իշտե. - դեհ, ահավասիկ:
Իով. - ով:
Իով օր. - ով որ:
Իջոյ. - իջա:
Իսն. - ինձ, ինձ մոտ: *Իսն էկավ Իսուս որդին* (№ 147 բ), - ինձ մոտ եկավ Իսուս որդին:
Իսկի. - ոսկի: *Իսկի շրջոռ,* - ոսկի շուրջառ:
Իտիր. - դրեց:
Իտու. - տվեց:
Իրաճալ. - իրականացնալ, կատարվել, իրագործվել:
Իրգինք. - երկինք:
Իրե. - եկավ:
Իրեի, Իրեյ. - երեք:
Իրես, Իրիս. - երես, դեմք:
Իրիգայ. - արեգակ:
Իրիցել. - երեցել, այրել, վառել:
Իրիցներ. - երեցներ, քահանաներ:
Իրիք. - երեք:
Իփալ, Իփիլ. - եփել:

Լ

Լալա. - կակաչ:
Լայեխ. - արժանի, վայել: *Լայեխ էնել.* - իրեն արժանի, վայել համարել:
Լեգեհոճ. - չար ոգի:
Լեճք. - լայնք, լայնություն:
Լեշ. - 1. մարմին, 2. դիակ:
Լեոս. - լույս:
Լերդ, Լերթ. - 1. լարդ, 2. թիկունք: *Խաչըմ սրտին, խաչըմ լերդին* (№ 354 է,ը), - մի խաչ կրծքին, մի խաչ՝ թիկունքին:
Լիդր. - ծանրության չափ՝ հավասար 12 ֆունտի (որոշ տեղերում հասնում է 9 կամ 20 ֆունտի):
Լիծ. - լուծ:
Լիս. - լույս:
Լիսին. - լուսին:
Լիսնահող. - սիպտահող, շիկավուն-սպիտակ հող, որ օգտագործվում է ծեփագործության մեջ:
Լըկել. - փափկել, հալվել:
Լըսնընոր. - լուսինը նոր, նորալուսին:
Լծվար. - մի լուծ եզով մեկ օրում վարած հո-

ղը, օրավար:
Լյուս. - լույս:
Լոխմա. - բրդուճ, պատառ: *Լոխմա մը հած,* - մի բրդուճ (պատառ) հաց:
Լոշ. - լավաշ հաց:
Լոշտակ. - դմմազգիներին պատկանող դեղաբույս, մարդարմատ:
Լոռ. - տարիքն առած, դախացած, տանը մնացած աղջիկ:
Լոս. - լույս:
Լոսեղեն. - լուսեղեն:
Լցաւ. - լրացավ, ամբողջացավ, կատարվեց (լցնել բայից): *Մարգարէից բանքն լցաւ,* - մարգարեների գուշակությունները կատարվեցին:
Լուզու. - լեզու:
Լուլա. - խողովակ, ծորակ:
Լուսինկա, Լուսունկա. - 1. լուսին, լուսնյակ, 2. լուսընկա, լուսնի լույսը:
Լուսունկիկ. - լուսին, լուսնյակ:
Լուր. - լսիր (գրաբար):

Խ

Խաբա. - կապա, վերարկու:
Խաբար. - լուր, տեղեկություն:
Խաբուլ. - ընդունում, համաձայնություն:
Խազար խարիր. - հազար հարյուր:
Խաբ. - շերտ:
Խաթա, Խատա. - փորձանք, պատահար, վտանգ, ցավ:
Խաթր. - 1. սիրույն, հանուն, համար, 2. հարգ, պատիվ:
Խաժակն. - կապտավուն (երկնագույն) աչք ունեցող:
Խալել. - հալել, հալվել:
Խալեվոր, Խալիվոր. - ալևոր, ծերունի:
Խալխան. - վահան:
Խալսել. - 1. ավարտվել, վերջանալ, 2. պրծնել, ազատվել:
Խախալ. - մաղ:
Խախանդութեն.-հանդարտություն, հանգստություն, խաղաղություն:
Խածրուր. - խանձարուր, բարուր:
Խային. - դավաճան, անհավատարիմ, նենգ: *Խային իշկել,* - նենգությամբ նայել:
Խայնել, խայնեմ. - հագնել, հագնեմ:
Խայր. - հայր:
Խան. - հացահատիկ չափելու փայտե աման, կոտ:
Խանբա. - համբա, 1. գյուղական համայնքի բարձր խավը, որ համայնքի գործերում ձայն և ակտիվ մասնակցություն ուներ, վճարում էր ամենաբարձր տուրքը, 2. ունևոր, հարուստ:
Խանբերութեն. - համբերություն:
Խանկարած. - խանգարված, փլված, ավերված: *Խանկարած Սսվարածին* (№ 146 թ), - փլված, ավերված Աստվածածնի վանքը (եկեղեցին):
Խանձածար. - 1. խանձարուր, 2. խանձարուրի կապ:
Խանձարել. - խանձարուրել, բարուրել:
Խանձաքաղաք. - խանձարուրման քաղաք, Բեթղեհեմ քաղաքը, ուր, ըստ քրիստոնեական ավանդության, ծնվել և խանձարուրվել է մանուկ Հիսուսը:
Խանձբալուլ. - խանձարուր, բարուր:
Խանձուր. - խանձարուր:
Խաշալամ. - հավանաբար՝ խաչալամ, խաչադրոշ, տես **Խաչվառ:**
Խաշինք. - ոչխարներ:
Խաչելատոն. - խաչելություն, Քրիստոսի խաչվելը, խաչվելու պատկերը:
Խաչվառ. - Քրիստոսի խաչելության պատկերով եկեղեցական դրոշակ:
Խապար. - տե՛ս **Խաբար:**
Խառակընն. - խառն գույն ունեցող, տարագույն աչք:
Խառջեկաք. - խաչերկաթ, վառվող թոնրի վրա խաչածև դրվող երկաթյա զույգ շերտեր, որոնց վրա, իբրև հենարան դրվում են կաթսաներն ու պուտուկները:
Խասապ. - ցարդ:
Խասիաք. - բնույթ, բնավորություն, խառնվածք:
Խասպեխաս. - հասվեհաս, հասնելու մոտ, հասնելու վրա:
Խասացիր. - հասցրեցիր, արժանացրիր:
Խավատալ. - հավատալ:
Խավող. - խաղող:
Խավոց. - հայոց:
Խանչար, Խանջալ. - դաշույն:
Խավսարական. - հավասարապես:

Խավուն և ճվին. - հավին ու ձագին:
Խավք. - հավք, թռչուն:
Խատ. - հետ, զուգահեռ: *Խատ նա բարը լուսում* (№ 371), - այս բարի լույսի հետ:
Խատա. - տե՛ս **Խաթա:**
Խարական. - հայրական:
Խարդաշ. - եղբայր:
Խարիբ. - օտար, օտարական, պանդուխտ, օտարություն գնացած:
Խարիբգիթ. - չունևոր, աղքատ:
Խարիբ-խուրբաթ. - օտարություն, օտարության մեջ գտնվողներ, պանդուխտներ:
Խարկած. - թրծած: *Խարկած կժեր* (№ 20), - թրծած կժեր:
Խարսնանալ. - Հարսնանալ, հարս դառնալ, ամուսնանալ:
Խաց. - հաց:
Խացախոտ. - Հացահոտ, հացի հոտ, հացի բույր:
Խաֆա. - գլուխ, գանգ:
Խաֆլուխաթա. - հանկարծակի փորձանք, անսպասելի պատահար:
Խեթ, Խեթք. - խիթք, ծակոց, խայթ:
Խեթեպելե. - փորձանք, խառնաշփոթ անախորժ վիճակ:
Խել, Խեյըլի. - բավական շատ, բավականաչափ:
Խեն. - հավանաբար՝ ամբողջ, բոլոր: *Խեն քրիստոնեն ծեռ անօրանց ազատես* (№ 389), - բոլոր քրիստոնյաներին անօրենների ձեռից ազատես:
Խեվ. - ծոր, ծորակ:
Խետե.- տե՛ս **Խաթա**:
Խեր. - 1. օգուտ, շահ, 2. բարեգործություն, 3. բարի, ուրախ, հաջող:
Խերլի. - օգտավետ, բարելի, հաջողակ:
Խերկան, մերկան. - հայրիկին, մայրիկին, հորն ու մորը:
Խերվան. - հերվան, անցյալ տարվան:
Խըդըր. - չափ, քանակ: *Ինչխըդր,* - որքան, որչափ, ինչքան:
Խըզտել. - պատռել, ծևել:
Խըլմ. - 1. մածուցիկ ցեխ, 2. լորձ, խլինք: *Ծնկեն հետ խըլմ էդավ* (№ 146իա),- ծնկից հետ մածուցիկ եղավ (այսինքն՝ դարձավ անպետք ու անվնաս):
Խըլաս անել. - ազատվել, փրկվել: Տե՛ս նաև **Խալսել:**
Խըլըսել. - սպառվել, վերջանալ, պարպվել: *Խըլըսցուցել,* - սպառեցնել, պարպեցնել: *Խըլըսցու,* - սպառիր, պարպիր: *Խլըսաև,* - վերջացան, սպառվեցին:
Խըխալ, Խըխալվել, - մաղ, մաղվել: Տե՛ս **Խախալ:**
Խը. - խըտ, հետ, մոտ: *Խը ծի,* - ինձ հետ, ինձ մոտ:
Խըչ. - խաչ:
Խըսմեդ. - տե՛ս **Ղամաթ**:
Խըրավիլ. - խորովել:
Խըրեր. - հյուրեր:
Խիամաթ. - 1. ահեղ դատաստան, վերջին դատաստան, 2. խիստ ցուրտ, ցրտություն:
Խիթավոր. - խայթոցավոր, խայթող: *Կարիճը խիթավոր* (№ 127):
Խիթուիլուց. - խիթքից, խիթք հիվանդությունից:
Խիլ. - ծեղ, շյուղ:
Խիղճ. - խեղճ, թշվառ:
Խլլդան աչք. - խլուրդի աչք:
Խլրտան. - խլրտացող, շարժվող, խայտացող:
Խլուրան (№ 1(143). - հավանաբար՝ խլուրդ, որ թե՛ հիվանդություն հարուցող կենդանի է և թե՛ մաշկային հիվանդության՝ խոցի անվանում:
Խղեղ. - հեղեղ:
Խճուճ. - մազի, թելի խճճվածք, քնջուկ:
Խյունծյուր. - խնձոր:
